



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am



Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆՈՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Կեդրոնական Դիւանի արխիւային հարուստ նիւթերու հրատարակութիւնը սկսած է 1934 Յունիսին, «Հայրենիք» ամսագրին մէջ: Գործիչներու եւ մարմիններու նամակներ, շրջաբերականներ, ժողովներու որոշումներ, մարտական առանձին գործերու (Կուկունեան, Խաւսոյ, Եւն.) կամ գաղտնի բանակցութիւններու (Յարութիւն եւ Տրդատ Փաշա Տատեաններու նամակները) հետ կապուած փաստաթուղթեր, ողբացեալ ընկեր Սիմոն Վրացեանի դասաւորումով, հետզհետէ հրատարակուեցան «Հայրենիք»ի թիւերուն մէջ, նախ իբրեւ յաւելում, եւ ապա՝ մաս կազմելով ամսագրի էջերուն: Ապա նաեւ անոնք հրատարակուեցան առանձին գրքի ձեւին տակ, կազմելով «ԴԻԻԱՆ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ» երկու հատորները (1934 եւ 1938, հրատարակութիւն Հ. Յ. Դաշնակցութեան Ամերիկայի Կեդր. Կոմիտէի):

Հ. Յ. Դ. Ընդհ. Ժողովներու որոշումներ եւ դիւանական-արխիւային այլ նիւթեր պարբերաբար հրատարակուած են նաեւ Հ. Յ. Դ. օրկան՝ «Դրօշակ»ի համարներուն մէջ: Նոյն բնոյթի այլ նիւթեր կը գտնենք նաեւ 1933էն 1938 Ս. Վրացեանի կողմէ Փարիզ հրատարակուած «Վէմ» հանդէսի էջերուն մէջ («Հին թուղթեր», Ռոստոմի նամակները, Եւն.):

Համաշխարհային Բ. պատերազմը կասեցուց արխիւներու հրատարակութեան այդ թափը, դժբախտաբար երկար ժամանակի համար: Պէտք էր սպասել մինչեւ 1965 Ապրիլ — Մեծ Եղեռնի յիսնամեակը — որպէսզի «Հայրենիք» ամսագիրը վերստին ձեռնարկէր Հ. Յ. Դ. Կեդրոնական Դիւանի նիւթերու աստիճանական հրատարակութեան, այս անգամ կեդրոնանալով Հ. Յ. Դ. Պոլսոյ Պատասխանատու Մարմնի եւ Վիշապի (Պոլիս) Կ. Կոմիտէի այն գրութիւններուն ու նամակներուն վրայ՝ որոնք կը վերաբերին 1915ի ձերբակալութեանց, տեղահանութեանց եւ ջարդերուն: Արխիւային

նիւթերու մասնակի այդ հրատարակութիւնը վերջ գտաւ 1966 Փետրուարին:

Արխիւային բաւական ճոխ նիւթ կը պարունակէ նաեւ Ս. Վրացեանի կողմէ 1962ին հրատարակուած «Հին ԹՂԹԵՐ ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ» հատորը:

Հ. Յ. Դ. ԺԹ. Ընդհ. Ժողովի եւ Հ. Յ. Դ. Բիւրոյի որոշումով, «Հայրենիք» ամսագիրը — ներկայիս եռամսեայ հանդէս — շուտով կը սկսի իր տարեկան չորս թիւերը ամբողջութեամբ յատկացնել Դաշնակցութեան Կեդրոնական Դիւանի արխիւային այլ նիւթերու հրատարակութեան:

Տրուած ըլլալով սակայն կարեւորութիւնը մեր կուսակցութեան արխիւներու հրատարակութեան՝ հայ ժողովուրդի վերջին ութսունամեակի — եւ ի մասնաւորի 1890-1921 տարիներու — ազատագրական պայքարի պատմութեան ամբողջական ծանօթացման եւ շարք մը մասնակի հարցերու պարզաբանման տեսակէտէն, մենք եւս կը ձեռնարկենք արխիւային նիւթերու հրատարակութեան՝ լոյս ընծայելով ամիսը մէկ պրակ, իբրեւ յաւելում «Ազդակ Շարափօրեակ»ի, էջերու առանձին եւ յաջորդական համարակալումով: ՆԻԻԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ այս շարքը, աւելնալով ԴԻԻԱՆի երկու հատորներուն, «Հայրենիք»ներու եւ այլ պարբերաթերթերու մէջ լոյս տեսած ու տակաւին հրատարակելի դիւանական այլ նիւթերուն, յաւելեալ լոյս պիտի սփռէ մեր կուսակցութեան առաջին երեսնամեակի (ապա նաեւ յաջորդող տասնամեակներու) յեղափոխական-ֆազիսական-հասարակական գործունէութեան վրայ, իսթան հանդիսանալով ու հնարաւորութիւն ընծայելով ներկայ եւ ապագայ պատմագիրներուն՝ ամբողջական եւ առարկայական գնահատանքը ընելու անոր պատմական մեծ առաքելութեան եւ հերոսական գործունէութեան:

Հ. Յ. Դ. ԲԻԻՐՕ

Ա.— ԱՐԻՒԻԱՑԻՆ ՆՈՒՅԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԼԵՌՆԱՎԱՅՐԻ (ԿԻԼԻԿԻԱ), ԿՂԶԻԻ (ԿԻՊՐՈՍ), ԵԳԻՊՏՈՍԻ
ԵՒ ՈՍԿԵՀԱՆՔԻ (ԻԶՄԻՐ) ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆՑ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

1896 - 1905

Մասնաւորաբար 1895էն ետք, երբ Հնչակեաններու կազմակերպած Ջէյթուսի հասկնայ, բերեսս անժամանակ, բայց հերոսական ապստամբութիւնը յանգած էր արդէն իր անխուսափելի վախճանին, Հ. Յ. Դաշնակցութիւնը սկսաւ իր հետաքրքրութեան եւ գրադումին առարկայ դարձնել Կիլիկիան՝ շրջանը կազմակերպելու եւ յեղափոխական անկի պատրաստուած եւ ամբողջութիւն կազմող գործունէութեան կեդրոնի մը վերածելու համար:

Արդէն իսկ 1895-96ին՝ դաշնակցական զանազան գործիչներ — Արմէն Գարօ, Մար-Շիմօն, Մարքիս Մուրատեան, Գրիգոր Ներսէսեան եւ ուրիշներ —, իրենց գործունէութեան կեդրոնը դարձուցած Կիպրոսը եւ Ազեխանդրիան, եւ սուրբան կապի մէջ «Իրօշակ» խմբագրութեան և Պոլսոյ Հ. Յ. Դ. Կ. Կոմիտէին հետ, կ'ուսումնասիրէին Կիլիկիա գործիչներ եւ զիննալ ուժեր անցնելու եւ շրջանը յեղափոխականօրէն կազմակերպելու կարելիութիւնները: Հ. Յ. Դ. Գ. Ընդհ. Ժողովին (Սոփիա, 1904) Կիլիկիոյ մասին ներկայացուած տեղեկագիր մը կ'ըսէ. — «Հ. Յ. Դաշնակցութիւնը 1895ին առաջին անգամ իր ուշադրութեան առարկայ կը դարձնէ Լեռնավայրը, երբ Արծուարեբոզը (Ջէյթուս) ապստամբութեան դրօշը պարզած էր: Ապստամբութեան ընթացքին կը հանդիպէին ընկերներու, որոնք, Կիպրոսի փոքր խմբուած, միւսական եւ բարոյական աջակցութիւն կ'առաջարկէին հնչակեաններուն, որոնք այն ատեն հոն հաստատուած միակ կազմակերպութիւնն էին, բայց կը մերժուէին անոնցմէ:» Իսկ 1896ի վերջաւորութեան զումարուած Հ. Յ. Դ. կովկասեան մարմիններու առյուծական ժողովի որոշումներուն մէջ կը կարդանք. — «Ժողովը, աչքի առաջ ունենալով Լեռնավայրի անառիկ դիրքը, տեղական ժողովուրդի յեղափոխական ուժը եւ ընդհանրապէս միւս յարմարութիւններն ու առաւելութիւնները, որոշեց

լուրջ ուշադրութիւն դարձնել այդ կէտի վրայ եւ այնտեղ ուղարկել կազմակերպող-զեկավարող մի ուժ:»

1898ին, Բ. Ընդհ. Ժողովին, Կիլիկիոյ կարեւորութիւնը Դաշնակցութեան զեկավարութեան աչքին անկի եւս շեշտուած կը տեսնենք, քանի Լեռնավայրը կը դառնայ իրրեւ կեդրոնացման վայր մկատի առնուած չորս կեդրոններէն մէկը (համագործ Դուրան-Բարձրաւանդակին — Տարօն-Սասուն —, Շամին — Վասպուրական — եւ Վիշապին — Պոլիս), եւ կ'օժտուի յատուկ Պատասխանատու մարմնով մը:» Մար-Շիմօնը (Միֆայէլ Տէր Մարտիրոսեան, որ 1898ին Կիլիկիա կը մտնէ բայց շուտով կը ձերբակալուի Վերակազմեալ Հնչակեաններու մատնութեան հետեւանով), Հրաչը (Թիրեախեան), Բահվերը, Մարքիսը, Պուկարացի Պետօն, Ալլանը — Բուրէն Զարդարեան, Աշոտ Լեռնը, Առանձարը, Ալասէրը, 1904էն ետք շրջան մը նոյնինքն Սիւնն Զաւարեանը (որ Վարդանի հետ շուրջ տարուան մը բնական շրջապատոյտ կատարեց Կիլիկիոյ մէջ եւ Միջերկրականի փոքրուն, — Սուլտիա, Բէսապ, Պէյրութ, Եւն.)՝ զանազան տարիներ անդամ են եղած Լեռնավայրի Պատասխանատու Կ. Կոմիտէին: Իրենցմէ առաջ, 1897ին, Կիլիկիա հաստատուած էր արդէն դաշնակցական այլ գործիչ մը՝ Պոնտացիին: Աւելի ուշ՝ հոն գործեցին Սարհատ, Արամ, երիտասարդ բըժիշկ Կիլիկեանը, եւ ուրիշներ: Տարիներու ընթացքին, հակառակ ամէն կարգի դժուարութեանց, մատնութիւններու, ձերբակալութիւններու եւ ժողովուրդի

* Տեսե՛՛ք Մ. Վարանդեան, — Հ. Յ. Դաշնակցութեան Պատմութիւն — Բ. Հասար, էջ 44-55 (Հ. Յ. Դաշնակցութիւնը եւ Կիլիկիա):
** Տեսե՛՛ք Եփեսոս Հ. Յ. Դաշնակցութեան, Բ. Հասար, էջ 208-230 (Հ. Յ. Դ. Պրկարդ Ընդհ. Ժողովը):

մտայնութեան՝ որ, Ջէյթուսի եւ կարգ մը այլ վայրերու բացառութեամբ, չէր յիշեցնէր Սասնոյ եւ Վասպուրականի լեռնային շրջաններու հայ գիւղացիութեան բնածին մարտունակութիւնը, կարելի եղաւ ստեղծել կազմակերպական շրջաններ, յառաջացնել մարտական խումբեր, հաստատել հազարակցութեան գաղտնի գծեր:

Հետագային, 1907ին, Հ. Յ. Դ. Գ. Ընդհ. Ժողովը (Վիեննա) միաձայնութեամբ կը փոխարկէ Կիլիկիոյ յեղափոխական գործունէութիւնը ծաւալելու եւ գորացնելու որոշում մը, այդ նպատակին յատկացնելով կարեւոր պիւտնէ մը՝ 20.000 ֆրանկ: Տարի մը չանցած, սակայն, վրայ կը հասնէր Օսմանեան Սահմանադրութիւնը:

Համեմատաբար քիչ գրուած է ու խօսուած՝ Հ. Յ. Դաշնակցութեան Ոսկեհանքի գործունէութեան մասին (Իզմիրի շրջան): Պոլսոյ, անդրկովկասեան կեդրոններու եւ Ատրպատականի կուսակցական-յեղափոխական շխտած գործունէութեան փայլը, Սասնոյ եւ Վասպուրականի փետայական սխրագործութիւնները, շուրջ մէջ ձգած են կարծես այլ կեդրոններու մէջ տարուած դաւադրական-կազմակերպական լուռ ու հետեւողական շխտատանքները: Եւ սակայն՝ նուիրումի, անձնագոհութեան, քաջութեան, ախարի եւ նահատակութեան ինչպիսի՛ շքեղ օրինակներ կը գտնենք նաեւ Եգիպտոսէն ու Կիլիկիայէն մինչեւ Իզմիր, եւ անկէ անդին՝ մինչեւ Պուկարիա, Բուսանիա եւ այլուր:

Ոսկեհանքի շրջանին մէջ դաշնակցական գործիչներ կը գտնենք 1896-97էն սկսեալ: Պարբերաբար այնտեղ կ'այցելեն կամ մնայուն կերպով կը գործեն Բարան (Գարեգին հաժակ), Հրաչը (Թիրեախեան), Վարդ-Պատրիկը, Աշոտ-Երկաթը եւ ուրիշներ: 1898ին, Հ. Յ. Դ. Գ. Ընդհ. Ժողովը կը գրադէր Ոսկեհանքի եւ ծովեզրեայ այլ կեդրոններու մէջ ցուցակեան գործունէութեան հնարաւորութիւններով: Իզմիրեան իրենց գործունէութեան ընթացքին է, որ, հայ մատնիչներու ահաբեկման առիթներով, յաջորդաբար ձերբակալուեցան եւ ցկեանս բանտարկութեան դատաւարտուեցան Վարդն ու Հրաչը (1902): Աւելի ուշ, 1904-1905ին, Բրիտանիոյ ինքը, բազմիցս այցելելով Իզմիր, վարեց երոսպական հաստատութիւնները, կայարաններն ու կամուրջները օդը հանելու դաւադրական ձեռնարկը, որ պիտի արձագանգէր Երլորդի մահափորձին, ե-

թէ դժբախտ պատահարով մը դաւադրական այդ գործունէութիւնը երեսն չելլէր:***

Հ. Յ. Դաշնակցութեան Եգիպտոսի, Կիպրոսի, Կիլիկիոյ եւ Իզմիրի շրջանի սկզբնական գործունէութեան մասին (1895-1898) կարեւոր տեղեկութիւններ կրնանք փոխել Դիւնէ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ երկու հատարներուն մէջ հրատարակուած՝ Արմէն Գարոյի, Մար-Շիմօնի, Բարգէն-Սիւնիի եւ Վահագի (Ա. Վառեան) նամակներէն, ընդհանրապէս ուղղուած ժընեւ՝ «Դրօշակ» խմբագրութեան (1896էն սկսեալ՝ Արեւմտեան Բիւրօ), ինչպէս նաեւ խմբագրութեան եւ Մելիքի (Յ. Իսուֆեան) պատասխան-նամակներէն: Ներկայ խմբագրով մեր հրատարակելիք նամակներու շարքը կու գայ ամբողջացնել մեր ծանօթացումը այդ շրջաններու և տուեալ ժամանակաշրջանի (1896-1905) «փոքր պատմութեան», ծանօթացում՝ որ անհրաժեշտ մէկ համագրուանն է Հ. Յ. Դաշնակցութեան ընդհանուր պատմութեան կերտումին:

Այդ նամակները, գրուած զանազան գործիչներու կամ մարմիններու կողմէ, ուղղուած են առաւելաբար Կիպրոսի եւ Եգիպտոսի (Ազեխանդրիա) դաշնակցական մարմիններուն, եւ ի մասնաւորի Մարքիս (կամ Մարտին) Մուրատեանին, որ նախապէս եղած է այդ մարմիններու պատասխանատու անդամներէն մէկը, 1899ին անցած Ամերիկա, եւ վերադարձած 1902ին՝ Դաշնակցութեան կամքը Ներկայացնող Մարմնի Ֆիլիպէի ժողովին (1901) կողմէ նշանակուած ըլլալով Լեռնավայրի Պատասխանատու Կեդր. Կոմիտէի անդամ:

Նամակները կու տանք բուականի կարգով և իրենց ամբողջական հարազատութեամբ, եթէ նոյնիսկ անոնցմէ ոմանց մէջ գտնուին կազմակերպական-յեղափոխական գործին հետ անմիջական աղերս չունեցող անկարեւոր բաժիններ, կամ զուտ անհատական բնոյթի կարծիքներ եւ գնահատանքներ: Լեզուն կը պահենք անփոփոխ. կը կատարենք միայն, ի պահանջել հարկին, ուղղագրական անհրաժեշտ սրբագրութիւններ:

Հ. Յ.

*** Մ. Վարանդեան, — Հ. Յ. Դ. Պատմութիւն, Զ. Հասար, էջ 450-451:

4 96 - 1

Ս. ԱՅՎԱԶԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ՄԱՐԹԻՆԻՆ ԵՒ ՄԻՍԱԲԻՆ

Նամակագրքը, Ս. Այվազեան, ըստ երևույթիմ Վուրթ Գործիք փարած անուսակցական յեղափոխական մքն է, որ կ'առն պատասխաններն ու մակարայնները: Ծանր օրակուսմերով կ'արտայայտուի հնչակեան վարիչներու հասցէիմ, քէն չի վարձար թան ճննարարուի դաշնակցական կարգ մը գործիքներ կամ գործիչու եղանակներ, հակառակ ամար՝ որ կը գործակցի — ըստ երևույթիմ ամենայն անկեղծութեամբ եւ անտեսելի անխորհուրդ — Դաշնակցութեան հետ: Կը կարծեմք, որ մասնակի բուսակամը պէտք է ըլլայ Յունուար 1896 (եւ ոչ 1895)՝ քէն յտակործն, բայց անպայման քիւրիսացութեամբ գրուած, քանի այնպիսի անկեղծութիւն կայ Վրոշակի մէջ երատարակուած Վրոշակի (Հրայր) Յամակներու (Հրայրի Ա. Յամակի մէջ բնութեամբ կամ Վրոշակի 1895ի քիւ 4իմ մէջ: Երկրորդ մասակը կը կարգէ քիւ 9ի — 1895 Յուլիս — յուլիսուածը):

Սիրելի ընկերներ Մարթին եւ Միսակ,
Կիպրոս

Ուղարկուած եմ այս նամակը Ալեքսանդրիա, Edouard Poste Restante-ի հասցէով եւ կասկածուած եմ, թէ ձեր ձեռքը պիտի անցնի՞ թէ ոչ:

Յունուար 10 թուականով ձեր նամակը ինձ շատ եւ շատ ուրախացուց: Գովում եմ ձեր ձեռնարկը եւ սըրտանոց մտղթում եմ յաջողութիւն: Մինչ ցայժմ ձեզ նամակ չգրելուս պատճառը ոչ այլ ինչ էր, եթէ (ոչ) Գ. (1) խմբագրութեան դանդաղ վարմունքը: Դաշնակցականների պատգամաւորը, որ հոս եկել էր, նրա հետ պայմանաւորուեցանք, թէ նա կ'երթայ Կիպրոս, թէ իրենց կուսակցութեան պրոպագանդայի եւ թէ մեր սիրելի ընկեր Մուրատի հետքերը որոնելու: Բայց քանիցս անգամներ իրարու հետ թղթակցեցանք այս խնդրոյ մասին. մինչ ցայժմ ոչ մի լուր չեն տուած որոշ: 100 Փրանկ նրանց ուղարկել եմ այդ խնդրոյ մասին եւ խոստացել եմ ապագային կրկին ուղարկել:

Ամիս ու կէս առաջ, նրանց մի այլ ընկերը հոս եկաւ եւ նրա հետ բաւական տեսնուելով, նա խոստացաւ ինձ, թէ Դրոշակի խմբագրութեան որոշումները ինձ պիտի գրէր: Ուրիշ քանի մը խնդիրների մասին եւս պիտի աշխատէր խմբագրութեան ուղարկութեանը դարձնել զէպի Կիլիկիա:

Այդ պարտքը գնաց ժընեւ եւ իսկոյն գրել էր ինձ, թէ այս օրերս որոշուի պիտի մենչ մէկին Կիպրոս երթայը, եւ խնդրել էր Ամերիկայի ընկերներին հասցէները իրենց ամառ: Գուցէ հոս ալ երթալու միայն ունին

(1) Վրոշակի:

եղեր: Նաեւ Մարտինի մասին ինչ տեղեկութիւն էին պահանջում: Ես ալ պէտք եղած հասցէները գրեցի իրենց: Նաեւ խնդրում էր թէ ես գրեմ Ամերիկա, մեր ընկերներին, որ միանան դաշնակցականների հետ: Ես էլ գրեցի մեր Սէլեանին մի նամակ եւ գրեցի, թէ Սէլեանը թող գայ Կիպրոս եւ հոն պատուանդան դառնայ դաշնակցականների կողմէն Կիլիկիոյ հետ հաղորդակցելու: Թերեւս մի փոխադրութեան ապահով կեդրոն հոն կազմէ Սէլեանը, թէ Ամերիկայի երիտասարդութեան համար եւ թէ դաշնակցականների համար: Լաւազոյն մարդը ներկայացրեցի Դրոշակի խմբագրութեան՝ մեր Սէլեանը: Երկար մի նամակ եւս գրեցի Սէլեանին այդ մասին, եւ ուղարկեցի Գ. խմբագրութեան: Եթէ կը հաւանին իմ նամակի պարունակութիւնը, թող ուղարկեն Սէլեանին եւ խնդրեն որ ընդունի այս իմ առաջարկութիւնը:

Միսակի հասցէն տուի եւ իրենց էլ մի քիչ խիստ նամակ գրեցի, որովհետեւ նրանք էլ յանցաւոր են ներկայ մեր ժողովուրդի տուած զոհողութեան: Նրանք էլ յանցաւոր են, որովհետեւ իրենց ուժի վրայ ապաւինելով, խիստ թոյլ կերպիւ վարուեցան այդ խաչագողների պետի հետ: Իբրեւ իրենց նախկին ընկերի, խնայեցին զինքը եւ այժմ ուզում են արդարանալ ասելով, թէ մենք չէինք կարծում նազարէկեանը այդքան աւանդիւ. ի՞նչ անենք, մեզի փաստեր պակասում է զինքը հրապարակաւ պախարակելու:

Ես իրենց գրեցի, թէ միամտութիւնը ներքի է մինչեւ մի որոշ աստիճան, բայց չափազանցը՝ յիմարութիւն է: Դուք պարծենում էք, թէ Կ. Պոլսում ունէք ուժեղ կոմիտէ, որը շարք մը գործերով զովեստի արժանի է: Բայց ձեր ուժեղ կոմիտէի քթին տակը երկու հնչակեան եկաւ եւ ձեր անելիք գործը խայտառակ կերպով անելով (2), հազարաւոր ժողովուրդներ ջարդել տուաւ, լոկ ձեզ հետ մրցելու համար: Եւ դուք կրկին չէիք յուսար եւ ձեր ուժեղ կոմիտէն չկարողացաւ արգելել այդ անպիտաններին այդպիսի մի յիմար գործ: Իմ նամակի աւելի խիստ մասը նրանց, ներկայ Ձէյթունը Հնչակեանների ձեռքում մի երկրորդ Սասուն ըլլալն է: Ես խնդրում էի, թէ Ձէյթունին ուղարկութիւն դարձնեն, եթէ ոչ հայ ժողովուրդը այլեւս չպիտի ներէ իրեն գործիչներին:

Գրել եմ, — դուք չէք կարող արդարանալ Վրոշակի նամակը ձեր թերթում դրելով, թէ հնչակեանները միմիայն չորս հրացան են ուղարկել Սասուն, չորս հրացանով են օգնել: Ժողովուրդը յիմար չէ, ձեզ պիտի հարցնէ, թէ դուք ի՞նչ էիք շինում պարոններ՝ ժընեւում:

Մի խօսքով, իմ նամակը, կարծում եմ, թէ հաճելի չեկաւ այդ համալսարանական պարոններին, ու-

(2) Կակարիկ հաւանաբար 1895 Սեպտեմբերի Հնչակեաններու կազմակերպած Պոլսոյ ցոյցին:

րովհետեւ մենք այլեւս չենք կարող կուրորէն գործիք դառնալ անոնց ձեռքը: Լոկ դրամ ժողովելու համար, այլեւս չենք կարող ներկայացնել մեր ընկերներ, այլ գործելու ընկերներ ունինք. եթէ կ'ուզեն սր. գործի համար կը միանանք, միատեղ կ'աշխատինք, բայց մեր ինքնուրոյնութիւնը կը պահպանենք: Մինչ ցայժմ այդ նամակներին պատասխան չկայ, գուցէ էլ երբեք չուղարկեն: Բայց իմ հոգը չէ: Նա ինձ խնդրում է օգնել. ես էլ նրանց խնդրում եմ միեւնոյն բանը: Կարծեմ, թէ իմ խնդիրը աւելի անկեղծ է, քան թէ նրանցը: Մենք անձնական շահ մը չունենք:

Ես խնդրում եմ ձեզ, կուսակցութեան հոգիէն հեռու պահեցէք դուք ձեզ: Ամենուն հետ էլ գործեցէք. գործեցէք իբրեւ յեղափոխականներ եւ աւելորդ անուններ պէտք չէ որ կրէք: Բաւական է՝ ժողովուրդին հասկացնէք, թէ դուք յեղափոխականներ էք եւ գնացել էք ժողովուրդի օգտին ծառայելու, մինչեւ իսկ ժողովուրդի համար զոհուելու, ոչ թէ հնչակի պետը հոն պրոպագանդա անելու, կամ դաշնակցական կուսակցութիւնը զովարանելու:

Իմ խնդիրքս այս է. ժողովուրդն է իրեն տէրը. նա է, որ պիտի վայելէ զաշխարհ. նրան ուժ տուէք. թող կոտորուին անոնք, որոնք անձնական շահերով են իջել ասպարէզ:

Ս. ԱՅՎԱԶԵԱՆ
Յունուար 5/18, Սոֆիա, 1895

Խնդրում եմ նամակս ստանալուդ պատասխանեցէք ինձ: Մուրատի երեւակայած ամբողջ պլանները դուք պէտք է իրականացնէք:

Սպասում եմ ձեր Կիպրոսի հասցէին, որով թէ՛ դրամ ուղարկեմ, թէ՛ աւելի մանրամասն տեղեկութիւններ ձեզ տամ: Դուք եւս գրեցէք ինձ:

ՆՈՅՆ

4 96 - 2

Ս. ԱՅՎԱԶԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ԱՂԵՔՍԱՆԻՐԻՈՑ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՆ

29 Յունուար / 9 Փետր. 96, Սոֆիա

Սիրելիք իմ ընկերներ,
Ալեքսանդրիա

Ձեր 29/17 Յունուարի նամակն ընդունել եմ: Միեւնոյն օրերը նաեւ Դաշ. խմբագրութիւնից ինձ գրել են մանրամասն, թէ ինչպէս ձեր նամակներն ընդունել են եւ ինչպէս ձեզ հեռագրել են եւ ինչպէս իրենց ընկերներից մին ճամբայ է ելեր ձեր մօտը գալու, դրամ ալ հետը բերելով: Կը յուսամ, թէ մինչեւ հիմա եկած ըլլալու է եւ մեր կասկածանքներն ալ անհիմն: Ինձ դրում

են, ի միջի այլոց, թէ Մ. Ս. եւ Ս. Նորսիկեանը Կիպրոս են ուղեւորուել եւ ինձ Կիպրոսի հասցէն են տալիս, որ պէտք եղած օգնութիւնները Կիպրոսի հասցէին ուղարկեմ: Ես, թէ ձեր նամակից, թէ նրանց նամակից այնպէս եմ հասկանում, թէ նրանց եւ ձեր մէջը, ժամանակի վատնումի ու երկարելու պատճառաւ, թիւրիմացութիւն է եղել: Ես ասկից գրել էի արդէն ձեր մասին Մուրատին եւ զո նամակը եւս իրենց էի ուղարկել, թէ ինչքան կարելի է փութով ձեզի հետ միանան: Քանի որ ձեզի հետ չեն միանար սր. գործը շատ կը վնասուի եւ ուժերուն բաժանուելուն իրենք պատճառ կը դառնան: Արդէն ես նրանց հասկացրել եմ իրենց սխալ քայլը: Նրանք մեծ սխալուեք գործել են ժամանակին հնչակեաններէ բաժնուելով:

Նրանց հետ, — այսինքն խմբագրութեան, — բաւականին վիճել ենք մենք: Ես այն համոզումն ունիմ այժմ, թէ նրանք իրենց թերութիւնները խոստովանելով աւելի ազնիւ կերպիւ խոստանում են ապագային գործել առանց աղմուկի եւ առանց մեծ մեծ պրոտոսթոսութիւնների: Այժմ մեր Կիլիկիոյ ժողովուրդի մասին պիտի աշխատին իրենց պարտականութիւնը կատարել անթերի. միմիայն խնդրում են մեր աջակցութիւնը:

Ես արդէն ձեզ գրել եմ Սէլեանի մասին նրանց դրած նամակս: Նրանք գրում են, թէ ուղարկել են Սէլեանի հասցէին. նաեւ խմբագրութիւնը մի նամակ աւելացրել է եւ հրաւիրել են զինքը աջակցիլ սր. գործին:

Ուստի սիրելի ընկերներ, ես խնդրում եմ, ինչ կ'անէք արէք, ամէն զոհողութիւն արէք, ուժերը մի բաժանէք: Աշխատեցէք համերաշխութեամբ գործել. ամօթ է մեզ, մեղք է: Ժողովուրդի թափած արիւնք մեր խիղճերուն վրայ ծանրանալով, անիծում է ամէն անոնց, որոնք իրենց հաւթեանը սանձ չընելով, չեն միանում զէպի մի ամբողջ ժողովուրդի տառապանքին մի քիչ անպատասխան տալու: Այժմ մենք չունինք ոչինչ սեփական: Մեր դադափարն եւս մի ցնորք է, առանց մեր ժողովուրդին: Մենք նրանցով կարող ենք մեր նպատակին հասնիլ: Ուստի, նախ աշխատինք ժողովուրդը փրկել այն ամէն վտանգներից, ինչ որ սպասուում է նրա թշուառութեանը:

Դաշնակցական կամ հնչակեան անունները մեզ զղուեցնելով զղուեցնում են: Այդ ինքնակոչ անունները երանի թէ չըլլային: Բայց քանի որ այժմ իրենք զիրենք ծնունդ են առել, պէտք է մենք եւս այդ անունների միոյն հետ գործելով, նրանց հետ մնալով, նրանց ուղղենք: Եթէ նրանք իրենց կոչման դաւաճանում են, մենք պատժենք զիրենք: Ամբողջ այդ հնչակեան եւ դաշնակցական պարոնները քանի՞ հոգի են: Զէ՞ մի որ մեզով են նրանք այդ անունները իւրացրել: Մենք եթէ բարի ենք, կարող ենք զիրենք էլ բարի անել: Հենց սկիզբէն եթէ հնչակի պետի մօտը մնային ազնիւ եւ բարի մարդիկ, հենց նազարէկ-

եանցի վարժուցը եւս չէր ըլլար այսպէս, ինչպէս է այժմ: Բարի եւ ազնիւ գործիչները հեռանալով այդ պարոնից, նրան սապարէզը թողուցին ազատ: Կերպով մը նրա վասթարանալուն պատճառ դարձան մի-եւնոյն բարի մարդիկ: Միեւնոյն, մենք քաջալերեցինք Նազարէկեանցը ժողովուրդի գլխուն խաչազոզական դեր կատարելու:

Ուստի այս մարդիկ ինծի ազնիւ են երեւում: Աշխատանք սրանց հետ գործել, քանի որ սեփական ոչինչ չունինք, զոհելու եւս ոչինչ չունինք: Մեզ համար մի-եւնոյն է. նրանք երբեք չեն պահանջում, որ գործիչները իրեն զաշնակցական գործեն. իրեն յեղափոխական գործելու է, ասում են:

Ուստի մնում է խորհուրդ տալ Մ. Նորսիկեանին՝ Կ. Պոլիս չզնալ, քանի որ Կիպրոս, Կ. Պոլսէն եւս մի պարոն պիտի գայ եղբ, իրեն Գոլոսոյ ներկայացուցիչ: Ուստի, ձեր եւս փափաքն ալ այդ է, — Կիպրոս մի կեդրոն կազմել: Ամերիկացի ներկայացուցիչները եւ Կ. Պոլսոյ ներկայացուցիչը, դաշնակցականների ներկայացուցիչը, ամէնքը մի խորհուրդ անելով, ձեզ մէջ որ մէկը բուն երկրին մէջը կը մտնայ, որ մէկը Կիպրոս կը մնայ, դրամի եւ փոխադրելու կերպերի վրայ խորհելու:

Ես Կիպրոսի կոմիտէի հասցէն ուրիշ տեղեր էլ տուեր եմ. կը յուսամ շուտով դրամ կ'ուղարկեն: Քովս մնացել է 100 Փրանկ, այդ՝ Մուրատի հետքերը որոնելու համար ուղարկուած դրամներէն: Ան ալ պիտի ուղարկէի, բայց մտածեցի, խոհեմութիւն չէ, քանի որ ձեր միութեան մասին դուք ինձ չէք տեղեկացնում: Պէտք է սպասեմ ձեր տալիք հասցէին: Կը յուսամ նա-մակս ստանալուդ դուք եւս ամէն ինչ կատարելով՝ միութեամբ աշխատում էք: Դուք գրում էք թէ ես եւս իմ բաժինը վկրցնեմ եւ ձեզ աջակցիմ:

Առ այժմ, խնդրում եմ ինձ Կիպրոսի հասցէն ուղարկեցէք, որ կարողանամ աջակցել՝ իմ ուժը ներածին չափ, ձեզ:

Սեղմում եմ ձեր ամէն մէկին ձեռքեր՝
Ս. ԱՅՎԱԶԵԱՆ

4 96 - 3

Ս. ԱՅՎԱԶԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ *

Միքիլիդ իմ ընկերներ,

Գարոններ, ձեր Ձէյթունն եւս իւր զէնքերը խոնարհեցուց մեր ամբողջ թշնամիների բունութեան չկա-

* Ազգուած է Պոլսոյ, Կիպրոսի կամ Ազնեմազիոյ շնորհաբեր:

րողանալով (տողալ ?) եւ մենք դեռ նրանց օգնութեան պիտի հասնենք, որովհետեւ մենք ժողովուրդի օգնելու մէջ եւս փնտրում ենք մեր եւր: Մենք կ'ուզենք մեծ բան մը անել եւ փոքրն ալ չենք կարող անել:

Գարոն Միսակը ինձ Կ. Պոլսէն գրել է մանրա-մասն իրենց առաջիկայ գործունէութեան փլանները եւ խնդրում է ինձանից, թէ իմ տեսութիւնը եւս յայտ-նեմ իրեն: Ուստի, ներկայ պայմանների տակ, ես այդ գործունէութեան չեմ հաւանիր: Իմ տալիք խոր-հուրդս այս է:

Մինչեւ մենք մեր ներքին թշնամիներից չազատուենք, արտաքին թշնամիների հետ չպիտի կրնանք կոտել: Ուստի, ես առաջարկում եմ ինչքան կարելի է ներքին միութեան ուժ գոյացնել, եւ այդ ներքին ուժը գոյացնելու համար ինչ որ պէտք է անել՝ մտածելու ենք նրա մասին: Մենք ունենք ներքին մի թշնամի, որը իր եսամոլ գործունէութեամբ յեղափոխական գործե-րում, ժողովուրդին աւելի վնաս տուաւ, քան թէ՛ ինչ որ պէտք էր տար: Ուստի, աշխատելու է այդ ինքնա-կոչ շարլաթանի ձայնը կոկորդի մէջ խեղդելով, անուանամոլութեան ախտը մեր ամէն գործիչների սրտե-րէն արմատախիլ անել. կուսակցական անունները մի կողմ նետելով՝ աշխատել ժողովուրդին իսկական յե-ղափոխականներ ներկայացնել:

Երբեմն խմբագրութիւնը նիւթ էր պահանջում հենց ժողովուրդից. ինքը հինգ փարա չէր ծախսում. թէ՛ իր եւ թէ ժողովուրդի թշնամիին դուխը ջախջա-խելու համար: Այժմ բաւական նիւթ կարող է ժողովել հենց Ձէյթունից: Ձէյթունի ժողովուրդը ատելով ա-տում է այդ անիծեալ հնչակեանների պետին, որովհե-տեւ խեղճ ժողովուրդին չարաչար խաբեցին: Իրենց ներկայացուցիչներով, Աւոյի եւ Մարոյի զնդերով, մեծ-մեծ խոստումներ արեցին եւ ոչինչ չարին: Ասոնք իմ գուշակութիւնը չէ, այլ իսկութիւն մըն է, որ դուք պէտք է մարդիկ ուղարկելով անդ՝ այս ճշմարտու-թիւնները ժողովուրդին ներկայացնէք: Այդ անպի-տանները ահազին գումարներ կորցեցին ժողովուրդէն: Ես ամենավստահութեամբ կ'ասեմ, թէ ոչինչ չեն ա-բաժ: Բայց երբ զէյթունցիներն ժողովուրդին ներկա-յացնեն այդ վեց հնչակեան պարոնների արածներն եւ ճշմարտութիւնը երեւան գայ, այն ատեն տեսնենք, թէ այդ խաչագողներն ի՞նչ երեսով ժողովուրդին պիտի ներկայանան այդ անունով:

Ուստի, այս իմ առաջարկութեանս ուղարկութեան արժանանալուն վստահանալով՝ սպասում եմ նրա ի-րադրածման:

Ս. ԱՅՎԱԶԵԱՆ

14/26 Փետր. 96, Սաֆիա

4 96 - 4

Ս. ԱՅՎԱԶԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ԿԻՊՐՈՍԻ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՆ

Ինչպէս ճախորդներում, այս ճամակիմ մէջ եւս Ս. Այվազեան ունի դէպքերն ու դէմքերը արժեւորելու իր իւրայատուկ եղանա-կը, երբեմն ճոյժիսկ՝ բաւական արտառոց կարծիքներ (օրինակ, հնչակեաններում ակնարկելով, «... մեզ պէտք է զգուշանալ հենց մեր ներքին թշնամիներից, որոնք աւելի կատարի եւ ամազ-թիւ են, ինչքան մեր բուն թշնամիք»): Կու տամք սակայն հարա-գատութեամբ, հաւատարիմ մնալու համար մեր արգելքած սղբ-բուժիքն, եւ բացայայտելու համար ամկուսակցական բայց յեղա-փոխական որոշ խալի մը մօտ այն օրերում տիրող տեսակետներն ու մտայնութիւնը:

Միքիլիդ իմ ընկերներ,

Փետրուար 13 թուականաւ ձեր մի նամակն ընդու-նել ենք, որով մանրամասն նկարագրում էք ձեր Կիպ-րոս երթալը եւ հոն ձեր գտած ընդունելութիւնները:

Ես շատ ուրախ եմ, փորձերը ձեզ խոհեմացնեն պիտի եւ դուք վերջապէս պիտի համոզուիք, թէ կու-սակցական անունները ինչքան վատ տպաւորութիւն ա-րեցին մեր ժողովուրդի վրայ: Դուք պիտի ըլլաք ա-ռաջին հակառակորդ՝ անուան տակ գործող անձնաւո-րութիւններու: Ես սրտանց ձեզ ցանկանում եմ, որ դուք կարողանայիք մի անգամ Ձէյթուն ոտք կոխել եւ հոն պիտի տեսնաք, թէ մեր մոլեռանդ հնչակեան-ները ինչքան վատ տպաւորութիւն արին ժողովուրդին վրայ:

Միքիլի ընկերներ, դուք խնդրում էք, որ ես իո-կոյն ձեզ պատասխանեմ: Արդէն ձեր նամակին շա-տոնց սպասում էի, եւ ձեր հասցէին: Ուստի ջո ան-ուանդ դրամ եմ ուղարկում (100) Փրանկ: Եթէ իմ մի-ջոցներս ներէր, աւելացնելով վրան բան մը պիտի ու-ղարկէի, բայց քանի որ ձեռքս գործ մը չունիմ, չեմ վաստկիր, նիւթական օգնութիւնը ապագային պիտի մնայ: Մենք ունենք հոս մի փոքրիկ ընկերութիւն, որը մինչեւ հիմա հանգանակած գումարէն երկու հարիւր Փրանկ Դ. խմբագրութեանը ուղարկել է: Դ. խմբ-բագրութիւնը ինձ տուել է Կիպրոս մի հասցէ, որը ես էլ Անվերս մեր բարեկամներին եմ տուել. յուսամ մին-չեւ ցայժմ Անվերսից մի բան ուղարկել են այդ հաս-ցէին: Ահա Դ. խմբագրութեան Կիպրոսի կոմիտէի մա-սին տուած հասցէն. Mr. Touran Carénian, poste res- tante anglaise, Larnaka, Chypre: Ուստի ապագային այս հասցէին պիտի ուղարկենք մեր հանգանակու-թիւնները:

Գալով ապագայի ձեր անելիքի մասին, ես խոր-հուրդ եմ տալիս ձեզ գործել, բայց ոչ անուան տակ. եւ աշխատեցէք Ձէյթուն մտնելով, միեւնոյն զէյթուն-ցիների ստորագրութեամբ, հնչակի ըրած խաչագո-

ղութիւնները երեւան հանել, առանց խնայելու, ե ժո-ղովուրդի դատողութեանը յանձնել այդ եսամոլ պա-րոնների արարքը: Ժողովուրդը գիտէ այժմ զնահատել իր բարեկամը եւ չարակամը: Ես ապահով եմ, որ նը-րանք — այսինքն զէյթունցիք — ատելով ատում են հնչակեանները եւ ձեզ էլ միեւնոյն աչքով պիտի նա-յեն: Բայց դուք պէտք է ներկայանաք անձամբ եւ ներ-կայացնէք ձեզ, ոչ թէ ձեզմէ բարձր մի կուսակցու-թիւն:

Եթէ կարելի է, մինչեւ իսկ, առանց զէնքի անոնց ներկայանալու է ձեռք մի քանիսը եւ նրանց համակ-րութիւնը վաստակելու է, նրանց հետ ապրելով, եւ կամաց կամաց հնչակեաններուն հող ըրած ամբողջ ամբարտաւանութիւնները հրապարակաւ պախարակե-լու է, այնպէս որ այդ թէ՛ նրանց ներկայացուցիչը, թէ՛ նրանց Աւոյի եւ Մարոյի զնդերուն զօրապետնե-րուն քաջագործութիւնները, որ հնչակի էջերը լիքն են (1) եւ Հրաչեայի ու Ջալլադի քաջագործու-թեամբը, — (բոլորն ալ լոկ շարլաթանութիւն է, մենք գիտենք ես՝). անոնք բոլորն ալ հրապարակ հանելով, հայ ժողովուրդին աւելի մեծ ծառայութիւն կարող էք տալ, քան թէ ձեր արիւնը զոհելով՝ նրա ազատութեան պատուանդան կը դառնաք: Դուք, պէտք է այդտեղից որոչէք մասնաւոր ընկերներ հոն երթալու համար. մին-չեւ մինչ հայ ժողովուրդը չենք ազատեր այս տեսակ խաբեաններից, այս ներքին թշնամիներից, շատ դժ-ւար կ'ըլլայ անկեղծ եւ իսկական ժողովուրդի բարե-կամներին՝ ժողովուրդի համակրանքին արժանանալ:

Չենց այսօր Դ. խմբագրութիւնից նամակ եմ ստա-ցել եւ ինձ գրում են, թէ իրենք մտադիր են մարդ ու-ղարկելու Ձէյթուն. միմիայն այս խնդրոյ համար կար-ծեմ պիտի ըլլայ:

Գալով այդ զրոյցին, թէ Սուէտիոյ մէջ 1000 մարդ է մտել, դա չափազանց կ'երեւայ ինծի: Ինչ որ այդ անտիքցի հայ մարդը ձեզ ասել է. չի կրնար այդքան մեծակալ խումբ մը պահպանուիլ: Դա չափա-զանց է, նրա Մ. Սէլեանի հետ ծանօթ ըլլալուն մի հաւատաք, եւ ոչ ալ այդ վարդապետի հետ: Մ. Սէլ-եանը ասկէ երեք ամիս (առաջ ?) Կ. Պոլիս էր եւ չեմ կարծեր, թէ Մերսին փոխադրուած ըլլայ: Նա լոն-տոնում այդպիսի ցանկութիւններ ունէր, բայց մենք նրա խօսքերին շատ ջիշ կարեւորութիւն ենք տալիս. նա խօսքով աշխատում է, քանդում . . . : Դուք մնալու էք հող մի ջիշ ժամանակ եւս, մինչեւ լաւ մը ամէն կողմ ուսումնասիրէք: Կրնայ ըլլալ, որ այդ մարդը ձեր ըսածին պէս բարի մարդ կ'ըլլայ, բայց սպասե-ցէք Մ. Սէլեանի նամակին՝ եթէ նա ճշմարիտ հող է: Եթէ նրա գիրը չէք ճանաչի, ես ջոյս ունենալու եմ նրա հին նամակները. գրեցէք որ ուղարկեմ ձեզ: Անա-պարելով չըլլայ թէ անձերնիդ վտանգի ենթարկէք,

(1) Մէկ բառ՝ անքննաւոր:

առանց օգուտ բերելու մազի չափ: Քէպէտ դուք երե-
խայ չէք, ներքեցէ իմ դիտողութիւններին, բայց մենք
պէտք է զգուշանանք Հենց մեր ներքին թշնամիներէն,
որոնք աւելի կատաղի եւ անազնիւ են, ինչքան մեր
բուն թշնամին:

Կ. Պոլսէն Մ. ն ինձ գրեց. բայց կը յուսամ մինչ
ցայտմ ձեր մօտը եկած է: Ես նրան գրել եմ Ալեքսան-
դրիա: Ամերիկա շատոնց նամակ գրած չեմ: Դ. խրմ-
բագրութեան միջոցով Մ. Սէլեանին մի նամակ էի
գրել, եւ գինք հրաւիրել էի զալ Կիպրոս եւ շարունակ
հող մնալ: Այսօր գրում են ինձ Դ. խմբագրութիւնից,
թէ մի լաւ անգլիախօս ընկեր մօտ օրերս ձեր մօտ պի-
տի գայ, հող մնալու: Ես զարմանում եմ, թէ ինչո՞ւ
Սէլեանը չեկաւ, կամ ինչո՞ւ ինձ չպատասխանեց: Այս
օրերս նրան ես կը գրեմ Նիւ Եորք, որ ձեզի ուժ տան,
բայց դուք շտապեցէ հող մի քանի մնայուն ընկեր-
ներով կոմիտէ մը կազմել, որ ձեզ ուղարկուած օժան-
գակութիւնները ընդունի եւ հող նոր հասած ընկերնե-
րը պատուարէ:

Սիրելի ընկերներ, մտածեցի ձեզ ուղարկել Մ.
Սէլեանի նամակներից մի հատը, բայց չունիմ եզեր
մօտ. իսկոյն պիտի գրեմ Կ. Պոլսի Սմբատին, որ նա
ձեզ գրէ, թէ Մ. Սէլեանը հոն է մի, կամ ոչ:

Ընդունեցէ իմ հայրական օրհնութիւնները:
Մնամ ձեզ միշտ յաջողութիւն մաղթելով:

Ձերդ՝ Ս. ԱՅՎԱԶԵԱՆ

17/20 Փետր. 96, Սոֆիա

4 96 - 5

ԻՏՎԱՐԴԻ ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ

96 - 21/ Մարտ. Կ. Պոլսի

Ծարգելի ընկեր Գր. Մարթին.

Ձեր Փետր. 6/18 թիւ նամակն զիս հասաւ. որ-
չա՛փ ուրախութիւն, երջանկութիւն երբ կը կարգամ
Ձեր գործունէութեան յաջող ու փայլուն հանգամանե-
րը: Կը յուսամ որ յետ այսու պիտ հանգարտի այն
սիրտը, այն խիղճը որը հրաբորոք միշտ քաղցած վի-
շապի մը պէս կ'ուզէր կլլէր այն ինչ որ հնարաւոր էր.
պիտի հանգարտի կ'ըսեմ Ձեր մեծ ու եռանդալից հո-
գին, զի այժմ մեծ ասպարէզի մը վրայ կարող կը լի-
նէք քաջալերուել միշտ Ձեր կեանքի դժուար հանգա-
մանքներում, որը կարող է այգպիտի երկաթէ կամք
ունեցողը միայն փշրել անցնիլ եւ մանաւանդ յաղթե-
լով քաջալերուիլ. գործեցէք եւ ահա մեզ կը գանէք

սանդուղին ամէնէն վարը. առաջ դուք մեզ կը նա-
խանձէիք եւ այժմ մենք սկսանք Ձեզ նախանձել. բայց
մի մեղադրէք որ կը նախանձիմ, զի սա բոլորովին ան-
կեղծ սրտի արտայայտութիւն է:

Գալով Ձեր գործունէութեան մասին՝ այդ տեղ զէնք
անցկացունելը խիստ դժուար կը լինի, ըսած էք. բայց
կայ մի այլ միջոց, այդ մասին հոս Մ. Ն. ի հետ խօ-
սած ենք. երբ մեր ընկերներէն ոմանք Ամերիկայէն կու
գան, կարող են զէնք միայն 2 հրացան եւ ռեվոլվէր
մը իրենց հետ հանել սանդուղին տակը տեղ չիներով
եւ այլն...: Իսկ այդ տեղէն ներս անցնելը դիտէք ինչ
միջոցաւ լինելը. այսինքն տեղէն բաւական է որ մուռ-
նաճիթ(?) մը հետ մի քիչ յարաբերութիւն ունենաս եւ
լաւ տեսնուիս, ահա նա Ձեզ կը տանի միւս կողմը(1)
ուղած տեղերնիդ: Այդ տեղ մի թուրք երիտասարդ կայ
որը լրտեսի պաշտօն կը վարէ Լարնագայի մէջ. իր հայ-
րը եւ Կիպրոս եղած ժամանակէս ամիս մ'առաջ մե-
ռած էր եւ այժմ ինքը հօրը պաշտօնը կը վարէ. զգու-
շացէք դրանից: Ժամագործը ինձի մասին ինչ որ կ'ը-
սէ՝ գրել չմոռնաս, նաեւ ասկէ վերջ նամակներդ գրկէ
տեղիս դաշն. մարմնի հասցէով որը Ձեզ ծանօթ է,
զի քանի որ մենք բոլորովին մտած ենք գործի մէջ եւ
նրանց հետ հարկ չկայ ալ եւս անձնականապէս խորհիլ
ու այնպէս շարժիլ, աւելի կասկած կը հրաւիրէ, ինչ-
պէս որ այդ կը պահանջեն նաեւ իրենք եւս:

Այլադեանէն նամակ առի որ կը գրէ, թէ իբր Մ.
Սէլեան Մերսին կը գտնուի եղեր. Ձեզ յանձնարարում
ենք որ Ձեր քայլերում խիստ զգոյշ ըլլաք ու ամէն
մարդ իբրեւ գաղափարակից ընկեր չճանաչէք քանի
նրան չփորձէք գործնական ասպարէզի վրայ: Մ. Սէլ-
եան հոս է եւ թէեւ երթալու խօսք մը կար, բայց տա-
կաւին կը մնայ, զինքը քիչ անգամ կը տեսնեմ:

Ձեզ համար ամենաէական եւ կարեւոր խնդիրը այն
է, որ երկրի ներսը մարդ ունենաք Ձեր անցնելէն ա-
ռաջ, որոնք այն տեղի դիրքին հանդամանաց քաջ ծա-
նօթ ըլլան եւ ահա այս տեղէն հետզհետէ կ'ելլեն ուղ-
ղակի երթալով Կիլիկիա, ուրկէ միշտ յարաբերութեան
մէջ կը լինին Ձեզ հետ:

Ձեզ սիրալիբ համբոյրներ, ողջոյններ մատուցա-
նելով մնամ Ձերդ:

ԻՏՎԱՐԴ

Յ. Գ. — Գրողը նամակը ահա կը գրկեմ. նրանք
հանդիստ են:

Բարեւ կու տաս ամէնուն. Գր. Գրիգորին ըսէ որ
թող գրէ. առանձին կ'ուզէի գրել, ժամանակ չունիմ,
մանաւանդ այսօր խիստ զբաղեալ եմ:

ՆԱՅԵ

(1) Կիլիկիա.

4 96 - 6

Ս. ԱՅՎԱԶԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ

Սիրելիդ իմ Մարթին.

Բաւական աշխատեցայ, որ ուղղակի չո անուան,
բանկի մը միջոցաւ հասցնեմ երկու հարիւր Փրանկ,
բայց անկարելի եղաւ: Ուստի, կրկին ուղարկել եմ
Դրօշակեանների խմբին այդ գումարը եւ կը յուսամ
նրանք պիտի աշխատին այդ գումարը ձեզ շուտով հաս-
ցնել. ապահով եղէք:

Պարոն Միսակի վարձուները դէպի դաշնակցական-
ների կուսակցութեան, ինչքան էլ անվայել ըլլայ, նը-
րանք այնքան ազնիւ են, որ իմ խնդիրը պիտի կա-
տարեն եւ այդ գումարները ձեզ կը հասցնեն:

Ամերիկայից մի նամակ եմ ստացել պարոն Աւե-
տիս Սէլեանէ, որը իր մտադրութիւնները ինձ նկա-
րագրելով, նրա փորը կարծում եմ թէ սատանան է
մտել: Նա էլ ուզում է, իր խելքին փչած միջոցներով,
ժողովուրդի վրէժն մի փորձանք եւս աւելացնել:

Այժմ այդ տեսակ կազմակերպութիւնների ժամա-
նակը չէ, ոչ էլ երկար բարակ քննադատութիւններ ա-
նելու, այլ ուղղակի գործելու ժամանակը եկել հասել,
եւ անցնում է:

Ափսոս Ամերիկայի երիտասարդութեանը, որ ցնո-
րական եսամոլութեամբ, լոկ առարկութիւններ անե-
լով, իրենց ժամանակը վատնում են եւ չեն նուիրում
յեղափոխական գործին: Նաեւ ամօթ է նրանց, որոնք
յանդգնում են ժողովուրդի մտքեր թունաւորելով, ու-
ժերը բաժան-բաժան անելու ձգտում են: Ուստի, կը
յուսամ, թէ դուք չէք հետեւիր այդ տեսակ ձգտում
ունեցող անձնաւորութիւններին, այլ ձեզ ուղեկից ու-
նենալով ձեր խղճերը եւ ժողովուրդի վիճակը ըստ
այնմ կը գործէք: Ես չեմ կարող ոչինչ ասել ձեզ, այլ
միմիայն յորդորում եմ անկեղծ եւ անձուէր ըլլալ
ժողովուրդի շահերին: Յեղափոխական կոչումը անձ-
նական շահերի հետ յարաբերութիւն չունի: Ափսոս, որ
մեր երիտասարդութիւնը ամէնն ալ յեղափոխական են
ներկայանում, Հենց իրենց կոչումը չեն ճանաչում.
բուն իսկ յեղափոխական ասպարէզի մէջ, փնտրում են
իրենց ապագայի եւը:

Ձերդ՝ Ս. ԱՅՎԱԶԵԱՆ

29 Մարտ, 96, Սոֆիա

4 96 - 7

Կ. ՄԱՐԳԱՐԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ

Նամակագիրիմ իմֆնութիւնը մեզի անձամօք է: Նամակի լու-
սանցքիմ վրայ կը գտնեմ մատիտով մակագրութիւն մը, եւս-
ճարար Մարթիմէմ.— «Մշնցի պէրպէր Միսակ, երբէ կըրայր՝
Պարոն»:

2/14 Մայիս 1896, Կ. Պոլսի.

Տիար Մ. Մուրատեան.

ի Լառնաքա.

Ազնիւ բարեկամ,

Թուականէս քանի մը օր առաջ Ամերիկայէն ըն-
դունած եմ 150 թալրի փոխարէնի փոխանակագիր մը
ձեզ զրկուելու համար. հարկաւ Տիար Յ. Հայկունի
այդ մասին ձեզ ալ գրած ըլլալու է. ուստի ներկայիս
ներփակեալ կը գտնէք վերոյիշեալիս համարժէք չէք
(փոխանակագիր) մը (Ջ. Stg. 30. V/-) երեսուն անդ-
լիական ոսկինոց իմ հրամանիս զոր ճիշտ ըրած եմ, արդ
տեղը Պանք Օթօմանէն դանձելով՝ ձեր տուժարին մէջ
կը պարտաւորիք Տիար Յ. Հայկունիի եւ այս գրամը
ընդունած ըլլալիդ նամակաւ տեղեկացնել հաճեցէք
յԱմերիկա կամ իրեն կամ եթէ ուրիշ թղթակցի մը որ
կը ճանչնաք անդ:

Նոյնպէս կը խնդրեմ որ ընդունած ըլլալիդ հա-
ճիք երկուողիւ մը ինձ եւս տեղեկացնել ըստ առեւտրա-
կան սկզբանց:

Երբ Ամերիկա ուզէք գրել կարծեմ թէ Տիար Յ.
Հայկունիի ատրէսը արդէն գիտնալու էք, որ հետեւ-
եալ կերպով է.

Mr. John B. Haygooni
275 West End Ave. New York N. Y.
U. S. A.

Իսկ իմ հասցէս հետեւեալ կերպով կը գրէք.

G. S. Markar
c/o G. Senekerimian
Bible House
Constantinople

Ձերդ յոյժ յարգանք
Կ. Մ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

4 96 - 8

ԱՐՄԷՆ ԳԱՐՈՅԻ ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ

Լառնաքա, 9 Մայիս 96

Սիրելի՛ բարեկամ,

Կը զարմանամ որ ցարդ երկուող մը չգրեցիք մեզ
Ձեր հասնելուն մասին: Կ'երեւայ թէ մեզ մոռնալու
մտադրութիւն ունիք:

Անցեալ օր ժընեւէն նամակ մը ստացանք, որով մեզ կ'ուզարկէին այն 200 Քրանքը զորս Գ. Այվազեան ուզարկած էր քու անունով. կ'ուզէի հենց այսօր նամակին հետ քեզ հասցնել այդ դրամը, բայց կարծելով որ մի գուցէ նամակս անվտանգ քո ձեռքը չհասնի, խորհեցայ քեզ իմաց տալ որ առաջին նամակովդ մի որս չհասցէ ցոյց տառ մեզ որպէսզի կարողանանք ապահովագրեալ նամակով մը այդ 200 Քրանքը քեզ հասցնել:

Կը խնդրեմ որ հաճես մի փոքրիկ նեղութիւն կրելով Լաւնաքա ուղղես(1) Ս. Միմասով անունով եկած նամակները:

Իմ Գէյրութ երթալու առ այժմ առկախ մնաց, կարելի չեղաւ Չայֆէճիներու միջոցաւ երթալ. պէտք է անցադրով անցնել: Այս մասին գրեցինք Պոլիս, որ ինձ համար մի անցադիր ճարին Գէյրութի համար:

Այսօր կ'ուզէի մի երկար նամակ ուղղել ձեզ մի օրերէ խնդրի համար, բայց ժամանակ չունիմ, նաեւ հիմա պիտի մեկնի: Առաջին առթիւ կը գրեմ:

Ազա Գոզայիս երկու աչքերը պազ իմ կողմանէ, ըսէ իրեն որ ձեր մեկնելէն ի վեր հիւանդացայ. թէ ջերմ ունիմ եւ թէ ստամոքսի տկարութիւն: Դուք փոստերէդ պատուեցիք, բայց գործը թաց է ու թաց:

Միքայէլին համարյոներս. ըսէ իրեն թող ինձմէ չցաւի, դէպի ինքը միշտ բարեկամական անկեղծ զգացում մը կը տածեմ. թերեւս նա ասոր հակառակ կը խորհի, ինչ որ ցոյց տուեց իր վերջին բաժանման վայրկեանին, բայց կը սխալի իւր տեսութեանը մէջ:

Թէ քու եւ թէ Ներսէսին հասցէին եկած նամակները առանց բացուելու ուղղեցի Աղեքսանդրիս. անշուշտ ցարդ ստացած կը լինի: Խնդրեմ եթէ այստեղի գործերուն վերաբերեալ բան մը կայ, այդ նամակներուն մէջ մեզ ուղարկեցէք: Գրէ նաեւ թէ Արամէն լուր ունի՞ք:

Գ. Քորոսին եւ բոլոր մեր ընկերաց յառուկ բարեւներ:

Համբոյր սեւ աչքերուք

Քոյդ ՊԱՏՕ

Յ. Գ. — Անշուշտ կարգացիք Ապտակի վերջին թիւը. այդ մասին խնդրեմ մի լաւ խորհեցէք եւ մեզ իմացուցէք ձեր կարծիքը, թէ ինչպէս պէտք է ասոր պատասխանել: Արդեօք հո՞ր են տակաւին կեանքացի այն երեք տղայքը, որք հոս եկած էին Հ. երու անունով եւ որք մեր 2 ընկերներուն հետ միասին Հարէճիտան գնացին: Այս մասին գրէ խնդրեմ ինձ:

ՆՈՅՆ

(1) Չընելի նամակիմ մէջ յիշուած էր որ Գ. Մար-Շիմօնիմ նամակ մը գրած են Սոզոմոն Միմասով կոչուող. անշուշտ այդտեղի փոստը կը սպասէ ցարդ:

ԱՐԱՄ ՕՀԱՆՆԷՍԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Նամակագրիմ իմֆոսիմը՝ անձամօր: Գրուած է Պոլսէն եւ ուղղուած անձայն հաւամակագրեալ Կիպրոս կամ Արեւմտ-գրիս՝ Մարթիմիմ եւ ընկերներու:

7/19 Մայիս 1896, Կ. Պոլիս

Միւրեւի ընկերներ,

Անշուշտ լսեցիք Պոլիսի պատահած այդ փոքր դէպքը. ճիշդ Ձեզ նամակ գրելու մէկ օր վերջը, դիմացը անցայ, տեսայ թէ ձերբակալութիւններ կ'ընեն. հայրենակիցներէն մէկը զիս անհետ ըսաւ թէ՝ շատ մի պատիր, խնդրեմ ինձի պատմելով. ես ալ դնացի տեղս Կետիկ Փաշա, իրիկունը ճաշելէն վերջը խանութ գնացինք, պառկելու. ես ներս մտայ լաթերս կը հանէի, էնիշտէս դուրսը մէկու մը հետ կը խօսէր, այն մարդն ալ միւս օրը պաշտօնի պիտի երթար, կեցիր բարով ընելու էր եկեր. խօսքը վերջացունելէն յետոյ, այն մարդը ձերբակալեցին. մեր բարեկամը ներս եկաւ յանկարծ. երկու երեք փոլիս, մէկ երկու ալ ուրիշ մարդիկ դուռնէն ներս մտան, սկսեցին վրանիս եւ սանդուղները նայիլ, ոչինչ չգտան, միտակ սանդուղէն նամակներ եւ պատկերներ գտան. մեզ ալ հետ մէկ տեղ առին գնացին. զովն ալ պախալի խանութ մը կար Չմշկածազցի, անոր խանութն ալ խուզարկեցին. մէջը սենեակներուն մէջ քանի մը մարդ կը կենար, անոնք ալ բերին, ամբողջս եղանք տանըմէկ մարդ. գիշերը մէկ խարախուցի միւսը տարին բերին: Վերջապէս այն գիշեր երաշխաւոր մը գտնալով ելանք. հետեւեալ առաւօտ, մահալացիներէն վկայագիր մը տուին, գնացինք կառավարութիւն: Ճազերուն ետեւ մնացինք 8-9 ժամ, յետոյ տանըմէկ մարդը կանչեցին, սկսեցին հարցումներ ընել. — Ինչո՞ւ համար այդչափ մարդ մէկտեղ կը կենաք, հող խան չէ, — մեզի հարցուց: Ըսի թէ աշկերտութիւն կ'ընեմ խանութին մէջ, ուրիշ ալ աշկերտ կայ. անկէ յետոյ նամակները կարգալ տուին. Թարգմաններ են. ըսին՝ Ամերիկայէն գալած նամակ մը կայ Մկրտիչ Սուլտուրեանին, թէ այս տարի գործերը շատ գէշ են, եթէ ասանկ մնայ, բոլորիս վիճակն ալ թշուառ պիտի ըլլայ, երկու տարի ու կէսուայ նամակ, ստորագրութիւնն ալ՝ Արմենակ Տօնապետեան, ըսին թէ այս ի՞նչ գործ է, շիտա՛կը ըսէք. ան ալ պատասխանեց թէ գործարաններու գործերն են: Բայց ես ալ վկայագրին մէջ անունս ճիշդ տուի, հօրդ անունը ի՞նչ է ըսաւ Օհանէս, մականունն ալ Նալպանտեան. հիմա փոխաւ ալ անանկ է. ըսին թէ այս ստորագրութիւնը դեռ տղան ո՛վ է, պատասխանեցի թէ բարեկամ մը ունէի, հիմա ձեռած է: Եւ ըսին թէ անոնց մէջէն

ԱՄԵՐԻԿԱՅԷՆ՝ Ս. ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ

Boston, Մայիս 14, 96

Միւրեւիդ իմ Մարթին,

Տարօրինակ դատողութիւն եւ հասկացողութիւն ունիք երբեմն: Վերջին նամակդ կարդացած ժամանակս միտքս եկող բոլոր արդարացի եւ շախմատիչ առարկութիւնները եթէ մի առ մի համրեմ՝ թերթ լեցունելու է: Այս առաջին անգամ չէ որ դուք երբ քիչ մը պոչերնիդ նեղը մնայ՝ անմիջապէս ձեր ամենամեծ ընկերները այնպիսի յիմար կերպով մը կը դատապարտէք որ չուտով դուք ալ կը զղջաք:

Ինչո՞ւ լայն սրտով չէք խորհիր եւ ընդարձակ հայեացք մը չէք ունենար խնդրուց վրայ: Գիտէ՞ք ինչու ըսած ենք թէ եթէ դաշնակցականք հրեշտակ իսկ լինին մեզ պէտք չէ, քանզի մենք չենք ուզած հոս այնպիսի կերպով մը գործել որ Հ. (1) ըրածին պէս միայն մի քանի հարիւր խեղճ ու կրակ եւ մեծաւ մասամբ անկուտ երիտասարդներէ բաղկացեալ կուսակցական բաժանում մը մացնենք, այլ ընթացք մը բռնած ենք որ ժողովուրդի աւելի ահագին մի գանդուածը ի մի կրնայ բերել եւ նաեւ տեղացիներէն ալ համակրանք գրաւելով մեծ օգնութիւն ձեռք ձգել: Նաեւ եթէ երբեք Դ. (2) անունով գործ իսկ երեւան գար, ազմուկի առջեւ տանել, որը անցեալի մէջ անհուն վնաս տուած է՝ զոր դասն փորձով տեսած ենք, գրեթէ անկարելի պիտի լինէր եւ է: Դուք պէտք էր այնչափ դիմանայիք թէ ես պատրաստ եմ ստանալի անունը առնել վրաս, եթէ անով աւելի մեծ ծառայութիւն կրնամ մատուցանել ազգիս: Ամէն անկեղծ դաշնակցական վստահ եմ թէ ինձի պէս պիտի խորհէր Ամերիկայի կազմակերպութեան վերաբերմամբ, ինչպէս երբեմն Դ. հին ծանօթ բարեկամներս ի Պոլիս(3) եւ այլուր կը խորհին: Մեր բուն նպատակը հոս կարելի եղած ամենամեծ ոյժը երեւան բերել է ըստ կարի կարճ ժամանակի մէջ, եւ աւելի ծօտէն տեղեակ ըլլալով տեղական պարագայից եւ հրահանգութեան տակ լինելով 15 տարբեր քաղաքաց հայոց լաւազոյն մասէն բաղկացեալ կազմակերպու-

Ձերդ ԱՐԱՄ ՕՀԱՆՆԷՍԵԱՆ

(1) Մէկ քառ անգրեանի:

- (1) Հնչակեաններու:
(2) Գաղմակցութեան:
(3) Գժուար ընթերցանի:

Թեան մը՝ կը գործենք ճիշդ ժողովուրդի իրական պահանջներն համաձայն. երկար գրելու ժամանակ եւ պարագայ չի ներեր. K. L. Armenին այս մասին գրած նամակէն կրնաք որոշապէս մեր գիրքը հասկնալ, ինչպէս նաև Մ. Ն.ին գրած վերջին նամակէն. դուք մեր գործունէութեան մէջ մեր հոս տեղի գործոց ունեցած յարաբերութեան խնդիրը շուտ կը մոռնաք և ամէն ըսուածէ շատ կը նեղուիք(4) (կոր): Մենք թէև տարբեր և աւելի նպաստաւոր կը խորհինք դաշնակցականաց վրայ, բայց անցեալի մէջ բաւական արդարացի պատճառներ ունեցած ենք խոտուր քննադատելու եւ կծու գրելու այս մասին մեզ: Բոզմ է պր. Այվազեանի մի նամակն, ինք նոյն շափով կը շափէր Հ.ը եւ Դ.ը: Մեր Լոնտոնի սպաւորութիւնն ալ մեզ անմանօթ չէ, նաև իրենց խմբագրութեան հոս գրկած անձին Լոնտոն Հ. կեդրոնը այցելելու լուրը եւ իր մեզ ուրացումը, մեր կազմակերպութեան մասին դադարի պահել պահանջուած բաները հոս հոն յայտնելը, եւն. եւն.: Նաև կան մի քանի կէտեր, ուր բոլորովին տարբեր կը խորհինք մենք. չենք հաւատար յեղ. կազմակերպութեան մը պաշտօնական բերան թերթ ունենալուն. մէկ անհատի պատասխանատուութեան տակ յեղ. դադարիար եւ լուր տալ՝ ինչ որ է, բայց պաշտ. օրկան անպէտ եւ վնասակար կը նկատենք: Կը ցաւիմ որ մինչ ցարդ չէք հասկցեր մեր ընկերները, եւ նահատակաց արիւնը հոսելէ չդադարած իսկ, որ անոնացուցած եւ սրբացուցած է ամէն հայ, փառասէր կուսակցամով մը կը տեսնէք նրա մէջ: Մուրատի ամենատիրելի ընկերը այնչափ շուտ, այնչափ չէ կարող նուաստանալ. պէտք է նորա մեզ տուած բարոյական պաշարը յաւիտեան տեսէ: Ուրիշ գաւառ մ'ալ անցեալները Մմբաւը եւ պրն. Այվազեանը կը փշէին, իբր թէ Պոլսէն խմբագիր մը վարձած ենք զուս կուսակցական թերթ մը հրատարակելու համար. չեմ գիտեր ուրիշ՝ կը հնարին այս բաները եւ ուրիշ կ'առնէք մեր անսպասելի անարդար դատապարտութիւնները: Ինչ որ է, ճշմարիտ հայրենասիրութեան կրակը թող զտէ ու մաքրէ զմեզ, որ գիրար աւելի լաւ կարենանք հասկնալ եւ սուրբ սիրով միացեալ՝ բառաջ ընթանանք ամոքելու զշտացեալ հայրենիքը:

Մնամ սիրով, մերդ
Ս. ՊԵՏՐՈՍԵԱՆ

— Գր. Մարթին, այս մէկ նամակը զրկուած էր (բայ) մեզի, գրուած լինելով թէ սուէ միջոցաւ՝ պր. Մարթինին զրկեցէք:

Ձերդ՝ Լ. Գ. ԱՐՄԵՆ

(4) Գծուար ընթանիլ:

ՄԱՐ-ՇԻՄՕՆԻ ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ

1/13 Յունիս 1896
Լաւնաքա

Գ. Մարթին,

Ուզարկում ենք 200 Ֆրանկ, այն սրակը, որը մեր խմբագրութեան կարգադրութեամբ մեզ պէտք է հասնէր: Վաղուց ուզարկած կը լինէինք, եթէ լինէին նաևեր, բայց չլինելու պատճառով յետաձգուեցաւ մինչեւ այժմ:

Մի քանի օրէն պիտի մեկնինք այստեղէն. եթէ կարողանամ նամակիդ պատասխանել, կը գրեմ շուտով: Եթէ ոչ, կը ներէք: Միայն այսքանը կ'ստեմ, որ՝ այդ բոլորը մեծամեծ թիւրիմացութիւններ են: Իբրև թէ իմ բարձր պէտք է ուզարկէիք: Նամակդ շատ խառն է գրուած, չիմացայ, թէ արդեօք Հաջի Նազարէթը դընա՞ց, թէ ոչ: Ես, ուղիղ է, սակ էմ, որ Հաջի Նազարէթը դնայ մինչեւ Բաթում, անկէ մենք կը հոգանք, բայց երբեք չեմ սակ, թէ 8 հոգի էլ գնան, Դաշնակցութիւնը կը հոգայ. ես այդպիսի բան չեմ կարող աւել, քանի որ այնտեղէն համաձայնութիւն չեմ առել:

Գ. Օհանեանցին ասացէք, որ եթէ իմ իրեն տուած աւանդը չէ ուզարկել, թող շտապի:

Ընդունեցէ՛ք՝ Մ. ՇԻՄՕՆ

ԱՐԱՄ ՕՀԱՆԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ԿԻՊՐՈՍԻ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՆ

13/25 Յունիս 1896
Կ. Պոլիս

Միքիլ ընկերներ,

Ձարմանալի չէ՞ որ մինչեւ այսօր նամակ ստացած չեմ Ձեզմէ: Ամերիկա նամակ գրեցի դալած ժամանակս, անոր պատասխանը եկաւ եւ Ձեզի գրած երեք նամակներուս եւ ոչ մէկին պատասխանը եկաւ, որ մէկէն շատ վեց օր է. չեմ գիտեր թէ պատճառը ինչ է. ամէն օր կ'երթամ Պայպլը Հաուզ, կը նայիմ նամակի, չկայ: Անշուշտ լսեցիք Պոլսի այնչափ նեղութիւնները. կախազանը շարունակ կ'ըլլայ. առաջի շարժուն երեք հաս կախեցին, որուն մէկին հանդիպեցայ, Ձմիկա՞ծապի էր. երէկ հաս մը նորէն՝ կամուրջին զլուխը կ'ըսեն թէ դեռ վեց-եօթը հաս կայ որ պիտի կախուին:

ԷՒՈՒԱՐԴԻ ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ

26 Յունիս / 7 Օգոստ. 96, Կ. Պոլիս

Միքիլիդ իմ Մարթին,

Անցեալ օրեր ստացայ Յունիս 10 թուակիր նամակդ. պատասխանը անմիջապէս չգրելուս միակ պատճառը այն էր որ կը սպասէի Ձեր գրածի համեմատ, ստանալ միւս՝ Կ. Կ.ի նամակի ներփակով եկած նամակները, բայց աւա՛ղ որ ոչինչ չստացանք. ցաւ է ինձ այս օրինակ բաներ պատահելը եւ մեծաւ մասամբ այն պատճառաւ, որ մի պաշտօնական մարմին իւր հասցէին տէրը չէ, կամ աւելի ճիշդը իւր կոչմանը տէրը չէ. այսուհանդերձ ես չեմ հաւատար որ Փրանսական փոսթով դալած նամակ մը կորսուի, եւ կասկածելու պատճառներս շատ են... այս դարի մարդկանց վրայ չէ կարելի անպայման վստահ լինիլ: Տեղը գտնուող Տիգրանը, որ այստեղ Մմբ. անունով էր, նա մի նամակ գրած է տեղիս Կ. Կ.ին իմ մասին ինչ որ գանդաւանները բաժն է իբրև թէ. սակայն այդ խեղճ երիտասարդը նամակը գրած է մի այլ հասցէով, որը դուք ալ չգիտէք. եւ սակայն մի հասցէ երբ եղիպ.ի մէջ մէկը չի գիտեր, նա՛ Տիգրանը որտեղի՞ց գտած կ'ըլլայ եւ այդ հասցէով կ'ուղարկէ. այս բանը իմացի՛ր սիրելիս, Ձեզ համար ամօթ է. մի հասցէ, որը աւելի հաստատուն եւ վստահելի է, դուք չգիտնաք եւ մի խեղճ ու պատիր երէկուսն տհասը գիտնայ: Ձանցառութիւն մի՛ ընեք իմանալու համար այդ հասցէն: Իսկ ջո գրկած նամակներու մասին չէ կարելի լուս մնալ, պէտք է գիմես փոսթայի վարչութեան եւ պահանջես նամակդ, երբ տեղը հասած չէ. եւ այդ այս կերպով կը լինի, — մի նամակ կը գրես նոցա, ինծի ալ նամակ մը մէջը ամփոփելով, նաև մի նամակ ալ կը գրես ինծի առանձին. ես երբ կը ստանամ նամակը լուր կու տամ նոցա որ երթան նամակը առնեն. նաև փոսթայի վարչութեան կը խօսիս որ այս հասցէով երկու նամակներ եւս գրկած եմ, 7 օր պայմանաւ, եթէ չստացուի՝ միւս երկուքն ալ միասին պէտք է ես դարձնել, իսկ եթէ ստացուի, նոցա ստացագիրները գրկել քեզ. այդ մասին եղած ծախսը մի՛ խնայեք, սա կարեւոր կէտ մըն է:

Գալով ջու մասիդ, կը ցաւիմ որ խնայողութեան կերպը երբեք չգիտնալով յիմարար կը տուէք շարաշար. ահա անցեալ տարի նոր դալած ատեններս էր որ գրեցի թէ առանց անկողինի չմնաս, բայց դուն այնչափ խելք ունիս, որ ուրիշներ այլեւս անշահ կ'երեւի, կարեւորութիւն չես տար ուրիշի ասածին. ինչ որ է, այժմ ես միայն կրնայի ջանալ ջու մասին՝ միայն հոս բերելու համար, իսկ ասոր ժամանակը ալ անցած է արդէն, որովհետեւ մինչեւ հոս զատ զանէ 3-4 շաբաթ

Ձերբակալութիւններ շատ կայ ամէն օր. շատեր աքսոր գրկեցին: Նամակս ուշանալուն պատճառը գիտէք, որովհետեւ սպասեցի որ Ձեզմէ նամակ դայ որ պատասխանեմ, բայց չունեցայ այն բարեբախտութիւնը, որ ստանամ Ձեր երկտողերը: Միքիլի ընկերք, ես նորէն մնացի պարապ, Ձեզի գրած վերջին նամակէս երկու օր վերջը նալպանտի մը ջով աշկերտութեան գործ առի, օրը չորս զր. ամիս մը գործեցի, վերջը չեմ գիտեր ինչ եղաւ, առանց պատճառի գործէս մզեց, չեմ գիտեր ինչ ընեմ: Դաշնակցականներէն ծանօթ մը չունիմ: Պիտի աշխատիմ վստահելի անձ մը գտնել եւ նամակ մը տալ, դուք գրէք նէ աւելի լաւ պիտի ըլլայ. արդէն հոս որ եկայ, Եդուարդը եւ Աղամեանը կը ճանչնայի, հիմա անոնց երկուքն ալ անյայտ եղան այս դէպքերէն վերջը. ես ալ Կէտիկ Փաշան կը պառկիմ, տղայ մը, մեր հայրենակից, սրճարանի աշկերտ է, օրը կ'առնէ չորս զր., ոչ ինծի կը բաւէ, ոչ անոր. ուրիշներու ջով ալ երես չունիմ երթալու, որովհետեւ երեք ամիս կ'ըլլայ, դրպանս տասը փարա չկայ. փուլի փարան պարտք պիտի առնեմ ուրիշէն: Պոզոս աղան դրած էր թէ 300 տուար գրկեցանք 30 տուարէն վերջը. եթէ շիտակ է քանի մը զրշ. գրկեցէք ուտեմ: Բարեկամս չձերբակալէին նէ հոգս անգամ չէր. ուրիշ կան քանի մը հատ բարեկամներ, անոնք ալ շատերը պարապ են, շատերն ալ արտասահման գնացին. այսօր ամիս ու կէս է որ թերթն անգամ չեմ ստանար. կը խնդրեմ նամակս առածնուդ պէս պատասխանեցէք, եւ գրեցէք իմ մասին որ մէկ մը ծանօթացունեն ինծի Դ.երը(1), եւ կամ թէ հոս մնալս որչա՞փ օգտակար է, եւ հոգ ո՞վ մնացեր է. ինծի տեղեկութիւն մը տուէք. ամէն բան կարող էք գրել եթէ նամակը ամերիկեան Պայպլը Հաուզ գրէք. ես տեղը սորված եմ, կ'երթամ կ'առնեմ. հայրենէն չ'ուզեր. անունս ալ Արամ Օհանեանեան գրեցէք: Ձեզմէ նամակ չառնելուս պատճառաւ նամակ մը Աղեքսանդրիա գրեցի Մարթինին, այնտեղէն ալ լուր մը չեկաւ, այսօր նորէն պիտի գրեմ հոն. կարելի է երկու տեղէն, մէկը լուր մը կու տայ: Այսչափս բաւ կը համարեմ, վստահի գրած տեղս խանութ է, կը կասկածին: Արդէն ուրիշ գրելիք ալ չունիմ: Ձերմ համբոյրներս ամենուդ:

Մնամ մերդ՝
ԱՐԱՄ ՕՀԱՆԵԱՆ

Ձուռան ինչո՞ւ նամակ չի գրեր ինծի. այնչափ կը ստիպէր թէ նամակ գրէ, հիմա ես կը գրեմ, դուք չէք գրեր: . . . (2) դուն կեցիր, օր մը անշուշտ կը տեսնեմ. առած մը կայ կ'ըսէ՝ տալ տալա խաւալմալ, ատամ ատամայ խաւալուր: Այսչափս կը բաւէ:

ՆՈՅՆ

(1) Դաշնակցականները:
(2) Մէկ բառ անընթանիլ:

կը տեւէ, իսկ այդչափ երկար ժամանակ մնացած չէ մեզ համար արդէն. նաեւ դուն հոս գալով առանց չորս կողմէ նայելու ինչոս կ'սխալու մէջ(1), այդ ալ մի զիչ հակառակ է իմ պաշտօնին. ուստի սպասիր կամ այդ տեղ եթէ կարող ես, կամ որչափ կարելի է շուտով՝ մտադ եղած դրամով մեկնիր Պուլկարիա մեր սիրելի ընկեր Պր. Ա. Կանին(2) մօտ. այն կողմերը գործ դանկը համեմատաբար դիւրին է եւ կեանքը շատ առողջուկ չէ որչափ հող, կարող ես այն կողմերը զիչ պաշտօնաւոր- կից ընկերներ ալ գտնել եւ պատրաստուիլ, յարմար ժամանակին դուք ալ խմբովին կը մտնէք սահմանէ մը ներս, ուր կարող կ'ըլլաք վաղուցուան իրաւունքները իրաւործել: Տեսնենք այս տեղի պայթումէն յետոյ(1) ի՞նչ պիտի ըլլայ: Պոլիսը մերթ զօրաւոր ցնցումներ կ'ունենայ եւ մերթ երեսին կեղծ դիմակը անցունելով զուարթ կ'ուզէ ձեւանալ, բայց իրականութեան առջեւ բոլորը նոյնն է, այսինքն կործանում, այն ալ անխուսափելի կերպով:

Երկու օր առաջ Պարիսը Իզմիրիան հրատարած է իւր պաշտօնէն. պատճառը այն է որ կառավարութիւնը կ'ուզէ պատասխանատու ճանչնալ Իզմիրիանին Պուլսոյ մէջ որեւէ ցոյցի մասին. Իզմիրիանն ալ ի հարկէ այնչափ յիմար չէ, որ մի այդպիսի խնդր ու խելառ պատասխանատուութեան տակ ինչոս, ուստի իրբեւ պատասխան կառավարութեան իւր հրատարականը տուց. այժմ Պուլսոյ կողմը երկու օրուան մէջ կրկին 500 մարդ ձերբակալեցին, որոնց բոլորը խեղճ գաւառացի են, ինչ որ իրենց մեղքին միակ պատճառն է եղեր (իրենց պատուացի լինելը): Կրկին տեղեկացուր ինձ դոնէ Մերսինէն ստացուած նամակի պարունակութեան մասին: Ինձ խիտ ցաւ է այդ նամակը չտանալու:

Ընդունիր ընկերական ջերմ համբոյրներս:
Քայլ՝ Է՛ԴՈՒԱՐԴ

4 96 — 14

Է՛ԴՈՒԱՐԴԻ ԵՒ ԱՅՎԱԶՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ

Գրուած նոյն երկրորդ քաղաքի վրայ: Քաղաք չկայ: Ըստ բովանդակութեան, երբապիսի է որ գրուած են իզուարթ նախքա ճամպիճ նախ, շատ հաւանաբար Սոփիայէն, Պոսթայի դէպքէն նախ:

Սիրելի՛ Մարթին,
Անցեալ օրուան նամակս կը յուսամ ստացար:
Պրն. Այվազեանին գրած նամակը կարդացի՞նք: Ես

(1) Կ'ակնարկուի հաւանաբար Պոսթայի եւ Սոփիայի դէպքերու պատրաստութեամբ:
(2) Պրն. Այվազեանի (Սոփիա): Տեսնել նամակներ քիւ 1, 2, 3, 4 եւ 6:

զիչ գրած էի, որ գաս այն ժամանակ, երբ դուն ինձ կը գրէիր 100 Քրք. մի տեղ գրկելու մասին: Այժմ, թէեւ այստեղ զիչ համար մշտական գործ ամէն ժամանակ պատրաստ կայ, բայց գալու համար ճանապարհածախսը բաւական բարդ հարց մ'է: Դուն չես փաշտօնաւորութիւն կարող ես թրջական որեւէ սահման մը ելլել եւ անկէ գալ Պուլկարիա, որով ճանապարհածախսը մի զիչ կը հարթուի: Ուստի խորհէ այս բոլորի մասին եւ եթէ կարող ես շտապէ գալ հոս, առայժմ անձնական գործով զբաղելու: Իսկ եթէ այդտեղ կը գործես եւ ճանապարհածախս չունիս, ստիպուած ես մնալ, քանի որ ուրիշ կերպ միջոց չկայ: Ընդարձակ գրէ ջո կացութեան մասին. Թո՛ղ եւրոպական խայտառակ պետութիւններով զբաղելու խնդիրը: Մենք մեր արածը անշուշտ դիտենք, հող չէ թէ տիպլումատիան ինչ խաղ կը խաղայ:

Միտաքը ի՞նչ ըրած է, որ գործը կարգի գրած է: Հասցէն մեզ իմացուր եւ գրէ, թէ ի՞նչ մտադիր է ընել: Ես այստեղ փոքրիկ գործ մը գտայ. ծախսս եթէ ամբողջ չեմ կարող հայթայթել առ այժմ, քանի մը օրէն կը յուսամ, որ պիտի կարենամ: Մենք ստիպուած ենք, գոնէ երկու-երեք ամիս, մեր անձնականով զբաղել, մինչեւ նոր ծրագիր մը երեւան գայ:

Ես այս չափով կը բաւականանամ. Պրն. Այվազեանն ալ իր կարգին կը գրէ ահա:

Քայլ անկեղծ սիրով, մնամ՝
Է՛ԴՈՒԱՐԴ

Սիրելի՛ Մարթին,

Նամակը ստանալու չկրցայ պատասխանել, որովհետեւ կ'ուզէի, որ Սմբատն ալ գրելով զիչ մի զիչ հանգարտեցնենք:

Հոս, այժմ լեցուն է գաղթական հայերով: Տեղական ժողովուրդը լաւ ընդունելութիւն է անում հայերուն. անոնց, որ արհեստաւոր են, գործ են տալիս. կառավարութիւնն էլ օգնում է անոնց, որոնք որ գործ չունին:

Դու, եթէ հող ծախսը չես կարող հանել, եկուր հոս, ջու արհեստովը կարող ես ազրել: Սեւանիկի ճամբով հոս կարող ես գալ 50 Քր.ով: Իսկ եթէ չես ուզեր Տաճկաստան անցնել եւ Եւրոպայի վրայով գալ, շատ սուղ կ'ըլլայ: Ետզնաւով մինչեւ Պուլկար գալը բաւական երկար է, բայց ամենալաւ ճամբան է:

Ինչ որ գրում ես Ամերիկայի Հայկազեան Միութեան մասին, դա ճշմարիտ չէ: Դրօշակեանների ներկայացուցիչները Ամերիկայում չըջարերական են հանել եւ հերքում են այդ լուրը: Կարծեցեալ Միութիւնը, ասում են, բոլորովին կեղծ է եղել: Հայկազեան Միութիւնը իրբեւ թէ պատրաստում է եղել իրեն համար հող Հայաստանում, գաշնակցականները միջոցով:

Մի խօսքով կուսակցական նեղահայեաց մարդիկներ են ամէնն ալ անոնք, որոնք անուան տակ են գործում: Ամէն մի գործիչ աշխատում է իւր կուսակցութիւնն փառաւորել մի յայտնի նպատակով, միշտ առաջ է ջրում իւրը: Քանի որ սեփական շահերը ընդհանուրի վրայ տիրապետում են, միշտ այսպէս քսոս կը դառնայ հասարակութեան գործերը: Հասարակութեան գործիչներն էլ այսպէս խայտառակ գաղափարներով ժողովուրդի մաքեր կը պղտորեն:

Քո բարեկամդ՝
Ս. ԱՅՎԱԶՅԱՆ

4 96 — 15

ԱՐՄԷՆ ԳԱՐՈՅԻ ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ

Գրուած՝ գիմնաշն կրող եւ շէշ Երզնիսի կամ Դաշնակցութիւն պաշտօնակամ մակագրութեամբ բուլքի վրայ:

Ժընեւ, 24 Սեպ. 1896

Սիրելի՛ Մարթին,

Բախտի մէկ ջամին ժընեւ նետեց զիս. 4-5 օր է որ հոս կը գտնուիմ:

Այսօր չպիտի կարողանամ երկարօրէն զիչ նկարագրել վերջին արկածներս, միայն սաշափոս դիտցիր (առանց ՈՉ ՈՔԻՆ ԲԱՆ Մ՛ԸՍԵՆՈՒ, զի թէ այս լուրը մի զիչ տարածուի, ծնողքս կ'ոչնչանան), որ Բանքի խնդրոյն մէջ գտնուող Արմէն-Գարօն ջո ընկեր այն հին Գարօն է:

Հոս հասնելուս ինձ տուին ջո վերջին երկու նամակները (4 Յուլիս եւ 25 Օգոստ.): Առաջինին մէջ կը խօսիս այն մեղի ծանօթ աղտոտ խնդրոյն վրայ՝ Մար-Ծիմօնին ըրած սխալ ջալիերը: Կը յիշես, սիրելիս, երբ վերջին օրը ես զիչ կ'ըսէի թէ այս խնդիրը օր մը աւելի սուր կերպարանք պիտի առնէ, եթէ պէտքէն աւելի նշանակութիւն տրուի: Սխալը գործուած է. հիմա ատոր վրայ խօսելով եւ յուզուելով ոչ թէ միայն սխալը չի շակուիր, այլ եւ ի զուր տեղը ժամանակ կը վատնուի:

Ներսիսեանը եւ դուն կը կարծէիք թէ Մար-Ծիմօնին զրածններուն վրայ հոս ձեռ վրայ ուրիշ գաղափար մը կազմած լինեն, այդ մասին կը սխալիք. ընդհանրապէս հոս աւելի Մար-Ծիմօնի ընթացքը կը ջննդատեն իբր անպատեհ եւ անխորհուրդ ընթացք: Այսչափը Ձեզ յայտնելէս յետոյ կը խնդրեմ, որ մի անգամ ընդմիջա մտնաք աստեղ:

Գալով Նալեանի մասին գրածներուդ, ըսելիքներ

շատ ունիմ. — Ինչպէս կ'երեւայ դուն ալ ջո համոզումդ փոխեր ես այդ մասին, Նալեանի անմեղութիւնը կը հաստատես: Առայժմ ես հին համոզմանս վրայ եմ, թէեւ շատ փափաքելի էր ինձ որ ես ալ զիչ պէս փոխէի կարծիքս, յուսալով որ օր մը մօտէն կը տեղեկանանք եւ թերեւս ես ալ զիչ պէս կը դատեմ այն ատեն: Յամենայն դէպս ես եղած եմ եւ միշտ կը մնամ համակիր Նալեանին, իւր զգացմանց ազնուութեանը վրայ բնաւ կասկած չունիմ, բայց մտածելու ձեւը ինձ մի զիչ խորթ կը թուի:

Իսկ ինչ որ կը վերաբերուէր այդտեղի հաշտոյն, ես զարմանալով լսեցի որ կ'ըսես թէ 1700 Քրանք պարագ կայ: Ինձ ուղարկուած հաշտոյն մէջ, 462 Քրանք էր յիշուած: Ներսիսեանը Փիրէ գալուն նոյն բանը հաստատեց ինձ, հիմա ինչպէս կը լինի որ 1700 Քր. է բարձրացել: Սխալ մը լինելու է գործին մէջ, թերեւս զիչ ըսած են միայն ծախսին գումարը եւ չեն ըսած առաջուց վճարուած գումարները: Այս մասին խնդրեմ ուշադրութիւն դարձուր եւ անկից յետոյ հոս գրէ որ ըստ այնմ այդ խնդիրը կատարուի:

Պոլիս հասնելուս ես արդէն պիտի ուղարկէի այս 462 Քր.ը, դրամը պատրաստ է մեր ընկերներուն մէկի մօտ. երեքշաբթի օրը պիտի ուղարկուէր, բայց գործերի շատութեան պատճառաւ մոռցուեցաւ. չորեքշաբթի ցոյցը արդէն մէջտեղ ելաւ, որով դարձեալ ես մնաց այդ խնդիրը: Յամենայն դէպս հաստատ դիտցած եղիր որ այդ դրամը չի կորսուիր: Այս մասին շուտ գրէ ինձ:

Սմբատին հետ 8 օր միայն տեսնուելու բախտը ունեցայ, սքանչելի տղայ մը գտայ զինքը: Վերջին ատած նամակներուս նայելով անվնաս է ցարդ: Եթէ դուն իրմէն նամակ ստանաս անմիջապէս մեզ տեղեկագրէ:

Արմենակը քանի մը անգամ համբուրելու բախտն ունեցայ: Առիւծը ամենամատանգաւոր գործ մը յանձն առած էր, բնաւ լուր չունիմ թէ ինչ ելք ունեցաւ, սա չափս դիտեմ որ այդ գործին զնացողներէն Չը միայն մեռած են իսկ միւս երկուքը հերոսաբար կոտուելէն յետոյ յաջողեր են ազատուիլ. տար Աստուած որ այդ երկուսէն մին մեր սիրելի Արմենակը լինէր:

Տուրան Գարիսեանին մասին խնդրեմ ինձ գրէ, ո՛ւր է հիմա, հասցէն ի՞նչ է: Թէ հող եկած է, սիրոյ համբոյրներս իրեն:

Չմոռնամ ըսելու որ այս վերջի 3 օրուայ մէջ քաղաքականութիւնը բոլորովին փոխուած է. Տրանսան, Անգլիան եւ Ռուսիան իրար ձեռք կը կարկառեն Հայաստանը փրկելու համար: Թէ ցարդ եկած հեռագիրները ճիշդ են յուսալու է որ այս վերջին անգամ թափուած արիւնը պիտի պսակէ մեր յոյսերը:

Առայժմ այսչափ: Կարօտոյ համբոյրներս:

Քայլ՝ ԳԱՐՕ

4 96 — 16

Կ. ԱՅՎԱԶԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ

Ստորագրում է Փրանսիացի, յստակօրէ՛ G. Ayzasian: Զի բուրի կապ ունենալ Սոփիայի Ս. Այվազեանի հետ. զիքը տարրեր է: Կալ տամք ճայնութեամբ, անփոփոխ ճգնաժամ յիստիկը:

30 Հոկտ. 96, Գահիրէ

Մեծ. Տիար Մարթին,

Ազգաբնակչիս

Ազնիւ ընկերակից իմ,

Ձեզից բաժնուկով սղջամբ նոյն օրն տեղս հասայ, կանխաւ գործն եղաւ մեր սիրելի ընկերակիցը դանկելու եւ Ձեր ինձ առաջարկութիւնն կատարելու. ստացայ սա պատասխանն թէ այլեւս Ազգային գործէ հետու մնալու եմ ըսաւ: Այն պահուն մեծ ցաւ զգացի. որուն պատճառն այս է եղեր. տեղս դանուող մի շուն հայ պաշտօնեայ իրմէն ուղած է հրամայական կերպով գրեր եւ նա ալ մերժած է սոյն վաս անձին առաջարկութիւնն: Հետեւեալ օրն կը դիմէ կառավարութեան Տպարան եւ դանդաա կը յայտնէ թէ կառավարութեան պաշտօնեայ մը չէ կարելի մի ուրիշ գործի ալ ձեռնարկելու, բողոք կ'ընէ Տեսուչին. երեկոյնի՛ երբ մեր բարեկամն պիտի հետանայ, կը կանչեն եւ իրեն հարցումներ կ'ուղղեն սոյն մասին եւ նա ալ ճշմարտութիւնն կը խօսի, եւ կը ստանայ սա պատասխանն թէ Ձեր հայերն ինչ սարուկ անձեր են որ մի փոքրիկ գործի առթիւ, կ'ուղեն Ձեզ պաշտօնէ ձգելու, եւ այսպիսի մի ժամանակի մէջ. դնա՛ կանգիտտ եղիք, մենք մեր գործը գիտենք եւ ոչ ոք չէ կարող մեզ հրամայելու: Սոյն անձն Մալիէի մէջ պաշտօնեայ է(1). իւր անուն եւ մականուն Ձեզ նախորդ նամակ կը գրեմ: Մի քիչ ժամանակ վերջն կրնանք մեր նպատակին հասնելու, Ձեր պատրաստութիւնն տեսէք...: Տեղս գրանուող հնչակեաններն մի յայտարարութիւն հանած են թէ միապետն հնչակեան կեդրոնէն դուրս արտաքսուած է: Եւ միանալու Դրօշակեաններուն հետ: Ներկայ հնչակեանք, վերջին ծայր իրենց ազդեցութիւնք լիովին կորուսին քաղաքին մէջ, եւ կ'անպատուութիւն իրենց բռնած ինք տարուամ ընթացքին մէջ, որ նոր անկողնէ կ'լած են, ներկայ յիմար եւ անասունները: Եթէ Դրօշակեանք միանան սոցա հետ՝ նոյն ժամանակ նոքա ալ իրենց ազդեցութիւնք պիտի կորսնցնեն ժողովուրդի առաջ, որովհետեւ հետզհետէ բոլորին կեղտերը սկսաւ:

(1) Եփեմեան (ձեռագիր մակագրութիւն):

դուրս գալու. իրենց պապանձեալ բերնովն մէկգմէկու հետ վիճարանութիւններ կու դան առաջ:

Ձեզ կը ներկայացնեմ մի անձնուէր, մի ընկեր որ կեդրոնին ներկայացնես Դրօշակեաններու, իւր կեանքն կը նուիրէ իւր Ազգին համար, Դրօշակեաններու Ընկերակցութեան, եւ միշտ պատրաստ է իրենց հրամաններն կատարելու ամենայն սիրով, ուր որ անկ է երթալու, որուն անունն է Տօք. Յակոբեան, ամերիկեան հպատակ, որուն անցեալն մեզ ծանօթ է Կիլիկիայի եւ... բանա եւ ապա ազատուած է, տեղս եկած է. սոյն մասին կը գրէք, եւ իրեն թող զրկեն Գահիրէի թերթերն, նա կըրնայ աւելի օգտակար մի տեղ բռնելու իւր աշխատութեամբ, ոչ թէ ուրիշներու պէս պահել եւ հրապարակ չհանելու, որպէսզի չկարողանան մեծ տեղ գրաւելու ներկայ խառնաշփոթ վիճակին մէջ... Հասցէ Փոստ Բէտամն. «Տֆ. Յակոբեան, Գահիրէ»:

Ինչպէս ինձ պատմեցիք՝ մի փետի թիւրք յեղափոխական տեղը կը գտնուի. սոյն անձն եկած է տեղս. ինչպէս լինելն (միջին հասակ, թուրք պիտեր՝ ոչ շատ եւ ոչ քիչ. դէմքն ոչ ճերմակ եւ ոչ սեւ մի քիչ կարմրութիւն կրէ դէմքին վրայ), եթէ այս անձն է, որ ես կը ճանչնամ, մասնիշ մըն է, որուն բուն անունն է (Անտոն Սիւլեան) կաթոլիկ Սիւլեան Լեւոնի եղբայրն է, որ «Ալըբ քոմիտէր» է Նազիմ Փաշայի քով: Չգուշացէք, ինքն այնչափ լաւ հայերէն չի գիտեր, իւր տաճկերէն խօսակցութեան ժամանակ, (ուն) բառն երկար կը հնչէ եւ տես թէ նա՛ է: Գաղիերէն քիչ գիտէ: Եթէ ունիք տեղը լաւ գաղիերէն գիտցող, մի ձեւով հետն թող խօսի, անմիջական կրնաք գիտնալ:

Քիչ միջոցիս մէջ պիտի կրնամ Ձեզ այլ եւ այլ լուրեր տալու. տեղիս հնչակեանք սուգի մէջ են, անիծեալ որդիքն Աւերեալ Հայաստանի հիմնադիրք:

Մնամ Ձերզ անկեղծ ընկերակիցդ՝ G. AYVAZIAN

Հասցէ. «Փոստ Բէտամն», Գահիրէ

4 96 — 17

«ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿԸ

ԿԻՊՐՈՍԻ ԿԱՄ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՑ ՄԱՐՄԻՆ

Ընկերներ,

Մարթինի 28 թիւ նամակը ստացած ենք. ասկէ առաջ գրած նամակիս ցարդ ընդունած կը լինէք: Ինչպէս վաղուց ալ յայտնած ենք, ներկայացուցի-

չը կու դայ հող, նոր մի կնիքով. դուք կարելի եղածին չափ հողը պատրաստեցէք հող:

Եթէ իզմիր մտնէք, Նախանի հետ գործի տեսակէտից կապ պէտք չէ որ ունենաք. տեղական ընկերներու խորհրդակցութեամբ այդ բանը կարող էք միայն: — Էտուարտն ալ հոն պիտի երթար: Աշխատեցէք մի խոհեմ միջոցով ներս մտնել եւ ուրիշ ընկերներու համար մուտքը յետոյ դիւրացնելու:

80 թերթ պիտի ուղարկենք ասկէ վերջը:

Տուրանը թող իր կապերը Կիլիկիոյ հետ շարունակէ եւ մեզի ալ տեղեկութիւններ այդ մասին հաղորդէ: Բարեւներ ձեզ եւ Տուրանին:

Խմբ. «Դրօշակ»

Ժընեւ, 2 Դեկտ. 96

Յ. Գ.— Գահիրէ թերթ մի զրկէք. հոն մարդ ունիք:

4 96 — 18

ՇԱՀԷՆ ՖԱՐՀԱՏԻ ՆԱՄԱԿԸ (ՀԱԻԱՆՕՐԷՆ ՄԱՐԹԻՆԻՆ)

Գահիրէ, 14 Դեկտ. 1896

Ընկեր,

Ստացայ 9 Դեկտ. թուակիր նամակիդ: Ենթահայտնութիւններս այն շնորհաւորութեանց եւ համակրանաց համար՝ զոր կը յայտնէք մեր նոր կազմակերպութեան մասին:

Մեր կազմակերպութիւնը, ինչպէս գիտէք՝ նոր է, հետեւաբար չէ այնքան մեծ եւ զօրաւոր. սակայն յոյս ունինք թէ՛ պիտի կարենանք ընդլայնել անոր շրջանակը՝ ձօնաւոր ժամանակի մը մէջ:

Հոս կը գտնուին Հնչակեաններ, թէ Արփիարեան եւ թէ Նազարբէկեան: Առաջինը աւելի համակրանք կը վայելէ: Իսկ երկրորդը կը ջանայ այլեւայլ հրատարակութիւններով կոտրել միւսին վարկը. բայց չպիտի յաջողի, գէթ ես այնպէս կը կարծեմ, որովհետեւ ժողովուրդը առհասարակ, զղուանք կը յայտնէ այդ մարդուն նկատմամբ. անիկա մեռած է բարոյապէս, ոչինչ չի կրնար կենդանացնել զանի:

Թաշճեանը, զոր յանձնարարած էիք մեզի, տեսայ եւ յանձնեցի նամակը: Կը ճանչնայի արդէն զինքը, բայց ո՛չ իրեւ դաշնակցական: Իր խօսքով՝ յեղափոխական մըն է, ինքզինքը կատարելապէս այդ գործին

նուիրած: Տեսնենք թէ ապագային պիտի արդարացնէ՞ իր այդ ըսածները: Մեր խումբերէն մէկուն մէջ պիտի մտցունենք զինքը:

Գրեցէք մեզի թէ ի՞նչ վիճակի մէջ է Ձեր կազմակերպութիւնը եւ քանի՞ խումբերէ կը բաղկանայ:

Դրօշակի խմբագրութիւնը իմ հասցէս հաղորդած է Ձեզի. ինչո՞ւ արդեօք ձերինն ալ չհաղորդեց մեզի:

Ձեր ո՛ր տեղ բնակիչնիդ գրեցէք մեզի, որպէս զի մէկը յանձնարարենք Ձեզի: Տեղերնիդ որոշ կերպով ցոյց տուէք, որպէս զի դիւրին ըլլայ գտնել:

Այն երեք անձերու նկատմամբ, որոնք խմբագրութեան դիմած էին այլեւայլ առաջարկութիւններով, տեղեկութիւն տուէք թէ ի՞նչ գրած էր խմբագրութիւնը Ձեզի: Մեզի ալ գրուած էր անոնց մասին, տեսանք զիրենք եւ խօսեցանք պէտք եղածը:

Նամակնիդ միշտ զրկեցէք Poste Restante, Շահէն Ֆարհատի ձեռքը. հասցէները հայերէն մի՛ գրէք, գաղղիերէնը բաւական է:

Ընկերական բարեւներ:

Ձերզ՝ ՇԱՀԷՆ - ՖԱՐՀԱՏ

4 97 — 1

ԱՐՄԷՆ ԳԱՐՈՑԻ ՆԱՄԱԿԸ ՄԱՐԻՆ

Արմէն Գարայի այս նամակը 1897ին գրուած այն միակ նամակն է, որ կը գտնենք Մարթին Մուրադեանի քարտեռքին մէջ: Այդ տարիքիս պատկանող այլ գրութիւններ մնացած չեն գործարար:

Իբրեւ 1896ի վերջերս եւ 1897ի առաջին ամիսներս վերաբերալ եւ աշխատագրական այս շրջանի (Եգիպտոս, Պոլիս, Պուլկարիս, Իւն.) կուսակցական գործունէութեան հետ աղբրս ունեցող վաւերագրեր, տեսնի ճաւ Գարեգին Խոսեանի (Բարայեան) եւ Ա. Վառամանի (Վահագ) նամակները՝ ԴԻՒԱՆ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ Բ. հատորին մէջ, էջ 326-ն 333, ապա՝ ճաւ էջ 346-347, 349-351, 355-357, Իւն.:

Ժընեւ, 28 Ապրիլ 1897

Սիրելի Մար!

Երկրորդ նամակդ (9 Ապր.) ստացայ. կը յանդիմանես զիս լուրթեանս համար եւ ի մասնաւորի գործէն քաշուած լինելուս համար: Մի քանի ատոյով կ'ուղեմ ձեզ յայտնել երկուսին էլ պատճառները առանց մանրամասնութեանց մէջ մտնելու, զի անկարելի պիտի լինի ինձ մի լիովին դադարաւոր տալ ձեզ անցածի մասին:

Նախ դանք լուրթեան խնդրին. — կը հաւատամ՝ Մար, այն օրէն ի վեր երբ գործարարութիւնն ունեցայ

Փրնեւի բարեկրօնին հանդիսատես լինել, այդ օրէն ի վեր ես ոչ մէկին հետ կարող էի թղթակցիլ, այսինքն չէի ուզիր զի հաստատ համոզուած էի թէ ուզէի գրել՝ իմ ապաւորութիւններս նոյնութեամբ պիտի գրէի, ինչ որ կարող էր աւելի անախորժ գէպերու առիթ տալ: Այս մասնովս էր միայն որ ինձ կը ստիպէր լռել եւ անպատասխան թողուլ Բորիսին(1) եւ չոր նամակները: Եթէ Բորիսն ալ չեզ պէս բարկացած է, համարյո՞ւմ մը կը հաշտուինք անշուշտ:

Հիմա դանձր երկրորդ խնդրոյն՝ իմ գործէն քաշուելուս: Միքիլի Մար, թէ Կիպրոսի յիշատակներէն մի քիչ արթուն մնացեր են մօտը, դու լաւ գիտես թէ ես ինչպէս պատկառանք կը վարուիմ դէպի նուիրական գործը եւ թէ որչա՞փ խստապահանջ եմ դէպի յեղափոխականները: Իմ այս պակասութիւնն էր, եթէ կարելի է այսպէս ըսել, որ զիս ստիպեց ձեռնպահ լինել առժամայէս, մինչեւ որ իմ յուսացած փոփոխութիւնները լինին: Այս խօսքերս սխալ չհասկնա՞ս, յուսացածս մեծ բան մը չէ՞. կ'ուզեմ, կը փափաքեմ միայն անկեղծ յարաբերութիւն մը տեսնել մեր այն ընկերներուն մէջ որք կոչուած են այդ գործին վարիչները լինել. կարծեմ այս կէտը ամէնքին ալ փափաքելի է, եւ ես նորութիւն մը չեմ պահանջեր, բայց թերեւս նորութիւն մ'ըսած կը լինեմ եթէ անկեղծութեամբ քեզ յայտնեմ որ սրա բոլորովին հակապատկեր կը ներկայացնէ մեր կազմակերպութիւնը. այս ընթացքով կամաց կամաց դէպի հնչակեան անկումը կը քալենք առանց նշմարելու: Ինձ համար շատ դառն է այս ամէնը նկատել եւ հանդիսատես լինել, բայց ուրիշ կերպ չեմ կրնար վարուիլ, չեմ ուզիր ես ալ մասն ունենալ կործանման գործին մէջ, այս ալ մի ծառայութիւն է...

Գալով քեզմէ նեղանալու խնդրին, դա գոյութիւն չունի, միայն սա ըսեմ որ Պոլսում ունեցած վարժունքը իմ վրաս չթողուց այն ապաւորութիւնը, ինչ որ Կիպրոսումն էի ստացած. հաւանական է որ սխալուած լինեմ. սես թէ որչա՞փ անկեղծութեամբ կը յայտնեմ քեզ ունեցած զգացումներս:

Յուսով եմ թէ սակէ վերջ իրար կը հասկնանք եւ կը լինենք այնպէս ինչպէս Կիպրոսումն էինք:

Բորիսին համարյոնքս. հասցէն ուղարկէ եթէ կարելի է, նոյնպէս Վարդին:

Առայժմ այսչա՞փ. չցաւիս գրածներէն:

Համարյոնքս՝
ԳԱՐՕ

— Եթէ Լեւոնը այդ կողմերն է՝ կարօտոյ համարյոնքս սուր խնդրեմ, եւ ըսէ որ իր հասցէն ուղարկէ. վերջին նամակս անպատասխան թողուց. կ'երևայ գրած հասցէն սխալ էր:

(1) Մերսա Խաչատուրեանի կուսակցական ծածկամուկ:

4 98 — 1

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒԹԵԱՆ՝
ՍԵՊՈՒՀԻ (ՀՐԱԶ ԹԻՐԵԱՔԵԱՆ)
ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ

Սեպտեմբ, որ իր յարող ճամակները ընդամբապէս ստորագրած է Ս., ըստ երեսոյթիմ Արեւմտեան Բիւրոյի, Կիլիկիոյ գործիչներուն (Պոստոսի) եւ արտասահմանի մարմիններուն հետ կապ պահող կեդրոնական դէմքն է: Ամենայն հաւանականութեամբ՝ Հրաչ Թիւրքմանն է, որ 1897-1901 տարիներուն ընդամբապէս կը գտնուէր Ազեմազարթ:

Աղ., 2 Յունիւլ. 98

Սիրելի Մարթին,

Ներփակ կը դրկեմ քեզ երկու Ֆրանսական ոսկու արժէքով մի մանդատ, 1-էք. ոսկի 540 միլ. է:

Ես դժբախտաբար անկարող եղայ հող դալ. գործը վերջացնելու պէս, ի հարկէ հոս կ'իջնես:

Կը զարմանամ թէ ինչպէս այդքան ժամանակ, հող չես կարողացել տեսնել Վահանը. երեւի նա շատ էր զբաղած: — Նուագահանդէսի համար, աշխատեցէք բոլորը միասին, համերաշխ կերպով տանիլ. Վահանին առաջարկը ինչո՞ւ բոլորէն չէ ընդունուած, քանի որ ամենէն խելօք միջոցն է: Գանի հող ես, անպատճառ ներքին խնդիրները լաւ մը կարգադրիր. թերեւս ուրիշ անգամ հող եկող ուշ ժամանակ կը պատահի:

Ես չու. նամակդ շատ ուշ, երէկ առաւօտ ստացայ. ինչո՞ւ այսքան ուշացաւ, չգիտեմ, — Հանդէսի մասին կարդացէք «Phare d'Alexandrie(1) et Réforme»-ին մէջ, լաւ բաներ կան հոն գրուած, ուրիշին թարգմանել տուր, քանի որ դուք չէք հասկանար: Գուցէ Կարիւնը վաղը հող դալ: Բարեւներ հաղորդէ բոլորին, նոյնպէս՝ Գ. Վահանին. նամակն ստացայ, պիտի իրեն դրեմ առանձին՝ յետոյ. լաւ պիտի լինէր, եթէ կարողանար իր գրածի համեմատ կարգադրել:

Համարյոնքսով չորդ՝
ՍԵՊՈՒՀ

4 98 — 2

«ԴՐՕՇԱԿ» ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ (ԱՐԵՒԸՏԵԱՆ ԲԻՒՐՕ) ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ

Խմբագրութիւն «Դրօշակ»ի
№ 102

Ճշնել, 13 Օգոստոս, 1898

Մարթինին, Ազեմազարթի

Ընկեր,

Ստացանք Աթէնքէն գրած նամակդ, ինչպէս ժամանակին ստացուած է նաեւ Իզմիրէն մեզ ուղղած 24 Յուլիսի գրութիւնդ:

(1) Յրամարտի շատ դժուար ընթացքին:

Կը ցաւինք պատահածին վրայ, չենք հասկնար սակայն ձեր նամակին հետեւեալ տողը. «Ի՞նչ պիտի ըլլար առկէ աւելի, քանի որ ամէն գործ իմ վրայ էր ծանրացած»: Հետաքրքիր էր իմանալ, թէ միւս ընկերները ի՞նչ կ'ընէին. եւ ա՞յդ է միայն պատճառը, թէ ուրիշ պատճառներ ալ կան, այն խորհրդաւոր պատճառը, որուն զոհ եղան Ա.(1) եւ իր կիներ (գիտէք որ մասնութեան մը հետեւանօք Գ.էն(2) հեռացած են):

Արդէն գրուած է այսօր իսկ Իզմիր եւս, որ Բ.(3) չպիտի կրնայ վերադառնալ հոն, որովհետեւ ուրիշ կէտի մը համար առաջարկած է ինքզինքը եւ ընտրուած: Ը. Ժ.ը(4) արդէն չգրադրեցաւ այն կէտերով, որոնց համար ձեռնարկ մը վճռած չէ: Ոսկեհանքին կարեւորութիւնը տրուեցաւ, նախ՝ Գ. եւ Զ.ի(5) յարաբերութիւններուն համար եւ երկրորդ՝ դրամականի մասին: Կարելի չէր բոլոր այդ կարգի կէտերու համար ընտրութիւններ կատարել, քանի որ բոլոր ընկերները ներկայ չէին եւ իւրաքանչիւրին տրամադրութիւնը յայտնի չէր ժողովին: Վերջապէս, այդ խնդիրները աւելի դիւրաւ կրնային վճռուել տեղական մարմիններու հետ խորհրդակցելով: Հետեւաբար Ոսկեհանքի կոմիտէին կը մնայ, խորհրդակցելով Արեւմտ. Բիւրոյի հետ, հրաւիրել այս կամ այն ընկերը: Գրուեցաւ այսօր հոն, որպէսզի խորհին եւ առաջարկեն: Մինչեւ այդ ժամանակ մենք ալ հոս կը խորհինք եւ ազատ ընկերներէն մէկը կ'առաջարկենք անոնց: Դուք ալ հող խօսեցէք Գ. Վ.ի հետ, Ոսկեհանքի ընկերներու հետ եւ միասին պատասխանեցէք:

Ոսկ. կոմիտէի խնդրած 50 ոսկին (1000 Ֆրանք), արդէն զրկուած է ձեր անուան դարձուած չէքով, ձեր հասցէին ուղղուած, պահարանի մը մէջ, recommandée եղած: Այդ մասին փութալու է կարգադրութիւն մը ընել. կամ նամակը անոնք ստանալով չէքը ձեզ զրկելու են, որպէսզի դուք անոնց տալիք անուան դարձնէք, եւ կամ նամակ ուղղելով Անգլ. Փոստէն խնդրելու էք, որ նամակը հող (այսինչ, կամ այնինչ տեղ) զրկուի: Այդ մասին մեզ ալ տեղեկացուցէք:

Այսօրինակ անպատեհութիւններու չբախելու համար, լաւ չէ՞ր լիներ եթէ ապագային դրամը Շաւարչին կամ անոր հասցէով զրկուի:

Բարեւներով՝ Խմբ. «Դր.»ի

Յ. Գ.— Դուք ի՞նչ մտադիր էք ընել, կամ ո՞ւր երթալ:

- (1) Կարելի է նաեւ կարգալ Զ.:
- (2) Պալեմ:
- (3) Հուամբօրէմ՝ Բարս կամ Բարսյան (Գարեգին Խաչատուրի):
- (4) Թերեւս նաեւ՝ Բորիս (Մերսա Խաչատուրեան):
- (5) Ընդհանուր ժողովը (Կ'ակնարկուի Հ. Յ. Գ. Բ. Ընդհ. ժողովին, 1898):
- (6) Դժուար ընթացքին. Բորիս՝ Զ.ի (Ձեյբուն — ?):

4 98 — 3

ԻԶՄԻՐԻՆ՝ ԶԱՐԵՀԻ ՆԱՄԱԿԸ
ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՆ

17 Սեպտ., 98, Իզմիր

Սիրելի ընկերներ,

Ստացանք Ձեր վերջին 10 Սեպ. թիւ կրող նամակը, եւ ներփակեալ գտանք Տօքթորին ձեռագիր երկտողը: Բայց այդ նամակը ծիծաղելի է մեզ համար, եւ տարակոյտ չունինք ձեռակերպութեան տակ գրուած ըլլալուն. մենք ի սկզբան՝ երբ այս խնդիրը մէջտեղ ելաւ, գուշակեցինք թէ չնազարէթեանը այս գործին մէջ առանձին չէ, առաջուց թղթակցած պիտի ըլլայ անշուշտ իրենց այս նպատակը ինչպէս իրագործելու մասին՝ եւ ահա այսօր մեր գուշակութիւնը ելաւ, ներփակեալ Տօք.ի նամակը Տիգ.ի միջոցաւ ցոյց տուինք նազարէթեանին, «այո, այս նամակին դիւր Տօք.ին գիրն է» ըսեր է. առաջ կը խոստովանի թէ ինձի գրողը Տօք. է, կ'ըսէ. իսկ այժմ բոլորովին կ'ուրանայ, թէ իրեն այդ նամակը գրողը Տօք.ը չէ, այլ, ուրիշ մըն է եղեր, հիմա ինքզինքը արդարացնելու համար ճամբայ կը փնտռէ. Տիգ.ը, կը պահանջէ թէ, քանի որ ան գրած չէ, ուրեմն ցոյց տուր թէ ո՞վ գրած է, «պարտաւոր չեմ ըսելու» կը պատասխանէ, եւ անմիջապէս մատուցելով նամակը գրելով անապարանօք կ'երթայ փոստը կը ձգէ. «այս նամակը նորէն Տօք.ի գրուած է» ով գիտէ ինչ յանդիմանութիւններ կայ նամակի մէջ, թէ իրենց գաղտնիքները դուրս ելան, թէ՛ իրենց յոյսերը ի դեռեւ ելան եւայլ... աւելի զարմանալին այն է թէ՛ դիմակաւորներէն որոնց որ տուած է մենք իսկոյն հասկըցանք արդէն, Տիգ.ի հետ կապ ունեցող խմբակեան կը դիմէ «անշուշտ չգիտնալով թէ այդ անձը Տիգ.ի հետ յարաբերութիւն ունի եւ անոր հետ կապուած է», կ'ըսէ թէ Տիգ.ի համար, այդ մարդը խաբարայ է, ստախոս է, եւ նոր «մարտականներէն» է կարեւորութիւն մի տար անոր խօսքերուն, ես քեզի «Դրօշակ» կու տամ եւայլ... Ինչ որ ըսած է խմբակեանը նոյնութեամբ կու գայ Տիգ.ին կը պատմէ. մենք հիմա գործ ունինք նազարէթեանի հետ եւ պէտք եղածը խորհելով ի գործ կը ընենք. գալով Տօք.ի մասին դուք բոլորովին խորուած էք եւ կը խորհուիք, այդ մարդը, այո, կեղծ եւ անբարոյական մէկն է, արդէն ես Պոլսէն գիտեմ, եւ տեղեկ եմ իրեն ըրած գործերուն եւ սուտ խօսքերուն. հոս այդ բաները գրելը աւելորդ կը համարեմ. կարծեմ հոս բերանացի պատմած եմ ատոր մասին:

Ենթադրենք թէ այդ մարդը «Ձեր լուծումով» անկեղծ ըլլայ, ի՞նչ պատճառ ունի 10-12 օրինակ դիմակաւորներէն զրկելու նազարէթեանին եւ անոր գրելու թէ՛

«այդ տեղը ընկերները գտնուած ըլլալով, չեն ուզեր անոնց հետ գործ տեսնել» եւ այլն. այս վերի տողերը Տիգ.Նը ինքը կարգացրել է: Եթէ Տիգ.Նը չափազանց յուզուած չըլլար, եւ թէ մը պաղարիւնութեամբ վարուէր, նամակի ամբողջ գրութիւնը կրնար աչքէ անցուցնել. ապուշը՝ այդ նամակը Տիգ.Նին ցուցնելով իրեն գրաւոր կ'ուզէ որպէսզի ձեռքը գործիք ըլլայ եւ ասոր միջոցաւ գործ տեսնայ. ի՞նչ պատճառ ունի բաւական թուով Դ., Մարտ., եւ այլն զրկել, որպէսզի ցրուէ իր ծանօթներուն, կը կարծէ՞ք որ աս միայն նազարէթեանի գործն է, որովհետեւ նազարէթեանը չէր գաղափարով կրնար գրաւել. Տիգ.Նը իսկոյն անոր եղելութիւնը կը պատմէ եւ նամակին այդ տողերը թող կու տայ կարգաւու, բայց հիմակ կը տեսնէ որ Տիգ.Նը իրեն հետ ուրիշ կերպ կը վարուի՝ ամէն բան կ'ուրանայ, «այդ նամակը Տօք.ը գրած չէ՞ կ'ըսէ, ապուշը կը կարծէ թէ՞ աղայ կը խաբէ, մենք կատարելապէս վստահ ենք թէ՞ Տօք.ը եւ նազարէթեանը կեղծ, անբարայալեան եւ խաբարայ մարդեր են, եւ պէտք է իսկոյն երկուքն ալ կարգի բերել. մենք արդէն պէտք եղածը խորհելով պիտի ընենք, իսկ դուք ալ հոն պէտք է խստիւ պատժէք Տօք.ին, որ ուրիշ անգամ այսպիսի ընթացքի մէջ չզբաւորուի. արդէն նազարէթեանը Տիգ.ի անակնկալ վարմունքէն դուռնատած, շատ մահէն չեմ վախնար» ըսելով կը մեկնի, շատ հաւանական է նազարէթեանը կամ ասկէ Եգիպտոս պիտի փախչի, եւ կամ ուղղակի մատուցելու պիտի ընէ, Տիգ.ի համար. արդէն ինքը կ'ըսէ եզր թէ՞ Եգիպտոս պիտի երթամ. մենք Տիգ.Նին ալ պատուիրեցինք զգոյշ կենալ բոլորովին. առայժմ այս մասին այսչափ տեղեկանալով գրեցինք, ուրիշ ինչ որ կը լսենք իսկոյն կը գրենք Ձեզ: Գալով մեր գործերուն՝ դաւաճներու հետ յարաբերութիւնը կը շարունակուի առաջուան պէս: Երկու օր առաջ Հուր Երկաթ քաղաքէն նամակ մը ստացանք, որով մեզմէ մէկը կը հրաւիրեն հոն երթալ իրենց մէջ նոր ծագած երկպառակութիւնը կարգադրելու. «երկպառակութիւնը դպրոցական խնդրի համար է»։ Էդուարդը զրկեցինք, այսօր պիտի վերադառնայ. յիշեալ քաղաքի մասին գրելիք ունինք բաւական. մինչեւ վերադառնայ Էդուարդը կը գրենք պէտք եղածները: Խմ.(1) նամակ ստացանք, Ը. Ժ.ի կարգադրութեան ծրագիրը եւ ուրիշ բրօշուրներ ստացանք, երկու օր առաջ ստացանք նաեւ 8 թիւ թերթերէն մաս մը որ հնազանդէ մաս առ մաս պիտի զրկեն: Գրած են նաեւ Բաթիթի քրքրէն շուտով զրկելու (մասին), իսկ ընկերներու մասին կը գրեն, թէ թէ մ'ալ համբերեցէք պէտք եղած ընկերները պիտի ընտրենք զրկենք, — կ'ըսեն: Մինչեւ ընկերները գալը չենք կրնար գործ մը տեսնել, որովհետեւ արդէն ոյժ չունինք, կարգապահութիւն չունինք: Նախ՝ պէտք է ընկերները գան եւ իրենց զբաղում մը գտնեն. անկէ վերջը մենք կրնանք

հիմնական գործեր տեսնել, եթէ ոչ, հիմա չենք կրնար բան մը ընել, եւ արդէն ընեն ալ շիտակ չէ: Որոշ կերպով նստելու, խորհելու եւ գրելու տեղ չունենինք: Դեռ նոր ընկեցինք տունը, ուրտեղ պիտի նստինք պէտք եղածները խորհելու եւ գրելու: Անպարելով գործ չենք կրնար տեսնել: Եւարդի նամակը Էդուարդը տարաւ եղբոր յանձնելու, բարեւ խօսէք իրեն. ինչպէս առաջուց գրած է, թող զգուշանայ ծածկամելանով նամակ գրելու հասարակ թուղթի վրայ. արդէն եղբայրը եւ իրենց տունը ահ ու դողի մէջ են եւ նամակն ալ բացուած էր արդէն, ի՞նչպէս կրնայինք զրկել: Ներփակեալ նամակը Եւարդի եղբայրը գրած է. Հուր-Երկաթէն ուրիշ մի քանի նամակներով մէկ տեղ եկած էր, չգիտնալով բացինք, բայց չկարգացինք: Հասկցանք, որ Եւարդին կը վերաբերի, իրեն այսպէս կ'ըսէք: Ըսէք նաեւ իրեն, թէ ի՞նչ ըրաւ գործը, մինչեւ ե՞րբ պիտի սպասենք, թող պատասխան տայ: Է՛ր, սիրելի Աշոտ(2) Բազրատունի, հիմա բոլորովին համոզուեցա՞ր, թէ այդ շուն յոյն երեսն քաշեցիր այս բաները եւ հիմա հասկցար խարուած ըլլալը: Ետտ հաւանական է, որ մէկ ոսկիի համար քեզ մատնեցին. այն ատեն դուն բարկանալով կը խօսէիր, թէ պէտք է ամբողջ դրամը տանք, եւ մենք ալ կը հակառակէինք՝ թէ չէ կարելի: Ինչ որ է, այս ալ անցաւ, բայց չըլլար՝ աւելի լաւ էր:

Ձերմագին բարեւներով՝
ՁԱՐԵՀ

4 98 — 4

Ս. Ի ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ

Ձեռագրէն գտնելով, ճամբակցորդ Յոյն այդ շուրջուան է, որ գրած էր 2 Յունուարի 498-1 ճամբակը: Ազխանաբիայէն ուղղուած է Մարթիմի՝ Գանիք: Ստորագրուած է Ս.:

Աղեք. 26 Սեպտ. / 7 Հոկտ. 98

Սիրելի Մարթին!

Բիւրատից ստացայ յանձնարագիրը. աւելորդ է այդ մասին իրեն հետ տեսնուել: Կը յայտնէ թէ հուշանալուն պատճառը՝ «ներ մէջէն փնտռեցէք»: Ի՞նչ է արդեօք պատահեր. երեւի Ձհանկիւրից և Եւրէնից բան է լսել, ուրիշ կերպ անկարող եմ մեկնելու. Ձհանկիւրի դէպի ինձ արամադրութիւնից կարող ես հասկանալ. հետաքրքիր էր այդ: Եւրէնի հետ ես խնդրը կարգադրեցի անձամբ խօսելով՝ առանձին. նա յետ առաւ

(1) Եգիպտոս (Եգիպտոս):

(2) Մարթիմի ծածկամուտներէ մէկն էր Աշոտ:

իր տուած որոշումը — գոնէ այդպէս ըսաւ. մեր յարաբերութիւնները առ այժմ թիչ լաւն են: Ինչո՞ւ այդքան կը գանգատու տեղ. ընկերներու պէ՞մ. ո՞վ ըսաւ որ կանոնաւոր կոմիտէ է. նոր պէտք է կազմակերպել: Ներփակեալը Սուրէնին յանձնիր. անոր հետ կարող ես ազատօրէն տեսնել: Բարկանալով կամ վիրաւորուելով տեղական մարմինը երեսի վրայ թողու՛ լաւ չէ ի հարկէ: Պէտք է կարգադրել կոմիտէական եւ մանաւանդ խմբական գործերը: Մարի փամփուշտներէն փնտռեցի՞ր ու գտա՞ր. եթէ կայ, պէտք է 150-200ի չափ առնել հոս զրկել. նաեւ նայիր թէ փամփուշտ լեցնելու գործիքներ կա՞ն. ի՞նչ գնեցով, S. Weltonի ատրճանակներու համար, փոքր եւ միջին մեծութեամբ: Նամակ գրեցի՞ր հայրենիքը. լաւ պիտի լինէր, նպաստաւոր պատասխան առած ժամանակը, Լեռնավայր անցնիլ ու հոն աշխատիլ մնալ, որքան կարելի է: Գրիր մեզ: Սակայն ծննդավայր գնալուդ՝ լաւ պիտի լինէր, տեղական արդէն գոյութիւն ունեցող մարմինը աւելին հիմնաւոր հողի վրայ դնելով, երթալ շրջակաները, ուր մարդկանց պահանջ կայ: Ոսկեհանքի գործերու համար ամէնքս ալ ոչ նուազ մտահոգութեան մէջ ենք. պէտք է աշխատինք մարդիկ մացնել հոն: Խմ.ը(1) խոստացել է այդ մասին աշխատիլ ու կարգադրութիւն ընել. գրուած է հոն, որ շատ չշտապեն ու նոր ընկերներուն սպասեն: Օ.ը տակաւին չէ գացած. այդպէս է երեւում նամակներէն. երեւի Պ. Այվազեան(2) իր նախկին սովորութեանը համեմատ իր «véto»ն դրած է այդ հարցի մէջ: Դուք հող ի՞նչ ըրիք. Նշանի համար Ս.ին կը գրեմ այսօր. շատ ալ բաթրթի մի ընեք. կամաց կամաց կարգին կու գան գործերը: Իմացիր թէ Ձհանկիւրը հոս ու հոն իր վիճակի մասին կու լա՞յ. որովհետեւ Սմ. Բիւրատը իր ինձի գրած նամակին մէջ կը յայտնէր թէ Դաշ.ը հանրածանօթ ընկերները երեսի վրայ թողած է եւ հող չ'ընեն: Արդեօք Գլըճեանի՞, Ձհանկիւրի՞ թէ Եւրէնի նկատմամբ են այդ խօսքերը: Կարող ես կողմնակի կերպով, Ձհանկիւրի խօսքերէն ըմբռնել ու մեզի իմացնել: Ձհանկիւրին յայտնիր, որ աթոռներու առթիւ պէտք եղած տեղը իմացնէ, որ յանձնուին տիրոջը: Ներփակ Ձ.ից(3) է. կարդալուց յետոյ, յետ վերադարձուր: 300 Փ.ը ամբողջովին զրկուեցաւ: Բարեւներ բոլոր ընկերներու կողմանէ: Համբոյրներով՝ Ս.

(1) Եգիպտոս (Եգիպտոս Բիւրո):
(2) Դուրաք ընթացիկ:
(3) Ձէյթունից:

ԱՐԵՎՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՑԻ ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՅԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՆ
— 1890 —
(Fédération Révolutionnaire Arménienne)

1898
ԱՐԵՎՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ

№ 192 7/19 Հոկտեմբեր, 1898

Մարթինին, Գահիրէ

Սիրելի ընկեր,

Ժամանակին ստացած ենք ինչպէս բացաբերիք նոյնպէս եւ Ալեքսանդրիայէն ձեր գրած 2 Սեպտ. գրութիւնը: Ձրադուները թոյլ չտուին շուտով պատասխանելու, մանաւանդ, որ փութացնող խնդիր մը չկար մէջտեղ: Ենթահակալ ենք ձեր հաղորդած մանրամասն տեղեկութիւններուն, ինչպէս Ոսկեհանքի, նոյնպէս եւ տեղական գործերուն վերաբերեալ: Ձեր տեղեկութիւնները իրենց օգտակար հետեւանքները կրնան շուտով ունենալ, եթէ ատոնք անմիջաբար յայտնած էք նաեւ շահորդ կողմերուն: Ենթահակալ ենք ձեր հաղորդած մանրամասն տեղեկութիւններուն, ինչպէս Ոսկեհանքի, նոյնպէս եւ տեղական գործերուն վերաբերեալ: Ձեր տեղեկութիւնները իրենց օգտակար հետեւանքները կրնան շուտով ունենալ, եթէ ատոնք անմիջաբար յայտնած էք նաեւ շահորդ կողմերուն: Կը ցուէիք, որ Ընդհ. Ժողովը ընտրութիւն չէր կատարած այդ կէտին(Ո.) (1) համար: Բայց ինչո՞ւ կը մոռնաք, որ Ը. Ժ.ը ընտրութիւններ կատարած է միայն այն կէտերուն համար, ուր կը ծրագրուէր մօտալուտ կամ հեռաւոր ձեռնարկ մը. նոյնիսկ այդ ընտրութիւններն իսկ — թէեւ սահմանափակ շրջանի մը մէջ — թերեւս չգտնուին պահանջներու բարձրութեան վրայ եւ հարկ զգացուի լրացուցիչ ընտրութիւններ կատարել. ուր մնաց ուրեմն միւս կէտերուն համար: Կարելորն այն է, որ Ոսկեհանքի դերը վիճելի չէ այսօր ընկերներու միջեւ, որոշ չափով համաձայնութիւն գոյացած է, եւ կը մնայ գործը ձեռնհաս մարմիններուն՝ հարկ եղածը տնօրինելու: Մեր կողմէն գիմումներ եղան կարող ընկերներու մէկը պատրաստ է արդէն, կը մնայ ճամբորդութիւնը ապահովելու մասին խորհիլ: Դուք կը քննադատէք մինչեւ հիմա եղած խարխափումները. մենք ալ համաձայն ենք ձեզ հետ. բայց չէ՞ որ ձեզմէ եւ ձեր ընկերներէն կախուած էր — անգամ մը ուսումնասիրութիւնը տեղին վրայ վերջացնելն ետք — հին ծրագիրը ձեռք առնելու: Այդ նպատակով Ոսկեհանք մտած էիք դուք, է.ն(2) և ապա Բ.ն(3).

(1) Ոսկեհանք (Իզմիր):
(2) Հաւանաբար՝ Էդուարդ:
(3) Հաւանաբար՝ Բարա (Գ. Խամակ):

նոյն բանը դեռ անցեալ տարի մեր կողմէն յիշել տրուեցաւ ձեզ: Ոչ մէկ ծրագիր եւ որոշում օգուտ չունի, եթէ ընկերները իրենց նախաձեռնութիւնը չդնեն գործին մէջ եւ փոխանակ մէկ քարով երկու թռչունի ետեւէն խնայու, — որ քիչ անգամ կը յաջողի, — մէկ հաստ մը ապահովապէս որսալու միջոցներ փնտռեն: Վերջին նամակէ մը կը տեղեկանանք արդէն, թէ փորձի մը ձեռնարկած են. վերջապէս ուրախացանք, որովհետեւ այնպիսի ատեն մը կը սկսին, երբ ամէնէն աւելի քիչ կը սպասուէր:

Վահանի մասին ձեր հաղորդածը ցաւ ազդեց մեզ, ո՛չ իրեն վերադրուած խօսքերուն պատճառով (այդ խօսքերուն քննադատութիւնը կրնայ շատ տարբերիլ, եթէ քննուի, թէ ի՛նչ պարագաներուն մէջ եւ ի՛նչ անձերու ուղղուած էին ատոնք), այլ անոր համար, որ այդ կարգի խնդիրներ կը զբաղեցնեն եւ կ'երկպառակեն ընկերները. պէտք ունինք մենք մտամփոփ աշխատանքի մը: Դուք կը զարմանաք, որ մենք բողոքողները կոմիտէին զրկած ենք եւ այդ մասին տեղեկացուցած ամբաստանուած ընկերն ալ, եւ մեր այդ ընթացքը Դաշնակցութեան ոգիին հակառակ կը գտնէք: Ուղղակի միջամտութիւն մը և խնդիր մը յարուցանելու համար մեր կողմէն՝ արտակարգ պատճառ մը պէտք էր, որ չկար: Մեզ անծանօթ մարդիկ (բացի մէկէն) մեզ կը բողոքեն, Վահանին դէմ տարտամ ու անորոշ ամբաստանութիւններով: Վահանը Ալեքսանդրիոյ կոմիտէին մէկ անգամն է, եթէ մինչեւ իսկ արտաքոյ կարգի պատուիրակ մը իսկ լինէր — որ չէ — Դաշնակցութեան ծրագրին ոգին կը պահանջէր, որ խնդիրը նախ քննուէր տեղին վրայ եւ ապա միայն լայն շրջանի մը յանձնուէր, եթէ ընկերները (տեղական) անձեռնհաս նկատուէին այդ խնդրին լուծում տալու: Մենք ցոյց տուինք այդ բողոքողներուն՝ օրինական ճամբան: Եթէ կոմիտէն ուշք չդարձնէր իրենց բողոքներուն վրայ եւ կամ անոր վճիռէն զոհ չմնային, այն ատեն կրնային դիմել ու աւելի լայն շրջանի մը քննութիւնը պահանջել: Իսկ մենք մեր կողմէն, ոչ միայն հաղորդեցինք Վահանին իրեն դէմ եղած բողոքներու գոյութիւնը, այլ եւ առաջարկեցինք որ ինքը պահանջէ ընկերական ատեն մը, այդ խնդիրներուն վերջ մը տալու համար: Այս պարագաներուն մէջ ուրիշ կերպով չենք կարող վարուել: Մենք կը կարծենք, թէ հաւասարապէս յարգած եղանք երկու կողմին ալ՝ թէ՛ ամբաստանողներուն, թէ՛ ամբաստանեալին արժանապատուութիւնը: Համեմատեցէք մեր ըսածը Ընդհ. Ժողովի մշակած կարգապահութեան կանոններուն հետ (ընկերներու արտաքուստ):

Լաւ էք ըրեր, որ Գահիրէի դնացիք գործերը կարգադրուէ: Մեզ դրուած էր, որ ուրիշ ընկերներ ալ եկած են նոր գործին համար: Կը յուսանք, որ ցարդ յաջող վախճանի մը յանգած լինեն ձեր ջանքերը: Շուտով վերջացնելու է կոմիտէներու վերակազմութեան

գործը, որպէսզի հնարաւոր լինի Պատգամաւորական Ժողով գումարել եւ ընտրել Եգիպտոսի Կեդր. Կոմիտէն: Այդ ընտրութիւնները, թերեւս վերջ մը դնեն դժգոհութիւններուն, անհատներու դերը փոխանցելով հաւաքական մարմնի մը: Այդ մասին գրուած է նաեւ Ալեքսանդրիոյ կոմիտէին: Աւելորդ է ըսել, որ ջանալու է քիչ, բայց լաւ ուժերէ կազմել այդ մարմինները: Գահիրէի մէջ, ունինք արդէն Սուրէնը եւ Գալֆայիանը. եթէ մէկ երկու տեղական ուժեր եւս գտնուին, լաւագոյն կոմիտէներէն մէկը կրնայ կազմուած համարուիլ, այնուհետեւ դժուար չպիտի լինի Կեդրոնականին ալ ընտրութիւնը:

Դուք, հարկաւ չէք մնար Եգիպտոս: Գիտենք ու կը ճանչնանք ձեզ: Գրեցէք մեզ, թէ ո՛ւր կը նախընտրէք երթալ. թերեւս և որոշում ալ տուած լինէք ցարդ, կիլիկիցիներուն հետ համաձայնութեան մը գալով:

Կը սպասենք ձեր շուտափոյթ պատասխանին: Ընկերական բարեւներով ձեզ եւ բոլոր այդտեղի ընկերներուն՝

ԱՐՅԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Յ. Գ.— Ձէք մոռնար անշուշտ, Գահիրէի գործերուն մասին մանրամասն գրել մեզ:

ՆՈՅՆ

4 98 — 6

Ս. Ի (ՍԵՊՈՒՀ) ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ

Աղեքսանդրիա, 3 Նոյ. 98

Սիրելի Մարթին!

Ոսկեհանքէն հետեւեալը կը գրեն եւ կը խնդրեն որ պատասխանը իրենց ուղղակի ուղարկես. «Հաճի Տային խմբապետներուն մօտ մնացած դրամէն 120 տձկ.ի հող դրամ յանձնած է իրեն. այդ դրամը նշանակուած չէ իր զրկած հաշուեցուցակին մէջ. պէտք է մանրամասն գրէ այդ մասին. անցեալ շաբթու առանձինն իրեն գրած ու հաղորդած ենք ճիշդ հաշիւը՝ ինչ որ իրեն կը վերաբերէ»:

Ուրախ եղանք Վ.էն լսելով տեղիդ Կ.ի վերջնական կազմ ստացած լինելը. քանի հող ես, սիրելիս, այդ մարդկանց եռանդ ներշնչիր որ բացակայութեանդ ատեն առջի դրութեան մէջ նորէն չընկնին, ինչպէս որ եղաւ տարաբախտ Գլըճեանի մահուընէ անմիջապէս վերջը, — խմբական գործերու մէջ մանաւանդ ատոնք շատ խակ լինելու են. այդ մասին աւելի աշխատիր: Եթէ քեզ յաջողութեամբ միացնել գոնէ մէկ կարող եւ ազդեցիկ անձնաւորութիւն մը, անկէ անդին ալ գործերը ինքնին պիտի քայլ առնէին:

Եփրեմեանի կարգադրութիւնը շատ խելօք բան է.

յայտնեցէք իրեն, որ եթէ նոր տեղեկութիւններ եւ ծանօթներ կը յիշէ մի քանի ուրիշ տեղեր ալ, երկրիս մէջ, կամ եթէ նոր նամակ ստացած է, ինծի իմացնէ: Իր տուած տեղեկութիւնները հարկ եղած տեղերը զրկած եմ. ծանօթ մարդիկ ճիշդ գտած են եւ շնորհակալութիւն յայտնած: Ուրեմն Եփրեմեանը, առանց գնալիք մարդկանց մասին բան գրելու, իր թղթակցութիւնները լաւ կ'ընէր շարունակել եւ յոյս տալ որ իրենք մոռցած չեն թէ հող պիտի տարուի, եւն...:

Սուրէնի պահած լուրերը այլեւս չի զարմացնէր. կը ցաւիմ միայն: Պարիզէն Վահանը իր մասին տեղեկութիւն կը հարցնէ:

Մեր սիրելի Գալֆային շատ մը բարեւներ. արդեօք հոս իր երկրին հետ բնաւ յարաբերութիւն չի՞ պահեր. լաւ է միշտ երկրի մարդկանց հետ կապեր ունենալ: Կարծեմ երկար ատեն է հայրենիքէն հեռացած է. արդեօք վստահելի անձեր կը ճանչնա՞յ հոն. թող ինծի գրէ, շատ է հարկաւոր:

Գալով քեզ, Վ.ը այդ ուրախալի լուրը հաղորդեց. երանի թէ յաջողուէր. անցագիրը քովս է, ապահով եղիր այդ մասին: Երկրէն լուր մը չեկա՞ւ: Շուտը չու Տարնսնիք(1) կարդալով եւ քիչ մ'ալ Վ.ին ընթացքը տեսնելով, շատ է գրգռուած, ու տաք տաք կը խօսի եւ երբեմն անախորժ խօսքեր կ'ըսէ. անփորձ մ'է. լաւ ընկեր լսելով կարող է բուն իր ուզած նպատակին հասնիլ:

Մանիսայի տղայք Չ.ի Կոմ.ին նամակ մը գրած են շատ յարձակողական լեզուով. Կ.ի արժանապատուութեան դպելիք խօսքեր կան: Է.ը(2) հոս զրկեր էր: Յանձնեցինք Շ.ին որ գրէ իր ընկերներուն, որպէսզի այդպիսի սխալ քայլեր չառնեն, թիրիմացութիւնները պարզեն, եւն.: Մերժեց գրել. — «Ես գիտե՞մ ինչ պէտք է գրել» — կ'ըսէ: Դու ծանօթ ես իրեն. գրիր որ սխալ եւ շտապ քայլեր չառնէ:

Բարեւներով՝ Ս.

4 98 — 7

ՍՈՒՐԷՆԻ ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ

Պ. Մարթինին,

Երթանէդ առջին դեռ որոշ տեղեկութիւն մը շտապուեցաւ Ձեր կողմէ. ի՞նչ եղաք: Մ'ըր պիտի դաք:

Կրնաք հասկնալ թէ Ձեր ներկայութիւնը հոս անկարեւոր չէ:

Ընթերցարանի գրքերուն մասին Ձեզի յանձնա-

(1) Դժուար ըմբռնելի: (2) Հաւանորձ՝ եզվարք, որ կը գործէր Իզմիր (Ձմիւռիս):

բարութիւններ եղած էր. ի հարկէ դուք ջանքերնիդ չէք խնայած. սակայն մինչեւ հիմա տեղեկութիւն մը չտալուդ միւս ընկերները անցեալ օրեր յարմար կը տեսնէին տեղւոյդ մարմնին գրելով՝ խնդրել որ, կամ այդտեղի գրքերը հոս զրկեն (եթէ մօտերս պէտք չէ) եւ կամ պէտք եղած միջոցները ցոյց տան կամ գործադրեն, որպէսզի օր առաջ այս տեղի ընթերցատան բանալու գործը դիւրացուի:

Արդ պէտք եղած բոլոր միջոցները գործադրել տալ՝ կամ հարկաւոր եղած տեղեկութիւնները հետերնիդ առնելով բերելը կը խնդրուի:

— Գուցէ այս երեկոյ դարձեալ յարմար տեսնուի տեղւոյդ ընկերներուն գրել. թէեւ ըստ իս աւելորդ է. այսուհանդերձ դուք ձեր ջանքերը անշուշտ պիտի չխնայէք:

— Բարեւներս Ձեզ եւ Հրաչին:(1)
— Եթէ այսօր կամ վաղը չդաք, իմացնել պատճառը:

Ձերդ՝ ՍՈՒՐԷՆ

4 98 — 8

ՍԵՊՈՒՀԻ (ՀՐԱՁ ԹԻՐԵԱՔԵԱՆ) ՆԱՄԱԿԸ Մ Ա Ր Թ Ի Ն Ի Ն

Աղեքսանդրիա, 15 / 27 Դեկտ., դիշերը(1)

Սիրելի Մարթին!

Երկու նամակներդ ալ ստացած եմ, նոյնպէս եւ Պոլսեցիներ. որքան որ շատ արամադրութիւն անիմ հող գալու, մասնաւորապէս քանի մը խնդիրներու համար, սակայն յառաջիկայ 1 — 2 շաբաթներու մէջ, դու գիտես որ կարեւոր խնդիրներ պիտի ունենանք կարգադրելիք: Պէտք է անպատճառ վարդապետի գործը վերջացնել. հեռագիր ստացայ Ժ-ից,(2) «attendre», — սպասել մաքով. տեսնենք ի՛նչ պիտի գրեն, չեմ կարծեր որ բոլորովին մերժեն. գուցէ պայմաններուն մէջ փոփոխութիւն մացնեն. տեսնենք:

(1) Նամակը ուղարկուած ըլլալով Մարթինի՝ Ալեքսանդրիա, աւելի ապահով կը դառնայ որ Ս.Յ կամ Սեպուհը ուրիշ մէկը չէ, եթէ ոչ չըսէ թիրեմաքը:

(2) Տարբիւ չկայ. ըստ բովանդակութեան՝ պէտք է ըլլայ 1898 Դեկտեմբեր: (2) Փըմից:

Ներփակը Պոլսեցիին յանձնես, ու յայտես բերանացի կերպով թէ առայժմ չպիտի կրնայ դալ, սակայն Յունուարի սկիզբները անպատճառ:

Ուղարկիր Այնթապցին, նշանները տուր որ գիրար կրնանք հոս տեսնել. հարկ չկայ որ ուրիշներու հետ տեսակցի. թող բոլորովին գաղտնի մնայ, եւ ինձ հետ նոյնպէս պէտք է գաղտնի տեսնուի: Նախ կը տեսնուինք «Քաֆէ Խտիվիար», այսինքն հոն գիրար կարող ենք գտնել, ու յետոյ «Քաֆէ Գարուն»-ին(3) կ'երթանք ու ազատօրէն կը խօսակցինք: Դու իրեն պէտք եղածը խօսիր զիս հոս գտնելու համար:

Ներփակ նաեւ կը զրկեմ կարգ մը Ոսկեհանքէն(4) եկած նամակներ, բոլորն ալ յետ մեզի վերադարձնելու պայմանով: Ծաւարչի նամակը, յարմար է որ դու իրեն՝ հոս ուղարկես՝ քանի մը տողերով մէկտեղ:

Անցազիրը կ'ուղարկեմ: Կարծեք շուտով գալու չէ որ անոր հետ զրկէի, ինչպէս եւ դրամի խնդիրը կարգադրէի: Սուրէնէն խնդիր որքան որ հարկաւոր է այդ գործողութիւններուն համար, յետոյ հոս գալուդ՝ դու իրեն կը զրկես. կամ կոմիտէին ստացիր, չեմ գիտեր որքան է հարկաւոր: Այնպէս որ եթէ ուրիշ բաներու համար դրամի կարիք ունենաս, Կոմ.էն ստացիր, յետոյ մենք կը վճարենք: Դուն ալ շատ հող մի կենար, սա կազմակերպական, մանաւանդ խմբական գործերուն շինք մը կարգադրութիւն տալէն վերջը հասիր հոս:

Ուրախ եղայ որ տղերքը գործի են մտած: Գրեցի Վահանին որ հող տանի աղայոց զատ զատ: Տակաւին յարմար առիթ չեմ ունեցած արարական փոստը երթալ եւ նամակը հարցնելու:

Պոնտացիէն(5) նամակ առի. կը գրէ նորերուն համար: Պարոն մէկի համար կը յայտնէ թէ շատ ազդեցիկ մարդ մըն է: Ուրախալի է. Մ.էն(6) տակաւին լուր մը չկաւ, — տեսնենք այս շաբաթ. բարեւներ Գալֆային, Տօքթորին, Սուրէնին, Արմենակին եւ այլոց:

Համբոյրներով՝
ՍԵՊՈՒՀ(7)

Յ. Գ.— Կարգացնել տուր այսօրուայ 15 / 27 «Ճար ա'Ալեքսանտրի»ին մէջ՝ Կրեմէն եւ Հայաստանը յօդուածը. մնացածը Վ. Խ.էն կ'իմանաս. կարճ կը կապեմ. անոր գրած եմ:

Ս.

(3) Վերջին բառը՝ դժուար ընթեանիլի:
(4) Իզմիրէն:
(5) Պոնտացի 1897էն ի վեր կը գործէր կիլիկիա:
(6) Մարտն (Մար-Շիսոն) որ 1898 նոյեմբերին սնցած էր կիլիկիա:
(7) Շատ անիլի յետակ ստորագրուած — Սեպուհ — թիւ 408-1 ճամակին մէջ:

4 98 — 9

Ս.Ի (ՍԵՊՈՒՀ, ՀՐԱԶ) ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ

Աղեքսանդրիա, 25 Դեկտ. 98
Գիշերը

Սիրելի Մարթին!

Այսօր առաւօտուն ստացայ նամակդ. այդ ասպատակ Ե.ի մասին Կարիճի հետ ալ խօսեցայ. հարկաւոր է աւելի ստոյգ տեղեկութիւններ հաւաքել. բոլորովին համամիտ եմ քեզ՝ թէ աշխատելու ենք այդ անձէն օգտուել եւ ուղարկել երկիր մինչեւ անգամ. միայն թէ անհրաժեշտ է որ կազմակերպութեան համաձայնութեամբը գործէ. ինչպէս Կարիճը կ'ըսէ՝ այդպիսիներ չեն յօժարիր կախում ունենալու մարմիններէ. բան մը որ նկատի առնելու ենք. ուստի այդ կէտի վրայ ծանրանալու ես, — եթէ վստահութիւն ունենայ Դ.ի եւ դաշնակցական գործիչներու վրայ, եթէ ընդունի երկիր երթալ, կարող եմ օգնել իրեն, այն պայմանով որ սակայն կապ ունենայ տեղական կամ շրջակայ կազմակերպութիւններու հետ, առանց, ի հարկէ գործի ապահովութեան տեսակէտէն, ասդին անդին տարածելու, պոստից անշուշտ շատ մարդոց հետ յարաբերութեան մտնելու, ինչ որ ինքն ալ յարմար կը գտնէ: Ուստի գլխաւոր խօսակցութիւնը թող լինի, համոզել զինքը, կապուել բոլորովին մեզի հետ, մեզի հետ գործելու համար: Թող պատրաստէ տեղեկազիր մը իր ամբողջ գործունէութեան, կը խոստանանք իրեն խիստ գաղտնի պահել, յայտնելով միայն մեր շրջանի իւրօրոյն. դա կ'ունենայ իր նշանակութիւնը շատ մը տեսակէտներէն: Առ այժմ, լաւ ես ըրած մտցնելով տեղական կազմակերպութիւններու մէջ. թող Սուրէնը եւ ուրիշներ, մեկնելէր վերջը, լաւ շարունակեն այդ յարաբերութեան եւ ուսումնասիրութեան գործը: Տեղեկազիրն վրայ ուշադրութիւն դարձուր. դա, եթէ համաձայնի, կարելոր է: — Գալով քու գործի խնդրին, զարմանալի է, — վերջին նամակին մէջ՝ Պոնտացին ոչինչ չէ գրած պայմաններու մասին. թերեւս վերջին, չորեքշաբթի ստանալիք նամակի մէջ գրած ըլլան: Ուրեմն, նախ, դու հոս գալուդ, հարկաւոր է՝ բոլորովին գաղտնի մնաս, հայեր չտեսնես, յոյն մը պանդոկին իջնես, եւ նոյն գիշերը մեր սենեակը գաս, ժամը 12ին միջոցները, գիրար գտնելու համար. ինչպէս կ'ուզես ըրէ, կը բաւէ որ մարդ քեզի չնկատէ եւ ես կարողանամ իջած պանդոկը գալ ու քեզի տեսնել: Երկուշաբթի օր եկուր, որ մեկնումի մը պարագային իրար հետ խօսելու ժամանակ ունենանք: Դեռ չգիտենք թէ արդեօք Նիտերը(1) պիտի գա՞յ, թէ՛ Մկրը մէջ՞ն է, թէ՛ եթէ մէջն է, յանձն պիտի առնէ՞. ա-

(1) Եղեմի առնել:

տնք, ի հարկէ, խնդիրներ են, որոնք երեքշաբթի օր միայն, Փրանսական շոգենաւին հասած այդ օրը միայն, պիտի պարզուին: Արդ՝ Փրանսական շոգենաւ մը երեքշաբթի օր կու գայ Մարտէյլէն, չորեքշաբթի օր կը մեկնի: Ուրեմն տե՛ս, բոլոր յարմարութիւններն աչքի առաջ ունենալով, օր առաջ մեկնիր, հոս հասնելուդ գաղտնի մնալու պայմանով:

Վաղը, շաբաթ օր, զէյթունցի երիտասարդ մը հող կու դայ. Կիպրոսէն նոր հասաւ հոս. ժամանակ չունեցանք հետը երկար տեսակցութիւն ունենալու: Քանի որ հող ես, ընդարձակ կերպով հետը խօսիր, Կարիճը(2) միասին, կարելի է օգտուել այդ տղէն: Մտրատ Բիւրատին ծանօթն է, կ'ուզէ հետը տեսնուիլ. աշխատեցէք ամէն կարելի դիւրութիւնները այդ երիտասարդին տալ, աժան սենեակ մը գտնելով: Եթէ ժամանակին ձեռքը հասնի նամակս, եթէ կ'ուզես, կայարան դնա, տղան «աճէ՛մի» է, շատ դժուարութեամբ պիտի կրնայ, հակառակ պարագային, ձեզի գտնել: Անունը Մարգիտ Կոստանեան է: Սուրէնին վրայ յանձնարարական ունի:

Քոյդ՝
Ս.

4 99 — 1

Ս.Ի (ՍԵՊՈՒՀ, — ՀՐԱԶ ԹԻՐԵԱՔԵԱՆ)

ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ

Թուական չունի: Ըստ բովանդակութեան՝ կը յարգէ Յախորդ (408-9) ճամակին: Գրուած պէտք է ըլլայ Յունուարի առաջին օրերուն:

Աղեքսանդրիա

Սիրելի Մարթին!

Նամակդ նոր տարիին ստացայ. կը զարմանամ թէ ինչո՞ւ պարզ բանը լաւ չես հասկցած. զգաղտնի մնալու ես՝ ըսելով, կը հասկնայի շոգենաւը չհասած եւ հասնելէն վերջը՝ Մկրը մէջ լինելու պարագաներուն. ի հարկ է, եթէ նաւը ան չլինի. ի՞նչ միտք ծածուկ մնալու. տունդ չբանդուի, այդքան ալ մարդուն միամիտ կարծել! ինչ որ է, ամենայն դէպս, դնալու պարագային գաղտնի մնալը ընդունած լինելով փոխադարձ կերպով, եւ քանի որ կասկած ունինք որ կամ Նիտերը գալու չէ այս շաբաթ, եւ կամ եկած պարագային կրնայ պատահիլ որ Մկրը յանձն չառնէ, իսկ, նկատելով որ այդ միջոցին, մեկնելը անկարելի լինելով, զուր տեղը եկած պիտի լինիս հոս, քանի որ տեղը ալ ինչ որ կարելոր կարգադրելիք գործեր ունիս, սակէ մինչեւ երեքշաբթի օր հող սպասիր:

(2) Դժուար ընթեանիլի:

Եթէ Մկրը եկաւ ու յարմարուեցաւ, կը հետադրեմ քեզի, տանդ հասցէով «Bon», այսինքն «լաւ», հակառակ պարագային, կամ նաւը ու Մկրը չհասնին, կամ դան ու չընդունին, կը հետադրեմ «mal», այսինքն «վատ». անպատճառ երեքշաբթի երեկոյան ինչ որ ալ լինի կը հետադրեմ քեզ. պէտք է պատուիրել հետադրատան պաշտօնեային, խոստանալով «պատշիշ», որ եթէ գիշերն ալ հասնի բերէ քեզի. դա շատ կարելոր է. որովհետեւ կրնայ պատահիլ, ծովի ալեկոծութեան պատճառով, շոգենաւն ու չհասնի: Բայց ինչ որ ալ ըլլայ երեքշաբթի երեկոյան հետադր մը պիտի ստանաս. մինչեւ անգամ, եթէ անորոջ դրութեան մէջ լինի, հաւանական է որ, եթէ միւս օրուան յետաձգուի, կրկին երեքշաբթի երեկոյան «լաւ» հետադրեմ. գալու միջոցիդ, ճերմակեղէն եւ անկողին հետդ բեր, դնալուդ կարող ես տանիլ. ընդարձակ կերպով Պոնտ.ին(1) երէկ գրեցի, մանրամասն եւ որոշ կերպով պայմանները տուի. 4-5 օր առաջ եւ աւելի արագ գալուն պայմանով. անոնք ժամանակ պիտի ունենան պէտք եղածն ընելու, քանի որ տեղի մաքսատունի խնդիրը կարգադրուած է, այլեւս պայմաններն մենք ալ կրնանք տալ. բայց աւելի կանոնաւոր ընելու համար, գրեցի իրեն որ, նաւը հոն հասնելուն, սոմսակ մը զրկեն կաֆէճի Ստեփանին (փոքրին), որը ձեզի կը յանձնէ. հոն պիտի գրած լինի պատրաստ լինելին կամ ոչ: Ու անկողիններդ եւ ատրճանակն ալ՝ նաւավարը յետոյ դուրս կը հանէ. որով նաւավարը զուր տեղը ներս եկած չըլլար. իսկ որեւէ պատճառով, երբ նաւավարը անկարող լինի ներս գալ (փոթորիկ, եւն.), դուրս ելած միջոցիդ, անոնց մարդը, պիտի նշանակութիւն ունենայ կասկած յարուցանելու, յայտնէ քեզի յաջող կամ անյաջող ըլլալը: Անյաջող պարագային, ինչ որ ալ լինի, նաւ կը դառնաս ու լաւանակայ դուրս կ'ելլես, ուր կը մնաս 1 1/2 ամիս, վերջը նոյն նաւով, Պոնտէն դարձին մտնել փորձելու համար. իսկ յաջող պարագային, աւելորդ է ըսել, ուրիշ նշաններ ալ ընելով, կը հետեւիս անոր Մկրին հետ եւ կը մտնես հոն ուր նա կը մտնէ: Ատոնք դիւրին կէտեր են. գալուդ հոս՝ կը խօսինք. խնդիրը նաւուն գալուն կամ Մկրի ընդունելուն վրայ է. միւսները, իմ կարծիքով, պատրաստ եւ յարմարեցուած են: Նամակ չառի Մարտէյլէն. այն նաւով, երեքշաբթի օր, եթէ անոնք չգան, կը ստանամ. ես կը յուսամ որ Մկրը այս անգամ կու գայ. ուրեմն խնդրի կարելոր մասը ընդունելի տալուն վրայ է: Շատ մեծ յոյս ունիմ նաեւ որ, այս չորեքշաբթի օր, արարական նաւով, Փրանսականին մեկնած օրը, քանի մը (4) ժամ առաջ, Պոնտացիէն պէտք եղած նամակն ալ կը ստանանք: Աւելի՛ լաւ այն ժամանակ:

50 կամ 70-ը ընդունելիս այն է որ եթէ գրով գրուի, 70-ը Փրանսերէնի մէջ երկու բառ է, իսկ թուանշանով

(1) Պոնտացիին:

ալ անյարմար է. կարող են 5-ը 7 գրել, կամ 7-ը 5: Bon կամ Mal, լաւ կամ վատ աւելի որոշ կերպով կը պարզեն խնդիրը:

Պատժէն Հեռագիր ստացայ. Վ.ի մասին թող իրենց նամակին սպասեն, — կ'իմացնեն: Տեսնենք Արեւելեան Բիւրօն ի՞նչ կարծիք կը յայտնէ: Արեւմտեան Բիւրօն կը յայտնէր որ 10 վանքի շինութիւն, 30 սով-եաշներուն իսկ 60ը Դաշնակցութեան տրամադրութեան տակ (ըլլայ). ես չընդունեցի, — 10ը վանքին, 20-30ը սովեւոց, 20 Արեւելեան Բիւրոյին, 50-60ը Լեռնավայրին՝ Փոքր Ասիան ալ, ռազմական մտքով, մէջը հասկընալով: Գրեցի եւ Արեւել. Բ.ին: Ուրեմն այս խնդիրը, հակառակ մեր բոլոր աճապարանքին, մեզմէ անկախ պատճառներով պիտի յետաձգենք: Պիտի սպասենք Արեւել. Բ.ի գրեցիքներուն: Պիտի ընդունին, ատոր տարակիտ շուկիմ, միայն կը կարծեմ՝ պայմաններ պիտի դնեն, — ինչ երկիւղ որ Կարիճին յայտնեցի, այն նկատմամբ, պիտի քանի մը փոփոխութիւններ մտցնեն, որովհետեւ ժողովարարութիւնը գրեթէ Ռուս.ի մէջ աւելի պիտի(2), ու այդ հանգանակութենէն անպատճառ պակսեցնելով Ռ.ի ընդհ. հասոյթի գումարը, որով Ռ.ի չըջանի (Սասուն եւ Վասպուրական) գործերը կարող են զրկուիլ եւ կաղալ, — այդ մտքով, թերեւս, ու գրեթէ վստահ եմ հիմա՝ թէ պիտի առաջարկեն վանքին, ու սովեւոց յատկացումէն վերջը, մնացորդը Դշն. տրամադրութեան տակ դնել, — ինչ որ մեր Բիւրօն ալ կ'առաջարկէր: Ներփակ կը զրկեմ Բիւրոյի նամակները, յետոյ կը բերես հետդ:

Շուտով մանախումբը կը վերջացնէ իր կազմը. խնդիրը այդ սկզբնական քայլին վրայ է: Արդէն ուրիշ գծուարութիւն չկայ: Անգամ մը կազմուելէն վերջը, պիտի ամենայն դիւրութեամբ գործէ: Շատ յոռետես ես, հա՛:

Բարեւներ Կարիճին եւ ազոց:

Համարյոնքով՝
Ս.

4 99 — 2

Ս.Ի (ՀՐԱԶ) ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ

Ազեքանդրիա, 29/9 Յունվ. 99

Սիրելի Մարթին!

Այսօր տեղեկացայ որ Մարտէյլէն եկող շոգենաւը ոչ թէ Նիժերը, այլ Սիւնան է, որու նաւապետը ուրեմն, ինչպէս յայտարարութեան մէջ կարդացի, ուրիշ մարդ է: Զգիտե՛ք աակաւին թէ արդեօք Մկըրը ասոր մէջն է թէ ոչ. բոլորովին անհասկանալի չի թուիր: Զբան-

(2) Մէկ բառ անբարեմի:

սական բոլոր նաւերու երթեւեկութեանց ցանկին մէջ մինչեւ 3-4 ամիս Նիժերի անունն անգամ չկայ. արդ, կ'ենթադրեմ որ, քանի Նիժերն այլ եւս այս կողմերը գալու չէ, Մկըրը չի կարող բացը(1) մնալ, անպատճառ եւ շուտով ուրիշ նաւու մը մէջ մտած պիտի լինի, բայց խնդիրը կը մնայ ուրեմն այն ատեն, Մկըրի՛ իր մտած նոր նաւի նաւապետին հետ համաձայնիլը, բան մը որ այնքան դիւրութեամբ գուցէ եւ չյաջողուի. ուստի եթէ երբեք Մկըրը գալու լինի ու անկարող ըլլանք ընդունիլ տալ, այդ նոյն պայմաններով, մեզի պիտի մնայ ուրեմն ուրիշ ձեւերու, միջոցներու մասին մտածել: Առ այժմ, մինչեւ Մկըրի խընդիրը չուրը ինչպէս ի հարկէ կ'աշխատինք այս միջոցը, ամէն ջանք թափելով, ձեռքէ չհանել: Չմոռնամ ըսելու որ Ֆրանսական նաւը հոս, փոխանակ սովորականին համեմատ, երեքշաբթի օրը հասնելու, պիտի հասնի միայն չորեքշաբթի օրը եւ մեկնի հինգշաբթի երեկոյին, ժամը 4ին. ուրեմն այս պարագային առաւելութիւն մը ունինք որ արաբական փոսթի հասնելէն վերջը, մեր Գ.էն(2) նամակ ստանալէն ետքը, նաւը մէկ օր վերջը պիտի մեկնի: Հեռագրի ուրեմն կարիք չկայ. չորեքշաբթի օրուան երեկոյեան. երբ հարկ լինի, նոյն մտքով կը շարժիմ:

Ներփակ կը զրկեմ Զ.ի(3) նամակը. այս շաբաթ ես գրելու եմ անոնց. եթէ դու ալ բան մը պիտի զրկես, ինծի հասցուր, միասին զրկենք. պարապ տեղը, գրադրութեան համար, զուր ծախքեր կրկնակի չընենք: — Կարիճը ի՞նչ կ'ըսէ. եթէ ռուս. Յաւի մարդը(4) ընդունի, Կարիճը պատրաստ պիտի լինի՞ մեկնելու եւ ե՞րբ:

Տեսնենք, թերեւս այս շաբաթ ի՞նչ կը գրեն մեզի: Տեսնուիր զէյթունցի տղուն հետ. մենք ժամանակ չունեցանք մանրամասնութիւններու մէջ մտնելու. նա ծանօթ է եղբր Օհանեան Աշոտին. արդեօք ի՞նչ մտադրութիւն ունի. մեր համոզումը այն եղաւ որ, կ'ուզէ դուրսը մնալ եւ ներսի վարժարաններու խնդրի (Զ.ի) համար աշխատիլ. բայց տարօրինակ տիպ մը երեւաց, քիչ մը կասկածելի. թերեւս շատ սխալ լինենք. ինչ որ նա ծանօթ է նաեւ Սմբատ Բիւրատի, որու հետ եւ քիչ մը ազգականութիւն ունի. դու ալ ունէիր տեսակցութիւն Բիւրատի հետ. մտեցիր. մենք անկէ ալ կարող ենք օգտուել. կարծեմ, եթէ մաքուր տղայ է, մենք այս զէյթունցիէն պիտի օգտուինք:

Բիւրօն կը գրէ թէ Պարսկաստան գրած է եւ Ոսկան Հազարեանի նկատմամբ տեղեկութիւններ պահանջած. թերեւս շուտով հաստատ կերպով պատասխան առնուի: Ի՞նչ կ'ընէ նա հող. կը խօսի՞ թէ սճած է եւ ի՞նչ չըջաններու մէջ:

- (1) Դժուար ընթեանի:
- (2) Հաւածօրէ՛մ. Պոստացի:
- (3) Հաւածօրէ՛մ. Զէյթունի:
- (4) Մածկազրով գրուած:

Աղ.(5) կոմիտէն 50ի չափ գինանշան ստացաւ, հոս ծախելու համար, 50 հատ եւս պիտի շուտով ստացուի. թերեւս ասոնցմէ տեղիդ համար ալ ուղարկենք, տեղւոյս Կ.ի(6) հաշւոյն ծախելու համար:

Կը տեսնուի՞ս Վ. Խ.ի հետ. ե՞րբ հոս պիտի գայ: Տղաքը, բժիշկը եւ միւսը գործի մէջ ինչպէ՞ս են. դժգոհութիւն ունի՞ն:

Գալֆան ի՞նչ կ'ընէ: Կ.ի(6) նիստերուն կանոնաւոր կերպով կը մասնակցի՞:

Բարեւներով բոլոր ընկերներուն:

Քոյդ՝

Ս.

4 99 — 3

Ս.Ի ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ՝ ԳԱՀԻՐԷ

Աղ. — 11/23 Յունվ. 99

Սիրելի Մարթին!

Ներփակ քեզի կը զրկեմ Խմբագրութեան եւ Գ.ի(1) երկու կտոր նամակները. շուտով դարձուր հոս. պատասխանելիք հարցեր շատ կան. հարկաւոր պիտի ըլլայ. երրորդ նամակ մ'ալ Շուտուֆեանէն է: Ճաւալի է որ Արեւելեան Բիւրօն այդպիսի մի պատասխան տրուաւ, որով ոչ միայն խնդիրը երկարաձգեց, այլ շատ կը վախճամ թէ չյաջողի. շուտով, Վարդապետին հետ վերջնական կերպով տեսակցութիւն մը ունենալով, մեր պատասխանը պիտի զրկենք Կովկաս. պիտի պահանջենք անպատճառ որ պայմանագրութիւնը հոս կնքուի. դա՛ շատ մը տեսակէտներէ անհրաժեշտ է:

Գ.ի(1) նամակներէն մէկուն մէջ, Մարի նամակը կայ ընդօրինակուած. անկէ զատ, երկու կարճ նամակներ ալ ստացանք, որոնք Բիւրոյին զրկեցի, անցեալ օրեր. խնդրած էին. կարեւոր բաներ չկային, կրկնութիւններ միայն: — Մարի(2) խնդրած բաները՝ մէկ մասը արդէն զրկած եմ, միւսներն ալ շուտով կը կարգադրենք եւ կը գոհացնենք: — Շ.ի մասին գրածս, դու ալ կարդացիր, այն ատեն հոս էիր. այնքան ստորնացնող բաներ չկային: Յայտնած էի որ եթէ Կորիւնը կը կարծէ թէ ատրճանակներու խնդրոյ առթիւ Շ.ի բռնած ընթացքի մասին իր գրելիքը նշանակութիւն կրնայ ու-

- (5) Ազեքանդրիայ:
- (6) Կոմիտէի:
- (1) Հաւածօրէ՛մ. Պոստացի:
- (2) Մարք 1898 Նայմարեթի անցած էր Կիլիկիա:

նենալ Շ.ի վրայ, քանի մը տող անոր թող գրէ: — Ինչ որ է, երեւի Կորիւնը եւ Շ.ը իրենց մէջ զազանի յարաբերութիւն կը պահպանեն. Գ.ի նամակէն պիտի հասկընաս: — Շ.ը հոս բոլորովին կ'ուրանայ եւ ստախօս կ'անուանէ: Իբր թէ ըսած չէ այն խօսքերը, զոր դու յայտնեցիր ինծի՝ թէ քեզի է նա ըսած: Կորիւնն ալ կ'ուրանայ որ, նամակ չէ գրած Շ.ին. ան նամակը զոր բժիշկին ցոյց էր տուած: — Այս մասին Շ.ին բան չգրես: Լուրթեամբ անցնինք: Գ. ալ կը գրէ արդէն թէ կամաց կամաց Կորիւնը պիտի հեռացնենք: — Բէզեարեանին հետ տեսուեցայ՝ բոլորովին չէ խոստացած, բայց յոյս ունիմ որ պիտի յաջողիմ պէտք եղած թուրքը ստանալ անկէ: Հիմակ՝ Նուբարի(3) թաղումի առթիւ շատ զբաղուած է. շաբաթ մը վերջը: — Բօրիսը երեւի, շուտով հոս կը հասնի. ան ատեն, մեր գործերը աւելի կարգին կը դնան: Զգիտե՛մ, Կարիճը ի՞նչ կը մտածէ. բան չըսիր իր գնալու մասին. նաւին մարդը կ'ապահովցնէ թէ շատ դիւրին է:

Ի՞նչ ըրիր այնթապցիի գործը. Մնունդը եկաւ ու անցաւ. յարմար ժամանակ չէ թէ եւ, որովհետեւ Իսկենտէրունէն կը գրեն թէ խստութիւններ կան, բայց անցադիր ունեցողի համար վտանգ մը չկայ: — Կարգադրիր հող ամէն բան. օր առաջ մեզի ալ տեղեկութիւն տուր, որ հետը տեսնուինք:

Ի՞նչ ըրիք արարկիրցիներու խնդիրը: Թատրոնի խնդիրը ի՞նչ ջրերի վրայ է: Նամակները շուտով յետ վերադարձնել:

Քոյդ Համարյոնքով՝

Ս.

4 99 — 4

ԷԴՎԱՐԴԻ ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ

Զ. 13/25 Յունուար 1899

Սիրելի ընկեր Աշոտ,(4)

Ստացանք ջո 12/1 թուակիր նամակը: Շատ կը ցուինք որ իսկապէս Վահանը(1) տեղի տուած է այդպիսի միամիտ դասակարգի մը մէջ տղայական ներշնչումներով խանգարելու անոնց հաւատը: Եթէ ժողովի ինչ հետեւանքի հասած ըլլալը կարելի ըլլար մեզ իմացնելիք, շատ պիտի գոհանայինք:

Շաւարշի մասին՝ մեր փոխանակած քանի մը նա-

- (3) Դժուար ընթեանի:
- (4) Մարթի՛նի ծածկանուններէ՛մ մէկն է:

մակնբերէն, նաեւ իր հետեւած այլ եւ այլ ընթացքէն գատնելով համարձակ կրնանք ըսել որ այդ տղան իր ըրած մեղադրանքներուն մէջ ինքն ալ համոզուած է որ սուտ է, սխալ է, բայց իր ամօթը, իր յանցանքը ծածկելու համար զօռ կու տայ հոսհոսի յատուկ պոռչաուքի, հայհոյանքի. իր նամակները հայհոյութիւններով լի են, ձեռք անցուր, Աղեքսանդրիոյ Կ.էն ուզէ ու կարգաւ, կրնան վերջնական գաղափար մը կազմել: Նա ունի իր այդ ընթացքին յատուկ պատճառն ալ, որ պէտք է յայտնի ըլլայ ձեզ: Նա կը գրէր իր եղբորը դեռ 4 ամիսներէն աւելի առաջ որ գործը ազէկ է, որ պարտքերը բոլոր վճարած է, որեւէ տեղ պարտքը մնացած չէ եւայն, եւայն. նաեւ քանի մը անգամ ալ մեր առաջարկութեան վրայ, որ տալիքը յանձնէ Վ.ին, մերթ զմերթ որ Վ.ին չվստահելուն համար չյանձնեց ու եղբորը գրած է որ տայ, մերթ պիտի քեզ յանձնէ եւ այն, եւայն. մենք նկատեցինք նորա հոգու յատկանիշը նաեւ երբ մակոյկի(2) 4 մէծիտը ուղեց առաքելի ամօթալի պատրուակով: Ինքը հոս վտանգուած ըլլալուն առթիւ չէ՛ հեռացած երբեք, պարզապէս իր այս տեղի ըսածով՝ փորձի յաջողութեան համար գնաց, ու եթէ յոյսը կտրէր պիտի մտնէր բուն գործին մէջ, մինչդեռ յետոյ երեւան եկաւ որ երթալէն անմիջապէս վերջ իր ընտանիքի մասին սկսեց մտածել. նաեւ ինքը իր անձնական զբաղման մէջ ձեռքադրուած է. առաջին անգամ մըն ալ նոյնպէս իր անձնական կոիւովը հակաճառութեան ելած է իր մէկ ազգականին հետ, որոնք իբր խռովիչ ձեռքադրուած են զինքը: Ինչ որ ալ ըլլայ, բացի ասոնցմէ իր գրած նամակները բոլորովին անվայել, անպատիւ անձի մը յատուկ են. մենք, մասնաւորապէս ես, շատ լաւ հասկցած եմ այժմ նորա հոգու արժէքը: Անցեալ օրուան գրած նամակները զրկած ենք Աղեք. Կ.ին, անոնցմէ մին ինծի ուղղուած է, մին Կ.ին. ինծի գրած նամակով այնքան առաջ կ'երթայ իր պողտուքներուն մէջ, որ իբր Աւետիսին տան կործանման պատճառ կը ներկայացնէ. Բարկէնի մահուան իբր թէ ես իմ դասալէութեամբս, իմ դաւաճանութեամբս պատճառ եղած եմ. այդ առթիւ գրած եմ փոքրիկ երկտող մը եւ մէջը երկտող մըն ալ Աւետիսին ուղղած, հարցունելով թէ ստուգի՞ր ես պատճառ եղած եմ իր տան կործանման, ու խնդրած եմ Շաւարշէն որպէսզի զրկելով Ա.ին, պատասխանը ստանայ ու զրկէ ինձ որով կը հաստատուի եւ իր այդ ըսածին ճշմարիտ թէ ոչ՝ ըլլալը. չեմ կարծեր թէ զրկած ըլլայ զայն, բայց նոյն ատեն Կ.ին միջոցաւ Ա.ին գրած եմ առանձին նամակ մը, հասկցուցած խնդիրը, թող կը խնդրեմ ինձ պատասխանէ. նաեւ գրելով Շաւարշէն պահանջէ իմ անոր միջոցաւ գրած երկտողս:

Գալով Մասլաքնաւը(1) շատ լաւ կը ճանչնայ այդ տղային, բայց ոչ միայն չի վստահացներ, այլ շատ վարպետ խաբեբայ մըն է կ'ըսէ. այդ մասին պա-

րազայ մը պատմելով կրնաք գաղափար մը կազմել: Թալապի(1) մէջ կիւլպեմկեան(1) ընտանիքէն գրած պահանջած է յանուն յեղափոխութեան, նոքա գրածը խոստացած են եղեր ալ եթէ իր անկեղծութիւնը հաստատող վաւերագրեր ցոյց տայ, սակայն փոխանակ պահանջում տալով գրամը գանձելու, սպաննացած է որ առանց ոչ մի թուղթի իրեն պէտք է տան գրամը, անոնք չեն առնած եւ վճարած ու կառավարութեան իմաց տալով ձեռքադրուել տուած, որու հետեւանօք տարի մը պառկած է, անկէ գացած է տեսնուած Մասլաքն.ին(1) եւ ուզած է խաբել զայն վկայագրի կորզելու փոփոքով, սակայն Մասլ.ը(1) քանի մը հարցութեան զատկացած է խաբեբայ մը ըլլալը, ու ճամբած է. ասկէ 2-3 օր թէ աւելի վերջը կը հանդիպի պատուելի(1) մը, որ լաւ կը ճանչնայ եղբր այդ անձին. տեսնելուն պէս կ'ըսէ. «այժմ հո՞ս ես եկած շահատակութիւններդ շարունակելու». ահա այդ պարագային՝ կը խնդրէ որ սուս ըլլայ եւ կը խոստանայ հեռանալ եւ շուտով կը հեռանայ: Վերջապէս բացի լաւ չներկայացնելէն(3) իբրեւ խաբեբայ մը ըլլալը կը շեշտէ ու կը զգուշացնէ զմեզ. նոյնութեամբ ահա գրեցինք ձեզ:

Տեղական գործերնիս կը հարցնես. բայց ի՞նչ գրենք, շահեկան բան մը չկայ. քանի մը նոր խումբ(1) կազմուեցան, բաւական առաջանալու վրայ է. միայն թէ սա Հ. Ե.ը մեր ցանկութեան համեմատ ոչ եղաւ ոչ ալ ըլլալիք ունի եթէ հիմէն չնորոգուի. միւս տեղերը լաւ են ու կանոնաւոր: Թերթերու ուշանալը կը վհատեցնէ տղաքները, մինչեւ ցարդ Դեկ. թիւը չենք ստացած. նամակ ալ չենք առներ:

Սերգօն(1) այժմ նոյն իսկ անձնական շահու միտումով մատնութիւն(1) կ'ընէ. իր ընկերը կայ, գիտես, Համի Եղիան(1), ատոր հետ ձեռք ձեռքի տուած ամէն վատութիւն կ'ընէ եղբր Խանի(1) մէջ. օրերս իրենց գիմացը մեծանցի(1) մը բռնուած է, որը իրենց գործն է, կ'ըսուի ամէնուն կողմէ:

Ինչո՞ւ արդեօք մեզի ուզած թերթերնիս չեն զըրկեր, «Հնչակ» չելլե՞ր այժմ. եթէ կարելի է գուն ձեռք անցուր զրկէ ատոնք, «Միութիւն», «Մարտ», «Նոր Կեանք», «Վարդուան Չայն» եւայն: Բայց չլինի որ այդ տեղուան փոսթը յանձնես...

Համբոյրներով
Ի գիմաց Կ.էին(3)
էԴ.

(1) Մածկագիր:
(2) Գծուար ընթերցանի:
(3) Կամիսէի:

4 99 — 5

ՄԻՍԱԳԻ ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ

13/25 Յունուար 1899 Աղեքսանդրիա

Սիրելի Մարթին,

Կը ներսս որ չկրցայ մինչեւ հիմա գրել Ձեզ. եւ արդէն գրելու բան մըն ալ չունիմ: Այստեղի մեր գործերը Աստուծոյ մնացեր են. ցարդ ոչ մէկ խնդիր կարգադրուած չէ. նայինք այս օրերս բան մը պիտի կըրնա՞նք ընել:

Ձեր գործերու մասին կը խնդրեմ որ քիչ մը տեղեկութիւն տաք. մասնաւորապէս ներկայացման եւ սղայոց խնդիրներու վրայ: Իմ մեկնելու խնդրին մասին մինչեւ այժմ խօսք չէ եղած. հարկ եղածը մանրամասնօրէն գրեցի Պիւրոյին. պատասխանին պիտի սպասեմ:

Եթէ լուսանկարներդ ստացար հաճէ հատ մը զըրկել մեզ. Աւոյին յատկապէս բարեւէ իմ կողմէս, խընդրելով որ «Շարժում»ի համար խոստացած ոտանաւորը կամ յօդուածը զրկէ. կամ Ձեզ յանձնէ, զրկեցէք ինձ. ես կը զրկեմ:

Քովդ մնացած գիրքը զրկէ հետեւեալ հասցէին.
Missak Kouyoumdjian
Poste restante française.

Գալֆային եւ բոլոր ընկերներուն սիրալիբ բարեւներ. Շահէնի հետ նոր տեսակցութիւն մը ունեցա՞ր արդեօք:

Բարեւներով՝
ՄԻՍԱԳ

4 99 — 6

Ս.Ի (ՀՐԱԶ) ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ

Աղեքսանդրիա, 16/28 Յունվ. 99

Սիրելի Մարթին! Նամակդ՝ ներփակեալներովը ստացած եմ: Այսօր կը զրկեմ Ձ.էն(1) եկած քեզի ուղղուած նամակ մը: — Նոյնպէս նաւահանգստի և Գ.ի(2) երկու կտոր նամակները, Ձ.ի նամակին հետ միասին:

Նկատելով որ Մարն ու Պոնտացին եւ դեռ ուրիշներ կը հակառակին իմ երկիր մտնելուն, միւս կողմէն չուղելով արտասահման մնալ, շատ ու շատ եմ ձանձրացած ու պարապ անպործ պտտելս ալ ինծի ահագին ծանրութիւն մ'է. գրած էի Ձ. որ զոնէ 4-5 ամսուայ համար գնամ հոն մնամ, թերեւս մինչեւ ան ատեն, դուռ մը կը բացուի նաեւ ինծի համար, եւ ներսի ընկերներու տրամադրութիւններն ալ կը փոխուին. մինչեւ անգամ, կը մտածէի Ձ.էն կարելի կը լինի, քանի մը փորձերէն յետոյ, գաղտնի կամ ուրիշ կերպ անցկենալ ներսերը: Բայց ի հարկէ, նախ՝ փափաքս էր,

ազատուել այս տեղերէն ու Ձ.իոյ մէջ մնալով զոնէ զիս ու գործը համապատասխան կացութեան մը մէջ գրած պիտի լինէի. գրած էի միտմամանակ Ձ. եւ Բիւրոյին: Ահա Ձ.ցոյց պատասխանը. ինչ որ է, ատ ալ հաւարտական կտորուկ պատասխան է. ատ օրերուն ընկանք: Չգիտեմ, իմ ալ կացութիւնս ի՞նչ պիտի լինի. զոնէ մի գործ գտնէի ու կը մնայի հոս. թող երթան ուղածնուն պէս՝ կարեն ձեռն. մարդուն հոգին չեն հասկընար, կարծես փայտ լինեն. հա՛, մտայ ներս ու բռնուեցայ, անխոհեմութիւն մը ըրի ու երկիրը տակն ու վրայ եղաւ: Կարծես երեխայ լինէի. այդ ալ անցնինք: Ինչ որ 96 թ.ին էս.ին կ'ըսէի, ժամանակը կու գայ, զիրար կը հասկնանք, հիմակ, ստիպուած եմ, ընդհանրապէս ըսելու, թէ՛ կու գայ մի գեղեցիկ օր, կը մտնեմ երկիր ու ան ատեն՝ զիրար կը հասկնանք: Ասկէ վերջը՝ ես ինձ պիտի ամփոփեմ իմ մէջ ու սպասեմ, քանի որ չունիմ ինծի հասկցող մը: Մարին ըսի, Հալէպ նստած, Վահանին ելեր ուսերէն նամակ մ'է գրեր ու վերաւորական բառեր կ'ուղարկեն իմ հասցէիս, յանձնարարելով որ «Ս.ը թող քամիավարի բաներ չգրէ իրեն, այլ պարզ ու մտածուած», եւն. իսկ Վահանը՝ ինչ ասել կ'ուզի, որ այդ նամակը անմիջապէս Ժ. զրկեց. ահա՛ քեզ ընկերական յարաբերութիւն: Շուտով Բօրիոք գայ, բոլորովին անոր պիտի յանձնեմ նամակազրական մասը, որպէսզի այդպիսի խօսքերու տեղիք չտամ. այն նամակը՝ որու նկատմամբ խօսքը կ'ընէ Մարը, բարեբախտաբար զոփին առնուած է, ինչպէս բոլոր նամակներուն. ես ալ կարող էի պատասխանել, որ յիմար բաներ նամակներու մէջ չգրէ. բայց ինչ օգուտ: Մինչեւ անգամ Գ.ին ալ երբեմն տեսակ մը խրատական ձեւեր կ'առնէ, նամակ կը զրկեմ նորերուն, չի յանձներ: Ինչ որ է, հին, վաղեմի ընկեր է, կը մտածեմ, չվիրաւորելու է, բայց քիչ մը շատ անհամութիւն է անոնց ալ ըրածը: Կը կարծեմ, ես ալ, որ Բօրիսի գալով, գործերը աւելի կանոնաւոր ընթացք կ'առնեն: — Գ. ինծի գրելէն վերջը, Վ.ին ալ գրած է որ միասին գրեն նամակները. Վ.ը Գ.ի այդ նամակի եւ Մարի գրածներէն ալ խրախուսուած, յայտնեց որ աւելի յարմար է՝ երկրի նամակներն միասին գրեն հոն: Ըսի իրեն որ պատճառը ինքը գիտէ. առաջները կարելի էր, բայց հիմակ՝ ոչ: — Նոյնը գրեցի նաեւ Իսկ.՝ Գ.ին եւ յայտնեցի որ նամակները հաւաքական կերպով ուղղուին, որովհետեւ միմեկ չեմ: — Վ.ը Բաթումէն ստացած գրամը ծախսած է, չէին գրած իրեն թէ որո՞ւն է. նա ալ կարծեց թէ՛ իրեն զրկած են: — Հասցէն Մկրտիչէն անմիջապէս ստացիր եւ զրկէ մեզ. շաբաթ մ'է ինչ անոր գրած է, ինչո՞ւ չզրկեց:

Համբոյրներով քոյդ՝
Ս.

(1) Զէյթունէի:
(2) Պոնտացի:

4 99 — 7

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՑԻ ՆԱՄԱԿԸ
ՄԱՐԹԻՆԻՆ

27 Յունուար 1899

Մարթինին, Ազնապետի

Ընկեր,

Ժամանակին ստացանք ձեր 14/26 Դեկտ. գրու-
թիւնը:

Կիլ. (1) մտնելու եւ ժամանակ մը գոնէ հոն մնա-
լու եւ գործելու համար ձեր եւ Ս.ին միջեւ տեղի ու-
նեցած համաձայնութիւնը ուրախութիւն միայն կրնար
պատճառել: Կը սպասէինք արդէն այդօրինակ քայլի մը
ձեր կողմէն, դիտնալով որ երկար չպիտի տեւէր ձեր
նժդեհութիւնը: Գործելու վայրին ընտրութեան մէջ
նախապատուութիւնը տալով Կիլ.ին(1), աւելի գործ-
նական գտնուած էք: Խարք.ին(2) մէջ մեր կազմակեր-
պութիւնը բաւական զօրեղացած է վերջերս եւ վարիչ
ուժերու պէտքը մասնաւորապէս կը զգացուի հոն:
Տրամադրելի ուժերու մուտքը այսօր հարկեցուցիչ է
յատկապէս Կիլ.ին(1) համար, ուր այնքան գործ կայ
չառ, եւ այնքան քիչ գործիչ, եւ ուր անհրաժեշտ է
արագ քայլերով եւ կուս շարքերով մտնել՝ ասպարէզի
վրայ հաստատ կուտան մը պատրաստելու եւ ունենա-
լու համար օր առաջ:

Ձեր առաջադրած գործը շատ ալ հեռու չէ Խար-
ք.ին(2) գործունէութեան շրջանէն, եւ թերեւս դժուար
չլինի ձեզ, ներս մտնելէն ետք. արդէն այնտեղացիք
մինչեւ Մալք. (3) տարածած են իրենց ազդեցութիւնը
եւ կը յուսան հոն հաստատուիլ եւ մինչեւ իսկ մինչեւ
Ուլմիտ(4) ճամբայ բանալ: Այդ մասին քանի մը հար-
ցեր դրած ենք իրենց եւ կը սպասենք պատասխանին:

Ոսկան Հազարեանը ընկերական ատենանով արտաք-
սըւած է Պարսկաստանի մեր ընկերներու շրջանէն: Ծա-
տոնց է որ խնդրած ենք արտաքսուած վճռող ընկերնե-
րու կազմած ատենադրութիւնը, բայց տակաւին չենք
ստացած, թէ ոչ մինչեւ հիմա հրատարակած կը լի-
նէինք: Այդ խնդրի առթիւ գրած ենք արդէն Գահիրէի
Կոմիտէին, նաեւ Վահանին: Ս.ն ալ ծանօթ է այդ պա-
րոնի գործունէութեանը:

Գահիրէի Կոմիտէի նամակին պատասխանուած է:
Ձեր նամակի միւս կէտերու մասին առաջիկային
կը գրուի ձեզ մասնաւոր կերպով:

Բարեւներով
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ

- (1) Կիլիկիա (Ժածկագիր):
- (2) Խարքիք (Ժածկագիր):
- (3) Մածկագիր, Խաւսօրէճ՝ Մալքիտ:
- (4) Մածկագիր:

4 99 — 8

Ս.Ի (ՀՐԱԶ) ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ

Նամակի վերջի մասը կորսուած է, եւ ուրեմն ստորագրու-
քիւնը չկայ: Բայց ձեռագիրը ազատազարք մոյճ Ս.ինն է:

Աղ. 7/19 / II / 99

Սիրելի Մարթին!

Տեղեկագիրը Բիւրոյին ղրկեցի երէկ եւ պէտք ե-
ղած տեղեկութիւնները տալով, հրահանգներու մասին
խնդրեցի որ ցոյց տուած ձեւով ընեն: Տեսնենք: Պէտք
է, ինչպէս երկուսին ալ գրած եմ արդէն, Արմենակէն
բանալին յետ ստանալ մի անգամ. դրամի հաշիւներու
կարգադրութեան խնդիրը հետադային թողնենք:

Ներփակ կը ղրկեմ իմ հասցէիս ստացուած եղբորդ
նամակը. դո՛ւն ես այդպէս կարգադրած:

500 Փր. ղրկեցի երէկ Իսկենտէրուն, փոստան ա-
ւելի չընդունելով, որքան որ մտադիր էի քանի մը ոս-
կի ալ աւելի ուղարկել:

Կարիճի անտարբերութեան վրայ կը զարմանամ.
Կարծես ոչինչ զինքը ներկայիս չի հետաքրքրեր. հաւա-
տացի Մարթին, հոս գալուս, ամենալաւ տրամադ-
րութեան մէջ էի. մտադրած էի, ամէն բան միասին
տանիլ անոր հետ. կարգալ, խորհրդակցիլ եւ մինչեւ
անգամ թղթակցութիւններն ալ անոր միջոցով ընել
տալ. բայց՝ փոխուեցաւ ամբողջովին պատուական
տրամադրութիւնս. քանի մը անգամ առաջարկեցի որ
մասնաւոր խօսակցութիւն ունենանք եւ ժամադրու-
թիւն տուի. «ի՛նչ պիտի ըսենք, — կը հարցնէ, — հոս
խօսինք». բնաւ կարծես դէպի գործը պահանջուած
յափշտակուող ոգին չկայ, հետաքրքրութիւն բո՛ւն գոր-
ծի վերաբերմամբ. քանի կը մօտենամ իրեն, կարծես
սառ ջուր վրաս կը թափեն. անտարբեր, անհոգ, կար-
ծես ուրիշ, աւելի լուրջ մտահոգութիւններ ունենայ:
Արհամարհական վերաբերմունք մը դէպի մեր գործը,
դէպի ընկերը, այնպէս որ չիտակը կը դժուարանամ
անոր բացուիլ: Ծիչդն ըսեմ, ես կը փափաքէի ընկեր
ունենալ ինձ հետ, ոչ միայն խօսքերով ժամավաճառ
եղող, խոստացող մարդիկ, այլ գործով, երկրով, ո-
գեւորուող, յափշտակուող ընկերներ, որոնք եռանդ
բերէին խելքի հետ միասին: Ծճմարի՛տը, Ռուսաստա-
նի մէջ այնքան կը թուած երիտասարդներ պիտի ուզէին
մեր այս գործերով զբաղուել, մտնել մեր շրջանի մէջ.
Իսկ երբ ես Կարիճին պէս երիտասարդի մը առաջարկ
ընելու ամենալաւ տրամադրութեան մէջ կը գտնուիմ,
իսկ երբ՝ փոխանակ անոր մէջ, այսպիսի առաջարկի
մը հանդէպ, ուրախութիւն, ոգեւորութիւն եւ լրջու-
թիւն նկատելու, ընդհակառակը կը տեսնեմ անտար-
բերութիւն, թուլութիւն եւ պաղ վերաբերմունք, բնա-
կանաբար իմ ջով ալ չի մնար փափաք այդպիսի անձի

մը հետ պաշտօնակից ընկեր լինելու. որովհետեւ ան-
գործնական եւ թերեւս աննպատակալարմար բան պի-
տի լինի, բնաւորութեամբ, մտածողութեամբ եւ նոյն
իսկ զգացումով տարբեր անձերը իրարու մօտ բերել, եւ
գործակից չլինել. քանի որ այդպիսի անհամբերաշիս բը-
նաւորութիւնները, շուտով անհամաձայնութիւններ
մէջընդմիջ ունենալով, պիտի պաղին, գժտուին միմեան-
ցից: Աւելի լաւ կը նկատեմ նախապէս մարդը ուսում-
նասիրել, անոր ներքին աշխարհի հոգեկան տրամա-
դրութեանց քիչ մը ծանօթանալ եւ ըստ այնմ առնել
այդ լուրջ քայլը: Դուն ի՛նչ կ'ըսես իմ տատանումնե-
րու նկատմամբ. լաւ է որ այն մարդիկը որոնք կոչ-
ուած են այսպիսի ընդարձակ շրջանի մէջ գործելու,
որոնք պէտք է շատ անգամներ իրարմէ հեռու գտնը-
ւին, որոնք իրարմէ կախուած պիտի լինին, լաւ է որ
կ'ըսեմ, այդպիսի մարդիկը նախապէս զիրար ճանչ-
ցած լինեն:

4 99 — 9

ՎԱՀԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ

Աղեք. 20 Փետրվ. 99

Պր. Մարթին,

Ձարմացմամբ կարդացի ձեր բաց նամակը Պ. Վ.
Խ.ի խօսածներէ մասին: Ահա իմ ըսելիքները այդ առ-
թիւ: Գահիրէի Կ.ի իրերի կորուստը իմանալով ամէն
մէկը մեզմէն դէպքի մասին կը մտածէր եւ իր եւ ու-
րիշներու խորհրդածութիւնները կը քննադատէր: Պ.
Վ. Խ.ի հետ տեսնուելուս ատեն ես եւս իմ կարծիքները
ու կասկածները յայտնեցի, ինչպէս եւ ամէնքը կ'ը-
նէին: Ձեր վերաբերմամբ ըսի, որ, աչքի առաջ ունե-
նալով իր խտապահանջ լինելը, ո՞վ գիտէ, գուցէ եւ
վերուցած ըլլայ այդ իրերը եւ այդ մասին տեղեկա-
ցրած լինի խմբագրութեան, նոր կոմիտէ կազմելու
նպատակով:

Այս ենթադրութիւնը եւ ուրիշի մտքէն անցած է
եղել, սակայն լոկ իրերեւ ենթադրութիւն, այն էլ ոչ
վատ նշանակութիւն ունեցող, այլ աւելի կտրուկ մի-
ջոց: Սակայն երբեք ես ինձ թոյլ չէի տայ իրերեւ հա-
մոզում յայտնել Պ. Վ. Խ.ին, եւ չեմ ենթադրում, որ
նա էլ Ձեզ համարձակէր իրերեւ իմ կողմէս համոզմունք
յայտնել այդ ենթադրութիւնը: Իմ կողմէս ես վայր-
կեան մը թոյլ չեմ տուել կարծելու Կոմիտէն կազմող
մեր բոլոր ընկերներու մասին վատ դիտաւորութեամբ
այդ բանը ընելու մասին, այլ կամ իրերեւ կատակ,
միւսներին նախազգուշացնելու անզուշուրթեան դէմ,
կամ Կոմիտէն ցրուելու, որովհետեւ եւ ոչ մէկ փաստ
չկար այդ մասին, ինչպէս եւ այստեղից Պ. Սեպուհին

այդ մասին գրած եմ, որ առանց որեւէ փաստի ոչ ոքի
մասին իրաւունք չունի, կասկածներ չիման վրայ,
ծանրանալու:

Ահա խնդրի էութիւնը: Պ. Խ.ը եթէ այդպիսի բան
մը իրերեւ հաստատ համոզում իմ կողմէս իրեն հաղոր-
դած լինի, չարաչար սխալուած պիտի լինի:

Ձպէտք է մոռնաք, որ եթէ անգամ այդ տեսակ
դէպք պատահած լինէր, գողութիւն անունը տալը ան-
տեղի պիտի լինէր, որովհետեւ բարի նախանձախնդրու-
թիւնից դրողուած այդ բանը մէկն ու մէկը պիտի ըրած
լինէին:

Բարեւներով
ՎԱՀԱՆ

4 99 — 10

Ս.Ի ՆԱՄԱԿԸ

Աղեքսանդրիա, 24/II/99

Սիրելի Մարթին!

Նամակը ներփակներով միասին ստացայ. կը զար-
մանամ թէ ինչպէս նախորդ նամակս չես առած. ցա-
ւալի է՝ եթէ կորուսած է. կը խնդրեմ՝ հետաքրքրուի
իմանալու թէ ինչպէ՞ս եղած է այդ կորուստը: Լաւ չեմ
յիշեր թէ այդ նամակին մէջ ինչեր էի գրած. մի քանի
կէտերը միայն կու գայ միտքս. նախ՝ պատասխա-
նած էի քու այն նկատումին, որով կը դատապարտէիր
զիս՝ նամակը բացած ըլլալուս համար. կրկնեմ նորէն
ուրեմն: Սիրելիս, այդ նամակը քու կը լինելը չէի գի-
տեր, բացած միջոցիս, հաւատա՛ խօսքիս. մտքէս ան-
գամ չէր կարող անցնել թէ՛ իմ հասցէով քու նամակը
պիտի ստանամ. ամերիկական փուլը տեսնելուս պէս՝
մտածեցի որ Կեդը. Կոմիտէին լինելու է. խօ՛ւմ գիտես
որ նամակի կը սպասենք. երկրորդ՝ որքան որ կ'ըսես
թէ՛ «քանի նամակիս վրան իմ անունս գրուած կար՝
ինչո՞ւ բացիր», չեմ հասկնար, որովհետեւ մինչեւ նա-
մակը քեզի ղրկելու, չէի գիտեր որ ծածկոյթին՝ վրայ
անունը գրուած է եղեր. բա՛յց, զարմանալի բան,
ինչպէ՞ս եղած է որ ես չեմ նկատած, քանի մը անգամ
ալ վրան նայած եմ. եթէ իրօք քու անունը վրան գըր-
ուած է, ան ատեն պիտի ըսեմ թէ՛ անպատճառ ծած-
կոյթի վարի մասի ձախ կողմը գրուածն է. այլ կ'են-
թադրէի թէ եղբորդ տան հասցէն է. ինչպէս բոլոր ա-
մերիկացիները կ'ընեն, թէեւ նամակի վերի մասին մէջ
կը գրեն: Ուրեմն ներողութիւն կը խնդրեմ՝ անդի-
տակցաբար նամակը բաց ընելուս համար. միայն դի-
տել պիտի տամ թէ՛ այդքան շատ ընկերոջ մը վրայ
մի՛ կասկածիր, եւ դատապարտեր: Փնտրիք պատ-
ճառները. ի՛նչ մտքով նամակը՝ Ամերիկայէն եկած,

պիտի բանայի. եթէ գործին վերաբերած ըլլար, ինծի պիտի գրէիր կարծեմ. ուրեմն՝ կը տեսնես որ անիրաւացի էիր կասկածիդ մէջը: Նամակներ կը բացուին, բայց ոչ այսպիսի պարագաներու եւ պայմաններու մէջ: — Անցնինք! — Երկրորդ կէտը այդ նամակին այն էր, որ կը խնդրէի քեզմէն, ուղարկել շուտով ինծի գրելու դեղէն, եթէ հող դեղարաններու մէջ կը գտնուի. Տէնօլ - Ըֆթալէին (phénol - phtaléine) է անունը. հարցուր եւ նայիր. եթէ գտնես, 20-40ի չափ դիր եւ շուտով ինձ ղրկէ. երկրէն կ'ուզեն անապարանքով. շատ ուշացաւ արդէն. հոս չկայ առ այժմ. Գալֆայէն ստացիր դրամը՝ ես կը ղրկեմ իսկոյն. փոշի պիտի լինի, աշխատիր որ քանակութիւնը շատ ըլլայ, մեծ դեղարաններու մէջ միայն կրնաս գտնել: — Երրորդ կէտը՝ Ձէքի միջոցով իտալական անցազիր մը ձեռք բերել. Նշանին ծանօթ է այդ խնդիրը. նա իրեն համար անոր առաջարկած էր եւ կարելիութիւնը իմացած էր. արդ Նշանին հետ՝ տեսնուեցէք Ձէքիին, խօսեցէք: Աւելի լաւ կը լինէր, եթէ իտալական-Ֆրանսական սահմանազխերու վրայ գտնուող տեղի մը անունով առնուի անցազիրը, որոնք իտալերէն անպատճառ ստիպուած չեն գիտնալու. այս հանգամանքը նկատի ունեցիր: Ուրեմն կամ իտալացու անունով անցազիր մը եւ կամ պաշտպանեալ (protégé) դրութեամբ, բայց վերջին պարագային, ջանալու է որ անունը հայկական չլինի, այլ իտալականացուցած. Վահան Մարտիրոսֆի տեղ՝ Vahambi Martine՝ օրինակի համար. այդ՝ հիւպատոսարանի մարդկանց գործն է, քանի որ կաշառքով պիտի ընեն: Ունեցիր մասնաւոր տեսակցութիւն մը Ձէքիին հետ եւ ելքն ինծի ալ իմացուր:

Գալով վերջին նամակիդ, — զարմանալի տղայ մը կը գտնեմ քեզ. ի՞նչ հարկ՝ իմ հանդէպ ալ այդ ընթացքը բռնելու, որովհետեւ աս ու ան վրադ կասկածեր են. ատոր համար գործին չպիտի մասնակցիս եղեր՝ մինչեւ Բօրիսին(1) գալը, — կարծեմ, եթէ հետեւողական կ'ուզես լինել, պիտի ըսէիր՝ մինչեւ այս խնդրի պարզուիլը: — Բայց այդ ալ անհեթեթ բան է. կը հասկնամ քիչ մը՝ թէ հողտեղի գործերուն պաշտօնապէս չես ուզեր մասնակցիլ, եւ նկատումներդ ես ալ՝ ժամանակաւ կ'երպով, արդարացի կը գտնեմ. բայց ուրիշ գործերու համար, վարմունքդ ինձ կը զարմացնէ, որովհետեւ սխալ է. ես առաջ քու վրայ կասկածեցայ եւ ի՞նչ հանգամանքի մէջ, ան ալ քեզի յայտնած եմ:

Ի՞նչ ղրկած անդեկազրիս մէջ ալ նոյն ուղղութեամբ շարժուել եմ, եւ անոնց գրած եմ ան ատեն որ քու վրայ ալ միտք չունէր կասկածելը, որովհետեւ շարժառիթներ չկային: Ուրեմն հոս ալ անիրաւ ես. կը տեսնես որ միշտ քեզի յանցաւոր կը հանեմ. մտքէդ կ'անցնես անշուշտ, թէ՛ այս ինչ աղուոր տղայ է որ ինքզինքը արդար ցոյց տալով՝ ատոր անոր վրայ յան-

ցանք կը գտնէ եւ մեղքը ուրիշին վրայ կը ձգէ: — Այդ ալ անցնինք:

Ներփակ կը ղրկեմ՝ 2 նամակ — Գ.էն(2) եւ նորերէն:

Այսօր ղրկեցի՝ Ձէյթունի(3) համար նամակը. պատճէնը քեզի կը ղրկեմ վաղը կամ միւս օր. այս պահուս վրաս չէ. անապարանք կը գրեմ նամակս:

Համբոյրներով Ս.

- (1) Միքայի Խաչատրեան, անգամ Արեւմտ. Բիւրոյի:
- (2) Պոստոցիէն:
- (3) Մածկազիր:

4 99 — 11

Ս.Ի ՆԱՄԱԿԸ

Աղ. 19 / 3 / III / 99

Սիրելի Մարթին!

Գահիրէ

2 օր առաջ նամակ մը քեզի գրած եւ դեղեր խնդրած էի. ուղարկեցի՞ր. վախճամ վաղուան փոստին չկրնամ հասցնել: — Շուտ գոնէ հասցուր՝ եթէ չես ղրկած: Չմոռնամ քեզի սա գրելու որ՝ ամէն երեկոյ սովորութիւն ըրէ փոստան հարցնելու, որպէսզի կարելոր խնդիրներու, որոնք կրնան երբեմն շատ անմիջական ըլլալ, կարողանաս իսկոյն պատասխանել: — Այսօր ներփակ կ'ուղարկեմ 5 կտոր նամակներ, շուտ վերադարձուր՝ երեքը:

1) Առաջինը՝ Երուսաղէմէն է. իմացած ըլլալով որ Մարտեանները ի նպաստ Իզմիրլեանի հանգանակութիւն մը պիտի ընեն, հարցուցեր էի թէ իրա՞ւ էր այդ թէ Իզմիրլեանը նեղութեան մէջ է, յայտնելով որ եթէ ճիշդ լինի, մենք ալ մեր օջակցութիւնը չպիտի խնայէինք այդ բացուելիք հանգանակութեան: Իսկ հակառակ պարագային՝ ընդդիմանալով՝ թոյլ չպիտի տայինք որ մարդիկ՝ հասարակութիւնը այդպիսի պատուականներով շահագործէին. յետոյ օրիորդի նկատմամբ տեղեկութիւն խնդրած էի, թէ ինչո՞ւ մեզի նամակ չի գրեր եւ եղբորը կենսադրութիւնը, զոր կիսատ թողել է, չի վերջացներ, — ատոր բան չի պատասխաներ եպիսկոպոսը:

2) Երկրորդ նամակներ. — Լաւ որ (500+400) 900 Ֆր.ը ղրկած եմ: Կը տեսնե՞ս որ նկատումներս ճիշդ պիտի ելնեն: — Բիւրոյին գրած էի որ նորերուն՝ իրենց կողմէ նամակ մը գրեն եւ մեզի հոս ղրկեն. ամիսն անցած է եւ պատասխան չեմ ստացած: Հաւանական է որ

վաղը կամ կիրակի նամակներուս ամբողջին պատասխանը ստանամ:

3) Արբակին(1) նամակն է. մեր ընկերն է՝ այս մասին խօսած ենք. կարդա՛ր եւ կարծիքդ յայտնիր: — Շարք մը վերջը միայն անոր պատասխանելու եմ: Իմ կարծիքով՝ երկրի ներկայ յեղափ. վիճակը յայտնելու, պարզելու եմ: Գրած էի իրեն որ, քանի որ ներսէսը Հալէպի նահանգին մէջ էր, շատ յարմար պիտի ըլլար իրեն Ատանա անցնելը: — Կիլիկիան իրօք երկու փոքրիկ շրջան ունի. Ատանայի եւ Հալէպի. անհրաժեշտ էր որ այս երկու մասերուն մէջ, անպատճառ, մեր կողմէ երկու կարող պատուիրակ ընկերներ զբտնուէին. արդ՝ նկատի ունենալով Արբակի պատասխանը եւ տրամադրութիւնը, կ'երեւայ որ անկէ յոյսերնիս կտրելու ենք. թէեւ պէտք է խնդիրը իրեն հասկցնեմ, որ ներկայիս Ատանայի կողմերը իր ներկայութիւնը կարելոր է, թէ՛ ունենալով պարսկական անցազիր եւ պարսկական ապրանքներ, Ռուսաստանէն խիստ դիւրութեամբ կարող պիտի լինի Մերսին եւ Ատանա անցնելը: Որոշ կերպով՝ լաւ չեմ նկատեր, գրել իրեն եւ յայտնել որ չենք ընդունիր իր հրաժարականը: Աւելի յարմար է փափկութեամբ հասկցնել, այսինքն՝ — թէ որ ես իրեն դրութեան մէջ լինէի, չէի տատամսեր եւ կը մտնէի ստանձնած գործիս մէջ, թէ՛ խնդրի փափկութիւնը աչքի առաջ ունենալով, չենք կարող իրեն տրամադրութեան հակառակ որոշել, յայտնելով որ այս գործին համար անհրաժեշտ կը նկատենք նուիրուած տրամադրութիւն եւ ինքնամոռացում, թէ՛ իրեն կը թողնենք որոշումը տալ, քանի որ ընկերական-բարոյական կռուանի վրայ կանգնած ենք: — Ես չեմ կարծեր որ՝ եթէ քիչ մը տրամադրութիւն ունի, մերժէ մեր առաջարկը. իսկ եթէ ընտանեկան խնդիրները այնքան նշանակութիւն ունին անոր համար, որ պիտի մերժէ, ան ալ իր գիտնալիք բանն է. բայց մեզի համար՝ անոր ժամանակաւոր հեռացումն անգամ — այդ կարող է ապագային, մշտակա՞ն դառնալ — մեծ կորուստ պիտի լինի. որովհետեւ կարող, զարգացած եւ փորձառու, լեզուազէտ երիտասարդ մըն է. անոր վրայ ես շատ յոյս դրած էի. պիտի պարզեմ այդ իրեն: Մե՛ղք, եթէ մերժէ: — Շուտով դարձուր նամակները եւ կարծիքներդ յայտնիր:

4) Զորրորդը՝ յանձնել մեր Գալֆայեանին. Սալմաստեանը յանձնեց:

5) Հինգերորդը՝ մեր երկու տղերաց յանձնես՝ դոց:

Համբոյրներով Ս.

(1) Յովսէփ Միքայեան, Բ. Ընդհ. Ժողովի անդամ ընտրուած Կիլիկիոյ Պատ. Մարմին, Հրաչի (Ս.) եւ Մարի հետ:

4 99 — 12

Ս.Ի (ՀՐԱԶ) ՆԱՄԱԿԸ

Աղեքսանդրիա, 8 Մարտ 99

Սիրելի Մարթին!

Ստացայ վերջապէս նամակները: Չգիտեմ ինչպէս նամակիդ պատասխանեմ. մտածեցի՝ կարելորութիւն չտալ քանի մը խօսքերու եւ չգրել, բայց ի վերջոյ ուզեցի բացատրութիւններ տալով, դիտողութիւններ ընել. ուրիշներ՝ արհամարհանքով պիտի վերաբերուէին այս պարագային եւ չպիտի անգամ պատասխանէին: Բաւական խորհրդածելէ վերջ, անհրաժեշտ դատեցի քանի մը խօսք ըսել:

Մարթին! Նամակի բացումի խնդրոյ համար, կրկին կը պնդես եւ հակառակ անկեղծ կերպով յայտնութեանս՝ անգիտակցօրէն բացած ըլլալուս համար, կասկած կը յայտնես տակաւին. կորսուած նամակի մէջ՝ կը յիշեմ որ այս խնդրոյ եւ Վ.Ի մասին երկարօրէն գրած էի. վերջին անգամ մ'ալ կ'ըսեմ, — ինծի նուիրական եղող բաներու վրայ կ'երդնում, որ նամակդ բացած ժամանակս, չէի գիտեր քու կ'ընելը. այսքան ստորնանալով, երդում ընելէս վերջը, եթէ դեռ պիտի կասկածիս, պիտի խնդրեմ իմ անունս ջրնջես քու ընկերներու ցանկէն: Քանի մը անգամ ալ ըսած եմ ընկերներու. երբ իրարու վրայ հաւատք չունենալով, մինչեւ անգամ ստոր ստախօսութիւն ալ կ'ընեն, գործ ունենալու չէ այդպիսի մարդկանց հետ եւ ատենք յարաբերութիւննին դադարեցնելու են. արդ՝ իմ պարագան ալ այս է, Գ. Մարթին, ընկերոջ մը երկու անգամ պնդումին վրայ, տակաւին կը յամառիք նամակի մասին կասկածելու. վերջին անգամ մ'ըլլալով, երդում ալ կ'ընեմ. չհաւատացողի՞ն, ես ալ, անունը բերանս անգամ չեմ առնել ու ընկերական որեւէ յարաբերութիւն իսպառ կը դադարեցնեմ: Քանի որ նամակս սկսայ, պիտի խնդրեմ, ուշադրութեամբ զիս կարդաս, որովհետեւ վերջին նամակս պիտի ըլլայ կարծեմ:

Կը ցաւիմ որ զգուանք ազդող բնաւորութիւն մ'ունիմ. այս ալ լսեցի! Եւ այդ ալ Մարթինէն: Ձհանկիլի բառերէն գէշ օրինակ մը առնել սկսար. երեւի նոր մօտային կը հետեւիս. Շահէնն ալ հերոսաբար, բարձրերէն կ'արհամարհէ Ս.ը. կարգը քեզի եկաւ՝ երեւի. դուն ալ անկեղծութեան ախտէն բռնուիլ սկսար. այդ ո'րքան վատ ազդող ընթացք մը կամ ուղղութիւն մը բռնած եմ որ զգուանք եմ պատճառած. որովհետեւ երբ զգուանք մը կ'արտայայտուի՝ ինչու քու հասցէիդ, կը նշանակէ շատ ուժով լինելու է այդ նողկանքի տպաւորութիւնը. շատ բաներ լսեցի այս տարի իմ նկատմամբ, բայց ասիկա դեռ չէի իմացած. թագա՛ր բան:

Մարդիկ պէտք է որ իրենց յայտնած կարծիքները կշռելով յայտնեն. այս անհրաժեշտ է ազնիւ դատա-

կարգին համար. արդ՝ կշռելով յայտնելու համար, մտածել պէտք է. վերջին ժամանակներս չգիտեմ ինչ պատճառներով, Ղզախին լինե՞լը թէ տկարութիւնդ, կրքոտ դարձուցած են զեզ. դոնէ ես այդպէս նկատած եմ: Ես ալ իբր դիւրագրգիռ մէկը, կրքոտ եմ, բայց իմը՝ բողբոջական է, եւ անպայման խօսակցութեան ժամանակ: Որովհետեւ խօսքի միջոցին տեղի ունեցած վերաւորանքի մը կարելի է թերեւս դիւրութեամբ ներել, բայց զբաւոյր կերպով եղածին՝ ո՛չ. պարզ է պատճառը: Խօսակցութեան տաք հոսանքէն ժողոված, մարդիկ գիրար կը վերաւորեն ալ, կը սպաննեն ալ, շատ բնական է. կերթը՝ հոգ կը հասկացուի եւ կը բացատրուի: Բայց քանի որ նամակ մը, մտածմունքի արդիւնք է, եւ չունի միւս հանգամանքները, կիրքերէ պէտք է ազատ լինի: Ես ինձ թոյլ չպիտի տայի երբեք, մինչեւ անգամ Ծահէնին գրած անձնական նամակներու մէջ, նախատական բառ մը գրելու: Կարգա՛, եթէ Ե. ը տեսնես, իրեն գրած մէկ ընդարձակ նամակ. դժբախտաբար Ե. ը հոգեբանական հասկացողութիւն չունենալով եւ չար խորհրդատուներ եւս ունենալով, նամակիս բուն հոգին չհասկցաւ եւ մինչեւ անգամ, բոլորովին ապշեցայ, ելաւ զիս նորէն վերաւորելու՝ երկար նամակով մը, զոր քովս կը պահեմ: Այո՛, Պ. Մարթին, դոնէ նամակի մէջ ես ատանկ բառեր չպիտի գործածէի, որովհետեւ նամակը լուրջ բան է, հոն կիրքը, բարկութիւնը գործ մը ունենալու չեն: Իսկ գալով թէ, զու տեսակէտէն մինչեւ անգամ դատելով, իմ վարձուցը իրօք այդքան զգուշի է, նայինք խնդիրը: Վ. ի(1) մասին է. հազար անգամ ըսած եմ զեզ՝ ղէպի այդ անձը ունեցած վերաբերմունքիս առթիւ. գիտես որ Կովկաս ալ խօսած եմ, Ժ(2) ալ գրած եմ քանիցս, բայց սոսկալի հակառակ եմ ծայրայեղութեան. շատերու ընթացքը այս գործին մէջ արդարացի չէր. ուստի ուրիշին ձեռքը գործիք եղան. ոմանք կարճ խելքով ու դատողութեամբ, միայն կիրքի ազդեցութեան տակ եւ մոլորմամբ, ոմանք ալ չափազանցութեան մը զեղով գործը՝ մէկը տասը շինելով: Ի հարկէ չէի կարող այդպիսիներուն համաձայն լինել. ես ալ հակառակ էի անոր. մինչեւ անգամ անձնական խնդիրներ ալ կային, բայց ա՛խր ճշմարտութեան ղէմ չէի կրնար խօսիլ: Հակառակ լինելուս պատճառով, չէի կարող անոր քանի մը յատկութիւններն ուրանալ. ասոր համար ալ շատեր զիս չհասկցան այս վարձունքիս մէջ. բայց շատ պարզ էր: Ես մինչեւ անգամ, եթէ հարկ տեսնուի, զբաւոյր կերպով ալ իմ կարծիքներս թեր ու ղէմ իրեն նկատմամբ՝ Բիւրոյին պիտի գրեմ: Իսկ թէ ինչո՞ւ Վ. ի հետ ես համաձայն չեմ գործելու երբեք. մեր բնաւորութիւնները, նկարագրերը տարբեր են, տարբեր են նաեւ մեր վարուցողութեան եղանակներն ու ձեւերը. նա ինձ վարդ է. խորամանկ միջոցները ներելի են իրեն համար. վերջապէս իրեն նպատակին հասնելու համար՝ ամէն միջոց օրինաւոր կ'ընդունի: Արդ՝

մեզի հետ անոր գործակցութիւնը աննպատակաբար մար եւ մինչեւ անգամ վնասակար կը գտնեմ. բայց դա չէր նշանակեր թէ Վ. ը բանի պէտք չի գար, թէ օգտակար չի կրնար ըլլար. ո՛չ, Պ. Մարթին, Վ. ը կարող է օգտակար ըլլալ իրեմ ընկերներուն հետ, եւ ուրիշ երկիրներու մէջ, աւելի արտասահմանի մէջ՝ ի հարկէ. մարդիկ քաջութիւն ունենալու են մինչեւ անգամ թըշնամիին, որտեղիմ թշնամիին առաւելութիւնները չուրանալու. սրտի մեծութիւնը հոգ է: Արդ, ճիշդ այդ բանը որ Վ. ին հետ չեմ գործեր եւ հակառակ պարագային հրաժարականս կու տամ, ըսած եմ, պիտի պատճառներու քննութեան առաջնորդէր զեզի: Այո՛, ճիշդ է որ Վ. ը շատ քիչ մարդկանց հետ կարող է գործել, եւ կը խոստովանիմ որ մեծ պակասութիւններ ալ ունի: Կ'ընդունիմ որ գործիչները նուիրուած, ազնիւ լինելու են, բայց եւ կ'ընդունիմ որ գաղտնապահ ու փորձառու լինելու են. այս է յատկութիւնները, Պ. Մարթին, դուք չէք կրնար միշտ գործիչներու վրայ գտնել. բայց այդ չպիտի ստիպէր որ, միւս գործիչները ամէն պարագայի տակ անպէտք եւ վնասակար ըլլային: Թո՛ղ դաւաճանները եւ սրիկաները բնաւ մուտք չգտնեն յեղափ. կազմակերպութեան մէջ. իսկ գործիչներու մաքրացումը, ազնուացումը եւ խտացումը, կեանքը ինքը պիտի բերէ ցանկալի այդ վախճանին: — Դեռ վերջերս, Վ. ի մասին կրկին գրած էի Բ. ին(3) եւ կը յայտնեն անոնք որ մինչեւ Բօրիսի(4) գալը՝ սպասեց. բայց ես ստիպուած չեմ ամէն կարգի մարդոց իմ ամբողջ կարծիքներս յայտնելու, իսկ եթէ չյայտնեմ՝ անկեղծութեան ղէմ մեղանշած չպիտի ըլլամ. այդ կախում ունի առաւել կամ նուազ տակ ունենալէն: — Ես նկատած եմ որ ամէն բան կրքով կը դատես. զգացումներու վրայ իշխել չես գիտեր. շատ կասկածոտ ես եւ դիւրագրգիռ. շուտ ոգեւորուող եւ շուտ վհատող: Վերջին նամակս նկատելով այս գրութիւնը, այս ընկերական դիտողութիւնները պարտական կը համարեմ ինձ գրելու զեզ: — Լիմնեմ աւելի պազարիւն, աւելի քննող եւ աւելի լուրջ ուսումնասիրող, մեր կարծիքները զգուշանանք շատ շուտ յայտնելէ, մարդիկը, մանաւանդ գործի ընկերները վերաւորելէն առաջ՝ բազմակողմանի կերպով խորհրդածեմք լռելիայն. շատ յամառ չլինեմք մեր ամէն կարծիքներու մէջ, ունենանք հանգամանքներու համեմատ մտքի ճկունութիւն, զոհեմք ամէն բան օգտակարիմ համար, միայն թէ մեր օգտակար կարծածը՝ ենթադրական չլինի. մեր սեփական ուժերու սահմանէն անդին չանցնինք, քիչ մը աւելի համեստ եւ նուազ մեծամիտ լինենք: Հետեւինք բոլորս ալ, առանց բացառութեան, այս ուղղութեան, ոչինչ չենք կորսնցնիր, կը վատակիրք շատ բան: Այն ատեն մարդիկ գիրար աւելի լաւ, խորը կերպով պիտի ճանչնան եւ աւելի օգտակար անձեր պիտի լինեն: Խօսքս մասնաւորի չէ. նոյնքան զեզ, որքան ինձ համար է: Օրինակ Ե. ի խն-

դիրը. եթէ զիս չըջապատող ընկերները աւելի քիչ անձնական խնդիրներով զբազուող մարդիկ լինէին, ո՛չ Ե. ը այդքան առաջ կը քալէր եւ սխա՛լ, դատապարտելի ընթացք մը կ'ունենար եւ ո՛չ ալ գործէն յետ կը մնար. միջնորդ մարդիկը, ես այնպէս կը հասկնամ, որ կրքերը լռեցնելու են եւ ոչ հրահրելու եւ զրգռելու: Վերջին ատենները, հոս, Ե. ի մասին յայտնած կարծիքը ծանօթ է ինձ. խմբովին խօսեցանք Ջարանիի մէջ. չեմ գիտեր, ի՞նչ բանն է զեզ համոզել տուողը որ ես անիրաւ եղած լինեմ այդ կէտին մէջ ալ. կարող եմ ղէպի Ե. ը սխալ վարձունք մը ունենալ. բայց այդ սխալը՝ անպատճառ անարդա՞ր է:

Ապագան պիտի պարզէ բոլոր կնճիռները. ես արդէն այդ ապագային վրայ դրած եմ յոյսս. ա՛յն ատեն պիտի տեսնենք իրաքանչիւրս մեր սխալները, մեր իրա՛ւ կամ անիրաւ լինելը պիտի ըմբռնենք: Պիտի գայ ժամանակ, որ ինքը Ե. ը պիտի խոստովանի իր ընթացքի վատութիւնը. եթէ քիչ մը անոր մօտ դեռ խիղճ, ջիղ ըսուած բանը կայ, նա պիտի յայտնէ մէկ օր, ինձ նկատմամբ բռնած վարձունքի տղեղութիւնը: Ձեմ դատապարտեր ուրիշները որ խօսքիս չեն հաւատար. պիտի ցաւիմ միայն. բայց ապագային աւելի խիստ պիտի լինեմ ղէպի այդպիսիները:

Երկու խօսք ալ տեղիդ խնդրոյ առթիւ եւ վերջացուցած պիտի ըլլամ: Ձուր տեղը անհեթեթութիւններու մէջ կ'ընկնես. ես՝ եթէ կասկածեցայ զու մասին, դու գիտես ինչ կէտերու առթիւ. ա) անեւ կարդալու. բ) լուծելու կոմիտէն. բայց դեռ հոգ եղած միջոցիս, զեզ եւ Գալֆային յայտնած էի իմ կարծիքը եւ Բիւրոյին ալ նոյնը գրած էի. չեմ հասկնար, այդ ինչ ընթացք է. երբեք բանաւոր չէ: Գրեցի՞ր Բիւրոյին. շատ լաւ ես ըրեր. պիտի տեսնես որ անոնք ալ պիտի գրեն թէ Ս. ը զու մասին կասկած չէ յայտնած: Ուզածիդ պէս ըրէ. ի հարկէ ազատ ես. բայց չես կարող անշուշտ արգիլել որ՝ ուրիշներն ալ այդ ուղղութիւնդ անարամբանական գտնեն:

Ես վերջին խօսքս ըսի. երբ իրարու վրայ հաւատանք եւ աւելի ազնիւ կարծենք, այն ատեն միայն կարող ենք վերսկսել մեր յարաբերութիւնները:

Ս.

Յ. Գ. — Գալֆայի միջոցով, վերադարձուր խընդրեմ, Ձ. ի նամակի պատճէնը, եւ Ե. ի գրուելիք նամակի պատճէնը պատեր. նամակիսնդ՝ վնաս չունի: Կարեւոր է:

Կ 99 — 13
ՄԻՍԱՔԻ (ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ) ՆԱՄԱԿԸ (1)

Աղեքսանդրիա, 28/12 Մարտ 1899

Սիրելի ընկե՛ր,
Ստացայ Մարտ 8 թուակիր նամակդ՝ ինչպէս նաեւ նախորդը, զոր անպատասխանի թողնելուս համար կը մեղադրես զիս: Բայց բարեկամ, Գահիրէէ վերադառնալէս ի վեր այնպիսի մտատանջութիւններու եւ հոգեկան այնպիսի դառն կացութեան մը մատնուած էի, որ զբիչ շարժելու տրամադրութիւն իսկ չունէի. եւ այս անտանելի վիճակիս պատճառներէն մէկն ալ հարցուցածդ խնդիրներն են, որոնց եւ ոչ մէկուն ուրախալի պատասխան մը չպիտի կրնամ տալ դժբախտաբար: Վրդ. ի խնդրի մասին, Բիւրոյի գրած պատասխանները անշուշտ կարդացած ես, այնուհետեւ Կովկասէն եւ ժընեւէն բոլորովին անիմաստ առարկութիւններ եղան, որոնցմէ պարզ կը տեսնուի թէ Վահանի եւ Սեպուհի եսական հակառակութիւնը այս խնդրին մէջ ալ դեր խաղացած է եւ իւրաքանչիւրը առանձին հակասական տեղեկատուութեամբ դիմացիներուն միտքերը խճողած են: Գահիրէէ վերադառնալէս ետքը ամօթէս շարաթներով չկրցայ Վրդ. ի քով երթալ, բայց ի վերջոյ տեսնելով որ անհրաժեշտ է խնդիրը կերպով մը կարգադրել կամ փակել՝ Բիւրոյի առաջարկները ներկայացուցի Վրդ. ին, որ ինչպէս արդէն գուշակած էի, մերժեց. ասոր վրայ հարկ տեսայ երկու կողմի առաջարկներուն վիճիւն տրամադրութեամբ նոր պայմանագիր մը չինել, զոր Յակոբին հետ շարադրեցինք եւ Վրդ. ալ սիրայօժար ընդունեց: Սակայն երբ մեր աղաներուն ներկայացուցի՝ բոլորովին մերժուեցաւ: Ասոնք կ'ուզեն որ դրամը երկու Բիւրոներուն մէջ բաժնուի եւ անոնց ձեռքով գործածուի: Եւ դեռ խորհուրդ կու տան որ մտերմանամ Սեպուհիին հետ՝ գործին սիրոյն համար, բայց ի՞նչ կ'արժեն այս տեսակ միջոցներ, երբ գործը իրենց ձեռքն է եւ իրենց քմահաճոյքին համեմատ պիտի ընթանայ, մանաւանդ որ անտանելի եւ անկարելի է ինձ համար բռնազբօսիկ մտերմութիւնը:

Վահանի խնդիրը կը մնայ հոն ուր որ էր: Գիտես որ Կովկասէի մէջ՝ բոլոր ղէպերուն իրականութեանը ծանօթ Յակոբն ու ես միայն կանք. իսկ միւսները վայրկեանական տպաւորութիւններու տակ՝ խելքերին ինչ որ փչէ այն կը խօսին. մանաւանդ որ Վահանն ալ իւր սովորական ձեւերով կ'աշխատի ճիւղին ղէմ բողբոջողներուն քիթը . . . ը քսել: Վերջապէս երկուքիս՝ հակառակ իւր պատճառարանութիւններուն՝ որոշել տուինք որ բողբոջողները կանչուին (ընդ որս եւ Ծաւարը) բերանացի մանրամասն բացատրութիւն պահանջելու եւ ըստ այնմ որոշում մը տալու համար:

(1) Վահան, ըստ երևույթիմ՝ Եզիպտոսի պատասխանատու բնիքներէն մէկը:
(2) Ժընեւ:
(3) Բիւրոյիմ:
(4) Միքայի Եզիպտոսի, 1898էն սկսելով ամբողջ Արեւելու եւ Բիւրոյի:

Գալով իմ մեկնելու խնդրին, դեռ Բիւրոյէն պատասխան չառի՝ թէև քանիցս չեչտած էի որ շուտով պատասխանեն: Գիտես որ գործէն ես երբեք չեմ յուսահատած եւ չեմ ալ յուսահատիր՝ բայց գործին գըլուխ կեցողներուն այս ընթացքը, մանաւանդ փառասիրական հակառակութիւնները, փոխադարձ զգացումները, շատ բարի տրամադրութիւններ կրնան կատարել: Մանաւանդ այսպիսի դժուարին հանգամանքներուն մէջ գործին գէթ տեսականապէս պահանջած երաշխաւորութիւնները առանց ապահովելու ճամբայ ելլել՝ լոկ ապարդիւն զոհողութիւն մը կը լինի: Ուստի իմ վերջնական որոշումս կախուած է Բիւրոյի տարիք պատասխանէն այն առաջարկներու, որոնք արդէն ծանօթ են:

Դեղազրիղ ուշանալուն պատճառը Սեպուհի անհոգութիւնը եղած է՝ որ չէ յիշեցուցած Յակոբին. այս անգամ ներփակ կը դրկենք: Յակոբը քանի մը օրէ ի վեր հիւանդ էր՝ հիմա հանգիստ է, փոխադարձաբար կը բարեւէ զեզ:

Բարեւներս Գալֆային, Աւոյին եւ միւս ընկերներուն: Իմտի կէրէկ պիլէսիւզ զի...

ՄԻՍՍԻՔ

(1) Միտմ Գուլումեան, յեղափոխական ծածկամուտով՝ Կարին, գրական ծածկամուտով՝ Առաճար:

Միտմի մտմակիմ ետեւ աւելցում՝ ստորագրութիւնը անբաշ: Արգեօ՛ւ էզ. (էզվարդ):

Շաւարշին նամակները ինչպէս կ'երեւի կորսուած կամ ոչնչացուած են: Այդ տղան հոս բոլորովին վարկէ ինկած, երեսէ ձգուած, յաճախ պոչը կը շարժէ, բայց ոչ ոք կարեւորութիւն չի տար իրեն. իր հայրենակիցներուն մօտ երբեք պատիւ չունի եւ շատ անգամ կ'երթամ հոն զինքը չեմ տեսներ որեւէ շրջանի մէջ. քաշուած կեանք մը կ'անցընէ:

Քոյդ՝ է՛ր.

Ս.Ի (ՀՐԱԶ) ՆԱՄԱԿԸ

Աղեքսանդրիա, 24 Մարտ 99

Մարթին!

Վերջին նամակը ստացեր էի ժամանակին. կ'ուզարկեմ զեզ ուզած նամակը. հարկ չտեսայ պատճէնը զեզի ուղարկելու: Սիրտ չունիմ ատանկ նամակներով ասոր անոր դէմ խօսելու, եւ խեղաթիւրումներ ալ ընելու քաջութիւնը տակաւին չունիմ. երեւի այդ էր պակաս, որ այդ խնդիրներով ալ զբաղուէնք երկար եւ մինչեւ անգամ բառերը խեղաթիւրուած ներկայացը-

նենք: Կը վերադարձնեմ զեզի նամակներդ, որպէսզի այդ կասկածներդ չու մէջը չհաստատուեն:

Աշխարհը զարմանալի է, իսկ մէջի մարդիկը ապշեցնող. չկայ կարծես ոչինչ հաստատ բան, չկայ անկեղծ հաւատ, չկայ մաքուր ընկերակցական ոգի՝ ինչպէս եղբայրը եղբորը հետ. չկան մարտիկներու մէջ ընկերավայել յարաբերութիւն, անձնուրացական անհաստատութիւն վերաբերմունք: Հայերը մանաւանդ՝ աւելի տարօրինակ բնաւորութեանց եւ նկարագրերու տէր անձինք են. կասկածոտ, չափազանցող, շուտ յափըշտակուող եւ շուտ յուսահատող, շատ գովող ու շատ բամբասող, եւն.: Վարակուած ենք բարոյական նոյն խտրելով, մանաւանդ սա սեւ յոռետեսութիւնը դէպի ամէն բաները, ամենէն շատ վնասը կը հասցնէ հասարակական բարոյականին. եթէ հայերս աւելի զիջ յոռետես ըլլայինք, առանց շատ ալ մեծ լաւատես լինելու, աւելի երջանիկ եւ աւելի բախտաւոր անհատներ թերեւս եղած ըլլայինք: Կը մտածեմ ինձ ու ինձ երբեմն ու շիտակ հաշիւ մը չեմ կրնար տալ. ելքը մութ է, հեռուն՝ ամպոտ: Ետեւը սեւ, առջեւը փշոտ... Կը մտածեմ ընկերակցական վրայ. փնտռեցի շատերու մէջ, ուզեցի շատերը լաւ ճանչնալ ու ըլլալ բարեկամ. շատերը զիս յուսախար ըրին: Ապշեցայ կեանքիս մէջ՝ մանաւանդ յեղափոխական մաքուր ասպարէզի վրայ շատերուն ճանաչելով, բարեկամներ չգտնելու. դառնացայ, մարդկանց ուրիշ տեսակ գտայ: Աւելի բարի կ'երեւակայէի աշխարհը. շատ սրտերու մօտէն անցայ, շատ զգացումներու մէջէն սիրեցի կենցաղիլ. թելը ուզեցի գտնել, նոյն ձայներն հանող, նոյն ներդաշնակութիւնն ունեցող. տաքցնող՝ ընկերական, յուզող, ըմբռնող բնաւորութիւն մը: Ափսո՛ս, չհասկցան շատերը զիս, խորը չուզեցին ճանչնալ ու դրին շատերը սրտիս ու զիջ մ'ալ ճակտիս վրայ, սեւ բծերու դրոշմէն: Լացի շատ անգամ մարդկանց չարութեանը վրայ. կսկիծներ ներսէս զերելով անցան ու թողուցին զիս մաղձոտութեան մէջ: Դժուար էր ի հարկէ մարդկանց լաւ ճանաչելը. դատապարտեմ արդեօք զանոնք. չգիտեմ. թերեւս իմ է յանցանքը. ո՞վ գիտէ, ի՞նչ ձեւ պիտի ըլլար եթէ Աստուծոյն հաւատայի. պիտի ըսէի այն ատեն՝ զոնէ վերինը գիտէ: Բոլոր յուսախարութիւններու մէջ ամենէն շատ զիս յուզողը եւ ցաւ պատճառողը Շահէնի վերաբերմունքն եւ այդ խնդրոյ առթիւ ընկերներու բռնած ընթացքն էր. մարդիկ հոգեբան ըլլալու էին. արդեօք նուազ դժբախտ չպիտի լինէին. թերեւս: Ե՛ս միայն կարող եմ գիտնալ Շ.ի խնդրի ինձի պատճառած հոգեկան տագնապները. ոչինչ չպիտի ըսեմ ալ եւս ոչ մէկին: Թո՛ղ իրաւացի եւ արդար լինին ամէնքն ալ, թող ե՛ս լինեմ յանցաւորը, կեղծաւորը, փառասէրը ու գուցէ կեղտոտը: Վնաս չունի:

Բարեւներ՝ Ս.

Ս.Ի (ՀՐԱԶ) ՆԱՄԱԿԸ

Աղեքսանդրիա, 11/23 Ապրիլ 99

Մարթին!

Պիտի խնդրեմ հետեւեալ յանձնարարութիւնս կատարել, եթէ կարելի է. Շահէնին գրած մէկ երկար՝ անձնական նամակիս պատճէնը, կերպով մը ընդօրինակելով, ինձի հասցնէի. եթէ աշխատիս, գուցէ Շ.ը յանձնէ զեզի: Հարկաւոր է ինձ այդ նամակս, որովհետեւ տեղեկագիր մը պատրաստելու վրայ եմ, ուր ի միջի այլոց Շ.ի մասին եւս ստիպուած լինելով գրել եւ բացատրութիւններ տալ (ցարդ չեմ տուած), իր գրած նամակներուն հետ, անհրաժեշտ կը նկատեմ նաեւ, իմ՝ իրեն գրած նամակիս պատճէնն ալ ուղարկել: Նախ կը խնդրեմ որ լուրջ վերաբերուիս, այս նամակիս. եթէ ծանրակշիռ չլինէր պարագան, չպիտի ուզէի խօսքս դրժել: Ձուր տեղը կ'օճէիս չխաղանք իրար հետ. երկուքիս համար ալ ամօթ է. ըմբռնեմք իրողութիւնները եւ աւելի դատողութեամբ գործենք:

Ես ինձ չեմ կարող արդարացնել որեւէ կերպով եւ ինձի տրամաբանական բաւարարութիւն մը չեմ կրնար տալ, այս լուրիւնը, այդպիսի ձեւերու տակ՝ պահելու. կը կրկնեմ՝ երկուքիս համար ալ ամօթ է: Ես չեմ հաւատացած որ դու իրօք այնքան զգուանք զգացած լինես եւ որ այդ զգացումը կը շարունակուի մնալ չու մէջը. կարելի է ըստական տպաւորութիւն մը եղած լինի. ուստի՝ այդ բառերուն աւելի զիջող կերպով պիտի նայիմ, յուսալով որ դու պիտի հասկնաս զիս՝ աւելի լաւ, ապագային: Ինչ որ է. այժմու իրերու դրութիւնը շատ նախանձելի չէ: Կը զրկեմ զեզի շատ մը նամակներ, որոնք կը պատկանին վերջերս պատահած խնդրոյ մը: — 1) Սպանական նամակ, գրուած Կորինի ձեռքով եւ Պ.ին(1) յանձնուած. սա ալ հոս զբրկեց: Անմիջապէս Կոր.ին պարզ(2) նամակ մը գրեցի, մեղմ եւ բարոյական բովանդակութեամբ, ծանրանալով այն կէտի վրայ որ՝ զինքը զրդողներ են եղած, թէ իր վրայ մենք բաւական հաւատ ունէինք, զոնէ այդ քայլին չէինք սպասեր. յայտնելով միանգամայն որ՝ եթէ երկրի մէջ գտնուող մեր ընկերներուն որեւէ վրտանը մը պատահի, զինքը եւ իր համախոհները պատասխանատու պիտի բռնենք. ու Դ.ը(3) պիտի ունենայ կորովը, այդպիսիներու արժանաւոր պատիժը տալու. շատ մը ցաւակցութիւններէ վերջը որ իրեն պէս երիտասարդ մը, այդպիսի տեղը եւ կորստաբեր ուղղութեան մը յարած է, յայտարարուած է թէ՛ մինչեւ Մայիս 1ը եթէ այդ սպանագրին հերքումը չտայ, բոլոր իր պատմութիւնը եւ ընթացքը, զանազան անձանց վկայութիւններով մէկտեղ, առանձին թուուցիկ մը, գաղտնի կերպով, իբր շրջաբերական, մեր Բիւրոյի կողմէն հրատարակութեան տալով, պիտի ցրուի,

բոլոր յեղափ. մարմիններուն, հնչ. թէ դաշնակ.: Այդ նամակը բաւական երկար գրուած էր, եւ տրամադրութիւն յայտնուած էր, որ Կ.ը լաւ պիտի ընէր եթէ զինքը կերպով մը արդարացնէր եւ բացատրութիւններ տար: Նոյն օրը Կսկիծին(4) ալ մտերմական, մանաւոր նամակ մը գրեցի եւ պահանջեցի շատ մեղմ լեզուով, որ բացատրութիւն մը տայ: Երկուքին պատասխաններն ալ ներփակ են. Կ.ը(5) վարպետ ձեւերու տակ կը ջանայ հերքումագրի նման բան մը գրել, առանց սակայն բուն խնդրին մօտենալու ու դիտմամբ մանաւոր խնդիրներ մէջտեղ կը նետէ, մտքերը աւելի պղտորելու գծով հաշիւներով: Երկուքի նամակներուն մէջ, պիտի նկատես որ, իմ դէմ ընկերները վատ բաներ խօսեր են. Պ. բաւական սխալ քայլ մըն է ըրած որ ատանկ մարդոց հետ այդքան մտերմօրէն է տեսնուած: — Պ.ի նկատմամբ Կ.ի գրածները չափազանցուած են: Գրեցի իսկոյն Պ.ին(1) ու ցաւ յայտնեցի այդ վարմունքի առթիւ. բայց եղածի մասին չխօսիմք: Օր մը, վերջերս, Փափագեան Յակոբը, յանկարծ ինձի կը հարցնէ թէ ինչո՞ւ սպանական նամակ գրեր էք մեր ներկայացուցչին ու ատկէ կը բացուի, հետզհետէ, թէ Մարտեաններու հետ ալ յարաբերութիւն ունի Կ.ը(5) եւ անոնք զինքը 1½ տարիէ ի վեր կը նկատեն իբր իրենց հաւատարիմ գործակատարը. Կ.ը(5) ամէն բան անոնց գրած է Պ.ի(1) եւ ներսէսի մասին, եւ մանրամասն կերպով, այնպէս մը որ այսօր Մարտեանները, շնորհիւ Կորինին, տեղեկ են մեր գաղտնիքներուն: Վախնալու շատ տեղիք չունինք թէև, բայց ասոնց եւ Կ.ի այդ քայլը՝ բարոյական տեսակէտէն, քանդող կը տեսնեմ: Այսօրուայ ստացած Պ.ի(1) նամակէն պիտի նկատես որ չալէպի Մարտեաններու որոշ հրահանգովը Կ.ը(5) շարժած է: Բարեբախտաբար նորերուն իմաց տուի շուտով եւ խնդրեցի, որ կերպով մը Կ.ի առջեւն առնեն. արդէն Պ.ն ալ կ'իմացնէ թէ բացուած է այդ մասին նորերուն. լաւ որ Կ.ը ասոնց մասին տեղեկութիւն չունի: Երկրորդ առաւելութիւն մը եւս ունինք որ, արդէն Պ.ի հեռացումը Աղ.էն եւ Մերս. (6) գնալը որոշած ըլլալով, մեծ վնաս մը չպիտի կրենք. կը մնայ Ն.ը. հոն է վտանգը. բայց արդեօք Կ.ը եւ իր աջակիցները պիտի համարձակի՞ն այդ քայլը առնելու. կեցցե՛ն Մարտականները. յեղափոխականներ ?Թի՛ւ !!! Հապա Շ.ը, իբր սիրելի Կ.ով. անպատճառ նա դարձած լինելու է իր տղան. թէ ոչ նա չէր առնի այդ քայլը: Բիւրոյին սպանական նամակի մասին տեղեկութիւն տուած էի. բայց վերջին դէպքը՝ ո՛չ. շուտով պիտի գրեմ. քանի՞ անգամ գրեցի ու խնդրեցի որ Բօրիսը(7) շուտով զբրկեն. եթէ հոս ըլլար, թերեւս այս բաներն ալ չէին պատահեր: Պ.(1) շուտով պիտի հեռանայ, ապրանքները(8) ստանալուն պէս. ասկէ վերջը ուղղակի նորերուն(8) հետ պիտի յարաբերութիւն պահենք: Ես գիտեմ որ, եթէ հոս, քովս մէկը ունենայի, ուրիշ կերպ

կը լինէր գործը. քանի որ Ն.ը եւ Պ. այդ ընթացքը բռնած են ներքը, Վ.ը դուրսը, քանի որ չկայ փոխադարձ վստահութիւն, անշուշտ պիտի պատահին այս ձախողութիւնները: Տեղեկագիրս տալով, Հրատարականս պիտի տամ Բիւրոյին, ու պիտի սպասեմ Բօրիսի դալուն. Թող ուրիշները պահեն յարաբերութիւնը. քանի որ բուն, զիս ճանչցող բոլոր ընկերներն ալ աննպատակարար ճիշտ կազմած իմ նկատմամբ. տեղեկագիրս պիտի շօշափէ ամէն կէտերը՝ ընդարձակ կերպով, Ն.ի, Պ.ի, Կ.ի եւ Ե.ի նամակներով եւ իմ նամակներով միասին: Ի՞նչպէս գործեմ, որ զիս շրջապատող ընկերակիցները զիս չեն հասկնար, ու իմ մէջ կը փնտռեն չինովնիկական, գեներալական ձգտումներ. (ըստ Վ.ի եւ ուրիշներու յայտարարութեան): Չուր պիտի անցնին իմ ջանքերը, ու թերեւս իմ մնալովս, իմ ընկերները, իմ ներկայութեան պատճառով, զբաղուելով չնչին խնդիրներով ու համերաշխութեան չկրնալով դալ, աւելի վնասակար լինեն քան օգտակար. ի հարկէ այդ ինձ համար շատ ծանր պիտի դայ, բայց ներկայ հանգամանքները զիս կը հարկադրեն այդ ընթացքին: Երբ անցագիր մը ճարեմ, ան ատեն Բիւրոյին կ'առաջարկեմ երկիր երթալու, եթէ ընկերներն ալ համաձայնելու բարի կամեցողութիւնն ունենան. ան ատեն կը մտնեմ բուն գործին մէջ ու կ'ազատեմ այս ողբալի դրութենէն: Մտածեցի երկար ու բարակ ու այս եզրակացութիւնը միայն յարմար գտայ. պիտի պահանջեմ որ Բօրիսը ամիսէ մը հոս հասնի, գործերու գլուխն անցնելու համար. ցաւալի է, շատ վիրաւորական ինձ համար այս քայլս. պիտի ոմանք ուրախանան. վնաս չունի. պիտի ունենամ համբերութիւնը, զիմանալու մի քանիսին հեղնական արտայայտութեանց, յոյսս դնելով միշտ մօտիկ ապագային վրայ. Թող չկարծեն թէ պիտի ընկճուիմ. պիտի հեռանամ ժամանակաւոր կերպով, աւելի զօրեղ կերպով մասնակցելու համար: Պիտի բաւէ որ պահանջած անցագիրս կարողանամ ձեռք բերել, ու երկիր մտնելով, առանց որոշ մեծ պատասխանատուութեան մը, աւելի հանգարտ սրտով այն ատեն պիտի գործեմ: Տեսնե՞ք. մեծ չիտայնք. Թող ապագան խօսի: — Արդ՝ ներկայ պայմաններու մէջ, ինձի պէտք է անկողնիս: Գիտես որ Վ.ին չեմ կարող ոչինչ յանձնել, բան մը որ քանիցս իրեն ալ յայտնած եմ. Կարիճէն ձեռք բերելու է. ապրիլիցս կերպով փոխուեցաւ. լուռ ու մունջ է, ոչ մէկ գործով չի հետաքրքրուիր հիմակ. արդ՝ մինչեւ Բօրիսին գալը, պէտք է որ մինակ չլինեմ ես. նախ՝ Ե.ի նամակի պարունակութիւնը՝ բառ առ բառ ինձի գրի. երկրորդ՝ պահանջի իրմէն, Լ.ի(9) կողմէն, իր քովը ունեցած իրերը. ալ կարելի չէ ասոր մօտ թողնել այդ գոյքերը. ամօթ է բոլորիս համար, որ մարդ մը ուզածն ընէ եւ կամայականութեամբ քովը պահէ Դաշնակցութեան գոյքերը. պարտաւոր եմ շուտով յետ ստանալու, մանաւանդ Իսկ.ի(10) վերջին դէպքերէն ետքը. հաղորդի իրեն, երբ յարմար նկատես, Կ.ի բռնած ընթացքը, ու իրերը յետ ստանալէ վերջը յայտնիր իրեն որ ինչն ալ պատասխանատու է՝ եթէ վտանգ մը պատահի մեր ընկերներուն. բայց առ այժմ մի՛ հաղորդեր: Կարծեմ Ե.ն ալ Տամատեանին հոս եղած ժամանակը, շատ բաներ պարզած էր, շատ կը տեսնուէր հետը: Եթէ կարողանայի հոս գալ ու հոս աշխատիլ, շատ յարմար գործ մը պիտի ընէիր. չե՞ս կըրնար հոս աշխատիլ կօշկակարի մը մօտ. կամ թէ 1 ամսուայ մը համար մինչեւ Բօրիսի գալը, հոս մնացիր, մի քանի ոսկի պիտի ծախսենք. հոգ չէ. արդէն ես անձնական գործ գտած ըլլալով վերջբոս, գոնէ քանի մը ամիս չպիտի ծանրանամ կուսակցական սրնտուկին վրայ. առած դրամովս, կարող կը լինեմ քանի մը ամիս, մինչեւ իմ խնդրի պարզուիլը, անցագիր ճարելս, ապրուիլ: Որով քու ընկերք ծախքերդ, եւ ան ալ ժամանակաւոր կերպով, մեծ բան չպիտի ըլլան. կը յուսամ որ պիտի յաջողեցնես այս խնդիրները:

Դ. խնդիր. — Տեսնուի՞ր Ձէքիին հետ. նա տեղիդ իտալական առաջին Թարգմանին հետ յարաբերութիւն ունի. իմացի՛ր այդ միջոցով թէ կարելի՞ է արդեօք անոր ձեռքով՝ իտալական պաշտպանեալի անցաթուղթ մը ձեռք ձգել, առանց սակայն հայ մը եղած լինելը հասկցնելու. protégé italien, առանց ազգութիւնը մէջը գրելու, ու հայկական իտալականացուցած անուն մը դնելով, եւ կամ՝ եթէ այս չյաջողի, կարելի չէ՞ր արդեօք, նոյն մարդերու շնորհիւ, բուն իտալացու, բայց իմ նկարագիրով, անցագիր մը չինել տալ, այն պայմանով որ, իրբեւ ծննդավայր նշանակուի Իտալիայի Հիւսիսային կողմի գաւառներէն մէկը, որոնք Ֆրանսիական եւ զուիցերիական սահմանազխերու վերայ կը գտնուին, ուրտեղ բնակող իտալացիները լաւ իտալերէն չեն գիտնար, այլ Ֆրանսերէն կը խօսին, — եթէ հնարաւորութիւն կայ: Ես հոգ պիտի դամ, յաջողցնելու այդ թուղթը, դրամ անշուշտ շատ չպէտք է խնայել. մինչեւ 2-300 Փր. կարելի է տալ. ի՞նչ արած: Պէտք եղած զգոյշ միջոցներով խօսիր Ձէքիին հետ: Տեղական գործերն ի՞նչ եղան. ե՞րբ կարգին մտնելու են. գոնէ 5 հոգի, հին ու նոր ընկերներ հաւաքուելով, գրէիք Բիւրոյին թէ Կոմ.էն վերակազմած էք ու շարունակէիք բնական ընթացքը տեղական գործերուն:

Բարեւներով՝ Ս.

- (1) Հաւածօրէ՛մ՝ Պոստաքիմ:
- (2) Դժուար ընթանիլ:
- (3) Դաշնակցութիւնը:
- (4) Հաւածօրէ՛մ՝ ծածկամուս մը:
- (5) Կորիւն:
- (6) Ծածկագիր, — Մեքսիկ:
- (7) Միքառ Խաչատուրեան:
- (8) Ծածկագիր գրուած:
- (9) Հաւածօրէ՛մ՝ Լեռնավայրի (Պատասխանատու Մարմին):
- (10) Խկէ՛տուէրունք:

4 99 — 16

Յ. ԳԱԼՖԱՅԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

8/5/99 Աղեքսանդրիա

Սիրելի՛ս Մարթին,

Քովէդ հեռանալէ յետոյ թէեւ մասնաւոր նամակ մը չէի գրած, սակայն Եփրեմի ուղղեալ նամակներու մէջ միշտ քեզ բարեւած էի. սակայն քու կողմէդ եւ ոչ մի լուր կամ ուղղակի մի բարեւ ալ չստացայ. չեմ գիտեր թէ պատճառը ի՞նչ կարող է ըլլալ: Արդեօ՞ք ինձի հետ ալ խոռովուած էք, կամ թէ մոռացաք զիս: Տօ՛, խօսէ, շուտ խօսէ: Խոստացայ ես գալու եւ չեկայ, ա՛յդ է պատճառը: Եթէ այդ է, շատ դիւրին է, քանի որ անտեղը գործունէութիւն մը չկայ, ինչպէս որ կը լսեմ. խօ, դու էլ հոս ե՛կ: Գործունէութիւն չկայ ըսի. այդ կը հասկնամ գործերու ընթացքէն. դուն քաշուած կ'երեւիս, չես ուզեր գործել, սրճարանի մէջ Նշանի հետ կը կուրիս (այդպէս չէ՞...): Եփրեմը վերջին երկու նամակներու բնաւ չի պատասխաներ. Սուրէնէն Խէչ լուր չկայ. իրաւունք չունի՞մ այդպէս ենթադրելու: Իցի՛ւ թէ ենթադրութեանս հակառակը եղած ըլլայ. գիտե՛ս, որչափ ուրախ պիտի ըլլայի: Կը խնդրեմ կրկին եւ կրկին գրեցէք ինձ ի՞նչ կ'ընէք եւ ինչ կը խորհէք. արդեօ՞ք այդ պիտի ըլլար մեր մի քանի ամսեայ գործունէութեան դառն եւ տխուր հետեւանքը: Ինչո՞ւ այդ ձեռնպահութիւնը, գործադուլութիւնը և մանաւանդ խորին լուռութիւնը: Գրեցէք որ ես ալ բան մը իմանամ: Արդեօ՞ք այս նամակս ալ առանց պատասխանի պիտի մնայ. չեմ յուսար. գիտեմ թէ սիրտմաշուք պատճառով է այնքան չես ախորժիր. սակայն ի՞նչ կը նշանակէ Եփրեմի այսքան լուռութիւնը. իրեն հետ չէ՞ք տեսնուիր, արդեօք նամակներս ձեռքը չհասան. հասցէները, ինչպէս մի անգամ, Օ. եւ Կ. Մաթոսեաններու շնորհիւր գրած էի. ալ չեմ գիտեր, բոլորովին շուարած եմ. Սուրէնը ի՞նչ կ'ընէ. իրեն հետ չե՞ս տեսնուիր. ի՞նչ կ'ընէ. ի՞նչ է իւր գաղափարները. չ'ուզե՞ր գործել եւ ի՞նչ է պատճառը: Գալֆան հո՞ն է դեռ. գործ մը գտա՞ւ: Արմենակին հետ երբեմն կը տեսնուի՞ս. անոր ընթացքը ի՞նչ է: Հունգարական տոմսակ մը ունէի՞ք, ամորթի թէ գարկեր է. Արմենակին հետ ընկերութեամբ առած էի՞ք, ինչը ուզեց տոմսակը եւ այսօր իրեն զրկեցի. Եփրեմը լուր ունի այդ մասին. սակայն դեռ զինանշաններու հաշիւն ալ չկարգադրեց, եւ բան մը չըրկեց. Եփրեմը խոստացած էր դանձել եւ ինձ զրկել. եղբայր, շատ կը նեղուիմ սա հաշիւէն. կը խնդրեմ ասոր հաշիւը Արմենակին հետ կարգադրելով ինձ ուղարկէք:

Վերջապէս անհամբեր նամակներ սպասելով՝ աչքերէդ կը պագնեմ:

Քուկդ՝ Յ. ԳԱԼՖԱՅԵԱՆ

Եփրեմին, Սուրէնին, Գալֆային ընկերական եւ սիրալիբ յարգանքներ:

ՆՈՅՆ

4 99 — 17

ՄԻՍԱՔԻ (ԿԱՐԻՃ, ԱՌԱՆՁԱՐ) ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ

Բովանդակութեան կը հասկցուի՝ որ Մարթի Մարտեան Եփրատուս մեկնած է արդէն, հուածօրէ՛մ Մայիսի վերջեր կամ Յունիսի մէջ: Յ. Գալֆայեանի ճամկը Մարթիին (499 — 16), Մայիս 8 բուակիր, ուղղուած էր Գանիք:

Աղեքսանդրիա, 7 Յուլիս 99

Սիրելի ընկեր,

Ստացայ Յունիս 22 թուակիր նամակդ: Ձեր երթալին շարաթ մը վերջը ծանրապէս հիւանդանալով անկողին ինկայ, հիմա թէեւ ապաքինած՝ բայց վրաս սաստիկ թուլութիւն մը կը տիրէ: Նամակիդ երկար չպիտի կրնամ պատասխանել, մանաւանդ որ պատասխանելու նոր բան մը չկայ, արդէն այդ խնդրին վրայ անձամբ շատ խօսած ու խորհրդակցած ենք. եւ ես դարձեալ իմ համոզումներու մէջ հաստատ եմ, կը զարմանամ թէ ինչ նո՞ր բան տեսար կամ լսեցիր որ յանկարծ այդպէս փոխուեցար: Նամակիդ մէջ ի մէջ բերած պատճառաբանութիւնները նոր բաներ չեն՝ ատենք հոս ալ կրնայիք մտածել: Ինչեւիցէ՛ երանի թէ ես սխալած ըլլամ...: Իմ երկիր մտնելու խնդրին դալով, ես այդ դիտաւորութենէս առ այժմ ես կեցած եմ եւ այս որոշումը տալէս ի վեր, ինչպէս քեզ ըսած եմ, ամենէն օգտակար գործը ուսանելու համար Եւրոպա գալս տեսնալով՝ զանազան միջոցներու դիմած էի՝ այս մասին հօրս հաւանութիւնը առնելու, ինչ որ արդէն գրեթէ յաջողած է՝ ուստի այս պարագային մէջ երկիր մտնելու անկարելի դարձած է: Կը ներէք որ երկար չպիտի կրնամ գրել. կը խնդրեմ բարեւներս հաղորդել Կարոյին: Յակոբը փոխադարձաբար կը բարեւէ Ձեզ. Վահագին(1) խոստացած նամակը դեռ չստացաւ: Սիրալիբ բարեւներով՝ ՄԻՍԱՔ

(1) Վահագ Ա. Վասնեանի կուսակցական ծածկամուս էր:

4 99 — 18

ԱՄԵՐԻԿԱՅԻ Կ. Կ. Ի ՆԱՄԱԿԸ

Նամակը ուղղուած է Մարթինի՝ Նիւ Եորք:

Օգոստ. 17, 1899

Մեծ.

9. Մարթին Մուրատեան

Սիրելի ընկեր,

Ժրնեւէն եկած նամակ մը կը ծանուցանէ մեզ Ձեր Նիւ Եորք գալը, ուրտեղէն Ձիգակօ կ'ուզէք եղեր մեկնել: Եստ կը փափաքէիք որ Ձիգակօ մեկնելէ առաջ անգամ մը մեզ այցելէիք, տեսութիւն մը ընելու համար: Եթէ ուզէք գալ, մեր տան հասցէն է 517 Washington St. (Վաշինկթըն) Փրովիտէնս, Մարկոս Տէր Մանուէլեանի անունին: Կանխաւ մեզ իմացնել հաճեցէք Ձեր կամքը այդ մասին: Ձեր քով գտնուած դրքերը — 228 «Վէրնէր», 50 «Կարնոյ յեղ», 90 «Մարդը մարդուն գայլ», 67 «Նրիտասարդները», 11 «Գիտական սոց. եւ համայնքի հրատարակութիւններ» անշուշտ կը հաճիք Ձեզ հետ բերել հոս Կեղր. Կոմիտէին յանձնելու համար: Իսկ եթէ չուզէք գալ, այն ատեն հաճեցէք յանձնել Նիւ Եորքի Կոմիտէին, որուն հասցէն է 628 3d Ave., 9. Թովմաս Չարչաֆճեանը կը գրտնէք հոն, որ կ'օգնէ Ձեզի այդ մասին: Ձիգակօ նոր կոմիտէ մը կազմուեր է, որուն հասցէն է 169 N. Halsted St. (Հալսթէտ) Ձիգակօ, Իլլ. Հարցուցէք Կարպետ Մակարեան եւ Խշտօնան: Անշուշտ Ձեր սպասուութիւնները կը դրէք մեզի եւ կ'աշխատիք Ձեր շքանքին մէջ հարկաւոր պրոպականտը ընել: Մի՛ մոռնաք Ձեր հասցէն զրկելու Ձիգակոյն:

Ընկերական բարեւանքով՝
Հ. Յ. Դ. ԱՄԵՐ. ԿԵՂՐ. ԿՈՄԻՏԷ

4 99 — 19

ԷՊԻՍԿՈՒՍԻ ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ

Իզմիր, 29 / 10 Սեպտ. 1899

Սիրելիդ իմ Մարթին,

Ստացած եմ խմբագրութեան միջոցաւ զրկածդ նամակներու ծրարը: Աւելորդ համարեցի ըստ չորս ծին զանոնք քեզ վերադարձնել, քանի որ իմ կարծիքով կարեւոր ոչինչ չէին պարունակեր ապագայի համար: Եթէ պահանջես կը զրկեմ. մօտս պահած եմ: Նոյնպէս բոլորովին աւելորդ համարելով մանրամասն պատասխանել քո բոլոր գրածներուդ, մանաւանդ երբ անոնք գրեթէ կրկնուած ու աղաւաղուած անցած-

դացած բաներ են, ուստի սաչափ դիտել կու տամ որ՝ ամէն մարդ, այժմ երբ անցեալի գիտակցութիւնը ունի, իր գործերու հաշիւը կրնայ խղճմտօրէն ընել. թող իր խղճին պատասխանէ, հարկ չկայ երկար-բարակ պաշտպանողականի կամ քննադատականի: Նաեւ աւելորդ կը լինի յայտնել, որ սխալ համոզում գոյացուցած ես, — թէ՛ իբր մենք քեզի լքած ու բոլորովին ընկերակցութեան սահմանէն դուրս հանած ենք, որով կը մեղադրես այս նամակովդ: Դուն պիտի գիտնայիր որ այդպիսի պարագային քեզ բնաւ նամակ չէինք գրեր: Մինչդեռ շատ անգամ մեր նամակները քո կողմանէ անպատասխանի մնալով կը կարծէինք, թէ մեր ըրած արդարացի դիտողութիւնները քո ինքնասիրութիւնը վիրաւորած ըլլալու են: Դուն երկար կը մեղադրես այս անգամ Սեպուհին եւ Վահանին, մինչդեռ քեզմէ առաջ գիտես կամ գիտէիր որ ես երկուքին ալ աւելի լաւ ուսումնասիրած էի. գիտէիր նաեւ թէ Ս. ին տրամադրութիւնը ինձ նկատմամբ ինչ պարագայէ առաջացած էր: Եւ մեր համոզումը, որ այդ եւ ուրիշ խնդիրներու մասին ինչ որ էր տարիներ առաջ ահա այսօր ալ միեւնոյնը լինելով հանդերձ՝ չենք զարմանար քու մեզ հանդէպ (ինձ հանդէպ ըսել կ'ուզեմ) բռնած ընթացքի մասին այն ժամանակ:

Աւոյի կամ Ս. ին ինձ մասին ըրած դիտողութիւնները, որ մատնանիչ ըրած էիր քո ժամանակին (գրած) մէկ նամակին մէջ, մի՛ թէ գիտնալու չէիր որ անոնք պարզ թիրիմացութիւններ էին, մի՛ թէ կարելի էր զիս մեղադրել Աւոյի խնդրոյն մասին: Ես կանգ չեմ առներ նորա յայտնած այն ամբաստանութեանը վրայ՝ որ իբր ես մեղաւոր եղած եմ իր ձերբակալման, ժամադրութիւն մը տուած ենք ու իրար գտած չենք. թէ ես գացած եմ թէ ինքը, բայց կ'երեւի ժամանակը մոռցած ու տարբեր ժամանակ հանդիպելով ժամադրավարը, զիրար չենք կրցած գտնել. ու ասիկա պատճառ համարել նորա ձերբակալման, մի՛ թէ կարելի է: Ու Աւոյին այն յայտնութիւնը թէ ինք եկած էր իր մեկնելու մասին խորհրդակցելու բացարձակապէս սխալ է: Նորա մեկնելու խօսք կար, բայց ոչ թէ այնքան շուտ (ըլլալիք) կամ որոշուած բան մըն էր: Սակայն նորա ընտանիքով փոխադրելու խօսք կար ու խնդիրը տունը գտնելու վրայ մնացած էր, որ բաւական հեռու գործ էր կրկին՝ եթէ արդէն աչքի առաջ եղած տուն մը (տանել) չյաջողէինք: Աւոն ընտանիքով պիտի փոխադրուէր այն տունը ուր մէկ կողմէն ինքը ապահով կը լինէր, միւս կողմէն վտանգուած անձեր հոն կարող պիտի լինէին ապաստան գտնել, — ահա՛ խնդիրը: Եւ ոչ թէ նա եկած էր զիս տեսնելու ու մեկնելու կարգադրութեան մասին մտածելու, քանի դեռ որոշ վտանգ մը չկար անմիջական: Իմ ըսածը հաստատուելու համար, թէ որոշ անմիջական վտանգը դեռ հեռու կը կարծուէր եւ ոչ ոքին յայտնի էր, պարզ կը լինի ամէն մարդու, — քանի որ նա գացած էր երբեմն իր եղբոր տունը ու հն-

մնացած, մինչդեռ ինքն ալ, ես ալ գիտէինք՝ որ եթէ զինքը որոնելու ըլլային դիւրին պիտի լինէր գալ հոն ձերբակալել զինքը, — որովհետեւ իր եղբորը տունը ամէն մարդու յայտնի էր:

Գալով Ս. ի իմ մասին ըսածին՝ թէ իբր թերութիւն ունեցած եմ իմ վարիչի գործերուն մէջ, ատիկա այնքան առաջ կը տանի զիս որ չեմ կարող ժամանակ յատկացնել ու երկարօրէն պարզել զայն. որովհետեւ զիս այդ մասին մեղադրողները չէին կրնար խորհիլ թէ ես ինչ հանգամանաց մէջ եղած եմ, ու այդ բոլոր օրերուն ինձ վրայ ծանրացող բազմաճիւղ գործերը իրենց տարբեր հանգամանքներով պարզելու է՝ որ կարելի լինի որոշել իմ պատասխանատուութիւնը: Ես երկար գրած եմ իմ ունեցած կեանքս բաժանման վայրկեանէն վերջը, երբ Սեպուհը խմբագրութեան մէջ էր ու պահանջած էր այդ ինձմէ. ու իմ այդ գրութեամբ հարկ էր որ խելացի մարդը հասկնար, խղճամիտ մարդը գրեւհատէր եւ ոչ թէ ելլելով առեղծուածներ կցէր ետեւէս, առանց յիշելու որ ուրիշ անգամ այդ քայլը չէր ըրած մինչ աւելի յարմար առիթներ ներկայացած էին իրեն քննադատելու իմ գործը: Ու դուն սակայն, ատնք առանց հասկնալու, քու մատը փաթաթած քու մասին իմ ըրած դիտողութեանս դէմ իբր պաշտպանողական գործածեցիր, մինչդեռ ինձ նկատմամբ այդ դիտողութիւնները, եթէ իրաւացի ալ ըլլային, չէին կրնար մեղմացնել քու մասին իմ կամ մեր ըրած դիտողութիւնը:

Այսպէս՝ այս անձնական, գրեթէ անցած խնդիրներուն մասին աւելորդ է կէտ առ կէտ ծանրանալ, աւելորդ է նոյնպէս իմ կարծիքը յայտնել այն մասին, որ երեխայական ընթացքով մը Եւալարչին նման անձի մը ձեռքը փաստեր տուիք մեր անձին դէմ զինուելու: Ես գիտէի մասամբ որ այդ կարգի անձինք իրենց փաստերը մեր մտերիմ ընկերներ կոչուողներէն կը ստանան, որոնք իրենց անհամաձայնութեանց պարագաներուն ալ ու ձախ կը պատմեն՝ կրքէ մղուած:

Այժմ ամէն բան վերջացած է, հոս մեր գործերը ըստ ամենայնի կարգաւոր վիճակի մէջ են. աւելի նախանձելին այն է որ ժամանակէ մը ի վեր մեր շրջակայքի ընկերները մենք ճանչցանք, իրենք ալ մեզ ճանաչեցին ու այժմ գիտակցաբար կը շարունակուի գործը, ամէն մարդ իր ուսին վրայ դրուած պատասխանատուութիւնը լաւ ճանչնալով ու իր շրջանի ընկելը գիտնալով, առանց երեւակայական տեսութիւններու՝ բուն գործին գիտակցելով կ'ընթանան: Այս ըսելէ վերջ կը մնայ քեզի ալ իբր ընկեր խօսիլ այն ինչ որ կրնաս ընել քո այժմեան դիրքիդ մէջ, — ինչ որ պիտի կատարած ըլլաս օգտակարագոյն գործ մը, այն է որ ջանաս նախ մեր տեղին յարմար նախապատրաստութիւն ունեցող նուիրուած երիտասարդներ (գտնել), որոնք դիւրութիւնը ունենան նոյնիսկ հոս անձնական գործ գտնելու. այդպիսի դէթ 2-3 անձեր մղես դէպի այս

քաղաքը, որ գալով հոս գործ մը գտնեն եւ ապահով վիճակի մէջ կարենան ապագայ կազմակերպութեան դուրսը կանգնիլ ու գործը նպաստաւոր հանգամանքներով առաջ տանիլ. — բայց այս մտքերը առանց անոնց յայտնելու, միայն իրենց անձի օգտակարութիւնը այս քաղաքին մէջ մատնանշելով, պէտք է մղես գտնող հոս:

Երկրորդ ընկելք՝ ամէն քաղաքացիներէն նուիրուած անձեր մղես դէպի իրենց հայրենիքը, որոնք ե՛ւ յեղափոխական գաղափարներով օժտուած լինելով նպաստեն ապագայ ընդհանուր կազմակերպութեան հաստատուելուն: Նաեւ այդտեղի մարմինը կարելիին շափ համոզել, որ իրենց ձեռք բերած նիւթական միջոցը երկրի մէկ կէտին հետ յարաբերութեան մէջ մտնելով՝ յատկացնեն անոնց ձեռք առած գործունէութեանց: Օրինակ՝ հոս արդէն դարձած է կարեւոր կեդրոն մը ապագայի տեսակէտէն, կոչուած է, իր դիրքին բերմամբ, մեծ դեր կատարելու. ուրեմն պիտի շատ պէտք ունենայ նիւթականի եւ այժմեանից ալ շատ կարիք ունի արդէն. որովհետեւ շնորհիւ իր ստանձնած պաշտօնին, եւ շնորհիւ տեղական հանգամանաց այժմեան բարդութեան, նիւթական ձեռք բերելու (դրամական խնդրով՝ ըսել կ'ուզեմ) չի կրնար զբաղուիլ: Քանի որ եթէ այդ խնդիրը ձեռք առնելու ըլլայ միւս խնդրին, միւս ծրագրին ըսել կ'ուզեմ, յաջողութիւնը կրնայ վտանգի ենթարկուիլ: Ուստի հարկաւոր է այստեղ կամաց — կամաց ներքին յարմարագոյն ուժերով պարենաւորել, միւս կողմէ ալ ներսերու գործը՝ կազմակերպութեան ծրագրերը յաջողցնել: Կը հաւատացնեմ որ եթէ քիչ մը ջանքեր լինին մենք կ'ունենանք ամբողջ լայնածաւալ կազմակերպութիւն մը, գիտակցական ու գործնական հողի վրայ դրուած եւ ոչ թէ նախորդ Հնչ. կազմակերպութեան նման լոկ յուզման եւ անուանական...:

Այս մասին դուն գիտես որ մեր դուրսի ընկերները խիստ անյարմարութիւններ ունին, որովհետեւ նոքա իբր յեղափոխական գործիչներ թէ դժուարութիւն ունին ներս մտնելու եւ երկար ժամանակ մնալու՝ քանի որ յայտնուած են մասամբ, եւ թէ բոլորովին անյարմար են հոս գալով անձնական գործ մը գտնելու եւ այդպիսով օգտակար լինելու: Ահա այս է գլխաւոր պատճառը որ քեզի կը գիտեմ ընկերներ ճարելու եւ գործի մղելու համար: Իմ համոզումս եղած է, որ այդ երկիրը(1) հանք մը պիտի լինէր յեղափոխական երիտասարդներ արտադրելու, երիտասարդներ որոնք բուն երկրէն լինելով՝ շատ մը հանգամանքներով իրենց դիրքի շնորհիւ մեծ դեր կատարելու կոչումը կրնային ունենալ, եւ ծառայել: Նոյնպէս իմ համոզումս աւելի շեշտուած է այդ կէտի վրայ՝ երբ նկատած եմ այդ երկրի(1) երիտասարդութեան մերթ սխալ առաջնորդուիլը, մերթ ալ յուսահատեցնող պատճառներու ծագումը:

Այժմ դուք միացած քանի մը գաղափարակից գործնական ու փորձառու, ազնիւ եւ խիստ անաչառ անձերու հետ, կարող էք ներկայ պարագային կատարել վերոյիշեալ ըսածներս, որ շատ մեծ նշանակութիւն ունին: Ատիկա կը յիշես որ ժամանակին ալ մեր ու Մուրատին ծրագիրն էր: Այսօր գործերու բերմամբ ահա կրկին կը զգացուի ինքնին այդ ծրագրի անհրաժեշտութիւնը: Տեղեկութիւններ տալ չմոռնաս այդտեղի մասին:

Բարեւներով,
Քոյդ՝ էՊ.

(1) Կ'ակնարկուի Ամերիկայի (Ա. Մ. Ն.):

4 99 — 20

Ա. Ս. ԼԵՒՈՆԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Նամակագիրը — Արմենակ Լեւոնեան — ուրիշ մէկը չէ՝ եթէ ոչ մեր յեղափոխական պատմութեան մէջ ծանօթ Աշոտ-Սրկաթը, որ Յամակի բուսակամէն շուրջ երկու տարի ետք, Հ. Յ. Գ. կամէք Յերկայացնող մարմնի Տիրիպէի ժողովին (1901), պիտի ճշտակուէր անգամ Լեւոնակայի Պատասխանատու Կեդր. Կոմիտէի Մարքիճի, Հրաչի եւ Պուլկարացի Պետոյի հետ: Հետագայ դէպքերը սակայն տարբեր ձեւով տնօրինեցին այդ մարմնի նախատեսողները: Պետոյի բարձր-մակերգական կարիւրեան ընթացքին ձեռքաւորակցուեցաւ եւ կախարհեալ համուսնացաւ: Հրաչը իզմիրի մէջ ձեռքաւորակցուեցաւ 1902ին եւ բաժնու մեծ միջոցով Օսմ. Սահմանադրութեան Աշոտ-Սրկաթ կազմակերպական աշխատանքներն զերգասեց յեղափոխական կենդանի գործը ու անցաւ Ախլաթ (քննի Ախլաթցի էր իմք), իր մեծ նախադրումով՝ Սերոբի եւ Գուրգէնի հետքերով փայլուն (Սրկաթի մասին կարգալ՝ Ռուբէն, «Հայ Յեղափոխականի մը Յիշատակներ», Ե. հատոր): Մարքիճ 1902ի վերջերք միայն վերադարձաւ Արեւմտահայաստան եւ վարեց Լեւոնակայի Պատ. մարմնի գործերը՝ Ազատքի, Առանձնարի (Կարիճ, Միստի) եւ վախճանի հետ:

Նամակը տարբեր չունի, բայց բացայայտօրէն 1890ին է գրուած, երբ Մարքիճ դեռ ճար էր վերադարձած Ամերիկա:

987, Parker St.
Raxbury (Mass.)

Սեպտեմբեր

Սիրելի Մարքիճ,

Ստորագրութիւնս տեսնելէդ վերջ թերեւս յիշես դիւ. երբ կը մեկնէիր ես ոչ-կուսակցական անձ մըն էի. այժմ գաղափարակից ենք:

Ձեր Կեդր. Կոմիտէին գրած նամակի մէջ հոս գործիչ մը գալու խնդրին վրայ սխալ կը խորհիք: Դուք կը կարծէք թէ հարկ չկայ որ մէկը գայ. ընդհակառակն ատենուայ մը համար մեր ամենաազդեցիկ եւ ծանօթ ընկերներէն մին հոս գալու է: Ահա թէ ինչու

Այժմայականներ վեց հատ անգործ մարդիկ ունին (չորս պատուելի եւ երկու ուրիշ), որոնք հոս-հոն կը պտտին եւ մեր մասին սուտ լուրեր տարածելով ժողովուրդը իրենց կողմ կը յարեն: Արդէն դիտես թէ ժողովուրդը տրամաբանելու կարողութիւն չունի: Արդ մեր կողմէն ալ մէկը ըլլալու է որ չըլի եւ քարոզէ յեղափոխութիւն, եւ այդ անձը եթէ դուրսէն ըլլայ, արտասահմանէն եկած, աւելի ազդեցութիւն կը թողու: Մենք պէտք է ժողովուրդը յեղափոխական դարձնենք եւ ատոր համար ալ գործիչի պէտք ունինք:

Պրն. Կէօլճիկեանի մասին հարցուցած էիք. այդ պարտնք թէեւ ուսեալ բայց փոփոխամիտ է նոյնիսկ իր անձնական գործոց մէջ. սակայն դուն ջանա իր սխալները իրեն ըմբռնել տալ:

Եթէ գործիչ մը գայ այս աշնան եւ ձմեռը, մենք Ամերիկայի հայոց մեծ մասը մեր կողմ կը ձգենք եւ նիւթական տեսակէտէ ալ շատ կ'օգտուինք: Արդ կը յուսամ թէ դուն ալ առանձին կը գրես Արեւմտեան Բիւրոյին այս խնդրոյ առթիւ եւ մէկու մը գալուն պէտքը իրենց կը բացատրես: Մենք բոլորս ալ գործաւորներ ենք. տասը ժամ աշխատելէ ետք՝ շատ քիչ կրնանք ուրիշ գործով զբաղիլ: Արդէն շարժումը սկըսած է: Դէպի յառաջդիմութիւն, դէպի զարգացում, — հինգ նոր կոմիտէներ կազմուած են այս տարուայ մէջ. եթէ զօրաւոր մղում մը տանք մեծ ուժ կրնանք գոյացնել հոս: Գրէ շուտով. գրէ որ մեզի կարող մէկը Ղըրկեն, գէթ վեց ամիս հոս կենայ եւ վերադառնայ: Պուրկարիս լեցուն են մեր կարող ընկերներ: Ինչո՞ւ անոնց մէկը հոս չգայ: Նոյնիսկ Բիւրոյի անդամներէն մէկը — Արմէն Գարօն — եթէ գայ՝ վնաս չենք ընել: Փորձով պիտի տեսնես թէ ըսածներս շատ ճիշդ են. մասնաւոր եթէ այս կողմերը գտնուիս պիտի հասկնաս թէ որքան պէտք ունինք գործիչի մը:

Սիրալիւր բարեւներով,
Ձերդ՝
Ա. Ս. ԼԵՒՈՆԵԱՆ

Յ. Գ. — Բարեւներս յիշէ Պրն. Խշտոյեանին եւ միւս ընկերներուն:

4 99 — 21

ԱՄԵՐԻԿԱՅԻ Կ. Կ. Ի ՆԱՄԱԿԸ

Սեպտ. 18, 99

Dash. Central Committee
283 P. O. Box
Prov. R. I.

Սիրելի Մարքիճ!

Ձեր Սեպտ. 1 ամսաթիւ նամակը ստացած ենք: Ժընեւէն Պետո անունով մարդ եկած չէ: Գ. Չարչափ

ճեան Սեպտ. 3ին հոս էր, երբ Ձեր նամակը ստացանք: — «Եթէ, ըսաւ, մեր Նիւ Եորքի ընկերները հակառակորդի դիմակով իր հետ վիճաբանութեան մտեր են, ատիկա միայն ըրած են իր կարծիքները իմանալու համար. իսկ իրենք արդէն համոզուած յեղափոխականներ են»: Եթէ հետաքրքրուած չեն երկրի նկատմամբ Ձեզի հարցումներ ընելու, ատ ալ մեր կարծիքով իրենց Ձեզ նկատմամբ որեւէ տեղեկութիւն չունենալն է: Ինչ որ է, այդ մասին աւելի երկար գրելու պէտքը չենք տեսներ:

Պետրոս Կէլճիկեան ժամանակին հնչակեան էր, ձղեց, եւ այս կողմերէն հեռացաւ. իր ինչ ըլլալը չենք գիտեր, միայն թէ անցեալին մէջ իր քանի մը գործերով եւս այնքան լաւ տպաւորութիւն ձգած չէ. դուք տեսնելու ու փորձելու էք զինքը, բայց կարեւոր գաղափարներ մի՛ վստահիք:

Հոս, տեղական ներքին կանոնադրի համեմատ է որ կոմիտէներ կը կազմուին, եւ ամէնէն ալ, երբ անդամ ընդունուին, հաւասար իրաւունքներ կը վայելեն: Քանի որ հոս դրամական ու գաղափարական գործ միայն կայ, այնքան ալ զանազան շրջանակներու բաժնելու հարկը տեսնուած չէ ցարդ: Զինուորներու համար առանձին կարգադրութիւններ կ'ընենք որ մտաւորական ու զինուորական հարկաւոր պաշարը ստանան: 15 կոմիտէներ կան այսօր, որոնց 4ը այս տարի կազմուցան, եւ բնականաբար մեր թիւը բաւական աճած է անցեալ տարուան վրայ: Ձեզի գրուած թիւը անդամներու նկատմամբ, անճիշդ է. ատկէ շատ աւելի ենք: Գրեցէք Ձեր տպաւորութիւնները երկրի ու Եւրոպայի ընդհանուր գործերու մասին: Մենք Ձեզ հոս հրաւիրեցինք, որպէսզի ընդհանուր գործերուն եւ Ժընեւի ընկերներու վրայով բերանացի տեղեկութիւններ հաղորդէիք, որով նոր քաջալերութիւն մը պիտի տայիք մեզի, բայց չեկաք. հիմա կրնա՞նք ակնկալել որ գէթ նամակով գրէք Ձեր փորձառութիւնները ու տպաւորութիւնները: Այս տողերը գրողը զձեզ կը ճանչնայ երբ դնացիք այս տեղէն. հին ընկերոջ մըն է որ կը գրենք, եւ անշուշտ կը հաճիք գոհացնել այդ պահանջը: Ձանացէք Ձիգակոյի կոմիտէն զօրացնել եւ շրջակաները կոմիտէներ կազմել: Ձեր կոմիտէի (Ձիգակո) հասցէին հարկաւ «Դրօշակ» բերել կու տաք. իսկ յաւելուած եթէ գայ, կը զրկենք: Ձեր տարած գրքերը եթէ ծախէք, հաճեցէք մեզի իմացնել: Նիւ Եորքի զըրքերէն մաս մը զրկուած է մեզի: Ընկերական բարեւներով:

Ի դիմ. Հ. Յ. Դաշ. Ամեր. Կեդր. Կոմիտէի

Քարտուղար՝ ԲԱՏԳԷՆ

Յ. Գ. — Բոլոր ընկերներուն բարեւներ:

4 99 — 22

ՎԱՐԴՈՅԻ ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ

1899 Սեպտ. 20, Վարնա

Յարգելի Պարոն Մարթին,
Այո, Ձեր նամակը ստացել ենք, բայց Բաբան(1) ինծի խնդրած էր որ իր նամակները ստանամ եւ պահեմ, մինչեւ որ ինքը ժամանակ ունենար ինձնից խընդրելու: Դորա համար էլ մինչեւ հիմա դուք պատասխան չէք ստացել: Ձեր առաջարկը կ'ընդունինք, ուղարկեցէք, եթէ յարմար եղաւ կը տպագրենք:

ՎԱՐԴՈ

(1) Բաբա, Բաբայեան, — Գաբելի կաթակի կուսակցական ծածկամուրը:

4 99 — 23

Ա. Ս. ԼԵՒՈՆԵԱՆԻ (ԱՇՈՏ-ԵՐԿԱԹ) ՆԱՄԱԿԸ

987, Parker St.
Raxbury (Mass.)

Հոկտ. 3

Սիրելի Մարթին,
Նամակը ժամանակին ընդունած եմ: Քեզի հետ համամիտ եմ թէ Հայաստան աւելի գործիչի պէտք կայ քան թէ հոս, եւ ճիշդ այդ պատճառաւ է որ մէկու մը պէտք կը զգանք: Եթէ մէկը հոս գայ՝ ասկէ երթացողներ շատ կ'ըլլան: Ես մտադիր եմ երթալ, երկար ատենէ ի վեր փափաքս եղած է այդ, բայց հոս անկազմ ձգել հեռանալ չեմ ուզած. կը քայքայուի, վախցած եմ, եւ այդ զիս հոս պահած է: Եթէ գործիչ մը գայ ես պատրաստ եմ վաղն իսկ հեռանալ Ամերիկայէն. շատ որոշ կը տեսնեմ թէ գործի ասպարէզը ինձ պարտք կայ կատարելիք: Թերեւս շատերն ալ ինձ պէս կը մտածեն: Մէկ խօսքով գործիչի մը հոս գալը անհրաժեշտ է եւ երանի թէ մինչեւ հիմա եկած ըլլար: Եզրիպտոսէն աւելի կարեւոր ասպարէզ է Ամերիկան, թէեւ Եզրիպտոս ալ իր մօտաւորութեան պատճառով տարբեր նշանակութիւն ունի:

Հոդ եղողները ջանքերնիդ միացուցէ՛ք գործելու. հրապարակային ժողովներ մեծ ազդեցութիւն կը թողուն. երբեմն հրապարակային ժողովներ ըրէք. այդ կողմի հայութիւնը թմրած է եւ պէտք է ցնցել: Երանի թէ կարենայինք իրար տեսնել. ներքին խնդիրներու մասին մանր ու մունր տեղեկութիւններ կրնայիք հաղորդել ինձ՝ որոնք օգտակար կ'ըլլային կոմիտէները քաջալերելու համար:

Ներսիակ շրջաբերականը, թերթի մասին, տեղույդ կոմիտէին յանձնէ:

Բարեւներով, ձերդ՝
Ա. Ս. ԼԵՒՈՆԵԱՆ

4 99 — 24

Ս. ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ

Պոսթոն, Հոկ. 7 / 99

Սիրելի բարեկամ,

Ստացայ նամակդ եւ ստիպողական գործով մը նիւ-
տորք դացած ըլլալով, երկու օր առաջ վերադարձայ եւ
կը պատասխանեմ:

Շիրվանը ձեր ըսած վաճառականով՝ Իսկէնտէր եւ
Արշակ Թան Գողոյեանցին հետ չեկաւ, այլ առանձինն
գալուն պարագաները չեմ գիտեր. Կիւրին կարդացեր է.
թէ՛ իր Կիւրինի կեանքին եւ թէ՛ հոս գալու պարագանե-
րուն նկատմամբ ոեւէ մի կիւրինցին ի Շիքակօ կամ
այլուր կրնայ աւելի ընդարձակ եւ ճշգրիտ տեղեկու-
թիւններ տալ. կան քանի մը թուղթեր ձեր պահանջած-
ներէն, հոս ու հոն, ուր որ գտնուած եմ անցեալի մէջ.
միայն վերջերս տեղաւորուած դիրք մը բռնելու վրայ
եմ:

Շիրվանը իր սպաննուած ժամանակները 26-27
տարեկանի չափ էր կարծեմ: Անձնապէս եւ հակառակ
եմ Շիրվանի անուան յեղափոխ. կոչուած թերթերու
մէջ յիշուիլը. ասիկա ձեր կարծեաց այնչափ հակառակ
է որ նամակով միտքս բացատրելով ձեզ համոզել ան-
կարելի է, մանաւանդ թէ՛ ինչ-ինչ պատճառներով պա-
րագաները չեն ներեր. երբ այս կողմերը գաս, կը տես-
նուրինք:

Ձեմ յիշեր նաեւ թէ՛ ի՞նչ պարագայի մէջ գրած եմ
խիստ նամակ մը ձեզ, երբ կրկին կարդամ եւ սխալ
գտնեմ, ներողութիւն կը խնդրեմ:

Այվազեանին հետ թղթակցած չունիմ. հասցէն չեմ
գիտեր. իմ կրօնական հակամիտութիւնը իրեն դիւր չէր
գար. եթէ դուն հասցէն գտնես ինձ ալ իմացուր:

Կը խնդրեմ որ եթէ որոշած էք անպատճառ թերթի
մէջ հրատարակել տալ Շիրվանի կենսագրութիւնը,
հաճիք իր ընկերներուն անունը կէտադրութեամբ կամ
միայն գիր մը գնելով անցնիլ: Դառն, դառն, խիստ
շատ դառն են Շիրվանի մահուան պարագաները: Ազգ-
անբուժելի ախտի հրէշային մի երեւոյթ, եւ ազգ մը
որ մէկ Մուրատի դէմ 20 Տ. կամ Ե. կրնայ ծնանիլ,
պատճառ ունի ողբալու եւ գերի մնալու: Ա՛խ, բարե-
կամ, սիրտս ի խորս խոցոտած է, անկարելի է եւ չեմ
ուզեր առջ մը անգամ գրել թէ՛ տեսութիւն ընել զա-
նազան խնդրոց վրայ եւն. եւն... Մնամ տեսնուելու
յոյսով:

Ձերդ՝
Ս. ՊԵՏՐՈՍԵԱՆ

Յ. Գ. — Երբ մօտերս որեւէ մի թուղթ ձեռքս անց-
նի կը զրկեմ. յետ գործածելոյ կը վերադարձնէք:

4 99 — 25

ԱՇՈՏ-ԵՐԿԱԹԻ (Ա. Ս. ԼԵՒՈՆԵԱՆ) ՆԱՄԱԿԸ

987, Parker St.
Raxbury (Mass.)

Հոկտ. 18

Սիրելի Մարթին,

Նամակդ իր ժամանակին ստացած եմ: Արեան
դաշտ երթալու ծրագիրս կիսկատար է, եւ ճիշդ ատոր
համար էր որ քեզի գրեցի այդ մասին: Որովհետեւ
գործի ներկայ ընթացքը լիովին չեմ գիտեր, տակաւին
չեմ կրցած որոշել թէ՛ Հայաստանի ո՛ր մասի մէջ գոր-
ծելու օգտակար կրնայ ըլլալ: Բաղէչ եւ Մուշ ինձ ծա-
նօթ են իրենց ամէն կէտերովը. գիտեմ ժողովրդի սո-
վորութիւնները, ռամիկ լեզուն, ճամբաները եւ վեր-
ջապէս ունիմ ծանօթներ: Բայց թէ՛ ո՛րտեղ, անծանօթ
տեղ թէ՛ ծանօթ տեղ օգտակար կրնամ ըլլալ, այդ թե-
րեւս դուն կրնաս քու փորձառութեամբ բացատրել:

Ուրիշ մի կէտ (1) գործունէութեան
տեղ ընտրած է Կիլիկիա. սակայն ես շատ չեմ ցանկար
այդ մասի մէջ գործել ինչ ինչ պատճառներով, որոնց
գլխաւորն է թէ՛ Կիլիկիացիք բարքով ու վարքով խիստ
շատ կը տարբերին Հայաստանի հայերէն եւ ես իրենց
վարուց անտեղեակ՝ բաւական ատեն եւ ոչ մի գործ
պիտի կրնամ տեսնել եւ թերեւս վնասակար ալ ըլլամ:
Ու չեմ գիտեր թէ՛ կրնամ՞ տեղի մասին ընտրութիւն Ը-
նել թէ՛ ուր որ զրկուիմ հոն երթալու եմ: Արեւմտեան
Բիւրոյին ալ գրեցի անցողակի կերպով փափաքս: Ես
չէի ուզեր որ Կեդր. Կոմիտէն գիտնայ խնդիրը մինչեւ
վերջնական կարգադրութիւնը, զի չեմ ուզեր որ լուրը
տարածուի: Ալֆայականներ սոսկալի թշնամի են ինձ
եւ եթէ լսեն, խնդիրը կը գէշնայ: Գիտես անոնց մատ-
նութիւնները:

Տարիէ մը ի վեր քանի մը ընկերներ դիմած են
Կեդր. Կոմիտէին, որ գիրենք զրկէ: Կիլիկիոյ Կեդր.
Կոմիտէին դիմեցինք այդ առթիւ, կէս մերժողական
պատասխան առինք: Իսկ Կեդր. Կոմիտէին ձեր գրած
նամակէն կը հասկնամ թէ՛ պահանջ կայ, եւ այդ ըն-
կերներ (որոնք մեր ամենագործօն եւ զոհող ընկերներն
են) պատրաստ են ոեւէ ատեն մեկնիլ, ուստի եթէ կըր-
նաս տեղ պատրաստել անոնց համար՝ գրէ Կեդր. Կո-
միտէին այդ մասին: Ընկերներէն մին առաջնակարգ
դերձակ է, կրնայ իբր խաղաղ գործիչ ապրիլ եւ կը
խորհիմ թէ՛ Կիլիկիա երթալու յարմար է: Արդէն ինչ
վերջերս ալ ինձ դիմած է նամակով մը եւ թղթակցու-
թեան մէջ եմ իր հետ այդ մասին: Ձեր կարծիքին կը
սպասեմ:

Բարգէնը մեր Կեդր. Կոմիտէի ատենապետն է
(Պրն. Մարկոս Տէր Մանուէլեան, չմշկածագցի): Կեդր.
Կոմիտէին գրած նամակիդ մէջ այնպէս ցոյց կու տաս

որպէս թէ՛ գաղտնիքներ երեւան հանած ենք: Ձեր գրած
խնդիրներուն, օրինակ՝ Դաշնակցութեան ուժերը վան,
Սասուն եւ Կիլիկիա համախմբուելու մասին Կեդր. Կո-
միտէն երբեք բան չգիտէր. միայն Ձեր նամակէն տե-
ղեկացանք այդ, եւ ուստի ուրիշ աղբիւրէ տարածուած
ըլլալու է լուրը: Իսկ Կիլիկիա մէկը զրկելը ուզէինք
չուզէինք երեւան պիտի գար, զի մենք ընտրողական
սկզբունքով կազմուած ենք:

Կը յուսամ թէ՛ վերի խնդիրներուն մանրամասն
կերպով կարծիքդ կը յայտնես:

Բարեւներով, ձերդ՝
Ա. Ս. ԼԵՒՈՆԵԱՆ

(1) Մէկ կամ երկու բառ, հաւաճօրէն ամուս մը, ամբօքն-
նիլ:

4 99 — 26

ԱՇՈՏ-ԵՐԿԱԹԻ (Ա. Ս. ԼԵՒՈՆԵԱՆ) ՆԱՄԱԿԸ

987, Parker St.
Raxbury (Mass.)

Հոկտ. 29

Սիրելի Մարթին,

Նամակդ ընդունեցի: Երթալ փափաքող ընկերնե-
րէն մէկը առաջնակարգ դերձակ է. պատրաստ է իր
ծախքովը երթալ եւ իրեւ խաղաղ արհեստաւոր Երկրի
ոեւէ մասին մէջ գործել. միւսները արհեստ չունին
(մէկը մեքենագործ է, սակայն արժէք չունի Թուրքիոյ
համար). բոլորն ալ իրենց ծախքով երթալու պատ-
րաստ են:

Իսկ իմ մասին գալով, թերեւս շատ լաւ կ'ըլլար
գործով մը գրադիլ եւ գործել յայտնի հրապարակի վը-
րայ, մարդոց մէջ մտնել ելլել: Համոզելու բաւական
ձիք ունիմ: Սակայն խնդիրը կը դժուարանայ երբ ի
նկատի կ'առնեմ թէ՛ արհեստ չեմ գիտեր եւ Թուրքիոյ
մէջ միայն երկու գործ կրնամ ընել, — դասատուու-
թիւն եւ կամ վաճառականութիւն: Այս վերջնոյն փոր-
ձառութիւնը չունիմ. դրամագրուի ալ կը պահանջէ:

Այս ամէնը ձեզի պարզելէս ետք կը մնայ որ խոր-
հիք եւ ինձ թելադրէք թէ՛ ինչ կրնամ ընել հոն կամ թէ՛
ո՛րը օգտակար է, — գաղտնի գործի՞ ըլլալ թէ՛ հրա-
պարակի վրայ գտնուիլ: Իմ ապահովութիւնս եւ հան-
գիտս բնաւ ի նկատի մի առնէք, միայն ինձ խօսեցէք
գործի տեսակէտէն: Օգտակարը եթէ կենացս իսկ կը
վնասէ՝ պատրաստ եմ զայն ընդգրկելու:

Երէկ Բիւրոյէն նամակ մը ընդունեցինք որ կը գրէ
թէ՛ գործիչը պատրաստ է գալու. վաղը դրամ պիտի

զրկեմ ասկէ հեռագրով՝ որ ճամբայ ելլէ: Այս լուրը
շատ ուրախացուց զիս:

Դուք եթէ այս կողմերը գաք, տարակոյս չունիմ
թէ՛ դործ կը գտնէք: Եթէ չեմ սխալիր լատարութիւն
գիտէք. եթէ այդպէս է իմ գործած գործարանիս մէջ
կրնամ գործ առնել ձեզի ոեւէ ատեն որ գաք:

Կը մնամ բարեւներով,
Ձերդ՝
Ա. Ս. ԼԵՒՈՆԵԱՆ

4 99 — 27

ՄԻՍԱԳԻ (ԿԱՐԻՃ, ԱՌԱՆՁԱՐ) ՆԱՄԱԿԸ

ՄԱՐԹԻՆԻՆ

Ցիւրիխ, 2 Նոյեմ. 99

Սիրելի Մարթին,

Ժընեւէն գրած նամակիդ, զոր հիւանդութեան ան-
կողնի մէջ ստացայ՝ պատասխանեցի, բայց այնուհե-
տեւ՝ չգիտեմ ինչ պատճառով քեզմէ ոեւէ նամակ չըս-
տացայ: Սակայն ես դարձեալ հետաքրքրուելով քու
վիճակիդ՝ Ժընեւէն հասցէդ բերել տուի՝ եւ ահա այս
նամակը կը գրեմ: Եթէ այս անգամ ալ չպատասխանես,
պապայիդ...

Ինչպէս քեզ գրած էի, երկրի եւ այլ գործերը չյա-
ջողելէ յետոյ, հօրս դիմումներ ընելով վերջապէս յա-
ջողեցայ հաւանութիւնը առնել՝ ուսանելու համար Եւ-
րոպա գալու: Առ այժմ հետեւելիք ճիւղս դեռ չեմ
ընտրած՝ բայց աչքի առջեւ ունիմ անասնաբուժութիւ-
նը. եւ որովհետեւ այս ճիւղին յարմար վարժարան
չկայ հոս, ամիսէ մը Գերմանիա պիտի անցնիմ:

Քու վիճակիդ մասին տեղեկութիւններ առնել կը
փափաքեմ, ուստի կը խնդրեմ որ ընդարձակ նամակով
մը փափաքս գոհացնես:

Շատ հետաքրքիր եմ նոյնպէս Ամերիկայի հայ
գաղթականութեան եւ մասնաւորապէս յեղ. տարրին
գործունէութեան մասին ստոյգ տեղեկութիւններ ստա-
նալու. թերթերը շատ վարդազոյն կը ներկայացնեն՝
բայց կը վախնամ թէ՛ տաւուրին առածին պէս չըլլայ:
Թերեւս մինչեւ նամակիդ հոս հասնիլը ես մեկնած
կ'ըլլամ՝ բայց չի կորսուիր. ամէն պարագայի մէջ շուտ
պատասխանես լաւ կը լինի:

Սիրալիբ համբոյրներով
ՄԻՍԱԳ

Missak Kouyoumdjian
11, Universitatstrasse IV
(Suisse) Zurich

Տակը անլցուած՝
Համբոյրներ՝
ԱՂԱՄԻ

4 99 — 28

ԱՐՄԵՆ ԳԱՐՈՑԻ ՆԱՄԱԿԸ

Փրնեւ, 8 Նոյեմբեր 99

Սիրելի Մարթին,

Շիջակոյից գրած նամակը ստացայ, կը շտապեմ պատասխանել եւ լուսանկարին համար տուած խօսքս կատարել: Վա՛յ թէ այս անգամ էլ չուղարկէի. ով գիտէ որչափ պիտի զիւժիւր զիաֆիար ընէիր իմ հասցէին:

Ներսիսեանից մի նամակ ստացայ այս օրերս. իւր գործից քաշուելուն համար երկարօրէն գրած է, պիտի պատասխանեմ իրեն եւ մի գուցէ կարողանամ իրեն համոզել, որ իրեն բերած փաստերը շատ էլ իրաւացի չեն:

Ամիս ու կէսէն աւելի է որ Գերմանիայից վերադարձեր եմ եւ քննութիւններս յաջողութեամբ անցուցի: Իսկ դու ինչ հալի հետ ես, կուտուզ Մարթինս. կը գրես թէ արդէն մի կօշիկի գործարանում գործ գտեր ես. արդեօք ունի՞ր բաւական ազատ ժամանակ քո այն ծրագիրը իրագործելու համար: Յարմենայն դէպս պապա Մարթինը լինելը չես մոռնար. ինձ կը թուի թէ այդ միջոցը մի քիչ դժուար պիտի լինի մի գործնական բան ձեռնարկել. անիրաւ երկիրը այնչափ հեռու է մայր երկրէն եւ այնչափ տարբեր պայմաններում, որ շատ էլ անբնական չէ տեսնել՝ ամերիկացի հայ յեղափոխական տարրը միայն ճառերով գործ կրնայ տանել: Այս խօսքերս թող քեզ չյուսահատեցնեն. մի քիչ համբերութեամբ եւ մանաւանդ ընկերների լաւ ընտրութեամբ միշտ կարելի է հասնիլ նպատակի:

Մարթին, քեզմէ մի բան կ'ուզէի խնդրել. արդեօք չէ՞ր կարող այդտեղ քո եղած տեղումդ ինձ ամերիկական հպատակ լինել տալ եւ ինձ համար մի փաստառ հանել: Ինձ համար որ կ'ըսեմ, իմ ճիշդ անունովս ու մականունովս կ'ուզեմ ըսել. թէ կ'ուզես ես քեզ կ'ուղարկեմ իմ ունեցած թղթերս եւ պէտք եղած տեղեկութիւնները: Նաեւ մի հարցում. իմացիր թէ ինչ թղթեր կը պահանջեն, եւ երկրորդ ինչ ու ինչ բաներ կը գրեն անցադրին վրայ, օրինակ հասակը, մագերը, եւն., եւն., սոցա բոլոր մանրամասնութիւնները ինձ գրէ որ նրա համեմատ քեզ ինչ որ պէտք է ուղարկեմ: Մախքի մասին բնաւ մի մտածեր, ես այս տեղից մի կերպ կ'ուղարկեմ քեզ պէտք եղածը, միայն հոգ տանիր որ հպատակութեան թուղթը եւ անցադիրը բոլորովին կարգին լինին ինձ համար: Լեզուն էլ ոչինչ, ես արդէն այս օրերս պիտի սկսեմ անգլերէն դասեր առնել եւ կը յուսամ թէ շուտով պէտք եղածին չափ կը սովորիմ:

Քեզ տեսնեմ Մարթինս, թէ ինձ էլ եմքի չինես, աղա ես ու աղա:

Այսօրուայ համար այսչափ. կը խոստանամ շուտ շուտ գրել, եթէ դուն էլ չպապանձիս Ջաքարիայի պէս. ներփակ կ'ուղարկեմ լուսանկարս, բայց վզիդ պարտք կը դնեմ որ դուն էլ հանել տաս եւ ինձ ուղարկես:

Կարօտոյ Համբոյրներով
ԳԱՐՕ

Հասցէս միշտ նոյնն է.
G. Pasdermajian
à l'Université
Genève

4 99 — 29

ՄԻՍԱՔԻ (ԿԱՐԻՃ, ԱՌԱՆՁԱՐ) ՆԱՄԱԿԸ
ՄԱՐԹԻՆԻՆ

Յիւրիխ, 13 Նոյեմբեր, 1899

Սիրելի Մարթին,

Նոյ. 2 թուակիր նամակ մը գրած էի քեզ, զոր կը յուսամ թէ ստացած ես:

Այսօր ալ ուրախութեամբ ստացայ Հոկտ. 18 թուակիր առաջին նամակդ, զոր Աղեքսանդրիայէն հոս ղրկած էին:

Նամակդ սկսած ես ժրնեւ գտնուածդ միջոցին մեր մէջ փոխանակուած նամակներու մասին բացատրութիւններ տալով: Այդ խնդրի մասին չ'արժեք երկար ծանրանալ, քանի որ՝ թիւրիմացութեան տեղի տալիք որեւէ կարեւոր կէտ չկար մեր գրածներուն մէջ. ես ոչ մի ժամանակ դէմ չեմ եղած քու երկիր մտնալու դիտարութեանդ, եւ ես ալ երբեք երկիր չ'մտնալու վերջնական որոշում չեմ տուած: Լոկ իրերու ներկայ անորոշ դրութիւնն էր որ ինչպէս քեզ Ամերիկա, այնպէս ալ զիս հոս նետեց: Ո՞վ գիտէ թերեւս այս առժամանակեայ ձեռնպահութիւնը ունենայ իր օգուտները ապագայի գործունէութեան համար:

Շատ ուրախ եմ որ Ամերիկայի մէջ գործելու պարտաւ հոգ գտած էք. ինչպէս անցեալ նամակիս մէջ ալ գրած եմ՝ անցեալի յուսախարութիւնը զիս այնքան յոռետես ըրած է, որ թերթերու մէջ Ամերիկայի հայ գաղթականութեան արտակարգ շարժման ու գործունէութեան լուրերը թմրուկի առածին կասկածը կը ներշնչէին ինձի: Ուստի Ձեր նամակը կրկին ուրախութիւն պատճառեց ինձ՝ այս կասկածը փարատելով: Քանի որ նպաստաւոր միջավայր եւ դիւրութիւններ ունիս՝ կրցածիդ չափ աշխատէ, արդէն գիտես արտասահմանի գործունէութեան համար այն ամենայնորժամ եւ օգտակար ծրագիրը, որ Եգիպտոսի մէջ մեր

երկար խօսակցութեանց նիւթ եղած է: Գտնել մաքուր եւ ընդունակ տղաք, քիչ շատ պատրաստել զանոնք եւ ղրկել իրենց հայրենիքները՝ իրենց կարողութիւններուն համեմատ գծուած գործունէութեան որոշ ծրագիրներով, որով քիչ-քիչ կազմակերպական ընդհանուր ցանց մը կը կազմուի: Իսկ եթէ կարելի է դրամական եւ բարոյական աւելի մեծ ոյժեր պատրաստել, այն ատեն աւելի լաւ. ո՞վ գիտէ թերեւս ակնկալուածէն շատ աւելի շուտ ներկայանայ այն օրը՝ երբ դարձեալ միասին ասպարէզ կ'իջնենք՝ իրագործելու այն ծրագիրները, զորոնք միասին գծեցինք: Չկարծես երբեք թէ Եւրոպա գալով մոռցանք մեր ցաւերն ու պարտքերը, ընդհակառակը կրնամ ըսել թէ հոս աւելի խոր կը զգանք ազգային ցաւը՝ եւ աւելի սաստիկ կը տանջէ մեզ որեւէ կերպով օգտակար լինելու տեսլը: Եթէ ողջ մնացինք՝ ապագան ամէն բան կը պարզէ:

Բօրիսի(1) հետ մեր տեսակցութեան մասին տեղեկութիւն կ'ուզես: Բօրիսը մեր մեկնելէն բաւական առաջ Եգիպտոս հասնելով, երկար տեսակցելու առիթ ունեցանք: Ամէն մանրամասնութիւն երկարօրէն գրել աւելորդ է՝ քանի որ արդէն ինքնին կրնաք գուշակել զանոնք՝ խնդրին մօտէն տեղեկ լինելով: Միայն ինչ որ իր մասին կրնամ ըսել՝ սա՛ է թէ մեր տեսած բոլոր գործիչներուն մէջ անհամեմատ կերպով լաւն է՝ մանաւանդ իր մտածելու մեծ կարողութեամբը: Թէեւ ինչ-ինչ կէտերու մէջ զաղափարի տարբերութիւն ունեցանք՝ բայց իրեն հետ կարելի էր կատարելապէս համաձայնիլ: Եթէ աւելի առաջ եկած լինէր, շատ հաւանական է որ մենք երկիր մտած կը լինէինք. ինքն ալ այս բանը հասկնալով՝ շատ ցաւեցաւ որ ժամանակին չէր եկած: Հիմա թէ՛ տեղական գործերու եւ թէ՛ միւս մարմինի(2) գործերուն կը հսկէ. Վահանը հեռացաւ, այժմ ժրնեւ է:

Հոս գալու ատեն ժրնեւէն անցանք՝ բայց օր մը միայն մնալով շատ երկար չկրցանք տեսակցիլ եւ արդէն երկար տեսակցութիւն մըն ալ անօգուտ էր, քանի որ առայժմ ձեռքս ելած է երկիր մտնալու պատահուութիւնը:

Ձեւ տեղեկացուցած թէ Ամերիկայի մէջ մերօնք աւելի զօրաւոր են թէ՞ Մարտականները: Նադարէլի Հնչակն ալ յարութիւն առաւ, տեսնենք ան ինչ պիտի ընէ: Կը խնդրեմ որ յաճախ գրելով ընդարձակ տեղեկութիւններու հետ տեղական թերթերէն ալ ղրկէք: Նոյ. 2 թուականաւ Դաւիթին ալ նամակ գրած եմ՝ իր նախապէս տուած (Փէհլիվանեանի) հասցէին. չգիտեմ ստացա՞ւ թէ ոչ:

Համբոյրներ
ՄԻՍԱՔ

Հասցէս՝
Missak Kouyoumdjian
11, Universitatstrasse IV
(Suisse) Zurich

Յ. Գ.— Ըստ աստղագիտական գուշակութեան այս գիշեր աշխարհը պիտի կործանէր՝ բայց փառք Աստուծոյ բան մը չպատահեցաւ եւ ողջ առողջ արթնացանք: Իբր ուրախալի տարօրինակութիւն մը մոռցայ հաղորդելու քեզ որ Աւօն (Նազաշեանը) հիմա Գահիրէի կոմիտէին անդամ է, այս փոփոխութեան պատճառ եղած է ժրնեւէն Արմէն Գարոյի իրեն գրած յանդիմանական մէկ նամակը: Լուսանկարչութիւնը ձգած է եւ կ'աշխատակցի «Արշալոյս» թերթին, որով բաւական օգտակար կ'ըլլայ, թերթը թէեւ նոր բայց շատ կը կարդացուի՝ ես ալ երբեմն կը գրեմ «Առանձաք» ստորագրութեամբ: Մի մոռնար հասկնալ եւ գրել թէ «Շարժում»ի մէջ գրածներս ինչ ընդունելութիւն գրտած են Ամերիկա:

ՆՈՅՆ

(1) Բօրիս, — Սմբատ Խաչատուրեան, անդամ Արեւմտեան Բիւրոյի:

(2) Կ'ակնարկուի, ամենայն հաւանականութեամբ, Կիլիկիայ Պատասխանատու Մարմին:

4 99 — 30

ԱՂԱՍԵՐԻ ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ

14 Նոյեմբեր 99, Յիւրիխ

Սիրելի Մարթին,

Աղեքսանդրիա ղրկած նամակներդ հոս ստացանք՝ մօրեղբայրս դրամը զանձած է:

Երկու ամիս է որ հոս եկած եմ Միսաքին հետ, ուսանելու նպատակով, թէեւ դեռ չեմ որոշած վերջնականապէս թէ ինչի՞ պիտի հետեւիմ:

Եգիպտոսի վրայ ուզած էիր որ գրեմ. կ'երեւայ դեռ յոյսդ չես կտրեր Ֆէլլահներու երկրէն: Վահանը մօտաւորապէս երեք ամիս է որ մեկնած է, հիմա ժրնեւ կը գտնուի. Բօրիսը Աղեքսանդրիա է, բայց մինչեւ մեր Եգիպտոսէն ելլալը գործի մը չէր սկսած. կ'ուզէր մէկ-երկու ամիս սպասել, միջավայրը ճանչնալ ու յետոյ սկսիլ գործի. այնպէս որ քու մեկնած ժամանակդ ինչ որ էր Եգիպտոսը նոյնն էր նաեւ մեր մեկնած ժամանակը: Բօրիսի կարողութիւնը անվիճելի է. տեսած գործիչներու մէջ ամենէն կարողը զայն գտած եմ, բայց չեմ կարծեր որ եգիպտացիները փոխուին անոր ազդեցութեամբ. որովհետեւ բոլորովին Ֆէլլահ են դարձեր արդէն անոնք. Աստուծոյ հրեշտակներն ալ բան մը չեն կրնար ընել. շատ լաւ կը ճանչնաս կոմիտէի անդամներն ալ, կոմիտէի անդամ չեղողներն ալ. կը կարծեմ որ անոնք փոփոխութիւն մը կրնն. ես չեմ հաւատար: Խոսքերու մէջ միայն աղաքներ կը գտնուին. այդ աղաքները պատրաստելով երկիր ղրկելը ամենէն յաջողը կրնայ ըլլալ Եգիպտոսի համար: Ըսած-

ներս Աղեքսանդրիայի կը վերաբերին. Գահիրէ չեմ գիտեր. միայն մեկնելէ առաջ իմացանք որ Գահիրէի կոմիտէն վերակազմուեր է ու սկսեր է աշխատիլ:

Երկիր մտնալու համար երէկ իրիկուն Միսաքին հետ բաւական խօսեցանք. իր քնդի գրած նամակէն արդէն կը հասկնաս թէ երկիր մտնալու ծրագրէն ետ չէ կեցած, այլ քիչ մը յետաձգած: Իսկ ես, այդ բանը չեմ կրնար ընել այսօր. ինչ պատճառով որ ալ բացատրեմ այդ անկարելիութիւնը ինծի համար, նշանակութիւն չունենար քնդի համար. կամքի տկարութիւն պիտի ըսես. կ'ընդունիմ. ինչ պատճառներ որ այսօր իբրեւ արդէլ կը տեսնամ՝ անցեալին մէջ անշուշտ անոնց նման պատճառներ կրնային գտնուիլ, բայց այն ժամանակուան կամքի զօրութիւնս զօրաւոր էր եւ արգելքները իրենց ուժը կը կորսնցնէին, բայց այսօր այդ ուժը չկայ մէջս, կը խոստովանիմ այդ:

Ուսանողական շրջան մը պիտի անցընեմ, թերեւս հոս, բայց կը մտածեմ հետեւիլ այն տեսակ ճիւղի, որ անպատճառ 4-5 տարի չպահանջէ, այլ այնպէս մը ըլլայ որ ուզած ժամանակս, մէկ կամ երկու տարի վերջը ձգել կարողանամ, առանց վնաս մը կրելու:

Հասցէս Միսաքի տուածն է:
Գուկը
Յ. ԱՂԱՍԷՐ

4 99 — 31

ԿԱՐԻՃԻ (ՄԻՍԱՔ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ) ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ

Սիրելի Մարթին,

Նոյ. 14 թուակիր նամակդ այսօր ստացայ. մեր նախորդ նամակները անշուշտ ստացած ես:

Շատ ուրախ եմ որ Ամերիկայի մէջ թէ՛ անձնական եւ թէ՛ յեղափոխական գործով յաջողութիւն գտած էք: Անշուշտ չես զլանար մեզի ալ տեղեկութիւններ տալ ապագային ունենալիք յաջողութիւններուդ եւ այլ պարագաներու մասին:

Թերթ ուզած էի, եթէ կրնաս «Հայրենիք» և «Ձայն Հայրենաց» ղրկել շատ շնորհակալ կ'ըլլանք:

Եթէ «Անահիտ» կը կարդաք, կը տեսնէք որ հոս-հոսապես Զօպանեան կը շարունակէ իր վայրահաշու-թիւնները յեղափոխականներու դէմ: Ու ցաւալի է որ անոր զբաղմունքն կարեւորութիւն տուողներ ալ կան. ուստի կարելի եղածին չափ պէտք է աշխատիլ՝ այդ կարգի իմաստականներու ազդեցութիւնը ոչնչացնելու. երէկ ընդարձակ յօդուած մը ղրկեցի «Շարժում»ին, որու մէջ փաստերու հիման վրայ զորս դու պատուիրեցեր վերէն վար լուսցի Զօպանեանը: Եթէ հոն «Շարժում» չի ստացուիր՝ անպատճառ ուրիշ տեղէ մը ձեռք ձգելով կարդա այդ յօդուածս, ու կարծիքդ յայտնէ. նոյնպէս եւ ուրիշ ընթերցողներու վրայ ըրած ազդե-

ցութիւնը: «Դորշակ» ալ յօդուածներու լաւ շարք մը կը հրատարակէ «Ամբոխային տրամաբանութիւն», որ լաւ կ'ազդէ ընթերցողներուն վրայ. ինչպէս նաեւ Ղարիբի թերթօնները: Որչափ ալ թղթի գործով զբաղելու ժամանակ ըլլայ, ժողովուրդին մէջ այն տեսակ թիւրիմացութիւններ մտած են, որ զանոնք զրելով միայն կարելի է ջնջել. գրիչը դեռ շատ գործ կրնայ ընել:

Հ. Ամերիկայի համար ժընեւէն ղրկուած ներկայացուցիչին ով ըլլալը չես գրած, երբ յայտնուի անշուշտ կը հաղորդես:

Այս անգամ երկար գրելու նիւթ ու առիթ չկայ. երբ պատասխանդ ստանամ դարձեալ կը գրեմ:

Հասցէս այնպէս մը գրեր ես, որ ճիշդ մեր փողոցի եօյուշին ձեռն է առեր:

Համբոյրներով
ԿԱՐԻՃ(1)

28 Նոյ. 99, Յիւրիի

(1) Ձեռագրի կատարեալ Յայնուքիմը եւ Միսաքի մախորդ մամակներու եղած անարկուսիմը անգամ մը ես ցոյց կու տամ՝ որ կարիքը պարզապէս յեղափոխական ծածկանումն է Միսաք Գույումեանին, գրական անունով՝ Ասամար (տեսնիլ 499 — 20, 8. Գ.):

4 99 — 32

ԱՄԵՐԻԿԱՅԻ Կ. Կ. Ի ՆԱՄԱԿԸ

Box 283, Prov. R. I. Դեկտ. 14, 99

Սիրելի Մարթին,

Գարթը ստացանք: Շատ ուրախ պիտի ըլլայի՞ք եթէ կարելի ըլլար չու ներկայութիւնդ Պատգամաւորական ժողովին իրագործել: Կը սպասենք որ դէժ Զի անձնական փորձառութիւններէն կարծիքներ ու թելադրութիւններ ղրկէք ժողովին, եւ վստահ ենք թէ չպիտի ուշանաք ղրկելու: Ուրիշ բան մը: Մենք կը ջանանք զԶեզ Կեդր. Կոմիտէի անդամ ընտրել տալ անպատճառ, բայց չենք գիտեր թէ այս կողմերը գալ կը հաճի՞ք: Անշուշտ գործ մը կրնանք գտնել ձեզի համար, միայն թէ դուք այս կողմերը գաք, եւ կը խորհնէք թէ օգտակար պիտի ըլլայ Ձեր ներկայութիւնը մեր կողմերը: Ի՞նչ է կարծիքդ, քանի որ Ամերիկա կը մնաս, չե՞ս ուզեր Կեդր. Կոմիտէի անդամ ըլլալ, որով աւելի գործօն դեր մը կատարած կ'ըլլաս: Այս նամակը անելէ վերջ փութա պատասխանել թէ պիտի ընդունի՞ս Կեդր. Կոմիտէի անդամութիւնը, որ ըստ այնմ շարժիք: Ձեր տեղեկագիրը, գէնքի դրամը եւն. դեռ չստացանք, անշուշտ կը ղրկէք շուտով:

Բարեւներով
Հ. Յ. Դ. ԱՄ. ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

4 99 — 33

ԵՂՎԱՐԴԻ ՆԱՄԱԿԸ

Իզմիր, 11/29 Դեկտ. 1899

Սիրելիդ իմ Մարթին,

Երէկ ստացայ Նոյ. 26 թուակիրդ: Կը տեսնես որ ուշ հասած է ինձ: Չլինի մեղադրես զիս թէ ուշ կը պատասխանեմ:

Քո գրածները սիրտս ուրախութեամբ լեցուց, կարծես թէ բոլորովին մեռած էի եւ նոր ոգի, նոր սիրտ եկաւ վրաս, որովհետեւ ընկերներու — այն ալ լաւ ընկերներու — պէտքը մեզ համար չափազանց զգալի եղած է ժամանակէ մը ի վեր:

Այժմ առաջին առթիւ կու գամ ըսելու, որ ատոնցմէ 3ը (Արմենակը(1) եւ երկու դերձակ(1)ները) կարող էք առանց վարանման ֆարսայ(1) հանել: Միայն թէ մօտերը դէժ 75 ոսկոյ չափ դրամ ըլլայ հոս ելլելներէն վերջ, որով կարենան ազատ ու անկախ գործ բռնել եւ հաստատուիլ: Եթէ իրենց դրամը այդքան չի հասնիր, կրնաք հայթայթել ատկէ: Երկրորդ, տեղական անցագիր(1) անհրաժեշտ է, որով նոյնիսկ կրնան բոլորովին ազատ գալ հոս. ըստ իս ատիկա միակ եւ լաւ միջոց մըն է ապահովութեան(1) համար հետադային: Այս առթիւ կրկին եզրապահ(1) ալ կը գրեմ, որ եթէ իրենց նախկին միջոցը կը պահեն անմիջապէս իմացնեն քեզ: Այդ միջոցը գիտես արդէն կարիքին(1) առաջարկուեցաւ ժամանակ մը: Նաեւ հոստեղի մակոյկավարը(1) այժմ մալի(1) մէջ կ'աշխատի. ուստի, վաղուցն սկըսեալ կ'աշխատիմ ատկէ ալ միջոց մը ճարելու մասին, եթէ հնար լինի անմիջապէս այդ բանը կը գրեմ քեզ: Դուք ջանալու էք որ ատոնք Բարեկենդանէն մէկ երկու շաբաթ առաջ հոս հասնին անպատճառ:

Այստեղ ատոնց համար շատ հող կայ մշակելու, եթէ միայն կարենան իրենց առանձին անկախ դիրքերը բռնել:

Այվազեանին հասցէն S. Ayvasian Sofia/Bulgarie ես կը գրեմ չոյն յանձնարարածները, ինչպէս որ ժամանակին ալ գրած եմ չոյն ինձ դրածը: Սակայն ինքը համակիր չէ Շար.ին(2) և չ'ուզեր կարծեմ, որ անոր մէջ լոյս տեսնէ Մուրատի կենսագրութիւնը: Հակառակութեան պատճառը թէեւ ինձ յայտնած չէ, սակայն թերեւս գիտես որ դեռ նոր հրատարակուելուն ինքը ինձ գրած էր քանի մը աննպաստ տողեր Վարդայի(1) մասին:

Իմ լուսանկարս ես հոս հանած չունիմ եւ եթէ ասկէ մեկնելու(1) լինեմ, այն ատեն կը հանեմ կը ղրկեմ: Ուզած նամակներուդ մասին ես անպատճառ չէի ընդդիմացած որ ինձ մօտ մնայ. քեզի գրած էի որ եթէ ուզես կը ղրկեմ. սակայն իմ կարծիքով՝ եթէ ատանկ բաները մեր մտքին ու սրտին մէջ մնալով մեզ դէպի

ուղիղին առաջնորդեն միակ նպաստաւորն է քան թէ գրութիւնները պահելը. բայց քանի որ կ'ուզես ահա կը ղրկեմ:

Ես կը զարմանամ որ մենք իրար չենք կրնար հասկընալ, բայց վերջապէս չեմ ուզեր քրքրել հին հարցեր, որոնք աւելի կրնան ընկերականութեան կապերը թուլացնել քան թէ ամրացնել եւ օգուտ առաջացնել. թերեւս կու գայ օր մը, որ աւելի լաւ կը հասկնանք զիրար:

Այդտեղ եկողը ոչ թէ վահանը այլ վահան(3) է, որպէս ինձ կ'իմացնեն այս անգամ Խմբ.էն չոյն նամակին հետ: Այս անձը միակ ու յարմարն է այդտեղի եւ նոյն իսկ ամէն տեղի ու ամէն գործի համար: Իր զարգացումը թէ՛ գործնական փորձառութեամբ եւ թէ՛ հայկական անցեալ ու ներկայ կեանքով օժտուած է. դժբախտաբար այդպիսիք քիչ են մեր գործիչ ընկերներու շարքին մէջ. ահա ատոնց թիւն է որ պէտք է շատցնել...

Եկողները իրենց հետ թող բերեն երկուական լաւ ատրճանակներ, մէկ-մէկ փոքր և մէկ-մէկ մեծ. ատոնք հոս դուրս հանելը դժուարին չէ, երբ մանաւանդ հետագայ մասնաւոր նամակովս կ'իմացնեմ, թէ ի՞նչ միջոցով պէտք է հոս դուրս ելլեն(1). իսկ դրամի մասին ըսածս աչքի առաջ ունեցէք:

Համբոյրներով ձերդ
ԷԴ.

- (1) Ծածկագրով գրուած:
(2) Հաւանքեմ՝ «Շարժում»:
(3) Ա. Վասմեանը:

4 99 — 34

ԱՐՄԵՆԻԱՆ ԲԻՐՈՑԻ ՆԱՄԱԿԸ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ — 1890 — (Fédération Révolutionnaire Arménienne)

1898 ԱՐՄԵՆԻԱՆ ԲԻՐՈ ՁԵՆԵՆ, 29 Դեկտեմբեր 1899 Պարոն Մարթինին Շիքափօ

Ընկե՛ր, Ձեր նամակները իր ժամանակին ստացած ենք. չպատասխանելուս գլխաւոր պատճառը Վահագի դէպի Ամերիկա ճանապարհուելին էր, որ եւ հաւանականօրէն արդէն տեղ է հասեր եւ ուսոյնական ժողովին կը մասնակցի:

Ձեր ուղարկած 50 Ֆր. եւ անդրական լրագրիւն-
բու կտորները սաացանք: — 20 օրինակ «Իրօջակ»ի
փոխարէն այսուհետեւ 30 կ'ուղարկենք: — Իսկ ինչ կը
վերաբերի Ամերիկայի դաշնակցական կոմիտէներու
ընդհանուր գործունէութեանը եւ այլ կուսակցական եւ
յեղափոխական գործերին, այդ բոլորի մասին ի հարկէ
կը մտածէք մեր ընկեր Վահարի եւ կոմիտէներու փո-
խադարձ խորհրդակցութեամբ:

Սերորի մահը եւ այլ զինակիր խմբերու անակնկալ
ընդհարումները, հաւատացած ենք, եւ ձեզ վերայ շատ
վատ տպաւորութիւն թողուցին, սակայն ներկայ պա-
րագաններու մէջ զինակիր խմբերու անհրաժեշտութիւ-
նը միայն խաբարայ, կեղծաւոր կամ վախկոտ յեղա-
փոխականներն են որ կը յանդգնին հերքել, մեր կար-
ծիքով պէտք է հաշտուել իրականութեան հետ եւ աշ-
խատել աւելի յաջող եւ աւելի ապահով առաջ երթալ,
յեղափոխական փշոտ բայց միակ փրկող ճանապարհով:
— Մեր ընկերները թող երբեք չմոռնան, որ երբ մի
խումբ ընդհարման է հանդիպում, այդ չէ նշանակում
որ նա մի քանի անգամ դերը յաջողութեամբ չէ կատա-
րել, — նոյն դժի վրայ: Հակառակ դէպքում միայն ա-
պուշները կարող են շարունակ ձեռք չվերցնել մի մի-
ջոցից, որ միշտ կապուած է վտանգի հետ:

Ընկերական ջերմ բարեւանքով՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿ»Ի
ԱՐԵՒՄՏ. ԲԻՒՐՕ

4 00 — 1

ԱՇՈՏ-ԵՐԿԱՔԻ ՆԱՄԱԿԸ

995 Parker St.
Raxbury (Mass.)

Յունվ. 2, 1900

Սիրելի Մարթին,

Իրօք որ պէտք էր Պատգ. Ժողովէն անմիջապէս
յետոյ գրէի քեզ. սակայն անկէ ի վեր զբաղած եմ ե-
ղեր Պ. Ա. Վոսմեան (Ժընեւէն եկած մեր ընկերը) հոս
հոն տանիլ եւ ծանօթացնել:

Պատգ. Ժողովը բաւական լուրջ խնդիրներու ձեռք
զարկաւ. անոնց մասին կ'իմանաք, երբ ատենագրու-
թիւնը ձեզ հասնի: Ձեր զրկած խնդիրներէն զինուորա-
կան կրթութեան խնդիրը ընդհանուր համաձայնու-
թեամբ ընդունուեցաւ: Ձանքեր պիտի ըլլան աւելի
Թողանթաձիգ խումբերու մէջ հայեր մտցունել: Այդ
մասին արդէն ձեռնարկած ենք դիւրութիւններ ձեռք
բերելու: Կարելոր որոշում մըն ալ մեզ ամերիկացի-
ներուն ծանօթացնելն է. այս մասին ալ Պ. Վոսմեանի
հետ հոս կ'աշխատինք: Եթէ կարողանանք մի քիչ հաս-
տատուն հող գտնել մեր ոտքը դնելու (եթէ համակիր-

ներու չըլան մը կրնանք կազմել) այն ատեն մտադիր
ենք ջուպացիներուն նման պաշտօնական երեւոյթ տալ
մեր կազմակերպութեան: Թերեւս դուք հող կրնաք
բան մը ընել այս տեսակէտէ, այսինքն հայ վաճառա-
կաններու, բժիշկներու, ուսուցիչներու եւ ազդեցիկ ա-
մերիկացիներու միջոցով ամերիկացիներէ դրամական
չըլան մը կազմել:

Ժողովը նաեւ լաւ գտաւ մէկ քանի կոմիտէներէ
եկած այն թելադրութիւնը, թէ նուագահանդէսներ,
խնճոյքներ, պարահանդէսներ եւն. սարքուին, ի նը-
պաստ Հ. Յ. Դաշնակցութեան: Ձանացէք այդ մասին
ալ:

Պատիկ բայց կարելոր խնդիր մըն ալ. լսեցինք թէ
Արսէն Վարդ. Վեհունի Շիքակոյէն ընտրուած է իբր
տեղական հովիւ: Այդ պորտաբոյժը ո'ւր գացած է
խառնակութիւն ձգած է եւ ժողովրդին շատ վնասա-
կար եղած. արդ ամէն ջանք մի խնայէք ժողովուրդը
համոզելու որ այդ ճիշակերը հող ոտք չկոխէ: Աւելի
լաւն ու գործունեան կրնաք ունենալ. նաեւ թէ Արսէն
վարդապետ եւ ոչ մի տեսակէտէ օգտակար կրնայ ըլ-
լալ: Կը յուսամ թէ այս մասին ալ հող պիտի տանիք:

Բարեւանքով ձերդ՝
Ա. Ս. ԼԵՒՈՆԵԱՆ

Յ. Գ.— Պրն. Վոսմեան ըսի առանց ձեզ իմացու-
նելու թէ ո'վ է. անտարակոյս կը յիշէք Վահարը (Պրժ-
բագրութեան անդամ). ինքն իսկ է որ հոս Վոսմեան
անունով կը ճանչցուի:

ՆՈՅՆ

4 00 — 2

ԷԴՎԱՐԴԻ ՆԱՄԱԿԸ

Ոսկ.(1) 21/2 Յունուար 1900

Սիրելի իմ Մարթին,

Անցեալ օր նամակիդ պատասխանելով, քանի մը
կէտերը բաց էի թողած, հետագայ նամակովս լրացնե-
լու մտօք: Այսօր առիթը ներկայացած է գրելու ար-
դէն:

Ինչպէս որ ըսած էի, տղայոց երեքը (Արմենակը և
Երկու դերակները)(2), կարող էք առանց ժամանակ
կորսնցնելու ցամաքայ համը Մարսէլի գծով(2). միայն
թէ ո'ր օր, ո'ր ցաւով մեկնելիս(2) պէտք է մէկ փոքր
առաջ իմացնեն մեզ:

Այստեղ դուրս համելու(2) մեր միջոցները(2) ա-
պահով են. կարող ենք առանց մաքսը հարցաքննուելու
դուրս բերել(2). բարօրան(2) է հետեւեալը.—

Երբ ցաւը խարսխէ հոս(2), իրենք ցաւի տալի-
տակամածիս(2) վրայ մէկ-մէկ քաշկիմակ(2) ձեռքե-

րը, իրենց փալթներուն օճիքը(2) բռնած կը լինեն.
մեր մակոյկավարը վիզը կարմիր քաշկիմակ(2) մը կա-
պած(2) կը մօտենայ իրեց(2) եւ կ'ըսէ. «Կօշ»(2). Ի-
րենք կը պատասխանեն թէ «կ'ուզենք որ ցաւը(2)
տեսնենք» ու նա իր վզին կարմիր քաշկիմակ(2) կը
ցուցնէ, որով իրենք բոլորովին ապահով կը լինեն եւ
անոր խորհուրդը լսելով կը շարժին: Առ այս պարտք
կը համարենք ըսել որ իրենք հետ անկողնիս(2) եթէ ու-
նենան, քիչ մը դժուար պիտի ըլլայ դուրս բերել(2):
Ուստի կարող են երեքը(2) միայն մէկ անկողնիս(2) ու-
նենալ: Իսկ մէկ-մէկ պակած(2) ապահովարար կրնան
ունենալ՝ որ առանց դժուարութեան կարելի է զայն
բերել իրենց հետ: Այս պատմաները կէտ առ կէտ գրել
եւ իրեց(2) յանձնելու է որ չլինի թէ որեւէ չփոթու-
թիւն մը ծագի:

Անտարակոյս զանց ընելու չէ տեղւոյն քաղաքա-
ցիակամ փաստորթի քթերը(2) ունենալ. ատոնք ան-
հրաժեշտ են մանաւանդ հետագային: Իսկ մէկ-մէկ
ատրմանակ(2) փոքր եւ մէկ-մէկ ալ մեծ(2), 100ական
փամփուշտով, վրանիս առած(2) կրնան դուրս գալ(2).
գիտես որ հոս չկայ ատոնցմէ եւ շատ ալ կա-
րիք ունինք, մանաւանդ պիտի ունենանք աւելի վերջը:
— Դրամի մասին անցեալ գրածս նկատի ունեցէք, այդ
խնդիրը կարելոր է. եթէ երեքը(2) 100 ոս. ունենան լաւ
է, որով հոս(2) որեւէ նեղութիւն չեն կրեր:

Աւելորդ պիտի լինի ըսել, որ իրենց ցամաքորդու-
թիւնը(2) պէտք է ծածուկ մնայ ընդհանրապէս, իսկ
հոս գալերնիս(2) խիստ գաղտնի(2) մասնաւորապէս:
Եթէ պատահին այնպիսի հանդիպումներ, որոնց կեղ-
ծել(2) անկարելի ըլլայ, գէթ կրնան յայտնել որ իրենք
Եգիպտոս կամ Յուճաստան կ'երթան(2). մէկ խօսքով
չպէտք է գիտնայ թէ անոնք ուր եւ ինչ գործով կ'եր-
թան(2):

Եթէ ըլլան այնպիսի բաներ, որոնք կը խորհիք թէ
մեզ պէտք(2) կրնայ գալ եւ կրնան վրանիս առած
դուրս(2) բերել կրնաք զրկել(2):

Դուն չես իմացներ թէ մեր ցաւիս ընկերները(2)
ի՞նչ դրութեան մէջ են, ի՞նչ ընթացքի կը հետեւին,
օր. վախանը, Սելեանը(2), եւ այլն եւ կամ թէ Զէյ-
քունի հերոսները(2) ի՞նչ վարմունք ունին ընդհան-
րապէս եւ կամ մասնաւորապէս քեզ հետ: Ատոնց մա-
սին շատ հետաքրքիր եմ իմանալու. գրիր ինձ:

Եթէ հետագային գրելիք ունենամ կը գրեմ թէ ոչ
կը սպասեմ թէ պատասխանին շուտ. որքան շուտ՝ այն-
քան լաւ է, մի՛ մոռնար:

Համբոյրներով ջոյդ՝
ԷԴ.

- (1) Ոսկեհամբ (Իզմիր):
- (2) Ծածկագիր:
- (3) Ծածկագիր: Կ'ակնարկուի հաւաքուիս հնչակներուն:

4 00 — 3

ԱՌԱՆՁԱՐԻ (ԿԱՐԻՃ) ՆԱՄԱԿԸ

Ցիւրիս, 20 Յունուար 1900

Սիրելի Մարթին,

Յունուար 7 թուակիր նամակդ երէկ առտու ստա-
ցայ. շիտակը համը փայտցուցիր պատասխանդ այսչափ
ուշացնելով, բայց ինչ որ է, քանի որ բաւական գործ
տեսած ես, կը ներեմ այս անգամ, սակայն չկրկնուելու
պայմանով:

Ամերիկայի պատգամաւորական ժողովին զրկածդ
տեղեկագիրը կարգացի, շատ լաւ էր. ըստ իս պէտք է
մեծ կարեւորութիւն տալ զինամարզական խմբերու,
ասոնք ապագային շատ մեծ օգուտներ կրնան ունենալ:
Գիտես որ քաջասրտութիւնն ու տոկունութիւնը չէ որ
կը պակսին մեր ժողովուրդին, այլ գէնքի վարժութիւ-
նը, առանց որու անկարելի է իբր ապստամբ ժողո-
վուրդ՝ ընդհանուր մեծ կռիւներ մղել թշնամիին դէմ:
Այդ խմբերու կրթութիւնը աւելի լուրջ զարգացում մը
պիտի ստանար, եթէ կարենայինք տարին քանի մը ան-
գամ (կամ գէթ անգամ մը) զանազան քաղաքներու մէջ
գտնուած խմբերը մէկտեղ հաւաքելով՝ կարող ռազ-
մագէտի մը հսկողութեամբ պատերազմական ընդհա-
նուր վարժութիւններ ընել (գործընկակ, յարձակողա-
կան եւ պաշտպանողական կռիւներ եւն.), անշուշտ ե-
թէ տեղական կառավարութեան կողմէ այս մասին ո-
րեւէ արգելք մը չկայ եւ միեւնոյն ատեն եթէ խմբե-
րու անդամներուն անձնական գործերը կը ներեն: Նոյն-
պէս լաւ մտածած էք ապագային ընդհ. ապստամբու-
թեան մը միջոցին պէտք գալիք արհեստներ սորվելու
համար ընդունակ տղաք որոշել, ասոնց մէջ պէտք չէ
մոռնալ կարելոր արհեստ մըն ալ — զինագործութիւն:

Ես տեղեկութիւններ ուզած էի նաեւ «Մարտա-
կան»ներու մասին, բայց բան մը չես գրած, անոնք ի՞նչ
կ'ընեն, ուրիշ ձեռնարկութիւններ ալ ունին թէ ամ-
բող գործունէութիւններն Դաշնակցութեան դէմ հա-
ղելն է: Պուլկարիայի գէնքերու խնդրի մասին մենք ալ
դեռ որոշ ու մանրամասն տեղեկութիւններ չունինք,
բայց ինչպէս կ'իմանանք ցաւալի դէպքը ստոյգ է, կը
զարմանամ թէ ինչպէս այդչափ իրերը կը ծախուին ու
մերոնք բանը բանէն անցնելէ ետքը միայն լուր կ'ու-
նենան:

«Շարժում»ի մէջ Զօպանին ու ուրիշներու դէմ զը-
րածներս իրաւ որ օգուտ մը չունին՝ անոնց յարձա-
կումներուն առաջը առնելու, բայց ես ալ արդէն այդ
նպատակով չէ որ կը գրեմ: Կան շատ մը խնդրի ան-
տեղեկ միամիտներ, — ու ատոնք դժբախտաբար փոք-
րամասնութիւն մը չեն — որոնք այդ վտանգու գրու-
թիւնները կարգաւորով կ'ազդուին, եւ ահա այս ազդե-

Գործերը հոս բաւական լաւ կ'երթան, հակառակ Մարտականներու ի գործ դրած միջոցներուն:

Ուրախութեամբ լսեցի թէ հող ալ կ'աճիք: Պրն. Վոսման Նիւ Եորք է քանի մը գործեր կարգադրելու համար:

Բարեկներով ձերզ՝
Ա. Ս. ԼԵՒՈՆԵԱՆ

4 00 — 7

Ա. ՎՌԱՄԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Նիւ Եորք, 7 Մարտ 1900

Սիրելի Մարթին,

Նամակդ առի եւ կը փութամ պատասխանել, վախճանով որ չըլլայ թէ այս կամ այն գործի ետեւէն ինչ կած՝ նամակիդ կարեւոր կէտերը ուշանան գոհացում ստանալէ:

Նախ ըսեմ որ Ոսկ.(1) գնացող ընկերներու խնդրերը երեսի վրայ մնացած չէ. մէկը հոս էր, եկաւ յատկապէս տեսնուեցայ հետը, երկար խօսեցայ. մարդը արդէն պատրաստ է, բայց դժբախտաբար դրամը պատրաստ չէ: Մինչեւ Մայիս ժամանակ ուզեց իր առնելիքները հաւաքելու, եւ քիչ մըն ալ իր շահածէն պահելու: Գործի նոր սկսած է. բաւական աղէկ կը շահի: Կը մնայ երկրորդը — որ դրամ չունի, եւ որ միակ կարելի չէ ճամբայ հանել, որովհետեւ արհեստաւորը ինքը չէ, այլ առաջինն է, եւ ա՛ն՝ դրամ ալ չունի: Կը խորհիմ ասոր մասին:

Գալով ընդհանուր դիտողութեանդ թէ յուսահատուած ըլլամ հոսկէ մարդ հանելէ — չեմ յիշեր թէ ի՞նչ գրած եմ որ այդ տպաւորութիւնը գործած է վրադ: Ես դեռ յուսահատած չեմ, որովհետեւ շատ բան ալ չէի սպասեր Ամերիկայէն: Մարդիկ կան — ինկատի ունիմ — բայց պատրաստ ուժեր չեն. մէկէն ի մէկ ներս նետել կարելի չէ: Կը խորհիմ այնպիսի վայրեր մը պահել նախ՝ որ քիչ մը վարժուին գործնական յեղափոխութեան մէջ: Այդ կէտերը գտնելու է եւ հոն քշելու է նախ ժամանակ մը:

Կարիճի դալը ուրախացուց ինձի. անոր տեղը ես չէր (գիտես թէ ուր կը բաղձայինք որ երթար), բայց Յիւրիս մնալէն հազար անգամ նախամեծար կը սեպեմ որ հոս գար: Կիւլպիկեանները ազդեցիկ են. հոս կրնայ եթէ անոր վրայ ազդել — դրամական չըլլան մը քեզի: Անկէ զատ կրնայ օգտակար ըլլալ երբ յաջողիք հայ—ամերիկեան յանձնաժողով մը կազմել հայկական խնդիրները յուզելու եւ կամ երբ փորձենք ամերիկացիներէն դրամ հաւաքելու Դաշնակցութեան համար (այս մասին առայժմ լուռութիւն պահէ):

Ձեր տեղական գործերու մասին վհատած կը խօսիս: Քիչ մը կը հասկնամ պատճառները: Ընտրանօք ներս առէք ՆՌՐ ընկերներ, պատահածը մի խօթէք: Ձէզոքանալու ժամանակը չէ. համբերութեամբ գործէ, անկեղծ ու գործօն տարրերը աւելցուր, միւսները ինչնին կը ձգեն կ'ելլան:

Էտ.ի(2) նամակը ներփակ ետ կը դարձնեմ: Դեռ ես ալ չկրցայ գրել իրեն: Նախորդ անգամ գրածներս հարկաւ հաղորդեցիք իրեն: Հող տարէք որ «Հայրենիք»ը շատ տարածուի, նախ պրոպագանտայի համար, երկրորդ ծախքը գոցելու:

Քոյդ՝

Ա. ՎՌԱՄԵԱՆ

- (1) Ոսկեհամբ (Իզմիր):
- (2) Էզվարդի:

4 00 — 8

ԱՌԱՆՁԱՐԻ (ԿԱՐԻՃ) ՆԱՄԱԿԸ

Տիւրիս, 15 Մարտ 1900

Սիրելի Մարթին,

Փետր. 20 թուակիր նամակդ ստացայ: Հաղորդած տեղեկութիւններուդ եւ մանաւանդ Ամերիկայի պատգմ. ժողովի որոշումներուն շատ ուրախ եմ: Անշուշտ հետզհետէ մեզ կը հաղորդես նաեւ այդ որոշումներուն գործադրութեան մանրամասնութիւնները:

Բայց մասնաւոր գոհունակութիւն մը պատճառեց ինձ՝ երկիր երթալու որոշում տուողներու մասին հաղորդածդ լուրը: Այս շարժումին պէտք է ոյժ տալ: Երէկ Աղեքսանդրիայէն Գալֆայէն նամակ առի. երկրի զանազան կէտերու մասին շատ յուսատու լուրեր կը հաղորդէ, ամէն տեղ ժողովուրդը ինքնաբերաբար կը զինուի, կը կազմակերպուի: Շատ միթարական է մանաւանդ Կեսարիոյ կողմերու կացութիւնը, երիտասարդութիւնը տենդոտ գործունէութեան մը սկսած է, խումբեր կազմուած են, շարունակ զենք կը գնեն: Սուկայն ինչ օգուտ որ չկան կարող զինավարժներ, որոնք կարողանան այդ տրամադրութենէն օգտուելով, եղած ոյժերը միացնելով որոշ ծրագրի մը շուրջը զօրաւոր կազմակերպութիւն մը գոյացնեն: Թանկագին առիթ մըն է որ ձեռքէ կը փախցուի. եթէ այս անգամ ալ չկրնանք մեր ոյժերէն օգտուելով լուրջ գործ մը պատաստել, իմ կարծիքով ա՛լ կորած ենք: Ճշմարիտ սիրելիս, մարդու սիրտ կ'արիւնի, երբ կը տեսնէ որ երկրի ժողովուրդը զինք չըջապատող դժոխային պայման-

ներու մէջ գործելու, շարժելու պատրաստակամութիւն կը յայտնէ եւ մեր արտասահմանի հայութիւնը, զարգացած երիտասարդութիւնը մանաւանդ չ'ուզեր օգնութեան ձեռք կարկառել անոնց: Գիտես որ Ոսկեհանքէն տղայ մը զրկուած էր ծննդավայրս, հիմա յարաբերութիւնները խզուելուն պատճառով ոսկեհանքիք ստիպուած են ետ կանչել այդ տղան: Ի՞նչ պէտք է ընել չեմ գիտեր, խեղճ Դաշնակցութենէն ամէն բան պահանջելու իրաւունք չունինք. անոր ոյժերը հազիւ կ'օգտեն միւս կէտերուն. մենք տաճկահայ երիտասարդներս պէտք է մտածենք այս բաները եւ միջոց մը խորհինք. մեր զարգացած դասակարգը, հոստոններու զգուելի խմբակը բարոյապէս մեռած է մեզի համար, գործը կը մնայ դարձեալ զաւառացի համեստ տղայոց:

Ձե՛ս կրնար այս կէտերը բացատրելով ու պարզելով տեղւոյդ պարտաճանաչ երիտասարդութեան, գործիչներ ճարել, Կեսարիոյ, Սերաստիայի, Եոզկաթի, Տիգրանակերտի եւ այլ տեղերու համար: Այս կէտերու վրայ գործի հիմքը արդէն դրուած է, կարող ոյժեր կը պահանջուին ղեկավարելու համար: Այդ կողմերը չկա՞ն արդեօք կեսարացիներ, որոնք յօժարութիւն ունենան երկիր մտնելով գործելու: Այս խնդիրը Վահագնի ալ յայտնէ եւ աշխատեցէք մի կերպ կարգադրել. եթէ Ամերիկա չգտնուի այդպիսի տղաք, ուրիշ տեղեր բնաւ չեն գտնուիր: Սուկայն այս պաշտօնները պէտք է յանձնել որոշ չափով պատրաստութիւն, աշակերտութիւն ու խորհուրդ կարողութիւն ունեցող տղայոց, հակառակ պարագային աւելի աղիտալի կը լինի: Այս մասին քու պատասխանիդ կը սպասեմ. Գալֆան համբոյրներ զրկած էր քեզ:

Հօրմէս պատասխան առի, կ'ուզէ որ հոս մնալով ընթացքս աւարտեմ: Առ այժմ մտադիր եմ բնական դիտութիւններու հետեւիլ: Բայց չիտակը հայրենիքին այս լքուած վիճակը ինձ հանգստութիւն չի տար, միւս կողմէ ներկայ պարագաներու մէջ անկարելի է ինձ յայտնապէս երկիր մտնել. չգիտեմ ի՞նչ ընել: Դուն հող երկար պիտի մնա՞ս, ըստ իս լաւ կ'ընես, եթէ շուտով երկիր վերադառնաս:

«Հայրենիք»ները ստացայ: Բազրատունիդ ալ երկար նամակ մը գրած էր ինձ, բայց այսօր չպիտի կարենամ պատասխանել, բարեւ խօսէ:

«Շարժում»ին մէջ «Գորտ յեղափոխականները» վերնազրով յօդուածս անշուշտ կարդացիք, գրէ, թէ ի՞նչ տպաւորութիւն ըրաւ հող եւ եթէ «Ձայն Ստամբուլ»ն այդ մասին բան մը գրեց՝ խնդրեմ հաղորդէ ինձ:

Այս անգամ աւելի գրելու ժամանակ չունիմ. կը սպասեմ պատասխանիդ:

Սիրալիբ համբոյրներով
ԿԱՐԻՃ

4 00 — 9

Ա. ՎՌԱՄԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Նիւ Եորք, 31 Մարտ 1900

Սիրելի Մարթին,

Շատոնց է որ նամակդ առած եմ. թէեւ պատասխանը կ'ուշացնեմ քիչ մը, զբաղած ըլլալուս պատճառով, բայց գրածներուդ գոհացում տուած եմ:

Աւոյին աներձագին մասին յայտարարութիւնը նոյն շարժուն իսկ տրուեցաւ եւ ժամանակ մը դեռ կը շարունակուի: Աղեքսանդրիոյ դրադարանին կը զրկենք եղեր, բայց հասցէն ուղիղ չէր. շտկել տրուեցաւ, վերջին թիւերը զրկուեցան, եւ ասկէ ետք կանոնաւորապէս երկու շաբաթը անգամ մը կը ստանան:

Դերձակին հետ տեսնուեցայ կրկին անգամ. ոչ մէկ դժուարութիւն կը հանէ. կը ցաւի միայն որ քանի մը ամիս առաջ իմաց տրուած չէր իրեն. 250 տոլար դրամ զրկած է եղեր այն ատեն իր եղբորը, բան մը որ կրնար մերժել: Հիմա խեղճը ստիպուած է թէ՛ իր առնելիքները հաւաքել եւ թէ՛ իր վաստակը խնայել, ճամբու ծախք ու փոքր դրամագլուխ մը ունենալու համար հոն: Ինքը շատ աղէկ կը վաստակի հիմա եւ մինչեւ Յուլիս կը յուսայ ձեռքը բան մը ունենալ: Յաւաքին ան է որ միւս ընկերը բան մը չունի կարծեմ. այս օրերս որոշապէս կ'իմանամ այդ մասին: Իսկ Էդ.ի(1) գրածով իրենց ճամբու ծախքէն զատ 180ական տոլար դրամ ունենալու են, դեռ երկ-երկու ատրճանակ ալ կ'ուզէ որ հետերնին բերեն: Ձեմ գիտեր Կեդր. Կոմիտէն պիտի նպաստէ՞ անոնց, եթէ դրամներն պակսի. այս կէտը կ'երեւի թէ տակաւին ի նկատի առած չեն, Էդ.ի(1) գրածներուն ծանօթ չըլլալնուն: Այս քանի օրս ես կ'անցնեմ Պրովիտէնս եւ առիթ կ'ունենամ հանգամանօրէն խօսելու անոնց հետ: Այս դիտողութիւնն ընելու կը հարկադրուիմ անկէ որ դերձակին գրած էին թէ պատրաստուէ շուտով, եւ քիչ էր մնացեր տղան գործը ձգէր ելլար: Այս մասին վերստին կը գրեմ քեզ կամ ուղղակի Էդ.ին:

Վ. Շահէնին ի՞նչ ընելու եկած է հող: Ի՞նչ կէտերու մասին որ կը խօսի նշանակէ կարճ եւ հաղորդէ ինձի: Ողորմելիին մէկն է. ոխ մը ունի սիրտը, բայց չեմ գիտեր ի՞նչ է. կ'երեւի թէ Պարսկաստանի մէջ սիրտը այրեր է բանէ մը: Խեղճուկը Ուսթրի ժողովէն խաղք խայտառակ եղած դուրս ելաւ եւ չամչցաւ ալ ստելու թերթին մէջ, երբ «Հայրենիք»ը երեւան հանց գործը: Այդքան եթէ քաջ էր, ինչո՞ւ ժողովէն ետք, երբ ինքը պարծենցեր էր թէ շատ բաներ կրնայ ըսել եւ ինձի պապանձեցնել, եւ Ուսթրի մեր ընկերները պատրաստակամութիւն յայտնած էին որ կա՛մ իրենք եւ կամ ես ինքս կ'ընդունինք ուզած տեղը, ուզած մարդոց ներկայութեանը պատասխանը տալու իրեն. — ինչո՞ւ խոյս տուաւ եւ լռեց:

Մարդ միայն զգուանք ու գարշանք կրնայ զգալ այդ մարդոց անուանը անգամ բերանն առնելու կամ թղթի վրայ գրելու: Գործը եթէ սուրբ ըլլար իրապէս, կ'արժէր թքնել ու անցնիլ:

Քոյդ՝ Ա. ՎՈՒՄԵԱՆ

(1) Եզվարդի:

4 00 — 10

ԷԴՎԱՐԴԻ ՆԱՄԱԿԸ

20/2 Ապրիլ 00

Սիրելի Մարթին,

Մարտ 7 թուակիր նամակդ ստացայ. Վահագին կարգադրութեան ըսելիք մը չէի ունենար, եթէ սահայն Սարգիսեան(1) պարոնը իրապէս իր կամ իրենց առաջարկութեան ու մեր ալ համաձայնութեամբ զըրկուէր. սակայն կը տեսնես որ արդէն ջուրը ինկած խնդիր մըն ալ ատ է եղած. մինչեւ ցարդ այնպիսի կարեւոր կէտ մը՝ որպէս այս կէտն է՝ թողուլ անօգ վիճակի մէջ մեզ շատ կը զայրացնէ: Ես դիտելով կարգ մը այսպիսի բաներ, որոնք մինչեւ ցարդ վերջ չունեցան, դիմեցի քեզ որ ուրոյն կերպով ջանայիր ընկերներ հասցնել հոս. ինքս արդէն պիտի մեկնիմ դէպի ճեղք(1), ուր այնքան կարեւոր է. դէ՞ քաւտիճան մը ոգեւորելու կարգաւորութեան մղել տեղական ոյժերը, եւ յետոյ դեռ շատ աւելի կարեւոր կը զգամ ինքզինքս աւելի խորքը թափանցել(1): Այստեղի այս ամուլ վիճակը որ երթալով կը քայքայէ կազմակերպութեան ոգեւորութիւնն ու հաւատը, զիս կը տառապեցնէ եւ չկրնալով դիմանալ, միւս կողմէն դարձան մը ընել, որոշած էի շուտով ուղեւորիլ, ինչ որ հարկ եղած տեղերն ալ իմացուցած եմ: Այս մասին կը կարօտիմ նիւթականի, որը կը մտածէի ինչ կերպով ալ ըլլար ձեռք բերել ասկէ. մինչդեռ դրսի ընկերները մէկ կողմէն մեզ օգնելէ հրաժարելով՝ միւս կողմէն ալ չեն վարանիր իրենց խիստ միջոցներու դիմելու հակառակութիւններն յայտնելէ: Այսպիսի անել դրութեան մէջ բեկերի սրտով միթարութիւն ունէի չո խոստման համեմատ ատոնց սպասելու. կը յուսամ սակայն որ շուտով պիտի իրագործուի չո խոստումը, թէեւ չեմ կրնար չյայտնել որ եկողները նիւթական լաւ պայմաններու մէջ ըլլալը անհրաժեշտ է գրեթէ, քանի որ այս քաղաքին դիրքը կը տրամադրէ մշտական գործ առաջացնելու համար անձնական ապահովութիւնները երաշխաւորել ու այնպէս նետուիլ գործին գիրկը: Արդ ջանացէք ատոնց շուտով ճամբու դնել:

Հասնիրս թէ ատրճանակ թող բերնն չմոռցուի, եւ նոյնիսկ ամէն մէկը 3-ձական հատ առնեն հետերնին. հոս կրնանք սպասել. պահանջողներ շատ են եւ չգտնուիլը դիտես: Ատրճանակները ըլլալու են S.W.ի

փոքր տեսակները, ամէն մէկուն համար դէ՞ ք 50ական քարթու: Նաեւ եթէ կարող են լաւ «մուշամպա» մը բերել լաւ կը լինի, որը անհրաժեշտ է գրեթէ ինձ համար գոնէ, երբ կը մեկնիմ: Ասիկա եւս լաւ տեսակը ըլլայ. ես պիտի առաջարկէի, որ կարգ մը ասպատակներու համար գործածելի կարեւոր իրեր ալ ըլլար հետները, որոնց երբ որ ալ ըլլայ շատ զգալի կարեւորութիւնը պիտի յայտնուի շուտով: Բարոյաներու մասին փոփոխութիւն մը չկայ, միայն թէ անհրաժեշտ է որ ժամանակ առաջ իմացուի մեզ իրենց մեկնելը թէ ե՞րբ կը մեկնին, նաեւ նամակ ստանալու համար նախապէս հասցէ որոշելու են, որ մենք եւս իրենց գրենք իրենց ճամբորդութեան մէջ (Մարտէյլ կամ Լոնտոն իրենց հասցնելու համար). բացի այդ իրենք պարտին մինչեւ վերջին նաւահանգիստէն ուղղակի նաւ նստիլը (հոս զալու համար) առաջ նամակ գրեն եւ իրենք մեր բարոյան կրկնեն թէ՛ այս ընթացքը պիտի բռնենք նաեւ մէջ, այս դիրքով պիտի մնանք սպասելով մակոյկավարին որը զալու է եւ մեզ մեր այդ դիրքին մէջ գտնելով ըսելու է օրինակ սա. եւ մենք այսպէս պատասխանելով իրար վստահելու ենք եւայլն: Այժմ հասկցար թէ ինչ ըսել կ'ուզենք. պիտի իրենք մեր յայտնած բարոյան կրկնեն իրենց մեզի ուղղած գրութեան մէջ, որպէսզի գուցէ մեր կողմէն մոռցուած կամ իրենց կողմէն սխալ ըմբռնուած կէտեր եթէ կան՝ շտկուին վերջին պարագային:

Վահագին(2) հաւատացած եմ որ շատ օգտակար ըլլայ այդ տեղ. ես տարի մը առաջ առաջարկած էի որ հոն ատանկ մէկը երթայ եւ այսօր ուրախ եմ, որ վերջապէս այդ կէտը յարմար գործիչը գտաւ: Պետրոսեանի կամ Վահէի ընթացքը զարմանալի չէ ինձ. ատոնք իրական վտանգէն խուսափող ընաւորութեամբ, հանգստակէտ կեանքի վարժ լինելով, միւս կողմէն իրենց այդտեղի դիրքը տրամադրելով իրենց անձերն ալ յեղափոխութեան նուիրելու որը եւ անտարակոյս ժողովուրդը պիտի ընէր, ուստի իրենք այդ դրութեան պատուաւոր դուրս ելլելու համար սկսեցին

(3) կողմը անցնիլ. բան մը որ յայտնի ցոյց կու տար Պետրոսեանը 94-95ի սկիզբներում, երբ Լոնտոն նոր ծրագիր կազմելու, նոր կուսակցութիւն ստեղծելու ելլելով, այնքան ոգեւորութեամբ կուսակցութեան գլուխը անցաւ. . . . բան մը որ Մուրատի մահուամբ եւ մեր բռնած դիրքէն խախտուեցաւ ու այժմ մնացին իրենց բուն իսկ դիրքին յայտնի վիճակին վերայ, այն է՝ կուկուի դերը կատարել ազատ երկրի մէջ առանց մտածելու որ կրնային իրենք հրաշքեկ գործել, եթէ միայն անձնագոյնութեան զաղափարը զարգացած ըլլար իրենց մէջ, եթէ միայն անձնութեան ունենային, — բան մը՝ որ միակն է յեղ. Ը՛լ լալու համար: Կը ցաւիմ որ երկար չես գրեր ատոնց մասին. ես շատ կը հետաքրքրուիմ ատոնցմով. Շաւարշը եւ իր խմբակը, Մլեհը եւ կամ ատոնց կարգը ե-

ղողները առհասարակ ի՞նչ ընթացք ունին հող, ատոնց մասին գրես ինձ երկրորդ նամակովդ: Նաեւ դուն կամ Միսաքը ի՞նչ գործի էք, որքա՞ն շահաւէտ է գործերնիդ կամ ո՞ր քաղաքի մէջ էք, ո՞վ կայ հետերնիդ, քիչ մը երկար գրես գէշ չէ, գաղափար մը կը կազմէինք: Փեսայիդ մահուան մասին քեզմէ իմանալով շատ կը ցաւիմ. խեղճերը ի՞նչ պիտի ընեն, ո՛ւր պիտի մընան. իմացար անտարակոյս եւ Աւոյին երկու զաւակաց՝ Արմենակին եւ Մաքրուհիին մահուան լուրը. որքա՞ն կը ճմուռի սիրտս ատոնց մահուան մասին, չեմ կարող պատմել. իրապէս անծանօթէ մը իմանալով՝ չկրցի իրենց դժբախտ ծնողաց նամակ իսկ գրել եւ հիմա ալ ձեռքս չի բռներ նամակ գրելու:

Շաւարշը հոս ջանաց խառնշուկել բայց չյաջողեցաւ, բոլորովին երեսէ ինկած շուն դարձած է իր հայրենակիցներուն առջեւ. սակայն ատոնց մէջ դիտես որ դաղափարական մարդ չկայ. եւ այս վերջերս կ'իմանամ որ յեղ.ը իրենց անձնականին ծառայեցնելու ջանացողներ կ'ուզեն օգտուիլ, մեր հակառակորդներու հետ միանալ կամ նոր կուսակցութիւն կազմելու քողին տակ. ի հարկէ ատոնք իրենց սաղմին մէջ — եթէ կարելի է «սաղմ» անուանել — կը մեռնին. ատոնք ծընունդ են մեր բռնած հանդարտութեան ընթացքին. եթէ հոս գործէինք պահանջուածին համեմատ, այսինքն գործունէութիւններն չ'ընդմիջուեր երբեք, չէր կարելի յուսալ որ կրնային այդ կարգի թզուկներ երեւան գալ նոյնիսկ:

Իմացածիս նայելով Շաւարշը իր քոյրերը հող պիտի բերէ ամուսնացնելու համար. լաւ կ'ընէ եթէ հեռանայ ասկէ, եթէ ոչ ինձ կը թուի թէ իր վրայ վճռական գործ մը կատարելու պիտի ստիպէ մեզ, երբ հոս գործի սկսինք. որովհետեւ մեր դրամ հանգանակելը իր փորին ցաւն է եւ ոմանք — ինչպէս իմ ալ կարծիքս եւ կասկածս է — կը կարծեն նոյնիսկ մատնութիւն ալ կը սպասուի իրմէն:

Վահագին նամակ գրելու ըլլաս՝ ինձմէ իմացուր իրեն թէ եթէ մեզի հետ յարաբերութիւն պահէր գէշ չէր ըլլար. կարելի է որ կրնայինք օգտուիլ իրարմէ. եթէ մասնաւոր պատճառ մը չունի այդ բանը ընելու, թող գրէ մեզ այնպէս ինչպէս դուն կը հասցնես չո նամակը մեզ:

Եթէ նամակ գրէք, ձեր հասցէն նամակնուղ վրայ մի մոռնաք յիշելու:

Համբոյրներով ձերդ՝ ԷԴ.

Միտաքին մի մոռնար փոխադարձ բարեւներս. եղբորդ ալ:

- (1) Մտեկագիր:
(2) Ա. Վամբաք:
(3) Մէկ բառ անգլերենով (արդեօ՞ք էս-էսերու):

4 00 — 11

ՄԻՍԱՔԻ (ԱՌԱՆՁԱՐ, ԿԱՐԻՃ) ՆԱՄԱԿԸ

Յիւրիս, 5 Ապրիլ 1900

Սիրելի Մարթին,

Մարտ 7 թուակիր նամակդ եւ զրկածդ «Ջայն ստամոքսի»ները ստացայ. անշուշտ դուն ալ իմ նախորդ նամակս ստացած ես:

Փեսայիդ մահուան լուրը ինձ ալ վիշտ պատճառեց, բայց սիրելիս վիշտերը մեզ համար ալ սովորական բան մը դարձած լինելով, պէտք չէ երկար մտածել ու մտախառնիլ: Քրոջդ եւ զաւակներուն հող տանելու պարտականութիւնը միայն քու վրայ չի ծանրանար. եղբայրդ ազգային գործերու չի խառնուիր, գոնէ այդ պարտականութիւնը թող ստանձնէ:

Պիթեանի յողուածներուն պատասխանել կը յանձնարարես ինձ: Սիրելիս, այդ ապուշին գրածները կամ աւելի ճիշդ պատուելիական ճոռմարանութիւնները սկիզբէն ի վեր շղերուս կը դաշին, այնպէս որ հազիւ կրցայ այդ յողուածը ծայրէ ի ծայր կարդալ: Փաստերը այնքան ապուշ կերպով խեղաթիւրուած են որ ամէն խելքը դուրսը ընթերցող եթէ «Նորօրակ»ի յողուածին հետ համեմատէ զայն, ակնբերւ պիտի տեսնէ թէ ինչ մարդու հետ գործ ունի: Այդպիսի գրութեան մը չ'արժէր պատասխանել, մանաւանդ որ արդէն բաւական ժամանակ անցած լինելով, հիմա ելլել պատասխան մը հրատարակել արտաքոյ կարգի կարեւորութիւն մը տալ պիտի նշանակէ այդ ողորմելիին: Արդէն ինչպէս գուշակած եմ, այդ ապուշները իրենց ապուշութեան երեսէն պիտի կորսուին:

Նախորդ նամակովս պարզած խնդիրս անշուշտ նկատողութեան առած ես ու կ'աշխատիս երկիր դրկուելու յարմար տղաք գտնել: Արդեւնքը կը խնդրեմ ինձ հաղորդել: Առ այժմ ուրիշ գրելիք չունիմ, երբ նամակդ ստանամ դարձեալ կը գրեմ:

«Հայրենիք»ին պիտի գրեմ այսուհետեւ. թերթը բաւական լաւացած է Վահագին հող հասնելէն ի վեր:

Համբոյրներով՝ ՄԻՍԱՔ

4 00 — 12

ՄԻՍԱՔԻ (ԱՌԱՆՁԱՐ, ԿԱՐԻՃ) ՆԱՄԱԿԸ

16 Ապրիլ 1900, Յիւրիս

Սիրելի Մարթին,

Մարտ 26 թուակիրդ անցեալ շաբաթ ստացայ. արդէն քանի մը օր առաջ նամակ մը գրած էի քեզ: Երկիր դրկուելիք տղայոց մասին գրածներդ շատ

ճիշդ են, այսուհետեւ պէտք է խիստ ընարութիւն ընել գիտնանք, եւ ամէն մի գործիչի իր կարողութեան ու փորձառութեան համեմատ պաշտօն յանձնենք, որպէս զի անցեալի սխալները դարձեալ չկրկնուին: Գալթայն քանի մը օր առաջ նամակ առի, երկրի կացութեան եւ կառավարութեան բռնած ընթացքին մասին բաւական հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կը հաղորդէ: Գիտես որ Կեսարացիներու մեծ մասը առեւտրական մարդեր լինելով, ստիպուած են շարունակ զանազան տեղեր երթեկեկել: Կառավարութիւնը այժմ խստիւ արգիլած է այս երթեկեկութիւնը, այնպէս որ հետզհետէ առեւտուրը կանգ առնելով, տնտեսական տաքնապի կը մատնուին հայերը: միւս կողմէ կառավարութիւնը թուրք եւ յոյն վաճառականները կը քաջալերէ եւ կ'աշխատի առեւտուրը անոնց ձեռքը կեդրոնացնել: Այս պայմաններու մէջ նոյնիսկ տեղացի ջոկերը յուսահատած յեղափոխութեան կողմը կը հակին: բայց ինչ օգուտ որ կազմակերպչական կարող ոյժեր կը պակսին, այս բոլոր նպաստաւոր երեւոյթներէն օգտուելով ընդհանուր լուրջ գործ մը պատրաստելու համար: Օրինակ մեր գիւղին մէջ կան եղբեր քանի մը կարող տղաք, բայց ասոնք ալ յետին ծայր չքաւորութեան մատնուած, օրական հացի մտմտութենէ անդին բանով մը զբաղելու միջոց չունին:

Սիրելիս երբ այսքան նպաստաւոր պայմաններու քով՝ այս քանի մը անյաղթելի դժուարութիւնները կը տեսնեմ, այնպիսի յուսահատութիւն մը կը պատէ զիս, որ մտածելու կարողութիւնս իսկ կը կորսնցնեմ: Ըստ իս միշտ անիրականանալի ցնորք մը պիտի մնայ ընդհանուր զօրեղ ապստամբութիւն մը պատրաստելու ծրագիրը, որչափ ատեն որ մեր բարոյական ու նիւթական աղբիւրները այսքան վտիտ են: Պէտք եղածին չափ մարդ չունինք, այսինքն այնպիսի կարող մարդեր, որոնք այս բոլոր աննպաստ պայմանները հարթելու եւ ոչինչէն գործ մը ստեղծելու հսկայ ոյժը ունենային: Միւս կողմէ դրամ ալ չունինք, որպէսզի ցիրուցան ոյժերը հաւաքուելով եւ յուսահատաբար գործէն քաշուած անհատները եռանդաւորուելով, ընդհանուր ոյժ մը կազմել կարելի լինէր: Կտոր բրդուճ 4-5ական Փըրանկոնցներով կամ տոլարներով հաւաքուած դրամները կը նմանին ջրի այն փոքրիկ առուին, որ դեռ արտը չհասած կը ծծուի ու կը ցամքի: Մեր ազատութեան այս վիթխարի գործը զլուխ հանելու համար մի անգամէն խոշոր դրամազուլու մը (առնուազն քանի մը հարիւր հազար ոսկի) ճարել անհրաժեշտ է, ապա թէ ոչ ապագային մեր ընկիւղ բոլոր գործերն ալ անցեալին պէս մասնակի եւ վաղանցուկ բաներ պիտի լինեն, որքան ալ զոհողութիւն եւ ջանք թափուի: Մեր հարուստներէն յոյս չկայ. Նիւ Յորքի մէջ կազմուած յանձնաժողովը թո՛ղ աշխատի օտարներէն բան մը փրցնել: Գուրացիները կրցան Ամերիկայի մէջ մեծ փոխառութիւն կնքել, արդեօք Հայերը չե՞ն կրնար նոյն բանը

յաջողցնել: Ըստ իս անկարելի չէ, պէտք է միայն ադդեցիկ մարդեր ձեռք անցընել գիտնալ:

Իմ Ամերիկա դալուս մասին գրածներդ կարդացի, բայց ինչպէս առաջ ալ գրած էի, այդտեղ ես այնպէս պիտի կաշկանդուիմ, որ ոչ մի օգտակարութիւն չպիտի կրնամ ունենալ: Աւելի լաւ է հոս մնալ եւ գէթ բարոյապէս քիչ մը պատրաստուիլ, մինչեւ նայինք պարագաները ի՞նչ կը տնօրինեն:

Ինչպէս նախորդ նամակովս յայտնած էի, չ'արժեք Պիթճեանի ճոռոմարանութիւններուն պատասխանել: Բայց «Հայրենիք»ին աշխատակցիլ կը խոստանամ:

Դաւիթի մասին գրածէդ բան մը չհասկցայ, քիչ մը մանրամասն գրէիր, որ ես ալ կարողանայի կարծիքս յայտնել: Ես նախապէս իրեն խորհուրդ տուած էի որ աշխատի արհեստ մը ձեռք բերել, բայց ինք աւելի յարմար կը տեսնէր խանութի մէջ ծառայել եւ ապագայի համար մեծամեծ յոյսեր կը յայտնէր:

Կ'իմանամ թէ Նշանը ժընեւէն Ոսկեհանք ղրկուած է, արդեօք այս մասին տեղեկութիւն մը ունի՞ս: «Իրօշակ»ի վերջին յաւելուածը ի՞նչ տպաւորութիւն ըրու հող. գրէ ինձ եւ ամէն կողմէ մանրամասն տեղեկութիւն տուր:

Համբոյրներով՝
ՄԻՍԱԿ

Յ. Գ.— «Հայրենիք»ները ստացած եմ:

4 00 — 13

ԷԴՎԱՐԴԻ ՆԱՄԱԿԸ

Իզմիր, 10/23 Մայիս 1900 թ.

Սիրելիդ իմ Մարթին,

Մեր անցեալ թղթակցութենէ վերջ բան մը չգրեցիր: Թէ ի՞նչ եղաւ ծանօթ խնդիրը, ո՛րք մնաց եւ ի՞նչ պիտի լինի. գիտես թէ մեզ համար անմիջական նշանակութիւն ունի. ուստի միթէ՞ փութալու չէիր անմիջական գիտակցութեան մէջ պահել մեզ այդ խնդրոյ հետ: Ամէն պարագայի մէջ, սա կէտը կրկնելու ենք որ տղաքները ճամբայ իյնալէ առաջ(1), անհրաժեշտ է որ իմացնեն այն բարոյամ(1), որ մենք գրած ենք եւ իրենք պիտի գործածեն. որովհետեւ կրնայ ըլլալ որ կամ սխալ հասկցուած բաներ կը լինին, կամ մեր կողմէն տուածնիս մոռցուած կը լինի, անհրաժեշտ է իրենց ըմբռնած կերպով իմացնելնին, որպէսզի մենք այդ կերպով վարուինք:

Իսկ ատոնց փութալը(1) որքան կարեւոր ըլլալը արդէն նախապէս ալ գրած եմ. ուրեմն ամապարել(1) հարկ է:

Ա. Լեւոնեանը(2) արդեօք արդէն գացած է իր ընտրած տեղը թէ նա էլ ասոնց նման կը մնայ տակաւին

4 00 — 14

Ա. ՎՌԱՄԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

283 P. O. B. Providence, R. I.

6 Յուլիս 1900

Սիրելի Մարթին,

Շիքահոյն եւ Cudahyէն գրած նամակներդ առած եմ ժամանակին: Պատասխանը ուշացուցի, նպաստաւոր եւ վերջնական բան մը հաղորդել կարենալու համար:

Գնացողներէն մէկը արդէն պատրաստ է. պէտք եղած դումարն ունի: Գրուած է իրեն որ կարելի եղածին չափ շուտով հրաժեշտը տայ եւ գայ հոս, ուր իւրի վերաբերեալ քանի մը բաներ սորվեցնելու է, ճամբու ղեկէն առաջ: Կը յուսամ թէ մինչեւ ամիս մը — ամենէն ուշ — այդ ընկերը (դերձակն է) կրնայ մեկնել: Գալով միւսին, ան կուտ մը չունի եւ անկէ զատ՝ ընտանեկան մտր հոգեբու ենթակայ է: Եթէ այդպէս ալ չըլլար, նորէն դժուար թէ Կեդր. Կոմիտէէն ճամբու ծախք եւ աւելորդ դրամ (պահանջուածին չափ, այսինքն մօտ 200 տոլար) կարելի ըլլար ուզել: Սկզբունքով որոշուած է որ գնացողները իրենց ծախքով մեկնին: Ժամանակին քանի մը փորձեր եղած են եւ գրեթէ ամէնքն ալ անյաջող: Ատկէ զատ գացող ընկերը ամհրամեշտ եւ անխուսափելի գործ մը ընելու չերթար, որ Կեդր. Կոմիտէն իբր բացառութիւն մը յարգէր, Ոսկեհանքի(1) կոմիտէին առաջարկին վրայ:

Թող երթայ դերձակը, կը ջանանք ուրիշ մըն ալ ետեւէն ղրկել: Ես կը յուսամ թէ պիտի կարենանք բաւական ուժեր երկիր հանել մինչեւ մէկ տարի:

Գալով Պրն. Լեւոնեանին — հակառակ չէի անոր երթալուն, թէեւ ուրիշ տեղ մը յարմարագոյն պիտի ըլլար, բայց անոր ալ ընտանեկան պարագաները կնճոտեցան յանկարծ: Ամիս մը կամ երկու ամիսէն հազիւ որք բան մը կրնայ գիտցնել այդ մասին:

Ես կատարելապէս կ'ըմբռնեմ ջու անհամբերութիւնը եւ էդ.ին(2) աճապարանքը: Ետեւ գնաց, քիչը մնաց: Ես կը յուսամ թէ գործերը կարգի կը մտնեն շուտով: Միայն կը կրկնեմ, ինչ որ քեզի բերանացի ալ ըսած եմ, Ամ.(3) Բիւրոյէն չէիք կրնար եւ հիմա ալ չէք կրնար Ընդհ. Ժողովի որոշումներէն դուրս բաներ պահանջել: Աւելորդ կը նկատեմ երկար բացատրութիւններու մէջ մտնել: Գործին շահն ի նկատի առնելով, հետեւեալ գործնական խորհուրդը կու տամ քեզի, ինչպէս պիտի գրեմ նաեւ էդ.ին, քանի մը օրէն: Այս աշնան պիտի գումարուի Դ.Կ.Ն.Մ.ի(4) համազումար ժողովը: Գիտես որ այդ մարմինը իբրաւունք ունի ի բացակայութեան Ընդհ. Ժողովի, գործունէութեան

իր դիրքին մէջ. որքան լաւ ըրած կ'ըլլայիք, եթէ նա այն ատեն բոլորովին պատրաստ էր զրկուելու. մամբէիք հոս(1). ինչ որ է, անցած բանին վրայ չխօսինք: Այժմ ես յոյս ունիմ որ ձեր նամակը արդէն շուտով կը ստանամ, որով ամէն ինչ պարզուած կը լինի: Գիտես թէ այդ տեղի անցքերը որքան կը հետաքրքրեն զիս եւ որքան կարեւոր է զազափար կազմել մեր նախկին ընկերաց ներկայ տժգոյն ընթացքին մասին. թէ որքան կը հետաքրքրուիմ սա Պետրոսեան, Վահէ եւ այդ կարգի անձանց մասին տեղեկանալ, մանաւանդ փափաքելի էր որ հասկնայինք թէ սա Չէյթունի հերոսներէն ո՞րը մնացած է այս, ո՞րը այն եւ ո՞րը միւս կողմը: Եւսաւորը եւ իր ընկերները հո՞րք են. ասոնք ո՞ր կողմը անցած են. իսկ ձէքը, Միմոնը եւայլն այժմ ո՞րք են, ի՞նչ են. ասոնց մասին տեղեկութիւն ունենալու ես, գրիւր ինձ հասցէդ ձեռքի տակ չունիմ. ուստի եղբորդ հասցէով կը ղրկեմ:

Այս կողմերը ոգեւորութիւնը երթալով կը նուազի. պատճառը մեր անգործութիւնն է. պէտք է որ ներքին քայլերը սկսինք, ապա թէ ոչ ազգաւններուն միջոց եւ քաջալերութիւն տուած կը լինինք կենդանի մարմիններ կտցահարելու:

Այս թիւ Վ.ին(3) ալ նամակ մը գրեցինք, որ նա եւս փութացնէ իր ջանքերով ատոնց քայլերը(1): Իր հասցէն գիտե՞ս, կը ղրկես:

Ի՞նչ էլք ունեցաւ Ձեր Պատգամաւորական ժողովը(1) կամ առհասարակ ի՞նչպէս կ'ընթանան գործերը. «Իրօշակ»ի յաւելուածները ի՞նչ արդիւնք ունեցան հող եւ ի՞նչ տարբերութիւն կը տեսնէք այժմ:

Մուրատի մասին միթէ՞ ցարդ բան մը չէ գրուած այդտեղի թերթերուն մէջ, կամ առհասարակ այդտեղի թերթերը ի՞նչ ազդեցութիւն ունին գիտակից կամ պարզամիտ դասուն վրայ: Քանի՞ թերթեր կան. «Հայք» չի՞ հրատարակուիր:

Մեր հայրենակիցները ի՞նչ դիրքի մէջ են. Վահանեան Կարապետ, եղբայրը եւայլն, այդ դասակարգը՝ Աճոթեան եւ Մարիեան Յովհաննէս եւն., ատոնց մասին ալ փոքրիկ տեղեկութիւններ տուր կը խնդրեմ, եթէ գոնէ ժամանակը կը ներէ գրէ ինձ քիչ մը. դուն ի՞նչ կ'ընես, կը գործե՞ս, եւ գործերը ինչպէ՞ս են, գործ կա՞յ:

Միսաքը ո՛րք է, ի՞նչ ըրաւ. իր գեղուհին բերել տուա՞ւ երկրէն:

Մուրատի յիշատակին գրածնիդ ո՛րք մնաց: Այվազեանէն շատոնց է որ նամակ չեմ առած, կայ մօտ 8 ամիսէն աւելի՝ որ լուր չունիմ եւ ես ալ չեմ գրեր:

Համբոյրներով քոյդ՝
ԷԴ.

(1) Ծածկագիր:
(2) Ա. Լեւոնեան՝ Աշտ Երկաթը:
(3) Վահագիմ (Ա. Վաւմեմ):

Ծրագրին մէջ փոփոխութիւններ մտցնելու, եւ այլն: Արդ՝ նպատակը վարկեան է. տեղեկագիր մը կազմէ եւ զրկէ կամ ուղղակի Ամ. Բիւրոյին, կամ ինծի, եւ ալ հարկաւոր դիտողութիւններ կցելով (եթէ հարկ ըլլայ) Բիւրոյի միջոցով ներկայացնենք Դ.Կ.Ն.Մ.ի Ժողովին:

Ես չափազանց ուրախ եմ որ Կարիճն ալ զղջացած է Եւրոպա գալու. եղածն եղած է. գործելու ժամանակն անցած չէ, եւ կը մնայ որ հասուն խորհրդածութեամբ երկուքը ալ դառնաք երկիրը, գործնական քայլ մը ընել տալու, մարմին եւ արիւն տալու ձեր ծրագրին:

Էդ.ին(2) պիտի գրեմ — ինչպէս ըսի — մանրամասնօրէն: Դուն ալ նայէ որ դրամ ինչայես, եւ ճամբուղ ծախքը օր առաջ պատրաստես ու մեկնիս. որքան շուտ ըլլաս գործի ապարեզին վրայ, այնքան շատ իրաւունքներ կ'ունենաս քննադատելու եւ գահացում պահանջելու: Կը ներես որ երկար չեմ գրեր, զբաղած ըլլալուս:

Կը հարցնես իմ մասին ալ. իրաւ որ ես ալ չեմ գիտեր, թէ տակաւին որքան կը մնամ. խնդիրը կախուած է թէ՛ տեղական եւ թէ՛ ընդհանուր գործերու ընթացքէն: Կը կարծեմ որ կը մնամ հոս մինչեւ գէթ վերջ մը գտնեն «պատուոյ ատենին» և այլ խնդիրները, մինչեւ համերաշխութեան գետին մը որոշուի երկու կուսակցութիւններուն միջեւ, եւ մինչեւ որ հոս կոմիտէներու գործունէութեան աւելի արդիւնաւոր ընթացք մը գործուի հայրենիքին օգնելու դրամով ալ, մարդով ալ:

Կը յուսամ թէ իրար կը տեսնենք անգամ մըն ալ: Դուն անպատճառ հոս գալու ես մեկնելէդ առաջ քանի մը բաներ սորվելու, որ պէտք պիտի գան քեզի:

Այստեղի գործերը օր առաւ արագորոշելու վրայ են, եւ կը յուսամ թէ մինչեւ մէկ տարի շատ բան կը փոխուի:

Էդ.ին(2) նամակը (փարոլայինը) անգամ մը զրկէ. արտագրած եմ թէեւ, բայց լաւ է որ բողոքատեմ նորէն:

Քուկդ՝
Ա. ՎՌԱՄԵԱՆ

(1) Իզմիր:
(2) Կ'ակնարկուի Իզմիրի Էզվարդին:
(3) Արեւմտեան:
(4) Դաշնակցութեան կամքը ճակատագրով Մարմին (Հ. Յ. Դ. 2րդ Բնօր. Ժողովի որոշմամբ՝ երկու Բիւրոներու եւ չորս Պատասխանատու Կեդր. Կոմիտէներու ճակատագրով ճակատագրով Կեդր. Կոմիտէի կազմումը):

4 00 — 15

Ա. ՎՌԱՄԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Լին, 30 Օգ. 1900

Սիրելի Մարթին,

Յուլիս 18ի նամակդ ժամանակին առի: Էդ.ին(1) նամակը ներփակ կը վերադարձնեմ:

Ընկերներէն մէկը ամսուս 8ին ճամբայ ելաւ եւ մինչեւ հիմա հասած ըլլալու է Ժընեւ, ուր խորհուրդ տուի երթայ սպասէ: Թէ աւելորդ ծախքեր չ'ընեն Մարտի մէջ եւ թէ բերան բերնի կը խօսի մերոնց հետ եւ կենդանի խօսք կը տանի Էդ.ին(1):

Վերջինս կրկին անգամ գրեցի, որ իր պատուէրները ու պայմանները կրկնէ, որպէսզի շփոթութիւն մը չծագի:

Ատրճանակ հոսկէ պիտի տայինք, բայց զացողը ժամանակին չէր դիմած գանձապահին, որուն քով հաւաքուած էր այդ առթիւ կատարուած մասնաւոր հանգանակութեան մը արդիւնքը:

Ուրիշ զացող չըլլալուն, ստիպուեցայ գրել որ Ֆրանսական երկու ատրճանակ գնեն, մէկը փոքր եւ միւսը մեծ, լաւ տեսակէն, 100ական փամփուռ: Շարաթ դրամը կը ճամբենք ասկէ:

Չմոռնամ ըսել, որ իւրի եւ պայթուցիկի մասին գիտցածնիս սորվեցուցինք. մնացածը Ժընեւը կը լրացնէ:

Էդ.ին(1) գրեցի ես, դուն ալ յիշեցուր, երբ իրեն գրես, որ կամաց կամաց վարժեցնէ գործին նորեկը. անփորձ է, ի զուր չանցնին եղած ջանքերն ու ծախքերը:

Ի՞նչպէս է հիմա վիճակդ. չապաքինեցա՞ր դեռ. տղաքը ի՞նչ կ'ընեն:

Բարեւներ քեզի ու անոնց
Ա. ՎՌԱՄԵԱՆ

Յ. Գ.— Կը խոստանամ երկար գրել, երբ ժամանակ ունենամ. շահեկան բաներ կան բաւական:

Լեւոնեանի հասցէով գրէ ինծի: Ժամանակ մը Պոթըն պիտի մնամ:

(1) Էզվարդին (Իզմիր):

4 00 — 16

ՄԻՍԱՔԻ (ԱՌԱՆՁԱՐ, ԿԱՐԻՃ) ՆԱՄԱԿԸ

Յիւրիս, 28 Սեպտ. 1900

Սիրելի Մարթին,

Երկարատեւ լուծութիւնդ անմեկնելի մնացած էր ինձ համար եւ նոյնիսկ քու մասիդ տեղեկութիւն ուղած էի Սեպտեմբեր(1), որ նոյնպէս քեզմէ լուր չունենալը կը գրէր: Արդ փոխանակ ես զայրանալու քեզ գէ՛մ վերջին

նամակ անպատասխան թողնելու համար, դուն հայտնուի կ'ընես. ինչ որ է փառք որ ողջ առողջ ես եղիր: Վերջին քանի մը ամսուան մէջ կրած ցաւերդ ինձ ալ ցաւ պատճառեցին, բայց ի՞նչ արած, հայուն բաժինը հիմա ցաւն ու դառնութիւնն են: Նիւթական ուրեւէ մտածուք չունենալով հանդերձ, հաւատաւոր ես ալ հոգեկան շատ անկարագրելի կացութեան մէջ կը գտնուիմ, այնպէս որ երբեմն կը փորձուիմ նոյնիսկ երանի կարգալ անտարբերութեամբ: Ամիս մը առաջ ցուցահանդէսը այցելելու համար Փարիզ երթալով քան օր հոն մնացի, ցուցահանդէսէն աւելի զիս կը հետաքրքրէր Փարիզի հայ ուսանողութեան եւ մանաւանդ Չօպանեան եւ Ընկ.Քեան վիճակը: Ուրիշ անգամուան կը յետաձգեմ նկարագրելու քեզ բարոյական այն ստակալի անկումը, անտարբերութիւնն ու լրբութիւնը, ուր այդ խմբակը անելանելի կերպով միջոցաւ է: Այսքան միայն կը յայտնեմ որ այսուհետեւ ամենափոքր կարեւորութիւն մը իսկ չունին ինձ համար այդ ինկաններու արարքներն ու գրուածքները:

Ուրիշ ոեւէ նորութիւն չունիմ հաղորդելու քեզ. Գալֆայեանն ալ երկար ժամանակէ ի վեր նամակ չեմ ստանար, պատճառը դեռ չեմ կրցած հասկնալ: Դուն տեղեկութիւններ տուր տեղական գործերու եւ այն շահեկան բաներու մասին, որոնց կ'ակնարկես:

Դաշնակցութեան Մ.ի(2) արտակարգ ժողովին ներկայացնելիք տեղեկագրիդ կմախքը պատրաստել կ'առաջարկես ինձ: Մրազբաժնի 8 կէտերու կէսը աւելորդ է ըստ իս: Քանի որ ընդհ. ժողով չպիտի գումարուի եւ այս արտակարգ հաւաքումին ղեկաւոր զբաղումը գործունէութեան հակա խնդիրները պիտի լինեն, պէտք չէ տեղեկագիրը ճապարհել, այլ պէտք է ծանրանալ միմիայն կարեւոր կէտերու վրայ: Այս ուղղութեամբ համառօտ ծրագիր մը ներփակ կը զրկեմ քեզ, ատոր վրայէն պէտք եղածը կրնաս գրի առնել եւ մէկու մը սրբագրել տալ յետոյ արտագրել ու զրկել: Գլխաւորապէս ծանրացիր Կիլիկիայի հարցին վրայ, պաշտպանէ մեր ցամաքային գծի ծրագիրը, որու մասին այնքան անգամներ խօսակցած ենք, իսկ Վահանի վրայ անհատական ջնջին խնդիրներու յիշատակութիւնն անգամ ընել չ'արժեք: Մարը(3) ամիսներ առաջ ձերբակալուած է ու մինչեւ հիմա կարծեմ բանտն է, Սեպտեմբեր(1) իբր գաղտնիք հաղորդած էր ինձ այս բանը, ուստի ինձմէ իմացած մի լինիր:

Վաղուց ի վեր թերթ ալ չես զրկեր. եթէ կարելի է Վահանի գրէ թող մեզ այս տարուան սկիզբէն «Հայրենիք» թուր թիւերը զրկէ եւ այսուհետեւ ալ շարունակաբար ուղարկէ:

Այսօր այսչափ, նամակը ստանալէ յետոյ ընդարձակ կը գրեմ. մենք ալ 10 օր յետոյ, ուսանողական ընդհ. ժողով ունինք հոս, Եւրոպայի ամէն կողմերէն

պատգամաւորներ կու գան, այս մասին ալ տեղեկութիւններ կը հաղորդեմ քեզ:

Կարօտագրին համարյոյներով՝
ՄԻՍԱՔ

Յ. Գ.— Դաւիթէն ալ երկար ատենէ ի վեր նամակ չեմ ստանար. եթէ իր մասին լուրեր ունիս հաղորդէ:

ՆՈՅՆ

«Դրօշակ»ի յաւելուածները ի՞նչ ազդեցութիւն ըրին հող. պատուոյ ատենի ազմուկները ի՞նչ հետեւանք ունեցան:

(1) Հրայ (Թիբեթեան):
(2) Կ'ակնարկուի Դաշնակցութեան կամքը ներկայացնող Մարմին:
(3) Մար-Եթիօնը (Միջագետքի Տէր Մարտիրոսեան), այդ բուսկաններուն՝ Հրայի հետ ազգայնական Կիլիկիոյ Պատասխանատու Կեդր. Կոմիտէի, որ, ինչպէս տեսա՞ք արդէն, Կիլիկիոյ անցած էր 1896 Նոյեմբերի վերջերը:

4 00 — 17

ԿՄԱՆՔ ՏԵՂԵԿԱԳՐԻ

Միտաքի (Առաձաք, Կարիճ) ձեռագրով, կցուած՝ Մարթինի ուղարկուած 28 Սեպտեմբերի ճամակի՞ն (400-16):

1. Կիլիկիան, իբրեւ յեղափ. գործունէութեան համար ամենայարմար վայր, թէ՛ իր դիրքով, թէ՛ բընակիչներու տրամադրութեամբ:

2. Այդ վայրի մէջ գործ սկսելու համար ցարդ Դաշնակցութեան ըրած փորձերը եւ անոնց անյաջողութեան պատճառները. (գործիչներու երկրի վիճակին ու պայմաններուն անտեղեկ լինելը, սխալ ծրագիր մը եւ փաստեր. Կիլիկիոյ կոմիտէին ձախողութիւնները):

3. Ընդհ. ժողովին յետոյ Եզրպատուի մէջ մեր տեսակցութիւնները Պատասխանատու Մարմինն հետ:

Մեր ծրագիրը, որ արդէն վաղուց արժարժուած է Ոսկեհանքի եւ Կարմիր Բերդի կոմիտէներուն կողմէ:

4. Ամփոփ կերպով պարզել այդ ծրագիրը.

(Քանի որ վերջին ապստամբութիւններէն ի վեր՝ թուրք կառավարութիւնը մեծ խստութիւններ ձեռք առած է կիլիկեան նաւահանգիստներու մէջ եւ այսպիսով ուղղակի նաւահանգիստներէն ներս մտնող գործիչներու դէմ ահազին վտանգներ կան եւ միւս կողմէ տեղացի ժողովուրդն ալ հնչակեաններու խաբէրայութիւններուն երեսէն չափազանց կասկածու ու զգուշաւոր դարձած՝ վստահութիւն չի ցուցնէր անմիջապէս ներս մտնող գործիչներուն, պէտք է գործունէութեան

ծրագրերը փոխել, եւ նաւահանգիստներէն միայն կասկածէ գերծ տեղացիները մտցնելու աշխատելով՝ զըլխաւոր ոյժը տալ ցամաքային ճանապարհին, ուր հարդարակցութիւնները անհամեմատ աւելի դիւրին են: Այս մասին իբր փաստ ի մէջ բերել անցեալին մէջ այդ կողմի կոմիտէներու ըրած փորձերը, որոնք յաջողութիւն չգտան, օժանդակութիւն չգտնելուն պատճառով: Կարմիր Բերդի գիծը երկնցնել մինչեւ Կեսարիա, որ իր դիրքով շատ մեծ դիւրութիւններ ունի հարդարակցելու Կիլիկիոյ հետ: Միւս կողմէ, Կեսարիա իր բազմաթիւ զինավարժ ու աշխոյժ հայ զիւղերով, կըրնայ մեծ օգնութիւն հասցնել Կիլիկիոյ ապստամբութեան միջոցին թէ՛ պաշտպանողական եւ թէ՛ յարձակողական ոյժերով: (Չմոռնալ յիշելու որ Կեսարիան իբրեւ առեւտրական կեդրոն գէյթունցիներու եւ հաճընցիներու եւ իր Ս. Կարապետի վանքով, ուր ուխտազնացութեան պատրուակով ամէն տարի անարգել կըրնայ հաւաքուիլ Կիլիկիոյ եւ Փոքր Հայքի զանազան կողմերէն ահապին բազմութիւն, մեծ առաւելութիւններ ունի): Յիշել նոյնպէս կոտորածներէն ի վեր՝ այդ կողմի ժողովրդի նպաստաւոր տրամադրութիւնն ու ինքնաբերական պատրաստութիւնները):

4 00 — 18

ԷԴՎԱՐԴԻ ՆԱՄԱԿԸ

Իզմիր, Սեպ. 24 / 7 Հոկ. 1900 թ.

Սիրելի իմ Մարթին,

Քանի մը օր առաջ ստացայ զո Սեպտեմբեր 7 թուակիրը: Հոս եկող(1) անձը դեռ չէ հասած(1) եւ կը սպասուի որ Մարտիլէն(1) այսօր վաղը կը գրէ իր ուղեւորութեան(1) մասին: Թէ որքան մխիթարութիւն է առնուած քայլերը կրնաս երեւակայել անտարակոյս. կը յուսանք որ ներկայիս գումարուելիք ժողովը մէկ կողմէ(2), ատոնց քայլերն ալ միւս կողմէն, մոռցնել պիտի տան մեզ այնքան տխուր ու այլանդակ յիշատակները որ թողուցին այս 1 1/2 սեւ տարիները: Մինչեւ Դ. Կ. Ներկայացնող Մարմնի գումարուելին ու վերջնապէս յառաջ տարէք ձեր գեղեցիկ քայլերը որ շատ բան կըրնան խոստանալ, շատ բան կրնան խոստանալ՝ որ սակայն սկեպտիկ անհասանք չեն կրնար երբեք մտքերնէն անցընել ու անոնց իրագործման պահուն պիտի չլքին չլքորին: Պատրաստուելու մի վայրկեան անգամ մի կորսընցնէք այն անձերը՝ որոնք ոյժ մը կրնան կազմել մեր դժուարին գործին մէջ, եթէ ոչ այժմ գէթ ապագայի յոյսովը:

Մենք արդէն պատրաստած ենք տեղույս տեղեկագրութիւնը եւ շուտով կը դրկենք պատկանեալին: Այդ տեղեկագիրը շատ մանրամասն է եւ կը պատկերէ ամբողջ շրջանիս դիրքը, կացութիւնը, ժողովուրդը, վեր-

ջինիս վիճակը, տրամադրութիւնը, դէպի մեզ ունեցած հակումները եւ այլն, եւ այլն: Միւս մասին մէջ բացատրուած է ընդհ. ժողովէն առդին ունեցած կոմիտէի ներքին կացութիւնը, անդամահատութիւնը, անոր անուրթեան պատճառները, եւ այլն, եւ այլն: Երրորդի մը մէջ բացատրուած են մեր ամբողջ հայեացքները, կարծիքները, նկատողութիւններն ու առաջարկները... Վերջապէս տեղեկագիր մը որ յստակ ու մեկին կերպով կը պահանջէ մէկ բան — գործ, գործի համար գործադրող ոյժ եւ ասոր համար ալ ճիշդ մը, պէտք եղած գոհողութիւնները ընելով, շարժուն վիճակի մէկ դնելու համար այս կէտը. այս առաջարկը երկու բանի մէջ կը կայանայ — կա՛մ ընդունիլ այս կէտը դրամական խնդրով զբաղեցնելու, կա՛մ Կիլ(3) խնդրով. երկուքին համար ալ առանձին առանձին անհրաժեշտ պահանջները մատնանիչ ընելով՝ անոնց գործադրութեան լուծումն է, որ կը պահանջուի:

Պէտք է այդտեղ աշխատիք որ ի հարկին պահանջեն, եթէ ժողովը առարկէ թէ պէտք եղած ոյժերը կը պակսին. այն ատեն դուք բաւարարութիւն տաք այդ պահանջին ու տեղ չթողուք անոր այդ առարկութեան:

Ձ.ն(4) առաջ ինչ դրութեան մէջ որ էր նոյնն է, միայն այժմ բոլորովին քաշուած գրեթէ եւ շատ քիչ կը հետաքրքրուի մեր խնդրով: Տեղեկագիրը առանձին գրած եմ. մտածիր... Տիգ.ը հոս է եւ կօշիկ կը ծախէ, բայց ապրուստը չի կրնար հանել: Այստեղի անգործութիւնը խանգարած է ամէն կարգ ու սարք եւ յաճախ տխուր երեւոյթներ կ'ընծայէ նոյնիսկ մեր ներքին շրջանին մէջ. պատճառը ըսի արդէն՝ անգործութիւնն է:

Մասիք. (1) եւս նոյն վհատած եւ դանդաղ ընթացքը կը ցուցնէ. իր անգործութեան հետեւանօք՝ շատ մեղամաղձոտ դարձած է. բայց արդէն ես այդ մարդուն վրայ տեսնուելէս վերջն ալ լաւ գաղափար չունեցայ: Ի՞նչ կը նշանակէ յեղ. ըլլալ, կոմիտէի անդամակցութիւն ընդունիլ, յեղ. դրամով ապրիլ եւ պայման դնել ճշտ գործը կրնամ ընել, սա ոչ...: Այս տեսակ պայմանները կրնան առաջին բոլորէն շեղել մարդուս ուղիղ հայեցակէտը եւ խանգարել վստահութիւնը: Ուրիշ շատ մը բաներու մէջ ալ այս մարդուն խճրճող գտայ. օր. գործ կը նայի ինքը ու ինձմէ կը խնդրէ բարեխօսել իրեն համար, ես ալ կը ջանամ տեղ մը դասատուութեան պաշտօն ճարել ու երբ յարմար առիթը կը ներկայանայ՝ չ'երթար եւ երկու օր վերջ կրկին կու գայ ճշտ ինչին խօսիլ հաճէիր մի անգամ ինձ այսինչ գործը տալու համար...: Այսպիսի անվերջ առաջարկներ: Մանաւանդ զարմանալին որ ասոնք կը կարծեն թէ եթէ նիւթական տկարութիւն մը ունենան՝ ա՛լ իրենց առջեւ մոմ պիտի վառէ ամէն մարդ: Մարդս թշուառութեան ենթարկուելով թէ՛ ազնուութեան կը վարժուի եւ թէ խորամանկ յաւակնտութեան՝ կարծելով որ ինքը ամենաբարձր անձնաւորութիւնն է եւ իր միակ թերութիւնը իր նիւթական անձուկ վիճակն է. սա սխալ

կարծիք է եւ հակառակ ալ է համեստութեան՝ երբ մանաւանդ կ'արտայայտուի այդ իրենց սեփական բերանով:

Այվազեանի ընթացքին մի՛ զարմանար, կրնայ իր վրդովիչ հանդամանքները ունենալ, որով գրեթէ ինկած է մեկուսի վիճակի մէջ. վաղուց տարին անցած է արդէն որ դրած նամակիս չէ պատասխանած եւ ես ալ չեմ գրեր իրեն: Ամէն մարդ բնաւորութիւն մը ունի եւ այս մարդը ամենէն տարօրինակ բնաւորութիւնը կը կրէ:

Միտաքը ամուսնացած է արդէն: Իր աները մինչեւ Մարտիլի մէջ տարած յանձնած է իր նշանածը եւ վերադարձած է հոս: Ձե՞ս զարմանար Միտաքին վրայ. որքան հաստատամիտ կամք ունի իր վայելքներու մասին, եւ որքան թոյլ գտնուեցաւ իր այս շաւիղին մէջ, ուր ժամանակ մը առաջնորդել կը յաւակնէր մեզի. որքան անամօթութիւն նոյն իր այդ ընկերներուն առջեւ թողուլ գործը եւ ընտրել կեանքի ճանապարհը. եւ որքան արհամարհանք էր իրապէս այդ դէպի մեզ ու մեր ընթացքը, երբ նա մեզ իր նշանտուքին տարաւ ուր միամիտ ուրախութեամբ մը յանձն առինք ներկայանալու, անսալու իրեն:

Ամերիկեան ատրճանակը հոս շատ կը փնտռուի. ջանացէք ատոնցմէ եկողներուն հետ հասցնել մեզ:

Նշանը հոս չէ եկած եւ չի կրնար գալ, քանի որ իր գոյնը ցուցուց:

«Շարժում» մէջ գրողներուն մասին կը հարցնես, ատոնք մեզ հետ յարաբերութիւն ունին թէեւ, բայց նկարագրէ գուրկ անձեր են, շողոմարարներու խումբին կը պատկանին, որ քամիի ազդեցութեան ենթակայ են:

Քո հիւանդութիւնը ինչպէ՞ս առաջացած էր, ուրախ եմ ազատուելուդ շա՛տ: Եղբայրդ մօտը էր անտարակոյս. երանի քեզ որ գոնէ եղբայր մը ունիս մօտը: Ինչպէ՞ս է թո կամ եղբորդ գործը, ի՞նչ կ'ընես դուն, ո՞ւր կ'աշխատես:

Ի՞նչ եղաւ սգաւոր ջոյրդ իր գաւակներով, ո՞ւր եւ ի՞նչ վիճակի մէջ է:

Կարիճը ո՞ւր է այժմ, գիտե՞ս տեղը: Այդ անձէն չէի՞նք կրնար ապահով հասցէ մը առնել Պաղտատի՞ ուր իմ ազգականներս իբր աքսորեալներ կը գտնուին, հասկնալու համար ատոնց վիճակը: Եթէ գիտես տեղը, գրէ իրեն եւ խնդրէ այս մասին: Այդ տեղի մեր մօտիկ տղաներէն ի՞նչ լուր ունիս, — Սարիեան Յովհաննէս, Սէրգիս, կամ իր ազգականները՝ Գրիգէս, Հայրը ո՞ւր են, ի՞նչ կ'ընեն, նաեւ մեր Մկրտիչ, Յովհաննէս ո՞ւր են. ատոնց հայրը վերջերս իմացայ՝ մեռեր է, խիղճ եղաւ իրենց:

Ի՞նչ գրեմ, մի ուշացնէր նամակդ:

Ձերմաջերմ համբոյրներով մնամ ջոյդ՝ ԷԴ.

Յ. Գ.— Իւրաքանչիւր նամակիդ մէջ հասցէդ յիշուի:

ՆՈՅՆ

- (1) Ծածկագիր:
- (2) Կ'ակնարկուի Դաշն. կամքը մերկայացնող Մարմնի ժողովի:
- (3) Կիլիկիոյ (ծածկագիր):
- (4) Ամբօթեանի տառ, արգեօ՛ք Ձ:

4 00 — 19

ԿԱՐԻՃԻ (ԱՌԱՆՁԱՐ) ՆԱՄԱԿԸ

Մեր սկզբունքին համաձայն՝ կու տամք մոյմուքեամբ, եսկառակ Արքիեպիսկոպոսի եւ Զոպանեանի հասցէին կարգ մը ծայրայեղ արտայայտութիւններով:

Յիւրիլիս, 4 Նոյ. 1900

Սիրելի Մարթին,

Նամակդ քանի մը օր առաջ ստացայ, եւ այսօր Կիւրակէ՛ սենեակիս մէջ առանձնացած կը պատասխանեմ քեզ:

Հնչակեաններու խլրտումներու մասին գրածներդ կարդացի, ինչպէս նաեւ ներքակ դրկածդ «հրաւէր»ը: Այդ ապուշները ինչ ալ ընեն՝ անդարձ կերպով կորսուած ու մեռած են, եւ անոնց հետ միութեան ունէ փորձ ըստ իս աւելորդ եւ վտանգաւոր է: Որովհետեւ ինչպէս ամէն տեղ մեր աչքերով տեսանք, անոնք հասցութեան բարոյապէս ամենէն ինկած եւ մտաւորապէս ամենէն այլանդակուած տարրերն են: Ասոր ամենապերճախօս ապացոյցն է Արքիեպիսկոպոսի Լ. Մկրտիչեանի պէս բախտախնդիր սրիկաներու՝ ամբողջ այդ կուսակցութիւնը իրենց քաջահաճոյքին անձնական շահերուն համաձայն կառավարելը: Այդ Արքիեպիսկոպոսի անցեալ մութ կեանքին մօտէն ծանօթանալու առիթը ունեցայ հոս վերջերս: Պարսկաստանէն Դոկտ. Թիրեաքեանը ընտանիքով հոս եկած էր գաւակները դպրոց դնելու նպատակով: Հոս քանի մը ամիսներ մնաց՝ իբրեւ հայրենակից ծանօթացայ հետը եւ առիթ ունեցանք շատ անգամ ժամերով մտերմօրէն տեսակցելու: «Իրօշակ»ի յաւելուածին յայտնութիւնները հաստատելէ յետոյ դեռ այնպիսի սուկալի բաներ պատմեց, որ այդ շան դեռ ապրիլը ուղղակի հայութեան համար նախատինք է: Տեսնելով որ Դոկտ.ը ինչ-ինչ պատճառներով կը վախնար այդ յայտնութիւնները այժմէն հրատարակութեան տալ, խնդրեցի իրեն որ գէթ գրի անցընէ զանոնք ապագայ պատմութեան համար եւ ինք ալ համոզուելով խոստացաւ կատարել: Արդ մենք ամենեւին ուշադրութիւն չդարձնելով այդպիսի ազգակործան հրէշի մը գործիք եղող վատերուն ու ապուշներուն՝ պէտք է մեր ամբողջ ինչքը կեդրոնացնենք մեր գործին վրայ: Ինչ-

պէս «Անահիտ» վերջին թիւէն տեղեկացած կը լինիս Արփիարի աղբարիկ Չօպանեանը այժմ շատ նեղ դրութեան մէջ ինկած է: «Նոր Անահիտ» հետ գտած է, և միւս կողմէ իմանալով որ Դաշնակցութիւնը պատրաստութիւն կը տեսնէ Փարիզի մէջ Ֆրանսերէն թերթ մը հրատարակել՝ նշանաւոր Ֆրանսացի գրողներու աշխատակցութեամբ՝ Հայկական խնդիրը Եւրոպային ծանօթացնելու նպատակով(1)՝ մեր Փարիզ եղած միջոցին Չօպանեան միջնորդներ դրած էր Գրիստափորի հետ տեսակցելու համար, բայց Գրիստափորը զայրոյթով մերժած էր: Յետոյ կերպով մը յաջողեցր է ներկայանալ և յայտնելով, թէ Դաշնակցութեան նկատմամբ իր բոլոր գրածները լոկ սխալ հասկացողութեան արդիւնք են, խնդրեց էր որ այդ անցեալը մոռնալով՝ իրեն ցոյց տրուի, թէ ինչ ուղղութեամբ պէտք է գրել այսուհետև յեղափոխութեան օգտակար լինելու համար: Ի հարկէ դժուար չէր գուշակել այդ գեղջի բուն պատճառը, որ ոչ այլ ինչ էր՝ եթէ ոչ իր աղարտուած անունը մաքրել և հրատարակուելիք թերթի խմբագրութեան մէջ պաշտօն մը ձեռք բերել՝ իր բաւական ժամանակէ ի վեր անօթի փորը կշտացնելու համար: Գրիստափորը պէտք եղած պատասխանը տալէ յետոյ, «Իրօշակ» վերջին թիւին մէջ ալ հրատարակած էր «Մոլորեցնողները» յօդուածը, որ այդ առթիւ զերուած է:

Ահա՛ սիրելիս այն խայտառակ վիճակը, որուն պիտի ենթարկուին վերջիվերջոյ մեր բոլոր հակառակորդները, որովհետև ինչպէս ժողովրդական առածը շատ ճիշդ կ'ըսէ. «Մտախօսին ճրագը մինչև վերջալոյս կը վառի»:

Այժմ գանձ բուն խնդրին:

Ամերիկայի յեղափոխական գործունէութեան մասին հաղորդածը լուրերը մեծ ուրախութիւն կը պատճառեն ինձ: Ինչպէս սկիզբէն ի վեր գրած եմ, պէտք է բոլոր ոյժով աշխատել մղում տալ երկիր մտնելու հասանքին, որովհետև հոն միայն կ'արդիւնաւորին լաւ ոյժերը: Իւզեր չլինելու համար նախապատրաստական ձեռնարկները անշուշտ անհրաժեշտ են, միայն թէ սորովողները երկրին մէջ պիտի կրնան գտնել պէտք եղած նիւթերը: Վերջապէս սիրելիս աշխատեցէ՛ք, ժամանակը թանկ է մեզ համար, մարդ կը սոսկայ երբ ապագայ բարեպատեհ առիթի մը հայ ժողովուրդը անպատրաստ կ'երեւակայէ: Կոտորածներու խայտառակութիւնը այլևս պէտք չէ կրկնուի, և այս նպատակին համար պէտք է ամէն կարելի եղած միջոց գործադրել: Տեղույդ պատգ. ժողովի կողմէ բացումը որոշուած բերոյի մասին ոչ մի լուր չես հաղորդեր, բացուեցա՞ւ և ինչպէ՞ս կ'երթայ գործը:

Ես ալ հոս կրցածիս չափ կ'աշխատեմ օգտակար լինել Գործին նիւթական և այլ միջոցներով: Վերջերս իմանալով որ Կարմիր Բերդի կոմիտէի անդամներէն մէկը Բէյրութ կը գանուի այժմ՝ կրցայ թղթակցու-

թիւն հաստատել հետը, ինչ Կեսարիայէն կու գայ, ուր բաւական ժամանակ մնացեր է: Մանրամասն տեղեկութիւններ մեր կողմերու մասին, երբ ստանամ կը հաղորդեմ ձեզ: Այս տղան կը յուսամ թէ Կիլիկիայի գործին կրնայ օգտակար լինել:

Ես ծրագրներս բոլորովին փոխած եմ, կ'աշխատեմ օր առաջ գործս վերջացնելով հեռանալ Եւրոպայէն: Այս ձմեռ հոս անցընելէ յետոյ գարնան պիտի երթամ Բեյճիք, վաճառականական ակադեմիա մտնելու: շրջանը երկու տարի է: Այսպիսով թէ՛ գործնական բան մը սորված կը լինեմ, և թէ՛ շուտ կ'աւարտեմ: Հաւատա՛ զգուեցայ այս կհանձնէ:

Աղաչե՛րք քանի մը օր առաջ Գերմանիայի Միւնխեն քաղաքը երթալով՝ տեղւոյն պոլիտեխնիկը ընդունուեցաւ, մեքենագործութեան կը հետեւի: Բարեւերդ կը հաղորդեմ իրեն:

Դաւիթի անձնական գործը ի՞նչպէս է, յեղափոխական գործին կը նպաստէ՞ թէ դեռ Եսահէնի գրաբանութիւններուն ազդեցութեան տակ է:

Առայժմ այսչափ. սիրալիր համբոյրներով՝

Մ. ԿԱՐԻՃ

Յ. Գ. — Վահագին ու Դոկտորին մասին ալ տեղեկութիւն տուր: Արմէն Գարօն ալ վերջերս Ամերիկա եկաւ, ի՞նչ կ'ընէ:

ՆՈՅՆ

(1) Կ'ակնարկուի Pro Armenia-ին:

4 00 — 20

Ա. ՎՌԱՄԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

86 Essex st., Boston Mass.

10 Նոյ. 1900

Սիրելի Մարթին,

Երկու նամակներդ ալ, 20 Հոկտ. և 6 Սեպտ., ժամանակին առած եմ: Չպատասխանելու համար իրաւունք ունիս նեղանալու: Արդարանալու պզտիկ իրաւունք մըն ալ ես ունիմ. «Հայրենիք»ը հոս փոխադրելով, խմբագրութիւնը ստանձնել խնդրեցին ինձմէ, և չմերժեցի: «Հայրենիք»ն ալ այսօր հօր միջոց մըն է փրփականտի համար, և ձեռքէ փախցնելու չէր: Բայց խմբագրութիւնը ծանրացուց բնականաբար բերք, մանաւանդ առաջին երկու ամիսը: Հիմա գործը կարգի մտած է ու ասկէ ետք կը յուսամ ամէն պահանջի ալ գոհացում տալ: Հրապ. ժողովներու և կոմիտէներու այցելութեան համար արամազերի ունիմ Ուր-

բաթէն մինչև Երկուշաբթի, ասկէ աւելի ո՛րեւէ քաղաք մը մտալը աւելորդ է ինչքին:

Այս մասը գոցելու համար հարցնեմ, թէ «Հայրենիք»ը կը ստանա՞ս թէ ոչ: Եթէ չէ, շուտ գրէ, զրկեմ ձեզի. վճարելու մասին մի՛ խորհիր, երբ ունենաս այն ատեն. աւելորդ թիւեր շատ ունինք:

Պատրաստածդ տեղեկագիրը ՇՈՒՏՈՎ շրկէ ինձի, ես ալ իմս պատրաստելու վրայ եմ, երկուքը միասին կը զրկեմ երթայ:

Կիպրոսի կոմիտէին հասցէն չեմ գիտեր: Գալով որբանոցին, հետեւեալն է. — Orphelinat Arménien, NICOSIA, Cyprus — տնօրէնին անունն է Mr. VAHAN KURKJIAN:

Վարդը (դերձակը)(1) բաւական ուշացաւ. Մարտի-լիային մեկնած է Սեպտ.ի վերջերը. լուր չունիմ տակաւին տուն հասած ըլլալուն մասին:

Գրէ ինձի թէ հոգ ո՛վ է որ պատրաստ է երկիր երթալու: Ես ալ տեղեկութիւն հաւաքեմ ու աշխատինք ատոր համար:

Մանչեսթրի գործէն խելքս բան չհասաւ դեռ. նամակ ալ առի երկու օր առաջ, բայց որոշ յիշատակութիւն մը կար կիլիկեցիներուն մասին: Եթէ անոնց նամակը քովդ է, զրկէ աչքէ անցընեմ: Գալով սոք-թորին, հաւատք չունիմ վրան. պատճառները ինձմէ աղէկ գիտես դուն: Տիրատելֆիայէն ձայն ծպտուն չելաւ մինչև հիմա. Թերթ ալ զրկուեցաւ Կեդր. Կոմիտէի կողմէ, բայց դիր ալ գրուեցաւ — պատասխան չկայ, ու դադարեցուցին:

Թերթ զրկելու գործը ասկէ ետք Թերեւս «Հայրենիք»ի խմբագրութիւնը ստանձնէ, որպէսզի կանոնաւորութեամբ կատարուի: Առաջարկած եմ Կեդր. Կոմիտէին, եթէ ընդունի լաւ. կոմիտէ չեղած տեղերը թող 25 սէնթ զրկեն տարեկան, ու կանոնաւորապէս ստանան:

Մեր գործերը բաւական լաւ կ'երթան, զէթ փրփականաւոր մասը: Երկու օր առաջ ալ շրջաբերական մը ստացայ Բիւրոյէն, որով կ'իմացնէին Դաշնակցութեան հաշուով Ֆրանսերէն կիսամսեայ հանդէսի մը հրատարակութիւնը, որուն պիտի մասնակցին Ֆրանսայի ամէնէն համակրելի և նշանաւոր հրատարակադիրները, Անդրիայէն՝ ձէյյոս Պրայս, նաև Իտալիայէն Եւային(2): ԳԱՆՏԻՓ պահելու է Դաշնակցութեան հաշուով հրատարակուելը: Թերթը լոյս պիտի տեսնէ Նոյ. 10ին. «Հայրենիք»ի մէջ պիտի ջանամ ծանօթացնել: Այս մեծ քայլ մըն է մեզի համար. և պէտք է դիտել, թէ վերջերս Եւրոպայի մէջ մեզի նկատմամբ եղած համակրութիւնը օրէ օր աւելնալու վրայ է:

Գալով ձեզի, ես շատ կը փափաքէի որ այս կողմերը գայիր դուն: Գործի համար Պրն. Լեւոնեանը արդէն գրած է եղեր ժամանակին, որ երբ դաս, ջիշ մըս մըտաս, գործ անպատճառ կը գտնուի, խնդրե՛ր այն է,

թէ դուն ո՛րքան շուտ պիտի վարժուիս ձեզմէ պահանջուածը գոհացուցիչ կերպով կատարելու: Նոյնը կը կրկնէ հիմա ալ: Այս օրերս սակայն իրենց գործարանին մէջ նոր մեթոտ մը մտցնելով, դժուարացուցին գործերը: Սպասէ, քանի մը օրէն կրկին կը գրեմ գործիդ մասին, երբ Պրն. Լեւոնեանը որոշ դադարաւոր մը ինքն ալ կազմէ այդ մեթոտին վրայ:

Անակնկալ մը ձեզի համար, բայց չեմ ըսեր, վախնալով որ նամակս ուրիշներուն ձեռք անցնի: Երբ լուր տանեմ, որ տակաւին հոգ ես ու նամակս ստացած, այն ատեն կը գրեմ:

Քուկդ՝ Ա. Վ.

(1) Վարդ Մաճուշակ (Յակոբ Արքաճաճեան), որ Ամերիկայէն գացած էր Իզմիր, իրբն գործիչ:
(2) Կ'ակնարկուի Փարթի Pro Armenia-ին:

4 00 — 21

ԿԱՐԻՃԻ (ԱՌԱՆՁԱՐ) ՆԱՄԱԿԸ

Ճիւրիխ, 15 Դեկտ. 1900

Սիրելի Մարթին,

Դեկտ. 3 թուակիր նամակդ ստացայ: Քու տեղեկագիրդ ժընեւ ստացուած է. անցեալ օր Արեւմտեան Բիւրոն նամակով մը ինձ կը յայտնէր թէ ներփակ ինձ կը զրկէ այդ տեղեկագիրը, իմ կարծիքներս ու դիտողութիւններս անոր կցելու համար: Սակայն տեղեկագիրդ նամակին մէջ չէր, երեւի մոռցած էին ներփակել, զրկեցի որ զրկեն: Երբ ստանամ, աչքէ անցնելով իմ կարծիքներս ու տեսութիւններս ալ կը կցեմ անոր, այսպիսով առանձին տեղեկագիր մը ներկայացնելու հարկ չի մնար: Բայց սիրելիս, ինչպէս ասկէ առաջ քանի մը անգամներ գրած եմ ձեզ, այդ տեսակ ծրագրները իրապէս գործադրելու համար դրամական առատ միջոցներ պէտք են: Կարմիր Բերդի մեր կոմիտէի ընկերներէն մէկը, որ դեռ վերջերս Կեսարիա եղած է, ժողովուրդին գործելու պատրաստակամութիւնը յայտնելով հանդերձ՝ չափազանց աղքատութիւնը կը նկարագրէ: Ուրեմն երկրի ժողովուրդը նիւթական որեւէ միջոց գուրկ է, ու բացի անձնագոհութենէ ուրիշ բան չի կրնար ընել: Բայց մենք բազմաթիւ փորձերով տեսանք որ միմիայն անձնագոհութեամբ գործը չի քալեր, ընդարձակ կազմակերպութիւն մը, լուրջ նախապատրաստութիւններ և ժողովուրդը զինելու ամենակարեւոր հարցը դրամով միայն կրնան զլուծի դալ: Իսկ ո՛ր է այդ դրամը. ո՛չ ունինք և ոչ ալ ունենալու յոյս կայ:

1-5-10-50 Ֆրանկներով կամ դոլարներով հաւաքուած գումարները՝ գործի պահանջներուն հետ համեմատելով այնքան չնչին են, որ ամանով թափուած ջրի պէս ամէն անգամ կէս ճամբան կը ցամաքին ու ջաղացքը չեն կրնար դարձնել: Մեզի մէկ անգամէն խոշոր գումար մը պէտք է, առանց ատոր իմ կարծիքով չենք կրնար երբեք խոշոր գործ մը կատարել ու այսպէս հազիւ թէ յեղափոխութեան անունը կը պահպանենք: Պէտք է ամէն բանէ առաջ այդպիսի գումար մը ձեռք ձգելու ճարը խորհիլ: կամ պետական փոստատներ զարնելով, կամ հարուստ տանիկներու աները մտնելով եւ կամ ուրիշ միջոցով մը:

«Հայրենիք»ները այսօր ստացայ: Արդէն ասկէ առաջ իրար ետեւէ երկու յօդուած զրկած էի, որոնք անշուշտ մինչեւ հիմա հրատարակուած են: Թէեւ շատ զբաղուած եմ, բայց պիտի աշխատիմ կարելի եղածին չափ յաճախ գրել «Հայրենիք»ին. արդէն մի քանի յօդուածներու ծրագիրները կազմած եմ: «Հայրենիք»ը շատ կը հաւնիմ, Վ.Ի(1) հոգ զալէն ի վեր շատ բարուքած է, արտասահմանի ամենէն շնորհքով թերթն է: «Շարժում»ին չեմ գրեր, որովհետեւ յօդուածներս ապագրական անճոռնի սխալներով կ'աղաւաղէ, եւ ասկէ զատ հասած յօդուածը կը սպէ, առանց ընտրութեան: Թիրեալեանի հետ ունեցած տեսակցութիւնս պէտք է զազանի մնայ, որովհետեւ ինք վերջին ծայր զգոյշ է որ իր անունը չյեղոյեցուի թերթերու մէջ: Պոլիս կապեր ունի, կը վախնայ: «Հայրենիք»ի մէջ բորչիւրի մը յայտարարութիւնը կարդացի. ինկրտողի Գարողը. եթէ կրնաս ասկէ հատ մը գնելով ինձ զրկէ: «Չայն Ստամբուլ»ին ինչ ջուրի վրայ է, դեռ բաժանորդներ ունի. ո՞րը շատ կը ծախուի, «Հայրենիք»-էք թէ սա. այս մասին տեղեկութիւն տուր:

Գաւթը ի՞նչ գործով կը գրադի եւ նիւթական կացութիւնը ինչպէ՞ս է. գրէ ինձ:

Գու անձնական դժբախտութիւններդ ցաւ պատճառեցին ինձ. բայց սիրելիս պէտք է տոկալ, ուրիշ ճար չկայ: Մեր ճակատագիրը առայժմ դժբախտութիւն է, թէ՛ ընտանեկան եւ թէ ազգային տեսակէտով:

Ձիմամարզական խմբերուն ոյժ տուէք, ամենակարեւոր գործը դա է ըստ իս. եւ գրէ ինձ թէ մօտաւորապէս քանի՞ այսպիսի խմբեր գոյութիւն ունին եւ անդամներու թիւը ո՞րչափի կը հասնի:

Այսօր ուրիշ գրելիք չունենալով մնամ

Համբոյրներով՝
ԿԱՐՏԻՃ

Յ. Գ.— Ազատէրը Միւնիխէն (Գերմանիա) է, հիմա մեքենագիտութիւն կը սորվի:

(1) Ա. Վառնաճ:

401 — 1

Յ. ԳԱԼՖԱՅԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

1901 թուականի՝ Մարտի 10 Մուրատեանի քաղաքային մէջ կը գտնուի Յ. Գալֆայեանի (Վաքրաճ) եւ Կարթի (Ասամար) այս երկու նամակները միայն:

Աղեքսանդրիա 7/20 Ապրիլ 1901

Սիրելի Մարթին,
Սեպուհին(1) ուղղեալ մի նամակդ ելաւ, եկաւ ձեզի ծանօթ(2) Գալֆայեանին գրպանը ինկաւ: Պիտի զարմանաս, թերեւս պիտի զայրանաս եւ մէկու մը յատուկ նամակը բանալու մէջ անպարկեշտութեան վճիռը պիտի արձակես: Ձէ, սիրելի ընկեր, (եթէ երբեք ներքի է ինձ քեզի այդպէս յորձրջեալ) Սեպուհը(1) երեք շաբաթ է ի վեր մեկնած է դէպի Պուլկարիա եւ տեղական գործերը ինձի յանձնելով իր հասցէին եկող նամակները բանալու գիտ արտօնած է: Հասկնալի է ուրեմն թէ նամակը բանալով ո՞ւրէ անպարկեշտ գործ մը ըրած չեմ: Սակայն կատակը մէկդի: Արդեօք ինչո՞ւ ես մեզի ծանօթ (քու խօսքդ) Գալֆայեան մը կ'ըլլամ կոր: Արդեօք տեղերու եւ կամ ժամանակի հեռաւորութիւնը եւ երկարութիւնը ընկերականութիւնը ծանօթութեան կը փոխէ կոր: Ձեմ գիտեր: — Միայն այսքանը կը յիշեմ, թէ երբ ասկից կը մեկնէիր, կարծեմ հասցէս յուշատետրիդ մէջ ալ արձանագրեցիր, կ'երեւի թէ բոլորովին մոռնալու պայմանաւ, վասնզի ոչ մի նամակիդ, ոչ մի լուրիդ չարժանացայ, թէեւ անկէ անդին երկու տարիներ ալ անցած ըլլան: Մալէշ...

Տեղւոյդ լուրերու մասին բան մը գրել հարկ չեմ տեսներ, միայն կը բաւականանամ ըսելու, թէ Ամերիկայի հայոց մէջ հասարակական կեանքը աւելի զարգացած է քան արտասահմանի ուրիշ հայ գաղթականութեան մէջ, մինչեւ իսկ ամերիկեան թերթերու մէջ Մուրատեանի քանի մը բանախօսութեանց լուրերը կը կարդայի, առանց դիտանալու թէ նա մեր բարեկամ Մարթինն է: Կը շնորհաւորեմ ձեզ եւ ձեր ջանքերուն յաջողութիւն կը մաղթեմ:

Գահիրէի մեր ծանօթ կոմիտէին գողցուած գոյգերու մասին կը հարցնես: Շիտակը ըսելով թէ որեւէ ճշմարտութիւն մը երեւան չեկաւ: Կը յիշես անշուշտ թէ ան ատեններ Կիպրոսէն Մարգար Գալֆայեանը Գահիրէ հասած էր, որուն պաշտօն յանձնած էինք մի քանի կասկածուած մարդիկը լրտեսելու համար: Անոր գաղափար ու կարծիքը սա է, թէ յիշեալ գոյգերը Նշանը գողնալով Մուրթար փաշային ծախած ըլլայ: Ինքը կը պնդէ թէ մեր չանթան Մուրթարին տունը տեսնողներ եղած են եւ մինչեւ իսկ մարդը (20) ոսկիի փոխարէն բերել եւ յանձնելը խոստացած է, սակայն դրամական եւ այլ պատճառներով բանակցութիւնը ընդհատուած կամ խզուած է: Ինչ ստակալի բան: Գոցնեք:

Աւոյին մասին կը հարցնէք: Ինչ որ կը լսեմ վիճակը ցաւալի է: Հիւանդութեանը պատճառաւ չի կրնար աշխատիլ եւ հետեւաբար ապրուստի կողմանէ անպատճառ նեղ դրութեան մէջ ըլլալու է: Աւելի որոշ կերպով չեմ գիտեր, թէ իր նիւթական աղբիւրները որո՞նք են եւ ինչպէ՞ս կ'ապրի:

Ողբացեալ Վազգէնի ձեռագրութեամբ հայկական երգերու ճոխ հաւաքածոյի մը տպագրութեան պայմանները կը հարցնես: Նախ պէտք է ըսեմ թէ Մնտիկեաններուն տպարանը շատոնց դոցուած եւ տառերը եւ մեքենաները ուրիշներուն ծախուած է: Այդպիսի բազմաթիւ ֆորմաներէ բաղկացեալ մի գիրքը տպագրելու ամենէն յարմար տպարանը տեղս նոր հաստատուած «Արաքս» հայկական տպարանն է, որու վարչութեան հետ այդ մասին երկար բարակ տեսութիւններ ունեցայ: Ահա հաւաստի պայմանները, զոր պէտք է ուշադրութեան առնել: 1) Գիրքը եթէ գրածիդ համաձայն 750-800 երեսներէ բաղկացեալ է, ըսել է որ 45-50 հատ ութածալ (այսինքն 16 երեսներէ բաղկացեալ) ֆորմա պէտք է ըլլայ, որու 1500 օրինակի համար կ'ուզեն 180 դուրուշ ողջ: Ուրեմն ենթադրելով թէ 50 ֆորմա պիտի ըլլայ 1500 գիրքին համար պիտի վճարէք (90) երկպատկան ոսկի կամ ամերիկեան դրամով (450) թալէր: 2) Թուղթը բաւական գեղեցիկ է, որու ինչպէս նաեւ տպագրութեան մասին ձեզ գաղափար մը տալու համար նոյն տպարանէն առաջին անգամ լոյս տեսած հայերէն գիրք մը այս փոսթով ձեզ զրկած եմ: Ասիկա առաջին տպագրութիւնն է, որ փորձառութիւնը մի քանի պակասները չտկել տուած է եւ կը յուսամ թէ այս անգամ ասկի մաքուր տպին: 3) Որքա՞ն ժամանակի մէջ տպագրութիւնը կը լսնայ: Ծարաթը պիտի կրնան 2 ֆորմա տպել. ուրեմն միշտ ենթադրելով թէ 50 ֆորմա պիտի ըլլայ, 25 շաբաթէն պիտի կրնան ամբողջ գիրքը տպագրել: 4) Կազմի ծախքը իրենց վրայ է, եւ պիտի ըլլայ թղթակազմ, ճիշդ ձեզ զրկուած գիրքին կազմովը, եւ վերջապէս վճարման պայմանին գալով, իրենք խոստացան դիւրութիւններ ընծայել, այնպէս որ, թէեւ 40 անգլ. ոսկի միայն թուղթի ծախսն է. բայց կանխիկ եթէ կարողանաք 150 թալէրի չափ վճարուած մը ունենալ, կը յուսամ թէ մնացեալը գիրքերու վաճառուէն առաջին անգամ վճարելու պայմանաւ պիտի ընդունին: Գալով տպագրութեան տառերու տեսակին, ձեզ զրկուած գրքին տառերը կը բաւեն երգարանին տպագրութեան, իսկ եթէ ուզէք որ գրքին յառաջարանին կամ ասոր նման լիւքս տառերով տպագրել տալ՝ կրնան շուտով բերել տալ, արդէն շատ տեսակ տառեր ունին, ինչպէս ձեզ զրկուած գրքին մէջ գրուած օրինակէն կը հասկնաք. սակայն ասոնցմէ ամենն ալ գիրք տպագրելու բաւական քանակութեամբ չեն գտնուիր: Պէտք չէ անշուշտ կրկնել թէ 450 թալէրը 1500 օրինակի դինն է. իսկ եթէ 2000 օրինակ կ'ուզէք, այն ատեն ձեզի աւելի շահուոր կրնայ ըլլալ, կրնամ ըսել թէ 500 թալէրով

տպելու հաւանութիւն ցոյց տան. միայն պէտք է որ կանխիկ 200-250 թալէր վճարէք: Ուստի նկատի ունենալով թէ ձեզ զրկուած գիրքին ճիշդ քառապատիկ մեծութեամբ գիրք մը (5) զըշ. ողջ դրամի, այսինքն 25 սէնթի պիտի գայ, կը կարծեմ թէ այնքան ալ սուղ չպիտի երեւի ձեզ: Աւելին, դուք կը մտածէք եւ առաջին անգամ ինձի գրեցէք:

Կը վերջացնեմ սիրալիբ բարեւներով:
Գուկդ՝
Յ. Ա. ԳԱԼՖԱՅԵԱՆ

Հասցէս՝
H. A. Kalfaian
Poste française

(1) Հրաչ Թիքեալեան:
(2) Նամակիմ մէջ ստորագծուած:

401 — 2

ԿԱՐՏԻՃ (ԱՌԱՆՁԱՐ) ՆԱՄԱԿԸ

ՄԱՐԹԻՆԻՆ

Ճրարուորդ, 29 Մայիս 1901

Սիրելի Մարթինի թիւֆէնկ,
Ապրիլ 3 թուակիր նամակդ բաւական ժամանակէ ի վեր ստացած եմ, բայց համալսարան մը ընդունուելու համար վերջերս տեղէ տեղ թափառելու չկրցայ պատասխանել:

Նամակ չգրելուս համար ըրած մեղադրանքդ բոլորովին անհիմն է, որովհետեւ բոլոր նամակներուդ պատասխանած եմ եւ նախկին հասցէիդ գրած վերջին նամակովս ալ հարկ եղած տեղեկութիւնները տուած էի ժողովին զրկած տեղեկագրիս մասին:

Ես առանձին տեղեկագիր մը չլրկեցի, այլ քու տեղեկագրիդ կցեցի իմ կարծիքներս ու տեսութիւններս, որոնք քու տեղեկագրիդ չափ ընդարձակ բան մը եղան:

Իրերոյի պատգամաւորը (Գրիստափորը) ժողովի երթալու ժամանակ(1) Յիւրիսէն անցնելով անձամբ ալ խօսեցանք. ինք կ'ուզէր խոստում անել ինձմէ որ երկիր կ'երթամ եթէ մեր ծրագիրը ընդունուի: Պատասխանեցի թէ պատրաստ եմ անձամբ գործի երթալու, եթէ մեր ծրագիրը ընդունուի եւ եթէ Գալֆայեանները հարկ եղած նիւթական միջոցները կարողանայ մեզ հայթայթել:

Գրիստափորի հետ վերադարձին կրկին տեսակցեցանք Յիւրիս: Ժողովը ինքզինքը ձեռնհաս չէ համարէր տակտիկայի հարցերու մասին նոր որոշումներ տալու, այլ միմիայն դրամական միջոցներու մասին խորհրդակցեցր է: Հիմա քանի մը հոգի ընտրուած են փող հանգանակելու համար, այդ նպատակով Գրիստափորն ալ քանի մը ամիսէն Կովկաս պիտի երթայ. ինձի ըսաւ

որ պէտք է սպասենք այս ձեռնարկութեան արդիւնքին, ուրկէ կարուած է ամէն բան: Մինչեւ 6-7 ամիս ամէն բան կը պարզուի:

Ի՞նչ կ'ըսես, եթէ դրամական միջոցներ ճարուին, եւ եթէ երկրէն նպաստաւոր տեղեկութիւններ ստանամ, պիտի երթամ գործելու. Աղասէրն ալ փափաք կը յայտնէ միասին գալու, Բօրիսն ալ կ'ուզենք մեզ հետ կապել: Դուն ալ փրթիներդ ժողովէ, պատրաստուէ որ հեռագրելուս պէս գաս. Ի՞նչ կ'ըսես:

Վահագն(2) շատ բարեւներս յիշէ, հիմա հոս համալսարան մտած եւ կանոնաւոր ուսանող դարձած լինելով, գրադում շատ ունիմ, այնպէս որ մինչեւ արձակուրդները «Հայրենիք»ին բան չեմ կրնար զրկել: Բայց Յուլիանէն յետոյ եթէ նիւթ գտնեմ կը գրեմ: Հասարակական գիտութիւններ կը սորվիմ:

Դաւիթէն Ի՞նչ խաբար, թղթակցութիւնը ինծի հետ ինչո՞ւ խզեց, պատճառը հասկցիր: «Հայրենիք»ները կանոնաւորապէս կը ստանանք. կը խնդրեմ եթէ ձեռքդ անցնի երբեմն ալ «Չայն Ստամբուլ»էն զրկէ, տեսնեմ ինչ զուտնա կը փչէ:

Պաղտատի բանտարկեալի մասին հարցնելով պատասխանը կը հաղորդեմ Ոսկեհանք(3):

Այսօր այսչափ, տեղեկութիւններ գրէ այդ կողմերու գործերէն:

Համբոյրներով՝
Մ. ԿԱՐԻՃ

Հասցէս՝
38, Scheffelstrasse, 38
Freiburg i. / B.

(1) Դաշնակցութեան կամքը ներկայացնող Մարմնի ծագով, Յիլիպէ, 1901 (որ վերջնական ձեւ ստացաւ «Փոքրբիկ»ի ծրագրէ, Գրիստափորի ղեկավարութեամբ):

(2) Ա. Վահագն:

(3) Իզմիր:

4 02 — 1

ԵՒՈՒԱՐԴԻ ՆԱՄԱԿԸ

Իզմիր, 16/29 Մարտ 1902

Մերելիդ իմ Մարթին!

Այսօր տխուր վայրկեաններու տպաւորութեան տակ հարկ կը զգամ քեզ ալ քանի մը տող ուղղելու:

Մարդկանց թախծութիւնները թորչք կու տան իւրեանց երեւակայութեանց սուրբալու անհոգ անհուստութեան մէջ, զիրենք սիրտի ու սիրտի մը, իրենց վըշտակցող հոգի մը, իրենց հառաչանայ արձագանգող ձայն մը, շշուկ մը գտնելու, խօսելու, ըսելու, ունկընդորելու: Դժբախտաբար մեր երեւակայութեան դաշտը բաւական ամառի է այդ մասին, ուր եթէ... կոտ(1) էակի մը խրախուսիչ մէկ շշուկն ալ լսուի, բաւական

պիտի համարուի անհուն մխիթարութիւն առթելու մեզ: Սիրտս բեկուած, հոգիս դալկացած, մահացուցիչ հով մը կ'ացնի ամբողջ էութեանս վրայէն: Չեմ գիտեր թէ ո՞ւր եմ եւ ի՞նչ եմ: Աշխարհ մթնցած զնտանի մը երեւոյթը կ'ընծայէ աչացս, ուր մելամաղձոտ էակի մը նման յաճախ ինքզինքս թեթեւցած կը գտնեմ ու չեմ կրնար ինքզինքիս հաշիւ տալ, թէ ի՞նչ անհաւոր, անդընդային վիճակ է այս՝ ուր հոգիս ակամայ կը սուզի, կը թաւալի...

Յաճախ յանդուգն խորհուրդներ կու գան կը պաշարեն ամբողջ էութիւնս, ու ջղային բուռն ցնցումներով, մահուան անկողնէն զարթնածի մը պէս կ'ուզեմ կապանքներս խորտակել ու դուրս գալ այս հեղձուցիչ, այս սպաննող, այս մահառիթ, տխուր մթնոլորտէն. դուրս գալ ու ցոյց տալ կամաւոր կոյրերուն այն բոլոր անմտութիւնները, եսականութենէ առաջացած փոքրուցութիւնները, հակասութիւնները, որոնք մարդուս նկարագիրը կը ցածցնեն ու խիղճը կը մեռցնեն, որոնք անկեղծ մարդկանց զայրոյթէն տարբեր բան չեն ներշնչեր, ցոյց տալ հասկցնելու համար թէ ո՞րքան սխալ բան է անհատի մը պատուին, անձի մը արժանապատուութեան հետ խաղ խաղալ, քմահաճոյքներու ենթարկելով զայն:

Ե՛հ, Մարթին, վիճակ մը բաժին եղած է ինձ՝ որ ան ալ ոչ ոքէ չ'ըմբռնուիր, չի ճանչցուիր, ու եթէ վաղը ճանչցուի իսկ ուչ պիտի ըլլայ այլեւս, որովհետեւ մարդկային եսը, այն որդը որ հոգին կը տկարացնէ, երբ արդարութիւնը ուրանալու կը հարկադրէ մարդուն՝ զայն, այդ եսը բարձր բռնելու սնամիտ խորհուրդով: Ու այն շատերն ալ որոնք անկախ այդ եսէն, անկախ ամէն զգացումէ, սոսկ ճշմարտութիւնը կը հետապնդեն՝ աւա՛ղ, որ անոնք ալ միջոց ու պատահուութիւն, դիրք ու հանգամանք չպիտի ունենան անոր խելամտելու, անոր տեղեկանալու եւ իրենց զաղափարը յայտնելու, իրենց դատաստանը ընելու:

Դժբախտ արարածներ ենք մենք, սիրելի՛ս, չափազանց դժբախտ. ափսո՛ս, որ մինչեւ ցարդ չենք գիտցած ազատութեան ճամբուն մէջ անկախօրէն մտածել, անկախօրէն խորհիլ ու անկախ գործել: Մենք դեռ կեանքի այն սանդուխներուն ենք, ուր մարդս իր բուն զոհողութեան ոգիով իր դժբախտութիւնը կը հիւսէ, ուր նա իր դժոխքը կը պատրաստէ նոյնիսկ իր անկեղծ մտածման, իր սիրոյ զգացման, իր զաղափարի պաշտպանման թափով...: Դարերու մարդը իր երեւակայութեան, իր զգացումներու գերին եղած է, մերթ աստուածներ եւ մերթ իշխաններ ստեղծելով իր զլխին, գերուած է նա մերթ իր թոյլ հոգով իր ստեղծած նախապաշարումներէն, ու մերթ իր մոլի զգացմանց անհեթեթութիւններէն...: Ու այդ մարդը մինչեւ օրս ալ կը խարխափի բոլոր այն երեւոյթներուն մէջ, ուր զգացումները միայն կը գործէ ու սիրտը իր ցնորքներուն հետամտելով՝ իր թեւերը լայն կը բանայ տեղ մը հաս-

նի կարծելով: Հազար անգամ խաբուած է մարդկութիւնը իր ստեղծած աստուածներէն եւ սակայն դեռ հազարաւոր անգամներ ալ խաբուելու տրամադիր կ'երեւի նա: Հազար ու բիւր անգամներ մոլորուած, տատանուած է այն իր երեւակայութեան անհեթեթ ստեղծագործութիւններէն եւ սակայն դեռ բիւրաւոր անգամներ ալ պիտի մոլորուի, պիտի գլորուի, պիտի տատանուի մինչեւ վերջապէս գիտութեան լոյսը իր կիզիչ ճառագայթներով կու գայ այրել չորցնելու այն բոլոր ցնորքները, որ անյիշատակ դարերէ ի վեր մարդկային սիրտը պարուրած են ու դեռ եւս կը գերեն զայն:

Մենք յեղափոխական անունին տակ ապրող արարածներս, որ ամէն բանէ աւելի սրտի, զգացումի մարդերն ենք ու մեզ համար գաղափար մը, իտէալ մը, պաշտամունք մը կազմած ենք եւ որուն իրականացումին սիրովը տոգորուած ուղի մը ընտրած ենք ու կը քալենք հոն թառամեցնելով, մահացնելով ամբողջ մեր էութիւնը, չունինք սակայն ազատ խորհելու, ազատ մտածելու, ազատ դատելու ազատութիւնը, թէեւ ազատութիւնը ինքնին մեր իտէալն, մեր քարոզը, մեր կեանքի միակ հետապնդող նպատակը ըլլայ. չունինք, որովհետեւ իսկ եւ իսկ անկախ մարդեր չենք, անկազկանդ հոգի չունինք ու մենք մեզմէ իսկ թոյլ կու տանք որ հոն ալ առաջ անցնին քիչ մը աւելի ճարպիկները, քիչ մը աւելի խորագէտները, ու զօրանան, իրաւունքներ ձեռք բերեն եւ մեր զլխին իբր իշխան անցնին, միայն մեզ հրամայելու, մեզի, մեր կամքին, մեր կեանքին ու զաղափարին վրայ իշխելու... Ու վա՛յ անոր, որ համարձակի իր ազատ զաղափարը ունենալ, որ հակառակ ըլլայ իր՝ հօգրին զաղափարին, կամ անոր կամքին, քիմքին... Ու ահա այդ ժամանակ մարդկային բոլոր ստորութիւնները, բոլոր քսութիւնները, բոլոր հրէշութիւնները դուրս կը թափին խեղդելու այդ ձայնը, որ անխորժ հնչած է իրեն:

Այսպիսի երեւոյթը յեղափոխական կեանքին մէջ ես կը կարծեմ ըլլայ է՛ն սնամիտը, է՛ն ցնորամիտը, է՛ն եպրելին ու է՛ն անշահը: Բարձր ու վսեմ գործի մէջ փոքր եսութիւններ, տղեղութիւններ, զրպարտութիւններ՝ անոր հանդէպ որ իրենց իրենց ընկերն էր, սուտ ու յիմար յերկրանքներ՝ որոնք երեւակայել իսկ դժուար է, զգուշի հակասութիւն մըն է... Ժողովուրդի մը ազատութեան համար մղուած նուիրական ասպարէզին՝ եսական նեխած քիմքեր, փառասիրական տենչերու ծառայած նկրտումներ՝ որոնք սկզբունքը կը թուլացնեն ու զաղափարի վեհութիւնը կը նսեմացնեն, այո՛, մարդկային է՛ն աղտոտ, է՛ն ցնորական մէկ վիճակը կը պարզեն: Ու մաքուր հոգիները չեն կրնար ապրիլ, չնչեւ հոն. հոն կը ծնի զայրոյթի այն գոռում զոչումը, այն անհոգ զգացումներու թափը, որ կը փչրէ այդ մաքուր գործին բոլոր սինլէոր, անճահ չհասակները ու վերջապէս տեղի կու տայ նոր, մաքուր մթնոլորտի մը, ուր միայն գործը իր ճշմարիտ պաշտ-

պանները գտնելով՝ անսայթաք առաջ կ'ընթանայ, հասնելու համար իր նախընտրած ովասիսը...

Գիտեմ թէ այս տողերը զառանցանքի մը տպաւորութիւնը պիտի ներգործեն ջո վրայ, սիրելիս, քանի որ չես գիտեր ու չես ալ կրնար գիտնալ, երեւակայել այն պարապան ուր կը գտնուիմ, այն վիճակը ուր սուղուած եմ, այն դառն վայրկեանները, որ պաշարած են զիս ու այսպէս՝ բոլորովին իրենց ազդեցութեան տակ առած են զիս: Դուն չես կրնար երեւակայել զայն ու ես ալ ոչինչ չեմ կրնար գրել քեզ, խորհելով որ անկարելի է այսպիսի տողերով, այսպիսի գրչով բան հասկցնել: Ուստի թող ապագային սիրտս խօսի ու պարզէ այն արեան լիճը, զոր կը խմէ իր թոքերուն մէջ: Այսքանով պիտի բաւականանամ առայժմ, սիրելի Մարթին. որքան քիչ գրեմ, որքան քիչ խօսիմ, այնքան լաւ համարէ առայժմ, մինչեւ որ մեր սրտերը իրար մօտենան ու իրարու խօսին:

Ներփակեալները, այն պարագային, որ դուն չկրնանս ինձ համար 60-70 տոլարի չափ դրամ հասցնելու միջոցը ունենալ, զրկէ ատոնց, դուցէ անոնք կ'ունենան եւ կը զրկեն՝ ազատելով զիս այս խեղդող մթնոլորտէն:

Այդ մարդկանցից դրամ խնդրել իրաւ մահուան չափ ծանր է ինձ, ամօթէս կը մեռնիմ, բայց ի՞նչ արած, այստեղի սնտուկէն ինձ համար դրամ ուզելը աւելի ծանր է, քանի որ արհամարհելով արհամարհել կ'իյնայ ինձ այն արարածը, որը ճարպիկ է ամէն ինչ իր քմանց ծառայեցնելու, ամէն ինչ իր եսին գործածելու ու ամէն բան իր ազդեցութեան ենթարկելու:

Հա՞րկ է արդեօք յիշել, որ փոխանակ երկիր երթալու, փոխանակ Լեռնավայր մեկնելու, շնորհիւ մեր ընկեր Սեպ(2) անուանեալ արարածի կասկածոտութեան, վայրահաջութեան, այժմ հոգ գալու տրամադրուած եմ:

Մօտ ամիս ու կէսէն աւելի է որ բոլորովին խզած եմ յարաբերութիւնս, ու խնդրած էի Ժընեւէն, և այդտեղ՝ Վահագն(3), որպէսզի ձեռնհաս մէկը զրկուէր. գէթ կարդ մը թիւրիմացութիւններ, որոնք հաւատացած եմ թէ ծանր հետեւանքներ պիտի առաջացնեն, կը մաքրուէին, կը հարթուէին ու ամէն ոք իր ինչ ըլլալը կը հասկնար: Սակայն Վահագն իր սովորութեան համեմատ տարին մէկ անգամ կը պատասխանէ, իսկ Ժընեւէն ալ նամակով մը իմացուցին, որ Լ.ը(4) կու գայ եւ կը տեսնուի, որը սակայն գալուն ինկաւ Սեպ.ին(1) ազդեցութեան ներքոյ ու բնաւ չտեսնուեցաւ ինձ հետ: Ես ալ չեմ ստիպեր արդէն որ տեսնուի եւ ոչ իսկ հասկըցուցի որ ես գիտեմ իր գալը, իր հոս ժամանելը:

Այժմ կամք Տեառն օրհնեալ եղիցի. «Կեչախք պուտէքէնին քերթէթիւնտէն»...

Որքան կարելի է շուտ գրելու ես ինձ եւ այս դրամը իմ միակ ազատիւս է. հակառակ պարագային կորած եմ այստեղ, դիտցա՛ծ եղիք:

Միւս նամակներուն հասցէները չեմ գիտեր, ատոր

Համար քեզի զրկեցի որ հասցնես տեղերը: Սերբ Մհր. Ահարոնեան Ուստր կը գտնուի, կրնաս ուսել մէկին զրկել հասցնելու համար, բայց դուն ալ երկտող մը գրէ ու իմացուր որ գաղտնի պահեն:

Սարգիսը քեզ ծանօթ է արդէն. թերեւս այժմ ալ Լին կը գտնուի:

Հասցէս յիշած եմ միւս նամակներուն մէջ եւ պարզած, թէ դրամը ինչպէ՞ս պէտք է հասցնել ինձ: Դուն ալ ջուր կողմէդ ծանօթութիւն տուր:

Ընկերական շնորհ համարոյններով,

Քոյդ՝
ԷՆՈՒՄՐԻ

(1) Մէկ բառ անբարեմտի:

(2) Ծածկագիր. — կ'անպարկուշի հաւատարմի՝ Հրաչի (Սեպուհ):

(3) Արշակ Վասման:

(4) Ա. Լեւոնեան (Աշոտ Երկաթ):

4 02 — 2

ԱՇՈՏ ԵՐԿԱԹԻ ՆԱՄԱԿԸ

Իզմիր, Ապրիլ 15 1902

Սիրելի՛ Մարթին,

Պրն. Վառճապարի իմացած կ'ըլլաս ապահով հոս հասնելու:

Գալէս ի վեր տխուր իրողութիւններով չըջապատուած եմ եւ խիստ դառնացած:

Էդ. (1) կարգ մը յիմարութիւններով ստիպած է տեղական ընկերները հեռացման վճիռը տալ եւ ես ալ համաձայնեցայ անոնց հետ երկար քննելէ եւ վիճելէ ետք: Գրեթէ մինչեւ այսօր այդ խնդրով զբաղած եմ եղեր: Կարճ մը պատմեմ եղելութիւնը:

Էդ. (1) վիրաւորական ծանր խօսքեր կ'ըսէ ընկերներէն քանիներուն, ոմանց նոյնիսկ կը հայհոյէ: Ինք պիտի մեկնէր ասկէ, ասոր համար ալ գոյգերը, որ մշեցիի մը քովը կը պահուէին, ուրիշ ընկերով մը կը յանձնարարուի պէտք եղած ատեն առնել եւ այդպէս ալ կը յայտնուի մշեցիին: Օրին մէկը Էդ. (1) կը ներկայանայ մշեցիին ու կ'ըսէ. «Գոյգերը ինձմէ զատ ոչ ոքի պիտի տաս»: Նոյն կամ հետեւեալ օրը վերջին մարդը (Չոհրայ որ քեզի անծանօթ ընկեր մըն է) մշեցիին քով կ'երթայ. մշեցիին կը հարցնէ թէ ի՞նչ պատահած է որ Էդ. (1) եկաւ հրամայեց որ գոյգերը իրմէ զատ ոչ ոքի տամ: Չոհրայ կը բարկանայ եւ կը հրամայէ մշեցիին, որ գոյգերը Էդ. (1) չտայ եւ կու գայ եղածը միւս ընկերներուն կը պատմէ: Էդ. (1) կը հարցուի թէ ինչո՞ւ այդպէս պատուիրած է մշեցիին. կ'ըսէ, «Քրովհետեւ ձեր վրայ վստահութիւն չունիմ»: Ասոր բացատրութիւն կը պահանջուի. ոչինչ չի տար: Խնդիրը ասկէ կը կնճառուի:

Ժընեւ էի, գրեցին հոն, փութացի դալ հոս կարգադրել: Եկայ, Էդ. (1) հետ տեսնուեցայ, կարգ մը խնդիրներ բողբոջի ուրացաւ: Նեղ դրութեանց մէջ ինկայ. կամ այն էր հաւատալ Էդ. (1) եւ ստախօս համարել Չարհատը, իր կինը, Չոհրայը եւ Վարդը եւ կամ վերջիններուն հաւատալ: Բայց յամառութեամբ մը երկու կողմին ալ չհաւատալ տուի, խնդիրը իր հիմէն հասկնալու, իսկովին համոզուելու համար:

Էդ. (1) հետ ունեցած երկրորդ տեսակցութենէ մը վերջ կարողացայ Էդ. (1) մէկ քանի փոքրիկ սուտերը բռնել եւ տեղեկանալ իմ գլխուս խաղալիք մէկ խաղին: Սուտերը մէկ կողմ կը թողում, միայն պատմեմ իր խաղը որ պիտի խաղար: — Ինձի ըսաւ թէ կարգ մը մշեցիներ կան, որոնք քովերին դրամ ունին, եւ չեն ուզեր ներկայ վարչութեան յանձնել. եթէ անոնց դրամները չգանձուին, կը թուլնան եւ կը քայքայուին: Յետոյ առաջարկեց որ, դրամները գանձէ՛ ինձ յանձնէ, ես ալ ընկալադրեր քամ որ մշեցիներուն տայ: Ըսի իրեն թէ, դեռ ատեն մը տեղական գործերուն չպիտի խառնուիմ: Ըսաւ, հապա թողո՞ւնք որ քայքային: Ըսի, կրնան ատեն մըն ալ սպասել:

Իր քովէն մեկնելէն քառօրը ժամ ետք, մէկը ինձի պատմեց, թէ Էդ. (1) մշեցիներուն պարծենցած է, թէ կրկին ամէն ինչ իրեն յանձնուած է եւ թէ դրամները իրեն յանձնուած են ու ինք ընկալադրեր պիտի տայ իրենց: Սոսկացի, զգացի թէ ուզեր է իմ միամտութիւնս շահագործել, լոկ իր դիրքը հաստատելու համար: Նոյն օրը երեկոյան, նոյն պատմութիւնը ուրիշ աղբիւրէ մըն ալ լսեցի: Ալ կը բաւէր. խղցի յարաբերութիւններս:

Ներկայիս քեզմէ հարցնելիք մը ունիմ: Լսեցի թէ օրին մէկը դանակ քաշած է եղեր ջուր վրայ. իրմէ հարցուցի՝ ուրացաւ: Այժմ կը խնդրեմ ինձ գրէ. լսածս ստո՞յգ է, իրօք դանակ քաշե՞ր է վրադ: Լոկ հետաքրքրութիւնս յաղեցնելու համար կ'ուզեմ իմանալ:

Գործի տեսակէտէն, դեռ նոր սկսած ենք ծրագրել, մօտերս կը ձեռնարկենք թերեւ: Յաջորդ շարժու Պրն. Վառճապարի կը գրեմ գործի մասին, անկէ կը տեղեկանաս մանրամասնութիւններուն:

Էդ. (1) պատճառաւ կապերը հոս մի քիչ խախտեցան, ջանացինք ամրապնդել սակայն. Տեղական ուժերը (մշեցոց խումբերէն զատ) Էդ. (1) դրամամբ մի քիչ հակառակութիւն ցոյց կու տան: Տեսայ գիրենք, խօսեցայ, համոզեցի, բայց թէական մնաց խնդիրը:

Եթէ այդ ուժերը այսպէս ջլատուած չըլլային, հիմա գործի սկսած էինք: Բայց ինչ որ է առանց անոնց ալ որոշած ենք գործել: Գործը պիտի հաւաքէ իր շուրջը պէտք եղած ուժերը:

Բարեւներս քեզի եւ ընկերներուն:

Համարոյններով՝
ԵՐԿԱԹ

(1) Էզվարդ:

4 02 — 3

ԷՎԱՐԴԻ ՆԱՄԱԿԸ ԱՇՈՏ ԵՐԿԱԹԻՆ

Նամակի ստորագրութիւնը կարելի է կարգալ ՍԻՊ, ինչ որ առջին աքթի ենթագրել կու տայ քէ գրողը Սեպուհն է (Հրաչ թիրեախեան): Սակայն ձեռագիրը, բովանդակութիւնը եւ ոճը յստակ կը դարձնեն՝ որ գրողը Էզվարդն է կամ Էզվարդը: Աւելի՛ 402—5 մամակին մէջ, Իզմիրի ընկերները կը խօսին ՍԻՍԱԿի մասին որ, գրութեան գաղտնիք, ուրիշ մէկը չէ քթ ոչ միւսեայն Էզվարդը: Ասկէ կ'զգրակցանք՝ որ, ամենայն հաւանականութեամբ, մերկայ մամակի ստորագրութիւնը պէտք է ըլլայ ՍԻՍԱԿ (արագ ու կրճատ գրուած, ՍԻՊի մտքով):

Իսկ քէ ո՞վ է Իզմիրի ընկերներուն համար Սիսակ անունով անցուցուող այս Էզվարդը կամ Էզվարդը (երկու ձեւերն ալ գործածուած են իր եւ ուրիշներու մամակներուն մէջ), որ, ըստ երևոյթի, 1902ին արդէն հինգ տարուամ անցաւ ունէր Ոսկեհամբէ մէջ եւ որ, տեղակալ Մարմինն որոշումով եւ Լեւոնայի Պատասխանատու կեդր. Կոմիտէի անդամ Աշոտ Երկաթի հաստատումով, կը հեռացուէր միեւնոյն թուականին (այս մտքին տեսելու մասն «Երկաթի յաշտեմար», — Ռուբէն, Ե. հատոր, էջ 143), — կը գծուարամանք մըն: Կապ ունի՞ արդեօք Վառճապարի Վեպարեանին հետ, որ 1905ին գահուցաւ Քրիստափորի հետ, ասմի փորձի պահուած: «Երօշակի» 1905 Ապրիլի համարը, գուժով Քրիստափորի մասը, իր Բ. էջին վրայ, սեւ շրջագծի մէջ, կը գրէ մասն. — «Մարտ 4ին, Սօֆիայի մէջ, ուսմբի պայթիւնի մը զօճ գնաց մեր ընկեր ԷՆՈՒՄՐԻՆ, գործն անգամ դաշակեցան կարեւորապէս մարմիններէն մէկուն (կ'ակնարկուի անշուշտ Գ. ընդհ. ժողովի ընտրած Յուցակամ Մարմինն, — Հ. Տ.): Քանի մը կարեւոր հանգամանքներու պատճառով, մենք առ այժմ անկարող ենք զետեղել «Երօշակի» էջերուն մէջ անոր կենսագրութիւնն ու պատկերը: Այդ պիտի թողնուի ապագային»:

«Ապագային», դժբախտաբար, ոչինչ կը գտնենք Էզվարդի մասին: Ուստի անորոշութիւնը կը մնայ: Այդ անորոշութիւնը կ'անկնայ՝ միայն ԷՆՈՒՄՐԻ ստորագրութիւնը կրող ստացագրի մը պատճառաւ, 20 Մարտ 1905 թուականի, գոր կը գտնենք Մարտի Մարտեանի թուականին մէջ, եւ ուր կ'ըսուի՝ «Է Էզվարդ Իզմիրի բանտարկեալ ընկերներու զրկուելիք գուժարի մնացորդին՝ ստացած եւ Պ. Մարտի 48 արտախի: ԷՆՈՒՄՐԻ»: Այդ Քրիստափորի եւ Վ. Քեմտիքեանի մասը տեղի ունեցաւ 1905 Մարտ 4ին, կամ նոր տոմարով՝ Մարտ 17ին, ուստի բոլոր պարագաներուն՝ Մարտ 20ին (ստացագրի թուականին) առաջ:

Մնացած են արդեօք Էզվարդի ժամանակակից իզմիրցիներ, կամ այլ տեղ գրաւոր սեւ յիշատակութիւն կա՞ն անոր մասին, — կ'անգիտանմք: Արիւնային այլ քաղաքներու հրատարակութիւնը հաւանաբար հետագային յատկապէս յայտնուած անոր ինքնագրին վրայ:

Պր. Ա. Ս. Լ. (1)

Ձեր Ապրիլ 13/26ի տողերը շատ ուշ հասած է իմ ձեռքս, թուականէն 12 օր վերջը:

Ձեր ինձ ուղղած վիրաւորանքներուն, որ ժամանակէ մը ի վեր անտարբեր դարձուցած էին զիս, չպիտի յանձն առնէի պատասխանել, եթէ սակայն չմտածէի թէ՛ տխուր իրողութիւններու դէմ յանդիման կը գտնուիմ, որոնց այլեւս վերջ մը տալ անհրաժեշտ է:

Ամէն տեսակ ուղղակի պատասխանատուութիւններէ հեռու գտնուած ըլլալով, նախորդիւ խնդրած էի պաշտասպասի, որպէսզի ազատ թողնէիք զիս ձեր այդ անտեղի յարձակումներէն...

Այսօր կը տեսնեմ, թէ աւելի առաջ դացած էք ձեր այդ յորջորջումներուն մէջ, ինչ որ սեւէ միտք չունեցող անտեղի վիրաւորանք մ'է իմ անձիս դէմ շարունակուած:

Ինչպէս ցարդ հոս ու հոն դարբնուած սուտերու, զրպարտութեանց, այն ալ ստոր սուտերու, զազրելի զրպարտութեանց հանդէպ լուռ եւ անտարբեր մնացի, նոյնպէս ալ այժմ եւ միշտ կրնայի խուլ ու մունջ ձեւանալ, եթէ սակայն ձեր ընթացքէն եւ անոր հետեւութիւններէն բացարձակ համոզում չգոյացնէի, թէ իմ այդ լուռութիւնս կրնայ ամէն բանի ծառայել բացի գործը փրկելէ, որով եւ իմ վրայ ալ անուղղակի ահարկու պատասխանատուութիւններ պիտի ծանրացնէ:

Ձեր հոս հասնելէն առաջ դուք, Պրն. Լեւոնեան, հեռուէն իսկ գիտակցած էիք, կը կարծեմ, իմ բացայայտ իրաւունքը ձեր այժմեան ընկեր անուանած տխուր արարածին տեղոյս կազմակերպութեան հեռացման պահանջն, խեղդելու համար այդ նոյն արարածի առած քայլերուն ամբողջ հրէշայնութիւնը, անոր խաղցած խաղերուն աններելի, անխոստովանելի գժուճ հանդամանքները, մանուածապատ, ցածհոգի, ստորնացուցիչ, դեռ նմանը չտեսնուած դարձուածքներով, ինքը իրեն դիրք մը ստեղծելու սին պատրանքէն թելադրուած, իր ընկեր անուանածները խարած-խարխրած ու իր եսի փրկումին ծառայեցուցած, գործին վտանգը զրպանած եւ վերջապէս ամէն տեսակ զազրելի, միտքէ դուրս միջոցներ խորհած, հնարած ու գործած ըլլալու մութ հոգեկանութիւնը...

Դուք գիտակցած էիք այս ամենուն երբ դեռ հեռուն էիք եւ տեսաք ձեր աչքերով եւ ըմբռնեցիք միանդամայն, թէ այդպիսի կացութեան մը հանդէպ որպիսի զգուշաւորութեամբ վարուած էի ես այդ պաշտօնական անուան տակ հրապարակ եղած բոլորիս պատիւը արատաւորող արարքները մեղմել, չքմեղել, սահմանափակել, շարժարձելու համար:

Ու դուք ակնատես եղաք դեռ աւելիին:

Երբ մարդուն սիրտն ու հոգին բզբտող այդ ճիւղային արարքները նուիրագործուեցան, սրբագործուեցան եւ ձեր մասնակցութեամբ, որուն ոչ միայն լուր յանձն առի, այլեւ մէկէ շատ աւելի փորձեր ըրի իրաւունք եւ հաստատութիւն տալ՝ կեղծելով միամիտներուն, որպէսզի յեղափոխական անունը — որով հինգ տարի ապրած էի հոս — չազարտուէր, չցեխոտէր, որը սակայն չնորհիւ ձեր... ընթացքին իր նպատակէն շեղեցաւ, ջուրը ինկաւ:

Այսպիսի պարագային բողբոջի ազատ թողի ձեզ շարունակել գործածել ձեր ամբողջ խելքի ու մտքի պաշարը՝ զայրացած ու վայրագօրէն յօտել, խոշտանդելու զիս, ու գործը՝ ձեր ընկերով առաջացուցած անկումէն փրկել:

Ու այսպէս, ինքնակամ ինքնապանութեամբ, սա-

բորինակ, գուցէ նմանը երբեք չտեսնուած զո՛ւ մը դառնալով, իբր իրաւացի յանցաւոր մը՝ արժանի ձեր դատապարտութեան, մնացի ձեր առաջ, որպէսզի ձեր մուկին յարձակումներով աղէկ մը մեռցնէիք ձեր խելո՛ւն, ձեր զգացմունքները, ձեր հոգին, ձեր բանակա՛նութիւնը ու այսպէս երկու օր վերջը առանց խզճի, առանց զգացմունքի, առանց բանականութեան, մերկ ու անպաշտպան, «լալ ու կճրտել ատամաց» իբր միակ բաժին ունենալով, նստէիք գործի աւերակներուն վրայ ձեր մերկութիւնը ողբալով, ձեր խելքի նմոյշը պարզէիք աշխարհին...

Ձեր այս տմարդի յարձակումներուն ոչ թէ դիմադրել — որովհետեւ ոչինչ չէիք ներկայացներ՝ ոչ մի ոյժ, ո՛չ բարոյական և ո՛չ ալ նիւթական, ո՛չ իրաւունքի և ոչ ալ արդարութեան, որուն դիմադրել յանձն առնէի — այլ սոսկ արհամարհական ակնարկով մը դիտէի ձեզ ձեր տեղը ցոյց տալ: Բայց չըրի ու լռեցի, որովհետեւ ընկերական պատուոյ նախանձախնդրութիւնը տարբեր արմատներ ունէր իմ մէջ, որոնք մէկէն ի մէկ չէի կրնար կտրել նետել իմ սրտէն և որովհետեւ ես իմ պատիւս այդ կերպով պաշտպանել չէի ըմբռնած: Լռեցի, որպէսզի այդ աղտոտ արշաւանքէն խուսափած ըլլալի, լռեցի, որպէսզի ինքզինքս որեւէ նշխարի չենթարկէի հոն. լռեցի, որպէսզի քանդուած այդ զազրելի քայլերուն մէջ դոյզն մասն ու բաժինը չունենայի, չհրաւիրէի ինձ վրայ, և լռեցի որ ձեր և ձեզ հաւատացողներուն յոյսերը վերջ գտնէին ու յեղ. մաքուր հրապարակին վրայ կատարուող այս քստմնելի տեսարանը իր բոլոր լրացուցիչ մասերով կատարեալ ըլլար. ու եղաւ ու պէտք եղած դասերը թելադրեց առ որ անկէք, ու այժմ միայն ու միայն պարտաւորութեան մը խնդիրը դրուած է բոլոր անոնց առաջ, որոնք մասնակցեցան կամ հետեւեցան անոր, և որոնք եթէ քիչ մը անկեղծ զգացմունք պահած են իրենց սրտին խորքը, խոստովանելու քաջութիւնը ունենան իրենց ընթացքի այս աղետարէ հետեւանքները, և իրենց քաւրանները քաշուելով թողուն որ գործը այս ահաւոր անդունդէն փրկելու մեզ վիճակուած պարտքը կատարելու հետամտինք ու մեր հրահրած անուղղակի պատասխանատուութիւններէն ալ գէթ մասամբ ազատուելու միջոցութիւնն ու խզճի հանդիսը գտնենք:

Դժբախտաբար այն անկեղծ խոստովանութիւնը զեւ ևս չեմ տեսներ ձեզ մօտ, ինչ որ միակ փրկարար երեւոյթը պիտի ըլլար: Դուք ընդհակառակը ձեր այս սողորմով ոլորուն ճանապարհներու կը դիմէք գործը քանդելու միտում վերադրելով ինձ... Կը կարծէի թէ պիտի կարենայիք ըմբռնել իմ այդ լուսութիւնս, որ իմ ներքին խառնուածքի կամ հոգեկան յատկութիւններու երեւոյթներէն կ'առաջանար: Դուք փոխանակ ուղղամարտէն բացարձակ իմ այդ ամէն կերպով տեղի տալս, ընդհակառակը չէք ուզեր անոր իրողութիւնը ընդունիլ ու ձեր անյաջող քայլերը իմ թելադրանքնե-

րուս կ'ուզէք վերադրել, որը կարծես թէ համարձակ ընել անկարող ըլլալի:

Դուք, Պրն. Լեւոնեան, ձեր ընկերներուն նախաքայլերուն անտեղեակ մնացած էիք երեւի կամ թէ չէ փառաւորապէս խարած էին ձեզ, որով ձեր ընթացքին մէջ այնպիսի հակասութիւններու ենթարկուեցաք, որ անկարելի դարձուցիք ինքզինքնիդ ձեր կոչումին ծառայեցնելու:

Ու այսպէս՝ ձեր ընկերներու գործածած տգեղ միջոցները դուք ալ պարտաւոր համարեցիք ընդօրինակել և անոնցմով ուղղել ձեր քայլերը, զորս յեղ. մարմնի կամ անհատի մը համար պատուաբեր չըլլալով, ձեզ ձեր ներկայ վիճակին մատնեց ու ձեր ետեւէն գործն ալ գէպի անկում առաջնորդուեցաւ:

Այն բոլոր պատուով, յեղ. կրակով լեցուն սրտերը, որոնք յանձնարարուեցան պահ մը դալ ձեզ մօտ գործի լրջամտութիւն, ուշիմութիւն յուսալով, իրենց առաջին քայլերուն մէջ յուսախար ըլլալէ աւելի, անխորտակելի գէնքեր ստացան ձեզմէ, ձեզ այս և իրական ասպարէզին վրայ իբր անարդարութեան ախոյեաններ ընդունելով, ձեր գլուխները ճշմարտութեան առջև խոնարհեցնելէ աւելի՝ ձեզ ձեր եկած տեղերը վերադարձնել իրենց առաջին պարտքը համարեցին:

Ու դուք գլուխնիդ կորցրած անդունդի խորէն չէք վարանիր, չէք դադարի բղաւելու, որ ե՛ս կը թելադրեմ ատոնց, որ գործը դիտմամբ քանդել կ'ուզեմ...

Բաւ է այլեւս, ամօ՛թ է մեզ ամէնքիս համար ալ. վերջ տանք այս ստորնացուցիչ կործանարար ընթացքին:

Այս գործը մեզմէ ոչ ոքինն է և մեզմէ ոչ ոք իրաւունք ունի զայն իր քմածին եսին ծառայեցնելու:

Մեզմէ իւրաքանչիւրը թող ինք իր վրայ անդրադառնալով խորհի, թէ ի՞նչ ըրաւ մինչ ի՞նչ պարտէր ընել, կամ ի՞նչ պարտի ընել ասկէ վերջ կամ ի՞նչ մեղացած է ընել իրեն այժմ:

Եւ այսպէս, խնդիրները, որ այս գոյնը ստացած են, պէտք է սմէն նկատուի հետո դատողութեամբ մտածել տայ մեզմէ ամէն մէկին, թէ իսկ և իսկ ի՞նչ կերպով կը փրկուի այն ու այդ փրկումին համար պէտք ըլլալիք զոհողութիւնը գէթ իբր վերջին պարտականութիւն մեզմէ իւրաքանչիւրը սիրայօժար յանձն առնէ ու ժամ առաջ իր դիրքը որոչէ:

Ես չեմ հաւատար, որ մտքերու ներկայ խառնչփոթութիւնը կրնայ ցարդ շարունակուած ուղղութեամբ հարթուիլ և մաքրուիլ, ընդհակառակը այդ կերպով քիչ վերջը անկարելի պիտի ըլլայ հաւատքի քանդումին առաջը առնել և գործ մը տեսնել:

Բացի այս, ժողովուրդին անպաշտպանութիւնը մեծ վտանգ մը պիտի ըլլայ մեզ, որոնք մեր թերութիւնները, մեր հակասութիւնները վարակիչ միջբոյժի նման պիտի տարածեն և սպառնան ամբողջ կուսակցութեան բարոյականին: Ըմբռնելու ենք վերջապէս,

թէ սխալը սխալով դարձանելը սխալ է և սխալն ալ՝ վտանգ կ'ենթադրէ:

Հետեւաբար այս կացութիւնը փրկելու միակ միջոցը արդար ըմբռնումն է, որ կրնայ մտքերը խաղաղեցնել և կազմակերպութեան անաչառ ըմբռնումին և անոր բարոյական անկաշկանդ վերաբերումին մասին լուրջ գաղափար ներշնչել և ապագայ վտանգի որեւէ սերմ չթողուլ իր մէջ:

Արդ, գործը իր ներկայ վիճակէն բարձրացնելու համար, ճակատագրորէն իմ վրայ պարտականութիւն մը ծանրացած կը գտնեմ, որ իմ հինգ տարուայ այս տեղի գոյութեամբս անխուսափելի կը դարձնէ զիս՝ հրաժարիլ անկէ կամ լքել զայն:

Ձեր ընկերներէն երկուքը իրենց յեղափոխականի բարոյականը աղարտած են տեղական խումբերուն առջև: Վերջերս կ'իմանամ, որ անոնք իրենց իսկական անուններով՝ շնորհիւ իրենց ոչ-խելացի ընթացքին, կառավարութեան կողմէ ալ վտանգուած են: Հետեւաբար անոնց պահել շարունակելը թէ՛ սխալ է և թէ յանցանք:

Ճարհատին առաջացուցած այս բոլոր խայտառակութիւնները իր վրայ անհրաժեշտ պարտք և պահանջ կը դնեն կամովին ձեզ հետեւալ ասկէ՝ թողլով, որ իր բացած վէրքերը դարձանելու մեզ ինկած բաժինը կատարելու հետամտինք ժամ առաջ:

Այս է իմ վերջին կարծիքս ու առաջարկս ձեզ: Լաւ մտածեցէք: Մեր բոլոր քայլերը խնամքով կ'արձանագրուին. խելքի գանք:

Ձեր յարգանք՝ ՍԻՍԱԿ

3/16 Մայիս 1902
Ի քաղաքին

Յ. Գ. — Եթէ շարունակէք յամառիլ ձեր ընթացքին մէջ, պաշտօնապէս պիտի խօսիմ ձեզ հետ, ինչ որ Բիւրոյին ալ պիտի գրեմ իմ այդ որոշումս:

(1) Արմենակ Ս. Լեւոնեանին (Աշոտ Երկաթ):

4 02 — 4

ԷԴՎԱՐԴԻ ՆԱՄԱԿԸ՝ ՄԱՐԹԻՆԻՆ

Իզմիրէն՝ Էգվարդի գրած այս նամակի տարեթիւը կրնայ կարգացուի նաև 1901 (յստակ չէ գրուած): Ըստ բովանդակութեան, ան կը պատկանի սակայն 1902ին (տեսնել Աշոտ Երկաթի նամակը — 402 -2 — և Երկաթի յուշատետրը, — Ռուբին, Երկաթ, էջ 143):

Իզմիր, 13/26 Մայիս 1902

Մերելիդ իմ Մարթին,
Ապրիլ 28 թուակիրդ ստացայ: Ձեւ կրնար երեւակայել զգացած շնորհակալութիւնս ցոյց տուած ընկերական աջակցութեանդ առթիւ:
Այս պարագային երկար չեմ կրնար գրել քեզ, պա-

րագաներս ալ չեն նպաստեր գրելու: Մտադիր էի գոնէ քու առջև պարզել ամէն մանրամասն գծեր այս տեղի անցքերու մասին: Սակայն հարկ չկայ. առ այժմ ներփակ կը գետնդեմ իմ այստեղուսներուն գրած վերջին նամակս, որուն մէկ պատճէնն ալ ղրկած եմ Բիւրոյին: Այդ տողերէն կրնաս բաւական գաղափար կազմել այս տեղի յաջորդական կացութեան մասին, և ըմբռնել թէ վերջերս իմ վրայ ճակատագրորէն ինչ պարտականութիւններ ծագած են, որոնց մէջ՝ ինքնաբերաբար այս տեղը ձգել հեռանալս անկարելի դարձած:

Իմ բոլոր ընթացքիս մէջ գործը, անոր օգտակարագոյնը և իրականութիւնը մտածելով շարժած եմ և կը շարժիմ: Հոգս ըրած չեմ թէ շատեր ի՞նչ կը մտածեն կամ ինչպէ՞ս կը մեկնեն իմ այդ ընթացքս:

Վահագին ընկերական բարեւս յիշելէ վերջ ըսէ իրեն, որ թող ներէ իրեն չպատասխանելու համար: Միայն խնդիրք մը որ ունիմ իրեն, — այն է՝ մէկ կողմէ թղթերու վկայութեանց վրայ դատաստան ընելէ խուսափելէ վերջ՝ կրկին թղթերու վկայութեան վրայ իմ մասին դատաստան ընելէ ևս խուսափելու էք: Ինձ համար ցանկալին՝ միայն ու միայն ճշմարտութեան վրայ գաղափար կազմել ու ապա դատաստան ընելն է, որը որքան ալ ծանր եղած է՝ ինձ համար ամենաթեթեւ կերպով կրնամ վերցնել, հակառակ պարագային սխալ ըմբռնումները ցաւ, հակասական դատողութիւնները զայրոյթ և անտեղի դատաստանները արհամարհանք կրնան պատճառել ինձ: Ամէն անոնք, որ զիս իրենց ընկեր անուանած են, պէտք է ընկերաբար վարուին ինձ հետ: Կը կրկնեմ՝ ճշմարտութիւնը կրնայ այնքան խոնարհեցնել զիս, որ իմ ամբողջ էութիւնս կրնամ միշտ զոհել: Վահագին գրած սա տողերը իրենց արտաքին ըմբռնումով, ինձ խորհիլ տուին, թէ այսպիսի փափուկ պարագայի մը մէջ պարտք մը կար իմ վրայ՝ չափազանց խոհեմ ըլլալ: Ու իր նամակէն առաջ նոյն մտածումները ներքին իմաստով ըմբռնելով իմ պարտքըս կատարեցի, այսինքն գործը և միայն գործը մը տածելով իմ ամբողջութիւնս զոհեցի արդէն: Այսօր կը տեսնեմ թէ այդ զոհողութիւնս ոչինչի չի ծառայել աւելի գործն ալ անդունդին եզրը հասցուց, այնպէս որ վտանգը հետզհետէ ընդարձակ համեմատութիւններ առնելու կը սպառնայ: Ասոր համար ես անգամ մը ևս իմ գերիս վերադառնալ ինձ պարտք համարեցի ու գրեցի վերջին (ներփակած) տողերս, որպէսզի այժմ իրենք հարկ եղած զոհողութիւնը ընեն, քանի որ այդ զոհողութեան բաժինը այժմ իրենց ինկաւ: Ոչ ոք զեռչպիտի կրնայ ըմբռնել այն ընթացքը որ ունեցայ իմ այս վիճակիս մէջ, բայց հետո չէ ապագան, երբ ամէն ինչ յստակօրէն պիտի պարզէ այս ու շատերուն աչքը բանայ: Դուս մի դանդաղիր գրելէ ինձ, մանաւանդ առանց վերապահումի գրելէ: Մենք այնպիսի ընկերներ ենք, որ ինչպէս նեղը ինկած մը Ատուածոյ կը դիմէ, մենք իբրար սրտերու, իբրարու անկեղծութեան դիմելու

սալի ճամբու մէջ մտած է: Հոս մանրամասնութիւններու մտնելու հարկ չեմ տեսներ, այստեղ զալուղ մանրամասնորէն կը խօսինք: Միայն կը ցաւիմ որ ճամբորդութիւնը յետաձգեր եւ Կարիճին հոն հասնելուն, մինչդեռ նա դեռ ժընեւ կը գտնուի եւ ամսոյս 13/ին պիտի կրնայ ճամբայ ելլել, Եւրոպայէն Ամերիկա մեկնող նաւերուն տոմսակները ամիսներ առաջ ծախուած, վերջացած ըլլալուն պատճառաւ: Չեմ գիտեր թէ ատիկա իմանալով հանդերձ արդե՞ք դարձեալ պիտի սպասես հոն, որով Հոկտ.ի վերջերը մինակ այստեղ պիտի կրնաս գտնուիլ այս հաշուով: Սիրելի Մարթին, շտապելու եւ գէթ այս աշնան կարգադրուելիք շատ գործեր կան: Գու ներկայութիւնդ ալ անհրաժեշտ է, եթէ դեռ հոն կը գտնուիս, շտապիր ուրեմն:

Գործին սաղմերը գտնուող ամէն տեղերու հետ կանոնաւոր յարաբերութեան մէջ եմ: Առաւել քան երբեք ժամանակն է խոհեմ եւ հեռատես գործունէութեամբ որոշ շրջանակները իրարու կապելու, եւ կեդրոնացման վայրերուն մէջ սկսելու հիմերը դնել Եւրասիայի միջուկին (1) գործին՝ աչքի առջեւ ունենալով երկրի ներկայ վիճակը, ժողովրդին արդի տրամադրութիւնները, օգտուելով անցեալի փորձերէն: Ա. բերդ (2) մտնելու միջոցը տարիէ ի վեր մեր ձեռքն է, չկրցանք գործադրել, մեր առաջին գործը այդ պիտի ըլլայ, երբ Ռահվերը մտնայ Ս. բերդ (3). Միջնաբերդ (3) հաստատուելու միջոցները այնքան ալ դժուար չեն: Խորվիրապցիք (3) վերջերս որոշ խոստումներ կ'ընէին այդ տեղւոյն հետ յարաբերութիւններ հաստատելու. Բարձրբերդի (3) կողմէն ալ կրնանք դիւրութեամբ մօտենալ: Գալով Բերդակին (3), Ս. ը (4) քանի անգամներ հոն այցելած է. շատ վճռողական յոյսեր տուած է այնտեղ գործի սկսելու ապահով միջոցներու վրայ. այնտեղացի աւազակի մը հետ յարաբերութիւններ հաստատած է: Վերջերս այդ աւազակին դրամական աջակցութիւններ ալ եղան՝ մէջտեղի կապերը աւելի ամրացնելու համար: Փռնուզ՝ Տէր Մարտիրոսը (1) ունին: Մարդը թախանձանօք զինագործ (1) մը կ'ուզէ: Ասլանը Հովիտ (3) փոխադրելու ջանքեր կային. չեմ գիտեր որ Ռահվերը որքա՞ն պիտի յաջողի: Աւելի մանրամասնութեանց մասին հոս կը խօսինք:

Ոսկեհանքի գործերը, թէեւ նոր-նոր բարդութիւններ անպակաս, բայց վերջնապէս մօտ են: 2 շաբաթէն ի՞նչ վախճանի որ պիտի յանդի, կրնայ հասցուիլ:

Համբոյրներ
ՎԱՀՐԱՄ
ՆՈՅՆ

- (1) Մածկագիր:
- (2) Արժուարեք (Ձէյրաւ),
- (3) Կիլիկիան կենտրոններու կուսակցական անուանիք:
- (4) Սեպուր (Հրայ):

4 02 — 8

ԿԱՐԻՃԻ (ԱՌԱՆՁԱՐ) ՆԱՄԱԿԸ

Նամակը ուղարկած է Մարթինին, որ Ամերիկայէն վերադարձած է արդէն եւ կը գտնուի ժընեւ:

Փարիզ, 31 Հոկտ. 1902

Սիրելի Մարթին,

Նամակդ երէկ ստացայ, սակէ առաջ քարտ մը դրելով քեզի քանի մը յանձնարարութիւններ ըրած էի, կը յուսամ թէ կատարած կ'ըլլաս:

Նամակդ թէեւ հակասութիւններով լի, սակայն չզարմացուց զիս, որովհետեւ մտքիդ կարճատես ու հապճեպ ուղղութիւնը արդէն պէտք եղածին չափ ճանչցած եմ:

Նամակիդ վերի տողերուն մէջ բացատրելով թէ հիմա ամենայնպէս ժամանակն է Հայաստան անցնելու, կը շտապեցնես զիս, իսկ վերջաբանին մէջ կըրուկ կերպով կը յայտնես թէ շնորհիւ վիճակին մէջ քու Սասուն գնալու մտադրութենէդ պէտք է բոլորովին հրաժարիս եւ կապուիս Կիլիկիոյ գործին հետ: Պաշ իւսքիւնէ, բայց այդ երկու առաջարկներդ ի՞նչ կը հաշտեցնես իրարու հետ: Հոս գտնուած միջոցիդ ալ միեւնոյն անիմաստ ու անհասկանալի խորհուրդը կու տայիք եւ իմ անկեղծութեանս վերաբերմամբ աններելի կասկածներ կը յայտնէիք, երբ ես խմբագրութեան տուած տեղեկութիւններէն զո՞հ չմնալով թիֆլիս նամակ գրեցի: Արդ՝ երէկ իրիկուն հեռագիր մը ստացայ թիֆլիսէն՝ Աղասէրէն, իմ տուած ծածկագրիս համեմատ կը յայտնէ, թէ իրենց երկիր մտնելու խընդիրը ջուրը ինկած է եւ մանրամասնութիւնները նամակով հաղորդած է: Հիմա ի՞նչ կ'ընես, եթէ քու խորհուրդիդ անաւով անմիջապէս՝ առանց տեղեկութեան սպասելու ելնէի Կովկաս երթալի, հետեւանք ի՞նչ պիտի լինէր: Դու կը կարծես թէ ով որ քիչ մը հեռատեսութեամբ քայլ կ'ուզէ փոխել անկեղծ չէ, այլ ան է միայն անկեղծ, ով որ առանց առջեւ ու ետեւ մտածելու, առանց պայմաններն ու պարագաները կըրուկ գործի ասպարէզը կը նետուի: Շատ անգամներ բացատրեցի բայց չկրցայ հասկնել քեզ, թէ մեր նպատակը պէտք է ըլլայ օգտակար հանդիսանալ եւ ոչ թէ գործի մէջ մտնել, լոկ մտած ըլլալու համար:

Գալով Կիլիկիայի գործին միանալու առաջարկիդ, անշուշտ չես մոռցած՝ որ այդ մասին ալ հարկ եղածը խօսած եմ քեզի: Դարձեալ կրկնեմ. Կիլիկիայի գործին ես այն ժամանակ միայն կը հաւատամ, երբ յստակօրէն պարզուի այդ երկրին արդի վիճակը, ժողովուրդին, բառին բուն նշանակութեամբ ժողովուրդին եւ ոչ թէ քանի մը խուճբերու կամ անհատներու՝ տրամադրութիւնը գործին վերաբերմամբ եւ յաջողութեան համար անհրաժեշտ եղած նիւթական միջոցներու ա-

պահովումը: Վերոյիշեալ տեղեկութիւնները՝ արդէն պայմանաւորուեցանք որ դուն երթաս, քննես եւ հարգես: Գալով նիւթական միջոցներուն՝ ինչպէս դիտես, մեր միակ յոյսը Ոսկեհանքի եւ Կովկասի հանգանակութեանց վրայ էր, հիմա նամակէդ կը տեղեկանամ որ երկուքն ալ հաւասարապէս ձախող անցած եւ աղիտալի ու կազմակերպական տեսակէտով իսկ վհատեցուցիչ հետեւանք ունեցած են: Հետեւաբար պէտք է գրէիք թէ դրամական ի՞նչ նոր աղբիւր գտած էք, քանի որ՝ ինչպէս Ամերիկա ալ միշտ կը պնդէի՝ Կիլիկիոյ գործը ամէն բանէ առաջ մեծաքանակ գումարի մը կը կարօտի: Իսկ եթէ առանց դրական ապահովութեան, յոյսերնիս ապագայ անորոշ ակնկալութիւններու վրայ դնելով գործի պիտի սկսինք, ես անկեղծօրէն պէտք է ըսեմ որ հիմակուրէն ձեռքս կը լուսամ այդ գործէն: Ես յեղափոխական գործին վրայ քեզմէ քիչ մը աւելի տարբեր աչքով կը նայիմ եւ բնաւ եւ ոչ մէկ բողբէ չեմ կրնար մոռնալ, որ մենք մարդկային կեանքերու, ամբողջ ազգի մը ճակատագրին հետ կը խաղանք: Ուստի իմ կարծիքովս չենք կրնար որեւէ կերպով արդարանալ, եթէ առանց պատրաստութեան՝ այսօր 7 տարի ետքը ելլենք կրկնեք հնչակեաններու աղիտալի փորձերը, զորս մենք իսկ կը դատապարտենք:

Կը գրես թէ չուտով ժընեւ եկուր, խմբագրութեան գործերուն օգնելու համար: Քեզի ըսած էի եւ նորէն կը կրկնեմ, որ եթէ ես օր մը Կիլիկիա պիտի երթամ, մեծ անխոհեմութիւն է թուղթի գործերու համար գալ ժընեւ՝ հրապարակի վրայ իբր յեղափոխական ճանչցուիլ: Այս մասին բաւական անզգոյշ եղանք միջեւ հիմա, բայց գէթ սակէ ետքը պէտք է զգուշանայ: Երբ ես իբր լեզու մարդ կրնամ ներս մտնել, իմ ընտանեկան յարաբերութիւններուս ու կապերուս շնորհիւ՝ լաւ դիրք մը ունենալ եւ ամենաբարձր շրջաններու վրայ իսկ ազդել, ի՞նչ խելքով ելլեմ ինքզինքս այնպիսի վիճակի մը ենթարկեմ, որ ստիպուած ըլլամ գաղտնի մտնել երկիր, գաղտնի ապրիլ հոն եւ հետեւաբար 1/10ը իսկ չկրնալ ընել այն գործին, զոր լեզու պայմաններու մէջ կրնամ ընել: Ահա միմիայն այս պատճառով է որ չեմ ուզեր ժընեւ գալ ու մնալ, ապա թէ ոչ ինծի համար շատ ախորժելի գործ մըն է ժընեւի գործը:

Նամակիս ձեւը քիչ մը խիստ պիտի երեւնայ քեզի, բայց բնաւ մտքէդ մի՛ անցընէր թէ քեզ վշտացնելու որեւէ դիտում ունեցած ըլլամ: Այս գրածներս քեզի ընկերաբար բացատրեցի երբ դեռ միասին էինք, սակայն զարմանքով տեսայ որ դուն չես կրնար համոզուիլ: Իսկ ես ինչ որ ալ ըլլայ տարբեր կերպով չեմ կրնար մտածել ու գործել. ես ալ քեզի հետ մէկտեղ շատ մեծ սիրով կ'ընդունէի ձեռք բան մը չենք կրնար ընել, զոնէ կրնանք պատուով մեռնիլսի սկզբունքը, պայմանով սակայն որ ժողովուրդն ալ այդ վճռական որոշումին ընկերանար: Բայց աւելորդ է ըսել թէ մեր ժողովուրդը դեռ շատ սարուկ, շատ ստիպակ ու իր

այս դժոխային կացութեան մէջ իսկ շատ կենսասէր է այդ հերոսական նշանաբանը ընդգրկելու համար: Ան իր սիրալոյսով կամ ակամայ թափած արեան ամէն մէկ կաթիլէն, տուած ամէն մէկ փարայէն անմիջական, դրական, շօշափելի օլուտ մը կը սպասէ ու այդ օլուտը, շահը երբ ուշանայ, դժգոհութիւնները, հայհոյութիւնները եւ վհատութիւնը կը փութացնէ:

Եթէ դեռ առարկութիւն մը ունիս այս գրածներուս դէմ, ընկերական անկեղծութեամբ բացէ ի բաց գրէ եւ եթէ կը սխալիմ ցոյց տուր սխալներս:

Ես առայժմ պիտի սպասեմ Աղասէրի նամակին, մինչեւ այդ նամակը չստանամ, չեմ կրնար վերջնական որոշում մը տալ: Շաբաթէ մը կը հասնի նամակը: Թէեւ այս սպասողական վիճակը ինծի համար ալ անստանելի է, բայց ի՞նչ կրնամ ընել, լաւ է հիմա քիչ մը նեղուիլ եւ խելօք քայլ մը առնել, քան թէ ապագային թէ՛ իմ անձին եւ թէ՛ գործին վնասել:

Սիրալի բարեւներ քեզի, Սիմոնին (1) եւ Խաչատուրին (2):

Մ. ԿԱՐԻՃ

- (1) Զուարթան:
- (2) Մալուխան (Ակնուսի):

4 02 — 9

ԿԱՐԻՃԻ (ԱՌԱՆՁԱՐ) ՆԱՄԱԿԸ

Փարիզ, 1 Նոյ. 1902

Սիրելի Մարթին,

Այս բողբէս ստացայ Հոկտ. 31 թուակիր նամակդ, որու տխուր պարունակութիւնը աւելի եւս տխրեցուց ու յուսահատեցուց զիս: Քանի որ Պալեօզի տէրօրիստը Եգիպտոսի տղան է եւ Սեպուհին (1) ով ըլլալը լաւ կը ճանչնայ, շատ հաւանական է որ տանջանքի տակ յայտնած ըլլայ անոր պանքի ցոյցին մէջ կատարած դերը: Այդ պարագային Սեպուհին (1) համար անխուսափելի պիտի ըլլայ կախաղանի պատիժը:

Ինչպէս երէկուան նամակիս մէջ գրած էի, ես առայժմ պիտի սպասեմ Աղասէրին նամակին, որ 6-7 օրէն կը հասնի, քանի որ 3 օր առաջ գրած է: Ինծի համար անհրաժեշտ է իմանալ թէ ի՞նչ պատճառով ջուրը ինկած է իրենց Սասուն երթալու խնդիրը եւ թէ հիմա ի՞նչ մտադիր են ընել: Այս վերջին աղիտալի դէպքերը կը պարտաւորեն զիս ամենամեծ շրջահայեցութեամբ ու հեռատեսութեամբ շարժիլ ու այլեւս խախուտ գետնի վրայ չկոխել: Ես վստահ եմ որ տէրօրին այս ձախող դէպքը մեր ակնկալածին բոլորովին հակառակ ազդեցութիւնը պիտի ունենայ միւս հարուստներուն վրայ եւ այսչափ զոհողութեան փոխարէն ձեռքերնիս բան մը չպիտի անցնի:

Գալով քու հոս գալու առաջարկիդ, ըստ իս բոլորովին աւելորդ է թէ՛ ճամբուդ երկարութիւնը եւ թէ՛ ճանապարհածախքը կրկնապատկել, քանի որ ամէն պէտք եղածը արդէն խօսած լմնցուցած ենք եւ եթէ

նորութիւններ ալ ըլլան նամակով կրնանք խորհրդակցել: Սակայն եթէ դուն անհրաժեշտ կը նկատես, կրնաս գուր:

Իմ ժընեւէն մեկնելէս յետոյ Գալֆայեանը(2) 25 Քրանկ զրկած է M. Gasparian Հասցէին. այդ գումարը պէտք է զրկել L. Chatissjan Zieblandstrasse 8/III m. Munchen Հասցէին. խնդրեմ յիշեցուր Սիմոնին որ չուտով զրկէ:

Ղրկած գրքերը եւ Սերոբի կենսագրութիւնը ստացայ. շնորհակալ եմ:

Փրովիտէնս Նահիկեանէն նամակ առի, Ուստրի ժողովին մէջ 500 տոլար հանդանակեր են, խօսեր է Կօհիէն: Հնչակեանները շատ աշխատեր են ժողովը խանդարել: Ժողովարարս մտած ժամանակ Կօհիէին վրայ յարձակելով ուզեր են ծեծել, սակայն դաշնակցականները գետին տապալել են յարձակողները: Այս ալ ուրիշ ցաւ, տուններնս կրակ է ինկեր, մենք ներսը իրար կը բզկտենք:

Սիմոնին ըսէ, եթէ «Իրօշակ» յաջորդ թիւին համար տեղ ունին, Մաքսիմ Գորկիի մէկ սիրուն գլորածքը ունիմ, այս օրեր թարգմանելով զրկեմ:

Բարեւներ բոլորիդ: Բարեւներ բոլորիդ:

Մ. ԿԱՐԻՃ

Յ. Գ.— Սասունէն նոր նամակ չկա՞յ, Լեւոնեանը(3) հասե՞ր է. խնդրեմ գրէ:

ՆՈՅՆ

- (1) Հրաչ Թրեմաբեան:
- (2) Աղեմազարիայ Վահրամը (Յ. Գալֆայեան):
- (3) Աշտ Երկաթը:

4 02 — 10

Ա. ՎՌԱՄԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Պոսթըն, Նոյ. 14, 1902

Սիրելի Մարթին,

Նամակդ առի. կը փութամ երկտողով մը պատասխանել:

Նախ չհասկցայ Կարիճի «Հարմանուրիլը». ի՞նչ ունէր, ծովի հիւանդութիւնն թէ ուրիշ ցաւ մը:

Ինչ որ ալ ըլլայ, սաշափը ի նկատի ունեցիր, որ զրգես Կարիճը չուտով ժընեւ գալու եւ գործի ձեռնարկելու: Բիւրոյին գրած անցեալ նամակովս արդէն թելադրած եմ, որ Կարիճը յատկապէս երկու բանով զբաղեցնեն.

- 1) Ընդհ. ժողովի պատրաստութիւն (թղթեր պատրաստել եւ Մեծ Քաղաք(1) երթալ Արեւելեան Բիւրոն ալ համոզելու), եւ
 - 2) Ամերիկայի համար յարմար մէկը գտնել, համոզել եւ ճամբայ հանել շուտով:
- Թողնելու չէ որ ճիւղները կարենան ամբանալ հոս. արդէն եկողները բան մը չկրցան ընել, բայց վերջա-

պէս բոլորովին չէզոքացնելու է անոնք, որ ստիպուած ըլլան կա՛մ միաբանիլ մեզի հետ, կա՛մ խանութիւն գոցել:

Ֆ.ի(2) ձերբակալուածը գիտէի. ինքն է պատասխանատուն, բայց մենք ալ ենք պատասխանատու, երբ զինքը միմակ ձգեցինք: Վերջ մը դնելու է այդ սխտեմին, եւ ատոր համար ալ ընդհ. ժողով մը անհրաժեշտ է: Դուն ալ, միանալով Վահրամի հետ, պաշտօնակամ առաջարկ դրէք:

Ուրիշ խնդիր մը: Ջանացէք ամենէն ուշ մինչեւ Դեկտ. 20ը հոս հասցնել տեղեկագիր մը Կիլիկիոյ գործունէութեան մասին: Ձեր ունեցած տեղեկութիւնները, եղած առաջընթացութիւնները, ձեր յոյսերը եւն., եւն.: Ձմռանաք:

Հոս լուր կայ, բաւական ստոյգ է, թէ քանի մը հնչակեաններ կը պատրաստուին Կիլիկիա մտնելու: Լուր տուէք ներսը, որ աշախուրջ ըլլան. կրնան վտանգել մեզ:

Քուկդ՝ ՎԱՀԱԳ

- (1) Մեծ Քաղաք, — Թիֆլիզի կուսակցական անունը:
- (2) Փարիս:

4 02 — 11

Ա. ՎՌԱՄԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Յետ գրութեմէն դատելով («Համարներ քեզի ու Վահրամի») նամակը ուղղուած է Աղեմազարիա, ուր, ժընեւէն գալով, կը գտնուի Մարթինը: Մարթին ընտրուած էր Կիլիկիոյ Պատասխանատու կեդր. կոմիտէի անդամ՝ Գալֆայեանի կամքը ներկայացնող Մարմնի Ֆիլիպիի ժողովին (1901): Աղեմազարիա գալով, ան փաստօրէն ձեռք առաւ այդ Մարմնի ղեկը, քանի Պետրոս Սերէմեանը նահատակուած էր Մակեդոնիոյ մէջ, Հրաչը՝ ձերբակալուած եւ Աշտ Երկաթ՝ գործունէութեան նոր վայր ընտրած (Այլաք): Մարթինի անմիջական գործակիցները եղան Վահրամը (Ա. Յ. Գալֆայեան), Կարիճը (Ասանաթ, Յ. Գալուստեան) եւ Ազատը՝ Կովկասէն իր վերադարձին: Մարթին առաջին անգամ զբաղեցաւ դրամական խնդրի կարգադրութեամբ՝ Ամերիկայի կեդր. կոմիտէի եւ Արեւմտեան Բիւրոյի հետ: (Տեսնել այս մասին՝ Մ. Վարանդեան «Հ. Յ. Գ. Պատմութիւն», Բ. հատոր, էջ 47):

Պոսթըն, Դեկտ. 5, 1902

Սիրելի Մարթին,

Ժընեւէն գրածդ ընդարձակ նամակդ առի. շնորհակալ եմ, չա՛տ շնորհակալ տուածդ տեղեկութիւններուն համար:

Կարդ մը գործերու անկերպարան վիճակը յուսահատեցնելու չէ մեզ. լաւ գիտնալու ես որ մեզի պէս ժողովուրդի մը մէջ բարոյական հիմունքներու վրայ միայն հաստատուած կազմակերպութիւն մը ամենէն դժուարին եւ ամենէն բարձր գործն է որ կրնայ յաջողուիլ: Եթէ 12 տարի կրցեր ենք ելլալ գնալ, ան ալ շատ մեծ բան է: Մի կարծեր թէ մակեդոնացիներու

կամ յոյներու գործերը աւելի վարդապոյն երեւնալուն՝ լաւագոյն ալ եղած են: Ես կը կարծեմ թէ աւելի գէշ ալ եղած են:

Ստրկութենէ ելած ժողովուրդները մեքստէ զուրկ են, անկարող են որոշ եւ նպատակաշարմար(1) եղանակով մը վարելու իրենց գործերը. մեր գլխաւոր պահանջ ալ հող եղած է: Ուժեր շատ ունինք, բայց տարտղնուած են: Եւ մէյ մըն ալ՝ ճիշդ է որ մեր գործերն ալ տարտղնած ենք: Ես ալ կ'ընդունիմ, որ մեր բոլոր ուշադրութիւնը երկու կէտերու վրայ կեդրոնացնենք, շատ է, քիչ չէ:

Այդ ալ պիտի ըլլայ մեր առաջիկայ ընդհ. ժողովին գործը:

Ձեմ գիտեր իմ նամակս ո՞ւշ է հասեր թէ դուն չես կարդացեր — բայց ես ընդարձակ ու պատճառարանեալ նամակ մը դրած եմ Բիւրոյին՝ ընդհ. ժողով գումարելու անհրաժեշտութեան մասին:

Նոյն հարցը պիտի դնել տամ պատղ. ժողովին մէջ, որ պիտի գումարուի Դեկտ. 24ի իրիկունը եւ պիտի տեսնէ մինչեւ Դեկտ. 27 Երաթ իրիկուն: Այդ խնդիրը հաւանական է որ ուրիշ ընկերոջ մը ձեռքով յարուցանել տամ եւ անցընել տամ օրակարգը, որպէսզի տարբեր մեկնութիւններու տեղի չտայ: Այդ մասին անհող եղիր:

Դուք ալ հողկէ գօրը դրէք, դուն ու Վահրամը միասին, եւ օրինակ մըն ալ զրկեցէք Արեւելեան Բիւրոյին: Մենք ալ մեր առաջարկին պատճէնը Արեւելեան Բիւրոյին կը զրկենք ուղղակի հասցէով մը:

Գալով «Փրօ Արմենիա» եւ «Իրօշակ»ի համար եղած ծախքերուն, ես ալ չէի գիտեր թէ այդքան գումարի մը հասած է: Ես կը խորհէի թէ մասնաւոր հիւմակրողներու(1) միջոցով կը հայթայթուի եւ ոչ թէ Կովկասի հաւաքուած գումարներէն: Ատոր առջեւը անհելու է. ես պիտի բողոքեմ խստիւ, իմ առաջիկայ նամակին մէջ, երբ նախորդին պատասխանն ստացած ըլլամ:

Գալով Կիլիկիոյ գործերուն, դուն անհող եղիր եւ վստահ(1) եղիր իմ խոստումիս վրան: Երկիր մտնող ընկերներու հետ կատակ ընել չեմ սիրեր ես. Լեւոնեանին(2) խօսք տուինք եւ կատարեցինք մեր խոստումը մեր կարողութեան չափով. միեւնոյնը չու նկատմամբը, քանի որ անձերու հետ կապուած չէ խնդիրը. մենք խօսք տուած ենք, վստահ ըլլալով եւ հաւատալով(1) ձեռնարկուած գործին:

500 տոլար արդէն զրկուած է չու անունովդ Վահրամին, երբ այդ գումարը ստացած ըլլալուդ լուրն առնենք, 500 եւս պատրաստ է: Այդ մասին պատղ. ժողովի մէջ եւս որոշում կ'անցընենք. հաւանական է որ առայժմ 1/3ը ձեզի եւ 2/3ը Ս.ին(3) զրկենք, քիչ ետք, ամբողջը ձեզի դարձնելով, երբ վստահ ըլլանք որ անդին ուրիշ աղբիւրներէ զրկուիլ սկսած է: Ջանացէք դուք խնդիրը որոշ կէտի(1) մը հասցը-

նել, անգամ մը սկսեցէք Ձէնթերձի փոխադրութեան գործին, այն ատեն կը տեսնէք թէ որքան դրամ կարելի պիտի ըլլայ փոխադրել ձեզի եւ անընդհատօրէն: Ձ.ը(4) միշտ աւելի վստահութիւն(1) կը ներշնչէ, մտ(1) է, ուստի չա՛տ աւելի դիւրիմ(1) է գործին հատուցնել տալ ու դրամ ուղղել:

Ես տեղեկագրի մասին գրած էի Վահրամին ալ եւ կը յուսամ թէ ան կարենայ բան մը հասցնել փութով մինչեւ Դեկտ. 24ի կամ 25ի օրը: Ես ալ աղէկ պիտի ըլլայ:

Միայն թէ ընկերներուն՝ քիչ մը ստիպուած պիտի ըլլանք թաքցնել Ֆ.ի(5) ձերբակալուածը եւ կնիքին բացակայութեան պատճառը:

Դուք մի լքանիք, վստահ եղէք ու առաջ, ձեզի դրամ ալ, ընկեր ալ կը հասցնենք:

Կը յիշես ես խօսեցայ քեզի Յարութիւնի մասին (Նէջմէ), որ կ'ուզէր Աստան(6) փոխադրուիլ: Այդ մասին մի՛ մոռնար գրելու ինծի, որպէսզի անմիջապէս ճամբայ հանենք:

Վահրամն ալ քանի մը ակնարկութիւններ ըրաւ, բայց որոշ բան մը չպատասխանեցի. ի՞նչ է չու կարծիքդ. կրնա՞յ ձեզի պէտք զալ հող: Իր յաւակնոտութիւնը գործը կ'աւրէ:

Վահրամին օգնական գացող ընկերը ի՞նչպէս է, պիտի կրնա՞յ շարունակել Վահրամին բացակայութեանը: Բայց հիմա Վահրամը հեռանալու չէ այդ շրջանէն, մինչեւ որ նոր ուժեր գան ու դուք կազմակերպուիք: Դուն միմակ մնացող չես:

Համարոյներ քեզի եւ Վահրամին: Վ.(ՎԱՀԱԳ)

- (1) Նամակին մէջ ստորագծուած բառեր:
- (2) Աշտ Երկաթին:
- (3) Արդեօ՛ք Սեպուհին (Հրաչ Թրեմաբեան). Հրաչ Իզմիրի բանտ էր արգէն: Հաւանաբար նախ՝ Սասուն:
- (4) Հաւանաբար՝ Ձէյրուք:
- (5) Հաւանաբար՝ Փարիս:
- (6) Ծածկագիր:

4 02 — 12

Ա. ՎՌԱՄԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Պոսթըն, Դեկտ. 12, 1902

Սիրելիս,

Մարտէյէն գրածդ նամակն ալ առի. կը յուսամ թէ դուն ալ իմ Աղեմազարիա ուղղած առաջին նամակս ստացած ըլլալու ես ցարդ:

Հնչակեաններու միջեւ տեղի ունեցած նոր պատահումը լսած կ'ըլլաս հարկաւ «Հայրենիք»էն, թիւ 176: Այդ իրողութեան ցաւալի հետեւանքները դարձանելու յոյսով անապարհ են քանի մը հողի Կիլիկիա մացնելու: Քանի մը օր առաջ մնաք բարովի խնճոյքը ըրած են Փրովիտէնի մէջ:

Գացողներն են.

1. Շահէն Սէֆէրեան (Միս)
2. Ասլան Էլմասան
3. Մարտ Ռասիկեան
4. Կարօ (կարծեմ առ ալ Փիրայրի եւ միւսներու հետ անգամ մը գտնուած է Կիլ.)
5. Մարտիրոս Տէր Յովհաննէսեան, Կիւր, բարձրահասակ, խարտեաչ:

Ասոնց մէկ-երկուքը այս քանի օր է հոս կը գտնուին, եւ կ'ըսուի թէ չուտով կը մեկնին:

Ասոնց ճամբու ծախքը հոգալու համար Փրովիտէն-սի Երթալմուլ՝ հանգանակութենէն մնացած ապառիկի (միայն \$1700 գանձուած է եղեր) հաշուին \$1000 ալ կը հաւաքեն:

Ասոնց ուղեցոյցը պիտի ըլլայ խարբերոյցի Խաթրնի(1) Թաթօն, որ երկու-երեք շաբաթ առաջ Ամերիկայէն մեկնեցաւ: Թաթօն ասոնց պիտի սպասէ Կիպրոսի(1) մէջ եւ անկէ պիտի անցընէ Կիլիկիոյ կամ Սուրիոյ ծովեզերքը:

Այս տեղեկութիւնները տալէս ետք, հարկ չեմ սեպեր անձերն ալ ծանօթացնել — քեզի ծանօթ են ամէնքն ալ: Բոլորն ալ անձկամիտ, գրեթէ սոգէտ եւ ինչ որ ցաւալին է՝ վերջին ծայր կուսակցամուլ եւ մեզի դէմ տակուլութեամբ լեցուած մարդիկ:

Ասոնք եթէ անգամ մը յաջողին մտնել Կիլիկիա, ամէն խայտառակութիւն յուսալի է ասոնցմէ: Իրենց ընկերքի մասին գաղափար կրնայ տալ հետեւեալը: Հին հնչակեան Պաղտատար Խալիփեանը, որ բողոքողներէն է, խոստովանեցաւ ինծի, թէ Ձիթեանը կը փափաքի եւ կը թելադրէ եղեր որ քանի մը հոգի մտցնեն երկիր, աղմուկ մը հանեն տեղ մը, որպէսզի ժողովուրդին ուշադրութիւնը գրաւեն, ըսելով թէ Վեր գործին մարդիկը, ներսը մարդ ունին:

Ձիթեան եւ իր համախոհները հասկցեր են որ Դաշնակցութիւնը Ամերիկայի մէջ իր յաջողութիւնը կը պարտի երկրի մէջ գործ ունենալուն: Ուստի, իրենք ալ չկորսուելու համար այդ միջոցը ձեռք պիտի առնեն:

Թէ գացողներու նկարագիրը եթէ նկատի առնենք, թէ պետերու այս անխոստովանելի շարժառիթը, եւ թէ իրենց հիմնական երկպառակումը, որ խայտառակած է զիրենք հասարակութեան աչքին՝ եւ որը մոռցնել տալն ալ շարժառիթներէն մէկն է այս արշաւանքին — այս ամէնը զիս այն համոզմունքին կը բերէ որ այդ մարդիկը վնասակար պիտի ըլլան հայ դատին(1), եթէ սոք գնելու ըլլան Կիլիկիա: Ալ չեմ ըսեր թէ ինչ փորձանքներ ընդունակ են բերելու տեղացի ժողովուրդին վրայ:

Այս բոլորը նկատի ունենալով, իմ թելադրութիւնս է որ ամէն գարկեշտ(1) միջոց ձեռք առնելու էք արգելելու համար որ ասոնք նախ՝ չկրնան մտնել Կիլիկիա, երկրորդ՝ եթէ անկարելի եղաւ այդ, ամէն միջոց գործ դնել որ չէզոքամամ(1) ասոնք, յարաբերու-

թեան չկրնան մտնել տեղացի ժողովուրդին հետ, եւ ետ դառնալ(1) ստիպուին:

Այս թելադրութիւնները կ'ընեմ երկար մտածելէ ետք, որովհետեւ համոզուած եմ՝ ոչ միայն անոնք արգելք պիտի ըլլան մեր գործունէութեան, — աս հոգս չէր, եթէ իրենք մեզմէ աղէկ բան մը կարենային ընել հոն, — այլ պիտի վնասեն թէ՛ յեղափոխութեան վարկին եւ թէ ընդհանրապէս յեղափ. գործին: Ժամանակէ մը ի վեր հանդարտած երկրին մէջ նորէն խուզարկութիւններ, կասկածներ, եւ ասոնք մեծապէս պիտի վնասեն հարազատ յեղափոխական գործին:

Հնչակեաններու այս ըրածը Փարս մըն է, ժողովուրդին գրպանը պարպելու համար տարի մըն ալ...

«Կիլիկիցիներու» կը մնայ այս աղէտին առջեւ աննելու միջոցները խորհիլ ու գործադրել: Մէկը խորհուրդ տուաւ Վահագը ճամբել ետեւուն. իմ կարծիքով օգտակար չէր կրնար ըլլալ աս. ոճիր մը կրնայ տեղի ունենալ, եւ վերջապէս ծանօթ ըլլալուն, աւելի զգուշացուցիչ միջոցներ ձեռք կրնան առնել: Իմ կարծիքով աւելի լաւ է անոնց անձամբ(1) ընկերներու միջոցով հետեւիլ անոնց շարժումներուն եւ գործադրել խորհուած միջոցները:

Գալով Կիլ. ընկերք օգնութեան, վստահ եղէք որ միջոցներ չպիտի խնայուին ձեզի: Այս «արշաւանքը» աւելի եւս պիտի գրգռէ ընկերները շահագրգռուելու ձեզմով, կը բաւէ որ նպատակայարմար գործունէութիւն ցոյց տրուի: Պատրաստ դրամ շատ ունինք հիմա, որ արամադրելի կը պահենք մինչեւ պատգ. ժողովը: Արդէն զրկուած \$500 տոլարին (103 անգլ. ոսկիի) ընկալազիրը շտապուեցաւ դեռ:

Ընդհ. ժողով դումարելու մասին ձեռ կողմէն հաւաքական դիմում ընելու չմոռնաք:

Հոս ալ մենք պիտի փորձենք նոյնը, ջանալու ենք որ մինչեւ աշուն այս բոլոր գործերը կարգադրուին:

Վահրամէն տակաւին նամակ չառի. արդեօք բացակա՞յ է քաղաքէն:

Ինչպէ՞ս է նոր ընկերը: Շատ ու շատ բարեւներ ընկերներու կողմէն ձեզի ու ձեր յաջողութեան համար:

Անվատ եղէք, առժամեայ ու վաղանցուկ ձախողութիւններէ մի՛ ընկճուիք, եւ քալեցէ՛ք. մենք ալ ձեզի հետ ենք:

Շուտ-շուտ գրեցէք:

Իզմիրի տղոց երեքին ալ (Վարդին, Էդուարդին եւ Ծարհատին) դրամ զրկուեցաւ 20ական տոլար: Նորէն կը զրկենք դարձեալ: Դիմում ալ պիտի ընենք կրկին եւ կրկին:

Համբարներով ՎԱՀԱԲ

Յ. Գ. — «Հայրենիք» կրնա՞ք Կիլիկիա զրկել. լաւ կ'ըլլայ:

(1) Նամակիմ մէջ ստորագծուած:

4 02 — 13

ԱՄԵՐԻԿԱՅԷՆ ՆԱՄԱԿ ՄԱՐԹԻՆԻՆ

Լիոն, 14 Դեկտ. 1902

Սիրելի Մարթին,

Նամակդ ստացայ. շատ անհամբեր կը սպասէիք քեզմէ լուր մը առնելու: Գարրիէլին դրածը նամակը շատ լաւ ազդեցութիւն թողուց. երանի թէ շաբաթ մը առաջ, մեր հանգանակութենէն պռաջ հասած լինէր: Անշուշտ «Հայրենիք»ի մէջ կարգացած կը լինես որ նոյ. 30ին հրապարակային ժողով ըրինք եւ 600 տոլար հանգանակեցինք. ասոր վրայ հաշուելու է մեր պատկերների հասոյթը եւ 850 տոլարի չափ եկամուտ մը կ'ունենայ մեր կոմիտէն: Այս համեմատութեամբ ամէն տեղ ալ շատ յաջող են հանգանակութիւնները. «Հայրենիք»էն կ'իմանաս հետզհետէ:

Նամակովդ ըրած թելադրութիւններդ կը ջանանք իրականացնել, եթէ երբեմն այդ տեսակ գործնական առջարկներ ընես շատ օգտակար կը լինի. պիտի առաջարկենք որ բոլորս սիթիզըմ լինինք եւ հաւաքաբար մէկ կուսակցութեան քուէ տանք, փոխարինութիւն պահանջելով:

Պատգամաւորական ժողովի հրաւերները եկած են, պիտի հաւաքուինք սովորական օրերին: Տիքը վերջապէս եկաւ միացաւ, բայց Միսակ դեռ եկած չէ, կնկան խնդիրը պատճառաբանելով. կը ջանանք:

Միութեան խնդիրը կը ցաւիմ որ նորէն պիտի ձեռք գործի. չգիտեմ հնչակեան նոր արհաւիրքներէն լուր ունի՞ս. այս շաբաթ երկու նոր հնչակ եկաւ, մին նորերէն եւ մին հիներէն. շատ ծանր տպաւորութիւն թողած է, — խանակութիւն, լքում, իրար զգոզել, ինչ որ կ'երեւակայես. քանի մը շաբաթ է արդէն՝ ո՛չ ժողով կ'ընեն ո՛չ բան, ինչ պիտի լինի չենք գիտեր. ա՛խ սիրելիս, այսպիսիների հե՞տ է միութիւն, շատ հեռու է կ'երեւի. ամփոփենք մեր ուժեր եւ ամէն բան հոն է. անոնց յոյս դատարկ է. երանի՛ թէ մեզ հանդարտ թողնէին, մեզ չխանգարէին:

Վիճարանութեան նիւթ մը ծագեցաւ մեր վերջին ժողովի մէջ պատգամաւորական ժողովին հարց տանելու համար. մեր ընկերներէն ոմանք կը կարծեն որ բանի դրամ հաւաքել օգտակար է եւ շարունակելու է. ես եւ մի քանիներս հակառակ ենք. հաւանաբար հոն ալ հարց ծագի, բայց շատ գէշ դրութիւն է այդ. հերիք չէ՞ մեր այդ անգին ընկերները դրամի, լոկ յիմար դրամի զոհ տանք. ի՞նչ կը խորհիս, լաւ է դադարեցնել ջանք, փորձերը երբեք օգտակարութիւն տուած չեն մինչեւ հիմա. ո՞ր ատեն օգտուեցանք:

Ասատուր իր տեղ, այսինքն իր գործած տեղ ձգեց. կը գործէ, լաւ է, հոգ մի ընեք, կը ջանանք մեր շրջաններին մօտեցնել. երկիր դրամ զրկեց կարծեմ, բայց ինչքան չեմ գիտեր. չեմ ուզեր այդ խնդիրների մասին շատ խօսիլ, որ չծանրանայ վրաս դրամի խնդիր:

Պատկերները կը յուսամ որ տէրերին տուած են: Երէկ 25 հատ օրացոյցներէն զրկեցի. հոս 10 սենթի ծախեցինք. ջանացէք ծախել. հատ մը կրնաս տուր Գարրիէլին եւ հատ մըն ալ Երուսաղէմ զրկէ, եթէ կը ծախուի նորէն ուզէ, շատ շինել տուինք այս անգամ, 3000 հատ:

Երգարանները կը յուսամ որ կը ջանաք տարածել. Գարրիէլ բաւական յաջող է. եթէ կը տեսնաս, կը խնդրեմ որ յանձնարարես պրն. Գալֆայեանին: Գահրէն Շամիանը եւ «Արշալոյս»ի խմբագիրը ուզած էին. Գարրիէլը ցոյց տուի որ անկէ առնեն, աւելի լաւ է որ մէկ մարդու հետ կապուած լինիմ:

Այս շաբթուն շատ զրազուած էի. մինակ մնացի. օրացոյցների ծրարներ կը շինէի, ահագին բան էր. հերոսութենէ մը աւելի աշխատեցի:

Բոլորս լաւ ենք, սովորականի պէս կ'անցնենք. չգիտեմ ինչ վերջ պիտի ունենանք:

Գոնէ երկու շաբաթը անգամ մը գրէ ուր ալ որ լինիս:

Տղայք բոլոր կը բարեւեն, միշտ կը լեցուին սենեակս:

Մաղաքեանին լուր տուած չէի՞ր երթալուդ մասին. երթալէդ չորս շաբաթ յետոյ ինձմէ հարցուց:

Կարօտալի համբոյրներս՝
ՀՄԱՅԵԱԿ

4 02 — 14

ԱԹԷՆՔԷՆ՝ ՏԻԳՐԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ

Իերէ, 30 Դեկտ. 1902

Սիրելիս Աշոտ(1),

Շաբաթ օր հոս հասած եմ. երէկ ալ Պ. Տոքթորեանի հետ տեսնուեցայ, բայց զարմանալի կերպով բանէ մը տեղեկութիւն չունի իմ գալուստ հարցի մասին. ուստի հարկ դատեցի ներկայս գրել շուտով պատասխան ստանալու յոյսով:

Ձեր զրկած դրամը հետեւեալ կերպով գործածած եմ. —

15	Փր. անցագիր
30	տոմս շաքենաւի
7,50	ճամտան մը
4,50	մէկ ֆանէլա

Վարդոյի, Յակոբ Աղամեանի, Տէր Սարգիս Դարիպեանի ունեցած պարտքս

14	
71	
29	ԼՎԸ
100	

15 օրուան շրջանին մէջ ծախսած ըլլալով, այսօր վերադառնալով մը չունիմ. ուստի խնդրեմ այս նամակը ստանալուդ պէս իմ մասին շուտով տնօրինութիւն մը ըրէ՛ք, որպէսզի Յունաստանի մէջ շուտայտիմ: Եթէ երկար մնալ հարկ պիտի ըլլայ(2), խնդրեմ 40 Ֆր. շրկեցէ՛ք, որպէսզի Եգիպտոս անցնիմ առ այժմ գործ մը գտնելու համար, իսկ եթէ միւսը(2) շուտով պիտի իրականանայ, այն ատեն կրկին աճապարեցէ՛ք գրել հետեւեալ հասցէին՝

Pirée HOTEL ATHENES, pour Serko Yakoub

ՏԻԳՐԱՆ

Գ. Ե.— Հակառակ պարագային, Ձեր շրկելիք 40 Ֆր. ը պիտի գործածեմ ճամբու եւ մինչեւ այն օրը ըրած պարտքերուս վճարման:

ՆՈՅՆ

- (1) Մարթիի ծածկանուններէն մէկը:
(2) Նամակիմ մէջ ստորագծուած:

4 03 — 1

ԱՄԵՐԻԿԱՅԷՆ՝ ՀՄԱՅՆԱԿԻ ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ

1903, Յունուար 12, Լին

Միւրիլ՝ Մարթին,

Ասկէ առաջ քեզի գրած եմ. ալ որեւէ բան մը չունիմ գրելիք մինչեւ գրածիս պատասխան չստանամ: Անշուշտ մեր գործերի մասին տեղեակ կը լինիս թերթերին հետեւելով:

Պատգամաւորական ժողովի մասին ալ անշուշտ ընդարձակ կը տեղեկանաս. չգիտեմ սովորութիւն կա՞յ, արձանագրութիւն կը շրկե՞ն այդ տեղեր:

Միայն այսքան ըսեմ որ շատ լաւ է եւ մեծ յառաջդիմութիւն կայ համեմատելով նախկին տարիներին. շատ լաւ որոշումներ ունեցանք, եթէ գործադրուին:

Աստուր լաւ է, կը գործէ. տակաւին բնաւ դրամ վճարած չէ. կը մտածեմ օրերս յիշեցնել անգամ մը:

Սեպտեմբեր 27ին գրած եմ Երուսաղէմ եւ երգարան մըն ալ շրկած եմ. մինչեւ հիմա լուր մը չստացայ. կը խնդրեմ ներփակեալը շրկես իրեն անպատճառ:

Կը յուսամ որ երգարաններ եւ օրացոյցներ բաւական կը ծախուին հող. եթէ կ'ուզէք գրեցէ՛ք որ նորէն շրկեմ: Այստեղ 2500 օրինակ սպառեցաւ:

Բարեւներով՝ ՀՄԱՅՆԱԿ

Յ. Գ.— Պ. Գալֆայեան, եթէ Պ. Մարթին հող չէ, կը խնդրեմ, որ Երուսաղէմի նամակը դուք հանձնէք ուղարկել:

ՆՈՅՆ

4 03 — 2

ԻԶՄԻՐԷՆ՝ ԳԵՂԱՄԻ ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ

Ձմիւռնիա, 1/14 / I / 1903

Աչոտին!

Ստացանք Ձեր Դեկտ. 31 եւ 21/8 Յունվ. թուակիրները:

Տ. Յ. մասին մեր անցեալով դրածը պիտի կրկնենք այստեղ նոյնը եւ Ձեզի համար:

Ինչպէս կը գրէք, պատրաստ եղող ընկերոջ հոս ներս մտնելէն եւ տեղաւորուելէն յետոյ ուրիշ ընկերներու դալստեան մասին կը խորհինք: Ամենէն ծանրակշիռ պարագան Ձեր երկու նամակներով յիշածն է, — ընկեր մը ներս առնելու խնդիրը:

Թոյլ տուէ՛ք, սիրելի ընկեր, ըսել թէ մենք եթէ ոչ Ձեզմէ աւելի գոնէ Ձեզի չափ ծանր կը կշռենք ընկեր մը ապահով կերպով ներս առնելը, ատոր համար է որ մեր պատասխանը ուշացուցինք եւ դեռ ալ պիտի ուշանայ. շարքէ մը վերջ կարող պիտի ըլլանք վերջնական «այո» կամ «ոչ» գրել Ձեզ:

Նաւաւարի սոյն խնդիրը մտածել պիտի տայ մեզի թէ նմանօրինակ խնդիրներ մեզ թոյլ չեն տար մտածելու թէ բազմիցս փորձուած միջոց մը կրնար միշտ յաջող լինիլ:

Միջոցը որ պիտի գործածենք՝ մեր այդտեղի ընկերները գիտեն արդէն. Տ. Յ. հոսկէ մեկնելու ատեն այդ միջոցը գործածեց, ինչպէս նաեւ մեր երկու տ.ական(1) ձեռնարկներու առթիւ, եւ վահէն եւ շատ մը ուրիշ ծանօթ եւ անծանօթ ընկերներ. ասոնք կը կարծենք բացորոշ ապացոյցներ ըլլան նաւաւարներու ճկունութեան. բայց ինչպէս ամէն գործ ասիկա ալ կրնայ իր անակնկալները ունենալ:

Բանտարկեալներու համար շրկուելիք դրամը հողացուած է կ'ըսէք. նոյնը եւ վահայը գրեց Ամերիկայէն(2):

Տեղ. խմբ. կազմ. մէջ, յառաջիկայ տ.ական(1) ձեռնարկին համար գործածուելիք երեք անձ կայ:

Հոստեղը իրրեւ վստահելի գէնի(2) մէկ հատ կայ. 8 հարուածեայ մը: Քաղաքին մէջ զինավաճառ մը բուն Smith Wesson մը ունի, եթէ սակայն մինչեւ մեր դրամ ստանալը չծախէ. ասոնցմէ զատ պէտք ունինք անհրաժեշտօրէն երկու հատի. ժամանակին մեր ընկեր Արամին գրած էինք այդ մասին, արտասահմանի մէջ մեզ ծանօթ ընկերոջ մը հասցէն ալ տալով:

Ձեր մասնաւոր ուշադրութիւնը պիտի խնդրէինք այս մասին. հոստեղի զէնքը ծախու առնելու եւ նաւաւարի եւն. ծախքերու համար շրկուելիք դրամէն զատ, դուք միւս երկու զէնքերու դրամը փոխանակ մեզի շրկելու, ժամանակ չկորսնցնելու համար ուղղակի Մար-

սիլիա գրեցէ՛ք հետեւեալ հասցէին՝ Mr. V. Ghazarian Messageries Maritimes. № 2 Marseille - France, գրելով թէ Գեղամը գրած է եւն.: Չէնքերը անպատճառ 8 հարուածեայ լինին, քանի որ մանաւանդ զնոյ մէջ տարբերութիւն չկայ, (100)ական փամփուշտով եւ մէկ մէկ հատ մակազին աւելի. մենք այստեղ շատ ապահով միջոց ունինք ներս առնելու համար զանոնք: 2 զէնքերու համար շրկել Մարսիլիա 160 Ֆրանք:

Ձեր պատ. սպասելով, մնանք յարգանքներով,

Ձերդ՝

ԳԵՂԱՄ

- (1) Տ.ք՝ ծածկագրով. հաւածօրէն բնի կ'ուզէ՝ տեսարկան:
(2) Ծածկագիր:

4 03 — 3

ԳԵՂԱՄԻ ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ ԵՒ ՏԻԳՐԱՆԻՆ

Ձմիւռնիա, 8/21 / I / 903

Աչոտին եւ Տիգրանին,

Աղեքսանդրայիէն նամակ մը ստացանք, որով ի միջի այլոց իմացանք Ձեր երկուքին հող լինելը եւ մանաւանդ Տ.ի հոս գալու ըրած պատրաստութիւնները: Աւելորդ կը համարենք այստեղ կրկնել Ձեր մասին թէ՛ Աղեքս. եւ թէ՛ վառնա մեր նամակներու պարունակութիւնը, քանի որ ստացած էք զանոնք ժամանակին: Տ.ը(1) անշուշտ իր ձերբակալումէն զատ մի քիչ կարեւորութիւն պիտի տայ եւ մեր վտանգումի մասին:

Իր ձերբակալումէն յետոյ — ինչ որ անկասկած ենք, — անպատճառ մենք եւս պիտի վտանգուինք եւ այս՝ իր պատճառաւ միմիայն:

Ըստ Ձեր Աղեքս. գրած նամակին, Տ.էն զատ միւս ընկերոջ զալստեան կը սպասենք: Կարգադրութիւններ ըրած ենք արդէն ներս ընդունելու համար յիշեալ ընկերը: Ձեր նամակին կը սպասենք աւելի երկար գրելու համար միջոցներու մասին:

Բարեւներով՝

ԳԵՂԱՄ

Յ. Գ.— Տ.ի հոս գալու պատրաստութիւնները իր նաւաւարներու դրամ նամակով ալ տեղեկացանք:

ՆՈՅՆ

(1) Տիգրան, — ըստ Երուսաղէմ Արթիմ գտնուող թմկեր մը (տեսնել 402—14ը, իր կողմէ գրուած՝ Փիլիպպոս), որ կը պատրաստուի Խմբ. անգնիւ:

4 03 — 4

ՎԱՀՐԱՄԻ (Յ. ԳԱԼՖԱՅԵԱՆ) ՆԱՄԱԿԸ

Աղեքսանդրիա, 22 Յունվ. 903

Միւրիլ՝ Մարթին,

Կը յուսամ թէ տեղդ ապահով ու հանգիստ հասած կը լինես ցարդ:

Ամերիկայի Կ. Կ.էն նամակ ստացայ, որուն ներփակեալ էր \$103ի չէք մը քու հրամանիդ: Մեր հեռագիրը եւ Բիւրոյին մէկ նամակը, որ յայտնելով թէ Կ.ցի(1) բարեկամ մը պիտի օգնէ Լ.ին(2), թելադրութիւն ըրած է \$2000 յատկացնել Լ.ին(2). Կարգացուեր է Պատգ. Ժողովին մէջ եւ ժողովը միաձայնութեամբ որոշեր յիշեալ գումարը անմիջապէս տրամադրելի ընել Լ.ի Պ.(3) Մարմնոյն: Այս գումարին մէջն է նախորդ շրկուած \$500ը. եւ ուրեմն շրկուած չէքէն զատ պիտի շրկեն 1000 տողար եւս անմիջապէս երբ կը պահանջուի:

Չէքին ստացուած ըլլալուն եւ այլ կարեւոր հարցերու մասին կը գրեմ վահարին:

Արեւմուտքը(4) 4000 Ֆր. նոց չէք մը եւս շրկած է. գանձեցի եւ \$250 Օսմ. Պանք տէքօ ըրի:

Թոփալեանը(5) \$100 եւս շրկած է, խնդրելով որ շուտով պատասխանեն: Մեր լուրքիւնը(5) շատ շարագուշակ կ'երեւի եւ սարսափը(5) կը բազմապատկուի: Ատոր ապացոյց է նաեւ Սիվրիսարեանի(5) վերջերս գրած մէկ նամակը, որով կը յայտնեն թէ իրենք երբեք չեն ըսած որ կը մերժեն, այլ պատրաստ են, միայն խօսելու դիւրութիւն մը տան: Գրած ենք, ըսեր են, Պուլկ. եւ Եգիպտոս, որ ձերիններուն հետ կարգադրեն: Այս հիմերուն վրայ յարմար նկատեցի Անդրանիկը եւ Չոհրապը Գաիիրէ(5) շրկել եւ բանակցութեան մտնել Թոփ.ի(5) եւ Սիվր.ներու(5) հետ: Անդրանիկը երէկ մեկնած է Միւրիլ. վերադարձին կանգ պիտի առնէ Գաիիրէ(5). Չոհրապը հոն պիտի միանայ իրեն. իրենց համար պէտք եղած Քաթերը(5) կը պատրաստուի(5): Կը յուսամ որ յաջողին:

Յ.Տ.Օ.Յ.էն(6) այս շարքէ նամակ ստացայ: Մարդներս առնելու(5) մասին դեռ կարգադրութիւն մը չեն ըրած, միջոցներուն ապահովութեան մասին հաստատ համոզում գոյացնելու կ'աշխատին եղեր: Միւս կողմէն Տիգրանի մասին իրենց նախորդ գրութեան վրայ կը պնդեն: Այսօր իրենց պիտի գրեմ եւ իրողութիւնը հասկըցնելով պիտի հրահանգեմ որ փոխեն իրենց կարծիքը. միայն չեմ գիտեր թէ արդի Տիգրանը քու վրադ ի՞նչ տպաւորութիւն ձգած է. նախնական քայլերը խորէն եկաւ՝ եղաւ, որ ի հարկէ ներկայ կրտսերական բողոքներու մէջ երբեք ներելի չէ: Եթէ ներս(5) ալ այդ պիտի ըլլայ իր ընթացքը, աւելի լաւ է որ առաջ չերթանք եւ նոր վնասներու եւ զոհողութեանց չեն-

Թարկուինք. զինք հրահանգելով հանդերձ որոշ վրասահութիւն կազմելու եւ որ իր դիրքին մարդը պիտի ըլլա՞յ:

Տղերքը Մարտէյլէն գէնֆ(5) եւ ասկից ալ դրամ(5) կ'ուզեն. կը գրեն իրենց Stephen Ռիչարտս պրիթիշ փոսթ օֆֆիս(5), որ Թերեւս յիշողութենէն վրիպած ըլլայ: Նկատի ունենալու եւ որ Տիգրանը հոն հասնելուն անտաքտ քայլեր առած է: Վերջապէս Տիգրանին մտնելը(5) այս հաշուով 10-15 օրուան կարօտ է ու այսքան ժամանակ չու աշտեղ սպասելը աննպատակալարմար, վասնզի հնչ. մերը(5) այստեղ լուրջ քայլեր առնելու սկսեր են դրամ հանգանակելու համար: Միջոցներ կան գործադրուելիք. չու ներկայութիւնը ալ պէտք պիտի գտանք. աշխատելու եւ որ այնտեղի գործը հաստատու եւ որոշ հիմերու վրայ դրած ճամբայ ելլես:

Աղասէրը 2 օր առաջ հասաւ. դեռ մանրամասնաբար չկրցայ տեսնուիլ. Կարիճէն այսօր նամակ ստացայ. Լ.ի(2) գործերու մասին Աղասէրին հետ կարգադրութեան գալիքներն կը յանձնարարէ:

Կը յուսամ թէ կապուինք: Պ. Տոքթորեանին բարեւներս:

Համբոյրներ՝ ՎԱՀՐԱՄ

Յ. Գ.— Կիպրոսէն(5) Արամէն դեռ նամակ չեմ ստացեր:

- (1) Արգեօֆ կիլիկեցի:
- (2) Լեւոնալայր (Կիլիկիա):
- (3) Լեւոնալայրի Պատասխանատու Մարմին:
- (4) Արեւմտեան Բիւրոն:
- (5) Ծածկագիր:
- (6) Ընթացիկ ծածկագրին հետ կապ չունի. ըստ բովանդակութեան՝ կ'ակնարկուի Իզմիրի:

4 03 — 5

ԱԹԷՆՔԻՆ՝ ՍՄԲԱՏԻ ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ

Fabrique de Parapluies et Ombrelles

Z. TSIMONIDIS
147-151, Rue d'Eole - Rue Eurepides, 14-18
Athènes

Athènes, le 27 Յունուար 1903

Մերելի՛ ընկեր,

Այերէօնէն յղած գրութիւնը ստացեր եմ. արդարեւ մեծ ցաւ պատճառեց մեր բաժանուած առանց տեսութեան, բայց ի՞նչ օգուտ որ պարագաները այնպէս բերին. կը յուսամ թէ առողջ էք. Ձեր յանձնարարութեան համաձայն երէկ ժողով գումարելով պէտք եղած

կարգադրութիւնն ըրինք. տեղոյդ կոմիտէին հետ յարաբերութեան մտնելով, ցարդ եղած դրամն եւս զրկելով՝ կը յուսամ թէ յետ այսու կանոնաւորութեան կարգին կու գան գործերը. սոյն թուով կը ստանաք նաեւ Ձեր հասցէին եկած երկու ծրարներ: Պ. Տիգրանը եւ ընկերները լաւ լինելով կը բարեւեն:

Ընդունեցէք ընկերական յարգանքներս՝ ՍՄԲԱՏ

4 03 — 6

ՎԱՀՐԱՄԻ ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ

Աղեքսանդրիա, 28 Յունվ. 1903

Մերելի Մարթին,

Գարթը եւ 24 թիւ նամակդ միասին ստացայ: Այսուհետեւ քարթ մի՛ գրեր, ճիշդ չէ. մանաւանդ որ փոսթին մէջ հայ ցրուիչներ կան:

Ոսկ.էն(1) երկրորդ նամակ մ'եւս ստացայ, առաջինը զոր նոյնպէս մեկնելէդ վերջ ստացած եմ, թեպէտ զրկած էի իմ նախորդ նամակին ներփակելով, կը յուսամ թէ ցարդ ստացեր ես: Վերջին նամակն ալ ներփակեալ թեպէտ կը զրկեմ: Ոսկ.ի(1) տղաները դարձեալ կը յամառին իրենց որոշմանը մէջ եւ ցաւ ալ կը յայտնեն որ իրենց կարծիքներուն կարեւորութիւն չի տրուիր. Տ.ի(2) ներկայութիւնը, կ'ըսեն, իրեն ալ մեզի ալ վտանգներ կը սպառնայ: Այս պարագայի մէջ Տ.ին(2) զրկուիլը, ըստ իս, ճիշդ չէ, մինչեւ որ նորանք համոզուին, կանխաւ, կամ Տ.ը(2) երբեք զբերուելու չէ: Զօրօք բան չէ կարելի ըլլալ. յետոյ վտանգի մեր վրայ պիտի բարդեն: Միւս կողմէն Տ.ին(2) տղայութիւններն ալ հետզհետէ ծայր կու տան. այս գլխու տէր մարդերու վրայ եւ այնքան ալ վստահութիւն չեմ ունենար: Դեռ ճամբայ չելած իր բոլոր մեծ-փոքր կապերուն լուրեր ստուած է.— կու գա՞մ կո՞ր. լսեցէ՛ք: Եթէ երկրացիք համոզուին եւ հրաւիրեն, դա ուրիշ հարց է. ուստի այս օրուան փոսթով ես կը գրեմ, դուն ալ անկից գրէ՛ եւ եթէ դարձեալ յամառին իրենց կարծիքներուն մէջ, ըստ իս, կ'առնես եւ հոս կը վերադառնաս. Թերեւս Լեւոնալայրի որոշ շրջանի մը մէջ օգտակար դառնայ: Այստեղ կ'որոշենք Անդրանիկի խնդիրը:

Արամէն նամակ ստացայ, Թաթոն մտած է Մարտէյլէն ուղղակի Պէյրութ. ամերիկացիք դեռ Մարտէյլ կը սպասեն եւ մօտերս պիտի հասնին Բիպր(3): Ետտով երկու նամակ կը զրկեմ մին Պէյրութ(4) եւ միւսը Կարաւան. անկից փոսթ պիտի ձգուի Թուրամճեանի հասցէին. պարունակութիւնը յայտնելու հարկ չկայ. կառավարութեան իմացած ըլլալը պարզող, եւ ոտք

կոխած չկոխած օձիքը ձեռք պիտի տան: Ապահով եմ որ այս նամակները իրենց օգուտը պիտի ունենան եւ հրահանգ պիտի տամ Սամ.ին որ Թաթոն եւս մղէ Պէյրութէն(4). Ի հարկին մեր Ս. բերդի ընկերը, որ վերջերս հոն եկած է զրկէ Պէյրութ(4). Սամ.ը այդ բաներուն մէջ շատ ճարպիկ է, նա գլուխ կ'ելլէ: Արամը իր դերը շատ լաւ կը կատարէ. նոր հրահանգ տուած եմ որ սպասէ եւ հետեւի մեծ զգուշաւորութեամբ:

Այս տեղացւոց ծրագրերը ոտքը ինկաւ եւ այս օրերս ջուրն ալ իյնալով սոսկալի պիտի խայտառակուին: Ամբողջ գործերը օրը օրին մեզ ծանօթ են, ինչպէս նաեւ գահիւնցիք, որ ամենաստոյգ տեղեկութիւնները կը ստանան: Պերճ, Էնֆիլէճեան եւ Վահէ Բարթողին գացեր են եւ գրեթէ վստահուեր են: Տիգրան փաշան գրած նամակին կառավարութեան յանձներ է. Կառ.ն ալ դիմած է Առաջնորդին: Վարդ.իմ(4) հետ երէկ միասեղ էինք, նա ալ Սմբատ Բիւրատէն իմացեր է եւ կը բարկանայ: Այսքան. սիրտդ պի՞նդ պահէ, ապահով եղի՛ր, մի՛ վախնար. ինչպէս ըսած եմ, բան մը չեն կըրնար ընել եւ ընել չենք տար, խնդիրը առանց մեր գործերը վտանգելու չարիքին առջեւը առնելու մէջ կը կայանայ. անոր մէջ ալ վստահ եղիր որ յաջողած ենք:

Զօհրապը վերադարձաւ Գահիրէէն. Անդրանիկը նորէն Միսիէ գնաց Գահիրէէն: Թէեւ դրական արդիւնք մը չունեցաւ, բայց շուտով պիտի ունենայ. Սիվրիս.ը(5) ժընեւ պիտի երթայ եւ անկից ալ ի հարկէ չպիտի ուզեն բանակցիլ եւ հոս պիտի վերադառնայ: Եթէ երեք հարիւրով(4) ուզէինք զոհանալ գործը պիտի լմնար, բայց 1/3ը զեղչեցինք 600էն: Թոփ.ը(4) նոյնպէս ժընեւ վերջնականապէս պիտի կարգադրէ կ'երեւի: Հարկ եղածները այս շաբթու Բ.ին(6) կը գրուին: Բ.էն(6) նոր նամակ չեմ ստացեր:

Աղասէրը դեռ հոս է. որոշ տրամադրութիւններ ցոյց կու տայ կապուելու մեզի հետ: Վերադարձիդ կը կարգադրենք:

Անցեալ շաբթու Բիւրոյին գրածս նամակին ջորին առած եմ:

Համբոյրներով՝ ՎԱՀՐԱՄ

Յ. Գ.— Անկից դէպի Լեւոն. փոխադրութեան միջոցներուն վրայ հետապօտութիւններուն մէջ հարցո՞ւր նաեւ թէ որոշ քանակութեամբ ուժանակ(4) կը գտնուի՞ եւ ջիւրն ի՞նչ արժէքով:

ՆՈՅՆ

- (1) Ոսկեհամֆ (Իզմիր):
- (2) Տիգրան (տե՛ս նախորդ նամակները):
- (3) Ծածկագիր. հաւանորէն առաջին տաք պէտք է ըլլայ Կ (Կիպրոս ?):
- (4) Ծածկագիր:
- (5) Ծածկագիր. հաւանորէն՝ Սիվրիսաբան:
- (6) Բիւրօ:

4 03 — 7

ԳԵՂԱՄԻ ՆԱՄԱԿԸ

Զմիւռնիա, 16/29 / I / 1903

Աշոտին եւ Տիգրանին,

Ստացանք Ձեր նամակը, անմիջապէս կը պատասխանենք.

Տ.ի(1) հոս գալու մասին տասնիցս գրելէ յետոյ մենք անկարող ենք այլեւս պատասխանել Ձեզ:

Ինչ բառերով բացատրենք Ձեր բռնած յամառութեանը, քանի որ հիմնական օրէնք մը նոյնիսկ յարգելու բարի տրամադրութիւնը չէք ցուցներ: Ներեցէք որ այսքան վայրագ կը խօսինք:

Մենք մինչեւ հիմա աշխատեցանք մեր դրութիւնը կարելի եղածին չափ հասկցնել Ձեզի, բայց ցաւօք կը յայտնենք թէ՛ դուք ոչ մէկ ջանք կատարեցիք ըմբռնելու համար զայն: Տ.ի հոս գալուստը անկարելի է կըրկուակ տեսակէտով.

1.— Ոչ մէկ ընկեր համաձայն է անոր ներկայութեանը.

2.— Անխոհեմութիւններու է՛ն մեծը պիտի ըլլար: Կը սիրենք յուսալ որ մեր այս նամակի իսկական պարունակութիւնը պիտի կրնայ ըմբռնուիլ, այլապէս անկարող պիտի ըլլանք մեր յարաբերութիւնը շարունակել:

Բարեւներով՝ ԳԵՂԱՄ

(1) Տիգրան:

4 03 — 8

ՎԱՀՐԱՄԻ ՆԱՄԱԿԸ

Աղեքսանդրիա, 30 / I / 1903

Մերելի Մարթին,

2 օր առաջ զրկած նամակն կը հաստատեմ. ցարդ ստացած կ'ըլլաս:

Բ.էն երէկ նամակ ստացայ, ջոջերէն նոր 2-3 հոգի եւս հասցէներ ցոյց տուած են դիմելու համար: Այս իրիկուն Աւօն եւ Զարհը պիտի գային եւ նամակներուն անհրաժեշտ մէկ մասը պիտի կարգադրէինք. Թերեւս անձրեւի պատճառաւ չեկան: Վաղը առաւօտ կը սպասեմ եւ կը յուսամ որ մէկ մասը զրկենք:

Հնչակեան ձեռնարկներու մասին նախորդովս լուր տուած եմ: Ամերիկայէն եկողներէն մին յարաբերութեան մէջ մտած է մեր Աբրոյին հետ՝ իրեն ցոյց տրուելիք մէկը դաշունահար ընելու համար: Աբրոն ինձի լուրը բերաւ եւ ես հրահանգեցի իրեն որպէսզի ո՛ւր եւ որո՞ւ վրայ պիտի կատարուի հասկնայ: Այսօր մինչեւ կէսօր կը յուսամ թէ հասկնանք:

Իմ պահարաններուս պէս «Արուլը» պահարան գործածեցէք, Ձեր պահարաններուն վրայէն ամէն ինչ կը կարդացուի կոր:

ՆՈՅՆ

- (1) Մատիսով, այլ ձեռագրով մը, փակագծի մէջ աւելցուած է (Մարթիոս):
- (2) Հաւաստի՞՞մ Գարեալ:
- (3) Նամակիմ մէջ ստորագծուած. կը ճշմարիտ ծածկագիր:
- (4) Հնչակեաններու:

4 03 — 11

ՏԻԳՐԱՆԻ ՆԱՄԱԿԸ

1903 Փետր. 23, Բիւրէ

Սիրելիս Աշոտ,

Վոյս գացի եւ Ձեր ըսած մարդուն հետ տեսնուեցայ, իր վրայ շատ աննպաստ գաղափար մը կազմեցի, ահա թէ ինչո՞ւ:

Թաթուլ Մոմճեան թեքիրտաղացի է, միջհասակ, ոչ գէր, 35-38նոց մարդ մըն է, ինքը Թեքիրտաղի նախկին վարժապետ Մոմճեանի տղան է եղբր, որը հիմա կօշիկի խալիպ շինելով կը զբաղի եղբր. երկու եղբայր ունի, մին Պոլիս յանձնակատար, միւրը՝ Հայրենիքը, հօրը գործին: Եստ կանուխէն Պոլիս եկած է եւ 1884էն վերջը Պոլիս եկած «Հայաստան» անուն թերթ մը կ'երթայ փոստէն կ'առնէ եւ կը ցրուէ եղբր. իսկ անկից յետոյ ո՛չ Հնչակեան, ո՛չ ալ Դաշնակցութեան պատկանած է, լեզուն բերնին մէջ դարձող մարդ է, բայց խիստ շառլաթամ: Երբ Վոյս գացի, բնական էր որ առաջին անգամ անոր հետ տեսնուէի, զիս տարին անոր մօտ, երկու զոյգ կօշիկ ունէր ձեռքը, կ'աշխատէր. ըսի՞ թէ կօշիկար է ինքը:

Երբ իրեն հարցուցի իր գրած նամակի մասին, բառ առ բառ իրեն թողունք սր խօսի. «Հա՛, հոս պարսկահայատակ հայ մը կայ, ուրմիացի Յակոբ Պարեազտար անուն. այս տղան կիլիկիոյ լեռները, ձորերը լաւ գիտնալուն, զրեցի խմբագրութեան, որպէսզի այդ տղան հոն զրկեն. բայց խմբագրութեան գրած նամակին մէջ կ'ըսէին, որ մարդը իր ճամբու ծախքը ինք պէտք է հոգայ. ես կը կարծեմ որ ճամբու ծախք ունեցողը մարդու չի դիմեր, անկից վերջը կասկածոտ ըլլալով, նամակէն հետեւութիւններ հանելով չգրեցի: Ի՛հ, այդ տղուն պէս ես ալ կ'երթամ՝ քանի հայ ենք»: Արդ, պարսկաստանցի Յակոբ ըսուած տղան 2 տարի կամ 1 1/2 տարի առաջ, Մանիսայի մէջ շատ մը խայտառակութիւններ ընելէն յետոյ, «եթէ գրամ չտաք տաճիկ կ'ըլլած» սպանակիւքով, գրամ առած է տեղացիներէն. իր անձին նկատմամբ ազոտոտ միջոցներ գործածող մարդու մը բարոյականին վրայ ո՞րքան կարեւր է վստահել:

Խմբագրութեան նամակը կարդացի. 21 Սեպտեմբեր թուականը կը կրէ, պաշտամ սալմա բան մ'է...: Ըսի որ ես դացած էի մասնաւորապէս ուժանակի խնդիրը ստուգելու. «Հա՛, ըսաւ, խնդաց, — բան մը չէ պատրաստելը, ըսաւ, հարիւրին 75 բորակ, 25ը ածուխի եւ ալքոլի խառնուրդ է վառողը, իսկ նոյն պատրաստութեամբ՝ բայց հարիւրին 75 սնդիկ ըլլալու պայմանաւ, ուժանակ է» — կ'ըսէ. կը հարցնեմ թէ բաքի՞մ կերպով ուսած է. ո՛չ, կ'ըսէ, գրքի մէջ կարդացեր եմ: Փորձ քրա՞ծ ես, կ'ըսեմ. այո՛, կ'ըսէ: Պատրոյզի մասին կը հարցնեմ, որի պատրաստութիւնը ուրիշ տեղ տեսած էի, շա՛տ շա՛տ դիւրին բան է, կ'ըսէ. յետոյ կը սկսի երկար բացատրութիւններ տալ իր տղայութեան ըրած շահատակութիւններուն վրայ: Մարդէ չեմ խորուր, — կ'ըսէ. հիմա տե՛ս, — կ'ըսէ, — ես շատ լաւ դիւրք մը շինած ըլլալով ինծի, մինչեւ որ որոշ ապահովութիւններ չառնեմ, գործս չեմ ձգեր, — կ'ըսէ: Իրմէ կը խնդրեմ որ արդեօք կարելի՞ է մինչեւ վաղը երկուսէն ալ նմոյշ մը պատրաստել. շա՛տ դիւրին է, — կ'ըսէ. երեկոյեան ժամագրութիւն կ'որոշեմք եւ կը բաժնուինք:

Պանութին մէջ ունեցած կօշիկները եւ գործիքները ամէնը մէկէն (3) երեք ոսկի հազու թէ կ'արժեն, երեք հատ գանարիա ունի խանութին մէջ, իւրաքանչիւրը երկ-երկու ոսկի կ'արժեն, կ'ըսէ, աս ինծի Մարսիլիս կը տանի, անկի կ'իւրոս կը տանի ըսելով, խըլայի կ'ընէ: Ինչպէս կ'երեւայ՝ հօրը գրած է թէ, իր վիճակը շատ լաւ է. հայրը նամակ մը գրած է որը կարդացի, խիստ լեզու կը գործածէ եւ կ'ըսէ թէ 7-8 տարիներէ ի վեր արտասահմանի մէջ ի՞նչ ըրած է, մինչ անդին ութ ոսկի տուրք ունի, պարտքեր ունի, եւ կը ստիպէ որ իր կարողութիւնը կէտ առ կէտ գրէ:

Գիշերը հայաց սրճարանը ժամագրութեան տեղը կու գայ. անդիկ չէ գտած: Չտուին, բայց մինչեւ վաղը անպատճառ կ'ընեմ, — կ'ըսէ. պատրոյզի մասին կը հարցնեմ, ան շատ դիւրին է, — կ'ըսէ. որքան ալ դիւրին ըլլայ, ատիկա արդեւիչ նիւթեր չունենալուն պէտք է պատրաստէք, — կ'ըսեմ: Եստ լաւ, — կ'ըսէ, կը մեկնի:

Երկրորդ օրը, կէսօրին պիտի մեկնիմ ըսած էի, բայց տղաքը չթողուցին զիս, այսօր մնացի՛ր ըսելով: Երեք անգամ կ'երթամ, չեմ գտներ: Յետոյ լուր կը ձգեմ որ նոյն օրը չպիտի մեկնիմ. ուստի, խանութ մը կար մօտերը, հոն եմ, — կ'ըսեմ. կէսօրէ վերջ ժամը 2ին տղան կը զրկէ զիս կը կանչէ, կ'երթամ խանութ. 4 հոգի կայ խանութը. կ'ըսէ թէ անկարելի պիտի ըլլայ պատրաստել, — անդիկ չեն տար, — կ'ըսէ. մի՛ւսը, — կ'ըսեմ. չհասկնալ կը ձեւացնէ: 2 ժամ կը սպասեմ որ միւսները մեկնին, յետոյ պատրոյզը ի՞նչ եղաւ, — կ'ըսեմ, — ատիկա շատ լաւ չգիտնալուս, բազմապիւր չեմ գիտեր(1), բայց պիտի աշխատիմ սորվիլ, — կ'ըսէ. ես արդէն երբ խմբագրութեան գրեցի,

հոն գործիչ ըլլալու համար էր. երբ ինծի հարցուցին, թէ ուժանակ կրնամ շինել, կը յարմարցնենք ըսի, կ'ըսէ. ատիկա երկրորդական էր, կ'ըսէ. բայց եւ այնպէս ես երկուքն ալ պիտի շինեմ եւ զրկեմ, — կ'ըսէ: Լա՛ւ, — կը պատասխանեմ...:

Ինքը անհաղորդ է լիբը ըլլալուն (թէ եւ ես բան մը չտեսայ, բայց երբ բոլորը կը վստահեցնեն կոր, պատճառ մը չունինք չհաւատալու), բոլորին հետ գփտուած է, ամենէն անկեղծ մարդուն չնչին խնդրոյ համար հայհոյած եւ իր շուրջը, ամբողջ Վոյսն հակառակորդ չինած է: Ինքը իրբեւ տալանտրի համբաւաւոր է եղբր Աթէնքի մէջ. Կարապետ Մատոյեանէ 200 տրախմի կ'առնէ «խանութ պիտի բանամ» ըսելով եւ չունչը Վոյս կ'առնէ. շատ աշխատեր է Լեւոն Պէօրէզեան ըսուածը եւ տալանտրի ընել, բայց չէ յաջողեր, յիշեալ Մատոյեանը միշտ կը գրէ եղբր որ փարան տայ, բայց չի տար եղբր: Տեղական ընկերները (ընկեր կ'ըսեմ, յետոյ պիտի բացատրեմ) բոլորն ալ կ'ատեն եւ իբր խաչադոյ եւ շառլաթամ կ'ընդունին: Իմ կազմած կարծիքս սա է. ուժանակ-մուժանակ չի կրնար շինել այդ մարդը, իսկ եթէ իբր գործիչ... չեմ գիտեր, որ անհասական կեանքին մէջ այդքան կեղտոտ եղող մէկը, որքա՞ն մաքուր կ'ըլլայ հանրային խնդրոյ մէջ... այդ մասին դուք գիտէք. հասցէն ալ գիտէք, եթէ ես բան մը ստանամ իրմէ, կը տեղեկագրեմ: Ծամբու ծախքս եղաւ 35 տրախմի, 18 նաւու, իսկ 17ն ալ ես ծախսեցի, այս մասին չուտով կարգադրութիւն մը ըրէք, որովհետեւ հոս ինծի հետ կասկածով(1) կը վերաբերուին...:

60 ժամ մնացի Վոյս. այդ միջոցին մէջ շատերու հետ խօսեցայ եւ համակիր շրջանակ մը ստեղծեցի, վերջին գիշերը հայոց սրճարանին մէջ գրեթէ 20 հոգիի ներկայութեամբ խօսեցայ, հայուն ունեցած պարտաւորութեանց վրայ, 13 հոգի խումբ մը կազմելու առաջարկ ընդունեցան. — նախ խաչվէճին, Մեղքոն Ասատուրեան, որը ամենէն ազդեցիկն է, պիտի աշխատիմ, ըսաւ. յետոյ Նազարէթ Լուսինեանի ընկերներէն մէկը, ձեռքը գետնը զարկաւ, «թէ կուզ շատ փնասած ըլլամ, բայց եւ այնպէս մինչեւ հիմա աշխատեմ եմ, կրկին պիտի աշխատիմ» ըսաւ (ասոր Կալաթայի մէջ ունեցած խանութը բոլոր կողմապատ էն): Երկար չընեմ, խումբը կազմուեցաւ «Արշակունեանց» խումբ անունով, ոմանք մէկ, ոմանք երկու տրախմի ամսավճարով: Աղքատ մը 50 լեպտա ալ ինծի գրեցէք, — ըսաւ. որոշեցինք 2 ամիսը անգամ մը հաշիւ տալ, իսկ ամիսը անգամ մը ժողով ընել. 3 թերթի պէտք կայ. դանձապետը սրճարանատէրը եղաւ, իսկ թղթակցողը Պաշիկ Խանգատեան: Թղթակցութիւն պէտք է ընել սա հասցէով. Hat. Hanzadian, Fabrique de Tabac de Mr. S. Saporta, Volo - Grèce. Իսկ թերթերը սա հասցէին. Café Armenien, Volo, Melkon Assadourian: Թաթուլին թերթը կ'ըլլու եւ խմբագրութեամբ(1) Թղթակցութիւնը թող դադրի, ինչպէս գրեցի քարթ-փոսթալով մը խմբագ-

րութեան եւ ըսած էի, որ Եգիպտոսէն առանց նամակ ստանալու նամակ չգրեն. հետեւաբար պէտք եղածը գրեցէք իրենց: Իմ կարծիքով լաւ պիտի ըլլայ Վոյսի առաջին նուիրատուութիւնը ուղղակի խմբագրութեան զրկեն, յետոյ խմբագրութիւնը դարձեալ գրութեամբ մը Աթէնքի հետ թող կապէ. միայն դուք գրեցէք Ժընեւ որպէսզի թերթերը հասցէին զրկեն, սխալմամբ հասցէն ես չէի գրած, իրենց գրեցէք Café հասցէն. կը յուսամ թէ չէք մոռնար: Անկարելի է նկարագրել տղոց համակրութիւնը, մեկնած օրս կը ստիպեն որ մինչեւ Կիրակի գէթ մնամ, մին ճամբու ուտելիք կը բերէ, միւրը՝ պտուղ. չողենաւ երեք հոգի եկան, սըրճարանապետը, Լուսինեանի ընկերը եւ քէմախի խումբ խալվէճի մը: Մինչեւ վերջը խոստացան միութիւնը անխախտ պահել, սրճագործը ըսաւ որ եթէ առաջին անգամ չուտով գրուի թերթին մէջ, մենք չուտով 40 հոգի կ'ըլլանք ըսաւ. դուք գրեցէք խմբագրութեան, որպէսզի կանոնաւոր եւ չուտով հրապարակեն նուիրատուութիւնները:

Հիմա կ'ուզեմ դիտնալ թէ աս նամակով (4) չորս նամակ եղաւ կը գրեմ, գրեցէք թէ չորսն ալ ստացած էք: Ինչպէս նախանձը ամէն տեղ աւեր կը գործէ, հոս ալ սկսաւ գոյ ըլլալ: Թորգոմի մշտնջենական ինծի հետ տեսնուելը, եւ Վոյս գնալս, ինչպէս նաեւ Հայկից եկած նամակները գաղտնի պահելս, նախանձը շարժեց Պ. Ստեփանին. անգամ մը վրաս յարձակեցաւ սա բառերով, թէ ինչ շատ-շատ բարձր մարդիկ տեսած է ինքը, թէ իմ մտածածս ԲԵՆԷՓՐ կը մտածէ եւն. : Ինծի համար շատ դիւրին էր ապտակելը, բայց առանց բառ մը փոխանակելու, Ձեզի խորհուրդ հարցնել հարկ դատեցի. երէկ ալ երբ հոս եկայ, քովս չեկաւ, մինչդեռ իրարու հետ բան մը չունէինք. որովհետեւ ես բան մը ըսած չէի, իր ըսածներուն փոխարէն: Ատկից գատ, վերոյիշեալ բաները ինծի ըսելէն յետոյ, մենք երկար ժամանակ իրարու հետ համակրութեամբ վերաբերուեցանք. ես ալ, ինչ որ բնական էր, երէկ գիշեր պանդոկը պտուկեցայ. տեսնեմք թէ այսօր քովս կու գա՞յ:

Արմենակին 5 Փրանքը, գրած եմ որ Ձեզի տան. առէք: Նախկին նամակովս երկու փախստականներու մասին խօսած էի, ինչպէս կ'երեւայ մին Մանիկեանը իր ճանկը ձգեր է եւ ճամբու ծախք կու տայ որպէսզի հոն գան, երկու հնչ. Երուս(1) հետ այս վերջիններն ալ բանէն դուրս եկաւ, որ հեռագրի կը սպասեն եղբր հոգ գալու... եւ հիմա կու գան: Ձեր գրած նամակով շատ հետեւութիւններ կարելի է հանել. ինչ որ է: Մին, այն որ Մանիկեանի ճանկը չէ ինկած, Թորոս կ'ըսուի: Ա՛խ, արդեօք ե՞րբ Մաշլաքը պիտի համբուրեմ, — կ'ըսէ կոր. Պ. Գալֆայեանն ալ կը ճանչնայ կոր. չուտով իրենց մօտ գացէք: Եւտով պատասխանի կը սպասեմ:

Համբոյրներս բոլորիդ ալ՝
ՏԻԳՐԱՆ
(1) Նամակիմ մէջ ստորագծուած:

4 03 — 12

ՍՄԱՍՏԻ ՆԱՄԱԿԸ

Աթէնք, 24 Փետրուար 1903

Սիրելի Մարթին,

Ձեր երկտողն ստացած եմ: Ձեր որոշման համաձայն, տեղւոյս խմբի կազմութիւնը հաստատելով տեղւոյդ կոմիտէին յայտնած ենք, ուղարկելով նաեւ ցարդ դոյաքացած դրամը. բայց զալով տեղական պատահական ծախքերու դրամի հարկը զգալի ըլլալով, տեղւոյդ կոմիտէին տեղեկագրեցի, որ գէթ մօտաւորապէս 10 կամ 15 օսկրի չափ դրամ գտնուի տեղս. առ այդ դուք եւս Ձեր դադարաբար յայտնեցէք: Ձմիւռնիոյ բանտէն նամակներ ստացած եմ որ դրամ կը պահանջեն շուտափոյթ, հետեւապէս փութացուցէք. գէթ երկու հարիւրի մօտ Ֆրնք. զրկել որ հիւպատոսի միջոցաւ ուղարկեմ Յակոբ Արաւահանի(1) հասցէին, Յարհատի եւ Աղիզօֆի(2) եւայլն բանտարկեալ մեր ընկերաց: Յարհատէն եւս նամակ ստացած եմ բանտէն, որ նոյնը կը կրկնէ, դրամ պահանջելով: Պ. Տիգրանը եւս Վօլօ մեկնեցաւ, բայց դեռ պատասխան մը չառի իրմէն. միայն իր ներկայանալի անձնաւորութենէն մի քարթ ստացայ, որով կը յայտնէր իրենց անհամաձայնութիւնը եւ տեղէն մեկնելը. տակաւին Տիգրանը տեսած չեմ: Ինչը արդէն Ձեզ գրած լինելու է Պաղտասարին քովէն ելնելը եւ տեղէն արդէն դրամ պահանջած է, որովհետեւ տեղս պարտքով դրամ վերցուցած է եւ գործը ձգելով բնականաբար ապրելու դրամ հարկաւոր է մինչ ցնոր տնօրինութիւն: Խնդրեմ մի ուշացնէք դրամ ուղարկել բանտը զրկելու համար:

Ընկերական համայնքերով
Ձերդ՝ ՍՄՐԱՏ

- (1) Վարդ Մանուշակի բուն անունը:
- (2) Պայէօզեանի տեսքիկիչը:

4 03 — 13

ՏԻԳՐԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ

1903 Փետր. 15/28, Բիրէ

Սիրելիս Աշոտ,

Վերջապէ՛ս... երկար սպասումէ վերջ կը ստանամ Ձեր 25 Փետր. թուակիրը. նախկին երկու նամակներդ ալ արդէն ստացած եմ եւ զատ-զատ պատասխանած. կու գամ հիմա պատասխանել Ձեր 25 թուակիրին:

Ձեր վերջի գրութեան համեմատ գնացի շոգենաւ, բայց, երբ Պրն.ը չլստայ, Հոգին սուրբս վկայեց որ ձախորդութիւն մը պատահած է. սակայն ինչ կ'ուզէ թող ըլլայ, որպէսզի գործը չզարգի, եթէ յարմար դատէք եւ մինակս կ'երթամ Իզմիր, գործը շարունակելու հա-

մար, տեղացիներուց ետ արեւ յարաբերութիւն չունենալու պայմանաւ(1): Եթէ ասոր համաձայն էք, կը կարծեմ որ ինծի մինակ երկու ահարեկիչ պէտք պիտի ըլլայ, եթէ այդ պէտքն ալ կարող էք լեցնել, գրեցէք եւ անմիջապէս Ձեր գտած միջոցով ճամբայ կ'ելլեմ. ես կը կարծեմ թէ առանց իրենց աջակցութեան եթէ հոն գործ մը յաջողցնենք, որոշ կերպով պիտի գիջին: Ամէն պարագայի Ձեր շուտափոյթ պատասխանին կը սպասեմ:

Պ. Վահրամի գրած նամակը կարդացի, շատ լաւ գրուած էր, միշտ այդպէս, նոյն ոճով գրուելը կը կարծեմ թէ օգտակար պիտի ըլլայ:

Հնչ. երու մասին աւելի բան մը չէի յուսար, ծակ խալաւորէն բարակ ալիւր չելլար, կ'ըսէր պապս. առիկա շատ ճիշդ է... Այսօր Ղազարոս էքմէքճեան առնու հնչ. եան մը իր Լեւոն ընկերով, Թրիչստէէն հոս հասան եւ Մանիկեանին գացին, դեռ չտեսնուեցայ իրենց հետ, այս գիշեր կը տեսնուիմ. տեսնենք... Ամերիկայէն կու գան եղեր:

Իզմիրէն եկած նամակները միշտ պիտի արհամարհեմ, բայց աւելի լաւ կ'ըլլար եթէ Արշակին բնաւ չի մացնէք հոս ըլլալս:

Վօլոյէն նամակ ստացայ. գիս կը հրաւիրեն Վօլօ, որպէսզի տեսնուինք, բայց մինչեւ ցարդ, դրամի կը սպասէի. հիմա շուտով ասկից ծախսս կ'առնեմ եւ կը մեկնիմ Վօլօ այսօր վաղը. հոնկից կը գրեմ մանրամասնութիւնները մեր տեսակցութեան եւ կը վերադառնամ. կը յուսամ թէ մինչեւ այն ատեն, արդէն պատասխանած կ'ըլլաք այս նամակին:

10 օրէ գործէս ելած եմ, բանդուֆ ծախեմ պիտի, եթէ մեր ընկերոջ հետ համաձայնինք. 10 օրուան մէջ ընկերներէ փոխ առի ապրեցայ: Յետոյ կը վճարեմ: Գործէս ելլալու պատճառը այն է որ, ֆօզի տակ հասկըցուց թէ աւելորդ շատ ծախքեր կ'ըլլան եղեր, եւ ինծի ատանկ պէտք էր ընել:

Թորոզը երեքշաբթի օր հասած էր եւ Մանիկեանի(1) գացած, նոյն գիշերը իրեն հետ տեսնուեցայ եւ յաջորդաբար ամէն օր, մինչեւ գիշեր. երէկ մեկնեցաւ Պուլկարիս: Եթէ Ձեր նամակը, գէթ երէկ առտուս ստացած ըլլայի, թող չէի տար, բայց ի՞նչ կարելի է ընել, նամակը այսօր ստացայ եւ այն ալ ժամը 4ին. սակայն մասնաւոր նախազգացումով իրեն առաջարկեցի հող գալ, բայց ինչը առարկեց թէ հող ընկեր չունի եւ ապրելու միջոցներ չկան. ես չուզեցի ըսել Գրգոյին հող ըլլալը, պաշտօնապէս(1) գիտցած չըլլալու. ուստի անիկա գացած է: Թէեւ Պուլկարիս գնալը չուզեց ժողովրդին գիտցնել, բայց փորձառու գործիչ Պ. Մանիկեանի բաց բերանութեամբ, ամէն տեղ տարածուեցաւ. ահա՛ հնչ. եան գործիչները: Ինչն ալ փիլիսոփայ եղաւ անոր ըսելուն ամա, ըսած եղաւ:

Իմ կարծիքովս լաւ պիտի ըլլայ, եթէ իմացուի բոլոր կարեւոր մարմիններուն որ եթէ գործիչ մը ասկից

անցնի, մեր տղոց դիմէ, չերթալով Մանիկեանի պէսներու, որպէսզի անոնք ալ հնչ. եան է ըսելով չյօրորան:

Համայնքներ Պ. Պ. Վահրամի, Մաշալքին եւ Ձեզի:

ՏԻԳՐԱՆ

17 Փետրուար

Ինչպէս «Շարժում»ի նամակատուփէն հասկցայ, Իզմիրի տղոց բոլոր թղթերը Վարդոյին ղրկեր են:

Այլ առակ լուարուք: Իզմիրէն երկու նամակ ստացած է Տոքթորեանը, որոնց մին Յ. Էն(2), մէկն ալ Յակոբէն(3), Յ. Ն կ'ըսէ որ կէս գնտանի մէջ է 100 օրէ ի վեր. սաղ ըլլան բարեկամները որ օչնութիւն մը չընձեռեցին, կ'ըսէ. յետոյ գաղիերէն հեռագիր մը գրած է սա բովանդակութեամբ. Արդէն դատապարտուած ամերիկահայատակի մը աջակցութիւն ընել: Հեռագիրը Վահրամիին համար ըլլալուն, 34 տրախմի ծախսով հեռագիրը զարկեր է, ես՝ աւելորդ էր, ըսի, բայց չեմ դիտար թէ դուք ի՞նչ կարծիք ունիք: Միւս Յակոբին նամակը ինծի չուզեց կարդալ. 4 երես էր, ստիպեցի զինքը որ Ձեզի մանրամասնօրէն գրէ. դրամ կ'ուզէ եղեր շատ եւ շուտ. ըսի որ Ձենէ պահանջէ. ան ալ դիտարութիւն ունէր խմբագրութեան գրելու. տեսնենք ինչ կ'ընէ: Մանրամասնութիւնները ինծի գրեցէք:

ՏԻԳՐԱՆ

- (1) Նամակիմ մէջ ստորագծուած:
- (2) Հաւանորէմ՝ Յարիտուն:
- (3) Հաւանորէմ՝ Յակոբ Արքաւանեանէն (Վարդ Մանուշակ):

4 03 — 14

Նամակագիրը՝ անորոշ (ստորագրուած է Յ.), «Երեւոյն» անունով: Վարդի անուն չկայ: Ուզուած է Մարթինի, որու ծածկանուններէն մէկն է Բ. Բերանի: Ըստ երեւոյթիմ գրուած է Կիլիկիայէն կամ յեզափոխակաւ այլ կեդրոնէ մը:

Սիրելի Բ. Բերանի,

Փետր. 17 թուակիր նամակիս ու քարթիս պարունակութիւնը կը հաստատեմ. Ձեր Փետր. 18 թուակիրն ալ ընդունեցի:

Ինչպէս գրած եմ, տղան անցեալ մէսածրբիով ղրկած եմ. այդ խնդրի մասին նոյն պնդումներով կը մնամ: Ատոնք շատ կարեւոր բաներ մը չեն մեր գործի(1) ներկայ վիճակի հոգեբուն առջեւ:

Հնչ. անրէն(1) հոս մտնող երիտասարդը իւր դուրսը գտնուած միջոցին իւր եւ ընկերներու ջանքովը բաւական իրական ձեռնարկութեան խոստումներ հասցուցեր է անրսի(1) բուն մեր ընկերներու(1) ականջին, եւ քանի որ մերիներ(1) ալ արդէն երկար ատենէ ի վեր կը դանդաւոր Ձեր դանդաղ եւ միաթիւ գործելուն հա-

մար (այնպիսի գործելու եղանակ մ'որ իրենց աչքին լճացեալ վիճակ մը կը թուի), կը խորհիմ թէ գործերը եթէ այս ընթացքով շարունակեն լաւ արդիւնքներ չպիտի տան, գոնէ Ձեր երեւակայածէն տարբեր ձեւեր պիտի առնուն: Վստահ եղէք թէ անրսի(1) մեր ընկերները(1) ոեւէ արուեստակեալ յարաբերութենէ խառուելու վիճակի մէջ չեն, սակայն սվոր մասին կ'ուզեմ Ձեզի վստահութիւն մը ներշնչել, թէ իրական օչնութիւն մը կանխող մի գործադրութիւն հակառակ տարրին կողմէ (երբ դուք թեւերնիդ ծալած կը կենաք կամ այնպէս կը թուիք) կրնայ գրաւել զիրենք:

Քանի անգամ Ռահվերը(1) գրեց Ձեզի թէ որքան կարեւորութիւն կը վերցնէ անձնական տեսակցութիւն մը. դուք երկու կամ երեք անգամներ կրած էիք ատոր մասին, սակայն ցարդ չկրցանք որոշ եզրակացութիւն մը լսել: Գիտէ՞ք թէ որքան կարեւոր է մեր առջեւ գտնուած ժամանակը: Այս տարուայ միջազգային ֆազ(1) դէպքը նախատինք կարգաց ամբողջ հայ յեզ. քեան(1), չտեսնալով զիրենք անցեալ եօթը տարուայ մէջ ազգը(1) պատրաստ վիճակի մը բերած:

Կիլիկիայ(1) մէջ մեր վաղուան գործելու եղանակին վերաբերեալ բլաններ(1) եթէ ունիք՝ կը ծածկէք մեզմէ. չպիտեմ արդեօք թէ որո՞ւ պիտի յայտնէք անրսը(1), եթէ հարկ զգաք: Այդ բաները գոնէ ինձ յայտնելէ միշտ կը զուշանաք, յիշեցնելով նոյնիսկ յեզ. գիմ. (1) հոգիի սկզբունքները, վարդապետելով նոյն սկզբանց ներշնչած ընդարձակ վստահութիւնը. Սիրելիներ, կարծեմ այդ հոգին, սկզբունքները եւ վրտահոսութիւնը հասկնալու համար արտասահմանի մէջ ապրած լինելու հարկ չկայ, կարծեմ նոյն իսկ անրսիներ(1) կեանքին անհրաժեշտ մի մասը կը կազմեն առնոնք, կամ նոյնիսկ անրսի(1) պարագաներն են այդ բաները թելադրող եւ ստեղծողները: Մի խօսքով դուք աւելի կը պարտիք անրսի(1) վստահիլ քան ան Ձեզի:

Ձեր նամակովը կը գրէիք թէ անրս(1) գալու ընկերը(1) արդէն պատրաստ է. լա՛ւ, վերջին նամակովս դրամ էի թէ ինչպիսի վստահելի ճամբով մը տղան ղրկեր եմ և թէ նոյն վստահելի ճամբով մերիներ(1) ոեւէ մէկը պիտի ընդունին(1). այդ մասին կարգադրութիւնները վերջացուցեր եմ. ի՞նչ եղաք, ինչո՞ւ կ'ուշանաք:

Երանի թէ զգայիք կամ կարենայիք երեւակայել, թէ Կիլիկ. (1) փրկութեան ցանցակերպը հիւսելու համար առիթները պարբերական կարաւաններով կը ներկայանան մեր առջեւ եւ մենք կը դանդաղինք միայն առնոնց անցըր գիտելով: Վաղը Մակեդ. (1) խնդիրը պիտի վերջանայ եւ Թ. կառ. - քիւնը(1) իւր բոլոր ուժը պիտի թափէ մեր վրայ դեռ մենք մեր բոյնները չչինած (արդէն կառավ. քիւնը(1) շատոնց հասկցեր է որ մեր խնդրի վիճակը միայն Կիլիկ. Էն(1)էն պիտի ծագի իրեն համար, կը պատրաստուի հոն): Կաթողիկոսի(1) գործը վերջանալէ առաջ մեր ցանցերը պէտք է հիւսուած

լինին որ առաջին առիթով կաշկանդենք զայն մեր լա-
րերու մէջ, որպէսզի չկարենայ չոն ալ քաջագործել
այն սոսկալիորէն ազգաւեր(1) եւ ազգամտաճող(1)
գործերը, որով ամբողջ համայնք մը ոչնչացեր է: Չպի-
տի ուշանաք կարծեմ կացութեան բոլոր թուելի անթիւ-
կէտերը մտածելով՝ օգնելու մտենալով ներսի(1) նիւ-
թապէս ու բարոյապէս: Այստեղէն մտնել(1) ուզողը
պէտք է թրջերէն դիտնայ կամ լաւ թրջերէն գիտողի
մը ընկերանայ, վարպետ շարժումներով չմտանելով
այդ լեզուն չգիտնալը. պէտք է լաւ շիք հագուած ըլ-
լայ (այն մարդիկը որք զինք պիտի մտցնեն(1) շիք
սպաներ(1) են), թուրքի ֆէս հագած պիտի լինի գլու-
խը եւ չափազանց արեւելեան քաղաքավարութեամբ
պիտի վարուի. սուտերու կանոնաւոր շարք մը յերիւ-
րած պիտի լինի իւր արտասահմանի մէջ ունեցած ար-
հեստի մասին, հարուստ չցուցնելով ինչզինք (գիշի-
րանց երկու քուրք(1), նաւային սպաներ(1) պիտի առ-
նեն զինք օտար նաւէն եւ պիտի բերեն օսմ. (1) պահա-
կանաւը, չոն պիտի հիւրընկալին մինչեւ ցերեկ եւ առ-
տուն լոյսով դուրս պիտի հանեն իբր թէ իրենց քաղա-
քէն մի բարեկամն էր եւ նաւը զուարճանալու համար
տարած են զինք. կը տեսնէք շատ ապահով(1) է եւ
պատուաւոր: Եթէ այս անգամով մեր ընկերներէն(1)
ներս(1) մտնելու երկու կարեւորներ ներկայանան շատ
յարմար պիտի լինի. թէ ի՞նչը — ահա — Ապրիլ Ը. Ե.
2ին մեր Ձատկի վագանը(1) պիտի լինի. կը յուսանք
թէ այս տարի 21 օր տեւողութիւն ունենայ, այդ ժա-
մանակամիջոցին եւ կրնամ հայրենիք(1) երթալ եւ
զալ, եկող ընկերները(1) շատ ապահով(1) կրնամ տա-
նիլ, որովհետեւ ճամբու վրայ վտանգաւոր կայան(1)
քաղաքներու մէջ ծանօթներ կամ ազգականներ ունիմ:
Երկրորդ չոն անձամբ կը խորհիմք(1) այժմէական
խնդիրներու եւ գործերու վրայ, ինչ որ մեր եւ Ձեր ա-
ռաջին խորհածն է: Միայն աս անտեղութիւնը այս ան-
գամ դուք դարմանեցէք, այսինքն՝ իմ աս մի քանի ամ-
սուայ մէջ ծախսելու դրամս մի քանի միջոցով ուշա-
ցաւ. եկող(1) անձը թող իրմէ առաջ չոն իւր ծախսի
գրամը հանած լինի Օսմ. Պանքի վրայով: Ես ի վիճակի
չեմ նիւթապէս իրեն օգնելու:

Հոս(1) թերթերու չգալուն համար մեր(1) այս
տեղի ընկերները(1) շատ կը նեղանան, այն աստիճան
որ ժընել(1) բողոքելու կ'իշնեն:

Լաւ կը լինի եթէ չոն զանուող անձի մը վրայ հա-
նէք գրամը, քանի որ եկողը(1) պիտի ծածկուի:

Համբոյրներ՝
Յ.

Յ. Գ. — Ռ. Հ. Էն(2) նամակ մ'առի, հանդիսա է.
անձ. տեսակցութեան անհրաժեշտութիւնը կը կրկնէ,
նաեւ կը հարցնէ թէ Գալփան(3) ո՞ր է, ինչո՞ւ չի
զրեր:

Կարծեմ Պրն. Բ. Բերուհի դուք պիտի լինիք Ան-
պուր(4), եթէ այդպէս է ուրախանաք Ձեր փրկու-
թեան համար:

Կարեւոր. — Անտիոքէն(1) այս տարի դէպի Ձեր
կողմ արտածուեր է 300,000 սամսր(1) եւ դեռ պիտի
արտածուի. կը տեսնաք որքան մեծ քանակութիւն մ'է.
Նմոյշները պիտի ուղարկեն, միայն թէ վաճառա-
կանի մը հասցէ տուէք որ ուղղակի իսկէն. Էն(5) չոն
զրկեն:

Մեր ընկերները(1) չոն հասնելէ առաջ մի ուշա-
նաք դոնէ երկու նամակներ վերջին գրած հասցէովս
ինձ հասցնել, ընդարձակ: Հասցէն.

Անունը. Mr. Ներսէս Պաղտոյեան(1)
Մնացածները նոյնը:

Հաստ եւ օտար ծայրով մը գրած եմ, սակայն գիրս
կրնաք ճանչնալ ընդհանրօր ձեւերէն:

ՆՈՅՆ

- (1) Ծածկագիր:
- (2) Հաւածորէն՝ Ռահվերէն:
- (3) Ծածկագիր. կ'ակցարկուի հաւածորէն՝ Ազեմադրիսյ
Վանքամիմ (Յ. Գալփան):
- (4) Ծածկագիր. ճամակագիրը, Մարթիք ամամբ չեմձե-
լով, գայն հաւածորէն կը շփոթէ Հրաչիմ հետ, գոր բաժնէն ա-
զատուած կը կարծէ:
- (5) Ծածկագիր. իսկէնտրուէն:

4 03 — 15

Նամակը ուղղուած է Մարթիմի: Բ. Բ. Ի քով, այլ ձեռագրով
մը, փակագծի մէջ աւելցուած է (Մարթիմ): Գրողը հաւածորէն
Յոյն Յ. Յ է, որ գրած էր Յոյսորդ՝ 403—15 ճամակը: Ստորագրե-
լած է, ծածկագրով, ՅՈՒԱՆ: Յեղափոխական կեդճեմուն մը ան-
շուշտ: Ձեռագիրը, սակայն, բաւական տարբեր է Յոյսորդի ձե-
ռագրէն, հաւանաբար այն պատճառով՝ որ Յոյսորդը գրուած էր
շեռտաւ եւ օտար գրչով մը, ինչպէս կ'ըսուէր ճամակի յետ գրու-
թեան մէջ: Բովանդակութեան գաղտնի, բժշկական ուսանող
մըն է ՅՈՒԱՆը: Կը գրէ արեւմտ, շատ հաւածորէն, Պէյրուքէն:

903, Մարտ 23

Միւրիք Բ. Բ.,

Ձեր 6 Մարտ թուակիրը առած էի. ցարդ չզրեցի
սպասելով Ձեր երրորդ մի նամակին կամ գալիք ընկե-
րիմ(1): Ոչ մին կրցայ ընդունիլ: Ներս(1) առնելու
պատրաստած միջոցս յետին աստիճան ապահով է եւ
առ այժմ կը կենայ, ոեւէ փոփոխութիւն եթէ առաջ
գայ, Ձեզի անշուշտ կը գրեմ: Այդ միջոցէն կարծեմ
կրնաք հասկնալ որ չոն կարողացեր եմ բաւական գո-
րաւոր ընկերներ(1) ունենալ: Մի քանի շաբաթ վերջ
հոս(1) պիտի կազմենք(1) գրեթէ պաշտօնական մի կո-
միտէ(1), որը մօտ ապագայի մը մէջ պիտի կատարէ
հոս(1) ամէն ինչ որ կարելի է ծովեզրեայ այս(1)
դիրքը: Ներկայիս արդէն բաւական բաներ կ'ընէ: Իւր

ապագայի գործերը շատ կարեւոր են, որու մասին կըր-
նանք գաղափարներ տալ, եթէ մի քանի պայմաններ
յարդարուին:

Տղուն համար կը հարցնէք թէ ո՞րը գնաց: Այս հար-
ցումը հարկաւ անոր համար կ'ընէք որ հետապնդէք ի-
րենց եւ արգիլէք, որ ներս մտնեն: Լաւ կը գնահատեմ
Ձեր այդ նախանձախնդրութիւնը: Լաւ, խօսիմ. — Տը-
ղան Եգիպտոս գացեր է եւ այդ տեղէն վերադարձեր է
Կիպրոս(1): Երկու անգամ այդ տեղէն ինձ գրած է որ
անմիջապէս նիւթապէս եւ բարոյապէս մեզի(1) պիտի
օգնեն, միայն թէ յանձն առնենք ներսը(1) գործել մեր
ուզած ձեւովը եւ անկախ: Չմոռնամ ըսելու թէ այս
տղան եւ իւր ընկերը, յետին աստիճանի անձնուէր եւ
անկեղծ երիտասարդներ են եւ անխախտ կը հաւատանք
թէ կ'ուզեն որ իրենց կուսակ. քիւնը(1) ինչ որ ալ խոր-
հի ներսի(1) եղբայրները օգտուին այդ գորութենէն:
Ես տղան ետ դարձուցի համոզելով որ իրենց ներս(1)
անցնիլը նոյնիսկ հայրենիքի(1) շահին վնասարեւ էր
եւ այդ առթիւ հարկաւ ստիպուած էի յայտնելու թէ
ներսը(1) տեղային մարմիններ(1) կան գործող. եթէ
ուրանայի այդպիսի մի բանի գոյութիւնը, որպէ՞ս
կրնայի արգիլել այնքան անխախտ համոզումով առաջ
քայլող մէկը. եթէ թող տայի որ անցնէր աւելի անդին
մեծագոյն անտեղութիւններու պիտի հանդիպէինք,
քանզի տղան կրնար իւր հայրենիքին մէջ վերակենդա-
նութիւն տալ այն հիմ հիմ. խուսբերուց(1), որոնց ինք
պատկաներ էր աստե՛նք եւ որոնց հետ գործեր ալ էր:
Առանց համոզման եւ յուսատու եղանակին անկարելի
էր ինձ իւր հետքին վրայ վերադարձնել զինք, քանի որ
Կիլիկիոյ(1) միակ անցքը այս տեղը չէ: Հակառակու-
թիւն ալ չէի կարող ցոյց տալ, քանզի այն ատեն աս-
պարէզ գրաւելու եւ ուղղակի դիմադրելու համար
Դաշն. Եան(1) հետ՝ ներս(1) պիտի խուսէին աւելի բազ-
մաթիւ: Ուստի մասամբ յոռի ցուցնելով եւ մասամբ ալ
ներսը(1) բան մը ներկայացնելով կրցայ համոզել զինք
որ ետ դառնայ, միանգամայն խոստանալով որ իւր եւ
իրեն մօտ ընկերներու բոլոր գործը պիտի ջանայ որ
Հնչ. ներս(1) ոեւէ մէկը ներս(1) չանցնի, քանի որ
այդտեղի շահերուն այնքան պիտի վնասեն, միայն թէ
դրսէն(1) պիտի օգնեն որքան կրնան: Հիմա իւր տարրի
օգնութեան տեսական ըլլալուն վրայ վստահելով Ամե-
րիկա(1) չէ գացած եւ գացեր է իւր ընկերի հետ Կիպ-
րոս(1), քանիցս գրած էր ինձ, սակայն միայն անգամ
մը պատասխանեցի, ան ալ խուսափողական: Հիմա այս
մարդիկը կը դեզերին Կիլիկիոյ(1) շուրջը եւ եթէ վաղը
կամ միւս օրը հասկնան թէ մենք իրենց հետ չպիտի
գործենք կամ հակառակ տարրին կը պատկանինք, ան-
շուշտ պիտի ճգնին ներս(1) անցնելու. թողունք որ մեր
ներսի(1) ընկերները եթէ ոեւէ միջոցով հասկնան թէ
այսպիսի գործողներ կ'ուզեն ներկայանալ իրենց, բայց
կ'արգիլուին իմ կամ Ձեր կողմէ, դուք որ այսքան
դանդաղ կը դատուիք դէպի ներս(1) գործը: Միշտ կը

դանդաղէք յառաջանալու մէջ դրական եւ նիւթական
մի ճամբով:

Միւրիքներ, գործելու ձեւը այս չէ եւ այս կերպով
չէք կրնար Կիլիկիոյ(1)՝ մեր վերջին յուսակէտին՝
դոները հնչ. ներս(1) առնել փակելով բանիւնները գըր-
պանել: Ատոնց ներս(1) մտնելը միայն կրնանք արգիլել
ներսի մարմինները(1) գորացնելով, ճամբաները(1)
բռնելով եւ այնքան լայն ու հաստատ արմատանալով
ներսը(1)՝ որ նորեկ եկող մէկը չկարենայ արմատ բըռ-
նելու, շուտով չորնայ: Գանի անգամ գրեցի Ձեզի անձ-
նական տեսակցութեան մասին, մինչդեռ դուք ցարդ
դանդաղեցաք միայն Ձեզի ծանօթ պատճառներով: Ա-
հա այսօր եւս երբ հնչ. (1) գործիչները ափ առած են
մեր դոները, երբ ընդհանուր քաղաքական խնդիրները
այնքան տարօրինակ ձեւեր մը կ'առնեն, դուք դեռ կը
դանդաղէք: Առջի օր լսեցի թէ Շամի մէջ ջոյրբան
յառաջանալուն համար, այս տեղի հետ յարաբերու-
թիւնը ընդհատուեր է. եթէ թիչ մ'ալ ուշանաք նաեւ
կարելի է որ քարանթիւնայի ենթարկուի Համայն(1)
ճամբան եւս: Այն ատեն ցամաքային անցքը կը փակուի
եկող ընկերներ(1) համար, զոր ես(1) պիտի տանելի(1)
անձամբ Հովիտ(2), մինչդեռ ծովային ճամբով կարա-
ւանէն(1) արդէն այդ — մեզ ծանօթ յեղ. (1) մը տա-
նիլը — չափազանց վտանգաւոր կամ անկարելի է: Եւ
դուք դեռ կ'ուշանաք: Գալով մեր ներս(1) գործերուն,
նախ Ձեր հարցումներուն պատասխանեմ. եթէ ժողո-
վը(1) պիտի գումարենք Հովիտ(1), չոն ամէն բան
կարելի է ամենայն դիւրութեամբ, միայն թէ Յուլի-
սին մէջ կրնայ ըլլալ. այդ չափազանց կարեւոր է, սա-
կայն առջին կարգադրուելու ժամանակ ունեցող բան
մ'է: Մեր առջեւ անմիջական անհրաժեշտութիւն ունե-
ցող քանի մը խնդիրներ կան, որոնց որոշումները արդէն
չատոնց տրուած էին եւ որոնց մի քանիներու ալ Ռա-
վերը(1) ինքնին վերահասու եղաւ: Լսեցէք: «Հէր կէօ-
նիւլտէ պիր արսլան եաթար»: — Մեր ընկերներ(1) ալ
իրենց յեղ. (1) անմեղ արժանապատուութիւնն ունէին,
կ'ուզէին յեղ. քեան(1) ասպարէզին վրայ թիչ մ'աւելի
հպարտ ներկայանալ. կ'ուզէին որ շատ մը բաներ, որք
միայն դրամի պէտքին վրայ յենուած էին, միայն ի-
րենց գրպանի ծախսովը կատարուէին ու վերջանային
դրսի(1) եղբայրներու ձեռնտուութենէն առաջ: Սակայն
անգո՞ւթ որսկանութիւնը շատ կանուխ խնց մեր կա-
րեւորագոյն ոյժերէն քանիները եւ մենք լլատուեցանք
յարգելի մի մասամբ, սակայն ժամանակի երկարու-
թեան ձգելով ինչ որ կ'ուզէինք աւելի կարճ միջոցի մը
մէջ գործել, ուզեցինք մեր յեղ. ի(1) հպարտ արժանա-
պատուութիւնը պահել: Սակայն եկուր տես որ պարա-
զաները կը փոխուին, հնչ. ներս(1) օր առաջ խուսելը
դէպի մեր դոները, եւրոպական քաղաքականութեան
(մասնաւանդ անդլիական) այնքան մի փոփոխութիւնը
կը ստիպեն մեզ փոխելու մեր ընթացքը, մէկզի թողով
մեծասարտութեան ոեւէ փքացած նկատում: Մենք մեր

յնզ (1) արժանապատուութիւնը ոտքի տակ կ'առնենք, քանի որ հայրենիքի(1) շահը կը պահանջէ այսօր դործել մեր բոլոր զօրովը, կու գանք օգնութիւն մուրալու Ձեզմէ, եղբայրներէ, նոյն իսկ այսօր:

Դեռ Յուլիսին 4 ամիս կայ. այդ ժամանակամիջոցին շատ պարտականութիւններ ունինք կատարելու եւ կրնանք: Ես որոշեցի Ապրիլի սկիզբները ամսուան մը համար ձգել դպրոցը(1) եւ երթալ հայրենիք(1), Հովիտ(1), այդ անմիջական խնդիրներու կարգադրութեան համար. բժշկութիւնը(1) ինձ համար միջոց մէջ եւ ոչ թէ իտէալ, կրնամ նոյնիսկ զայն վերջնականապէս ձգել, երբ իտէալս՝ հայրենիք(1) շահը պահանջէ: Այդ կարեւոր խնդիրներն են՝ (Ա) Կարաւանը (Իսֆ.)(1) կապել Հովիտի (Այն.)(1) հետ կարեւոր եւ պատուաւոր մի ջարդարանով(1), որ մեր հոգեհատոր ընկերներէն(1) մին պիտի լինի. (Բ) Ատանան(1) կապել Հովիտի(1) հետ նոյն սերտիւ եւ ապահովութեամբ, նոյնպէս Անտիոք(1), Մարաշ(1) եւ Արծուաքերդ(1), իսկ Կիւրիս(1), Սիվաս(1) եւ Կեսարիա(1), եթէ հարկ լինին, յոյս ունիմ առանց մի կարեւոր ծախքի կապել: (Գ) Յուլիսի ժողովին(1) պարագաները, տեղը(1) հիմակուրնէ պատրաստել եւ ապահովել: (Դ) Գնել մի քանի (10-15) զինուորական(1) մարդիկներ(1), զոր ապահով քուրք(1) պաշտօնեայ մը խոստացած էր վերջընէ Հովիտի զին.(1) մթերանոցէն եւ այլ շատ մը քիչ կամ շատ կարեւոր սակայն անհրաժեշտ խնդիրներ, Յուլիսին թողով շատ աւելի կարեւոր խնդիրներ եւ ատոնց պիւտանէներու կարգադրութիւնը, որոնք վիթխարի բաներ են:

(Ա) եւ (Բ) խնդիրներու կարգադրութեան համար, որոնք այսօր իսկ պէտք է վերջանան, անհրաժեշտ է առնուազն 100 անդիական ոսկի. (այդ տեղերը կապել(1) կը նշանակէ զէմֆի(1) եւ մարդու(1) փոխադրութեան համար ապահովել վերջնականապէս). (Գ) խնդրի կարգադրութեան համար ալ առ այժմ 50 անդլ. ըսել է երթալու համար պէտք է 150 անդլիական ոսկի, այս դրամը կը հասցնէք, առաջին փոսթով անդլ. կամ աւտորիական կամ շատ ուշ եթէ լինի՝ Մարտ 31 Ը. Ե. Ֆրանսական փոսթով recommandé:

Եթէ իմ վրայ՝ այնքան մի գումար յանձնելու չափ վստահութիւն առած էք արդէն, լաւ, Հոս կ'ուղարկէք recommandé մի նամակով նոյն գումարի մի չէք պանֆ օրթումանի(1) վրայ. այսպէս լաւ է, կասկած չյարուցանելու համար. ես թէեւ մեծ վաճառականներ կը ճանչնամ, սակայն դիտեն թէ ուսանողի(1) մը դրամը 5-10 ոսկիով կու գայ: Իսկ եթէ իմ վրայ դեռ չէք առած նոյնքանի մի վստահութիւն, չեմ մեղադրեր Ձեր դրականութիւնը (միայն Ձեր ներսի ընկերը(1)), այլ պէտք է իմ ժամանակէ առաջ հասցնէք նոյն գումարը Ռանֆի(1), սակայն այդ կերպն ալ իւր անպատշաճութիւններն ունի, նոյն քաղաքի մէջ մինչեւ իսկ 50 անդլ. հանել Ռ. Ի(1) վրայ բաւական փայլուն բան մը կը լինի,

սակայն գոնէ այդ 50ը հոն(1) հասած վայրկեանիս պէտք է եւ միւս 50ն ալ մի քանի օր ետք, միւս 50ն ալ հետեւելով ատոնց: Անցընելու ժամանակ չունինք. ամէն առթիւ պիտի յանձնարարէի Ձեզի Հոս ինձ հասցնել որ կրնամ այստեղէն տանելու դիւրին միջոցներ հոգալ. հասցէս թէ՛ նամակի եւ թէ չէ՛ք՝ Ներսէս Մ. Պապույ-եան(1), նոյն յարկի բժշկ.(1) ճիւղին մէջ: Այս հասցէին ես կրնամ դանձել:

Կը յուսամ թէ այս առիթով առանց յայտարարութի կամ երկդիմի պատասխաններու մեր յոյսը ի դերեւ չէք հաներ եւ չէք ստիպեր մեզ տարբեր միջոցներու դիմելու: Նաեւ նոյն նամակով կը գրէք թէ Կարաւանին(1) մէջ բժիշկի(1) հետ տեսնուիմ. առանձինս թէ Ձեր Հոն դրկածին հետ. առաջինը բաւական կը ճանչնամ արդէն: Առաջին փոսթով դալու ընկեր(1) ալ կը հասցընէք, որ եթէ Համայնի(1) գիծը չգոցուած կարենայ ժամանել Հոս անձամբ տանիմ զինք Հովիտ(1):

Դուք ո՞վ էք. Ձեր գիրը Վ. Ի(3) գիրէն բաւական տարբեր է եւ լեզուն՝ չափազանց. եթէ յաջորդ նամակով Վ. Ի(3) մի ձեռագիր երկտողը ներկայէք բաւական բաներ ունիմ ներսի(1) եւ Հոստեղի մասին գրելու:

Եթէ զիս ուշացնէք կամ արգիլէք դրամի չհասնելովը կանուխ, այն ատեն գիտցէք որ բաւական ժամանակ եւ առիթներ կորսնցուցած պիտի լինէք:

Համբոյրներ՝
ՅՈՒԱՆ

Յ. Գ.— Այս նամակը կը գրեմ գիշերուայ ժամը 11ին, փոսթին հասցնելու համար եւ այնպիսի նեղ ատեն մը, որ երկու օր ետք պիտի ունենանք այս ճիւղի մէջ ամենակարեւոր մի դասի երկու տարուայ վերջնական քննութիւնը: Ընկերներս նստած կ'աշխատին, ես՝ այս բաներով:

- (1) Ծածկագիր:
(2) Ծածկագիր. կուսկց. տեղանուն — Այնթապ:
(3) Վտերամ (Յ. Գալֆայեան):

4 03 — 16
ՎՐԷԺԻ (ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ) Կ. ԿՈՄԻՏԵԻ
ՆԱՄԱԿԸ ԿԻԼԻԿԻՈՅ Կ. ԿՈՄԻՏԵԻՆ

24 Մարտ 1903թ., Վրէժ.

Կիլիկիոյ Կեդրոնական Կոմիտէին.

Սիրելի ընկերներ,
Մտացանք Ձեր Փետրուար 20 թուակիր նամակը, ու ահա շտապում ենք պատասխանել:
Ձեր առաջարկը ուրֆոցի Կարապետ Գէորգեանի վերաբերմամբ աչքի առաջ կ'ունենանք. նա այժմ այս-

տեղ է եւ ունի որոշ զբաղմունք. եթէ երկրից պահանջ լինի, մենք անմիջապէս կ'ուղարկենք, իսկ առանց երկրում գործող մեր ընկերներէ համաձայնութեան մենք չենք կարող ուղարկել:

Իսկ գալով այն խնդրին, որ Կոմիտէն՝ ի նկատի ունենալով երկու Բիւրոնների թուլութիւնը, առաջարկում է եւ անհրաժեշտ է համարում ընդհանուր ժողով ունենալ, պէտք է ասենք, որ արդէն այդ պահանջը զգացում է նաեւ մեզանում, ինչպէս եւ Կովկասում, եւ շատ հաւանական է, ինչպէս գրում են մեր ընկերները, այդ ժողովը կը լինի հենց այս գարնանը:

Ներկայ ուղարկուածները անմիջապէս հասցրեցինք իրենց տեղը:

Շատ ուրախալի է, որ Ձեր շրջանում գործը յաջողութեամբ առաջ է տարւում եւ մանաւանդ, կանոնաւոր: Մեզանում էլ լաւ է եւ մեծ յոյսեր ունենք: Վերջին ժամանակներս առանձին շարժում եւ հետաքրքրութիւն է նկատուում, նամանաւանդ գաւառներում:

Շարունակէք Ձեր թղթակցութիւնները:

Ընկերական բարեկեցութեամբ՝
Հ. Յ. Դ. ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ
ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵ
(Կնիք)

4 03 — 17
ՊԵՏՐՈՒԹԵՆ՝ Յ. Ի (ՅՈՒԱՆ) ՆԱՄԱԿԸ
ՄԱՐԹԻՆԻՆ

Անուան իմ (Գ. Բերուսի), փակագծի մէջ, տարբեր ձեւագրով, տեղանուն է (Մարթի):

903, Մարտ 30 Բշ.

Սիրելի Գ. Բերուսի,
Ձեր 6 Մարտ թուակիրն ութ օր առաջ պատասխաներ էի. նոյն նամակիս պարունակութիւնը կը հաստատեմ: Ձեր Մարտ 25 թուակիրն ալ ընդունած եմ ներփակեալ Ֆրանս. մանտափոսթի չէքով, որու պարունակութիւնը գանձելու ժամանակ հազիւ թէ Գշ. կրնանք ունենալ: Ձեր Մարտ 6 թուակիրէն ես հասկցեր էի, թէ ժողովի(1) վայրին համար «հող» ըսելով Հովիտը(1) կ'ուղէք հասկցնել ըստ այնմ ես ալ նախորդ նամակով հաստատեմ էի այդ եւ երբ ու որպէս: Սակայն Ձեր Մարտ 25ով կը պարզէք թէ Պէրուսի(1) մէջ լինելու համար կը խօսիք. լաւ, հոս(1) ալ կարելի է եւ շատ դիւրին. սակայն, այնպիսով շատ նոր խնդիրներ կը ներկայանան մեր առջեւ: (Ա) Եթէ այդ ժողովը(1) պիտի կազմեն ընկերներ Հովիտէն, Կարաւանէն, Սախմաքերդէն եւ Ատանայէն(1), այդ Հոս կատարելու ի՞նչ

հարկ, շատ դիւրութեամբ եւ աւելի քիչ ծախսով մը կրնանք Հովիտի(1) մէջ կատարել, հաշուելով միանգամայն թէ Հոն պիտի գտնուին նաեւ դրսէն(1) եկող մի քանի ընկերներ(1), որ այդ շրջաններու մէջ պիտի մընան մշտապէս: Այդ պարագային կրնանք Կիւրիսէն(1) ալ մէկը Հոս ունենալ: Այդ մարդը(1) միայն կրնայ Կիլիկիոյ(1) հարաւային արեւելեան բաժնի խնդիրներու այժմէական լուծում եւ որոշումներ տալ. այդ խնդիրներու լուծումը արդէն բաւական մի մասամբ շատոնց եղած է. միայն, ինչպէս նախորդով գրած եմ, գործադրութեան նիւթական միջոցին վրայ կը սպասուի: Իսկ եթէ այդ ժողովը(1) պիտի լուծելով վճռէ Լեռնավայրի(1) ընդհանուր եւ կարեւորագոյն խնդիրները, այն ատեն փութամբ ըսելու թէ առ այժմ չ'արժեք այդպիսի մի ձեռնարկ ընել, քանզի այդպիսով պիտի արագօրէն մտածելու ջանանք այնպիսի տեղերու(1) եւ խնդիրներու վրայ՝ որոնց համար շատ երկար պատրաստութիւններու կը կարօտինք եւ հազիւ թէ ամբան մէջ կրնանք ընել: (Բ) Եթէ նախորդ նամակովս յիշածս գումարը կամ իմ եւ կամ Ռանֆի(1) վրայ իմ Հոն հասնելուս Հովիտ(1) պատրաստ չգտնուի յայտնուած խնդիրներու անմիջական կարգադրութեան համար, այն ատեն իմ շարք մը վերջ Հովիտ(1) երթալու շատ քիչ օգուտ պիտի ունենայ, թող որ տանելու(1) համար ունի մարդ(1) մը չեկաւ ցարդ. եթէ այն կարեւոր շահերը չունենամ առջեւ, իմ երթալը(1) բաւական անտեղութիւններ ունի, այն ատեն պիտի յետաձգեմ երթալու մինչեւ 3 ամիս ետքը: (Գ) Այդ ժողովի(1) տեղի ունենալուն շատ կը փափաքիմ, սակայն անկէ առաջ միթէ մեր առջեւ չունինք Ատանայէն Ուլմիս(1) քաղաքում գծին արեւելքը եւ հարաւը ինկող կէտերը(1) սերտ հաղորդակցութեամբ(1) կապելու խնդիրները: Հակառակ տարրի մարդիկը ներս(1) չձգելու համար կը կարօտինք կարեւոր մարդիկ ունենալ հոս, Լաթաֆիա, Կարաւան, Մերսիս(1) եւ աւելի կարեւորագոյնը՝ այդ կէտերէ դէպի կեդրոնները(1) տանող մարմաները(1) վաղն իսկ բռնել. Հովիտէն(1) դէպի Անտիոք, Կարաւան, Ատանա եւ Մարաշ(1) տանող մարմաներու մէջ այսօր կրնանք կարեւոր եւ յարգուելի ջարդարաններ(1) ունենալ, ինչ որ մեզի համար չափազանց անհրաժեշտ է այսօր, հակառակ տարրի մարդոց անցքը արգիլելու համար, մեր անձի(1), զէմֆի(1) եւ այն փոխադրութիւնը(1) ապահոված ունենալու համար: Առ այժմ գրածս զէմֆ(1) գնելու խնդիրը եթէ ի բաց ձգենք, գոնէ այդ ջարդարաններու(1) խնդրին համար Հովիտի(1) կը կարօտին 150 անդլիական լիբանի. այդ՝ ինչպէս գրած եմ՝ եթէ ինձ հասցնէք մինչեւ Ապրիլ 3 Ը. Ե. (եթէ իմ վրայ այդքան մի գումար հաւատարմութիւնը առած էք ցարդ) Հոս կամ եթէ վստահեցնէք ինձ թէ մինչեւ Ապրիլ 15 Ռանֆի(1) պիտի հասցնէք կասկած չտուող միջոցներով կամ մաս առ մաս. այն ատեն ես պիտի մեկնիմ հայրենիք(1) Ապ-

բիլ 4ին: Եթէ կ'ուզէ որ նոյն բաներու կարգադրութեան համար ես երթամ(1), յիշածս պայմաններու համեմատ շարժեցէք մինչեւ Ապրիլ 3. Եթէ երթալ(1) հարկ լինի, միայն 4ին կրնամ ընել, անկէ անդին ոչ: Եթէ այդ բանին կը հաւանիք գրեցէք նաեւ Իսէ.(2) բժշկին եւ մերիմի(1), որ տեսակցինք հոն, — հակառակ պարագային ես որոշեմ եմ չերթալ: Եթէ կ'ուզէք որ անշուշտ հոս(1) գումարենք ժողովը(1), գրեցէք բոլորին որ գամ(1), նաեւ մի ուշացնէք գալու ընկ. մերթ(1): Կ'աղաչեմ Ձեզի յեզ. գործի(1) շահին համար որ զիջ մ'աւելի արագ գործէք, զիջ մ'աւելի բաց վարուիք իմ հետ, զիջ մ'աւելի պարզէք դրսի(1) մերիմներու կարողութիւնը եւ տրամադրութիւնը. Ռ. ք(3) արգէն բաւական հասկցաւ մերթ(1):

Պրն. Գ. Ի., Ձեր գիրը Վ. Ի(4) գրին կը նմանի. Եթէ այդպէս է պատճառ մը կա՞յ ծածկուելու: Անշուշտ Ձեր կողմէն չորհրդարթի մեկնող Փրանս. փոսթով զրկեցէք պատասխանը:

Համարյո՞րներ՝
Յ.

- (1) Մածկագիր: — Հովիտ՝ Այնթապ, Կարաւան՝ Իսկիմուրում, Սահմանաբեր՝ հաւանորէն Մարաշ:
- (2) Իսկիմուրում:
- (3) Ռահվեր:
- (4) Վահրամի:

4 03 — 18

ԱՄԵՐԻԿԱՅԷՆ՝ ՀՄԱՅԵԱԿԻ ՆԱՄԱԿԸ

1903 Ապրիլ 16, Լին

Սիրելի Մարթին,

Այսօր հինգշաբթի է, անցեալ ուրբաթ ստացայ Աւայի հող հասնելէն յետոյ խիստ խուճապով եւ անխորհուրդ (չեմ վշտանար անշուշտ) գրածդ նամակ. անմիջապէս Փրովիտենս գրկեցի անոնց խորհուրդն ալ առնելու. կը սպասէի որ շուտով կը պատասխանեն եւ անցեալ երեքշաբթուայ փոստին կը հասցնեմ, բայց լուր չառի. նորէն գրեցի ու տակաւին լուր առած չեմ. առանց անոնց կարծիքը առնելու՝ այսօր ինքնազուրկ կը զրկեմ 15 (տասնըհինգ) անգլիական ոսկիի չէք մը, ինչ որ պատրաստ դրամ կար եւ զանձուած էր ջովս Աւայի անուանով. կը խնդրեմ որ անմիջապէս պատասխանես, որ ես պատասխանատուութենէ զերծ մնամ:

Նամակիդ գէշ ամականներ գործածեցի եւ եթէ ես զրկելու լինէի, պիտի տեսնէիր որ իրաւացի էր գրածս. ինչ մասնուներ է որ ունիս. Ի՞նչ ըսել է թէ ՎԷՆ սպասէիք որ Աւօն մեռնէր եւ գրամ զրկէիք. շատ կը

ցաւիմ, մի՞թէ այդչափ ալ անգիտակ մեկնեցար այստեղի ընկերներէն. գոնէ մէկն ալ չկա՞ր որ այդ հրէշտյին մասնուներէն զերծ մնար. չեմ ուզեր երկար դրիլ այդ մասին, չուզելով զեզ պէս ուրիշներ վշտացնել, միայն կ'ըսեմ, — մենք կը սպասէինք որ ամբողջը հաւաքուէր, միեւնոյն ժամանակ Աւօն որոշ տեղ մը լինէր. տակաւին մինչեւ հիմա կոմիտէներէն կէսէն լուր առնուած չէ. վստահ եմ թէ փրովիտենացիներն ալ նամակիդ ծանուցեան տակ ուշացուցին իրենց պատասխանը: Ուրիշ առթիւ կը զրկեմ մանրամասն հաշիւ: Գիտե՞ս Վոսա(1) ինչ ըսաւ երբ պատմեցի իրեն նամակիդ մասին. Վարձես հոն բնաւ դրամ չկար ու դրամի համար մարդը անօգնական պիտի մնար»:

Ասկէ առաջ զրկած եմ 25 նորէն օրացոյց եւ 20 ալ երգարան. կը յուսամ ստացած կը լինիք եւ կը պատասխանէք. շարթուս կը զրկեմ պատկերներէն: Միշտ նկատի ունեցէք հատածներ եւ պէտք եղածներ նորէն ուզել. երգարանէն կամ միւսներէն. դրամը հող չէ. բաժնեցէք ձրի՝ փրովիտենացի համար:

Բարեկամներէս մին Վօնչեսթըր(2) հրացան մը նուիրեց կոմիտէին, որպէսզի եթէ եկող լինի՝ զըրկենք. կրնա՞ք ընդունել. այդ տեղի կառավարութիւն չ'ա՞րգիւր. գրէ այդ մասին:

Մօտերս Լօրենսէն ընկեր մը պիտի գայ՝ Սիրական Պօյաճեան. կ'ուզէ առանց Կ. Կոմիտէի հաւանութեան եւ նոյնիսկ անոր դէմ հակառակութեան գալ. կը ճանաչես անշուշտ, — Պօլիկ եւ քանի մը ուրիշներ շատ տխուր դուեր կը լարեն նախ Կեդր. Կոմիտէի դէմ, վասնզի Իրենք չընտրուեցան, երկրորդ՝ Վոսաճեանի դէմ վասնզի իրենց տեղ չի տար. այս Կիրակի ընկերական ատեն պիտի ունենանք. շատ անտեղի է իրենց ըսածներ եւ միայն մութ անկիւններ կը(3). մեր նպատակն է որ այն ալ արգիւրենք,(4) վտանգէն զգուշանալով:

Ընկերները ընդհանրապէս շատ լաւ են եւ աշխատելու պատրաստ. ժողովներու եւ հանգանակութիւններու մասին «Հայրենիք» կը կարգաս անշուշտ:

Շատեր կը փափաքին մեկնել սակէ, նոյնիսկ Ռուտիկ, Նահիկեան Յովհաննէս, բարեկամդ Դերմախեան, զոր չէիր կրցած ճանաչել. առանց որեւէ նկատումի ըսեմ որ այդ մարդ անկեղծութեան նշոյլ չունի ձօռը. լաւ կանչած ես, թող դայ կը տեսնես:

Ասուրի հետ տակաւին բան մը ըրած չեմ: Նոր սիկեանի կիներ մանչ մը ունեցաւ. զբողուած էր:

Բոլոր կը բարեւեն:

ՀՄԱՅԵԱԿ

- (1) Ա. Վասմաճ:
- (2) Անու մը. զձուար ընթանիլ:
- (3) Մէկ բառ անգլերենով:
- (4) Մէկ բառ անգլերենով:

4 03 — 19

ԻԶՄԻՐԻ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ ՆԱՄԱԿԸ

ԼԵՌՆԱՎԱՅՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Կ. Կ. ԻՆ

Ձ.(1), 12/25 / II / 1903

Ընկերներ՝,

Ստացանք Ձեր 9, 16 եւ 22 Ապրիլ թուակիրները. ներփակեալը իր ընկալադրով հասցէին զրկեցինք: Հարիւր յիսուն (150) Փր.ը դանձեցինք:

Մենք պատրաստ ենք. դրամը զրկեցէք ջոջ Մերկեր Մերկերեանի(2), բայց հետեւեալի վրայ լաւ ուշադրութիւն ըրէք:

Ձոջը(2) դրամը պէտք է ստանայ մեր այս նամակին պատասխանը ստանալէն երեք (3) օր վերջ եւ կամ աւելի լաւ է ըսել՝ դուք կը գրէք թէ ո՞ր օրը պիտի զրկէք ջոջը(2) դրամը:

Յարգալից բարեւներով՝
ԳԵՂԱՄ ՎԱՐՊԵՏ
ՍՈՒՐԷՆ ԳՈՒՐԳԷՆ

Յ. Գ.— Նամակները սակէ վերջ աւելի սերտ գրեցէք:

ՆՈՅՏ

- (1) Ձմիւռնիս:
- (2) Մածկագիր:

4 03 — 20

ՊԵՏՐՈՒԹԷՆ՝ ՌԱՀՎԵՐԻ ԵՒ ՅՕԼԱՆԻ

ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ

Մալուած՝ կրկնակ քուրք. առաջիմ էջիմ վրայ գրած է Ռահվեր, միւս երեք էջերու վրայ՝ Յօլանք: Գ. Բերուսի անուան վրայ, տարբեր ձեռագրով, փակագծի մէջ աւելցուած է (Մարթին):

Ռահվերը, Կիլիկիոյ Պատասխանատու Մարթին կարգադրութեամբ, 1900էն ի վեր կը գործէր Կիլիկիոյ եւ Սուրիոյ մէջ: Իր մասին կարգալ՝ Մ. Վարազեան, Հ. Յ. Գ. Պատմութիւն, Բ. կար, էջ 46-48:

5 / 5 / 903, Պէյրուս

Սիրելի՛ Գ. Բերուսի,

Յօլանի նամակին միջոցով զրկած 2 նամակները ստացած եմ, ու ահա, անպարտաւորով կը պատասխանեմ, հապճեպ պատրաստութեամբ տեղեկագիր մը ուղարկելով Պատ. Մարմիններու արտակարգ ժողովին:

Փոստը պիտի մեկնի կէս ժամ ետքը, ու ես հազիւ աւարտած տեղեկագիրը, թերի ի հարկէ, կ'աճապարեմ կարել Փրանս. փոստէն զիս բաժնող 1/2 ժամուան ճամբան:

Այդ Արսլանի մասին Յօլանի գրածները ուշիւ կարգալ՝ եւ փութացուցէք մեր ժողովի(1) եւ ջոջը(1) խնդիրը: Լրացուցէք մնացեալ գումարը: Յաջորդիւ՝ աւելի երկար:

Համարյո՞րէ քոյ՞՝
ՌԱՀՎԵՐ

Սիրելի՛ Գ. Բերուսի,

Ձեզի հարցուցեր էի Վահի(1) ո՛ւր գտնուելուն եւ իր ընկերներու շարժումներուն վրայ. միայն պատասխաներ էիք թէ «Վահի(1) իւր մօր հետ Եւրոպա մեկնեցաւ եւ իրեններու վրայ հակելու մարդ չունինք Կիպրոսի(1) մէջ»: Ահա այսպէս պէտք է լինել ? — Պարուեր էք. — Մարդը Կիպրոս(1) կը գտնուի իւր շուրջ բոլորած՝ ունեցած անձերը: Երեք ամիս առաջ մերթ(1) մտնող հնչ.ը(1) ետ ճամբելու համար որքա՞ն աշխատեցայ, դուք լաւ գիտէք. այս մասնաճիւղի տաժանելի զբաղումներու մէջ նոյն իսկ ամբողջ շաբաթներ իրեն համար վատնեցի, թողունք ի զուր վատնուած դրամները: Ահա այսօր ուրիշ հնչ.(1) մ'ալ, նախկինէն շատ աւելի կարող եւ ճարպիկ հոս մտաւ(1), սա (Արսլան = Միմաս Էլմասեան) նախկին Կիլիկիոյ հնչ.մերթ(1) մէջ ծանօթ մարդ մ'է եւ շափազանց տեղեկ մերթ(1) անցեալ եւ ներկայ բոլոր հնչ.մերթ(1), կարող է իւր մալուկին ծանօթներու եւ երթումի ունեցած դիրքին շնորհիւ վերակենդանութիւն տալ մեռած հնչ.(1) համայնքին, ՄԱՆԱԻԱՆԻ Ս-ԲԵՐԳԻ ԵՒ Ա-ԲԵՐԳԻ ՄԷՁ(2) (քանի որ մարդը մարաշցի(1) է): Միշտ յիշեցէք թէ մենք հնչ.(1) մոխիրներու մէջ է որ հողերը կը հերկենք եւ մինչեւ որ այսինչ աստիճանի զօրանանք վտանգն ունինք յանկարծակի ծիւրերու հանդիպելու: Այս մարդը մասամբ մեզի գործակցիլ կ'առաջարկէ եւ մեծ մասամբ ալ բացէն կը սպառնայ իւր հիններէն մարմիններ կազմել մեզի դէմ, իւր հետեւէն անմիջապէս մտնելու 5-10 մարդիկ արդէն պատրաստած ունի Կիպրոսի(1) մէջ: Խնդիրը յոյժ ծանրակշիռ ձեւ մը կ'առնու: Ասոնք արգիւրելու համար հարկ եղած ամենարուան միջոցներու պիտի դիմենք, որոնց ամենափոքրն է Ռահվերի(1) վերստին Դաշտ(1) երթալ գալը: Այս մասին կատարեալ անգիտակ ձեւացէք եւ լուռ մնացէք, որովհետեւ մենք մարդոց երբեք չենք ներկայացած իբր դաշտ(1) ոյժեր, այլ իբր մերթ(1) մարդիկ, որք կը մերժեն դրսի(1) ունէ կուսակցական յարաբերում:

Դառնանք Ձեզի, քանի՞ցս գրած ենք որ օր մը առաջ ճգնիք մերթ(1) մեր կազմակերպութիւնները(1) գոնէ այն աստիճանի զօրացնել որ կարողանան այսպիսի խառնակիչներէ ապահովուած լինել, իրենք եւ բոլոր ժողովուրդը: Ահա հոս դէմ առ դէմ ենք մեծամեծ վտաններուն եւ վտանգներուն՝ Կիլիկիոյ(1) կատարեալ սերտած չլինելու, տարբեր մարմիններու(1) յարաբերութիւնները միացուցած չլինելու, եւ կարեւոր

ճամբաներու(1) հաղորդակցութեանց տիրած չլինելու հետեւանքով (Ռ.ը(3) չէ՞ր կրնար պատիւ եւ սերտել անցեալ 3 տարիներու մէջ, ի՞նչ կը պակսէր արդեօք): Մարդիկը արծուի պէս կը դառնան Կիլիկիոյ(1) շուրջը բազմաթիւ, եւ արհամարհելի հակառակորդներ ալ չեն: Ո՛ւր էք: Մեր ընդ. ժողովը(1) ո՛ւր մնաց, կորսնցնելու վայրկեան մը կա՞յ: Ներս(1) մտնելու անձերը անմիջապէս պատրաստեցէք եւ հասցուցէք: Ջորջիանցներու(1) խնդիրը մենք Ռ.ի(3) հետ կարգադրելու սկսած ենք, պիւտճէի պահանջած գումարի միւս մասերն ալ պատրաստ եղէք հասցնելու: Փութացուցէք մեր ժողովը(1). կենալու ատենը չէ:

Հիմակ կը հասկնաք թէ մեծ սխալ մ'ըրած էք ժամանակին պարպելով Կիպրոսի(1) կայանը. անհրաժեշտ է այլեւս Կիպրոս(1) մարդիկ ունենալնդ:

**Համարներով՝
ՅՕԼԱՆ**

- (1) Ծածկագիր:
- (2) Նամակիմ մէջ ստորագծուած. Ս-քերզ (Սահմամարերզ) եւ Ա-քերզ (Արծուարերզ)՝ կուսակց. տեղամուսնիք:
- (3) Բանկեր:

4 03 — 21

ՌԱՀՎԵՐԻ ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ

11 / 5 / 903

Սիրելի Ք. Բերուհի,

Ղրկածս ապահովագրեալ նամակը, Վահրամի բացակայութեանը հող, փոստը մնացած ըլլալը կը զբէք: Ցաւալի է որ, Վահրամ, զնալէ առաջ այդ գործը կարգադրած չէ: Ինչ որ է, եղածը եղած է, ուստի, այսօր, Քրանս. փոստով, հող, Քրանս. փոստին նամակ մը զրեցի եւ հոս, փոստի կողմէ վաւերացնել տալով պիտի զրկեմ: Այդ նամակին մէջ գրած եմ թէ, «Վ. Մարտիրոսով(1) հասցէով զրկածս նամակը, նոյն անձին բացակայութեան պատճառով, յանձնեցէք Պրն. H. Aghasseri: Ուստի, բարեւելով Պրն. Աղասէրին, կը խընդրէք որ առնէ Քրանս. փոստէն եւ Ձեզի յանձնէ: Ապահովագրեալ նամակին հետ քարթ-փոստալ մ'ալ գրած եմ Ձեզի, ծանուցանող թէ, տեղեկագիրը եւ Ձեզի գրածնիս մի կարեւոր նամակ, ապահովագրուած կը զրկեմ:

Նամակի բովանդակութիւնը կրնաք հասկնալ, կարգալով ներկայ նամակովս ներքակ զրկածս Վահրամի նամակը: Իսկ տեղեկագիրը, ժամանակ չունիմ զէթ շատ համառօտ մէկ բովանդակութիւնը փոստին կարեւալ հասցնելու: Յոյս ունիմ, թէ Քրանս. փոստին

զրկածս նամակէն ետքը, առանց դժուարութեան Պրն. H. Aghasseri ներկայանալուն պիտի յանձնեն, որը կրնաք կարգալ, Ձեր նամակը առնել եւ տեղեկագիրը զրկել Վահրամին, այս նամակին հետ:

Աւելորդ է կրկնել թէ՛ պէտք է փութալ, քանի որ այդ խմբակը իր անհաշիւ քայլերով կրնայ վտանգել Լեոն.ի(2) կացութիւնը, կառավարութեան ուշը գրաւել տալով:

Բարեւներ մերիններուն եւ Ձեզի:

**Համարներով՝
ՌԱՀՎԵՐ**

- (1) Ծածկագիր (ըստ երեսնայթիմ վախրամի մէկ ծածկամուտը):
- (2) Լեւոնի(2) կայանը (Կիլիկիոյ):

4 03 — 22

ՌԱՀՎԵՐԻ ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ

Անքուակիր: Ըստ բովանդակութեամ՝ գրուած է մայիսի 403—21 նամակէն ետք:

Սիրեցեալ Մարթին,

Ներփակեալ նամակը կարգալէ ետքը, Վահրամին զրկէ: Ձեր կարծիքն ալ մի մոռնար հաղորդելու ինձ:

Ներփակեալ հաշուեցոյցը, զոր սանրներու խնդրին կը վերաբերի, տուէք սանրներուն հետ այն վաճառականին, որուն միջոցաւ պիտի գործէք: Սանրներու խնդիրը կարեւոր ըլլալը գրուած է արդէն: Այդ միակ միջոցն է, Անտիոխի(1) գիւղերը ձեռք ացնելու (այսինքն Սուլտիա(1)), որոնք մեր ապագայի ապառաւ-բակամ(1) վայրերէն են: Այս գործը միջոցն է այդ ժողովուրդը մեր կողմը շահելու:

Երբ նամակը առնէք, մի մոռնաք սանրները ազատելու փոստէն, միեւնոյն, H. Aghasseri հասցէին զըրկուած:

Նախորդ նամակս, որ դարձեալ Աղասէրի հասցէին գրած էի, անշուշտ Ձեր ձեռքը հասաւ եւ զնալով ազատեցիք ապահովագրեալ զրկածս տեղեկագիրը: Գրած էի այդ նամակին մէջ, թէ Քրանսական փոստի տնօրէնին նամակ մը ուղղելով խնդրած էի իրմէ որ, V. Mardirossoff հասցէով զրկածս նամակը յանձնէ H. Aghasseriին, քանի որ բացակայ է պ. Վ. (2):

Ձեռնէ նամակ չառի տակաւին, արդեօք նամակը կրցա՞ք յանձն առնել թէ ոչ: Գրեցէք ասոր պատասխանին հետ:

Ձեր ընդարձակ նամակին կը սպասենք ժողովի(1) մասին, քանի որ երկար հոս սպասելով շատ ծախս պիտի ընենք, ու մանաւանդ գրածէն աւելի ժամանակ կը վատնենք:

4 03 — 24

**ՌԱՀՎԵՐԻ ՆԱՄԱԿԸ ԿԻԼԻԿԻՈՅ
ՊԱՏ. ՄԱՐՄՆԻՆ**

8 Յունիս 03, Պէյրութ

Սիրելի՛ ընկերներ,

Ստացած ենք Ձեր 27 եւ 29 Մայիս թուակիրները: Կը ցաւինք որ չկրցեր ենք հասկնել նպատակը այն գործին, որը առաջարկած ենք եւ կը պաշտպանենք: Նախ այդ գործը ընտանիքի հետ հաշիւ չունի. դալով Ա. Լեւոնի(1) պարագային, ատիկա մեր առաջարկած եղանակէն հիմնովին տարբեր է: Եթէ արդէն այդ գործը հաստատուած լինէր, Ա. Լեւոնի դրամ տալու բնաւ պէտք չպիտի լինէր: Կը բաւէր որ Ա. Լեւոն Արծ.բերդի(2) մէջ խանութ մը վարձէր. մենք կը զրկէինք իրեն. (արդէն հոն շատ կը սպառի) 2-3 հակ ալաճա, նա կը սպառէր եւ հետզհետէ նորը կը զրկուէր: Այսպէս ալ 40-50 ոսկիի գումարէն ոչ աւելի կը սպասէր Ա. Լեւոնի քով, բայց այդ իրեն տեսակ մը աւանդ պիտի ըլլար, քանզի ինք միայն ծախող մը պիտի ըլլար եւ ոչ աւելի, սպառածին համեմատ առ % բան մը առնելով իրրեւ յանձնակատար: Բնաւ իրաւունք պիտի չունենար այդ ապրանքին դաշնելու ու եթէ շահը քիչ ըլլար, ինք պիտի ջանար սպառուածը շատցնելու:

Կարծեմ այս պարագային բոլորովին յայտնի է, թէ՛ ապրանք պիտի չտանք, այլ ապրանքը ծախելու, սպառելու գործը, պաշտօնը պիտի տանք գործիչից, իբր գրադում, որմէ ալ պիտի հայթայթէ իր ապրուստը, իր ձեռնհասութեամբ համեմատ փիչ կամ շատ:

Այնքան կատարեալ հաշուուած պիտի սկսի ու շարունակուի այս գործը, որ դրուած դրամազուլուր յիշուած նպատակին ծառայելէ զատ, պիտի կրնայ աւելնալ իսկ փոքր առ փոքր, տարուէ տարի:

Ա. Լեւոն իր ընտանիքը պահելու ի՞նչ խնդիր կը յարուցանէ չենք հասկնար, քանի որ ինք մոռնանացած չէ, իսկ հայրը ողջ է: Ընտանիքը իր միայն թեթեւ ժանդակութեանը կարօտ կրնայ նկատուիլ եւ ոչ աւելի: Տէօվլէթի նամակը արդէն ցոյց կու տայ, թէ անհամաձայն են իրարու հետ եւ թէ մոռնութեան խնդիր մը կայ: Այդ նամակին համար կանխաւ բան մը գրած չըլլալնուդ՝ այրեցինք, ուստի չենք կրնար ետ զրկել: Ա. Լեւոնի զրկուելիք նամակը այնքան յայտնի կ'երեւայ, որ չենք կրնար զրկել զայն, ուստի ետ կը դարձնենք Ձեզի, աւելի հոս բայց փորձուած դեղով մը զրկուելու եւ զրկելու նախորդ աս երկու հասցէներէն միոյն, — Տիգրան Թախմիզեանի(1) շնորհիւ եւ կամ ուղղակի (աւելի լաւ է) Նշամ Սարգիսեան(3): Իմ նամակը վերջին հասցէին ուղղեցի: Տէօվլէթին նամակ չզրկեցի, որովհետեւ հասցէ չունիմ եւ զինք ալ չեմ ճանչնար: Իմ Ս.բերդ(4) եղած միջոցին նա կարա-

ՌԱՀՎԵՐ

- (1) Ծածկագիր:
- (2) Վախրամ:

4 03 — 23

Գրուած «Հայրենիք» շաբաթաթերթի պաշտօնաթուղթի վրայ:

Ա. ՎՌԱՄԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Boston, Mass. Յունիս 5, 1903

Սիրելի Մարթին,

Քանի մը օր առաջ նամակ մը գրած եմ ձեզի. հարկաւ ստացած ըլլալու ես:

Այսօր կը փութամ քեզի երկու խնդրի մասին ալ զրեւ:

M. Abersam, Poste restante Francaise
Beyrouth, Syrie

Այս հասցէն տուող անձ մը Գ. Քէշիշեան(1) անուն, Պէյրութէն, «Հայրենիք» ուղած է. կը զրկենք ժամանակէ մը ի վեր: Ո՞վ է այդ. հասցէն ծանօթ է ինծի. կարծեմ առաջներն ալ տեսած ըլլալու եմ:

Փորթլանտի (Մէյն) մեր ընկերներէն մէկը, Թադէոս Գալստեան, հիմա Լաոնաքա (Կիպրոս) կը գլուխով թերթ ուղած էր, զրկեցինք: Յարաբարութիւն մշակեցէք հետը, տգէտ տղայ է, բայց կրնայ օգտակար ըլլալ թերեւս: Ազուշացիք անոր եղբորմէն(1)՝ Մանուկ Գալստեանէն, — շահամուլ մէկն է եւ խիստ ալ փառասէր:

Հասցէն՝
Tateos B. Kaloostian
Larnaca, Cyprus

Ինչո՞ւ չես գրեր տեղիդ գործերու մասին: Փարիսեցիները ի՞նչ կ'ընեն հող. լուրեր տուր: Ձեր լոռիքի-նը(1) դէ՛ ի՞նչ կ'ազդէ. դէ՛ թ Կեղեր. Կոմիտէին զրկուելէիք: Ինչպէ՞ս է Աւօն. ինչո՞ւ տող մը չզրկեց: Դրամը ա՞նի՞ք:

**Համարներով
Ա. Վ.**

- (1) Բնագրիմ մէջ՝ ստորագծուած:

ան(5) կը գտնուէր: Այս գործը դարձեալ անձամբ այցելելով կրնայ կարգադրուիլ, եթէ շատ լարուած չեն իրարու դէմ:

Այս տարի եթէ Արծ-բերդ(2) երթամ, կրնամ հոն տեղի ուսուցիչներէն մի քանիսը մեզի հետ կապել. այդ բանը անցեալ տարի ալ կարելի էր, բայց խոհեմութիւն սեպեցի միայն իր իր ազգը սիրող լաւ հայ մը ներկայանալ եւ ոչ յեղ. մը: Ուստի, այդ մասին Ձեր կարծիքը հաղորդեցէք: Անցեալ տարի ուսուցիչի մը հետ տեսնուեցայ, որ անկեղծաբար եւ մտերմաբար խօսեցաւ իրենց կարծիքը եւ առաջարկեց յաջորդ օրը հետո տեղ մը երթալ եւ իր միւս պաշտօնակիցներուն հետ ալ տեսնուիլ, բայց յետոյ երկուստեք խոհեմութիւն համարեցինք այդ չկատարել: Դիւրին է ինձ համար հոն նոյն իսկ կոմիտէ(3) մը կազմել, բայց հաղորդակցութենէ, թղթակցութենէ խիստ կը քաշուին, այնպէս որ պէտք պիտի ունենանք իրենց մէկ վստահելի մարդուն բերանացի հաղորդել ամէն ինչ, եթէ կատարեալ ջորեպան մը չունենանք, թերեւս եթէ ունենանք իսկ: Ատկէ զտա, չեն ուզեր բնաւ որ Արծ-բերդի(2) անունը իսկ յիշուի դուրսը, ուր մնաց տեղեկութիւններ տալ:

Տոբթ. Արզար Տէր Մարգարեանը անպատճառ գտէք (անգլիական կամ գերմանական հիւանդանոցները նայեցէք), եւ զինքը պատրաստեցէք: Արդէն համակիր է Դ.Թեան(6) Այս պարտը կարեւոր ոյժ մը կը լինի մեր Դաշտի կազմակերպութեան:

Մարքիմ(7) հոգ ալ կայ, կրնաք արարական հետիոտն գինուորներու ձեռքէն փամփուշտ(3) գտնել առնել, բայց այն տեսակինը, որը տակէն (եային տակի երկաթը) դէպի վար հրելով վրան փամփուշտի(3) տեղը կը բացուի, միւսնոյն ատեն ներսը գտնուածը դուրս նետելով, ու փամփուշտը(3) դրուելէ ետքը, նոյն երկաթը տեղը, կոթին վարի կողմը հաստատելով կամ սեղմելով կը գոցուի: Այս գործողութիւնը կատարելով արդէն շնիկը (խօրոզ կամ թէթիկ) կամ բլթակը որ քափսիւիին զարնելու եւ բռնկեցնելու պաշտօնը ունի, քաշուած է ինչքերեն, կը մնայ միայն տակի եայը (բլթակը իջեցնելու պաշտօնը ունի) քաշել եւ կը պայթի: Այդ մարքիմը(7) ճիշդ մեր ուզածն է կամ թրք. գորգիմն(3) է: Ատոնց փամփուշտները(3) վերստին լեցնելու գործիքը կատարելապէս կը յարմարի կամ ճիշդ մեր ուզածն է:

9. Վարսմունի, որի մասին գրեցի 2 Յունիս թրուակիք նամակովս, խնդրեց մենէ համառօտ գիր մը Լ.Վայրի(8) մասին, որպէսզի իր հետ տանելով Ամերիկա, հոն ներկայացնէ եւ Լ.Վայրի(8) վրայ ուշադրութիւններ հրահարէ եւայլն: Այսպիսի բան մը կրնար իր օգուտները ունենալ, ուստի գրեցի համառօտ բան մը, որ անձամբ պիտի ներկայացնէ Ամերիկայի Կ. Կ.ին: Ներքեակ կը զրկեմ անոր սեւագրութիւնը, որպէսզի պարունակութեանը տեղեակ ըլլաք, եւ կը խնդրեմ որ կարգալէ յետոյ վերադարձնէք: Ինձ համար

հետաքրքրական է գիտնալ, թէ այսպիսի պարագաներու մէջ ինչպէս պէտք է վարուիլ:

Առան մեկնեցաւ դէպի ներս: Ասոր ներս մտնելուն յօժար չեն իր հովիտցի ընկերները Մովսէս(3) եւ Տիգրան(3), որք այժմ Բիրէ(3) կը գտնուին: Ատոնք Ձեր ջով մնալու են, մի հրապարակէք:

Սեպուհի(9) վիճակի մասին մտատանջ եմ, ի՞նչ եղաւ:

Գրեցէք եւ աճապարել տուէք որպէսզի Յունիսի 25ին հոս մեր բժշկ. ուսանողներու արձակուրդին հետ կարենանք ժողովի(3) սկսիլ:

Վախրամի(3) գալուստը իսկոյն իմացուցէք մեզի: Նամակները երբ ծանր ըլլայ, այսինքն ուշադրութիւն գրաւելու չափ, եւ կամ եթէ միայն ինձ պատկանելի լինի, զրկեցէք նախկին հասցէով (R. K. Փրանս. փոստ), իսկ հասարակ ծանրութեամբ կամ ապահովագրեալ նամակները այժմեան հասցէին:

Մարքիմը(3) եւ կամ ուրիշ անոնք որ ներս(3) պիտի գան(3), լաւ է որ Վախրամի(3) գալուստ պէս աճապարեն մտնել(3):

Եթէ շատ ուշանայ կրնայ խանդարել ժամանակի կարգադրութիւնը, քանզի կան խնդիրներ որ այս ինչ ատեն կրնան կարգադրուիլ, բայց ուրիշ որեւէ ատեն ոչ, մինչեւ յաջորդ տարուայ նոյն ատենը:

Չափազանց ցաւեցայ այն պարագային, որ Ս.բերդի(4) մէջ մերինները իրարու հակառակ ընթացք մը ունին եւ այդ, շնորհիւ Ա. Լեւոնի անգաղտնապահութեան, որով յայտներ է օժանդակութեան խնդիրը: Ա. Լեւոն Արծ-բերդ(2) մեկնելու ատեն միւսը ներկայացուցա՞ծ էր Ձեզի իբր ընկեր, անոր հետ թղթակցութեան սկիզբ էիք: Եթէ ոչ, ինչպէ՞ս կրցեր է գիտնալ Ձեր հասցէն:

Սպասելով անձամբ երկար ու երկար տեսակցելու ու բերանացի տալու բացատրութիւններ, որոնք թղթին յանձնելու կը զգուշանամ, առ այժմ, փոստին հասցնելու համար կը փակեմ, ջերմագին համբոյրներ զրկելով Ձեր ամէնուէ խոհուն ճակատին, ընկերներու եւ իմ կողմէ:

Յօժարակամ Ձերդ՝
ԲԱՀՎԵՐ

- (1) Ա. Լեւոն Սամուէլի մասին տեսնել՝ Մ. Վարսմունի, Հ. Ե. Գ. Պատմութիւն, Բ. հտք., էջ 47-48:
- (2) Արծուարեթ (Ձէյրուս):
- (3) Մածկագիր:
- (4) Սահմամարեթ (Մարաշ):
- (5) Իսկիմուտու (Ալեքսանդրէ):
- (6) Գաշմակցութեամբ:
- (7) Մածկագիր (գեմի տեսակ):
- (8) Լեւոնապայքի (Կիլիկիայ):
- (9) Մածկագիր (Հրաշի):

4 03 — 25

ՄԱՐՍԷՅԼԷՆ՝ Վ. ՂԱԶԱՐԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Մարտի 11, 9 Յնս. 03

Սիրելի ընկեր Մարթին,

Երիտասարդ Սամուէլը եկաւ ու մեկնեցաւ: Չորեքշաբթի հասաւ եւ Հինգշաբթի իրիկուան մեկնեցաւ:

Սամուէլը համակրելի տղայ մը երեւցաւ ինձ, նաեւ անկեղծ ընկեր մը. ես կը հաւատամ որ նա ուր ալ ըլլայ չի մոռնար իր հայ մարդու պարտաւորութիւնները: Նա ասես չուզելով էր զնուծ այդ հեռաւոր աշխարհը. Իր սիրտը ու միտքը հոն տառապանքի աշխարհի տառապողներուն հետ է:

Սամուէլին ասկից մեկնած օրը, այսինքն Հինգշաբթի 4 Յնս. Ամերիկայէն ու ժընեւէն եկող երկու ընկերներ Ճղիւկեան եւ Բօյաճեան մեկնեցան դէպի ձեզ՝ Աղեքսանդրիա. կը յուսամ որ մինչեւ ցարդ արդէն վաղուց հասած են:

Վահրամը դեռ չեկաւ եւ ո՞վ գիտէ թէ Մարտի 11-ով է անցնելու. նա այդ մասին քեզ գրա՞ծ է միթէ. ես երջանիկ պիտի լինէի եթէ առիթ ունենայի իր ձեռքը սեղմելու:

Գործի մասին ինչ յանձնարարութիւն ալ ընես գիտես որ հաճութեամբ կատարելու պատրաստ եմ, ալ ինչո՞ւ կանխաւ հարցում ես անում:

Մեր ընկերներէն մէկը ատենօք հոս մարքիմի հըրացան մը թողած է, որուն այսօր մինչեւ անգամ չեմ յիշեր անունը, միթէ՞ չէր կարելի որ այդ հրացանը զրկէի հոգ, ատկից թերեւս դուք աւելի յարմար տեղ մը կը զրկէիք:

Գիտես Աղեքսանդրիայէն զրկածդ առաջին նամակին չպատասխանեցի անոր համար որ հասցէ տուած չէիր, կը յուսամ որ ատոր համար չես մեղադրեր զիս: Ընկերական ջերմ համբոյրներով,

Գ. Վ. ՂԱԶԱՐԵԱՆ

4 03 — 26

Վ. ԹԱԴՈՍԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

1903 Յունիս 20, Գահիրէ

Սիրելի ընկերս պ. Մարթին,

Ինչպէս հոս եղած ժամանակը ձեզի յայտնեցի, որտիս ցաւ է թէ Խմբագրութիւնը մինչեւ այսօր անպատասխան թողուցած է իմ որոշ նպատակիս նկատմամբ գրած նամակս:

Եւ այդ խնդիրը որոշ մի յուզիչ հանգամանք առաւ.

տեղիս Կոմիտէն ալ նամակ գրելով խմբագրութեան՝ մի որոշ պատասխան ստանալու համար. հիմա ինչպէս գիտէք Կոմիտէի երկու անձինք հեռացան եւ տեղիս գործերը յանձնուեցաւ ենթակոմիտէին, եւ Կոմիտէի գոյութեան ժամանակ որեւիցէ պատասխան չստացանք. սակայն այս շաբթուան փոստայով ստացանք մի որոշ պատասխան՝ թէ պ. Տրդատեանի Վիշապ(1) քաղաքը երթալու փորձը յանձնուեցաւ Գ. Մարթինին, երբ պարագաները ներկայանան պիտի գործադրուի:

Ուրեմն, սիրելի ընկեր, քանի որ այդ գործը ձեզի է յանձնուած, կը խնդրեմ որ արագօրէն նպատակս իրականացնելու՝ օր առաջ աշխատութեան ջանքերը չխնայէք. եւ այս խնդրոյ առթիւ շուտ եւ շատ թղթակցեցէք ինձի հետ: Սիրալի բարեկներս ձեզի եւ բոլոր ընկերներուս, մանաւանդ պ. Գրեյոյին եւ Ջաւէնին:

ՎԱՂԱՐՇԱԿ ԹԱԹՈՍԵԱՆ

(1) Կ. Պոլսոյ կուսակցական ամուսնաբէմ մէկը:

4 03 — 27

ՀՄԱՅՆԱԿԻ ՆԱՄԱԿԸ

1903 Յունիս 13, Լին

Սիրելի Մարթին,

Յունիս 26 թուագրեալ նամակդ ստացայ. վերջապէս գրեցիր. կը սպասէի որ այստեղէն հեռանալովդ մտածումներդ ալ չպիտի հեռացնես եւ երբեմն գրես: Ինչեւէ, դուն գիտես:

Սիրելի Աւոյի մահը շատ ծանր տպաւորութիւն թողուց բոլորիս վրայ, բոլոր զինք ճանչցողներ շատ ցաւ զգացին. ինձ համար ուրիշ ցաւալի կէտ մըն ալ այն էր՝ որ ես պաշտօնիս բերմամբ (Կ. Կոմիտէի գանձապահ) յանձն առած էի անոր հաշիւներուն նայիլ, բայց կարողացած չէի պէտք եղած ատեն խորհիլ որ անոր աչք ճամբան կը մնար. ա՛խ սիրտ ծակող խօսք. դրամի համար ալ այս տեսակ խղճահարութիւն ունենալ. բայց սիրելիս, դուն շատ լաւ ծանօթ ես այս տեղի քարասիրտներուն, գիտես թէ ինչեր կան, ես ի՞նչ կարող էի ընել. չէ՞ որ պատասխաններու պիտի սպասէի, որոնց մեծ մասը դեռ հիմա նոյնիսկ ստացուած չեն. զիս արդարացնելու ջանք չեմ ուզեր ընել. շատ կը ցաւիմ այդ կէտին համար ալ:

Անոր հաշիւ ամբողջ ճիշդ հիմա Կ. Կոմիտէի գիւղանին կը զրկեմ, ձեզի պիտի ուղարկեն. պակաս մնացածը որ ինձմէ կը պահանջուի՝ երգարաններու հաշուին վար դիր, ամբողջին մէկէն ընկալադիր մը զրկէ տեղւոյդ Կ. Կոմիտէի անունով, կարծեմ աւելի լաւ է.

աւելցած դրամը պարզ է որ իր ընտանեաց զրկելու է. ատոր մասին խօսին իսկ աւելորդ է. ես կը մտածեմ նոյնիսկ աւելի ալ զրկել:

Կը յուսամ որ գրածներս կ'ընեն: Աւոյի մասին գրածս չէ թէ ձեզմէ գոհողութիւն էր, այլ ուղղակի միջամտութիւն՝ որ չլինի թէ ոչ բարեկամներ ուրիշ գոյն տան. տակաւին որոշ արդիւնք մը ստացուած չէ, երբ եղաւ՝ կը խորհինք Փանոս Մուրիկեանին Բայիֆ փաշա (չարշին խաչվէճի) ջանացէք միջամտել:

Երգարաններու խնդիր՝ կարծեմ ես սխալ եմ. 10 հատ լինելու է զրկածս. երկու տեղ գրած էի, այսինքն՝ զրկածներու ցանկ եւ ծախու մէկ տեղ 10 էր, իսկ միւս տեղ՝ 20. ըսել է 10 լինելու է. 20 հատ ալ հիմա կը կը զրկեմ, կը լինի 30. Եթէ սպառելու մօտ կը լինի ինչո՞ւ չուտով չէք ուզեր. այս տեղէն այդ տեղ ես կըրնամ մարգարէանալ. աւելորդ կը համարեմ ջանքերդ խնդրել այդ մասին: Դրկած եմ նաեւ 50 հատ պատկերներէն, անշուշտ առած ես. պատկերներ եւ օրացոյցներ շատ կան դեռ, եթէ դրամով կարելի չէ ծախել, ձրի ալ տալու է լսի փրոպականտայի համար. Գահիրէ Գազանճեանին ալ զրկած եմ ասոնք, եւ երգարան:

Գարրիէլ անձամբ յանձնեց նախկին հաշիւներ, հոս է այժմ. շնորհակալ եմ:

Սիրականը մասնաւորապէս անհամաձայն է տեղւոյս Կ. Կոմիտէի հետ, ասկէ մեկնած է. միւսը խեղճ տղայ է. չէ՞ որ Կ. Կոմիտէն ձեզ որեւէ բան ըսած չէ. անոր մասին. կարգ մը շուրջներ ... (1) մը կը հանեն, հոս ես կը քշեմ. Պօղիկ, Ռուսիկ, Նահիկեան, Յովհաննէս, Դերձակեան եւ կարգ մը ուրիշներ ամէն ջանք կը թափեն Կ. Կոմիտէի ազդեցութիւնը կտորելու, իրենց հեղինակութիւնը ... (2): Մօտերս Նահիկեան Յովհաննէսն ալ ճամբայ պիտի ելլէ, բայց այն կարծեմ հող չի գար. չէ՞ որ Վանի գործիչ բանտն է, հոն կ'ուզէ մտնել: Այս ապուշներ կը կարծեն որ այն տեղի ժողովուրդ մտղիկ եւ ճանճիկ կը խաղցնեն. հող ալ չեն ըներ որ ուրիշներու պատճառ կը լինին. չեն գիտեր որ այն տեղերի խեղճ գիւղացիներ գիտենք խաղալիք կը դարձնեն:

Երբեմն գրէ կարեւոր բաները: Հոս շատ նոր նոր հնչակեան խայտառակութիւններ կան: Թերթերը կը տեսնես անշուշտ, ժողովուրդը շատ յուզուած է, բոլորը մէկ շուրջով կը լուսայ, մանաւանդ երբ այդ շան որդիները (քո բառդ է) գիրենք արդարացնելու համար խեղաթիւրումներ կ'ընեն: Աստուր հոս չէ. ուրիշ տեղ 10 տարեով կը գործէ: Պարտք կը մնայ դեռ: Անդամ եղաւ մեզի:

ՀՄԱՅՆԱԿ

(1) Մէկ բառ անգրեանի:
(2) Մէկ բառ անգրեանի:

Ս. Պ. Ի ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ

1903, 20 Օգ., Լիբանան

Սիրելի Մարթին,

Մեր Աղեքսանդրիայէն մեկնած ժամանակ հիւանդ էիր, «մնաք բարով» մը անգամ չկրցինք ընել: Կը յուսամ մինչեւ հիմա առողջացար: Մենք շարաթէ մը ի վեր Լիբանան կը գտնուէինք: Կարելի է երկու շաբաթ եւս մնանք, մինչեւ ջորեպանին գալը. դրամին մասին դրած ենք Կ. Կոմիտէին. անշուշտ պէտք եղած կարգադրութիւնը կ'ընէք:

Սիրելի Մարթին, քեզի փոքրիկ պատմութիւն մը ընեմ Կիպրոսէն. պարապ եղած ժամանակը կարգաւ պատմութեան դերակառարը Կիպրոսի վերակազմեալներէն մի անճարակ խաչագող. Կիպրոսէն մեկնած օրերնս՝ նաւահանգիստին մօտ հանդիպեցաւ. դեռ հեռուէն գալած ժամանակ, մեր մօտ մի ծեր խարբերդցի կար, որին տունը կեցանք շաբաթ մը, քանի մը խօսքով պատմեց այդ պարտնին ինչ ըլլալը. ալ հասկըցայ թէ մեր Արամին պատմած մարդն է: Հող եղած ժամանակներս Արամը պատմած էր մեզի այդ մարդու մասին. անմիջապէս մտքիս մէջ երկու կեղծ անուններ որոշեցի: Խաչագողը կեղծ ծիծաղով մը մեզ մօտեցաւ. ընդհանուր «բարեւ ձեզ» մը ըսելէն վերջ, ձեռքը մեկ երկնցուց՝ «բարի էք եկել»: Մենք եւս փոխադարձ ձեռք տուինք: Մեր անունները հարցուց, արդէն որոշած անուններս տուի առանց ժամանակ տալու Յարութիւնին: «Ո՞ւր կ'երթաք», ըսաւ: «Մարսիլիա», պատասխանեցի: Բայց կ'երեւի գոհ չմնաց տուած պատասխաններէս: Խնդրեց որ վայրկեան մը առանձին խօսինք, «ամենայն սիրով», պատասխանեցի: Սկսեցինք ես եւ ինք կամաց-կամաց քալել. քալած միջոցին մի ճառ խօսեցաւ: Սիրելի Մարթին, եթէ շատ ճառախօս լսած չըլլայի, անպատճառ ոտքերս դետնէն պիտի կտրէր: Ահա թէ ինչպէս սկսեց.

«Բարեկամս, կը տեսնեմ թէ կասկածոտ կը վերաբերիք դէպի դիս եւ գուցէ նեղացաք հարցուփորձէս, բայց իմ պարտականութիւնս է. ոչ թէ միայն իմ պարտականութիւնս, այլ ամէն հայու պարտականութիւնն է օգնել իրարու, անկեղծ վերաբերիլ մէկզմէկու հետ. բայց կը տեսնամ թէ դուք կ'ուզէք ինձմէն պահել. ես դիտեմ, դուք Մարսիլիա չէք երթար, ձեր մասին ինձ գրած են Ամերիկայէն եւ Լոնտոնէն. ձեր անուններն ալ գրած էին Ամերիկայէն, բայց նամակը քովս չէ հիմա. ես հոս չէի. երկու շաբաթ է ի վեր ուրիշ քաղաք կը գտնուէի. եթէ հոս ըլլայի, ձեր անունները ցոյց կու տայի ձեզի»: Առանց ընդմիջելու թողուցի, մեր հայրենասէրը իր ճառը վերջացուց. կարգը իմս էր հիմա: Ես ըսի որ մեր անունները ճիշդ են, միայն եթէ

կարելի է՝ ըսէք, Ամերիկայէն եւ Լոնտոնէն ի՞նչ գըրած էր մեր մասին: Ուզեց ուրիշ խօսք ձգել մէջտեղ: Բայց արդէն ծուղակը ինկած էր: Պնդեցի թէ ի՞նչ գըրած էր, վերջապէս կարող եղաւ սուտ մը չինել, ըսելով թէ գրած էին որ ձեզ պէտք եղած օգնութիւնը ընեմ: «Բարեկամ, — ըսի, — կ'երեւի քու ծանօթներդ, որոնք գրած են քեզ Ամերիկայէն եւ Լոնտոնէն, մարգարէացած են, քանի որ ասկից երեք շաբաթ առաջ մեր միտքէն անդամ անցած չէր հոս գալ. իսկ ինչպէս կ'երեւի՝ քու ծանօթներդ, որոնք անշուշտ մեր ալ բարեկամները ըլլալու են, երկու ամիս առաջ խորհած են մեր Կիպրոս գալու մասին»: Ուրիշ հարցում ալ ըրի, թէ մեր մասին գրողներու անունը կարելի՞ է ըսել: Ի՞նչ պատասխանէ լաւ է. — «Ինչո՞ւ դուք ձեր ճիշդ անունները չէք ուզեր տալ, ես ալ անոնց անունները չեմ ըսեր: Ինչ որ է, ձգեմք այդ, — ըսաւ, — Ամերիկա ի՞նչ կուսակցութեան կը պատկանէիք»: «Չեղոք էինք», ըսի: «Ասլանը կը ճանչնա՞ք», ըսաւ: «Ո՞ր Ասլանը, — ըսի, — այն Ասլանը որ Ձէյթուն կուտած է. անդամ մը միայն տեսած եմ Ամերիկա», ըսի: «Հիմա հոս է», ըսաւ: Ժամանակ չկար, մնաք բարով ըսելով մեկնեցայ: Այսպէս քառորդ ժամ մը քալելով խօսած էինք: Այս մարդուկին խօսածէն յայտնի է որ Ամերիկայէն մեր անուններն ու դէմքի նկարագրութիւնը անգամ ըրած են: Ֆանարով դաշնակցական կը փնտռեն նաւահանգիստներուն մէջ: Չեմ գիտեր ի՞նչ պիտի ընեն: Ասլանը Կիպրոս Բէֆ կ'ընէ հիմա: Քիչ մըն ալ մեր նաւէն ելլելը գրեմ. նախ ըսեմ որ նաւուն բոլոր ճամբորդները թուրքեր էին. մենք երրորդ գամարան առած էինք. հոն ալ թուրքեր կային. կը հարցնէին ո՞ւր պիտի երթաք, «Մարսիլիա» կ'ըլլար մեր պատասխանը: Մեր գլխարկները հանած չէինք նաւուն մէջ. գըր-խարկով մնացինք մինչեւ վերջին օրը, անանկ որ մարդ կարող չէր կասկածիլ: Նաւահանգիստ հասնելու՝ անմիջապէս նամակ մը գրեցինք որոշուած մարդուն խախտիւն միջոցաւ: Հոս միջանկեալ ըսեմ որ խախտիւն Աղասէրին ըսած տրապիզոնցի Ստեփանն էր: Մեր նամակին պատասխանը եկաւ որ քանի մը օր պէտք է սպասէք նաւուն մէջ, Փրանսական նաւերը հոս շաբաթ մը կը սպասեն: Արդէն ամբողջ օրը մնացինք նաւուն մէջ: Գամարայէն կ'ուզէին մեզ դուրս հանել, ըսելով թէ ձեր ժամանակը լրացեր է: Մեր նաւուն մէջ մանաւանդ կէտրտան մնալը լաւ չէր. խախտիւն հետ համաձայնեցանք երկու ոսկիի մեզ սպառնով դուրս հանելու. այնպէս ալ եղաւ: Մեր գլխարկները փոխեցինք, քաւֆայի գլխարկ գրինք. քաւֆաների հետ, մէկ ալ խախտիւն, եթէր հողի մակոյկ նստանք, փառաւորապէս դուրս ելանք: Մեզ մէկ-մէկ Փրանսացիի անուն գրին: Խօսելով խնդալով գացինք մինչեւ այն մարդուն տունը, որ մեզ պիտի հանէր նաւէն. քիչ վերջը տունէն կտրեցով մեկնեցանք Լիբանան: Ընկերները չորսական ոսկի սակարկած են եղեր այն մարդուն հետ, միայն

նաւէն դուրս հանելու համար, թէպէտ մենք երկու ոսկիով միայն դուրս ելանք. բայց այն մարդը պահանջեց ամբողջ դրամը. ընկերները ստիպուած եղան տալ, քանի որ այն մարդուն միջոցաւ կը գործեն մեր ընկերները. երկրորդ՝ կարելի չէ հակառակ երթալ. կարելի է մատնէ նոյնիսկ: Եւ վերջապէս ընկերները կարգադրած էին 6 ոսկիի, 1 ոսկի ալ կառքի եւ այլ ծախս ըրած եմ՝ ըսած էր: Երկուք ալ խախտիւն տուած էինք, ընդամենը՝ 9 ոսկի՝ միայն նաւէն դուրս ելլելու, Լիբանան երթալու համար: Եթէ գիտցած ըլլայինք ուղղակի Լիբանան կ'երթայինք, այն ժամանակ երկու ոսկիով միայն ազատած կ'ըլլայինք: Ամենէն սպառնով միջոցն է մեր ելած միջոցը: Ես կը խորհիմ թէ գէշ չըլլար եթէ խախտիւն հետ համաձայնիք. կարելի է նոյն իսկ աւելի պակաս գնով կը հանէ մեր մարդիկը. թէ՛ դրամը պակաս եւ թէ՛ սպառնով: Եթէ մեզմէ վերջը գալողներ ըլլան, նոյն նաւով, կարող են վստահիլ խախտիւնը գիրենք սպառնով դուրս հանելու. դուրս ելլալէն վերջը ուղղակի Լիբանան կարող են երթալ կառքով կամ շողեկառքով: Պէտք է ստեղծել այնպիսի միջոցներ, որ ազատիք սմարաների ձեռքէն. ասոնք մարդը կը կողոպտեն. այդ մեր գործին չի գար ի հարկէ: Է՛, դուրսդ ցաւցուցի, այնպէս չէ՞. արդէն առաջ ալ ըսի որ պարապ եղած ժամանակը կարգաւ:

Բարեւներս տիկինին եւ բոլոր ընկերներուն:

Ս. Պ.

Յ. Գ.— Ամերիկայէն եթէ նամակ եկաւ զրկեցէք. մէկ ալ, կը յիշե՞ս, ինձ հասցէ մը տուիր, այդ հասցէն ալ նայէ, եթէ նամակ եկած է, ա՛ն:

ՆՈՅՆ

ԿԱՐԱՊԵՏ ԱՅՎԱԶԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

903, 16/29 Սեպտեմբերի Ի Գահիրէ

Սիրելի՛ ընկեր, Պարոն Մարթին, Ըստ խոստմանս ահա կը պատասխանեմ Ձեզ. մեկնումիս մասին խորհրդակցեցայ Պրն. Արտաւազդի եւ Պրն. Հանէսեանի հետ. երկուքն ալ իրենց կողմէ քաջալերեցին այդ նպատակը, ես արդէն ատոր հակառակը չէի մտածեր, ու չպիտի մտածեմ ալ, եթէ կարելի ըլլայ հարթել կարգ մը հաշիւներ, որոնք իմ անձնակալին կը վերաբերին բացարձակապէս:

Ըսեմ Ձեզ ընկերս, ինչպէս դուք ալ գիտէք, 6-7 ամիսներէ ի վեր անգործութեան դատապարտուած եմ, եւ որու հետեւանօք մօտաւորապէս 10 ոսկի պարտքի տակ ինկած ըլլալս չգարձացնէ Ձեզ. այս պարտքը վճարելու համար Պրն. Հանէսեանի հետ թէ՛ եւ շատ մտա-

ծեցինք, բայց որևէ ելք չկարողացանք գտնել, իսկ մեկնումիս համար Աղեքսանդրիոյ Կոմիտէին փոխառութեան առաջարկ մը ընել աւելի քան երբեք անհեթեթ կը գտնեմ: Մտածեցինք նոյնպէս առնելիք որոնք բուն առանց բան մը ըսելու հեռանալ Գահիրէէն, բայց կարելի չէ, որովհետեւ բացի չեզոք անձերէ, ընկերներս ալ խարած պիտի ըլլամ, որոնք ի վիճակի չեն ինձմէ չպահանջելու իրենց առնելիքները. ուրեմն կը մնայ ինձ նորէն անհատապէս կարգադրելու ջանալ վերոյիշեալ խնդիրը, (որ այնքան ալ հեշտ չէ), եւ որմէ յետոյ պիտի կրնամ մեկնել հանգիստ սրտով:

Եթէ ի նկատի չառնենք յիշեալ խնդիրը, կը մնան Ձեզմէ կախում ունեցող մի քանի կարեւոր պարագաներ, որոնց մասին եթէ հաճիք կրնաք պատասխանել ինձ իսկոյն: Ա.) Աղեքսանդրիոյ Կոմիտէն, իմ անվրտանդ Իզմիր մուտքս կ'ապահովէ՞ թէ ոչ: Բ.) Եթէ անյաջող պարագաներու բերմամբ անկարելի ըլլայ մտնել, մի այլ նաւահանգիստ (զոր օր. Բիրէա) երթալու եւ հոն սպասելու (ցնոր տնօրինութիւն), պէտք եղած նիւթականը կը տրամադրէ՞: Գ.) Կարելիութիւն ունի՞ Կոմիտէն ինձ մօտաւորապէս գիտցնելու թէ Իզմիրի մէջ իմ ապրուստիս համար որչափ դրամ պիտի յատկացուի, քանի որ ես չպիտի զբաղիմ իմ անձնական պէտքիս համար: Դ.) Ինձ գէնք մը տալու պիտի հաճի՞: Ահա՛ ամբողջութիւնը իմ առաջարկներուն, որոնց մէջ գուցէ դուք աւելորդ հարցասիրութիւններ եւս գտնէք, բայց մի մեղադրէք զիս, որովհետեւ յեղափոխական լուրջ եւ գործնական քայլը առաջին անգամն է որ պիտի առնեմ, եւ մինչեւ հիմա գտնուած շրջանակս ինքնին անտեղեակ ըլլալով քիչ թէ շատ կարեւոր գործառնութիւններու մասին ընդունուած կանոններէն, ինձ ալ չէ կարողացած տալ պէտք եղած տեղեկութիւնները:

Պարոն Մարթին, անձամբ տեսայ Յովսէփ Թէրզեան անուն երիտասարդը, որ Մարտէյէն նափոյի ընկերակցել էր ձեզ եւ որուն հետ հաշիւ մը ունիք: Խօսեցայ ծանօթ հաշույ մասին. ինք խոստացաւ մինչեւ յառաջիկայ Հոկ. 1 վճարել, մինչ այդ եթէ չտանաք, դրեցէք ինձ, ես վերստին կ'ուզեմ, ինք կ'աշխատի եւ պատճառ չունի չվճարելու իր պարտքը:

Ընդունեցէք ընկերական ջերմ բարեւներս, եւ հազորդեցէք պարոն Յարութիւնին, պրն. Արամին եւ Պրն. Արշակին. բոլորի ընկերասիրութենէն ալ խորապէս շնորհակալ եմ:

Ընկեր Ձեր
ԿԱՐԱՊԵՏ ԱՅՎԱԶԵԱՆ

Հասցէս՝
Garabed Ayvazian
Poste - Restante, Caire - Egypte

4 03 — 30

ՅՕԼԱՆԻ ՆԱՄԱԿԸ՝ ՌԱՀՎԵՐԻՆ

903, Հոկ. 24, Պէյրուս

Սիրելիս Ռ.

16/8 նամակդ առի:

Մեր գործերուն վրայ տեղեկութիւն տալը անձնական տեսակցութեան վերապահեր եւ շատ լաւ կարօտ էի հիմակ եւս մասամբ լսելու. այնքան տարտամ են ընթացքները: Ներս մտնելու(1) խնդիրը ճիշդ հինին պէս ապահով է եւ կանոնաւոր. եթէ մտնել(1) ուզողներ գան լաւ: Այդ խնդիրն մասին քիչ մը ետք աւելի ընդարձակ պիտի գրեմ:

Քու ներս մտնելը(1) դիւրին է, մեզի ոչ մէկ ծանրութիւն տուին: Հոս հկող մեր ընկերներէ(1) մին՝ ցարդ ետ գնաց նոր Աշխարհ (Ամերիկա(1)): Լիբանան եւ հոս կատարելապէս հանդարտ է եւ խաղաղ, Ձեր մեծ տարածանութեամբ լսածը մեծ խնդիր մը չէ եղած երբեք, հոս մի քանի մարդոց սպաննութիւնը միայն (7-8):

Գործերան դեռ կը ճարակի բոլոր Եամի, Հալէպի եւ Մուսուլի նահանգներու մէջ. սահմանները (այս քաղաքներու մէջ ալ ներկայ է) Թարապուս, Լաթաքիա, Իսթէնտէրուն, Քիլիս, Այնթապ (օրը 7-8 մեռնող), Մալաթիա, Պերէճիկ, Ուրֆա, Մուսուլ:

Օգնիկի(1) դրկուած դրամը միայն (20) քսան սթերլին է եւ ոչ թէ 25, եւ հասած է:

Հոս մենք թէեւ մարդ(1) ունինք ոեւէ ընկերներ(1) առնելու համար, սակայն այդ մարդ(1) բուն մեր ընկերը(1) չլինելով եւ միայն շահու համար այս խնդիրը կատարելով շատ սուղի կը ծախէ մեզի (թէեւ ապահովութիւնն ալ կատարեալ է). եթէ շատ շահ չցուցնենք մարդուն, մեզի հաւատարիմ չի մնար. այս բոլոր կէտերը նկատի առնելով նոր ուղղութիւն մը առնել կ'առաջարկենք դրսի ընկերներու(1), (այս քանիցս ես արդէն գրած եմ. — Աղեքսանդրիայի եւ Մարսիլիայի մէջ գտնուող Դ. գործիչները(2) թող Մէտաքրի(1) եւ աւստրիական նաւերու գաւիկներու(1) հետ սակարկեն, գոնէ հպելի մէկերու հետ. հոս(1) եկող ընկերը նաւատարի(1) հագուստով ուղղակի դուրս հանելու(1) համար, առանց քաղաքը ոեւէ մէկու հետ (միջնորդի հետ) տեսնուելու: Յամաք էլլելէ վերջ կարգ նստեցնել եւ ուղղակի լեռը(1) տանիլ, այս միջոցով առ առաւել մարդ(1) — գլուխ 1½ Քրանսականով կը վերջանայ խնդիրը եւ չափազանց ալ ապահով կը լինի խնդիրը: Մենք այս տեղի պաշտօնեաներ(1) թէեւ այնքան ծանր գնով կրնանք ինչպէս առաջ եւ միջոց մարդ(1) փոխադրել տալ, սակայն անկարելի(1) է զենք(1) փոխադրել տալը. եթէ այս գործը գաւիկներ(1) մեռնող ընկելով այնքան մի շահով զիրենք

մեզի կապենք, զենք(1) փոխադրութիւնը առ այժմ քիչ-քիչ ասոնց ձեռքով շատ դիւրին կը լինի: Այս խնդիրը մի ուշացնէք, զէթ գոնէ դու պարագաները հասկըցող մարդ, ճնշէ:

Հոս հիմակ մեր քովը կայ Իզմիրի ընկերներէն Խաչիկ Սէրտարեան(1) անունով երիտասարդը. ո'ր աստիճանի վստահելի է, թող գրեն մեզ պաշտօնապէս: Կ'ուզէ մեր կողմերը երթալ. բաւական զարգացած կ'երեւայ: Կ'ըսէ թէ իրեն հայրենակից 3-4 երիտասարդներ պիտի Այնթապի գովէճը(1) երթային ուսանելու եւ գործելու համար, ո'ր աստիճանի ճիշդ է, եւ եղա՞ւ:

Այստեղը(1) շատ կարեւոր է. պէտք է Դ. ընկեր(3) մը միշտ դաշն(1) գործերով զբաղող եւ տարբեր գործ չունեցող՝ աչքը բաց նստի:

Սիրականի(1) եւ միւսին բավոյները(1), եթէ դու Ֆրանս. նաւով(1) կու գաս, դու եւ կամ ընկեր(1) մը միասին թող բերէ, գաւիկներ(1) քով թող ձգէ, կ'առնուի, այսպէս կ'ուզեն:

Մեր ժամանակին խօսած սուլիչները(1) առնելու չմտնաս: Ներսուրը(1) եւ Յագուպը(1) հոս եկան ուսանելու. առաջինը անկարող եղաւ քոչկոյն(1) մըտնելու, եկուր որ հետը միասին տանիս. հոն այնքան կարօտ ենք իրեն, մինչդեռ չ'ուզեր երթալ: Իսթէնտէրուն(1) հասցէն զրկէ: Եուս եկուր:

Հոս մինակ մնացող ընկեր(1) Պրն. Սիրականը(1) կ'ուզենք զրկել Հովիտ(1): Ջորպանը(1) պատրաստ է. ես մտածեցի թէ ձեր(1) հասնելը իրեն լաւ կը լինէր, կամ մի ընկեր(1) ալ կը հասնէր իրեն ընկերանալու(1), որով ծախքը կը կիսուէր:

Եթէ անմիջապէս առանց Ձեր հասնելուն սպասելու երթալու կը հաւանիք, հեռագրեցէք (Պէյրուս Բիւլլէթին, Մուրատեան) ԱՅՈ՛: Եթէ կ'ուզէք որ Ձեզի սպասէ եւ կենայ, հեռագրեցէք (Պէյրուս Բիւլլէթին, Մուրատեան) Ո՛Ձ:

ՅՕԼԱՆ

- (1) Ծածկագիր:
- (2) Ծածկագիր. — գաղտնիցակամ գործիչները:
- (3) Ծածկագիր. — գաղտնիցակամ ընկեր:

4 03 — 31

ՄԻՔԱՅԷԼ ՄԻՍԱԳԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

903, Հոկ. 29, Հելուան

Յարգելի ընկեր, Պ. Մարթին, Պ. Արամը Հինդարթի առաւում ժամանակին հասու Գահիրէ, որուն ընկերանալովս՝ պէտք եղած գործերը կարգադրեցինք, եւ այսօր ալ Պ. Արտաւազդին հետ, երեկոյեան մօտիկ գնացինք տոքթորին: Արամը նամակին տեղեկացնելով, երբ կարգաց, ճիշդ իմ կար-

ծիքս յայտնեց, թէ պէտքը չունէր մինչեւ իսկ այսպէս նամակի մը: Վերջապէս անմիջական կերպով որոշեց կարգադրել առաւում շուտով հիւանդանոցի խնդիրը, որ շաբաթ առաւում 10ին հիւանդանոց պիտի գնանք, բըժիշկը հոն պիտի գայ եւ ընկերակցութեամբ օրերասիրոնի առաջին մասերը պիտի սկսին: Ատկէ զատ խոստացաւ մինչեւ իսկ որ երբ հիւանդանոցի մէջ որևէ հիւանդի զբաղած ըլլայ, հիւանդները թողել պիտի տայ ու ասոր սկսիլ պիտի տայ: Ուստի մեծ յոյս ունինք թէ 20-25 օրէն կը բժշկուի: Եւ երբ բուն գործունէութեան սկսին, նորէն մանրամասն կը տեղեկացնեմ: Ընդունած եմ յանձնած 2 երգարանները. հիմա 16 երգարան կ'ըլլայ, բայց չեմ յիշեր թէ պատկերներն քանի՞ հատ էին, 10 էր թէ 15 հատ էր: Հիմա մօտիկ ժամանակէն կը դրկեմ ամբողջովին, ինչու որ մէկ մասը ապառիկ կը մնայ:

Գալով միւս ապրանքներու մասին, ապրանքներուն տէրը հիմա հոս եկաւ, թէեւ Ջակազիկէն ուղղակի հող պիտի գայ եղեր, բայց ուրիշ գործ մը ունենալուն համար, ստիպուած Երկուշաբթի օրը պիտի իջնէ. ուստի Երկուշաբթի օրէն սկսեալ 9էն 12ը Բաֆէ Սանթրալ սպասեցէք մէկգոմէկու:

Հիմա գանք իմ խնդրիս շուրջ. բաւական օր է որ կ'իջնամ կ'ելլամ: Այն ընկերը(1) համար որ ծանօթութիւններ տուած էիր գործի մասին, դժբախտաբար մինչեւ ցարդ յուսախար մնացած եմ: Այսօր մօրս հետ գնացինք Թօփալիանին որեւէ գործ մը խնդրելու. ինչ ինչ խօսակցութենէ յետոյ ըսաւ, թէ դուն ժամ առաջ Ամերիկա պիտի երթայիր, ինչո՞ւ հոս ես, ես նկարագրեցի դրամական անձուկ վիճակս. նա կարծիք յայտնեց՝ մաս մը ես գտնամ ու մնացածը ինք ամբողջացնէ. ես պարզապէս հեղեցի, առայժմ իմ կողմէն չեմ կրնար գտնել, ինչու որ հիւանդութեան համար ծախքի ենթարկուած եմ. ինք առաջարկեց թէ հակցիր կանոնաւոր կերպով որ ո'րքան ծախք կ'ըլլայ մինչեւ Պոսթոն. ինք ալ տեղեկութիւն առնելով ամբողջովին վճարելու կամ ճարելու ստանձնեց, բայց հակառակը Պ. Արտաւազդը ու տոքթորը հակառակեցան իմ Ամերիկա երթալուն, նկատի ունենալով ջրովս հիւանդութիւնը: Հիմա չեմ գիտեր ո'ր կողմը երթամ. բայց այժմ մնալու որոշում տալու վրայ եմ:

Յարգանքներ ու բարեւներ տիկին Սուրբիկին, Պ. Գալֆայիանին, Պ. Միսաքին, քեզ ու ամէն համահասար ընկերներու: Արամն ալ իւր բարեւները կը հազորդէ:

Մնամ յարգանք
ՄԻՔԱՅԷԼ ՄԻՍԱԳԵԱՆ

Յ. Գ. — Արամին հասցէին գրուելիք նամակը պէտք է իմ հասցէին գրէք. միմիայն վրան յիշեցնելու է՝ Արամին յանձնելի:

4 03 — 32

ԿԱՐԱՊԵՏ ԱՅՎԱԶԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

03, 18/31 Հոկ., ի Գահիրէ

Սիրելի Մարթին,

Ստացայ 28 Հոկտեմբեր թուակիրդ. Սամոս կղզիի ճանապարհով մեկնելը ես ալ նպատակաւորմար կը գտնեմ եւ հետեւաբար խօսք ալ կու տամ մեկնել այդ գծով, եթէ Բիրէյայէն Սամոս անցնելու կառավարական սրբելքներ չկան, իսկ ինչ կը վերաբերի Սամոսէն մինչեւ Պալմա ըլլալիք լեռնային ճանապարհորդութեան, այդ ինձ համար ոչ մի կարեւորութիւն չունի, միայն Պուճայէն քաղաք իջնելու ատեն պէտք է ըսել, թէ ընկերներու օգնութեան կամ աւելի ճիշդ ներկայութեան կը կարօտիմ, որովհետեւ առանձին քաղաք իջնելէ անմիջապէս յետոյ չպիտի կրնամ ընկերները գտնել, ինչպէս որ գտած է եղել արդէն զրկուած երկաւորաւորը:

Ուրեմն ամէն պարագայի մէջ ջանացէք աճապարանօք կարգադրել պէտք եղածը, պարտքիս թէ ճանապարհորդութեանս նկատմամբ, որպէսզի ի գուր չսպասեմ Գահիրէի մէջ, որովհետեւ ինչպէս նախորդիւ ալ գրեցի՝ ինձ համար անկարելի է սպասելը, հարկ մը որ եթէ ներկայանայ 1-2 ամսուայ համար՝ այն ատեն իսպառ պիտի հրաժարիմ մեկնելէ:

Զմոռնամ հարցնելէ ձեզմէ այս մասին եւս, շնորհ գնալու համար մի ուրիշ միջոց ալ կայ, որուն գործադրութիւնը Ձեր անհատական ճարտիկութենէն կախուած է՝ կ'ըսէք. ի՞նչ բանի մասին պէտք է եղել ճարտիկութիւնը օրեր առաջ գացող պարոնին, քանի որ իր նամակէն քաղուած տեղեկութեան մէջ որեւէ ճարտիկութիւն չկայ, ես գոնէ նկարագրուած միջոցին մէջ ճարտիկութեան արժանի բան մը չեմ գտներ, եթէ տարբեր պարագաներ եւս չկան. իսկ եթէ կան եւ ճարտիկութեան կը կարօտին, ըսէք ինձ առանց վերապահումի, ապահով ըլլալով որ խուսափող չեմ:

Նամակս երկու օր յետաձգելու պատճառը Ձեր յանձնարարութիւնն էր. Օշին Եսայեան ըսուած անձնաւորութիւնը շատերէ հարցուցի, մեծաւ մասամբ կիպրոսաբնակ անձերէ, բայց ամենէն ալ առած թեր ու դէմ կամ բացասական պատասխաններս այն եզրակացութեան կը հասցնեն ինձ, թէ Գահիրէ այդպիսի անձնաւորութիւն մը չկայ: Միակ հաւանականութեան մօտիկ տեղեկութիւնը տուաւ կիպրոսացի երիտասարդ մը, անոր ըսելով՝ Օշին Եսայեան անձը ամիսներ առաջ Գահիրէ եղած է բայց հիմա ո՛չ, եւ արդ ուր ըլլալուն մասին ինք ալ տեղեկութիւն չունի: Ուրիշներ

ալ ըսին թէ Օշին Եսայեան կեղծ անուն մը լինելու է, որովհետեւ Կիպրոսի մէջ թէեւ Եսայեան կայ, բայց Օշին երբեք:

Փիլաւեանի խնդիրը մեր միջոցաւ յանձնուեց Կոմիտէին եւ Վաղարշն ալ անորոշ ժամանակով հեռացուեցաւ ընկերակցութենէ:

Պատասխանեցէք վերջնականապէս եւ անյապաղ:

Բարեւներով Ձերդ՝
ԿԱՐԱՊԵՏ

4 03 — 33

ԱՐՏԱԽԱԶԳԻ ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆՆԻՆ

Գահիրէ, 5 Նոյ. 1903

Սիրելի Մարթին,

Երկու նամակներդ ստացած եմ: Ներփակ կ'ուզարկեմ Այվազեանին ստացադիրը, որուն յանձնեցի Ձեր ուղարկած 10 ոսկին, որպէսզի ամբողջ ունեցած պարտքերու խնդիրը կարգադրէ եւ այլ եւս ամսականով պարտք վճարելու խնդիր չմնայ: Ես կ'ուզէի թէեւ 7-8 ոսկիով վերջացնել խնդիրը, բայց անգամ մը որ դուն ալ գրած էիր իրեն 10 ոսկի զրկած ըլլալը, անկէ ետք ալ բնականաբար անկարելի էր պակասով վերջացնել: Ձինքը ճամբու կը դնեմ ուրբաթ օր կէսօրէն յետոյ ժամը 3-15ի թռէնով եւ Աղեքսանդրիա կը հասնի զիչերը ժամը 9ը քառորդ անցած: Մնացածը ալ ձեզ գիտնալիք խնդիրն է. անշուշտ չէք մոռնար ճամբայ ելլալը եւ յաջող կամ անյաջող մուտքը իմացնել ինձի:

Աղեքսանդրիոյ մասին տուած տեղեկութիւններդ գոհ թողուցին զիս, կը յուսամ որ մինչեւ այս տողերը կարգացած ատենդ, հող ամէն բան վերջնականապէս կարգադրուած կ'ըլլայ արդէն: Յունաստան անշուշտ գրեցիք մինչեւ հիմա եւ անհամբեր կը սպասեմ անոր արդիւնքին: Քանի որ Այվազեանը Յունաստանէն պիտի անցնի, ըսէք իրեն որ բերանացի խօսի ուր որ պէտք է եւ արդիւնքը տեղեկացնէ:

Երկրի գործերուն մասին ալ մի մոռնաք երբեմն երբեմն տեղեկութիւններ հաղորդել մեզի: Ընդհ. Ժողովի մասին նոր լուր մը ունեցա՞ք: Հոգ չէ թէ Ընդհ. Ժողովը ուշանայ, մենք առաջուց կը պատրաստենք ամէն բան ու վերջը կը սպասենք:

Պրն. Տիգրան Պէկեանին գրուեցաւ որ մենք պիտի ստանայ «Իրօշակ»ը. եթէ կարելի ըլլայ իրմէն օգտուել, առիթը չենք փախցնիր, մի՛ վախնար:

Ռահվերը բարեւէ եւ ներողութիւն խնդրէ իմ կողմէս խոստումս չկարենալ կատարելու համար. չափազանց զբաղած եմ եւ զինքը մեկնած կը կարծէի արդէն:

թող հասցէն տայ ինձի որպէսզի գրեմ իրեն, կամ եթէ կ'ուզէք Ձեզի կը գրեմ ու կ'իմացնէք իրեն:

Գալֆայի շատ բարեւ. մեռա՞ւ, ի՞նչ եղաւ որ ձայնը ձոյնը ելած չունի:

Բարեւներով:
Ձերդ՝
ԱՐՏԱԽԱԶԳԻ

4 03 — 34

ՄԻՔԱՅԷԼ ՄԻՍԱՔԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

7 Նոյ. 1903, Հելուան

Յարգելի ընկե՛ր Պ. Մարթին,

Բաւական ժամանակ է կը սպասէի ձեր նամակին. ինչ որ գրած էիք թէ այսինչ ընկերն պիտի գայ, բայց դժբախտաբար մինչեւ օրս որեւէ անձնաւորութիւն չէ եկած: Անշուշտ դուք յանցաւոր չէք, որովհետեւ նա խոստացած է եւ դուք տեղեկացուցած էք:

Ինչպէս առաջի նամակովս յայտնած էի, թէ թօփայեանը այսպէս յոյս մը տուաւ, Հինգշաբթի օրն դիմեցի պատասխան առնելու. ընդունած էր եւ ուրախ տպաւորութեան տակ ըսաւ՝ թէ դուն ալ աշխատէ որ մէկ մասը ճարես, եւ գնալէդ երեք օր առաջ եկուր որպէսզի նամակը գրեմ, Աղեքսանդրիա երթալով տոմասին ստանաս:

Հետեւաբար հոս սկսայ գործերս կարգադրել, եւ յառաջիկայ 16ին երկուշաբթի օր պիտի իջնեմ Աղեքսանդրիա, որպէսզի չորեքշաբթի օր մեկնիմ: Բայց այս չորեքշաբթի օրուանն, ժամանակ մը առաջ էր. հիմա չեմ գիտեր թէ նո՞յնն է, խնդրեմ լաւ մը հասկնաս ու անմիջապէս տեղեկացնես: Անշուշտ կը ներէք համարձակութեանս, ինչու որ ձանձրութիւններս ըստ բաւականի կ'ըլլան կոր:

Արամն բաւականին առողջ է, Պ. Այվազեանը թող պտտմէ տեսածին պէս. երեքշաբթի օր պիտի երթամ, որովհետեւ այս կիրակի վերջին կիրակիս է Հելուան մնալու. իսկ յառաջիկայ կիրակի վիճակահանութիւնը տեղի պիտի ունենայ, ասոր համար երեքշաբթի պիտի երթամ Արամին:

Նամակս վերջացնելով կը սպասեմ անմիջական պատասխանիդ:

Յը բարեւենք ամբողջ ընտանեօք, նաեւ բարեւիս հաղորդէք տիկինին, Պ. Գալֆայեանին, Արամին, Պ. Միտաքին եւ այլ ընկերներու:

Մնամ յարգանօք՝
ՄԻՔԱՅԷԼ ՄԻՍԱՔԵԱՆ

4 03 — 35

ԱՐԱՄԻ ՆԱՄԱԿԸ

Գահիրէ, 11 Նոյ. 1903

Յարգելի Պ. Մարթին,

Ստացայ ձեր Նոյ. 10 թուակիրը, որով նամակս ուշացնելու համար ինձ կը դատապարտէիք. սակայն դժբախտաբար կարգ մը պատճառներով դաս առնելու խնդիրը քանի մը օր ուշանալով, չուզեցի նախքան դաս սկսելու նամակ գրել. քանի որ արդէն ուրիշ գրելիք մը չէի կրնար ունենալ:

Արդ հոս գալէս երկու օր վերջ Պ. Նշանը գտայ. ինք շատ ազնիւ մէկն է, ամէն գոհողութիւն յանձն կ'առնէ կոր, միայն թէ չ'ուզեր խանութին մէջ դաս տալ, պատճառը՝ որ իրեն սորվեցնողին երգում է ըրեր որ ինք ուրիշ չպիտի սորվեցնէ: Արդ որովհետեւ խանութին մէջ ուրիշ հայ մը եւ իր խանութին դիմաց իրեն հայրենակից հայեր կան եղեր, չ'ուզեր եղեր որ անոնք դիտնան ինձ կտրել սորվեցնելը. նոյնիսկ չ'ուզեր իր եղբայրը դիտնայ: Ուստի բնական է որ ես ալ յարմար տեղ մը չունէի որ դար դաս տար. Պ. Միտաքեանին հետ ելանք սենեակ մը փնտոցինք, որ թէ՛ ես բնակէի եւ թէ՛ իրմէ գիշերները հոն դաս առնէի. ան ալ անկարելի եղաւ, չգտանք: Բարեբախտաբար Աստիկը(1) եւ Փիլաւեանը առաջարկեցին որ իրենց սենեակը երթամ. այս առիթը Պ. Նշանի համաձայնութիւնը առնելով, իր երթալ-գալուն թրէնի ծախքը հոգալ խոստացայ, վասնզի քալելով 1-1½ ժամուայ տեղ է, եւ մի քիչ արտաքոյ կարգի ծախքեր ալ ունեցայ գործիքին վերաբերեալ: Այս իրիկուն առջի դասը պիտի առնեմ, իսկ աշխատելու մասին ինք ըսաւ որ քանի որ շուտ սորվի կ'ուզես, պէտք է որ դաս առնելէդ վերջ հետեւեալ օրը առանձին վարժութիւն ընես քանի մը ժամեր. երբ որ կը նեղուիս, ըսաւ, խանութը եկուր ինձ օգնէ:

Գալով Համբոյի մասին, հոն գացող ընկերը Համբոյին դիւրութեամբ կրնայ գտնել հետեւեալ միջոցներով: Բէշարմալը շարժուելէ վար Եէյթամ շարժուն կ'ելլէ, հոն Խուխուճեան եղբայրներուն մազազան կը հարցնէ, որ մանիֆաթօրայի մեծ մազազան մըն է. այնտեղ մըցի հաճի Առոյին տղան հաճի Համբոն կամ Համբարձումը կը հարցնէ, որու խանութը արդէն շատ մօտ է, շուտով ցոյց կու տան: Աւելի ապահովութեան համար՝ բացի մըցիէ ուրիշ ոչ ոքի չհարցնէ, նոյնիսկ Խուխուճեաններուն մազազան առանց հարցնելու կարող է շատ դիւրութեամբ գտնել. օրինակ, երբ որ Բէշարմալը շարժուելէ դէպի Եէյթամ շարժում պիտի երթայ, թէ՛ ճամբու վրայ եւ թէ՛ վաճառատուներու առջեւները շատ մը մըցիներու պիտի հանդիպի. այն ժամանակ առանց կասկածելու կարող է հանդիպած մըցիին հարցնել: Բոլորն ալ գիտեն եւ

չուտով ցոյց կու տան: Ինք 24-25 տարեկան է, ինձմէ քիչ մը բարձր, երեսը քիչ մը ծաղկոտ է, ֆէս կը դնէ եւ մեզ պէս կը հագնի: Իրեն երբ կը մօտենայ, շուտով իմ իսկական անունս թող տայ, որպէսզի զիմացինը դիտնայ թէ եկողը ո՛վ է եւ ըստ այնմ վարուի:

Իսկ բնական է որ Համբոյի միջոցաւ գնացողը մեր ընկերները տեսնել պիտի ուզէ. այն ժամանակ, իրենց իսկական անուններով կրնայ գտնել սապէս, — Միվ-րիտանիանին մագաղան Միհրան Շահինեան եւ իր ընկերը Գէորգ, որուն մականունը չեմ յիշեր. բնական է՝ Համբոյէ զատ ուրիշի չի հարցներ:

Միբալիբ բարեկենդով՝ ԱՐԱՄ

Յ. Գ.— Միւս նամակը դեղագործէն է, կարդացէք եւ եթէ կարելի է գրեցէք թէ ի՞նչ պատասխանեմ. աւերկա երկրորդն է որ կը գրէ: Նախկին գրածին արդէն չեմ պատասխանած Գ. Միսաքին խոստմանը վրայ. անշուշտ ցարդ գացած գտած եւ պէտք եղածը խօսած է իր առնելիք քայլի մասին, վասնզի նա ալ վերջապէս սպասողական դրութեան մէջ է:

Արամը կատարելապէս առողջացած է. հաւանական է 8-10 օրէն ելլէ հիւանդանոցէն:

ՆՈՅՆ

(1) Կարելի է նաեւ կարգալ Ռտտիլը կամ Ըստիլը:

4 03 — 36

ԱՄԵՐԻԿԱՅԷՆ՝ ԴԱԻԻԹԻ ՆԱՄԱԿԸ

Philadelphia - Pa., Նոյ. 30, 1903

Միբալիբ Մարթին,

Անբացատրելի բերկրութեամբ գրկեցի նամակդ եւ չորսիդ լուսանկարը, այս առաւօտ: Սկսելէ առաջ ըսեմ՝ որ այս տողերը քեզի կը գրեմ Night Schoolի մէջ, ուր անդերէն կը դասախօսեմ շաբաթը 3 գիշեր ու այսպէսով օրապահիկիս դէթ մէկ մասը կը հանեմ: Ինչպէս կը տեսնես, նամակի թուղթ չէ գործածածս, զի չէի կարծեր ատեն պիտի ունենամ հոս գրելու, անշուշտ ասոր կարեւորութիւն չես տար: «Ճանթագիյէ քըթիւր, Ֆուլուս մաֆիչը» հոս չ'անցնիր...: Ի սրտէ ուրախ եմ որ Տոքթ.ը մեկնած է արդէն: Ա՛խ Մարթին, ես քեզ ի՞նչ ասեմ որ դու ի՞նչ հասկանաս. հաւատա՛ որ սիրտս կտորած է ամէն մի կերպով, ըլլա՛յ անձնական, ըլլա՛յ ազգային. առաջինը այնչափ հոգս չէ, որովհետեւ ինչպէս որ ըլլայ այս կ'անցնի եւ անկէ զատ վերջապէս ինչ որ ալ ըլլայ չի բաղդատուիր վերջնոյն հետ: Հրաչին այսպէս ըլլալուն ի սրտէ կը ցաւիմ. չգիտեմ որ անկե՞զմ է դէպի գործը, բայց այդ չ'արդարացներ իր

այսքան տարուան ցոյց տուած անգործունէութիւնը, չէնէ ինչո՞ւ համար այսպէս ըլլար Կիլիկիան. մանաւանդ ա՛յս պարագային, երբ երկրին վիճակը անտանելի դարձած է եւ դարնան արիւն թափելու, մէկ խօսքով Ս. (1) շրջանին մէջ կռիւը բռնկելու կամայ թէ ա- կամայ վախը կայ: Ի՞նչ որ է, ես ասոնք կ'ըսեմ ոչ թէ Հրաչը կամ այսինչը-այնինչը քննադատելու նպատակով, ո՛չ, ես հեռու եմ անկէ, անոր ատենը չէ հիմա. այլ կ'ըսեմ որովհետեւ քանի կը խորհիմ անցած տարիներու վրայ՝ այնքան սիրտս կը փչրի: Այո՛, դուք դուրս ահանջիս հասաւ այն լուրը որ դուն երկիր մը տած չես դեռ, եւ թերեւս ինչպէս որ կ'ըսես՝ ո՞մանք կը մեղադրեն ալ, թէեւ ես բան մը լսած չեմ այդ մասին: Բայց վնաս չունի. գիտես որ խօսողները շարունակ կը խօսին, ծանօթ ըլլան թէ չըլլան խնդրոյն. հետեւաբար դու գործդ գիտցիր եւ վարուէ այնպէս ինչ որ գործին շահերը կը պահանջեն. եւ ես իմ կողմանէ կ'աւելցնեմ որ զգոյշ ըլլաս, Մարթինս, ստանձնածդ դերը ծանր է եւ պատասխանատու. այնպէս շարժէ որ ապագային որեւէ բիծ չբերես վրադ: Ասոնք կը գրեմ որովհետեւ անկեղծօրէն կը սիրեմ քեզ, եւ քեզի գալիք որեւէ մի բան, ըլլայ այն պատուաբեր թէ հակառակը, անոր համեմատ պիտի ուրախացնէ կամ տրտմեցնէ ինձ. եւ դու վստահ ես ասոր, այնպէս չէ՞: Գիտցած եզրի որ ես միշտ Կիլիկեան(2) պահանջներուն կողմն եմ եւ ձեռքէս եկածը չպիտի զլանամ. ասոր վստահ եզրի: Ինձի պէս քանի մը ընկերներ ալ կան եւ եթէ դպրոցիս խնդիրը չըլլար, ես կ'երթայի Մասաչուսեթս(2), ուր աւելի լայն շրջանակ մը կարելի է յառաջ բերել Կիլիկիոյ շահերը զօրաւորապէս պաշտպանելու եւ մէկ խօսքով նիւթապէս ալ օգնելու: Այս տարուայ դասերս խիստ շատ են եւ ամենադժուար տարին է, որ եթէ յաջողութեամբ անցընեմ՝ միւս տարին կ'ըլլայ վերջինը, սակայն աւելի դիւրին ըլլալով՝ պիտի կարենամ աւելի օգտակար լինել գործին: Յամենայն դէպս Ֆիլադել(3) Կոմիտէն ինչպէս գիտես ամենալաւերէն է եւ որչափ որ հոս եմ կրնամ ընկերներու ուշադրութիւնը Կիլիկիոյ կողմը հրաւիրել: Շատ խօսելիք ունիմ քեզի, բայց հոս աւելի երկարել չեմ կրնար, թէ՛ թուղթս կը հատնի արդէն եւ թէ ժամանակս լրացաւ եւ կը փակեմ նամակս: Աղատէրին երբ գրես, շատ բարեւս խօսէ, ինչպէս նաեւ Միսաքին եւ Գալֆայեանին, որ քովդ է անշուշտ:

Համբոյներով՝ ԴԱԻԻԹ

Միշտ այս հասցեով գրէ եւ նամակներդ թիւով ըրէ որ եթէ երբեք մի բան պատահի անմիջապէս գիտնամ.
D. M. Garibian
Phila - Dental College

- (1) Մտուն:
- (2) Բնագրին մէջ՝ ստորագրուած:
- (3) Ֆիլատելֆիայ (Ա. Մ. Ն.):

4 03 — 37

ԻԶՄԻՐԷՆ՝ Վ. ԷՏԿԱՐԻ ՆԱՄԱԿԸ

Ձեռագիրը 403 - 29 եւ 403 - 32 ճամակներու ճեղքներն է: Ամենայն հաւանականութեամբ, ուրեմն, Վ. Էտկարը ուրիշ մէկը չէ՝ եթէ ոչ Գաիիրէի Կարապետ Այվազեանը, որ անցած է արդէն Ոսկեհամբ (Իզմիր): Այդ կը հաստատուի նաեւ 405 - 1 ճամակով:

903, 12/25 Դեկ., Իզմիր

Միբալիբ՝ Մարթին,

Ինչպէս տեսաք անշուշտ 1-2 օր առաջ Ձեզի ուղղուած հաւաքական նամակէն, այստեղի տղայոց իրական վիճակը ու իրենց մտածումները շատ տարբեր են ինձ ըսուածէն. երբ ես այդտեղ եղած ժամանակս ապրուստի միջոցների վերայ հարց դրի, այնքան ալ հաճելի չբերեաց, բայց արի տես որ այդ մասին ես շատ ուղիղ եւ որոշ մտածած եմ եզեր:

Մեր յաճախակի տեսակցութիւններուն մէջ նոյնիսկ Անդրանիկի բերանով անուղղակի կերպով հասկացուցին որ չպիտի կարողանան իմ պէտքերս հոգալ. յարմար դատուեցաւ դրամազուլուի մը պահանջել Ձեզմէ՝ գործ մը սկսելու ու դրամին արդիւնքովը ապրելու համար: Այդ մասին արդէն գրած եմ նախորդիւ, ներկայիս ալ նոյնը կրկնելով կը խնդրեմ որ անմիջական կարգադրութեան նմայիս եւ մանաւանդ շուտով ինձ իմացնէք Ձեր հաւաքական որոշումը, որպէսզի ես ալ իմ դիրքս ու վիճակս կարողանամ որոշել:

Դրամ հանգանակել Իզմիրի կամ Մանիսայի մէջ բնակին անկարելի է. այդ 150 ոսկւոյ ցանկը մոռցէք միանգամ ընդմիշտ. հազիւ 30-40 ոսկի դուրս մը գոյացիլ է Մանիսայէն, այն ալ այսպէս թէ այնպէս ծախուել է, եւ իրենք դրամի կը կարօտին:

Շնորհաւոր նոր տարի եւ ջերմազին բարեկենդ:

Ընկերդ՝ Վ. ԷՏԿԱՐ

Յ. Գ. 1.— Ինձ տուէք ձեր մասնաւոր հասցէն, եւ պատասխանեցէք ըստ հետեւելոյն՝

Stephen Richard pour V. E. Smyrne

Յ. Գ. 2.— Մոռոցացիս եկած նամակները հաճեցէք ինձ դրկել նոյն հասցէով: Անշուշտ չէք մոռնար օր. Հայկանոյշի մասին ինձ տեղեկացնել:

ՆՈՅՆ

4 04 — 1

ԱՂԵՔԱՆԻՐԻԱՅԷՆ՝ ԹԱՓԱՌԻԿԻ ՆԱՄԱԿԸ

1904 բուսականէ՛մ՝ երկու ճամակներ միայն կը գտնեմք Մարթին Մուրատեանի քաղաքագրին մէջ: Առաջինը — ներկայ ճամակը — հաւանորէն ուղղուած է իրեն՝ Մարթինին, որ ուրեմն կը գտնուի Իզմիր (Ոսկեհամբ), ուր բանտարկուած էր Ֆարիստը: Այդպէս ենթադրել կու տայ նաեւ Յուսէփ Մարմին ճամակը (404 - 2), որ ուղղուած է Մարթինին եւ Էտկարին (արդ՝ 12/25 Դեկտեմբեր 1903 իր 403-37 ճամակը Էտկար գրած էր Իզմիրէն): 1904ի քննարկին Մարթինի Իզմիր գտնուելուն մասին կը վկայեն նաեւ Քրիստափորի 1905 Փետրուար 1 եւ 19 բուսակիր ճամակները:

Պետք է ենթադրել՝ որ, Սոփիայի Գ. Ընդի. Ժողովէն ետք (Փետրուար 1904), Մարթին, նորընտիր Յուսէփ Մարմինի կարգադրութեամբ, անցած է Ոսկեհամբ՝ մասնակցելու համար շուրջապահին ծրագրներուն նախապատրաստութեան (Իզմիրը պիտի արձագանգէր Նըլուզի անսրին՝ ուժեղացնելով օդը համեմով եւրոպական դրամատուները, փոստը, մաքսատուները, կամուրջները, եւն. Այս մասին տեսնել՝ Մ. Վարազդեան, «Հ. Յ. Գ. Պատմութիւն», Ա. հտր. էջ 450-451): Իզմիրի ծրագրները ճշտողեցան եւրոպացի յեղափոխական ժողովի եւ Տիգրան Նալբանդեանի ձեռքալուսով:

Իսկ թէ ո՛վ է «Թափառիկ»ը, որոշ չէ: Ձեռագիրը կը յիշեցնէ Վախրամիքը (Յ. Գալֆայեան):

Աղեքս., 9 Դեկտ. 1904

Միբալիբ՝ ընկեր,

Ներկայ նամակը, խնդրեմ, ապահով բանտը Ֆարիստին ձեռքը հասցուցէք:

Վարդանը(1) Մոց հասած է ապահով: Մարհատը տակաւին Յուն. կը գտնուի: Արծուաբերդի(2) վրայ դին. ոյժ կեդրոնացնել սկսած է թրք. կառավարութիւնը. կասկածելի մի բան կայ:

Տեղական գործերը լաւ են, շուտով կը սկսինք հրատարակել շաբաթաթերթ մը «Հորիզոն» անունով:

Ընկերական բարեկենդով՝ ԹԱՓԱՌԻԿ

- (1) Խամատրի վարդաճը, որ Զաւարեանի հետ ճնշակած շքշապոտայի էր կլած Կիլիկիա եւ Մուրթա:
- (2) Ձեյթուն:

4 04 — 2

ՅՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՆԱՄԱԿԸ

Լիս(1), 12 Դեկտ. 904 թ.

Միբալիբ Մարթին եւ Էդգար,

Համաձայն Յ. Մ. (2) որոշման կրկին փոխադրուում է Ձեզ 500 Ֆր. (արդէն ուղարկուածի հետ ընդամէնը՝ 800), առաջարկելով Ձեզ՝ ինքներդ ընտրութիւն

անէջ Ձեր ո՛ր գնալու խնդրում, որովհետեւ այստեղ, մեզ մօտ, ոյժերի կարիք չունինք առայժմ:

Մենք, ի նկատի ունենալով անմիջական գործի շահը եւ նրա շտապ բնակորութիւնը՝ ո՛չ ժամանակ եւ ոչ էլ հնարաւորութիւն ունէինք մանրամասն քննութեան մէջ մտնելու կատարուած ազեղ եւ ախուր իրարանցումների իսկական պատկերը դուրս բերելու եւ իւրաքանչիւրի պատասխանատուութեան չափն ու սահմանը որոշելու համար:

Միակ մեզ զեկազար ունենալով գործերի արդի գրութիւնը եւ նրանց շահը, որ միշտ գերիշխող պիտի լինի մեր անձնական ցանկութիւնների եւ արամադրութեան վերայ, ցաւում ենք, որ ուրիշ որոշում տալ անկարող եղանք:

Ընկերական բարեւանքով եւ համբարներով՝

ՅՈՒՑ. ՄԱՐՄԻՆ
(Կնիք)

- (1) Կ. Պոլսոյ կուսակց. անուանեալ մէկը:
- (2) Յուդայական Մարմնի (յասուկ մարմնի՝ ընտրուած Հ. Յ. Գ. Յոյ Հնգի. ժողովէն, Գրիստափորի զեկազարութեամբ զուտ համելու համար Սըլազի եւ Խզմիի շահմարանէն ծրագրեմբը):

4 05 — 1

ԷՏԿԱՐԻ (Կ. ԱՅՎԱԶԵԱՆ) ՆԱՄԱԿԸ

Գահիրէ, 5 Յունուար 905

Սիրելի Մարթին,

Ազեքանդրիա հասնելէս ետք տիկին Սուրբիկէ հետ տեսնուելով խնդրեցի որ իրեզնեներդ պատրաստեն որպէսզի զրկեմ: Բայց առջք. Բալայեանի տուած մի նոր տեղեկութեան համեմատ — Լեանավայր երթալ կամ չերթալուդ մասին — հարկ կը համարեմ հարցնել զեզմէ թէ առկալին երկար պիտի մնա՞ս հող, թէ ոչ: Եթէ պիտի մնա ինձ յայտնի չուտով, որպէսզի իսկոյն զրկեմ իրեզնեներդ. հակառակ պարագային այսինքն եթէ կամ հոս պիտի դառնա եւ կամ մի ուրիշ տեղ մեկնիս, ի զուր չուղարկեմ:

Ես առողջ չեմ զգար ինչդինքս. չուտով պիտի զեմեմ բժշի, առկալին ոչ մի ընկերի հետ չտեսնուեցի:

Ընդունիր բարեւանքս եւ հաղորդիր Սարհատին ու Կարոյին, եթէ այդտեղ են:

ԷՏԿԱՐ

Հասցէս՝
G. Ayvasian
Poste - Restante, Cairo (Egypte)

Գրքերս առի տիկին Աշտաէն, ամէնը միանգամէն պիտի ծախեմ:

4 05 — 2

ԷՏԿԱՐԻ ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ

Գահիրէ, 1 Փետրուար 905

Սիրելի Մարթին,

Ստացայ նամակդ. հազուատներդ՝ ըստ ջո կարգադրութեան պիտի թողում եղած տեղը ցնոր տնօրինութիւն: Ենորհակալութեամբ ընդունելով ջո տուած ընկերական խորհուրդը իմ ժընեւ մեկնելու մասին, ցաւօք կը յայտնեմ չկրնալ համաձայնիս: Ես բացարձակօրէն իմ արժանապատուութեան դէմ կը նկատեմ այդ առաջարկը. Ոսկեհանքէն ի զուր ու առանց հակակազմական պատճառով մը դուրս ելլելէ յետոյ, Բիւրոն անշուշտ մեղաւոր չէ իր (այդ վերջին) առաջարկով, սակայն ես ալ մեղաւոր չեմ իմ շընդունելով: Մէկ խօսքով ես չեմ ընդունիր որ ընկերների հետ վարուի իրրեւ մեքենաների. ես կը սիրեմ, կը պաշտեմ յեղափոխական գործը, բայց կը դնամ այնպիսի վայրեր, ուր վստահ եմ իրական գործի յաջողութեան. այլապէս կը համարեմ մինչեւ այդպիսի առիթ մը ներկայանայ:

Տոքթ. Նէվրուզը քննեց ինձ. նրա ասելով՝ փայծաղս կը ցաւի ու ստամոքսի բորբոքում ստացել եմ. դեղ տուաւ: Բայց արդիւնք՝ ոչ: «Հանգստի պէտք ունիս», կ'ըսէ, ի հարկէ առանց գիտնալու թէ իմ գրքպանս որքան փող կայ, իր կարծած հանգստութիւնը ձեռք բերելու համար: Գրիր Լեւոնին թող ծանօթանայ Սիւրբիսարըլլի պաշտօնեաներէն Գրիգոր Տէր Մինասեանի հետ, առանց միւսմերի միջամտութեամբ(1). անոր միջոցաւ պիտի կրնայ ծանօթանալ եւ Գրիգոր Խանձեանի հետ. ասոնք իրենց ձեռքի առկն ունին ուրիշ լուտղաներ:

Տեսնուեցայ Մարի հետ. բաւական առողջացել է. տեսնուեցայ նմանապէս Արշակի եղբոր Հայկի հետ, (որ Ոսկեհամբ պիտի մեկնի)(1): Տեղական վիճակի մասին, կարծեմ էլէնը(2) կամ Լեւոնը գրել էին իրեն: Տեսայ «Հորիզոն»ը. բաւական ընդարձակ ծաւալով ու թոյլ կազմով թերթ մը:

Եզրպտոսի օրուայ նորութիւնն է «Վարդոյի(3) բաց նամակները ուղղեալ դաշնակցական ընկերներին»: Հա՛րկ է ըսել թէ այդ բաց նամակները իւր զոնցին մեր հակառակորդների հացին: Ազատ բեմի մէջ կարգացի քննադատական մը այդ նամակների առթիւ, որը գըրւտակով Վարդոյի(3) ուշացած ճշմարտախօսութիւնը, կու դար անգամ մըն ալ շեշտելու թէ հնչակեանները աւելի լուր կը մատածէին ուրեմն որ կանխաւ կը հակառակէին Սասնոյ գործունէութեան: Գեղեցիկ փաստ, — Վարդոյի շնորհիւ:

Աշխէնի հետ չեմ թղթակցիր ու յառաջիկային ալ միտք չունիմ թղթակցելու:

Ընդունիր անկեղծ բարեւանքս. հաղորդիր նոյնը Սարհատին եւ Կարոյին: Բարեւանք մասնաւորապէս Յարութիւնին:

Մնամ ընկերդ՝
ԷՏԿԱՐ

Հասցէս նոյնն է:

- (1) Բնագրիմ մէջ ստորագծուած:
- (2) Գրիստափորի ծածկանունը:
- (3) Վարդ-Պատրիկեան, Պալմանբու գլխաւոր գործիչներէն մէկը, որ հետագային, 1907ի 4րդ. Հնգի. ժողովից, արտաքուէցաւ Հ. Յ. Դաշնակցութեան շարքերէն:

4 05 — 3

ՔՐԻՍՏԱՓՈՐԻ ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ

1 Փետրով. 905, Ճիլիպպէ

Սիրելի Մարթին!

Նամակդ ստացայ եւ իսկոյն գրեցի Մաղիկի(1) ընկերներին ջո ուզած տեղեկութիւնները եւ վկայութիւնը պաշտօնապէս հաղորդելու ում հարկաւոր է: Յոյս ունիմ, որ նրանք կամ արդէն մի բան արած են եւ կամ շուտով ինձ կը գրեն այստեղից հարկաւորը անելու համար: Ինքս չուզեցի Մարմնու(2) կողմից գրել՝ առանց միւս ընկերների համաձայնութիւնը ունենալու:

Չգիտեմ Լեւոնին գրած ինչ նամակում են զեզ վերադրուած Ոսկեհանքի(3) անախորժ դէպքերը: Դա, երեւի, թիւրիմացութիւն է: Յամենայն դէպս ես այդպիսի մի կարծիքի մասին տեղեկութիւն չունիմ եւ ինքս էլ Լեւոնին գրած խորհրդատու մի նամակում, որքան յիշում եմ, զեզ անուանել եմ «զոհ» Ոսկեհանքեան ամբարտաւանութեան:

Որքան վատ եղաւ Ոսկեհանքից ջո հեռանալը գործի տեսակէտից, բայց անձնականիդ համար շնորհաւորում եմ ազատուելիդ այդտեղից եւ ցանկանում եմ յաջողութիւն ու մի փոքր էլ բախտ՝ գործունէութեանդ նոր վայրում:

Ձերմ բարեւանքս Կարոյին:

Համբարներով
ՔՐ ԷԼԼԷՆ(4)

- (1) Կրճատուը Կառածաղիկի, Պոլսոյ շրջանի կուսակցական անուանեալ մէկը:
- (2) Յուդայական Մարմնի, որու անգամ էր Գրիստափորը:
- (3) Խզմիի:
- (4) Գրիստափոր Միխայելեանի կուսակցական անունը:

4 05 — 4

ՔՐԻՍՏԱՓՈՐԻ ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ

19 Փետրով. 905, Ճիլիպպէ

Սիրելի Մարթին, ջո ուզած վկայականդ արդէն ուղարկուել է Բիւրոյին. միտքը այն է՝ որ դու ջո անյաջողութեամբ Ոսկեհանքում իսկապէս զոհ ես հանդիսացել այստեղի մի-երկու անձնաւորութիւնների անսանձ ամբարտաւանութեան, որ մեզ տեղիք չես տուել դժգոհ լինելու զեզնից եւ որ մենք կարծում ենք, որ Ոսկեհանքի դէպքը բնորոշ չէ զեզ համար ու դու անկասկած կարող ես օգտակար լինել երկրում:

Միամիտ եղի՛ր ուրեմն: Յաջողութիւն:

Ձերմ բարեւանքով՝
ԷԼԼԷՆ

4 05 — 5

ՔՐԻՍՏԱՓՈՐԻ ՆԱՄԱԿԸ ՄԱՐԹԻՆԻՆ

19 Փետրովար 905, Սօֆիա

Սիրելի Մարթին,

Ստացայ 12/25 Փետրով. գրածդ, ուր հարցնում ես «մասնագէտ ընկեր ուժանակի-դէնքի գործածութեան փորձերու մէջ» այստեղ զանուանելու մասին: Դա թիւրիմացութիւն է. այդպիսի մասնագէտ այստեղ չկայ, իսկ եղածները ձեզնից աւել չգիտեն: Ուրեմն իմ կողմից այդ մասին, դժբախտաբար, ոչինչ չեմ կարող ասել:

Վերջերս Վառնա Արթաշիւն ներկայացել է մէկը՝ ապրանք ուղեւոր: Ենթադրեցինք՝ թէ ձեր կողմից է. ինչո՞ւ էք առանց նամակի մարդ ուղարկում, յանձնարարութիւններ անում. դա ունի շատ անյարմարութիւններ: Եթէ չենք սխալուած մեր ենթադրութեան

մէջ՝ թէ մարդը ձեր կողմից է եղել, ուրեմն կը ներէք մեզ՝ եթէ խնդրենք, որ ապագայում երբեք առանց նա- մակի յանձնարարութիւններ չանէք:

Գրել էի ձեզ մեր Մարմնու(1) կողմից ջո վերա- բերմամբ Բիւրոյին ուղարկած վկայութեան մասին: Ստացած կը լինես, յոյսով եմ: Գրել էի նոյն հասցէին, ինչ ներկայ նամակը — Jean Jacob:

Ձերմ բարեւեներով՝
ԷԱԼԷՆ

(1) Կ'ակնարկուի Սոփիայի (1904 փետրուար) Ընդհ. Ժողովի կողմէ ընտրուած Յուլիան Մարմնի:

4 05 — 6

Վ. ՂԱԶԱՐԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

V. Ghazarian
Rue des Phocéens № 36
Marseille

Մարտի 11, 7 Ապրիլ 905

Սիրելի Մարթին,

Եթէ աւելի կանուխ դիտանայի հասցէդ, աւելի կա- նուխ կը գրէի ձեզի:

Մարհատին անհասկանալի լուրերը, ստիպեց զիս փնտռել ուրիշ միջոց, տեղեկութիւն ստանալու վերջին զրկածներուս վիճակին վրայ, որուն համար դիմեցի Ժընեւ եւ ինձ տուին ջո հասցէն:

Լեոնաւոյրի(1) համար իմ ջոյս էին հետեւեալները. երկու ելեգորական մեքենաներ, երեք նազանի եւ երեք մուղգէրի ատրճանակներ՝ փամփուռներով, 2 վոլտ-մետր, մէկ պրիզմ-թելեմետր, մէկ զանգակ եւ 4 կապ բէլովէրներու համար. այս ամէնը Մարհատին հրամանին վրայ զրկուած են իրեն՝ անցեալ ամսուայ 16ին:

Այս ապրանքները յանձնուած են Հոս Mess. Vazquez et Murtra փոխադրական ընկերութեան, հոգ Աթէնք կամ Բիրէ ստանալու իրենց ներկայացուցիչ Mons. Démitrius Zoulasէն:

Ասկէ զատ՝ ես յանձնած էի ուրիշ տուփ մը դիւ- րովառ նիւթեր Մէսաթըրի Մարթիթիմ Ընկերութեան «Saghaliens» անուն նաու զահվէնուն:

Մարհատը մինչեւ ցարդ հակառակ իմ թախան- ձանքներուն եւ կրկնակի գրութիւններուն չպատասխա- նեց եւ ես աւելի ու աւելի մտատանջ եմ այդ մասին: Արդ կը խնդրեմ ձեզմէ, տեսնես Մարհատին եւ միա- մտող երկտող մը խնդրեմ հասցնես:

Հակառակ պարագային եթէ Մարհատը մեկնած է առանց ապրանքները ստանալու, իմաց տո՛ւր շուտով՝ որ Հոս պէտք եղածը կարգադրեմ որ ապրանքները յանձնուին ձեզի:

Որչափ շուտ գրես, այնքան գոհ կը մնամ:
Ընկերական սիրալիր բարեւեներով,

Գո՛ Վ. ՂԱԶԱՐԵԱՆ

Յ. Գ.— Աւելորդ չէ ըսել որ ապրանքները բե- ցուած են Մէսաթըրի «Saghaliens» վրայ, որ մեկնած է ասկէ 16 Մարտին. connaissanceներու մէկ օրինակը ջոյս է, եթէ հարկ է՝ ըսէ որ զրկեմ:

Վ. Ղ.

(1) Կիլիկիայ Պատ. Մարմնի:

4 05 — 7

ԱՐՆԻՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՑԻ ՆԱՄԱԿԸ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՅԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

— 1890 —

(Fédération Révolutionnaire Arménienne)

ԱՐՆԻՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ
Փըննվ — Genève

1905 Ապր. 20

Մարտինին, Աթէնք

Ընկեր,

Յոյն-մակեդոնական Կոմիտէի հետ ոչ մի յարա- բերութեան մէջ մտնել չի կարելի պաշտօնական հոգի վրայ, այս պատճառով աւելորդ ենք համարում եւ վկա- յական ուղարկելը: Պէտք է պարզօրէն յայտնել նրանց մեր կարծիքը յոյն-բուլղարական թշնամութիւններ առթիւ, պէտք է ջարդօղի նրանց համերաշխութեան անհրաժեշտութիւնը՝ ընդհանուր թշնամու դէմ:

Էտաւարը թող մի առժամանակ գայ Բուլղարիա, կ'ապրի կամ Սոփիայում կամ Տիլիպէ:

Ընկերական բարեւեներով՝

ԱՐՆԻՄՏ. ԲԻՒՐՈ

Յ. Գ.— Ի՞նչ եղաւ Վարդանը:

4 17 — 1

ԱՐՏԱՒԱԶԴ ԶԱՆԸՄԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Մարթինի բարձրարժեք մէջ կը գտնեմք մասն այս նամակը — վերջի՛նք — գրուած Արտ. Հանրմեանի կողմէ, 1917ին:

Թէ ի՞նչ գործունէութիւն ունեցաւ Մարթինը 1905էն մինչեւ 1917, բերես մասն 1917էն ետք՝ մեզի կը մնայ փաստօրէն անձա- նոր: Հ. Յ. Դ. Կեդրոնական Արխիւլէն այլ փաստաթուղթերու հրատարակութիւնը հետագային հաւանօրէն յաւելալ լոյս սփռել չայ Յեղափոխութեան գրեթէ «անձամօք» այս գիճուորի կեանքին ու գործունէութեան վրայ:

Ներկայիս մեր տրամադրութեան տակ ունեմք մէկ փաստա- թուղթ միայն, որ եմքադրելու կու տայ թէ Մարթին ի վերջոյ ան- ցաւ Կիլիկիա եւ անուագն քանի մը տարի գործեց այնտեղ, — ձերսը, ինչպէս կը սիրէինք ըսել շրջանի գործօն ընկերները:

Այդ փաստաթուղթը բողոքագիր մըն է, ուղղուած Դաշտի (հաւանօրէն՝ Դաշտային Կիլիկիա, Ատանայի շրջան) վարչի ըն- կերներու կողմէ «դաշնակցական ընկերներու», եւ որ ընդգում կը յայտնէ վիճմայի Հ. Յ. Դ. 4րդ. Ընդհ. Ժողովին մէջ պաշ- տօնապէս ընդունուած ընկերակցական ծրագրին դէմ: Ստորագ- րողներն մէկն է Մարթինը:

Ներկայ նամակէն ետք, իբրեւ յաւելուած Մարթին Մուրա- տեանի բարձրարժեք, կու տամք մասն այդ բողոքագիրը՝ ամբող- յութեամբ (ինչպէս ըրինք միշտ՝ բոլոր նամակներու հրատարա- կութեան ընթացքին): Պատմութիւնը անձամօք չէ: Գիտեմք՝ որ, մտածարարք արեւմտաեայ Մարթիններն ու ընկերները, եւ մա- մաւանք սկզբնական շրջանին, հաշտ աչափ չմայեցան ընկերակ- ցութեան յարմարին, այն յստակ համոզումով՝ որ երկրի մէջ գործնական-յեղափոխական այլ աշխատանքներ ունէր Դաշնակցու- քիւնը, բաւական հետու՝ ընկերային տեսութիւններէն եւ առա- կան աշխարհի միջազգային-յեղափոխական մթնոլորտէն:

Ժամանակաւոր յուզումներն ու կրքերը սակայն շուտով թա- ղաղեցան, եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը, իր բոլոր մարմիններով, ընկերներով, մուրաբաններու փաղանգով՝ շարունակեց իր անխնայ պայքարը, հայ ազգի ազատագրութեան Դաշտի արիմտո պատնէ- շին վրայ:

Հ. Յ.

Պոսթըն, 10 Յունիս 1917

Սիրելի Մարթին,

Նամակդ զիս յանկարծակիի բերաւ՝ թէեւ դիտէի որ այս կողմերը կը դռնուխ: Երեւակայէ, ես ձեզ մե- ռած կը կարծէի: Հոս զալէս վերջ դիպուածով իմացայ որ Մարթին անունով մէկը կ'ապրի եղեր Ամերիկայի մէջ՝ բայց չկրցի որոշապէս ճշդել թէ մե՞ր Մարթինն ես կամ ուրիշ մի ոմն Մարթին: Ինչ եւ է, շատ-շատ ու- բախ եմ ձեզ վերադառնելու եւ յոյս ունիմ շուտով կը տեսնուինք իրարու հետ:

Նամակիդ անմիջապէս չկրցի պատասխանել՝ որով- հետեւ դեռ կարդալու գրեթէ ժամանակ չունեցած՝ ստիպուեցայ Նիւ Եորք երթալ կրկին, ուսկից երէկ գի- շեր միայն վերադարձայ:

Յառաջիկայ շաբաթ օր շատ հաւանականաբար Հոս

եմ. բայց կերակի չեմ կարծեր: Շաբաթ կէսօրէն վերջ մինչեւ ժամը 7 ինծի կրնաս գտնել «Հայրենիք»ի դրա- սենեակը եւ կամ Ազգ. Միութեան Օֆիսը, Ուաշինկ- թըն փողոց, Old South Building, թիւ 405 սենեակը: Եթէ պատահի որ շաբաթ օրը պարտաւորուիմ Նիւ Եորք երթալ՝ ձեզ լուր մը կը ձգեմ:

Սպասելով որ ձեզ մօտէն տեսնուլու հաճոյքը ունե- նամ,

Ընկերական սիրալիր բարեւեներով՝
ԱՐՏԱՒԱԶԴ ԶԱՆԸՄԵԱՆ

ՅԱՒԵԼՈՒՄ ՄԱՐԹԻՆԻ ԲՂՔԱԾՐԱՐՈՆ

Տպագրեալ, մեծ թուղթի վրայ, երկու երես:

ՈՒՂՂԵԱԼ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ

Ընկերներ,

Մենք Լեոնաւոյրի (Երկիր) շրջանի Դաշնակցական ընկերներու ստանալով «Երօշակ»ի Մայիսի համարը, ամբողջովին նուիրուած Հ. Յ. Դ. 4րդ. Ընդհանուր Ժողովի որոշումներու տեղեկագրութեանը, ինչպէս նաեւ ստանալով նոյն Ընդհանուր Ժողովի արձանագ- րութիւնը, միանգամայն ստանալով դրաւոր եւ բերա- նացի մեր պատգամաւոր ընկեր X-ի զեկուցումը, որով կը յայտնէր թէ իրեն իրբեւ մեր պատգամաւոր իրա- տուեք չէ տրուած Ընդհանուր Ժողովին մէջ ձայն ունե- նալու. միւս կողմէն արձանագրութեան մէջ տեսնելով Լեոնաւոյրի կողմէ ձայն նշանակուած, որը անշուշտ չէր կրնար վաւերական եղած ըլլալ, քանի որ մեր ի- կական պատգամաւորի ձայնը չէր այն, իւրաքանչիւրս ամենամեծ ուշադրութեամբ ուսումնասիրելով Ընդհ. Ժողովի ծանրակշիռ որոշումները, որոնք բոլորովին նոր հողի վրայ կը դնեն Դաշնակցութեան քաղաքական դաւանանքը եւ աշխարհահայեացքը եւ իրբեւ հետեւու- թիւն նաեւ կազմակերպութեան գործունէութիւնը, այս նպատակաւ գումարեալ ժողովներու մեր վերջին նիս- տին մէջ հասանք հետեւեալ եղրակացութեան եւ տուինք հետեւեալ որոշումները.

Ա.— Կը բողոքենք մեր շրջանի ձայնը չընդունուե- լուն դէմ. քանի որ ինչ որ ալ ըլլայ մեր արդի ուժե- րուն կարեւորութիւնը Լեոնաւոյրի մէջ՝ համեմատու- թեամբ ուրիշ տեղերու յեղափոխական ուժերու կազ- մակերպական կամ թուական կարեւորութեանը, այնու ամենայնիւ իբր գործունէութեան խիստ կարեւոր վա- յրի մը ձայնը, պէտք էր ունենար իր առանձին կշիռը եւ նշանակութիւնը, մանաւանդ այնպիսի Ընդհանուր Ժո- ղովի մը մէջ, որ Հ. Յ. Դաշնակցութեան ոգիին եւ ուղղութեանը մէջ այնքան հիմնական փոփոխութիւն- ներ կը ձգտէր մտցնել:

Բ.— Մենք հիմնուելով Դաշնակցութիւնը անցեալին մէջ ղեկավարող հիմնական սկզբունքներուն վրայ, որոնք իսկապէս պատշաճ են մեր երկրի եւ ընդհանուր Տաճկահայաստանի քաղաքական, տնտեսական եւ ազգաբարեկան արդի պայմաններուն, ինչպէս նաեւ ընդունելով եւ պաշտպանելով հայկական առանձին հարցի մը գոյութիւնը Տաճկահայաստանի մէջ, իբր ազգայնական հայրենասիրական հարց, որու շուրջը բոլորուած եւ բոլորուելու էին հետզհետէ հայ ժողովուրդի ամէն խաւերը, առանց դասակարգային խտրութիւններու, որոնք անպայմանօրէն անհաշտ են մեր ժողովուրդի արդի կացութեանը, երբ հայ անունը կրող ամէն անհատ անխտիր ենթակայ է հալածանքի եւ անտանելի բռնաբարութեանց եւ երբ մեր ազգային գոյութիւնն իսկ յայտնապէս ի վտանգի է, բոլորովին տարօրինակ կը դաննէ Հ. Յ. Դաշնակցութեան ի պաշտօնէ, Սօցիալիստ կուսակցութեան մը վերածումը եւ միջազգային սօցիալիստական կազմակերպութեան հետ կապուելը ու խառնուելը, եւ ինքզինքը հայ աշխատաւոր դասակարգի կուսակցութիւնը յայտարարելով դասակարգային վնասակար եւ ազգակործան խտրութիւններու սկիզբ դնելը հայ ժողովուրդի զանազան տարրերու միջեւ, որոց շահերը թերեւս հեռի են որոշապէս իրարմէ տարրեր եւ իրարու հակառակ ըլլալէ, այլ ընդհակառակը մի եւ անբաժան են, հաւասարապէս վտանգուած ըլլալով բռնակալ ընտրիմի եւ թիւրք կառավարութեան այլեւ աշխարհածանօթ հայաջինջ քաղաքականութեան առջ:

Մենք բողոքելով այս կէտը շօշափող բոլոր որոշումներու դէմ, կը մնանք հաստատապէս կառչած Հ. Յ. Դաշնակցութեան մինչեւ ցարդ ունեցած յեղափոխական ուղղութեան եւ դաւանանքին, մերժելով սօցիալիստ յեղափոխականութիւնը անուշազն իբր կանխահաս եւ վնասակար տաճկահայ ժողովուրդի արդի կացութեանը եւ հանգամանքներուն հանդէպ, եւ չենք կրնար համակերպիլ բնաւ կամոնագրի մէջ մտցուած այն արամադրութեան, թէ իւրաքանչիւր ոք որ կ'ուզէ Հ. Յ. Դաշնակցութեան անդամակցիլ, պէտք է ամբողջովին ընդունի կուսակցութեան ծրագիրը եւ տաքտիքը: Մենք չենք ծանրանար կովկասեան գործաւնէութեան նախագծի վրայ զոր դեհաստել կամ քննադատել մեր ձեռնհասութեան վեր է, ըստ որում մենք բաւականաչափ տեղեակ չենք անդրկովկասեան հայ կեանքի իրական պայմաններուն ու պահանջներուն: Բայց մենք խորապէս կը զարմանանք որ ինչպէս մեր կովկասեան եղբայրները եւ ընկերները նոյն համաստութիւնը չեն ունեցած խոստովանելու իրենք ալ փոխադարձաբար թէ չեն ճանչնար զէթ մեզի չափ մեր երկրի պահանջները եւ պայմանները. եւ օգտուելով, ինչպէս կ'երեւի Ընդհանուր Ժողովին մասնակցող տաճկահայերու թուրութենէն, անփորձառութենէն կամ համակերպող արամադրութիւններէն, ուղած են իրենց կար-

ծեցեալ պահանջներուն վրայ չափել ե'ւ մեր պէտքերը եւ ըստ այնմ բոլորովին արուեստական եւ բռնագործիկ կերպով սօցիալիզմը պատուաստել մեր կեանքի պայմաններուն հետ եւ այն ուղղութեամբ ալ, աւելի կամ նուազ չափով, փոխել տաճկահայ գործունէութեան ուղղութիւնը: Մենք արդարեւ անջատման չենք փափաքիր, բայց եթէ ճիշդ է թէ Դաշնակցութեան Միութիւնը կրնար պահպանուիլ միմիայն այն գնով որ մենք բռնի սօցիալիստ դառնայինք, եւ տաճկահայ գործելակերպը այսպէս յեղաշրջուէր, ապա ուրեմն մենք չենք վարանիր յայտարարելու թէ այդ պարագային լաւագոյն էր որ անջատուէր տեղի ունենար, քանի որ տաճկահայ եւ կովկասահայ կեանքի պայմանները այդչափ խորապէս իրարմէ կը տարբերին եղեր: Սահմանները չեն ջնջուիր յեղափոխական ներկայացուցիչներու հանդիսաւոր մէկ որոշումով կամ «Իրօջակ» էջերուն մէջ պաշտօնական յայտարարութեամբ մը: Գձուծ ու ճոռոմ հատուածամտութեան ամբարիշտ ոգին չէ որ մեզի կը թելադրէ այս հաւաստումը. այլ ճշմարտութեան սէրը, կեանքի իրականութիւնը:

Արդարեւ եթէ ճիշդ է թէ Կովկասի հասարակական կեանքը այնքան հասունցած է որ այդ տեղ նպատակաւոր մար կը դառնայ սօցիալիստական ուղղութեամբ գործունէութիւնը, ապա ուրեմն սահմանները չեն ջնջուած այլ ընդհակառակը աւելի եւս բաժնուած են իրարմէ, քանի որ տաճկահայ կեանքի դեռ նախնական եւ խիստ յետամնաց դրութեան մէջ սօցիալիստական ո'ւեէ պահանջ տակաւին ծնունդ առած չէ այնտեղ: Միւս կողմէ եթէ երբեք ճիշդ է այն տարածայնութիւնը, որի համաձայն իբր թէ սօցիալիզմը միմիայն Կովկասի պիտի վերապահուի եւ տաճկահայ գործունէութիւնը ըստ առաջնոյն պիտի շարունակուի ազգայնական հողի վրայ, ինչո՞ւ ուրեմն կը պահանջուի որ ամէն դաշնակցական ինքզինքը սօցիալիստ յայտարարէ, ինչո՞ւ Դաշնակցութիւնը ինքզինքը աշխատաւորներու կուսակցութիւն կ'անուանէ, քանի որ իր գործունէութեան կարեւորագոյն մասը կը կազմէ տաճկահայկական գործունէութիւնը: Եթէ կ'առարկուի թէ սօցիալիզմը պէտք է ընդունինք օտար ցեղերու համերաշխութիւնը դիւրացնելու համար, այդ մասին մենք կը պատասխանենք. այդ համերաշխութեան գաղափարը, Դաշնակցութիւնը խիստ կանուխէն ընդունած էր եւ այդ ուղղութեամբ աշխատութիւններ անցեալին մէջ պակաս եղած չեն: Սօցիալիզմը չէ որ առաջին անգամ պիտի մղէ մեզի այդպիսի համերաշխութեան մը, երբ մեր դրացի ազգերը այնչափ տղէտ են որ սօցիալիզմի վրայ ո'ւեէ գաղափար չունին եւ անոր անունը անգամ անծանօթ է իրենց:

Գ.— Մենք ցաւելով կը տեսնենք վերջապէս որ Հ. Յ. Դաշնակցութեան հրդ. Ընդհանուր Ժողովը մերժած է Հնչակեան կեդրոնի առաջարկը ի մասին Հայ Յեղ. Կուսակցութիւններու քօնկրէի զոր ամէն պարագայի

կ'արժէր փորձել, ըստ որում այդ քօնկրէն, յաջողութեան պարագային կարող էր յանդիլ հայ յեղափոխական գլխաւոր կուսակցութիւնների միութեան կամ զէթ համերաշխ գործակցութեան, որու այնչափ սրտեռանդ կը փափաքի ամբողջ հայ ժողովուրդը: Յամենայն դէպս Հայ Յեղափոխական կուսակցութիւններու միութեան կամ համերաշխութեան խնդիրը մեզ անհունապէս աւելի կը շահագրգռէ քան օտար տեղերու մէջ մեզ անծանօթ ենթադրեալ կազմակերպութիւններու հետ համեմատելու: Մենք այստեղ ամէն քայլափոխի կը հանդիպինք Հնչակեան հատուածներու, որոց հետ տեղւոյն վրայ համերաշխութեամբ գործել անկարելի է, քանի որ գործելակերպի մասին անոնց եւ մեր պատասխանատու մարմիններու տուած հրահանգները ու պատուէրները աւելի կամ նուազ կը տարբերին իրարմէ: Այն ատեն միայն տեղւոյն վրայ համերաշխ գործունէութիւն կարելի կ'ըլլայ, երբ արտասահմանի պիւրոնները եւ կեդրոնները գործելակերպի մասին որոշ համաձայնութեան մը յանգած ըլլան եւ որուն համեմատ հրահանգներ զրկեն երկրի ընկերներուն, եւ այս օգտակար արդիւնքը ձեռք կը բերուի քօնկրէով:

Վերոյիշեալ կէտերուն մէջ կը կայանան ահա մեր դիտողութիւնները հրդ. Ընդհանուր Ժողովի կազմին եւ որոշումներուն վերաբերութեամբ եւ խորապէս կը ցաւինք որ զանցառելի եւ երկրորդական կէտեր չեն ստեղծ, այլ էապէս ծանրակշիռ եւ ամենակենսական խնդիրներ: Այս հանգամանքներուն մէջ մեզի անկարելի լինելով Հ. Յ. Դաշնակցութեան ներկայ փոփոխեալ

ծրագրի եւ տաքտիքայի համաձայն գործել, մեզի հետ կապուած ունենալով Հովտի, Պորշի, Հեղեղատի եւ Կարմիր-Լեռի ընկերներուն հաւանութիւնը այս խիստ կարեւոր հարցերու վերաբերմամբ, մենք Լեռնավայրի ընկերներս պահելով հանդերձ մեր Դաշնակցական անունը եւ առանձին կազմակերպութիւնը, կը մնանք բողոքող Ընդհանուր Ժողովի վերոյիշեալ որոշումներու դէմ. մեր այս վերապահ եւ սպասողական դիրքը կը պահենք մինչեւ յառաջիկայ Ծրդ. Ընդհանուր Ժողովը, որու գումարումը բարեբախտաբար որոշուած է ո'չ աւելի ուշ քան տարի մը (1908ի սկիզբը) եւ որպէս զի մեր վերեւ որոշած հայեցակէտները լրջօրէն նկատողութեան առնուին եւ յարգուին, այժմէն մեր կողմէ լիազօր իրաւունքներ կու տանք մեր պատգամաւոր Մ.ի եւ ընկեր Չ.ի, մինչեւ այդ ատեն մեր անունով կատարելու այն ամէն բանակցութիւնները եւ ձեռք առնելու այն բոլոր միջոցները, որոնք կը ձգտին մեզ հասցնել այդ նպատակին:

Ի դիմաց Հ. Յ. Դ. Դաշտի վարիչ ընկերներու
 ԿԱՄՍԱՐԱԿԱՆ ՄԱՅԻԼ ԱՏՈՄ
 ՌՈՒՇՏԻ ԹՈՎՄԱ ԱՇՈՏ ՄԱՐԹԻՆ
 Հովտի Ընկերներու լիազօր
 ՇԱՀՈՒՆԵԱՆ

Դաշտ, 1/14 Դեկտեմբեր 1907



Բ.— ՄԻՆԱՍ ՎԵՐԱԾԻՆԻ ԹՈՒՂԹԵՐԸ

1920 - 22

Հետագայ 26 գրութիւնները կը կազմեն ողբացեալ ընկեր Մինաս Վերածինի քաղաքաբարին այն մասը՝ որ ներկայիս ունիմք մեր տրամադրութեան տակ: Անոնք կը վերաբերին — բացառութեամբ Արմէն Գարոյի երկու նամակներուն — Հայ Յեղափոխական Դաշնակցութեան 1920-21 տարիներու կիլիկեան եւ Հայկական Միջազգայնի գործունէութեան. գործունէութիւն մը՝ որու կեդրոնական գլխաւորէն մէկն էր իմքը՝ Մինաս Վերածինը, իրրեւ անդամ Հ. Յ. Դ. Լեւոնավայրի (Կիլիկիոյ) կեդրոնական կոմիտէին եւ շրջուն գործիչ: Մարքին Մուրատեանի քաղաքաբարի հրատարակութեանն էր, Վերածինի քուղբերը կու գան մասնակի լոյս ստանալ նաեւ աշխարհագրական միւսնոյն շրջանին մէջ, բայց ժամանակագրականօրէն նախորդ շրջանէն 15-20 տարիներ ետք, մեր կուսակցութեան տարած աշխատանքներուն վրայ:

Մանօք անուն մըն է Մինաս Վերածինը, մասնաւորաբար ամերիկահայութեան համար: Անոր կենսագրական գիծերը կու տայ ողբացեալ Գարոյի Հագեան՝ իր «Դեմքեր հայ ազատագրական շարժումէն» գրքին մէջ (Գահիրէ, 1949. էջ 380-386):

Բուն անունով՝ Մինաս Գասապեան, Մինաս Վերածին ծնած է Պարտիզակ, 1882ին: Նախակրթութիւնը ստացած է ծննդավայրին մէջ, բայց 14-15 տարեկանին անցած է Պուլկարիս՝ իր մօրեղբոր մօտ: 1900ին կ'անցնի ժընեւէն, ուր կը մտնէ Հ. Յ. Դաշնակցութեան շարքերը: Կ'երթայ Լոնտոն, ուր կը մնայ բազմաթիւ տարիներ, ուսանելով եւ աշխատելով միաժամանակ: Օսմանեան Սահմանադրութեան հռչակումէն ետք կը վերադառնայ իր ծննդավայրը: Պուլսոյ մէջ կը ծանօթանայ Միսոն Զաւարեանին, որուն հետ 1909ի ձմեռը կ'այցելեն Պարտիզակ: Մինաս Վերածին կը նամարդէ նախ՝ դէպի Կովկասեան Հայաստան, ապա՝ Փոքր Ասիա, Կէլվէ, Պուսսա, Քէօքահիա, եւն. ուսումնասիրելով հայ գաղութները: Լոյս կ'ընծայէ իր «Հայերը Նիկոմիդիոյ գաւառին մէջ» գիրքը, զոր գրախօսած է Յ. Շահրիկեան:

Վերածին կը վարէ նաեւ ուսուցչական պաշտօններ: 1915ին, երբ սնօրէն էր էսկի Շեհիրի վարժարանին, կը կանչուի զինուորական ծառայութեան: Կը ձերբակալուի եւ երեք տարի կը մնայ Գոմիայի բանտը: Կ'ազատուի զինազաղարին, որմէ ետք կ'աննէ Վերածին

կեղծանունը: Ունեցած է նաեւ կուսակցական այլ ծածկանուն մը՝ Յարիաստ (ՀՀՊՊԵՎ Իզմիրի Յարիաստին հետ):

1918էն մինչեւ 1920ի վերջերը՝ Մինաս Վերածին կը գործէ Կիլիկիոյ մէջ: Զուտ կուսակցական եւ գործիչային աշխատանքներու կողմէն՝ ան կը վարէ նաեւ խմբագրութիւնը «Կիլիկիա» թերթին: Իրրեւ Լեւոնավայրի պատգամաւոր՝ 1919ի ամառը կը մասնակցի Հ. Յ. Դ. Գրդ. Ընդհ. Ժողովին (Երեւան): 1920 Օգոստոսին, Վերածին վճռական դեր կ'ունենայ նաեւ Կիլիկիոյ հայկական ինքնավարութեան հռչակման եւ այդ առթիւ ծաւալած ռազմական գործողութիւններուն մէջ:

1921 Հոկտեմբերի ֆրանսիացի ամօթալի համաձայնութենէն եւ Կիլիկիոյ պարպումէն ետք՝ Վերածին, որ արդէն Պուլիս անցած էր, վերջնականապէս կը փոխադրուի Ամերիկայի Միացեալ Նահանգներ, ուր շրջան մը մաս կը կազմէ «Հայրենիք» օրաթերթի խմբագրութեան, կը ստորագրէ տուներ՝ Մեղու Շնորհալի ստորագրութեամբ, ապա նաեւ կը հրատարակէ «Ամերիկահայ Տարեգիրք»ը, եւն.: Հրատարակագրութիւնը կը դառնայ Վերածինի կեանքին անբաժան մասը:

1938ին կ'այցելէ Լիբանան եւ Սուրիա, տեսնելու համար իր հարազատները: Ամերիկա վերադարձին՝ կը հաստատուի Գալիֆոռնիա, ուր կը վարէ «Ասպարէզ» խմբագրութիւնը, մինչեւ իր մահը (1945 Մայիս 26, Սան Ֆրանսիսկո):

Իր կեանքի վերջին տարիներուն, մեր ողբացեալ ընկերը Ամերիկայի մէջ ձեռնարկած էր գրաւոր ու բանաւոր խանդավառ ֆարազութեան մը՝ ի նպաստ Համազգայինի Պէրուի ձեռնարանին:

**

Նամակները թուագրած ենք 1էն 26, Մ. Վ. վերտառութեամբ, ժամանակագրական կարգով: Պահպանուած է ամբողջական հարազատութեան սկզբունքը: Ինչպէս նախորդ շարքին մէջ, այստեղ եւս կու տանք անհրաժեշտ տեղեկութիւններն ու ենթադրութիւնները (անձերու, վայրերու թէ դէպքերու մասին)՝ մեր հետազոտութիւններու սահմաններուն մէջ:

Հ. Տ.

Մ. Վ. 1

ԿԻԼԻԿԻՈՅ Կ. ԿՈՄԻՏԷԻ ՆԱՄԱԿԸ ՄԻՍԻ ԿՈՄԻՏԷԻՆ

Ձեռնածան կրող պաշտօնական թուղթի վրայ. ձեռագիր:

ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՆԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ 1 8 9 0

ԿԻԼԻԿԻՈՅ ԿԵՒՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ ԹԻՒ 142

Ատանա, 8 Մարտ 1920

Հ. Յ. Դաշնակցութեան Միսի Կոմիտէին

Ընկերներ,

Վահկայէն 25 Փետրուար թուակիր եւ ձեռնարկած ժողովի կողմէ «Թաթուլ» ստորագրութիւնով նամակ մը ստացած ենք: Այս նամակին մէջ պարզուած է փոխաբերաբար՝ տեղին ինքնապաշտպանութեան աննախանձ լիճակը, ինչ որ ճիշդ է, միայն մենք տեղեկութիւն չունինք թէ Վահկայի մէջ Հ. Յ. Դաշնակցութեան ենթակոմիտէ կայ. նոյնը կը վկայէ ընկեր Հեղինեան: Գիտենք որ Հոն ընկերներ կան, ընդ որս ընկեր Տօթ. Լօթիկեան, որուն նամակ գրած էինք ասկէ առաջ, բայց ուեւ պատասխան չենք ստացած ցայսօր:

Ուստի կը խնդրենք Կոմիտէէդ որ քննէ եւ իմանայ թէ ո՛վ է նամակագիրը, ինչո՞ւ ձեռնարկուած ձեռնարկով կը ստորագրէ եւ իրապէս ի՞նչ կ'ըսէ:

Մեր ֆիզիքական գոյութեան համար լայն ձեռնարկներ կ'ըլլան դուրսը եւ մենք պատճառներ ունինք հաւատարմ թէ անոնք պիտի արդիւնաւորուին: Մարտին հեռագիր ուղղուած է Կաթողիկոսին՝ ստորագրուած տեղին յարանուանութեանց պետերէն, այն իմաստով թէ հանդարտութիւնը կատարեալ է եւ թէ ֆրանսացիներու կողմէ Մարտը վերագրաւելու փորձ մը լաւ հետեւանքներ պիտի չունենայ Հայերու համար: Արտասահմանի մէջ մեծ զրգուում կայ Թուրքիոյ դէմ, Պուլսոյ մէջ խիստ ճնշում ի գործ կը դրուի Բ. Դրան վրայ արգելիլ տալու համար սարքուած կոտորածները, սակայն ամէն պարագայի տակ «Մենք մեզի պէտք է օգնենք, որպէսզի Աստուած ալ մեզի օգնէ»:

Կը սպասենք ձեր լուրերուն եւ կ'ուղարկենք մեր ընկերական բարեւները:

Ի դիմաց

Հ. Յ. Դ. Կիլիկիոյ Կեդրոնական Կոմիտէի՝ ՏՕԲԹ. ԱՐԱՄ Մ. ՎԵՐԱԾԻՆ (Կնիք)

Մ. Վ. 2

ԳՐԻԳՈՐ ԱԶԻՐԵԱՆԻ ՅԱՆՁՆԱՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ՝ ՄԻՍԱԳ ԱԶԻՐԵԱՆԻՆ

Ատանայի Հայկ. Որբանոցի պաշտօնաթուղթի վրայ. ձեռագիր:

ՀԱՅԿ ՈՐԲԱՆՈՑԻ ՈՐԲԱՆՆԱՄ ՄԱՐՄԻՆ ԱՍՆԱ

Ատանա, 18 Մարտ 1920

Մեծապատիւ Տիար Մ. Ազիրեան Միս

Այսօր Դաւիթին հետը զրկուած նամակս կը հաստատեմ: Ահա այս նամակովս Ձեզ կը ներկայացնեմ Տիար Մ. Վերածինը՝ որ Դաշնակցական Կուսակցութեան գլխաւոր եւ ծանօթ գործիչներէն մին է. թէեւ ունիմ եւ անձնական բարեկամութիւն, սակայն այն տեսակէտէն աւելի, իբրեւ անձուէր ազգային գործիչ պիտի ներկայացնեմ Ձեզի, եւ պիտի ըսեմ որ պէտք է օգտուիք իրմէ: Ինք առ այժմ Միս պիտի մնայ: Այս ատեններս պէտք էր որ այսպէս կարող, եռանդուն եւ անձուէր գործիչ մը գտնուէր Հոն. վստահ եմ Տիար Վերածին մեծապէս օգտակար պիտի լինի Ձեր շրջանակին: Թէեւ աւելորդ է իսկ գրել, սակայն պէտք է որ իւր հանգիստը հոգաք Հոն. ինչպէս ուրիշ շատեր՝ Տիար Վերածինն ալ Միս ինքզինքը պանդուխտ չէ, այլ տեղացի զգայ ու հող չունենայ անձնական հանգիստին համար:

Եղբորս Դաւիթին ալ տուր այս նամակը եւ ընտանեօք հիւրասիրեցէք յարգելի Վերածինը:

Բարեւներով, եղբայրդ՝ ԳՐ. ԱԶԻՐԵԱՆ

Մ. Վ. 3

«Տեղեկատուութիւնք» խորագրուած հետեւեալ գրութիւնը ուղղուած է, ամենայն հաւանականութեամբ, Կիլիկիոյ կեդր. կոմիտէին՝ խումբ մը հայ ոստիկաններու, կամ բարձր պաշտօնատար մը ընթացքին հետեւելու պարտականութիւն ունեցող յանձնարարի մը կողմէ: Չորս ստորագրութիւններէն երկուք բաւական յստակօրէն ընթեռնելի են. «Հայկեանքը կրճայ նաեւ կարգաւորի «Հայկեանք» կամ «Կայիկեանք». չորրորդը բացարձակապէս անթեռնելի է:

ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆՔ

Ա.— Պէտք եղածին չափ չի կրնար պաշտպանել կամ աւելի չուզեր պաշտպանել Հայ Ոստիկանութեան իրաւունքները հանդէպ թուրք ոստիկանապետին եւ քննիչին (զաղիացի):

Հ. Տ.

Բ.— Միշտ կը ջանայ հայ գոմիսէրներու սրբեմնութիւնը վար պահել, փոխանակ հակառակը ընդգրկելու. որու հետեւանօք ի հարկէ կը տուժէ ամբողջ կազմը:

Գ.— Որպէսզի թուրք ոստիկանապետին հետ սրբեմնութեան մի անբաղձալի պարագայ չստեղծուի՝ միշտ կը ջանայ ամենալաւ յարաբերութիւն մշակել ոստիկանապետին հետ, որն ինքզինքը իսկական օգնականը կը համարէ: Ինչ որ՝ բոլորովին հակառակը կը գործէին իր նախորդները:

Դ.— Կարգ մը գործերու մէջ իրեն փառք մը համարեր է հայ պաշտօնեաներու մասին աննպաստ տեղեկութիւններ տալ իր գերագաս Մարմիններուն, որոնք երբեք տեղի չեն ունեցած:

Ե.— Հայ Ոստիկանութեան ոչ մէկ ատեն իր բարոյական աջակցութիւնը չէ բերած, դոնէ քաջալերելու համար զանոնք:

Զ.— Իր բացակայութեան միջոցին եւ կամ հիւանդութեան պարագային պաշտօնապէս չի բարեհաճիր իրեն տեղ հայ մը ձգել՝ որ փոխարինարար պաշտօնավարէ, եւ բնականաբար առիթէն օգտուելով՝ հեթանոս Միւսիլը իրեն իրաւունք կու տայ ըստ քմահաճոյից շարժելու:

Է.— Կուզէ միշտ եւ ամէն պարագայի մէջ ինքնաբերաբար գործել՝ առանց գնահատելու համագործակցութեան եւ կամ խորհրդակցութեան աւելի քան օգտուէտ արժէքը:

ԵԶՐԱԿԱՑՈՒՓԻՒՆ.— Համագործակցութեան եւ աւելի քան ուժեղ հեղինակութեան զգացումներով սրբած մեր ներկայ գրութիւնը Ձեզ կը ներկայացնենք զուտ Հայ Ոստիկանութեան կազմը ուժեղցնելու և հեղինակաւոր դարձնելու գործին մէջ քայլ մը առած ըլլալու մտօք:

ԱՄՄԵՆԱԿ ԳԵԿԵԱՆ
ՍԱՐԳԻՍ ՅԵՆԷՐՃԵԱՆ Ծ. Խ. ՀԱՅԿԵԱՆ
Ատանա, 19-5-20

Մ. Վ. 4
ՊՈԼՍԷՆ՝ Լ. ՄՕՁԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ
Մ. ՎԵՐԱՍԻՆԻՆ

Նամակագիրը Կիլիկիոյ Կեզը. Կոստանթնոպոլսի յաճախարարութեան Գալիս, խօսելու Գոլոսյ Կ. Կոստանթնի եւ կապ հաստատելու Հ. Ծ. Գ. Բիւրոյի հետ (Սրբեմն): Կը տեղեկագրէ իր առաջնութեամբ արգիւնքը: Ձեռագիր, չորս էջ:

2 Յունիս 920, Կ. Գոլոս

Սերեյի՛ Միւսա,
Գալէս ի վեր ունէ կարելիութիւն չունեցայ քեզ դրել այն յանձնարարութեանց մասին որ եղած էր ինծի, որովհետեւ ինչպէս գիտես չէի ուզեր նամակս վրա-

տահիլ փոսթի, եւ դժբախտաբար հակառակ նոյն իսկ «Ճակատամարտ»ի մէջ ըրած յայտարարութեանս՝ ունէ ճամբորդ չըտայ որ հող դար, անոր միջոցով ձեզի նամակս գրելու համար:

Տառերու խնդիրը.— Հոս եկածիս պէս Շաւարշին(1) հետ տեսնուեցայ Ֆրանս. տառերուն համար, զորս արդէն յանձնարարած ես եղեր. անկէ յետոյ տառերը վերջացան ու առնուեցան եւ ընկ. Եփրեմեանի յանձնուեցան որ ձեզի բերէ, մնացորդ դրամն ալ անոր են յանձներ:

Քլիշէնը.— «Կիլիկիա»ի համար քլիշէի մը պատրաստութեան դիմումներ կատարեցի փորագրիչներու մօտ: Քլիշէն խիստ սուղ կը պատրաստեն, այսպէս.— պղինձի վրայ որ դիմացկուն է եւ երկար ատեն առանց աւրուելու կը դիմանայ, լաւագոյնն է, այնպէս որ «Կիլիկիա»ի ներկայ քլիշէն՝ այսինքն թէ գիրերը եւ թէ լեռները, ծովը եւն. միասին 16 ոսկի թղթի կը պատրաստեն. առանց լեռներու եւ միւս մասերուն, այլ միայն գիրերը՝ 10 ոսկի: Իսկ գինկի վրայ որ չի դիմանար եղեր եւ կը գործածուի եղեր միայն պատկերներու համար (մէկ-երկու անգամ դրուելու), կը պատրաստեն 4-5 ոսկի: Առանց յանձնարարելու՝ ուզեցի անգամ մը ձեզի հարցնել թէ ո՛ր տեսակէն կ'ուզէք, որպէսզի ըստ այնմ պատրաստել տամ: Այս մասին կը սպասեմ նամակիդ:

* * * Գօյաճեանի մասին ձեր տուած հրահանգները հոս հաղորդեցի, եւ իր մասին ստացած տեղեկութիւններուս համաձայն անիկա չէ այն մարդը զոր մենք կը փնտնենք, անիկա կանոնաւոր բանակի մէջ գործող զինուորական մըն է որ բնաւ երբեք չի յարմարիր տեղւոյն գործողութեանց: Արդէն ինքը հոս գրած է որ ինչ չի կրնար Կիլիկիա երթալ, որովհետեւ նախ կանոնաւոր բանակով միայն կը գործէ, եւ եթէ հնարաւորութիւն ունենայ՝ Հայաստան պիտի երթայ:

Խնդիրը այսպէս ըլլալով՝ հոս Կ. Կ. ի մօտ պէտք եղածը խօսեցայ որպէսզի Երեւան գրեն մասնաւոր կերպով մէկը զրկելու համար: Հոս երբ ընկ. Ամատունիի հետ կը խօսէի, ինչ որ մինչեւ վերջը նոյն տեսակէտին վրայ մնաց, ան կ'ըսէր թէ մենք հայերս ունէ քաղաք. հետապնդութիւն չունենալով Կիլիկիայի մէջ՝ պէտք չէ նման գործունէութիւն մը ունենանք հոն, մանաւանդ որ, կ'ըսէր ան, ցարդ հետապնդուած սխալ քաղաքականութիւնն էր որ առաջ բերած է ներկայ կացութիւնը: Իրեն կ'առարկէի որ այսպէս կամ այնպէս 150-200,000 հայու կհանգի փրկութիւնը կը պահանջէ որ ամէն գնով մենք աշխատինք զանոնք փրկելու համար: Բայց սոփիստութիւնը թոյլ չէր տար հասկնալու այն ամէնը ինչ որ ես կ'ըսէի ու կ'առարկէի, եւ մինչեւ վերջը կը հակառակէր ինծի եւ համամիտ չէր որ մասնաւոր մէկը զրկուի հող: Ու այս ամէնուն հետեւանքով՝ այս մեր առաջարկին համար միայն չորս ու ցած մաք նամակ մը գրուեցաւ այստեղէն Պիւրոյին, պար-

զապէս իբրեւ միջնորդ Կիլիկիոյ Կ. Կ.ին, հաղորդելով անոր առաջարկը: Ես չէի կրնար եւ ունէ հանգամանք չունէի այդ ուղղութեամբ մասնաւոր նամակ մը գրելու Պիւրոյին, ու միանգամայն այն իրաւասութիւնը՝ որ հող Կ.Կ. իր ժողովին մէջ ինծի տուած էր մինչեւ Երեւան երթալու համար այս նպատակով, ունէ գրաւոր մատուցելու չունէի այդ յանձնարարութիւնը գլուխ հանելու համար: Ինծի կը մնար ձեզի հաղորդել այս պարագան եւ սպասել ձեր հրահանգներուն. կը ցաւիմ միայն որ ինծի միայն այժմ կարելիութիւն կը ներկայանայ ձեզի գրելու:

Ես չեմ կրնար իմ ցաւս չյայտնել նաեւ այն պաղ ու անտարբեր ընդունելութեան որ այստեղի Կ.Կ.ը ըրաւ Կիլիկիայի կացութեան համար ձեռք առնուելիք ունէ միջոցի համար: Այն փոքր հետաքրքրութիւնը որ վերջերս ունեցան, այն ալ առաջ եկաւ վերջին անցու դարձերուն հետեւանքով (զինադադարի կնքում, անկախութեան հռչակում Ամանոսի մէջ, եւն.) երբ Տիկ. Եսայեան հոս ժամանած էր, բայց այդ հետաքրքրութիւնը եղաւ զուտ պղատոնական ու գրեթէ անհետեւանք:

* * * Կիլ. պատուիրակութենէն Տիկ. Եսայեան մէկ քանի օր առաջ մեկնեցաւ դէպի Փարիզ, իսկ Գ. Հերեան արդէն հող ժամանած ըլլալու է ցարդ, իր հետ ունենալով որոշ գումար մը՝ ազգ. մարմիններէն տրամադրուած:

Պալքաններէն ընկ. Մ. Գետրոսեան հոս եկաւ անցեալ օր, անոր հաղորդածին համեմատ՝ Սօֆիայի ազգ. մարմինները հոս հայկ. պանքայի (Թաղւոր Սուքիասեանի) միջոցով Կիլիկիայի համար զրկած են 200,000 լէյ, իսկ Վանայինն ալ 100,000 լէյ:

* * * Կիլիկիայիցները շատ անկանոն կու դան հոս, մինչեւ հիմա գրեթէ մէկ անգամ ստացանք, ան ալ 2-3 թիւ հազու:

* * * Ընկ. Եփրեմեանն ալ մէկ քանի օրէն ճամբայ կ'ելլէ, իրեն յանձնեցինք ջու քարտէսները ալ որ հետը պիտի բերէ:

* * * Անճնակամ.— Ա...նի(2) մասին ջու յանձնարարութիւնները կատարեցի, այս մասին ձերինները արդէն մանրամասն գրած են նամակի մը մէջ, զոր Եփրեմեանին յանձնեցի քեզի տալու համար. այդ նամակէն կ'իմանաս մանրամասնութիւնները ինչորին: Մայրիկը, քոյրիկը՝ օր. Նուարդը, եղբայրը շատ հանգիստ են ու առողջ: Միշտ կ'այցելենք իրենց ու միշտ ալ կարօտով կը խօսին ջու մասին: Գետրոսը դեռ հոս է, կը խնդրեմ որ աշխատիք Գետրոսի Վահագնի վրայ ունեցած դրամն ալ զանձնու, որովհետեւ «Ճակատամարտ»ի գործակալութենէն Գետրոսի վրայ եղած հաշիւը (80-90 ոսկի) դեռ կը մնայ, ու հոս վարչութիւնէն կը զանգատին. Գետրոսը ըսած է եղեր որ Կիլիկիայէն իրեն 100 ոսկի պիտի գայ «Ճակատամարտ»ի, թող անոր

հետ հաշուեն, որով մինչեւ այդ դրամը չգանձուի՝ «Ճակատամարտ»ի դրամը անգանձելի պիտի մնայ:

* * * Տօքթ. Ա. Հայրանեանը տեսայ, լսեցի ձեր վերջին ժողովի Ա. նիստի մասին: Ի՞նչպէս են ընկերները, տօքթ. Մնացականեանը, տօքթ. Հ. Գրիգորեանը, ընկ. Ե. Պատկիսեանը, տօքթ. Վ. Գրիգորեանը: Թերթը ի՞նչպէս կ'երթայ, ո՞վ կ'աշխատի հետդ, վարչութեան համար մէկը առի՞ք, Տիգրանը Մերսինէն հող եկա՞ւ, Վաքդանը ի՞նչ կ'ընէ: Բոլոր ընկերները իմ կողմէ համբուրէ եւ ջերմագին բարեւներս հաղորդէ, ու ինչպէս քեզի նոյնպէս նաեւ ձեր ընկերներուն կը մաղթեմ յաջողութիւն:

Կը սպասեմ նամակներուդ ու «Կիլիկիա»ներուդ:

Ձերմ համբոյրներով՝
Լ. ՄՕՁԵԱՆ

Ծ. Գ.— Հոս դալէս մի քանի օր առաջ տօքթ. Արամը Փարիզ մեկնեց է բժշկութիւնը կատարելագործելու համար:

- (1) Շ. Միսաքեան, այդ օրերու՝ խմբագիր «Ճակատամարտ»ի:
- (2) Նոյնութեամբ՝ բնագրէն:

Մ. Վ. 5
ԵՐՈՒԱՆԻ ՊՈՒԼՏՈՒՓԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Գրուած է մատիտով, բայց խնամուած ձեռագրով:

Յարգելի ընկեր վերածին,

Երէկ չորս ընկերներով (ձիւար) Ձօթու գիւղը դացինք խուզարկութեան, ընկ. Վարդանի հրամանին համեմատ: Կէմիսիւրէկի եւ Ձօթուի մէջտեղ գտնուած բլուրին վրայ յառաջացած միջոցնիս գիւղէն նշմարուելով, գիւղացիք ձիւրով, սայլերով և հետեւակ 25-30 հողի չափ թողուցին փախան: Թէեւ ուզեցինք ետեւ մնացողներուն վրայ յարձակիլ, բայց զառիվար ըլլալուն անկարելի էր ձիւրը քշել: Հետեւաբար, քիչ մը կրակելէ ետք, մտանք գիւղ. քանի մը ժամ տուներու մէջ փնտռուեցինք ընկէ յետոյ չորս սազերով դարձանք Ագարճա ագարակը: Սագերէն մէկը ընկերներուն կողմէ Ձեզի կը նուիրուի. կը խնդրենք ընդունիլ զայն:

Անհրաժեշտ է որ աւելցնեմ թէ Ձօթու գիւղին վերայ առասպելներով կը խօսուէր եւ բաւականին ուժեղ թրջական կեդրոն մը կը նկատուէր: Բայց ինչպէս կ'երեւի՝ մեր ընկերներու կանխօրօք գիւղին սահմաններուն վրայ յայտնուածին հետեւանքով գիւղացիք արդէն տեղափոխուիլ սկսած էին:
Այսպէս, կուսակցական պղտիկ փառասիրութեամբ

մը կը յիշատակենք մեր այս առաջին յաջողութիւնները, եւ կը յուսանք հետզհետէ արդարացնել մեր վրայ դրուած յոյսերը:

Այսօր տղայոց մէկ մասը յիշեալ դիւղը գնաց աւարներ բերելու:

Երէկ երեկոյ մեր բացակայութեան ընկ. Վարդանը եւ Արմաղանեանը եկեր են մեր մօտ. տղայք խանդավառուած են:

27/7/920 Ընկերական յարգանքներով՝ Ազարեա ԵՐՈՒԱՆԻ ՊՈՒԼՏՈՒԹԵԱՆ

Յ. Գ.— Ապտօղլու գտնուած միջոցնու Քափուլու կոչուած դիւղն ալ արդէն այս կերպով մտած էինք: Մանրամասնութիւնները ընկեր Վաղարշակէն կը լսէք:

ՆՈՅՆ

Մ. Վ. 6 Ե. ՊԶՏԻԿԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Նախորդ եւ ներկայ մասնակերէն ի յայտ կու գայ՝ որ Կիլիկիոյ Կնար. Կամիտէն ձեռնարկած է քէ՛ ինքնապաշտպանութեամբ, եւ քէ պատժական-վրէժիմարական բնոյք ունեցող մարտական ձեռնարկներու, Մ. Վերածինի եւ Վարդանի (որու ինքնապաշտպան կը մնայ անձամբ) գործնական զինավարժութեամբ: Գրուած է մատիտով:

Ատանա, 2/8/920

Ընկեր Վերածին,

Կիրակի ջու ապարանքը զրկեցի, — 10 պարկ աւանակներով ալիւրով. կը յուսամ առած ըլլալու ես: Նորութիւն չկայ: Այդ գործի (յետաձգուած) մանրամասնութեան մասին տակաւին ընկ. Տօքթ. Գրիգորեանի հետ շտեմնուեցայ: Ձեր գործունէութիւնը դէ՛ չէ կզեր. միայն թէ ուշադրութիւն բրէք որպէսզի Գաւաթի ցորենի արտերը չվաւին:

Ուժի մասին — Չանկալեան այսօր Ատանայէն մեկնեցաւ դէպի Քաշի: Կարծեմ վաղը ջու ջովդ պիտի գայ Արարէճօյի եւ մօտակայ թուրք դիւղերու մասին խորհրդակցելու համար: Եթէ ուժի պէտք ունիս, կարծեմ թէ ջեղի կրնայ այդ շարժման համար ուժ արածադրել:

Գրաբեր՝ Յակոբ աղա Անուշիկեան (Աճար Ակոր) Ապտօղլու իր բոլոր ցանուածքը կորսնցուցած է: Գէտք եղած աջակցութիւնը չզլանա՛ք. այդտեղ եւ հոս մեզի պէտք կ'ըլլայ. ընկ. Գարեգինին ալ պատուիրէ:

Հոն դանուող բոլոր կուռող ընկերներուն բարեւներս: Թող պզտիկ անյաջողութիւններէ չյուսալըսին. ապագան մեզի համար փայլուն է: Այսօրուան անթիւը

ի միջի այլոց կ'ըսէ. — «Հայերը արեւելեան Անատոլիոյ մէջ շատ մեծ վնասներ պատճառած են Քաթարներուն. նոյնպէս Յոյները Ռզաշէհի(1) 100 ջիւղները դէպի հիւսիս առաջացեր են: Մ. Քեմալն ալ, յուսահատելով, Գոնիայի կուսակալը Կ. Պոլիս՝ կեդրոնական կառավարութեան զրկած է, իր ուժերը ցրուելու մասին համաձայնութեան մը գալու համար»: Գործունէութեան(2) առիթը ձեռքէ մի փակցնէք:

Մնամ ընկերական բարեւներով,

Քոյդ Ե. ՊԶՏԻԿԵԱՆ

(1) Կարիլի է նաեւ կարգալ Ազաշէիք, Ազաշէիք կամ Ոգաշէիք: (2) Մէկ բառ անընթացի (հաւածօրէն չորս տառով):

Մ. Վ. 7 ԿԱՐԱՊԵՏ ԶԱՎՈՒՇԻ ԿՈՅԸ

Խմբատիպ, մէկ էջի վրայ:

ԿՈՅ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

Կիլիկիան Միջագետքի հարաւային մասի հայ ոյժերու անուանով, Կիլիկիան հարաւային Միջագետքը հրոչակած եմ ինքնավար՝ Ֆրանսայի հովանաւորութեան տակ: Մենք սրտովին կը բաղձանք ասպետական Ֆրանսայի բացարձակ պաշտպանութիւնը վայելել: Էն հաշտէր ազգը Ֆրանսան(1) է: Մենք վայելած ենք անոր պաշտպանութիւնը: Մեր ինքնավարութեան պաշտպանութիւնը ազնիւ եւ վեհանման Ֆրանսային կը յանձնենք վստահօրէն:

Մեր ոյժերու անուանով պաշտօնապէս կը յայտարարեմ թէ Միջագետքի բոլոր ոյժերուն մէջ կայ կատարեալ համադրժակցութիւն: Բոլոր ոյժերն ալ փոխադարձաբար իւրացուցած են մէկ մէկու յայտարարած Աքթը:

Կիլիկիոյ հայութիւնը առանց կուսակցական, յարանուանական խարութեան, բոլոր հայ ոյժերուն կամքին պարտաւոր է հպատակիլ համադրժակցելու համար: Ո՛չ մի երկբայութիւն:

Միացի՛ր, հայ ժողովուրդ:

Կիլ. Միջ. հարաւի հայ ոյժերու հրամանատար՝ ԿԱՐԱՊԵՏ ԶԱՎՈՒՇ

3 Օգոստոս 1920 Կիլ. Միջ.

(1) Բնագրին մէջ ընդգծուած բառեր:

Մ. Վ. 8 ԺԱՄԿՈՉԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՎԵՐԱԾԻՆԻ

Դժուար ընթեանի ձեռագրով (մանիշակագոյն մատիտով) գրուած խմբատիպ կՈՅԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՎՐԱՅ (տես Մ. Վ. 7): Ժամկշեմ կը գրէ, ամենայն հաւանականութեամբ, Մ. Գ. Հնչակեան կուսակցութեան անունով, յարելով Գաղակցութեան ինքնավարութեան պահանջին, եւ միաժամանակ ինքնատիպ վերակազմեալ Հնչակեաններու կեցուածքը (ըստ երևոյթի՝ անյուր): Վերի կՈՅԸ, ուրեմն, Հնչակեան կուսակցութեան կողմէ միաժամանակութեամբ ժողովուրդը (միշտ գտնելով ներկայ մասնակի թվանդակութեան):

Գեղեցիկ յոյսերը — արքայ — երկար պիտի չտեսնին: Վստականք Ֆրանսան ռուս Բալի պիտի չտանէր Կիլիկիան Հայաստանի մը ստեղծման ուղղութեամբ: 1922ի սկիզբը, ան բոլորովին պիտի լէր Կիլիկիան, Մ. Քեմալի ուժերուն դիմաց՝ իր անօրալի պարտութեամբ: Հայերը վերստին պիտի մնային առանձին, պիտի չքարկուէին մեր շարքերու, եւ պատաստ պիտի գտնէին մեր ձեռք արարական հիւրընկալ երկիրներուն մէջ միայն:

Յարգելի Գ. Վերածին,

Ձեր Աքթը լսեցինք. թէ եւ բաղձալի էր միասնաբար ընել, բայց ջանի որ եղած էր, մեր կուսակցութիւնը որոշեց ոյժ տալ եւ շարժումը չմեղցնել: Դժբախտաբար Վերակազմեալները իրենց յայտարարութիւնով խնդիրը(1) վերածեցին: Ինչ որ է, այդ կացութիւնը փրկելու համար մենք ալ ստիպուած այս կողմ շահեցինք, ջանքի ժողովուրդը կը կարծէր թէ կուսակցութիւնները բաժնուած են եւ որով բոլորովին վատ տրամադրութիւն [պիտի ունենար] (2) ամէնուն նկատմամբ:

Երէկ ժամը 3ին բոլոր Ազգ. թեմանց(3) ներկայացուցիչները, կուսակցութիւնները եւ բոլոր յարանուանութիւններէն գացին կառավարութիւն եւ պահանջեցին հայկ. կառավ. (4): Պրէճոն եւ Տիւփրէս(5) համամիտ՝ Փարիզ հեռագրեցին: Քաղաքը դրօշազարդուեցաւ:

Այսօր Ֆրանս. ջոնվուա պիտի երթայ(6): Անոնց մի երեւիք:

Այստեղի մեր ոյժերու պետը Միսաք Զավուշն է. կրնաք իրեն հետ խորհրդակցել: Մեզ տեղեակ պահեցէք միշտ:

Քոյդ ԺԱՄԿՈՉԵԱՆ(7)

(1) Դժուար ընթեանի. հաւածօրէն՝ կատակ: (2) Փակագծի մէջ առնուած երկու բառերը բնագրին մէջ չըկան: Աւելցուցած ենք մենք՝ իմաստը ամբողջացնելու համար: (3) Այդպէս է գրուած: Կրնայ ըլլալ Ազգութեանց կամ Երեւն՝ Ազգ. Իշխանութեանց: (4) Կարիլի է նաեւ կարգալ բանակ. բայց ամենայն հաւանականութեամբ՝ պէտք է ըլլայ հայկ. կառավ. (արութիւն): (5) Կարիլի է նաեւ կարգալ Տիւփրէս, Տիւփրէս կամ Տիւփլէն: (6) Դժուար ընթեանի. հաւածօրէն՝ Գարաթալ: (7) Մտաբարձութեամբ մէջ կայ նաեւ անունը, գրեթէ անընթեանի, բայց որ կը սկսի Բ., Ք. կամ Բ. սկզբնաւորով:

Մ. Վ. 9

Մատիտով գրուած, բաւական անթեմ (հաւածօրէն՝ հապնեպով), եւ անստորագիր: Թուական գրուած չէ, բայց ըստ բովանդակութեամբ՝ պէտք է գրուած ըլլայ 3 Օգոստոսին (1920): Ըստ երևոյթի գրուած է Առաջին պատասխանատու ընկերներէն մէկուն կողմէ, եւ ուղղուած՝ Վերածինին: Ձեռագիրը չի մտնիր Վերածինի ստացած միւս մասնակերէն որեւէ մէկուն ձեռագրին:

Սիրելիս,

Գործը սկսուած է ընթացք առնել: Յայտարարութիւնները ցրուեցին թէ ազգային եւ թէ օտար շրջանակներում: Թերթերը վաղը պիտի տպագրեն եւ հինգ-չարթի Ատանան իր արձագանքը պիտի տայ, օրէ օր ընդլայնելով: Գերագոյն Խորհուրդը իրեն համարեց կատարուած փաստի դէմ կանգնած, սակայն իւրացրեց ու ահա իր որոշումները, որ պիտի գործադրուեն անմիջապէս.

1) Այդտեղում գտնուած բոլոր կուսակցութեանց ուժերը համախմբուած են, դառնում ազգային, եւ Աքթը ստանում է ազգային բնոյթ: Այդ առթիւ բոլոր կուսակցութիւնները ստացան համապատասխան հրահանգներ, փոխանցելու համար տեղիդ իրենց ներկայացուցիչներին: Հետեւաբար, իբր այդ յայտնուած եմ ջեղ միւսներէ հետ խորհրդակցելու եւ գործադրելու սոյն հրահանգը:

2) Անմիջապէս լուր արուեց Մերսին՝ իսկոյն Տէօրթ-Յօլ հրահանգել նոյն Աքթը հռչակելու եւ միանալու ձեռք: Մերսինից՝ ամէն տեղ արտաքին աշխարհին պիտի հեռագրուի եղած Աքթը:

3) Ատանան հինգչարթի դրօշակազարդուում է եւ այսպիսով իր դիրքը ճշդում, ճշուումներ չլինելու պարագային Աքթը հռչակելու համար:

Ահա՛ սիրելիս եղածը: Օրէ օր պէտք եղածը կը տեղեկացնեմ ջեղ: Յայտարարութեանդ արած տպաւորութիւնը առաջին բոլորին չմեղցուցիչ եղաւ մեր շրջանակից դուրս բոլորին համար, սակայն ժամէ ժամ սկսեցին հաշտուել պայմանների հետ ու կամաց-կամաց խանդավառութիւնը ծայր է տալիս: Ես վստահ եմ թէ լաւ պիտի ընթանայ ամէն ինչ: Մեր բարեկամների դիրքը առայժմ պարզ չէ, սակայն տպաւորութիւնը դէ՛ չէ երեւում: Վաղը, Թերթերի հրատարակումով, թերեւս շատ բան պարզուի:

Հա՛, չմոռնամ գրել, որ վաղը (չորեքշաբթի 4/8ին) Ֆրանսիական մի շոկատ Capitaine Condé(1) ղեկավարութեամբ Գարա-դաղ(2) պիտի երթայ. աշխատեցէք ճամբաների վրայ չերեւալ, որպէսզի հանդիպումից խոյս տաք:

Ահա առայժմ ընդհանուր դրութիւնը: Գործը սկսուեց. այլեւս շարունակելուց բացի ուրիշ հնար չկայ: Աշխատիք տղաների բարոյականը բարձր պահել. ապագան մերն է:

Ի՞նչ է Չաքըժի հանած յայտարարութիւնը: Չըլայ որ անլուրջ բան անէք. միացրէք բոլոր ուժերը: Խմբագրական գործերը կ'երթան, միամիտ մնա՛: Աշխատիր տղաներին յաճախ քաղաք չուղարկել. կարող են վտանգուել աշտոնը: Սուրհանդակի համար թող գայ մէկ հոգի միայն:

- (1) Կարելի է նաև կարգալ Conté կամ Conté:
- (2) Կարելի է նաև կարգալ Գարա-Դաշ (տեսնել Մ. Վ. 8 նամակ, ծածկագրութիւն թիւ 8):

Մ. Վ. 10

ՎԱՀՐԱՄԻ ՆԱՄԱԿԸ

Հակառակ ձեռագրի եւ ստորագրութեան որչա՞նչ նմանութիւններու, կը զգուշանամք ենթադրել թէ այս նամակը ստորագրողը լեւոնապոլի երթնմի Պատասխանատու Մարմնի անգամ վտարանը կրնայ ըլլալ (Յ. Ա. Գալփայեանը, — տեսնել Մարտի 8 Մուրաւսեանի բարձրագոյնը), իսկ անոր հետագայ (1905էն ետք) կեանքին ու գործունէութեան մասին ներկայիս որեւէ փաստաթուղթ չունիմք մեր տրամադրութեան տակ:

Սերելի՛ Վերածինս,

Քու այդ խիզախ ծեսքի հանդէպ, մարդիկ պահ մը սահմակեցան՝ չկարենալով վճռապէս մտնելու այն քաղաքական ճշգրիտ հասողութեան, որուն դու բարձրացար այնքան գիտակցաբար ու աննայտրոհ...: Նոյն իսկ մեր շրջանակներու մէջ վարանոտ հոգիներու յայտնութիւնը՝ շատ ծիծաղելի երևոյթ մը պարզեց ինքնին, Վերածինս:

Ես համոզուած եմ սակայն թէ ուսումնասիրութիւններուդ հետ դու ինքդ ալ պատմութեան պիտի անցնիս:

Մի քանի օր յետոյ տրամադրութիւնները փոխուեցան սակայն: Պաշտօնական շրջանակներու լաւ վերաբերմամբ՝ ջուր գեղեցիկ աֆֆի հանդէպ, դէմքերն ու դիրքերը հիմնովին փոխեց...: Մարդիկ վերջապէս ըմբռնեցին թէ՛ զիչ յետոյ արդէն շատ ուշ պիտի մնացած ըլլային՝ օգտագործելու համար ջո պատմական բուպէն:

Միջնորդային Քրիստոնեայ Արտակարգ Մարմնի յայտարարութիւնը «Կիլիկիայի» մէջ կը կարդաս:

Երէկ, թրք. զօրանոցի գրաւման փորձը դաճածօրէն վիժեցաւ. վերագրաւորմի յոյսը դեռ բոլորովին չէ՛ մեռած սակայն:

Յանձնարարութիւններդ բոլորը կատարեր եմ արդէն, Վերածինս:

Գրէ՛ երբ որեւէ կարգադրութիւն կամ թելադրութիւն ունենաս ընկելք:

Ընկերական բարեւանքով
Քոյդ եղբայրօրէն՝
ՎԱՀՐԱՄ

Մ. Վ. 11

Գ. ՄԱՐԳԱՐԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Մեծայարգ ընկ. Մինաս Վերածին,

Երկու օր է որ քաղաք կը մնանք. թէև ուշացանք բայց դժբախտաբար մեր ձեռքը չէր եւ պատճառներ կային. կը թուեմ պատճառները:

Ճրանսական իշխանութիւնը կը հրամայէ որ Գ. Վերածինի եւ Չաքըժի խումբերը զինաթափ ըլլան եւ մեզ յանձնուին. ժողովուրդի մէջ այն զրոյցը կար որ իբր թէ խումբին հրամայողները զնդակահար պիտի ըլլան, բայց այս առաւօտ Գ. Շիշմանեանը ինձ ցոյց տուաւ այդ հրամանը որուն մէջ կ'ըսէ որ, Գ. Վերածինի եւ Չաքըժի խումբերը քաղաք մտած կամ դուրս ելած ատենին զինաթափ պիտի ըլլան. կրկին Շիշմանեանի կ'առաջարկուի թէ Դաշմի զինուած ուժը ես կանչէ եւ ինքը «սիրով կը գործադրեմ» կ'ըսէ եւ միայն իւր պաշտօնական զինուորներէն 20 զինուոր ես կը կանչէ եւ քառասունն ալ Ապտի Օզլի կը զրկէ Գ. Չանկալեանի տրամադրութեան տակ. երբ իրեն կ'ըսուի թէ ինչո՞ւ զինած ժողովուրդը ես չեմ կանչեր, ինքը կ'ըսէ որ ես անոնց ոչ կրնամ հրամայել եւ ոչ կրնամ ես կանչել, այդ մարդիկը անկախութիւն հռչակած են. (ես ամբողջիկապի եմ): Հոս ամբողջ քրիստոնեայ զանգուածը այլեւս չի կրնար հանդուրժել այս քաղաքականութեան եւ ահա ստիպուած այդպէս ըրաւ որ արդէն իւր սեփական իրաւունքն է. ազգային միութեան ըրածը լսած ըլլալու էք որ հոս ալ տեղւոյն վրայ անկախութիւն հռչակեցին, թէև շատ դժուարութիւններու հանդիպեցան բայց դեռ ըլլալիքը անորոշ է. մերոնք դեռ կ'աշխատին եւ այս երեկոյ վերջնական եզրակացութեան մը պիտի դան եւ ինձ պիտի հաղորդեն թէ մենք ի՞նչ դիրք պիտի բռնենք քաղաքէն դուրս կամ ներս. ընկ. Տօքները այս երեկոյեան մեզի ուղեգրի մը պիտի տան: Առ այժմ մեր խումբը պէտք է մնայ իւր տեղը առանց գործողութիւն ցոյց տալու ցնոր տնօրինութիւն: Հնչակեանները իրենց ուժերը մեր տրամադրութեան տակ կը դնեն եւ արդէն այդպէս ալ գրեցին Ագարձայնոր ուժերը շուտով պիտի հասնին եթէ կարգադրութիւններ նպաստուորեն: Կրկին հիմա Շիշմանեանը ինձ ուզած է. չեմ գիտեր պատճառը. ես վաղը առաւօտ պիտի կրնամ գալ, օթօմօպիլով: Խստութիւնը չափանց խիստ է. քաղաք զինուած մարդ զրկել իսպառ արգելեցէք: Անցուզարձի մասին զինուորը չտեղեկանայ որ խումբը չցրուի Փրանսացիներէն վախճալով:

Մնամ յարգանք
Ձերդ ընկերաբար
Գ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

Մ. Վ. 12

ՎԱՀԱՆ ԱՐԱՄԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Յարգելի Գ. Վերածին,

Երէկ իրիկուն ուշ ատեն հոս հասանք. մենք այն յուսով էինք թէ մի գուցէ մեր պէտքերն հոս կրնանք գտնել, բայց ցաւալի է ըսել որ չարաչար սխալած ենք. մեզի հետ բերած ցորենը որ Մէսիսի ջրաղացի մէջ ալիւր պիտի շինէինք, դժբախտաբար այն ալ կանգ առած է:

Արդ կը խնդրեմ, եթէ կարելի է մեզի դէժ կէս ջուր ալիւր եւ մի զիչ իւր եթէ ունիք տուէք, մինչեւ մերինը գայ. այն ատեն անմիջապէս կը վերադարձնենք:

Կրկին կը խնդրեմ. 40 հոգի ենք, մեզի մի զիչ օգնեցէք մինչեւ դէժ վաղն իրիկուն. արդէն կը սպասեմ Չանկալեանի որ ըստայնմ մեզի հետ յարաբերութեան պիտի մտնենք ու միասնաբար պիտի տանինք այս ճակատի յաղթութիւնը:

Կը յուսամ թէ չպիտի մերժէք. կանխաւ երախտագրութիւն կը բերեմ մեզի եւ ընկերներուդ:

Ընկերական ջերմ բարեւանքով կը փակեմ տողերս: Ձերդ գաղափարակից ընկեր՝

Սերժան
ՎԱՀԱՆ ԱՐԱՄԵԱՆ

Մ. Վ. 13

ՀԱԼԸՊՃԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Գործածուած բուլքը, միւսը եւ ձեռագիրը շատ նման են Մ. Վ. 11 նամակին: Կարելի է ենթադրել ուրեմն՝ որ Հալըպեան եւ Գ. Մարգարեան նոյն անձերն են: Սակայն երկու նամակները (Մ. Վ. 11 եւ Մ. Վ. 13) նոյն բուլականը կը կրեն. առաջինին մէջ Չաքըժի անունը գրուած է Գ-ով, իսկ ներկայ գրութեան մէջ՝ Գ-ով. զգալի է նաև ռեթ տարբերութիւն մը (ներկայ գրութեան հայերէնը համեմատաբար բարձրագոյն է): Ուստի դժուար է ապահով որեւէ եզրակացութեան յանգիլ:

Ընկեր Վերածին,

Նախորդ նամակներս ստացած ըլլալու ես: Անկից ի վեր տեղի ունեցած դէպքերը հետեւեալներն են. Օգոստոս 4ին Միջնորդային Խորհուրդը հռչակեց Կիլիկիոյ քրիստոնէական ինքնավարութիւնը, ներկայանալով Պրէմոնին հանդիսաւոր յիշատակագրով մը որը հրատարակուած է թերթերուն մէջ: Ճրանսացիները այն օրը ի ներքուստ համակիր իսկ արտաքուստ հակառակ կ'երևէին այդ Աֆֆին: Այն օրը ոչ մէկ միջնորդեալ տեղի

չունեցաւ եւ Պատգամաւորութիւնը բաժնուեցաւ քաղաքավար վերաբերմունքով: Կուրոյին եւ Փարիզի հեռագրուեցաւ նոյն օր եւ նոյն օրը Կուրո պատասխանեց որը վեհաժողովին հաղորդած է Աքթը իր կողմէ նպաստաւոր կարծիքով (avec avis favorable de ma part) Օգոստոս 5ին: Կառավարութիւն կազմուեցաւ եւ ներկայանալով կառավարատուն՝ նախ գրաւեց ոստիկանատունը եւ 3 ժամուայ համար արգելափակեց ոստիկանապետը, նոյնպէս ժանտարմըրին եւ ժանտարմըրիի հրամանատարը. գրաւուեցաւ նաև Վալիի պաշտօնատունը ուր վալին կը բացակայէր. թելեֆոն եղաւ իրեն որ կառավարատուն չգայ: Յետոյ կառավարութիւնը (քրիստոնէական) որուն 6 նախարարները հայ, մէկը ասորի, մէկը յոյն, եւ մէկը Ֆելլաճ էին, ներկայացաւ Պրէմոնին փոխանցում պահանջելու համար: Տէլլաճ ու յոյն նախարարները կը բացակայէին. Պրէմոնին կ'ընդդիմանայ, մերիները կը պնդեն եւ ի վերջոյ զօրավարին հրամանով 2 վայրկեան կը տրուի չէնքէն դուրս ելլելու համար: Մերիները կ'ըսեն որ սուլիի հարուածներով միայն կարելի է զերենք դուրս հանել, սուլիաւոր զինուորներ ներս կը մտնեն եւ սուլիի առջեւն դուրս կը քշեն: Ասոր վրայ զօրավարը յայտարարութիւն հանեց որուն մէկ օրինակը կը զրկեմ զեզի:

Հիմա կառավարութիւն կայ տարբեր շէնքի մէջ: Ազգ. Խորհուրդ մը կազմուեցաւ երէկ գիշեր որ տեսակ մը Սահմանադիր ժողով է: Գործերը կը շարունակուին, Փրանսացիները դեռ ծայրայեղ միջոցներու չը դիմեցին: Այսուհանդերձ դուրսի խումբերուն հանդէպ գէշ վերաբերում կայ: Քու խումբը եւ Չաքըժիին խումբը զինաթափ ընելու հրաման ելած է: Կարելի եղածին չափ Փրանսացիներու հետ բախում ունենալէ պէտք է զգուշանալ: Սուր շրջանը տեսնենք մինչեւ ե՛րբ կը տեւէ. թէև շրջանին սուր ըլլալն ալ յայտնի չէ, սակայն զօրավարին յայտարարութիւնը խիստ ու անարդական էր: Քեզի անգամ մըն ալ կը կրկնեմ՝ քաղաք չգա՛ն մերիները եւ զգուշանան Փրանսացիներու հետ շփում ունենալէ:

ՀԱԼԸՊՃԵԱՆ

Յ. Գ. — Կառավարութեան կազմութենէն առաջ եւ ինքնավարութեան հռչակումէն յետոյ էր որ Պրէմոնը ըսած էր անպաշտօն կերպով թէ Վերածինը զգուշանայ մեզի հետ բախում ունենալէ, եթէ Քր. զինուոր անցնի այդ կողմերը. ներողամիտ կ'ըլլաս որ à tort et à travers գրեցի, ժամանակ չունէի եւ լուր առնելու համար մինչեւ վերջին ժամ սպասեցի:

Մ. Վ. 14

ՀԱԼԸՊՁՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Սիրելի Վերածին,

Այստեղ իրերը այնպիսի վիճակ ստացան որ կարելի չէ լուրջ գործ տեսնել առանց ընդդիմութեան բախելու: Առջի օր երեք հայ հոգեւոր պետերը Ջորայաբին ներկայացան, որ յայտարարած է թէ հայկ. կառավարութիւնը ո՛ր չէնքին մէջ որ նիստ գումարէ՝ անմիջապէս կը պաշարէ չէնքը եւ կը ձերբակալէ: Տամատեանի հետ արդէն յարաբերութիւնները խզուած են եւ միմիայն հոգեւոր պետերն են որ կապը կը պահեն:

Այժմ ընդհանուր տրամադրութիւնը ան է որ Միջազգային բոլոր խումբերը Հաճընի խումբերուն միանան ու Օրիս անցնելով հող հռչակեն անկախութիւնը. կառավարութիւնն ալ հող կը փոխադրուի: Տրամադրութիւնները ըստ այնմ կը պատրաստէք եւ եթէ կրուողի պէտք ունենաք մեզի կ'իմացնէք: Զանազէք մեր տղաքը չցրուել. շարժման հրահանգը կը ստանաք կամ մեզմէ կամ կառավարութենէն: Միւս կուսակցութիւնները արդէն այդ ուղղութեամբ քայլեր առած են:

Համբոյրներով՝
ՀԱԼԸՊՁՅԱՆ

9 - 8 - 920

Մ. Վ. 15

Հաշուական կարգ գրութիւն մը, Մ. Վերածին ստորագրութեամբ, մտախոռով, ճամպի կէտ բուլղի վրայ:

Տրանսպահան	70	հատ	2½	դր. 5ն	175
Գերմանական	15	հատ	7½	դր. 5ն	112½
Ռուսական	15	հատ	5	դր. 5ն	75
					362½

Մեծ. Խաչօ Աղա,

Հաճեցէք 27 կառքի համար երեքական ոսկի վճարել եւ 100 կրակուած փամփուշտի համար 362½ դր. դրամ: Ամէնը՝ 84 ոսկի եւ 62½ դր. դրամ:

Այս առթիւ յարգանքներ:

Ձերդ՝ Մ. Վերածին

14 Օգոստոս 1920

Հայկ. Միջազգային

Մ. Վ. 16

Գ. ՄԱՐԳԱՐԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Մեծայարգ ընկ. Մ. Վերածին,

Դառն կսկիծով սպացինք ընկ. Աւետիսի արկածը, որուն յուղարկաւորութիւնը պիտի կատարենք այսօր ժամը 3-30ին: Հ. Յ. Դաշնակցութիւնը իւր հերոսներու ցանկին վրայ մէկ մը եւս կը բարդէ, որոնք իտէպի ճամբուն զոհուած են եւ վրէժ բառը իբր ժառանգ փոխանցած են ողջ ընկերներու. նոյնը կ'ըլլայ նաեւ ընկ. Աւետիսինը. ցաւը դառն է, բայց նպատակը սուրբ:

Գ. Պրէմիանի յայտարարութիւնը, որ Գ. Շիշմանեանը թարգման կ'ըլլայ իւրացնելով, շատ ցաւալի է որ իւր կողմէ ոչ թէ կրճատած այլ բազմապատկած է՝ ըսելով թէ Դաշնի գտնուած զինուած բոլոր ուժերը եթէ չգան, հակառակ պարագային գնդակահար պիտի ըլլան: Իսկ մեր մեկնելու պարագան՝ իբր թէ շարաթ օր ասկից դուրս պիտի գայ բոլոր ուժը Հաճըն մեկնելու համար: Երէկ կէսօրէն առաջ ժամադրութիւն մը տուած էի Հաճնոյ օգնական ուժերու սպայակոյտին. այն համոզման եկայ թէ դժուար է բաւարար ուժը մէկբերել, սակայն ամէն գնով կ'աշխատին որ ընեն ինչ որ նոյնը ըրած են Ս. Դ. Հնչակեանները՝ ըսելով թէ 300 զինուոր կը տրամադրենք եւ ահա կու գայ պարագան որ խօսքէն գործի պիտի անցուի, մէկ հատ շկայ մէկտեղ. կ'երեւայ մեր ներկայացուցիչն ալ, անոնց պէս, խօսք ըլլալու համար ըսած ըլլալու է: Բայց եւ այնպէս երբ ինծի հարցնող եղաւ, ես ըսի՝ անպաշտօն կերպով կ'ըսեմ մօտաւորապէս 40-60 զինուոր թերեւս տրամադրուի: Գալով իմ ուշանալուս մասին ուրիշ բան չէ եթէ ոչ իմ հիւանդ ըլլալս է, սոսկալի տաքութիւն կու գայ վրաս եւ փորհարութիւն ունիմ. չափէն աւելի ուժասպառ եղայ այս երկու օրուան մէջ. կ'աշխատիմ որ ժամ մը առաջ վերադառնամ, թէեւ բժիշկները կ'ըսեն որ հանդիստի պէտք ունիս:

Մնամ յարգանք ջոյդ ընկ.
Գ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

18 - 8 - 920, Ատանա

Յ. Գ. — Եթէ կրնաս մէկ մը Երէցեանին մօտ գնալ եւ տեսնուէ. երէկ երեկոյ այնպէս ըսաւ Երէցեանը: Թէ՛ շատ կարեւոր բաներ ունիմ ըսելու: ՆՈՅՆ

Մ. Վ. 17

ԳՐԻԳՈՐԻ ԵՐԿՏՈՂԸ

Մտախոռով գրուած, հապնապով, փոքր կտոր մը բուլղի վրայ:

Տիար Վերածին,

Ազնիւ Գ.

Այդ կողմերը հրացանաձուլութիւն կ'ըլլայ կոր. Բ

րու՛ւ ղէ՛մ է կամ թէ ուլքե՛ր են. լի ու լի տեղեկութիւն մը տուր. ի հարկին մեր կողմէն եթէ ուժի պէտք ունենաք դարձեալ տեղեկացուր:

Յարգանք
Ձերդ՝ ԳՐԻԳՈՐ

20 - 8 - 920

Ապտօղլի

Մ. Վ. — 18

ՀԱԼԸՊՁՅԱՆԻ ԵՐԿՏՈՂԸ

Կազմուտ մեղմով, փոքր կտոր մը բուլղի վրայ:

Ընկեր Վերածին,

Իմացանք Գարուլուի ղէպը: Օգնական ուժ անմիջապէս կը հասնի. եթէ մեր դիրքը վտանգուած կը զգաք, Աքարճա քաշուեցէք, հոն կը հրահանգենք: Կեդր. Կոմիտէն նկատի առաւ մեր խումբին միացման խնդիրը եւ պիտի գրէ հարկ եղածը:

ՀԱԼԸՊՁՅԱՆ

21 - 8 - 920

Ատանա

Մ. Վ. — 19

ԿԻԼԻԿԻՈՅ Կ. ԿՈՄԻՏԵԻ ՆԱՄԱԿԸ

Ձիմանջամ կրող պաշտօնակամ բուլղի վրայ:

ՀԱՅ ՑԵՂԱՓՈՅԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ
1890

ԿԻԼԻԿԻՈՅ
ԿԵԿՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
Թիւ 290

Օգոստոս 23, 1920

Սիրելի՛ Ընկեր Վերածին,

Այսօր իսկ Հաճնոյ Հայրենակցական Միութեան հրաւերով բոլոր քաղաքական կուսակցութիւնները իրենց ներկայացուցիչներէ միջոցաւ վերջնական եզրակացութեան եկան արշաւանքի մասին: Վաղը, երկուշաբթի, 750 կամաւորներ, որոնց մէջ է նաեւ մեր խումբը — 100 հոգի — Աղարճա պիտի խմբուին: Մենք խոստացել ենք թէ՛ այդ ժողովում եւ թէ՛ Գ. Տամատեանին, որ մեր խումբը պիտի միանայ եւ ճանապարհուի ղէպի Սիս:

Դու պէտք է ամէն ջանք գործ դնես, որ տղաները չցրուին: Այս գործի յաջող լուծումից է կախուած մեր ազգ. շահերի այս կամ այն կերպ դասաւորուիլը: Այս գործի մէջ Հ. Յ. Դաշնակցութիւնը պիտի ցոյց տայ, որ ինքը իրական արժէք ունի: Լաւ դիտարկ, որ եթէ մեր խոստումը ղրժենք, մեր մինչեւ այսօր արածները,

ցոյց տուած գործունէութիւնը ջուրը ձգած կը լինենք: Թէ՛ Կ. Կոմիտէն եւ թէ՛ ժամանակաւոր կառավարութիւնը մեծ յոյսեր ունին քո վրայ: Եթէ մեր խումբը չմիանայ Հաճնոյ արշաւանքին, կը մնաս պատասխանատու թէ՛ մեր առաջ եւ թէ՛ բոլոր նրանց առաջ, որ ամուր փարած են այդ արշաւանքին եւ դրանից են սպասում ամէն բան:

Սիրում ենք հաւատալ որ ոչ մի դժուարութիւն, ոչ մի սպանալիք չպիտի կարողանան ստիպելու քեզ՝ տեղի տալ եւ ցրել խումբը: Հ. Յ. Դաշնակցութեան դրօշակը միշտ պիտի բարձր պահենք. եւ կը հրահանգենք քեզ, որպէս մեր ամէնից լաւագոյն եւ զիտակից ընկերը, որ վերջին մի ճիգով աշխատիս մեր կուսակցութեան մասնակցութիւնը այս գործի մէջ լաւագոյն կերպով մէջ բերելու:

Ընկեր Շմաւոն Փատոյեանը պիտի մեկնի խմբի հետ: Նրան յանձնիր ամէն բան ու վաղն իսկ խումբը Աղարճա տանելուց յետոյ՝ Ատանա եկ:

Ընկերական ջերմ բարեկներով
Ի դիմաց Հ. Յ. Դ. Կիլիկիոյ Կ. Կոմիտէի
ՀԱԼԸՊՁՅԱՆ ՏՕԳԹ. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ
(Կնիք)

Մ. Վ. — 20

ՎԵՐԱՇԻՆԻ ՆԱՄԱԿԸ

ՄԵՐՍԻՆԻ ԶԻՆ. ԿԱՌԱՎԱՐԻԶԻՆ

Յրամեքէնը պահուած է անփոփոխ:

Monsieur le Capitaine Caulet(1)
Gouverneur du Sandjak de Mersine

En Ville

M. le Gouverneur,

Je vous pris de vouloir bien me pardonner (1), étant déjà indisposé et faute de convenience(2) du bateau d'aujourd'hui, je ne pourrais pas partir ce so r.

Mais je suis prêt de me vous présenter chaque jour sous la garantie de l'Union Nationale Arménienne de Mersine et partir par le premier bateau qui touchera notre port.

Veillez agréer, Monsieur le Gouverneur, mes dévouements les plus distingués.

M. VERADZINE

Mersine, le 8 Septembre 1920

(1) Կարելի է նաեւ կարգալ Coulet:
(2) Պահած եմք անփոփոխ: Յրամեքէն լեզուս նման բան չուծի: Պիտի ըլլայ հաւանօրէ՛մ convenance:

Մ. Վ. — 21

ՀԱՅԿԻ ՆԱՄԱԿԸ ՎԵՐԱԾԻՆԻՆ

Գրուած Grand Hotel d'Orientի պաշտօնակա՞մ թուղթի վը-
րայ: Արհուած է ըստ Երևանի Պոլիս՝ ուր անցած է արդէն
Միհայ Վերածին:

Պէյրուս, 13 Սեպտեմբեր 1920

Մերելի՛ Միհայ,

Վերջին օրերում, դէպքերը այնպէս թաւալուր
ընթացան, որ հակառակ ցանկութեանս, Ատանայից
մեկնեցայ առանց ջեղ տեսնել կարողանալու: Եւ եթէ
այսօր մեր վանեցի տղաները չգային ինձ տեսնելու ու
վերջին անցքերը պատմելու, չո՞ր Պոլիս անցնելու լուրը
նորէն չպիտի իմանայի: Տարօրինակ է Ատանայում մե-
րինների բռնած դիրքը. ահա մի ամիս եղաւ, որ հե-
ռացել եմ ու մինչեւ այժմ ոչ մի բան չեմ ստացել,
գոնէ այնտեղի ու այստեղի գործերը իրար յարմարե-
ցնելու համար: Այդ լուրերը շատ լաւ բան չէր գու-
շակում արդէն, եւ իրօք անցեալ օրը անձնական մի
նամակից, շատ լակոնիկ կերպով գրուած, իմացայ որ
գործերը շատ լաւ չեն երթար հոն. յոյսները դրել են
այստեղի մեր բանակցութիւնների վրայ, ու յուսահա-
տութիւն չպատճառելու համար ոչինչ չեն գրում: Ma
foi!, եթէ Ատանան իւր յոյսը այստեղի բանակցու-
թիւնների վրայ է դրել, կարելի է այժմ գուշակել, որ
ապագան շատ էլ փայլուն չպիտի լինի: Հազար անգամ
պոռայինք հոն, որ այս դիւանագիտական ձեռնարկ-
ները որքան էլ անհրաժեշտ լինեն, այնուամենայնիւ
երկրորդական պլանի վրայ պիտի թողնել, մեր յոյսը
պիտի դնել սեփական ու իրական գործունէութեան վը-
րայ. բայց ինչ անես, որ այս երկրում անհնարին է
ակտիւ որեւէ բան անել, ատաղձ գոյութիւն չունի:
Աստուած՛ իմ, այս ի՞նչ նեխած մթնոլորտ է, այս կի-
լիկեան իրականութիւն կոչուածը: Նոյն բանը կրկնը-
ւեց եւ այստեղ, ուր գործերը շատ էլ լաւ չեն երթար,
թող որ արդէն ես սկիզբից էլ սրանից աւելի չէի սպա-
սում. բնական է որ Ատանայում նրանց ցոյց տուած
վերաբերմունքը պիտի կրկնուէր եւ այստեղ: Այս եր-
կու կենտրոնները տարբեր քաղաքականութեան խո՞մ
չպիտի հետեւէին: Անպաշտօն տեսակցութիւնների մէջ,
որ մէկից աւելի անգամներ ունեցանք, շատ սիրալիր,
բարեացակամ, որոնք սակայն գործնականի մէջ սան-
թիմ չարժեն: Բացի դրանից, մեր այստեղի գործերի
մէջ, շատ վատ դեր խաղաց նաեւ մեր Սահակ խապա-
րը, որը այժմ Չահլէ է նստած. Եւրոպայից բերած իւր
փարաների վրայ չէր հանգստանայ», մինչ այնտեղ,
Ատանայում, մի քանի ոսկու համար սատկում են մե-
րանք: Դրամը իրեն են յանձնել ու ինքը իւր ձեռքով
պիտի բաժնէ եզեր չբաւորներին. թող այդ տարագրե-

ները առայժմ սատկին այնտեղ անօթութիւնից, այդ
ոչինչ, ինքը մինչեւ չկազդուրուի չի կրնար երթալ.
ո՞նց կ'ուզես որ դնայ եղբայր, խեղճ մարդը այնքան
աշխատեց ազգին համար, որ այժմ հոգին ելլելու վրայ
է. ու չի քաշուիր օրն ի բուն քննադատելու ասոր-ա-
նոր: Ինչ կը վերաբերի մեր գործին, իւր յարաբերու-
թիւնները շատ լաւ են մեր բարեկամների հետ, այն-
պէս որ ի վիճակի էր իսկոյն գործերնիս յաջողցնելու,
բայց այդ մասին լսել իսկ չուզեց, այլ նոյնիսկ, այդ
էլ երէկ յայտնեցին ինձ, ջանքեր է գործադրել մեզ չե-
զոքացնելու համար: Քանի անգամներ տեսնուեցայ հե-
տը, անհնարին է որեւէ բան հասկացնել, իւր տրամա-
բանութիւնը տրամագծօրէն հակառակն է Ատանայում
տիրող մտայնութեանը: Ամէն անգամ խօսելիս հետը,
մի խօսք ունի միայն «տղա՛ս, մենք պարտաւոր ենք
միայն ու միայն համակերպելու». շան բնաւորութիւն,
— գլխիդ զարնողի ձեռքերը լղիւր: Ու չի թաքցնում որ
ինքը այդ ուղղութեամբ մասնաւոր ջանքեր է գործադ-
րում: Վերջին տեսակցութեանս մէջ շատ խիստ գտնը-
ւեցայ. ի՞նչ անեմ, այլեւս համբերութիւնս վերջացաւ
ու բաւական սառն կերպով բաժանուեցինք իրարից:
Այդ շան որդիները առիթը ներկայացած են համարում՝
ազգ. իշխանութիւն, Պատ.(1) ներկայացուցչութիւն,
եւայլն ի սպառ տապալել ու ղեկը իրենց ձեռքն անցը-
նել. ու առայժմ, թերեւս նոյնիսկ յաջողին:
Կուսուցիչի դէպքը շատ վատ ազդեց վրաս, յա-
կապէս ճանչցած տղաները՝ Աւետիս շաւուշ, Վաղարշակ
եւայլն, խեղճ տղերք, արժէ՞ր արդեօք այդ նե-
րի(2) համար: Բայց ի՞նչ անես, մեր բռնած դիրքն էլ
անխուսափելի շարիք էր, ուրիշ կերպ՝ անհնար: Բայց
գիտես, սրանից յետոյ, ճիշդն ասած, ես հէջ տրամա-
դիր չեմ, որ մենք առաջուայ էն երեքով գործը շարու-
նակենք. միեւնոյնն է, արդիւնքը բացարձակ գերօ պի-
տի լինի: Պատուով կերպով ամէն ինչ կարելի է անել,
տալ մեր համաձայնութիւնը իւրաքանչիւր ոչ միաս-
կար ձեռնարկի, ու միայն այդքան: Չեմ գիտեր Ատ-
նայում մերինները ի՞նչ են մտածում այժմ, բայց յոյ
ունեմ, որ դասը խրատական լինի: Այստեղ գալուն ի-
մացայ, որ Եւրոպայի մեր մարմնի մօտ նորէն դրամ
ունինք Ամերիկայից եկած. շատ շտապեցնող մի հեռա-
գիր տուի, որ դրամը անմիջապէս փոխադրեն, հակա-
ռակ դէպքում սպանալով ինքս երթալ, առնելու հա-
մար. բարեբախտաբար այս անգամ արագ շարժուեցին
ու անցեալի պէս ամիսներով չօվերին չպահեցին: Հե-
ռագրիս պատասխանը առի, որ ընկերոջ մը միջոցա-
բէկ ճանապարհեցին:
Ատանայի մեր գործերն էլ ինձ շատ են զբաղեցը-
նում: Գիտես արդէն, որ Գալուպչեանը Ֆիդիբազի
նոյնիսկ անկարող է թերթի աշխատանքը տանելու.
անհրաժեշտ է այդ մասին լուրը մտածել, ի՞նչ է տր-
մադիր անելու Պոլիսը, ընկ. Վանարեանը ինչո՞ւ տե-
ղից չի շարժոււմ, եղբայր այդքան անտարբերութիւն

այլեւս շատ է: Այժմ փառք Ալլահին, վտանգ էլ գո-
յութիւն չունի այլեւս, նոր ուժեր են անհրաժեշտ, եթէ
չենք ուզում մեր պոետութիւն ի սպառ թաղել: Գիտես
արդէն, որ Տիգրանն ու ես վաղուց պիտի հեռացած
լինէինք, բայց ո՞նց թողնես հեռանաս այս պայմաննե-
րում: Միւսները թերեւս ծանօթ չեն իրականութեան,
սակայն դուն եւ Լեւոնը յոյս ունեմ, որ ամուր կպած
այդ գործին անպայման բան մը կ'ընէք: Թող որ գրելս
իսկ աւելորդ է, որովհետեւ ինձնից աւելի լաւ գիտէք
մեր պայմանները: Տպարանի խնդիրն էլ պիտի հետա-
մուտ լինել, այժմ նւթապէս ապահով ենք որոշ չա-
փով, կրնանք բան մը ընել. հիմա անհնար է փոխադ-
րել ի հարկէ, սակայն եթէ այդտեղ գործի ձեռնար-
կուի, մինչեւ յաջողուի, արդէն փոխադրութեան
պայմաններն էլ կը լաւանան, յոյս ունեմ:
Փարիզ, Եւրպոս գրեցի ես մանրամասնօրէն,
այդտեղ ու Երեւան էլ դուն կ'ընես ի հարկէ:
Սասունին հոս է, հիւանդ պառկում. այդ տղայի
հետ էլ չգիտեմ ի՞նչ անել: Առողջանալուց յետոյ, ա-
նոր Եւրպոսու երթալը այլեւս միտք չունի, ամենա-
յարմարը կրկին Ատանա դառնալն է կարծում եմ:
Ես մի վերջին անգամ նորէն դիմում ըրի երէկ իմ
գործի համար, եթէ այս անգամ էլ չյաջողուի, չորեք-
շաբթի նաւ կ'առնեմ դէպի Մերսին, je m'en fiche en
fin de compte: Ի՞նչ ուզում է թող այն էլ լինի: Գրիւր
Ատանա:

Լաւ բարեւներ քեզ ու Լեւոնին՝

ՀԱՅԿ

(1) Արդեօ՞ք Պատուիքալութեան (Ազգային): Կարելի է կար-
գալ մաւ Պարս:
(2) Բառ մը՝ անընթացի:

Մ. Վ. — 22

ՀԱՅԿԻ ՆԱՄԱԿԸ ՎԵՐԱԾԻՆԻՆ

Հայկի այս երկրորդ ճամակի ընթացումէն աւելի ես բացա-
յայտ կը գտնայ՝ որ ճամակագիրը կիլիկիոյ պատասխանատու
ընկերներէն է, ու ժամակաւոր կերպով կը գտնուի Պէյրուս՝
ճաղափակ իստակցութիւններ ունեցալու համար ֆրանսական հա-
զարտ իշխանութեանց հետ: Նամակը անգամ մը ես բացայայտ
կը գործնէ ֆրանս. պետութեան ժխտական կեցուածքը՝ «Հայկա-
կան կիլիկիոյ» կազմութեան ձեւով:

Պէյրուս, 17 Սեպտ. 1920

Մերելի Միհայ,

Մի քանի օր առաջ արդէն քեզ ընդարձակ գրեցի,
ու այժմ երբ իմ գործը ի սպառ վերջացաւ այստեղ

(փակագծի մէջ ասեմ, որ շատ անփառունակ գործու-
նէութիւն էր) կը ցանկանայի Ատանա ճանապարհելուց
առաջ արդիւնքը քեզ յայտնել, գիտակ պահելու համար
այդտեղ կեզր. Կոմիտէին ու մեր շրջանակներին ընդ-
հանրապէս:
Վերջապէս ինձ յաջողուց 3 օր առաջ, հակառակ
կաթողիկոսի գործադրած միջոցներին, ունկնդրութիւն
ունենալ Haut-Commissariat(1), ուր մի ժամից ա-
ւելի տեւող այդ տեսակցութեան մէջ, եղած առաջարկ-
ներն ու խորհուրդները չափազանց կաթեգորիկ(2) էին,
որը հակառակ անակնկալ չլինելուն, այնուամենայնիւ
տպաւորութիւնը շատ ծանր էր:
Ահա համառօտ կերպով դրանց իմաստը: Սան-Ռէ-
մոյի որոշումը կիլիկիոյ մասին անփոփոխ է. հաշտու-
թիւնը թուրքիոյ հետ ստորագրուեց այդ պայմանների
համաձայն, ու Ֆրանսիացիք ստիպուած են յարգել ի-
րենց ստորագրութիւնը ու վերահաստատել թրքական
գերիշխանութիւնը Ատանա-Թարսուս-Մերսին, Սիս,
Մարաշ, Հաճըն եւայլն, յանձնելով իրենց երկրի դե-
կաւարութեան գործը եւ հեռանալով այդ հողամասե-
րից: Դիպլոմաթիք ամէն միջոց, փոխելու համար այդ
որոշումը, կը լինի բացարձակապէս ապարդիւն ու ժա-
մանակի վատնում, որովհետեւ որոշումը անդառնալի
է: Հետեւաբար մեզ, հայերիս, կը մնայ 3 միջոց —
(միշտ իրենց խօսքերն է, որ գրում եմ).
1. Համաձայնել թուրք գերիշխանութեան հետ,
ոչ մի ընդդիմութիւն չանել անոր վերահաստատման
ժամանակ: Չեն թաքցնում, որ հայերը այդ ուժիմի
տակ արքայութեան մէջ պիտի չզգան ինքզինքնին,
թուրք կառավարութեան սխտեմը իրենց նոյնքան ծա-
նօթ է որքան մեզ, գիտեն ինչ ասել է թուրքի հպատակ
լինել: Հայերու վերաբերմամբ թուրքիոյ կողմից քա-
ղաքական-տնտեսական ճնշում միշտ պիտի գոյութիւն
ունենայ դժբախտաբար: Ինչպէս միշտ, այս անգամ էլ
հայերու հետ անցեալի պէս գէշ պիտի վարուեն, սա-
կայն մասսայական ջարդ չեն կարող անել, որովհետեւ
իրենք հեռու չեն մեզմէ, եւ յանուն խաղաղութեան
դաշնագրի, յանձնառու են իրրեւ ամենամօտիկ դաշ-
նակից պետութիւնը, սլաւոպանել փոքրամասնութեանց
չահերը (լաւ կը լսե՞ս, փոքրամասնութեան շահերի
պաշտպանութիւնը կայանում է ուրեմն միայն մասնա-
յական ջարդը արդիւնքից, այն էլ ի հարկէ եթէ ժա-
մանակին հասնեն): Այդ պարագային (առաջին կէտի
մասին է խօսքը) խորհուրդ չեն տալիս, որ մինչեւ
այժմ կիլիկիոյ մէջ աչքի ընկնող հայերը, որոնք այս-
պէս կամ այն կերպ թուրքի դէմ են գործել, կուսակ-
ցութեան չէֆեր, ազգ. միութեան անդամներ, եւայլն,
եւայլն, այլեւս մնան թրք. կիլիկիոյ մէջ. իսկ եթէ
կ'ուզեն անպայման մնալ, ապա թող այդ անհաստեղի
անուանացանկը իրենց տանք, որոնց կեանքի եւ կայքի
ապահովութեան garantie(3) կը պահանջեն թուրք
կառավարութիւնից:

2. Իրենք երկիրը ձգելուն, թող հայութիւնն էլ իրենց հետ գաղթէ, երբեք արգելք չպիտի հանդիսանան այլ ընդհակառակը սիրով ցոյց կը տան ամէն տեսակ օժանդակութիւններ:

3. Պատերազմել թուրքիոյ հետ, վանել այդ վերահաստատուած նոր ուժերը եւ հռչակել Կիլիկիան անկախ, եթէ մեր ուժերը կը ներեն այդպիսի մի գործի ձեռնարկելու, սակայն այդ գործին սկսելէն առաջ՝ հայութիւնը թող համոզուած լինի, որ իրենցից մեզ բացարձակապէս ոչ մի օժանդակութիւն չպիտի գայ, ինչպէս արդէն յայտնեցին. այդ պարագային եւս ստիպուած են կրկին յարգել իրենց ստորագրութիւնը ու ձգել երկիրը եւ հեռանալ մեզ թողնելով թուրքին հետ դէմ առ դէմ: Այդ ժամանակ այլեւս կոտորած չէ, այլ կամովին հռչակուած պատերազմ, ուր ի հարկէ իրենց փոքրամասնութեանց պաշտպանի դերի մասին այլեւս չի կարող խօսք լինել:

Այս յայտարարութիւնները անելուց առաջ արդէն մի քանի անգամներ կրկնեց թէ, որովհետեւ բոլորէն շատ կրթիկ(4) է մեզ համար, ինչպէս եւ ճակատագրական, այդ պատճառով ինքը եղաւ բացարձակապէս անկեղծ եւ պարզեց ամբողջ իրականութիւնը, որքան էլ որ սեւ լինի այդ, որպէսզի մենք ժամանակ ունենանք լուրջ կերպով անդրադառնալու այս խնդիրները վրայ ու այնպիսի եզրակացութեան դալու, որ մեր Ֆիզիքական գոյութիւնը մի անգամ եւս խնդրոյ առարկայ չդառնայ եւ բացի այդ որպէսզի մենք երեւակայական յոյսեր չունենանք իրենց վրայ, որպէսզի ապագայում խորը հիասթափութիւնների չենթարկուենք, եւայլն, եւայլն:

Ապա սկսեց մի շարք խորհուրդներ տալ, յայտնելով նախ, որ գաղթի մասին շատ չմտածենք, որովհետեւ մի անգամ երբ հայութիւնը դատարկեց կիլիկիան այդ հողամասերը, երկրորդ անգամ այլեւս հոն դառնալը կամ որեւէ ձգտում այդ հողերի վրայ երազ է, հետեւաբար գաղթել այդ տեղերէն, հայութեան համար կը նշանակէ վերջնականապէս թաղել Կիլիկիան հարցը: Թուրքիոյ հետ պատերազմել նաեւ՝ կը նշանակէ դիմել մի շատ վտանգաւոր aventure(5), իբր թէ իրենց շատ լաւ ծանօթ է մեր ուժերը, ինչպէս եւ թուրքերի, հետեւաբար միտք չունի այդ արդէն առանց այն էլ տանջուած ժողովրդի բեկորներին մի անգամ եւս վտանգի առաջ դնել, նամանաւանդ որ, ինչպէս կրկնեց, իրենք եւ ոչ մի օժանդակութիւն պիտի ցոյց տան այդ պարագային: Հետեւաբար մեզ կը մնայ միայն առաջին կէտը, այն է՝ հպատակուել թուրք գերիշխանութեան. ցաւալի է ի հարկէ, սակայն պէտք է համբերութիւնը ունենալ տանելու բոլոր բարոյական ու ֆիզիքական տանջանքները մի տարի, 5 տարի թէ 15 տարի չգիտեմ, մինչեւ որ մեզ համար էլ արեւը ծագէ, որովհետեւ թուրքիան, միեւնոյնն է, դատապարտուած է մահուան, չի կարող այլեւս երկար դիմանալ:

Ահա սիրելիս այն բոլորը ինչ անցեալ օրը լսեցի եւ որի բուն իմաստը, առանց իմ կողմից որեւէ commentaire(6) աւելացնելու, յայտնեցի քեզ: Ինքը էլ լաւ տեսնում ես, թէ որպիսի դիլեմա(7) առջեւ ենք կանգնել ու ի՞նչ ձեռով պիտի դուրս գալ այս բոլորի տակից, որպէսզի չտուժենք շարաշար կերպով: Իրօք որ այս վերջիլած 3 solutionները(8) ունենք մեր առջեւ, սակայն ո՞րը ընտրել: Դուն ինքը էլ լաւ կը յիշես, որ մի պարզ proclamation(9) հրապարակելու համար տեղական թուրքերու հետ միասին, քանի մը ամիս առաջ, որպիսի՛ ուժեղ ընդդիմութեան հանդիպեց ժողովրդի կողմից: Հետեւաբար մտածել մի բոլոր, որ այս ժողովուրդը կարող է նոր պայմանների յարմարուել ու վերըստին թրքական լծին ենթարկուել՝ դժուար է ի հարկէ: Նոյնիսկ եթէ ղեկավար տարրը այդ եզրակացութեան դայ, ես վախճամ որ վերջին բոլորէն ժողովրդի ընդվզումի առջեւ կտնուենք, որից կարող ես երեւակայել ի հարկէ թէ որպիսի՛ անարշի(10) պիտի յառաջ գայ ու ամէն ինչ տակն ու վրայ անի:

Կազմակերպուած որեւէ լուրջ դիմադրութիւն էլ իմ խելքին շատ չի պառկում, որովհետեւ այս անիծուած Կիլիկիոյ հայութիւնը պոռոտախօսութիւնից բացի ուրիշ բան չգիտէ անել, ատաղձ դոյութիւն չունի, որի վրայ կարելի լինի յոյս դնել. ուրիշ բան է ի հարկէ՝ եթէ դրսէն լուրջ ուժեր երկիր դան, բայց մեր արտասահմանի վրայ ունեցած հաւատն էլ օրէ օր աւելի է նուազում: Իսկ գաղթի մասին չեմ խօսում, այդ առթիւ գիտես իմ կարծիքը: Ես առայժմ որեւէ եզրակացութեան չեկայ, չգիտեմ ի հարկէ մերիները Ատանայում ի՞նչ են մտածում կամ ի՞նչ դիրք պիտի բռնեն: Ի՞նչ էլ որ լինի, այնուամենայնիւ պատասխանատուութիւնը այս անգամ աւելի խոշոր է, պէտք չէ à la légèrè(11) վերցնել խնդիրը: Հետաքրքիր է ձեր, տեղիդ Կեդր. Կոմիտէի եւ ընդհանրապէս Պոլսոյ շրջանի կարծիքը: Այդ մասին անպայման գրեցէք Ատանա. յոյս ունեմ, որ ժամանակ կ'ունենանք ստանալու:

Կաթողիկոսի կարծիքները ուղեցի շոշափել, որոնք շատ փոփոխական են. այդ մարդուն ես աւելի խելացի կը կարծէի քան ինչ որ է: Ատանա նամակներ էր գրել Haut Commissariatում տեսակցութիւն ունենալուց յետոյ, սակայն նամակները անպատասխան են մնացել, որից չափազանց դժուար է: Ինձ հետ ընդհանրապէս réservé(12) է: Իսկ Ատանա չի ուզում գնալ վախճալով վատ ընդունելութիւնից: Բայց ամէն պարագայի տակ այդ մարդու հոն դալը առ այժմ փնասակար չի կարող լինել, սակայն կրնան դործերը այնպիսի ընթացք ստանալ, որ ընդհակառակը թերեւս օգտակար լինի:

Ես սպասում եմ առաջին նաւին, վաղը-միւս օրը անպայման կ'երթամ, եթէ Կարա-Սաչի ճամբան բաց գտնեմ շատ լաւ կը լինի, որովհետեւ վերջին օրեր այստեղ լուրջ տարածանութիւններ կան, իսկ անցեալ օրը Haut-Commissariatում յայտնեցին՝ որ Ատանան

նախկին պէս նորէն կոխներ թատերավայր է դարձել:

Լաւ բարեւներ քեզ եւ Լեւոնին՝ ՀԱՅԿ.

- (1) Բարձր-Քոմիտէութիւն, — Արեւիլի ֆրանս. հոգատար քարձրագոյն իշխանութիւնը (Պէյրոս):
- (2) Բացարձակ, վճռակամ (ֆրանս. բառ):
- (3) Ապահովութիւն:
- (4) Ճգնաժամային (ֆրանս. բառ):
- (5) Արկածախնդրութիւն:
- (6) Մեկնարանութիւն:
- (7) Սրկընտրամբ (ֆրանս. բառ):
- (8) Լուծում:
- (9) Յայտարարութիւն:
- (10) Անիշխանութիւն (ֆրանս. բառ):
- (11) Քեքուտէն:
- (12) Վերապահ:

Մ. Վ. — 23

Մի՞նա վերածի՞նք թուրքերում մէջ կը գտնեմք Յանի հետեւալ ստացագիրը (ձեռագիր, սեւ միւսնով).—

Հոկտեմբեր 10-11, 920

Ստացագիր

Ստացել եմ, ընկեր Վերածինից (13½) տաս երեք ու կէս ոսկի թրք. թղթաղրամ, Հաճնոյ արշաւախմբի զինուորներին բաժնելու. (ճաշի համար):

Արշաւախմբի հարիւրապետ ՅԱԿՈՒԲ ԽԱՉԻԿԵԱՆ

Մ. Վ. — 24

Կիլիկիոյ Կ. ԿՈՄԻՏԵՒԻ ՆԱՄԱԿԸ

Գրուած է Կիլիկիոյ Կեդր. Կոմիտէի պաշտօնաթուղթի վրայ: Վերջն բառը կ'աւարտի էջի վերջին տողին վերջաւորութեամբ: Ստացարութիւն չկայ: Կրճայ ըլլալ որ գոյութիւն ունեցած ըլլալ երկրորդ թիւրք մը, այժմ կորուսած:

№ 368

Ատանա, 4 Յունուար 921

Ընկեր Մ. Վերածին, Կ. Պոլիս

Ընկեր,

Ստացանք անցեալ Նոյեմբեր 21 թուակիր Ձեր նամակը: Ստուգեցինք որ Մերսինի Կոմիտէի կողմէ ձեզի 50. կդ. ոսկի վճարուած ըլլալու պարագան, անհիմն է եւ հետեւանք թիւրքիմացութեան մը, որ այժմ լուսաբանուած է եւ հաստատուած որ Ձեզի այդպիսի վճարում մը չէ եղած:

Մերսինի Ձեզիէաններէն Ձեր ստացած 450 ոսկի թղթաղրամի եւ զՁեզ միշտ Կ. Կ. ի անդամ նկատելու յայտարարութիւնը, Կիլ. Կ. Կոմիտէիս խորհրդակցութեանց նիւթ դարձաւ եւ միաձայնութեամբ որոշեց հետեւեալը.

«Նկատելով որ ընկեր Մ. Վերածինի հեռացման միջոցին, Եզրիպոս անցնելու որոշ յանձնարարութիւններ ըրած էր իրեն՝ Մարմինս, եւ այդ ուղղութեամբ ընկեր Վերածին, մինչեւ անցեալ Հոկտեմբեր, աշխատութիւններ կատարած էր, պահելով Կիլ. Կ. Կ. ի գործիչի հանգամանքը, նկատելով որ Կ. Կ. իս այդ առթիւ գրած նամակը մինչ այդ թուականը հազիւ ստացած կ'ըլլար ընկեր Վերածին, որով իր Եզրիպոս մեկնելը աւելորդ կը նկատուէր, Մարմինս միաձայնութեամբ որոշեց մինչ Հոկտեմբերի վերջը վճարել իր ուժերինը, ինչպէս նաեւ Ատանայէն Պոլիս իր ճանապարհածախսը: Այդ թուականէն յետոյ դադարած նկատել ընկերը»:

Մ. Վ. — 25

ԱՐՄԵՆ ԳԱՐՈՅԻ ՆԱՄԱԿԸ Մ. ՎԵՐԱԾԻՆԻՆ

Մ. Վերածին կը գտնուի արդէն Միացեալ Նահանգներ եւ կ'աշխատակցի «Հայրենիք»-ին: Հայաստանի Հանրապետութեան Ուսման Կոմիտէի գեղարտիստ Արմէն Գարոյի այս նամակը գրուած է Հայաստանի խորհրդայնացումէն եւ ֆետրուարեան դեպքերէն ետք, 1920-21 թիւսը իրադարձութիւններու գրեթէ անմիջական տպաւորութեան տակ, եւ կ'արտայայտէ անշուշտ գուտ անհատական մտածումներ:

Այս նամակը կ'արտայայտուած է 1946 «Հայրենիք» տարեգիրք-տոմարացի մէջ (էջ 194-197): Ներկայ տեքստը ամուսնու է բընագրէն:

Վաշինգթոն, 9 Դեկ. 1921

Սիրելի Վերածին,

Նախ իմ complimentներս(1) քու Մեղու Ծնորհալի կ'ընդունելու համար. քանի կ'երթայ այնքան համով կը դառնայ թերթին այդ մասը. «Գուտ կուտանը» եւ Օտեանի մասին ըրածդ առաջարկը all right(2) էին:

Այս վերջին շարաթերս կանոնաւոր կը հետեւիմ Հ-ին(3) Վ. Ահարոնեանի թղթակցութիւնները հետաքրքիր են իբրեւ information(4), բայց ես քեզ խորհուրդ պիտի տայի իրեն գրել որ շատ քաջաբանութեամբ չզբաղուի. օրինակ՝ Յ. թուականեանի մասին մի քիչ չափէն աւելի էր քաջաբան:

Եւ առհասարակ ես այն կարծիքի եմ որ մեր մասուլը շատ զբաղուելու չէ անցեալ տարուայ տիրուր դէպքերով. ներքին կիրքերը զբաղուելն օգուտ չկայ, գալիքի մասին մտածենք եւ ելք մը գտնենք իրար հակընդդէմ, որ հնարաւոր դառնայ դարձեալ իրար մօտ հաւաքել մեր ժողովուրդի բոլոր actif(5) ուժերը: Մի քանի խօսքով բացատրեմ միտքս:

Բողոքներով, սոցիալիզմ եւ մի շարք ուրիշ իզմերը մեր մտաւորականներուն գլխուն մէջ գոյութիւն ունին միայն եւ մեր իրականութիւնը բոլորովին խորթ է այս բոլորին, հետեւաբար թողնենք այդ իզմերը իրենց տեղը մեան եւ գանձ մեր էական խնդրին, որը ամէն հայու սրտին մօտիկ է՝ հայ ժողովուրդի ֆիզիքական գոյութիւնը եւ անոր ազատ ապրելու տարրական պահանջին բաւարարութիւն տալու խնդիրը: Ինձ կը թուի թէ հնարաւոր է այս հարցին շուրջ իրար հասկնալ եթէ մեր պարոն մտաւորականները իրենց capriceները(6) մէկ կողմ թողուն:

Ինչպէս կը լսենք, Մոսկուայէն եկող Հայաստանի նոր-փրկիչները եւս, ինչպէս նախորդ Դաշնակցական կառավարութիւնը, եկել են այն եզրակացութեան թէ Հայաստան ըստած երկիրը այնքան յետամնաց է տընտեսական եւ քաղաքակրթական տեսակէտից որ ներկայ պայմաններուն մէջ անհնարին է զբաղուիլ այդ իզմերով, հակառակ մեր պարոն մտաւորականներուն բուն ցանկութեանը. եւ յակամայիս լծուել են ամենատարրական աշխատանքին՝ ժողովուրդին հացն ապահովել եւ չթողուլ որ թուրքն ու թաթարը մեզ կոտորեն: Այս երեք տարիներու դառն փորձերն էին հարկաւոր մեր աղաներուն մեծամիտ ուղեղներուն մէջ մի ջիւճ bon sens(7) մտցնելու, սա է ցաւալին՝ մեր իրականութեանը մէջ: Տասնեակ հազարաւոր համալսարանականներու սերունդ մ'ունինք եւ հազիւ մի քանի տասնեակ հաւասարակշիւ մարդիկ: Ինչ որ է, ողբալով չենք կրնար փոխել այս տխուր կացութիւնը, մինչեւ այս անհաւասարակշիւ սերունդը չհեռանայ ասպարէզէն, մենք մեզ չենք գտնելու, եւ դրա համար ժամանակ է հարկաւոր: Իսկ մինչ այդ մենք ընկիւղներ ունինք, եւ իմ կարծիքով ժամանակն եկած է լուրջ քայլեր առնելու այդ ուղղութեամբ. առաջին՝ ամէն կերպ աշխատիլ չխորացնել այն բաժանումները եւ ստորաբաժանումները որոնք ստեղծուեցան մեր ժողովուրդի զանազան խաւերուն մէջ մեր անհարազատ մտաւորականներու զէֆին համար եւ ի վնաս մեր գործին, Արեւմտահայ-Արեւելահայ, Աշխատաւոր եւ ոչ-Աշխատաւորներ, էս-էռներ(8) եւ Սոցիալ-Դեմոկրատներ, էլ ո՞ր մէկը յիշեմ. ասոնք բոլորը որ մաղես մէջէն երեք գոյնի նիւթ գուրս կու գայ, առաջին՝ հողի գոյն ունեցող մեծ մասայ մը, բուն հայ ժողովուրդը, պատմութեան ինէր-սիով մեզ հասած իւր բացասական եւ դրական կողմերովը. երկրորդ՝ կարծիք արեւն ունեցող փոքրաթիւ մտաւորականներու խումբ մը, որոնք կ'ապրին մեր իրականութեան պիտակցութեամբը եւ այս փոքրաթիւ սերունդն էր որ հայ ազատագրութեան դարձնողն եղաւ. յետոյ՝ մեծաթիւ բայց բազմազոյն մտաւորականութիւն մը, որը ձեռքերը ճէպը դրած անտարբեր հանդիսատեսն էր՝ վերջին 20-30 տարուայ մեր պատմութեանը եւ այսօր մէջ է ընկած իշխանութեան հոտը առած (Նուպարէն մինչեւ Միտանիկեան մէջը առած):

Ինձ համար անսպասելի չէր այն ինչ որ կատարուեց 1921ին. ճիշդ մէկ տարի առաջ այս տխուր դէպքերէն՝ կը զգայի որ այս հերիսայի հոտին վազող նորագոյն շերտաւորները թափելու էին մեր այսքան դժուարութեամբ եփած հերիսան, խեղճ Խրիմեան Հայրիկին ակնարկած հերիսան: Թողնենք ապագայ սերունդին որոշելու թէ ով ո՞ր չափով մեղաւոր էր այս կատարուած դժբախտութեանց համար եւ սկսինք նորէն մեր հերիսայի մասին մտածելու:

Նամակս երկարիլ սկսաւ. կարճը կ'ապեմ: Առանց ուսական actif(5) աջակցութեանը մենք հնարաւորութիւն չենք ունենար, գոնէ կիսով չափ իրականացնելու մեր ազգային իտէալը՝ ունենալ սեփական հայրենիք մը, անկախ կամ թէկուզ կիսանկախ, ուր մեր ժողովուրդը հնարաւորութիւն ունենայ իւր հալալ աշխատանքով ապրելու, հեռու թրքական սուրէն ու հուրէն: Այս տեսակէտէն մեր Երեւանի կարմրաւոր ախպարները շատ աւելի réaլ(9) հողի վրայ են կանգնած... Եղածը եղաւ, Մոսկուան մեր հերն անիծեց ընկերք՝ Գարապէտի միջոցաւ: Ներկայիս Մոսկուան «բարեկամ» է Անգորայի հետ, բայց այս բարեկամութիւնը կարող է 24 ժամուայ մէջ ազդէսիվ(10) թշնամութեան փոխուիլ եւ օրին մէկը աչքերնիս պիտի բանանք և տեսնենք որ ընկերք՝ Լենինը հայկական պահանջները ձեռք առած Անգորայէն բաւարարութիւն է պահանջելու: Պատմութեան ա. ու բ. ը այդ կ'ըսէ, եւ այդ օրը շատ մօտիկ է իմ կարծիքովս:

Արդեօք մենք պատրաստ ենք այդ դրութենէն օգտուելու համար. — ինչպէս կը տեսնեմ՝ ոչ: Պարսկաստան, Պոլիս եղողները դեռ կ'ապրին Փետրուարեան օրերու անմիջական տպաւորութեան տակ. գոնէ մենք՝ աւելի հեռուն եղողներս աշխատինք հնար եղած չափով առարկայօրէն մօտենալու ստեղծուած կացութեանը: Նախ խոստովանելու ենք մեր այն սխալը՝ որ բարձր թողի էինք ըրած Ռուսական facteurի(11) նշանակութիւնը մեր վերջին 3 տարուայ գործունէութեանց ընթացքին եւ լուրջ վերադաճատութեան ենթարկել բոլոր այն facteurները(11), որոնց անմիջական գործակցութեամբը միայն լուծուելու է մեր հարցը: Երկրորդ ծաղրելու է թէ՛ մերոնց եւ թէ՛ բոլշեւիկներու այն հոս-հոսութիւնները, ինչ կը վերաբերի ընկերաբանական այն պոռոտախօսութիւններուն՝ որ մօտայի կարգ են անցած: Երրորդ՝ ամենախիստ ջննդատուութեան նիւթ լինելու է մեր այն լեւանթէներուն ընթացքը (Նուպար, Պատրիարք եւ բոլոր պահպանողական տարրերը), որով անոնք 3 տարի շարունակ փորձեցին երկու հատուածի բաժանել մեր կոտորակուած փոքրաթիւ ժողովուրդը:

Ուսքին կարճը ըսի բայց էլի երկար դուրս եկաւ: Աւելի սղմեմ միտքս՝ Միացեալ Անկախ Հայաստան, ուսս պետութեան անմիջական պաշտպանութեամբ եւ բարեկամ դաշնակից պետութեանց բարոյական եւ նի-

թական աջակցութեամբ (դաշնակից պետութիւն ըսելով Անգլիա եւ Ամերիկա ըսել կ'ուզեմ): Այս է միակ ճամբան, եւ ինձ թուում է որ Երեւանի մեր ախպարներէն շատերուն էլ միտքը այս է, բայց շատ իշավարի տարան իրենց գործը: Ես յոյս ունեմ որ այս Փորմիւլին վրայ ասոնց հետ համաձայնութեան եզր մը կրնանք գտնել, բայց բնաւ յոյս չունիմ որ կարողանանք պուսական լեւանթէներուն համոզել ձեռք քաշել իրենց բիւզանդական զէվզէկութիւններէն:

Մէկ խօսքով՝ քաջըռուքներուն վերջ տալ, պնդել երկու հողամասերու միացման եւ մէկ հայ կառավարութիւն ունենալու անհրաժեշտութեանը վրայ, եւ եթէ կ'ուզեն mandataire(12) մ'ունենալ մեր հայ ախպարները, միայն Ռուսաստանն է որ կարող է Հայաստանի mandataire(12) լինել. ուրիշ ոչ ոք չի գնալու Հայաստանի սարերուն վրայ իւր զինուորները սառեցնելու: Այս վերջին կէտը խնդրեմ ամուր մը խոթես մեր բիւզանդական եւ երիպտական հոսհոսներուն գըլ-իին մէջ քու խայթոցով, հասկցար մի՞, սիրելի Մեղու Շնորհալի: Եւ փառք յաւիտեանս ամէն:

Ջերմ բարեւանքով՝
ԳԱՐՕ

- (1) Գճախատանքի խօսքերս:
- (2) Կատարեալ, տեղիմ:
- (3) «Հայրենիք»:
- (4) Տեղեկութիւն, ծանօթացում:
- (5) Գործօմ, աշխոյժ:
- (6) Քմայքները:
- (7) Տրամաբանութիւն, խելօքութիւն:
- (8) Սոցիալիստ (ընկերավարական) յեղափոխականներ:
- (9) Իրական, իրապաշտ:
- (10) Յարձակողական:
- (11) Ազգակ:
- (12) Հոգատար, հովանաւոր պետութիւն:

Մ. Վ. — 26

ԱՐՄԷՆ ԳԱՐՈՅԻ ՆԱՄԱԿԸ

Վաշինկթոն, 9 Յունուար, 1922

Սիրելի Վերածին,

Ներփակ կ'ուղարկեմ քանի մը տող Շմաւոնեանի մասին. պիտի խնդրէի որ իւր նկարին տակ տեղաւորէիք:

Երէկ Արամը առանձին թղթակցութիւն մ'ուղարկեց իւր վրայ կատարուած հոգեհանգստի մասին:

Բու նամակը իր ժամանակին ստացել եմ եւ գրել Տիրատէլֆիա, խնդրելով որ մի անգամ ընդ միշտ հեռացնեն Սիտալ ըստած հոսհոսին իրենց Յանձնախումբէն: Թէեւ ինձ խոստացել էին այդպէս ընել:

Տօներուն նիւ Եորք էի ուր դիմեցի Gerardի միջնորդութեանը Հայաստանի համար բաժին ստանալու Hooverի 20.000.000 տոլարէն:

Այսօր ստացայ Hooverի պատասխանը Gerardին, որով կը յայտնէ թէ Haskellին հեռագրել է յատուկ պաշտօնեայ մ'ուղարկել Հայաստան, այնտեղի կարիքները իմանալու, եւ եթէ կարիքը այնքան մեծ է ինչպէս մենք իրեն յայտնել ենք՝ անմիջապէս պէտք եղածը պիտի ուղարկէ: Այս է միակ լաւ լուրը որ ունիմ տալու:

Տեսնենք 22ը ի՞նչ անակնկալներ է բերելու մեզ. ներսէս բան մը կ'ըսէ թէ մեր ճակատին դրուած առասպելային 7 տարիներու արհաւիրքներու շրջանը լրացաւ եւ նոր շրջան մը պիտի մտնենք:

Մտադիր եմ գալ շաբթու Գոստոն դալու ընկերներուն հետ խորհրդակցելու համար կարելոր խնդրի մը համար. այն ատեն երկարօրէն կը խօսինք:

«Մեղու Շնորհալին» քանի կ'երթայ աւելի կը հանէ իր խայթերը. դա լաւ նշան է:

Ջերմ բարեւանքով՝
Ա. ԳԱՐՕ

ՅԱՆՆԻՈՒՄ Մ. ՎԵՐԱՇԻՆԻ ԹՂԹԱՎԱՐՈՒՆ

Ստորեւ, իբրև յանձնուած Միճառ վերածիմի թուղթերում, կու տանք Հ. Յ. Դ. Կիլիկիոյ Կեդրան. Կամիտէի Թիւ 5 շրջաբաղկանը (Մարտ 1920)՝ ուղղուած Հ. Յ. Դաշնակցութեան Կիլիկիոյ Մարմիններում: Երբեք թուղթը կը կազմեն Հ. Յ. Դ. 9րդ Ընդհ. ժողովը (Երեւան, Սեպտեմբեր 1919) եւ ամբողջ կամ որոշումները:

Երբեք թուղթը տպուած է մեծ թուղթի վրայ, երկու երես:

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹԻՒ 5

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՆ

Ընկերներ,

Հ. Յ. Դ. 9րդ Ընդհ. ժողովը, գումարուած Երեւանի մէջ, յաջողութեամբ աւարտած է իր աշխատանքները եւ պատգամաւորները ցրուելով՝ արդէն հասան իրենց շրջանները պատշաճ զեկուցումներ տալու համար զիրենք զրկող մարմիններուն: Կիլիկեան Շրջանի մեր երկու պատգամաւորներէն մէկը մնացած է Երեւան(1), Հայաստանի խորհրդարանին պատգամաւոր ընտրուած ըլլալով, իսկ միւսը՝ վերադարձած է Շրջանը(2) եւ տուած է մասնաւոր զեկուցում Կեդր. Կոմիտէին եւ պատշաճ զեկուցումներ Ատանայի, Տարսուզի եւ Մերսինի մարմիններուն:

Բայց որովհետեւ ներկայ քաղաքական բարդ պայմաններու բերումով հնարաւոր պիտի չըլլայ մեր պատգամաւորին այցելել բոլոր շրջանները՝ ճիշտ այս պա-

Հուլիս, միև կողմէ Գրգ Ընդհ. Ժողովի մասին զեկուցում մը յետաձգելը աննպատակաբար է, ուստի ներկայ Շրջաբերականը իբր այն պէտք է նկատել:

Ընկերներ,

Թ.րդ Պատգամաւորական Ժողովը կարելոր էր անոր համար որ կը գումարուէր Հայ Ժողովուրդի պատմութեան ամէնէն ճշմարտական շրջանէ մը յետոյ, կարելոր էր, ի շարս այլոց, եւ անոր համար որ կը գումարուէր Ազատ Հայաստանի առաջին մայրաքաղաքին մէջ, որուն իրականացման համար Հ. Յ. Դաշնակցութիւնը ամբողջ երեսուն տարի կուտած, պայքարած եւ անհամար զոհողութիւններ ըրած էր: Ազատ ու Անկախ Հայաստանի ազատ մայրաքաղաքին խորհրդարանի շէնքին մէջ ուրեմն առաջին անգամ ըլլալով Դաշնակցութիւնը կը գումարուէր այն Ընդհ. Ժողովը, որ պիտի տար հիմնական որոշումներ թէ՛ մեր կազմակերպութեան եւ թէ՛ Հայ Ժողովուրդին համար:

Սակայն Ընդհ. Ժողովը չկրցաւ անդրադառնալ այն բոլոր հարցերուն, որոնք իր օրակարգի նիւթը կը կազմէին. պատճառն այն էր որ օրակարգը կազմուած էր այն նախատեսութեամբ, թէ մինչեւ Օգոստոս 15 որ նշանակուած էր Ժողովի գումարման օր՝ Հաշտութեան Համաժողովը արդէն Հայաստանի սահմանները ճշդած եւ հոգատարութեան խնդիրը լուծած կ'ըլլար: Դժբախտաբար այդ նախատեսութիւնը չէր իրականացած, որով քանի մը կարելոր նիւթեր յետաձգուեցան յառաջիկայ Ժ.րդ Ընդհ. Ժողովին, որ պիտի գումարուէր Հայաստանի Միջազգային — իրաւական դիրքը ճշդուելէ անմիջապէս յետոյ:

Մինչեւ Ընդհ. Ժողովի ընդունած բանաձեւերուն եւ որոշումներուն հրատարակութիւնը Բիւրոյին կողմէ, Կեդր. Կոմիտէն յարմար կը դատէ հետեւեալ ամփոփումը տալ մարմիններուն:

1.— Կուսակցութեան նուազագոյն ծրագրի միայն քաղաքական մասը, որ կը վերաբերէր Տաճկահայաստանի եւ նախկին Ռուսահայաստանի ինքնավարութեան նկատմամբ պահանջներու՝ չեղեալ համարուած է եւ ամբողջական ծրագրի վերաքննութիւնը յետաձգուած է յաջորդ Ընդհ. Ժողովին:

Ասոր փոխարէն Հ. Յ. Դ. Գրգ Ընդհ. Ժողովը համադիտարապէս կը նուիրագործէ անկախ եւ միացեալ Հայաստանի յայտարարութիւնը եւ անոր ամբողջացման եւ զարգացման կը ձգտի բոլոր գորութեամբ, ժողովրդավար Հանրապետութեան հիման վրայ:

Պէտք է աւելցնել եւ այն որ արտաքին քաղաքականութեան բանաձեւի Բ. յօդուածը կ'ըսէ. «Հայաստանի սահմանները որոշելու խնդրում արտաքին քաղաքականութիւնը պէտք է ղեկավարուի այն ծրագրով, որ 1919 Յունիւլ. 14ին ներկայացուած է Փարիզի հաշտութեան Համազուտարին»:

2.— Պօղոս Նուպարի պատուիրակներուն հետ բանակցելու համար դրուեցան հետեւեալ հիմքերը — Ա.— Երկու պատուիրակութիւնները միացնելով կազմել մէկ պատուիրակութիւն. պատուիրակութեան պետը պէտք է ղեկավարուի Հայաստանի հանրապետութեան հրահանգներով եւ պատասխանատու է անոր առջեւ: Բ.— Թէ՛ Հայաստանի հանրապետութեան սահմաններուն մէջ եւ թէ՛ հանրապետութեան սահմաններէն դուրս նշանակել լրացուցիչ ընտրութիւններ: Գ.— Կառավարութեան անդամներու կէսէն ոչ պակասը կը նշանակուի արեւմտահայերէ:

3.— Որոշուած է որ Դաշնակցութիւնը ըլլայ զուտ ազգային կուսակցութիւն եւ առայժմ մուտ չըործեն անոր մէջ ոչ հայ տարրեր:

4.— Որոշուած է թոյլատրել Հայաստանի մէջ դրամազլխի մուտքը, մանաւանդ Հայ դրամազլխի:

5.— Ձեջուած են նախկին Արեւելեան եւ Հայաստանի Բիւրոները եւ այժմ կայ մէկ Կեդր. Գործադիր մարմին, որ կը կոչուի Հ.Յ.Դ. Բիւրօ եւ կը միաւորէ իր վրայ նախորդ բիւրոներու պաշտօնները: Բիւրոն կը մնայ Հայաստանի Մայրաքաղաքին մէջ:

6.— Կազմուած է դատական ատեան մը, որ կը քննէ բոլոր հին եւ նոր դատերը, որոնք կու գան կուցական խողովակով Կեդր. Կոմիտէներու միջոցաւ:

7.— Որոշուած է Կեդր. օրկան մը ունենալ որ արտայայտիչը պիտի ըլլայ Բիւրոյի ուղղութեան եւ քաղաքականութեան: Բ.— «Երօշակ»ը պիտի ըլլայ կուսակցութեան գիտական-պարբերական օրկանը: Գ.— Պիտի ձեռնարկուի հրատարակել «Դաշնակցութեան մատենաշար» անունով գիրքեր, գրքոյկներ տեսական խնդիրներու, ինչպէս նաեւ Հայրենիքի տնտեսական, ընկերային եւ այլ հարցերու ուսումնասիրութեան շուրջ: Դ.— Պիտի հիմնուի կուսակցութեան կեդրոնական տպարան մը:

8.— Պիտի կարգաւորուին կուսակցութեան դիւնաթղթերը եւ կազմուի թանգարան. այս առթիւ կը հրահանգուին կուսակցական բոլոր մարմինները, կազմակերպութիւններն ու անհատ ընկերները, որ թէ՛ արխիւի եւ թէ՛ թանգարանի վերաբերեալ բոլոր նիւթերը հաւաքեն եւ տրամադրեն դործադիր գերագոյն մարմին:

9.— Դաշնակցութեան պատմութիւնը գրելու գործը յանձնուած է ընկերներ Վրացեանի, Ռուբէնի եւ Վարանդեանի: Բ.— Մինչեւ 1922ը պիտի հրատարակուի հատորի մը մէջ Դաշնակցութեան պատմութիւնը լայն զանգուածներուն համար, մատչելի զնեքով:

10.— 1920ին հանդիսաւոր կերպով պիտի տօնուի Հ. Յ. Դ. եան երեսնամեակը: Բ.— Այս տօնին համար

պիտի որոշուի օր եւ այդ օրը բոլոր վայրերու մէջ պիտի կազմակերպուին հանդէսներ: Գ.— 1922ին Հայաստանի մայրաքաղաքին մէջ արձան պիտի կանդնուի ազատութեան համար զոհուած բոլոր ընկերներու համար: Արձանին համար այժմէն պիտի բացուի ընդհ. հանդանակութիւն: Հիմակուրնէ պիտի յայտարարուի մրցում լուսագոյն արձանի համար եւ պիտի ընտրուի հեղինակաւոր եւ վստահելի արուեստագէտներէ քննիչ մարմին մը: Դ.— Մինչեւ 1922ին Հայաստանի մայրաքաղաքին մէջ պիտի ստեղծուի Հ. Յ. Դ. Պանթէոն եւ այնտեղ պիտի փոխադրուին Հայաստանէն դուրս թաղուած կուսակցութեան ղեկավար ընկերներու անձինները: Ե.— Ազատութեան արձանի հանդանակութեան կազմակերպումը եւ ղեկավարութիւնը յանձնուած է Ամերիկայի Կեդր. Կոմիտէին:

Ահա, Ընկերներ, գլխաւոր դիժերը գործնական այն խնդիրներուն, որոնք կը շահագրգռեն մեր բոլոր մարմիններն ու ընկերները: Մինչեւ ընդունուած որոշումը՝ բանաձեւերու հրատարակութիւնը՝ Կեդր. Կոմիտէն այսչափ կրնայ տեղեկացնել ձեզ:

Ամէն Դաշնակցական անհատ միանալով ընդմիջտ պիտի ըմբռնէ, թէ ինք կապ ունի եւ մասն է այն կազմակերպութեան, որուն պատմութիւնը նոյնինքն Հայ Ժողովրդի պատմութիւնն է:

Այս անգամ ալ Գրգ Ընդհ. Ժողովը չսայթաքեցաւ այն ուղիէն, որուն հետեւեր էին նախորդ Ժողովները, ան ղեկավարուեցաւ կուսակցական աւանդութիւններէն որոնք արմատ դրած էին մեր ընկերներուն մէջ: Ան մնաց համերաշխ եւ կուտ, եւ այն ակնկալութիւնները

զոր կը սնուցանէին մեր հակառակորդները տեսնելու համար Դաշնակցութիւնը պատակտուած, բարերախտաբար հայ Ժողովուրդին համար՝ բնաւ չիրականացան: Դաշնակցութիւնը դուրս ելաւ իր Ընդհ. Ժողովէն աւելի ուժեղ քան երբեք:

Գրգ Ընդհ. Ժողովը իր ընկերական ողջոյնները ուղարկելով մեր պատգամաւորին միջոցով մեզ բոլորիս, կը մաղթէ որ մենք ըլլանք պարտաճանաչ եւ դիտակից ընկերներ կուսակցութեան համար ու կազմենք խիտ ու ամբակուտ շարքեր հայ Ժողովուրդին մէջ մեր պատմական դերը ու հետապնդած նպատակները իրականացնելու համար: Մենք վստահ ենք որ Կիլիկիայի շրջանի բոլոր մարմիններն ու ընկերները կը գիտակցին ասոր եւ կը շարժին այնպէս, ինչպէս կը թելադրեն մեզ մեր անցեալ դործունէութեան ու ներկայ ժամանակներու հրամայական պահանջները:

Ընկերական բարեւներով

Հ. Յ. Դ. ԿԻԼԻԿԻՈՅ ԿԵՂՐ. ԿՈՄԻՏԷ (ԿԵԻԲ)

Ատանա, Մարտ 1920

(1) Տիգրան Ծամհոյր (բուն մակամուճով՝ Ամսէեան), յեղափոխական գործունէութեան մէջ ծանօթ մասն. Յերիտ ձեմիլ անունով, որ 1921 Փետրուար 18ին Երեւանի մէջ սպանուեցաւ պոլիցիէի կողմէ, հայկական եռագոյնը եռաբարձարանի շէնքի մակատին հաստատելու պահուց:

(2) Իմքը՝ Մինաս Վերածիմը:



Գ.— ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐ ՊՈԼՍՈՅ ՇՐՋԱՆԻ

ՅԵՂԱՓՈՒԱԿԱՆ — ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵՆԷՆ

(1890 — 1914)

Իր կազմութեան առաջին իսկ տարիէն սկսեալ՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը իր կազմակերպչական գործունէութեան կեդրոններէն մէկը դարձուց Օսմանեան Պետութեան մայրաքաղաքը: Իր աշխատանքները տանելով բոլորովին գաղտնի՝ Դաշնակցութեան Պալսոյ անդրանիկ լիազօրը, Յովհաննէս Ենուտեան (Մելիք), 1891էն մինչեւ 1895 կը գործէր «լուսնի-մնջիկ», համբերութեամբ, առանց տենդի ու ահապարանքի, կը մղէր իր քարոզչութիւնը Պալսոյ գետնայարկերուն մէջ, գրանցանաչ երիտասարդութեան շարքերում, եւ 3-4 տարուան ընթացքին կըրցու ստեղծել գաղափարական ընտիր գործիչներու փառանգ մը, կեդրոնական ուժեղ մարմին մը իր կոմիտէներով ու ենթակոմիտէներով, որոնցմէ եղան Օննիկ Դերձակեան (Վառման), Բարկէն Սիւնի, Զարմայր (Վարդգէս Սէրէնկիլեան), Արտաշէս Դեւեան (Եգիպտացի), Յակոբ Գարակէօզեան (Զաւէն), Յարութիւն Գեւորեան (Փասալ), Վառ Գեւորեան, Սարգիս Մինասեան, եւ այլն, շատերը կեդրոնական վարժարանէն»: Բայց նաեւ՝ «Յովհաննէս Ենուտեան հմուտ ձեռքով պատրաստեց շարք մը յանդուգն ահաբեկիչներ, որոնք օր ցերեկով, բազմամարդ փողոցներուն մէջ կը զարնէին դաւանանները եւ կ'անհետանային: Այդպէս, 1895ին մին միւսին ետեւէն սպաննուեցան կեդրոնական կոմիտէի կողմէ մահուան դատապարտուած առաջնակարգ հայազգի լրտես ու մատնիչներ, ոստիկան-կոմիտէր Հանի Տիգրան, վիրաբայժ Թիւրքիւնջեւ, կարգալոյժ վարդապետ Մամբրէ եւ ուրիշներ, որոնք օսմ. ոսկիներէն հրապարտուած, դարձեր էին Նազըմ Փաշայի հաւատարիմ գործակալներ եւ անոր ձեռքը կը մատնէին ու բանտերու մէջ կը փակեցնէին բուն յեղափոխական գործիչներուն հետ նաեւ բազմաթիւ անմեղները»: (Մէջբերումները՝ Մ. Վարանդեանի «Հ. Յ. Դ. Պատմութիւն»էն, Ա. հատոր, էջ 157-158):

1895ի աշնան Ենուտեան կը ձգէր Պալսը, ուր պաշտօնապէս կը գործէր արդէն Վիշապի կեդրոնական կոմիտէն (Ենուտեան կ'անցնէր ժընեւ, ապա Ամերիկա, ուր սկիզբ կը դնէր Միացեալ Նահանգներու դաշնակցական կազմակերպութեան): Իրբեւ կուսակցութեան լիազօր՝ իրեն կը յաջորդէր Արշակ Վառմանը (բուն անունով՝ Օննիկ Դերձակեան, կուսակցական ծածկանունով՝ Վահայ), որ այնտեղ կը մնար մինչեւ 1896 Նոյեմբերի վերջերը (մատնութեան մը հետեւանումով՝ Վառման ծպտուած կ'անցնէր Պուլկարիա, անկէ ժընեւ՝ 1897ին, եւ աւելի ուշ, 1899ին, Ամերիկա՝ ուր, Ենուտեանէն ետք, ի'նք պիտի գործէր երկար տարիներ, մինչեւ Օսմանեան Սահմանադրութեան հռչակումը): Պալսոյ Վառմանեան շրջանին կը պատկանի Օսմանեան դրամատան գրաման ձեռնարկը, — մեծագոյններէն մէկը Հ. Յ. Դաշնակցութեան ցուցական-մարտական արարքներուն, — որուն ընթացքին պիտի նահատակուէր գրեթէ պատանի հերոսը՝ գրաւոր խումբի զեկավար Բարկէն Սիւնին, եւ ուր առաջին անգամ պիտի մանչցուէին հետագայ զեկավար ուժեր՝ Արմէն Գարօն եւ Հրաչ Թիրեաքեանը:

1898ին, Հ. Յ. Դաշնակցութեան երկրորդ Ընդ. ժողովը ճշդեց ուժերու կեդրոնացման եւ յեղափոխական գործունէութեան չորս գլխաւոր շրջաններ, զանոնք օժտելով Ընդ. ժողովէն իսկ ընտրուած եւ մօտաւորապէս երկու բիւրոներուն համագործ իրաւասութիւններ վայելող Մարմիններով (Պատասխանատու կեդրոնական կոմիտէներ): Կեդրոնական այդ չորս շրջաններն էին՝ Բարձրաւանդակը (Տարօն, Սասուն, Ախլաթ), Վասպուրականը, Լեռնավայրը (Կիլիկիա) եւ Կուրաձաղիկը կամ Վիշապը (Կ. Պալս): Կուրաձաղիկի Պատասխանատու Մարմինն անդամ ընտրուեցան՝ Աշոտ, Բաբա (Գարեգին հաժակ) եւ Կարէն:

Աւելի ուշ, երբ 1904ի երրորդ Ընդ. ժողովը (Սա-

փա) որոշեց վերսկսիլ ցուցական գործունէութիւններուն Վիշապի եւ Ոսկեհամքի (Իզմիր) մէջ, Պալսը վերստին դարձաւ յեղափոխական դաւադրական գործունէութեան տենդալի կեդրոն: Թէեւ հիմնականին մէջ Սուլթանի դէմ ծրագրուած ահաբեկչական արարքի նախապատրաստութիւնները վարողը Ընդ. ժողովին կողմէ ընտրուած Յուսէպ-տեռական Մարմինն էր՝ Գրիստափորի գլխաւորութեամբ, բայց տեղալոյս վրայ դաւադրական ծրագիրներու գործնականացման համար աշխատողները Պալսոյ ընկերներն էին առաւելաբար:

Սահմանադրութեան հռչակումէն ետք, Պալսոյ ազգային կեանքը ընդհանրապէս եւ մեր կազմակերպութեան գործունէութիւնը մասնաւորաբար՝ սկսան ապրիլ բարգաւաճման ու ծաւալման շրջան մը՝ ստեղծուած համեմատաբար ազատ պայմաններուն բերումով: Պալսը դարձաւ Դաշնակցութեան արեւմտեան հատուածի խորհրդարանական եւ յարաբերական աշխոյժ գործունէութեան գլխաւոր կեդրոնը: Դերերը շրջուած էին: Ցարական ոստիկանութեան հետապնդումներէն խուսափողները ապաստան կը գտնէին սահմանադրական Թաւրիոյ գլխաւոր կեդրոններուն մէջ: Պալս կը մնային կամ որոշ ժամանակով այնտեղ կը հանդիպէին Դաշնակցութեան ամենէն ակնաւոր դէմքերէն՝ Յարութիւն Շահրիկեանը, Ակնունին, Գարեգին հաժակը, Սիմոն Զաւարեանը, Ռուբէն Զարգարեանը, Արմէն Գարօն, Մշոյ Գեղամը (Տէր Կարապետեան), Վանայ Սարգիսը (Բարսեղեան) եւ շատ ուրիշներ: Վառմանի ջրդ. Ընդ. ժողովէն ետք (1909), Պալսը կը դառնար նաեւ կեդրոնը Հ. Յ. Դաշնակցութեան կարեւորագոյն Մարմիններու, — Արեւմտեան Բիւրօ, Ինքնապաշտպանութեան կեդրոնական Մարմին, Հայաստանի Բիւրոյի Պալսոյ Հատուած, եւն.: Այդ բոլորի կողմին կը շարունակէր գործել Վիշապի Պատասխանատու կեդրոնական կոմիտէն: 1911ի Յրդ. Ընդ. ժողովը եւ 1912ի Հ. Յ. Դ. կորիւրդի ժողովը գումարուեցան Պալսոյ մէջ:

Հ. Յ. Դաշնակցութեան Պալսոյ շրջանի գործու-

նէութեան վրայ որոշ լոյս կը սփռեն Մելիքի (Յ. Ենուտեան), Վահայի (Ա. Վառման) եւ Բարկէն Սիւնիի նամակները՝ «Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան» երկու հատորներուն մէջ(1), ինչպէս նաեւ «Դրօշակ»ներու մէջ հրատարակուած բազմաթիւ նամակները («Նամակ Պալսէն»ներու շարքը), քղթակցութիւններն ու Պալսոյ Կ. Կոմիտէի վնասագրերը: 1914-15 տարիներու կուսակցական գործունէութեան շուրջ տեղեկութիւններ կարելի է նաեւ փոխել՝ «Հայրենիք» ամսագրի 1965ի բիւրոն մէջ հրատարակուած նամակներէն:

Ստորեւ՝ կու տանք Պալսոյ Պատասխանատու (կամ Վիշապի) կեդրոնական կոմիտէի այն շրջաբերականներն ու փաստաթուղթերը, զորս ներկայիս ունինք մեր տրամադրութեան տակ: Անոնցմէ մաս մը հրատարակուած է, օրին, «Դրօշակ»ներուն մէջ, կամ, հետագային, «Դիւան»ի երկու հատորներուն մէջ. կու տանք սակայն վերստին՝ միւրի ամբողջականութիւնը ըստ կարելոյն ապահովելու տրամադրութեամբ: Կարեւոր մէկ մասը, թէեւ տպագրուած վիճակով չըլկուած է կուսակցական Մարմիններուն, բայց արտաքին հրատարակութեան ցարդ արժանացած չէ:

Կը պահենք ժամանակագրական կարգը եւ ամբողջական հարազատութեան սկզբունքը:

Եւ կը սկսինք 1890 Յուլիսին, Հնչակեաններու եւ Արմենականներու համագործակցութեամբ կազմակերպուած Գում-գափուի ցոյցէն անմիջապէս ետք հրատարակուած՝ «Հնչակ»ի թուոցիկ մէկ թիւէն: Գում-գափուի ցոյցը Պալսոյ յեղափոխական գործունէութեան դրսեւորուած առաջին արտայայտութիւնն է փաստորէն:

Հ. Յ.

(1) Տեսնել ի մասնաւորի՝ Ա. հատոր, — էջ 131-137, 150-161, 220-230, 235-256, 272-282, 304-306, 326-329, 332-335, 347-354, 374-376, 382-385. եւ Բ. հատոր, — էջ 274-275, 279-285, 288-290, 299-307, 311-321, 329-331, 349-351, 355-358, 363-365, 373-381, 386-390, 393-394, 398-400:

Պ — 1

«ՀՆՁԱԿ»Ի ԹՌՈՒԹԻՅԻՆ ԹԵՐԹ՝

ԳՈՒՄ-ԳԱՓՈՒԻ ՑՈՅՑԻՆ ԱՌԹԻԻ

Տպուած՝ 44x28 սմ. մեծ քաղթի մը վրայ, երկու երես:

Ա. երես՝

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԱՐԻՒՆԱՎԵՂ ՑՈՅՑԸ
Կ. ՊՈԼՍՈՒՄ

Օղոստոս 1 - 20 Յուլիս, 1890.

Ահա՛ եւ ԳՈՐԾԸ, որ տարիներից ի վեր այնպիսի արտատրոփ կերպով սպասուած եւ ըզձուձ էր հայ մարդը:

Ահա՛ եւ կենդանի, վսեմ ու յանդուգն յեղափոխական խօսքը վերածուած իրեն համապատասխան կենդանի, վսեմ ու յանդուգն գործի:

15 Յուլիսը բացում է նոր դարաշրջանի հայոց պատմութեան մէջ, մկրտելով այդ դարաշրջանը հայկական արիւնով: Եւ այդ դարաշրջանի պատմութեան առաջին էջերը արիւնոտ տառերով կ'արձանագրեն հայերի նահատակութիւնն ու նրանց սուրբ պատերազմի սկիզբը յանուն ազատութեան:

15 Յուլիսը, երբ հայ մարդն առաջին անգամ դիտակցարար հոսեցնել տուեց իր արիւնը յանուն իր բարօրութեան ու ազատութեան, նմանում է այն արշալոյսին, երբ արեւելեան երկինքն արիւնադոյն կրակով է վառուում, որպէս հրդեհ, խոստանալով պայծառ օր:

15 Յուլիսին բռնապետների Բիւզանդիոնում առաջին անգամ հայերի ձեռքը վեհաբար ծածանեցաւ յեղափոխական կարմիր դրօշակը, իրրեւ աւետիս հայ ժողովրդի ապառայ երանութեան եւ մահատու նշան թիւրքական բռնապետութեան ու հայկական ստրկութեան:

Ոտքի՛ է կանգնում, ոտքի՛ է կանգնում հայ ժողովուրդը — վեհ, քաջ ու խրոխտատեսիլ, եւ մարտական բարձր գոչիւնով հանդիսանում դէմ առ դէմ իր վայրենի թշնամուն եւ իր սոսկատանջ կուրծքը դէմ տալով կրակին, ազատութեան անունը տալիս եւ նզովում ստրկութիւնը երկար դարերի ընթացքում անդադար աճող թունալի, ժահրոտ ու խիստ նզովքով:

Եւ հայ ժողովուրդը սկսում է իր ԳՈՐԾԸ, սկսում է ազատութեան պատերազմը ո՛չ իբրեւ հօտ խառն ու անկարող, առանց հովիւի, ո՛չ իբրեւ բուռն հողմ, որ հեռուից հասնելով, կատաղաբար յուզում, փրփրեցընում, ալեկոծում է ծովը, կործանում նաւեր եւ յետոյ անհետ դադարում: — Ո՛չ:

Այլ նա, բանիմաց յեղափոխականների ղեկավարութեամբ, սկսում է իր վսեմ մարտը կանխապէս վրձնած՝ թէ ինչ պիտի լինի իր այդ օրուայ նպատակը, թէ ինչ կերպարանք պիտի կրէ իր այդ օրուայ առաջին յեղափոխական ցոյցը եւ թէ ինչ միջոցների պիտի դիմել, եթէ թշնամին արդեւէ հանդիսանայ:

Իր նախապիծը — նա իրագործեց. իր այդ օրուայ նպատակին — նա հասաւ, եւ իր ցոյցին տալով վեհ, խրոխտ, փառաւոր, բազմամարդ կերպարանք, նա գիտցաւ ապացուցել գործով, որ կայ հայ յեղափոխական Կուսակցութիւն, որը հաստատու է ճիշդ ուղղութեամբ գործում է եւ սրին աջակից ու ընկեր է նոյն ինքը՝ ժողովուրդը:

Պատրիարքական մայր եկեղեցու զանդակների դողանջիւնը նա ծառայեցրեց նրանց իսկական նպատակին. — փոխարէն աղօթքի, նա այդ զօղանջիւնով պատերազմի կանչեց: Ծշմարտութեան թարգման ու ազատաշունչ ատենարանութեամբ նա, իր առաջնորդներից մէկի շրթներով, Բիւզանդիոնի երկնքի տակ, բիւրաւոր բազմութեան առջեւ յայտարարեց ամբողջ հայ ժողովրդի թշուառութիւնը, նրա պահանջները ներկայացրեց, էրզրումի նշանաւոր շարժման առիթով նախադժուած այդ օրուայ մեծ ցոյցի իմաստը բացատրեց, հայ «կառավարիչ» մարմինների ստորութիւնն ու ստրկութիւնը հայ բանողի կոչուացած ձեռով ապտակեց եւ թիւրք կառավարութեան վայրենի բռնութիւններն ու հալածանքները սեւամած դոյներով մերկացրեց:

Այդուհետեւ նա թիւրքահայերի «պետին», վախկոտ պատրիարքին, դուրս հանեց մութ անկիւնից, ուր նա թաքնուած էր փախչելով, եւ հրամայեց նրան երթալ միասին սուլթանին եւ ներկայացնելով այդ ատենարանութեան զբաւոր պատճէնը, պահանջել Բիւզանդիոնի բռնապետից հայ ժողովրդին հանդիստ ու բարօրութիւն:

Բայց ի՛նչ. նրա ճանապարհը կտրեցին թիւրքական զօրքերը եւ նա, որ վճռել էր ամենայն արդեւէ խորտակել, թիւրքի հարուածներին նա մահատու հարուածներով պատասխանեց, բոցն ու սուտը, աղաղակն ու պայթիւնը միախառնուեցան, մինչդեռ այդ ստակալի ու արիւնահեղ ընդհարման ժամանակ

«Լոկ իբրը փարոս մէկ աւետաբեր,
«Նրա դրօշակն այնտեղ մենակ ծածանուում...»

Եւ նա, Կ. Պոլսի հայ բանող ժողովուրդը, ոչ միայն իր յախուռն բազմութեամբ, իր մեծ ցոյցով, ո՛չ միայն այն ազատաշունչ ատենարանութեամբ, այլ եւ, երբ հարկը եղաւ, ազատութեան բիւրաձայն աղաղակներով, այլ եւ սեփական արիւնով, ամբողջ աշխարհի յանդիման, վաւերացրեց իր իրաւացի պահանջները, յայտարարելով նրանց սուլթանին եւ դրան վկայ ունենալով ամբողջ Եւրոպային:

Այդ մեծ ցոյցի նախաձեռնողները լուրջ ու բանիմաց կերպով իրագործեցին այն միտքը, որ յայտնել էինք «Հնչակ»ի այս տարուայ Յուլիս ամսի համարում Կարինի եւ Հայաստանի միւս արիւնահեղ շարժումների առիթով: Մեր յայտնած միտքը հետեւեալն էր. «Ամէն մէկ ընդհարում թիւրքական զօրքերի հետ, ամէն մի կռիւ, ամէն մէկ ընդդիմութիւն կամ յարձակում նրանց վրայ պէտք է կանխապէս որոշուած ու տրամաբան»

ուած լինի, պէտք է կանխապէս նախադժուած լինի»: Այդ մտքի գործադրութեան փայլուն օրինակ յայտնուեցաւ Կ. Պոլսի մեծ ցոյցը:

Եւ թո՛ղ, ուրեմն, հայ յեղափոխական Կուսակցութիւնը հայ ժողովրդի հետ միասին շարունակէ նմանօրինակ ցոյցերով ու շարժումներով հարկ եղած ժամանակը թնդեցնել զոռոզ Բիւզանդիոնի եւ որբ Հայաստանի օդը: Թո՛ղ այդպիսի միջոցներով, պատերազմ յայտարարած բռնապետութեան դէմ, նա վերակենդանութիւն տայ հայկական տկարացած ոգուն, արիացնէ հայի սիրտը, ազատութեան ու բարօրութեան համար հայի ունեցած ծարաւն աւելի սաստկացնէ, պրզոէ նրա թմբած ուղին: Թո՛ղ այդպիսի կենդանի բարձր օրինակներով եւ մի եւ նոյն ժամանակ միշտ յեղափոխական ոյժերը կազմակերպելով, շարունակէ իր մարտը մինչ այն մեծ օրը, երբ միանգամից ամբողջ Հայաստանը կը ժայթքէ իր կրակն ու լաւան, որպէս վուլկան(1):

Թո՛ղ Կ. Պոլսի արիւնահեղ ցոյցը, այդ մեծ շարժումը լինի պատերազմի առաջին նշանը, մեծահնչիւն կոչնակը, որի ձայնին թիւրքահայ, ռուսահայ, պարսկահայ միանգամայն արձագանդ տան, ներկայ լինելով այնտեղ, ուր պատերազմի դաշտն է:

Եւ այն ժամանակ թո՛ղ զոռոջ զոռոջ պառաւ մարդակերը, թո՛ղ փրփրի նրա բերանը կատաղութիւնից եւ մոլեղնացած՝ հրամաններ արձակէ. «Սեղդե՛լ, ճընչե՛լ հայկական շարժումները»: Թո՛ղ եռան ու դուրս վրձեն նրա բռնապետական բոլոր ոյժերը. — դա կը լինի հայի ստրկական շղթաների կոտրատման օրը եւ նրա ազատութեան երանելի աւետիսը:

Կեցցէ՛ հայ ժողովուրդը:
Կեցցէ՛ հայ յեղափոխական Կուսակցութիւն:

Ոմբ. «ՀՆՁԱԿԻ».

(1) Հրաբուխ (Փրանս. բառ):

Բ. երես՝

ՏԱՍՆԵՒՎԻՆԳ ՑՈՒԼԻՍ

(Սեփական թղթակցից)

Կ. Պոլիս, 15 Յուլիս 1890.

Այսօր, կիրակի, հայ յեղափոխական գործոց պատմութեան համար շատ նշանաւոր օր մ'եղաւ: Այսօր այն օրն եղաւ, որ հայ դաւաճացի ժողովուրդը ատլըճանակներ եւ սուրեր ի ձեռին, սուլթանի ջթին տակ յեղափոխական կարմիր դրօշակը բարձրացնելով, կոտորելու սկսաւ առաջին անգամ:

Այսօր առաւօտեան ժամերգութիւնն արդէն նոր էր սկսած, դուռնադուռն դաւաճացի հայեր ահազին բազմութեամբ կը դիմէին արդէն պատրիարքական մայր եկեղեցին ի Գուժ-Գափու: Իւղարբերից աւետարանն ղեռ նոր էր կարդացուած, երբ ժողովրդեան մէջէն մի

ձայն յայտնեց հասարակութեան թէ՛ «Հայե՛ր, բան մը պիտի կարդացուի, մտիկ արէ՛ք»: Ի պատասխան բացասական եւ «չը կարդացուի» խօսքերը լսուեցան քահանայից դասէն: Յանկարծ ընկալելի պայթիւն մը լսուեցաւ եկեղեցւոյն մէջ, եւ պատրիարք ու այլ վարդապետք ու քահանայք սկսան պահարաններէն փախիլ: Ժողովուրդը խառնիխառն դուրս խուժեց եկեղեցիէն եւ սկսաւ պատրիարքին հետեւիլ. սակայն Պորէն արդէն անյայտ տեղերով պատրիարքարանի մի մութ սենեակ ապաստանած էր: Հազարաւոր բազմութիւն եկեղեցւոյն բակին մէջ ժողոված, հնչեցնել կը տար եկեղեցւոյն զանգակները, որի ձայնէն մօտակայ թաղերէն ուրիշ հազարաւորներ ալ դիմեցին եւ մտան եկեղեցին ու իր առջեւի փողոցը: Աննկարագրելի էր այդ բազմութիւնը: Պանշարներով ու ընկալիչներով զինուած այդ հոծ բազմութիւնը յանկարծ դիմեց պատրիարքարան, ուր կը փնտռէր պատրիարքին: Առաջին անգամ նորան չգտնալով, տակն ու վրայ արին պատրիարքարանը, ապակիներ, դռներ կոտորտեցին եւ զանգակներու ձայնը ուրիշներ ալ կը համախմբէր: Այդտեղ ատենարանութիւն մը եղաւ, որոյ մէջ ամենաճիշդ գոյներով կը ներկայացուի Հայաստանի ներկայ տազնապալի եւ աղետալի վիճակը, կառավարութեան անասելի խտուրթիւնը ու բռնութիւնը եւ հայ ժողովրդի բարօրութեան պահանջը (*): Այդ ատենարանութեան յետոյ զրգոյնք երգի մը առաջին տողերը կ'երգէին, երբ նորեկ ժողովուրդը զնաց միացաւ պատրիարքարանի մէջ եղողներին հետ: Մինչ այդ ժամանակ պատրիարքն կը փրձուէր, որ և գտնելով, թեւերուն մէջ առնելով, դուրս ելան պատրիարքարանէն եւ սկսան երթալ սուլթանին: Կը տանէին պատրիարքն սուլթանին այն մտօք, որ այնտեղ ժողովրդեան առջեւ պատրիարքը սուլթանին ներկայացնէ վերոյիշեալ ատենարանութեան դրաւոր պատճէնը եւ հայ ժողովրդի պահանջին հարկ եղած բաւարարութիւն ուզէ սուլթանէն: Այլ եւս պատրիարքը պիտի յայտարարէր թէ՛ հայ ժողովուրդը վերջին աստիճան թշուառութեանց հասած ըլլալով, ուրիշ միջոց չի գտներ, եթէ ոչ այսպիսի ժողովրդային ցոյցով պահանջել բարօրութիւն ու հանդիստ: Եւ այսպէս 3—4000 ժողովուրդ կը հետեւէր պատրիարքին. ատրճանակները փողոցին մէջ կը պայթէին եւ խառնիխառն ամբոխը զարհուրելի կերպարանք մը կը կրէր: Ոստիկանութիւնը փողոցներուն անկիւնները կանգնած էր եւ հաստատապէս դուռակել կը տար, որ կը վախնար չափուելու, ժողովրդի հետ, որովհետեւ իրենք սակաւ էին, կը սպասէին թերեւս օգնութեանց: Գուժ-Գափուի լայն մի փողոցի վրայ յոյն դեղալաճառի խանութի մէջ պատրիարքը պահ մը ապաստանեցաւ: Պանութի երկաթէ փեղկերը

(*) Այդ ատենարանութիւնը կարճ ժամանակից յետոյ մենք կը հրատարակենք: Մ. Հ. Ո.

գոցուած էին, դուռն ալ գոցուեցաւ եւ ժողովուրդը, որ անչափ դժուարութեամբ Խորհին պատրիարքարանէն հանած էր, կարծելով, որ պատրիարքը պէտք էր փախիլ այդտեղէն եւ թերեւս նոյն մտօք ալ այդ տեղը դիմեց, սկսեցաւ ահազին շփոթութեամբ, ատրճանակներու ձայներով, աղաղակներով, դեղատան պատուհաններն ու փեղկերը ամբողջովին կոտրել, ջարդել եւ պատրիարքն կրկին բռնուեցաւ եւ կառք մը բերուելով եւ նորան մէջը նստացնելով, սկսան յառաջանալ: Երբ մի քանի քայլ առաջ գնացին, մի փողոցի անկիւնէն բազմաթիւ զօրքեր հասնելով, հրամայուեցաւ այդ զօրքերին զարնել: Առաջին յարձակումը տեղի ունեցաւ զօրքերէն, որոնք հրացանին հակառակ կողմէն եւ սուրիներով յարձակեցան ժողովրդին վրայ: Պատրիարքին ապաստանեցին մի յոյն տան մէջ: Անկարագրելի է այդ կռիւր հայերի եւ թիւրք զօրքի մէջ: Գուժ-Գափուի 6-7 զլխաւոր փողոցներ պատերազմի դաշտ դարձած էին: Յեղափոխական կարմիր դրօշակը առաջին անգամ մայրաքաղաքիս մէջ կը պարզուէր: Ի տես այդ պանծալի դրօշին շատ ու շատ հայեր, որոնք սկզբէն ոչինչ տեղեկութիւն ունէին, վազեցին առին ատրճանակներն, դաշոյններն, ըջվոլէրներն եւ այլն եւ միացան զլխաւոր խմբին հետ: Տեսնելու էր այդ խրոխտ ու խիզախ հայ ժողովրդին ընթացքը. գէնքեր ի ձեռնին նոքա կը վազէին դասալիք գինուորներու ետեւէն, որոնցմէ շատերն Ֆէսեքին եւ հրացաններն կորսնցուցած՝ ապաստանելու համար կը դիմէին պահակատուն, ուր ոմանք չհասած վայր կ'իյնային հայի գէնքէ վերաւոր կամ սպանեալ: Հայերը բաւական վնաս պատճառեցին թիւրք գինուորներուն, որոնցմէ առայժմ, թէեւ հաստատ տեղեկութիւնք չեւ կը պակսին, սակայն 5-6 սպանուած եւ բազմաթիւ վիրաւորուած են: Մի բարձրաստիճան թիւրք սպայ, որը ձիով նոր հասած էր կուռ վայրը, մահացու կերպով կը վիրաւորուի: Կարապետ անուն հայ լրտես, որ իր արհեստին մէջ այստեղ մեծ դեր կը խաղար եւ շատ հայերու աչքը տնկած կար անոր վրայ, կուռին մէջ կը սպանուի: Հայերն ալ թիւրքերուն շփոթութեամբ ունեն եւ բաւական վիրաւորեալներ: Բազմաթիւ ձերբակալութիւնք կան հայոցմէ, վանեցի, մշեցի, սերաստացի եւ ոռոտութոցի, գրեթէ ամէնք բանող դասակարգէն. կան նաեւ շատեր ո'չ բանող դասակարգէն եւ Կ. Պոլսոյ կրթուած շրջաններուն պատկանեալք: Կ'ըսուի թէ ձերբակալեալներուն անուններն ամենէ առաջ եւրոպական հիւպատոսարանի անձանց ձեռամբ կը գրուին եղեր եւ յետոյ ոստիկանատան:

Ժամի մը չափ տեւեց այդ կռիւր, որոյ տեսքը օտարափելի էր: Առաջին անգամն էր, որ մայրաքաղաքիս մէջ ոստիկաններու եւ զօրքին հետ հայերն այդպիսի արիւնհահեղ կռիւ կ'ունենային գինու զօրութեամբ: Միայն նորանոր թիւրքական զօրքեր հասնելով, մեծ դժուարութեամբ հազիւ կարելի եղաւ ցրուել հայերի խմբերը: Սպանուածներն ու վիրաւորեալներն

վերուցին տարին փողոցներէն: Գուժ-Գափուն պաշարման վիճակի մէջ է. ոստիկանք ու գինուորք անդադար կը շրջեն փողոցներու մէջ: Մեծ եպարքոս Բեամիլ փաշա եւ ուրիշ փաշաներ, ամէն գործ մէկդի թողած, այսօրուան նշանաւոր դէպքի առիթով նիստեր կ'ընեն: Սուլթանը եւ Բ. Դուռը շատ յուզուած եւ վախկոտ դրութեան մէջ կը գտնուին:

Հիւպատոսարանի եւ Դեսպանատանց պաշտօնեայք այսօր խմբովին Բ. Դուռը երթալով տեսակցութիւններ ունեցան մեծ եպարքոսին հետ: Չնայելով որ այսօրուրնէ սկսեալ 4 օր թիւրքաց Գուրպան Պայրամի տօն է եւ պաշտամունքը ամբողջովին փակ, այսուհանդերձ հաստատ աղբիւրէ յայտնի է, որ Բ. Դուռը եւ Ոստիկանատունը վաղը պիտի բաց ըլլան: Այսօրուայ հայոց յախուռն շարժման մեծ նշանակութիւն կը տրուի պաշտօնական շրջաններէ:

Հայոց լրագրաց դրասնեակներն թիւրք պաշտօնեաներով լիքն են: Չափազանց յուզում ու շփոթութիւն կը տիրէ հայ ժողովրդեան ամէն խաւերի մէջ: Հայոց ընդհանուր տրամադրութիւնը կատաղութիւն է կառավարութեան դէմ եւ կը զգան, որ իրենք ալ ոյժ մ'են եւ կրնան իրենց դատն իրենց արիւնով պաշտպանել, քանի որ մեծ օրինակով մը այդ ապացուցին:

Կուռէն 4-5 ժամ յետոյ սուլթանի կողմէն մի փաշա պատրիարքի քով երթալով, զօրքերի առաջնորդութեամբ տարեր են ի պատրիարքարան, ուրկէ կրկին նոյն կերպով երկաթուղւոյ կայարանն առաջնորդուեր եւ անդի Մաքր դիւղ իւր տունն: Պատրիարքարան սրահին մէջ գտնուող սուլթանի վերջերս նուիրած օսմ. թուղրան եւ պատկերը կտոր-կտոր ըրած են:

Միեւնոյն ժամանակ երբ այստեղ մեծ ցոյցը կ'ըլլար, Կ. Պոլսէն մի քանի ժամ հեռաւորութեան վրայ դաւառների հեռադրական թելերն կտրատուած կը զբտնան: Կառավարութեան սարսափը մեծ կ'ըլլայ. — չիցէ՛ թէ դաւառներն ալ շարժման մէջ են եւ ինք լուր մը չի կրնար ունենալ...

Կ. Պոլս, 17 յուլիս, 1890.

ԱԼՄԱԶ ՄԱՆՈՒԿ՝ բաղէչցի, ՋՐՀԱՆԿԻՐ ՅՈՎՀԱՆՆԵՍ՝ սերաստացի եւ վանեցի մը, որոյ անուն դեռ յայտնի չէ, — ահա ազատութեան երեք նահատակներն, սպանեալ այս կիրակուան մեծ ցոյցին ժամանակ: ԵՐԵՎ ՀԱՐԻՒՐ ՏԱՍՆ(*) ձերբակալութիւնք կան հայոցմէ մինչեւ այսօր եւ տակաւին կը շարունակուին: Վանեցի Հաճի Յարութիւն աղային սենեակը խուզարկելով շատ մը «Հնչակ», Բաֆֆիի գործեր եւ յիսուն ոսկի գտնուած են, որոց ամէնն ալ գրաւուեցան: Հաճի աղան այժմ Երւստղն է: Խուզարկութիւնք անթիւ են:

(*) Օգոս. 3 (22 յուլ.) հեռագրի համեմատ՝ ՎՅՆ ՀԱՐԻՒՐ:

Պ — 2

ՄԱՀԱՓՈՐՁ ԱՇԼԳԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԴԷՄ

Իմաստական բուկաններու Պոլսոյ յեղափոխականներու ծառայութեան է նաեւ 1894 Մարտի Աշգեան Պատրիարքի դէմ կատարուած մահափորձը: Այդ մասին կը կարգաձգէ «Երօշակ»-ի 1894 տարուան 7րդ. համարին մէջ, էջ 7 (Մարտ 1894).—

Պոլսից մենք ստացանք այս ըոպէիս.—
Կիւրակի, ամսոյս 13ին Գուժ-Գափուի եկեղեցուց դուրս եկած ատեն՝ Աշգեանի վրայ 3 անգամ ատրճանակ պարսուած է, սակայն չէ վիրաւորած: Արձակողը 22-23 տարեկան երիտասարդ է, միջահասակ. ինքը կիպրոսցի է, անգլիահայտակ, անունը՝ Յակոբ: Մանրամանութիւնները շուտով:

Եւ իբր, հետագայ քանի մը ցրութիւններն ու նամակները, քաղած դարձաւ «Երօշակ»-ին, կը վերաբերին այդ դէպքին եւ անոր հետեւեալներուն ու անդրադարձներուն:

Պ — 3

ԳԱՐԵԳԻՆ ԽԱՍԿԻ ՅՕԴՈՒԱԾԸ ԱՇԼԳԵԱՆԻ ԴԷՊՔԻՆ ԱՌԻԹՈՎ

«Երօշակ»ի 1894 Մայիսի 8 համարին անուած այս ցրութիւնը կու տամք ամբողջութեամբ, իբրեւ հարագատ արտայայտութիւն օրուան մտածելակերպին եւ յեղափոխական քարոզչութեան: Յօդուածը անստորագիր է, բայց կը պատկանի Գարեգին Խասկի գրչին:

ՎԵՐՋԻՆ ԴԷՊՔԻ ԱՌԻԹԻ

Մայիս, 1894 թ.

Մարտ ամսի 13ին Յակովբ անունով մի երիտասարդ փորձեց սպանել Աշգեան պատրիարքին. փորձն անյաջող էր:

Սա առաջին դէպքը չէ. հայ ժողովուրդը շատ անգամ եւ տարբեր ձեւերով է յայտնել Սրբազանին իր բողոքը, բայց միշտ անլսելի է մնացել նրա արդար ձայնը:

Ազգաբնակչութեան խուլ, ճնշուած բողոքի հետ միաժամանակ՝ տեղի է ունեցել եւ ծայրայեղ, տեղուրիտական փորձ.— ընթերցողներն անշուշտ յիշում են Յուլիս 15ի(1) յայտնի ցոյցը: Աշգեանը չխրատուեց. համարելով այդ ցոյցն իբրեւ արդիւնք օտար խառնակիչ տարրերի, յոյսը դնելով նազըմ-բէյի աշխուրջ ոստիկանների վերայ, նա աւելի մեծ եռանդով շարունակեց իր զգուշի արարքները: Բայց ահա դուրս եկաւ ժողովրդի խաւերից նրա գաւակներէց մէկը — Յակովբը, որն արտայայտիչ հանդիսացաւ ժողովրդի եռացող բողոքներին:

Ինչ է այս փաստը: Ո՞վքեր են այդ Աշգեանը եւ

իր նմանները, ի՞նչ բանի են դրանք ձգտում, յանուն ո՞ր սկզբունքի են դրանք ոտնատակ տալիս ժողովրդի ամենասուրբ, անձեռնմխելի իրաւունքները:

Տաճկական բռնակալ կառավարութիւնը ժողովրդի թշնամին է. այստեղ ոչ մի կասկած չկայ. ամէն մի բռնակալութիւն թշնամի է աշխատաւոր ժողովրդին եւ պէտք է լինի: Նա պէտք է աշխատի քայքայուած պահել նրա նիւթականը, մութ խաւար թագաւորեցնել նրա մտաւոր աշխարհում. փչացածութիւն, լիտիութիւն, լրտեսութիւն, զողութիւն եւ այլ հազար ու մի ախտեր սերմանել նրա բարոյական կեանքում, որ ինքը կարողանայ հաստատ ու անսասան մնալ, որ ինքը կարողանայ հող ունենալ իր ոտքերի տակ: Ժողովրդական կեանքի այդ երեք կողմերից որն էլ զարգանայ՝ վնաս, սպանիչ, մահացու վնաս է բռնակալութեան: «Ուզո՞ւմ էք ժողովուրդը պահել հնազանդութեան մէջ, գրում է իր յիշատակարանում՝ Բիշելեոն, աղքատացրէ՛ք նրան եւ մի՛շտ աղքատ պահեցէ՛ք»: Ինչո՞ւ ժողովրդի նիւթական բարօրութիւնը դէմ է բռնակալութեան: — Պարզ է. որովհետեւ միշտ նիւթական հարստութեան հետեւում է ուշ թէ շուտ մտաւոր եւ բարոյական հարստութիւն: Եւ ուր կայ մտաւոր ու բարոյական զարգացում՝ այնտեղ չի կարող երկար դիմանալ որեւէ բռնակալութիւն. զարգացած մարդը չի թողնի, որ իրեն կեղեքեն տասանորդով, զլխահարկով, ուղղակի եւ անուղղակի բազմաթիւ հարկերով, գինուորական տուրքով, «գիշերիէսի»ով եւ այլն:

Մտաւոր եւ նիւթական հարստութիւնը ժողովրդի կեանքում անքակտելի կերպով կապուած են իրար. մէկը կայ՝ կայ եւ միւսը: Եւ եթէ բռնակալութիւնը կատաղի թշնամի է հանդիսանում այդ Ֆակտորներին(2), դա պարզ է ամէնքի համար: Բայց ինչո՞ւ են դէմ ժողովրդին Աշգեանները, Սիմոն բէյերը, Պողոս եպիսկոպոսները, Վանի եւ Էրզրումի փողատէր վաշխատուները ու գունդ գունդ լրտեսները: Ի՞նչ են ուզում դրանք ժողովրդից: Ինչո՞ւ մէկը յանուն «ազգային Առաքելական Ս. եկեղեցու», միւսը յանուն «ազգային եւ ժողովրդական սիրոյ եւ բարօրութեան», երրորդը յանուն «խոհմտութեան» եւ այլն՝ հնազանդութիւն են քարոզում տանջուած ու տանջուող, ուժասպառ ժողովրդին: Ի՞նչն է դրոյում դրանց դէպի այդ ստոր վարմունքը: Ի՞նչն է ստիպում Աշգեան պատրիարքին գրել ամենաստոր ու զզուելի բովանդակութեամբ շրջաբերականներ, այս, այն «առաքելական հայադաւան» եկեղեցում խօսել շնավայել քարոզներ. վերջապէս ի՞նչն է ստիպում այս կամ այն դաւառի վաշխատու աղաներին «չնորհակալութեան թղթեր» կազմել եւ ուղարկել, մատնել տէրութեան իր համաքաղաքացիներին, իր ծանօթներին, մինչեւ իսկ արիւնակից բարեկամներին. ամբողջ աշխարհի առաջ աւազակ, խառնակիչ եւ մարդասպան հրատարակել ամէն մի յեղափոխական գործչի:

Ինչո՞ւ: — Որովհետեւ նրանց նեղ, խժբական շահն այդ է պահանջում: Ինչո՞ւ են գողն ու դայր մութ գիշերներ որոնում, ինչո՞ւ են ջրի պղտոր ժամանակ ձուկ որսալու դուրս դալիս: — Արհեստի շահն է այդ պահանջում:

Բռնակալ է կառավարութիւնը, տգէտ է ժողովուրդը, խեղճ, աղքատ է նա, աւելի շուտով կը հարստանան, աւելի հեշտ կը կարողանան փառք պատուի տիրանալ, շքանշաններ ստանալ ժողովրդի այդ ցեղերը:

Երուսաղէմի Յարութիւն պատրիարքի մի քարոզը, որի մասին գրել էինք մեր անցեալ համարներից մէկում, քարոզչին արժանացրեց մեծ եպարքոսի տեսութեանը եւ Սուլթանի ամենաողորմածաբար շարտած ոսկիներին: Աշրդեան պատրիարքը եւ Միմոն բէյը ազգային ժողովը փակեցին. նրանք եւս արժանացան դեզին մետաղի մի քանի կտորներին: Մասնում է մի ստորաբարձ հայ այս կամ այն մեղաւոր կամ անմեղ մարդուն, — նա եւս ստանում է փող...: Մի՛շտ փող: Եւ այդ փողը նման է այն ոսկրներին, որ տէրը ողորմածաբար ածում է շան առաջ, իսկ շունը հաւատարմաբար պաշտպանում է նրա կայքը:

Աշրդեանի նման մի հողեւորական քար գցեց Կրոնական ժողովի վերայ, փակեց նրան, որովհետեւ այստեղ կար մի ուրիշ բռնապետական ձգտում. այսուհետեւ նա մենակ կամ իր դողակից ընկերներով կը կառավարէ ժողովրդին, մենակ կը կողոպտէ:

Դարձրէ՛ք աչքերդ դէպի Վան, Էրզրում, Մուշ, Երզնկա... Ուղեք՞ր են այդ բազմաթիւ լրտեսները: Համարեա բոլորն էլ մեծ եւ փոքր վաշխառուները, ժողովրդի այդ տղաւիկները: Նրանք մատնում են, նրանք սուտ վկայութիւններ են տալիս, նրանք զրպարտում, մեղադրում են այս եւ այն ողորմելի գիւղացուն, խեղճ արհեստաւորին իրբեւ յեղափոխականներ, որ դուր գան վալիին, որ այս կամ այն կապալը էժան ձեռք ձգեն, որ իրենց հնարովի հրէշաւոր մուրհակները սաղացնեն: Առանց փաշայի կամ զադիի քաղցր աչքն իր վերայ դարձնելու, նրանք չեն կարող անել այն զարհուրելի քանակութեամբ կատարուող ոճիրները, որ տեղի են ունենում այսօր: Բռնակալութիւնը մութ, խաւար գիշեր է, որի մէջ վաշխառուն եւ լրտեսը, էֆէնտին ու բէյը, պատրիարքն ու եպիսկոպոսը հանդիստ ու վստահ կարող են գողանալ, կողոպտել, ծծել ժողովրդի արիւնը, որքան ուզում են:

Օ՛, նրանք շատ լաւ են դուռ, որ ամէն մի յեղափոխական իրենց մահացու թշնամին է: Նրանք լա՛ւ են դուռ, որ այդ մտեցող յեղափոխութիւնն իրենց համար լաւ բան չի խոստանում: Եւ դուք ուզում էք, որ այդ հրէջներն օդնե՛ն յեղափոխական դործին:

Ո՛չ, դրանք չեն կարող օգնել. դրանք յեղափոխութեան կատարող թշնամիներն են եւ աւելի վտանգաւոր, քան տաճիկ բաշխողուկ վարչութիւնը, որովհետեւ դրանք շատ անգամ զինուած են լինում ազգութեան,

եկեղեցու, կրօնքի սրբութեան, խոհեմութեան եւ այլ գէնքերով, որովհետեւ դրանք զիտեն յաճախ խաբի տղէտ ժողովրդին: Սով է Վանում, Էրզրումում, սով է ամէ՛ն կողմ: Բազմաթիւ մանր ու խոշոր վաշխառուների ժամանակը հասել է, նրանք էլ իրենց ատամները սրել եւ որսի են սպասում: Այժմ արդէն տաճիկ վարչութիւնը երախտազիտաբար պիտի վարձատրի այդ վաշխառու լրտեսներին եւ բռնակալութեան փտած հիմքը պաշտպանող տղաւիկներին: Եւ ահա տրւում է նրանց ազատ առպարէզ ամբարները լցնել հազարաւոր փութ ցորենով եւ չլուած ղներով ծախել:

Բացում է մի տեղ մի իւղալի պաշտօն. իսկոյն նստեցնում են մի մատնիչ լրտեսի, որ ի տրիտուր իր արած բոլոր ծառայութիւնների, ծծի ուժասպառ ժողովրդի արիւնը:

Ամէն կողմ տղաւիկներ, մատնիչներ, լրտեսներ, Աշրդեաններ, բէյեր ու էֆէնտիներ. ծծեցէ՛ք, ծծեցէ՛ք ժողովրդի արիւնը, որովհետեւ մօտենում է ձեր վերջը, հասնում է ձեր օրհասը: Յեղափոխութեան սուր սուսերը ձեր գլխին է եւ արդէն փայլում է: Վա՛յ ձեզ...

Բայց ի՞նչ վայ. դրանք գիտեն՞ հանդամանքներին յարմարուել: Տեսաք, տաճիկ բռնակալութեան կործանման հետեւեալ օրն եւ եթ նրանք կը հանդիսանան ջատագով, պաշտպան կատարուած իրողութեան եւ այստեղ եւս կ'աշխատեն որոնել իրենց անհատական օգուտը:

Ընթերցող, կարդացե՛ր եւ «Լուսադէմին» վէպը. յիշի՛ր Հաջի Խրիստոյին: Նա մատնում էր յեղափոխական դործիչներին, իսկ երբ յաղթութիւնն անցաւ վերջիններին կողմը, ողբերուած ընկել էր յաղթական զորքերի առաջն իրբեւ յեղափոխական, իրբեւ դործիչ...

Հայ յեղափոխականը չպիտի խաբուի դրանցից. նա չպէտք է կանգ առնի. թշնամի են դրանք մեզ այսօր, աւելի վտանգաւոր թշնամի կը լինեն տաճիկ բռնակալութեան անկումից յետոյ: Այդ մարդկանց համար սրբութիւն չկայ: Նրանց միակ սրբութիւնն իրենց զբոսանքն է եւ իրենց հանգիստ կեանքը:

Դրանցից էին այն հայ մատնիչները, որոնք ընկան Վանում տեղական մասնախմբի դաշոյնի հարուածից, դրանցից է պնդակահար եղած ոէս Կրպոն, դրանցից են Թարդիբաշեանը, որ հազիւ առողջացաւ իր ստացած վէրքից, Տէր Պողոսեանը, որ ազատուեց յեղափոխական պնդակից. դրանցից է Աշրդեանը, որի վերայ փորձեց երկտասարդ Յակոբն իր ատրճանակի հարուածները: Ոչի՛նչ. այդ շյաջողուեց, մի ուրիշը կը յաջողուի:

Առա՛ջ գնա՛, յեղափոխական դործիչ, — այդ է ուղիղ ճանապարհը. ո՛վ ժողովրդի թշնամին է, նա պէտք է ընկնի. ի՛նչ քօղով էլ ծածկուած լինի նա՝ մեզ համար միեւնոյն է. եկեղեցական է նա թէ աշխարհական, էֆէնտի է, թէ բէյ կամ փաշա, — փոյթ չէ՛ նա պիտի մեռնի:

Յակոբը ժողովրդի գաւակն էր, նա ինքնուրոյն, անկախ յեղափոխական էր, նա ժողովրդի անկաշառ, ինքնածին զիտակցութեան արտայայտիչն էր եւ նրա առաջին փորձը Աշրդեանի, ժողովրդի ցեղերից այդ ամենամեծի վերայ եղաւ:

Դա է միակ ուղիղ ճանապարհը, դա է տանում մեզ դէպի նպատակ:

(1) Կ'ակնարկուի ամկասկած Գում-Գափուի ցոյցին (Յուլիս 1890. — տե՛ս Պ1):

(2) Ազգակցներում (Փրանս. բառ):

Պ — 4

Յ. ԵՈՒՍՈՒՅԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ «ԴՐՕՇԱԿ»ԻՆ

Այս եւ յաջորդող «Նամակ Պոլսից»ները (մինչեւ 1895ի աշուծը) կը գտնուին Հ. Յ. Դաշնակցութեան Պոլսոյ լիազօր ներկայացուցիչ Յովհաննէս Եւսուփեանի (կը գրուի նաեւ Եւսուփեան) գրից: Ներկայ ճամբար առնուած է «Էրօշակ»ի 1894 Մայիսի թիւ 8 համարին եւ կը վերաբրի Աշրդեան Պատրիարքի անհրաժեշտ փորձին:

ՆԱՄԱԿ ՊՈԼՍԻՑ

«Էրօշակ»ի ընթերցողներն իմացան, որ Մարտի 13ին Կիւրակի օրը, պատարագէն ետքը դաւաճան Աշրդեանի անձի վրայ սպանութեան փորձ եղաւ, բայց անյաջող: Այս փորձը սարսափահար ըրաւ Սուլթան Համիտ եւ սիրտը դող ելաւ, վախնալով որ յանդուգն յեղափոխականի գնդակը եւ նրա դաշոյնը վաղը կը նայ իւր եւ իւր պաշտօնեաներու սիրտը մխուել, իւր սիրելիներու արիւնը հոսեցնել, իւր վրէժը լուծել՝ արեան դէմ արիւն հոսեցնելով: Եւ թիւրք բռնապետութիւնը, քանիցս նկատած ենք, օր աւուր կ'արագացնէ իր բռնութիւններով, հալածանքներով, բանտերով ու կախաղաններով այդ ցանկալի ժամը, որի համար յեղափոխականը կ'աշխատի դիշեր ցորեկ եւ կը սպասէ սրտատրոփ:

Թիւրք բռնապետութիւնը, հետեւելով իր խայտառակ քաղաքականութեանը, կ'ուզէ հաւատացնել, թէ հայ ժողովուրդն ապահով ու երջանիկ կ'ապրի, իսկ այն քանի մը խռովարարները հացկատակ, բախտախնդիր, սինլոր օտարահպատակներ են, որ կը մոլորեցնեն իր միամիտ ու հաւատարիմ հպատակները եւ երբեմն երբեմն յուզումներ եւ անկարգութիւններ յառաջ կը բերեն: Թիւրք կառավարութիւնն այս անգամ ալ չընդունեց իր գծած ճամբէն եւ վայրկեան մը ուզեց մոլորեցնել Եւրոպայի հանրային կարծիքը եւ մամուլը յաջողեցաւ:

Ոստիկանութեան նախարարն իսկոյն իր լրտեսներու, ոստիկաններու ու պաշտօնեաներու բերնով ամէն ուրեք լուր տարածեց, թէ Աշրդեանի վերայ փորձ անողը անդլիահպատակ է եւ կիպրոսցի: Այս լուրը հաղորդուեցաւ թէ՛ հայ եւ թէ՛ օտարազգի թերթերուն: Ոստիկանապետի այս սրամիտ (իրենց խելքով) արարքը երկար չտեսեց. շուտով ստուգուեց, որ այդ երկտասարդը ո՛չ անգլիահպատակ է եւ ոչ օտարահպատակ, այլ «իր հաւատարիմ, գոհ ու երջանիկ» հուշակուած հայ հպատակներէն է: Ապուշ կառավարութիւնը կը կարծէ, թէ եւրոպական մամուլը եւ հանրային կարծիքը խաբելով ու մոլորեցնելով պիտի յաջողի իր քայքայուած, կազմալուծուած պետութիւնը պահպանել եւ հայկական խնդիրը խեղդել: Կառավարութիւնը կամաւ կուրանալով՝ կը յուսայ կուրացնել եւ մեծ պետութիւնները, որոնք իր եւ իր ժողովրդի վիճակը աւելի լաւ գիտեն ու իրմէն լաւ կը տեսնեն. բայց եթէ կը լուեն, այդ ոչ թէ կը հաւատան իրեն, այլ որովհետեւ իրենց շահն առայժմ կը պահանջէ լուել, անտարբեր ձեւանալ եւ շահագործել քայքայուած Թիւրքիան եւ Թիւրքիոյ ժողովուրդն անխտրապէս: Բայց այդ ալ երկար չի տեւիլ շնորհիւ յեղափոխութեան հակառակ լուր տարածման ու զարգացման: Բայց դառնանք անգլիահպատակ հրատարակուած Յակոբին:

Յակոբը զուտարիւն թիւրքահպատակ է, Կեսարիա ծնած եւ այնտեղի դպրոցէն ելած: Բաւական բարեկիրթ, խելացի, ընթերցասէր 22-23 տարեկան համակրելի երիտասարդ մէ: Արհեստաւոր է եւ Կեստիկ-Փաշա շաքարադործի մը քով կ'աշխատէր երկար ատեն: Վարպետը շատ գոհ էր իրմէն եւ Յակոբի խորհուրդներէն կը շահուէր միշտ:

Վերջին օրերը Յակոբուր շատ մտազբաղ կ'երեւար, իր դէմքի վրայ պարզ կը տեսնուէր հոգ մը, ցաւ մը կ'երեւէր, որ ներսը բան մը կը կատարուէր, բայց թէ ինչ՞ ոչ ոք չգիտէր, ոմանք հիւանդ կը կարծէին, իսկ ոմանք սիրահարուած:

Փետրուարի 24ին, Վարդանանց տօնի օրը, հրատարակուեց անամօթ եւ դաւաճան Աշրդեանի պատրիարքական շրջաբերականը, ուղղած բոլոր դաւաճական առաջնորդներուն, տեղապահներուն, պատրիարքական փոխանորդներուն եւ վանահայրերուն: Պոլիս մի յուզում առաջ բերաւ տղէտ դասու մէջ, իսկ հասկացող դասու համար մազաչափ նշանակութիւն չունեցաւ, որովհետեւ շունը պատիւ ունի այսօր, Աշրդեան շունի. շուն մը հաջի թէ Աշրդեան՝ մի եւ նոյն է: Եւ այս ոչ միայն հայու համար, այլ եւ օտարի՝ յոյնի, բուլղարի, մինչեւ իսկ թիւրքի: Հայ ազգը Աշրդեանին չի ճանչնար իրբեւ պատրիարք եւ իր ներկայացուցիչ. միայն բռնապետութիւնն է՝ որ այդ գիտնալով հանդերձ՝ Աշրդեանը կը պահէ, կ'ընդունի, որովհետեւ իր նպատակներուն հասնելու համար կը վախնայ, թէ ատկէ աւելի լաւ գործիք մը չգտնէ:

Տխրահոշակ շրջաբերականէն 15 օր առաջ դաւաճան Աշրղեանը կայսերական պալատ կը կանչուի եւ իրմէն բացատրութիւն կը պահանջուի գաւառներում պատահած յուզումների համար: Իրեն կ'ըսուի, թէ խռովութիւնները երթալով փոխանակ նուազելու՝ կը շատանան, կը տարածուին եւ այսօր համարեա ամէնուրեք խռովութիւններ, ընդհարումներ տեղի կ'ունենան (եւ այս ըսողներ միաժամանակ կը յայտարարեն, թէ չնորհիւ Ողորմած Սուլթանի ամէն տեղ խաղաղութիւն կը տիրէ): Կ'երեւի թէ հոս, Պոլսէն, հարուստ հայեր կ'օգնեն, կը քաջալերեն դադարեցնելու, ապա թէ՛ ինչպէս կրնայ աղքատ ժողովուրդ մը այսքան նեղութեանց դիմանալէն զատ, ասպատակաց խմբեր կազմել, զէնք, ռազմամթերք ձեռք բերել ու խռովութիւններ յարուցանել: Դաւաճան Աշրղեանը փոխանակ պատահութեանէն օգտուելու, ժողովուրդի ցաւերի մասին խօսելու, կը սկսի տերեւի պէս դողալ, լեզուն խորը կ'իյնայ եւ կըմկումալով կ'ըսէ «Ինչ գիտեմ, ինչ գիտեմ, ես ձեռքէս եկածը կ'ընեմ, ասկէ աւելի ինչ կրնամ ընել»:

Այս տեսակցութիւնը ժամ մը կը տեւէ. փոխադարձ համաձայնութեամբ կ'որոշուի նզովք, անէծք կարգալ հայ եկեղեցիներու մէջ, բայց ետքը կը խորհն եւ կը խմբագրեն այս շարագուշակ շրջաբերականը, որի հրատարակութեան օրէն սկսան ձերբակալութիւններն եւ բանտարկութիւններն, որոնց թիւը մի քանի շաբթու մէջ հարիւրէն կ'անցնի. գաւառներու մէջ կատարուածները յայտնի չէ: Աշրղեանի «զող ու գողակիցը» մատնիչ Սիմոն բէյն է, որի դէմ ժողովուրդը նոյնչափ զայրացած, յուզուած է, որչափ անոր ընկեր Աշրղեանի դէմ:

Ժողովուրդի դժգոհութեան ու յուզման արտայայտիչը եղաւ Յակոբը իր փորձով, որն, ինչպէս գիտէք, անյաջող եղաւ: Այս անյաջողութիւնը ծանր տպաւորութիւն թողուց եւ իւրաքանչիւրի բերնէն կը լսուէր. «Ան շունը չսատկեցաւ, շունը կենդանի մնաց... ե՛րբ պիտի ազատուենք աղորմէն եւ Սիմոն բէյէն»: Այդ անյաջողութիւնը մի մեծ սուգ էր:

Յակոբը երեք անգամ ուզած է ատրճանակը պարպել, բայց կրակ չէ առած, որովհետեւ ընդունակ էր չիջը ներս է մտած եղեր. երրորդ փորձէն հասկցեր է բանը եւ երբ ուզեր է չիջը քաշել, 2 հոգի՝ Ջանիկ անունով դերձակ մը եւ հիւանդանոցի պաշտօնեայ Մոստիճեանը յարձակուած են վրան, երիտասարդին ձերբակալած եւ յանձնած ոստիկանութեան: Աշրղեանը կը մարի, կ'իյնայ: Ձերբակալութեան ժամանակ Յակոբը պարզութեամբ կ'ըսէ. «Հող չէ, թող ես ձերբակալուիմ, բայց շունը պիտի մեռնէ, որովհետեւ եթէ ինձ չյաջողուց, ընկերներուս կը յաջողի»:

Յակոբին 3 օր շարունակ սոսկալի տանջանքներու են ենթարկած եւ այն աստիճանի, որ ազատուելու համար իր քանի մը ընկերներու անունները տուեր է: Ինչպէս Յակոբը, այնպէս էլ ընկերները, խոստովանած են,

որ իրենք վճռած էին Աշրղեանն սպաննել, որովհետեւ այն օրէն որ Աշրղեան պատրիարք եղաւ, հայ ազգի վիճակ օր աւուր ծանրացաւ ու գէշացաւ, որովհետեւ իրենց վիճակը նա չէր յայտնեւ Սուլթանին ու դարձան չէր խնդրեր:

Յակոբի փորձէն մինչեւ այժմ անհաշիւ ձերբակալութիւններ եղած են: Անգլիացի մը անցեալները շատ իրաւացի նկատեց, թէ այս ինչէ՛ր կ'ըլլայ, Պոլսոյ մէջ հայերը կորան պարզապէս:

Հնչակի թղթակցի հաղորդած լուրը՝ թէ Յակոբ իրեն Հնչակեան է յայտարարած՝ ճիշդ չէ: Յակոբ ինչնուրոյն է եւ զործած է բոլորովին անկախ:

Պ — 5

ՄԱՔՍՈՒՏ ՍԵՄՈՆ ՊԵՅԻ ՏԵՌՈՐԸ(1)

«Իրօշակ»ի Յայն համարիմ մէջ (1894 Մայիս, թիւ 8, էջ 8) կը կարդամք.—

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐ Կ. ՊՈԼՍԻՑ

Ամսոյս 10ին Երեքշաբթի, Ղալաթիա Խուլիար խանի մէջ սպաննութեան փորձ մը կատարուեցաւ Մաքսուտ Սիմոն պէյի վրայ: Սիմոն պէյ իր գրասենեակ դացած ատեն երկու հոգի վրան կը յարձակին, որոնց մէ մէկը ընդունակ կը պարպէ վրան, իսկ միւսը դաշոյնի երկու հարուած կու տայ եւ կը փախչին: Բէնջիւրի մայի վրայ մարդիկ կը հասնին եւ յեղափոխականները կը ձերբակալեն: Սիմոն պէյ արիւնաթաթախ գրասենեակ կը փոխադրեն: Օգնութեան հասած բժիշկներէն ոմանք վէրքերը մահացու կը գտնեն, իսկ ոմանք ապրելու յոյսեր կու տան: Բժիշկները դնդակները չեն կրցած հանել: Երեկոյին լուր տարածուեց թէ մեռաւ, բայց որքան ստոյգ է Սիմոն պէյի մահը, տակաւին չստուգուեցաւ: Նոյն օրն իսկ քանի մը կասկածելիներու տուններ խուզարկուեցան եւ քանի մը հոգի ձերբակալուեցան:

(1) Աշրղեան Պատրիարքի գլխաւոր գործակիցներէն, բարձր պետութեան ծախուած անձ մը՝ ըստ Երուսաղէմի 94 եւ 96 նամակներուն:

Պ — 6

ԵՌՈՒՍՈՒՑԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ «ԴՐՕՇԱԿ»ԻՆ

Անտոնազի, ինչպէս Երուսաղէմի բոլոր նամակները՝ «Իրօշակ»ի 1894-95ի թիւերուն մէջ: Ասած եմք «Իրօշակ»ի 1894 Յուլիսի 9րդ. համարէն (էջ 2-3):

«Մինչեւ դեւին դժոխքը չցուցնես, արքայութիւնը չի ճանչնար» կ'ըսէ հայկական առածը: Դաւաճան Ա-

շրղեանը մինչեւ Յակոբոսի ընկալուելի փողը չտեսաւ, մինչեւ մահուան երկիւղը չզգաց իր լէշի վրայ եւ մահը չտեսաւ իր առջեւ, իր պարտքը չիշնեց:

Դէպքի հետեւեալ օրն իսկ իր հրատարականը ուղարկեց դատական գործոց նախարարին, բայց չընդունուեցաւ: Քանի մը օրէն ետքը թիկնապահներով, լրտեսներով, ծպտեալ ոստիկաններով շրջապատուած՝ նա գնաց նախարարին անձամբ մատուցանելու հրատարականը:

Դատական գործոց նախարարը աշխատած է համոզել զինքը ետ առնել իր հրատարականը եւ կարեւորութիւն չտալ ամենեւին Յակոբոսի դէպքին, մանաւանդ որ կառավարութիւնը պատրիարքի անձը եւ տունը ամէն կերպ պիտի պաշտպանէ. եւ հարկաւոր միջոցներն արդէն ձեռք առնուած են: Չմոռնամ ասել, որ դէպքի հետեւեալ օրն իսկ Նազրմ բէյի — այժմ փաշա — կարգադրութեամբ երկու զինուոր հրացաններով պատրիարքի տան մուտքը կը պահպանեն ներսի կողմէն, իսկ դուրսէն ծպտեալ լրտեսներ պահպան շուներու նման տան շուրջը աշալուրջ կը հսկեն եւ մէկու մը վերայ ամենապղտիկ կասկած նկատածին պէս՝ մարդը կը ձերբակալեն եւ կ'առաջնորդեն ոստիկանատուն, ոտքէն դուրս կը խուզարկեն, երկար բարակ հարցաքննութեան ենթարկուէն ետքը միայն մարդը ազատ կը թողուն: Յարգ այսպիսի դէպքեր շատ անգամ կրկնուած են, այնպէս որ մարդիկ որեւէ կասկածէ զերծ ըլլալու համար հարկադրուած են, եթէ ճամբան պատրիարքի տան մօտով է, ուրիշ ճամբով, պտոյտներ անելով, իրենց ուզած տեղը երթալու:

Չնայելով կառավարութեան տրուած ամէն ապահովութեան, Աշրղեան սարսափահար կը սնդէ իր հրատարականի վրայ: Նախարարը վերջապէս կը խոստանայ հրատարականը Բ. Դուռն ուղարկել:

Աշրղեան Բ. Դուռն հրաւիրուած լինելով, Մեծ Եպարքոսը նոյնը կ'առաջարկէ, ինչ որ դատական գործոց նախարարը, բայց Աշրղեան ոչ մի կերպով չի համոզուիր՝ յիշելով Յակոբոսի խօսքերը. «Հող չէ, եթէ ինձ չյաջողուց քեզ սպաննել, ընկերներուս մէկուն պիտի յաջողուի» եւ կ'աղաչէ, որ իրեն թողնեն Արմաշու վանքը քաշուիլ եւ «հոն աղօթել վասն թանկագին կենաց վեհափառ կայսեր»:

Եպարքոսին հրատարականը մատուցած օրէն ի վերայ եւս բոլորովին հրատարականը պատրիարքութեանէն եւ ոչ մէկ գործի ոչ կը խառնուէր ու ոչ կը ստորագրէր: Ոստիկանութեան նախարարը եւ Սիմոն բէյ ամէն ջանք ըրին ետ առնել տալ Աշրղեանին հրատարականը, դարձեալ չյաջողեցան: Ան ատեն Սիմոն բէյի կարգադրութեամբ սկսաւ պատրիարքական բոլոր գործերը վարել փոխանորդ ձեւակարգեան վարդապետը: Բայց ձեւակարգեանն ալ երկար չկրցաւ վարել այդ պաշ-

տօնը, որովհետեւ յեղափոխականներն անստորագիր նամակաւ մը սպառնացին իրեն եւս սպաննել, եթէ չարունակէ ստանձնած պաշտօնը եւ անմիջապէս չհրատարի: Ձեւակարգեան անմիջապէս իր հրատարականը եւ պատրիարքական կնիքը ու թուղթերը կը յանձնէ կրօնական ժողովոյ քարտուղար Փահլավանեանին, որը եւ կը վարէ այժմ պատրիարքական գործը, իսկ ինքը կը քաշուի Սամաթիա, իր սեփական տունը:

Ամսէ մը ի վեր դադարած են բոլոր ժողովները, ի միջի այլոց եւ ապօրէն ընտրուած կրօնական ժողովը:

Յակոբոսը, որ փորձեց սպաննել դաւաճան Աշրղեանին, ինչպէս յայտնի է, ձերբակալուեց եւ անազորոյն տանջանքներու ենթարկուեց: Յակոբոսի կրած տանջանքներն ամենաքաջատողջ եւ երկաթի կամք ունեցողին անգամ կը մահացնէին ու կը սպաննէին, ո՛ւր մնաց թէ Յակոբոսի պէս թոյլ եւ տկարկազմ մէկուն: Յակոբոսը այդ տանջանքներէն հիւանդացաւ եւ անցեալ շաբաթ հողին աւանդեց: Նահատակի մարմնի հետ ինչպէս վարուեցան գազանները, յայտնի չէ, որովհետեւ մարմինը չյանձնեցին պատրիարքարանին:

Թող թիւրք բռնապետութիւնը շարունակէ իւր տմարդի, մարդախոշոշ վարմունքը հայ յեղափոխականներու հետ, բայց թող վստահ ըլլայ որ այդ ալ երկար չի տեւիլ, որ անմարդասիրական, գազանական վարմունքը հայ յեղափոխականներու թիւը չնուազցնելն եւ յեղափոխութեան չվնասելն զատ, պիտի բազմացնէ անոնց թիւը, պիտի արծարծէ, ծաւալէ ու զօրացնէ յեղափոխութիւնը եւ իր սեփական կործանումն արագացնէ: Թիւրք կառավարութիւնը տանջեց, չարչարեց, խոշտանգեց Յակոբոսի մարմինը, բայց, անոր հոգին անմահ է եւ կ'ապրի իւր սիրեցեալ ընկերներուն մէջ, անոր յիշատակն անջինջ պիտի մնայ բոլոր յեղափոխականներու սրտին մէջ: Իսկ այն սուրբ գործը, որուն Յակոբոսը նուիրեց իր անձը, պիտի շարունակեն իր հաւատարիմ ընկերները եւ պիտի լուծեն Յակոբոսի եւ իր ընկերներու արդար վրէժը:

Սիմոն բէյի մահուան լուրը չստուգուեցաւ: Այդ առթիւ մօտ 200 ձերբակալութիւն եղան, բայց բուն գործիչները՝ Տիգրանը եւ Լեւոնը, որոնց անունները սովորական տանջանքներով կորզեցին Սիմոն բէյի սպանողներէն, չկրցին տակաւին ձերբակալել: Տիգրանի ծնողքը, եղբայրները, փեսաները, ազգականները եւ ընկերները բոլորը ձերբակալուեցան:

Թիւրք կառավարութիւնը դատեց վերջապէս Սիմոն բէյի վերաբերիչներուն. Ալլահը դատաստան համարէ: Դատարանը դատապարտեց մահուան թաղէտը եւ Ստեփանը որպէս սպանիչներ, իսկ ոսկերիչ Ստեփանը եւ խահֆէճի Համբարձումը — բանտարկութեան: Ձերբակալուածներէն շատերը արձակուեցան, բայց մօտ 100 հոգի տակաւին բանտն են:

Պ — 7

ԼՐՏԵՍ ԱՐՏԱՇԵՍԻ ԱՀԱԲԵԿՈՒՄԸ

«Իրօշակ»ի 1895ի 6րդ համարի (Յուճիս) առաջին էջին վրայ կը կարգաձևվի:

ԼՐՏԵՍ ԱՐՏԱՇԵՍԻ ՍՊԱՆՆՈՒՄԸ

Կ. Պուլսի Կոմիտէի որոշմամբ մահի դատապարտուելցաւ լրտես Արտաշէսը: Վճիռը գործադրուեցաւ ամենայն յաջողութեամբ:

Միեւնոյն համարի շնորհիվ Պուլսից կու տայ Կեղծագործական Կոմիտէի վճիռն պատճառաբանութիւնը եւ այլ մամբանամուտքիւններ:

ՆԱՄԱԿ ՊՈԼՍԻՑ

Արտաշէսը բնիկ պուլսեցի էր եւ ոստիկանութեան լրտես ու յայտնի մատնիչ:

Լրտես Արտաշէսը իր շահատակութեան գլխաւոր ասպարէզ ընտրած էր խեղճերու, արհեստաւոր եւ մշակ դասակարգի հասարակութիւնը, որուն կը հետապնդէր ամէն տեղ, սրճարաններու մէջ, թէ արհեստանոցները, հանրային գուարճութեան վայրերէն սկսած մինչեւ խաներու մուտք անկիւնները, ուր կ'ապաստանի պանդուխտ հայաստանցիներ: Իրբեւ մասնագէտ լրտես, իր գործին տէրն էր այդ գարշելին եւ յոյժ վտանգաւոր, որովհետեւ հոգեբանութիւնը միջոց ընտրած էր իր քստմենի ձեռնարկութեան մէջ: Անգամ մը, որ իր որսին հոտը կ'առնէր, ա՛լ անիկա կորսուած էր. շատ հեռուէն արդէն կը նետէր իր թակարդին անտանելի պարանները: Կը սկսէր խօսակցութիւն մը, անվերջ, ուր իր խօսակցին սիրտը կը ջանար գրաւել նախ, ջանալով շահագրգռուել այն ամէն շնչին բաներով, որ անոր սիրելի ըլլալ կը թուին: Ենթադրուած սիրտը կը տաքնայ կամաց կամաց վատահոգի Արտաշէսին վրայ, մինչեւ լրտեսը իր ճարտար հարցումներով հեռուն կը տանի անփորձ մարդը, դէպի անոր գործերը, դէպի հայրենիքը եւ վերջապէս դէպի անոր սրտին խորքերը, անոր հոգուն թաքստոցը սպրդելու համար... Եւ պարզամիտ պանդուխտ հայաստանցիները՝ խարուելով գարշելի լրտեսի քաղցր, անոյշ լեզուէն, կը բացէին, գաղտնիքներ կը հաղորդէին, յայտնութիւններ կ'անէին եւ հետեւեալ օրը կամ քանի մը օր յետոյ կ'երթային բանտերու, մուտք ու խոնաւ բանտերու մէջ քաւելու իրենց մեղքերը, առանց հասկանալու թէ իրենց մատնողը, ձերբակալել տուողը իրենց բարեկամ Արտաշէսն էր: Եւ եթէ պատիկ կասկած մըն ալ ունէին, այն էլ կը փարատէր դժոխքի ծնունդ Արտաշէսը իր բանտային այցելութիւններով, կեղծ մխիթարութիւններով, սուտ կարեկցութիւններով:

Լրտես Արտաշէսն երբեմն կատաղի յեղափոխական մը կը դառնար իրեն որսերուն առջև. պուլսեցիներուն յատուկ պոռոտախօսութեամբ եւ կեղծ ոգեւորութեամբ շանթեր կ'արձակէր թուրք բռնակալութեան դէմ, անոր գարշուծութիւնները կը ներկայացնէր պերճաբար, ինքզինքն ալ յաճախ գոհ մը ներկայացնելով այդ հարստահարութիւններուն, կոկորդիլոսի արցունքներ կը թափէր իր թշուառ եղբայրներուն վրան, եւ երկնքի օգնութիւնը սպառած համարելով, յեղափոխութեան վրայ մասնանիշ կ'ընէր, իրբեւ միջոցի մը, որ ամէնուն ալ ազատութիւն պիտի պարգեւէր:

Ինչպէս չհաւատար խեղճ մարդը, երբ այդ համոզուած տանջուած կեղծող գարշելին գրպանէն յեղափոխական թերթ մը հանէր եւ կու տար իր խօսակցին, պաղատելով, որ ան ալ ուրիշներուն տար, որպէսզի սուրբ գործը արագ յառաջդիմէ: Քանի մը օրէն ետք բանտերը նորէն կը լեցուէին բազմաթիւ զոհերով, որոնց բոլոր յանցանքը միամտութիւնն էր եղած:

Մասնագէտ լրտեսի այդ յատկութիւններն ու անոնց ճարտար կիրառութիւնները չէին կարող վրիպիլ ոստիկանութեան նախարարի օգնական արխանդակ շիւսնի պէտէն: Արտաշէսը շատ շուտով սկսաւ զնահատուիլ եւ այնպիսի դիրք մը գրաւել գաղտնի ոստիկանութեան նուիրապետութեան մէջ, որ շատ ու շատ թուրքերու ալ նախանձը սկսաւ շարժիլ:

Լրտես Արտաշէսի շահատակութիւններ վերջապէս աչքի դարկին, երբ մանաւանդ զոհերն սկսան օրէ օր աւելի բազմանալ. բան մը, որ նպաստեց վերջապէս այդ պժղալի գործին հեղինակը որոնելու եւ գտնելու: Լրտեսի այդ ստոր գործունէութիւնը մանրամասնօրէն տեղեկագրուեցաւ ու ներկայացուեցաւ «Հ. Յ. Գալանկոյութեան» Պուլսոյ Կեղբոնական Կոմիտէին, որ եւ իր Մարտ ամսու նիստերէն մէկուն մէջ՝

Ի նկատի ունենալով, թէ լրտես Արտաշէսը գաղտնի ոստիկանութեան մէջ յայտնի, յարգուած, ճարպիկ եւ վատահոգի լրտես մըն է, որու ի պաշտօնէ լրտեսութիւնը անվիճելի կերպով կը հաստատուի բազմաթիւ փաստերով եւ իրողութիւններով, առանց տարակոյտի հետք մը թողնելու:

Ի նկատի առնելով, որ լրտես Արտաշէսի ձեռքով բազմաթիւ ձերբակալութիւններ, խուզարկութիւններ, բանտարկութիւններ, մատնութիւններ տեղի ունեցան, մանաւանդ սկսեալ այս տարուայ Յունուար ամսէն, որոնց միակ յանցաւոր ըլլալը վկաներով կը հաստատուի:

Ի նկատի ունենալով, որ կեղծ յեղափոխական ձեւանալով, բազմաթիւ միամիտներ խաբած եւ դաւած է, նոյնիսկ յեղափոխական թերթեր տալով եւ խուզարկութեանց ժամանակ բռնութիւններ անմեղ մարդոց դէմ կարանները յեղափոխական թերթեր ձգած եւ անմեղ մարդոց բանտարկութեան, դատապարտութեան եւ աքսորման հեղինակ ըլլալը ու յանցաւորութիւնն կը հաստատուի բազմաթիւ փաստերով եւ վկայութիւններով:

Ի նկատի ունենալով, որ լրտես, մատնիչ Արտաշէսը շնորհիւ իր ընդունակութեան, ճարպիկութեան,

գարգացման եւ սրամտութեան (յատկութիւններ, որոնցմէ կատարելագոյնս գուրկ են թուրք լրտեսները), վերջերս կատարեալ պատուհաս մը եղած էր հայ հասարակութեան համար,

Լրտես Արտաշէսը մահուան դատապարտեց Եւ այդ վճիռն գործադրութիւնը յանձնեց իր իրաւասութեան ներքեւ զոնուող խմբերէն թ. ի ահաբեկիչներուն:

Լրտես Արտաշէսի մահուան վճիռը ահաբեկիչները ամենայն յաջողութեամբ կատարեցին Ապրիլի Յին, Երկուշաբթի երեկոյեան ժամը 7ին Ղալաթիա փողոցի մը մէջ:

Մինչդեռ լրտես Արտաշէսը մահամերձ վերաւորուած, դաշոյնի վէրքերէն մահուան տաղնապի մէջ գեթինը կը տապալուէր, ոստիկանութիւնը փութաց օգնութեան եւ մեր սիրելին հիւանդանոց փոխադրեց, ուր եւ քանի մը ժամ ետքը իր սեւ հոգին Սուլթան Համիդին աւանդեց:

Իր աւանդական սովորութեան համեմատ ոստիկանութիւնը բազմաթիւ մարդիկ ձերբակալեց, իրր ոճրի հեղինակ, ի միջի այլոց նորէն ձերբակալեց այն 8-10 անձերը, որոնց ամիս մը առաջ բանտարկել տուած էր լրտես Արտաշէսը, բայց 15 օր բանտարկութենէն ետքը անպարտ արձակուած էին: Չնայելով բազմաթիւ ձերբակալութիւններուն, ոչ մէկուն վրայ կրցան ապացոյցի նշան մը գտնել:

Մահուան վճիռը գործադրող ահաբեկիչները՝ շնորհիւ վեհափառ սուլթանի, ազատ կը շրջին քաղաքի մէջ:

Պ — 8

ԱՊՐԻԼ ՅԻ ՅՈՅՅԸ ԲԵՐԱՅԻ ԳԵՐԵԶՄԱՆՈՑԻՆ ՄԷՋ

Այս եւ յաջորդ քրթակցութիւնները, երկուսն ալ առնուած «Իրօշակ»ի 1895 Յունիսի համարէն (թիւ 7), կու տամք իբրեւ վկայութիւն՝ այն օրերու Պուլսոյ յեղափոխական խմբումներուն, ինչպէս նաեւ Իզմիրի Յատրիարքի Յիստմար գոյութիւն ունեցող համաժողովրդական համակրանքի:

ԱՊՐԻԼ ՅԻ ՅՈՅՅԸ ԲԵՐԱՅԻ ԳԵՐԵԶՄԱՆՈՑԻՆ ՄԷՋ

Պուլսի մէջ մեծ ժողովրդականութիւն կը վայելէին մեռելոց տօները. ժողովուրդը զուեղազուեղ կը դիմէ արուարձաններուն մէջ զտնուած ծանօթ դերեզմանոցները, ուր ամբողջ սերունդներ կը հանգչին անվերջ, եւ որոնք կը ներկայանան իրր յուշարարներ պատմական անձերու եւ անցքերու:

Այդ օրը, Ապրիլի Յին, Չատիկի մեռելոցին երկուշաբթին, խուռն բազմութիւն մը գրաւած էր Բերայի հայոց հոշակաւոր դերեզմանոցը, — հոշակաւոր այն կարը մը ծանօթ խնդիրներու շնորհիւ, որ ծագեցան

ժամանակի Ազգային Վարչութեան ու կառավարութեան միջեւ, — որուն մատրան մէջ տիրանուն եպիսկոպոս մը, Բարթողիմէոս Պուլսոյի վոնտուած առաջնորդը, անդ պատարագելու հրաւիրուած էր: Պատարագի աւարտումէն ետքը, հին սովորութեան մը համաձայն, հողեհանդատի պաշտօն մը պիտի կատարուէր գերեզմանոցին շրջափակին մէջ ամփոփուած նահատակի մը շիրմին վրան: Իր ունայնամտութեամբ ալ ծաղրելի ու զղուելի եղած եպիսկոպոսը ոստիկաններ կը հրաւիրէ կարգ պահպանելու՝ թափօրի առաջանալու ատեն: Ժողովուրդը, արդէն յուզուած գերեզմանոցին յարուցած պատմական յիշատակներովը, կը վրդովի եպիսկոպոսին այդ անվստահութենէն եւ խորապէս վշտացած այդ վերաւորանքէն, կը սկսի աղաղակել՝ թէ իրենք թուրքերէն պէտք չունին դաս առնելու հայ արարողութեան մը պատշաճ յարգանքն ընծայելու համար եւ խօսքը գործի փոխելով, կը հրեն, կը հրմշտկեն ոստիկաններն ու զինուորները եւ բռնի կը հեռացնեն:

Արարողութիւնը հազիւ վերջացած՝ ժողովուրդը կը սկսի իր ուրախութեան եւ սովորական զուարճութեան անձնատուր ըլլալ: Ամէն կողմէն կը լսուին հրագններու պայթիւն, ուխտադնացութիւններու ատեն աւանդական անհրաժեշտ եղած բան մը, սովորութիւն, որ յոյներն ալ կը պահեն սիրով: Սակայն ոստիկանները, որոնք ամէն պայթիւն յեղափոխական շարժման մը բռնկելը կը կարծեն, ահ ու սարսափի մէջ կ'իյնան: Հրագններու երեւումը հայ ձեռքերու մէջ գայրոյթ կը պատճառէ, մանաւանդ իրար կ'անցնին, երբ դաշնակցական քաջարի երիտասարդի մը ձեռքին մէջ կը նշմարին ընտիր ունեւորները: Յեղափոխական մը ձերբակալելու, բռնելու յոյսով ոստիկանները միահամուռ կը խուսժեն երիտասարդին վրան, բայց հաշիւը սխալ եղած էր, ժողովուրդը ի նկատի առած չէին, այն ուժը, որ օրէ օր սպառնալից դիրք մը կը ստանայ իր կեղեքիչներուն հանդէպ: Կատաղութեան, գայրոյթի աղաղակ մըն է, որ կը բրդի ամէն կողմէն: — «Ա՛՛՛՛՛՛՛ իրաւունք տուաւ ձեզ գալու, քիթերնիդ խոթելու մեր զուարճութիւններուն մէջ, կը գոռայ խլացնող ձայն մը ամբոխին մէջէն, մենք օր մը օրանց մեր պայրամներուն խառնուած, արգելք եղած ենք»: — «Ա՛՛՛՛ ինչ լրտեսութիւն է, կը պոռար հուժկու կոկորդ մը, ինչո՞ւ յոյներն իրաւունք ունին զէնք արձակելու եւ մենք ո՛չ, հէ՞, ինչո՞ւ»: Եւ տիպ մըն է կը սկսի: Թուրքի կոյր, տղէտ մուկանդութեան, ոստիկանների գազրելի լըրութեան դէմ կուտակուած գարշանքն եւ մաղձը կը պոռթկան սրտերէն: Ժողովուրդին աչքին ալ բան մը չ'երեւար, ամէնքն ալ միահամուռ կ'իյնան ոստիկաններուն ու զինուորներուն վրան, ոչ միայն ազատելու երիտասարդն, որ քաջարար կ'ընդդիմանար, այլ եւ դաս մը տալու այդ կոպիտ պաշտօնեաներուն:

Ամբոխի կատաղութեան առջեւ շուտով ընկրկեցան ոստիկանները ու զինուորները. իրենցմէ մէկը այդ մի-

Չոցին կը փորձէ դուրս ելլալ գերեզմանատնէն, մերձակայ զորանոցէն օգնութիւն պահանջելու համար, յաղթ մշեցի մը, դաշնակցական, կը հասնի ետքէն ու կռուի մէկ հարուածով գետին կը փռէ գինուորը:

Մինչ ասդին՝ գերեզմանոցին մէջ, գործն այդ կերպարանքը կը ստանար, անդին՝ Բերայի զորանոցներուն մէջ, ուր ընդհարման լուրը հասած էր արդէն, մեծամեծ պատրաստութիւններ կը տեսնին, իսկոյն խեղդելու համար այդ նոր ապստամբութիւնը: Կէս ժամ շանցած, 500 զինուորներ վազէ վազ կը հասնին եւ կը պաշարեն գերեզմանոցը չորս կողմէն, մինչ հետէ ուրիշ մաս մը ներս կը մտնէ խռովութիւնը զսպելու համար սուրիներով: Բայց ալ ուշ էր. սուրիներուն տեսքը եւ զորքի շատութիւնը ժողովուրդը չվախցնելէ զատ, աւելի եւս կը կատուեցնէ: Ճակատ ճակատի, կռիւր կը սկսի, մեծամեծ համեմատութիւններ առնել սպառնալով: Ժողովուրդը կը դիմադրէ ամէն կարելի միջոցներով. մինչ ոմանք քարերով կը յարձակուին զորքին վերան, աւելի յանդուգներ զինուորներու ձեռքէն սուրիներ կը խլին եւ անոնցմով կը վիրաւորին...

Կռուողներու աղաղակը, տղաքներուն ու կիներուն վայնասունը, զինուորներուն գայլուստը փանիկ(1) մը կը ձգէ վերին Բերայի մէջ: Ո՞վ գիտէ գործը ինչ աղետալի կերպարանք կրնար ստանալ, եթէ այդ միջոցին շանցներ գերեզմանոցին մօտէն ուսական դեպքանք, որ թուրքերուն այդ յիմարութիւնն ալ դարմանելու կը փութայ, իսկոյն յայտնել տալով պէտք եղած չըջանակներուն, որ զգուշանան նոր Սասուն մըն ալ Պոլսի մէջ առաջ բերելէն: Բարձրագոյն եկած հրամանի մը համեմատ, յոգնած զինուորները ետ կը կանչուին, դերեզմանոցը կը բացուի եւ ժողովուրդին թոյլ կը տրուի ցրուելու:

Այս դէպքը շատ մեծ տպաւորութիւն առաջ բերաւ հասարակութեան վրայ. կառավարութիւնը աչք վախցնելու համար քանի մը ձեռքաւարութիւններ կատարեց հետեւեալ օրը, բայց նոյն օրն էր, որ մարդ մը յաղթական կերպով կը մտնէր Բերայի հայոց թաղ-խորհրդարանը եւ սուրի մը յանձնելով ատենապետին, կը խնդրէր, որ պաշտօնապէս իր տիրոջը վերադարձնէ, «որովհետեւ, կ'ըսէ, հիմա ալ պէտք չունիմ, իսկ պէտք եղած ատեն նորէն կրնամ ձեռք անցընել»:

Սուլթանն այնքան շարացած էր այս անցքէն, որ հրամայեց հետեւեալ օրն իսկ արձակել իր պալատի մէջ պաշտօնավարող հայերը (սպասաւոր, խոհարար եւ այլն):

Այսպիսով նշանաւոր օր կը մնայ Ապրիլի 3ը, ժողովրդային գիտակցութեան ինքնաբերաբար արտայայտութեան հետզհետէ յաճախ կրկնուող դէպքերէն մէկը, որոնք միահամուռ ազգային յեղափոխութեան պատրաստիչները պիտի ըլլան մօտիկ ապագային մէջ:

(1) Իրարմցում, խուճաղ (Փրանս. բռա):

Պ — 9

ՄԱՅԻՍԻ 11Ի ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՑՈՅՑՈՒ

Յոյզերու եւ յոյսերու, խանդավառութեան օր մը եղաւ Համբարձման Հինգշաբթին:

Առտու կանուխ, ամէն կողմէն, հետիոտն, ձիով, շոգեկառքով, խառն բազմութիւն մը կը դիմէր Ս. Փրկչի հիւանդանոցը, ուր յառաջագոյն հրատարակուած ազգարարութեան մը համեմատ, պատրիարքը հանդիսաւոր պատարագ պիտի մատուցանէր:

Համբարձման տօնը կատարելու տննչը չէր միայն, որ այդ մօտ 20,000 հայերը կը քաշէր, կը բերէր հոն, այլ իրենց ներքին յուզումներուն ելք մը տալու, իրենց այժման պատրիարքին բերնէն միթարութեան խօսք մը լսելու, իրենց հայրենիքին բախտը վճռող աւետիք մը զողնալու անոր բերնէն. — ահա այդ էր, որ կը մղէր ստուար ամբոխը դէպի հիւանդանոցի դաշտ ու պարտէզը, որ աւելի քան չորս տարիէն ի վեր ժողովրդի անկեղծ ուրախութեան ձայն մը հնչած չէր:

Դեռ առտուն իսկ ողբերգութիւնն այնքան ուժգին էր, որ ամբոխէն մաս մը ուզեց վար առնել եւ բզիկ բզիկ ընել օսմանեան դրօշակը, որ կը ծածանէր հիւանդանոցին դրան վերեւ եւ հազիւ քանի մը «տէր-տէրներու» ու «խոհմաներու» միջնորդութեան շնորհիւ այդ դիտաւորութիւնը գործ չդրուեցաւ:

Պատարագն սկսած է. փոքրիկ եկեղեցիին տարածութենէն տասնապատիկ աւելի բազմութիւն լեցուած է դուրսը. ո՞վ է, որ կը լսէ պատարագը. «ամէնքնեք կը թնդան յանկարծ առաջին շարքերէն, որոնք հետք հետէ մեծ մեծ ալիքներով կը կրկնուին բոլոր ետեւի շարքերուն մէջ, երբ պատրիարքը մաղթանքներ կ'ընէ մարդասիրական դաղափարներով լեցուն իր քարոզի վերջը:

Ժողովուրդը չի հասկնար անոր ըսածը, որովհետեւ, չի լսեր. բայց կ'ըմբռնէ դպրոցումով, երեւակայութեամբ:

Պատարագի արարողութիւնը լմնցած է. պատրիարքը շրջապատուած եկեղեցականներով ու ժողովներու անդամներով, կը յառաջանայ դէպի հիւանդանոց: Ծափեր ու կեցցէներ կ'որոտան, համբոյրներ կը թրջին պատրիարքի ձեռքերուն, կուրծքին, զրանցքին: Յանպատրաստից թափօր մը կը կազմուի, որ կ'առաջնորդէ պատրիարքին յաղթական դնացքի մը պէս. ողբերգութեան ծայրագոյն աստիճանը կը հասնի, երբ յանկարծ ամբոխին մէջ հուժկու ձեռքեր կարմիր խռով ձերմակ դրօշակներ կը ծածանեն. հազարաւոր բերաններ, հազարաւոր ձեռքեր մոլեղին կեցցէներով ու ծափերով դաշտը կը թնդացնէին: Զգացումները, որ շատոնց ի վեր կաշկանդած էին, ազատ թռիչք մը ստացան եւ անհուն ողբերգութեամբ, սրտի խորքերէն, վիշ-

տերու մէջ կոշտացած ձայներ կը հնչեցնեն ազգային նշանաւոր երգեր: Սուրբ մը ասդին «Մայր Արաքսին» կ'երգէր խանդավառ եւ տխուր, հոս ուրիշներ՝ երիտասարդ, կատաղի հնչիւններով «Չայնը հնչեց էրգրուծի լոններէն» կ'որոտացնեն. մինչ անդին ծեր պանդուխտներ «Միժեռնակը» կը փորձեն իրենց խոպոտ ձայներով: Այդ ընդհանուր խանդավառութիւնը մոլեղութեան փոխուեցաւ, երբ յաղթանգամ մշեցիներ «Հերիք որդեակ» սկսան:

Այդ միջոցին պատրիարքը, որ մտած էր յիմարանոցը այցելելու, դուրս կ'ելնէ եւ դէպի որբերու վարժարանը կ'ուղղէ իր քայլերը: Պատրիարքը նորէն տեսնելով, ամբոխը «կեցցէ Իզմիրլեան» աղաղակեց, բայց շուտով «կեցցէ Հայաստան» խեղդեց բոլոր գոչումները: Այլ վախ չմնաց. այդ միակ բառը ելեկտրացուց ժողովուրդը, թաշկինակ, դաւազան, գլխարկ կը տատանին օդին մէջ. Ֆէսը դետնէ գետին կը պատրուուի, դաւազաններու ծայրը մշեցիի նախուս արախիբը կը բարձրանայ: Դրօշակները արդէն կը սկսին ծածանիլ եւ յանպատրաստից ճառախօսներ կը բարձրանան ուսերու, աթոռներու վրայ, որոնք Սասունը կը յիշեցնեն եւ «կեցցէ Յեղափոխութիւն», «կեցցեն դաշնակցականները», «կեցցեն հնչակեանները», «անկցի Սուլթան Համիդ» կը պոտան: Վարդապետ մը այդ միջոցին փորձեց համոզելու ամբոխը, որ քիչ մը խոհեմ գտնուին եւ իրենց զգացումներն չափաւորեն. երիտասարդները ձեռքերնուն վրան բարձրացուցին խեղճ մարդը եւ «կեցցէ Հայաստանով» պոցեցին անոր բերանը, թող շտալով, որ իր խօսքը շարունակէ. հայր սուրբը ինքն ալ բռնկեցաւ եւ համոզելու տեղ, համոզուած ետ դարձաւ:

Երբ ժամ մը ետքը պատրիարքը վարժարանէն ետ կը դառնար ճաշարան մտնելու, երկու մշեցի կիներ դրան առջեւ կեցած «Ազնիւ ընկերը» նուազեցին սրինգի վրայ: Յուզումներէն յոգնած, պատրիարքը քաշուեցաւ քիչ մը հանգստանալու: Ժողովուրդը այլ եւս գործ չունէր հիւանդանոցին մէջ. «տղա՛յք, պարտէզ» աղաղակը ամէնքն ալ հաստատութեան դիմացի պարտէզը մղեց: Ամբոխը հոն խուժած միջոցին, դրան մօտ հանդիպեցաւ բանտէն նոր ազատուող ալեգարդ քահանայի մը, որ իր կերկեր ձայնը կը միացնէր անոնց կեցցէներուն: Ժողովուրդը յուզուած, ծերուկը շրջապատեցին եւ սկսան համբոյրներ տեղալ անոր լոռմած այտերուն, մօրուքին եւ ձեռներուն: Քիչ մը ետքը նորընծայ մը եկաւ պատրիարքին կողմէն յորդորելու որ քիչ մը շափաւորեն իրենց խանդը եւ ցոյցերը: Նորընծան պարտէզին մէջ, աղբիւրին քով կայնեցաւ, սպասելով որ լուծուի հաստատուի. վերջապէս քիչ մը հանդարտեցան եւ տէր հայրը սկսաւ խօսել, բայց ի՞նչ... Սըրբազանի կողմէն յայտնեց՝ որ շատ ուրախ է տեսնելով հայերը այդպէս սիրով, բայց կը փափաքէ, որ այդ «էրը ոչ թէ ժամանակաւոր, այլ յաւիտենական ըլլայ

եւ հաստատուն: Ծափերն ու կեցցէները կը միջակէտէին տէր հօր խօսքերը:

Թափօրներ վերստին սկսան կազմուիլ, ծեր, տղայ, երիտասարդ, ծառի ոստեր ձեռքերնին, դրօշակներով արդէն սկսան իրենց երգեցիկ դնացքները պարտէզին շուրջը, մինչ ներսը հիւանդանոցին մէջ, ուր կը ճաշէր պատրիարքը, բազմաթիւ հրաւիրեալներու հետ, կենացներ կ'առաջարկուէին եւ ատենաբանութիւններ ու ճառեր կը խօսուէին, ո՛չ անմասն դուրսը տիրող խանդավառութենէն:

Երեկոյեան դէմ, պատրիարքին մեկնելէն ետքը, ցոյցերը ոչ միայն շուրջապատեցան, այլ աւելի եւս սաստկացան: Ոստիկանութիւնը փորձեց երիտասարդ մը ձեռքաւարելու, բայց ամբոխը խեց անոր ձեռքէն. հետեւեալն այն եղաւ, որ խոհեմութիւնը համարեցին բռնաւ չմիջամտելու. բայց բազմաթիւ լրտեսներու շնորհիւ կրցան նշանակել շատերու անուններ. հետեւեալ օրն իսկ 50 հոգիի չափ ձեռքաւարուեցան եւ տակաւին ձեռքաւարութիւնները կը շարունակուին եւ շատերը կը փնտրուին:

Այդ օրը թէեւ, ինչպէս ըսինք, ոստիկանութիւնը խոհեմութեամբ չմիջամտեց, վախնալով հակառակ պարագային մեծ կոտորածի մը հանդիսավայր անել Փրկչի պարտէզը, բայց ամենայն աշարջութեամբ հետեւեց եւ նշանակեց ցոյցի առաջնորդները, որոնց թիւը, կ'ըսուի, 500էն աւելի է:

Ծպտեալ ոստիկաններու եւ լրտեսներու թիւը նոյնպէս հարիւրներու կը հասնէր. ոստիկանութեան նախարար Նազըմ փաշան եւս ծպտեալ հոն էր: Բազմաթիւ հեծեալ ոստիկաններ եւս պարտէզի շուրջը բլուրներու վրայ անթարթ աչքերով կը հսկէին:

Եթէ այդ ցոյցի հետ ժողովուրդը միացնէր եւ գործը, բզիկ բզիկ անէր ոստիկանները, կոտորէր հարիւրաւոր լրտեսները, սպաննէր նոյնիսկ ծպտեալ արիւնարբու Նազըմ փաշան, աւելի գոհ պիտի ըլլայինք: Այժմ գործելու ժամանակն է, գործով, արիւնով ցոյց անելու է եւ ոչ թէ վերսկսելու է մեր վաղաճեղի տրիւրայիշատակ սահմանադրական-ճպտուի ցոյցերը...

Պ — 10

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ ՀԱՃԻ ՏԻԳՐԱՆԻ ԱՀԱԲԵԿՈՒՄԸ

«Դրօշակ» 1895ի 7րդ. համարի (Յուլիս) առաջին էջին վրայ կը կարգաձգ.—

ՊՈԼԻՍ-ԿՈՄԻՍԵՐ ՀԱՃԻ ՏԻԳՐԱՆԻ ՍՊԱՆՈՒՄԸ

Սոփիայից մեզ հեռագրում են.—
Յունիսի 2ին (ն. տ.), երեկոյեան ժամը 8ին, Կ.

Պոլսում դաշնակցական մի ահաբեկչի ձեռքով սպան- նուեցաւ նշանաւոր պոլիս-կոմիսէր(1) ՀԱՃԻ ՏԻԳՐԱ- ՆԸ: Զարնողը ազատ եւ ապահով է: Ընդհանուր սար- սափ կառավարչական շրջաններում եւ մեծ ուրախու- թիւն ու խանդավառութիւն ժողովրդի մէջ: Մանրա- մասնութիւնը նամակով:

(1) Փոլիս-ֆամիսէր (commissaire de police), — աստի- կանապետ:

Յաջորդ՝ Տրգ. համարիմ մէջ (Յուլիս) կը գտնեմք Պոլսոյ Կեդրոնական Կամիտէի պաշտօնակամ ամբաստանագիրն ու վճառ- գիրը:—

ՈՍՏԻԿԱՆ ՀԱՃԻ ՏԻԳՐԱՆԻ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Կեդրոնական Կոմիտէի Մայիս 7ի, 61րդ նիստին մէջ՝ քննութեան ենթարկուելով այն մանրամասն տե- ղեկագրերը, որոնք կազմուած էին նշանաւոր Հայ ոս- տիկան կոմիսէր Հաճի Տիգրանի ամենագնում գործու- նէութեան մասին, տեսնուեցաւ որ

Հաճի Տիգրանը, որդի Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցիի նախկին լուսարարի մը, բաւական ատեն ծա- ուսյած է նոյն տեղ չօրը պաշտօնով, ժամանակ մը սպասուորած է նոյն եկեղեցիին քարոզչին Յովսէփ վարդ. Այվազեանի քով, եւ ապա ընդունած է սարկա- ւազութեան կարգը:

Ոստումով մը, որ այնքան սովորական է մեր մէջ, եկեղեցական կոչման պատրաստուող այդ գարշելին, իր ընդունակութիւններուն աւելի յարմար կը գտնէ՝ ինքզինքը նուիրել զգուելի գործի մը, որ շատ աւելի շահաւոր կրնար ըլլալ իրեն, այն է լրտեսութեան:

Եւ հաշիւը սխալ ըրած չէր:

Տիգրանն՝ ի բնէ արդէն խօսու, սրամիտ, ճարպիկ, առաջին օրէն յաջողութիւն դտաւ իր նոր ընդգրկած ասպարէզին մէջ, ու այնքան պէտք պիտի ունենար հի- մա իր ընդարձակ ծանօթութիւններուն, Ղալաթիոյ եւ Բերայի հայերուն, մանաւանդ կրթուած դասակարգին, որոնց հանդիպելու եւ ճանչնալու շատ առիթներ ունե- ցած էր Ղալաթիոյ եկեղեցիին ու խորհրդարանին մէջ, ուր կը գումարուէին Ազգային ժողովի նիստերը, ուր տեղի կ'ունենային այլ եւ այլ խորհուրդներու գումար- րումները, ուր կը գտնուէր Ազգային Մատենադարանը, ուր վերջապէս, իր վարդապետի սենեակին մէջ, յաճախ տեսած էր այդ դէմքերը:

Իր գործունէութիւնը թէեւ բանուկ, բայց աչքի չէր զարկած տակաւին, երբ վրայ հասաւ տէր Սուքիասի սպանութեան փորձը Մայր եկեղեցիին մէջ: Այդ օրը հաճի Տիգրան հոն կը գտնուէր իր պաշտօնին բերմամբ. ճանչցաւ երեք ահաբեկիչները եւ կառավարութեան մատնեց անոնք:

Այնուհետեւ ա՛լ բացուած էր իր ճամբան. ոստի- կանութեան նախարարի մասնաւոր ուշադրութեան ար- ժանացաւ հիմա, ո՛չ միայն իր մասնաւոր յատկութիւն- ներով, որոնք գնահատելի էին լրտեսութեան գործին համար, այլ եւ իր կատարած այդ նողկալի արարքով, որ իր գործունէութեան առաջին շրջանին գլուխ գոր- ծոցն եղաւ:

Ժողովրդին համար պատուհաս մը եւ ոստիկանու- թեան համար դիւտ մը եղաւ հաճի Տիգրան. առաջին անգամն ըլլալով՝ նազըմ փաշա անոր անձին մէջ գտաւ գործին մարդը. եւ հաճի Տիգրան շուտով ոստիկան եւ ապա ոստիկան-կոմիսէրի աստիճանը բարձրացաւ:

Ալ անկէ ետքը հաճի Տիգրանի մատը ոստիկանու- թեան ամէն գործի մէջ կարելի էր տեսնել:

Խուզարկութի՛ւն մը հարկ էր ընելու հայու մը տան մէջ, Պոլսի ո՛րևէ թաղ մը, անոր ցուցմունքնե- րով, առաջնորդութեամբ՝ ու մասնակցութեամբ կը կա- տարուէր: Յամառ բանտարկեա՛լ մը պէտք էր խոստո- վանեցնել, հաճի Տիգրանի ճարտարութեանն էր, որ դիմում կ'ընէին: Յեղափոխականներ որսալու կամ պա- տահամար գտնուած հետքեր բանալու եւ զաղտնի հե- տապնդելու գործ մը կար, սարկաւազութեանէ վիժած հաճի Տիգրանն էր, որուն կը յանձնուէր այդ դժուարին ու փափուկ գործը: Կը ծպտուէր, ինչպէս ո՛չ ոք փորձած էր իրմէ առաջ. կեղծ ծամերով, կեղծ մօրուքով, մու- րացկանի հազուատով, կառապանի տարազով, ջրհան- կիրի նման, վերջապէս այն ամէն կերպով, որով կրնար մուտք ունենալ ժողովրդի այլ եւ այլ խաւերուն մէջ: Տիգրան յոգնել չէր դիտեր. իր ամբողջ մտաւոր կարող- ութիւնները լարած՝ անձնատուր էր եղած իր գործին, ուր թուրք ոստիկաններու համբաւեալ իշային տխար- րութիւնը կատարեալ ասպարէզ մը կը բանար իրեն, առանց մրցորդի:

Թուրք ոստիկանութիւնը մինչեւ հիմա ունեցած չէր հաճի Տիգրանին նման հետախոյզ մը:

— Ուստի Կեդրոնական Կոմիտէն իր վերոյիշեալ Մայիս 7ի 61րդ նստին մէջ՝

Ի նկատ առնելով, որ ոստիկան-կոմիսէր հաճի Տիգրանին վերադրուած բոլոր յանցանքները՝ իրբեւ լրտեսի, իրբեւ մասնիչի, իրբեւ կառավարութեան գոր- ծիք-պաշտօնեայի, անոր հնգամեայ (1890-1895) դադ- րելի գործունէութեան շրջանին մէջ, կատարելապէս կը հաստատուին տեղական կոմիտէներու ներկայացու- ցած տեղեկայրերով եւ մատնիչ հաճի Տիգրանի զոհե- րուն անձնական վկայութիւններով,

Ոստիկան-կոմիսէր հաճի Տիգրանը մահուան դա- տադարտեց

Եւ վճռին պորձադրութիւնը յանձնեց Ռուսը կոմի- տէի Թ-եան խմբի ահաբեկիչներուն:

— Մինչդեռ ահաբեկիչները կը հետեւին հաճի Տիգրանին, պատեհ առիթ մը որոնելով վճիռն ի գործ

դնելու, դատապարտեալը նոր յանցանք մըն ալ աւել- ցուց իր բազմաթիւ ոճիրներուն. Համբարձման տօնին (Մայիս 11) ժողովրդային ինքնարուխ ցոյցին մասնակ- ցողներէն 70 հոգիի ձերբակալուածը, դէպք մը, որ կըր- նար շատ ծանր հետեւանքներ ունենալ, եթէ միայն ոս- տիկանութիւնը չփութար օր առաջ արձակելու այդ մարդիկը, նոր խոռովութեան եւ աւելի մեծ դժգոհու- թեան առիթ չտալու համար:

— Վերջապէս Մայիս 21 (Յունիս 2)ին երեկոյեան ժամը Տին ահաբեկիչները կը հասնին Տիգրանին ետե- ւէն Բերայի մէջ, իր տան մօտերը: Ահաբեկիչներէն մէկը երեք անգամ կը պարպէ ոէվօլվէրը մատնչին վը- րան, երրորդ հարուածին Տիգրան, որ սարսափած էր, ինքզինքը կը գտնէ եւ ինքն ալ իր բէվօլվէրը կը քաշէ ու կ'արձակէ: Գնդակը կը վրիպի. ահաբեկիչներու չորրորդ զնդակը կը ջախջախէ հաճի Տիգրանի կզակը, ու լեզուն կը կտրէ. մատնիչը գետին կը տապալի, ցաւի սոսկալի ճիչ մը արձակելով:

Ոստիկանները, որոնց պահակը վճռին դործադրու- թեան վայրէն քանի մը քայլ միայն հեռուն կը գտնուէր, լսելով ոէվօլվէրի պայթոցները, խոհեմութիւն կը հա- մարին երեւան չելլալ եւ սպասել քիչ մը, մինչեւ որ ահաբեկիչները կ'անհետին եւ մինչ ամբողջ իրենցմէ առաջ խուժած էր մատնչին հոգեվարքին վկայ գտնուե- լու:

Ամէնքն ալ կը կարծէին, թէ մեռած է հաճի Տիգ- րան, ինչպէս նոյն օրը գրուեցաւ Սոֆիայի մեր թըղ- թակցին: Տիգրան մեռած չէ տակաւին, սակայն բժիշկ- ները չեն յուսար թէ կ'ապրի:

Եթէ առողջանայ իսկ՝ իր ջախջախուած ծնօտով, իր թլուտ լեզուով, իր խեղուած, սոսկում դէմքով յաւիտենական դատապարտութիւն մը պիտի ըլլայ բո- լոր իր նմաններուն եւ մարմնացեալ պատօժի մը սար- սափը, որ Դամոկլէսի սուրին պէս պիտի կախուած մը- նայ անոնց զլխուն վերեւ:

— Հաճի Տիգրան՝ անկարող խօսելուն, դողողուն ձեռքով այնչափ միայն կրցաւ գրել թղթի մը վրան, որ Համբարձման տօնին օրը իր մատնութեամբ բանտար- կուածներուն մէջ, որոնք ազատ արձակուած էին, պէտք է որոնել ահաբեկիչները:

Բայց ի գո՛ւր. անմեղ մարդիկ միայն կրցան ձեր- բակալել. մինչ ահաբեկիչները, որոնք վճիռը գործ դրին, ազատ եւ ապահով են, շնորհիւ վեհափառ Սուլ- թանին, եւ նոր նմանօրինակ վճիռներ գործադրելու հրամաններու կը սպասեն:

— Մատնիչը դեռ չմեռաւ, բայց սոսկալի վիճակի մէջ է. քանիցս խնդրած է, որ զինքը թունաւորեն: Կո- կորդը ծակած եւ սնունդը անկէ կը լեցնին. սնունդն է կաթ եւ ապուր: Սոսկալի կը տանջուի:

Կ. ՊՈԼՍԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

Պ — 11

ՊՈԼՍՈՅ Կ. Կ.Ի ԱԶԳԸ

«Դրօշակ»ի 1895ի Տրգ. համարիմ մէջ (Յուլիս) կը կարգաճփ (էջ 8).—

Ա Ձ Դ

Վերջերս լսելով, թէ շատերը Դաշնակցութեան ա- նունով նուէրներ եւ պարբերական վճարներ հանգանա- կած են առանց այդ պումարները հասցնելու ուր որ սնկ է, ասով կ'աղղարարենք մեր շրջանին մէջ գտնուող բոլոր խմբերուն, համակրողներուն եւ ընթերցողնե- րուն, որ երբ Դաշնակցութեանս անունով իրենց վճա- րած թուականէն ետք լոյս տեսնող «Դրօշակ»ի երեք- չորս թիւերուն մէջ, պիտան թէ այդ գումարները չեն մտած Կեդրոնական Կոմիտէի սնտուկը: Ստիպողաբար կ'առաջարկենք, որ վճարողները փութան այդ պարա- պային մէջ դիմել «Դրօշակ»ի խմբադրութեան, ման- րամասն յայտնելով հասարակաց դրամը իւրացնող մարդու անունը, մականունը, արհեստը եւ հասցէն, որպէսզի Կեդրոնական Կոմիտէն եւս այդ մասին հարկ եղածը ի պործ դնէ:

Կ. ՊՈԼՍԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

Պ — 12

ՎԻՐԱՐՈՅԺ ԹԻԻԹԻԻՆՃԻԵՎԻ ԱՀԱՐԵԿՈՒՄԸ

«Դրօշակ»ի միեւնոյն համարի (1895 Յուլիս, թիւ 8) առաջիմ էջին վրայ կը կարգաճփ. —

ՄԱՏՆԻՉ ՎԻՐԱՐՈՅԺ ԹԻԻԹԻԻՆՃԻԵՎԻ ԶԱՐԿՈՒՄՆ

Սոֆիայից մեղ հեռագրում են. —

Յունիսի 23ին (ն. տ.) երեկոյեան ժամը 9ին Կ. Պոլսում դաշնակցականները դարկեցին նշանաւոր ՄԱՏ- ՆԻՉ վիրարոյժ ԹԻԻԹԻԻՆՃԻԵՎԻՆ: Մատնիչը մերձ ի մահ է: Ահաբեկիչները ազատ են: Ժողովրդի ողբու- րութիւնը անսահման է: Անսահման է նոյնպէս թիւրք կառավարութեան սարսափը: Կառավարչական շրջան- ների մէջ ընդհանուր յուլում: Մանրամասնութիւնները նամակով:

Յաջորդ համարիմ մէջ (թիւ 9, Յուլիս 1895) կը գտնեմք Կեդ- րոնական Կոմիտէի դատապարտութեան տեղեկագիրը. —

ԴԱԻԱՃԱՆ Մ. ԹԻԻԹԻԻՆՃԻԵՎԻ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Կեդրոնական Կոմիտէն Մայիս 7ի իր 61րդ նիստին մէջ, ուր հաւաքական վճիռ մը դումարուած էր քանի մը անձերու նկատմամբ (այդ նիստին մէջ էր, որ հաճի Տիգրանի մահուան վճիռը արձակուեցաւ), քննութեան

ենթարկեց եւ վերահասու եղաւ այն սուպրիւս ստուգարաններուն (document) եւ մանրամասն տեղեկագրերուն, որոնք ներկայացուած էին նախկին յեղափոխականի մը, դաւաճան Մկրտիչ Թիւթիւնճիեվի կեանքի եւ վերջին երեք տարիներու հանրածանօթ գործունէութեան մասին:

Ուստի, ի նկատ առնելով, որ վերաբոյժ Մկրտիչ Թիւթիւնճիեվ ոչ միայն դասալիք մը եղած է յեղափոխական բանակէն, այլ եւ կարեւոր գաղտնիքներ երեւան հանած եւ իր նախկին յեղափոխական ընկերները մատնած է, եւ թուրք ոստիկանութեան ձեռքը հօգոր ու անարգ գործիք մը եղած է հայ յեղափոխականի անունն աղարտող,

Կեդրոնական Կոմիտէն միաձայն մահուան դատապարտեց դաւաճան Մկրտիչ Թիւթիւնճիեվը,

Վճռին գործադրութիւնը յանձնելով Ձոհ Կոմիտէին ահաբեկիչներու գնդին:

— Յունիս 11 (ն. տ. 23), Կիրակի երեկոյան ժամը 9ին Թիւթիւնճիեվ գիշերահազուստով նստած էր իր տան առջեւ (Կէտիկ փաշայի թաղ) եւ կը խօսակցէր իր տնեցիներուն եւ դրացիներուն հետ, որոնք խոնարհ էին փողոցին մէջ քիչ մը մաքուր օդ ծծելու եւ զրօսնելու համար: Յանկարծ երկու ահաբեկիչներ, ջրհանկիրի հազուստով ծպտած, որոնք երկար ժամանակ է վեր կը հետապնդէին Թիւթիւնճիեվը, կանգ կ'առնեն դաւաճանին դիմաց, եւ անոնցմէ մէկը պաղարիւնով իր ատրճանակը քաշելով կ'արձակէ անոր վրան: Վերջինս ցաւի ճիչով աջ կողմին վրան կ'իյնայ, մինչ անդին փողոցին մէջ գտնուող մարդիկ փախչող փախչողի կ'ըլլան:

Նոյն միջոցին զափթիէ մը եւ ոստիկան մը, որոնք պատահամբ կը գտնուէին մէկը փողոցին վերին եւ միւսը ներքին ծայրը, կծիկը կը դնեն, երբ ատրճանակի ձայնը կը լսեն:

Երկրորդ ահաբեկիչը այդ միջոցին կ'արձակէր իր ատրճանակն ալ, եւ երկուքը միասին կը սկսին հեռանալ, իրենց գործն աւարտած համարելով:

Կէտիկ փաշայի ոստիկանութեան պահակը շատ մօտ է վճռին գործադրութեան վայրին, սակայն ոստիկանները, երբ Թիւթիւնճիեվի զարնուելուն լուրն առին, ոչ միայն չփութացին օգնութեան հասնելու, այլ մինչեւ անգամ քիչ մը ուշացան դիտմամբ, ահաբեկիչներուն հետ դէմ դէմի շղթանուելու համար:

Դաւաճանը զարնող քաջերն արդէն բաւական հեռացած էին, երբ ոստիկանները՝ միանալով գիշերապահներու եւ փողոցի մէջ պատահած մարդերու, սիրտ ըրին վերջապէս անոնց հետքով երթալու:

Ահաբեկիչները, «թաւուզ-պազար»էն անցան «Մահ-մուտ-փաշա» եւ արդէն հասած էին «Մարբուճճիները», երբ հալածողներու խումբը, որ գլորուող ձիւնի զընդակի պէս, հետզհետէ ստուարացած էր, աւելի ու աւելի կը մօտենայ ահաբեկիչներուն: Բազմաթիւ ոստի-

կաններ եւ գիշերապահներ, բազմութենէ քաջաւորուած, կը ջոկուին հալածող խմբէն, եւ հայհոյանքներով կը դիմեն ահաբեկիչներու վրայ, ա'լ վերջապէս ձերբակալելու յուսով: Վճռական վայրկեանը հասած էր. «Մարբուճճիներէն» անդին իրենց դրութիւնն աւելի պիտի դժուարանար եւ ահա երկու քաջերը յանդուգն փորձ մը փորձեցին. ետ դարձան եւ «Սապոնճի» խանին փողոցին մէջ կրակ տուին հալածողներուն վրան: Փորձը սքանչելի արդիւնք ունեցաւ, առաջին գնդակն արդէն բաւեց ցիրուցան ընել այդ վախկոտ խլէզներու խումբը:

Երկու վայրկեան ետքը փողոցը պարպուած էր եւ երկու ահաբեկիչները «Հասիրճիլար»ի կողմէն հանդարտ ու անվախ իրենց ճամբան շարունակեցին:

Թիւթիւնճիեվ ծանրապէս վիրաւորուած էր. զընդակներէն մէկ միտած էր ստորին որովայնի մէջ, ուրկէ անհնարին եղաւ հանել, իսկ միւսը ազդրը ծակած անցած էր:

Վճռին գործադրութեան գիշերն իսկ ոստիկանութեան նախարարի օգնական Հիւսի պէյը անձամբ եկաւ հարցաքննելու վիրաւորեալը. իսկ Նազըմ փաշա խորապէս յուզուած իր հաւատարիմ ու կարող պաշտօնեային զլուխն եկած դժբախտութեան վրայ, ծանօթ վիրաբոյժ Գամպուր օղլուն զրկեց վիրաւորեալը դարմանելու եւ մահուան ճանկէն ազատելու:

Ոստիկանութեան համար անդնահատելի ստացում մըն էր այդ դաւաճանը, եւ զարմանալի չէ, որ անոր զարնուիլը երկու յեղափոխականի ձեռքով մեծ յուզում առաջ բերաւ բոլոր շրջանակներուն մէջ եւ անմիջապէս հեռագրուեցաւ եւրոպական թերթերուն:

Սոֆիայի վրայով մեր զրկած հեռագրին մէջ ըսուած էր թէ մահամեծ է Թիւթիւնճիեվ, եւ իրօք երկու շարթ շարաչար տանջուելէ եւ մահուան դէմ մաքսուելէ ետքը, վերջապէս սատկեցաւ Յունիս 27ին:

Սուլթանը սաստիկ կատաղած Թիւթիւնճիեվի անձին դէմ կատարուած այս փորձին, որ երրորդն էր իր տեսակին մէջ (Արտաշէս, Հաճի Տիգրան), քանի մը ամիսներու միջոցին, խիստ հրամաններ տուաւ Նազըմ փաշային վճռին գործադրիչներն որոնելու եւ պատժելու: Անթիւ ձերբակալութիւններ ամէն թաղերու մէջ:

Ոստիկանութիւնը բան մը ըրած ըլլալու համար ձերբակալեց խեղճ ջրհանկիր մը, որ ո'չ Թիւթիւնճիեվ կրցաւ ճանչնալ եւ ոչ այն գիտնալն, որուն խանութիւն մէջ վճռին գործադրութեան նախընթաց գիշերը երկու ահաբեկիչները երեւցած էին: Բայց ոստիկանութեան համար պատուի խնդիր մըն էր ձերբակալել զոնէ անոնցմէ մէկը, եւ ահա այլ եւ այլ սպառնալիքներով ստորագրել տուին գիտնալնին թուղթ մը, որով ինքը կը վկայէր թէ ձերբակալուած ջրհանկիրը երկու ահաբեկիչներէն մէկն էր: Այդ խայտառակ գործն անմօթաբար պաշտօնապէս ծանուցուեցաւ, թէ եւ անաշուք գիտէին թէ ո'չ ոք պիտի հաւատար:

Ջրհանկիրի հազուստով ծպտուած երկու ահաբեկիչներն ալ ապահով ու ազատ են իրենց նախկին տարազին մէջ:

Կ. ՊՈԼՍԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

Պ — 13

ՊՈԼՍՈՅ Կ. ԿՈՄԻՏԷԻ ԲԱՅ ՆԱՄԱԿԸ «ՀՆՉԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

1895ի «Դրօշակ»ի 10րդ. համարի (Օգոստոս) վերջիմ էջիմ վրայ կը գտնեմք հետեւեալ բաց ճամաղը.—

Չարմանքով կարդացինք «Հնչակ»ի Թիւ 9ի մէջ Կ. Պոլսէն զրկուած լուր մը, որուն համաձայն իբր թէ հնչակեանները զարկած ըլլան դաւաճան Թիւթիւնճիեվը, մինչդեռ Դաշնակցութեանս Կ. Պոլսոյ Կեդրոնական Կոմիտէին նախագոյն որոշումով եւ տեղական կոմիտէներէն՝ «Ձոհ»ի ահաբեկիչներուն ձեռքով ի գործ դրուեցաւ անոր մահուան վճիռը:

Չճանրանալով այն կէտին վրան, թէ Յեղափոխութեան տեսակէտէն կարեւորութենէ ի սպառ զուրկ է յեղափոխական ո'րեւէ արարքի մը այս կամ այն Կուսակցութեան ձեռքով կատարուած ըլլալը, — սաշափ միայն կ'ուզենք դիտել տալ, որ թէ՛ Դաշնակցութեան Կ. Պոլսի Կեդրոնական Կոմիտէիս եւ թէ՛ Հնչակեան Կուսակցութեան Պոլսի մասնաճիւղին համար պատուաբեր չեն կրնար ըլլալ երբեք այդօրինակ սխալներ ու թիւրիմացութիւնները: Ուստի կը յուսանք թէ «Հնչակ»ի խմբագրութիւնը պիտի փութայ իր սխալն ուղղելու ստուգագոյն աղբիւրներէ առնուած անմիջական տեղեկութիւններով:

Կ. ՊՈԼՍԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

Պ — 14

ՄԱՏՆԻՉ ՄԱՄԲՐԷԻ ԱՀԱԲԵԿՈՒՄԸ

«Դրօշակ»ի 1895 տարւաւմ 11րդ. համարի (Օգոստոս) վերջիմ էջիմ վրայ կը կարդամք.—

ՀԱՆՐԱԾԱՆՕԹ ՄԱՏՆԻՉ ՄԱՄԲՐԷԻ ԶԱՐԿՈՒՄԸ

Սոֆիայից մեզ հեռագրում են.—

Օգոստոսի 3ին (ն. տ.), գիշերը ժամը 2ին Կ. Պոլսում դաշնակցական երկու ահաբեկիչներ զարկեցին թատրոնից դուրս եկած ժամանակ նախկին յեղափոխական, նախկին վարդապետ, դաւաճան եւ հանրածանօթ մատնիչ ՄԱՄԲՐԷԻՆ: Վիրաւորուած է եւ մէկ ոստիկան: Ահաբեկիչները ազատ են: Մանրամասնութիւնը նամակով:

Այս հեռագիրը, որ ստացանք ամսիս 6ին (ն. տ.), անմիջապէս տպագրելով առանձին թղթիկներով վրայ, ցրուեցինք:

«Դրօշակ»ի յաջորդ համարով (1895 Սեպտեմբեր, թիւ 12) կը տրուի Կեդրոնական Կոմիտէի պաշտօնական տեղեկագիրը.—

ԴԱՒԱՃԱՆ ՄԱՄԲՐԷԻ ԿԱՐԳԱԼՈՅԾ ՎԱՐԳԱՊԵՏԻ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Կ. Պոլսի Կ. Կոմիտէի Յունիս 10ի 67րդ նիստին մէջ, — որ յատկապէս դումարուած էր քանի մը դաւաճան յեղափոխականներու վերաբերեալ ստուգարանները քննութեան ենթարկելու, 90 թուի մատնութիւններուն մէջ անոնց խաղացած դերը ճշդելու համար, — կարդացուեցան նաեւ Մամբրէ կարգալոյժ վարդապետին կատարած դաւաճանութեան եւ մատնութեան վերաբերեալ թղթերը եւ անոր վերջին հինգ տարիներու զրուելի գործունէութեան մասին տեղական կոմիտէներու կողմէն կազմուած տեղեկագրերը, որոնցմէ տեսնուեցաւ, որ

Մամբրէ, աշխարհական անունով Ալեքսան, նախկին սարկաւաղ՝ էջմիածնի միաբանութեան, ապա վարդապետութեան կոչուած Բաղբեւանդի Ս. Յովհաննէս վանքին մէջ, առաջին օրէն ճանչցուած է իր շրջապատողներէն, իբր դիւրագրգիւ, հեշտամուլ եւ սնափառ մարդ մը, որ իր կրքերուն գոհացում տալու համար, միջոցներու մէջ խտրութիւն դնել չէր գիտեր:

Վարդապետութեան առաջին ամիսներուն մէջ իր քանի մը պոռոտախօս քարոզներուն շնորհիւ աժան ժողովրդականութիւն մը վաստակեցաւ, մանաւանդ Տրապիզոնի մէջ խօսած մէկ յանդուգն բանախօսութենէն ետքը, որ ինքզինքը յանձնարարեց իբր կարմիր յեղափոխական մը:

Ալ մոռցուեցաւ իր նախկին կեանքը, լի անբարոյական արարքներով, եւ յեղափոխական խմբեր միամտաբար հաւատ ընծայելով անոր այդ սնամէջ բառերուն, խելամուտ ըրին այդ ողորմելին իրենց վարչական գաղտնիքներուն:

Վրայ հասաւ 1890 թ. Յունիս 15ը, գործի եւ փորձի թուական մը, որ մաղեց ու զտեց այդ գործիչներուն խումբը, բուն յեղափոխականները անջատելով միայն այդ անունը շահագործողներէն: Վախկոտներն ու զընձուները իրենց դիմակները դրին Նազըմին ոտքը, անոր խորագէտ վեհանձնութեան դիմում ընելով, իրենց ողորմելի կեանքին քանի մը անփառունակ տարիներ ալ աւելցնելու եւ մէկ-երկու ոսկի մուրալու համար դեանաքարը:

Մամբրէ իր վրայ եղած կասկածները ցրելու նպատակով Բաղբեւանդ գնաց, իր վանքը. բայց հոն հանգիստ չտուին իրեն. իր նախկին քարոզները մոռցուած չէին եւ ոստիկանութիւնն աւելի հիմնաւոր սկսաւ հա-

մարել իր կասկածները Մամբրէի վրայ: Քիչ օր ետքը Մամբրէն հարկադրուեցաւ Պոլիս վերադառնալ:

Չերբակալութիւններու թուականը բացուած էր. ոստիկանութիւնն անխոնջ խուզարկութիւններ կը կատարէր Յուլիս 15ի հեղինակները գտնելու համար: Իսկ միւս կողմէն պատրիարքարանն անկարող էր ոչ միայն իր կրօնակիցները պաշտպանելու, այլ նոյն իսկ կրօնաւորները:

Նազըմ Աշրֆեանէն հօգր էր: Մամբրէն առաջին կողմը հակեցաւ. պատրուակ մը պէտք էր. այդ ալ գտաւ. խմբագրեց ազգարարագիր մը, իրը «Հնչակ»եան մասնաժողովին կողմէն իրեն ուղղուած, որով մահ կը սպառնային իրեն, եթէ շարունակէր իր դաւադրութիւնները անոնց՝ «Հնչակ»եաներու դէմ:

1890 Սեպտեմբեր 9ին իրիկունը դաւաճանը այդ նամակով կը ներկայանար ոստիկանութեան նախարարին՝ Նազըմ պէյին եւ անոր օգնութիւնը հայցելով, փոխարէն ամէն աջակցութիւն կը խոստանար իր կողմէն կառավարութեան թշնամիները որսալու գործին մէջ:

Նազըմ պէյի ուրախութեան չափ չկար. նոյն գիշեր իր տունն հիւրընկալելով, ամէն մեծարանքներ ըրաւ անոր, եւ հետեւեալ առտուն առաջնորդել տուաւ զինքը ոստիկանութեան դուռը հարցաքննիչ դատաւորին առջեւ բացատրելու իր գիտցածը:

Այդ առաջին հարցաքննութեան մէջ Մամբրէ շատ բան բացատրեց, շատ անուններ տուաւ, բաց ըրաւ աւելի մեծ բան մը. խոստացաւ ցանկ մը պատրաստել իր կասկածելի համարած անձերուն, վաւերական թղթերու վկայութեամբ հաստատուած: Եւ Մամբրէն այնչափ խղճմտութեամբ կատարած է իր այդ խոստումը, որ հարցաքննիչ դատաւորին առջեւ իրը յանցապարտ մը ներկայանալու երկրորդ հարկի մը մէջ չէ գտնուեր, բան մը, որով կ'ապացուցուի միայն մէկ հարցաքննութեան մը գոյութիւնը ոստիկանութեան պաշտօնատան մէջ: Մամբրէ այնուհետեւ գործեր է իրը գաղտնի ոստիկանութեան անկախ պաշտօնեայ, անմիջաբար Նազըմ պէյի հետ յարաբերութիւն հաստատելով:

Այդ առաջին հարցաքննութեանէն ետքը Մամբրէ 100 օսմ. ոսկի ստացաւ իրը քաջակերութիւն:

Անկէ ետքն է, որ Մամբրէ Մուրատին անունով Ֆրանսիական փոստան ստացուած նամակները տարաւ յանձնեց ոստիկանութեան, այդ նամակները յակնէ անուանէ կը նշանակէին քանի մը անձեր եւ կը յիշատակէին նոյնպիսի իրողութիւններ, որոնք նպաստեցին պարզելու յեղափոխական կազմակերպութեան մասին թուրք ոստիկանութեան քանի մը ենթադրութիւնները:

Հարցաքննութեան մէջ յիշատակած ցանկը Մամբրէ հետզհետէ լրացուց, եւ մատնեց ով որ կրցաւ: Իր դերը չլմնցաւ ատով. անգամ մը դայթիլէն ետքը ա'լ չփորձեց ոտքի ելլալու: Մոռցաւ ամէն բան, ինչ որ սուրբ

էր, իր եկեղեցին ոստիկանութեան դուռն էր հիմա. իրեն պաշտօնն համարեց ոչ միայն քիչ շատ աչքի զարնող անձեր իրը կասկածելի երեւցնել, այլ եւ խեղճ ու անտէր մարդիկ շահագործել բանտ նետելու սպառնալիքով կամ՝ բանտէն ազատելու խոստումով:

Իր շահատակութեան ասպարէզն եղած էր Իւսկիւտար արուարձանը, ուր ամէնքն ալ կը դողային այդ լիբր ու անխիղճ վարդապետէն, որ անգամ մը եկեղեցական կոչումէն զրկուած, ալ ազատ կը կարծէր ինքզինքն իր կրքերուն անձնատուրը ըլլալու, անպատիժ մնալու յուսով:

Մամբրէն արեան ծարաւ դաւաճանի մարմնացումն էր, որ իր նեխած սիրտը կը պտտցնէր ամէն տեղ, ոստիկաններու եւ լրտեսներու ընկերակցութեամբ:

Ժողովուրդը վաղուց արդէն իր վճիռը տուած էր: Ուստի,

Ի նկատ առնելով, որ Մամբրէն դաւաճանած է իր յեղափոխական ուխտին,

Ի նկատ առնելով, որ իր կուսակցութեան վերաբերեալ դաղտնի նամակներ ոստիկանութեան յանձնած է եւ իր ընկերները մատնած է,

Ի նկատ առնելով, որ Մամբրէն իր անօրինակի իրարքը վայրկենական վախի մը ազդեցութեան ներքեւ կատարած չըլլալէն զատ, գործօն մատնիչ մը եղած է հինգ տարիէ ի վեր, տասնեակ ընտանիքներու անկման եւ հարիւրաւոր անմեղներու դժբախտութեան պատճառ ըլլալով,

Ի նկատ առնելով, որ Մամբրէն իր լիբր, ամբարտաւան ու անբարոյական վարմունքով գայթակղութիւն եղած է ժողովրդին մէջ, անոր ամենէն նուիրական զգացմունքները վիրաւորելով,

Կեդրոնական Կոմիտէն Յունիս 10ի իր 67րդ նստին մէջ

Միաձայն մահուան դատապարտեց դաւաճան Մամբրէ կարդալոյժ վարդապետ Պէնլեանը,

Վճռին գործադրութիւնն յանձնելով Ռուբր Կոմիտէի Ա. խմբի ահաբեկիչներուն. եւ միանգամայն վրձուեց սոյն Տեղեկագրին հետ հրատարակութեան տալ նաեւ պատճէնները անոր առաջին հարցաքննութեան, եւ հնչակեաններուն անունով խմբագրուած ազգարարագրին:



Վճռին գործադրութիւնը չուշացաւ. Յունիս 22ին, Շարաթ դիշեր, Իւսկիւտար Պէյլերի պարտէզը տանկերէն ներկայացում կար. ամէն ազգէ հոն բազմութիւն մը ներկայ էր. հոն էր նաեւ Մամբրէ, երկու ծպտեալ լըրտեսներու հետ: Ժամը 2ին ներկայացումը վերջացած էր եւ ամբողջ սկսած էր ցրուել խումբ խումբ: Դուրս ելաւ եւ Մամբրէն իր ընկերներու հետ, դժգոհ թերեւ, որ այդ գիշեր որս մը չկրցաւ գտնել. նախորդ ներկայացումի մը միջոցին անծանօթ ձայներ սուլած էին

Համիդիէ քայլերգը. Մամբրէ կը յուսար այս անգամ անձամբ հսկել եւ դտնել սուլողները: Սակայն հազիւ քանի մը քայլ ըրած էր զէպի պարտէզին դուռը, երբ երկու ահաբեկիչները կը տնկուին իր առջեւ եւ մէկը կ'արձակէ իր ռեվոլվերը: Դաւաճանը սոսկալի մռնչիւնով մը դետին տապալեցաւ. զնդակը խորտակած էր ողնայարը, ծակած երիկամունքը եւ կողաշարին մէջ միտուած էր:

Ռեվոլվերի ձայնը եւ դաւաճանին գետին թաւալելն անկարողելի իրարանցում եւ վախ պատճառեց. Ժողովուրդը փախչող փախչողի էր. ոստիկաններն ու զինուորները մէկ ակնթարթի մէջ անյայտ եղան:

Անդին ահաբեկիչները կ'ընթանային անվրդով, երբ լրտես մը պատահամբ դէմերին կ'ելլայ. ահաբեկիչը զնդակ մըն ալ անոր կը զրկէ. թուրքը գետին կ'իջնայ:

Մամբրէ մնաց իր ինկած տեղը, մինչեւ որ ոստիկանները սիրտ առնելով, վերջապէս վերադարձան, երբ ապահով եղան որ ա'լ ահաբեկիչները հեռացած էին, եւ շալկելով տարին իր տուն:

Դաւաճանը չորս օր հազիւ կրցաւ ապրիլ եւ շարաշար տանջուելէ ետքը, Յունիս 26ին, Չորեքշաբթի սասուկեցաւ, խոր սուզի մէջ ձգելով Նազըմ փաշան:

Մամբրէի մահը մեծ յուզում առաջ բերաւ ամէն շրջանակներուն մէջ:

Ոստիկանութիւնը մեծամեծ ճիզեր կ'ընէ հեղինակները որոնելու, ուստի բազմաթիւ ձերբակալութիւններ կատարեց ապարդիւս. ցարդ ձերբակալուած են մօտ 150 հոգի, բոլորը անմեղ մարդիկ: Կ'ըսուի թէ բանտարկեալներուն սոսկալի՝ չլուած, աներեւակայելի տանջանքներ կու տան դաղտնիքներ կորզելու համար: Իսկ ահաբեկիչներն ապահով ու ազատ են շնորհիւ սուլթանին, որոնք կ'ըսուի թէ անբերեոյթ ոգիներու փոխուած են...

Կ. ՊՈԼՍԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

Պ — 15

ԹՌՈՒՑԻԿ ԹԵՐԹ
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ Կ. ՊՈԼՍԻ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻՆ

№ 1
24 Սեպ. 95

№ 1
24 Սեպ. 95

Հայ եղբայրներ՝ եւ քոյրեր՝, Հայութիւնը ճշմարտամի մէջ է: Հնչակեաններուն ձեռքով կազմակերպուած Սեպտեմբեր 18ի խաղաղ Ցոյցը(1), որով կ'ուզէին Մայր Հայրենիքի ահաբեկչական անտանելի վիճակը վերջին անգամ հաւաքաբար պարզել թուրք կառավարութեան եւ Եւրոպայի առջեւ, — այդ ցոյցը կոտորածի եւ անմիտ ու դադանային վրէժխնդրութեան առիթ մը եղաւ թուրք

բռնապետութեան համար. ոստիկանութիւնը ինքն էր որ զինեց ու զրդոնեց հայերուն դէմ մայրաքաղաքիս սօֆթաներն ու թուրք խուժանը:

Ա'լ համբերութեան չափն ու սահմանն անցած է. երբ կառավարութիւն մը կը խարէ մեզ ու Եւրոպան աւելի քան տասնվեց տարիէ ի վեր, երբ կառավարութիւն մը լրբաբար կ'ուրանայ Սասունի ջարդը եւ կը խաղցնէ Եւրոպան տասներեք ամիս անընդհատ, երբ կառավարութիւն մը նոր Սասուններ կը ստեղծէ Երզրնկայի, Կամախի, Շապին — Գարահիսարի եւ Հայաստանի բոլոր անկիւններուն մէջ եւ նոյնիսկ Պոլսի մէջ Եւրոպայի աչքին առջեւ բնաջինջ ընել կը ջանայ իր տարրական իրաւունքները պահանջող ժողովուրդ մը — ալ ինչ կը սպասէք այդպիսի կառավարութեանէ մը: Ո՛չ, ալ անցաւ խոստումներ ժամանակը, ալ չխաբուինք մենք սին խոստումներով եւ անարժէք թղթերով, իրական գործ մը պէտք է մեզ. ապահովութեան եւրոպական երաշխիք մը թուրքերուն հայակործան սխտեմին դէմ: Թո՛ղ զուր չանցնի հերոսներուն եւ Պոլսի փողոցներուն մէջ ինկած անմեղ զոհերուն արիւնը, զոհեր որոնց դիակները Մարմարայի խորերէն բողբ ու վրէժ կը պահանջեն:

Զխարուինք խոստումներէն. մինչեւ որ մեր պահանջներուն եւրոպական պետութիւններու կողմէն գոհացում չտրուի, խստիւ կը հրամայենք որ ամէն մարդ գոցէ իր խանութը, ոչ ոք ելլայ իր պատուարանէն, ոչ ոք իր զէնքը վար դնէ, որովհետեւ նորանոր ջարդերու պատրաստութիւններ կը տեսնուին թուրք խուժանին մէջ, որուն դէմ կառավարութիւնը, եթէ ուզէ իսկ՝ որ յիմարութիւն է հաւատալ՝ անգոր է մեզ պաշտպանելու:

Եղբայրներ՝ եւ քոյրեր՝, Հասած է վայրկեանը, երբ պիտի ապացուցանէք, որ լաւագոյն կը համարիք դիւցազնաբար մեռնիլ, քան վատաբար փճանալ Մոնկոլիոյ անապատներէն փախած մարդակերպ դադաններուն ճիրաններուն մէջ:

ՄԱ՛Հ կամ ԿԵԱՆՔ: Վա՛յ անոր որ չ'աջակցիր յեղափոխական բանակին: Կեցցէ՛ Յեղափոխութիւն:

(1) Կ'ակնարկուի Պապը-Ալիի ցոյցին:

ԾԱՆՕԹ.— Միւնիս (թիւ 1, 24 Սեպտ. 1895ի) բառցիկ քերթը սպուած է ճաւել. Յ. Դ. Դիւանի Ա. հատորին մէջ, էջ 220-221: Ծածօթագրութիւն մը կը յայտնէ՝ թէ «Դիւանի» մէջ լոյս տեսածը հարազատ է բնագրին, մինչ «Երօջակ»ի հրատարակութեամ մէջ տեղ գտած են որոշ փոփոխութիւններ եւ յապաւումներ: Բազմաթիւ բրկու թէքսթերը, կը գտնենք հետեւեալ չնչին տարբերութիւնները միայն.—
ա) «Դիւանի» մէջ կը կարգամբ՝ «զրդոնեց հայերուն դէմ մայրաքաղաքիս սօֆթաներն ու թուրք խուժանը»: «Երօջակ» կը գրէ՝ «մայրաքաղաքիս սօֆթաներն ու թուրք խուժանը»:
բ) «Դիւանի» հրատարակութիւնը, «Ա՛լ համբերութեան չափն

ու սահմանն անցած է: Յայնպէս արժեքն ունի, կ'անցնի մեր տարի:

Գ) «Երևանի թէքթի մէջ, «Չխարութիւնք խոստումներէն» մատուցանուած գրուած է՝ «Չխարութիւնք սին խոստումներէն», եւ կապուած է մայրաքաղաքի անունով: Եւ զայն պարտաւորութիւնը կը սկսի՝ «Մինչեւ որ մեր պահանջներուն եւրոպական պետութիւններուն կողմէ...» մատուցանուած:

Զ) «Հասած է վայրկեանը, երբ...» մատուցանուածը, ըստ «Երևանի» հրատարակութեան, կը գործածէ յոգնակի ա. դէմքը, — «պիտի սպասուցանենք» եւ ոչ՝ «պիտի սպասուցանէք», ինչպէս «Երօջակ» մէջ:

Է) Յարաք մատուցանուածը, «Երևան» մէջ, հետեւեալն է. — «Վա՛յ անոր, որ խոյս կու տայ դրամով կամ գործով — ջակցելէ յեղափոխական բանակին»: Մինչ «Երօջակ» մէջ եղած է՝ «Վա՛յ անոր որ չ'աջակցիր յեղափոխական բանակին»:

Թանցիկ բերքի բնագիրը, ըստ «Երևան»-ի, եղած է խմբարտագ, եւ կը պատկանի Յ. Եւստոփեանի գրչին:



Ստորեւ նաեւ՝ Պոլսոյ Կ. Կամիտի քիւ 2 թանցիկ բերքը, 1 Նոյեմբեր 1895թ.—

ԹՈՒՌՈՒՑԻԿ ԹԵՐԹ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ Կ. ՊՈԼՍԻ ԿԵՒՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՒՆ

№ 2

1 Նոյեմբեր 95

Հայեր,

Պատրաստուող նորանոր ջարդերը, որոնց դէմ կը զգուշացնէինք մենք Սեպտ. 24ի մեր թուոցիկով, ահա մերկութեամբ իրականացան. թուրք-մոնղոլական խժուոթութիւնն յաւերժացաւ արիւնահեղ տրամներով ամէն տեղ ուր հայը իր խելքով ու իր հարստութեամբ գերակշիռ դիրք մը գրաւած էր այդ հեշտասէր մոնղոլներու առջեւ: Անսպասելի այդ զաւակներուն արիւնահեղանք մոնղոլները, անասնական կիրքերը, աւարի տենչը պատրաստ գործիք մը եղան թուրք բռնակալութեան ձեռքը բնաջինջ, արմատախիւ ընելու հայութիւնը, բարենորոգումներու ծրագրին վաւերացման առաջին օրն իսկ:

Այն շարաբախտ օրէն, Սեպտ. 18էն ի վեր, երբ անհետատես, անըմբռնելի ըլլալու աստիճան աղտոտ կուսակցական հաշիւներ դահաւիթեցին անսպասուած հայերն անհաւասար պայքարի մը մէջ(1), այն կանխահաս եւ վիժած ցոյցէն ետքը, որ պատճառ եղաւ այնքան կտրիճներու ու անմեղներու արիւնը ապարդիւն թափուելուն, — դեռ կան անխիղճ մարդիկ, որոնք սլքատալով ժողովուրդին մէջ՝ երես ունին պնդելու դեռ թէ այդ նախճիրներուն շնորհիւ է որ բարենորոգումներն ընդունուած են եւ սկսած են իրագործուիլ:

Ի՞նչ հեղուկութիւն: Այո՛, ընդունուած են հո՛ն, Տրապիզոնի մէջ, ուր աւելի քան երեք հազար հոգի ընտրանք անողորմարար խողխողեցան, Երզնկայի մէջ, ուր մօտ երկու հարիւր հոգի մեռան շարաշար, առջին Աքարի մէջ, անդին Կարնոյ, Մուշի, Բաղէշի, Պայա-

զիտի, Բարերդի, Մարաշի, Սեբաստիոյ, Տիգրանակերտի մէջ, ուր կոտորածներն ու աւարառութիւնն իրարու ետեւէ կը յաջորդեն, — բոլոր այն վայրերուն մէջ, ուր պիտի ծաւալէին բարենորոգումներու կարծեցեալ բարիքները:

Բայց այդ ծրագիրը, որ իր ամբողջին մէջ արդէն ողորմելի էր, այսօր իր կրած չարափոխութիւններով իսկ ակներեւ ի վեր կը հանէ թուրք բռնակալութեան բռնելիք ընթացքը: Վերցուած է ընդհանուր մոռացումը. այնքան աքտրականներ ու դաղթականներ չպիտի վերադառնան իրենց հայրենիքը: Եւրոպիկ պալատը պիտի կլլէ Հայաստանի տուրքերը, ուրեմն մնաք-բարո՛ւյ ներքին բարդաւաճում: Չկայ եւրոպական քոնթրոլ Հայաստանի մէջ, եւ թուրքերը խելքերին փչած ժամանակ պիտի կոտորեն խաղաղ ժողովուրդը, պատրուակելով որ հայերը գրգռած են մուսուլմանները, թէև ասոնք իրենց մոլեռանդութեան մէջ կրցան զանազան կաթոնիկը հայ լուսաւորչականէն, օտարահպատակ հայր ռայայէն:

Բա՛ւ է, ալ բա՛ւ է, հայեր, ցորչափ ձեր անտարբերութեամբ չկրցաք խոհեմ ու ուղղամիտ ձայնը զանազան կասկածներու ամբարտաւան պոռչուողէն: Սթափեցէք ալ, այդ ամէնը, ծրագիր, ընդհանուր ներում, ամէնքն ալ պատրանք են, հայտութիւն չի կըրնար ըլլար մեր և արիւնարբու Համիտին միջեւ: Ի՞նչ, արդարութիւն կը պահանջէք այդ մարդէն, որուն ձեռքը թաթախուած է Սասունի, Կամախի, Տրապիզոնի, Կարնի, Բարերդի, Երզնկայի, Բաղէշի նահատակներուն արիւնին մէջ: Ձէքին ու Պահրին չե՞ն որ շքանշան կը ստանան, Եւփերներն ու Թահսիները չե՞ն որ անպատիժ կը մնան. ո՛ւր են, ի՞նչ եղան Պոլսի եւ Տրապիզոնի դահիճներն ու աւարառուները:

Մի՛ յուսահատիք, հայեր. հայ ազգը շատ աւելի մեծ կոտորածներ ունեցած է անցեալին մէջ, մի՛ կորսնցնէք ձեր պաղարիւնութիւնը. տեսէք, ձեր տմարդ թշնամին իր տնտեսական անկումին կը մօտենայ. մինչ մէկ կողմէն Օսմ. Պանքան սնանկանալու վրայ է, անդին կառավարութիւնն այնչափ անճար մնացեր է որ, Եւրոպայի մէջ, իր ապսպրած դէնքերը աւստրիական դրօշակի ներքեւ գրաւուած կը մնան նաւահանգստին մէջ, որովհետեւ զանձարանը դրամ չունի անոնց դինը վճարելու:

Արիացէ՛ք, հայեր, մի՛ վհատիք. թուրքը քաջ է վատին դէմ միայն. զինուեցէ՛ք ինչով որ կրնաք. օրինակ ձեզ Ձէյթուն. պատրաստուեցէ՛ք, յամառ, յարատեւ եւ խելամտօրէն ուղղուած ճիգերով վերականգնելու ձեր բարոյական ու Ֆիզիքական ուժի հմայքը ամբողջ աշխարհի առջեւ, վրէժն առնելու անթիւ նահատակներուն, ջախջախելու այդ իժի գլուխը, խորտակելու բռնակալի դահը, անոր փլատակներուն վրայ բարձրացնելով հպատակ, հարստահարուած ազգերուն ազատութեան դրօշակը:

Մահ կամ կեանք: Կեցցէ՛ Հայաստան, կեցցէ՛ յեղափոխութիւն:

Կ. Պոլիս, հայկական ազատ տպարան

(1) Կ'ակնարկուի շնչակեանքներու կազմակերպած Պապը Ալիի ցոյցն:

Պ — 16

ԱՀԱԲԵԿԻՉՆԵՐԻ ԿՈՒԻՒԸ

Այս խորագրով՝ կը կարդամք «Երօջակ»-ի 1896 տարուան 13րդ համարին մէջ (10 Մայիս), առաջին էջը.—

Ապրիլ 16/28ին, երեքշաբթի օրը, Կ. Պոլսում, դաշնակցական ահաբեկիչներ խմբի եւ ոստիկանութեան մէջ ընդհարում է տեղի ունեցել Ղալաթիայի Քարաքէօյ հրապարակի վրայ: Ոստիկաններից մէկը տեղն ու տեղը սպաննուած է, միւսները՝ վիրաւորուած: Սպաննողն ու վիրաւորներն ազատ են: Ձերբակալուած են երկու ուրիշ հոգի:

Մանրամասնութիւնները հետեւեալ համարում:

Յաջորդ (թիւ 14, 1 Յունիս 1896) համարին մէջ կը գտնենք զեղբիւ մամբատամ մկարագրութիւնը: Ամստարագիր է: Կրճայ պատկանի Ա. Վաւառմի կամ Յ. Գարակեօզեանի (Ջաւէն, առաջմ վիշապի Կ. Կամիտի) գրչին.—

ԱՀԱԲԵԿԻՉՆԵՐԻ ԿՈՒԻՒԸ

(ՆԱՄԱԿ ՊՈԼՍԻՑ)

16/28 Ապրիլ, 96 թ.

Պոլիս, այդ ահ ու սարսափի քաղաքը, Ապրիլ 16ին հանդիսատես եղաւ յեղափոխական նշանաւոր դէպքի մը սուլթանի լիբր կառավարութեան դէմ. այդ դէպքը եկաւ կրկին ցնցել պաշտպանութեան մայրաքաղաքը եւ ապտակել ժողովրդին մեռելային թմրութիւնը: Նոյն օրը ժամը 8ին «Դաշնակցութեան» ահաբեկիչները Ղալաթիա, Քարաքէօյի հրապարակին վրայ թիւրք ոստիկանութեան դէմ կատաղաբար կը կռուէին ճիշդ հոն, ուր շարաթ մը առաջ իրենց մէկ արիասիրտ ընկերը քաջութեան եւ յանդգնութեան ապացոյց մը տուած էր:

Եղիա Շահապազի ծանօթ դէպքէն վերջը Քարաքէօյը ոստիկանական խիստ հսկողութեան տակ առնուած էր: Դաշնակցական ահաբեկիչներ այդ կողմերը միշտ մանկու գային. ասոնցմէ մէկը երբ Եէնի-խանի — ուր Շահապազի գրասենեակը կը գտնուի — սանդուխէն վեր կ'ըլնէր, ոստիկան մը յանկարծ կասկածելով կ'ուզէ բռնել եւ կեցնել. կտրիճ երիտասարդը խելոյն աջով կը քաշէ առաջին ատրճանակը, բայց սուրի հարուած մը կը թոցնէ զայն. այն ատեն կը քաշէ երկրորդը եւ զնդակի մէկ հարուածով այդ յանդուգն ոստիկանին զանկը կը սարսաղնէ: Ընկերները կայծակի պէս կը հասնին, կռիւը

ծաւալ կը ստանայ, ոստիկան եւ ժողովուրդ լեղապատառ խոյս կու տան ահաբեկիչներու վրէժխնդիր զընդակներուն առջեւէն: Այդ խուճապի միջոցին մեր հերոսները հանդարտութեամբ Մոմհանէի ճամբան կը բռնեն: Արդէն փողոցները դատարկուած, յոյներ իրենց սովորութեան համեմատ, խանութներու ծակերէն աթոռներ, զաւազաններ կը նետեն փախստականներուն առջեւ, անոնց անցքը դժուարացնելու համար, սակայն մեր հերոսները կը պարտաւորին այդ ապիկարներուն պատասխանել ատրճանակով: Վերջապէս տեսնելով, որ աւելի առաջ երթալ անհնար է՝ եւ կը դառնան. թիւրք բռնակալի մը կ'ուզէ բռնել զանոնք, այլ վիրաւոր կ'իյնայ: Դարձեալ Քարաքէօյ կու գան, ուր միշտ նոյն սարսափը կը տիրէր. ահաբեկիչներէն մին շուարած կը հարկադրուի իր ընկերներէն բաժնուիլ եւ Խաւեար-խանէն անցնելով կ'անհետանայ:

Չմշկածազցի Կարապետ առանձին հրապարակին վրայ կը վազէ, քարամանցի յոյն մը անոր մօտեցած ետեւէն պիտի բռնէր զայն, եթէ ատրճանակի զնդակ մը իսկոյն չհեռացնէր այդ անպիտանը. զնդակը արձակող ահաբեկիչը կը միանայ Կարապետին: Սակայն Կարապետ հակառակ իր ընկերոջ թախանձանաց կը բաժնուի անկէ եւ զինետնի մը նկուղին մէջ կը բռնուի: Բռնուած է նաեւ թէքիրտազցի Լեւոն:

Ոստիկանը տեղն ու տեղը մեռած էր, իսկ մնացածները վիրաւորուած: Բուն սպաննողները եւ վիրաւորողները ազատ են եւ կը սպասեն պատեհ ժամուն:

Երբ ահաբեկիչները կը հեռանան, ժանդարմներ, ոստիկաններ, լրտեսներ, որոնք պահ մը առաջ շան պէս անյայտ անկիւններ ապաստանած էին, դուրս կ'ելլեն եւ հոն տան գործաւորներու բահերն ու բրիչներն առնելով կը յարձակին այդ երկու ձերբակալուածներու վրայ եւ իրենց մոնղոլական բոլոր զազանութիւնովը կը սկսին ծեծել անինայ, այնպէս որ երբ պահականոց հասած էին, հէք երիտասարդները արեան զանգուածներ դարձած էին: Ժողովուրդը սարսափահար այդ համարդկային տեսարանին առջեւ, կը սկսի բողբոջի ձայն բարձրացնել ոստիկանութեան զազանութեան դէմ:

Այդ դիւցազնական կռիւը խորունկ տպաւորութիւն գործեց հանրութեան մտքին վրայ, որ կը կարծէր թէ ոստիկանութեան անգթութեան շնորհիւ, յեղափոխականները այլեւս գոյութիւն չունին: Յեղափոխական դործունէութիւնը ընդհանուր երկիւղ մը առաջ բերած է հասարակութեան վրայ, մանաւանդ հայ հարուստներու վրայ, որոնք կատարելապէս կ'ըմբռնեն այլեւս իրենց կացութեան դժնդակութիւնը: Մեր հարուստները կը կարծէին թէ, կամ այնպէս կը ձեւացնէին, հաւաքուած դրամները խաբեբաններու կամ ոստիկանութեան ձեռք կը հասնին, սակայն Քարաքէօյի դէպքը ազդու հերքում մը եղաւ այդ սխալ եւ շահախնդիր կարծիքին. այլեւս զգացումի տէր ամէն մարդ հա-

Պ — 19

ՊՈԼՍՈՑ Կ. Կ. Ի ԹՈՒՈՒՑԻԿ ԹԵՐԹԸ՝
ԵՐԿՈՒ ԱՀԱԲԵԿԻՉՆԵՐՈՒ
ԿԱԽԱՂԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԱՌԹԻՒ

Իր 1896 Յուլիսի 16 համարի առաջին էջին վրայ, սեւ շքամակի մէջ, «Իրօշակ» կը գուծէ դաշնակցական երկու տեսակի ճիւղերու՝ Գեորգի եւ Յովսէփի կախազան բարձրացման լուրը։

Կ Ա Խ Ա Ղ Ա Ն

Յունիս 3/15ին, երկուշաբթի առտուն կանուխ, ժամը 3.45 (ե.), դաշնակցական երկու անձնուրացներ, ոտոտթոցի Գէորգի եւ չմշկածազցի Յովսէփ Պոլսոյ մէջ կախազան բարձրացան, փաշաներու, պէյերու եւ սասիկաններու ներկայութեան։ Առաջինը կախուեցաւ, Պոլիս, Բարձրագոյնի բարձունքին վրայ, երկրորդը Կախա զամուրջին զլուխը։

Դիակները երկար ատեն կախ մնացին հասարակութեան աչքին առջեւ։

Երկու երիտասարդներն ալ՝ մինչեւ կախադանին դադարը՝ անխռով մնացին։ Իրենց դէմքը մահապարտի ատճուածութիւնը չուներ. ժպտուն էին եւ արհամարհոտ։ Վերջին խօսքը, որ թուաւ իրենց հոգուն խորէն, «Կեց-Ցէ՛ ՀԱՅԱՍՏԱՆ» եղաւ։

Ստորի կու տամք մանկ կեդրոնական կոմիտէի «ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԻՒՄ» կառք, երեսուրկուած Պոլսոյ Կ. Կ. Ի թիւ 9 բաւցիկ քերթով (19 Յուլիս 1896)։

ԹՈՒՈՒՑԻԿ ԹԵՐԹ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈԼՍԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ

№ 9

19 Յուլիս 1896

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԻՒՄ

Առաջին անգամը չէ որ քու Յեղափոխական գաւազաններու Նահատակուիլը կը տեսնես ազատութեան սեղանին վրայ. մի՛ վհատիր, այլ ցնծութեամբ ծափահարէ զանոնք։ Երկուշաբթի առաւօտ կախադանին վրայ ճօճացող դաշնակցականներու դիակները սուլթանին բռնակալութեան մահազոյններն էին։

Սարկածին, արիւնախում Համիդը, իր անզօր կատաղութեան մէջ, — երբ անկարող եղաւ սասիկան Խալիլ բուն սպաննիչը ձեռք ձգելու, — այդ երկու քաջներէն ուզեց առնել իր վրէժը։

Երկուքն ալ հաւատարիմ իրենց նշանաբանին, անվհեր դիմադրուեցին մահը, — Գէորգի ծիծաղեցաւ կախադանին առջեւ, ու Յովսէփ մերժելով քահանան ու դահիճը, ձեռքովը վզին անցուց շուանը «ԿեցՑէ՛ ՀԱՅԱՍՏԱՆ» աղաղակելով։ Իրենց վերջին խօսքը յաւիտենական անէ՛ծք մ'եղաւ, Համիդին՝ Չարութեան այդ մարմնացումին դէմ։

Հրէշը մոռցաւ որ այդ երկու քաջերը իրենց եղերական մահով հազարաւոր վարանողներու կամք պիտի տային, տկարներու ոյժ, եւ վրէժի մոլեգին զգացումով պիտի ձուլէին բոլոր սրտերը։

Թո՛ղ լռէ եւրոպացին, իր ստոր եւ անարգ լուծութիւնը յեղափոխականի սուրը միայն պիտի խզէ։

Բայց քաղաքացին զայրացաւ արդարի արիւնը տեսնելով, Յեղափոխականը կատողեցաւ, եւ իր ընկերով վրէժը ուխտեց իր սրտին մէջ։

Ընկերներ, մեր ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ անշունչ դիակներուն առջեւ չկորսնցնենք մեր պաղարիւնութիւնը. մեր սուղը Մայր-Հայաստանի ահաւոր սուգին չնչին մէկ մասն է միայն։ Չկորսնցնենք մեր պաղարիւնութիւնը, չեղտակի եւ ջախջախիչ կերպով ուղղելու համար մեր վերջին հարուածը բռնակալի դիւրուն։

Արցունք ու յարգանք մեր քաջերու չիբմին, մա՛հ դաւաճաններու, մա՛հ բռնակալին։

ԿԵՑՑԷ՛, ԿԵՑՑԷ՛, ԿԵՑՑԷ՛ ՅԵՂԱՓՈՒՑՈՒԹԻՒՆ։
Կ. ՊՈԼՍԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Պ — 20

ՆՈՐ ԿԱԽԱՂԱՆՆԵՐ

«Իրօշակ» յաջորդ համարի (15 Յուլիս 1896, թիւ 17) առաջին էջին վրայ, սեւ շքամակի մէջ, գրուած են Յկարճերը կախազանի արժանացած տեսակիներ՝ Յովսէփի, Գեորգի եւ Գարեգինի։ Ազա գրուած է մանկ գոյժը՝ Գարեգինի եւ Գալուստի կախազան բարձրացման։

Կ Ա Խ Ա Ղ Ա Ն

Պոլսոյ եղեռնադատ, լաւ եւս եղեռնագործ ատեանի որոշումով եւ մարդակեր սուլթանի իրատէսով կախադան հանուեցան նոր երկու անձնուրաց յեղափոխականներ ալ։ Մէկը Պրուսայի Չէնկիլէր գիւղէն եւ Իւսկիւտար պարտիզայնութիւն ընող Թօֆուսեան ԳԱՐԵԳԻՆ, միւսը կօչկակար՝ Ասատուրեան ԳԱԼՈՒՍՏ. առաջինը կամբաստանուէր տարի մը առաջ՝ եողղատցի մատնիլ եւ դաւաճան Սենեքերիմի եւ երկրորդը՝ նոյնպէս եողղատցի մատնիլ Համբարձումի սպաննիչ։

Երկուքն ալ կախուեցան Գարաքէօյի կամուրջին Պոլսոյ կողմը. առաջինը Յունիս 12/24ին, երկրորդը 19/1ին։

Պ — 21

ՄԱՏՆԻՉ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ (ՕՆՆԻԿ) ՏԵՌՈՐԸ (1)
ԵՒ ԱՀԱԲԵԿԻՉ ՄԱՐՏԻՐՈՍ ԲԱՊՈՒՃԵԱՆԻ
ՄԱՀԸ

Առնուած «Իրօշակ» 15 Օգոստոս 1896ի համարէն (թիւ 19, առաջին էջ)։

ՄԱՐՏԻՐՈՍ ԲԱՊՈՒՃԵԱՆ

Ժամանակը անցաւ, սակայն չմարեցաւ այն օրերու յիշատակը։ Անհամար ձերբակալութիւններէ, բանտերէ

ու աքտորներէ վերջ կառավարութիւնն ու հարուստներ մեռած կը կարծէին յեղափոխական ոյժը Պոլսոյ մէջ եւ կը պատրաստուէին ազատ շունչ քաշել։ Շահբազը, այդ ստոր արարածը, յանդիմանեցաւ յեղափոխութեան դէմ դաւաճանել. սողացող հայ լրտեսներ ամէն կողմ կը վխտային. հարկ էր սարսափեցնել անոնց, հարկ էր ապացուցանել, որ «Դաշնակցութիւնը» թեւատարած կը հսկէ եւ արծուի աչքերով կը դիտէ իր շուրջը անցած դարձածները։

Չորս ահաբեկիչներու Գարաքէօյի հերոսական կոխը եւ անոնց եղբերական մահը յաւիտենական դատապարտութիւնն եղան վաշխառու Եղիային։ Այնուհետեւ ուրիշներ կայծակի արագութիւնով գետին գլորեցին լրտես Մարգարը, որոյ գոյութիւնը յեղափոխական մարմնոյն խոշոր արատ մ'էր։ Իրերու այսքան արագ յաջողող դէպքերը, դեռ ցանկալի ազդեցութիւնը չէին ըրած. վատութեան սերմը ցած հողիներու մէջ միշտ գոյութիւն ունէր. հարկ էր, որ արիւնոտ սուրը շողար նաեւ անոնց գլխուն։

90 թուականին լուսարար Օննիկի ըրածները, նոր մասնութիւնով մը, աւելի ծանրակշիռ կերպարանք կը ստանային։ Այս անպիտանը համարձակած էր Մայր-Եկեղեցին ապաստանած ահաբեկիչը կառավարութեան մասնել, որու վրայ կառավարութիւնը Գուճգափուի փողոցները ձիւնուր ու հետեւակ զինուորներով լեցուց եւ հայերը սարսափով սկսան յիշել 86ի եւ 90ի օրերը։

Օննիկ մատնած եւ հետեւարար մահուան դատապարտուած էր։ Վայրագ զինուորներու ներկայութիւնը արհամարհելի էր, երբ ընկերական վրէժխնդրութեան ձայնն էր, որ կը հնչէր։ Այդ ձայնը արձագանգ գտաւ Ժողովրդեան հարազատ զաւակի մը սրտին մէջ, որ ձգելով կօչկակարի մուրճն ու գողնոցը, զէնքը ձեռին նետուեցաւ ասպարէզ արդար վրէժխնդրութեամբ բորբոքած սիրտը զովացնելու համար։

Իրիկուն մըն էր։ Օննիկ զինեալուն մը նստած, ալքով գոլորչներուն մէջ կ'ուզէր խեղդել իր խզի խայթը. դուրսը սասիկաններ եւ զինուորներ սպառազէն՝ ամայացած փողոցներու մէջ կը դեգերէին, սրճարանները դատարկուած եւ բոլոր կասկածելի կամ ըստ երեւոյթին անգործ մարդիկ ձերբակալուած էին։ Չիբու անընդհատ դափրոցը, զէնքերու շաշունը, նոյնիսկ իրենց սոււններուն մէջ երկշոտ քաղքենիներու սիրտը դող կը հանէին։ Օննիկ հակառակ այնքան հսկողութեան, դարձեալ անապահով կը զգար ինքզինքը եւ կը սոսկար Դաշնակցութեան։

Կօչկակար Մարտիրոս իր քաջութեան նախատինք համարելով մութին մէջ զարնել հայրենիքի դաւաճան մը, որոշեց օր ցերեկով, հասարակութեան աչքին առջեւ պատժել վատը. ուստի արհամարհելով լիբր սուլթանին ծառաները, անցաւ անոնց վրահակին մէջէն ու մտաւ զինեալուն։ Մինչդեռ մատնիչը գլուխը օղիի դա-

ւաթին վրայ կախած կը մտմտար, յանկարծ դաշոյնի երեք հուժկու հարուածներ դիտապաստ գետին կը փրոսն զինքը։

Մարտիրոսը դաւաճանի դիակը իր ստիճին տակ փոսելէ յետոյ, առանց շփոթելու, ատրճանակը ձեռքը սեղմած՝ դուրս սլացաւ եւ առաջին հանդիպած սասիկանն ու զինուորը երկու գնդակով գետին տապալեց։ Ճամբան բաց էր, Մարտիրոս հեռացաւ եւ բաց տան մը դռնէն ներս մտաւ։ Տնեցիք տեսնելով օտարոտի արիւնաշաղախ երիտասարդը, սկսան աղաղակել։ Ձիւնուր գօրքեր այդ միջոցին պաշարեր էին բնակարանը. ահաբեկիչը կատաղի առիւծի պէս խոյացաւ անոնց վրայ եւ մէկը գլորելէ ետքը կրկին խոյս տուաւ։ Հալածուժը սոսկալի էր։ Ամէն կողմէ «անձնատուր եղի՛ր» կը պոռային. ինչ որ քաջերու համար այդ բառը գոյութիւն չուներ։ Ձիւնուրները խիստ մօտեցած էին, ատրճանակին մէջ գնդակ մը միայն մնացած էր. «Ես ձեզի պէսներուն անձնատուր չեմ ըլլար» գոչեց խրոխտ ահաբեկիչը եւ վերջին գնդակն ալ իր բերնին մէջ պարպեց ու մեռաւ հերոսի նման, նախընտրելով վայրկեանական վեհանձն մահը թրջաց բարբարոսական անլուր շարչարանքներէն եւ գազանութիւններէն։

Այս գեղջուկ հողի յիշատակը հիացմունքով կը լեցնէ ամէն յեղափոխականի սիրտը։

(1) Տեսնել Պ17։

Պ — 22

«ՊԱՆՔ ՕԹՕՄԱՆ» ԵՒ ՍԱՄԱԹԻԱ

Հ. Յ. Դաշնակցութեան Պոլսոյ կեդրոնական կոմիտէի որոշմամբ եւ Արեւմտեան Բիւրոյի («Իրօշակ» խմբագրութիւն) հաւանութեամբ, 1896 Օգոստոս 14ին Պոլսոյ յեղափոխական կազմակերպութիւնը պոռթկաց։ Նոյն օրը, եւ գրեթէ միեւնոյն ժամանակ, Օսմանեան մայրաքաղաքին մէջ ծայր տուիւ Հայոց Պարագայն պատմութեան մէջ արդէն իսկ իրենց արժանաւոր տեղը գտած՝ ցուցակամ-յարձակողական գործադուրքի մեծը, — Օսմանեան Դրամատան գրաւուրը եւ Սամաթիոյ կռիւնը, — ինչպէս մանկ, բազմաթիւ այլ քաղերս մէջ՝ ուր քուրք գիմուրները ու խուժանը անխնայ կ'ուզէին կոտորել հայ անգէմ ազգաբնակչութիւնը՝ պաշտպանողական կռիւնը։

Մեր նպատակը չէ մամբամամ պատմականը կամ նկարագրութիւնը ընել յեղափոխական համբաժանօք այդ աքթերուն, որոնց մասին շատ գրուած է արդէն (տեսնել ի մասնաւորի՝ Մ. Վարանդեանի «Հ. Յ. Դաշնակցութեան Պատմութիւն»-ը, Ա. հատոր, ճրգ. գլուխ, էջ 155-176, — Արմէն Գարոյի յուշերը իր Վարդապետ Օրբերուն մէջ, եւ «Իրօշակ» 1896-97ի համարներուն մէջ տեղ գտած մեծ քիւով քաղցրակցութիւնները, մասնակցական ընկերներու Բարկէն Սիւնի, Խաչիկ Գեւորի, Սուրէն (Արտաշէս Անդրեասեան), Արտաշէս Միսաքեան եւ ուրիշներ — կենսագրականները, եւն.)։ Կը բաւականամբ տալով մոյս օրերուն «Իրօշակ» մէջ տեղ գտած կարգ մը հեռագիրները, ինչպէս մանկ կռիւններու նախօրեակին եւ անոնց յաջորդող օրերուն Հ. Յ. Դ. Պոլսոյ կեդրոնական կոմիտէի ցրուած շքանշաններն ու քառօրեակները։

Եւ առաջին առթիւ՝ տես թէ ինչ կը գրէ «Իրօշակ», 1896 Սեպտեմբեր 3ի եւ Սեպտեմբեր 15ի իր 20րդ. եւ 21րդ. համարներում մէջ, առաջին էջի վրայ:—

ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆ Կ. ՊՈԼՍՈՒՄ ԱՐԻՒՆԱՀԵՂ ԿՈՒՒՆԵՐ
ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
(Սոփիայի վրայով)

31/19 Օգոստ., 96 թ.

Ապստամբութիւն է Պոլսում: Դաշնակցականները գրաւել են Օսմանեան բանկը, կոտորելով զինուորներին եւ պահապաններին: Սպանացիներն ուղի բարձրացնել բանկը, եթէ դեսպանները բաւարարութիւն չտան Հայերի պահանջներին: Երկար բանակցութիւններից յետոյ ռուսաց դեսպանատունը խոստացել է կատարել Կոմիտէի պահանջած կէտերը, ինչպէս եւ բանկի մէջ գտնուողների ապահովութիւնը: Խուճար զինուած դուրս է եկել բանկից եւ զէնքը պահպանելով մտել է անդլիական նաւը:

Քաղաքի զանազան մասերում դաշնակցական միւս խմբերը դիմադրել են զինուորների ու խուճանի յարձակման: Բազմաթիւ տաճիկներ են կոտորուել: Տաճիկները յարձակուել են անպաշտպան թաղերի վրայ եւ սոսկալի կոտորած արել:

Դրութիւնը սոսկալի է:

1/20 Սեպտեմ., 96 թ.

Զինուորները եւ խուճանը շարունակում են կոտորածը: Մերոնք դիմադրում են ուժերով:

Դաշնակցական Կեդրոնական Կոմիտէն սպանացի է թափել իր ամբողջ ուժը, եթէ անզէնների կոտորածը շարունակուի: Դեսպանները խոստիւ են միջամտել եւ կառավարութիւնը խիստ միջոցներ է ձեռք առել: Մանրամասնութիւնները նամակով:

ՕՍՄԱՆԵԱՆ ԲԱՆԿԻ ԳՐԱՒՈՒՄԸ

ԲԱՆԿԸ ԳՐԱՒՈՂՆԵՐԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ
(Ներկայացրած ֆրանսերէն լեզուով)

Մեր պահանջներն են.

1. Ապահովել միջազգային միջամտութեամբ ամբողջ երկրի խաղաղութիւնը:
 2. Ընդունել բոլոր պահանջները, որ դրել է Հ. Յ. Դաշնակցութեան Պոլսոյ Կենտրոնական Կոմիտէն:
 3. Մեր դէմ ուժ գործ չդնել:
 4. Կեանքի կատարեալ ապահովութիւն թէ՛ բանկի մէջ գտնուողների եւ թէ՛ քաղաքի այլ մասերում խոսնակութեան մէջ մասնակցողների:
- Բանկի շարժական կայքը, դրամը կը մնան անվնաս

մինչեւ մեր պահանջների գործադրութիւնը: Հակառակ դէպքում բոլոր թղթերը, դրամը կ'ոչնչացնենք եւ մենք էլ ծառայողների հետ միասին բանկի փլատակների տակ կը գտնենք մեր մահը:

Մենք ստիպուած ենք դիմել այս ծայրայեղ միջոցներին:

Դա մարդկութեան դատապարտելի անտարբերութիւնն է, որ մեզ հասցրել է այս աստիճանին:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ Կ. ՊՈԼՍԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ

ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
(Բալզարիայից 10իմ)

Միաժամանակ բանկի դրաման հետ, վճռած էինք շարդ տալ քաղաքի զանազան մասերում, իսկ միւս տեղերում պաշտպանողական դիրք բռնել:

Սամաթիա թաղում մեր կոիւր տեւեց 11 ժամ: Կոտորուած են բաւական հայեր: Տաճիկների կորուստը աւելի է՝ մօտ 1500:

Բարային ոմբակոծուեցաւ, որտեղ առաջին յարձակումից 20 տաճիկ է սպանուել:

Սասքէօյում տաճիկների յարձակման դիմադրում էինք ուժերով. կոտորածը երկու կողմից էլ մեծ է:

Ղալաթասարային կից տներից 3 օր շարունակ ուժեր էինք նետում:

Ղալաթան եւ Բերան մինչեւ այսօր դոց են:

**

(Մարտիլից 13իմ)

Պոլսէն Մարտէյլ ժամանող փախստականների պատճառին նայելով, գործը շատ մեծ կերպարանք առած է: Տաճիկների կորուստը սպասածէն շատ աւել է (*): Սամաթիայէն ու Ղալաթայէն զինուորներու եւ տաճիկ խուճանի դիակները անընդհատ սայլերով կը կրէին:

ՄԵՐ ԸՆԿԵՐՆԵՐԸ ՄԱՐՍԷՅԼՈՒՄ

Ամօոյս Յին Մարտէյլ հասաւ «Ժիրոնդ» նաւը, որի մէջ էին գտնուում Օսմանեան բանկը գրաւող մեր հերոսները: Մարտէյլի հայ երիտասարդութիւնը պարաստուել էր լաւ ընդունելութիւն անելու, ինչպէս եւ Պարիզի հայ գաղութը հայ ուսանողութեան հետ միասին, բայց Ֆրանսիական ներկայ ստոր կառավարութեան մի անբացատրելի կարգադրութեան շնորհիւ տղաները ուղղակի բանտ տարուեցան որտեղ են մինչև:

(*) Ինչպէս յայտնի է, «Նիւ Եօրք Հերալդ»ը 450 է հաշուում սպանուած զինուորների թիւը, «Դեյլի-Նիւս»ը 400 եւ «Տաճիկ թղթակցին» նայելով, զինուորական հիւանդանոցներում մօտ 500 վիրաւոր զինուոր կան: ԵԱՆՕԹ. ԽՄԲ.

չիւ այսօր: Չնայելով անընդհատ դիմումներին, թէ բանտարկեալների եւ թէ Պարիզի հայ գաղութի խիստ բողոքներին ու Ֆրանսիական մամուլի լաւագոյն մասի կատաղի յարձակումներին, նրանք դեռ մնում են անորոշ ժամանակով, անյայտ պատճառներով: Ահա մեզ գիտլոմատիայի տուած ազնիւ խոստումների իրազորումը...

Հաւատացած են, որ ազատութիւն տալուց յետոյ, Ֆրանսիական կառավարութիւնը թոյլ չի տալ տղերանց մալ իր հողում:

Պ — 23

ՊՈԼՍՈՑ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷԻ ԾՐՋԱԲԵՐԱԿԱՆՆԵՐԸ

Հետեւեալ երկու շրջափակումները, Հ. Յ. Դ. Պոլսի կեդրոնական Կոմիտէի ստորագրութեամբ, ցրուած են Օգոստոս 14ի կախմբէն ամփոփաւ առայ:

Առաջինը սղուած է քրքրեթով, եւ ստեմամուած է Պոլսոյ բուրք ազգաբնակչութեան:

Երկրորդը հրատարակուած է հայերէն, ֆրանսերէն եւ քրքրեթով, եւ ուղարկուած է միջազգային համարային կարծիքին:

Ա.— Քեզ ենք դիմում սրանով, տաճիկ ժողովուրդ, եւ ոչ թէ այն պատճառով, որ երկիրը ենք կրում զեղանից, կամ այլ եւ այլ միտումներ ունենք. — ո՛չ, մենք արհամարհանքով ենք նայում մահուան երեսին, — թո կառավարութիւնն է մեզ այդ սովորեցրել: Մենք դիմում ենք զեղ միայն մի նպատակով՝ յայտնելու զեղ, որ թո դէմ մենք ոչինչ չունենք: Դարերից ի վեր մեր հայրերը ու պապերն ապրում էին զեղ հետ հայտ ու խաղաղ, ունենալով մի հայրենիք ու ընդհանուր նպատակներ: Սակայն այս վերջին ժամանակները, ոճիրներով ստեղծուած թո կառավարութիւնը սկսեց խռովութիւններ սերմանել մեր մէջ, որպէս զի աւելի մեծ դիւրութեամբ խեղդի եւ զեղ, եւ մեզ: Դու չհասկացար, ժողովուրդ, այս դիւական քաղաքականութիւնը եւ մեր եղբայրների արեան մէջ թաթախուած՝ դու մեղսակից գտնուեցար այդ զազրելի ոճրագործութեան: Բայց թող քաջ յայտնի լինի զեղ, որ մեր կոիւր ոչ թէ թո դէմ է, այլ թո կառավարութեան. դրա դէմ են կուում եւ թո լաւագոյն զաւակները, որոնք կառավարչական ներկայ մեկերում իրենց հանգստութիւնը միմիայն Բոսֆորի սրբնթաց ալիքների մէջ են գտնում: Մտածի՛ր, ժողովուրդ, ո՛վ է թո թշնամին եւ ով թո բարեկամը:

Բ.— Մենք անդուլ բողոքեցինք Եւրոպային թիւրք բռնապետութեան դէմ, բայց մեր բողոքները, որ օրինակ են էին, սխտեմարար մերժուեցան:

Սուլթան Համիտ արիւնահեղ վրէժխնդրութեամբ պատասխանեց մեզ:

Տեսաւ Եւրոպան այս ահալի ոճիրը եւ լուց:

Ո՛չ միայն դահիճի ձեռքը չբռնեց, այլ եւ մեզ լըրբարար համակերպութեան հարկադրեց:

Մեզ նախատեսին՝ մեր մարդկային իրաւունքը զլանալով մեզ, եւ մեր ազգային պատիւը ցմահ խոցեցին՝ մեր արեան մէջ մեր բողոքի ձայնը խեղդել ջանալով:

Մեր արիւնով սրբազործուած մեր պահանջներուն կու գայ հիմա միանալու եւ սրբազան վրէժի սեւեռուն գաղափարը, որ սեւ ուրուականի պէս արձանացած է մեր աչքերուն առջեւ:

«Իրաւունքը զօրաւորին է» ըսաւ մեզի Եւրոպան՝ իր մահաոթի անտարբերութեամբ, եւ մենք, տկարներս, մարդկային իրաւունքներէ զրկուածներս, հարկադրուած ենք գիտութեանը դիմելու՝ որոնելով ամէն միջոց, փշրելու համար սուլթանի գարշելի լուծը. ա՛լ չենք կրնար հանդուրժել:

Իրաւնադիտական խաղերու ժամանակն ա՛լ անցած է:

Մեր հարիւր հազար նահատակներուն թափած արիւնը մեզի իրաւունք կու տայ ազատութիւն պահանջելու:

Մեր թշնամիներուն տարածած բոլոր նենգամիտ զրոյցներուն հակառակ՝ մենք խնդրած ենք եւ հիմա ալ կը խնդրենք միմիայն անհրաժեշտը, այսինքն՝

1. Նշանակել ծագումով եւ ազգութեամբ եւրոպացի բարձրագոյն կոմիտար մը՝ Հայաստանի համար, ընտրուած վեց մեծ տէրութիւններու կողմէն:
2. Վալիները, միւթէսարրըֆները եւ գայմազամները(1) պիտի նշանակէ բարձր կոմիտարը եւ Սուլթանը պիտի վաւերացնէ:
3. Եւրոպացի սպաներու հրամանատարութեան ներքեւ պիտի կազմակերպուի տեղական ազգերէն միլիցիա, ժանտարմա եւ ոստիկանութիւն:
4. Դատական բարենորոգումներ՝ եւրոպական սխտեմով:
5. Կրօնի, կրթութեան եւ մամուլի կատարեալ ազատութիւն:
6. Երկրի հասոյթներու երեք քառորդ մասը պիտի յատկացուի տեղական պէտքերուն:
7. Յետեւեալ հարկերը ջնջել:
8. Հինգ տարի հարկէ ազատել, եւ հետեւեալ հինգ տարիներու պետութեան վճարելիք հարկը գործածել վերջին խոռվութեանց պատճառած վնասները փոխարինելու:
9. Հայերէն գրաւուած անշարժ կայքերը անմիջապէս վերադարձնել տէրերուն:
10. Բոլոր հայ գաղթականներուն ազատ վերադարձ:
11. Ընդհանուր ներում հայ քաղաքական յանցաւորներուն:
12. Եւրոպական տէրութիւններու ներկայացուցիչներէն առժամայ յանձնաժողով մը կազմել, որ Հայաստանի զխաւոր քաղաքներէն մէկուն մէջ հաստատուի:

ուելով պիտի հսկէ վերոյիշեալ յօդուածներու գործադրութեան(2) :

Կը կրկնենք, ո՛չ մէկ զոհողութեան առջեւ կանգ պիտի առնենք մեր նպատակին հասնելու համար :

Այսուհետեւ ազատ կը համարինք ինքզինքնիստ մէկն պատասխանատուութենէ :

Կանխաւ կ'ողբանք մէկն անոնց կորուստը — տեղացի թէ օտարական, որոնք զոհ պիտի ըլլան ընդհանուր շփոթութեան : Կը ցաւինք, սակայն ընդհանուր դժբախտութեան առջեւ մասնաւոր սուղը իմաստ չունի :

Մենք կը մեռնինք, գիտենք. բայց յեղափոխութիւնը, որ հայ ժողովրդի մինչեւ ոսկորները թափանցած է, պիտի շարունակէ սպառնալ Սուլթաններու գահին, ցորչափ մեր մարդկային իրաւունքները ձեռք չբերենք եւ ցորչափ կենդանի մնայ վերջին հայրը :

(1) Բնագրիմ մէջ՝ «գախտաբաններ» :
(2) Բնագրիմ մէջ՝ «գործածութեան» :

Պ — 24
ՊՈԼՍՈՅ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵԻ
ԹԻՌՈՒՑԻԿ ԹԵՐԹԸ

«Թաուցիկ քերք» քի 11, 25 Սեպտեմբեր 1896, հրատարակուած հայերէն եւ ֆրանսերէն : Ուղարած է միջազգային հանրային կարծիքին, եւ ի մասնաւոր՝ Եւրոպական դիւանագիտական շըրջանակներուն ու Պետութեան :

Հայերէնէն ետք՝ կու տանք նաեւ ֆրանսերէնը, որու տպագրեալ պատճէնը եւս ունինք մեր տրամադրութեան տակ :

ԹԻՌՈՒՑԻԿ ԹԵՐԹԸ
ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՆԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
Կ. ՊՈԼՍԻ ԿԵԴՐՈՒՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
N° 11, 25 Սեպտ. 1896

Ձեզ ենք դիմում, դ՛ուրք, դիպրոմատներ, քաղաքագէտներ, ազգերի տէրեր, պատմութիւն անողներ, մեր բողոքող նախատինքով լիքը խօսքը մէկնից առաջ ձեզ ենք ուղղում :

Ի՞նչ արիք դուք, երբ տաճիկ ամբողջ սրիկայ մաւր, զօրքի, ոստիկանութեան հետ միասին ձեռք-ձեռքի տուած, մայրաքաղաքի փողոցներով թափառելիս հայ բանուորը, հայ վաճառականը, հայ քահանան, հայ ինտելիգենտն էր որոնում ու տեղն ու տեղը, ձեր աչքի առաջ, օր ցերեկով անպատեկի դժոխային տանջանքներ աւելով՝ մաս-մաս անում... :

Դուք գիտէիք, որ Պոլսի զանազան թաղերում, — ամբողջ Պոլսում, — նոյնանման տեսարաններ էին տեղի ունենում. բայց իրենց կատարելութեանը հասցըրած. անմեղ հայերի անմեղ արիւնով էին ներկում ամբողջ Պոլսի փողոցները, տները, խաներն ու խանութները — անկիւն չէր մնացել, որ արիւնով չոռոգ-

ուէր. մահն էր, որ իր սեւ թեւերը տարածել էր դժոխացած Պոլսի վրայ... :

Մտածեցի՞ք արդեօք բռնել արեան մէջ շաղախուած արիւնով պատած սուրը, զսպել արիւնարբու, արիւնածարաւ, վայրագ գազանը : Ո՛չ, դուք միայն միջոցներ ձեռք առաք՝ բոլորդ միասին, որպէսզի դարերի ընթացքում կեղեքող-հալածողը ազատ մնայ՝ դուրսը բարձրացրած ստրկի հասցրած վնասից : — Դուք այդ վնասը պակասացնել ջանացիք՝ — այդ վնասը ձեր սեփական վնասն էր որովհետեւ : Փոխանակ արիւնը կանգնեցնելու, անմեղներին օղնութեան հասնելու, դուք կէս գիշերով, արեան հեղեղների միջով հերոսների մօտ վազեցիք ու կրկին դիպրոմատական խաղերով, զանազան խոստումներ տալով բանկը ազատել փութացիք... Իսկ այնտեղ ամէնուրեք տաճիկը իր գործն էր տեսնում, հազարաւոր անմեղների արեան հետ կանանց ու երեխաների անմեղ արիւնը խառնելով : Այդ դուք տեսնում էիք ու լուռ մնում, չնայելով ազնիւ խօսքին, որ վեց այսպէս ասած մեծ պետութիւնների ներկայացուցիչները ի դիմաց Մաքսիմովի, ծնկաչոք տուել էիք բանկի հերոսներին կոտորածը կանգնեցնել խոստանալով, հայկական դատի, հայ ժողովրդի շահերը առաջ բերելով... Պարեցի՞ք :

Ա՛յդ էին պահանջում ձեզնից ձեր պաշտօնական պարտականութիւնները, ա՛յդ էին պահանջում վերջապէս ձեր մարդկային պարտականութիւնները :

Մի՞թէ արդարեւ քաղաքական կեանքի մէջ ամենատարրական մարդկային պարտաճանաչութիւնն անգամ բացակայում է ու եւրոպական ազգերը իրենց ներկայացուցիչներով չեն կոչուած պէթ որոշ չափով կարգ ու կանոն մտցնել այնտեղ, ուր դժոխք է տիրում... :

Եթէ հազարաւոր անմեղների ողբ ու արցունքը, ամբողջ մարդկութեանը դիմած նրանց օղնութեան ձիչ ու աղաղակը ձեր սրտին ոչինչ չի ասում ու դուք ընդունակ էք այդ բոլորին սառնասրտութեամբ նայելու, հեռացէ՛ք, — մի՛ վրդովէք մեր գազանացած խիղճն ու միտքը... :

Եթէ այս անգամ էլ հայ ժողովրդի անմեղ արիւնը ի զուր թափուած լինի, եթէ այս անգամը վերջինը չլինի, մօտակայ ահուկի կռուի համար մեզ մտածել կը մնայ նորանոր միջոցների, տարբեր ձեւի ու ծաւալի մասին, որից վնասուողները յամենայն դէպս միայն մենք չենք լինի... Ինչ կը լինի, թող լինի... Բայց եւ այնպէս մեր գրգռուած խղճի ու մտքի, մեր արիւնով պատած աչքերի առաջ մի բարոյականացած անբարոյական միտք է անցնում, որը մեզ վրայ սարսուռ է բերում... :

Եթէ հայը իրաւունք չունի խաղաղ, մարդավայի կեանք վարելու, այդ իրաւունքից նա կ'աշխատի զրկել եւ իր բոլոր թշնամիներին... :

Եթէ արցունք, — թո՛ղ ուրեմն արցունք... :

Թ Ի Ո Ւ Ց Ի Կ Թ Ե Ր Թ
Հ Ա Յ Յ Ե Ղ Ա Փ Ո Ւ Ն Ա Կ Ա Ն
Դ Ա Շ Ն Ա Կ Ց Ո Ւ Թ Ե Ա Ն
Կ. ՊՈԼՍԻ
Կ Ե Դ Ր Ո Ւ Ն Ա Կ Ա Ն Կ Օ Մ Ի Տ Ե Ի

PROCLAMATION

DU
COMITÉ CENTRAL DE CONSTANTINOPLE
DE LA
FÉDÉRATION RÉVOLUTIONNAIRE ARMÉNIENNE
dite DASCHNAKTZOUTHIOUN

C'est à vous, diplomates, politiciens, maîtres des nations, c'est à vous que nous adressons ces mots pleins de reproches et d'insultes.

Qu'avez-vous fait lorsque des fanatiques et des brigands turcs, soutenus par la police et les soldats, pourchassaient de malheureux Arméniens: ouvriers ou marchands, prêtres ou lettrés, les traquaient comme des bêtes féroces et sous vos yeux, en plein jour, les massacraient avec les raffinements de supplices les plus infernaux! Qu'avez-vous fait?

Vous saviez que ces horreurs se répétaient dans tous les quartiers de Constantinople. Les rues, les khans, les maisons et les magasins étaient souillés du sang des innocents. Partout du sang! Partout la terreur et la mort! C'était le règne de l'enfer.

Avez-vous, comme c'était votre devoir, cherché à arrêter le couteau de l'assassin? Non! Vous n'avez pensé qu'à sauvegarder les intérêts du tyran, à rendre vains les efforts du peuple écrasé essayant de briser ses chaînes. Et pourquoi protéger le despote contre l'opprimé? Parce que c'était votre intérêt, parce que ces pertes causées par notre peuple, ces pertes subies par le tyran vous touchaient, vous aussi, Européens. L'intérêt l'a emporté sur la justice!

Au lieu d'arrêter l'effusion du sang, au lieu de porter secours aux malheureux martyrs, vous vous êtes empressés d'accourir dans la nuit, à travers des mares de sang, auprès des héros, et, grâce à vos menées diplo-

matiques, à vos promesses également diplomatiques, vous avez sauvé la Banque, c'est-à-dire la caisse.

Cependant le Turc accomplissait, à son aise son œuvre de carnage, mêlant le plus pur sang des femmes et des enfants à celui de milliers d'innocents. Vous avez tout vu et vous avez toujours gardé le silence! Vous n'avez pas tenu compte de la parole d'honneur donnée, à genoux, à nos héros, par Maximoff, le délégué des six soi-disant grandes puissances, qui promit à nos martyrs d'arrêter les massacres et de veiller aux intérêts de la nation.

Soyez fiers de nous avoir trompés!
La connaissance du plus élémentaire des devoirs humains sera-t-elle encore longtemps exclue de la vie politique et les nations européennes ne mettront-elles pas bientôt un terme à ces tueries, en introduisant, au moins dans une certaine mesure, l'ordre et la justice là où règnent l'anarchie et l'arbitre(1) ?

Vos devoirs officiels vous le défendent-ils ?
Si les armes des innocents et leurs cris de détresse ne vous touchent pas et si vous êtes capables de regarder toutes ces horreurs de sang-froid, eh bien, éloignez-vous ! Ne troublez pas notre âme et notre esprit, devenus féroces à la fin de tant de souffrances et de tant de perfidies.

Si cette fois encore tant de sang est inutilement répandu, nous chercherons d'autres moyens plus efficaces. Nous préparerons un autre plan d'action, mieux combiné, et qui atteindra plus sûrement son but et nous n'en subirons pas seuls les conséquences... Quoiqu'il arrive, tant pis ! Et cependant, devant notre conscience et notre esprit exaspérés, devant nos regards chargés de haine, se déroule un projet criminel, désormais moralisé, qui nous fait frissonner malgré nous...

Si les Arméniens n'ont pas le droit de mener une vie paisible et tranquille, ils s'efforceront d'arracher ce droit à tous leurs ennemis !
Hodie mihi — cras tibi ! ...

(1) Այստեղ, ինչպէս ամբողջ գրութեան մէջ, անփոփոխ պահած ենք բնագիրը : Լեզուական քերականութիւնը սրբագրած չենք :

Պ — 25
ՊՈԼՍՈՅ Կ. Կ. Ի ԱԶԴԱՐԱՐԱԳԻՐԸ՝
ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆՑ
ԴԵՍՊՈՒՆԵՐՈՒՆ

Հրապարակ համուած է, ամենայն հաւանականութեամբ, ՊՁով տրուած «Թաուցիկ քերք»-էն մէկ կամ երկու շաբաթ ետք : Բնագիրը չունինք : Կ'առնենք «Իրօշակ»ի 1896ի 24րդ համարէն (17 Հոկտեմբեր 1896) :

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
Կ. ՊՈԼՍՈՅ ԿԵՂ. ԿՈՄԻՏԵԻ
ԱԶԳԱՐԱՐԱԳԻՐԸ

ՏԷՐ,

Ձերբակալութիւնները կը շարունակուին, անար-
դարութեան ատեանները լիովին կը կատարեն իրենց
հայրենի պարտականութիւնը. զնատանները լեցուած են
հազարաւոր անմեղներով, որոնց միակ յանցանքն է հայ
ըլլալին:

Եւ իբր թէ քաղցը եւ համաճարակները բաւ չէին,
այժմ ամենէն զարհուրելի տանջանքները վերապահ-
ուած են բանտարկեալներուն: Մինչդեռ բովանդակ
հայրութիւնը խմբովին կը հալածուի, բուն շարագործ-
ները, վայրենի զիւրտերը ոչ միայն չեն պատժուիր,
այլ նաեւ թաղերու ապահովութեան հոգը յանձնուած
է անոնց: Ի՞նչ չհեղուութիւն:

Հակառակ մեծ վէճերի խոստումներուն եւ ապա-
հովութիւններուն, հակառակ վալիներուն ուղարկուած
համբաւաւոր շրջաբերականին, նորէն Ակնի կոտորածը
պայթեցաւ քաղաքակիրթ աշխարհի եւ Դահիճ-Համի-
տի վայրագ քաղաքականութեան աչքին առջև:

Օգոստոս 14/26ի մեր յայտարարութիւնը եւ նոյն
ամսուայ 16/28ի(1) մեր ազդարարագիրը արձակելէ
յետոյ համբերութեամբ կը սպասէինք մեր տարաբախտ
հայրենիքի սրբազան դատին նկատմամբ եւրոպական
գիւտանազիտութեան բռնելիք նոր ուղղութեան:

Շատ լաւ գիտէինք, թէ կարճ ժամանակամիջոցի
մը մէջ հնար չէր ազդեցիկ բարենորոգումներ կատա-
րել, սակայն կը սպասէինք զոնչ առ այժմ մեղմացու-
ցիչ միջոցներով վէրքերը փակել, նորանոր զազանու-
թիւններու առջեւ առնել, անմեղները պաշտպանել եւ
միաժամանակ գաղթականութիւնը արգելել՝ որ ձմեռ
ատենով պատճառ պիտի ըլլայ այդ շուրջը թշուա-
նեան մեծ մասին ակնբերեւ մահուան:

Աւա՛ղ, ոչ մէկ միջոց, բացի, թերեւս, թօփահանելի
ռուճերու ցուցահանդէսէն՝ մահճետականներու մո-
լեռանդութիւնը աւելի բորբոքելու համար:

Մենք պարտականութիւն կը համարինք վերջին
անգամ ըլլալով՝ ձեր ուշադրութիւնը հրաւիրել թէ
վտանգաւոր խաղ է ազգի մը ճակատագրին հետ խա-
ղալ, ազգի մը, որ աւելի հին է եւ աւելի քաղաքակիրթ,
քան իր խոզխոզիչները եւ որ իր դարաւոր համբերու-
թեանը վերջին ծայրը հասած է: Սպանալիք մը չէ
առ, այլ պատմական օրէնք մը, զոր կարելի չէ ան-
զօսնել:

Մենք, զորքի մարդիկս, մենք միշտ զորքը խօսքէն
նախամեծար սեպած ենք: Մեր վերջնական խօսքը կար-
գացիք արդէն մեր շրջաբերականին մէջ:

Յ. Գ.— Պարտք կը համարինք բացարձակապէս
հերքել նաեւ այն, թէ Դաշնակցականները երբեք չեն

մտադրած Պոլսոյ դեպքանատուները օղբ հանել, ինչ-
պէս կը տարածայնեն հայատեաց թերթերը: Այդ լու-
րին անհեթեթութիւնը այնքան պարզ է, որ տարակոյս
չի վերցնեն, որովհետեւ մինչեւ հիմա, մենք միշտ
պզտիկ յոյս մը տածած ենք հայկական գործերուն մէջ
եւրոպական միջամտութեան մասին:

(1) Ամենայն հաւանականութեամբ՝ ՊՅՈՎ տրուած Բ. շրջա-
բերականը, ուզուած գիւտանազիտութեամբ:

Պ — 26

«ԴՐՕՇԱԿ»Ի ԱԶԳԻԸ

«Դրօշակ»ի 30 Ապրիլ 1897ի (թիւ 7) համարի վերջին էջի
վրայ կը կարգաճէ.—

Ա Ջ Դ

Պոլիս՝ Պատգիւղ բնակող երկու պարսկահայտակ
եղբայրներ՝ ԵՐՈՒԱՆԴ ԵՎ ՎՌԱՄՇԱՊՈՒՀ ԹՈՒՂ-
ԱՃԵԱՆ, որոնք Օգոստոս 14ին Պատգիւղի եկեղեցին
դրկուած «Դաշնակցութեան» ատրճանակներէն երկու
հատ Սմիթ-Վիստըն իւրացուցած էին, մերժեցին վե-
րադարձել ատոնք Վառնայի Կոմիտէին, լրբարար ա-
ռարկելով՝ թէ ազգին ապրանքն են ատոնք եւ ոչ ոք
իրաւունք ունի ետ պահանջելու իրենցմէ:

Նոյն Երուանդ Թուղլաճեանը այդ տաղնապալի
միջոցին փախստականի մը համար «Դաշնակցութեան»
կողմէն իրեն յանձնուած երկու օսմ. ոսկին եւս կո-
կորդն անցուցած է, մէկ մէճիտ միայն տալով պատ-
կանեալ տեղը: Այդ դրամն ալ կը մերժուի այժմ հա-
տուցանելու, այն առարկութեամբ՝ թէ վերջին դէպ-
քին հետեւանքով մեծամեծ վնասներ կրած են, թէև
չուսյտութեան համար դրամ չի պակսիր իրենց:

Այս ամենալիբր արարքը հրապարակելով՝ կը հր-
ւիրենք հասարակութիւնը իր զգուանքով եւ արհամար-
հանքով հալածելու այդ երկուքը եւ ասոնց նմանները,
որոնք չեն խղճար սեփականելու ժողովրդին՝ յանուն
յեղափոխութեան իր արիւն-քրտինքով նուիրած լու-
մաները:

Այս առթիւ հրաւիր կը կարգանք ամէն անոնց, ո՛ր
«Դաշնակցութեան» պատկանած ռուճք, դաշոյն, ա-
տրճանակ, զնդակներ կամ որեւէ իր վերջին դէպքին
առթիւ իրենց քով մնացած ունին կամ տեղ մը պա-
հած են՝ փութան մանրամասնօրէն հաղորդել խմբա-
րութեանս, որպէսզի պատշաճ դատուած եղանակով
անուրի եւ յանձնուին «Դաշնակցութեան» տեղական
կոմիտէներուն:

Պ — 27

ԱՀԱՐԵԿՉԱԿԱՆ ՆՈՐ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ
ՊՈԼՍՈՅ ՄԷՋ

Մեծ պետութեանց անտարբերութեամբ եւ սուլքամակաճ կա-
ավարութեամբ ևնարանք հալածանքներու գիմաց, Պոլսոյ Կեղր-
կմիտէն կ'որոշէ, ըստ երեւոյթիմ, անարեկչական ևնար քթերով
ցնցել բաճապետութիւնն ու միշտագայիմ համբայիմ կարծիքը:
Վերջապէս 1897 Սեպտեմբերի թիւ 11 համարիմ մէջ լոյս տեսած
Բարակցութեմ մը կը քաղեմք հետեւեալ տեղեկութիւնները 6 Օ-
գոստոս (ևնար տոմարով՝ 18 Օգոստոս) 1897իմ կատարուած անա-
րեկչական այդ գործադրութիւններու մասիմ, գծրախտարար ան-
ցած ընդհանուր ասմամբ անյաղաք:

ՏԵՌՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պոլիս, 9/21 Օգոստ.

Նոյն օրն իսկ հեռագրեցինք ձեզ այն երեք տեղա-
րկան գործողութիւններու մասին, որոնք Կ. Պոլսի
Կեղր. Կոմիտէի որոշումով ի դործ դրուեցան 6/18 Օգ-
Չորեքշաբթի:

ՕՍՄԱՆԵԱՆ ՊԱՆՔԻՆ ՄԷՋ

Օգոստ. 6ին որոշուած ժամուն, որ թրքական Դն
էր, կէսօրէն ետք, Դաշնակցութեան անարեկչներէն
մէկը ուժանակի ծրարը ձեռքին՝ կը մտնէ Օսմանեան
պանքի դռնէն ներս, եւ սանդուխներէն վեր կը բարձ-
րանայ դրամարկղի դրասեներակը մտնելու եւ պանքը օղ-
թոցնելու: Պահապաններն անմիջապէս կասկածելով՝
կը հետեւին եւ քանի մը հարցումներ ընելէ ետք, կ'ու-
զեն ձերբակալել զինքը: Ահարեկչը պաղարիւնը չի
կորսնցնեն. կը փորձէ իսկոյն ծրարին պատրոյղը վա-
ռել ձեռքի սիկառով, սակայն պահապաններէն մէկը
հարուած մը տալով ձեռքին՝ սիկառը կը ձգէ գետին:
Անվախ հերոսը կը քաշէ մէջքէն ատրճանակը եւ կ'ուզէ
իրեն համար ճամբայ բանալ, բայց պանքի ոստիկան-
ները միջոց չեն տար, կը յարձակին վրան, կը կաշ-
կանդեն եւ կը տանին մերձակայ պահականոցը:

ԿԱԼԱԹԱ — ՍԷՐԱՅԻ ԱՌՋԵԻ

Ճիշդ նոյն վայրկենին՝ Բերայի երկու անարեկչիչ-
ներ իրենց վրայ առած պարտքը կատարելու հաստատ
որոշումով կ'երթան Կալաթա-Սէրայի առջև: Որոշու-

մին համեմատ ասոնցմէ մէկը ռուճքը պիտի պայթե-
ցնէր սալայատակին վրայ եւ երբ այդ պայթումին
հետեւանքով զինուորներ ու ոստիկաններ դուրս թա-
փէին, երկրորդը իր կարգին պիտի նետէր իր ռուճքը
այդ զիշատիչներու խումբին մէջ: Ռուճքը չպայթեցաւ
անյայտ պատճառով: Ներկայ գտնուող ոստիկաններն
ու զինուորները կատարարար յարձակեցան խեղճ տղուն
վրայ եւ կտոր կտոր ըրին:

Երկրորդ անարեկչիչը, որ քիչ մը հեռուն կը սպա-
սէր, նշմարուած էր արդէն. կը հալածեն եւ կը պաշա-
րեն զինքը: Ահարեկչիչը իր ուժով վերով երեք անգամ
կրակ կ'ընէ, սակայն ասոնց մէկու մը վնասել յաջո-
ղելու՝ կը ձերբակալուի:

Բ. ԴՐԱՆ ՄԷՋ

Բոլորովին անակնկալ պարագաներու հետեւանքով
ժամը 6իշդ 7 եւ 48 վայրկեան անցած՝ ուժանակի ծրա-
րը կը պայթի առաջին յարկը «Թէշրիֆաթի» սենեակ-
ներու քով սոսկալի ձայնով ու անուրի ցնցումով, որ
չատեր երկրաշարժ կարծեր են հեռուէն:

Պայթումին հետեւանքով մէկ քանի սենեակներ կը
քակուտին, սանդուխները կը փչուրին, հոն գտնուողնե-
րուն մէկ մասը անմիջապէս կը սպաննուի ու շատեր ալ
կը վիրաւորուին: Պայթումէն անմիջապէս վերջը հըր-
դեհը կը սկսի. վերի յարկերէն շատ մը մարդիկ ինք-
զինքնին պատուհաններէն վար կը նետեն ազատուելու
նպատակով, բայց անոնց ալ զանազան անգամները կը
կոտորին, մէկ քանիներու ձեռքը, ուրիշներու ոտքը...
Հրդեհը կը տեւէ երկու ժամ ու ամէն կողմէն, նոյնիսկ
Բերայէն, թաղային ու զինուորական ջրհանները կը
փութացնէին հրդեհին վայրը:

Երբ սարսափելի պայթումը կը լսուի, ոստիկան-
ներ, զինուորներ ու անոնց հետ սօֆթաներն ու խու-
ժանը կը վազեն դէպի Բ. Դուրը, անմիջապէս դուռ-
ները կը դոցեն յանցաւորը բռնելու համար. բայց մեր
տղաքը ժամանակին դուրս ելած էին արդէն եւ տակա-
ւին հրդեհը չմարած՝ անոնք իրենց գործերունը զլուին
անցած կ'աշխատէին հանգիստ, բոլորովին ապահով:
Ոստիկանութիւնը կատարած՝ այդ տղաքը կը փնտռէ-
ամէն ջանք գործ կը դնէ յանցաւորը գտնելու, բայց
յաջողուելու եւ ոչ մէկ յոյս կրնայ ունենալ:

Պանութները դէպքէն անմիջապէս ետքը կը փակ-
ուին: Ժողովուրդը կը վազէ դէպի տուները: Զինուոր-
ները թէ Պոլիս եւ թէ Բերա դուրս կը թափին պահա-
կանոցներէն՝ խիստ հսկողութիւն ընելու համար: Ոս-
տիկանութիւնը՝ արդէն նախապէս ստացած հրամանին
համաձայն՝ շատ զգուշութեամբ կը վերաբերի դէպի
ժողովուրդը, որեւէ թշնամական արարք չի գործադր-

ուր հայերու նկատմամբ. հայ թաղերու մէջ խիստ հսկողութիւն կը կատարուի: Թուրք խուժանք անշուշտ այս վիճակէն գոհ չէր կրնար ըլլալ եւ իրաւ ալ իրենց դէմքերուն վրայ կը տեսնուէր լուրջ տիրութիւն մը. ամէնքն ալ գլխիկոր, հանդարտ էին. այդ իրիկունը Բերայի թաղերուն մէջ տաճիկ պողովաճառներ եւ այդ դասին պատկանող մարդիկ ամենեւին չերեցան:

Ոստիկանութիւնը սարսափը չընդհանրացնելու եւ եւրոպացոց մտքերը գրգռման վիճակի մէջ չպահելու համար՝ Բերայի բոլոր խանութները բռնի բանալ տրուաւ եւ ստիպեց ժողովուրդը, որ իր գործերով գրադի, իրրեւ թէ բան մը եղած չըլլար:

ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Ձերբակալութիւններն սկսան, բայց ո՛չ ծայրայեղ սաստկութեամբ, ինչպէս անցեալ տարի պատահեցաւ: Նոյնիսկ ձերբակալութիւնները պաղտնի, առանց աղձուկի ընելու ջանքեր կ'ընէ ոստիկանութիւնը. Չորեքշաբթի գիշեր (6 Օդ.) 20ի չափ հայեր Կէտիկ-Փաշայի կողմէն կ'անցընեն Գում-Գափու տանելու համար եւ, որպէսզի ոտքի ձայները չլսուին, ձերբակալուածներուն կօշիկները կը հանեն:

Բերայի մէջ, Ֆէրիտիյէի կողմը, տուն մը կը խուզարկեն, բայց որեւէ բան չեն գտներ: Գում-Գափուի մէջ ալ կը խուզարկեն դէպքի պահուն Բարձրագոյն Գումը գտնուող հայ սեղանաւորի մը տունը. աւելորդ է ըսել թէ յոգնութիւններն վրայ կ'երթայ:



Նոյն օրը Կեդր. Կոմիտէին կողմէն վեց դեսպաններուն տրուեցաւ յայտարարութիւն մը, որ դիմում ընելով հանդերձ եւրոպական ազգերու մարդասիրական զգացումներուն, կը յիշեցնէր ցարդ տրուած խոստումներուն անգործադրելի մնալը եւ կը սպառնար անարկու ծրագրի մը իրագործումով, որուն միայն նախընտրանքն էին անցեալ տարուան դէպքերը:

Յայտարարութիւնը կը վերջանար հետեւեալ տողերով. «Մենք կը պահանջենք որ... տիրող բռնութեան եւ անսանձ կամայականութեան փոխարէն՝ օրէնքը թաղաւորէ:

«Մենք կը պահանջենք ինչ որ անհրաժեշտ է լոկ իրրեւ մարդ ապրելու համար եւ երբեք պիտի չդադրինք գործելէ, մինչեւ չիրականանան մեր այս արդար, իրաւացի եւ մեր նահատակ եղբայրներու արիւնով նուիրագործուած պահանջները»:

Պ — 28

ՊՈԼՍՈՅ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷԻ ՆՈՐ ՅԱՅՏԱՐԱՐԱԳԻՐԸ

Ինչպէս յայտնի կ'ըլլայ արդէմ վերոյիշեալ քաղաքացութեմ, այս յայտարարագիրը եւրոպական վեց պետութեանց դեսպաններուն յամենուս է տեսնուած գործազուրկներուն օրն իսկ՝ 6/18 Օգոստոս 1897ին: Ժամանակագրական տեսակետէ բոլորովին ճիշդ չէ ուրեմն — կամ ամենուրեք շատ անոթը է — «Իրաւ Հ. Յ. Գաղափարներ» Բ. հատորի 111րդ. էջին մէջ եղած այն հատուումը՝ թէ «Հ. Յ. Գ. Պոլսի Կեմտը. Կոմիտէն այս յայտարարութիւնը հրատարակեց բանկի գէպֆից յետոյ»:

Կու տամք Յան ֆրանսերէմ բնագիրը, որու պատճէնը ունիմք:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈԼՍՈՅ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻ

Երկար ու ձիգ տարիներու ընթացքին մէջ անխնայ կը հոսէր հայու արիւնը, կ'առեւանգուէր հայ կիներ, կը պղծուէր հայու սրբութիւնը, եւ հայը անկարող բողոքելու կը լռէր ու արիւն արցունք կուլ տալով կը տանէր այդ ամէնը...:

Վերջապէս կատարուող անգթութիւններու լուրը հասաւ եւրոպական դիւանագէտներու ականջը ու անոնց զբաղմունքի նիւթ դարձաւ. սակայն փոխանակ բարեւոքելու անոր անտանելի դրութիւնը ա'լ աւելի վատթարացաւ. անլուր խժոճութիւններու յաջորդեցին վերէն նախադժուած եւ ծրագրուած ընդհանուր ցարդ, կողոպուտ, տանջամբ ու բռնութիւն եւ այն ինչ որ կը կատարուէր դիշերային մթութեան մէջ, այժմ օր ցերեկով, արեւու լուսին, Եւրոպայի ներկայացուցիչներուն աչքին առջեւ...:

Արիւնաքամ, ուժասպառ, մենք դեռ չէինք կրօնընցուցած մեր յոյսն ու հաւատքը, մենք դեռ կը սպասէինք, կը յուսայինք. կը յուսայինք որ եթէ մարտիրոս հայ ժողովրդի լացն ու կոծը կը լսէ Եւրոպայի ժողովուրդը, անշուշտ անոր օգնութեան ձեռք կը կարկառէ, կարկառել կու տայ: «Կաթիլ կաթիլ ջուրը սպառածը կը ճաթեցնէ» կ'ըսեն, հայի արեան անվերհեղեղները չի՞ պիտի շարժեն Եւրոպայի գուրթը...:

Բայց պատրանք է եղեր այս ամէնը եւ գուցէ Եւրոպայի պղատոնական ուշադրութիւնն էր պատճառ, որ սպանդանոց դարձուց հայի երկիրը, հարիւր հազարաւոր անմեղ նահատակներու արիւնով ներկուեցանոր սարն ու ձորը, քարն ու խոտը, որբերու ու արիւնքածներու աղիտոյրմ մրմունջն ու հեծկլտանք մինչեւ երկինք բարձրացան...: Բայց եւ այս ամէնը չբաւեց Եւրոպայի քնացած խիղճը արթնցնել, անո՞ր գուրթը շարժել...:

Տեսաւ հայ ժողովուրդը իր առջեւ բացուած ահաբեկ անդունդը, որ կուլ կու տար իր հազարաւոր որդիները, եւ որ կը սպառնար ամբողջ հայութեան գերեզմանը դառնալ: Նա սթափեցաւ, համակ բողոք դարձաւ եւ իր բողոքի արտայայտութիւնը Օգոստոս 14ը կաւ:

Արդէ ետքը ամէն մարդ կը սպասէր որ ա'լ վերջ կը տրուի հայի տառապանքին, ա'լ բաւ կը համարուի անոր թափած արիւնը եւ վերջապէս գործադրութեան կը դրուի հայկական բարենորոգմանց տիրահամարաւ ու չարչրկուած ծրագիրը:

Անցաւ հալածանքներով ու տառապանքներով լեցուն ամբողջ մէկ տարի, սակայն դարձեալ յուսախաբութիւն: Չկատարուեցան մեզի տրուած խոստումները եւ նոյն իսկ մոռացութեան տալ ուղուեցաւ հայկական դատը: Իսկ մենք անկարող մոռնալու մեր եղբայրներու թափած արիւնը, անկարող տանելու ներկայ դժոխային դրութիւնը, ճարահատ, նորէն հրապարակ կու գանք եւ կը ձեռնարկենք գործադրելու ինչ որ նախազգացուցած էինք Օգոստոս 14ի դէպքէն վերջ: Ասոնք նախագծերն են այն ծրագրին, որ Մեծ-Մարդասպանի ծրագրէն աւելի ահարկու է եւ որ մեզ ալ սարսուռ կ'ազդէ...:

Ա'լ բաւ է, դժացէ՛ք, քրիստոնեայ եւ մարդասէ՛ր Եւրոպայի ժողովուրդներ. ինչո՞ւ կը թողուք փճանալու ազդ մը որ իր հնութեամբ, զարգացումով եւ բարոյականով անհամեմատ աւելի բարձր է զինքը չըջապատող եւ իրեն տիրող տարրերէն: Գթացէ՛ք անոնց որ սրախողիտող եւ թոպամահ կը կորսուին: Գթացէ՛ք այն անմեղներուն որ բանտերու ու քարտէրներու մէջ կը տառապին, դժացէ՛ք այն թշուառ որբերուն որ ձեր գաւակներուն պէս հօր ու մօր պէտք ունին, դժացէ՛ք այն կոյսերուն որ ձեր դուստրերուն պէս պատիւի պէտք ունին, դժացէ՛ք այս դրութեան, ստրկութեան լուծի տակ ապրող ժողովուրդին որ ազատութեան պէտք ունի եւ որ կը տառապի միմիայն քրիստոնեայ ըլլալուն համար:

Աւելորդ կը համարինք մէկիկ մէկիկ հոս յիշել նորէն մեր պահանջները, քանի որ անոնք ձեր ուշադրութեան քանիցս ներկայացուած են:

Մենք կը պահանջենք որ չանարդուի հայի պատիւը, չպղծուին անոր սրբութիւնները, չյափշտակուի անոր դառն քրտինքի արդար արդիւնքը ու տիրող բռնութեան ու անսանձ կամայականութեան փոխարէն՝ օրէնքը միայն թաղաւորէ:

Մենք կը պահանջենք ինչ որ անհրաժեշտ է լոկ իրրեւ մարդ ապրելու համար եւ երբեք պիտի դադրինք գործելէ, մինչեւ չիրականանան մեր այս արդար, իրաւացի եւ մեր նահատակ եղբայրներու արիւնով նուիրագործուած պահանջները:

Կ. ՊՈԼՍՈՅ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈԼՍՈՅ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻ

PROCLAMATION

FÉDÉRATION RÉVOLUTIONNAIRE ARMÉNIENNE

(COMITÉ CENTRAL DE CONSTANTINOPLE)

Pendant le cours de longues et pénibles années le sang de l'Arménien a été versé, la femme arménienne enlevée, tout ce qu'il y avait de sacré profané et l'Arménien réduit à l'impuissance d'en appeler(1), s'est résigné à garder le silence.

Le bruit des atrocités commises est enfin parvenu aux oreilles des hommes d'Etats de l'Europe, ils en ont fait le sujet de leurs débats, mais cet état intolérable au lieu de s'améliorer n'a fait qu'empirer. Une oppression systématique commandée par en haut n'a pas manqué de succéder! meurtre, rapt, torture, violence et enfin tout ce qui par le passé avait eu lieu dans l'obscurité se commet au grand jour sous les yeux même des consuls de cette Europe, qui dans le traité de Berlin garantissait la vie, la sécurité et la parfaite tranquillité en Arménie...

Saignés à blanc, épuisés, nous nous flattions que si le gémissement du peuple arménien martyrisé parvenait aux oreilles des Peuples de l'Europe, une main secourable nous serait tendue. L'eau qui tombe goutte à goutte perce le rocher, est-ce que les flots du sang arménien répandus à torrent ne pourront pas émouvoir l'Europe? Mais c'était une déception amère, et peut-être c'est l'attention purement platonique de l'Europe qui a excité au carnage nos cruels oppresseurs. La patrie de l'Arménien a été transformée en une immense boucherie, monts et vallées ont été teints du sang des martyrs et le cri navrant des veuves et des orphelins monta jusqu'aux cieux...

Mais tout cela même ne suffit pas à réveiller la conscience endormie de l'Europe et lui rappeler la miséricorde chrétienne.

C'est alors que le peuple arménien s'est rendu compte de l'abîme entrouvert sous ses pas qui engloutissait ses meilleurs enfants et qui menaçait de se refermer sur lui en un immense tombeau. Il eut un frisson de réveil et son réveil fut la manifestation du 14/26 Août 1896. Dès lors nous étions dans la juste attente de voir le terme de nos misères, nous espérions que tant de sang versé aurait suffi et qu'enfin serait mis en vigueur ce projet de réforme martyrisé et de triste mémoire dont on avait tant bercé les Arméniens.

Une année d'angoisse et d'anxiété, une longue année de persécution et de martyres, une année de nouvelles déceptions vient de s'écouler. Sont restées lettres mortes les promesses qui nous ont été prodiguées et l'on a même tenté de condamner à l'oubli la cause arménienne.

Quant à nous, il nous est impossible d'oublier le sang qu'ont répandu nos frères, il nous est impossible de supporter plus longtemps cet enfer. Réduits à cette extrémité, nous entrons dérechef en scène résolus à exécuter ce que nous vous avons fait entrevoir à la suite des événements du 14/26 Août 1896.

Ce sont les préliminaires du projet qui est autrement terrible que celui du Grand-Assassin, projet dont l'idée même nous remplit de terreur...

Qu'il suffise donc, ô peuples de l'Europe civilisée, humaine, chrétienne! Pourquoi, laisser anéantir un peuple qui par son antiquité, par son développement moral et intellectuel est incomparablement supérieur aux éléments qui l'entourent et le dominant. Ayez pitié de ceux qui meurent assomés et à la pointe de l'épée. Ayez pitié de ceux qui languissent au fond des cachots, ayez pitié des vierges qui à l'égal de vos filles ont droit de conserver leur honneur, ayez pitié des orphelins qui à l'égal des vôtres ont besoin de père et de mère, ayez pitié d'un peuple qui gémit entre les fers et au milieu de l'esclavage, pour qui la liberté est une condition et qui ne souffre que pour le doux nom du Christ.

Il est superflu d'énumérer ici nos justes réclamations, du moment qu'elles vous ont été exposées plus d'une fois.

L'honneur de l'Arménien ne doit pas être foulé aux pieds, tout ce qu'il a de sacré ne doit pas être frustré du fruit juste de ses labeurs pénibles. Tous ce que nous voulons, ce sont des garanties pour la vie, la fortune et l'honneur, tout ce que nous voulons, c'est que la loi règne au lieu de la tyrannie et de l'arbitraire absolue.

Nous ne demandons que ce qui est nécessaire pour

vivre en homme, nous ne cesserons jamais d'agir tant qu'il ne sera pas donné pleine satisfaction aux réclamations légitimes sanctifiées par le sang des martyrs nos frères.

COMITÉ CENTRAL DE CONSTANTINOPE

(1) Այստեղ եւս՝ փրանսերէն ամբողջ բնագիրը պահած կնք անփոփոխ, հակառակ լեզուական քերականութեան:

Պ — 29

ԶԱԻԷՆԻ (ՅԱԿՈՒ ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ) ՀԵՐՈՍԱԿԱՆ ՄԱՀԸ

«Երօշակ»ի 1 Հոկտեմբեր 1897ի համարով (№ 12), Հ. Յ. Գ. Պոլսոյ կեդրոն. կոմիտէն կը գտնէ հերոսական մահը իր անդամներէն՝ Զաւէնի (Յակոբ Գարակէօզեան)։

ՅԱԿՈՒ ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ (ԶԱԻԷՆ)

Անհուն կակիծով կու դանք յայտնել սիրելի ընկերոջ մը հերոսական մահը:

Օդոստոս 12/24ի առտուն, ժամը 9ին, մատնութեան մը շնորհիւ իր տան մէջ պաշարուելով՝ Զաւէն չուզեց անձնատուր ըլլալ, կրակ ըրաւ ոտականներուն վրայ եւ իր վերջին գնդակով՝ վերջ տուաւ իր մատաղ կեանքին:

Յեղափոխութիւնը Զաւէնի անձին մէջ շիտակ գործիչ մը կորսնցուց, բայց անոր հերոսական մահը նոր ապացոյց մըն ալ բերաւ յեղափոխական իդէալի անարլայլ վեհութեանը:

Կ. ՊՈԼՍԻ ԿԵՂԵՆԿԱՆ ԿՈՄԻՏԷ

Պ — 30

ԱՀԱՐԵԿՈՒՄ

«Երօշակ»ի 1902ի 10րդ. համարին մէջ (Սեպտ.), էջ, 160, կը կարդամք հետեւեալը։

ՄԱՀՈՒԱՆ ՊԱՏԻԺ

Հ. Յ. Դաշնակցութեան Արեւմտեան Բիւրոյի 1896 թուակիր եւ վերջերս Կ. Պոլսոյ Պատասխանատու Կեդր. Կոմիտէի վճար Համաձայն՝ Ապրիլի 10ին Բութում քաղաքում տեղորի ենթարկուեց Երզնկայի երկան գիւղացի, 28 տարեկան, սափրիչ Մելքոն Քէօսէեան, որը 1896 թ. ի վեր Դաշնակցութեան պատկանող 10 հրացաններ իւրացրել եւ անյայտացել էր: Ահարեկիչները ազատ են:

Պ — 31

ԱՀԱՐԵԿՈՒՄ

«Երօշակ»ի 1903ի 7րդ. համարին մէջ (Օգոստոս), էջ 112, կը կարդամք հետեւեալը։

ՄԱՀՈՒԱՆ ՊԱՏԻԺ

Պոլսոյ Կեդրոնական Կոմիտէի վճարով՝ Պուրկասի 23 սնտուկ գէնքի գործին մէջ գլխաւոր յանցաւոր ճանչցուած եւ դատապարտուած Կարապետ Մարտիրոսեանը տեղորի ենթարկուեցաւ՝ ուսմանական Գալաֆաթ քաղաքին մէջ: Տեղորիստը ազատ է:

Պ — 32

ՊՈԼՍՈՅ ԵՒ ԻԶՄԻՐԻ ՌՄԲԱՅԻՆ ԾՐԱԳԻՐՆԵՐԸ

1905ի իր Տրդ. համարի յաւելուածին, ինչպէս նաեւ յաջորդող համարներուն մէջ, «Երօշակ» յուրի ձեռով կու տայ Երլուզի մահափորձը հազարողոց հեռագիրներն ու թղթակցութիւնները, կ'անդրադառնայ դէպքին՝ «Ռուսը Երլուզի մահ» խորագրուած յոդուածով մը, սակայն լուս կ'անցնի մահափորձի իսկական կազմակերպիչներու անուան վրայէն: Տրդ. (Սեպտեմբերի) թիւով, ամ կու տայ նաեւ օտար թերթերէ փառուած մանրամասնութիւններ պիմիքացի ժողովի եւ Տիգրան Նալպանտեանի ձեռքակալուածով երկուս համուած՝ Իգմիթի սմբային դաւադրութեան մասին (տեսնել այս մասին՝ Մ. Վարանդեան, «Հ. Յ. Գ. Պատմութիւն», Ա. հոր., էջ 450):

Թէ՛ Պոլսոյ (մահափորձ Սուլթանի անձին դէմ) եւ թէ Իգմիթի (Երազական հաստատութիւնները ուժանակով պայթեցնելու ծրագիր) սմբային ծրագիրներն ու պատրաստութիւնները գործն էին Հ. Յ. Դաշնակցութեան Յրդ. Ընդհ. Ժողովին (Սափիա, 1904) Գրաստափորի գլխաւորութեամբ ընտրուած Տուգական Մարմին: Ծրագիրները, գէթ իրենց սկզբունքով, ընդունուած էին արդէն Յրդ. Ընդհ. Ժողովին կողմէ, եւ պարզ է ուրեմն՝ որ Արեւմտեան Բիւրոն («Երօշակ»ի խմբագրութիւնը) չէր կրնար տեղեկ չըլլալ թէ որո՞նք են դաւադրութեանց կազմակերպիչները: Այդ ուղղութեամբ «Երօշակ»ի պահած ամիսներու լուսութիւնը կը բացատրուի արեւմ. վիճաքի և Ռուսիանի ընկերներու ապահովութեան մտահոգութեամբ միայն:

Շատ բան գրուած է Երլուզի մահափորձին մասին, որ անյառգ եղաւ Մեծ Մարդասպանը՝ Համիտը սպաննելու տեսակետէն, բայց որու պատրաստութեան գոհ գնաց Դաշնակցութեան Մեծ Մարդակերտը՝ Գրիստափորը (Վաւաշապուհ Քէնտիքեանի հետ): Համեմատաբար քիչ ծանօթ ենք սակայն Ռուսիանի (Իգմիթ) ռումբային դաւադրութեան: «Երօշակ»ի 1905ի Տրդ. համարէն փառելով, կու տամք հետեւեալ մանրամասնութիւնները:

Ա.— ԵՐԼՍԸԶԻ ՄԱՀԱՓՈՐԶԻՆ ԱՌԹԻԻ

Մարտիկի Le Semaphore թերթի իրազեկ թղթակիրը է միջի այլոց հետեւեալն է գրուած Կ. Պոլսոյ.

Կաւկասները կարող են ընկնել երեք տարրերի վերայ, — թիւք բարենորոգիչների, Հայկական կոմիտէ-

ների եւ մակեդոնական ներքին կոմիտէի վրայ: Հայերը և բուլղարները փորձուած մարդիկ են ուսման գործածութեան մէջ. Հայերը ապացուցել են այդ 1896 թուին, երբ նրանք օր ցերեկով, դրաւեցին Բանկ Օսոմանը, որ նրանք օրը պիտի ցնդեցնէին, եթէ անսպասելի կերպով չնահատակուէր իրենց պարագլուխը: Ինչ վերաբերուած է երիտասարդ թիւրքերին, նրանք անընդունակ են թուում ըմբռնելու եւ գործադրելու մի փորձ՝ ուսման կամ դժոխային մեքենայի միջոցով:

Բ.— ԻԶՄԻՐԻ ՌՄԲԱՅԻՆ ԾՐԱԳԻՐՆ ՄԱՍԻՆ

Frankfurter Zeitungին գրում են Զմիւռնիայից, 16 Օգոստոսի.

Ուտիկանութիւնը բաց արաւ Հայկական մի դաւադրութիւն, որը եթէ յաջողէր իրագործուել, մի քանի հազար մարդկային զոհեր պիտի պատճառէր: Ամբողջ քաղաքը յուզման մէջ է: Գտնուած են 140 ուսման եւ դժոխային մեքենաներ, մեծ քանակութեամբ թոյն եւ մանրամասն նախապիծներ, որոնցից երեւում է, որ Սեպտեմբերի 1ին գարհուրելի ծրագիրը պիտի իրագործուէր: Գաղաքի շուրջ պիտի թունաւորուէր, գաղտնադրուէր պիտի պայթէր եւ ապա մթութեան մէջ բոլոր հիւպատոսարանները, բանկերը, եկեղեցիները, Հասարակական հիմնարկութիւնները օրը պիտի ցնդէին:

Կ. Պոլսոյ, կիրակի.

Չերքակալուած Հայերից մօտ 20 հոգի կը բերուեն բարձր քննիչ ատենի առջեւ: Այդ քննութիւնը պէտք է հաւաստիանայ՝ կա՞յ արդեօք ոեւէ կապ սուլթանի դէմ եղած սպանութեան փորձի եւ Զմիւռնիայի դաւադրութեան միջեւ: Հասարակութեան բոլոր դասակարգերը զբաղուած են Զմիւռնիայում արուած գիւտով: Կարծում են, որ ուսմանական ուսման են թաքցրուած ուրիշ քաղաքներում եւս, նոյնպէս Կ. Պոլսում: Երլուզի իշխանութիւնները այն աստիճան մտատանջ են այդ շուկաների եւ Զմիւռնիոյ դաւադրութեան պատճառով, որ չեն կարող զբաղուել պետական գործերով, որոնք երկար ժամանակից ի վեր առկախ են մնացել:

Reuter

Die Zeitին գրում են Կ. Պոլսոյց, 20 Օգոստոսի.

Զմիւռնիայում բացուած Հայկական դաւադրութիւնը յուզմունք է յարուցանում ոչ միայն Երլուզում, այլ և դիւանագիտական շրջաններում, որովհետեւ նա մի նշան է, որ Երլուզի սպանութեան փորձը մէկ մասն է միայն եղել լայն ճիւղաւորուած մի դաւադրութեան:

Սեպտեմբերի 1ի համար ընդարձակ եւ խիստ միջոցներ են ձեռք առնուում: Լուր կայ, թէ Երլուզը

պէտք է խոստանալ կողմնակի չուրջանակի մի պարտապարտելու և թէ սահմանակից թաղերը պիտի աւերուին:

Կ. Պոլիս, 20 Օգոստոսի.

Հայկական դաւադրութեան բացումը Զմիւռնիայում մեծ սարսափ է տարածել ամբողջ օսմանեան կայսրութեան վրայ: Դաւադրութեան հետքը գտել է մի յոյն վաճառական, Աղբէ Գրոսոպապա անունով:

Daily Mail

«Temps»-ին հետազոտում են.

Ոստիկանութիւնը, խուզարկելով, գտաւ Զմիւռնիայում 115 ուսմբ, 3 դժոխային մեքենայ, ուժանակի մեծ քանակութիւն և ուրիշ պայթուցիկ նիւթեր: Կարծում են, որ բաց են արել ընդարձակ մի դաւադրութիւն: Բռնուած նամակներից երևում է, որ Օգոստոսի 31ին, սուլթանի գահակալութեան տարեդարձին՝ կառավարական պալատը, հիւպատոսարանները և բանկերը օդը պիտի ցնդէին: Իմացել են, որ հայկական կոմիտէն վարձել է մի փոքրիկ խանութ, որտեղից ահանկարծ էր տարուել գէպի բանկը, ինչպէս որ մահապատճառք արել էին Սալոնիկում: Քննութիւնը դեռ շարունակուած է. 40 հոգի ձերբակալուած են: Անցադիրները բերան և կայսրանները ենթարկուած են խիստ հեղուկութեան: Հայկական թաղը գրաւուած է գործերով: Մեծ յուզումնք է տիրում քաղաքի մէջ: Երկիրը են կրում կոտորածներից:

Die Zeitին հետազոտում են.

Յրովհետեւ ժորիւր չէր ուզում ոչ մի ցուցմունք տալ Բեյրութի գնապանին — շնայած որ նրան խոստանում էին բոլորովին անպատիժ ու ազատ թողնել, — նրա այժմեան խոստովանութիւնը հետեւանք է երևում ասանկական ազդեցութիւնների:

Պ — 33

ԱՀԱԲԵԿՈՒՄ

«Իրօշակ»ի 1908ի 2րդ. համարի (Փետրուար) 31րդ. էջին վերայ կը կարգաճէ Յակոբ Զերչեանի ստորագրում լուրը:—

Տ Ե Ռ Ռ Ր

Ասանկէ մը ի վեր յայտնի լրտեսութեամբ պարապող և անընդհատ այս նպատակով Պուլիարիայէն Պուլիս ու Պուլէն Պուլիարիա երթնելից Յակոբ Զերչեան անուն բնիկ Ֆիլիպպի հայը, գործակալ՝ ոստիկանութեան պետ Վասըֆ փաշայի և յանցազոր՝ իր մատ-

նութիւններով ու լրտեսական տենդոտ գործունէութեամբ՝ մահուան դատապարտուեցաւ մեր որոշումով և վճիռը գործադրուեցաւ Տիլիպէի մէջ 1907 Հոկտեմբեր 4/17ին:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊՈԼՍՈՅ ՄԱՐՄԻՆ

Պ — 34

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊՈԼՍՈՅ ՊԱՏ. ՄԱՐՄԻՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ՝ ՕՍՄԱՆԵԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ

Յայտարարութիւնք, Օսմանեան Սահմանադրութեան հաշուումէն անմիջապէս ետք, ազարկուած է Բ. Դրան, գնապաններու և բոլոր յեղափոխական կազմակերպութիւններու՝ գամագամ լիզուներով: Կը քաղաքի «Իրօշակ»ի 1908 Յուլիսի 7րդ. համարէն:—

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Պոլսոյ Գործադիր Մարմինը յայտարարում է. —

Որ նա պահանջում է լուրջ երաշխաւորութիւն Սահմանադրութեան գործադրութեան,

Որ ինքը պաշտպանելու է իր բոլոր ուժերով Փարիզի 1907 թուի քոնկրէի որոշումները, որ կազմուած էր Հայ Յեղ. Դաշնակցութեան, Երիտասարդ-Քիւրք և այլ յեղափոխական կազմակերպութիւնների ներկայացուցիչներից:

Յեղափոխական շրջաններում՝ վտահուլիւն չկայ գէպի Ապաիւլ Համիտը, որի գահակալութիւնն է որոշուած Փարիզի քոնկրէում: Բոլոր մարտական կազմակերպութիւնների կռիւը կը վերսկսուի իր ամբողջ թափով, եթէ համիտեան կառավարութիւնը չուզենայ զոհացում տալ Օսմանեան կայսրութեան բոլոր ժողովուրդների ձգտումներին և մանաւանդ եթէ նա փորձէ կրկնել 1876 թուի խարեբայութիւնը:

Պ — 35

Հ. Յ. Դ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏ. ՄԱՐՄԻՆԻ 30 ՅՈՒԼԻՍ 1908Ի ԵՐԶԱԲԵՐԱՎԱՆԸ

Անուած է սպազրեալ բնագրէ: Մեծ քնքր. մէկ երես:

ԵՐԶԱԲԵՐԱՎԱՆ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Ընկերները.

Ազատագրական շարժման առաջին յաղթանակէլ, արդիւնք տարիների շարքաւ յախտանքի, անբաւ զոհերի և յեղափոխական արիւնոտ կռիւների, տարուած է. — Օսմանեան կայսրութեան մի ծայրից միւսը հը-

լում է Ազատութեան, Հաւասարութեան, Եղբայրութեան կողմ: Երէկեան Հանրաբանտը վերածուած է ազատաշունչ երկրի: Մոայլ, երկչոտ դէմքերի տեղ երևում են բերկրալից աչքեր. լուութեան փոխարէն թագաւորում է շարժում. ատելութեան ու քէնի աւերակների վրայ փչում է սիրոյ շունչը: Եւ ժողովրդական ամենադժբախտ խաւերն անգամ, սովոր սարկի համակերպութեան, անտեղեակ ազատութեան վայելքին, շարժում, ծփում են ինչպէս փոթորկուած ալիքներ, նախանշանը քաղաքական աւելի երջանիկ օրերի:

Հանրային կեանքը կերպարանափոխուած է, — փողոցներում այլեւս չկայ երէկեան բռնապետութեան սուկարեր գործակալը, — Գաղտնի Լրտեսութիւնը: Բանտերը դատարկուած են: Ազատութեան մարտիկները, ենթակայ քաղաքական բանտարկութեան դժոխային ուժիմի, ազատ օդումն են, դրկախառնուած ժողովրդի հետ, որին նրանք ա՛յնքան անձուիրաբար ծառայեցին:

«Ինչ՞պի ի բան» գոչողները իրանք են գնում բանտերը: Արտասուք տարածողները իրանք են ողբում: Երազարդ փաշաներն ու մինիստրները, երէկեան ամենակարող տէրերը արջունիքի, կառավարութեան և երկրի, սողում են Յեղափոխութեան ոտքերի տակ, փախուտ տալիս ժողովրդական ցասման ճանկերից: Դերերը փոխուած են, և սկսուած է մի աւերմունք այն բոլորի, ինչ Յուլիսի 10ին, շնորհիւ բռնապետական ուժիմի, նկատուած էր անսասան, անփոփոխ, յաւիտենական իսկ:

Սակայն լայնատարած բերկրանքի ընթացքում, — ցաւ է սասել, և չենք թաքցնում, — հին ուժիմի յիշատակներից սարսափած ժողովուրդների տարբեր խաւերից դուրս են թռչում տարակուսանքի և երկիւղի տխուր բացականչութիւններ՝ «Երկար պիտի տեւէ՞ արդեօք» — անարդալից խօսքեր նորարողող Ազատութեան համար, թոյն՝ յեղափոխական անդրանիկ յաղթութեան, խօսքեր, որոնք ոչակախուն տարբեր ուժեր կարող են կազմել, հիմքը նրանց քաղաքական նենդ ծրագիրների:

Յեղափոխական ընկերները, Դուք, որ ազատագրման գործի ու աշխատանքի ամբողջ գիտակցութիւնն ունէք, պարտաւոր էք, առանց ժամ կորցնելու, ըմբոստանալ այդ տատանման ու թերահաւատութեան դէմ ձեր ամբողջ ոյժով, ձեր ձեռքերի տակ եղած բոլոր միջոցներով: — Մի երկիր, — սասցէք ամէն տեղ ու ամէնքին, — ուր այսքան զոհեր տուեց ազատագրութեան Հայ ժողովուրդը իր քանակայ կռուով ու զոհերով, Մակեդոնիան՝ իր լաւակազմ պայքարով, Արարիան՝ իր հուժկու ապստամբութեամբ, և Երիտասարդ-Քիւրքիան՝ իր լաւազոյն անդամների ողբերգական կորստեամբ, ուր ամբողջ պատմութիւնն ու կեանքը վերածուած էին համատարած տանջանքի, լացի ու անէծքի, — չէ կարող, իրա-

ւունք չունի ենթարկուել թերահաւատութեան և տատանման, և կանդնած պիտի մնայ, մանաւանդ յաղթութեան այս յուսատու օրերին, իր ոյժի և կռուի հպարտ գիտակցութեան վրայ, տէրը՝ իր ապադայի, տնօրինողը՝ իր բախտի:

Ազատութիւնը արեամբ գնեցինք: Արեամբ էլ կը պաշտպանենք, եթէ տխուր հարկը ներկայանայ: Նա մերն է: Ոչ ոք նրան յետ խլել չէ կարող, որովհետեւ ոչ ոք իր կամքով չէ շնորհել: — Սա պիտի լինի հաւնգամակը ամբողջ ազգարնակութեան, խորբամատ համոզումը այն բոլոր ազգերի, որոնց այսօրուան անսահման ցնծութիւնը՝ երէկեան անսահման տանջանքի արձագանդն է միայն:

Սրտապնդուած առաջին յաղթանակի այս խրախուսիչ փաստով, ոգեւորուած բռնալուծը թօթափող բոլոր ազգերի համերաշխութեան մեծ գաղափարով, յափշտակուած տարբեր ցեղերի ու կրօնների, բայց նոյն ցաւերին ենթակայ 24 միլիոն ազգարնակութեան վաղուան երջանկութեան հսկայ հեռանկարով, լի յարպանքով դէպի նահատակ զոհերը, որոնք իրանց ծանօթ ու անծանօթ դամբարաններից խրախուսանքի դասեր են տալիս, — մնանք ամուր մեր յաղթափայլի վրայ, մընանք անսասան, աներկբայ, լի անճկուն կամքով, հրպարտ այն գիտակցութեամբ, որ Ազատութեան դրօշակը տնկուած է Երկրի ծոցի մէջ մեր աշխատանքով, և նրան խլել, պոկել, վայր գլորել, չէ կարող քաղաքական ոչ մի մանէօվր, ոչ մի քմահաճոյք, ոչ մի խարդախ ոյժ:

Սա պիտի լինի, Ընկերներ՝, ձեր քարոզի, պրոպագանդի, ձեր ներշնչումների այսօրուան հիմնաքարը, ձեր ոգեւորութեան ու ազդեցութեան գլխաւոր նպատակակէտը:

Պայքարով, հաւատով ու համերաշխութեամբ ազատամարտի վտանգաւոր պտոյտներն անցանք: Արեան հովիտները մեր յետին են: Մեր առջեւը, մերձաւոր հորիզոնի վրայ, Ազատութեան արշալոյսն է փայլատակում: Արիւնոտ կռուի բոպէներին՝ վհատութիւն չճանաչեցինք, նրան չպիտի ճանաչենք, և չենք ճանաչի այս գրաւիչ օրերին, երբ երէկեան հակայեղափոխականներն անգամ, մեծից մինչեւ փոքրը, իրանց կրծքին Յեղափոխութեան որբանկարն են կրում, գունաւոր ժապաւէնը՝ Ազատութեան, Հաւասարութեան և Եղբայրութեան, մի նոր ու անսպառ աղբիւր գաղափարական պայքարի:

Կեցե՛ք Յեղափոխութիւնը, Կեցե՛ք Ազգերի ՀԱՄԵՐԱՇՅՈՒԹԻՒՆԸ:

Կեցե՛ք՝ ԱՀԱՍԱԳՐՈՒԱԾ ԹԻՒՐԳԻԱՅԻ ԲՈԼՈՐ ԺՈՂՈՎՈՒՐՆԵՐԸ:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈԼՍԻ ՊԱՏԱՄԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ

Կ. Պոլիս, 30 Յուլիս 1908

Պ — 36

Հ. Յ. Դ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Համաձայն «Իրօշակ» 1908 Օգոստոսի համարի (թիւ 8), այս յայտարարութիւնը հրատարակ համար է 2 Օգոստոս 1908ին: Տպագրեալ բնագրի մաս, գոր ունիմք, կը կտրագրեմք «3 Օգոստոս 1900»: Տպագրեալ սխալը պիտի լինի: Եւ ինչպէ՛ս կու գայ փաստել որ Օսմանեան Սահմանադրութիւնը հռչակուելէն ետք միայն կրնայ գրուած ըլլալ ան: Կու տանք ստորեւ, ըստ տպագրեալ բնագրի.—

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայրենակիցներ,

Տասնեակ տարիներ տանջակից ձեզի ու բախտակից ձեզ արիւնտ ճակատադրին, մենք չզուսանցեցինք ձեզ ու չմոռցանք ձեր տառապանքը: Բողոքը մեր ատմանքուն տակ ու ազատութեան բողոք մեր կուրծքին՝ նետուեցանք ամենէն անգութ պայքարին մէջ եւ յարձակումը կրկնեցինք անդուլ, անդադար՝ Բռնակալութեան պարիսպներուն եւ անոնց անողոք բերդապահներուն դէմ:

Ինկան մեզմէ սխալի անթիւ դիւցազներ ու անհամար կտրիճներ, — բայց մենք չյուսահատեցանք:

Մեզի դէմ զինուեցան խաւարի ու մահուան բոլոր զօրութիւնները, եւ, անօթութիւն ու բանտ, կախաղան ու գերեզման, նոյն իսկ հարազատ եղբոր արհամարհանքն ու թերահաւատ լքումը չըջապատեցին ձեզ ամէն կողմէ. — եւ սակայն շարունակեցինք մենք կռիւը:

Ազատութեան Գաղափարը մնաց անսասան եւ Յաղթութեան հաւատը՝ անխոցելի մեր շարքերուն մէջ:

Եւ մեր Գաղափարը յաղթանակեց ու մեր Հաւատը կը ծաղկի աճաւ:

Դեռ երէկ բազմաթիւ էին անոնք որ կը քարկոծէին մեր յոյսն ու մեր զոհողութիւնը: Դեռ երէկ հազարաւորներ էին մեր հակառակորդները՝ որ կը տարակուսէին մեր զործունէութեան ու մեր անձնազոհութեան վրայ:

Եւ երբ Հ. Յ. Դաշնակցութիւնը՝ հաւատարիմ Համերաշխութեան եւ Ազգերու եղբայրութեան իր հիմնական սկզբունքներուն, արհամարհելով այնքան արդելք ու բազմադիմի դժուարութիւններ, վերջապէս կը յաջողէր ներկայ տարուան սկիզբները հայ եւ թուրք ընդդիմադիր տարրերու Քոնկրէն դումարել Փարիզի մէջ, ի՛նչ հալածանք, ի՛նչ նախատինք եւ կրքերու ի՛նչ փոթորիկ իր դէմ անարժան հակառակորդներու կողմէ:

Եւ ահա Այսօր կու դայ վկայել թէ Հ. Յ. Դաշնակցութիւնը՝ միակը հայ կազմակերպութեանց մէջ, ստեղծելով

Թուրքիոյ բոլոր հարստահարուող ու իրաւագուրկ տարրերուն ներկայ զինակցութիւնը՝ ո՛չ միայն նպաստեց պատմական այս փառաւոր դարապիտուն բացման, այլ եւ հիմը դրաւ մեծ ու ստեղծագործութեամբ յղի ապագայի մը:

Թող ուրեմն անհետանան ինքնակալութեան բոլոր վատանուն մնացորդները ժողովուրդներու դիտակցական դարձումին եւ եղբայրական դաշնակցութեան առջեւ:

Թող ուրեմն Արդարութեան, Ազատութեան եւ Իրաւահաւասարութեան զաղափարը դրաւ՝ աւելի ու աւելի Թուրքիոյ բոլոր ազգերը:

Թող ուրեմն մեր արիւնն ու արցունքը խեղդէ՛ Բռնակալները եւ լայնատարած Երկրին բոլոր անկիւններն ու միլիոնաւոր շրթունքներէն բարձրացող ցնծութեան, ազատութեան եւ սիրոյ ազազակները դատապարտութիւնը, գերեզմանն ըլլան սեւ Անցեալին:

Եւ թող Հ. Յ. Դաշնակցութեան՝ Ազատութիւն, Արդարութիւն եւ Ազգերու Համերաշխութիւն նշանաբանը, նշանաբանն ըլլայ նաեւ Երկրին բոլոր ազատասէր զաւակներուն, արիւնաքամ բոլոր՝ աշխատաւոր ժողովուրդներուն:

Կեցցէ՛ Յեղափոխական Գաղափարը, Կեցցէ՛ն ազատ ժողովուրդները եւ ազատ Հայրենիքը: Կեցցէ՛ Հայ Յեղ. Դաշնակցութիւնը:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄՆԻ

Կ. Պոլիս, 3 Օգոստոս 1900(1)

(1) Տե՛ս վերի բացատրագիրը:

Պ — 37

Հ. Յ. Դ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏ. ՄԱՐՄՆԻ ԵՐԶԱԲԵՐԱԿԱՆՆԵՐ

1908 Օգոստոսին՝ Պոլսոյ Պատասխանատու Կեդր. կոմիտէի հրատարակ համար է հետեւեալ երկու շքաբերակները եւ: Առաջինը ներքին-կազմակերպական բնոյթ ունի, եւ կը կրէ, Յալոսթիմ նման, 3 Օգոստոս 1908 թուակամը: Երկրորդ շքաբերակամը կը վերաբերի Դաշնակցութեան ամբիջակամ պահանջներուն՝ սահմանադրական Թուրքիոյ կառավարութեան: Թուակամ չի կրի, բայց ամենայն հաւանականութեամբ հրատարակ ելած է 1908 Օգոստոսին:

Ա.— Դաշնակցութեան Կ. Պոլսոյ Պատասխանատու Մարմինը, նկատի ունենալով սահմանադրական կարգերու ներմուծմամբ ստեղծուած նոր պայմանները, կը յայտարարէ հետեւեալը.

Ա) Այն բոլոր ընկերները, որոնք կը պատկանէին Կազմակերպութեան, բայց բանտարկուած կամ աքսոր

ուած էին, այժմ ազատ ըլլալով, պէտք է շտապեն անմիջապէս մտնել պատկանեալ խմբերու կամ կոմիտէներու մէջ:

Բ) Բոլոր խմբերն ու կոմիտէները պէտք է վերակազմուին՝ համաձայն Դաշնակցութեան «Կանոնադրի» (որոնց օրինակները կրնան խնդրուիլ Արեւմտեան Բիւրոյէն կամ Կեդրոնական կոմիտէներէն):

Գ) Կուսակցութեան մարմինները հրամայական պարտք ունին, առանց յապաղելու, ձեռնարկել մարտական ու քաղաքական խմբերու կազմութեան, իրադրեալու համար այն ձեռնարկները, որոնք կրնան ծրարագրուիլ Պատասխանատու Մարմիններու կամ Կեդրոնական կոմիտէներու կողմէ:

Դ) Զեղծումներու ու թիրիմացութիւններու տեղիք չտալու համար, բոլոր մարմինները պարտաւոր են ղեկավարուել «Կանոնադրով», թէ իրենց ներքին յարաբերութիւններու, թէ սեւէ ձեռնարկներու մէջ, եւ թէ զրամական հարցերու վերաբերմամբ:

Առիթէն կ'օղտուինք յիշեցնելու բոլոր ընկերներուն, որ համաձայն Ընդհանուր Ժողովի շեշտուած ցանկութեան, Կազմակերպութեան շարքերու մէջ չպիտի ընդունուին այնպիսիները՝ որոնք իրենց անձով կամ քայլերով կրնան արատ բերել Դաշնակցութեան սնունդն եւ հմայքին: Ընդհակառակը, անչիտակ եւ Կազմակերպութեան անունը շահագործելու միտումներ ունեցող անձինք, ո՛վքեր եւ ըլլան, պիտի հեռացուին կազմակերպութեան շարքերէն:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ Կ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄՆԻ

Կ. Պոլիս, 3 Օգոստոս 1908

Բ.— Հ. Յ. Դաշնակցութեան Պատասխանատու կոմիտէն Տաճկաստանի հայ ժողովրդին բացառիկ վիճակը ի նկատի ունենալով, շքաբերական յայտարարութիւնով մը կը պահանջէ սահմանադրական կառավարութեան հետեւեալ միջոցներու իրագործումը.

- 1) Ազատ երթեւեկում հայկական նահանգներու մէջ:
 - 2) Վերադարձումը հայ գիւղացիներու հողերուն, որոնք վերջին ժամանակներս գրաւուած էին:
 - 3) Քննուած 1895-1908 տարիներու ընթացքին մէջ հայ ժողովրդի դէմ ստեղծուած հալածողական միջոցներուն:
 - 4) Ազատ արձակումը քաղաքական հայ բանտարկեալներուն եւ վերադարձ քաղաքական բոլոր աքսորեալներուն:
 - 5) Վերադարձ հայ զաղթականներուն, որոնք թիւր կ'անցնի 90 հազարը:
- Ասոնցմէ զատ Դաշնակցութիւնը, որ Թուրքիոյ մէջ կը գործէ 18 տարիներէ ի վեր, որոշած է միւս ազգու-

թիւններու պատկանող կուսակցութիւններուն հետ համերաշխարար ի գործ դնել բոլոր իր ուժը, ձեռք բերելու համար կատարեալ ազատութիւն ընտրութիւններու առեւն եւ սահմանադրութեան վերաքննութիւն վարչական ապակեզրոնացման ուղղութիւնով:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ Կ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄՆԻ

Պ — 38

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄՆԻ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄԸ

Առնուած «Իրօշակ» 1908 Օգոստոսի համարէն.—

Ցաւելով կ'ըսենք, որ մեր կոմիտէներու հասած տեղեկութիւնները տպեղ եւ ստորին երեւոյթի մը գոյութիւնը կը հաստատեն, որուն պէ՛տ յաճախ բողոքած են Յեղափոխական կազմակերպութիւնները: Անբարեխիղճ, շահասէր եւ առիթէն օգտուելու ընդունակ անձեր՝ մայրաքաղաքիս եւ գուցէ զաւառներու մէջ ալ, սկսած են իրենք գիրենք Դաշնակցական ներկայացնել, այս կամ այն կոմիտէի պատկանող եւ սոյն անունին տակ կը համարձակին դիմումներ ընել, դրամ պահանջել եւ նոյն իսկ սպառնալիքներ ընել քաղաքացիներուն: Կազմակերպութիւնը վճռած է իր սաղմին մէջ իսկ խեղդել սոյնօրինակ զեղծումները, թոյլ չտալ որեւէ խաբէութեան արարք, եւ իր կանոնադրին վրայ յենած՝ կը յայտարարէ.

- 1) Դաշնակցութեան անունով խաբերայութիւն ընողները պատասխանատուութեան պիտի կանչուին:
- 2) Դաշնակցութեան անունով դրամաշորթութիւն ընողները, ո՛վ որ ալ ըլլան, խստօրէն պիտի հալածուին:
- 3) Դաշնակցութեան անունով սպառնալիքներ ընողները իր գեղծարար անխնայ կերպով պիտի պատժուին:

Այս առիթով ի դիտութիւն ամբողջ հայ ժողովուրդին կը ծանուցանենք, որ այս տեսակ դէպքերու ժամանակ իրենց դանդաղները անմիջապէս մեր կոմիտէներուն հաղորդեն:

Կը սիրենք յուսալ, որ այս նախազդուչացումը պիտի կրնայ այդ խաբերաները սանձել. հակառակ պարագային ստիպուած պիտի ըլլանք ամենախիստ միջոցներու կիրառմանը դիմել, պահպանելու համար Յեղափոխութեան անունը միշտ մաքուր, անբիծ եւ վստահելի:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ Կ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄՆԻ

Կ. Պոլիս, 8/21 Օգոստոս 1908

Պ — 39

ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՅԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԹՈՒՐԳՈՒՅ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԷՆ

«Իրօջակ»-ը, իր Սեպտ. — Հոկտեմբեր 1908ի միացեալ թիւով (9-10), կու տայ «Հ. Յ. Դ. Ներկայացուցիչներու կործանողական առաջնական պետութեան մերկայացուած հետեւեալ պաշտօնական պահանջները (1 Սեպտեմբեր 1908 թուականով)։—

ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Առանց չեղելու մեր «Մրազդի» հիմնական սկզբունքներէն, որոնց համաձայն՝ հասարակութեանց մէջ տիրող ներկայ չարիքները վերջնականապէս կ'ոչնչանան ընկերվարական կարգերու հաստատումով, երբ անտեսական կեանքի հիմը կը կազմէ աշխատանքը եւ արդիւնաբերութեան բարիքները կը յատկացուին միմիայն անոր ստեղծագործման մէջ մասնակցողներուն։

Հիմք ընդունելով՝ որ մարդկային անհատի, ինչպէս ազգային ու կրօնական միութիւններու ազատութիւնն ու հաւասարութիւնը անկապտելի իրաւունք է եւ պէտք է ապահովուի, առանց այդ ազդուութիւններու եւ համայնքներու թուին նայելու։

Համոզուած՝ որ ամէն մէկ պետութեան եւ մանաւանդ Օսմանեան կայսրութեան նման բազմալեզու երկրի մը քաղաքական լաւագոյն կազմը Ֆէտէրատիվ-ապակեղրոնական ձեւն է, երբ աշխարհագրական-տեղանկան ազգաբնակչական ուրոյն դիմագիծ ունեցող բոլոր շրջանները պիտի վայելեն ներքին վարչական-օրէնսդրական ինքնավարութիւն, որը առաւել եւս ներդաշնակօրէն կ'ուժեղացնէ ու կ'ամրապնդէ պետական ամբողջ կազմը։

Գիտակցելով նոյնպէս, որ այդ նպատակներուն կարելի է հասնիլ աստիճանաբար, արմատական ուսումնական բարեփոխութիւններու միջոցով, եւ համերաշխ գործակցութեամբ հարեւան ազգերու եւ միւս կուսակցութիւններու հետ, այլեւ ցանկալով ապահովել նոր ռեֆորմը՝ անբաղձալի ցնցումներէ,

Հ. Յ. Դաշնակցութիւնը ներկայիս եւ Օսմանեան պարլամենտի առաջին նստաշրջաններուն համար կ'առաջարկէ ստորեւ առաջադրուած՝ անհրաժեշտ եւ ներկայ իրականութենէն թելադրուած պահանջները։

Կը յուսանք, որ այս «Պահանջներ» կարող պիտի ըլլան ծառայել իբրեւ համերաշխ գործակցութեան հիմք բոլոր քաղաքական կուսակցութիւններու համար — Թիւրք, յոյն, հայ, մակեդոն, արաբ, այրանացի, քիւրդ եւլն. — որոնք կը ձգտին, ինչպէս մենք, ամբողջով Սահմանադրական նոր ռեֆորմը եւ առաջնորդել ընդհանուր հայրենիքը դէպի Ազատութիւն, ազգերու հաւասարութիւն եւ հանուր Եղբայրութիւն։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԵՏԵՐ

1) Օսմանեան կայսրութիւնը, քանի կ'ունենայ Սահմանադրական ուսմակալար ռեֆորմ, պիտի ճանաչուի անկախ ու ամբողջական։

2) Թիւրքաց Հայաստանը կը կազմէ կայսրութեան անբաժան մասը եւ կը վարէ իր տեղական գործերը, հիմնուած ապակեղրոնացման սխալէ մի վրայ, որմէ հաւասար կերպով պիտի օգտուին երկրի մէջ ապրող բոլոր ազգերը։

3) Օսմանեան կեղրոնական կառավարութիւնը, հիմնուած ժողովրդական ներկայացուցչութեան սխալէ մի վրայ, կը վարէ պետութեան ընդհանուր գործերը, — արտաքին քաղաքականութիւն, զօրք, դրամ, մաքս, երկաթուղի, պոստ-հեռագիր եւլն., տեղական միւս ֆոնկսիոնները թողնելով շրջաններուն։

4) Պարլամենտական, դատաստանական եւ տեղային վարչական բոլոր մարմինները պիտի ընտրուին ընդհանուր, հաւասար, զաղտնի եւ համեմատական ձայնատուութեան սկզբունքով։ Այս սկզբունքը կը գործադրուի բոլոր ազգերու եւ կրօններու համար հաւասարապէս։

ՎԻՍՏԵՄԵՐՈՒ ԻՐԱՒՈՒՆՔԸ

5) Վիլայէթները կը վայելեն՝ տեղական գործերը վարելու մէջ լայն ինքնավարութիւն։ Նոյնը համայնքները՝ համայնական գործերու մէջ։

Վիլայէթներուն, կազաններուն, համայնքներուն եւ քաղաքային վարչութիւններուն կը վերապահուին՝ ա) Ճանապարհները, բ) Ժողովրդական առողջապահութիւնը, գ) Կրթական գործը, դ) Զբոսաշխութիւնը, ե) Տեղական ոստիկանութիւնը, զ) Տեխնիկական, գիւղատնտեսական եւ այլ գիտելիքների տարածումը եւլն.։

Վիլայէթներու եկամուտին մէկ որոշ մասը (20—25%) կը ծախսուի տեղական պէտքերու համար, իրաւասու մարմիններու միջոցով։

6) Բացի վայրներէ, միւթասարքներէ, խթի-նաֆի միւստայի-ուսումիներէ եւ բէյիսներէ, տեղական մնացած բոլոր պաշտօնեաները կ'ընտրուին համապատասխան խորհուրդներու կողմէն։

7) Վիլայէթներու սահմանները որոշելու ատեն, հակառակ հին ռեֆորմի գործ դրած սկզբունքին, պէտք է նկատի առնել ազգաբնակչութեան տեղաբնակչական ու մշակութային առանձնատկութիւնները, ըստ կարելոյն միաձոյլ համախմբումներ կազմելու համար։

ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒ ՀԱՒԱՍԱՐՈՒԹԻՒՆ

8) Կատարեալ հաւասարութիւն բոլոր ազգերու եւ կրօնական համայնքներու։ Ոչնչացումն դասակարգային կերպարանք ունեցող բոլոր առանձնաշնորհումներու։

Այլեւայլ ազդութիւններու ներկայացուցիչներու մասնակցութիւնը պետական պաշտօններէ մէջ, կեղրոնական թէ տեղական, պիտի գործադրուի համեմատական չափով։ Նոյնը կառավարութեան հովանոյն տակ գտնուող հիմնարկութիւններուն մէջ։

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԳՆՆՈՒԹԻՒՆ

- 9) Ա) Սահմանադրութեան վերաքննութիւնը ապակեղրոնացման մտքով։
- Բ) Միջխտրութեան պատասխանատուութիւն օրէնսդիր ժողովի առջեւ։
- Գ) Գահակալը կ'երդուի, զօրքի հետ միասին, հաւատարմութիւն եւ անխախտ պահպանումն Սահմանադրութեան։
- Դ) Վերացումն վերին ժողովի (Այանի)։

ԾԱՆՕԹ.— ա) Միճչու այդ՝ Այանի անդամները պիտի ընտրուին շրջանային խորհուրդներու կողմէ։

բ) Առաջին նստաշրջանի համար՝ Այանի անդամները ցանկի պատրաստութիւնը կը յանձնուի պարլամենտին։

ե) Փոփոխումն այժմեան ընտրողական սխալէ-մի՝ մտցնելով ընդհանուր ձայնատուութիւն։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

10) Անխախտ պահպանումն խօսքի, մամուլի, խղճի, ժողովներու, գործադուլներու ազատութեան։ — Անձեռնմխելիութիւն անձի, բնակարանի, նամակագրութեան։ Ազատութիւն տեղափոխութեան։ Վերացումն ներքին անցազրերու։

ԳՊՐՈՑՆԵՐ ԵՒ ԼԵՁՈՒ

11) Ընդհանուր, պարտադիր եւ ձրի սկզբնական ուսում։

Կրթական-մշակութային գործի կատարեալ ազատութիւն։

Բոլոր տեսակի դպրոցներու իրաւասութեան հաւասարութիւն։

Դասատուութիւն մայրենի լեզուով աղլային դպրոցներու մէջ։

Պետական լեզուի ուսուցումն շորթորդ տարուանէ։

Թիւրքական դպրոցներու մէջ տեղական լեզուներու դասատուութիւնը պարտաւորական է, նոյն տարուանէ։

12) Մշակութային — դպրոցական նպատակներու յատկացումը բիւտճէն բաժանել առանձին ազգութիւններու միջեւ, համաձայն ազգաբնակչութեան թուի։ Գործադրութիւնը պիտի թողուի յատկապէս այդ նպատակի համար ընտրուած մարմիններուն։

13) Պետական լեզուն պարտաւորական է բոլոր պաշտօնեաներու համար պարտաւորական է, բացի պետական լեզուէ, իմանալ նաեւ տեղական ազգաբնակչութեան լեզուն։

ԾԱՆՕԹ.— Պետական լեզուի հետ միասին տեղական լեզուի գործածութիւնը դատարաններու, վարչական եւ քաղաքական մէջ։ Պաշտօնական յայտարարութիւններու եւ ազգերու համար եւ տեղական լեզուները պարտաւորացուցիչ են։

ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

14) Դատարաններու հիմնական վերակազմութիւն։ Ձրի դատավարութիւն։

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ

15) Հաւասարութիւն զինուորագրութեան՝ Պետութեան բոլոր ազդուութիւններու համար, առանց կրօնի խտրութեան։ Զինուորական ծառայութեան տեւողութիւնը, ներկայ պայմաններու մէջ, իջեցնել երկու տարուան։

ԾԱՆՕԹ.— Տեղական զօրայինները պիտի ծառայեն, խաղաղ ժամանակ, իրենց մերձաւոր վայրերում մէջ։ Աւելացումն զինուորներու ամսաթաղակի։ Ամփոփական վերացումն Համիդիէ գրեմիներու։

ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐ

16) Պետական պաշտօնեաների թուի նուազեցումն։ Պակասեցումն բարձր պաշտօնեաներու ամսաթոշակներու եւ օրէնսդրական սահմանափակումն maximumի։ Մանր պաշտօնեաներու ամսաթոշակի յաւելումն։

ԾԱՆՕԹ.— Բոլոր պաշտօնեաներու պատասխանատուութիւնը ընդհանուր դատարանի առջեւ։

ՀՈՂԱՑԻՆ ՀԱՐՑ

17) Ապահովել, պետութեան հաշուով, հողի որոշ տարածութիւն ամէն մի գիւղացուն։ Պետական եւ արքունական հողերը դարձնել համայնքներու սեփականութիւն։

18) Հողերէն օգտուելու իրաւունքը կը պատկանի աշխատաւորներուն, աշխատաւորական սկզբունքներով։ Իւրաքանչիւր աշխատաւոր իրաւունք ունի այնչափով հող մշակելու, որ կարողանայ, առանց ուրիշի աշխատանքը չահադործելու, բաւարարութիւն տալ իր եւ իր ընտանիքի սպառողական պահանջներուն։

19) Համայնքէ ընտրուած մարմիններու կարգադրութեանը կը յանձնուին համայնական ընդհանուր նըշանակութիւն ունեցող գետիներն (անտառներ, արօտներ) ու ջրերը (չարժոյժ, ձկնորսութիւն) եւ ատոնցմէ ստացուող եկամուտները կը գործադրուին համայնքի մշակութային ձեռնարկներու համար։

20) Հանքերը, ինչպէս եւ արտաքոյ կարգի արժէք ունեցող բնական այլ հարստութիւնները կը համարուին պետական սեփականութիւն, եւ անոնց եկամուտներու որոշ մասը կը գործադրուի տեղական համաժողովրդական-մշակութային նպատակներու համար:

ՏՈՒՐԻՐԵՐ

21) Հարկային սխառտի հիմնական փոփոխութիւն:

ՄԱՆՕԹ.— Ներկայ պայմաններու մէջ, ամփոփապէս պակասեցնել աշարք, սահմանափակելով բերքի 1/15ով, ազմամբ 1/3ով: Յետամաց տուրքերը չպիտի գանձուին: Վերացումն ճանապարհային, շինարար, գաղթականային եւ այլ մանր տուրքերու: Վերացումն դատաստանական փուլերու եւլն:

Ամփոփական վերացումն օլամի, բեգարի եւ այլ չվարձատրուող աշխատանքներու:

22) Ատտիճանական տուրք եկամուտի եւ ժառանգութեան: Հարկէ բողոքովին ազատել որոշ չափէ պակաս եկամուտ ունեցողները:

ԿՐԻՒԻՏ

23) Պետական ամենամատչելի կրեդիտ:

24) Պետական ապահովագրութիւն երաշտի, կարկուտի, մորեխի, հեղեղի եւ այլ պատահարներու դէմ:

ա) Աշխատանքի ժամերու որոշումն բանուորներու համար, թէ քաղաքներու եւ թէ գիւղերու մէջ: Առողջապահական տեսակէտէ առանձնապէս վտանգաւոր եւ վնասակար գործերու համար աւելի պակաս:

բ) Վերցնել կանանց եւ երեխաներու գիշերաշին աշխատանքը: Կանայք ազատ պիտի ըլլան աշխատանքէ՝ ծննդաբերութենէ վեց շաբաթ յետոյ: Արգելիլ երեխաներու աշխատանքը մինչեւ 15 տարեկան հասակը, իսկ 15էն մինչեւ 18 տարեկան հասակը՝ սահմանափակել օրական 6 ժամով: Վերցնել պայմանաժամէ դուրս աշխատանքը: Արգելիլ տուգանքի ձեւի տակ օրավարձի նուազեցումը:

գ) Կիրակնօրեայ լիակատար հանգստութիւն, ամէն մի կրօնի պատկանողներուն, իրենց կրօնի յատուկ շաբաթական կիրակէ օրերը:

26) Բանուորներու ապահովագրումն՝ դժբախտ պատահարներու, հիւանդութեան, ծերութեան եւ աշխատութեան դէմ, պետութեան եւ գործատէրերու հաշուով:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒԹԻՉՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴ

1 Սեպտեմբեր 1908
Կ. Պոլիս

Պ — 40

ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Միջկուսակցական համերաշխութեան եւ գործակցութեան հիգիւրը, Պոլսահայոց մէջ, մանաւանդ սահմանադրական շրջանին, գոյութիւն ունեցած են՝ գրեթէ տեւական կերպով: Իբրեւ մասնակի փաստ՝ կու տամք շտաբակի 1910ի Ա. համարէն (էջ 15) առնուած հետեւեալ յայտարարութիւնները:—

ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎ

ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԻՆ Զ. ՆԻՍՏԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Համերաշխութեան ժողովս, նկատելով որ կուսակցական եւ կուսակցականներու ձեռքով հրատարակուող կարգ մը թերթեր անուանարկիչ ընթացք կը բռնեն իրարու եւ քաղաքական կուսակցութեանց նկատմամբ, միաձայնութեամբ որոշեց՝

Յանձնարարել այդ թերթերուն՝ դադարեցնել անուանարկիչ եւ խիստ յարձակումները, սահմանափակուելով լրկ սկզբունքային քննադատութեանց մէջ:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ Ս. Դ. ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍ. ՏԱՃԿ. ՊՈԼՍՈՅ ԿԵԴՐՈՆ. ԿՈՄԻՏԵԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԹԻՉՆԵՐ

ՎԵՐԱԿԱԶՄԵԱԼ ՀՆՁԱԿԵԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐ. ՌԱՄԿԱՎԱՐ ԿՈՒՍ. ՊՈԼՍՈՅ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿՈՒՍ. ԿԵԴՐ. ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԹԻՉՆԵՐ

17/30 Հոկտ. 1909, Պոլիս

ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԻՆ ԺԱ. ՆԻՍՏԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Համերաշխութեան ժողովս, ի նկատի ունենալով, որ հայ ազգի զանազան խաւերուն մէջ կարծիք գոյացած է՝ թէ հայ կուսակցութիւններէն ոմանք հակահրօնական քարոզչութիւններ կ'ընեն, որոնց յայտարարել՝ որ այդ կուսակցութիւնները, իբրեւ քաղաքական կուսակցութիւններ, իրենց ծրարքին մէջ չունին ո՛չ կրօնական եւ ոչ ալ հակակրօնական քարոզչութիւն ընելու ունէ պահանջ:

Հետեւաբար կուսակցութիւններու կողմէ կրօնական կամ հակակրօնական արտայայտութիւնները պէտք է վերադրել կուսակցութեան, այլ համարել զանոնք անհատական գործ, որուն համար անհատները պատասխանատու են իրենց պատկանեալ կուսակցութիւններուն:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ Ս. Դ. ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍ. ՏԱՃԿ. ՊՈԼՍՈՅ ԿԵԴՐՈՆ. ԿՈՄԻՏԵԻ

ՎԵՐԱԿԱԶՄԵԱԼ ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՊՈԼՍՈՅ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

18 Նոյեմբեր 1909, Պոլիս

Պ — 41

ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԷՆ

Համերաշխութեան եւ միջկուսակցական գործակցութեան հիգիւրը կը շարունակուին: Հետագայ փաստաբույրքը մէկ էջի վրայ (17x26 սմ.) տպագրուած թռուցիկ մըն է, վերի խորագրով:—

ՆԻՍՏ ԺԹ. — ԻԵ.

Միջկուսակցական Համերաշխութեան ժողովը, որուն կը մասնակցին Հ. Յ. Դաշնակցութեան, Սօսիալ Դէմօքրատ Հնչակեան եւ Վերակազմեալ Հնչակեան կուսակցութեանց Կ. Պոլսոյ Մարմիններու ներկայացուցիչները, մշակած եւ միաձայնութեամբ ընդունած են հետեւեալ կէտերը:—

Ա. Յօդուած.— Կուսակցութիւնները յանձնառու կ'ըլլան երկրին Սահմանադրութեան սպառնացող ունէ յետադէմ հոսանքի դէմ պայքարել միասնաբար:

Բ. Յօդ.— Կուսակցութիւնները միահամուռ ջանքերով պիտի ձգտին զարդացնել Թուրքիոյ բաղկացուցիչ տարրերուն միջեւ համերաշխութեան ոգին, աչալուրջ կերպով հսկելով որ յետադիմականները չյաջողին բախումներ յառաջ բերել ազգային եւ կրօնական հողի վրայ:

Գ. Յօդ.— Կուսակցութիւնները ամէն կերպով պէտք է ջանան պաշտպանել ժողովուրդը՝ ջարդի, թալանի եւ համանման աղէտներու դէմ, այդ մասին աշակցութեան հրաւիրելով երկրին բոլոր սահմանադրական տարրերը:

Դ. Յօդ.— Ինքնապաշտպանութեան գործը կուսակցութիւնները պիտի վարեն միասնաբար, կազմակերպելով Ինքնապաշտպան Մարմիններ անկուսակցական հողի վրայ, ժողովուրդի բոլոր կենսունակ եւ շարատաւորուած տարրերէն, անկախ՝ անոնց քաղաքական եւ ընկերային համոզումներէն:

Ե. Յօդ.— Կուսակցութիւնները միահամուռ կերպով պիտի պայքարին ո՛րեւէ հակաժողովրդային հոսանքի դէմ, ո՛ր կողմէն ալ ըլլայ այն:

Զ. Յօդ.— Կուսակցութիւնները ազատ ըլլալով հանդերձ իրենց սեփական գաղափարները արտայայտելու եւ տարածելու, յանձն կ'առնեն արգելք չըլլալ իրարու փրօփակամտին ու գործունէութեան՝ ապօրէն միջոցներով:

Է. Յօդ.— Կուսակցութիւնները կ'ընդունին Միջկուսակցական Իրաւաբար Ատեաններու անհրաժեշտութիւնը թէ՛ Կ. Պոլսոյ մէջ եւ թէ՛ գաւառները:

Ը. Յօդ.— Այս ատեանները պիտի քննեն եւ կարգադրեն կուսակցութիւններու միջեւ կուսակցական հողի վրայ ծագած վէճերն ու տարաձայնութիւնները:

Թ. Յօդ.— Միջկուսակցական Իրաւաբար ատեանները կը կազմուին հետեւեալ կերպով:—

Ամբաստանող եւ ամբաստանեալ կողմերը՝ կ'ընտրեն երկուքական կամ երեքական հողի, որոնք մէկտեղ դալով կ'ընտրեն ուրիշ մը իրենց նախագահ: Այս ձեւով կազմուած Ատեանին վճիռները պարտադիր են՝ երբ միաձայնութեամբ են տրուած: Իսկ մեծամասնութեամբ տրուած վճիռէ մը դժգոհ կողմը կրնայ խնդրին վերաքննութիւնը պահանջել, նոյն եղանակով նոր Ատեան մը կազմելով՝ կա՛մ տեղւոյն վրայ եւ կա՛մ ուրիշ վայրի մը մէջ:

Ատեանի անդամ կրնան ընտրուիլ նաեւ այնպիսի անձեր, որոնք ունէ կուսակցութեան չեն պատկանիր: Ատեանը առաջին աթիւ իսկ կրնայ ուրիշ վայրի մէջ կազմուիլ՝ երկու կողմերու փոխադարձ հաւանութեամբ:

Պատիժները կը սահմանուին Ատեաններու կողմէն եւ կը գործադրուին դատապարտեալին պատկանած կուսակցութեան միջոցաւ:

Համերաշխութեան ժողովին մշակած սոյն համաձայնութիւնը ընդունելով կը վաւերացնենք.

Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան Կ. Պոլսոյ Մարմնի ներկայացուցիչներ

Վեր. Հնչակեան կուսակցութեան Կ. Պոլսոյ Վարչութեան ներկայացուցիչներ

Հ. Յ. Դաշնակցութեան Կ. Պոլսոյ Կեդր. Կոմիտէի ներկայացուցիչներ:

1910 Ապրիլ 13/26 Կ. Պոլիս

Պ — 42

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԵԱՆՑ ՅԱՅՏԱԳԻՐ

Տպագրուած այս թռուցիկը անբուսակիր է, բայց ապահովաբար կը պատկանի սահմանադրական տարիներուն: Կու տամք իբրեւ վաւերաբույրք՝ 1909-1913 տարիներու պոլսահայ մեր Մարմիններն ու ընկերները յուզող հիմնական հարցերու մասին:—

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Հ. Յ. Դաշնակցութեան Կ. Պոլսի պատասխանատու մարմնիս նախաձեռնութեամբ, մայրաքաղաքիս զանազան հայաշատ թաղերուն մէջ պիտի կազմակերպուին հրապարակային ատենախօսութիւններ, քաղաքական ու տնտեսական այլեւայլ հարցերու նուիրուած: Ի միջի այլոց՝ ատենախօսութեան նիւթ պիտի կազմեն հետեւեալները.

1.— Համերաշխութեան խնդիրը եւ Փարիզի Գոնկրէն.

2.— Յեղափոխութիւնը եւ Սահմանադրութեան հաստատումը Թուրքիոյ մէջ.

1 Սեպտեմբեր 1908
Կ. Պոլիս

- 3.— Հ. Յ. Դաշնակցութեան գործունէութիւնը (պատմական ակնարկ) .
- 4.— Ի՞նչ է Սահմանադրութիւնը եւ անոր հիմնական սկզբունքները .
- 5.— Ազգերու հաւասարութեան սկզբունքը եւ պետական իրաւակարգ .
- 6.— Երկրի արդի տնտեսական եւ քաղաքական վիճակը .
- 7.— Բարլամենթական ընտրողական պայքարը եւ ընտրութեան սխալներ .
- 8.— Հ. Յ. Դաշնակցութեան ծրագիրը եւ Թաքթիքը .
- 9.— Սօցիալիստական վարդապետութեան հիմունքը .
- 10.— Կովկասահայերու վերջին շարժումները .
- 11.— Գործադուլներ եւ աշխատաւորական կազմակերպութիւններ .
- 12.— Յեղափոխական դէմքեր (մեր շարժումներէն) .
- 13.— Ապակեղրոնացման խնդիրը եւ կուսակցութիւնները Թուրքիոյ մէջ .
- 14.— Ի՞նչպէս կը գանձուին տուրքերը: Ուղղակի եւ անուղղակի տուրքեր .
- 15.— Հողային հարցը: Թուրքիոյ հողատիրութեան ձեւերը .
- 16.— Թուրքիոյ մէջ ապրող ազգերու վիճակագրութիւնը .
- 17.— Ի՞նչ է յեղափոխութիւնը: Հայ յեղափոխութեան պատճառները .
- 18.— Ի՞նչպէս պէտք է ապահովել Սահմանադրութիւնը .
- 19.— Հիմնադիր ժողով եւ օրէնսդիր ժողով .
- 20.— Ռուսական յեղափոխութիւնը եւ անոր գըլխաւոր էջերը .
- 21.— Միապետութեան եւ ժողովրդապետութեան կռիւրը Պարսկաստանի մէջ .
- 22.— Աշխատանքի եւ Կապիտալի կռիւրը .
- 23.— Կրօնի եւ Պետութեան յարաբերութիւնը .
- 24.— Ազգայնութիւնը եւ Կրօնը . — Լուսաւորչական, Կաթոլիկ ու Բողոքական Հայերու մերձեցում .
- 25.— Հայկական գաւառների կարիքները .
- 26.— Ի՞նչ է Ֆետերասիոնը .
- 27.— Լեզուի խնդիրը Պետութեան մէջ .
- 28.— Հայ կնոջ վիճակը մահմետական երկիրներու մէջ .
- 29.— Մակեդոնական խնդիրը: Անոր լուսազոյն լուծումը: Ատենախօսութեանց տեղն ու օրը կը յայտարարուի առանձին՝ թէ՛ մամուլի միջոցով եւ թէ՛ ազգերով:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ
Կ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՊԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ

Պ — 43

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ
ԿԵԴՐ. ՄԱՐՄԻՆԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ

1912ի Սեպտեմբերին Պոլսոյ մէջ գումարուած Հ. Յ. Դաշնակցութեան հորհուրդը ունեցած է, ըստ երեւոյթիմ, արտակարգ բայց խորհրդակցական բնոյթ: Պայմանեալ պատերազմիմ, ինչպէս նաեւ իրաւաւորի ազգայնամտի քաղաքականութեան հետեւանքով, քրեաւարկութիւնը իմֆօրմէր վերստին վտանգուած կը զգար. ուստի հորհուրդը յառաջացուցած է ինֆուպաշտպանութեան կեդրոնական Մարմին մը: Այդ Մարմինը — այդ ի յայտ կու գայ նաեւ յաջորդ՝ Պ43 փաստաթուղթէն — 1912 Սեպտեմբերէն մինչեւ 7րդ ընդհ. ժողովը (1913 Օգոստոս) եղած է փաստօրէն Դաշնակցութեան Թուրքիոյ գերագոյն մարմինը, գործնականին մէջ իր վրայ վերցնելով նաեւ Արեւմտեան Բիրոյի իրաւասութիւններն ու պարտականութիւնները:

Հետագայ շրջաբերակներ անբուակիր է, բայց հրապարակ հանուած է, ամենայն հաւանականութեամբ, 1912ի վերջին ամիսներուն (տպագրեալ, երեւուելէ էջ):

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՆ

(ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ)

Ընկերներ,

Ինչպէս պիտէք Սեպտեմբերին Պոլսոյ մէջ հրաւիրուեցաւ Խորհուրդ: Սակայն, կանոնադրով պահանջուած ներկայացուցիչներու թիւը լրացած չըլլալուն պատճառով, ներկայ եղողները հարկադրուած եղան այս ժողովը համարել ոչ թէ Իրաւասու Խորհուրդ, այլ Արտակարգ Ժողով, գումարուած ներկայ բացառիկ պայմաններու մէջ:

Ժողովին կը մասնակցէին ներկայացուցիչներ 12 ձայնով եւ 7 ընկերներ խորհրդակցական ձայնով:

Արտակարգ ժողովի օրակարգին մէջ կային, ի միջի այլոց, հետեւեալ էական հարցերը.

- 1) Քաղաքական ներկայ կացութիւնը:
- 2) Ինքնապաշտպանութեան խնդիրը:
- 3) Մարտական խումբեր:
- 4) Յարաբերութիւն երկրի մէջ դրացի ժողովուրդներու հետ:
- 5) Պրոպագանդ հայկական դատի շուրջը:
- 6) Պարլամենտական ընտրութիւններու հարցը:
- 7) Մասնակցութիւն ազգային հիմնարկութիւններու մէջ:
- 8) Կազմակերպական այլեւայլ խնդիրներ:

Ժողովը բնականաբար կը կամենար այս խնդիրներու վերաբերեալ որոշումներէն դէժ քաղուածներ հաղորդել մեր բոլոր մարմիններուն: Սակայն քաղաքական դէպքերը այնպէս արագ զահալիթեցին եւ կեանքը այնքան փոթորկեցաւ պատերազմի պատճառով, որ մենք, առ այժմ, նպատակաւորաբար չենք համարեր այդ

որոշումներու ցրուումը մեր մարմիններուն: Յոյս ունինք որ կազմակերպական շրջանները համամիտ պիտի ըլլան մեզի հետ:

Այդ պատճառով կը բաւականանանք կցել այդ նամակին մէկ քանի քաղուածներ միայն, որոնք անմիջական կապ ունին ընթացիկ դէպքերու հետ:

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ

Նկատելով որ սպաննութիւնները հայաբնակ դաւաններու մէջ առայժմ, դէժ արտաքուստ, աւագակային բնոյթ ունին եւ արտայայտութիւն են հակասահմանադրական եւ յեղափոխութեան օրով քիչ թէ շատ ճշուած տարրերու ճիգերուն, վերականգնելու համար իրենց նախկին, տիրապետող դիրքը:

Նկատելով որ աւագակային յարձակումները ծաւալ ստանալով անխուսափելիօրէն առաջ պիտի բերեն անխթանութիւն երկրին մէջ:

Նկատելով որ այս շարժումը, մութ ուժերու ջանքերով, կը սպառնայ ցեղային-կրօնական կերպարանք ստանալ:

Ժողովը կը հրահանէ

1) Կռիւր մղել՝ ձեռք ձեռքի տուած Սահմանադրական եւ ուրիշ շահագրգռուած տարրերու հետ եւ ամէն ջանք գործ դնել որ շարժումը չկորսնցնէ իր հանրային, համապետական բնոյթը:

2) Եւ եթէ այս կողմի ընթացքին մէջ, աննպաստ հանդամանքներու պատճառով, փոքրաթիւ դաշնակիցներ գտնենք այլ տարրերու մէջ, կամ թէ ստիպուած ըլլանք բոլորովին առանձին մնալ եւ միայնակ գործել, այնու ամենայնիւ կռիւր պիտի վարենք իր իսկական դրօշի տակ:

Այդ ընդհանուր ելակէտը ընդունելով, Արտակարգ ժողովը, իրբեւ ճշդող կէտեր, ընդունեց հետեւեալը.

ա) Պատասխանել հայկական նահանգներու մէջ տեղի ունեցող ոճիրներուն, ըլլան ասոնք անհատական թէ խմբական:

բ) Ուղղել հակահարուածը թէ՛ ոճրագործներուն եւ թէ՛ անոնց մեղաւորներուն դէմ:

գ) Աշխատիլ սահմանափակել գործողութեան վայրերը:

1) Աշխատիլ կողմին տալ անկուսակցական ու արտազային կերպարանք:

ԾԱՆՕԹ.— Դրուած անխուսափելի կացութեան առջեւ, ժողովը որոշեց, իրբեւ առաջին քայլ, հրահանգիլ պատշաճ շրջաններու տեղական մարմիններուն, մարտական խումբեր դուրս բերիլ:

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՂԵՎԱԿԱՐ ՄԱՐՄԻՆ

Ինքնապաշտպանութեան գործը կազմակերպելու ու ղեկավարելու համար որոշուեցաւ,

- 1.— Կազմել ինքնապաշտպանութեան Ղեկավար Մարմին, բաղկացած վեց հոգիէ, որոնց մէջ մէկ քանի ձեռնհաս զինուորական ուժեր:
- 2.— Ղեկավար Մարմինը կը կազմէ երկրի մէջ զինուորական շտաբներ, տեղական ուժերէ:
- 3.— Ամէն մէկ շրջանի համար կ'ընտրուի գլխաւոր հրամանատար: Այդ ընտրութիւնը կը կատարէ Ղեկավար Մարմինը՝ տեղական Կեդրոնական Կոմիտէի հետ համաձայնութեամբ:
- 4.— Զինուորական գործունէութեան ընթացքին մէջ հրամանատար ընկերը պարտաւոր է, կարեւոր հարցերու համար, խորհրդակցիլ վայրի ձեռնհաս մարմիններու կամ ընկերներու հետ: Անհամաձայնութեան պարագային վերջին խօսքը կը պատկանի հրամանատար ընկերոջ, իր պատասխանատուութեամբ:
- 5.— Իրաւունք տալ Ղեկավար Մարմնոյն, գործը բարդացած պարագային, հրաւիրել նոր ուժեր:

ԾԱՆՕԹ.— Ինֆուպաշտպանութեան բոլոր մարմինները, թէ՛ ղեկավար եւ թէ՛ տեղական, պէտք է գործեն ներկայ որոշումներու սահմանին մէջ եւ անոնց ուղղութեամբ:

ՀՐԱՀԱՆԳ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՆ

Աչքի առջեւ ունենալով երկրի անսովոր տաղնապը, որու հանդէպ հրամայական կը դառնայ մեր ժողովուրդի ինքնապաշտպանութեան գործը:

Նաեւ, ցանկալով Կուսակցութեան աշխատանքի եւ միջոցներու գլխաւոր մասը ծառայեցնել ժողովուրդի պաշտպանութեան պէտքերուն:

Արտակարգ ժողովը որոշեց յայտնել Կուսակցական բոլոր Մարմիններուն, հետեւեալը, իրր ընդհանուր հրահանգ առաջիկայ գործունէութեան:

«Ուշադրութեան աննելով երկրի եւ Հայ ժողովուրդի տաղնապալից կացութիւնը, ժողովը ղեկավարուելով 1909ի Ընդհ. ժողովի գծած հրահանգներով, կ'առաջարկէ մեր քաղաքական մարմիններուն այնպիսի դիրքի մէջ մտնել, որ կարողանան յաջողութեամբ ծառայել ինքնապաշտպանութեան եւ սահմանադրութեան գործին:

«Մանրամասներու որոշումը, համաձայն իւրաքանչիւր վայրի տեղական պայմաններուն, կը թողուի իրենց՝ Մարմիններուն»:

Նկատի ունենալով Երկրի մէջ խաղաղութեան խանգարումը, Ինք. Մարմինը դիմեց Կեդր. Կառավարու-

Քեան որպէսզի օրինական բոլոր ձեւականութիւնները պահելով, հայկական շրջաններու մէջ կազմուին պահակներ, պետական զէնքերով զինուած, որոնց պարտականութիւնը պիտի ըլլայ պահպանել Սահմանադրութիւնը: Վերջին օրերս կառավարութիւնը զգալով որ առանց այդպիսի պահակներու դժուար պիտի ըլլայ կարգը պահպանել եւ ապահովութիւն ունենալ, ինչն ալ տրամադիր է նոյն ուղղութեամբ քայլեր ընել: Կը խնդրենք ձեզի, որ դուք ձեր շրջանին մէջ նոյն մտքով դիմումներ ընէք եւ ոչ մէկ ջանք խնայէք գործադրել տալու այդ միջոցը, որ լաւագոյնն է ներկայ պարագաներուն տակ:

Կարելոր է, ինչպէս Պոլսոյ մէջ, նոյնպէս եւ գաւառները, զինուած պահակներ դուրս բերել, որպէս զի՝ մինչեւ խառնաշրջանի անցնիլը, մեր ժողովուրդին ապահովութիւնը, ըստ կարելոյն, պահպանուած ըլլայ: Այդ ուղղութիւնով կը գործէ Ինք. Կեդր. Մարմինը: Յանձնարարելով ձեր յատուկ ուշադրութեան վերի որոշումները, կը խնդրենք մեզ տեղեակ պահել ձեր շրջանի անցած դարձածներուն:

Ընկերական բարեւանքով
Ի. Կ. ՄԱՐՄԻՆ

(1) Բնագրի մէջ՝ մէկ տառ պարագ (գ. կէտք չկայ):

Պ — 44

ՊՈԼՍՈՅ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵԻ
ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ

1913 Յուլիսի 6-ը գրուած այս շրջաբերակաճը վերստին կ'ակնարկէ Ինքնապաշտպանութեան Մարմին, ինչպէս նաեւ 7րդ. Ընդհ. ժողովին, որու շուտափոյժ գումարուճը զիրիմ եւ ճշգրտակայանք չի գտնիր Պոլսոյ Կեդր. Կոմիտէն: Շրջաբերակաճը տրուած է մէկ բուրձի վրայ, երկու երես:

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ

Ընկերներ,

Անցեալ տարի արդէն կազմալուծեալ վիճակի մէջ էին Արեւելեան եւ Արեւմտեան Պիւրոները, երբ Կուսակցութեան Խորհուրդը հրահրուեցաւ գումարուիլ եւ շարք մը կարելոր հարցերու մասին որոշում կայացրնել: Այդ հրահրուած օրինական պայմաններու մէջ կատարուած չըլլալով Խորհուրդը կազմելու իրաւասու Մարմինները ներկայացուցիչ չունեցան, ուստի, եւ հրահրին պատասխանող եւ հաւաքուող ընկերներու գումարումը կրնայ միմիայն ընկերներու խորհրդակցական ժողովի հանգամանք:

Այդ Խորհրդակցական ժողովին ծնունդ առած Ի. Մ. ը իր հետ առնելով մէկ քանի ընկերներ եւս, ստիպուած եղաւ բացառիկ կերպով ստանձնել եւ վարել Արեւմտեան Պիւրոյի պարտականութիւնը:

Աչքի առաջ ունենալով պատերազմը, քաղաքական բարդութիւնները, Երկրի մէջ տիրող պայմանները եւ Կուսակցութեան կազմակերպական անմխիթար վիճակը, հրամայողական պահանջ մըն էր Ընդհ. ժողովի գումարումը:

Բայց Ընդհ. ժողովը իր անուան ու կոչումին համապատասխան ըլլալու, անոր որոշումները իրապէս կուսակցութենէն բխած հեղինակութիւնը ստանալու համար՝ աւելի քան երբեք անհրաժեշտ էր որ օրինական պայմանները լրացուէին, այսինքն Ընդհ. ժողովի որոշման ենթարկուելիք բոլոր հարցերը նախ կուսակցութեան շարքերուն հաղորդուելով խումբերուն, ապա իւրաքանչիւր Կեդր. Կոմիտէական շրջանի Շրջանային ժողովներու քննութեանը ենթարկուէին, Շրջանային ժողովները առաջնորդուէին իրենց շրջանի կուսակցական շարքերու կարծիքներով եւ եզրակացութիւններով եւ Ընդհ. ժողովին մասնակցելիք պատգամաւորներն ալ Ընդհ. ժողովին բերէին իրենց պատկանած Շրջանային ժողովներու պատճառարանեալ եզրակացութիւններն ու կարծիքները:

Վերջին երկու Ընդհ. ժողովներու գումարումները տեղի էին ունեցած առանց այս պայմանները լրացուելու եւ հետեւաբար ժողովներու կազմն ու որոշումները կուսակցութեան կենսունակութիւնը ներկայացնելէ հետո էին: Աչքի առաջ ունենալով այս անմխիթար վիճակը, Զ. րդ Ընդհ. ժողովը որոշած եւ ցանկութիւն էր յայտնած, որպէսզի Է. րդ Ընդհ. ժողովի գումարումը կատարուի օրինական պայմանները լրացուելով:

Այս անգամ Ընդհ. ժողովի հրահրուած ստացուեցաւ Յունիս 15ին, գումարման թուականը սահմանուած է Օդոստոս 15ին: Աչքի առաջ ունենալով հրահրուած եւ գումարումի թուականները, մեզ կը թուի որ այս անգամ ալ անհնար է այդ ժամանակամիջոցի մէջ հարցերը շարքերու քննութեանը ենթարկել, անոնց դիտակցական հասուն եզրակացութիւնները ստանալ, Շրջանային ժողովներ կազմել, տարբերուող հայեացքներու հոսանքները պատկերացնել: Այս պայմաններուն մէջ, ո՛չ միայն կասկածելի է Ընդհ. ժողովի յիշուած թուականին գումարուելու հնարաւորութիւնը, այլ եւ գումարումի իսկ, տրուելիք որոշումները մասնակցող ընկերներու միմիայն անձնական հայեացքներու դրոշմ պիտի կրեն. ուստի եւ ժողովը չպիտի համապատասխանէ իր անուան ու կոչման:

Մեզ կը թուի որ այս անմխիթար երեւոյթը հետեւանքն է Կուսակցութեան կազմակերպական վիճակին, կազմակերպուած շարքերու եւ անոնց կուսակցական ծրագրային, յեղափոխական դաստիարակութեան պարտականութիւնը:

կատարելու: Գիտակից եւ կազմակերպուած շարքերով օժտուած Կուսակցութեան մը համար անհնար է վերածուիլ այսպիսի վիճակի:

Անուանական վիճակի է վերածուած — չնչին բացառութիւններով, Կուսակցական Մարմիններու դոյութիւնն ու դործունէութիւնը: Յաւակնութիւնը չունինք քննադատի եւ դատաւորի դերը ստանձնելու: Այս տրտուր վիճակը առաջացնող պատճառներու մէջ գուցէ իւրաքանչիւրս մեր պատասխանա ուսութեան բաժինը ունինք: Մեր նպատակը պատասխանատուներ փնտռել չէ, ասով չէ որ իրերու վիճակին դարձան պիտի տարուի: Այս մեր դիմումով միայն մէկ նպատակ ենք ունեցած — Կազմակերպական կեանքին վրայ իրենց իրաւասութիւններովն ու պարտականութիւններովը է՛ն պատասխանատու կոչումը ունեցող բոլոր Կեդրոնական Կոմիտէներու ուշադրութեան ներկայացնել՝ թէ այս դրութիւնը կարող չէ շարունակուիլ, առանց Կուսակցութեան դոյութիւնը վտանգելու:

Կեանքը իւր անյետաձգելի պահանջներն ու հրատապ հարցերը ունի, որոնց պատասխանել, լուծել, բաւականութիւն տալ Կուսակցութեան գիտակցութենէն, հասունութենէն, կազմակերպուած շարքերէն ու գործունէութենէն է կախուած, հակառակ պարագային կը դադրինք դոյութեան իրաւունք ունենալէ: Անհրաժեշտ է ցնցել եւ ցնցուիլ կեանք տալու համար այն Կուսակցութեանը՝ որ լաւագոյն յիշատակներ եւ դիւցազնական պատմութիւն ունի: Եթէ ընկերներ՝ լքած չըլլալու համար ասպարէզը, այս կամ այն Մարմնի անունով կը շարունակեն իրենց անհատական աշխատանքը ի զործ դնել, այդ մեզ իրաւունք չի տար մնալու անտարբեր կամ կրաւորական դերի մէջ:

Պարտք համարեցինք դիմել բոլոր գիտակից ընկերներուն ու Մարմիններուն, կոչ ընել անոնց խզիճի ու զպցումներուն նախաձեռնութիւնը ունենալու համար խմբական, շրջանական, շրջանային ժողովներ կազմելու եւ կուսակցական կեանքը վերանորոգելու միջոցները փնտռելու, գտնելու եւ իրագործելու:

Միայն այդ պարագային իրաւունք կ'ունենանք պահանջելու որ գումարելի Ընդհանուր ժողովը ընկերական հաւաքոյթի, անհատական կարծիքներու ու վճիռներու բնոյթը չունենայ եւ իրականապէս ներկայացնէ Կուսակցութեան վճռական դործունէութեան, զժուած ու զձեռքիք ուղղութեան, հաշուետուութեան ու պատասխանատուութեան գիտակցական որոշումներն ու կամքը:

Ընկերական բարեւանքով

Հ. Յ. Դ. ՊՈԼՍՈՅ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵ

1913, Յուլիս 20

Պ — 45

ՊՈԼՍՈՅ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵԻ
ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ

Վիշապի (Պոլսոյ շրջան) 5րդ. շրջանային ժողովէն ընտրուած նոր Կեդր. Կոմիտէն իր թելադրանքներն ու հրահանգները կու տայ շրջանի կոմիտէներուն եւ ընկերներուն: Շրջաբերակաճը տրուած է մէկ բուրձի վրայ, մէկ երես:

Հ. Յ. Դ. ՎԻՇԱՊԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵ

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ (ԹԻԻ 1)

Հ. Յ. Դ. ՎԻՇԱՊԻ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՆ ԵՒ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՆ

Ընկերներ,

Հ. Յ. Դ. Վիշապի Ե. րդ Շրջանային ժողովը — գումարուած Օդոստոս 1-10 — ընտրեց Շրջանի Կեդր. Կոմիտէն՝ որ ձեռնարկած է իրեն վստահուած պարտականութեան:

Այս առաջին շրջաբերականով Կեդր. Կոմիտէն պէտք կը զղայ հետեւեալ անմիջական յանձնարարութիւններն ընել Շրջանի Մարմիններուն եւ ընկերներուն.

- 1) Գումարելով տեղական-ընկերական ընդհ. ժողովներ՝ կարողալ ժողովի ատենադրութեան ամփոփումը եւ անոր բովանդակութիւնն ու թելադրութիւնները նկատի առնելով՝ ընդհանուր երթալ անոնց:
 - 2) Ձեռնարկել տեղական Մարմիններու ընտրութեան, համաձայն ներքին կանոնագրի տրամադրութեան եւ այնպիսի ընկերներէ՝ որոնք ըլլան գիտակ իրենց ստանձնելիք պարտականութեան եւ ընդունակ ու տրամադիր՝ ստեղծագործ աշխատանք կատարելու, առանց կեանքի դժուարութեանց առջեւ ընկրկելու:
 - 3) Լրջօրէն ձեռնարկել շարքերու վերակազմութեան գործին եւ տեղական կազմերը դնել ինքնամփոփ բայց սեղմ ու կուռ վիճակի մը մէջ:
 - 4) Գլխաւոր ուշադրութիւն դարձնել պիւտճէի մասին՝ որ Կեդր. Կոմիտէին յանձնուած պարտականութեանց լրացման հական սատարներէն մէկն է:
- Յանձնելով այս ամէնը ընկերներու լուրջ ուշադրութեան՝ կը յայտնենք նաեւ այն՝ որ Կեդր. Կոմիտէն ամէն ջանք ի զործ պիտի ընէ սերտ եւ տեւական յարաբերութիւն պահել Շրջանի Մարմիններուն հետ, եւ զանոնք դիտակ պահել Շրջանի եւ Կազմակերպութեան կեանքին եւ առհասարակ ազգային ու պետական կեանքի անցուղարձերուն:
- Շուտով կը վերադառնայ Ընդհ. ժողովի մեր պատգամաւորը՝ որ իր կարգին նոր եւ շահեկան պարտականութիւն մը պիտի ընծայէ անշուշտ Մարմիններուն հաղորդելու աւելի ուշադրաւ տեղեկութիւններուն:

կազմակերպական կեանքէն: Այս իսկ նպատակով կեդր. կոմիտէն յարմար տեսաւ որ շրջիկ ընկերը մէկ-երկու շաբաթ յետոյ ելլէ Շրջանի Մարմիններու այցելութեան, որպէսզի ինք եւս անձամբ ծանօթանայ ընդհ. ժողովի որոշումներուն:

Իայց այս բոլորէն առաջ՝ կարեւոր է մեր տեղական կազմերը դնել մեր փափաքած եւ թելադրած վիճակին մէջ, որպէսզի մեր բոլոր աշխատանքներն ու յարաբերութիւնները ներդաշնակելու հնարաւորութիւնն ունենանք:

Վստահելով ձեր աշխատութիւններուն՝

Ընկերական բարեւներով
Հ. Յ. Դ. ՊՈԼՍՈՅ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

1913 Սեպտ. 1

Պ — 46

«ՕԳՆԵՆՔ ՍԱՍՈՒՆԻ»
ՅԱՆՁՆԱՅՈՒՄԲԻ ԹՈՒՈՒՑԻԿԸ

Կ'առաջադրուի հաստատել Սառնոյ եւ Տարօնի համար դպրոցական յատուկ ֆոնտ՝ ոչբացեալ Սիմոն Զաւարեանի անունին (շրջանին մէջ երկրագործական վարժարան մը բանալու համար):

ԿԵԴՐ. ՅԱՆՁՆԱՅՈՒՄԲ

«ՕԳՆԵՆՔ ՍԱՍՈՒՆԻ»

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՈՆՏ ՅԱՆՈՒՆ ԶԱՒԱՐԵԱՆԻ

«Օգնենք Սասունի» Յանձնախումբս, իբրեւ խորին յարգանք իր ողբացեալ անդամակցի յիշատակին՝ նուիրական պարտք կը սեպէ՝ իրեն եղած դիմումին վրայ, ստանձնել Զաւարեանի անունով կազմուած ֆոնտի մասնախումբի հոգն ալ:

Յանձնախումբս պահելով դպրոցական ֆոնտին ինքնութիւնը՝ իբրեւ առանձին դործ, կը նկատէ զայն որպէս լրացուցիչ մաս արդէն սկսուած աշխատանքին:

Մեր անդամակցի հոգին, ամբողջովին տողորուած Սասունի եւ Տարօնի գիւղական, կրթական պահանջներով, կը ձգտէր մէկ կողմէ նոր ձեւով աշխատանք ստեղծել գիւղացիին համար, եւ միւս կողմէ՝ լոյս ու նոր հասկացողութիւն մտցնել անոր մէջ՝ կրթական միջոցներով:

Այս բաղձանքին յաջողութեան համար՝ անհրաժեշտ պայմաններն էին՝ նիւթական եւ մտաւոր աշխատանք, որպէսզի ձեռք եւ միտք դործէին միասնաբար, գիւղական կեանքի մէջ:

Արդ, «Օգնենք Սասունի» Յանձնախումբս ընդունելով «Զաւարեան Դպրոցական ֆոնտ»ի վարչական հոգը, հրապարակ կու գայ յայտարարելու թէ ցանկացող է որ ինքնայորոք սկսուած շարժումը աւելի ծաւալի

հանրային շրջաններուն մէջ, որպէսզի կարելի ըլլայ, զոնէ որոշ ժամանակէ ետքը, ունենալ բաւականաչափ դուժար մը, բանալու համար Տարօն-Սասունի մէջ գիւղատնտեսական տիպար վարժարանը:

Յանձնախումբս, այդ ոգիով ըմբռնած իր ողբացեալ անդամակցին ցանկութիւններն ու տրամադրութիւնները՝ Տարօն-Սասունի համար, խորին համոզումն ունի թէ հանրութիւնը աւելի մեծ ուժ տալով արդէն սկսուած շարժումին, պիտի դիւրացնէ իրականացումը «Զաւարեան Դպրոցական ֆոնտ»ի, ի նպաստ Տարօն-Սասունի գիւղական ժողովրդին:

«ՕԳՆԵՆՔ ՍԱՍՈՒՆԻ»
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱՅՈՒՄԲ

Պոլիս, 913 Դեկտ. 10

Յանձնախումբի գանձապահին հասցէն՝

Dr. K. ZARFDJIAN
Péra, Rue Chichli № 10
Constantinople

Պ — 47

ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԵՐԱՇԵՈՒԹԻՒՆ

Միջկուսակցական համագործակցութեան եւ համերաշխութեան միջոցով շարունակուած են նաեւ 1912 եւ 1913 տարիներու, մասնաւորաբար Պալմանոս պատերազմի բռնկումէն եւ, 1913ին, բարեձորագութեանց եւ հայկական գաւառներու մերձիկ ինքնավարութեան պահանջներու աւելի այժմէական ու սուր բնոյթ ստեղծելէ ետք: Հետագայ երկու փաստաթուղթերէն առաջինը կը վերաբերի Իզմիրի շրջանին (1913 Օգոստոս), եւ երկրորդը՝ Պոլսոյ (1913 Հոկտեմբեր): Դաշնակցութեան անունով երկրորդ յայտարարագրին տակ ստորագրողը Արեւմտեան Բիւրոն է, որու կեդրոնը դրձած էր Պոլսոյ՝ Է. Ընդհ. ժողովի արշամբ:

Եւ այդ յայտարարագրին, Եւ յայտը, Պ47 փաստաթուղթին ընդմէջէն, յստակ կերպով կը տեսնուին կացութեան վտարագրման արթն մտաւորութիւնները, ինչպէս նաեւ տարակարծութիւններն ու, որոշ չափով, մտքերու շփոթք: Օսմանեան երեսփոխանական ընտրութեանց առթիւ արգելադրութիւնները կապակցութեամբ:

Ա.— ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԵՐԱՇԵՈՒԹԻՒՆ
ԻԶՄԻՐԻ ՄԷՋ

ՅԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ ՈՒՂՂՈՒԾ ԻԶՄԻՐԻ ԵՐՁԱՆԻ ՀԱՅԵՐՈՒՆ

Հայրենակիցներ,

Ներշնչուած այն մեծ պարտականութեամբ, որ դրուած է Հայութեան բոլոր հատուածներու վրայ՝ քաղաքական ներկայ բացառիկ կացութեան հանդէպ, եւ մանաւանդ խրատուած այն դառն փորձերէն, որոնք անցեալին մէջ այնքան ոյժեր վատնել տուին, Իզմիրէ

երեք հայ քաղաքական կուսակցութիւններու տեղական Մարմինները՝

Դաշնակցութեան Իզմիրի Կոմիտէն
Հնչակեան Իզմիրի Մասնաճիւղը եւ
Սահմանադիր-Ռամկավար Ակումբը

խորհրդակցական շարք մը ժողովներէ վերջ՝ որոշեցին համերաշխութեան գալ, միմեանց ձեռք մեկնել եւ համաձայնութիւն հայկական դատի շուրջը, միասնաբար աշխատելու եւ ներդաշնակ գործելու համար:

Միջկուսակցային շա համերաշխութի նպատակն է՝ բոլոր ոյժերը ի սպաս դնել Հայկական տաղանային, որուն լուծումը օգտակար է նոյնիսկ պետական շահերու համար, ամէն ջանք դործ դնել վերջնելու մէջտեղէն այն բոլոր մանր, ապարդիւն ու վնասակար կոնքրետները, որոնք տարիներ ու տարիներ պառակտման եւ հետեւաբար ոյժերու ամօրէն վատնման պատճառ եղան, անկեղծօրէն ձգտել համերաշխութեան մէջ դնել հայ հասարակութեան չէզոք խաւերը, որպէսզի կարող ըլլանք՝ ընդհանուր համաձայնութեամբ՝ կուսակցական եւ արտակուսակցական, արդիւնաւոր կերպով ծառայել ազգային կենսական շահերուն, Օսմ. Սահմանադրական ռեժիմի ամբապնդման եւ մեր ժողովուրդի վտանգուած ապահովութեանը, — մեծազոյն ցաւը, որ՝ իրերու տխուր բերմամբ՝ ծառայած է ամբողջ Հայութեան առջեւ:

Միջկուսակցական Մարմինը որոշած է յատուկ կանոնադրով ճշդել ներկայ համաձայնութեան նպատակը, ներքին փոխադարձ յարաբերութիւններու սահմանները, որպէսզի կարելի ըլլայ ներքին պառակտումներու եւ թիրախացութեանց առաջն առնել ու ներդաշնակութիւն մտցնել բոլոր աշխատութիւններու մէջ, կուսակցական կամ հանրային, որոնց կէտ նպատակը պիտի ըլլայ՝ ծառայել Երկրի ժողովուրդին եւ անոր իրաւունքներուն ամբապնդման:

Համերաշխութեան այս ձեռնարկն է, որ հաճոյքով կու գանք յայտարարել Իզմիրի շրջանի բոլոր կուսակցական մարմիններուն եւ մանաւանդ հայ հասարակութեան, որը, խորունկ հաւատք ունինք, անխառն բերկրանքով պիտի ընդունի քաղաքական հայ մարմիններու՝ երկար ատենէ ի վեր փափաքուած այս մերձեցումը եւ համագործակցութիւնը:

Կը սիրենք հաւատալ, որ այդ բերկրանքի հետ միասին, չէզոք հասարակութեան զանազան խաւերու ներկայացուցիչները, կուսակցական բոլոր շրջանները, ինչպէս նաեւ ազգային բոլոր հիմնարկութիւններու ղեկավարները անկեղծութեան, շիտակ վերաբերումի եւ քաղաքացիական պարտականութեան ապացոյցներ պիտի տան, ուժգնօրէն աշակցելով այս նոր շարժման, որ ուրիշ շատ տեղեր արդէն սկսած եւ մարմնացած է: Այլ եւս ոչ մի դաւ, ոչ մի շարժում չընդ, ոչ ալ քայքայիչ յռետեսութիւն: Ժողովրդական դատի թշնամիներ պիտի նկատուին բոլոր անոնք, կուսակցական թէ չէզոք,

որոնք դրդուած անձնական շահերէ եւ կամ տարուած յետին մտքերով՝ կը փորձեն խանգարել կամ կասեցնել այս սրբազան շարժումը:

Ու այդ հաւատով եւ յոյսով՝
Կ'ողջունենք համերաշխական սիրուն ձեռնարկները Երկրպետ, Կիլիկիա, Վասպուրական, Պալքան եւ այլուր, որոնք այս շարժման անդրանիկ օրինակատուները եղան, արժանի մեր համակրանքին ու աջակցութեան:

Կ'ողջունենք սոյն նպատակով Իզմիրի մէջ սկսած հանրային շարժումը եւ հաւատ ունինք, որ հակառակ աննպաստ զուգադիպութիւններու, ան պիտի աճի, մեծանայ եւ եթէ ոչ այսօր, դէժ վաղը պիտի տայ իր կազդուրիչ պտուղները:

Կ'ողջունենք Մայր Երկրի ցաւատանջ ժողովուրդը, որ ակնդէտ կը սպասէ իր հեռաւոր ու բախտաւոր եղբայրներու աջակցութեանն ու համակրանքին եւ հրապարակով կը խոստանանք՝ անոր ի սպաս դնել այս շրջանի բոլոր ուժերը, բարոյական եւ նիւթական, իբրեւ արտայայտութիւն մեր կուսակցական եւ ազգային պարտականութեան:

Յարգանք հայ ժողովուրդի արդար դատին,
Յարգանք Հայ Դատին նուիրուած համերաշխութեան:

ԱՌԺԱՄԵԱՅ ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ԻԶՄԻՐԻ

Իզմիր, 1913 Օգոստոս

Բ.— ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
ՀԱՄԵՐԱՇԵՈՒԹԻՒՆԸ

ՅԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

Սորապէս ներշնչուած այն մեծ պարտականութեանէն, որ հայ ժողովուրդի կացութիւնը կը դնէ քաղաքական կուսակցութիւններու վրայ, եւ համոզուած՝ թէ որքան կարեւորութիւն ունի քաղաքական բոլոր ուժերու ներդաշնակ գործակցութիւնը պետական եւ հանրային կեանքի ներկայ օրերուն, Հայ կուսակցութիւններու ձեռնհաս Մարմինները.—

Հ. Յ. Դաշնակցութեան Արեւմտեան Բիւրոն,
Ս. Դ. Հնչակ. Կուսակց. Տաճկ. Կեդր. Վարիչ Մարմինը,
Սահմանադիր Ռամկավարներու Կեդրոն. Ակումբը, եւ վերակազմեալ Հնչակեան Կեդրոնի վարչութիւնը շարք մը խորհրդակցական ժողովներէ ետք, որոշեցին՝
Ա) Միասնաբար եւ ձեռք ձեռքի դործել Հայկական Բարեձորագութեան իրականացման համար:

Բ) Համաձայնութեամբ շարժիլ Ազգային ներկայացուցչական Մարմիններու մէջ:

Գ) Համերաշխօրէն ընթանալ Երեսփոխանական

ընտրութեանց եւ Պարլամենտական խնդիրներու մէջ: Հարցեր, որոնք կենսական են ու այժմէական, եւ կը պահանջեն քաղաքական ուժերու խելացի համադրութիւն:

Միջկուսակցական այս համերաշխութեան կէտ նպատակն է՝ բոլոր ոյժերը ի սպաս դնել Հայկական Բարենորոգումներուն, որոնց իրականացումը զերազանցապէս անհրաժեշտ է թէ՛ ժողովուրդի եւ թէ՛ պետութեան շահերու տեսակէտէն, ջանք ու աշխատանք չինայել մէջտեղէն վերցնելու բոլոր սին ու վնասակար վէճերն ու ընդհարումները, որոնք տարիներ տարիներ պառակտման եւ հետեւաբար ոյժերու ամուլ վատնումի պատճառ են եղած, անկեղծօրէն ձգտել համերաշխական այս շարժման, կապելու հայ հասարակութեան անկուսակցական շրջանները, որպէսզի բոլոր կենսունակ եւ շինարար ոյժերը, բոլոր հոսանքները կարող ըլլան ծառայելու դիւաւոր նպատակին, — Երկրին եւ հայ ժողովուրդին՝ անոր սահմանադրական եւ ազգային իրաւունքներու ամրապնդման համար:

Համերաշխական ներկայ շարժումը, — պէտք է շեշտել, — չի սահմանափակուիր կուսակցական շրջանակով: Ան կը ձգտի այս աշխատանքին կապել չէզոք հասարակութեան զանազան խաւերը, իր այլ եւ այլ հիմնարկութիւններով. ուստի կը սիրենք յուսալ, թէ այս ճամբուն վրայ պիտի չհանդիպինք արդելի կամ չկամութեան, քանի որ այս շարժումն ու իր նպատակը կուսակցական չեն, այլ համաժողովրդական, նոյնքան սիրելի չէզոք հասարակութեան, որքան եւ կուսակցական շարժերուն համար:

Միջկուսակցական ժողովը որոշած է ներքին Կանոնադրով մը մանրամասնել ներկայ համաձայնութեան նպատակը, կուսակցական փոխադարձ յարաբերութիւններու սահմանները, միջկուսակցական Միջնորդ Ատենաներու դերը, որպէսզի կարելի ըլլայ պառակտումներու եւ թիրախացութիւններու առաջին անգամից եւ ներդաշնակութիւն մտցնել կուսակցական յարաբերութեանց մէջ: Այդ մանրամասնութիւնները կը հաղորդուին տեղական Մարմիններուն, կուսակցական ճամբով, որպէսզի ամէն տեղ՝ կազմակերպական շարժերը ընթանան այն շաւղով, որ կը համապատասխանէ համերաշխութեան ոգւոյն եւ նպատակին:

Համամտութեան եւ բերկրանքի այն բուն արտայայտութիւնները, որոնցմով հասարակութիւնը ամիսներ առաջ ողջունեց համերաշխութեան մասնակի ձեռնարկները Երկրի ներսը եւ Գաղութիւններու մէջ, իրաւունք կու տան մեզ հաւատալու, թէ քաղաքական Հայ Կուսակցութեանց ղեկավար Մարմիններու ներկայ յայտարարագիրը, — նոր ու զօրեղ նուիրագործում մը համերաշխական շարժման, — պիտի գտնէ ջերմ, անկեղծ եւ գործնական ընդունելութիւն թէ՛ կուսակցական եւ թէ՛ արտակուսակցական խաւերու մէջ: Այլեւս ոչ մէկ երկդիմութիւն, ոչ ալ քայքայիչ յոռետեսու-

թիւն: Ընդհակառակը: Այս շարժումը, որուն իրագործման վաղուց փափաքող է հայ ժողովուրդը, պէտք է իր արդէն փշոտ ճամբուն վրայ գտնէ բոլորին կողմէ — կուսակցական թէ չէզոք, մտաւորական թէ աշխատաւոր, վաճառական թէ արհեստաւոր — անկեղծ համակրանք, յարգանք ու գործնական աջակցութիւն:

Ու այդ հաւատքով՝ Կողմունենք համագործակցութեան շարժումը, որ այս օրինակ համաձայնութեամբ շողկապելով քաղաքական Հայ Կուսակցութիւններու ղեկավար Մարմինները, կը խոստանայ տարածել զայն ընդհանուրի վրայ: Կողմունենք մանաւանդ Երկրի բազմազաւ ժողովուրդը, որ ակնդէտ կը սպասէ իր դործօն ոյժերու ներդաշնակ աշխատանքին եւ որուն հանդէպ՝ ներկայ համերաշխութիւնը քաղաքական յարգանքի նոր ապացոյց մըն է, քաջալերիչ ու խոստմանալից:

Յարգանք Միջկուսակցական համագործակցութեան:

Յարգանք հայ ժողովուրդին, որուն պիտի ծառայեն բոլոր կուսակցութիւնները:

Հ. Յ. Դաշնակցութեան Արեւմտեան Բիւրօ Ս. Դ. Հնչ. Կուս. Տաճկ. Կեդր. Վարիչ Մարմին Սահմանադիր Ռամկավար. Կեդր. Ակումբ Վերակազմեալ Հնչակ. Կեդրոնի Վարչութիւն

1913 Հոկտեմբեր, 4. Պոլիս

Պ — 48

ՊՈԼՍՈՅ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵԻ ԵՐՁԱԲԵՐԱԿԱՆԸ

Տպագրուած, չորս մեծադիր էջի վրայ: 1914 Մարտ 26 քաւիկի (Կարճոյ Տրդ. Ընդ. ժողովէն քանի մը ամիս առաջ միայն): Ամփոփ պատմակազմով մը՝ գաղափար կու տայ օրուան ազգային եւ կուսակցական մտաեզրութիւններուն, ինչպէս նաեւ մտքերու եւ տրամադրութիւններու քառսիս մասին:

Հ. Յ. Դ. ՎԻՇԱՊԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵ

ԵՐՁԱԲԵՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ (ԹԻԻ 6)

Հ. Յ. Դ. ՎԻՇԱՊԻ ԵՐՁԱՆԻ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՆ

Ընկերներ,

Նախորդ մէկ-երկու շրջաբերականներով ճշգրտէինք ձեր աշխատանքներու սահմանը ընտրութեանց պործին մէջ, խոստանալով կացութեան մէջ առաջնալիք փոփոխութեան հետ նաեւ Կուսակցութեան բընելիք վերջնական դիրքը հաղորդել իր ատենին:

Այն օրէն ասդին սակայն, տեղի ունեցած անցու-

դարձերը այնքան հակասական եւ իրերու ընթացքը այնքան արագ վերիվայրուներու եւ այլափոխութեանց ենթարկուեցան որ՝ կարելի չէր օրը օրին որոշ տեղեկութիւններ հաղորդել, առանց մտքերու շփոթութեանց տեղի տալու:

Այժմ ալ, երբ խնդիրը — նպատաւոր թէ աննպատ — վերջին փուլի մը մէջ մտած է, դժուար պիտի ըլլար անոր մանրամասն պատմութիւնն ընել, որ, ըսենք, ոչինչ ունի իր մէջ միութարական: Այդ մանրամասնութիւնները, մեր քննադատութիւններովն ու եզրակացութիւններովը հանդերձ, պահելով յառաջիկայ Շրջանային եւ Ընդհանուր ժողովներուն, այս անգամ կու գանք Ընտրական Խնդիրին գլխաւոր անցքերը միայն պատմել, առանց խորհրդածութիւններու, իրերու զնահատութիւնն ու եզրակացութիւնը ձեռնով ձեռք, որ անշուշտ կը բերէք Շրջ. ժողովին:

Վերջին Ընդհ. ժողովին որոշումը Օսմ. Խորհրդարանի ընտրութեանց մասնակցութեան հարցին վերաբերմամբ հետեւեալն է.

Նկատելով որ Խորհրդարանը այն ասպարէզն է, որ հնարաւոր է օրէնսդրական ճամբով, աստիճանաբար եւ սխտեմատիօրէն հետապնդել Հայաստանի բարեկարգութեան համար մեր նուազագոյն պահանջներուն իրագործումը.

Նկատելով որ Օսմ. Խորհրդարանին մէջ ցեղերու համեմատական ներկայացուցչութեան սկզբունքը ամենէն հասունցած եւ հրատապ խնդիրն է պետական բարենորոգումներու շարքին.

Ընդհ. ժողովը կ'որոշէ

Համերաշխօրէն ազգային կուսակցութիւններուն եւ Ազգ. Կեդր. Վարչութեան հետ, Թուրք Կառավարութեան պահանջել ընտրական օրէնքներու բարեփոխում մը, ապահովելու համար հայ ժողովուրդին իր թուին համաձայն ներկայացուցչութիւն մը Օսմ. Խորհրդարանին մէջ: Մերժումի պարագային՝ համազգային բոյկոտ հռչակել խորհրդարանական առաջիկայ ընտրութիւններուն դէմ:

Համաձայն այս որոշման, նախ քան Կառավարութեան հետ բանակցութեան մտնելը առաջադրուած այս հարցին շուրջ, Դաշնակցութեան նախաձեռնութեամբ յաջողուեցաւ ընդունիլ տալ Ազգ. Կեդրոնական Վարչութեան եւ այլ ազգ. քաղաքական հայ կուսակցութեանց՝ երկու կարեւոր սկզբունքներ — ազգային եւ համեմատական ընտրութեանց պահանջ: Ըսենք անմիջապէս որ, ազգային ընդհ. համերաշխութեան յաջողութիւնն ու յարատեւութիւնն ալ ուղղակի արդիւնքն է մեր Կուսակցութեան ջանքերուն:

Վերոյիշեալ սկզբունքներուն վրայ ներկայացուեցաւ Պատրիարքարանի ծանօթ թաղերը եւ բանակցութեան սկսուեցաւ: Նոր Պատրիարքը գալուն, ինքն եւս համամիտ դրուած պահանջներուն՝ աւելի կտրուկ դիրք բռնելու կողմը գտնուեցաւ: Բայց երբ ներկայացուած

սկզբունքային առաջարկները չընդունուեցան Կառավարութեան, — խոստանալով հանդերձ մինչեւ 18-20 ամիս տալ, — Պատրիարքարանի եւ Կուսակցութեանց միակամ համաձայնութեամբ՝ որոշուեցաւ ձեռնպահ մնալ, ցորչափ դոհացում չի տրուիր առաջարկներուն:

Այս որոշման հետեւանքով էր որ Գաւառի Հայութիւնը, մէկ-բերան, ձեռնպահութեան կողմնակից արտայայտուեցաւ:

Մինչեւ հոս իրերու ընթացքը լաւ էր ու տրամաբանական:

Բանակցութեանց ընդհատման ժամանակամիջոցին՝ մէկ կողմէ կառավարութիւնը ընտրութիւնները կատարելով սկսաւ նաեւ նուազեցնել թիւը այն վայրերուն՝ ուրկէ հայ երեսփոխաններ կարելի պիտի ըլլար տալ 18-20 թիւը լրացնելու համար, միւս կողմէ՝ սկսաւ տակաւ յաջողցնել Իթթիհատական հայերու ընտրութիւնը:

Միտմանակ ազգային ներքին կեանքին մէջ անձնական զանազան հաշիւներով եւ յետին մտքերով տարուած տարրեր, — Վարչութեան, Ազգային ժողովի թէ այլ խաւերու մէջ, — ամէն ջանք ու էնթրիկ սկսան թափել՝ խանկարելու համար ձեռնպահութեան շուրջ գոյութիւն ունեցող ներդաշնակութիւնը, աշխատելով ամէն դնով սկսիլ բանակցութիւնները՝ ի հաշիւ մասնակցութեան: Ձեռնպահութեան դէմ պայքարելու համար յատկապէս կաշառուած թերթ մը սկսաւ հրատարակուիլ, իրեն ձայնակից ունենալով տեղական միւս յետադիմական թերթերը: Պատրիարքի անձնական վերաբերմունքն ալ — թելադրուած ազա-վաճառական դասէն — սկսաւ նպատաւոր դառնալ «մասնակցական» ներուն:

Ստեղծուած այս պայմաններուն մէջ հազիւ կարելի եղաւ կացութիւնը պահել իր գտնուած վիճակին մէջ, պատճառաբանելով Բարենորոգման Հարցին վերջացած ըլլալը:

Աւելորդ է ըսել, ազգային այս ներքին պատկերը անծանօթ չէր նաեւ տիրող կուսակցութեան, — Իթթիհատին, — որ հետզհետէ նախապէս իր յանձն առած պայմաններն ալ զանց կ'ընէր:

Մինչ այս, մինչ այն՝ Բարենորոգմանց Հարցին վերջացած ըլլալու լուրը հրապարակ եկաւ: Այդ օրէն՝ մասնակցութեան կուսակիցները աւելի անպատկառ ձեւով սկսան արտայայտուիլ, մանաւանդ որ Պոլիս եւ այլուր երկրորդ կարգի ընտրութիւնները կատարուած ըլլալով՝ Իթթիհատի կողմէ «մէկուս նշանակուելու» ախորժակներն էր որ սրուած էին այժմ Պոլսոյ մէջ:

Կազմակերպութեան Ձեռնհաս Մարմինը նկատի առնելով իրերու վիճակը, ինքն ալ հակեցաւ բանակցութեանց վերսկսման կողմը՝ հետեւեալ պայմաններով.

1) Միջկուսակցական Մարմնի եւ Պատրիարքարանի հետ եղած համերաշխութիւնը պահելու համար՝ կը

ամիս առաջ, հարկ եղածը հրահանգելով իրաւասու թէ խորհրդակցական ձայն ունեցող բոլոր շրջաններուն:

Համաձայն Երջանի կանոնադրին եւ աւանդութիւններուն, ինչպէս նաեւ նախորդ Երջ. Ժողովով Կեդր. Կոմիտէի եղած յանձնարարութեանց, ի մասին մարմիններու նիւթական ցենզի լրացման անհրաժեշտութեան, — 8 մարմիններ կ'ունենային իրաւասու ձայն:

Վերոյիշեալ 8 իրաւասու Երջաններն ալ Ժողովին վայրը զրկեցին իրենց պատգամաւորները, իսկ խորհրդակցական ձայնով մասնակցեցան երեք շրջաններ՝ 3 պատգամաւորով: Ասոնցմէ զուրս մասնակցեցան Կեդր. Կոմիտէն 1 իրաւասու ձայնով, ինչպէս նաեւ Կեդր. Կոմիտէի մնացեալ ընկերներն ու հրաւիրուած ընկերներ՝ խորհրդակցական ձայնով:

Ժողովները ընդհանրապէս գումարուեցան՝ 7-9 իրաւասու պատգամաւորներու, 2-3 խորհրդակցական ձայն ունեցող պատգամաւորներու եւ 4-7 հրաւիրուած ընկերներու ներկայութեամբ:

Բացակայ շրջաններէն շատեր իրենց բացակայութիւնը կը պատճառարանէին գիւղական եւ դպրոցական աշխատանքներով: Ինչ որ եկաւ իր կարգին հաստատել այն պարագան թէ՛ մեր Երջանի Երջ. Ժողովի գումարման յարմարագոյն ժամանակը Օգոստոս 1-10ն է:

Պատգամաւորներու ընտրութեան մասին.— Անցնելով ներկայացող պատգամաւորներու վկայագրերու քննութեանը՝ դիտուեցաւ որ յարգուած է թէ՛ եւ ընտրական հիմնական կանոնը՝ 2/3ի սկզբունքի կիրառութեամբը, սակայն տեղ-տեղ քուէատուփը նոյն օրուան մէջ կարելի չէ եղած բանալ՝ բացակայութեանց պատճառով անհնար ըլլալով քուէներ կեդրոնացնել: Այս իրողութիւնը արդիւնք է թէ՛ եւ տեղական կարգ մը անխուսափելի պատճառներու, — դաշտային աշխատանք, պատերազմ. դրութիւն եւլն. —, սակայն Ժողովը հարկադրուեցաւ արձանագրել հետեւեալ պարտադիր հրահանգը.

«Քուէարկութիւնները պէտք է տեղի ունենան միեւնոյն օրուան եւ միեւնոյն Ժողովին մէջ: Նախընտրելի է՝ անյաջողութեան պարագային երկրորդ Ժողով գումարելով՝ նոր քուէարկութիւն կատարել, որուն արդիւնքը վերջնական եւ վաւերական կ'ըլլայ, փոխանակ քուէարկութեան տալու արտաժողովային ձեւ եւ քուէարկութիւն կատարելու մէկէ աւելի օրերու ընթացքին: Յաջորդ Երջ. Ժողովին վրայ պարտականութիւն կը դրուի այս պարագան խիստ ուշադրութեան առնել՝ վկայագրերու ստուգման պահունք: Դիւր. Ժողովի օրակարգի նկատառութիւն.— Դիւր. Ժողովը իր անձնակազմը շարունակելու լրացումէն յետոյ, — յանձնախումբերու ընտրութիւններ եւլն. —, Երջ. Ժողովը անմիջապէս անցաւ Ընդհ. Ժողովի օրակարգի նկատառութեան, նախ լսելով Երջանի

նախորդ պատգամաւորը եւ իր նիստերուն մեծադոյն մասը յատկացնելով առաջադրուած օրակարգին, նկատելով որ Ընդհ. Ժողովի գումարման օրերը կը մօտենան: Այս մասին տրուած որոշումները առանձին հրատարակելով՝ կը կցուի ներկայ ամփոփումին(1): Այս որոշումներու կարգին՝ Երջ. Ժողովը ուշադրութեան առաւ նախորդ Ընդհ. Ժողովի գումարման հետ կապուած ինչ-ինչ թերութիւններ, այդ առթիւ իր եզրակացութիւնը առանձնապէս յանձնելով գումարելի Ընդհ. Ժողովի նկատառութեան:

Տեղեկատուութիւն Երջանի Մարմիններու, Երջիկի եւ Կեդր. Կոմիտէի.— Ժողովը լսելով Երջանի պատգամաւորներու տեղեկագրերութիւնները՝ իրենց պատկան կազմերու մասին եւ քաղելով անոնցմէ զանազան լուսարանութիւններ, ինչպէս նաեւ լսելով Կեդր. Կոմիտէի կարծիքը անոնցմէ իւրաքանչիւրի մասին, ըրաւ առանձին նկատողութիւններ՝ պարտականութիւն յանձնելով Կեդր. Կոմիտէին՝ հաղորդել այդ զետեղութիւնները պատկանեալ կազմերուն:

Կարդալով Երջիկ-ընկերոջ տեղեկագրերը՝ Ժողովը փաստացի տեղեկութեանց մասը պակաս գտաւ անկէ, ինչ որ զլիսաւոր տեղը գրաւած պէտք էր ըլլար հոն: Ժողովին կարծիքով՝ տեղեկագրերը նախապէս մը տպաւորութիւն կը թողու աւելի:

Կ. Կոմիտէն եւս ըրաւ իր գրաւոր տեղեկագրերութիւնը՝ քննադատօրէն մօտենալով իր եւ Երջանի աշխատանքներուն միանդամայն, ընդունելով զանոնք մէկը միւսէն անբաժան. ու ցորչափ Երջանը չյայտնուի կուսակցական պարտականութեանց եւ աշխատանքներու ըմբռնումի բարձրութեամբ՝ եկող-զացող Կեդր. Կոմիտէները նպաստաւոր տեղեկագրերութիւններ ընելու վիճակին մէջ չպիտի դտնուին: Տիրող այս պայմաններուն մէջ՝ անցնող տարեշրջանին Կուսակցութեան ծոցին մէջ երեւան եկած յուզումները՝ փարլամէնթական ծանօթ իրադարձութեանց առիթով՝ հանդարտ աշխատանքի մը հնարաւորութեանէն զրկեցին թէ՛ զինք եւ թէ շրջանները: Նիւթական պատկերը նոյնպէս նախանձիք չէ, որովհետեւ նախատեսուած շուրջ 27,000 զրջ. մուտքին դէմ հազիւ 18,000 զրջ. ստացած է, ինչ որ իր կարգին խանգարած է նորմալ աշխատանքը: Կեդր. Կոմիտէն իր տեղեկագրով կը յայտնէր նաեւ որ յառաջիկայ տարեշրջանին արդիւնաւոր գործունէութեան մը հիմը դնելու կանխամտածութեամբ՝ պատրաստած է խումբերու ինքնադարձացման եւ դասախօս-ընկերներու ինքնապատրաստութեան համար ուղեգրիծներ, ինչպէս նաեւ Քօօրեթիւնի կանոնադիր, երեքն ալ հրատարակելի վիճակի մէջ: Կեդր. Կոմիտէն տուաւ նաեւ տեղեկութիւններ՝ մարմնամարզական եւ որսորդական(2) աշխատանքներու մասին մէջ, բերելով թուանշաններ:

Ժողովը արտայայտուելով Կեդր. Կոմիտէի գործունէութեան շուրջ, արձանագրեց հետեւեալը.—

1) Կեդր. Կոմիտէի գործունէութիւնը, տրուած պայմաններուն մէջ բաւարար նկատելով հանդերձ, դիտելի է որ ա) Կեդր. Կոմիտէն իր ներքին տարակարծութեանց պատճառով աւելի վիճարանական ժողովներ ունեցած է՝ քան օրկանական աշխատանքի ժողովներ:

2) Կուսակցական ընդհանուր կեանքին եւ գործերուն ու իր փոխ-յարաբերութեանց մէջ՝ Կեդր. Կոմիտէն պարտաւոր է կարելի միջոցները գործադրել իր իրաւասութեան սահմանին մէջ իր ուժն ու ինքնութիւնը պահելով:

Պիտեմ.— Տեղեկագրերութիւն Հաշուեմեմիչի.— Հաշուեմեմիչ Մարմինը քննած եւ վաւերացուցած ըլլալով Կեդր. Կոմիտէի հաշիւները, յայտնեց որ Մարմինները չեն լրացուցած Երջ. Ժողովէն նախատեսուած պիւտճէն, 27,000ի տեղ հազիւ 18,000 հայթայթելով, իսկ Կեդր. Կոմիտէն իր ծախսերուն վերաբերմամբ մընացած է իրեն տրուած իրաւասութեան սահմանին մէջ. ունեցած է 2,200 զրջ. ի նախատեսուած ծախք մը թէ՛ եւ, բայց այդ գումարը ելքին համար գծուած քանակին հետ համապատասխան եղած է:

Հաշուեմեմիչ Յանձնախումբը ներկայացուց նաեւ յառաջիկայ տարեշրջանի պիւտճէն՝ պէտքն զգացնելով շուրջ 30,000 զրջ. մուտքի մը անխուսափելիութեանը, որ բաշխած էր Երջ. Մարմիններու վրայ: Ելքի բաժնին մէջ նախատեսած էր Հաշուեմեմիչը՝ Երջանի փոփոխական-գիւրանական ծախքերուն հետ նաեւ՝ Կուսակցութեան Կեդր. Արկղին վճարելի գումարները, որոնք անյետաձգելիօրէն պիտի գործադրուին, ինչպէս նաեւ Ընդհ. Ժողովին զնալիք երկու պատգամաւորներու ծախքերու հայթայթման պէտքը:

Այս պիւտճէին հետ՝ Հաշուեմեմիչը Ժողովին կը բերէր քանի մը յարակից առաջարկներ:

Երջ. Ժողովը կարծիքներու փոխանակութենէ յետոյ՝ իւրացնելով Հաշուեմեմիչի ներկայացուցած պիւտճէն իր յարակից առաջարկներով, տուաւ հետեւեալ որոշումները.—

1) Կը պարտադրուի յառաջիկայ Կեդր. Կոմիտէն՝ պատրաստ 3,600 զրջ. գումարը պարբերաբար վճարել Բիւրոյին՝ նախորդ տարուան սակի փոխարէն: Նոյնպէս պարբերաբար դանձելով Չարիֆեանէն(3) 7,000 զրջ. վերադարձնել Բիւրոյին՝ ի հաշիւ նախորդ տարուան հանդանակութեան մնացորդին: Յառաջիկայ տարեշրջանի համար պիւտճէնով նախատեսուած սակը պարբերաբար վճարել Բիւրոյին, ջանալով ելեւմուտքին մէջ համաչափութիւն պահպանել:

2) Ընդունելով Հաշուեմեմիչի բաշխման ձեւը՝ կը յանձնարարուի Կեդր. Կոմիտէին՝ մնալ նոյն սահմաններու մէջ եւ դուրս չգալ անկէ, ինչպէս նաեւ կը թուադրէ փնտուել հասոյթի նոր աղբիւրներ — երեկոյթ, դաշտահանդէս եւլն.:

3) Կեդր. Կոմիտէին վրայ պարտականութիւն կը

դրուի իր վայրին մէջ ապրող նիւթապէս գոհացուցիչ պայմաններուն մէջ զտնուող ընկերներու ամսավճարներուն գումարը համապատասխան քանակի մը մէջ դնել՝ անոնց նիւթական պայմաններուն հետ բաղդատմամբ:

4) Միաձայնութեամբ կը ջնջուի Երջիկի դրութիւնը եւ կը պահուի մնայուն քարտուղարի այժմեան ձեւը: Կը պարտաւորուին Կեդր. Կոմիտէն եւ ձեռնհաս ընկերները, ըստ յարմարութեան՝ այցելել Երջանի կազմերուն:

Երջանակային գումարումներ.— Առաջնորդուելով այն դադափարէն, որ մէկ կողմէ Երջիկի վերացումը, միւս կողմէ՝ Մարմիններու մէջ սեփական նախաձեռնութեան եւ աշխատանքի ոգիի արծարծումը անհրաժեշտ կը դարձնեն այդ պէտքերուն գոհացում տուող համապատասխան օրկաններու ստեղծումը, Երջ. Ժողովը որոշեց.—

1) Բաժնել Վիշապի շրջանը քանի մը շրջանակներու եւ ընդունիլ Երջանակային Ժողովներու գումարման պարտադիր կարեւորութիւնը՝ տարուան մէջ դէթ մէկ-երկու անգամ:

2) Իւրաքանչիւր Երջանակի տեղական կազմերը կը պահեն փոխադարձ յարաբերութիւններ՝ գուտ Երջանակային խնդիրներու շուրջ:

3) Երջանակային Ժողովները կը գումարուին Կեդր. Կոմիտէի հրաւերով, անոր մէկ անդամին ներկայութեամբ եւ կանխապատրաստուած որոշ օրակարգի մը համաձայն՝ որ կը վերաբերի Երջանակային խնդիրներու:

4) Երջանակային բաժանումները պիտի կատարէ Կեդր. Կոմիտէն, նայելով աշխարհագրական եւ այլ պայմաններուն:

Ներքին կանոնագրի վերաքննութեան առաջարկի մասին.— Մէկ-երկու Մարմիններու կողմէ առաջարկ եղած էր թէ՛ եւ այս մասին, սակայն Ժողովը նկատելով որ փոփոխութեան առաջարկին հետ փոփոխելի կէտերու մասին ոչ մէկ տեսակէտ եւ մանրամասնութիւն յղուած էր. միւս կողմէ՝ Կուսակցութեան Ընդհ. Ժողովի օրակարգին մէջ դրուած է նաեւ Ընդհ. Կանոնադրի մշակման հարցը, որուն բովանդակելիք ընդհանուր սկզբունքներուն եւ տրամադրութեանց է որ պէտք է համաձայնեցուի Երջանի կանոնադիրը՝ անժամանակ նկատուեցաւ այդ խնդիրով զբաղելը:

Կարմիր խաչի խումբեր.— Երջ. Ժողովը դիտելով որ տեղ-տեղ սկսած են ծնունդ առնել Կարմիր խաչի խումբեր, որոնց գործունէութիւնն ու Մարմիններու հետ ունենալիք փոխ-յարաբերութիւնը որոշ ուղղութեան մը ենթարկելու անհրաժեշտութիւնը կը ներկայանայ, կարծիքներու փոխանակութենէ յետոյ որոշուեցաւ.

1) Կարմիր խաչի խումբերը կը պահուին իբր ուրոյն Միութիւններ, անջատ Կուսակցութենէն, բայց

վանի ալ թէ ձեր պատուէրի համեմատ է որ կը շար-
ժի...:

Ենթակոմիտէս, մանարանի միակ եւ լիազօր տէրն
ձեր ազնուութիւնը միայն ճանչնալով, փոխանակ Մ.
Մարտիրոս էֆէնտին ստիպելու, ներկայիւս ահա ձեզ
կը դիմենք որպէսզի պարտ ու պատշաճ տնօրինելով՝
զեկուցանէք յիշեալին որ ասանկ չնչին բաներով չզրա-
զեցնէ զմեզ ու նոյնիսկ չստիպէ տարբեր միջոցներով
գործադրել տալ խոստացուած ու ընդունուած պայ-
մաններն:

Նաեւ գիտէք անշուշտ թէ ենթակոմիտէիս նախա-
ձեռնութեամբ Մանարանի Գործաւորուհեաց Միութիւն
մը կազմուած է ու այս Միութեան խիստ ջիշ բացա-
ռութեամբ անդամակցած են գրեթէ բոլոր գործաւոր-
ուհիք, եւ որոնք սիրալոյսով յանձնառու եղած են ի-
րենց օրավարձէն՝ դրուչէն մէկ փարա յատկացնել այդ
միութեան: Ընկերակցական Միութիւնն նկատելով որ
իւրաքանչիւր գործաւորուհի իր ստացած դրամն կամ
ոսկի կամ մէճիտ ըլլալուն երբ անգամ մը տուն տանի
ու իր պէտքերուն յատկացնէ (որը արդէն բնաւ չի բա-
ւեր) այլեւս անկարելի պիտի ըլլայ վերոգրեալ բաժինն

վճարել Ընկերակցական Միութեան՝ դիմած են ենթա-
կոմիտէիս որպէսզի ուղղակի մանարանէն դանձենք ի-
րենց այս մասնավճարներն՝ ի հաշիւ իրենց օրավար-
ձերուն: Սակայն Մ. Մարտիրոս էֆէնտին կարգ մը
բոլորովին անտեղի պատճառներ ներկայացնելով՝ կը
հակառակի, որով գործաւորուհեաց այս միութեան
բայցայման ցանկացող ու աշխատող ըլլալն կը մատ-
նէ...: Այս մասին ալ յիշեալին պատշաճ հրահանգներ
տալերնիդ կը խնդրենք, ձեզ հանդէպ մինչեւ ցարդ
փորձով ցուցուած մեր բարեկամութիւնն չխախտելու
համար:

Եւ որպէսզի, կամ անգիտութեամբ եւ կամ թիւրի-
մացութեամբ, այս տեսակ չնչին պատճառներով ան-
համաձայնութիւններ տեղի չունենան մանարանին
շուրջը, աւելի լաւ կ'ըլլայ որ դուք անձամբ դաք ու
կարգադրէք այս խնդիրներն ու միանգամայն դրաւոր
կերպով հաստատէք խոստացուած պայմաններն՝ որը
ապագայ անտեղութեանց առաջըր առնելու միակ եւ
զլխաւոր միջոցն է:

Յարգալից բարեւներով մնաճք սպասող ձեր պա-
տասխանին,

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ՏԵՂ. ԵՆԹԱԿՈՄԻՏԷ
ԳՈՒՐՏՊԷԼԷՆԻ



Դ.— Ս Տ Ե Փ Ա Ն Ե Ս Ա Յ Ե Ա Ն Ի Թ Ո Ւ Ղ Թ Ե Ր Ը

1908 - 1919

Սփիւսքի հայութեան, յատկապէս Եգիպտոսի
մեր գաղութին, լաւ ծանօթ է Ստեփան Եսայեանի ա-
նունը: Ան քանչցուած է մասնաւորաբար՝ իբրեւ Հ. Յ.
Դաշնակցութեան Եգիպտոսի ծառայուն կազմակերպու-
թեան եթէ ոչ սկզբնական հիմնադիրներէն, գէթ տաս-
նամեակներու անխնայ, անբասիր եւ գաղափարապաշտ
զեկավարներէն մէկը, ինչպէս նաեւ իբրեւ գլխաւոր
հիմնադիրներէն մին՝ Հայ Կրթական եւ Հրատարակ-
չական Համագայիւն Ընկերութեան:

Կենսագրական հետեւեալ ամփոփ գծերը կը ֆա-
զենք Գ. Լազեանի «Դէմքեր հայ ազատագրական շար-
ժումէն» հատորէն (էջ 346-355):

Ստեփան Եսայեան ծնած է 1880ին, Կեսարիոյ շրջ-
անի Կերմիր աւանին մէջ: Հայրը, շրջանին մէջ ծանօթ
ու յարգուած արքայապետ Սերմիւր Եսայեանը, կը
մեռնի 1893ին: Ստեփան կ'աւարտէ գիւղի վարժարանը,
բայց առաւելաբար իմբնաշխատութեամբ է որ ձեռք կը
բերէ բարաբար հմտութիւն՝ քանի մը լեզուներու —,
եւ ի մասնաւորի հայերէնի եւ հայոց պատմութեան
մէջ: Տակաւին գրեթէ պատանի, քանի մը տարի ու-
սուցչութիւն կ'ընէ Կերմիրի մէջ:

1899ին Ստեփան Եսայեան կը փոխադրուի Ազեֆ-
սանդրիա, ուր, յաջորդ տարին իսկ, կը մտնէ Հ. Յ.
Դաշնակցութեան շարքերը: Այնտեղ, քանի մը տարի-
ներու ընթացքին, առիթ կ'ունենայ ծանօթանալու Հրա-
չին (Թիրեաֆեան), Վահագն Տաքեւեանին, բժիշկ Կա-
րապետ Փաշայեանին, ապա նաեւ Սիմոն Զաւարեանին
(որ Կիլիկիա եւ Պէրսիոս իր կատարած ուղեւորութեան
ընթացքին կը հանդիպի նաեւ Եգիպտոս): Այս մեծ նը-
փրեալներու շունչով թրծուած՝ Եգիպտոսեցի հինգ ե-
րիտասարդ դաշնակցականներ (Մկրտիչ Եփրեմեան,
Պօղոս Քէհեայեան, Սեդրակ Պալբեան, Տիգրան Ե-
զուպեան եւ Ստեփան Եսայեան) 1905ին կ'որոշեն անց-
նիլ Երկիր, իբրեւ յեղափոխական գործելու համար:

Անյաջող երկու փորձերէ ետք՝ Ստեփան Եսայեանը
1906ի ամառը կը յաջողի ոտք դնել Իզմիր: Թարմ էր
տակաւին յիշատակը Ռուսիանէ 1905ի դաւադրական
պատրաստութիւններուն, որոնք երեսն էին ելած Ժո-
րիսի, ապա նաեւ Տիգրան Նալպանտեանի ձեռքակալու-
թեան իբր հետեւանք: Թուրք ոստիկանութիւնը կը հըս-

կէր աչալուրջ: Եսայեան կը ստիպուի երկու ամիս պահ-
ւրտած մնալ, ապա նաեւ՝ հետագայ Իզմիրէն: Ատե՛ն մը
կը մնայ Սոնդուրլու գիւղը (Այսրն—Չիվրիլ երկաթու-
ղագծին վրայ), եւ վերջապէս, 1907 Յունիսին, կը յա-
ջողի անցնիլ իր ծննդավայրը՝ Կերմիր: Այնտեղ եւս,
մօտ մէկ տարի, ան կը գործէ ընդլստակեայ՝ տեւա-
բար եմթակայ ոստիկանութեան հետապնդումներուն:

Օսմանեան Սահմանադրութեան շրջանին՝ Ստեփան
Եսայեանը կը հանդիսանայ Կեսարիոյ շրջանի դաշ-
նակցական կազմակերպութեան գլխաւոր գործիչներէն
մէկը: Ան պարտականութիւններ կը ստանձնէ Հ. Յ.
Դ. Պալսոյ Պատասխանատու Մարմինն կոչմէ, որուն
հետ ունեցած է երկար քաջակցութիւններ: Իր նամակ-
ներուն մէջ, Եսայեան կը հայրաբայէ փաստացի տեղե-
կութիւններ՝ Սահմանադրութեամբ ստեղծուած նոր
կացութեան մասին, եւ տեւաբար շեշտ կը դնէ ժողո-
վուրդի զինման անհրաժեշտութեան վրայ: Ինք եւս
լայն չափերով կը սատարէ Կեսարիոյ շրջանի կազմա-
կերպութեան եւ զինումին: Իր «Պատմութիւն Հայ Կե-
սարիոյ» գրքին մէջ, Արշակ Ալպոյանեան, մէջբերելով
այդ շրջանը այցելած հայ եկեղեցականի մը խօսքերը,
հայ կուսակցութեանց գոյութեան, մասնաւորաբար՝
դաշնակցական եւ հնչակեան զինեալ խումբերու աչա-
լուրջ հսկողութեան կը վերագրէ «հայաշատ այդ ֆա-
զաֆի Ատանայէն շատ աւելի չարագոյն տեսակէն
սպանդանոցի մը» վերաժուած չըլլալը:

1909ի վերջերը՝ Ստեփան Եսայեան Պալսոյ վրայով
կը վերադառնայ Եգիպտոս, ուր շուտով կը դառնայ
դաշնակցական կազմակերպութեան սիւնը: 1911ին պաշ-
տօնի կ'ընդունուի Մանթաշեան Հաստատութեան մէջ,
որու Գահիրէի ճիւղին տնօրէնութիւնը կը վարէ ամ-
բողջ քսան տարի՝ 1920էն մինչեւ իր մահը: Կ'ամուս-
նանայ 1914ին: 1915էն 1921 կը վարէ «Յուսարեք»ը.
առաւելաբար Ստեփան Եսայեանի ջանքերուն շնորհիւ
է՛ որ, «Յուսարեք»ի սեփականատէր Լալայեանցի մա-
հէն ետք, անոր այրին թերթը կը փոխանցէ Հ. Յ. Դաշ-
նակցութեան: 1919ին կ'այցելէ նաեւ Փարիզ, խորհրդ-
դակցութիւններ ունենալու Հայաստանի Հանրապետու-
թեան պատուիրակներուն՝ Ա. Ահարոնեանի եւ բժ. Հ.
Օհանջանեանի հետ:

Հակառակ իր կեանքի վերջին տասնամյակին ունեցած լուրջ անհանգստութեանց, Ստեփան Եսայեան մինչև վերջ ալ մնաց հանրային եւ կուսակցական ծառայութեան պատմէջին վրայ՝ իրրեւ անխնայ գործող ու հաւատարմ դաշնակցական: 1928ին, քժ. Հ. Օհանջանեանի, Լ. Շանթի, Ն. Ազրալեանի, Գ. Իփէկեանի, Մ. Խաչատուրեանի, Ս. եւ Յ. Պալըբեաններուն եւ Ս. Մալխասեանի հետ, ան մաս կազմեց Համագայիին հիմնադիր ժողովին եւ մարմնին: Մաս կազմեց նաեւ Գահիրէի Թեմական եւ Քաղաքական ժողովներուն: Մեռաւ 1940 Փետրուար 20ին, իր չտեսած բայց պաշտած հայրենիքին՝ Հայաստանի կարօտը սրտին:

Ս. Ե. 1
ԻԶՄԻՐԷՆ՝ ՊԵՏՐՈՍ ԲԱԲԱԶԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ՍՏԵՓԱՆ ԵՍԱՅԵԱՆԻՆ

Հաւատարմ մեր սկզբունքին, անփոփոխ պահած եմք պարտաւորութիւնն ու լեզուն, կատարելով ուղղագրական եւ կետագրական փոքր սրբագրութիւններ միայն: Հակառակ իր ճառային եւ չափազանցած ճերմակեան բնոյթին, մամակը պայտայց մըն է Կեանքապարտեան առաջին տարիներուն Հ. Յ. Դաշնակցութեան ձկնաբեր ծառայած համաժողովրդական համակրանքին եւ խանգալաւորեան, մոյճիկ անոց կողմէ՝ որոնք, իրենց իսկ խոստովանութեամբ (եւ անոնցմէ կը բռնի ըլլալ Պ. Բարազեանը), տակաւին քանի մը ամիս առաջ ամենախիստ մեղադրանքներն ու քննադատութիւնները կ'ուղղէին անոր հասցէին: Գրուած է սեւ մելամուղ, մամակի գծաւոր գոյգ բուրբ վրայ (ընթացիկ չափ, — 21x27 սմ.), չորս երես:

Օգոս. 15/28/908, Զմիւռնիա

Սիրելի ընկեր,

Օգոս. 4/17 Թուակիր դրութիւնը երէկ երեկոյ թովմասէն ստանալով՝ անոր մէջ պարունակուածներուն վերահասու եղայ: Նոյնպէս ստացած եմ ասկէ ամիսներ առաջ ինձ ուղղած նամակդ, որուն անմիջապէս թէեւ կ'ուղղէի պատասխանել, բայց դժբաղդարար եւ բարեբաղդարար նոյն օրը իզմիրէն հեռանալու վիճակին մէջ ըլլալու՝ ստիպուեցայ զայն անպատասխանի թողուլ ցարդ: Կը ցաւիմ որ իզմիրէն երկու ամիս բացակայելու հետեւանքով տխուր ենթադրութեանց ենթակայ ըրի քեզ: Ինչ որ է. կեանքի մէջ երբեմն կը պատահին այնպիսի անակնկալներ, որոնք նախապէս թէեւ ցաւ կը պատճառեն, բայց յետոյ հիմնական բարեբախտութեանց աղբիւրը կ'ըլլան: Իմ երկու

**

Նամակներու այս շարքը կը վերաբերի առաւելաբար Ստեփան Եսայեանի Կեսարիոյ գործունէութեան (1908-1909), եւ որոշ չափով լոյս կը սփռէ շրջանի կազմակերպական աշխատանքներուն, Հ. Յ. Դ. Պոլսոյ Պատասխանատու Մարմնին հետ յարաբերութեանց, ինչպէս նաեւ, ընդհանրապէս, շրջանի եւ ժամանակաշրջանի մտահոգութեան եւ մտածելակերպին վրայ: Քանի մը նամակներ միայն կը պատկանին յաջորդող՝ 1911-1919 տարիներուն:

Հ. Յ.

ամսուան բացակայութիւնս եւս ոչ թէ միայն անզուտ չանցաւ, այլ Սահմանադրութենէն բոլորովին տարբեր — ընկերային օգտակարութիւններ ունեցաւ: Դեռ իզմիր չվերադարձած տեսայ, որ իրերը չափազանցապէս յաջող դրութեան մէջ են. բացի նեխուած ու ապականուած Եգիպտոսէն, միւս բոլոր երկիրներուն մէջ Դաշնակցութեան բացորոշուած աստուածացումը կը փառաբանեն: Դեռ այն ատեն Սահմանադրութեան հոտը անկամ չկար, եւ սակայն Հաստատապէս Համոզուեցայ որ եղած գնահատական ներբողներն ու պաշտամունքները շատ քիչ են Դաշնակցութեան նկատմամբ. հետեւաբար քու դատողութեանդ կը թողում եղբակացնել, թէ ասկէ առաջ Դաշնակցութիւնը վարկաբեկող տարածախոսութիւններն ու անհաստները որքան իրաւացի ու արդարացի էին: Կը ցաւիմ, ընկեր, որ ասկէ ամիսներ առաջ քեզ ուղղած նամակովս՝ անհիմն, սուտ եւ սխալ տարածախոսութիւններ իբր ճշմարիտ իրականութիւն հաղորդեցի քեզ: Եօշափելի եւ անտխտիկ ապացոյցներ կան Հաստատող որ այս վերջին երեք տարիներէն ի վեր՝ բացի տեղւոյս Վազգէնէն ու Վարդանէն (սրճագործ) եւ միւս քննադատող սրկաններէն, ոչ մի աղտոտ պարագայ ունեցած է Դաշնակցութիւնը իր շարքերուն մէջ: Տարբեր հարց մ'է այն՝ որ Դաշնակցութիւնը ասկէ ամիսներ առաջ Վանի, Մուշի եւ յարակից երկիրներու մէջ ձախողուածքներ կրեց — ասկէ չէ կարելի դատապարտելի հետքեր հետեւցունել:

Տեղէն բացակայելէս շատ յետոյ երբ իմացայ Սահմանադրութեան իրագործուելը, դեռ իզմիր չեկած Կ. Պոլիս անցայ, ուր երթեկող ճանապարհորդներու մասին ոչ մի դժուարութիւն չըլլալը իմ անձնական փորձովս Հաստատեցի: Պատուութիւն, ոստիկանական խաֆիէական ճշում, լրտեսական հետապնդումներ, խորթ ու խոտոտ նայուածքներ, բռնակալական գազան

արարքներ. — ասոնք բոլորը այժմ երեւակայական ցնորքներու կարգ անցած են. այժմ բռնակալութիւն չկայ, այլ Հ. Յ. Դաշնակցութիւն կայ որ իր վեհութեամբ կը ճառագայթէ, հաւասարապէս ամենուն վերայ սփռելով ու պարզեցնելով իր տարիներու զոհողութեամբ ձեռք բերած երջանկութիւնները: Ասով չի վերջանար սակայն: Ժողովուրդը — Հայ, Թուրք, յոյն եւ հրեայ, նոյնպէս՝ ռուս, վրացի, պարսիկ եւ արաբ ապաւինած են Դաշնակցութեան եւ դեռ շատ ու անսահման բարիքներ կը սպասեն անկէ, համոզուած ըլլալով որ միայն Դաշնակցութիւնն է այն աղբիւրը, գետը, հեղեղը ու հոսանքը, որ իրեն հետ կը բերէ անսահման ու անվերջ բարիքներ, ինկածները կանգնելու, կաշկանդուածները, գերիները ազատելու եւ մեռելները կենդանացնելու համար: Այս սրբագործումին, այս կենդանացումին եւ այս եղբայրացումներուն առջեւ ասպարէզ պղտորողները — դաւաճանները, ուխտադրութիւնները, դասալիքները — այլեւս իրենց բարոյական մահը տեսնելու ամենօրեայ պատիժը ունին: Այժմ Դաշնակցութիւնը բացարձակ տէրն է ասպարէզին, անոր ներկայ դործունէութիւններն են՝ ժողովուրդը զինել, ամբողջ ժողովուրդին զաղափարել ու կազմակերպել հանրային բոլոր դասակարգերը, զպրոցներուն մեծ մղում տալ. Թատրոններ եւ լսարաններ կազմակերպել, մամուլը սրբադործել մաքրագործուած օգտաշատ հրատարակութիւններով, արհեստակցական ու զործաւորական միութիւններ կազմակերպել՝ աշխատաւոր բայց իրաւազուրկ դասակարգերու իրաւունքները պաշտպանելու համար:

Դաշնակցութեան աշխարհահայեացքն է ազգերու եղբայրացումը, սոցիալիզմը, որով նա ձգտած է ու յաջողած է ասկէ տարի մ'առաջ Թուրք երկու յեղափոխական կուսակցութիւններու (որոնցմէ մին է Ահմէտ Ռիզայի եւ միւսը իշխան Սապահէտտինի կուսակցութիւնը) հետ դործակցական համերաշխութիւններ գոյացնել, որուն ջանքերով ու աշխատութիւններով է որ ձեռք բերուեցաւ Թուրքիոյ ներկայ ազատութեան Սահմանադրութիւնը: Կ. Պոլսոյ մէջ Ծ օր մնացի, շատ մը ատենախօսութիւններու ներկայ եղայ: Ուրբաթի առթիւ Սէլամըքի արարողութիւնը դիտելու համար Երւստղ — եղեմական բայց կրկնակի պարիսպներով շրջապատուած վայրը դացի, տեսայ իր պատկերին երեք չնամանող թազաւորը, որմէ օր մը յետոյ սիրտ ու միտք ցընցող հանդիսութիւններու տպաւորութեան տակ ձնչլուած՝ վերադարձայ իզմիր: Հոս եւս ճառախօսութիւններու ներկայ եղայ: Թէ՛ Կ. Պոլսոյ եւ թէ տեղւոյս Թուրք կոմիտէներու ներկայացուցիչները հրապարակաւ յայտնեցին, թէ Թուրքիոյ ներկայ երջանկութիւնը միայն Հ. Յ. Դաշնակցութեան կը պարտի ամէն օսմանցի. նոյնպէս յայտարարեցին թէ իրենց զարգացումը եւ ներկայ հայրենասիրական ողջամիտ գիտակցութիւնը միմիայն Հ. Յ. Դաշնակցութեան բարձր ու ան-

նման դաստիարակութեան արդիւնքն է: Կեցցէ՛ Հայ ժողովուրդը, որ իր մէջէն դիւցազն Դաշնակցութիւնը ծնաւ: Այլեւս բանէ մը տարակուսելու, կասկածելու հարկ չկայ, հանդիստ եղի՛ր՝ ընկեր. ա՛խ երանի թէ կարողանայիր իզմիր գալ, իրար հետ ձեռք ձեռքի կու տայինք, ու չէիր զղջար հոս գալուդ համար: Խնդրեմ եթէ կարելիութիւններ ունիս, ջանա՛ շուտով իզմիր գալու. իրար պակասը լրացնել կ'աշխատինք հոս, մեր սահմանին մէջ: Նամակս ստանալուդ շուտով պատասխանէ եւ յայտնէ իզմիր գալիք օրդ. կը յուսամ թէ եթէ անմիջապէս ասկէ ճամբայ ելլես, շարաթէ մը հոս հասած կրնաս ըլլալ. վստահ եղիր, քեզ հիւրասիրելու համար պատրաստակամութիւններ չեն պակսիր ինձ:

Հասցէս է — իզմիրտէ, Էրմէնի Մահալլէսի՝ Չուքուր սոքաղընտա № 10 խանէտէ Պետրոս Բարազեան: Այսպէսով ասպահով եւ շուտ կը ստանամ զրկելիք նամակդ եւ գուցէ քեզ ալ:

Ներկայ դրութեանս հետ մէկտեղ փոսթին — Հասցէիդ — յանձնեցի բաքէթ մը, որուն մէջ դրած եմ «Ռազմիկ», «Իրօչակ», տեղական թերթերէն «Արշալոյս» մը. ասոնք կարդալով պիտի կրնաս հասկնալ թէ ինչ է Դաշնակցութեան աշխարհահայեացքը եւ հիմնական բռնած դիրքը. կը ցաւիմ որ ներկայ քեզի փութացնել ուզելուս՝ միջոց եւ հնարաւորութիւն չունեցայ զաղիւրէն թերթեր եւս զրկելու քեզի. այլեւս մտադիր ալ չեմ Փրանսերէն թերթեր ճարելու, քանի որ լիայոյս եմ իզմիր գալուդ:

Ընդունէ ջերմ ու կարօտալիք բարեւներս:
Քոյդ
ՊԵՏՐՈՍ ԲԱԲԱԶԵԱՆ

Ս. Ե. 2
ՀԱԼԷՊԷՆ՝ ԱՐՇԱԿԻ ՆԱՄԱԿԸ
ՍՏԵՓԱՆ ԵՍԱՅԵԱՆԻՆ

Արշակ (մակամուր եւ իմֆուքիւն մեզի անձամբ) կը բռնի ըլլալ Հ. Յ. Դաշնակցութեան Կիլիկիոյ գործիչներէն մէկը, հաւաստեմ՝ եգիպտոսէն ծածօք Ստ. Եսայեանի: Տեղեկութիւններ կու տայ — շատ անլի գուսպ լեզուով քան մայրոյդ Պ. Բարազեանը — Օսմանեան Սահմանադրութեան հաստատման պարագաներուն եւ Դաշնակցութեան խաղացած բայտարոշ դիրքն մասին (Փարիզի եռօրեայ ժողով): Նոյն չափի եւ մոյճ տիպի մամակի բուրբ վրայ, երեք էջ, մամիշակագոյն մելամուղ:

908 Օգոստոս 16/29, Հալէպ

Սիրելի Ստեփան

Ուրախութեամբ ստացած լինելով Ձեր երկու նամակներն, ահա կը պատասխանեմ եւ կը ջանամ ըստ կարելւոյն գոհացում տալ հետաքրքրութեանդ:

Սիրելիս երկար բարակ չպիտի գրեմ Ձեզի, յուսալով որ մինչև հիմա Պոլսոյ թերթերէն բաւական բան իմացած կը լինէք, միայն կ'ուզէի սա պարագան շեշտել թէ՛ կը սխալիք կարծելով թէ Սահմանադրութիւնը Սուլթանը չնորհած է դարձեալ խաղ մը խաղալու համար, այլ ճշման տակ խոնարհած է: Թէ ինչպէ՛ս:

1907 Դեկտ. ամսոյն Հ. Յ. Դաշնակցութիւնը ի մի դումարելով օսմանեան բոլոր ընդդիմազիր յեղափոխական կուսակցութիւնները Փարիզի մէջ Քոնկրէ մը գումարեց եւ կարգ մը որոշումներ տուաւ, որ ժամանակին Քոնկրէի որոշման յայտարարութիւնները հանելով ամէն լեզուէ ցրուեցին: Կ'ուզէի հայերէնը զրկել Ձեզի, սակայն հիմա ձեռքիս տակ չունիմ, այս անգամ կը զրկեմ Ձեզի թուրքերէնը, որ կարդալով դադափար մը պիտի կազմէք: Եւ ահա այդ Քոնկրէի արդիւնքն էր որ Մակեդոնիոյ մէջ զինուորական հրամանատար Շեմսի փաշան սպանուեցաւ թուրք յեղի. սպայի մը կողմէ: Հարիւրապետ Նիպոլի պէյ առաջին անգամ ըլլալով ապստամբութեան դէմ կը պարզէ, որուն անմիջապէս օգնութեան կը հասնի էնվեր պէյ, եւ յետոյ ամբողջ մակեդոնական թուրք բանակը, եւ հեռագրաւ Համիտ աղային 24 ժամ պայմանաժամ կու տան՝ կա՛մ Սահմանադրութիւնը ընդունիլ եւ կամ անմիջապէս Պոլսոյ վրայ քաշելով բռնի ուժով իրենք պիտի կատարեն ամէն ինչ: Եւ ահա այդ բանակի սպանալիքի արդիւնքն է որ այս ազատութիւնը կը վայելենք: Կարծեմ բաւական զաղափար մը ստացաք: Ամբողջ եւրոպացիք եւ թուրք յեղափոխականներ Դաշնակցութիւնը կը փառաբանեն, որ այսպիսի կարեւոր խնդիր մը գլուխ հանեց:

Թուէս երկու օր յետոյ կը մեկնիմ դէպի Ատանա եւ կը խոստանամ անկէ Ձեզի կարգ մը ծրագիր եւ այլ բրոշուրներ զրկել: Այս անգամ կը զրկեմ Ձեզի 1 «Նորշակ», 1 «Հայրենիք», 2 թուրքերէն բրոշուր եւ 1 Փարիզի Քոնկրէի յայտարարութիւնը՝ թուրքերէն. ասոնք ստանալու անմիջապէս իմացուր ինձ հետեւեալ հասցեով. — Ատանատա, Թաշ մաղազատա Յարութիւն էֆ. Թուրքաճեան. վասթառ իլէ Աքրահամ աղայ: Նամակը ստանալու անմիջապէս պէտք եղած ծրագիրներ, բրոշուրներ եւ կարգ մը թերթերով միասին կարեւոր տեղեկութիւններ կու տամ:

Գալով ջո խնդրին արդէն Բիւրոն քեզ համար (300) երեք հարիւր Ֆրանք զրկած էր, որը Սեդրակին մօտ կը սպասէ. երէկ նամակ մը գրեցի եւ պահանջեցի որ անմիջապէս զրկեն քեզի. նոյնպէս Ատանա երթալու անմիջապէս Բիւրոյին ալ նամակ պիտի գրեմ, որ Եգիպտոս գրեն՝ որ դրամդ անմիջապէս զրկեն: Միայն կը ցաւիմ ըսելու որ ատկէ աւելի դրամ չպիտի կարողանաս ստանալ, քանի որ հիմա ազատութիւն է, ամէն մարդ կարող է ազատութեամբ աշխատիլ: 909 Յունուար 1ին երրորդ Ընդհ. Ժողովը պիտի ըլլայ Դաշնակցութեան(1). կ'ուզէի այդ մասին թելադրութիւններ ընել. սակայն հիմա շատ զբաղուած ըլլալուս, կը խոստանամ Ատանայէն ընել այդ բանը: Խնդրեմ համառօտ գրելուս համար ներողամիտ եղէք:

տանամ Ատանայէն ընել այդ բանը: Խնդրեմ համառօտ գրելուս համար ներողամիտ եղէք:

Ձերմ համբոյրներով ԱՐՇԱԿ

Յ. Գ. — Տիրացանին գրեցի որ ծրարներդ Մերսին քրոջ տղուն հասցէով զրկէ. եթէ կ'ուզես Մերսին նամակ մը գրէ որ ստանալուն անմիջապէս քեզի զրկէ:

ՆՈՅՆ

(1) Իրականութեամ մէջ, Հ. Յ. Դ. 5րդ Ընդհ. Ժողովն էր որ տեղի ունեցաւ 1909 Սեպտեմբրին, վառնա:

Ս. Ե. 3

ՏՕՔԹ. ՍՈՒՐԷՆ. ՆՇԱՆԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Գրուած սեւ մեխանով, ճամպի 20x25,5 սմ. չափի գծաւոր սովորական մէկ թերթ թուրքի վրայ, երկու երես:

1908 Օդոստ. 26, Մատէն

Մեծ. Ստեփան էֆ. Եսայեան,

Սիրելի՛ ընկեր, ստացայ Ձեր Օգոստ. 19 թուակիր պատուականը եւ պարունակութեան տեղեկացայ: «Ռազմիկ» եթէ ունիք, զրկեցէք Գարեգին էֆ. ին հետ: Ուսումնասիրաց Ընկերութիւն կազմելու ձեռնարկած էք. լա՛ւ. ինչո՞ւ ուղղակի նպատակին չէք դիմեր եւ չէք թղթակցիր Պոլսոյ Հ. Յ. Դաշնակցութեան տեղական կոմիտէին հետ: Ես այստեղէն նամակ մը գրեցի Պոլիս, ուղղակի «Հ. Յ. Դաշնակցութեան տեղական կոմիտէ» հասցեով. եթէ հասնի՝ լաւ. որոշ հասցէ մը չեմ գիտեր, դուք հարցուցէք եւ բուն հասցէն գտնելով ինձ ալ տեղեկացուցէք: Վերջին Ընդհ. Ժողովի որոշումները, թերթեր եւ կազմակերպական հրահանգներ ուղեցի. այս մասին Պէյրութ ալ գրեցի, անպատճառ պատասան մը կը ստանամ: Արդեւ մը ունի՞ք բուն կազմակերպութիւն մը ընելու համար: Ես Սվազ չկըրցայ երթալ. առ այժմ Պոլիս գրած նամակիս պատասխանը կը սպասեմ: Եթէ հարկ ըլլայ Կեսարիա ալ կու գամ: Վերջապէս աշխատեցէք առիթէն օգուտ քաղել. քաղաքական կազմակերպութիւն մը միշտ օգուտներ կ'ունենայ ասկէ վերջ. Ուսումնասիրաց Ընկերութիւնը, թէեւ շատ կարեւոր, սակայն այս պարագային երկրորդական կը համարուի: Ազգերու կամ յեղափոխութիւններու պատմութիւնները կը վկայեն, որ քաղաքական փոփոխութիւններու սկիզբը միշտ վտանգներով եւ անակնկալներով լեցուն կ'ըլլայ. — այժմ թուրքերոյ պահպանողական տարրը գլուխը կորուսած վիճակի մէջ է, կրնայ ուշաթափիլ եւ réaction մը յուսալ գալ, ինչպէս որ եղաւ եւ կ'ըլլայ տակաւին Ռուսիոյ եւ Պարսկաստանի մէջ: Անոր համար, պէտք է մենք արթուն կենանք. յեղափոխական կազմակերպութիւնը առանց սահմանափակելու ազգային շրջանակին մէջ՝ պէտք է ընդհանուր գոյն մը տալ, բրոպական ընկերով թուրք, հայ եւ յոյն ժողովուրդի մէջ: Աւելի կարեւորութիւն տալու է թուրք զինուորական շրջանակը կազմակերպելու, անոնք աւելի լաւ արամադրութիւններ ունին այս մասին, քանի որ հին ռեժիմին վերջին մահացու հարուածը տուողը օսմանեան բանակը եղաւ: Կը տեսնեմ որ հոս ալ ընդհանրապէս զինուորականներն է որ աւելի կարեւորութիւն կու տան գործին: Կեսարիա դալիք ժէժոն-թուրքերու մասին կը խօսիք. եթէ դան աւելի օգտակար կ'ըլլան:

ախոյ եւ Պարսկաստանի մէջ: Անոր համար, պէտք է մենք արթուն կենանք. յեղափոխական կազմակերպութիւնը առանց սահմանափակելու ազգային շրջանակին մէջ՝ պէտք է ընդհանուր գոյն մը տալ, բրոպական ընկերով թուրք, հայ եւ յոյն ժողովուրդի մէջ: Աւելի կարեւորութիւն տալու է թուրք զինուորական շրջանակը կազմակերպելու, անոնք աւելի լաւ արամադրութիւններ ունին այս մասին, քանի որ հին ռեժիմին վերջին մահացու հարուածը տուողը օսմանեան բանակը եղաւ: Կը տեսնեմ որ հոս ալ ընդհանրապէս զինուորականներն է որ աւելի կարեւորութիւն կու տան գործին: Կեսարիա դալիք ժէժոն-թուրքերու մասին կը խօսիք. եթէ դան աւելի օգտակար կ'ըլլան:

Ուսումնասիրաց Ընկերութիւն մը կազմելու համար մի մտնաք մեր բարեկամ բժիշկները գործի մէջ տանելու. եթէ ես ալ հոն ըլլայի աւելի լաւ կրնայինք գործել. դուք չեմ կարծեր որ ամէն օր Կեսարիա երթալու գալու առիթ ունենաք, ինչ որ անհրաժեշտ է:

Վերջապէս նախորդ գրած նամակս դարձեալ ձեր նկատողութեան կը յանձնեմ եւ կը կրկնեմ. — Ուսումնասիրացի հետ միատեղ դիմեցէք նաեւ Պոլսոյ Հ. Յ. Դ. տեղական կոմիտէին եւ ըստ այնմ վարուեցէք: Ի՞նչ կ'ընեն մեր կէս համակիր բարեկամները, տակաւին վարանելու պատճառ մը ունի՞ն: Բրոպական ըրէք ոչ թէ գաղտնի, այլ ամպիտոններու, բեմերու վրայ ելէք. եթէ այն ալ չընէք ի՞նչ նշանակութիւն կ'ունենայ մամուլ, խօսքի եւ հաւաքումներու ազատութիւնը: Ձանք զանց մի ընէք. խօսեցէք Յովհաննէս, Վահան, Մինաս, Լեւոն, Արսէն էֆէնտիներու հետ, եւ ինձ ալ հաճեցէք տեղեկացնել: Եթէ Յովհաննէս էֆ. ին գիւղերը դայ, թող հոս դայ տեսակցինք: Բարեւելով կը մնամ

Ձերդ՝

ՏՕՔԹ. ՍՈՒՐԷՆ Յ. ՆՇԱՆԵԱՆ

Ս. Ե. 4

ԳԱՐԱՀԱԼԼԸՅԷՆ ՆԱՄԱԿ

ՍՏԵՓԱՆ ԵՍԱՅԵԱՆԻՆ

Ստորագրութիւնը՝ անբռնածիկ: Կրնայ ըլլալ՝ Գ. Բ. Կեսարիայի կամ Կիւմիւշեան: Լեզուն՝ հմարոյր: Գրուած է սեւ մեխով, ճամպի երկրորդ գծաւոր թուրքի վրայ (սովորական չափ), երեք երես:

Գարահալլը, 8 Սեպտ. 1908

Մեծապատիւ

Ստեփան էֆ. Ս. Եսայեան

Կերմիր

Սեպտ. 1 թիւ Կրպ. Սահակեանի ինձ ուղարկած նամակին մէջ ձեր գրութիւնը կարդացի. այնու զրկուած թերթերն եւս ստացայ շնորհակալութեամբ: Կը

խնդրեմ որ հետզհետէ նոյնպէս զրկելու շնորհն ընէք: Պատ. ձեր հարցմանց. —

1. — «Ի՞նչ եմ ձեր երկու ժողովուրդներուն յարաբերութիւնները. — Թէպէտեւ լուռ, իրենց վաղեմի յարաբերութիւնները տեւական, ի ցոյցս սիրով: Առայժմ բռնաբարութեամբ դադարած պահանջատէք կը պահանջեն իւրեանց առեւտր, ոչ ցասմամբ, վերին աստիճան երկմիտ: Կը դիտեն զապագայն եւ կը սպասեն գործողութեան:

2. — «Կ'երեւա՞ն արդեօք յետագիւտ տարրեր՝ ճրգտող խանգարելու այդ յարաբերութիւնները. — Են եւ հաւանական. — որոնք որ մի գիւղի մէջ զսպիչ և հրամայողական դիրք բռնած էին, որոնք որ իբր բարեփոխական արարք հիւրընկալութեան իջեւաններու շնորհիւ շրջակայից մենձ աղաներու եւ կառավարական ունեւ պաշտօնէից բարեկամական պատիւներու արժանացած էին՝ որով կարողանային իրենց անվայել եւ անարդար արարքն հարթել, որոնք որ ուսերուն վրայ մարթին, մէջբերին ատրճանակ եւ դաշոյն կրելու համարձակութիւն ունենալով՝ ցասմամբ իրենց առաջարկն ու խնդրքը կատարել տալու սովորած էին, որոնք որ կառավարական փոքր պաշտօն ստանձնած էին կեդրոնէն հեռու, եւ գիւղերու մէջ իբր կառավարչական ազդեցութիւն բանեցնելով՝ հէք-հիւք արարքներու շահով կը շատանային. — ահա՛ ասոնք եւ դեռ ասոնց նշանները ի սրտէ դժգոհ են: Օրինակներ. —

ա) Բուստիկին գիւղի բնակիչներէն մի քանի խայտառակ եւ սրիկաներ, որոնք կը պատկանին տեղւոյն մենձ աղայից եւ խայտառակ դաշունակիր դասուց, ահա կը դըրդեն գիւղի բնակիչները, մի քանին ծեծելով, ոմանց հայհոյելով, եւն. , որպէս թէ խառնակութիւն եւ ջարդ ծագեցնելով Ազատութիւնը պիտի տապալեն: Այս դէպքը թէպէտեւ թէ կառավարութեան եւ թէ Եողզատի Առաջնորդութեան իմաց տրուած է և անմիջապէս ուստիկան եւ զօրք եւ յիսնապետ զրկուած է հոն, բայց իթթիհատի ժողով մը կազմակերպուելով՝ նոյն սրիկաներու ձերբակալումը զանց բրած են: Առնուած վերջին լուրին նայելով, Առաջնորդ Ս. Հայրը տեղւոյն Տէր Խորէն քահանային բացատրութիւն ուղեւով՝ կրկին բողոքած է:

բ) Նոյնիսկ Պողոզեանի մէջ Օսման Գատի էմին էֆ. ի որդին մի երիտասարդի վրայ յարձակելով կ'ուզէ լաւ ծեծել. հազիւ թէ ազատեր են նորա ճանկերէն: Ականատես թուրքերէն եւ ոչ մին չէ ուզեր միջամտել եւ նորա անամթութիւնը յանդիմանել: Այս մասին կառավարութիւնը անտարբեր է եւ չ'ուզեր որ հասարակութիւնը անցեալ դիպաց վրայ իրենց գանգատը բարձրացնեն. մէկ-երկու անգամ պատրաստուած հեռագիրները զրկել չեն տար, իբր թէ դրացնութեան մէջ լաւ արդիւնք չի յարաբերի՝ առարկելով: Վերջին դէպքի վրայ, Սեւանիկ, Պոլիս, Եողզատ եւ Կեսարիա հեռագիրներ զրկուած է, բայց ի՞նչ արդիւնք գոյանալը չի-

մայանք: Կարծեմ ի զուր կը ձգտին որ վաղեմի ուսմանը վերահաստատուի: Բայց պաշտօնէութեամբ դուրս, այսինքն գիւղերը գնացող պաշտօնեաներէն մին, դատարանի գործակատար Սալիմ էֆ. դեռ մէկ օր առաջ մեր գիւղը եկած էր. մի քանի հարցի ի պատասխան՝ «Մի՛ յուսաք թէ բան մը կը լինի. ահա հիմակուանէ գործը առջի վիճակն ստացաւ. հասարակութեան ձայնը անլսելի է, եւ ամէն բան ըստ կամաց կը շարունակուի եւ պիտի...» կը քարոզէր: Ինչն յանդիմանութիւն մը կրեց. բայց միամիտ ժողովրդեան գաղափարը եւ համոզումը կը խանգարուի եւ համարձակութիւնը կը կտորի: Զանոնք ուղղելու համար քարոզութեան մը կարեւորութիւնը կը գուշակեմ: Մինչեւ հիմա Երզրատէն ձայն մը անզամ լսուած չէ, — ոչ այցելու եւ ոչ լրարեր. չեմ գիտեր թէ անոնք եւս անտարբեր կը մընան: Վերջապէս Պողազլեան կառավարութեան լաւ յանդիմանութեան կը կարօտի. ըստ այնմ՝ ձեր ակումբի կողմանէ առ Երզրատի Առաջնորդութիւն առաջարկութիւն մը եթէ յարմար դատուի օգուտէ գերծ չի մնար:

3.— «Ի՞նչ եմ հայ ազգաբնակչութեան տրամադրութիւնները հանդէպ Հայ Յեղափոխութեան».— Որոշ գաղափար եւ կամք չեն կրնար յայտնել. այժմեան վիճակաւ՝ ո՛չ ջանք եւ ո՛չ մի բան, արդէն ի վերոյ յիշուածներէն կ'եզրակացուի...: Ըստ Թովմայի տեսանկիւնով պիտի հաւատան. գործելու մասին խթանի կը կարօտին:

Ահա այս կողմերուն վիճակն: Ասկէց աւելին գրելու հարկ չտեսնելով՝ մնամ յարգանօք

(Ստորագրութիւն)

Ս. Ե. 5

ԱՏԱՆԱՅԷՆ՝ ԱՐՇԱԿԻ ՆԱՄԱԿԸ
ՍՏԵՓԱՆ ԵՍԱՅԵԱՆԻՆ

Ընթացիկ չափի (20,5x26 սմ.) մամակի գծուար մէկ քերթ քուլքի վրայ, սեւ-մանրագույն մելանով, երկու երես:

908 Սեպտ. 26, Ատանա

Մերելի Ստեփան,

Ժամանակին ստացած էի 908 Օգոս. 29 թուակիրդ. ներողութիւն որ ժամանակին չկրցի պատասխանել՝ գործով մը Մերսին մեկնած ըլլալուս համար:

Մերսին տեսնուեցայ ազգականիդ Գ. Գրիգոր Երլանճեանի հետ. յայտնեց որ Երզրատէն ստացած է ծրարները եւ նամակ մը. նամակը ղրկած է քեզի սա-

կայն ծրարներն ոչ, եւ կարծեմ ծրարները ղրկելու ալ մտադիր չէ. ստիպեցի որ անպատճառ ղրկէ. խոստացաւ, սակայն չգիտեմ թէ խոստումը կը յարգէ՞ թէ ոչ: Կը ցաւիմ որ Երզրատուէն դեռ որեւէ բան... ստացած չէք. ես նորէն նամակ գրեցի եւ ստիպեցի, սակայն դեռ որեւէ պատասխան չստացայ. եթէ դուք ստանալու ըլլաք, խնդրեմ անմիջապէս իմացուցէք: Այսօր կարճ տեսակցութիւն մը ունեցայ Հայրենակիցիդ Գ. Արամի հետ որ մեկնեցաւ Պէյրութ, բաւական տեղեկութիւն առի. կը ցաւիմ որ գործերը շատ դանդաղ կ'երթան եղեր. հիմա գործելու ժամանակ է. եթէ ուզէք Գ. Սուրէնի հետ շատ գործ կրնաք տեսնալ. շատ ցանկալի է որ առանց ժամանակ կորսնցնելու ժողովուրդը ինքնապաշտպանութեան պատրաստէք:

Գալով բրոշիւրներու եւ թերթերու, կրնաք ուղղակի Պոլսոյ Պատասխանատու Մարմնոյն դիմել, քանի որ Զաւարեանն ալ հոն է: «Յառաջ»ի գրադարանի ամբողջ հրատարակութիւնը անկից կը ստանաք, նոյնիսկ «Ռաբ-միկ» եւ «Զանգակ». միայն թէ դիմեցէք եւ պահանջեցէք: Հասցէն է, — Գ. Ակնունի, Փոստ Ռէսթանթ Ծրանսէզ, Պոլիս Բէրա: Իսկ ես այսօր պիտի գրեմ ժընեւ որ ուղղակի Ձեր հասցէին ղրկեն «Երօջակ» եւ «Երօջակ»ի հրատարակութիւնը. միայն թէ դուք եւ դիմեցէք: Կը զարմանամ որ շատ անտարբեր կը գտնուիք. թերեւս Ձեր անձուկ վիճակն է պատճառը:

Ես երբեք մտադրութիւն չունիմ այդ կողմերը գալու. հոս իմ անձնական գործովս պիտի զբաղիմ, այսինքն նալ պիտի կտրեմ. լսածիս նայելով Կեսարիա այս կողմերէն կու գայ եղեր նալ. պիտի խնդրէի որ գիտներ լաւ մը հասկնաս, եւ մէկ օրայի համար ինչ ճամբու ծախք կ'ըլլայ, ասոնք մանրամասնօրէն գրեմ. եթէ կ'ուզես քեզի կը ղրկեմ եւ հոգ կը ծախես. իսկ եթէ դու չես ուզեր, Կեսարիա եղբայրս կայ, որ կարծեմ կաթողիկոսներու դպրոցը վարժապետ է (Կարապետ Քէհեայեան). տեսնուի՞ր հետը եւ կարգադրութիւն մը ըրէք. հաւանականութիւն կայ որ Յարութիւն էֆ. Գալֆայեանը(1) այս կողմերը գայ. եթէ գայ՝ պիտի աշխատիմ Կեսարիոյ կողմերը ղրկել:

Գ. Սուրէնին մասնաւոր բարեւներս: Այս փոսթով կը ղրկեմ Ձեզի երկու հատ «Երօջակ», Օգոստոսի թիւը:

Ձերմ համբոյրներով

ԱՐՇԱԿ(2)

(1) Անկասկած՝ Կիլիկիոյ երբեմնի Պատասխանատու Մարմնի քարտուղար վաեքամը: Տեսնի Մարթիոսի քարտուղարը, ի մտնուարի՝ 402-7, էջ 79-80:
(2) Նամակի բովանդակութեան կ'եզրակացնեմ (տես վերի 7րդ ստղ) որ մամակագիր Արշակի մակնունդն է Քէհեայեան:

Ս. Ե. 6

ՍՏԵՓԱՆ ԵՍԱՅԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ
Հ. Յ. Դ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
ՄԱՐՄՆԻՆ

Մեր ունեցածը, մամակի երկքերթ քուլքի վրայ՝ երեք երես, կը թուի ըլլալ սեւագրութիւն մը: Թէեւ գրուած է սեւ մելանով, բայց կը կրէ բազմաթիւ ջնջումներ եւ սրբագրութիւններ: Ստորագրութիւն եւ թուական չունի: Նամակին տակ, ողբացեալ վ. նաւասարդեանի ձեռագրով, աւելցուած է երկու ստղ, ուր կ'ըսուի. «Այս մամակը գրուած պիտի լինի 1908 Սեպտ. 16/29ին: Տե՛ս Կ. Պոլսի Պատասխանատու Մարմնի 1908 Հոկտ. 1/14 մամակը: 15 / VII / 40, Գաեիրէ, վ. Ն.»
Եւ իբրք, յաջորդ՝ Ս. Ե. 7 մամակը կը թուի ըլլալ առք պատասխանը:

Հ. Յ. Դ. Պոլսոյ Պատասխանատու Մարմնոյն
Պոլիս

Յարգելի ընկերներ,

Ստացած ենք Ձեր ուղարկած երկու շրջաբերական նամակները, նոյնպէս ծրագիրներն ու կանոնադրները: Ահաւասիկ Ձեր ուզած տեղեկութիւնները.

Ա. Մեր շրջանի ժողովուրդներու յարաբերութիւնները մեծ տարբերութիւն մը չեն կրած նոր կարգերից յետոյ: Յոյները կը շարունակեն միշտ չարամբողջութեամբ ու անտարբերութեամբ վերաբերուիլ նոր Ռէժիմի դէմ: Նրանք երբեք չեն ուզեր հաշտուիլ նոր կարգերու հետ, կը կարծեն թէ Սահմանադրութիւնը իրենց ձեռնտու պիտի չըլլայ երբեք: Այդ ցաւալի երեւոյթը պէտք է նկատել արդիւնք՝ որչափ իրենց աւանդական հակառակութեան ու նախանձի հայերու հանդէպ, նոյնչափ եւ վերէն տրուած գէշ օրինակին: Պոլսոյ յոյն մամուլին ու պատրիարքարանին բռնած ընթացքը անշուշտ ծանօթ է ձեզ, հոս ալ իրենց Առաջնորդարանին կամ ազդեցիկ դասակարգին կողմանէ ոչ մի ձեռնարկ չէ եղած մինչեւ հիմա հասկցնելու հասարակութեան՝ Սահմանադրութեան օգտակար հանգամանքը: Եւ ցորչափ շարունակէ այդ ընթացքը, յոյն հասարակութիւնը միշտ անտարբեր պիտի մնայ մեր բարեկամութեան եւ համերաշխութեան կոչերուն: Գալով թուրք ազգաբնակչութեան, ընդհանուր առմամբ լաւ տրամադրութեան մէջ է հանդէպ Սահմանադրութեան, սակայն շատ տկար է տակաւին անոր գիտակցութիւնը: Նա ոչ մի գաղափար չունի ազատական կարգերու մասին, նախապատրաստուած չէր եւ մինչեւ իսկ կրնամ ըսել անակնկալ մ'եղաւ իրեն այդ, եւ կարգ մը թուրքեր ընդունելով հանդերձ հին ուսմանի արտաւորութիւնը եւ նորին առաւելութիւնները զաղտնի ցաւ մը կը զգան կարծելով, թէ եղածը՝ աւելի քրիստոնեաներու համար է քան իրենց համար, միապետութեան տապալման մէջ թրջութեան տկարացում կ'ենթադրեն: Բայց

այսպէս թէ այնպէս կարելի է յուսալ որ շուտով կը ուղեւորանան այդ նախապաշարումները, եթէ թուրք կրօնականներ ու մտաւորականներ աշխատին այդ հողին վրայ: Պէտք է որ Երիտասարդ Թուրքերը ցրուին գաւառներու մոռացուած անկիւնները, բորբականտ մղեն, արթնցնեն ու մշակեն հասարակ ժողովրդեան գիտակցութիւնը: Կեսարիա եկած մի երկու սպաններ տակաւին որեւէ գործի մը չձեռնարկեցին: Հաւանօրէն շատ շուտով պիտի ճանչնայ թուրք ժողովուրդը Սահմանադրութեան ոգին, երեւոյթները այդպէս ցոյց կու տան:

Բ. Բանտերուն մէջ քաղաքական յանցաւոր չէ մնացեր: Արդէն 5-6 հատ իբր թէ քաղաքական յանցանքով դատապարտուածներ կային, անոնք ազատուեցան եւ վերադարձան իրենց ընտանիքներուն մօտ:

Գ. Հին ուսման գործակալներ չեն երեւիր առայժմ քաղաքին մէջ: Թէպէտեւ կարելի չէ հաւատալ որ անոնցմէ չկան, մինչեւ իսկ մի քանի շարաթ առաջ նրանք սկսած էին որոշ կերպով ցոյց տալ իրենց գոյութիւնը, սակայն Շէյխ Իպրահիմ կոչուած սրիկային երկրորդ անգամ բանտարկուելը բաւական նպաստաւոր ազդեցութիւն ըրաւ մտքերու վրայ: Այժմ չեմ կարծեր որ այդօրինակ մութ տարրեր համարձակին դուրս գալ իրենց խորշերէն, մանաւանդ որ նորեկ կառավարիչը լաւ վստահութիւն կը ներշնչէ այդ մասին: Քաղաքը այսպէս, բայց կան յետընկած վայրեր ուր անպակաս են ցաւալի դէպքեր: Պողազլեան գաւառակէն տխուր դէպքերու լուրեր կու գան: Բաւական բնորոշ է վերջերս Ռուստիկին գիւղի մէջ պատահածը, որուն մասին Երզրատի առաջնորդը բողոքած է արդէն Պոլիս: Նոյնպէս Պողազլեանի միւս գիւղերու մէջ պատող կարգ մը թահախտար կամ ուրիշ պաշտօնեաներ մտքերը կը պղտորեն եղեր, իբր թէ բան մըն ալ պիտի չըլլայ եւ հին ուսման պիտի վերահաստատուի: Հարկ է որ այդ մասին կտրուկ տնօրինութիւն մը ըլլայ, ազուր յանդիմանութեամբ Պողազլեանի կառավարութեան: Պէտք է անյապաղ ուշադրութիւն դարձնէք Պողազլեանի կառավարութեան վիճակին վրայ:


Դ. Մեր շրջանի դաշնակցական անդամներու թիւը շատ սահմանափակ է, մինչեւ անցեալ տարի ոչ մի կազմակերպութիւն չէր եղած, եւ այժմ ալ հազիւ ենթակոմիտէի մը թւոյն կը հասնի անոր թիւը, բայց յուսով եմ որ շուտով կը զարգանայ գործը:

Ե. Դաշնակցութիւնը հոս պէտք եղած բարձրութիւնը ձեռք բերելու համար, հոս պէտք կայ կազմակերպող եւ բորբականտիւթ ընկերներու. ասոնց պէտքը անմիջական է եւ անյետաձգելի: Հոս կը սպասեմ մի քանի ընկերներու, որոնք պիտի դային Երզրատուէն, սակայն մինչեւ օրս չեն եկած: Անոնք ալ ապահովարար մօտերս կու գան, սակայն ես կ'առաջարկեմ որ ընկեր Չարդարեանը գէթ մի քանի շարժում համար հոս գայ: Մեծամեծ արդիւնք կու տայ հոս անոր ներկայու-

Թիւնը թէ՛ կազմակերպութեան տեսակէտով եւ թէ՛ երեսփոխանական ընտրութեան տեսակէտով: Ժողովուրդը քաղաքականապէս շատ խակ է, նա պէտք ունի առաջնորդող, ուղղութիւն տուող ոյժերու, մանաւանդ երեսփ. ընտրութիւնք կը մօտենան. Կեսարիան ունի մտատանջող հարց մ'ալ, դաշնակցական ընտրելի մը չգոյութիւնն է. չունինք մէկը որ կարող ըլլայ պէտք եղած կերպով պաշտպանել մեր սկզբունքները Խորհրդարանի մէջ:

Ա. Ե. 7
Հ. Յ. Դ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄՆԻ ՆԱՄԱԿԸ

Միաբնիք պաշտօնաբարձրի վրայ (21,5x28 սմ.) երկու երես: Գրուած սեւ մելամով: Ստորագրուած է Հ. Յ. Դաշնակցութեան Կ. Պոլսոյ Պատասխ. Մարմին, եւ կնիք չի կրեր: Նայմ է պարագան Պատ. Մարմնի հետագայ բոլոր մամակներուն (ուղղուած Սա. Եսայեանին):



1908 Հոկտ. 1/14
Սիրելի ընկեր Եսայեան
Կեսարիա, Կերմիր Գիւղ

Ստացած ենք ձեր 16/29 թուակիրը. գոհ ենք ձեր տուած տեղեկութիւններէն: Դժբախտաբար այս պահուստ մեր բոլոր տրամադրելի ուժերը գրաւուած են հոս կամ այլուր աւելի անհրաժեշտ ու անյետաձգելի աշխատանքով, այնպէս որ դժուար է մեզի պահանջուած ընկեր մը տրամադրել ձեր շրջանին: Գոհ պիտի ըլլայինք՝ եթէ Եզրիպտոսէն՝ լուսագոյն ընկերներ հաստատուէին ձեր կողմերը եւ, առանց ծանրանալու կազմակերպութեան վրայ նիւթապէս, ջանային պատրաստել ու կազմակերպել Կեսարիոյ շրջանը՝ որ շատ կարօտութիւններ ունի այս ուղղութեամբ: Յաւանք է որ դեռ ձեր քաղաքին մէջ չունինք ո՛չ մէկ կազմակերպութիւն, ոչ իսկ կանոնաւոր խումբ մը: Ասկէ առաջ թալաս գիւղէն Սարգիս Աքմաճեան եւ մէկ երկու ուրիշ անուններ դիմում ըրած էին մեզի՝ բազմանք յայտնելով կազմակերպուելու եւ ուղած էին հրահանգ: Իրենց զրկեցինք ծրագիր եւ կա-

նոնազիր, միաժամանակ ցոյց տալով ձեր հասցէն եւ թելադրելով բանակցութեան մտնել ձեզի հետ: Անշուշտ ցարդ մտած կ'ըլլաք յարաբերութեան մէջ եւ ընթացք տուած անոնց բաղձանքներուն:

Ընկեր Ջարդարեան նոյնպէս զբաղուած է հոս հարկեցուցիչ գործերով ու աշխատանքով, այնպէս որ հակառակ իր եւ մեր ցանկութեան, անհնար է իրեն՝ ընդունիլ առայժմ ձեր հրահանգը:

Աշխատեցէք քաղաքին մէջ առաջ բերել կազմակերպութիւն՝ լուսագոյն երիտասարդութիւնը եւ մաքուր տարրերը կապելով մեր կուսակցութեան հետ. կարծենք հոն պիտի գտնէք նաեւ հինէն մնացած հատուկոր դաշնակցականներ կամ համակիրներ՝ մտաւորական դասակարգին մէջ: Աչքի առջեւ ունեցէք առաւելապէս ուսանողութիւնը:

Խորհրդարանական ընտրութեան մասին չէք գրի ոչինչ. հետաքրքիր էր իմանալ թէ որո՞նք կը ներկայացուին իրրեւ քանտիտա(1) հայերէն եւ որո՞նց յաջողութեան ամենէն աւելի հաւանականութիւն կայ: Կեսարիոյ համար մեր թեկնածուն Արսէն էֆէնտի Գալֆայեանն է՝ որուն յաջողութեանը համար մղեցէք պրոպականտ եւ ամէն ջանք:

Սպասելով ձեր լուսագոյն ու նորագոյն լուրերուն, կը մնանք ընկերական բարեկեցութեամբ:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
Կ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽ. ՄԱՐՄՆԻ
Մեր հասցէն՝ նամակի համար՝
ՄԿՐՏԻՉ ԷՖ. ՊՈԼՍՈՅ
Ըշիր էֆէնտի խան
Յանձնելի
ՄԱՆԻՇԱԿԻՆ Կ. Պոլիս
(Նոյնը թուրքերէն)

Հեռագրի համար՝
Աւրան, Սազըզ աղած թիւ 2, Պէյոզլի
(1) Ֆրանսերէն բառ, — քննաձու:

Ա. Ե. 8
ՏՕՔԹ. ՍՈՒՐԷՆ Յ. ՆՇԱՆԵԱՆԻ ԵՐԿՏՈՂԸ

Գրուած մամիշակազոյն մելամով, Յամակի գծաւոր կէտքերով վրայ (18x20 սմ.) մէկ երես:

1908 Հոկտ. 3, Պուրուս Գըլլ
Մեծ. Ստեփան էֆ. Եսայեան,
Ես Պոլսոյ Տեղական Կոմիտէին ստացայ թերթի կանոնադր-ծրագիր. եւ ճնուազագոյն պահանջները զորս Պուրուս Գըլլա ձգեցի, որ ամենէն յարմար տեղի է կազմակերպութեան համար: Հաճեցէք զրկել պր-

չիւր, թերթ եւ գիրք որ կարենան բացատրել Հ. Յ. Դաշնակցութեան սկզբունքները: Ես երկրորդ անգամ մըն ալ պիտի գամ հոս. անշուշտ դուք ալ Կեսարիա բան մը ըրած էք ցարդ: Պոլսէն ինձ կը հարցնեն ձեր մասին. ես ալ պէտք եղածը գրեցի եւ Տեղեկագիր մըն ալ զրկեցի:

Նամակարերին յանձնեցէք թերթեր, մասնաւորապէս «Դրօշակ» եւ ուրիշ ինչ որ յարմար դատէք նոր սկսած կազմակերպութեան մը համար. ես ալ 25-30 օրէն Կեսարիա կու գամ, ձմեռը Կեսարիա պիտի անցընեմ: Յովհաննէս էֆ. ին յատկապէս բարեկեցի:

Ձերդ
ՏՕՔԹ. ՍՈՒՐԷՆ Յ. ՆՇԱՆԵԱՆ

Ա. Ե. 9
ՍՏԵՓԱՆ ԵՍԱՅԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄՆԻՆ

Պատասխանն է Ս. Ե. Դին: Գրուած է սեւ մելամով, Յամակի պարզ բարձր վրայ, երկու երես: Ամենայն հաւանականութեամբ՝ կը ներկայացնէ զրկուած Յամակի սեւագրութիւնը կամ արտագրուած պատճէնը: Թուական եւ ստորագրութիւն կը պակսեն: Ըստ բովանդակութեան, պէտք է գրուած ըլլայ 1908 Հոկտեմբերին (Ս. Ե. 12էն գատնելով՝ Հոկտ. 15/28ին):

Կերմիր
Հ. Յ. Դաշնակցութեան Կ. Պոլսոյ
Պատասխանատու Մարմնոյն
Յարգելի՛ ընկերներ,

Ենթահակալութեամբ ստացայ ձեր 1/24 Հոկտ. թուակիրը: Կը փութամ պատասխանել: Նախորդ նամակ տեղեկութիւններ տուած էի քաղաքին եւ շրջակայ գիւղերու բաւական ծանր կացութեան վրայ. ներկայիս ըստ երեւոյթի բաւական հանգստացած են մըտքերը, հետզհետէ նուազելու վրայ է ռէաֆորմի հաւանականութիւնը: Ժողովուրդին վրայ վերջին երեւոյթներու հետեւանքով կը տեսնուի զինուելու լաւ տրամադրութիւն մը, բայց դժբախտաբար զէնքի չգոյութեան պատճառաւ չենք կարող գոհացում տալ այդ մասին եղած դիմումներուն: Յանկալի է, որ կարողանայինք օգտուիլ այդ պատեհութենէն զինելու համար ժողովուրդը: Նախորդ նամակաւ զրած էի այդ մտօք. նորէն կը շեշտեմ, որ անհրաժեշտ է զէնք ստանալու միջոցներու մասին մտածելով, զիւրութիւններ ցոյց տալ: Ժողովուրդը տրամադիր է ամէն գնով զէնք ձեռք բերել, նկատի ունեցէք խնդրեմ այդ կէտը: Կեսարիոյ համար ներկայիս մէջ անհրաժեշտ են զէնք եւ կազմակերպութիւն: Մինչեւ ցարդ եթէ կարելի չեղաւ պահանջուած բարձրութեան հասցունել հոս Դաշնակցու-

թիւնը, չպէտք է ենթադրել որ այս մտօք աշխատանք չէ եղած, եւ կամ ժողովուրդը անտրամադիր է, այլ այն բացառիկ դիրքը որու մէջ կը գտնուի Կեսարիան: Նոր կարգերի հրատարակութիւնից յետոյ ամէն տեղ զիչ թէ շատ ցնցուեցաւ ժողովուրդը, եւ կրցաւ արտայայտել իւր ուրախութիւնը, բայց հոս այժմս իսկ նման ցոյցեր վատ պիտի մեկնուէին մեր թուրք հասարակութեան կողմէ: Ատոր համար կարելի չ'ըլլար մեզ հրապարակային գործունէութիւն ունենալ, միայն ատոր համար մենք պէտք կ'ունենանք բրոպականտիստներու, որոնք այդ մտօք աշխատէին ժողովրդական խաւերու մէջ: Ես կրկին եւ կրկին դիմեցի Եզրիպտոսի ընկերներուն, բայց տակաւին դրական պատասխաններ չեմ ստացած: Առայժմ Կեսարիոյ եւ Թալասու ընկերներէն մի ժողով կազմեցինք, որոնք խորհրդակցաբար կը զբաղին տեղական կազմակերպութեան հարցով: Այդ մասին հետզհետէ տեղեկութիւններ կը հաղորդեմ, միայն այժմէն կը հաւաստեցնեմ ձեզ որ մօտ ժամանակուայ մէջ կ'ունենանք մեր կանոնաւոր մարմինները: Հինէն մնացած ընկերներ եւ համակիրներ գրեթէ չկան, եղածները անցեալ տարուայ մէջ մտած են, եւ նոր կարգերու հրատարակութիւնը մեծ պահանջ դնելով մեր վրայ, (1) զգալի պէտք ունինք Դաշնակցութեան հրատարակութիւններուն, զորս կարելի է վճարուածով ցրուել ժողովուրդին:

Գալով խորհրդարանական ընտրութեանց, արդէն սկսած են եւ շուտով կը վերջանան, շրջակաները աւարտած են իրենց երկրորդ կարգի ընտրութիւնները, եւ մինչեւ իսկ Տէվէլուի շրջանը ըրած իւր երեսփոխաններու ընտրութիւնը: Հող 14ի վրայ 7 քուէն առած է մեր ընտրելի Գալֆայեանը:

(1) Բնագրին մէջ այսպէս է:

Ա. Ե. 10
ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄՆԻ ՆԱՄԱԿԸ

Պաշտօնաբարձրի վրայ, սեւ մելամով, մէկ երես (տե՛ս Ս. Ե. 7):

1908 Հոկտ. 7/20
Սիրելի ընկեր Ստեփան Եսայեան
Կերմիր Գեղ — Կեսարիա

Էֆէնտի գիւղէն Տր. Խաչիկ Տէօվլէթեանէ մեր ստացած նամակի մը համաձայն, յանձնարարեցինք որ յիշեալը ձեռնարկէ թէ՛ իր գիւղին եւ թէ Կեսարիոյ մէջ կազմակերպութեան, ինչպէս որ ինք եւս տրամադրութիւն յայտնած էր: Ուստի, բարեւ կղէք դուք եւս յա-

բարեբուժեան մէջ մտնել իր հետ եւ գործակցարար առաջ բերել հարկ եղած ուժերը:

Կը յուսանք թէ արդէն յարաբերութեան մէջ մտած էք թալասի մեր ընկերներուն հետ:

Քանի մը օր առաջ նոյնպէս նամակ մը ստացանք Կեսարիայէն՝ «դաշնակցական անդամ, Նիզակ» ստորագրութեամբ, որուն անձը մեզի ծանօթ չէ. նկատի ունենալով մանաւանդ որ իր նամակով կարգ մը փափուկ հարցեր ալ շօշափած է՝ չուզեցինք պատասխանել. թող որ չունէինք առանձին հասցէ մըն ալ: Հաճեցէք, եթէ կարող էք, իմանալ թէ ո՞վ է այս անձը եւ իմացնել մեզի:

Ընկերական բարեւանքով
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
Կ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽԱՆՍՈՒ ՄԱՐՄԻՆ

Ս. Ե. 11

ՍՏ. ԵՍԱՅԵԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Թարածարքի մէջ գտնուածը, ամենայն հաւանականութեամբ, արագբուժած պատկէճ է բուն մամակի: Կը կրէ բուսական եւ ստորագրութիւն: Սեւ մելամ, ընթացիկ չափի մամակի միաբերք գծուար բուրբ, մէկ երես եւ քանի մը սոզ:

Պատասխան է Ս. Ե. 10 մամակին:
20 Հոկտ. 908
Կարմիր — Կեսարիա

Հ. Յ. Դաշնակցութեան
Կ. Պոլսոյ Պատասխանատու Մարմնոյն.

Յարգելի ընկերներ, շնորհակալութեամբ ստացայ Ձեր 7/20 թուակիրը:

Էֆէքէրէի կազմակերպութեանը արդէն ձեռնարկուած էր ասկէ առաջ, միայն Տոքթէօր Տէվլէթեանը մի թիւ սպասող դիրք էր բռնած, իւր ըրած դիմումին պատասխանը սպասելով: Երեւի վերէն թելադրուած ըլլու փափաքը զինքը կը մղէր ատոր: Այժմ ուրախալի է որ Ձեր տուած պատասխանին վրայ աւելի յաջող արդիւնքներ ձեռք պիտի բերենք յիշեալ գիւղին մէջ, որը կարեւոր վայր մըն է իւր հայաշատութեամբը, եւ բժիշկը բաւական լաւ ոյժ մ'է հոն:

Այժմ մեր կանոնաւոր խումբերու թիւը հասած է 18ի, որոնցմէ 15ը քաղաքի մէջ եւ 3ը թալաս, եւ օրըստօրէ անելու վրայ է ընկերներու թիւը: Թէ՛ այդ խումբերը վարելու եւ թէ՛ կազմակերպութիւնը բաղձացուած բարձրութեան հասցունելու համար, առժամեայ տեղական Կոմիտէ մը կազմեցինք, որը յուսով եմ որ լաւապէս պիտի կարողանայ իրականացնել Կեսարիոյ վրայ դրուած յոյսերը: Հետեւաբար, հաճեցէք յարաբերութիւն պահել նոյն մարմնոյն հետ, կազմակերպական գործերու համար (առայժմ իմ հասցէով): Ուղարկեցէք նաեւ մեզ Հ. Յ. Դաշնակցութեան եւ «Յա-

ռաջ» գրադարանի հրատարակութիւններէ: Նոյնպէս 15-20 ծրագիր ու կանոնադիր, նախապէս ուղարկուածները սպասած են՝ ասդին-անդին ղրկուելով: Ձեր յիշած «Նիզակը» Յակոբ Ժէպիտէլիկեանն է, որու արած խնդիրը եթէ կարող էք, կարծեմ բաւական նպաստաւոր է մեր շրջանի գինման գործին մէջ: Առայժմ քաղաքի դրութիւնը բաւական հանդարտ է, եւ փութով յառաջ կը տարուին ընտրական գործողութիւնները: Թուրք թեկնածու Ռիֆաթ պէյի դէմ եղած հակառակութիւնը բաւական սուր հանգամանք է ստացեր վերջերս, եւ կը կարծուի թէ անոր ընտրութիւնը պիտի ձախողի: Գալով մեր թեկնածուին, ինչպէս նախորդ նամակաւս ալ գրած էի, յաջողութեան մեծագոյն հաւանականութիւնը ունինք, եւ այս օրերս եթէ ընտրութիւնները պիտի վերջանան, եթէ ի նպաստ մեզ ըլլայ՝ ելքը հեռագրու կը տեղեկացնեմ Ձեզ:

Երկար գրելու ժամանակ չունենալով, կը սպասեմ Ձեր նամակին:

ՍՏԵՓԱՆ ԵՍԱՅԵԱՆ

Ս. Ե. 12

ՊՈԼՍՈՅ ՊԱՏ. ՄԱՐՄԻՆԻ ՆԱՄԱԿԸ

Գրուած պաշտօնաբարքի վրայ, հաւածօրէն սկզբնապէս սեւ, մերկայիս սրճագոյն-մամիշակագոյնի գարձոյ մելամով, սեղձ երկու երես: Պատասխան է Ս. Ե. 9իմ:

1908 Հոկտ. 28

Միւրեւի ընկեր Ս. Եսայիան
Կերմիր — Կեսարիա

Կը պատասխանենք Ձեր 15/28 թուակիրին: Ուրախ ենք որ վերջին շարաքներու մէջ թիւ մը ամէն տեղ կուտակուած քաղաքական խաւարը փարատած է, ինչպէս դուք եւս կը հաստատէք ձեր գրութեամբ: Արդէն այս մասին մենք հոս բոլոր կարելին ի գործ դրինք՝ ազդելու համար կառավարութեան վրայ:

Բայց եւ այնպէս իրաւունք ունիք չուսով կոնակ չդարձնելու ինքնապաշտպանութենէն, որ ի հարկին պիտի ապահովէ մեր ժողովուրդի կեանքին հետ՝ նաեւ Սահմանադրութիւնը: Եւ որպէսզի այս գործը տեսական եւ գործնական հողի վրայ դրուի, մենք այժմ կ'աշխատինք ոյժ տալ ամէն կողմ կազմելու ընկերակցութիւններ եւ անոնց միջոցով ստեղծելու՝ տեղւոյն վերայ, զէնքի շուկաներ: Անհրաժեշտ է որ դուք եւս յաջողիք նոյն նպատակով քով քովի բերել մէկ քանի մեզ համակիր վաճառականներ եւ անոնց հայթայթած դրամադրութիւն գործի ձեռնարկել: Գործ մըն է ասիկա որ թէ՛ շահաբեր է եւ թէ՛ օգտախնդիր, բաւական է որ մեր կազմակերպութիւնը միմիայն բարոյական ջանքերով մը ստանանք, պահանջելով որ հայթայթուած զէ-

քերը ըլլան մաքուր եւ ծախուին չափաւոր գներով: Եթէ կազմուի մեր շրջանին մէջ նման ընկերութիւն մը, ինչպէս կազմուած է ուրիշ շատ տեղեր, այն ատեն մենք նոյն ընկերութեան կու տանք մեր բարոյական օժանդակութիւնը եւ գործին բոլոր յարմարութիւնները:

Իսկ հարկ չկայ ձեզի յիշեցնելու անգամ մը եւս թէ ինքնապաշտպանութիւնը անհնար է՝ առանց կազմակերպութեան. ժողովուրդը պէտք է գիտնայ ասիկա եւ ըմբռնէ: Ուրախ ենք որ մեր տեղեկութիւնները յոյս կը ներշնչեն արդէն մեզի՝ չուսով այդ կազմակերպութիւնն եւս իրականացած տեսնելու:

Ամէն պարագայի տակ, սակայն, մեր տեղական պայմանները կը հարկադրեն ձեզ ըլլալ միշտ խոհական եւ շրջահայաց, որպէսզի մէկ կողմէն անտեղի կասկածներ չարթնան մեր թուրք հայրենակիցներու մէջ, միւս կողմէն մեր աշխատանքը դառնայ արգասաւոր ու հիմնական: Միշտ պէտք է նկատի ունենալ միջավայրի հասարակութեան մտաւորական վիճակը, մամքալիքէն(1), եւ ըստ այնմ շարժիլ: Ինչպէս կը տեսնենք, նոյնիսկ թալասի մեր ընկերներուն եւ մեր միջեւ թաքթի տարակարծութիւն կայ, ինչ որ մանաւանդ մեր շրջանի ներկայ փափուկ եւ հում կազմութեան միջոցին կրնայ օգտակար չըլլալ գործին: Մենք, ի հարկէ, ամենէն աւելի իրաւունք ունինք ձեզմէ պահանջելու բարոյական զոհողութեան մեծ չափը:

Հրատարակութիւններու գործը ամբողջովին յանձնած ենք «Արծիւ» մեր ընկերներուն, քանի որ անկարելի էր մեզի անոնցմով գրադրելու: Պէտք է հետզհետէ վարժեցնել մեր հասարակութիւնը՝ որ գիտնայ իր զարգացման միջոցները, ըլլան անոնք նիւթական թէ բարոյական, ինչ հայթայթել: Ուստի, պէտք է դիմէք այս մասին միշտ «Արծիւ»:

Կը խնդրենք որ ամէն աշխատութիւն յանձն առնէք հայրու ջուհները չցրուել եւ կեդրոնացնել մէկ հայ թեկնածուի վրայ, որպէսզի Կեսարիան եւս զոհ չերթայ միւս գաւառներու սխալին, զրկուելով ամէն հայ թեկնածուէ: Մի կարծէք որ թուրքերու ձայները միշտ ցրուած պիտի ըլլան, ընդհակառակը, պիտի տեսնէք որ վերջնական ընտրութեան միջոցին անոնք պիտի կեդրոնանան, ինչպէս բազմաթիւ օրինակներով ցոյց տուին այլ տեղեր: Թուրք վատահամբաւ թեկնածուներու, օրինակ մեր յիշած Ռիֆաթ պէյին դէմ, նախ անհրաժեշտ է տեղէն բողոքել՝ ժողովուրդի, հայ թէ թուրք, ստորագրութեամբ. հակառակ պարագային, կարող են հայերը միմեկին բողոքել: Առանց ասոր՝ դժուար է մեր միջամտութիւնը արդարացնել եւ կշիռը աւել տնոր:

Ընկերական բարեւանքով՝
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
Կ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽԱՆՍՈՒ ՄԱՐՄԻՆ

(1) Յրանքիւն բառ, — մտայնութիւն:

Ս. Ե. 13

ՍՏ. ԵՍԱՅԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽԱՆՍՈՒ ՄԱՐՄԻՆ

Գրուած մամակի գծուար երկբերք բուրբի մը առաջին բերքի երկու երեսներու վրայ: Հաւածօրէն սեւագրութիւն է: Կը կրէ ազգաբնի սրբագրութիւններ: Ստորագրութիւն չկայ:

7 Նոյեմբեր 908, Կեսարիա

Հ. Յ. Դաշնակցութեան
Կ. Պոլսոյ Պատասխանատու Մարմնոյն

Միւրեւի ընկերներ, ստացեր եմ Ձեր 15/28 թուակիրը:

Ընտրութիւնները վերջացան, մեզի համար անընդհատ եղաւ ելքը, որուն մէջ թիւ դեր չխաղաց անկանոնութիւնը: Կեսարիան իւր երկու գաւառակներով ունէր ընդամենը 101 Բ. կարգի ընտրող, որոնցմէ 22 հայ, 7 յոյն եւ մնացածը թուրք: Ընտրուող երեսփոխաններն են Գրգրգլը Հաճը Ղասրմ Հօճա՝ մուկոնդ կրօնաւոր մը՝ 54 ջուհով եւ Իմամզատէ Խօմէր էֆէնտի, սղէտ պուրժուա մը, 30 ջուհով: Ինչպէս կը տեսնաք թուրքերը այնչափ ալ կեդրոնացած չէին, բայց թէ մենք ինչու չյաջողեցանք ահաւաստիկ պատճառները: Առանց մէկ անմիջապէս յետոյ շատ ջուհ ստացողը եղաւ մեր թեկնածուն, 24 ջուհով:

Ա. Յոյն պատրիարքարանը մտաւորապէս ամիս մը առաջ շրջաբերական մը ուղարկած էր հոս, բայց յոյները չուզեցին մեզի հետ համերաշխիլ, հակառակ որ իրենք քանտիտա չունէին. արդիւնք ստակալի մուկոնդութեան մը, որով ստիպուեցայ ուղղել Ձեզ իմ երկու հեռագիրները: Հակառակ ատոր անդուլ անդադար աշխատելով անոնց հինգէն հաստատ խոստում առինք, որ մեզի պիտի տային իրենց ջուհէն, բայց ջուհարկութիւնից յետոյ դուրս եկաւ որ ստած են:

Բ. Կային նաեւ թուրք ընտրողներ, որոնք երդումով կը խոստանային մեզի իրենց ջուհէն. ատոնցմէ մին, որը գրել չի գիտեր եղեր, ընտրութեան օրը մի ուրիշ թուրքի գրել կու տայ իւր ջուհաթուղթը, եւ յետոյ վստահ լինելու համար կ'երթայ կարողացնել կու տայ միւթթիւն: Այս վերջինը այժմ կը վկայէ թէ այդ ջուհաթուղթը բոլորովին հակառակն էր ընտրողին մըքէն, այսինքն Արսէն Գալթայիանի անունը չէր գրուած. հետեւաբար միւսներն ալ այդ տեսակ կասկածներ կու տան մեզի: Ձմռանամ ըտելու թէ միւթթիւն պատրաստ է հաստատապէս վկայել հիմա, կ'ընէ որ ժողովին մէջ ձայն չհաննայ, անոր համար որ հաւանական կուրիէ մը կը վախնար:

Գ. Իմամզատէին մարդիկը հեռուոր տեղերու

բացակայ ընտրողներուն տեղ ուրիշ մարդիկ տանելով ժողովին մէջ եւ վկայելով թէ սրանք բուն ընտրողներն են, քուէ տալ տուած են կարգ մը մարդոց:

Դ. Յիշեալ Գրգրզը Կոստան ընտրողներուն մէկ մասը իրեն տուել բերել տալով, կրօնական երգում ընել տուած է անոնց, որ իրեն ցոյց տուած մարդոց տան քուէին: Ինչպէս պիտէ այս երգումին առջեւ թուրքերը կը մոռնան ամէն ինչ:

Այս վերջին երկու պարագաները բացարձակապէս օրէնքի հակառակ եղած ըլլալով, տեղիս թուրք եւ հայ խումբի մը կողմանէ հեռագրաւ բողոքած են թէ՛ կուսակալին եւ թէ՛ Պոլիս: Պոլիսը տակաւին չպատասխանեց, կուսակալն ալ տարտամ հրահանգ մը ուղարկած է (քննեցէք եւ Ձեր միտքը յայտնեցէք), այդչափ միայն: Բողոքողները սակայն չեն ընկրկած եւ հաստատ փաստեր ունին՝ ընթացք տալու համար իրենց բողոքին, եթէ թրքական արդարութիւնը կամենայ գործ տեսնալ: Միւս կողմէ կառավարիչը, որ զգուշի տեսակէն երկզիմի եւ հայատեաց մարդ մը ըլլալը արդէն դուրս տուաւ, երէկ փութով ճամբայ հանեց երեսփոխանները, կարծելով թէ ասով պիտի խեղդէ ժողովուրդին սրտմտութիւնը:

Ս. Ե. 14

ԱՐՇԱԿԻ ՆԱՄԱԿԸ ՍՏ. ԵՍԱՅԵԱՆԻՆ

ԸՅքացիկ չափի (21,5x28 սմ.) ճամակի գծաւոր բուրձի վերայ, սեւ մելամով գրուած: Մէկ քերթ, երկու երես:

908 Նոյ. 10, Ատանա

Միւրեւի Ստեփան

Թէպէտեւ ժամանակին ստացած էի 908 Հոկ. 4 թուակիրդ, սակայն անմիջապէս գործով մը տեղէս մեկնած ըլլալուս պատճառաւ չկարողացայ անմիջապէս պատասխանել. անշուշտ ներողամիտ կը դտնուիք: Բոլոր գրածներդ ուշադրութեանս առարկայ դարձան, եւ շատ ալ իրաւացի էք: Եթէ դիտնայիք ես եւս որքան կը փափաքէի անգամ մը գալ քովդ. պէտք էր վստահ ըլլայիք թէ եթէ կարելի լինէր՝ առանց վայրկեան մը կորսնցնելու անմիջապէս պատրաստ էի գալ. մանաւանդ որ մայրս, քոյրս եւ քեռայրս եւս շատ կը ստիպեն որ անպատճառ անգամ մը երթամ հայրենիք, բայց ստիպուած անոնց եւս ժխտական պատասխան տուի, որովհետեւ նիւթական խիստ անձուկ վիճակի մէջ կը գտնուիմ. շատ նեղութիւններ քաշեցի, նոյնիսկ նախ խնդիրս ջուրը կ'իյնար, սակայն երկու ազնիւ ընկերներու միջոցաւ հազիւ կարողացայ պզտիկ դրամագլխով մը կարգադրել. եւ այս օրերս գործի պիտի

սկսիմ, կարծեմ ազնուութեանս վրայ վստահ էք. եթէ բարի կամեցողութեամբ կարգադրուելիք խնդիր մը լինէր, առանց Ձեր դրելուն արդէն Ձեր մօտ կը լինէի որուն այնքան ցանկացող եմ:

Պարտք կը զգամ յայտնելու, թէ դեռ շատ մը փութութիւններէ... կարծեմ պիտի անցնինք. եւ ատոր համար ինքնապաշտպանութեան հարցը ամենակենսական եւ անյետաձգելի պահանջ մը դարձած է մեզի համար:

Արդեօք ի՞նչ կը խորհիք դուք, պէտք եղած միջոցներուն կը դիմէ՞ք. մեր հարուստ ջոջ աղաները դարձեալ իրենց քսակին բերանը պինդ գոցած են, պէտք է հասկցնէք վտանգը, եւ եթէ կարելի է հանդանակութեան մը ձեռնարկէք, եւ եթէ պատրաստ դրամ լինի այնպէս կը կարծեմ թէ միջոցներ չեն պակսիր ուզած զէնքերնիդ առնելու ինքնապաշտպանութեան համար. ատոր համար չըլլայ թէ կազմակերպութեան վրայ յոյս դնէք որ թող օգնէ Նալյն, ինքնապաշտպանութեան համար բացարձակապէս կը մերժէ ոեւէ օգնութիւն, եւ մանաւանդ մեր կողմէ եւս կատարեալ անխղճութիւն պիտի լինէր օգնութիւն խնդրել, երբ անդին Երկիր աւելի ստիպողական պահանջներ կան, որ կենաց եւ մահու խնդիր է. եթէ պէտք եղած միջոցները չխորհուիք բոլորովին պիտի կորսուին. ամէն ջանք մի խնայիք հանգանակութիւնը յաջողցնելու համար:

Տիպրանի մասին գրածներդ թէպէտեւ արդարացի են, սակայն սիրելի՛ Ստեփանս, ընկերականութեան մէջ այդպիսի խնդիրներ կարեւորութիւն չունին: Ի՞նչ բնեք, ատոր ալ բնութիւնը այդպէս է. սակայն երբեք ներելի չէ որ նամակը անպատասխանի թողուք, պէտք է պատասխանէք եւ զլացնէք իրեն: Սեղրակէն նամակ առի՞ք, ի՞նչ պատասխանեց. մնացեալ հաշիւը կարգադրե՞ց. զրէ շուտով:

Ձերմ համբոյրներով ԱՐՇԱԿ(1)

Յ. Գ.— Խնդրեմ եթէ միջոց ունիս նախ վերաբերեալ գրածներուս առթիւ մանրամասնութեամբ գրէ:

Արսէն էՖ.ի(2) յաջողութեան համար պէտք եղած ջանքն չզլանա՛ք:

ՆՈՅՆ

(1) Ամենայն հաւանականութեամբ՝ Արշակ Քէհեայեան (տես Ս. Ե. 5):
(2) Արսէն Գալփայեան, Օսմանեան երեսփոխանական ընտրութիւններու շ. Յ. Դաշնակցութեան քեկնածու՝ Կեսարիոյ ՉՔԻՄՆԵՑ: Բոս երեսփոխան՝ ճամակագիրը ամտեղեակ է Կեսարիոյ ՉՔԻՄՆԵՑ երեսփոխանական ընտրութիւնները հայոց անպատասխան վերջացած ըլլալէն:

Ս. Ե. 15

ՊՈԼՍՈՅ ՊԱՏ. ՄԱՐՄՆԻ ՆԱՄԱԿԸ ԿԵՍԱՐԻՈՅ ՆՈՐԱԿԱԶՄ ԿՈՄԻՏԵՒՆ

Պաշտօնաբուրձի վրայ, սեւ մելամով, երկու երես:

1908 Նոյմ. 13/26

Հ. Յ. Դ. Կեսարիոյ Կոմիտէին

Ընկերներ

Ուրախութեամբ կը տեղեկանանք ընկեր Եսայեանի Հոկտ. 21 թուակիրէն թէ արդէն կազմուած է ձեր առժամեայ կոմիտէն եւ գործի ձեռնարկած: Հաստատելով ձեր կազմը, կը ցանկանք կենսալից գործունէութիւն եւ բեղմնաւոր աշխատանք:

Տարակոյս չունինք թէ ձեր առաջին պարտաւորութիւններէն մէկը պիտի նկատէք սերտ ու ընկերական յարաբերութիւն պահպանել տեղական բոլոր խումբերուն հետ, արթնցնելով անոնց մէջ ինքնագործունէութեան ողին եւ կազմակերպական կապը ուժեղացնելով թէ՛ ձեր եւ թէ՛ շարքերուն մէջ փոխադարձաբար:

Անկասկած, ձեր ջանքերուն եւ եռանդուն գործունէութեան շնորհիւ՝ կազմակերպութիւնը շուտով պիտի ընդգրկէ Կեսարիոյ հայութեան լաւագոյն տարրերը, եւ մենք չպիտի ուշանանք ողջունելու կազմակերպական օրինաւոր ընտրութեամբ գործի կանչուած Կոմիտէն կամ Կեղրոնական Կոմիտէն:

Համաձայն ընկեր Եսայեանի յանձնարարութեան՝ այս փոստով արդէն կը զրկենք 15ական օրինակ ծրագիր ու կանոնադիր սովորական հասցէով, մինչեւ որ ընդունինք ձեր պաշտօնական հասցէն:

Գալով կազմակերպական հրատարակութեանց՝ պրոչիւր, պատկեր ու բաց-նամակ, պիտի խնդրէինք որ դիմէիք ուղղակի «Արծիւ» դրատան ընկերներուն, որոնց միայն յանձնուած է վաճառման գործը:

Ինչպէս կ'երեւի երեսփոխաններէն, Կեսարիոյ մէջ եւս ընտրական գործունէութիւնը վերջացած է մեզի համար աննպաստ եղանակով մը: Պէտք է աւելցնել որ ընտրական զեղծումներն ու կանոնազանցութիւնները չափազանց շատ են եւ մենք ստիպուած ենք յիշատակաբար մը ներկայացնել Խորհրդարանին՝ իբրեւ բողոք: Հետեւաբար, բարի եղէք մեզի հաղորդել այդ կարգի վաւերական ու մանրամասն փաստեր՝ եթէ պատահած են ձեր վայրին մէջ եւ եթէ գիտէք անոնց մասին: Անհրաժեշտաբար պէտք է միաժամանակ հասարակութեան կողմէն ներկայացնել բողոք թէ՛ կառավարութեան եւ թէ՛ Պատրիարքարանին, թուարկելով փաստա-

ցի կերպով ու մանրամասնօրէն կատարուած ապօրինութիւնները:

Սեղմելով ձեր ձեռքը եւ դարձեալ մաղթելով յաջողութիւն, կը մնանք ընկերական բարեւեներով՝

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ Կ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՊԻՍ. ՄԱՐՄՆԻ

Ս. Ե. 16

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄՆԻ ՆԱՄԱԿԸ ՍՏԵՓԱՆ ԵՍԱՅԵԱՆԻՆ

Գրուած է Հ. Յ. Դ. Պոլսոյ Պատ. Մարմնի երկու պաշտօնաբուրձի վրայ (թուագրուած 1 եւ 2), առաջինը երկու եւ երկրորդը՝ մէկ երես: Հաւածօրէն սկզբնապէս սեւ, մելամը մերկայիս գարած է բաց-սրճագոյն:

1908 Նոյմ. 26

Յարգելի ընկեր Եսայեան Կեսարիա

Յաջորդաբար ստացած ենք ձեր երեք նամակներն ալ, այս ամսուան թուականներով(1), որոնց մէջ զբախտաբար պէս թուարկած էիք ընտրական զեղծումները: Գո՛հ ենք ձեր տուած փաստերէն եւ կը ջանանք օգտուել անոնցմէ, ապահով եղէք: Ուրախ ենք որ թուրքերն եւս միացած են հայերու հետ՝ բողոքին մէջ. պէտք է աշխատիք ժողովրդական այդ բողոքը թուրքներ չտալ, ինչ որ մեծապէս ուժ պիտի տայ այստեղ մեր ձեռք առած միջոցներուն: Հաւանական է որ քանի մը օրէն հարկադրուած ըլլանք Պոլսոյ մէջ կազմակերպելու մեծ միթիւնկ մը՝ բողոքելու համար ամբողջ հայութեան կողմէ՛ զաւանդներու մէջ կատարուած ընտրական զեղծումներուն եւ անարդարութեանց դէմ:

Ինքնապաշտպանութեան համար պատրաստ ենք ձեզի հայթայթել տասը կրականոց ատրճանակներ՝ որքան ուղէք, բաւական է որ փոխադրութեան գիծն ու միջոցները դուք ճշդէք, ներկայացնելով մեզի հարկաւոր հանգամանքները: Տասը կրականոցներէն դուրս խորհուրդ չենք տար որ ուրիշ զէնքեր նախընտրէք: Արդեօք մեծ ծախսի՞ կարօտ է որ ընկեր մը ճամբայ հանէք յատուկ այս նպատակով դէպի Իզմիր — քանի որ Պոլիսէն աւելի մօտ է անիկա ձեզի եւ կը ներկայացնէ աւելի դիւրութիւններ —, ուր պիտի տան մեր ընկերները ամէն զոհացում ձեզի: Եթէ համաձայն էք այս առաջարկութեան, առանց այլեւս ժամանակ վատնելու, նշանակուած ընկերը ճամբայ դրէք դէպի Իզմիր, ուր հասնելէ ետք կը գտնէ ընկեր Հայկ Բաթրանեանը եւ անոր միջոցով կը ներկայանայ Կոմիտէին, ներկայացնելով իր կարգին իր պահանջները:

Նոյմ. 13/26 թուականով դարձեալ ձեր անուան դրկուած է 15ական օրինակ ծրագիր ու կանոնադիր, որոնք անկասկած մինչև հիմա ստացած կ'ըլլաք: Եթէ այս անգամ ալ կորսուած են դժբախտաբար, հարկադրուած պիտի ըլլանք նորեր դրկելու՝ եթէ բարի ըլլաք իմացնել միայն մեզի:

Ձեր քաղաքի Ֆրանսական վարժարանի երկու հայ սաներ՝ Կարապետ Չիչէկեան եւ Մկրտիչ Գազանճեան սիրալիր եւ ազնիւ զգացումներով լեցուն նամակ մը ուղղած էին մեզի որոնց յայտնեցինք մեր շնորհակալութիւնը, խնդրելով իրենցմէ կապ հաստատել տեղւոյն մարմնոյն հետ: Վստահ ենք որ ձեր ուշադրութիւնը կը դարձնէք այս պատանիներուն վրայ եւ կ'աշխատիք թէ՛ ձեր գաղափարական թելադրութիւններով, թէ՛ ձեր հրատարակութեանց միջոցով բարոյապէս ներգործել անոնց հոգեկան կազմութեանը վրայ: Ուսանողութիւնը այն շրջանն է, որուն ամենէն աւելի ուշադրութիւն դարձնելու են մեր գործիչները:

Հակառակ ձեր խոստումին, մինչև այժմ նորակազմ Կոմիտէն տակաւին պաշտօնական յարաբերութեան մէջ չմտաւ մեզի հետ: Անշուշտ ընտրական պայքարը խլեց մեզմէ բաւական ժամանակ եւ արգելք եղաւ զուտ կազմակերպական աշխատութեանց: Բնական է որ այդպէս ըլլար եւ դուք ուրիշ կերպ չէիք կրնար վարուիլ: Այժմ որ ձեր միտքը աւելի խաղաղ է, կը յուսանք այլևս ձեր բոլոր ուժերը կը տրամադրէք կազմակերպական ներքին գործունէութեան, խումբերու կազմաւորման եւ կապակցութեան, ինչպէս նաեւ կուսակցական յարաբերութեանց կանոնաւորութեանը: Եւ որքան կազմակերպութեան ներքին ուժը աւելնայ՝ նոյնքան ալ ձեր պարտականութիւնները կը սկսին թեթեւալ, որովհետեւ աշխատանքի բաժանումը եւ հաւաքական գործը կը դիւրացնէ սկզբնական շրջանի դժուարութիւնները:

Թալասի ընկերներուն ապահովարար կ'այցելէք յաճախ եւ ձեր փորձառութեամբն ու խոհական թելադրութիւններովը անոնց գործելու ընթացքը կ'ուղղէք: Գիտէք թէ գործիչին համար կայ միակ մէկ բան, — դառնալ համակրական կեդրոն մը՝ կապելու համար տեղական բոլոր ուժերը կազմակերպութեան հետ: Բընական է որ պատահին ընկերներու մէջ հայեացքներու տարբերութիւն, քննադատութիւն, տարակարծութիւններ, եւ անտարակոյս անհրաժեշտ են նոյնիսկ ասոնք՝ կենսունակութեան տեսակէտով, որոնցմէ պէտք չէ ո'չ սրանեղիլ, ո'չ ցրտանալ, եւ ոչ ալ դժգոհիլ, այլ զանոնք ծառայեցնել միմիայն յօգուտ ինքնագիտակցութեան եւ կազմակերպական արդիւնաւորութեան:

Լաւ ըլլա՞ր արդեօք որ առժամայ Կոմիտէն կազմէք ենթակոմիտէներու եւ մէկ քանի նոյն վայրին մէջ զանուոյ մնացեալ խումբերու ներկայացուցիչներէն, որպէսզի յառաջիկային բոլոր ընկերները գոհ ըլլան եւ դժգոհութիւններ չծագին: Անշուշտ թելադրութիւն

մըն է միայն ասիկա, որուն հետեւիլ կամ ոչ մեզի կը մնայ՝ համաձայն տեղական պայմաններուն:

Կոմիտէի կազմութենէն ետք այլևս աւելորդ կ'ըլլայ մեզի՝ այլևայլ խումբերու հետ յարաբերութիւն պահել, համաձայն կանոնադրի՝ որուն տրամադրութիւնները Կոմիտէն կը բացատրէ բոլոր խումբերուն:

Ընկերական բարեւներով

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
Կ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍՈՒ ՄԱՐՄԻՆ

(1) Այգ գրութիւնները կը պակսիմ Ստ. Եսայեանի քարածրարէն:

Ս. Ե. 17

ԲժԻՇԿ ԽԱՉԻԿ ՏԵՏՎԼԵԹԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Նամակի միաբերք գծաւոր բուզքի վրայ. ընթացիկ չափ: Գրուած է սեւ մելանով, մէկ երես:

Էֆէրէ, 1 Դեկ. 908

Մեծայարգ

Պ. Ստեփան Եսայեան

Կեսարիա

Սիրելի ընկեր,

Ձեր 28 Նոյ. թուակիր նամակը ինչպէս նաեւ պրոչիւրները ստացայ, մի քանի օրուայ մէջ կը յուսամ կը սպառի. իմ սպասած պրոչիւրներս չեն ընդհանրապէս: Աստուծոյ մէկ մասը Պէրէկեսի թողուցի, մի քանի օրէն հաշիւը ձեզ կ'ուղարկեմ:

Տրդատ եպիսկոպոսի գործիչները ոգի ի բռին պրոպականտ կը մղեն Դաշնակցութեան դէմ ի Պէրէկեսի, սակայն խնդիրը իմանալով անմիջապէս պէտք եղածը կարգադրեցի: Աւետիքեան խումբերը կազմակերպել յանձն առաւ եւ ապագայ ընկերներու մի քանիներու ներկայութեանը ամէն բան խոստացաւ ընել: Ասով հետ մէկտեղ թէ՛ հաճի Ստեփան աղան եւ թէ ես միշտ հրկոզ աչք մ'ունինք վրան:

Վանքը սպասուած ընկերը դեռ ժամանած չէ. այդ մասին տեղեկութիւն տուր եւ պէտք եղածը եթէ զինք տեսնես սնօրինէ:

Էֆէրէի կազմակերպութիւնը աւելի լուրջ հանգամանք մը ստացած է. պաշտօնականութիւն ստանալու համար Կեսարիոյ կեդրոնին պիտի դիմենք անշուշտ, կամ այդ մասին ի՞նչ հրահանգ պիտի տաք, ի՞մացուցէք:

Մնամ(1)
ԽԱՉԻԿ ՏԵՏՎԼԵԹԵԱՆ

(1) Անթրիպանի:

Ս. Ե. 18

ԷՎԷՐԷԿԻ ՆՈՐԱԿԱԶՄ ՄԱՐՄՆԻ
ՆԱՄԱԿԸ ԿԵՍԱՐԻՈՅ ԿՈՄԻՏԵԻՆ

Գրուած մամիշակագոյն մելանով, մամակի երկբերք բուզքի (գծաւոր, ընթացիկ չափ) ա. եւ դ. երեսներում վրայ: Միակ գրութիւնն է՝ ուղղուած Կեսարիոյ Կեդր. Կոմիտէին: Կեթարքիմի բէ Կեդրոնական բառը գրուած է քիւրմացաբար:

8 Դեկ. 908, Ֆէնէսէ

Պատ. Տիարք

Անդամք Վարչ. Խորհրդոյ

Կեդր. Կոմիտէի

Հ. Յ. Կուսակցութեան

Կեսարիոյ

Արդէն կազմակերպութեան մը պէտքն զգալի էր սեղույս համար, Ձեր թելադրութիւններն փութացուցին այդ դէպքը:

Ըստ ծրագրի կազմակերպեցինք մեր ենթակոմիտէն իրեւ Հիմնադիր Անդամք: Այս հիման վրայ կը սկսինք մեր պաշտօնին՝ ողջունելով զձեզ իրեւ ընկերակից եւ գործակից եղբայր, վստահելով Դաշնակցութեան աշակցութեան:

Առ այժմ մեր միակ եւ անմիջական պէտքն է պաշտպանողութեան խնդիրը. ուստի առաջին առթիւ հաճեցէ՛ք փութացնել պատասխանը մեր հետեւեալ հարցմանց.

- Ա. Ի՞նչ տեսակներ ունիք եւ որքա՞ն կրնաք տրամադրել մեր խումբին.
- Բ. Ի՞նչ են ձեր պայմաններն ու միջոցները.
- Գ. Պիտի կրնա՞ք ուժանակ տալ մեզ որքան ուղեւոր. ի՞նչ են զիններն ու պայմանները, փոխադրութեան կերպը եւլն.
- Դ. Ներկայացուցի՞չ պիտի դա՞յ եւ ե՞րբ եւ ի՞նչ պիտի ըլլան մեր նախնական պատրաստութիւններն մինչև նոյնին ժամանումը:

Տիարք, պէտք կը տեսնենք շեշտել, թէ մեր դըրխաւոր եւ անմիջական պէտքն է ուժանակի խնդիրը, հետեւաբար այդ մասին մեզ ընձեռուած դիւրութիւնները պիտի ըլլան Պատ. Կոմիտէի մեզ ընկիւղ ձեռնառութեանց ամենէն գլխաւորը եւ հակառակ. հետեւաբար կը խնդրենք որ այս մասին շնորհ ընէք ընձեռել պէտք եղած դիւրութիւնները:

Մեր կազմակերպութեան լրացման համար պէտք կը զգանք ներկայացուցիչ մ'ունենալ մեր քով իրեւ ա-

ռաջնորդ. այս մասին հաճեցէ՛ք իմացնել Վարչութեան կարգադրութիւն: Սպասելով Ձեր անմիջական հրահանգներուն

Մնամք անկեղծ եւ համակիր զգացումներով

Ի ԴԻՄԱՑ

ՆՈՐԱԿԱԶՄ ՎԱՐՉ. ՄԱՐՄՆՈՅ ԷՎԷՐԷԿԻ
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Ս. ՏՕՆԻԿԵԱՆ
Ս. Ե. ՔԵԼԼԷՃԵԱՆ
ՏՕՔԹ. Կ. ՏԵՄԻՐՃԵԱՆ
ԳՐԻԳՈՐ ՔԵՕԼԷՆԵԱՆ
ՄԷՐԿԵՐՈՍ Յ. ԱԶՈՒԿԵԱՆ
ՍԱՐԳԻՍ Յ. ԹՈՐՈՍԵԱՆ

Յ. Գ.— Հաճեցէ՛ք ճշդել մեր թղթակցութեանց պարագաները: Դուք ձեր գրութիւնները ուղղեցէ՛ք Սարգիս Քէլլէճեանի:

Ս. Ե. 19

ԲԺ. ԽԱՉԻԿ ՏԵՏՎԼԵԹԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Գրուած սեւ մելանով, մամակի երկբերք բուզքի (ընթացիկ չափ) ա. եւ դ. երեսներում վրայ:

Էֆէրէ, 16 Դեկ. 908

Մեծապատիւ

Ստեփան Էֆ. Եսայեան

Կեսարիա

Սիրելի ընկեր,

Անցեալները երեքշաբթի եւ չորեքշաբթի շատ սպասեցի ձեզ Կեսարիա, բայց կը ցաւիմ որ չկրցայ տեսնուիլ:

Ս. Կ.(1) վանքի դպրոցին մէջ աշակերտները շատ ոգանչելի կազմակերպութեամբ մը յեղափոխութիւն յարուցին դպրոցին հին ծերունի գրութեան պաշտօնէութեան դէմ. մենք ալ մերովսանն պէտք եղած խրախոյսները տուինք եւ ի հարկին զիրենք գործնականապէս ամէն կերպով պաշտպանել խոստացանք, քաջալերեցինք. վերջապէս մանրամասնութիւնները երկար բարակ են, յաջողութիւնը կատարեալ եղաւ! Կը տեսնէք, կամաց կամաց ամէն կողմէն ինքնագիտակցութիւնն է որ կ'արթննայ: Աղէկ նշաններ են ասոնք:

Շրջակայից կազմակերպութեան գործը լաւ կ'երթայ, պատրաստ կան, միմիայն պաշտօնական հանգամանք ստանալու համար կը սպասուի. այդ մասին ի՞նչ նոր հրահանգ ստացաք կամ ի՞նչ ունիք մեզ խօսելու, գրեցէ՛ք: Կուսակցութիւններու միութեան լուրեր կը

լուսին. պաշտօնական ինչ ունիս իմացուր: Գիրքերէն մէկ մասը մեզի ետ զրկած էք, ու դ հաշիւէն որչափ կը պահանջես նէ Ղազէրեան Տեղաւորն էֆէնտիէն կրնաք ստանալ, գրած եմ իրեն:

Այս շարժու Կեսարիա չպիտի կարենամ իջնել, հետեւաբար չպիտի կրնանք տեսակցել, ըստ որում այսօր կամ վաղը երկար նամակ մը գրելով ընդհանուր կերպով տեղեկութիւններ տուր:

Մեզի «Դրօշակ» զրկէ մի քանի հատ:

Մնամ յարգանք՝
ԽԱԶԻԿ ՏԷՕՎԼԷԹԵԱՆ

(1) Հաւանորէմ՝ Սուրբ Կարապետ (Կեսարիոյ):

Ս. Ե. 20

ԲԺԻՇԿ ԽԱԶԻԿ ՏԷՕՎԼԷԹԵԱՆԻ ԵՐԿՏՈՂԸ

Գրուած սեւ մելամով, քառակուսի գծաւորումով մամակի փոքր բուլբի վրայ (15x20,5 սմ.):
Նայել եւ՝ յաջորդը (Ս. Ե. 21):

էֆէրէ, 18 Դեկ. 908

Մեծ.

Ստեփան էֆ. Շապիան

Սիրելի ընկեր,

16 թուակիր նամակս կը հաստատեմ: Խնդրած էի ձեզմէ անդամակցութեան հրահանգներ եւ կամ այլ պաշտօնական դիր. մենք այդ պատճառներով անգործ մնացած ենք. ուստի, խնդրեմ, եթէ դեռ շատ պիտի սպասենք յայտնեցէք պատճառները, որպէսզի ըստ այնմ վարուինք:

Ղազէրեանէն կը յուսամ դանձեցիք ձեր գիրքերու պաշտօնական արժէքը: Նամակով մը յայտնեցէք ձեր Պատասխանատու Մարմնէն ստացած հրահանգները:

Մնամ ձերդ՝
ԽԱԶԻԿ ՏԷՕՎԼԷԹԵԱՆ

Ս. Ե. 21

ԲԺԻՇԿ Խ. ՏԷՕՎԼԷԹԵԱՆԻ ԵՐԿՏՈՂԸ

էֆէրէ, 19 Դեկ. 1908

Մեծ.

Ստեփան էֆ. Շապիան

Կեսարիա

Այ խելքս կարեց որ նամակներով չպիտի կարենամ լսելի ընել ձայնս: Ա՛խ, բարեկամս, չգիտեմ ինչո՞ւ ու-

սանկ կ'ըլլայ կոր: Խնդրեմ ձեր օրինաւոր մուտքը կամ պաշտօնական դիրքը ինչպէ՞ս պիտի ճշդուի, ըսէ՛ք: Եթէ բերանացի հրահանգներ ունիք, տուէք: Եթէ գրաւոր՝ նոյնպէս, եւ եթէ, օլուր ետ, դեռ ձեզի որեւէ իրաւասութիւն տրուած չէ, այդ ալ հասկնանք: Մինչեւ հիմա շատնց Պատասխանատու Մարմնոյն հետ կը թղթակցէի: Սա կէտը միայն պէտք է գիտնալ՝ որ երիտասարդութիւնը բռնել, կենալ, զսպել շատ դժուար է. հետեւաբար դժուար կացութեան մէջ կը գտնուիմ: Ինչո՞ւ այսպէս կ'ընէք կոր. խնդրեմ նամակս ստանալուդ, ստորագրութեան համար տետրակ կամ այլ գրութիւն՝ ինչ որ է զրկեցէք, կամ չէ նէ պարզապէս ձեւակերպութիւններուն վերահասու ըրէք զմեզ:

Մնամ սպասող՝
ԽԱԶԻԿ

Ս. Ե. 22

ՊՈԼՍՈՅ ՊԱՏ. ՄԱՐՄՆԻ ՆԱՄԱԿԸ
ԿԵՍԱՐԻՈՅ ԿՈՄԻՏԷԻՆ

Պաշտօնաբուլբի վրայ, սեւ մելամով, երկու երես:

1908 Դեկտ. 25

Հ. Յ. Դ. Կեսարիոյ Ենթակոմիտէին

Ընկերներ,

Կը պատասխանենք ձեր Դեկտ. 12/25 ամսաթիւին: Շատ դժ էնք որ՝ չնորհիւ ընկերներու աշխատութեան, կազմակերպութիւնը կ'առնէ իր բազմալի ծաւալը ձեր շրջանի մէջ: Հաճոյքով կը սպասենք նորակազմ ենթակոմիտէի տեղեկագրին:

Ձէնքի դիրքութեանց եւ այլ այս կարգի յարակից խնդիրներու մասին ոչինչ կրնանք ըսել՝ Ոսկեհանքի ընկերներու կողմէն: Հարկ է այս կէտերը կարգադրել անձամբ եւ տեղւոյն վրայ. մենք տարակոյս չունինք թէ Ոսկեհանքի ընկերները չեն զլանար բոլոր իրենց կարելին՝ օգտակար ըլլալու ձեզի:

Համաձայն ձեր ցանկութեան, այս փոստով իսկ ձեր հասցէին ճամբայ կը հասնենք 100 հատ կոմիտէական փլանկ, 20 հատ խմբատետր եւ 2 պրակ խմբական ընկալադիր, ինչպէս նաեւ 100 օրինակ Սեպտ. և Հոկտ. միացեալ «Դրօշակ»ի համարէն: Ի դէպ, կը խնդրենք, որ «Դրօշակ»ի հարցը կարգադրէք ասկէ ետք ուղղակի ժընեւի հետ, տալով ձեր հասցէն եւ նշանակելով ձեր ուզած համարները թիւը. ասով թերթերը թէ՛ շուտ կը ստանաք, թէ՛ չփոթութիւններ տեղի չեն ունենար եւ թէ մանաւանդ փոստի կրկնակի ծախս չի վճարուի՝ բոլորովին աւելորդ տեղը: Նոյնպէս կը խնդրենք որ

«Դրօշակ»ներու բաժնեգրները դանձէք կանոնաւորաբար եւ հաշիւները պահէք առանձինն, ներկայացնելու համար Բիւրոյին առանձին:

Գիտէք թէ կղերականութիւնը դասակարգ մըն է, որուն գոյութեան հակառակ ենք մենք սկզբունքով, հետեւաբար, մանաւանդ այժմ ոչ մէկ կերպով կրնանք համակարծիք ըլլալ որ ձեր ընկերներէն ոեւէ մէկը նախընտրէ այդ ասպարէզին մէջ զաղափարական գործունէութիւն փորձել: Ամէն պարագայի տակ, կողմնակից ըլլալով նաեւ խղճի ազատութեան՝ ընկեր Նիդրլանտի կարող է հետեւիլ իր կոչման:

Մեր Սերաստիոյ Մարմնին հասցէն է՝

Արամ Երանոսեան
ուսուցիչ Արամեան վարժարանի
Կեսարիա

Յատկապէս ձեր ուշադրութիւնը պիտի խնդրէինք Եղկատի շրջանին նկատմամբ, որուն գործունէութեան վրայ մեծ ներգործութիւն կարող է ունենալ ձեր տաք յարաբերութիւնը այնտեղի Մարմնին ու ընկերներուն հետ:

Ընկերական բարեւանքով
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
Կ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽ. ՄԱՐՄՆ

Ս. Ե. 23

ՎԱԶԳԷՆԻ ՆԱՄԱԿԸ ՍՏ. ԵՍԱՅԵԱՆԻՆ

Փակելու համար Ստ. Շապիանի 1908ի քաղաքաբար, կու տամք ՎԱԶԳԷՆ ստորագրուած այս թանկը՝ որ, քէն բուսկամ չի կրնար, բայց ըստ բովանդակութեան կը պատկանի 1908ի սմբամ կամ աշնամ ամիսներուն: Գրողի իմաստը մեզի ամենաօր է: Գրուած է մամիշկազոյն մելամով, ճամակի ընթացիկ սթաբիլ բուլբի վրայ, երկու երես:

Մտփոխով մակագրուած է՝ «Այս թանկը, ըստ երեւոյթիմ, գրուած է 1908իմ: Վ. Նաւասարդեան 30/III/40»:

Մեծ. Ստեփան էֆ. Շապիան

Ձեռն նամակ չտուացայ: Կը ցուիմ որ շատ հեռու եմ: Ինչ կ'ընէք, ինչ նոր հրահանգներ կու տայ Հ. Յ. Դաշնակցութիւնը: Այս 2-3 ամսուայ ժամանակամիջոցը մինչեւ Երեսփ. Ժողովի գումարուիլը անստգիւտ առիթ մ'է ժողովուրդը կազմակերպելու. ասկէ վերջ դեռ պէտք պիտի ունենաք զօրաւոր կազմակերպութեան մը: Աշխատեցէք կեդրոն մը կազմել ի Կեսարիա որեւէ ուսումնական սկզբունքով, որպէսզի պէտք եղած ժամանակ, անակնկալներու առջեւ չզստուինք: Ես այսպէս կ'առաջարկեմ ընկերներուն:

Բարեւելով կը մնամ
Ձերդ
ՎԱԶԳԷՆ

(1) Բնագրիմ մէջ ստորագրուած:
(2) Գրուած ֆրանսերէնով, — Յեղափոխական Ընկերակազմ:
(3) Պէյրուսի ծածկամուտը:

Ս. Ե. 24

ԲԺ. ԽԱԶԻԿ ՏԷՕՎԼԷԹԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Գրուած սեւ մեյաճով, Յամակի գծաւոր փոքր չափի (15x20,5 սմ.) երկու անգամ բուլղի վրայ (Իրաւաճիւրք մէկ էրես):

Նայք եւ յարգաք՝ Ս. Ե. 26:

Էֆէրէ, 1 Յունուար 1909

Մեծապատիւ

Ստեփան էֆ. Եսայեան,

Ծնորհաւոր Նոր Տարի!!!

Սիրելի ընկեր,

Ձեր Դեկտ. 20 թուակիր հրահանգներու յենյով կազմեցինք տեղւոյս առժամանակեայ ենթակոմիտէն: Տեղեկագիրն յաջորդով:

Մենդեան երկրորդ կամ երրորդ օրը պիտի ընենք բացումը մեր հասարակաց ձրի ընթերցատան, որն որ կահաւորման վիճակի մէջ է:

Պէտքէսին դեռ խումբերու կազմութեան վիճակի մէջ կը գտնուի եւ կը յուսամ որ այս շաբթու վերջը պիտի ընտրէ իւր առժամեայ ենթակոմիտէն:

Այսօր կ'իջնեմ Մանճըրն, ուր պատրաստ կան երեք խումբեր. անոնք յօժարակամ պատրաստ են մեզի հետ համերաշխաբար ընտրել մնայուն ենթակոմիտէն, իսկ Պէտքէսին պիտի ունենայ իւր առանձին ենթակոմիտէն:

Աւետիքեանը հոն կ'աշխատի երիտասարդները կրթել ու պատրաստել. այս ընթացքով մեր շրջակաները գոհացուիչ արդիւնք պիտի տան:

Մօտերս տեղս ժամանած են Ատանայէն ընկ. Գրիգոր Սառահան եւ Կարապետ Բարազեան. այս վերջինը պիտի աշխատի մարտական խումբ մը պատրաստել: Առաջինը կարծեմ ձեզի ծանօթ ըլլալու է գոնէ յանձնարարականով:

Մեր ընթերցատան համար անմիջապէս կը կարօտինք «Իրօշակ»ի, «Ռազմիկ»ի եւ «Ազգակ»ի, նաեւ Բաֆֆիի ամբողջ գործերուն. Ահարոնեանէն մի քանի կտոր, դաշնակցական նշանաւոր պետերու եւ հերոսներու կենսագրութեան, որոնց ընտրութեան ձեռնարկն առաջինը կը խնդրենք եւ, կը սիրենք յուսալ, որ ձեր ունեցած դիւրութիւններով առաջին առթիւ մեր պակասները պիտի փութաք լրացնել, որոնց փոխարժէքին համար անմիջական վճարումներ ընելու պատրաստ ենք, ըստ որում, սոյն կէտերուն ձեր ներող ուշադրուելը կը հրաւիրենք:

Ընթերցատան բացման համար աջակութիւնը պիտի խնդրենք Նիւրեանի. իսկ եթէ ձեր կողմէն յօժարիք

զալ, միասին բերելով ընկեր Փանոսեանը, հանդէսնիս աւելի փայլ մը պիտի ստանայ:

Կը յուսամ սակայն այդ օրէն առաջ ձեզ տեսնել քաղաք:

Տեղս ժամանող ընկերք Սառահան եւ Բարազեան բնիկ էֆէրէցի են եւ կը գտնուին յԱտանա պանդխտութեամբ, սիրով ողջունեցին տեղւոյս մէջ ուճացող ենթակոմիտէն եւ անմիջապէս սկսան աջակցել. իրենց գալուստը բարի ազդեցութիւններ բերաւ մեզ:

Ի դիմաց Առժամեայ ենթակոմիտէին էֆէրէի Խ. ՏԷՕՎԼԷԹԵԱՆ

Ս. Ե. 25

ԲԺ. Խ. ՏԷՕՎԼԷԹԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Էֆէրէ, 3 Յունուար 1909

Մեծապատիւ

Ստեփան էֆ. Եսայեան

Սիրելի ընկեր,

Ստացայ Ձեր 2 թուակիրը, ինչպէս «Ազգակ»ները ու շրջաբերականները, որոնց համար խորին շնորհակալութիւն:

Երէկ Մանճըրնի խումբերէն եկած էին, որոնք կը յայտարարէին թէ իրենք պիտի կարենան ենթակոմիտէ մը ընտրելու չափ խումբեր ունենալ: Ես իրենց իրատուութի առ այժմ երեք խումբերով մնալ, ապազային ընտրողաբար լուրջ խումբեր կազմելու սպասելով. հետեւաբար կը տեսնեմ թէ անոնք ինչպէս որ ըլլայ առանձին ենթակոմիտէ ընտրելու իրաւունք պիտի ունենան:

Պէտքէսեցիք նոյնպէս շատ չանցած ենթակոմիտէ պիտի ունենան, եւ արդէն իրենց մէջ ընտրած են ենթակոմիտէնին, առժամեայ:

Մենք մեր կարգին առժամեայ ենթակոմիտէնիս ընտրեցինք: Եթէ աճապարէինք՝ ցարդ երեք զիւղերը 200 անդամներ պիտի ներկայացնէին, բայց մենք ընտրողաբար կազմակերպուելը կը նախընտրենք. վերջապէս այս երեք զիւղերու մէջ միութեան խնդիր մը առկա կայ կամիտէ ընտրելու մասին. միւս կողմէն դուք կ'աճապարէք շրջանային տեղեկագրերու պատրաստութեան գործին, ահա թէ ժամանակի սղութիւնը որ առիճանի կը շուարեցնէ մեզ:

Սոյն պարագաներու տակ պիտի ստիպուինք մեր ընթերցատան բացումը յետաձգել եւ պարապել վերջին յիշեալ հարցերով:

Ուրախ եմ որ փափաք եւ կամեցողութիւն կը յայտնէք մեզ այցելելու համար. եթէ կարելի է յետաձգեցէք ձեր այցելութիւնը, քանի որ մենք ալ ստիպեալ յետաձգեցինք մեր ընթերցատան բացումը (այս վերջին պարագան իմ անձնական հսկողութեանս կարօտելուն համար):

Բացման հանդէսէն 2 օր առաջ իմաց կու տամ Ձեզի եւ անշուշտ բարեկամներով հանդերձ կը հրամայէք: Մեզի տրուած ժամանակամիջոցը մեզ շուարման մատնեց. այսօր հաճի Ստեփան աղայի հետ շրջակաները պիտի այցելենք, նայինք միութեան խնդիրը ինչ կը պիտի ունենայ. առկէ կախուած ունի ինքնորոշութեան գործը:

Ձեր շրջաբերականին վերջին մասը, այն է, յիշեալ ժամանակամիջոցին տեղեկագիրը չտուող խումբերու կազմակերպութենէն դուրս համարուելու խնդիրը, տարօրինակ կը թուի ինձի... հաճեցէք այս մասին բացատրութիւն շնորհել:

Մաղթելով Ձեզ յաջողութիւն մնամ Ձերդ՝ ԽԱԶԻԿ ՏԷՕՎԼԷԹԵԱՆ

Նիւրեան քաջառողջ է եւ կ'աշխատի: Տոբթորին յատուկ բարեւներ. ո՞ր աստղերու տակ էր...:

Ս. Ե. 26

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Կ. ԿՈՄԻՏԷԻ ՆԱՄԱԿԸ ՍՏԵՓԱՆ ԵՍԱՅԵԱՆԻՆ

Գրուած սեւ-սրճագոյն մեյաճով, պաշտօնաբուլղի վրայ, մէկ էրես եւ 8 տալ:

1909 Յունուար 12/25

Ընկեր Եսայեանի

Կեսարիա

Կը պատասխանենք ձեր Դեկտ. 20 թուակիր դրութեան: Ընկեր Սիրական Մօսկիչեան եւ Մելիք Տաղըճեան մինչեւ այս պահուս տակաւին չեն հասած հոս կամ չեն տեսնուած մեզի հետ: Եթէ հասնին՝ կու տանք իրենց բարոյական ամէն աջակցութիւն:

Եթէ դատարանի միջոցով ապացուցուած են ընտրական զեղծումները եւ այս մասին հոս Խորհրդարանին մէջ ներկայացուի հարկ եղած քննութիւնը, ապահով կ'ընէք թէ մեր ընկերները ցոյց կու տան ամէն հոգածութիւն եւ ուշադրութիւն՝ խնդիրին:

Դ. Ընդհ. Ժողովի ատենագրութեան հրատարակուած ամփոփումէն դժբախտաբար չունինք մեր տրամադրութեան տակ. այս, ինչպէս նաեւ Ե. Ընդհ. Ժողովի հարցերուն համար, հարկ է դիմել ուղղակի ժընեւ՝ Բիւրոյին:

Հակառակ ձեր նախորդ նամակներով ըրած խոստման՝ տակաւին տեղական կոմիտէի կազմը մեզի հետ պաշտօնական յարաբերութեան մէջ չմտաւ: Արդեօք նոր դժուարութեանց բախեցաք, որոնք յապաղում պատճառեցին կազմաւորման: Անշուշտ ստիպողութեան պատճառ չկայ. լաւ է ուշ, բայց հիմնական ու կատարեալ: Կը յուսանք որ մինչեւ հիմա արդէն լուրջ տեսակցութիւններ եւ խորհրդակցութիւններ ունեցած էք Թալասի ընկերներուն հետ՝ որոնց գաղափարները եւ ձգտումները կը թուին մեզի բաւական հասուն:

Սուրէն Նշանեան ստորագրութեամբ նամակ մը՝ ուղղուած ընկեր Չաւարեանի, կ'իմացնէ թէ մեկնած էք էվէրէկ՝ կազմակերպելու համար նոյն շրջանը: Կը յուսանք թէ մինչեւ հիմա վերադարձած կ'ըլլաք արդէն արդիւնաւորապէս:

Բարի եղէք նոյն ընկերով հաղորդելու թէ կանանց յատուկ կանոնագիր մը չունինք առայժմ. հաւանաբար այս մասին աւելի հիմնաւոր որոշումներ պիտի տրուին յառաջիկայ Ընդհ. Ժողովին մէջ՝ որ պիտի գումարուի զարնան մէջ: Հիմակուհիմա հաճեցէք բաւականանալ մեր ընդհանուր օրէնքներով:

Յոյն յեղափոխական կոմիտէ կազմուած չէ. կան միայն քաղաքական խմբակցութիւններ՝ որոնք որոշ դոյն չունին կամ աւելի ճիշդը, կը գործեն պատրիարքական քաղաքականութեամբ:

Ընկերական բարեւներով Հ. Յ. Դ. Կ. ՊՈՒՍՈՅ ՊԱՏԱՍԽ. ՄԱՐԹԵՐ

Ս. Ե. 27

ԲԺ. ԽԱԶԻԿ ՏԷՕՎԼԷԹԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Գրուած սեւ մեյաճով, Յամակի փոքր չափի երկքերք բուլղի վրայ ա. եւ ք. երեսներու վրայ:

Էֆէրէ, 15 Յունուար, 1909

Մեծ.

Ստեփան էֆ. Եսայեան

Կեսարիա

Սիրելի ընկեր,

Երեքշաբթի օր բացում չկատարեցինք ձեր չկարեանալ գալուն համար:

Վերջնականապես մեր բացումը տեղի պիտի ունենայ այս կիրակի օր. հետևաբար հրամայեցե՛ք եկե՛ք, եթէ կարելի է ուրիշ կարող խօսող ընկերներ ալ միասին բերե՛ք:

Վանքէն դասատուներ խոստացած են մասնակցել: Պիտի գտնուին նաեւ աշակերտները:

Փանոս էֆենտին իւր քեմանով եթէ կարելի է միասին բերե՛ք, հանդէսին աւելի փայլ մը տալու համար: Փանոս էֆենտին կարծեմ ընկերներէն է. անպատճառ այդ մասին կարգադրութիւն մը ըրէ՛ք:

Մեր բացման հանդէսը փայլուն ընելու համար ինչ որ կրնաք խորհեցե՛ք, որովհետեւ ստիպուած ենք այդպէս ընել ինչ-ինչ պատճառներով: Հոս տեղի չիլու բուն պայքար կը մղէ մեր դէմ. ձգէ որ կարեւորութիւն չունի թէեւ, սակայն ազնուականութիւնը պահպանելու ձգտող չիլու... գիտե՛մ որ ամէն ջանք ի դորձ պիտի դնեն մեր կազմակերպական գործերը խանդարելու համար: Այդ ալ հոգ չէ:

Միայն թէ դուք մի քանի ուրիշ ընկերներով, մանաւանդ Փանոս էֆենտին ալ մէկտեղ առնելով, անպատճառ շարաթ երեկոյ հոս հասնիք. գործելու ժամանակն է: Բարի նախանձով պէտք է գործենք. ուրիշներ կը գործեն, մե՛նք:

Նամակիս պատասխանը այսօր կը սպասեմ:

Մնամ Ձերդ
Բժիշկ Խ. ՏԷՕՎԼԷԹԵԱՆ

U. Ե. 28

ԲԺ. Խ. ՏԷՕՎԼԷԹԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Գրուած է մամիշակագոյն մելամով, ճամպի սովորական չափի բուլբուլ մը մէկ երեսի՞մ վրայ: Նայե՛ք եւ յարգե՛ք՝ Ս. Ե. 28:

Էֆէրէ, 28 Յունուար 1909

Մեծ.

Ստեփան էֆ. Եսայեան

Սիրելի ընկեր,

Ստացայ Ձեր նամակը. Պէլեկէսի խնդիրը այլ կերպով կարգադրելու վրայ եմ: Ես մի քիչ անհանգիստ եմ: Ձեր նամակը ստանալու հաճի Ստեփան ազան զրկեցի, դեռ չեկաւ. չեմ կարծեր որ վտանգ մը տեղի ունենայ:

Մեր գործը աղէկ է եւ կը յուսամ այսօր մնայուն Ենթան(1) պիտի ընտրենք:

Կողմէդ նորէն խլրտումներու լուրեր կը հասնին.

Ի՞նչ է Կեսարիոյ ներկայ կացութիւնը, ի՞նչ տուէք: Այս գիշեր շրջակայ գիւղերէն կէս գիշերէն վերջը մեզի դիմումներ եղան. ջարդի սպառնալիքներ իբր թէ եղած ըլլան. իրիկունը արդէն մենք քաղաքին մէջ անհանգըստութիւն մը տեղի ունեցած ըլլալուն լուրը առած էինք եւ գոհութեամբ կը ծանուցանեմ թէ հակառակ ասոր մեր ընթերցարանը ամէն օրուանէ աւելի՛ լիքն էր. ասանկ բաներ ա՛լ կ'երեւի մեր տղաներուն վրձ կու գան: Ինչ որ է. այսօր նամակով մը տեղեկութիւններ տուր:

ԽԱՉԻԿ

(1) Ենթանալիք: Ոչ գործածական կրթական մը:

U. Ե. 29

ԲԺ. Խ. ՏԷՕՎԼԷԹԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Էֆէրէ, 2 Փետրուար 1909

Մեծ.

Ստեփան էֆ. Եսայեան

Սիրելի ընկեր,

Ստացայ Ձեր վերջին նամակը: «Գարատաղանքու խնդիրը պիտի կարգադրէք. յուսամ այսօր այդ մասին կը տեղեկացնէք: Քանի՞ հատ ունիք պատրաստ, գիները եւ փամփուշտներու գիները: Այս զգարատաղանքը խումբի մը հինգ անդամներուն համար են. ասոնք աւելի դրամ տալով կրանք պիտի չկարենան գնել, հետևաբար կարելի եղածին չափ աժան գնել հարկ է:

Գալով կրաներուն, 15 հատ անպատճառ կ'ուզենք: Երէկ լսեցինք որ վաճառական հաճի ձէպրայիլ աղայի կրաներ եկած են շարաթ օր: Ձեր էրէյիլին ճամբայ ելած է ըսած կրաները արդեօք ատո՞նք են: Ձեզի գալիքները ե՛րբ պիտի գան, քանի՞ պիտի կարենաք տալ, քանի՞ օրէն պիտի կարենաք յանձնել. — այս ամէնուն մանրամասնօրէն հաճեցէ՛ք այսօր պատասխանել: Ձեզի 4 ոսկի վաղը կ'ուղարկենք անպատճառ:

Քաղաքի վիճակին վրայ մանրամասն տեղեկութիւն տուր: Ձեզի գալիք գէնքերուն մէջ մաուզեր ատրճանակներ ալ կա՞ն թէ ոչ. այս ամէնը տեղեկացուցէ՛ք: Երէկ զբաղեալ էի, լսարանի գործերով: Լսարան ունեցանք եկեղեցիին մէջ, ասոր համար չկարողացայ մեր տեղեկագիրը պատրաստել: Վաղը միւս օր կը զրկեմ:

Մնամ Ձերդ

ԽԱՉԻԿ ՏԷՕՎԼԷԹԵԱՆ

U. Ե. 30

ԲԺ. Խ. ՏԷՕՎԼԷԹԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Գրուած է մամիշակագոյն մելամով, ճամպի սովորական չափի գետար երկրորդ բուլբուլ մը ա. եւ գ. երեսներում վրայ:

Էֆէրէ, 3 Փետրուար 1909

Սիրելի ընկեր,

Երէկի նամակիս չպատասխանեցիք. հաճեցէ՛ք այսօր մանրամասն տեղեկութիւն տալ:

Կը լսեմ թէ քաղաքին պաշտպանութեան համար շնչաց(1) կողմէն մեծ գործունէութիւն ցուցուցած են: Դուք ի՞նչ ըրիք. մասնակցա՞ծ էք թէ կը քննաք. գիտէք, ասանկ պարագաներու տակ մեծ ազդեցութիւն կ'ընէ, ինչպէս որ մենք ալ քիչ շատ գործունէութիւն մը ցոյց կու տանք ասոնց տարածայնութեան:

Մեզի խմբատեսը, պաշտօնական թուղթ զրկեցէ՛ք: Մեր ՎԱՊԿԿԵՐ չզրկեցիք:

Կողմէ գտնուող պարոն Յակոբոս Ասըլպէկեանը եթէ կրնաք, սիրաշահեցէ՛ք. կը լսեմ թէ այս կողմերը միւսներուն համար գործելու դիտումներ միտումներ ունեցած է: Կը լսեմ նաեւ թէ հայերէն չգիտցողներու առջեւ ձեր դռները գոցած էք. դուք գիտէք, սակայն Կեսարիոյ համար սխալ քայլ մը կրնայ ըլլալ այդ:

Ձէնքի մասին մանրամասն տեղեկութիւն տուր. եթէ այդ մասին գործունէութիւն ցոյց չտրուի Դաշնակցութեան կողմէն, աղէկ ազդեցութիւն չպիտի ընէ, մինչդեռ միւսները առատ խոստումներ ընելով միտքերը զբաւելու ջանքեր կ'ընեն. քիչ մը ջանք, քիչ մը աշխուժութեան պէտք ունինք: Գիտէք, ժողովուրդը այնպիսի հաւատք մ'ունի որ Դաշնակցութիւնը կրնայ մատակարարել աղէկը, աժանը, յարմարը. հետևաբար մէկ աստիճան ճիտերնուս պարտքն է ծառայել, մինչեւ ժողովուրդին մէջ դիտակցութեան արթնալը հաճոյապատրութեան քաղաքականութիւնը մեծ դեր կը խաղայ:

Ներքեակ 4 ոսկինոց չէք գանձեցէ՛ք Ֆրէնկեաններէն:

Մնամ Ձերդ

ԽԱՉԻԿ ՏԷՕՎԼԷԹԵԱՆ

(1) Էնչակեաններու:

U. Ե. 31

ՊՈՂԱՉԼԵԱՆԻՆ՝ ՍՈՒՐԷՆ Յ. ՆՇԱՆԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԿԵՍԱՐԻՈՅ ԿՈՄԻՏԷԻՆ

Գրուած կամխուժական պաշտօնաբուլբուլ մը երկու երեսներում վրայ, մաքր տառերով եւ մամիշակագոյն մելամով:

1909 Փետր. 16, Պողոզեան

Հ. Յ. Դաշնակցութեան
Կեսարիոյ Տեղական Կոմիտէին

Ընկերներ,

Ներքեակ կը զրկեմ Իյտէլի տեղեկագիրը: Չազմազ եւ Պողոզեանի տեղեկագիրները արդէն զրկուած են: Մինակ թէ այս մի քանի շարթուան միջոցին սոյն երկու գիւղերու մէջ անդամներու թիւը կրկնապատուած է. Պողոզեան ընտրած է ենթակոմիտէի 5 անդամներ, որ գործը պիտի վարեն. երկու օր առաջ Չազմազ գացի, թէ՛ եկեղեցի թէ՛ ժողովատուն խօսեցայ եւ կազմակերպուելու յորդորեցի. յոյս ունիմ որ Չազմազ ամէնէն լաւը պիտի ըլլայ: Կերմիրցի ձիվան էֆ. Աշիգեան յայտնի խաչագողութեան սկսած է. պրոպանտիստի դիմակ հազած գիւղէ գիւղ կը չըլի Իյտէլի. Չօգրաթանէ եւ Իւրնէլէ դրամ առած է յանուն կազմակերպութեան, լրագիրը եւլն. բերել տալու համար, տեղական (Իյտէլի) ընկերները խաբուելով դրամ տուած են իրեն ասոր համար: Պէտք եղածը ըրէ՛ք, ես ալ եթէ յարմար մարդեր գտնամ, ամէն գիւղ շրջաբաղաններ զրկելու նպատակ ունիմ:

Կարեւոր պարագայ մ'ալ: Տեղուոյ կառավարութիւնը, որ բառին անգլիական իմաստով բռնապետական է, հայ գիւղացին կեղեքելու նոր միջոց մը հնարած է. — գիւղացին ուտելու հաց չունի եւ բուն տուրք կը հաւաքէ. գիւղացիք 3 օր ժամանակամիջոց կ'ուզեն հարկը տալու համար. կառավարութիւնը զայս նկատելով անհնազանդութիւն, գիւղի երեւելիներէն չորս հատը կը բանտարկէ. գիւղացիները կը գիմեն ընկեր Նեւտոնի (որ հոս փաստարանութեամբ կը գրադի), որ իրենց խտրտա մը գրէ եւ ընկեր Նեւտոն խտրտային մէջ այս խօսքը կը գործածէ կառավարութեան դէմ. «Թահազաթ իթմէտէն, իսպաթ վէ շահատ օյմատան օ ատեմլերի հեօֆմի — գարագաշի իլէ հապս էթմէյէ հազգընըզ եօք»(1): Ընկեր Նեւտոն շատ յանդուզն գնացք ունի եւ կառավարութիւնը շատոնց առիթ կը փնտռէ եղեր զայն ճգմելու, եւ այս «հեօքմի — գարագաշի» բառը կառավարութեան դէմ մեծ անարգանք մը նկատուով զայն կը բանտարկէ: Ընկեր Նեւտոն, տեղական

ենթակոմիտէի ատենադպիրը եւ ամէնէն գործունեայ անդամը, այսօր բանտն է: Անմիջապէս եղելու թիւնը իմացուցէք հոն վալիին, որպէսզի հեռագիր մը տան հոս: Ժողովուրդը ամէն օր ահուդողի մէջ է. ասկէ 10-12 օր առաջ շրջակայ թուրք գիւղացիները ամբողջ հոս կը հաւաքուին թալանի նպատակաւ. շուկան 2-3 օր դոց կը մնայ եւ տեղւոյս գայմագամը այս բաներէն շատ դժուար ըլլալ կը թուի. եթէ հոս ազգու դիմում մը ընէք եւ այստեղի կառավարչին խիստ հրաման մը յաջողիք տալ կուսակալին կողմանէ, կազմակերպութեան քրէսթիժը(2) բարձրացնելու մեծապէս կը նպաստէ:

Պողոզի գիւղերը ամէնքն ալ Պողազլեանի հետ կապել շատ յարմար է, մինակ Իյտէլի եւ Բուժմտիկին պէտք է յարաբերութիւն ընեն Կեսարիոյ հետ, որ իրենց աւելի մօտ է. Իյտէլիէն ձեզ պիտի զրկեն դրամ. ինձ համար ապագրեցէք «Աղդակ» եւ գրքոյկներ եւ պատկերներ. չմոռնամ ըսելու թէ խաչագող առաքեալ Աշիգեան Վեր. Հնչակեան կուսակցութիւնը կը յանձնարարէ, ցուցնելու համար թէ ինք երկու ընկերութիւններու կողմէ կարգուած գործակալ մ'է. Կեսարիոյ Կոմիտէն թող պաշտօնական նամակ մը գրէ յիշեալ ապտալին եւ դայն ի կարգ հրաւիրեցէք. ամօթ է որ մեր քթին տակ այս տեսակ զեղծարարներ ազատօրէն շահասակութիւններ գործեն:

Ընկեր Նեւտոնի խնդրին համար զանցառութիւն մի ընէք. Առաջնորդ Հօր դիմեցէք: Հոս ցարդ որեւէ գործադրութիւն, բարեփոխութիւն չէ եղած. գայմագամը շատ մոլեռանդ է. հոս էսկի թաս եւ էսկի տարագ է (3). Ժողովուրդը որեւէ բողոք ընելու կը վախնայ: Այսօր Կեսարիա վալիին հեռագիր մը պիտի տանք, եթէ տեղւոյս ազգայինները յանդգնին ինձ հետ համաձայնի:

Պողազլեանի ընկերներու թիւը 22 եղած է. ընկեր Նեւտոն բանտ ըլլալուն համար գործերը երեսի վրայ կը մնան:

Ընդունեցէք յարգանքներս:

Ընկերական բարեւանքով

ՍՈՒՐԷՆ ՆՇԱՆՆԱՆ

Ստացած եմ ընկեր Եսայեանի նամակը:

(1) Քրքերէն.— Վասնց հարցմանուրեմ, երբ փաստը եւ վկանք չկան, մեզմ Բեռնաձ վճարով մը այդ մարդիկը բանտարկելու իրաւունք չունինք:

(2) Տրամսերէն բառ, — վարկ, հեղինակութիւն:

(3) Քրքերէն բանտ մը, որ կը մշտնապէս՝ «Նիշի» փոխուած է. ամէն ինչ աւարտած մեզմ կը շարունակուի:

Ս. Ե. 32

ՍՏ. ԵՍԱՅԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄՆԻՆ

Քղբածրարիմ մէջ պահուած այս գրութիւնը (սեւ մելամուղ, մամակի ըմբացիկ չափի գծաւոր թուրքի 7 երեսներու վրայ գրուած) ամենայն հաւանականութեամբ Ստ. Եսայեանի կողմէ Պատասխանատու Մարմնիմ գրկուած մամակի սեւագրութիւնն է: Կը կրէ սրբագրութիւններ:

Կեսարիա, 5/18 Մարտ 909

Հ. Յ. Դաշնակցութեան Կ. Պոլսոյ Պատասխանատու Մարմնոյ

Յարգելի ընկերներ,

Երէկուայ թուականով հեռագրած եմ Ձեզ արդէն այն անարդար ելքը, որ ունեցաւ քննիչ յանձնախումբի աշխատութիւնը: Իրողութիւնը բաւական բնական կը գտնենք թէ եւ — որովհետեւ թուրք հին վարչութիւնը կը շարունակուի տարբեր անուան մը տակ — սակայն անկարելի էր առանց բողոքի անցնիլ պողոտայի զեղծարարութեան մը առջեւէն. հետեւաբար լուսաբանել պէտք է մի քիչ խնդիրը իր իսկութեան մէջ:

Կեսարիոյ վերջին դէպքերը, որոնք բաւական իրարանցում առաջ բերին եւ պատճառ եղան 15 օր շուկային դոց մնալուն, եւ զորս քննելու պաշտօն ունէր այդ յանձնախումբը, պատահած են հետեւեալ պարագաներուն մէջ: Մեր կառավարիչը որ ընտրութեանց ատեն շատ երկդիմի ընթացք մ'էր ունեցեր — գուցէ վերէն եկած հրահանգներուն անսալով — վերջերս՝ Պոլսէն վերադառնալէն յետոյ՝ բոլորովին այլափոխուած, եւ միեւնոյն ժամանակ Ահրարի կուսակցութեան պատկանելով, ըստ այնմ ալ գործնականապէս կ'ընթանար, կառավարական շրջանակներու մէջ հետապնդելով ազգերու հասարակութեան սկզբունքը եւ միւս կողմէն ալ աշխատելով գիտակից եւ իսկապէս հայրենասէր տարբեր համախմբել իւր շուրջը եւ կազմակերպել Կեսարիոյ մէջ մասնաճիւղ մը Ազատական կուսակցութեան: Ես բնական էր որ սա շատ ալ դիւր չգար մեր թուրք շովետներու(1), որոնք ամէն միջոց ձեռք առին վիժեցնելու կառավարչին ձեռնարկը եւ, բոլորովին ապահով մնալու համար, մտածեցին զինքն ալ հեռացնել տեղէն: Հետեւաբար սկսան ամբաստանել եւ սեւցնել կառավարիչը հայասիրութեան մէջ, սկսան հոս հոն տարածար նել որ կեանքը մութասարը՞րը հայերու պաշտպանութեան համար միայն եկած է եւ թէ թուրք հասարակութեան շահերը զոհ կ'երթան հայերու, եւ այլ նմանօրինակ կարգ մը գորոյցներ՝ որոնք ելլալով մզկիթներէն սկսան շրջանը ընել ամբողջ քաղաքի թրջութեան, մանաւանդ ստորին խաւերուն մէջ: Եւ սակայն ասով

չէր ապահովուեր տակաւին կառավարչին պաշտօնանկութիւնը, որովհետեւ եթէ միմիայն այդ հողի վրայ բողոքներ ալ ընէին, կառավարիչը կրնար ինչդիմք արդարացնել պաշտօնապէս եւ շատ հեշտութեամբ, եւ քանի որ տարբեր դէպք մը չկար գործածելու, կոչում ըրին խուժանի բարբարոսութեան, որմէ կը կարծէին փախուստի ենթարկել կառավարիչը: Կարող էք կշռել թէ ինչ սողեցուցութիւն առաջ կը բերեն նմանօրինակ ամբաստանութիւններ մեր թուրք տղէտ մասսային վրայ, որը երթալով կը լեցուէր ատելութեամբ ուղղակի կառավարչին դէմ եւ անուղղակի հայ հասարակութեան դէմ: Կը մոռնամ ըսել որ այդ միջոցին անպակաս էին նաեւ տարածանութիւններ հայերու մզկիթ կոխելուն (մասին):

Դէպքը պայթեցաւ վերջապէս: 3-4000 հոգիէ բաղկացած տղէտ ամբոխ մը կը յարձակին կառավարութեան դուռը, եւ ամենատեղի ցոյցով մը կ'ուզեն պաշտօնանկ ընել կառավարիչը եւ սպանալիքով կը յարձակին մինչեւ իսկ, եւ սակայն այս վերջոյն արի ինքնապաշտպանութեամբ եւ զինուորական ուշացած միջամտութեան մը չնորհել՝ ամբոխը կը ցրուի, պատուոյ խօսք առնելէ յետոյ զինուորական հրամանատարէն, թէ այդ գիշեր իսկ պիտի մեկնէր կառավարիչը: Ինչ վիճակի մէջ էր այդ միջոցին շուկան, շատ հեշտ է երեւակայել. շարքերէն, ամիսներէ ի վեր շարքի եւ թալանի սպանալիքի տակ բթացած տարուբերող հայութիւնը իսկոյն սարսափի ենթարկուած կը գոցէ իր խանութը եւ կը փութայ տուները, վճռելով ժամ առաջ վերադառնալ իւր ընտանիքի մօտ եւ այս անգամ կարելի եղած չափով սուղ ծախել իւր կեանքն ու պատիւը: Այդ վիճակը կը շարունակուի երկու շաբաթներ եւ այդ միջոցին դիմումներ կ'ըլլան բնականաբար Գաղատիա եւ Պոլիս: Պէտք է աւելցնել նաեւ որ այդ միջոցին թուրքերը՝ գրաւել ուզելով հայ հանրային կարծիքը դէպի իրենց դատը, սկսան երդում պատառ ըլլալ, որ հայերու դէմ ոչ մի չար նպատակ չունէին եւ որ շարժումը ուղղուած էր միայն անարդար կառավարչին դէմ. անցնինք:

Դէպքին հետեւեալ օրն իսկ Պոլսէն տեղեկութիւն կ'ուզուի դէպքին վրայ եւ կը հարցուի միեւնոյն ժամանակ կացութեան վտանգաւոր լինել չլինելը: Անմիջապէս ժողով մը կը գումարուի երեք ազգերու էջրէֆներէն, որոնք քննելով քաղաքին վիճակը, անապահով կը նկատեն եւ կը հեռագրեն Պոլիս, թէ պէտք է շուտով փութացնել զինուորական ոյժ մը՝ քաղաքին պաշտպանութեան համար եւ միեւնոյն ժամանակ քննիչ յանձնախումբ մը՝ ճշգիւր եւ պատժելու համար դէպքին պատասխանատուները, որոնք արդէն ծանօթ էին հոս, հաստատուած փաստերով: Ասոր վրայ Պոլսէն կ'ուղարկուի վաշտ մը զինուոր եւ Գաղատիայէն ճամբայ կը հանեն իբր քննիչ՝ կուսակալը եւ Իսթիմափ ձեռք Բէյիսիմ(2): Ասոնց ժամանումին վրայ շուկան կը

բացուի եւ կը սկսինք սպասել համիտեան ռեժիմի տակ վարպետ ելած վալիի մը սահմանադրական գործողութեանց ելքին: Յանձնախումբը կը ձեռնարկէ գործի՝ ծայրայեղ դադտնապահութեամբ մը, այնպէս որ ոչ մի գաղափար կարելի չեղաւ կազմել գործերու ընթացքին վրայ. մի քանի աննշան հարցաքննութիւններ միայն ըրին. երբեք չհարցուեցաւ բողոքարկուներուն, թէ ինչո՞ւ անապահով զգացեր են քաղաքին վիճակը եւ թէ առ այդ ինչ փաստեր ունին. հարեւանցի բաներ մը կ'ընէ, կը քաշուի իւր օթէլը եւ կը պատրաստէ քննութեանց տեղեկագիրը: Պնդողներ կան որ հարցաքննութեանց նախորդ թուղթերը այրած եւ նորեր պատրաստած է, եւ այս պարագան կասկածիլ կու տայ մեզ, թէ արդեօք վալիմ Պոլիս պատրաստուած դաւադրութեան մը այստեղի գործիքը չեղա՞ւ: Ինչ որ է, չերկնցնենք. վալիմ մեկնեցաւ եւ թուղթերը կ'ուղարկուին այսօր Գաղատիա՝ Հիլէթի Իթիմաթիէիմ(3), որմէ ձերբակալման հրամանագիր կը սպասուի այս օրերս, սկսելու համար դատավարութեան:

Մինչեւ հոս զարմանալու քիչ բան կայ. կայ անդին պարագայ մը որ սարսափ ու զայրոյթ կ'ազդէ: Արդարութեան եւ Սահմանադրութեան պաշտելի անուններու տակ կը գործուի՝ ամենամանխիղճ եւ վայրագ դարձուած մը՝ խարելու համար Եւրոպայի հանրային կարծիքը, որը յուզուած պէտք է ըլլայ այդ դէպքերուն վրայ: Այսինքն թէ, վալիմ եւ կամ քննիչ յանձնախումբը, չնչին ուշադրութիւն մը միայն յատկացնելով իր պաշտօնին պարտականութեանը, ձեռքը կ'առնէ հին դէպք մը, 7 ամիս առաջ՝ ազատութիւն հռչակուած օրերը տեղի ունեցած, միմիայն սա նպատակով որ մի քանի հայեր ալ դատապարտեն եւ այդպիսով մասամբ փրկուի թուրք անպատուուած մոլեռանդութիւնը. այդպէս ալ եղաւ: Ազատութեան հետեւող շարքներու մէջ հոս կը կազմուի Իթիմաթի մարմին մը՝ նոյն ժամանակուայ զինուորական հրամանատար Խուլֆի Փաշայի նախաձեռնութեամբ: Այդ մարմնոյ մէջ — որը կարճ կեանք մը ունեցաւ — կը մտնան նաեւ հայոց Առաջնորդը եւ մի քանի ուրիշ հայ եւ կարծեմ յոյն ալ երեւելիներ: Այդ միջոցին Կեսարիոյ ընդհանուր ազգաբնակչութիւնը՝ ազդուելով Պոլիս եւ այլուր տեղի ունեցող հակաբռնապետական ցոյցերէն, հոս ալ մեծ ցոյց մը կը կազմակերպէ եւ դիմելով կառավարատուն՝ դուրս կը շարտէ հոն որջացած կարգ մը հին ռեժիմի ջուրմեր, որոնք տարիներէ ի վեր քամած էին խեղճ ժողովուրդին արիւնը եւ քրտինքը: Զգիտենք թէ վալիմ ինչո՞ւ իրար միացուց այդ երկու իրարու հակառակ դէպքերը. միայն սա ստոյգ է, որ յիշուած աւազակներու ամենահարուստը եւ հետեւաբար ամենաազդեցիկը Շէյխ Իպրահիմ կոչուած սրիկան, ամիսներէ ի վեր կ'ապրի Գաղատիա, որով պէտք է հաւատալ որ արդէն գրաւած էր վալիմ իր կողմը եւ ըստ այնմ միջոցը գտած՝ իր դատին ծառայեցնելու

նրա վերջին պաշտօնը: Աշխատել է մանուկանոց սա պարզան՝ որ վալին Հոս չեկած տակաւին Գաղատիայէն Հոս նամակ մը կը գրէ իր ջեռայրին. — տեղւոյս միւստիքս — սա բառերով. «Ես այստեղէն խորտիպիմով կը գրեմ տեղւոյդ դէպքերը, որոնք բոլորն ալ թուրքի Փաշային բարեկամներուն սարքածն է» (ակնարկութիւն Շէյխ Իպրահիմի հակառակորդներուն): Այս նամակն ալ կարդացուած է կառավարչին եւ ուրիշ 4 պատուաւոր մարդոց ներկայութեանը, որոնք կարող են վկայել ստուգութիւնը եթէ հարկ ըլլայ:

Արդ, այդ եղելութիւններուն մէջ կան մի քանի թաղուն նպատակներ, որոնք լուսարանութեան դալ պէտք են: Դաւադրութիւն մը կայ մէջտեղ եւ որը ուղղուած է մի քանի ճակատներու դէմ. բայց ամենէն առաջ Սահմանադրութեան դէմ: Հետագայ պարագաները պիտի հաստատեն դայն:

1. Քննիչ Յանձնախումբը եւ կամ կուսակալը — միեւնոյն բաներ են — Հոս չեկած տակաւին գրեմք իւր հետեւելիք ընթացքը՝ քանի որ Գաղատիայէն կը գրեմք դէպքերը իր խորտիպիմով:

2. Կուսակալը Հոս մասնաւոր դէպք մը քննելու էր եկած, պաշտօն չունէր 7-8 ամիս առաջ տեղի ունեցող դէպքեր պրպակել, ան ալ անարդար ուղիով մը:

3. Եթէ իսկապէս այդպիսի պաշտօն մ'ալ ունէր, իրաւունք չէր իրար խառնել երկու դէպքեր՝ որք ոչ մի նմանութիւն եւ աւերչութիւն չունին իրարու: Առաջինը ամբողջ բնակչութեան մը զայրոյթի արտայայտութիւնն էր մի քանի զեղծարարներուն դէմ, իսկ վերջինը՝ թուրք ազէտ խուժանի յարձակումն էր կառավարութեան դէմ: 4. Դէպք մը կը պատահէ, քաղաքը վտանգի մէջ կը ներկայացնեն եւ առ այդ միջոցներ կը պահանջեն. քննիչ յանձնախումբը ինչպէ՞ս կարողացաւ իւր տեղեկագիրը պատրաստել առանց լսելու բողոքողներու վկայութիւնը: 5. Մեր պարոն վալին իր Պոլիս ուղղած հեռագրիներով վարդապոյն ցոյց կու տայ տեղւոյս կացութիւնը, ուրեմն ի՞նչ հարկ կայ որ տակաւին Պոլսէն եկած գիտուորները կը յամենան մեկնիլ եւ կը լսենք որ տակաւին բաւական կը մնան: 6. Եւ վերջապէս եթէ քննութիւնը անաչառ էր, ի՞նչ իրաւամբ հարցաքննիչ դատաւորը, հակառակ եղած գիտումներու, կը մերժէ առաջ Հիյէթի Իթհամիյէին(3) գրկուելիք գարաբնամէրն պատճէնը, որը պէտք էր առաջ ըստ օրինի. բայց զարմանալու չէ, կուսակալ էֆենտիին ազդեցութիւնը կը գործէ ամէն բանի մէջ, քանի որ ամբողջ կեսարացիին վոնտած կաշառակեր պաշտօնեայ Նազիֆը, այսօր ինքը կը համարձակի Գարահիսարի միւսիք անուանել, ուրիշ մասնակի պաշտօններու մէջ գործածելէ յետոյ: Չմոռնանք ըսել նաեւ որ ըստ շատերու կարծիքին, այդ ազդեցութիւնը կը ցանկայ եղեր նաեւ դատաւարութիւնը կատարել առաջ իր ուղած սրեւէ քաղաքի մը մէջ. Օր. Չօրաւ(4):

Արդ, եզրակացնելով, կ'ըսենք որ կատարելապէս կազմակերպուած դաւադրութեան մը առջեւ կը դրանք, որուն մէջ չենք գրեմք թէ ի՞նչ մատ ունեցաւ Պոլիսը: Ամէն պարագայի պէտք է պայքարիլ առաջն առնելու այդ խաղաղութեանց եւ քանի որ եղած քննութիւնը ոչ մի օրէնքով չ'արդարանար, պէտք է պնդել, որ չեղեալ նկատելով այդ քննութիւնը, նոր մարմին մը, անաչառ պաշտօնեաներէ կազմուած, ուղարկուի Հոս եւ նոր քննութիւն մը կատարելով՝ պարզէ եղելութիւնը իւր իսկութեամբ. հարուածը պարզապէս ուղղուած է միայն հայ անուան դէմ, կապելով այդ անունը մոլեռանդ ու տգէտ խուժանի մը ստոր գործողութեանց: Եւ եթէ յաջողուի իրենց այդ ձեռնարկը, մենք կը կարծենք որ սա որոշ ազդեցութիւն մըն ալ կ'ունենայ ներքին հայկական նահանգներուն նմանօրինակ ձեռնարկներուն վրայ:

Անհրաժեշտ է որ Պատասխանատու Մարմինը ամէն ճիշդ թափէ գործերը այդ ուղղութեան բերելու, արտիքն նոր քննութեան մը պէտքը չեշտելու համար. հակառակ պարագային, ոչ (միայն) մի քանի հայերու անուններ ալ խառնուած պիտի տեսնանք այդ ստոր գործերու մէջ, այլ եւ տեղւոյս թուրք ամբողջ բողոքողի բերս պիտի առնէ եւ ազատ պիտի դէպ ինքզինք, մանաւանդ որ այդ ամբողջ առանց ստոր ալ յանձնարարելի մանթալիթէ(5) մը չունի դժբախտարար:

- (1) Տրամսերէն բառ, — ծայրայեղ ազգայնական:
- (2) Պատժական վերաբնիչ Ատեմի Յաթագաչը:
- (3) Ամբաստանիչ Մարսիմ:
- (4) Անքնաբնակի առում մը:
- (5) Տրամսերէն բառ, — մտայնութիւն:

U. Ե. 33

Պ. ԿԻՒՄԻՒՇԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ
US. ԵՍԱՅԵԱՆԻՆ

Գրուած Յամակի ընթացիկ չափի գծուար միաքերք բաւրի վրայ, երկու երես:

Գրեհալը, 31 Մարտ 1909

Մեծապատիւ Ստեփան էֆ. Ս. Եսայեան

Կէրմիր

Այս անդամուան ճամբորդութեամբ մի քանի գիւղեր հանդիպելով մինչեւ Սարը Համզա զնացի. ուր որ

հանդիպեցայ, անոնք ինչ ուրախառիթ լուրեր կ'ուզէին որ պատմեմ ի նպաստ իւրեանց կենցաղավարութեան (թէպէտ աւելի մօտ է Եոզղատ քան Կեսարիա). առաջները կարծեմ թէ ըսած էի ձեզ թէ այս մասին, նոյն քաղաքի հայազգիքն անտարբեր կը գտնուին որեւէ կուսակցական կազմակերպութեան համար. մինչեւ ցայժմ գրեթէ մի մարդ, անդամ անտեղեակ այցելու, չէ տեսնուած. գիւղացիք տեղեկանալով Կեսարիոյ վերջին դէպքին առթիւ մեր ազգայնոց պատրաստութեանը, որոյ կը նախանձին, աւելի եռանդ զգացի անոնց վրայ այս անգամ քան թէ աշնան ժամանակ. բայց կարօտ են յորդոր եւ քարոզութեան եւ մանաւանդ գործօն պաշտօնէից, որոյ մի նմոյշը տեսնուեցաւ աստ դիւղիս մէջ, որ ասկէ իբր 15 օր յառաջ Հնչակեան կուսակցութեան կողմանէ իբր գործօն մի մարդ հանդիպելով 40ի չափ անդամակցող արձանագրեց. թէեւ մինչեւ ցայսօր կըրկին այցելու եւ պաշտօնեայ մը չտեսնուեցաւ. նոյնպէս ուրիշ մի քանի գիւղերէն եւս բաւականաչափ ստորագրութիւնք հաւաքած է, յուսադրելով որ Կեսարիոյ գործիչը մօտ օրերս յատկապէս գալով պիտի քարոզէ, որոյ համար կը լսուի ալ թէ Պոլիս հրաւիրուեր է յատուկ խորհրդակցութեան համար: Ստուգութիւնը չեմ գրեմ:

Արդեօք ստո՞յգ է այն լուրը, թէ Դաշնակցական եւ Հնչակեան կուսակցութեանց համաձայնութեան համար վեհ. Կաթողիկոսը միջամտեր է, ամէն ջանք չընենալով:

Այս օրերս մի քանի մարդոց բերնէն դանգատանաց խօսքեր լսեցի հանդէպ ինքնակոչ ընկերացեալ Պր. Աւրեանի, որ սպառնալիքով դրամ ժողովելու ետեւէն է եղեր. ինչպէս որ մէնթէչէցի Հայրապետ էֆ. ինչ կերպ եւ ընթացք բունք է նէ՝ վախցնելով եւ գողուչանելով դրամ շորթած եւ իւրացուցած է, յորմէ տեղեկութիւն ալ ունի եղեր Դաւթեան էֆ. . . . թէպէտեւ կորեւորութիւն չի տրուիր դանգատներուն, բայց ինչ որ ալ ըլլայ այսօրինակ ստուգութեանց հեղինակութեամբ հասարակութեան միտքերը կը խանդարուին:

Այս մասին լուրեր հաղորդելու թէպէտ պարտականութիւն մը ստանձնած չեմ, մանաւանդ որ ո՛չ ընկեր եւ ոչ ալ անդամակից եմ, բայց իբր մի ազգասէր հայ անհատ եւ ըստ իմ տեսութեան եւ զազափարիս, տակի գործողութիւն մը ըլլալուն համար կարեւոր տեսի ծանօթացնել զձեզ. եթէ կարեւորութիւնը դուք ալ կը դատէք, տնօրինեցէք պարտ ու պատշաճը, զգուշացնելու համար զնա. եթէ, ոչ, այն ալ դուք գրեմք:

Եւ արդեօք կրնա՞մք արժանանալ պատասխանին՝ որ «համայն կուսակցութեանց դաշնակցութեանը համար հրաւիրուած խորհրդակցութեան ժողովը» պիտի դաւարի՞ եւ ե՞րբ (դայս կը հրատարակէր «Ժամանակ» թերթը):

Ձէնքի համար նամակցութեանէն ի՞նչ արդիւնք

դոյացաւ. այս մասին ձեր խոստումը կը յիշեցնեմ որ պիտի ծանօթացնէիր զիս:

Ընդունեցէք յարգանքներս

Պ. Բ. ԿԻՒՄԻՒՇԵԱՆ

U. Ե. 34

ՍԵՒ ԲԼՈՒՐԻ (ՍԵՒԱՍՏԻՈՅ) Կ. ԿՈՄԻՏԵԻ
ՆԱՄԱԿԸ ԿԵՍԱՐԻՈՅ ԿՈՄԻՏԵԻՆ

Գրուած սեւ մելամով, պաշտօնաբարձր վրայ, մէկ երես: Վերք, աշիմ, կը գտնեմ տպագրուած ընթացիկ վերաառաքիւնք՝ «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն — 1890» (հայերէն եւ ֆրանսերէն): Վերք, ձախիմ, գիմամշաք, Մարմնի անուր («Սեւ Բլուր» — ձեռագիր — եւ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ — տպագրուած), թուակաք եւ Յամակի թիւք:

Ստորագրուած է՝ «Հ. Յ. Դ. Սեւ Բլուրի Կեդր. Կոմիտէ», որում տակ կայ Յաւեւ անում մը, — հաւամբեմ՝ Բաքի:

ՍԵՒ ԲԼՈՒՐ
ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
N 66

1909 / 7 / VII

Հ. Յ. Դ. ԿԵՍԱՐԻՈՅ ԿՈՄԻՏԵԻՆ

Այս անգամ Տամլամեանների միջոցաւ ձեզ ուղարկեցինք երկու տէնկ հազուստեղէն, որը ստանալնուդ կը խնդրենք որ ուղարկէք շուտով Ատանա: Արդէն ասկէ մինչեւ Կեսարիա վարձքը վճարեր ենք: Կը մնայ ատկից մինչեւ Ատանայինը. այդ ալ եթէ կրնաք հող տեղի Կարմիր Պաշի միջոցաւ, եթէ ոչ դուք կը վճարէք եւ մեզ կ'իմացնէք քանակը, որպէսզի շուտով ասկից ձեզի ուղարկենք: Հարկաւ դուք ատկից կ'ուղարկէք Ատանայի Կարմիր Պաշին եւ կամ Դաշնակցութեան:

Մենք Հոս ծրագրած ենք զիֆոնի գործին համար մասնաւորապէս մենք մեզի աշխատել, առանց սպասելու ասոր անոր օգնութեան. արդէն ունինք շատ յարմար փորձ ընկերներ, որոնք կարող են անձամբ փոխադրել ամէն ինչ. եթէ դուք ալ կ'ուզէք առիթից օգտուիլ, շուտով այժմէն դրամազուրիւր պատրաստեցէք. եւ երբ գործի ձեռնարկենք աւելի մանրամասն կը հաղորդակցիւք իրարու հետ:

Ընկերական բարեւանքով

Հ. Յ. Դ. ՍԵՒ ԲԼՈՒՐԻ
ԿԵՆՏՐ. ԿՈՄԻՏԵ
ԲԱՍԻԼ

U. Ե. 35

Վ. Ս. ՔԻՒՐՔՅԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ՍՏ. ԵՍԱՅԵԱՆԻՆ

Գրուած է սեւ մելամով, ճամակի 13x20,5 սմ. չափի երկքերթ բուլբի մը չորս երեսներում վրայ:

Ստեփան Եսայեանի թղթածրարի մէջ գտնուող՝ 1909ի վերջին ճամակն է: Բովանդակութեան կը հասկցուի որ Ստ. Եսայեան կեսարիայէն մեկնած է արդէն եւ կը գտնուի Կ. Պոլիս: Նամակագիրը, ըստ երեւոյթի, երիտասարդ ուսուցիչ մըն է:

Կեսարիա, 29 Հոկտ. 1909

Սիրելի

Ս. էֆ. Եսայեան

Պոլիս

Կը ցաւիմ որ ցարդ ձեր մասին ստոյգ տեղեկութիւն մը չունենալով կարելի չեղաւ գրել. ատեն մը իմացանք որ ժընեւ մեկնած էք, ատեն մը ուրիշ տեղ ու այս օրերս միայն Օն. էֆ. Դաւթեանէն կարելի եղաւ հասկնալ որ Պոլիս կը գտնուիք: Ես Մերոսինէն վերադառնալով սկսայ գործիս. այս տարի շատ աւելի ծանրաբեռնեցին ձեզ, կարծելով որ ուսուցիչը շատ աշխատեցնելով շատ բան կը սորվին տղաք. բացարձակ աստիակութեան մէջ կ'անցնի կեանքերնիս. խոնջ ու վատակարել կը դառնանք տուն, ու չկազդուրուած կը վերադառնանք դարձեալ դպրոց: Հոսի կեանքը դեռ ոչ մէկ ոգեւորութեան նշոյլ ցոյց կու տայ. Տիար Գալֆայեան, Տամլամայեան եւ ուրիշներ հոս գտնուելով հանդերձ՝ տակաւին չկարողացան մազնիսացնել կեանքը. Գալֆայեան էֆ. ին եղած դիմումները ապարդիւն մնացին. կ'երեւայ հայրենիք, ինչպէս ծնողք եւ ազգականներու ներկայութիւն թուլամորթ կ'ընեն մարդը, կամ թէ այդ պարոններու համբաւը չափազանցուած կը հասնի մեր ականջին, հեռուէն: Տամլամայեանի մասին դեռ յոռետես չենք. հանգիստի պէտք ունի, շատ ստապեցաւ:

Ծանօթ առկախ գործերը կը մնան երեսի վրայ. մեր դուռն է որ ափ առած են պարտատէրներ, շատ կը նեղուիմ այդ մասին. գլուխդ ազատեցիր, անիրաւի:

Երբ այսպէս շարունակեն իրերը, մեր մտաւորական տղաք պիտի սնանկանան վերջապէս. մե՛ղք տարուան մը աշխատութեան:

Ազգ. գործերը նոյնպէս, լճացած վիճակի մէջ են. Առաջնորդը տակու կը գտնէ իր կորուսած քամարելը. կ'օգտուի պոլսական ժողովներու անկերպարան վիճակէն. Ժան Բեյէր կեղծանունով «Ազատամարտի» գրուածները պէտք է հրատարակել տալ աշխատիք բառ առ բառ. ջանք պիտի ըլլայ որ ասկէ վերջ աւելի վատակարան լուրեր եւ յօդուածներ գրուին տեղէս:

Այս օրերս հոս զինուորագրութիւնը սկսած է. հայ երիտասարդներ խուճր-խուճր կ'երթան զինուորագրուելու. քաղաքին կացութիւնը թէեւ շատ վատ չէ, բայց գաղթողներ չեն պակսիր: Գործերու կայուն վիճակը կը շարունակուի. դանդաւոր ընդհանուր է:

Տեմոքրատները(1) նոր գործիչ մ'ունեցան, հինին ապրանքէն, անցեալ օր ի ներկայութեան խուռն բազմութեան բաւական հայհոյութիւններ ըրած է Դաւթեանի հասցէին:

Լրագիրներէն դատելով՝ կ'երեւայ թէ Դաւթեանի հետ զէմ շատ գէշ լարուած են պոլսեցիք. դժբախտաբար, այդ վատ տրամադրութիւնը փոխանցիկ կ'ըլլայ հոս եւս:

Ընդհ. ժողովի մասին(2), լրագիրներու դրածներէն զատ ոչինչ գիտենք. ի՞նչ կ'անցնի կը դառնայ:

Ե. Թօփչեանի արեան վրէժը եթէ չլուծուի յեղափոխութեան պատուարեր եղանակով մը, շատ բան պիտի կորսնցնէ իր հմայքէն. խորապէս ցաւեցանք այդ անդամանելի կորուստին համար:

Հոս Իթթիհատ գիշերային դասախօսութեանց կը սկսի:

Նոր կառավարչին եկաւ. իթթիհատական. դեռ գործունէութիւն մը ցոյց չտուաւ հոս. անցեալ գործունէութիւնը կը գովուի:

Դուք ո՞ւր էք. ինչո՞վ կը զբաղիք, մեզի ալ գործ կը պատրաստէ՞ք. ինչ որ ալ ըլլայ. այնպէս մը կարգադրելու ենք գործերը որ՝ վազանցին(3) պէտք է աշխատինք տեսնուելու, մէկտեղուելու:

Անհամբեր սպասելով ձեր պատասխանին, կը մնամ կարօտի համբոյրներով

Վ. Ս. ՔԻՒՐՔՅԵԱՆ

- (1) Կ'ակնարկուի հաւածօրէն Սոցեալ Դեմոկրատ Նշակեմներում:
- (2) Կ'ակնարկուի Հ. Յ. Դ. 5րդ Ընդհ. ժողովին, որ տեղ ունեցաւ 1909 Սեպտեմբերին, Վառնա:
- (3) Արձակուրդին:

U. Ե. 36

ԳԱՀԻՐԵՆ՝ ՍՏ. ԵՍԱՅԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ՌՈՒԲԵՆ ԶԱՐԴԱՐԵԱՆԻՆ

Սովորական չափի գծաւոր բուլբի մը երկու երեսներում վրայ սեւ մելամով գրուած այս ճամակը ստորագրուած չէ: Հաւանաբար գոյութիւն ունեցած է ճաւի երկրորդ թերթ մը, Յերկայի կորուստ: Թուականն է 2 Փետրուար 1910 (ձայն գրուած է 1909, ապա, միեւնոյն մելամով եւ աւելի շեշտուած կերպով, Օթիմ վրայ գրուած է 10):

Ձեռագիրը, մտաւոր եւ գիւրաւ ընթանելի, Ստեփան Եսայեանի

եանի ձեռագիրն է: Այդ օրերում, ուրեմն, Ստ. Եսայեան արդէն իսկ ձգած էր Պոլիսը եւ վերադարձած Եգիպտոս:

Կ'ենթադրեմք թէ թղթածրարին մէջ գտնուած ուղարկուած ճամակի սեւագրութիւնն է:

Գահիրէ, 2 Փետրուար 909

Սիրելի ընկեր

Պրն. Ռուբէն Զարդարեան, Կ. Պոլիս

Ներեցէք որ մինչեւ հիմա չկարողացայ գրել Ձեզ հակառակ ցանկութեանս, որովհետեւ քանի եկած եմ պղտիկ հիւանդութեամբ մը կը տառապիմ: Թէեւ ոչինչ բան է սակայն կը ստիպէ ինծի յաճախ տուն մնալ եւ հետեւաբար ընելիքներս մոռացութեան տալ:

Գահիրէի ընկերական կեանքի մասին հաղորդելիք նորութիւն մը չգտայ, — նոյն ինկած ու թոյլ վիճակը, զուցէ աւելի վատ՝ քան ինչ որ էր Սահմանադրութեան նշանակումը: Կազմակերպութիւնը կէս քայքայուած վիճակի մէջ է, խուճրները պառակտուած ու իրարու դէմ վառուած՝ ատելութեան եւ կոռուի ոգւով: Հին ծանօթ ընկերները, կրնամ ըսել, ամբողջութեամբ քաշուած են գործէն եւ անտարբերութեամբ կը դիտեն եղածները, թոյլ տալով որ ասպարէզը բոլորովին բաց մնայ Լուսաբեր-Արեւեան խմբակի շարաշահութեան, որոնք անարգել կը շարունակեն թունաւորել հասարակութեան նորագործ գիտակցութիւնը, միեւնոյն ժամանակ իրենց ձեռք կեղբոնացնելով ազգային մէն մի հաստատութիւն: Երկար գրել այդ մասին աւելորդ կը նկատեմ, պատկերը շատ մուսլ է եւ ապագան շատ յուսահատական. չգիտեմ, արդեօք պիտի ըլլա՞յ երբեւիցէ, որ Եգիպտոսի դաշնակցականները զգան ու զգալի ընեն իրենց ոյժը: Այդ չեղաւ մինչեւ հիմա, իսկ ապագան՝ դիտելով ներկային, ատ ալ ինչպէս ըսի հեռու է յոյս ներշնչելէ: Ախտո՞ս, Եգիպտոսի հայութիւնը կարող է, ի վիճակի է, ամենամեծ դերերէն վերցնելու Հայաստանի ներկայ վերաշինութեան գործին մէջ, պայմանաւ սակայն որ մեր ընկերները իրենց կոչման բարձրութեան վրայ մնան, եւ գիտնան ղեկավարել հասարակութեան մէջ թագնուած ոյժերը:

Կ'ուզեմ Պիւռոյն ուշադրութեան յանձնել այս անգամ ինդիւր մը, որը ըստ երեւոյթին անկարելի է, եւ սակայն պէտք է լուրջ վերաբերուիլ հարցին եւ միջոցներ ձեռք առնել ապագայ պատահականութեանց դէմ: Ինչպէս գիտէք Սերպէտի տէր Միվլանգատէ Ռիֆաթը այստեղ է հաստատուած եւ սկսած է իր թերթին հրատարակութեան: Նա կողմնակի դիմումներ ըրած է մեր ընկերներէն մէկուն, բանակցութեան մտնալու Դաւթեանի հետ յանուն կազմակերպութեան մը, որուն հետ կապուած են եղեր իբր թէ Իշի. Սապահէտաին եւ այլ ծանօթ դէմքեր, պատրաստակամութիւն ցուցնելով միեւնոյն ժամանակ պէտք եղած հաւաստի-

քը ընծայել այդ մասին ալ: Նմանօրինակ կազմակերպութեան մը գոյութիւնը կամ նպատակը մեզի այնչափ ալ չի հետաքրքրեր ի հարկէ, եւ հետեւաբար բանակցութեան մտնալ ալ չպիտի արժէր, ինչպէս կը մտածէ նաեւ մեր ընկեր Նիկոլը: Սակայն նկատի առնելիք ուրիշ կէտ մը կայ հարցին մէջ, այն է թէ այս մարդիկը որչափ ալ չափազանցեն իրենց ոյժը, եւ կամ որչափ ալ քողարկել կ'ուզեն իրենց իսկական միտքը. շատ յայտնի է որ մութին մէջ ջանքեր կ'ընեն, բաներ մը պատրաստել կ'ուզեն Իթթիհատի դէմ, — դիրքի, իշխանութեան կոռու մը պարզապէս: Եւ մենք գիտենք թէ Տաճկաստանի մէջ այդօրինակ շարժումներ ինչ վընասներ կը հասցնեն հայութեան. որչափ ալ չէզոք մնալ ուզենք այդ կոռուներուն մէջ, պէտք է ընդունինք որ առաջին եւ մեծաւորն զոհը պիտի ըլլայ մեր ժողովուրդը: Հետեւաբար, իմ կարծիքով պէտք է այդչափ անկարելի նկատել այդ խնդիրը. պէտք է, գոնէ կիսապաշտօնական միջոցներով, յաջողցնել ասոնց և Օսմ. Կոմիտէի համաձայնութիւնը. եւ կամ գոնէ վիճեցնել այդօրինակ շարժումներ:

U. Ե. 37

ՄԵՐՍԻՆԵՆ՝ Գ. Կ. ԵԼԱՆՃԵԱՆԻ
ՆԱՄԱԿԸ ՍՏ. ԵՍԱՅԵԱՆԻՆ

Ուզողու է Ստ. Եսայեանին՝ Եգիպտոս: Գրուած է ճամակի փոքր չափի (13x20,5 սմ.) գծաւոր երկքերթ բուլբի վրայ, սեւ մելամով, չորս երես:

Մերոսին, 27/9 Յունուար 1912

Սիրելի Ստեփան,

Ստացայ 5/18 Դեկտ. թուակիր նամակդ. ճամբորդներուն անվնաս հասած ըլլալէն վերջին աստիճան ուրախացայ. ես կը վախնայի որ ծովի վրայ թշուառ պիտի ըլլային. փառք որ անվնաս հասած են:

Յարուսթիւնէն շարք մը առաջ ես ալ նամակ տուի: Չափրապով վերադարձեր է եւ առողջացեր է. ես մայրիկին հոս եղած ատենը լուր առած էի Պոլիս հիւանդութեան մասին, սակայն բան մը չէի ըսած, ճամբորդութեան ատեն մէյ մըն ալ ատոր շտրտմին ըսելով: Փառք Աստուծոյ, այլեւս վախնալու բան չէ մնացած:

Մեծ մայրիկիս, Ռաֆիկին, Տիգրան աղային եւ Մկրտիչին կարօտալից բարեւներով Սբ. Մնունդը եւ Նոր Կաղանդը կը շնորհաւորեմ: Տիգրան աղան կ'երեւի թէ Մնունդէն վերջը պիտի գայ որ չեկաւ, թող Եգիպ-

տոտը աղէկ մը վայելէ. սակայն Ձեզի խորհուրդ կու տամ որ շատ մի թողուք, ետքը չի վերադառնար եւ թաղուսեան հոս մինակ կը մնայ. այլեւս ան ալ հոն տանելէն դատ ուրիշ միջոց չկայ. աղէկ մը թող ուսումնասիրէ եւ գործ մը ճարէ, ան ալ թող գայ լմննայ:

Ես ալ փառք Աստուծոյ մարմնով հանդիստ եմ. սակայն սիրելիս այս օրերս հոգեկան այնպիսի վիշտերու մէջ ինկած եմ որ չեմ կրնար նկարագրել. սա Պարբանեան պատերազմով սկսած հայկական խնդիրները մեզի ամէն բան մոռցուցին: Դուք որ արտասահման կը գտնուիք, կարելի է որոշ ծրագիրներ ալ կը տեսնաք: Ձեր կարծիքը որ ինծի համար մեծ կարեւորութիւն ունի, կը խնդրեմ որ հաճիք անպատճառ ինծի տեղեկացնել, թէ ի՞նչ փութերու մէջ մտած է հիմա բարենորոգման հարցը եւ դեսպանախորհուրդին մէջ պիտի կրնայ ի նպաստ մեզի որոշում մը տրուիլ եւ գործադրուիլ. կ'աղաչեմ զիտցածդ ինծի գրես եւ Վեհապետ Արեւելեան թերթն ալ վեց ամիս իմ հասցէիս գրկել տալու համար անօրէնութեան գրէ. Տիրքան ազային ես հոս տամ իրեն վեցամսեան: Թէեւ հիմակուհիմա աղէկ գէշ կ'երթայ կոր, սակայն հայերուս մէջ ընդհանուր տպաւորութիւնը ան է, թէ նորէն պիտի ջարդուինք. հարկաւ այդ մասին բան մը չէք կրնար գիտնալ, այսուհանդերձ այնպիսի պարագաները դիւրացնող որեւէ գործ մը եթէ կայ՝ գրէ, գոնէ յանպատրաստի չըլլանք, ինքնապաշտպանութեան դիմենք:

Լսեցիք մանաւանդ թէ Նուպար Փաշան մասնաւորապէս այս գործով կը զբաղի. ո՞ր աստիճան ստուգութեան կարօտ է, կը յուսա՞ք որ օգտակար կ'ըլլայ: Մուշեղ եպս. Գահիրէ վերադարձա՞ւ, եւ ինչո՞ւ այդ մասին, վերջապէս ի նպաստ ըլլայ թէ աննպաստ, Ձեր կարծիքը եւ ընդհանուր հոսանքը ինչ որ է գրելու կը յապաղիս. վասնզի անհամբեր Ձեր լուրերուն կը սպասեմ:

Եթէ պատերազմը վերսկսի, որ շատ հաւանական է, անպատճառ ջարդ մը պիտի ըլլայ, վասնզի թուրքերը շատ լարուած են ընդհ. ջրիտոնէից եւ մասնաւորապէս հայերուն դէմ, թէ՛ անկախութեան կը ձգտին ըսելով. հարկաւ ասոնց այս հոգեբանութիւնը արտասահմանի թէ՛ հայոց, թէ՛ եւրոպական տէրութեանց ուշադրութենէն վրիպելու փորձ մը չէ. արդեօք ի՞նչ կը բանին մերինները այդ պարագային, եւ տէրութիւնները ի՞նչ, — վերջապէս լուսարանէ միտքս:

Դաշնակցութեան այս շարքի Ազգային ժողովին մէջ, Շահրիկեանի բերնով խօսածները հայկական հարցին շուրջ՝ այստեղ բոլոր կուսակցական եւ չէզոք շրջանակներուն մէջ շատ աղէկ տպաւորութիւն թողուցին: Կը յուսա՞ք որ նոյն կուսակցութիւնը իւր քաղաքական ուղղութիւնը ձգելով ընդհանուր հոսանքին պիտի երթայ չէ թէ մինակ խօսք է: Այս մասին եւս կարծիքներդ:

Ձեր բարի եւ աւետարեր լուրերուն անհամբեր սպասելով, կարօտալից համբոյրներով մնամ քոյդ՝

Գ. Կ. ԵԼԱՆՃԵԱՆ

Յ. Գ.— Վերջին վայրկեանին Տիրքան ազան եկաւ, ողջամբ, նամակն ալ ներփակ է:

Ս. Ե. 38

Գ. Կ. ԵԼԱՆՃԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Գրուած նոյն տիպի եւ չափի թուղթի վրայ (տես Ս. Ե. 37), սեւ-մամիշակագոյն մելամ-մատիտով, երկու երես:

Մերսին, 19/2 Յուլիս 1913

Սիրելի Ստեփան,

Շատոնց ի վեր Ձեռնէ լուր մը առած չունիմ դժբախտարար, չեմ գիտեր թէ չգրելու պատճառ մը ունի՞ք: Կը յուսամ թէ ամբողջ պարագայիւք հանդիստ էք. ես ալ փառք Աստուծոյ մարմնով հանդիստ կ'աշխատիմ կոր, չմեռնելու աստիճան, ապրուստի մը համար տեսնանք ապագան ինչե՛ր պիտի ստեղծէ:

Գործերուդ եւ հանդիստ լուրերուդ ակնդէտ կը սպասեմ. շատ մտաւտանջ եմ վիճակներդ մասին, ըստ այնմ շուտ եւ բարի լուրերուդ կը սպասեմ:

Մեծ մօրս ձեռքերը կը համբուրեմ. Ռաֆիկին եւ Մկրտիչին սիրալիբ եւ անկեղծ բարեւներս հաղորդեցէք:

Հոս անակնկալ փոփոխութիւն մը չկայ. տեսնանք սա հաշուեյարդարութենէն վերջը հայոց վիճակը ի՞նչ պիտի ըլլայ: Ամէն հայ աչքերը դէպի Եւրոպա դարձուցած՝ անհամբեր կը սպասէ աւետաւոր հրեշտակի ձայնին. չեմ գիտեր թէ ի՞նչ պիտի ըլլայ մեր այս զբոսախառն վիճակը, եթէ երբեք ուշանան ասոնց գործադրութեան դրուելու օրերը: Վերջին լուր մը եթէ լրագիրներու գրածներէն տարբեր ունիս, եւ կամ որեւէ փոփոխութիւն մը ի նպաստ թէ աննպաստ, գրելու մի մոռնար:

Շատ կը փափաքէի կոր 15-20 օրի չափ թէ՛ օդափոխութիւն թէ՛ տեսութիւն մը ընելու մտօք հոն գալ, սակայն Ֆապրիքային անակնկալ փոփոխութիւններուն եւ շինութիւններուն պատճառաւ չկրցայ փափաքս իրականացնել. եթէ դուք ունիք տրամադրելի ժամանակ, եկէք 15 օր տեսնուինք. չի՞ մըն ալ օդափոխութիւն Երած կը լինիս, նորէն կը վերադառնաս:

Համբոյրներով մնամ քոյդ՝

Գ. Կ. ԵԼԱՆՃԵԱՆ

Ս. Ե. 39

ՀԱՄԱԶԱՍՊԻ ՆԱՄԱԿԸ ՍՏ. ԵՍԱՅԵԱՆԻՆ

Գրուած է սեւ մելամով, մամակի փոքր չափի (13x20,5 սմ.) գծաւոր երկքերթ թուղթի վրայ, չորս երես:

Վարժ եւ յաճախ՝ դժուար ընթեռնելի ձեռագիր: Կան տասնյոթամբ: Ստորագրուած է՝ Համազասպ: Թուականէն եւ բովանդակութենէն դատելով, եթէ Պոլսէն գրուած է (դժբախտարար գրութեան վայրը ճշանակուած չէ), կրնայ պատկանի խրատաւոր Համազասպ Սրուանմտեանի գրչին: Իրօք, Օսմանեան Սահմանադրութեան օրերուն, ցարակամ հայաժողովներէն խոստովելով՝ Պոլիս անցած էր մահե Ասկերանի հերոսը: 1914ին, ան մասնակցեցաւ Կարմոյ Տրդ Ընդի. ժողովին, իբրեւ Պոլսոյ շրջանի պատգամաւոր: Նամակին մէջ արտայայտուած հոգեբանութիւնը — կուրսի եւ յեղափոխական կեանքի գործին միայն վստահիլ՝ մախազայով վերահաս մեծ վտանգը, եւ վերապահութեամբ մտնել խոհեմ փառաքանութեան կողմնակից դասակարգին — Համազասպինն է անկասկած, եւ մեր մարտիկ դասակարգինը՝ ընդհանրապէս:

Նամակի թուականէն տարի մը չանցած, պիտի իրականանար Համազասպի եւ Համազասպներու կամիսագրացած աղէտը:

1914 Մայիս 15

Սիրելի՛ Ստեփան,

Ներքի ինձ որ ուշացրի քեզ գրելիք նամակ: Գիտես, սիրելիս, միայն քէֆ հարցնելու համար ես աւելորդ եմ համարում գրել եւ ընկերներին ձանձրացրել:

Սիրելի Ստեփան, ինչո՞ւ ուշացրիք էդ զահրուժար Միջ-կուսակցականի վերջնական բանաձեւը, որպէս զի այդ մասին մի որոշ ուղղութեան յանգին տեղս: Շատ կարեւոր է այդ:

Կ'երեւի արդէն ստացած կը լինէք օրակարգ. աշխատեցէք յեղափոխական կէտերին ուշ դարձնել, որովհետեւ շատ բան է կախուած այս տարուան Ընդհանուր ժողովից:

Այստեղ շատ խստութիւններ են ձեռք առնուած յոյների դէմ, նաեւ հայերին. զինուորագրութեան այս նոր ձեւը այս անգամ վերջնականապէս քայքայում է հայ ժողովրդին: Սկսել է մի տարօրինակ գաղթ. բոլոր երիտասարդներն են այս անգամ որ Երկրից դուրս կ'երթան:

Այս բոլոր իրողութիւնները դալիս են հաստատուելու որ միմիայն յեղափոխութիւնն է, որ պիտի կարողանայ փրկել հայ ժողովրդին այս ցաւերից: Առայժմ բոլորովին հանդանակութեան մասին մի մտածէք. թող մնայ Ընդհանուր ժողովից յետոյ: Ես երկար խօսեցի այդ մասին այստեղ բժիշկ Չաւրիեւի հետ: Ընդհանուր ժողովից յետոյ է որ պիտի որոշուի թէ ով ի՞նչ պէտք է ընէ. իսկ այսպիսի քառուսում որ այժմեան մեր ներքին կեանքն է, չպէտք է ուժեղացնել որպէս զի երես առած չչարունակուի: Պէտք է Դաշնակցութիւնը

կանդնի դուտ իր յեղափոխական գործունէութեան վերայ. շուտով, շատ շուտով, կրկին մեր առաջ բացուելու է մի սոսկալի արիւնտո դաշտ. այդ դուշակուում են յոյն, արաբ, քիւրտ՝ որ պատրաստուած են. իսկ մենք, շնորհիւ մեր արտօնեալ դասակարգերին լուրջայն հաշտուում ենք այժմեան առեւելութեան խաղաղութեան հետ: Մեր դժբախտութեան մեծ կէտը հոն է, որ այն դասակարգը, այսինքն վաճառական, վարժապետ, խմբագիրներ եւ Փանֆառոն ինտելիգենցիան՝ որոնք Համիտի ուժիմի օրերուն նոյնպէս բողոքողներ էին, այժմ ապահովութիւն գտնելով, իրենք հակառակ են կանգնում նոյնիսկ բողոքողներին ու բոլոր կենսունակ քայլեր առնողներին, ինչու որ իրենք բաւական ապահով վիճակ մը ունեն:

Իմ ջերմագին համբոյրներս Պրն. Սուրէն Պարթեւեանին. չկարծէ որ իր յանձնարարութիւններ մոռացել եմ. դեռ բոլորովին չեմ աւարտել. կը գրեմ իրեն մանրամասն:

Նոյնպէս բարեւ ընկեր Ստեփանին եւ սիրելի Արմենակին. ես իրեն նոյնպէս կը գրեմ:

Բարեւներ ընկեր (1), Սեպուհ բէյին, ընկեր Նելուզին եւ ընկեր Զրաքեանին:

Համբոյրներով
Քո՛ ՀԱՄԱԶԱՍՊ

(1) Անուն մը՝ դժուար ընթեռնելի. կրնայ ըլլայ Բոզարին:

Ս. Ե. 40

ՏՐԱՊԻԶՈՆԷՆ՝ ԱՐՏԱԻԱԶԴԻ ՀԱՆԸՄԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՍՏ. ԵՍԱՅԵԱՆԻՆ

Գրուած Տրապիզոնի «Constantinople Palace» պալատի պաշտօնաթուղթի վրայ, երկու երես (սեւ մելամ):

Ստորագրուած է միայն ԱՐՏԱԻԱԶԴԻ: Բայց բովանդակութիւնը եւ ձեռագրին ու ստորագրութեան բաղադրութիւնը 417-1ին հետ (տես էջ 117) կը փարատեմ ամէն կասկած. — Յամակը կը պատկանի Արտաւազ Համբեմանի գրչին:

Արտաւազը Համբեման Եգիպտոսի պատգամաւոր էր Հ. 8. Գ. Տրդ Ընդի. ժողովին: Ժողովէն վերադարձի ճամբուն վրայ է՝ որ Տրապիզոնէն կը գրէ Ստ. Եսայեանին:

20 Օգոստ. 1914

Սիրելիս Ստեփան,

Պոլսէն եւ Կարիքէն գրած նամակներս յուսամ ստացած ես ժամանակին, ինչպէս նաեւ մեկնումի ճամբուս վրայ Տրապիզոնէն գրած նամակս:

Ընդհանուր ժողովը վերջացուց իր աշխատութիւնը

ները նախորդ Չորեքշաբթի, Օգոստոս 12ին եւ նոյն օրն իսկ եւ եւ Չարդարեանը ճամբայ ինկանք դէպի Տրապիզոն: Երկար կ'ըլլայ բացատրել թէ ինչպէս չփակուեցանք էրդրուժի մէջ եւ թէ ինչպէս զինուոր չենք տակաւին. անշուշտ հող կ'ենթադրէիք որ տառապակոծ ստամոքսովս հրացանը ուսիս մարդանք կատարելու վրայ եմ եւ կամ ճամբայ ինկած դէպի սահմանադուր. բայց հանգստացէք, ողջամբ Տրապիզոն հասանք եւ այսօր չորրորդ օրն է որ նաւու կը սպասենք Պոլիս երթալու համար: Եթէ նաւ գտնուի վրասահ եմ որ Պոլիս պիտի կրնամ ելլալ բայց անկից անդին ալ չեմ գիտեր. եթէ ուսական սահմանը երթալէ ինքզինքս կրցայ ազատել, չեմ գիտեր թէ պիտի կըրնամ ազատիլ յունական սահմանը զրկուելէ. ամէն պարագայի Պոլսէն կը դրեմ ձեզի:

Հոս «Ազատամարտ»ի մէջ զարմանքով կարդացի որ պաշարման վիճակ հրատարակուած է Եգիպտոսի մէջ. նամակս ստանալուդ պէս գրէ ինծի Պոլիս թէ ինչ է այդ պաշարման վիճակը եւ ի՞նչ պատճառով հրատարակուած է: Պոլիս «Ազատամարտ»ի հասցէով կըրնաս զրկել նամակդ:

Երկրին վիճակը պարզապէս ողբալի է. դրամ չկայ, հաց չկայ, աշխատող բազում չկայ, դործ չկայ. եւ ասիկա տակաւին պատերազմ չհրատարակուած. ի՞նչ պիտի ըլլայ այս դժբախտ երկրին վիճակը եթէ վաղը պատերազմն ալ իր արհաւիրքը տարածէ ամէն կողմ:

Բարեւէ մեր բժիշկը եւ ըսէ որ եթէ երեք դառնամ կարծեմ իր խաւարը չպիտի կրնամ հետս բերել: Բօլատը դարձաւ անշուշտ բարեւէ իմ կողմէս. սրահի խնդիրը ի՞նչ ըրիք, յուսամ մինչեւ հիմա տեղ մը զըտաք: Նամակս եթէ զերեք կը հետաքրքրէ կարդա իրենց եւ բարեւէ ջերմօրէն մեր ամբողջ ընկերները:

Պարթեւեանին ըսէ որ մեկնողներուն ետեւէն կարդացած իր խմբադրական անէժները բռնեցին եւ ամէնուն քթէն բերնէն եկաւ օղափոխութիւնը:

Գրելիք շատ ունիմ բայց տրամադրութիւն ոչ. Պոլսէն կը գրեմ նորէն:

Բուկզ սիրով
ԱՐՏԱՒԱԶԴ

Ս. Ե. 41

ՓԱՐԻԶԷՆ՝ ՆԱՄԱԿ ՍՏ. ԵՍԱՅԵԱՆԻՆ

Գրուած փոքր չափի մամակի գծաւոր երկբերք բուրբ վրայ, չորս երես: Մեղանք եղած է սև, բայց ժամանակի ընթացքին գոյնը բացուած է: Ստորագրութիւնը կարճ է բայց դժուար ընթանիլի. կարելի է կարդալ՝ Ա. ԵԱԶ (Խաչիկի կամ Խաչատուրեանի կրթատու՝ արդեօք):

Ստեփան Եսայեանի մեր տրամադրութեամ տակ գտնուող քրդ-

բածրարի վերջին մամակն է, եւ միակը՝ որ կը պատկանի անկախութեան շրջանին եւ կը շօշափէ Հայաստանի Հանրապետութեան վերաբերող հարցեր:

14/9/19. Paris
Av. Marceau 27 III.

Միրելի Եսայեան,

Այսօր նորէն հեռագրեցի, թէ Ահարոնեան երէկ ուշ առեւ Նիւ-Եորքէն՝ հայ անկախութեան յանձնախումբի նախագահ ձերարտէն հեռագիր մը ստացաւ, որուն մէկ մասը չկրցայ հեռագրել. ահաւասիկ ամբողջը. «Ձեր հեռագիրն այսօր ստացայ եւ հաղորդեցի նախագահին: Ամերիկական գործի Հայաստան զրկելը կը քննուի այս պահուս: Նախագահը մեզի հաղորդեց, որ Ֆրանսան 10,000 զինուոր կը զրկէ: Մենք կատարելապէս կը գնահատենք զրուժեան կարեւորութիւնը եւ անոր համեմատ ալ կ'աշխատինք»: Այս հեռագրի մէջ ամերիկեան գործ զրկուելու կարեւորութեան հետ ուշադրաւ է Ֆրանսականի ալ մասնակցութիւնը. հաւանականաբար 1916ի դաշնագրութեան շրջանում պիտի գործեն վերջինները: Հայ Հանրապետութեան ներկայ տագնապալի կացութեան մէջ 10,000 Ֆրանսացի զինուորի ներկայութիւնը շատ մեծ կարեւորութիւն ունի:

Հայ Հանրապետութեան քաղաքական ու ռազմական կացութիւնը շատ տագնապալի է: Թուրք, թաթար եւ քիւրտ զուգոր սահմանի ամէն կողմէն ներս կը խուժեն: Մերիններու դիմադրութիւնը թոյլ է. որովհետեւ ժողովուրդն այլեւս հիւժուած եւ ուժասպառ է հինգամեայ կռիւներէն եւ աղէտներէն:

Երկու օր առաջ դէպի Մարսէյլ ճամբու դրինք բժի. Լօրիս-Միլիթեան (մեծ զօրավարի եղբորորդին): Բժիշկը Քլեմանտոյի անձնական բարեկամն է եւ անոր մասնաւոր յանձնարարութեամբն ու քողաքական առաքելութեան պաշտօնով պիտի անցնի Պոլիս, հարաւային Ռուսաստան, Կովկաս եւ Հայաստան, ուսումնասիրելու տեղական ժողովուրդներու տրամադրութիւնը Ֆրանսայի վերաբերմամբ: Բժիշկը նախկին դաշնակցական մըն է, թէպէտ տարիներէ հետէ դործէ քաշուած:

Քանի մը օր առաջ Երեւան մեկնեցան Թէքէեան եւ Տէր Ստեփանեան Հայ Հանրապետութեան հետ բանակցելու եւ համաձայնութեան մը գալու: Մարդիկ, որոնք հոս ամէնէն անհաշտներն էին, ի՞նչպէս պիտի համաձայնութեան դան հոն, չեմ հասկնար: Թերեւս Վեհափառ-Մասիս փոքր ինչ հայ ոգի ու զգացում ներշնչէ այս հայրենազուրկ լեւանթէներուն:

Սակայն անոնց մեկնումը անհրաժեշտ կը դարձնէ իմ ալ երթալը փութացնել: Պիտի չկարողանամ սպասել Ձեր նամակին, եթէ մինչեւ 3 օր չհասնի: Ընկերները կը խոստանան նամակի բովանդակութեանը ընթացք տալ:

Արդէն նախապէս գրեք էի Ձեզի, թէ Լեւոնի Պասկի դրամը՝ 1806 Ֆրանքն յանձնեք եմ Ահարոնեանին, յարմար ժամանակին իր նպատակին գործածելու համար: — Ձեր զրկած 250 Ֆր.էն երկու հեռագրերու համար տուի 123+44=167. մնացածը պիտի յանձնեմ Հանրմեանին, յանձնարարելով՝ հաղորդել Ձեզի կարեւոր լուրերը:

Ամսոյս 2ին Քարտաշեան Նիւ-Եորքէն կը հեռագրէր. — «Մինչեւ 10 օր Ձեզի պիտի հաղորդեմ մեզի համար ամենակարեւոր իրողութիւններ, որոնց այժմ հեռագրելը արտօնուած չեմ: Ըլլալիքները վերջ պիտի դնեն մեր բոլոր տանջանքներուն»: Ցարդ բան մը չըստացանք. արդեօք ամերիկեան գործի առաջումը, որ հեռագրեցի Ձեզի, կ'ակնարկէ, թէ՞ ամերիկեան յանձնառութեան խնդիրն է, դեռ չպարզուեցաւ: Վերջնական տեղեկութիւն ստանալու պարագային պիտի հեռագրեմ անմիջապէս:

Նուպարն եւ իր պնակալէզները չեն դադրիր Հայ Հանրապետութիւնը վարկարեկել նոյնիսկ օտարներու առջև:

Թերեւս Եւրոպայէն վերջին նամակս ըլլայ. ջերմազին բարեւներս բոլոր բարեկամներուս եւ Ձեզ:

Միշտ Ձեր անձնուէր
Ա. ԵԱԶ

ՅԱՆԵԼՈՒԱԾ ՍՏ. ԵՍԱՅԵԱՆԻ ԲՂԹԱԾՐԱՐԻՆ

1907, Յունիս 19

«Հայրենիք» ամսագրի 1941 Մարտ, Ապրիլ եւ Մայիս ամիսներու համարներուն մէջ (ԺԹ. տարի, թիւ 5, 6 եւ 7), մեր ազգայնական ընկերը՝ Վահան Նաւասարդեան ունի Ստեփան Եսայեանի կեանքին ու գործունէութեան նուիրուած ուսումնասիրական-յուզագրական յօդուածաշարք մը: Շահեկան է այդ աշխատութիւնը մասնաւորաբար իր այն բաժնով (Մարտ 1941)՝ որ կը վերաբերի Եգիպտոսի հինգ ուխտագնացներու նրկի անցնելու ծրագրին եւ միջերուն (Մկրտիչ Եփրեմեան, Պօղոս Քեհեայեան՝ ծանօթ մանկ Արշակ Սվանթեան անունով, Սեդրակ Պալըզեան, Տիգրան Եգիպտեան եւ Ստեփան Եսայեան — տեսնի մեր ներածական ծանօթագրութիւնը՝ էջ 197): Յօդուածաշարքէն քաղելով, այդ ձեռնարկի մասին յաւելեալ մանրամասնութիւններ կու տանք յաջորդ բաժնի մեր ներածականին մէջ:

Վ. Նաւասարդեանի յօդուածաշարքէն կը քաղենք հետեւեալ տեղեկութիւնները.

ա) «Մեր գրութեան այս մասը կազմելու համար, — կը գրէ Վ. Ն. ծանօթագրութեան մը մէջ (1941 Մարտ, էջ 61), — օգտուած ենք առաւելաբար այն մամակներից — բունով անլի քան 700 հատ — որ մեր տրամադրութեանը տակ դրին ընկերներ Ս. Պալըզեան եւ Տ. Եգիպտեան: Նամակները ամբողջութեամբ պիտի փոխանցուին Հ. Յ. Դ. Թանգարանին»:

Արդ Ստ. Եսայեանի եւ Տ. Եգիպտեանի քրթածրարները, հաւաքաբար, ներկայիս չեն պարունակելու անլի քան 75-80 մամակներ, որոնց կարեւորագոյն մասը — անոնք որ մեր կուսակցութեան անցելի գործունէութեան ուղղութեամբ ճշմանկութիւն կը ներկայացնեն — կը հրատարակենք ներկայ մեր շարքով: Թէ ի՞նչ մակտագիր ունեցած են մնացեալները՝ մեզի յայտնի չէ:

Վերադարձուած են արդեօք իրենց տերերուն, թէ՞ կարկառուն հրապարակագրին մահէն տակաւին տասը տարիներ չանցած՝ անհետացած իր կարգ մը այլ թուրքերուն հետ:

բ) Ստեփան Եսայեանի ուղղուած (Հալէպէն եւ Ատամայէն) եւ ԱՐՇԱԿ ստորագրուած մամակներուն հեղինակը նոյնի՛նքն Պօղոս Քեհեայեանն է — մէկը Եգիպտոսի հինգ ուխտագնացներէն — ծանօթ մանկ՝ Արշակ Սվանթեան կամ Եգիպտոսի Արշակ անուններով: Ըստ Վ. Ն.ի՝ ան Ֆեհէսեցի է, «բայտագործ, Մամիկեան քահանայի տղայի՝ Գարեգինի վրայ իզմիրի մէջ կատարուած ահաբեկման մասնակցողներից, իբրեւ գործակից ընկեր ունենալով պրուսացի Արքահամին»։ ամենայն հաւանականութեամբ՝ գոն գացած է Մեծ Եգիպտոս: Քէ՛ՀԵԱՅԵԱՆ մակամունքն առջնութեամբ, տեսնի Ս. Ե. 5ի (էջ 202) եւ Ս. Ե. 14ի (էջ 208) մեր ծանօթագրութիւնները:

գ) Իր յեղափոխական գործունէութեան ընթացքին, Ստեփան Եսայեան գործածած է զանազան ծածկանուններ, ինչպէս՝ Արմենակ, Ատրուսի, Վրոյր, Էն.:

դ) Ս. Ե. 4 մամակին մէջ (Գարեհայրընց գրուած, տե՛ս էջ 201), թիւ 1 հարցումին պատասխան տրուած բառական դժուար ընթանիլի պարբերութիւնը («բէպէտեւ լուս, իրենց կը սպասեն գործողութեան») Վ. Ն.ի կողմէ վերծանուած է հետեւեալ ձևով. — «... ի ցոյցս սիրով. առայժմ բոճարարութիւնք դադարած. պահանջատէր կը պահանջեն իրեանց իրաւունք, ո՛չ ցասմամբ: Վերին աստիճան երկմիտ՝ կը դիտեն զապագայն եւ կը սպասեն գործողութեանց»: (Տեսնի «Հայրենիք» ամսագիր, 1941 Ապրիլ — ԺԹ. տարի, թիւ 6 — էջ 84):

ե) Նիւթի գէթ մասնակի ամբողջացման համար, Վ. Ն.ի յօդուածէն առնելով («Հայրենիք» ամսագիր, Մարտ 1941, էջ 77-78) այստեղ կու տանք այն մամակը՝ գոր իր Եգիպտոսի ընկերներուն գրած է Ստեփան Եսայեան, կետարիս հասնելէն անմիջապէս ետէ: Նամակը ներկայիս չի գտնուիր Ստ. Եսայեանի քրթածրարին մէջ. ըստ Վ. Ն.ի՝ գրուած է գաղտնի մեղանով:

Միրելի ընկերներ,

Վերջապէս հոս հասայ, եւ անհուն ուրախութիւն կը զլամ, երբ իմ այս առաջին նամակս կը գրեմ: Տրամադրութիւններու եւ ուրիշ կարեւոր հարցերու վրայ մանրամասն կը գրեմ, երբ հաստատուիմ գիւղ(1) եւ գլուխս գտնամ, որ, ինչպէս կը գուշակէք, այժմ անկարելի կը դառնայ դրամական սաստիկ նեղութեան հետեւանքով: Հետզհետէ կը ստանաք աւելի մանրամասն նամակներ, երբ կանոնաւորուին մեր յարաբերութիւնները: Այժմ կը սպասեմ, որ չուտով գրէք ինձ հետեւեալ հարցերուն պատասխանները. —

- 1) Ձեր մասին եղած ձերբակալման հրամանը ինչէ՞ն առաջ եկած է(2):
- 2) Ընդհ. ժողովը ի՞նչ ելք ունեցաւ(3):
- 3) Ի՞նչ ելք ունեցան Ոսկ.ի(4) ձերբակալութիւնները:
- 4) Ա.ը(5) ո՞ւր է այժմ եւ ե՞րբ կարող է մեկնիլ: Մանրամասն բացատրելով նաեւ ձեր մտքերը՝ չու-

տով պրեկտը պատասխանը, ծածկագիրը, ինչպէս որ կ'ուզէք:

Ջերմ համբոյրներ ամէնուղ ալ:

Վ. ԱՏՐՈՒՆԻ

- (1) Կակնարկուի անկասկած իր ծննդավայր Կերմիր գիւղին:
- (2) Վ. Նաւասարդեանի գրութեան կը հետեցուի՝ որ, 1906ի վերջերը կամ 1907ի առաջին ամիսներուն, թուրք ոստիկանութիւնը ձեռք առնուած է Եգիպտոսէն Ֆիլիպէ՝ Ռուբէն Զարգարեանին ուղղուած նամակ մը, ուր գտնուած են անունները Եգիպտոսի ուխտեալ ընկերներուն, ամենց ծրագիրը՝ իր մանրամասնութեանց մէջ (թէ իւրաքանչիւրը Երկրի ո՛ր մասը պիտի երթայ գործելու, եւն.): Ոստիկանութիւնը, ըստ երեւոյթիմ, ձերբակալման հրաման է արձակած ենթականերուն նկատմամբ եւ, աւելի ուշ, թրքական դատարանը զանոնք ի բացակայութեան դատապարտած է ցկեանս բերդարգելութեան: Ասով կրնան բացատրուիլ, անշուշտ, Սոս. Եսայեանի իզմիր հասնելուն առթիւ եղած ոստիկանական հետապնդումները, ձերբակալութիւնները, իր թաքցուած մտնելը, իզմիրէն հեռանալու ու ընդատակեայ գործելը՝ մինչեւ Սահմանադրութեան հռչակումը (տեսնել մեր ներածական ծանօթագրութիւնները, էջ 197): Վ. Ն. Առյժմ Գեորգի կը բացատրէ նաեւ հինգ ուխտեալներէն մէկ ուրիշին՝ Մկրտիչ Եփրեմեանի գլխուն Ռուսմանիոյ եւ Պուլկարիոյ մէջ եկած փորձանքները:
- (3) Հ. Յ. Դաշնակցութեան 4րդ Ընդհ. ժողովը, որ տեղի ունեցաւ Վիեննա, 1907 Փետրուար-Ապրիլ ամիսներուն:
- (4) Ոսկեհամբի (Իզմիր): Սոս. Եսայեանի իզմիր իջնելուն առթիւ կատարուած ոստիկանական հետապնդումներուն իբր հետեւումէ՝ կը ձերբակալուին կարգ մը ընկերներ, որոնցմէ մէկ քանիսն կը դատապարտուին ցկեանս բերդարգելութեան: Կ'ազատուին բարեբախտաբար շուրջ երկու տարի ետք, Սահմանադրութեան հռչակումով, Ոսկեհամբի մէջ իրենցմէ առաջ զանազան առիթներով ձերբակալուած՝ Վարդ-Մանուշակի (Յակոբ Արքայանեան, տես ԿՕ2-4, էջ 78), Հրաչի (Թիրեաբեան) եւ ուրիշներու հետ:
- (5) Վ. Ն. ի ենթադրութեամբ, ու շա՛տ հաւանութեամբ կ'ակնարկուի Արշակիմ (Պողոս Քեհեայեան, որ շուտով պիտի անցնէր Կիլիկիա):



Ստեփան Եսայեանի յեղափոխական արկածալից գործունէութեան մասին պիտի ունենանք տակաւին յաւելել տեղեկութիւններ, յաջորդ գլուխին տակ մեր տալիք՝ Տիգրան Եղապեանի եւ ուրիշներու ուղղուած զանազան նամակներուն մէջ:

Չենք ուզեր սակայն այս բաժնաբաժնի փակել՝ առանց տալու վերջին նամակ մը եւս.— այն՝ որ իզմիրի բանտէն 1907 Օգոստոս

տոս 5/18ին Եգիպտոսի հինգ ուխտեալներէն ողբացեալ Տիգրան Եղապեանի ուղղած է Ստեփան Եսայեանի հետապնդումներուն առթիւ ձերբակալուած ընկերներէն՝ Վարդան Յ. Գասապեանը: Հայ Յեղափոխական Դաշնակցութեան բարոյական մթնոլորտը եւ Սուրբ Գործին նկատմամբ անխորտակելի հաւատքն ու անսակարհ մուկրումը միայն կրնան բացատրել՝ թէ առանց Ստեփան Եսայեանի զանազան ձերբակալուած ու ցկեանս բերդարգելութեան դատապարտուած այս երիտասարդը արտայայտուի այս ձեւով, առանց ոչ ոք մեղադրելու, եւ տակաւին՝ հոգեկան այսպիսի մեծութեամբ, այս իրա՛ւ ազնուականութեամբ:

Կու տանք Վարդան Յ. Գասապեանի նամակը, — գէթ այն մասը՝ գոր հրատարակած է Վահան Նաւասարդեան («Հայրենիք», ամսագիր, Մարտ 1941, էջ 69-70):—

«Գրեւիշու ջիւ մը ծանր ըլլալով՝ կը մտածէի երկար. բայց ինչ ընեմ, որքան մտածեցի, վերջական որոշում չկրցայ տալ, սակայն հարկը օրէնքը լուծեց եւ ես ստիպուեցայ գրել: Դու կարծեմ տեղեկութիւն ունիս իմ վճռի մասին — ցկեանս բերդարգելութիւն. դուրսը կը թողում կինս իր մէկ պաւակով. անոնք այժմ բոլորովին անօդակաւ մնացին: Այս կէտը մեծ ցաւ կը պատճառէ ինձ: Սիրելի ընկեր, կը լսեմ որ հող Հայ Կարմիր Պաշտ մարմին մը պոյուրիւն ունի. կը խնդրեմ որ ընտանիքիս մասին դիւրութիւն մը խորհիս: Արամս արդէն հինգ տարին թեւակոխեց, այս Սեպտեմբերին մանկապարտէզ զրկելու ենք. չեմ ուզեր որ ձրի զրկեմ (ընդգծումը մեզմէ). չեմ ալ ուզեր փողոցները թողուլ, որպէսզի ապագային մեզ չանիծէ: Եղբայր, ասոր համար միջոց մը խորհէ, վերջապէս կարողութիւն մը ըրէ: Սիրելիս, արդէն մեծ դուժար մը չեմ պահանջեր. ամիսը եթէ մէկ անգլիական ոսկի ըլլայ՝ ընտանիքս եւ զաւակս կրնան ապրիլ. արդէն ընտանիքս ալ ջիւ թէ շատ տնական գործեր կ'ընէ: Ի՞նչ ընեմ, եղբայր, քանի որ այս տեսակ դժբախտութիւն պատահեցաւ, որո՞ւ պիտի դիմեմ. չեմ կարեմ, ջիւ չեմ չափակցիր»:

Խոնարհ հերոս մը եւս, Մեծ Մարգակերտներու վաստակի նարգաբո՛ք՝ նուիրեալներու մեր հեկայական բանակին մէջ, — ՎԱՐԴԱՆ ԳԱՍԱՊԵԱՆՆԸ:

Հ. Յ.

Ե.— ՏԻԳՐԱՆ ԵԱՂՈՒՊԵԱՆԻ ԹՈՒՂԹԵՐԸ
ԵՒ ԱՐԽԻՒԱՅԻՆ ԱՅԼ ԹՈՒՂԹԵՐ

1907 - 1921

Եգիպտոսի հինգ ուխտեալներէն մէկն էր ողբացեալ Տիգրան Եղապեանը(1): Բնիկ պուսեցի, ան կառնուէն հաստատուած էր Ազեխանդրիա, եւ այնտեղ լծուած հանրային-կուսակցական աշխատանքի: Հետագային, համաշխարհային առաջին պատերազմի տարիներուն և աւելի ուշ, ան դարձաւ Եգիպտոսի, ի մասնաւորի Ազեխանդրիոյ մեր կազմակերպութեան սիւներէն մէկը:

Կենսագրական ճշգրիտ տեղեկութիւններ դժբախտաբար կը պակսին մեզի: Բայց նամակներու այն շարքը, որ հրատարակութեան կու տանք այս գլուխին տակ, որոշ լոյս կը սփռէ իր ազգային եւ կուսակցական գործունէութեան վրայ:

Հրատարակելի շարքէն՝ 30 փաստաթուղթեր միայն, համարակալուած Տ. Ե. 1էն Տ. Ե. 30, բոլորն ալ 1913-1921 տարիներուն պատկանող, ներկայիս կը գտնուին մեր տրամադրութեան տակ: Ըսինք արդէն(2) թէ մեզի անծանօթ կը մնայ նակատագիրը ընկերներ Ս. Պալլըզեանի եւ Տ. Եղապեանի կողմէ Վ. Նաւասարդեանի յանձնուած «թուով աւելի քան 700 հատ» նամակներուն (3): Մնացեալները — ամենէն շահեկանները, վստահօրէն, քանի կը վերաբերին հինգ ուխտեալներու 1905-1908 տարիներու ծրագիրներուն եւ գործունէութեան — կու տանք ներածական այս բաժնին մէջ, առնելով Վահան Նաւասարդեանի «Ստեփան Եսայեան» աշխատութեան («Հայրենիք» ամսագիր, 1941 Մարտ — ժթ. տարի թիւ 5, էջ 57-78):

(1) Տեսնել այս մասին նախորդ բաժնի ներածականը, էջ 197:
 (2) Տեսնել Ստեփան Եսայեանի բաժնաբաժնի ՅԱԻՆՈՒՍԸ, (էջ 227):
 (3) Վ. Նաւասարդեան, — «Ստեփան Եսայեան», «Հայրենիք» ամսագիր, Մարտ 1941, էջ 61ի ծանօթագրութիւն:

Ա.— Վահան Նաւասարդեանի ուղղուած գրութեամբ մը, 29 Օգոստոս 1940 թուակիր, Տիգրան Եղապեան կարգ մը տեղեկութիւններ կու տայ Եգիպտոսի հինգ ընկերներու (Մկրտիչ Եփրեմեան, Պողոս կամ Արշակ Քեհեայեան-Սվաքեան, Սեդրակ Պալլըզեան, Տիգրան Եղապեան եւ Ստեփան Եսայեան) առաջադրած առաջնութեան — անցնիլ Երկիր, ի մասնաւորի Սեբաստիոյ եւ Կեսարիոյ շրջանները, նուիրուելու համար յեղափոխական-կազմակերպչական կենդանի գործին — ծրագրումին եւ իրականացման պարագաներուն մասին:—

«...Այդ օրերուն Յեղափոխական գործ ըսելով միայն մէկ բան կը հասկնայինք, — կազմակերպուիլ, դիմուիլ եւ ինքնապաշտպանուիլ: Չաւարեանի Եգիպտոս եկած տարին(4) երկար ժամանակէ ի վեր մեր միջեւ խօսուած գործը կեանք առաւ: Այն ատեն Եգիպտոս որոշ դեր մը կը կատարէր Լեռնավայրի (Կիլիկիա), Ոսկեհանքի (Իզմիր) եւ Վիշապի (Պոլիս) գործերուն մէջ. այնպէս որ բան մը ընելու ցանկութիւնը ամէնուս մէջը կար: Մենք դիմեցինք Չաւարեանին եւ պահանջեցինք, որ Կազմակերպութիւնը ստանձնէ մեր ծրագրած գործը եւ մենք ինքզինքնիս տրամադրենք իրեն: Չաւարեանը պատասխանեց, թէ Կազմակերպութիւնը այդ գործի համար պիտո՞ւն չունի. այն ատեն Ս. Պալլըզեան եւ Մ. Եփրեմեան յօժարեցան իրենք ծախսել մինչեւ 250 ոսկի: Պոլսի առաջին ժողովը եղաւ Գահիրէ, Չաւարեանի ներկայութեան: Մեր երկու ընկերները, որոնք խոստացեր էին 250 ոսկի տրա-

(4) Ամենայն հաւանականութեամբ՝ 1905, կամ, ամենէն ուշը, 1906 Յունուար: Յամենայնպէս ճշգրիտ բուսական գտած չենք որեւէ տեղ:

մադրել, ուղեցին անջատական բան մը ընել, բայց Ձա-
ւարեան կարողացաւ ճամբու բերել եւ ամուր կերպով
գործը կապել կաղմակերպութեան: Հանգոյց խորհրդ-
դատուի դեր ունեցած է(5):»

Բ.— Ըստ երեւոյթիմ, սակայն, Սիւնն Ձաւարեա-
նի ներկայութիւնը վերջնական խթանը միայն հանդի-
սացած է, միաժամանակ մարմին ու յստակ ձեւ տալով
արդէն իսկ ծրագրուած ձեռնարկին: Այդպէս կը հաս-
կըցուի գոնէ հետեւեալ նամակի բովանդակութեան,
գրուած, ըստ Վ. Ն. ի, 1905 Հոկտեմբեր 2ին, Արշակի
կողմէ, եւ ուղղուած Տ. Եազուպեանին.—

«...Մի քանի օր առաջ մեր ընկերներէն Պ. Սեդ-
րակ Պալըզեանը հող եկաւ Տօքթորին հետ(6) տեսնու-
ելու՝ մասնաւոր մեր խնդրոյ առթիւ. թէպէտեւ կ'ու-
զէր ձեզ հետ տեսնուիլ, սակայն ժամանակ չունէր.
միայն մէկ ցորեկ կեցաւ ու վերադարձաւ:

Այս օրերս Տօքթորը մեր ինչ տեսակ մարդ ըլլալն
ու ինչ գործերով զբաղելը հաստատող նամակ մը պի-
տի զրկէ մեզի, որպէսզի այդ նամակով միասին մենք
եւս մի նամակ գրելով՝ Բիւրոյին ուղարկենք: Բաւա-
կան խորհրդակցելու պէտք ունինք՝ մեր պահանջները
ըստ այնմ ներկայացնելու համար Բիւրոյին. ուստի
աշխատեցէք որչափ կարելի է շուտ դալ հոս, անհամ-
բեր ձեզ կը սպասենք: Եթէ կ'ուզես, անգամ մը Տօք-
թորին մօտ գնա, տեսնուէ հետը եւ այս խնդրոյ առ-
թիւ դու եւս լաւ մը իր գաղափարը առ. որովհետեւ
Տօքթորը այս խնդրոյ առթիւ չափազանց ուրախու-
թիւն յայտնելով Պալըզեանի՝ ըսած է, որ այս գոր-
ծը մեր յեղափոխական պատմութեան մէջ եղակի բան
մը պիտի ըլլայ, աւելցնելով, որ եթէ Ձաւարեանը ի-
մանալու ըլլայ՝ խիստ գոհ եւ ուրախ պիտի ըլլայ:
Այլեւս երկար-բարակ գրելու պէտքը չկայ կարծեմ.
Խնդիրը կը հասկնաք»:

Գ.— Ձաւարեանի ներկայութեան գործի յստակա-
ցումէն ետք, դէպի Երկիր առաջին քամբայ ելլողը
կ'ըլլայ, տեսանք արդէն, Ստեփան Եսայեանը: Ան Ե-
գիպտոսը կը ձգէ, ըստ երեւոյթիմ, 1906 Մայիսին,
Կիպրոսի վրայով անցնելու համար Կիլիկիա եւ այնտե-
ղէն, հաւանօրէն, իր ծննդավայրը՝ Կեսարիա: 1906
Յունիս 4ին, Մկրտիչ Եփրեմեանը Գահիրէէն նամակով
մը կ'աւետէ Տ. Եազուպեանին՝ Ազեմազարիա.—

«...Ստացանք վերջապէս մի նամակ Ստեփանէն,

(5) Հանգոյց կուսակցական ծածկանունն է Նիկոլ Ազարեանի,
որ 1906-1907 բուսականներու գտնուած է Եգիպտոս, իբրեւ գոր-
ծիչ:

(6) Կ'ակնարկուի Տօքթ. Կ. Փաշայեան եւս, Պարսկաստանի
կուսակցական կարկանդակներէն մէկը, որ 1904էն 1906 ապ-
րիլ ամիսը Եգիպտոս: Ստեփանազարութեան ետք, անցած է
Պոլիս: Զոհ գացած է Մեծ Եղեռնին:

որուն մէջ Կիպրոս հասնելուն պատմութիւնը կ'ընէ:
Մէկ-երկու հասցէներու աղարկուի կերպով դիմելէ յե-
տոյ, որոշեր է ցամաքին մօտաւորն վայր մը երթալ(7),
ուսկից կարելի ըլլայ նաևով անցնիլ Ատանայի դեմը:
Նա գտեր է մի մարդ վստահելի, որ յանձն առեր է
զինք ուղարկելու. հաւանական է, որ մինչեւ հիմակ
նա մտած կ'ըլլայ, որովհետեւ կ'ըսէր թէ նամակիս
պատասխանը մինչեւ Յունիս 1 ինձի չհասնելու պա-
րագային, մի՛ դրէք: Յուսանք եւ սրտապին յաջողու-
թիւն մաղթենք»:

Ձեռնարկը, դժբախտաբար, կը ձախողի: Յունիս
15ին (1906), Մ. Եփրեմեանը կը գրէ Տ. Եազուպեա-
նին.—

«...Ներփակ կ'ուղարկենք քեզի Ստեփանէն այսօր
ստացած նամակին: Կը տեսնես որ զործը անսպասե-
լի ձախողութեանց կը բախի: Մենք ի հարկէ այդ նա-
մակի մասին պէտք եղած կարծիքը յայտնեցինք եւ որո-
շում կայացուցինք, սակայն այսպիսի վճռական պա-
րագաներուն ամէնուս ալ կամքը հարկաւոր ըլլալուն՝
կը դիմենք եւ քեզ:

Ահաւասիկ մեր որոշումը.— Գրել անմիջապէս
Ստեփանին, որ առժամանակեայ կերպով յետաձգած
ենք իր Երկիր մտնելու ձեռնարկը եւ, հետեւաբար, ի-
րեն կը մնայ որոշել թէ հոս կամ Ազեմազարիա վերա-
դառնայ, մինչեւ որ Կիպրոսի մէջ աշխատինք մի վրա-
տահելի եւ ապահով մարդ գտնել, որուն աջակցու-
թեամբ կարելի ըլլայ անվտանգ Երկիր մտնել: Անմի-
ջապէս պատասխանէ»:

Դ.— Ոստիկանութեան հետապնդումներուն ենթա-
կայ՝ Ստեփանը բաւական դժուարութեամբ կը յաջո-
ղի ոտք դնել Փոքր-Սայիտ: Այնտեղ ալ կը մնայ քանի
մը շաբաթ, քղթակցական տեսական կապի մէջ ըլլա-
լով Գահիրէի եւ Ազեմազարիայ իր ընկերներուն հետ:
Այս ժամանակաշրջանին փոխանակուած գրութիւննե-
րուն ծանօթանալու համար ընթերցողը կրնայ դիմել
Վահան Նաւասարդեանի յօդուածին («Հայրենիք» ամ-
սագիր, Մարտ 1941):

Իր շահեկանութեան համար, կու տանք միայն Ս.
Պալըզեանի եւ Մ. Եփրեմեանի կողմէ 1 Յունիս 1906ին
Ստ. Եսայեանին գրուած նամակի մը մէկ մասը, որ-
մէ ի յայտ կու գայ՝ որ ուխտեալներու խումբը կը շա-
բուանակէր տեսական կապ պահել Հ. Յ. Դաշնակցու-
թեան գործադիր մարմիններուն հետ.—

«...Նիւթական այս ընդհանուր ձախողութեանց
եւ անակնկալներու հանդէպ գրեթէ շուտաւ՝ որոշե-
ցինք ժողով մը գումարել Արշակի հոս եղած ատե-

(7) Ըսել կ'ուզուի անշուշտ՝ «մայր ցամաքին», այսինքն՝ Կի-
լիկիայ: Որքան Ստ. Եսայեան ուզած է ձուլով կամ մակոյկով
Կիպրոսի հիւսիսային ափէն անցնիլ Կիլիկիա:

նը(8), եւ քանի որ Ազեմազարիան պիտի մեկնէ(9)՝ մեր
վերջին ակնկալութիւնները Դաշնակցութենէն յայտնե-
ցինք իրեն:

Եւ, իսկապէս, մեր ընդհանուր կացութիւնը պար-
զելով՝ շեշտեցինք թէ նիւթականը որքան մեծ խոչըն-
դոտներ կը հանէ մեզ հանդէպ, եւ զանոնք հարթելու
համար անպայման Դաշնակցութեան օգնութեանը կը
կարօտինք եւ կը պահանջենք, որ 500 ոսկի մեր տրա-
մադրութեանը տակ դնեն, մաս առ մաս վճարելի՝ մեր
ընկերներուն Երկիր մտնելուն համեմատութեամբ, իսկ
մնացորդը յանձնելի Երկիր մտնող վերջին ընկերին:
Նա, ի հարկէ(9), համոզուած մեր պահանջներու հիմ-
նաւոր ու բանական ըլլալուն վրայ, խոստացաւ ոչ մի
լանջ չխնայել անոնց յաջողութեան համար: Պիտի
գրենք միանպամայն Սիմոնին(10), տեղեկանալու հա-
մար թէ մեր հարցը Խորհուրդին(11) ներկայացուե-
ցա՞ւ թէ ոչ, եւ ի՞նչ եղաւ արդիւնքը»:

Ե.— Ըստ երեւոյթիմ՝ նոյն օրերուն է (Յունիսի
սկիզբները) որ Ստեփան Եսայեան Փոքր-Սայիտէն
կ'անցնի Ազեմազարիա ու նա կ'առնէ դէպի Յունաս-
տան, այնտեղէն անցնելու համար Իզմիր եւ ապա՝ Կե-
սարիա: «Նամակներից պարզուում է, — կը գրէ Վ. Ն.,
— որ խումբը՝ նախ քան Ստեփանին քամբայ հանելը՝
կազմակերպած էր գիծը՝ մինչեւ Իզմիր իր մարդիկն
ունենալով. լաւապէս կազմակերպուած էր գործը մաս-
նաւորաբար Իզմիրի մէջ, ուր Ռուբէն, Վարդան(12)
եւ Խաչիկ ծածկանուններու տակ քաֆուած երեք հա-
զիներ Ստեփանին նախ պիտի առնէին, առժամաբար
նրան օքեւան տային Իզմիրում եւ ապա քամբայ հա-
նէին դէպի իր առաքելութեան վայրը»:

Ոստիկանական խիստ հսկողութիւնը Ոսկեհամբի
ուղոց հնարաւորութիւն չ'ընծայեր սակայն Ստեփանը

(8) Ըստ երեւոյթիմ, Յունիսի վերջերը Արշակ Բէհեմայեանը
Գահիրէէն անցած էր Ազեմազարիա, ուրկէ շուտով պիտի մեկ-
նէր դէպի Կովկաս:

(9) Կ'ակնարկուի Դաշնակցութեան ներկայացուցչին՝ Հան-
գոյցի (Ն. Ազարեան):

(10) Սիւնն Ձաւարեանին, որ իր Եգիպտոս գտնուած շրջանէն,
իջկէս տեսանք, ծանօթ էր ուխտեալներու ծրագրին:

(11) Հ. Յ. Դ. հորհուրդը, Սոփիայի Յրդ Ընդհ. ժողովէն
ի վեր (1904), կը փոխարինէր 2րդ Ընդհ. ժողովի հաստատած
Դաշնակցութեան Կամքը ներկայացնող Մարմինը:

(12) Ըստ Վ. Ն. ի ծանօթագրութեան («Հայրենիք» ամսագիր,
Մարտ 1941, էջ 65), Վարդան Յ. Գասպարեան է, որու բանտէն
գրած նամակը տուիմք նախորդ բաժնի ՅԱԻՆՈՒՄԻ վերջաւորու-
թեան: Սակայն, այդ պարագային, Ռուբէն եւ Խաչիկ ծածկա-
նուններու կողմէն դրուած վարդանը կը դադրի ծածկանունն ըլ-
լալէ: Աւելի, Վարդան Գասպարեանի բանտէն գրած այլ մէկ նա-
մակէն, 1/14 Օգոստոս 1907 թուակիր, որ դրուած է Վ. Ն. ի յօդ-
ուածին մէջ (նոյն, էջ 66), ի յայտ կու գայ՝ որ ստաբաթիստ դա-
տապարտեալը ոչ լսած էր Ստեփան Եսայեանի մասին, ոչ ալ ու-
նէր որեւէ տեղեկութիւն՝ անոր Իզմիր գալուն մասին:

նաւէն ապահով վար առնելու, եւ ան կը ստիպուի իր
քամբայ շարունակել մինչեւ Տրապիզոն, եւ անկէ վե-
րստին դառնալ Իզմիր, ուր վերջապէս կը յաջողի ա-
պահով ոտք դնել 1906 Օգոստոս 19ին: ՎՐՈՅԻ ստո-
րագրութեամբ, ան Իզմիրէն կը գրէ Տիգրան Եազուպե-
անին, Օգոստոս 21ին.—

«Երկու օր առաջ հասայ ապահով, բայց սար-
սափելի սուղ զնեցինք այդ յաջողութիւնը, որովհետեւ
ստիպուած եղայ մինչեւ Թրապիզոն երթալ եւ վերա-
դարձիս ամէն յոյս կորսուած էր. բայց ինչ որ է, բա-
րի վախճան ունեցաւ գործը. պէտք է խոստովանիլ,
որ Ռուբէնը ձեռքէն եկածը չ'ըլլացաւ»:

Զ.— Յաջողութեան սուղ գնուած ըլլալը Ստ. Ե-
սայեանի մինչեւ Տրապիզոն գացած ու վերադարձած
ըլլալուն մէջ չ'էր կայանար միայն: Ինչպէս առիթ ու-
նեցանք ըսելու(13), նոր գործիչի մը հասնելուն լուրը
առած, յեղափոխական-դաւադարական նոր ձեռնարկնե-
րու սարսափով, Իզմիրի ոստիկանութիւնը կատարեց
բազմաթիւ ձեռնարկներ, եւ քրեական դատա-
րանը արձակեց ախորի եւ քրեագրութեան բազմա-
թիւ վճիռներ: Իզմիրէն, Խիզախի կողմէ գրուած 13
Սեպտեմբեր 1906 թուակիր հետեւեալ նամակը որոշ
չափով կը պարզարանէ Ստեփան Եսայեանի ժամանան
ոստիկանութեան կողմէ իմացուելու պարագաները:
Նամակը ուղղուած է Տիգրան Եազուպեանին, Ազեմ-
ազարիա.—

«Յարգելի Պարոն Տիգրան,
Տակաւին ձեզմէ ունէ նամակ շտապուեցաւ. ուս-
տի Պրն. Արմենակին(14) յանձնարարութեամբ կարե-
ւոր համարեցի այս երկուող գրութիւնս ձեզի ուղղել,
բացատրելու համար Արմէն Վազգէնի ձեռքակալուելու
մի քանի մանրամասնութիւնները, որոնք ուղղակի կեր-
պով կապ ունին ձեր ընկեր Պրն. Արմենակի վիճակին
հետ: Ահա իրողութիւնը:

Արմէն Վազգէնը ասկէ մօտաւորապէս երեք շաբաթ
առաջ ձեզմէ նամակ ստացեր է՝ յանձնելի Պրն. Արմե-
նակին. ատոր մէջ կայ եղեր 10 ոսկի թուղթ մը, եւ
նոյնպէս ձեր նամակին մէջ գրուած Վարդան Գասպարե-
ան անուն մը: Այդ նամակը հասցէին տանելու միջո-
ցին հետապնդող լրտեսներէ կասկածուելով՝ կը ձեռ-
բակալուի եւ ոստիկանութիւնը անոր քովէն կը գտնէ
ձեր զրկած նամակը: Ատոր հետեւանքով Վարդանն ալ
ձեռքակալուելով՝ ճնշումներու կ'ենթարկուի, որպէս-
զի յայտնէ կամ խոստովանի Երկրպագէն ուրիշ տեղ մը
երթալու համար հոս եկող Ստեփանին ո՛վ եւ ո՛ւր լի-
նելը. նոյնպէս խուզարկեցին Վարդանին եւ ուրիշ մի

(13) Տեսնել նախորդ բաժնի ներածականը (էջ 197) եւ յա-
ւելուածը (էջ 228):

(14) Ստեփան Եսայեանի ծածկանուններէն մէկը:

քանի ձերբակալուածներու տունը. բայց Ստեփանի վիճակը ապահովուած էր տեղւոյս ընկերներու կողմէ տնօրինուած թաքստոցի մը մէջ, եւ Վարդանն ալ չէր խոստովանած ոչ մի բան: Այս վերոյիշեալ ծանօթութիւնները տակաւին նոր դուրս եկան բանտի յարաբերութենէ զրկուած ընկերոջ մը կողմէ: Խիստ հակողութիւնները կը շարունակուին. երբեմն փողոցի անցողները կը կայնեցնեն ու կը հարցաքննեն անոնց ով լինելը (ի հարկէ, ինչ ազդի պատկանիլը հասկնալու համար) եւ յետոյ վրան-գլուխը կը խուզարկեն:

Ձեր ընկերը անհամբեր ձեր պատասխանին կը սպասէ...»:

Է.— Իզմիր հասնելուն պէս թաքստոց մտած Ստեփան Եսայեանը ի վերջոյ կը ստանայ Տիգրան Եսայեանի նամակն ու նոր չէք մը, եւ կը պատասխանէ 6 Հոկտեմբերին (1906).—

«Սիրելի Տիգրան,

Ստացայ նամակդ եւ ներփակ չէքը, թէպէտեւ տակաւին դրամը չեմ ստացած. ստանալու պէս կը տեղեկացնեմ ձեզի, առայժմ շնորհակալութիւններ:

Գալով տեղւոյս դրութեան, սոսկալի վատ վիճակի մէջ է եւ ա՛լ աւելի վատթարանալու վրայ է: Մինչեւ հիմա ձերբակալուածներու թիւը 40ի կը հասնի, եւ տարածներէն ալ ոչ մին չեն թողած, եւ ամէն յարաբերութենէ արգիլուած են. Վ.ի համար(15) զրոյց կայ, որ պիտի աքսորեն Երկիր: Անցնող-զարձող հայերուն վրան-գլուխը կը խուզարկեն, այնպէս որ չէ կարելի առանց երկիւղի շատ ման գալ փողոցները: Մինչեւ հիմա որոշ բան մը չկարողացանք հասկնալ, թէ ինչ է փնտռածնին. միայն սա կայ, որ իբր թէ տինամիթ ներածուած է, այն կ'ուզեն ձեռք անցընել, եւ մէյ մըն ալ Ստեփան անունով մէկը կը փնտռեն եւ ուրիշ մի քանի անձեր: Անշուշտ կը գուշակէք, թէ ասոնց մեծ մասը թուրք ոստիկանութեան խելապատիկէն ծնած չափազանցութիւններ են: Իսկ ես, ինչպէս գիտէք, արդէն շատ հիւանդ եմ, մի քանի անգամ մահու ընէ ազատեցայ եւ մաղթելի էր որ չծանրանար վիճակս(16): Դրամը ստանալու պէս պիտի ջանամ ճամբայ ելլել. այստեղ գաւառները քու գիտցածիդ պէս չեն մնացեր հիմա, գրեթէ նոյնչափ գէշ են, որչափ հոս: Կը զարմանամ եղբայրներուս գերեզմանային լուսութեան վրայ, մինչեւ իսկ բարեւ մը չըրկեցին ցարդ. ինչ է պատճառը, արդեօք անո՞նք ալ հիւանդացան ինծի պէս: Երբեք թող չնեղանան, որ իրենց զատ նա-

մակ չեմ գրեր. շատ դրել արգիլուած է առայժմ բժիշկին կողմէ, մի քիչ ինքզինքս ամփոփեմ, նորէն կը գրեմ, թող չկարծեն թէ մոռցեր եմ զիրենք: Նամակիս պատասխանը առաջին փոստով գրէ անպատճառ. եթէ կարելոր դրելիք ունիս՝ այդ հասցէն ապահով է, միայն մէջի պահարանին վրայ կը գրես՝ Արմենակին: Այս նամակդ շատ ուշ հասաւ ձեռքս, անոր համար կ'ըսեմ թէ առաջին փոստով գրէ եւ՝ եթէ կարելի է՝ նամակին մէջ մի քիչ փոշի դրէք, որովհետեւ հոս չի գտնուիր եւ ծուկիս համար ուրիշ դեղ չեմ կրնար դործածել, մանաւանդ որ ձմեռն ալ մօտ է, եթէ մինչեւ ձմեռ ող մնանք(17): Է՛հ, այլեւս Նախախնամութեան օգնութեան է մնացեր մեր վիճակը:

Չանթան զրկել չ'ուզեր, միայն Մ.ին հետ յարաբերութիւնդ մի՛ դադրեցնէր եւ ծրարն ալ անպատճառ զրկէ, եթէ մինչեւ հիմա չես յղած(18):

Առայժմ ցտեսութիւն. համբոյրներ երեքիդ ալ:

ԱՏՐՈՒՆԻ

Յ. Գ.— Ա.ին (19) բարեւներս կը գրէք նամակ զրեւնուդ. ի՞նչպէս է, ո՞ւր է, տեղեկութիւն տուէք. հետաքրքիր էի պիտնալ, թէ նախորդ նամակին պարունակութիւնը ի՞նչ էր»:

Ը.— Շուրջ երկու ամիս պահուած մնալէ ետք՝ Ստեփան Եսայեան իզմիրէն կը յաջողի մեկնիլ Հոկտեմբերի 20ի շուրջ: Խիզախի հետեւեալ նամակները, իզմիրէն գրուած, Եգիպտոսի ընկերներուն տեղեկութիւններ կու տան նոր մասին:

ա) Ազեֆսանդրիա, Տ. Եսայեանին, 27 Հոկտեմբեր 1906 թուակալուով.—

«...Պրն. Արմենակը թուականէս շարք մը առաջ տեղէն մեկնեցաւ. դեռ անկէ ունէ նամակ չստացուեցաւ իր ապահով վայր մը հասնելու մասին: Նա մեկնելէ առաջ յանձնարարեց ինձ, որ իրեն եկած նամակները ետ վերադարձնեմ հասցէներուն. ահա այս պատճառաւ է որ նոյն ներփակ նամակը ձեզ կ'ուղարկեմ՝ զրկողին հասցէն չզիտնալուս համար:

Պրն. Արմենակին մեկնած լինելը Գահիրէ եւս իմացուցի մասնաւոր նամակով մը»:

բ) Գահիրէ, Յուլիին (Մ. Եփրեմեանի ծածկանունը), 2/15 Մարտ 1907ին.—

«...Ցարդ Պրն. Արմենակին գտնուած վայրին ա-

(17) Կ'ակնարկուի, ըստ Վ. Ն.ի, գաղտնի մեղքի փոշիի:
 (18) Որոշ չէ թէ ո՛վ է կամ ի՞նչ է Մ.ն: Արգեօ՛ք ՎՄԻՄ մի՞նչ ըսել կ'ուզուի, ակնարկելով Արեւմտեան Բիւրոյին կամ կուսակցական պատասխանատու այլ մարմնի մը:
 (19) Որոշապէս՝ կ'ակնարկուի Արշակին, որ այդ օրերուն Կովկաս կը գտնուէր:

(15) Կ'ակնարկուի անշուշտ վարդան Յ. Գասպեանին:
 (16) Ըստ Վ. Ն.ի, ակնարկութիւնը ոչ թէ ֆիզիական ռեւէ հիւանդութեան է, այլ Ստեփան Եսայեանի համադրած փորձագէտներուն եւ հետապնդումներուն:

նունը կը կոչուի Սօնտուրու, որ կը գտնուի Զիվթիլէն երկու կայարան անդին. աւելի պարզ խօսելով՝ Իզմիրէն երկնցած Այտընի գիծը կը վերջանայ Տիւնէր. այս քաղաքէն մէկ կայարան անդին Սիւթլէն անունով կայարան ունեցող զիւղ մը կայ, ուրիշ մասնաւոր երկաթուղային ճիւղ մը երկնցած է մինչեւ Զիվթիլ: Սիւթլէնէ մինչեւ Զիվթիլ երկնցող զիւղին վրայ երեք կայարան ունեցող զիւղեր կան, — առաջինը՝ Սօնտուրու, երկրորդը՝ Ինճէթէօյ եւ միւսը՝ Զիվթիլ»(20):

գ) Ազեֆսանդրիա, Տ. Եսայեանին, 12/25 Մայիս 1907 թուակիր.—

«...Ստացայ Մայիս 16 թուակիրդ, որուն հետ նաեւ ներփակ երկտող մը, Պրն. Արմենակին յանձնելի: Սակայն այս վերջինը ցարդ չկարողացայ իր հասցէին զրկել. Պրն. Արմենակէն երկու շաբաթէն աւելի է որ նամակ ստացած չեմ, որով չգիտեմ թէ նա ո՛ւր կը գտնուի եւ կամ ի՞նչ ապահովութեան մէջ է, ուստի խոհեմութիւն համարեցի Արմենակի հասցէին ուղղած ներփակ նամակը չըրկել իրեն:

...Բանտարկուածներին յղած եմ բարեւներդ. բարեւներ ունին ձեզի:

Մի քանի օր առաջ 101 տարուան դատապարտուած մեր ութը բանտարկեալ ընկերները բերդարգելութեան ուղարկեցին Պոտրում: Յուզումը մեծ է հոս մնացող հայ բանտարկեալներու շարքին մէջ: Կ'ըսուի թէ մօտ օրէն անոնք ալ բերդարգելութեան պիտի ուղարկուին»: Գիտեմք որ 1907 Յունիսի կէսերուն, երկար ողիսականէ մը ետք, Ստեփան Եսայեան կը յաջողի հասնիլ Կեսարիա(21):

Թ.— Ստեփան Եսայեանէն գրեթէ անմիջապէս ետք, Արշակը (Պօղոս Քեհեայեանը) իր կարգին կը ձգեցր Եգիպտոսը եւ կ'անցնէր Կովկաս: Թիֆլիսէն, 11 Օգոստոս 1906 թուակիր նամակով մը, ան կը գրէ Տիգրան Եսայեանին.—

«...Թուականէս 12 օր առաջ ժամանելով Պաթում՝ երեք օր հոն մնալէ յետոյ եկայ Թիֆլիս: Սիմոնը(22) փնտրելով չկրցայ գտնել, որովհետեւ իմ Թիֆլիս ժամանելէն երկու օր առաջ մեկնած էր. ուստի Արեւելեան Բիւրոյի յանձնարարական նամակը յանձնեցի ուր որ անկ էր(23): Ինձ պատասխանեցին, թէ Սիմոնը

(20) Արտատպած ենք նոյնութեամբ: Եփոք մը կա՞յ արգեօք Զիվթիլ եւ Զիվթիլ տեղանուններու կապակցութեամբ:

(21) Տեսնել այս մասին նախորդ բաժնի ներածականը (էջ 197) եւ յաւելուածը (Ստ. Եսայեանի 19 Յունիս 1907 թուակիր նամակը, էջ 227-228):

(22) Սիմոն Զուարեանը:

(23) Պետք է ըլլայ հաւանորձ Վերեմեան Բիւրոյի յանձնարարական նամակը ուր որ անկ էր, կամ՝ Վերեմեան Բիւրոյին (ուղղուած) յանձնարարական նամակը...» այլապէս՝ նախադասութիւնը իմաստ չ'ունենար, քանի Արեւելեան Բիւրոն ի՞նչը Թիֆլիս էր արգէն:

զիւղ մեկնած է. ձեր խնդրի մասին տեղեկութիւն տանելու համար՝ պէտք է Սիմոնը հոս լինէր:

...Օհանջանեանին իմ նպատակս պարզելով եւ ինձ հետ մեր ընկերոջ(24) Երկիր անցնիլը իմացնելով, շատ ուրախ եղաւ, որ մենք այսպիսի մի լուրջ ձեռնարկ բրած ենք եւ խոստացաւ շուտով իմ մասին կարգադրութիւններ ընել: Նոյնիսկ հաւանական էր, որ երէկ մեկնէի Շուշի, սակայն հիմա հոն կ'ուրեւնէր սկսած լինելով, ճամբաները բա՞ց են թէ ոչ՝ պիտի հասկնայ եւ վաղը պիտի մեկնիմ ես»:

Իրողութիւնները ցոյց կու տան սակայն որ Արշակ, եթէ կ'անցնի իսկ Շուշի (ինչ որ չենք գիտեր), երկար չի մնար այնտեղ: Հոկտեմբերի մէջ ան Գանձակէն կը գրէ Եգիպտոս, իսկ 1906 Դեկտեմբերին Ֆիլիպէ է արդէն ուր, համաձայն իր այլ մէկ նամակին, «Անդրանիկի խորհուրդով» կը ծրագրէ Դաշնակցութեան Զինուորական վարժարանը մտնել:

1907 Յունիսին կամ Յուլիսին Պուլկարիա կ'անցնի նաեւ երրորդ ուխտեալը՝ Մկրտիչ Եփրեմեանը, հաւանորձն այլ նամակով մը Երկիր անցնելու առաջադրանքով: Բայց ան եւս կը հանդիպի ճախորդութիւններու(25): 1907 Յուլիս 30ին, Արշակ Ֆիլիպէէն կը գրէ Տ. Եսայեանին.—

«...Անցեալները Եփրեմեանն ալ եկաւ, տեսնուեցանք. շաբաթի մը չափ հոս կեցաւ. մեկնելէն քանի մը օր վերջ մատնութիւն կ'ըլլայ, ձերբակալելով Սոֆիա կը տանին, կը բանտարկեն. սակայն իր դիմումին վրայ ուստիկանապետը քանի մը օր վերջը ազատ կը թողու, պայմանաւ որ ամիսէ մը մեկնի Պուլկարիայէն»:

Մեզի անձնօք պատմաւորներով, Արշակի Զինուորական վարժարան մտնելու ծրագիրը եւս ջուրը կ'իյնայ: 1907 Օգոստոսին կամ Սեպտեմբերին, ան կը վերադառնայ Եգիպտոս, այլ գծով մը վերստին Երկիր անցնելու վնասակարութեամբ: Գիտեմք արդէն՝ որ տարի մը ետք, ան Հալէպէն, ապա Ատանայէն պիտի թրգալցէր Ստեփան Եսայեանի հետ(26): Շուտով Պալ-ֆաններէն Գահիրէ կը վերադառնայ նաեւ Մկրտիչ Եփրեմեանը:

Արշակի նոր ծրագիրներուն, ինչպէս նաեւ Մ. Եփրեմեանի պատահած ճախորդութիւններուն մասին (ըստ երեւոյթի, պուլկար ուստիկանութենէն ետք, գայն կը ձերբակալու նաեւ ուստիկանութիւնը) որոշ չափով լոյս կը սփռէ Ռուբէն Զարդարեանի Ֆի-

(24) Կ'ակնարկուի Ստեփան Եսայեանին:
 (25) Ստեփան Եսայեանի հետապնդումներուն եւ Մկրտիչ Եփրեմեանի կրկնակ ձերբակալութեանց (Պուլկարիա, ապա Ռուսա-նիա) հաւանական բացատրութիւնը տեսնել նախորդ բաժնի մեր ՅԱԽԵՆՈՒՄԻՆ մէջ (էջ 227-228):
 (26) Տեսնել Ս. Ե. 2 (էջ 199-200), Ս. Ե. 5 (էջ 202) եւ Ս. Ե. 14 (էջ 208) գրութիւնները:

լիպէէն գրած 7/20 Սեպտեմբեր 1907 թուակիր նամակը, ուղղուած Արշակ Գեհեայեանին՝ Գահիրէ:—

«...Պրն. Մկրտիչ Եփրեմեանի զխուռն եկած փորձանքները չես դիտեր թէ ի՞նչքան մեծ վիշտ պատճառած են ինձի ու բոլոր ընկերներուն ալ, մասնաւորապէս Պրն. Անդրանիկի(27): Յաւ, կատարութիւն, զայրոյթ, ամէնքը մէկանց կը դգամ, բայց ի՞նչ օգուտ, եղածը եղաւ: Պ. Եփրեմեանը ուսմէն ոստիկանութենէն ապահով աղատած է արդէն, որմէ դուն տեղեկութիւն չունենալ կը թուէիր՝ Բիրէէն դրած նամակիդ համաձայն: Անշուշտ ցարդ տեղ ալ հասած կ'ըլլայ ապահովարար: Բայց որովհետեւ մենք ալ դեռ տարակոյսի մէջ ենք՝ վերջնական լուր մը ունեցած չըլլայնուս համար, հաճիր, ուրեմն, շուտով իմացնել մեզ իր ժամանումը:

...Գանք ձեր խնդրոյն. ահա թէ ի՞նչ կը յայտնենք ձեզի՝ խորհրդակցարար Պ. Անդրանիկի հետ: Դուն ու քու միւս ընկերդ(28) ունեցէք ձեր վերջնական որոշումը եւ հաղորդեցէք անմիջապէս Բիւրոյին. եթէ այս խորհրդակցութեան ու որոշման միջոցին ձեզի հետ ըլլայ նաեւ ընկեր Հանդոյն ալ(5)՝ աւելի լաւ: Բայց իմ տեղեկութեանցս համաձայն՝ անիկա մինչեւ հիմա մեկնած ըլլալու է ասկէ: Մենք եւս Պ. Անդրանիկի հետ կը գրենք կարեւորը Բիւրոյին: Ասկէ դատ, տուէք Ստեփանի հասցէն Բիւրոյին, որպէսզի ուղղակի Բիւրոն փոխադրէ ձոն հարկաւոր դրամը եւ երկուքին միջեւ կապ հաստատուի(29):»

Ժ.— Երեսոյթները ցոյց կու տան՝ որ Անդրանիկն ու Ռուբէն Զարդարեանը ծանօթ են եղած Եգիպտոսի ռազմականներու ծրագիրներուն, բաւական խանդավառ անոնցմով, ու միշտ՝ փառալերանոց դիրքի մէջ:

Արշակին ուղղուած վերի նամակէն ամիս մը ետք, 22 Հոկտեմբերին, Ռուբէն Զարդարեանը կը գրէ Սեդրակ Պալըզեանին.—

«...Ձեր առաջարկը արդէն վաղուց ծանօթ էր ինձի՝ թէ՛ ընկեր Հերոսին(30) եւ թէ՛ Արշակին պատմու-

թիւններէն: Կը ցաւիմ, եւ խորապէս, որ ժամանակին, այսինքն՝ աւելի կանուխ չէ կրցած եղեր ատիկա գործնական հողի վրայ դրուիլ, եւ աւելի ցաւալի է, որ Ընդհ. Ժողովէն ետքն ալ այսքան սպասողական վիճակ մը ունեցած էք:

...Ապահով եղէք թէ կարելին ըրած ենք ձեզի համար՝ գրելով աղուօրէն Բիւրոյին եւ ամփոփելով ձեր պահանջը, այնպէս-ինչպէս ներկայացուցած էիք: Կր ցանկամ որ շուտով ստանաք գոհացում եւ Պրն. Արշակին ու իր ընկերը(2) ընդ փոյթ ճամբայ ելլեն: Մենք պարտաւոր ենք, եւ ասիկա պարտականութենէ աւելի բան մըն է, օգտակար ըլլալ ձեզի՝ ձեր ազնիւ նպատակին իրադրմանը համար»:

29) Հոկտեմբեր 1907 թուակիր նամակով մը, Արեւմտեան Բիւրոն կը գրէ Գահիրէ՝ Սեդրակ Պալըզեանին.—

«Յարգելի ընկեր, Ձեր Հոկտ. 17 թիւ նամակը եւ ներփակեալ նամակները ստացանք: Ընկեր Յակոբին մասին(31) մեր կարգադրութիւնը շուտով կը հաղորդենք ձեզ:

Այսօրուան փոստով կը փոխադրենք ձեր հասցէին (750) եօթը հարիւր յիսուն Ֆրանք, որ պիտի յատկացուի ընկերներ Արշ. Սվաճեանի եւ Միհրան Պոյաճեանի Երկիր անցնելու ծախքերուն: Ուստի բարի եղէք յանձնել իրենց եւ իրենցմէ ստացական առնելով ուղարկել մեզ»:

20) Նոյեմբերին, ԱՍԼԱՆ ստորագրութեամբ, Ռուբէն Զարդարեանը Ֆիլիպէէն դարձեալ կը գրէ Սեդրակ Պալըզեանին.—

«...Անշուշտ ցարդ ստացած կ'ըլլաք Վառնայէն ձեզի գրած նամակս, որով հաղորդած էի թէ ընկեր Անդրանիկի հետ հարկ եղածը գրեցինք Բիւրոյին ձեր գործերու մասին եւ խնդրեցինք շուտափոյթ բաւարարութիւն՝ ձեր պահանջներուն:

Արդ, շատոնց ստացած ենք Բիւրոյի պատասխանը՝ որմէ կը տեղեկանանք թէ բաւարարութիւն տրուած է ձեզի(32): Ներեցէք որ աւելի կանուխ չկրցայ գրել՝ իմ շրջագայութեանս պատճառով: Կը յուսանք թէ, ուրեմն, ընկեր Արշակ մեկնած

(27) Կ'ակնարկուի Սասնոյ հերոսին, որ կը գտնուի Պուլկարի, ուր վաճառք Տաթևեանի օժանդակութեամբ կը վարէր Յուսա-Տեոթական Մարմնի գործերը:
(28) Այդ ընկերը, նամակներէն դատելով, Միհրան Պոյաճեան անունով երիտասարդ մըն է, որ Արշակին հետ միաժամանակ պիտի անցնէր Երկիր:
(29) Հիմնուելով կարգ մը այլ գրութիւններու վրայ, Վ. Ն. Իրաւամբ կ'եզրակացնէ թէ Եգիպտոսի ընկերները (ի մասնաւորի Սեդրակ Պալըզեանը) դէմ էին Բիւրոյի Ստ. Եսայեանի հետ ուղղակի յարաբերութեան մտքին, վախճալով որ այդ կրճայ աւելի եւս վտանգել կ'ետարիոյ գիւղերուն մէջ արդէն իսկ ընդատակեայ գործող իրենց ընկերը դրաւթիւնը:
(30) Կ'ակնարկուի Անդրանիկին:

(31) Ըստ Վ. Ն. Ի. «Երեսն Եգիպտոսեանի մասին է, Ակնցի, ծնած 1870ին, մինչեւ 1900՝ հնչակեան, ապա Մարտիլի մէջ անցած Դաշնակցութեան շարքերը: Իր մասին Վ. Ն. կու տայ շահեկան այլ մանրամասնութիւններ, գորս զանց կ'ընենք՝ ներկայ միւթին հետ իրենց անմիջական կապի պակասին համար (տեսնել «Հայրենիք» ամսագիրը, Մարտ 1941, էջ 76-77):
(32) Կ'ակնարկուի անշուշտ այն գումարին, գոր զրկած էր Բիւրոն եւ որու մասին կը յայտնէր 29 Հոկտեմբեր 1907ի իր նամակով, ուղղուած Սեդրակ Պալըզեանին:

ըլլալու է եւ արդէն նախապատրաստութիւնները վաղուց աւարտած էք:

Մենք, Երկիր անցնելու համար, դատած ենք նոր եւ ապահով ճամբայ մը, որմէ եթէ օգտուելու պէտք ունենաք, հաճեցէք մեզ իմացնել, որպէսզի անհրաժեշտ մանրամասնութիւնները հաղորդենք ձեզի:

...Արդէն տեղը համոզ ձեր ընկերը(33) զրկեցի՞ք անհրաժեշտ այն նիւթական օժանդակութիւնը, որ խնդրած էք ձեզմէ: Այս մասին նոյն ընկերը Ոսկեհանք ալ դիմած եւ նոյնը խնդրած էր, բայց, մենք, բնականաբար, տեղեկ ըլլալով իր բանակցութեանց, կը յուսայինք որ արդէն գոհացուցած կ'ըլլաք զինքը, ուստի դրական բան մը չըրինք»:

ԺԱ.— 1907 Փետրուար-Ապրիլ ամիսներուն, Վիեննայի մէջ տեղի ունեցած էր Հ. Յ. Դաշնակցութեան 4րդ Ընդհ. Ժողովը: Ժողովը որոշումներ տուած էր նաեւ Բաստի (Սերաստիոյ) շրջանի յաւելեալ կազմակերպման, գործիչներու առաքման եւ մարտական խումբերու՝ տեղական միջոցներով զինման կապակցութեամբ: Այդ ուղղութեամբ առանձնապէս հետաքրքրուած էին Եգիպտոսի ուխտեալները՝ որոնցմէ Արշակը, ինչպէս տեսանք, այդ օրերուն Ֆիլիպէ գտնուելով կենդանի կապի մէջ էր Ասլանի (Ռ. Զարդարեան) եւ Անդրանիկի նման ղեկավար ու պատասխանատու ընկերներու հետ: 30 Յուլիս 1907 թուակիր նամակով մը, Ընդհանուր Ժողովի ատարէն երեք ամիս ետք, Արեւմտեան Բիւրոն կը գրէր Գահիրէ՝ ընկեր Վահրիսին (Սեդրակ Պալըզեանը, ըստ Վ. Ն. Ի.) —

«Ստացանք ձեր Յուլիս 18ի գրութիւնը: Սերաստիայի մասին Ընդհ. Ժողովը որոշել է առայժմ միայն «կազմակերպութիւն» առաջ բերել եւ այդ նպատակով ընկերներ ուղարկել այնտեղ: Եւ այդ որոշումը իրադրուելու համար յատկացուած է որոշ գումար: Հասկանալի է, որ այդ գործը կազմակերպելիս՝ ձեզ եւ ձեր ընկերներին նկատի կ'ունենանք: Այդ առթիւ մենք բանակցութիւններ մէջ ենք դանազան ընկերների հետ. արդեւնքի մասին ձեզ կը տեղեկագրենք ժամանակին»:

Վ. Նաւասարդեանի կարծիքով, 4րդ Ընդհանուր Ժողովէն ետք, Եգիպտոս գեկուցելու եկած ներկայացուցիչ մը կամ գործիչի մը (ինքնութիւնը մեզի անծանօթ) գրչին կը պատկանին Տիգրան Եգիպտեանի բուրգութիւն մէջ գտնուած հետեւեալ նօթերը, որոնք մեզ յաւելեալ կերպով կը յուսաբանեն Սերաստիոյ շրջանի առընչութեամբ Ընդհ. Ժողովին մէջ տրուած որոշումներուն մասին.—

«Ընդհ. Ժողովը որոշեց ընկերներ ուղարկել Սե-

(33) Կ'ակնարկուի Ստեփան Եսայեանին:

բաստիոյ շրջանը, դիւրութիւններ տալով նոցա (ճանապարհածախս եւ այլն) տեղական կազմակերպութիւն առաջ բերելու(34). յետոյ մարտական խմբեր կազմակերպել եւ զինել տեղական միջոցներով:

Առաջին ժամանակներում գնացող ընկերների գործը պիտի լինի միմիայն կազմակերպել շրջանը եւ այդ հողի վրայ կանգ առնել: Ահա այդ գործի համար ժողովը յատկացրել է տաս հազար(35):

Մեր կազմակերպած մարմինը, ի միջի այլոց, յարաբերութեան մէջ պիտի մտնէ Վերակազմակերպչական խմբի հետ, որոնց կողմից առաջարկ է եղել միանալ Դաշնակցութեան:

Մենք առաջարկեցինք միանալու ինդիւր թողնել Երկրի մէջ գործող երկու կազմի ընկերներին, նրանց միմիայն եւ նպատակ այդ միացման, տեղին վրայ:

Երբ շրջանը կազմակերպուած կը լինի, այդ ժամանակ միայն կարելի է ձեռնարկել մարտական խմբերի եւ զինման գործին, որի համար կազմակերպութիւն իր անուակից դրամ չպէտք է տայ. այդ պիտի կատարուի Ժողովուրդի սեփական միջոցներով»:

ԺԲ.— Սերաստիոյ եւ յարակից շրջաններու կազմակերպման գործի նախապատրաստական աշխատանքները արագօրէն առաջ կը տարուին եւ, ինչպէս Արեւմտեան Բիւրոն խոստացած էր 30 Յուլիսի իր նամակով, շուտով Եգիպտոսի ընկերներէն կը կազմուի Բաստի Շրջանի Օժանդակ Մարմինը: Տեղին է Վ. Նաւասարդեանի այն ենթադրութիւնը, որ նոր այդ Մարմինը կազմուած էր հինգ ուխտեալներու Եգիպտոս մնացած երեքէն — ընկերներ Սահակ Պալըզեան, Տիգրան Եգիպտեան եւ Մկրտիչ Եփրեմեան (վերջինը՝ Սերաստիոյ Բրգմիս գիւղէն, Դ. Վարսեմի հայրենակից), կամ՝ որ այդ երեքը անպայման մաս կը կազմէին ա-

(34) Հ. Յ. Դաշնակցութեան կեդրոնական արխիւն մէջ կը գտնուին բազմաթիւ թղթածրարներ, որոնք կը վերաբերին Սեւ Բիւրի կամ Աւագի (Սերաստիոյ) եւ Բարսի Սարի (Կեսարիոյ) Մարմիններուն, սկսած 1893-94 թուականներէն՝ մինչեւ 1914-15: Ստեփան Եսայեանի թղթածրարին մէջ մեծ հանդիպեցանք արդէն Սեւ Բիւրի կեդրոնական կոմիտէի մէկ նամակին (Ս. Ե. 34, էջ 221): Ուստի վերը բնութագրելու եւ 4րդ Ընդհ. Ժողովի որոշումներէն սխալ կ'ըլլայ եզրակացնել՝ որ այդ շրջաններուն մէջ Հ. Յ. Դաշնակցութիւնը հինգէն ի վեր ունեցած չէ գործող ընկերներ եւ կազմակերպութիւն: Պէտք է ենթադրել, հաւանորէն, որ այդ կազմակերպութիւնը գալապէս թուացած էր միայն՝ 1904-1907 տարիներուն:

Սերաստիոյ շրջանի կազմակերպութիւնը աւելի եւս զօրացաւ, երբ, Սահմանադրութեան շրջանին, այնտեղ գտնուեցան ու գործեցին Մուրատը (Սերաստացի), Վարդան Շահպազը եւ ուրիշներ:

(35) Վ. Ն. Ի. ճշգրտումով՝ տասը հազար ֆրանկ:

նար: Այդպէս ցոյց կու տայ, իրօք, Արեւմտեան Բիւրոյի 29 Նոյեմբեր 1907 թուակիր հետեւեալ պաշտօնական նամակի բովանդակութիւնը:—

«Բաստի Շրջանի Օժանդակ Մարմինն,
Գահիրէ

Ընկերներ,

Մենք արդէն ժամանակին հաղորդած ենք մեր ներկայացուցչին միջոցով Սերաստիոյ շրջանի գործունէութեան մասին Դ. Ընդհանուր Ժողովի որոշումը, որ իմացած էք անուշտ, — այն է՝ այդ շրջանի մեր գործիչները պէտք է ղրաղին պրոպագանդով եւ կազմակերպական գործով:

Ձեր դժգոհութիւնը այն բանի մասին, թէ մեր ներկայացուցչին միջոցով կը ստանաք տեղեկութիւնները, բոլորովին անտեղի է, քանի որ Բիւրոյի ներկայացուցիչը, ով որ ալ ըլլայ, լիազօր է եւ իրաւունք ունի ղրտակ ըլլալու այդ շրջանի գործերուն եւ որու վրայ պէտք է ունենալ բացարձակ վստահութիւն: Եւ յետոյ մենք ձեզի հետ չէինք կրնար ուղղակի յարաբերութիւն ունենալ, քանի որ ձեր մարմինը Բիւրոյի կողմէ վերջնապէս ճանչցուած չէր. այժմ, որ այդ մարմինը Բիւրոյի կողմէ կը ճանչցուի իր օժանդակ Մարմին Սերաստիոյ Շրջանի, մենք ուղղակի յարաբերութիւն կ'ունենանք ասկէ յետոյ եւ ձեզի հետ, մինչեւ ցնոր տնօրինութիւն:

Պէտք է նկատել տանք այն բանը, որ մեր ընկերները չափազանց շրջահայեաց ըլլալու են դրամական գործառնութիւններու մասին: Մեր մէջ սկզբունքով ընդունուած չէ գործիչներու ապրուստը երկար ժամանակով ապահովել (այդ հնարաւոր է ամենաբացարձակ պարագաներու միայն), այլ ամէն գործիչ, որոշ ժամանակ մը յետոյ, ինքը պէտք է ջանայ իր ապրուստի միջոցները հայթայթել՝ իր գործունէութեան տեղին վրայ, որով գործիչին բարոյական դրութիւնը եւ հե-

ղինակութիւնը աւելի կը բարձրանայ ընկերներու աչքին:

Ընկեր Եսայեանի համար ձեր առաջարկած գումարը մեր իրաւասութեանն դուրս է, բայց քանի որ յապօրտական մեր գործին համար մեկնած է՝ մենք յանձն կ'առնենք հաշուել իր ճանապարհածախսը եւ ապրուստի համար երկու ամսուան նախնական դումար մը, որի քանակը կը հաղորդէք մեզի:

Վկայականները կ'աշխատինք պատրաստել եւ ղրկել, թէեւ այժմ վկայականի դրութիւնը շատ դժբաժական չէ մեր մէջ իր անպատեհութիւններուն համար. կը ղրկենք միայն որոշ ժամանակով եւ մեր ընկերը կ'աշխատի որքան կարելի է՝ ղուշանալ յաճախակի գործածումէն:

Ընկերական բարեւանքով՝

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅ

Թէ այնուհետեւ ի՛նչ գործունէութիւն ունեցաւ Բաստի Շրջանի Օժանդակ Մարմինը, թէ ան կրցա՞ւ կեսրիոյ շրջանին մէջ ընդլայտակեայ գործող Ստեփան Եսայեանէն և Ատանա հաստատուած Արշակ Քէհեայեան Սվանեանէն ետք նաեւ ա՛յլ գործիչներ ղրկել Սերաստիա կամ այլուր, — այդ բոլորը մեզի կը մնան անձանօք: Շուտով, արդէն, վրայ պիտի հասնէր Օսմանեան Սահմանադրութիւնը, որ, գէթ քանի մը տարիներու համար, հիմնովին պիտի յեղաշրջէր — դժբախտաբար ո՛չ անպայման ղէպի լաւը — կազմակերպական մարմիններու եւ գործիչներու աշխատանքի եղանակը, երբեմն նաեւ բնոյթը: Նախորդ բաժնին մէջ մեզ տեսնեմք արդէն, որ այդ շրջանին (1908-1909) Ստեփան Եսայեան կը գործէր Կեսարիա, ուղղակի կապի մէջ ըլլալով Հ. Յ. Դ. Պոլսոյ Պատասխանատու Մարմինին հետ:

Ստորեւ կու տանք ուրեմն Տիգրան Սաղապեանի թուղթերուն այն մասը, որ ներկայիս կը գտնուի մեր տրամադրութեան տակ:

Հ. Ց.

Տ. Ե. 1

ԲԱՐՍԵՂ ՇԱՀՊԱԶԻ ԲԱՑԻԿԸ

Գրուած ֆրանսական փոստի պաշտօնական carte postale-ի մը մէկ երեսին վրայ: Ուղարկողի հասցէն է՝ P. Schahbaz, № 6, Rue de Poissy, Paris. ուղղուած է Տիգրան Եսայեանին, poste restante, Ազեմազարի:

Գրուած է եւ կմտնած՝ 12 Օգոստոսին: Ազեմազարի ստացման կմբի թուականն է՝ 19 Օգոստոս:

Բարսեղ Շահպազ 1912ին անցած էր Փարիզ, ուր կը հետեւէր իրաւաբանութեան: Սկսած էր վերահրատարակուիլ Pro Armenia-ն, վիկտոր Պետրի խմբագրապետութեամբ. անոր զբաղումը երկու գործակիցներն էին Մ. Վարանդեան եւ Բ. Շահպազ: 1914ին այս վերջինը կ'անցնէր Պոլիս եւ, 1915ին, 32 տարեկան խոստմաւից այդ երիտասարդ մտաւորականը գոհ կ'երթայ Մեծ Եգիպտոս:

Փարիզ, 12 Օգ. 1913

Սիրելի Տիգրան,

Ստացայ նամակդ եւ 49 Ֆրանքը, որ անցուցի Pour les P. de G.-ի(1) հաշուոյն մէջ ըստ քո պահանջի:

Անցեալ օր մեր աղջ. գործերի մասին ղրեցի բաւական երկար նամակ մը Արտաշէսին անունով, եւ ըսի որ բոլոր ընկերները տեղեկ ըլլան անոր բովանդակութեան: Հարկաւ առիթ կ'ունենաս տեսնելու: Անկէ զատ առանձին նորութիւն չունիմ ես ալ: Սպասողական վիճակի մէջ ենք բոլորս: Բայց պէտք է դիտնալ, որ սպասողականի մէջ մնալ չի նշանակեր քնանալ կամ անգործ յորանջել: Սպասողականէն աւելի՝ պէտք է ըսել պատրաստութեան վիճակ(2): Նիւթապէս թէ բարոյապէս պէտք է պատրաստուիլ դիմագրաւելու համար նոր բարդութիւնները որ պիտի ծնին Ա. Թուրքիոյ մէջ: Ուստի ջանացէք այդ ձեր համբրաշխական մարմիններին մէջ խօսքէն անցնիլ գործի: Զի՞Ֆոնի(3) մասին բան մը եղա՞ւ արդէն. — ոչի՞նչ եղաւ հապա. մեր ընկերները թող բռնեն այդ թուլամորթներուն օձիկը եւ գործ պահանջեն: Գիտեմ որ մեղքը ոչ թէ մեր ընկերներուն, այլ ան միւս պոռոտախօսներունն է: Բարեւանքով՝

Բ. Ե.

Տ. Ե. 2

ԲԱՐՍԵՂ ՇԱՀՊԱԶԻ ՆԱՄԱԿԸ ՏԻԳՐԱՆ ԵԱՂՈՒՊԵԱՆԻՆ

Գրուած սեւ միւսնով, 13,5x21 սմ. չափի նամակի երկերթք բուրբի մը երկու երեսներուն վրայ:

Փարիզ, 10-10-913

Սիրելի Տիգրան,

Իր ժամանակին ստացայ Սեպտ. 20ի քարթը եւ ըստ փափաքիդ № 20էն իջեցուցի 40 օրինակի: Իսկ № 13-14էն ղրկեցի մէկ-մէկ հատ:

Բայց այս կարգադրութիւնը շատ ցաւալի է: Հիմա, մանաւանդ առաւել քան երբեք նիւթական օժանդակութեան պէտք ունի մեր այս օրկանը(1) որովհետեւ պատրաստի Փոնտերը ղրեթէ սպառեցան եւ պարտաւոր է այլեւս ինքզինքը ապրեցնել: Գիտես արդէն որ Կալմակերպութիւնը 1 սանթիմ չտուաւ այս թերթին եւ ոչ մէկս ալ համաձայն չէինք որ տար. կողմնակի նուիրատուութիւններով հիմնուեցաւ, որպէսզի ապրի իր միջոցներով: Կը խնդրենք որ քիչ մը ուժով բռնէք գործը. խօսէ Մարմինն ալ — փրօփականտ ըրէք, քարողեցէք — բոլոր եւրոպական կարեւոր անձնաւորութիւնները եւ թերթերը այս մեր օրկանէն կը քաղեն կոր իրենց տեղեկութիւնները հայ իրականութեան մասին: Մեղք պիտի ըլլայ եթէ չկարենանք ապրեցնել: — Ինձի կը թուի որ քիչ մը աւելի ուժ տալով կրնաք նորէն ոչ միայն 50ի բարձրացնել այլեւ աւելի: Եթէ գտնուին այն տեսակ վեհանաճան անձնաւորութիւններ որ համակրելով ձեռնարկին ուղեն նուէրներ ալ ընել, սիրով կ'ընդունին վարչութիւնը որովհետեւ պէտք ունի անոնց, այս մահու եւ կենաց օրերուն, չղաղրեցնելու համար իր թերթը:

Կուսակցական եւ այլ խնդիրներու վերաբերմամբ արդէն զրբեր եմ Միւսսին. կը տեղեկանաս անոր նամակէն:

Սպասելով բարի լուրերուդ այս մասին եւ դրամի — Քոյդ

Ընկերական բարեւանքով՝

Բ. ՇԱՀՊԱԶ

6 Rue de Poissy

(1) Համաօրէձ՝ Prisonniers de Guerre. — Պատերազմական Գերիներ:
(2) Ընդգծուած՝ գրութեան մէջ:
(3) Զինուորական փոստ:

(1) Pro Armenia-ն, որու խմբագրութեան մաս կը կազմէր Բ. Շահպազ:

S. Ե. 3

Մ. ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ՏԻԳՐԱՆ ԵԱՂՈՒՊԵԱՆԻՆ

Գրուած մուք կապոյտ մեյանով, միւսում չափի (13.5x21 սմ.) նամակի երկքերք բուզքի մը երեք երեսներուն վրայ: Բովանդակութենէն կը հասկցուի, որ Տիգրան Եաղուպեան գացած է Պոլիս, ուր ուզողուած է այս նամակը, ամենայն հաւանականութեամբ՝ Եգիպտոսէն:

1 Յունիս 1914

Միւսում ընկեր,

Տիգրան Եաղուպեան,

Մինչեւ այսօր Ձեռնէ նամակ չառի: Կը յուսամ որ լաւ էք եւ գոհ: Գարեգինէն իմացայ որ գրքերս յանձներ էք Մատթէոսեանին: Մինչեւ այսօր ինծի իրենց գրքերը չտուին:

Եթէ ճամբող այն կողմը ինչայ, կը խնդրէի որ ճանձրոյթը յանձն առնէիք անդամ մը յիշեցնելու որ Գարայեանին գրքն եւ իրենց գրքերը յայտնեն: Ընկեր Համազասպին նամակ մը գրած եմ եւ պատասխան ստացած չեմ: Ժողովի մասին տեղեկութիւններ հաճեցէք յայտնել: «Ազատամարտ»ին յօդուած մը ղրկած եմ եւ այս մասին ալ գրած եմ ընկեր Համոյին: Հասկըցէք թէ՛ կ'ուզե՞ն հրատարակել եւ եթէ չեն հրատարակեր, ի՞նչ առարկութիւն կ'ընեն:

Ընկեր Ակնունիին երեք նամակ գրած եմ եւ չէ բարեհաճած պատասխանելու:

Անդադար Թիւթիւնճեանին կը գրէ եւ կրկին գրեր է եւ Ընդհ. Ժողովի օրակարգը ղրկուած ըլլալը Մարմինը դեռ չի գիտեր եւ Թիւթիւնճեանը պիտի:

Այսօր Լեւոնը տեսայ եւ կ'ըսէ որ ինքը Մարմնի անդամ է եւ լուր չունի դեռ: Ինչպէս կ'երեւայ մենք Ապակեդրոնակեան ենք միայն խօսքով: Փոխանակ Մարմնին հաղորդելու, անհատներու կը գրենք: Այս մասին քեզի տրտնջալս օլուտ չ'ըներ, գիտեմ թէ՛ դու ի՞նչ կը խորհիս: Գոնէ երեք նամակներէն [մէկուն] միայն պատասխանէր ընկեր Ակնունիին եւ ըսէր թէ՛ ես բոլորովին ծուռ կը խորհիմ:

Ինչ որ է՝ կ'աղաչեմ որ այս գանդատս չյայտնէք իրեն: Միայն թէ՛ երբ առիթը ներկայանայ, ըսէք թէ՛ իմ նամակները ստացած է:

Նաեւ ընկեր Համոյին հետ խօսեցէք «Ազատամարտ»ին որ Արէս ստորագրութեամբ գրած յօդուածս անպատճառ հրատարակեն առանց զեղչելու:

Շատ կարեւոր եւ օգտակար կը գտնեմ այդ յօդուածը:

Իմ հասցէիս կրնաք գրել երբեմն, երբ փափաքիք: Մայրդ լաւ է: Բնաւ հոգ մի ըներ անոր մասին: Ուրիշ կարեւոր գրելիք չունենալով՝ կը սպասեմ Ձեր պատասխանին, Ալեմտաղիէն, Չամլըճայէն սկսելով:

Համոյրներով

Մ. ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

S. Ե. 4

Հ. Յ. Դ. ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՉԸ

(ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՆԻՒԹԱՊԵՍ ՕԳՆԵՂՈՒ)

Տպագրուած՝ շուրջ 30x50 սմ. քերթի բուզքի մը մէկ երեսին վրայ: Թուական չկայ: Յաջորդ կոչերու բուականէն դատելով, ներկան հրատարակուած պէտք է ըլլայ 1914ի վերջին օրերուն կամ 1915ի սկիզբը:

ՕԳՆԵՆՔ ՀԱՅ ԿՈՒԻՒՆ ԿԱՄԱՒՈՐՆԵՐՈՒՆ
ԿՈՉ ԵԳԻՊՏԱՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ

ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ՝,

Դուք արդէն պատասխանեցիք Կովկասէն Հասած ճանաչման իրաւունքին: Բարեգործութեան Հանդիսարժէսին երկարեցիք դուք դէպի Կովկաս...

Հարիւր հազար թրքահայ փախտակաւորներու թըլուառութիւնն անտարբեր չէ՛ր կրնար թողուլ ձեզի, եւ դուք անդամ մըն ալ չթերացաք ձեր աղէտեալ եղբայրներուն օգնութեան հասնելու նուիրական պարտականութեան մէջ:

Աղէտներն ե՞րբ չեն ցնցեր մեր ժողովուրդն ու չեն մղեր դայն կարեկցութեան հապտապ ու թախանձաղին արտայայտութիւններու: Մենք միշտ պատրաստ խանդավառութիւն մը ունեցեր ենք հայրենի կոտորումները, որբացումներն ու տարադրումները դիմադրուելու, անոնց դուժերուն ի լուր տաղնապելու, անոնց դարձանումին անունով հանգանակութիւններ ու զոհարարութեան դիմումներ սարքելու...

Ամէն անգամ, որ Չուլումն եկեր է իր մահաշուք մղձաւանջը տարածել մեր ազգային գոյութեան վրայ, մենք անապարեք ենք ահազանգ հնչեցնելու...

Մահուան բոթերն աւելի ողբերած են մեր հայրենասիրութիւնը՝ քան Կեանքի ու ազատ կենցաղում պայքարին հրաւէրները... Օրհասականին հոգեվարժ երկարել պա՛րտքն է անոր վրայ հսկողներուն. բայց մեծագոյն պարտականութիւն մը չէ՞ միթէ՞ մաքառի ապրողին սպաննացող վտանգին դէմ...

Բայց այս անգամ կեանքի զործը կանխեց մահուան աւերը, եւ այսօր, այս վայրկեանիս, Ազատագրութեան գերագոյն Կոիւր կը շարունակուի հայկական սահմաններուն վրայ, հակառակ հարիւր հազար աղէտեալներուն, որոնք խոյս կու տան Ջարդի ուրուականին առջեւէն, եւ Կովկասի եղբայրական գիրկը կ'ապաստանին...

Անկարելի՛ է, հայրենակիցներ՝ որ դուք մտածած չըլլաք այդ Կոիւրին վրայ, անկարելի՛ է որ ձեր ազգային հպարտութիւնը սարսուղացած չըլլայ անոր վաղող կամաւորներուն սխրագործութիւններէն, որոնց արձագանդները կը բերեն հայ եւ օտար թերթեր, անկարելի՛ է որ դուք սպասած չըլլաք՝ յանուն այդ փրկարար Կոիւրին ձեզի ներկայանալիք զոհողութեան գերազանց առիթներուն...

Արտասահմանի Հայութիւնը, մինչեւ Ալեքսիոյ իր չկասկածուած, մանրադիտական գաղութին մէջ, անոր տեսիլքովն արբիւր, շտապեց օժանդակութեան իր բոլորանուէր բաժինն հասցնել այդ բախտորոշ Կոիւրին... Մի՞թէ Եգիպտահայն անոր հանդէպ պիտի կըրնար իր խղճմանն արթնացնուի՞ր թե՛ Եգիպտացիները զգալ՝ պարզապէս Կովկաս ապաստանող թրքահայերուն քանի մը հազար ոսկիի նպաստ մը ղրկելով... Մեզի կը թուի, եգիպտահայ Հայրենակիցներ՝ որ դուք մէկ մարդու պէս պիտի ցցուէիք՝ բողբոջելու համար այսպիսի կասկածի մը դէմ...

Հայ կամաւորական շարժումը դեռ իր երկունքին սկիզբը կը դնուի. կրակի գիծերուն վրայ լանջք պարող տասնեակ հազար հայ կամաւորներուն ետին, ուրիշ տասնեակ հազարուոր կտրիճ Հայորդիներ՝ ուսական սպաներու հսկողութեան տակ՝ մարդուելու վրայ են այս միջոցին: Ամբողջ հայկական բանակ մըն է որ մեր այս կամաւորներուն յարաճուն շարքերովը կը կազմուի, եւ որ դարնան գրոհ պիտի տայ թշնամիին դէմ... Անդրանիկի, Դրոյի, Քեռիի, Համոյի գոնդերն յառաջապահներն էին միայն այս հայկական բանակին, որ կոչուած է մահուան դեր կատարելու Հայաստանի փրկագործումին մէջ:

Միւսերն ամուր, տրամադրութիւնները բարձր, մենք իրաւունք ունինք, հայրենակիցներ, փառաւոր օրեր յուսալու, եւ ո՛չ մէկ անցաւոր ճախողութեամբ, ո՛չ մէկ ժամանակաւոր նահանջ կրնայ խախտել մեր անվրկանդ հաւատքը վերջնական յաղթանակին վրայ:

Հայ ռազմական աշխատանքը Կովկասի մէջ յառաջ կը մղուի վիթխարի ներուժութեամբ, անտեղիտակ յամառութեամբ ու ահազին զոհարարութիւններով: Ամբողջ զինուորեալ երիտասարդութեան մը հաւաքական խոյանքը, ամբողջ ուխտուած ժողովուրդի մը «խաչակրութիւնն» է ասիկա: Եւ մենք ո՛վ, կովկասահայ զիւլեցանքերգական այս տեսարանը, այս նոր Աւարայրը պիտի մտաբերէք առանց սարսուռի, առանց արցունքի...

Հայ Կոիւր կը շարունակուի՛, պիտի՛ շարունակուի, ամէն գնով, մինչեւ որ հայրենի հողն ամբողջապէս ազատագրուի, մինչեւ որ Ինքնավար Հայաստանի աւետաւոր արշալոյսը գայ շողացնել սուրբը մեր յաղթական լեզէններուն... Եւ այս անվհատ, անընկճելի հետապնդումին, մինչեւ նպատակակէտ այս անահանջ խիզախումին, այս կատաղի ու երկարաշունչ մաքառումին բացարձակ գիտակցութիւնն ու վստահութիւնն են որ մեզ կը ստիպեն այս անհրաժեշտ, այս սրտաղին կոչն ուղղել Եգիպտահայ հասարակութեան:

Այսօր կամ երբեք...

Այս կարգախօսն է, հայրենակիցներ՝ որ Կովկասահայր կը վարէ, կը լարէ, քաղաքացիական իր բոլոր առաքինութիւններուն, մարտական իր բոլոր կորուստներուն անխնայ վատնումին մէջ:

Ա՛յդ պէտք է ըլլայ Հայութեան նշանաբանն ի սփիւռս աշխարհի:

Բան մը վերապահելու չենք վաղուան, մեր այսօր տրամադրած նւթական, բարոյական ու Ֆիզիքական ուժերէն, եթէ կ'ուզենք որ ներկայ ճակատագրական Կոիւր չվիժի, եթէ կ'ուզենք որ ան մեր հայրենի ազատագրումին, մեր հաւաքական գոյութեան ապահովումին յանգի... Չոհողութեան ամէն խնայողութիւն, ո՛րքան ալ արդարացուցիչ օրէնքներու կոթնի, դաւաճանութիւն մը պիտի ըլլար մեր կողմէն նուիրական Կոիւրին յաջողութեանը, մեր ազգային արիւնագանդ Իտէլիին դէմ: Մենք մի՛շտ ժամանակ պիտի ունենանք տաճարներ ու զպրօններ կանգնելու, մի՛շտ ժամանակ պիտի ունենանք բարեկործական ու դարգացողական հաստատութիւններով մեր ժողովուրդն օժտելու, բայց երբե՛ք, երբե՛ք մեզի պիտի չտրուի այս սուհետեւ իրեւ Այդ արեւուն տակ մեր ինքնուրոյն գոյութիւնն ապահովելու այսպիսի անզուգական պատեհութիւն մը...

Այսօր կամ երբեք...

Կու դանք հնչեցնել ձեր խղճին, ո՛վ Եգիպտահայ եղբայրներ, Հայութեան ներկային այս հրամայական կոչը, որ վճիռ մը կը խտացնէ, լինելու թէ՛ չլինելու վճիռը, մեզի ու մեր դալիք սերունդներուն համար... Ազգի մը կեանքին մէջ դարերն անգամ մը հազիւ կը ներկայանան այս վճռական օրերը, եւ երանի՛ այն ժողովուրդներուն, որ կը գիտնան չփախցնել գերագոյն առիթն իրենց նսեհ տիրարար վճռելու...

Կոչ կ'ընենք ձեզի՛ ալ, Եգիպտահայ Հայրենիներ, ասպարէզ դալու եւ բաժնելու Կովկասի ձեր քոյրերուն հիանալի խանդավառութիւնը Հայ Կոիւրին եւ անոր անձնուրաց կամաւորներուն հանդէպ, զոհարարութեան ճիգերուն հոգեւին սատարելու, վերջապէս ցեղին ներկայ երկունքովը սարսուռու, կարծօրէն...

Մենք անցեալին անունով չէ՛ որ կու դանք ձեզի, Եգիպտահայեր, այլ ապագային պատգամովը...

Շահութակները, շահութակները, շահութակները, շահութակները, շահութակները...

Համերաշխության, գործնական համերաշխության օրն այսօր իսկ է, Համերաշխության Հայ Կոմիտեին շուրջը, եւ ոչինչ, ո՛չ մէկ յետադարձ կամ կանխահոգ նկատում մեզ կրնար արգելել մեր պարտքը կատարել Եղիպտոսայ Գաղութին մէջ՝ ազգային մարտնչումին հանդէպ:

Եղիպտոսայի, Ինչպէս ըսինք, Կոմիտեի կը շարունակուի, եւ պիտի շարունակուի, եւ այս պարագան իսկ մեր վրայ սրբազան պարտք կը դնէ անոր հետ քալելու մինչեւ վերջը: Յաղթութիւնը տեւական, անդադրում դո՛ւրստութիւն կը պահանջէ: Եւ այս հասկացողութեամբ է որ Հ. Յ. Դ. Եղիպտոսի Կոմիտէին կու գայ ո՛չ միայն ձեռք իւրաքանչիւրն հրաւիրելու միանուազ ու վերջնական զոհարարութեան մը, այլ՝ կու գայ ձեռք ուղղակի կապել Կոմիտէին՝ մեր կամաւորական զուգորդուն օգտին զինուորական տուրքով մը, որ պիտի շարունակուի՝ որքան ատեն որ շարունակուի Հայ Կոմիտեի:

Հ. Յ. Դ. ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՄԻՏԷ

Յ. Գ. — Ձեռնարկը կազմակերպելու, եւ անոր տեւական յաջողութեանն հսկելու նպատակով ընտրուած են առանձին յանձնարարներ Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ մէջ:

ԳԱՀԻՐԷԻ ՅԱՆՁՆԱՅԻՆՈՒՄ

Գ. Գ. ԱԻԵՏԻՔ ԼԱԼԱՅԵԱՆՑ (գանձապահ)

ԲՃԻՇԿ Յ. ՆԷՎՐՈՒՉ

ԱՐՏԱԻԱԶԴ ՀԱՆԸՄԵԱՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՑ ՅԱՆՁՆԱՅԻՆՈՒՄ

Գ. Գ. ՅԱԿՈՒ ԱՁՆԱԻՈՒՐԵԱՆ (գանձապահ)

ԱՐԱՄ ՊԷՅ ԱՐՇԱԿԵԱՆ

ՄԻՆԱՍ ԽԱՉՏՈՒՐԵԱՆ

Տ. Ե. 5

Հ. Յ. Դ. ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՄԻՏԷ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ - ԿՈՉԸ

Տպագրուած 25x35 սմ. թուղթի վրայ (աւելի լաւորակ՝ քան Յալոնոյ ԿՈՉԻՑ համար գործածուած թուղթը), մէկ երես:

ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ

ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՆ ՇՈՒՐՁԸ

Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Եղիպտոսի Գործադիր Յանձնարարութեան հրատարակած կոչը եւ հանդանակութեան ձեռնարկը մեր վրայ պարտք կը դնեն կարգ մը բացատրութիւններ տալու եւ քանի մը ճշգրտումներ ընելու:

Կովկասէն եւ Պալեստինէն մեր ստացած պաշտօնական թէ անպաշտօն հաղորդագրութիւնները մեզ ցոյց տուած էին մինչեւ հիմա թէ ռազմարեմին վրայ չկան Հնչակեան կամ Դաշնակցական խումբեր, այլ կան միայն հայ կամաւորական գումազներ, ուր Դաշնակցականն ու Հնչակեանը՝ ոչ-կուսակցականին հետ կողք կողքի՝ կը կուռէին դարաւոր թշնամիին դէմ: (Հայ կամաւորական գումազները կազմակերպուած են Թիֆլիսի Ազգային Բիւրոյին կողմէ, որ կը գտնուի Վեհկաթողիկոսին հովանաւորութեան տակ, ուղղակի Ռուս կառավարութեան եւ Կովկասի Փոխարքային արտօնութեամբն ու աջակցութիւնով):

Մեզի պաշտօնապէս ծանուցուած չըլլալով ո՛չ մէկ տեղէ հնչակեան անջատ խումբերու կազմութիւնը, եւ Կովկասէն հասած ամենափոքրին թերթերուն մէջ իսկ ամենափոքր յիշատակութեան մը նշոյն անպամ երեւցած չըլլալով՝ կուսակցական այդպիսի գործունէութիւն մը մատնանշող, մենք կը մնանք վարանոտ:

Իսկ ժողովուրդին կը մնայ իրեն ներկայացող հանդանակիչներէն դրական փաստեր պահանջել Հնչակեան անջատ խումբերու գոյութիւնն հաստատող, եւ ապա ճշդել իր դիրքն՝ իր խղճմտանքին համաձայն:

Մենք պիտի չուզէինք ո՛րեւէ ձեւի տակ խոչընդոտ հանդիսանալ Հնչակեաններու այդ ձեռնարկին: Բայց մերը զանազանելու համար անոնցինէն, — ա՛հ, այդ դժբախտ մերն ու անոնցը, — պարտաւոր կը զգանք յայտարարելու, թէ մեր հաւաքած նպատակներն Ազգային Բիւրոյի ղեկավարութեան տակ գտնուող Հայ կամաւորական զուգորդուն սահմանուած են, Անդրաբիկի, Օնէի, Մարտիրոսի, Քեռիի, Առաքելի, Եսպոնի, Համոյի, Ունոյի, Սեպուհի, Վարդանի, Դրոյի, Արմէն Գարոյի եւ այլ զուգորդուն, որոնք ահագին ծա-

ռայութիւն մատուցին Ռուս Բանակին՝ իբրեւ յառաջապահներ, Բասէնի, Ալաշկերտի եւ Պայազիտի մէջ, արշաւեցին մինչեւ Թուրքիա՝ սպառնալով Մուշի, արշաւեցին մինչեւ Պաշկալայ եւ Սէրայ՝ սպառնալով Վանի, նախախնամական դեր կատարեցին Հայ զիւղերու պաշտպանութեան համար, եւ հարիւր հազարի բարձրացող տաճկահայ զաղթականութիւնն՝ անկարելի դժուարութիւններու մէջէն՝ ապահով հասցուցին կովկասեան նաւահանգիստը:

Ռուս Կառավարութիւնը, գնահատելով «Հայ կամաւորական զուգորդուն» այս անդին աջակցութիւնը, Ս. Գէորգի պատուանշանին առաջին աստիճանը տուած է Անդրանիկին եւ երկրորդ աստիճանը՝ Համոյին, բանակցութիւններու սկսած է Ազգային Բիւրոյին հետ՝ կրկնապատկելու համար կամաւորներուն թիւը, եւ հաստատած է Քանաքեռի մէջ առաջին զինուորական վարժարան մը, ուր յիսուն Հայ սպաններ կը պատրաստուին՝ մասնաւորապէս կամաւոր զուգորդուն յատկացուելու առաջադրութեամբ: Այս բոլորէն զատ, Ազգային Բիւրոյին կողմէն իւրաքանչիւր Հայ կամաւոր տրամադրուած օրական 35 կոպէկի սննդածախսին վրայ՝ Ռուս Կառավարութիւնն որոշած է իր զանձէն աւելցնել օրական 10 կոպէկ:

Ահա՛, ուրեմն, այն կազմակերպութիւնը, որուն անունով մենք հրապարակ իջած ենք, եւ ահա՛ այն բացատրութիւնները, զոր պարտաւոր էինք տալ Եղիպտոսայ Հասարակութեան, այս մեծ ձեռնարկը խաչածեղ կոչի մը հանդէպ զոր Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան Եղիպտոսի Գործադիր Յանձնարարութեան հրատարակ կը հանէ այնքան անժամանակ արտորանքով մը:

Առիթէն օգտուելով՝ պարտք կը համարինք շնորհակալութիւն յայտնելու Եղիպտոսայ Ժողովուրդին՝ մեր հրաւերին ըրած խանդավառ ընդունելութեան համար:

Հազիւ զիմումներն սկսած՝ մօտ 1600 ռուբլի տարեկան նպաստ մը արձանագրուած է արդէն:

Շրջականներէն ու դաւառներէն նամակով կամ անձամբ արձանագրուելու համար դիմել՝

ԳԱՀԻՐԷ՝ Գ. ԱԼԵՏԻՔ ԼԱՅԱԿԵԱՆՑԻՆ, 33, Rue Madabegh, կամ B. P. 313: Իսկ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒՄ՝ Գ. ՅԱԿՈՒ ԱՁՆԱԻՐԵԱՆԻՆ, Medan Alex.

Դրամական առաջումները կանոնաւոր կերպով ամէն ամիս պիտի կատարուին Թիֆլիս՝ Ազգային Բիւրոյին, եւ անոնց մասին հասարակութիւնը միշտ իրազեկ պիտի պահուի:

Աղեքսանդրիա, 7 Մարտ, 1915

Հ. Յ. Դ. ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՄԻՏԷ

Տ. Ե. 6

Հ. Յ. Դ. ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՄԻՏԷ ԲԱՑ ՆԱՄԱԿ՝

ՈՒՂՂՈՒԱԾ ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱՑԻՆ

Տպագրուած 42x58 սմ. թերթի թուղթի մը մէկ երեսին վրայ:

ԽՈՆԱՐՀԵՑԷՔ, ՓԱՇԱ, ՀԱՅ ԿՈՒՒՒՆ ԱՌՁԵԻ ԲԱՑ ՆԱՄԱԿ ՊՕՂՈՍ ՓԱՇԱ ՆՈՒՊԱՐԻՆ

ՎՍԵՄ. ՓԱՇԱ՝

Մենք ըրինք, ինչ որ մարդկօրէն կարելի էր ընել, խուսափելու համար ամէն պայթարէ, չցուցադրելու համար անգամ մըն ալ, մեր ու օտարներու աչքին, մեր ներքին անմխարանութեան զուգորդի պատկերը, չվրդովելու համար Հայ աղատագրութեան հերոսական մարտիկներուն հերոսական աշխատանքը եւ մագաչափ իսկ չխանգարելու համար այն զերազոյն համերաշխութիւնը որ պէտք է բխի վճռական բողոքներու տիրական ստիպողականութենէն:

Հազիւ լուր առած «Ազգային Շահերու Պաշտպանութեան» անունով ձեռ ձեռնարկելիք հանգանակութեանէն, մենք մտածեցինք որ այդ նոր ձեռնարկը, խաչածեղով արդէն հրապարակի վրայ գտնուող կամաւորներու նպաստը, չփոթութիւններու եւ անխորթութիւններու դուռ պիտի բանար, եւ այդ անտեղութիւններուն առաջը առնելու համար պատգամաւորութիւն մը փութացուցինք ձեռ մօտ՝ ձեռ Ա. Շրջաբերականը դեռ լոյս չտեսած: Մեր պատգամաւորներուն շատ համեստ, շատ խոնարհ թելադրութիւնները դուք մերժեցիք բացարձակապէս, եւ ընդունելով հանդերձ ձեռ նոր ձեռնարկին առաջ բերելիք ամէն անպատեհութիւնները, չխղճահարուցեցէք մեզի առաջարկել իբր դարման այն միակ միջոցը որ չէինք կրնար ընդունիլ, — անմիջապէս դադարեցնել կամաւորներու հանգանակութիւնը:

Մենք ձայն չհանեցինք, փաշա՛, եւ ուղեցինք լռիկ առաջ տանիլ մեր դորձը, յուսալով որ իսկապէս չպիտի զրազուէիք կամաւորներով, ինչպէս որ ըսած էիք մեր պատգամաւորներուն, յուսալով որ պէտք եղած խղճահարութիւնը պիտի դնէիք ձեռ աշխատելու միջոցներուն մէջ՝ չվնասելու համար կամաւորներու նուիրական ձեռնարկին: Բայց ձեռնարկները առջի օրէն իսկ ամէն սրբութիւն ոտքի տակ տալով սկսան պայթարը, խուլ ու զղուելի պայթար, որ մութին մէջ առաջ տարուելուն համար ո՛չ մէկ փաստի կը կարօտի: Դրամ մի՛ տաք, կամաւորները դրամի պէտք չունին, այս մարդիկը դրամը պիտի ուտեն, դրամը Փաշային տըւէք, Փաշան կաթողիկոսին փոխանորդն է, ու դեռ ինչե՛ր:

Մենք նորէն ձայն չհանեցինք, Փաշա՛, եւ դիմեցինք Առաջնորդին՝ խնդրելով որ միջնորդէ ձեր կամ ձեր Մասնախումբին մօտ, որուն ինքն ալ կ'անդամակցի, որպէսզի հրապարակաւ հերքէիք ձեր անունով խօսողներուն մեղապարտ թշնամանքները: Այդ դիմումն ալ մնաց սակայն անարձագանգ եւ բանտարկութեան ու զրպարտութեան պարտաւե՛ր քան երբեք եռանդով առաջ տարուեցաւ ձերիններուն կողմէ եւ այս անգամ անոր պիտի կանգնեցան շատ աւելի կարեւոր անձնաւորութիւններ, նոյն իսկ ձեր Հանգանակիչ Մասնախումբին անդամներէն:

Մենք նորէն ձայն չհանեցինք: Առաջնորդ եւ Քաղաքական Ժողով Համաձայնութեան միջնորդ Հանդիսացան բարեմտօրէն, ու մենք սին երազներով օրօրուեցանք՝ մինչեւ որ յաջողեցաք Կաթողիկոսին հովանաւորութիւնը բերել տալ: Եւ հիմա դիմակը կը պատռէք այլեւս ու հրապարակ կու գաք Բ. Շրջաբերականով մը իբր հակառակորդ (դուք էք որ հակառակորդ կ'անուանէք մեզի), Համերաշխութեան անունով դերազոյն պառակտումի անտեղի ձեռնարկը կը նետէք մէջտեղ, կամաւորներու հակառակ չեմ ըսելով կամաւորներու պարտը կը քանդէք եւ ազդին է՛ն փափուկ ու վճռական ըստէին պայքարի ձեռնոցը կը նետէք մեզի: Մեզք ձեր ու ձերիններուն վիզը, Փաշա՛. մենք կը վերցնենք ձեռնոցը, յանուն Հայ կամաւորներուն, վստահ մեր իրաւունքին ու մեր դատին արդարութեանը վրայ, կարելի ու անկարելի ամէն զոհողութիւն ըրած ըլլալու հանգարտ խղճմտանքով:



Հասարակական գործերու մէջ չէք դանդաղ, Փաշա՛, եւ կը կարծէք որ կը բաւէ երկու շրջաբերական հանել հրապարակ, կոչ ընել ազգային գերագոյն շահերու տարտամ բայց շրջանոց բացատրութիւնով եւ թոյլ տալ որ ձերինները շահագործեն Ժողովուրդին միամիտ դիւրահաւանութիւնը՝ 30,000 ոսկինոց նոր Փոնտ մը հաւաքելու եւ զայն անշարժացնելու համար, ինչպէս անշարժացուցիք Բարեգործականի 30 հազարը, որը կը պահէք խղճի անհասկնալի հանդարտութիւնով մը, երբ անդին Հայութեան կէսը արիւն արցունք կու լայ, տասնեակ հազարաւորներ մերկ ու անպատսպար կը թափառին ձմրան ձիւն ու բորանին, եւ հազարաւոր կիներ ու մանուկներ, հայութեան ապագայի յոյսերը, անսուսողութենէ կը մեռնին՝ բրդուճ մը հացի կարտովը գալարուած:

Չէ՛, Փաշա՛, ո՛չ ձեր անձնական դիրքն ու տիրապետը, ո՛չ ալ ազգային շահերու պաշտպանութեան տարտամ բացատրութիւնը չեն բաւեր իբր ծրագիր, մանաւանդ երբ ձերինները ապստամբութեամբ, կաւաւարներու, մեծ գործերու խորհրդաւոր անունները կը շահագործեն, մանաւանդ երբ դուք ու ձերինները ձեր

հանդանակութեան հիմքը կ'ուզէք դնել կամաւորներու ձեռնարկին աւերակներուն վրայ:

Չէ՛, դուք պարտաւոր էիք պարզել ձեր ծրագիրը, եթէ ոչ մանրամասնօրէն, զէթ իր լայն դժբերուն մէջ, որպէսզի ձերինները ամէն սրբութիւն չշահագործեն ձեր հանդանակութեան անունով եւ որպէսզի Ժողովուրդը որոշ կերպով տեսնայ ու դիտնայ թէ նախապատուութիւն կրնա՞յ տալ ձեր ձեռնարկին:

Ու քանի որ դուք չէք ուզեր ձեր ծրագիրը պարզել հրապարակաւ, թոյլ տուէք որ մենք հրապարակենք զայն, ճիշդ ա՛յնպէս ինչպէս բացատրած էք զայն մեր պատկաւաւորներուն, առանց կէտ մը աւելցնելու կամ պակասեցնելու:

Ա.— Թարգմաններ ու առաջնորդներ տալու...

Բ.— Դիւանագիտական դիմումներու եւայլն ծախսերը հոգալու...

Գ.— Եւրոպական կիսը մը մեծ թերթեր դրամով շահելու մեր դատին:

Թարգմաններ ու առաջնորդներ... Բայց անոնք արդէն լիւրջ կը վարձատրուին եւ երբեք մեզի համար ամօթ չէ որ վարձատրուին:

Եւրոպական թերթերու կաշառում... Բայց հայկական դիւցաղութիւնն ու արիւնը կաշառած են արդէն զանոնք: Չկարդացի՞ք Թանի եւ Նիքի Իսթի գրութիւնները, ամէնէն վերջինները միայն յիշելու համար, ո՞վ կաշառած էր զանոնք: Իսկ եթէ իրաւունք կաշառել պէտք ըլլար եւրոպական մամուլին մէկ մասը, մենք կը կարծենք որ Եգիպտոսահայոց ամբողջ հարստութիւնը հազիւ թէ կը բաւէր այդ գործին:

Գալով դիւանագիտական ծախսերուն, արդար է որ Ժողովուրդը հոգայ զանոնք, բայց ատոր համար պատկաւատ ճարտարներու, երկնքի ամբողջ սուրբերը վար իջնցնելու, ազգային գերագոյն շահերու անունով բարբառելու պէտք չկայ. Ժողովուրդը զանոնք կը հոգայ, Փաշա՛, ատոր վստահ եղէք. բայց ամէն բան իր ժամանակին, ու այսօր ժամանակը չէ դիւանագիտական ծախսերու վրայ մտածելու, այսօր կոխէ է ամբողջ ճակատին վրայ, հայրենիքը հուրի ու սուրի մատնուած է, խօսքը ամէն տեղ սուրինն է. խոնարհեցէ՛ք Հայ Կոիւին առջեւ:



Այնպիսի կնճռալից վայրկեանի մը մէջ կը գանձւինք ձեր ստիպողաբար անհրաժեշտ է պատրաստ պտուիւ մեր դատին պաշտպանութեան», կը գրէք դուք ձեր Բ. Շրջաբերականին մէջ:

Կ'երազէ՞ք արդեօք, Փաշա՛. բայց մեր դատը մեր լաւագոյն զակերներուն արիւնովը, հինգ ամիսէ ի վեր է որ կը պաշտպանուի, չըսելու համար 30 տարիէ ի վեր, արեան դաշտերուն վրայ եւ դուք ձեր երանաւէտ հանգստութեանը մէջէն կը կարծէք թէ նո՞ր պիտի պաշտպանուի անիկա. զարմանալի՛ պաշտպանու-

թիւն, որ հայրենիքի դիմադրանքներուն յատկացուած պատառ մը հացին աչք կը տնկէ ամէն բանէ առաջ:

Ի՞նչ պիտի ըսէիք եթէ Յրանսայի մէջ դիւանագիտական կամ ուրիշ ապագայ ծախսերու յատկացուելու նպատակով պետութեան եկամուտները վար դնէր մէկը՝ ի վնաս բանակին պարենաւորման: Արդարութեան Բարձր Ատենանին առջեւ պիտի հանէին այդ անձը, որքան ալ բարձր ըլլար իր դիրքը, պետութեան ապահովութիւնն ու հայրենիքին է՛ն սրբազան շահերը վտանգած ըլլալուն համար: Ամէն համեմատութիւն պահելով նոյն կացութիւնն է որ ստեղծուած է մեր մէջ:

Ի՞նչ խղճով, Փաշա՛, ոտքի տակ տալ կ'ուզէք, դուք եւ ձերինները, այն դժայելի խոյանքը որով Ժողովուրդը դիմաւորեց, ամբողջ Արտասահմանի մէջ, կամաւորներու օգտին կազմակերպուած ձեռնարկները: Ի՞նչպէս սիրտ կ'ընէք բղկտելու, մրտտելու, սպաննելու, հայութեան ամէնէն աւելի այժմէական, ամէնէն աւելի նուիրական գործը՝ անոր արիւնոտ աւերակներուն վրայ կերտելու համար ձեր դիւանագիտական «հիմնադրամ»: Ա՛յս է իրականութիւնը. ձեր անունով խօսողները, ձեր Մարմինն անդամները, օգտուելով մեր պայքարի մտնելու անվճռականութենէն, տուն տուն, խանութ խանութ կը պտտին, շատ անգամ հինգ հոգինոց յանձնախումբերով, համոզելու համար կամաւորներու նպաստ արձանագրուողները որպէսզի չվճարեն իրենց դրամը:

Անոնց ըսածները եթէ չըլլային նողկալի՛ պարզապէս տղայական պիտի ըլլային ու ծիծաղելի: Կամաւորները դրամի պէտք չունին, կ'ըսեն ձերինները. կարդացէ՛ք «Իճրըզն Կազէթ»ի մէջ հրատարակուած Անգլիական Կարմիր Խաչին կոչը որ կ'ըսէ թէ Հայ կամաւորները օրական 6000 ոսկի ծախս ունին եւ այդ ծախսը կը հոգան աշխարհի չորս կողմը դտնուող Հայերը:

Իրամները պիտի ուտեն, կ'ըսեն ձերինները. փա՛ռք Աստուծոյ, ամէն օր յարաբերութիւն ունիք Credit Lyonnaisին հետ եւ թէլէֆօնի պղտիկ հարուածով մը կրնաք տեղեկանալ ճշմարտութեան: Իսկ եթէ մենք չէ որ պիտի ուտենք այլ Թիֆլիսի Առաջնորդ Մեսրոպ Եպիսկոպոսը, ուրեմն զաղթականներու հանգանակութեան հաշույն ձեր միջոցաւ նոյնին զրկուած 20,000 ըուպլին ալ կերուեցաւ:

Մենք դեռ մէկ կողմ կը ձգենք միւս բոլոր ստոր զրպարտութիւնները որոնք չեն կրնար հասնիլ մեզի: Բայց ինչ որ մեզ կը քստմնեցնէ, այն կատաղութիւնն է որով ձերինները բան գործ ձգած կ'աշխատին նոյն-իսկ ստորագրութիւն հաւաքել՝ կամաւորներու համար արձանագրուած դուժարները վճարել չտալու համար: Տեղեր գիտենք ուր ձերիններէն եօթը տարբեր մարդիկ, մէկը միւսին ետեւէն դիմած են՝ հասնելու համար իրենց ազգազաւ նպատակին:

Ու տակաւին համերաշխութեան խօսք կ'ընէք, Փաշա՛. ո՞ր համերաշխութիւնն է ստիկա: Երբ մեր պատ-

կամաւորներէն մէկը յանուն համերաշխութեան շատ քաղաքավարօրէն խնդրեց ձեզմէ որ դոնէ 15 օր յետաձգէք ձեր ձեռնարկին հրապարակումը, չփոթութիւններու տեղի չտալու եւ ժամանակ տալու համար որպէսզի կամաւորներու հանդանակութիւնը լրանայ, խոստանալով այնուհետեւ նիւթական ու բարոյական ամէն աջակցութիւն ձեր ձեռնարկին, դուք զինքը «խենթ» անուանեցիք, չկրնալով ըմբռնել թէ հասարակ մահկանացու մը ի՞նչպէս կրնար համարձակիլ այդ տեսակ առաջարկ մը բերել ձեզի:

— Միւսակ 15 օր, Փաշա՛...
— Ո՛չ իսկ ժամ մը, ո՛չ իսկ վայրկեան մը...
Տառապէս ասոնք են ձեր խօսքերը:

Ա՞յս էր ձեր համերաշխութիւնը: Արդէն ի՞նչպէս համերաշխութեան խօսք կրնաք ընել դուք, որ «ես»ով ու «ինծի»ով միայն կը խօսիք: Ձեր ամէն ըսածին այ՞՛ր եթէ ըսուի, համերաշխութիւն կայ. այսպէս սորվեցուցած են մեզի ձեր շրջապատի մարդիկը: Կամայականութիւն եւ համերաշխութիւն բառերը երբեք չեն կրնար համաձայնիլ իրարու հետ, ու ձեր սխաթմը գերագանցօրէն կամայական է: Եթէ այդպէս չըլլար, Եսով ու Ինծիով չպիտի խօսէիք դուք, մանաւանդ մեր Ժողովուրդին հետ, ձեր շրջաբերականները չպիտի ունենային արքայական հրովարտականերու այն կտրուկ ու խրոխտ ոճը որ առնուազն անհասկնալի է մեզի համար, եւ ձեր աջակիցներն ու Մարմին անդամները յարգելու եւ խամաճիկներու տեղ չընելու համար ձեր շրջաբերականներուն տակ չպիտի դնէիք սոսկական Պօղոս Նուպար ստորագրութիւնը:

Այս լեզուն նոր է մեզի համար եւ անշուշտ շատ դառն, բայց ճշմարտութիւնը միշտ դառն կ'ըլլայ:

Ու հիմա, ըսէք մեզի, Փաշա՛, ո՞վ տուաւ մեզի իրաւունք ձեր վէթօն դնելու կամաւորներու ձեռնարկին վրայ. ո՞վ տուաւ մեզի իրաւունք ձեր հիմնադրամովը հրապարակ իջնալու եւ Եգիպտոսէն Ամերիկա, Ամերիկայէն Պալքան ստեղծելու այն պղտոր ու չփոթ կացութիւնը որ ողբալի է պարզապէս:

Այդ իրաւունքը հաստատուելու պէտքը կ'երեւի դուք ալ զգացեր էիք, քանի որ Միւսթիւնի վերջին առաջնորդը կ'ըսէ թէ, դուք այդպէս ընելու համար շարժեցաք «Իբրեւ Լիազոր-Պատուիրակ»: Լիազոր-Պատուիրակ... Ի՞նչ բանի Պատուիրակ եւ երբէ՞ն ի վեր Լիազոր: Մենք որքան որ դիտենք, դուք Կաթողիկոսի կողմէ նշանակուած Հայկական Պատուիրակութեան նախագահն էիք եւ երբեք Կաթողիկոսի Լիազոր-Պատուիրակը. տարբերութիւնը ահազին է, դուք ալ կը հասկընաք, ձերիններն ալ կը հասկնան: Այդ Պատուիրակութիւնը — ինչպէս աշխարհի վրայ ամէն պատուիրակութիւն — որոշ նպատակի մը համար կազմուած էր, այն էր՝ մղում տալ հայկական բարենորոգումներու ծրագիրին որ դիւանագիտութեան սեղանին վրայ էր այն ժամանակ: Այդ հարցը փակուելով Պատուիրա-

կուրծին ալ լուծուած է ինքնին, այս շատ պարզ է: Իսկ եթէ այդ Պատուիրակութիւնը գոյութիւն ունի մինչեւ այսօր, սպասելով ապագայ դիմումներու, անկա միայն եւ միմիայն իրաւունք ունի զբաղուելու այն գործերով որոնց համար կոչուած էր պաշտօնի: Ենթադրելով նոյնիսկ պահ մը թէ ձեր այս նոր ձեռնարկը ձեր պատուիրակութեան կոչումին իրաւասութեան սահմաններուն մէջ ըլլար, մենք կը հարցնենք ձեզի, Փաշա', թէ դուք արդեօք ձեր ծրագիրը ենթարկեցի՞ք Պատուիրակութեան միւս ամբողջ անդամներուն հաւանութեանը: Եւ եթէ այո՛, ինչո՞ւ համար հրապարակ չիջաք ձեր Պատուիրակութեան նախագահի հանգամանքովը՝ այլ իբր սոսկ Պօզնու նալար:

Ու մի՛ խօսիք ձեզի Կաթողիկոսին հեռագրական հաւանութեանն ու հովանաւորութեանը մասին: Այստեղ, Եգիպտոսի Հայութիւնը տակաւին բան մը չի գիտեր ձեր ծրագրին հուժեղէն, Կաթողիկոսը ի՞նչ կ'ուզէիք որ գիտնար եւ ի՞նչպէս չչլանար «Ազգային շահերու պաշտպանութիւն» ուսուցիչ անունէն: Ըսի՞ք Կաթողիկոսին թէ ինչ բանի պիտի յատկացնէք հաւաքուած դուժարները. ըսի՞ք Կաթողիկոսին որ հրապարակի վրայ կամաւորներու հանգանակութիւն մը կայ եւ կ'ուզէք դայն քանդել նախ եւ առաջ՝ տեղ բանալու համար ձերինին. զգացուցի՞ք իրեն թէ ամբողջ Արտասահմանի մէջ երկպառակութեան ու պայքարի նմանը չտեսնուած չիօթ չըջան մըն է որ կը բացուի՝ ազգային շահերու պաշտպանութեան համար:

Ու տակաւին երկդիմութեան խօսք կ'ընէք, Փաշա'. մենք ենք երկդիմութիւն ստեղծողը թէ դուք ու ձերինները: Դուք մեր պատգամաւորներուն որոշ կերպով, լաւ հայերէնով ու լաւ Ֆրանսերէնով ըսիք ու կրկնեցիք թէ դուք «հակառակ էք մեր ձեռնարկին», թէ «մենք պէտք չէինք այդ ձեռնարկը հրապարակ հանել», թէ «կամաւորներու գործը շատ երկրորդական նշանակութիւն մը ունէր», թէ «Մեծ-Հայքը արդէն կորսուած էր ձեզի համար», թէ ամէն պարագայի «Ռուսահայերը կրնային հոգալ կամաւորները» եւ «Արտասահմանի Հայերը պէտք չունէին կամաւորներով զբաղուելու, այլ աւելի կարեւոր, աւելի մեծ ձեռնարկներով»: Աւելին կայ. ի յարգանս կամաւորներու սարքուած հանդէսին համար ձեզ զրկուած Ավան-Սէնի օթեակին տոմսակը ստանալ ու վար դնելէ յետոյ, երբ մեր հաւաքիչը ստացական ի ձեռին ներկայացաւ ձեր գանձապահին, երկոյթէն երեք շաբաթ յետոյ, ձեր գանձապահը ըսաւ որ ինք հրահանգ ստացած էր ձեզմէ այդ տոմսակին դիրք չվճարելու. ինչո՞ւ, չենք գիտեր:

Ասոր հակառակութիւն կ'ըսեն, Փաշա': Դուք ձեր Բ. Շրջաբերականով կը յայտարարէք սակայն թէ հակառակ չէք օգնութեան ձեռք երկնցներու կամաւորներուն: Մենք ուրախութիւնով կ'ընդունենք այդ յայտարարութիւնը իբր անկեղծ յետս կոչում

մը եւ առաջին քայլը դիմումներու ճամբուն մէջ: Վաղը, մենք վստահ ենք դարձեալ, կեանքի պահանջն ու վայրկեանին անտեղիտալի ստիպողականութիւնը ձեր վրայ պարտաւորութիւն պիտի դնեն յայտարարելու որ ձեր հիմնադրամէն կարեւոր բաժին մը պիտի յատկացնէք Կովկասի կամաւորներուն:

Վաղը, մենք վստահ ենք դարձեալ, կեանքի պահանջն ու վայրկեանին անտեղիտալի ստիպողականութիւնը ձեր վրայ պարտաւորութիւն պիտի դնեն յայտարարելու որ ձեր հիմնադրամէն կարեւոր բաժին մը պիտի յատկացնէք Կովկասի կամաւորներուն: Բայց ա՛տ ալ չի բաւեր, Փաշա'. եթէ դուք կ'ուզէք իսկապէս Հայու գործ կատարել, պարտաւոր էք ձեր հիմնադրամը ամբողջ, մինչեւ յետին կոպէկը ղերկել Կովկաս, որովհետեւ Եգիպտոսի կամ Եւրոպայի մէջ չէ որ այսօր կը պաշտպանուին ազգային շահերը, այլ հո՛ն, Կովկասի մէջ: Հեռաւոր ու դժբախտ հայրենիքին միացող աւերակներուն վրայ, ազգին լաւագոյն զակընդորուն քրտինքովն ու երիտասարդ կարմիր արիւնովը:

Պոնարհեցէ՛ք, Փաշա', Հայ Կուրիին առջև:

Եգիպտոս, 8 Ապրիլ, 1915
ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՄԻՏԷ

S. Ե. 7
Հ. Յ. Դ. ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՄԻՏԷԻ ԿՈՉՐ
ԵԳԻՊՏԱՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Տպագրուած 30x38 սմ. սպիտակ-գորշագոյն բերքի քուրթի վրայ (Տ. Ե. 5ի որակով), մէկ երես:

ՄԻ՛ ՄՈՒՆԱՔ ՀԱՅՐԵՆԻՔԸ
ԿՈՉ ԵԳԻՊՏԱՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Հայրենակիցներ, Օրուայ դաժան իրականութիւններու անըմբռնելի մոռացումով մը, Թաղականութեան, Տէրտէր-տիրացուի պայքարներ ծայր կու տան եգիպտահայ ազգային հորիզոններուն վրայ: Այդ բանը դուք պէտք չէ՛ որ թոյլ տաք: Բուռ մը խաթարուած խղճմասնակներու, Թաղականութեան թեկնածուներու եւ անպաշտօն ուսուցիչներու ստեղծել նկրտած անհարկի եւ մեղապարտ շարժումներուն հանդէպ մենք պարտք կը համարինք հնչեցնել ահազանդը, ձեր ուշքը դարձնել դէպի Երկիր եւ ըսել.
Հայեր, մի՛ մոռանաք Հայրենիքը...:
Մաայլ գոյժեր կու դան այդ դժբախտ Հայրենի-

քէն: Ամբողջ կովկասեան սահմանագլխին երկայնքը արւելի ծով է դարձեր: Բասէնէն մինչեւ Ատրպատական՝ անցնելով Ալաշկերտէն, Արաղայէն, Աղբակէն, քաղաք եւ գիւղ, տուն եւ հիւղակ հողի հաւասար են դարձուած: Այդ շրջաններու մինակ նիւթական կորուստը 15 միլիոն ռուբլի կը հանեն Կովկասէն ստացուած տեղեկագրութիւնները. իսկ մարդկային կորուստը եւ գործըւած վայրագութիւնները անթուելի են ու քստմենցընող: Ատրպատականի եւ Աղբակի շրջաններէն՝ Հերիտանի, Բաղի, Արաղի, Մարգաւէնի, Պարատունի, Փիսի եւ Բաշկալայի բնակիչներէն հարիւրին հազիւ թէ 5-6ը կրցեր են ազատուիլ, մնացածները ամբողջ կոտորուել են. իսկ Ախորիկի, Հասանթաւրայի եւ Աղբակի բնակիչներէն ազատուել են միայն կիներն ու երախաները. տղամարդիկը ամբողջ ջարդուել են: Այդ շրջաններէն առեւանդուած եւ գերի տարուած են 230 հարսներ ու աղջիկներ:

Ալաշկերտի գաւառին մէջ, Ալաշկերտի, Զիտկանի եւ Մօլլա-Միւլէյմանի բնակիչներէն ամբողջ տղամարդիկը ջարդուած են՝ առանց խնայելու նոյնիսկ 8-10 տարեկան տղաներուն: Բռնարարութիւնները զարհուրելի չափերու են հասեր այդ շրջանին մէջ. առեւանդուած եւ գերի տարուած հարսներու եւ աղջիկներու թիւն է 470:

Կովկասի մէջ, Օլթիի, Արդուինի, Արտահանի եւ Արտանուշի շրջաններէն սպաննուած են 1270 հոգի եւ գերի տարուած են 250 կիներ ու օրիորդներ: Բացի այդ, Արտանուշի եւ Տանձոտի բնակիչներէն զրեթէ բոլոր տղամարդիկը, 10 տարեկանէն վեր, մորթուած են. ազատուել են միայն կիներն ու մանուկները: Միայն Տանձոտի մէջ 24 կիներ եւ ջահիլ աղջիկներ թունաւորեր են ինքզինքնին՝ բռնարարութեան չենթարկուելու համար: Շաւշէթի 4 հայկական գիւղերու այդ մարդիկը ամբողջ կոտորուել են եւ կիներն ու աղջիկները գերեզմանուել:

Սալմաստի մօտ թուրք զինուորական իշխանութիւնները հաւաքեր են ամբողջ մնացած տղամարդիկը, թուով մօտ 7-800 հոգի, հաց բաժնելու խոստումով, եւ ամէնքը մէկանց զազանօրէն հրացանի են բռներ:

Իսկ Հայաստանի ներքին գաւառներէն մեր ստացած տեղեկութիւնները աւելի՛ յուսահատական են եւ նոյնքան աղետարէ: Բարբորէն մինչեւ Տիգրանակերտ եւ Կարինէն մինչեւ Պարբերդ՝ անցնելով Երզնկայէն, Մուշէն, Բաղէշէն եւ Վանէն, սարսափն ու ոճիրն է որ կը տիրապետեն անասնա՛: Ամէն կողմ ծեծ ու բռնութիւն, ամէն կողմ սպաննութիւն ու բռնարարում, ամէն կողմ աւեր ու թալան...:

Փողովուրդը տնտեսապէս բոլորովին քայքայուած է. աշնանացանք չէր եղած արդէն, հիմա գարնանացանքն ալ չպիտի ըլլայ եւ սուրէն ազատուողը սովի ճարակ պիտի դառնայ: Միւս կողմէն համաճարակները կը ծաւալին ամէն կողմ. Կարնոյ շրջանին մէջ քի-

ֆիւսը սարսափելի համեմատութիւններու հասած է եւ ամէն օր հարիւրաւոր զոհեր կը տանի:

Դրութիւնը օրէ օր կը ծանրանայ. կառավարական պաշտօնեաները գազան են դարձեր. ժանտարմներու կեղեքումներուն չափ չկայ. թուրք կամաւորներու գործած վայրագութիւնները Լէնկթիմուրեան սարսափները կը յիշեցնեն:

Ընդհանուր կոտորածի եւ բնաջնջման սպառնալիքը կախուած է Հայութեան դիմուն վերել:

Վասպուրականը, Սասունն ու Զէյթունը, չկրնալով այլեւս դիմանալ այդ կեղեքումներուն՝ բարձրացուցած են ապստամբութեան դրօշակը. իսկ Մուշը կիսապստամբական դրութեան մէջ է եւ շուտով կը միանայ շարժումին: Ընդհարումները սկսած են արդէն Հայ ապստամբներու եւ թուրք ժանտարմերի ու միլիտի միջեւ ներքին Կարկառի մէջ (Պիթիսի նահանգ): Առաջին ընդհարումներու ընթացքին սպաննուած են 60է աւելի ժանտարմներ եւ Հայերը կրակի տուած են 11 դիւղ: Գեաւաշի հայ գիւղացիները օգնութեան կը փութան Կարկառի: Կը սպասուի որ Հայ կամաւորական զունդերը ճեղքելով թուրք բանակը ներս խուժեն՝ օգնութեան փութալու ապստամբող շրջաններուն եւ միասին տանելու հայ ազատագրումին գերագոյն կոխը:

Ահաւասիկ այն լուրերը, որոնք կուզան յաւիտեանական զուլումի աշխարհէն, փոթորկելու մեր սրտերը: Ամէն կողմէն օգնութեան աղիտողմ կոչեր կը հասնին. բժշկական օգնութիւն, նիւթական օգնութիւն, զէնքի՛ օգնութիւն. այլապէս աւերակներու կոյտ մը միայն պիտի մնայ Հայաստանէն:

Հայրենակիցներ, վայրկեանը ծանր է ու պատասխանատուութիւններով լեցուն, ամէնքի՛ս համար: Ազգային գոյութեան հարցն է որ կը վճռուի կրակի եւ արիւնի մէջ: Ամօ՛թ է ու ոճիր միանգամայն այս գերագոյն ռոպէներուն տէրտէր-տիրացուի սին խնդիրներով զբաղուիլ:

Մենք մեր մասին հրապարակով ու բարձրաձայն կը յայտարարենք թէ բացարձակապէս հեռու պիտի մընանք տեղական ամէն ճղճիմ պայքարէ՛ նոյնիսկ եթէ այդ պայքարները ուղղուած ըլլան մեր լաւագոյն ընկերներուն դէմ: Ամբողջ այդ ցոյցի եւ հանրագրութեան բացասական գործունէութենէն բիւր անդամ նախադաս կը համարինք մենք պուտ մը ջուր հասցնել հայրենիքի զինուորին պապակած շրթունքներուն ու սրբել արցունքի չիթ մը թշուառ որբուկի մը աչուրներէն:

Հայրենակիցներ,
ՄԻ՛ ՄՈՒՆԱՔ ՀԱՅՐԵՆԻՔԸ:
ՕԳՆԵՑԷ՛Ք ՀԱՅԱՍՏԱՆԻՆ:
Եգիպտոս, 27 Ապրիլ, 1915

ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՄԻՏԷ

S. Ե. 8

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԸՆԿԵՐԱԿԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ ԴԻԻԱՆԻՆ ԳԻՐԸ՝ S. ԵԱՂՈՒՊԵԱՆԻՆ

Նամակի 13,5x21 սմ. գծաւոր պարզ բուլղի վրայ, մէկ երես: Ժողովին նախագահած է Յայնիմիճ՝ Տիգրան Եղազաբեկ: Իրիւ Բարսեղաբ ստորագրած է Հ. Ն. Գարբիլեան:

Աղեքսանդրիա, 5/4/1918

Յարգելի ընկեր Տիգրան Եղազաբեկ

Աստ

Ապրիլ 3ի ընկ. ընդհ. ժողովը իւր նիստին մէջ Ենթակոմիտէին հրատարակ մէկ անդամին տեղ դադարեցնելու կատարելով 28 քուէով ընտրեց Ձեզ: Ներկայիս կը հրաւիրենք Ձեզ Ձեր պաշտօնին ուժ ու կորով մաղթելով:

Ընկերական բարեւանքով Դիւան Ընկ. Ընդհ. Ժողովի Բարտուղար Նախագահ

Հ. Ն. ԳԱՐԲԻԼԵԱՆ S. ԵԱՂՈՒՊԵԱՆ

S. Ե. 9

ՍՏԵՓԱՆ ԵՍԱՅԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Գրուած է սև մելամով, նամակի ոչ-գծաւոր 14,5x21 սմ. երկքերք բուլղի մը ներքին երկու երեսներում վրայ:

7 Նոյեմ. 918

Սիրելի Տիգրան,

Ստացայ երէկուան թուակիր նամակդ, որուն կը փութամ պատասխանել, որովհետեւ կը տեսնամ թէ փոքրիկ թիւրիմացութիւններ մը ունիք՝ իմ Սուրիա չերթալու մասին: Անշուշտ չպիտի ուզես զիս ամբաստանել թէ գործէ փախչողն եմ, ատոր վստահ եմ. բայց ուշադրութեանդ պիտի յանձնէի կարելոր պարագայ մը որ՝ երբ մենք ռեւէ գործ կը վերցնենք, փառքի պատիւի համար չէ որ կը վերցնենք՝ այլ լիովին կը զգանք գործին պատասխանատուութիւնն ու պահանջները եւ ըստ այնմ կը լծուինք անոր: Կը ցաւիմ ըսելու, սիրելի Տիգրան, որ Ազգ. Միութեան գործին վրայ նայելու, անոր մեծութիւնը ըմբռնելու մասին ցոյց տուած ահա-սուքիւնը անկարելի կը դարձնէր ինձ վերցնել այդ մի-

սիոնը: Այդ մասին Եփրեմեանի հետ երկար խօսած եմ, նա լիովին ծանօթ է իմ տեսակէտներուս, իրմէն կարող ես տեղեկանալ: Ես ոչ միայն բացարձակապէս չեմ մերժած, այլ եւ երբ առաջին անգամ ինձի ըսուած է, սիրով տրամադրուած եմ: Բայց այդչափը չէր բաւեր անշուշտ, փառք եւ պատիւ չունէի փնտրելիք այդ ճամբորդութեան մէջ՝ այլ դործ եւ արդիւնք: Ահա երկու խօսքով իմ բացատրութիւնս: Իսկ չնորհակալ եմ խորապէս այն փաղաքուշ բառերուդ համար զորս կը տածես իմ անձին հանդէպ, այդ բառերդ ես կ'ընդունիմ իբրեւ վաղեմի բարեկամութենէ մը բխած սիրոյ զգացումներու արտայայտութիւն, ինչպէս նաեւ շէն մը սուր սլաքներդ:

«Հայրենիք» ընկալապիւրներդ չզրկեցի, որովհետեւ Պոսթընէն նամակ կը սպասեմ եւ տակաւին չեմ ստացած:

Հրանդ Ազատեանի ինչորքը չէ կարգադրուած տակաւին. արդիւնքը կը պրեմ յետոյ, եթէ պէտք ըլլայ: Ամիրեանին յանձնարարածիդ մասին անհող չեղայ, նոյն օրն իսկ նամակը իրեն զրկեցի իր պաշտօնակից վարդան Գէորգեանի ձեռքով:

Ընկերական բարեւանքով Քոյդ Ս. ԵՍԱՅԵԱՆ

Յ. Գ.— Եթէ Աղեքսանդրիոյ ընկերները բոլորն ալ շեղի պէս կ'այլապնեն զիս Սուրիոյ գործին առթիւ՝ ես պատրաստ եմ անձամբ տալու պէտք եղած բոլոր բացատրութիւնները եւ մանրամասնութիւնները:

ՆՈՅՆ

S. Ե. 10

Հ. Յ. Դ. ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱՄԱԿԸ S. ԵԱՂՈՒՊԵԱՆԻՆ

Գրուած սև մելամով, Եգիպտոսի Կոմիտէի պաշտօնաբուլղի (21x27 սմ.) մը մէկ երեսին վրայ:

ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՄԻՏԵ 1918 Դեկտ. 2 № 59

Ընկեր Տիգրան Եղազաբեկին Աղեքսանդրիա

Սիրելի ընկեր,

Մարմինս իր վերջին լիակատար ժողովին մէջ քննութեան առարկայ դարձնելով Շրջանի Մարմիններու գործունէութեան հարցը, ցաւօք նկատած է որ Թան-

թայի կազմը, մասնաւորապէս, շատ աննախանձելի կացութեան մէջ կը դնուի: Շրջ. Ժողովէն ի վեր, ամբողջ 6/7 ամսուայ ընթացքին, Թանթայի Մարմինը ոչ միայն չէ կատարած, դոյզն չափով մ'իսկ, իր վրայ դրուած պարտականութիւնը, այլ կենդանութեան նշոյլ մ'իսկ ցոյց չէ տուած:

Նկատի ունենալով այս պարագան, Մարմինս միաձայնութեամբ լիազօր պատգամաւոր նշանակեց Ձեզ, պաշտօն տալով Ձեզի, ճամբորդութիւն մը կատարել Թանթա ու այցելելով այդ Շրջանը ստուգել ու իմանալ մեր ընկերներու լուրթեան պատճառները, ջանալ ուժեղացնել անոնց թուլացած կազմը եւ հրաւիրել զանոնք, նոր թափով մը գործի ձեռնարկելու եւ լրացնելու իրենց պարտականութիւնները:

Յուսալով որ փութով կը ձեռնարկէք գործի եւ յաջողութեամբ զլուս կը հանէք Ձեզ վստահուած առաքելութիւնը, կը մնանք ընկերական բարեւանքով՝

Հ. Յ. Դ. ԵԳԻՊՏՈՍԻ ԿՈՄԻՏԵ

S. Ե. 11

ՀԱՅԿ ԲԱԹԱԲԱՆԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՏԻԳՐԱՆ ԵԱՂՈՒՊԵԱՆԻՆ

Հայկ Բաթաբանեանը ապրած եւ գործած է Իզմիր: Գտնուած է Յան Եգիպտոս: 1919ին կը գտնուի Եթովպիա, ուրիկ կը գրէ Արեւմտեանի S. Եղազաբեկին: Սև մելամ: H. PATAPAN տպագրեալ վերստառութեամբ, նամակի գծաւոր երկու բուլղի (21x28 սմ.), մէկակամ երես:

Տիրէտալա, 19 Փետրուար 1919

Մեծարդոյ Տիար Տիգրան Եղազաբեկ

Աղեքսանդրիա

Սիրելի ընկեր

Կը հաստատեմ նախորդ երկու նամակներս որոնք անպատասխանի մնացին: Կը սիրեմ յուսալ որ նախկին մէկ ընկերոջը նամակին պատասխանելու հաճութիւնը կ'ունենաս:

Ես հանգիստ եմ եւ շատ առողջ, բայց Իզմիրէն առողջակի առածս լուրերը զիս կը մտազբաղեցնեն:

Վերջերս Գահիրէէն մեր ընկեր Մարտիրոս Սարլեանէն (Մանիսացի) նամակ ստացայ. ծնողքիս չափազանց նեղ վիճակի մէջ ըլլալը կը գուժէր:

Հայրս որ պատերազմէն 4 ամիս առաջ մեռաւ թողուցած էր բաւականաչափ դրամ (400 է աւելի ոսկի), բայց կ'երեւի անտեսական եւ քաղաքական պատճառներով այսօրուայ արգահատելի վիճակին հասաւ ծրնողքս:

Շատ նամակներ զրկեցի պատերազմի դադարէն վերջ, բայց գրածներուս եւ ոչ մէկ պատասխան ստացայ:

Հաղորդակցութիւններու պակասը եւ կամ ուրիշ աւելի տխուր պատճառներ ըլլալու են: Լսեցի նաեւ որ Աղեքսանդրիայէն Պոլիս եւ Իզմիր հաղորդակցութիւնները վերսկսած են կանոնաւոր կերպով, այս առթիւ կ'օգտուիմ առիթէն եւ կը ներփակեմ նամակ մը, որը գոցելէդ վերջ հասցէին զրկել կը խնդրեմ:

Կը սիրեմ յուսալ որ չես մերժեր առաջարկս, եւ կը պրես հասցէիս (ուր կ'աշխատիմ):

Հաճէ նաեւ ըսել թէ կրնամ քանի մը հարիւր Փրանք եւ կամ աւելի զրկել հասցէիդ (հասցէդ տուր ճշգրիտ կերպով) որպէսզի Իզմիր զրկես ծնողքիս հասցէին:

Եթէ կան Իզմիրէն եկողներ ալ, մի մոռնար տեղեկութիւններ քաղել ատոնցմէ ծնողքիս մասին եւ առաջին առթիւ իմացնել ինձի: Տեղեկութիւն տուր նաեւ ազգային լուրերէն եւ մանաւանդ կազմակերպականներէն:

Պատասխանիդ սպասելով քոյդ անկեղծօրէն եւ շատ ջերմ բարեւանքով

ՀԱՅԿ ԲԱԹԱԲԱՆԵԱՆ

Adresse

H. PATAPAN Bank of Abyssinia Diré - Daoua Abyssinia

S. Ե. 12

ՀԱՅԿ ԲԱԹԱԲԱՆԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Նոյն տիպի բուլղի վրայ (տես S. Ե. 11), սև մելամով, մէկ երես:

Տիրէտալա, 30 Մայիս 1919

Սիրելի ընկեր Տիգրան Եղազաբեկ

Աղեքսանդրիա

Նամակներդ ստացայ՝ վերջին թուակիրդ 25 Ապրիլ: Չարմանալի դտայ սակայն այսքան ուշացում թղթատարական վարչութեան կողմէ:

Մարտիրոս Սարլեանն ալ գրած էր եւ տուած էր այդ լուրերը. ուրախ եմ: Կազմակերպութիւնը իր թերութիւններովը հանդերձ էր, է եւ կը մնայ ամենազօրեղ կազմակերպութիւնը հայ ժողովուրդին: Այո՛, հաւատքի աչքերով չէ՛ որ կը խօսիմ այլ ճշդուած՝ մաթեմատիքի վրայ:

Կարգը եկաւ հարցնելու — ի՞նչ կը մտածենք ընել (իրրեւ) ներքին քաղաքականութիւն, եւ արտաքին:

Ինծի կը թուի ընդհ. ժողով գումարել անհրաժեշտ է ժամանակը ներածին պէս:

Հոս տեղ ալ 5-6 հոգիներ խումբ մը կազմեցի. բայց ի՞նչ կ'արժէ այս թիւը:

Գրէ աւելի երկար. ես այս չոր տեղերէն ի՞նչ կ'ուզես որ գրեմ: Փողերդ կը զրկեմ երբ փոսթատան վարչութիւնները աւելի կանոնաւորուին: Որքան ուշ՝ այնքան շատ կը ստանաս...

Քոյդ անկեղծ բարեւներով՝
ՀԱՅԿ ԲԱՔԱՐԱՆԵԱՆ

S. Ե. 13

ԳԱՐԵԳԻՆԻ ՆԱՄԱԿԸ Տ. ԵԱՂՈՒՊԵԱՆԻՆ

Գրուած սեւ մեղանով, Եգիպտոսի Հայ Ազգային Միութեան պաշտօնաբարձրի վրայ (13,5x21 սմ.), երկու երես: Թուղթը կը կրէ հետեւեալ վերտառութիւնը.— UNION NATIONALE ARMÉNIENNE — Comité d'Égypte — 3, Rue Mouillard — LE CAIRE (Téléphone 38-01):

Կ'ակնարկուի հաւածորէն Հայկական Լեզուի գիտութեամբ: Նամակագիրը, Տ. Ե. 19ի հետ ձեռագրի մամուլէն զատելով, պէտք է ըլլայ փաստաբան Գաբրիէլ Տիրկիւրեանը:

Le Caire, 26 - 6 - 1919

Սիրելի Տիրքան,

Կարդացի նամակդ: Կացութիւնը հետեւեալն է: Հայկական բանակի գինուորները ազատ արձակուած են: Կու գան շատ խեղճ եւ հիւանդագին վիճակի մէջ: Իւրաքանչիւրին կու տանք վեց ոսկի եւ կը խոստանանք տալ զգեստեղէն եւն.: Տրուած դրամը շատ քիչ կը գտնեն եւ իրաւամբ: Գործադիրին մէջ բոլոր բարեօրէններ ունեցանք անոնց կացութեան անմիջական բարեօրէնման մասին: Օրինական առարկութիւն մը եղաւ, այն՝ թէ առանց ընդհ. ժողովոյ հաւանութեան ապօրինի է մեծ գումարներ տրամադրել: Ասոր վրայ անմիջապէս ընդհ. ժողով որոշուեցաւ շարք օրուան համար: Ժողովին բաւական մարդոտ պիտի ըլլայ: Յամենայն դէպս բացակայիլ անպատուարեք պիտի ըլլայ կուսակցութեան մասին: Կամաւորներուն յոյսը մեր վրայ է: Բանակի կազմութեան գլխաւոր հեղինակները մենք ենք, այսինքն մեր կուսակցութիւնը, եւ հետեւաբար անոնց ներկայ պէտքերը հոգացողներն ալ մենք պիտի ըլլանք: Անգամ մը որ ընդհ. ժողովէն կամաւորներուն արժանի պիտե՞մք մը կորզենք՝ ամէն բան կը դիւրանայ եւ ինքզինքս կրնամ տրամադրել ուզած

գործերուդ: Իսկ այժմ վատութենէն բան մը աւելի պիտի ըլլայ բացակայիլ: Իսկ յետագայ անկարելի է, նկատի առնելով անոնց նիւթական եւ բարոյական թըրուառ վիճակը: Արդէն մինչեւ շարք օր ունեցածնի պիտի հատցնեն եւ պիտի իյնան փողոցները...

Նախ ողջերը մտածենք, որպէսզի իրաւունք ունենանք նահատակներով հպարտանալու:

Հետեւաբար բարկանայք, սակայն եւ մի մեղան չէք...

Քոյդ
ԳԱՐԵԳԻՆ

S. Ե. 14

ԱՏԱՆԱՅԷՆ ՆԱՄԱԿ Տ. ԵԱՂՈՒՊԵԱՆԻՆ

Գրուած կապտաւուն մեղանով, մամակի փոքր չափի (13,5x21 սմ.) երկքերթ թուղթի վրայ, չորս երես:

Նամակագրին իմֆանիւնը ամծամօք է մեզի: Ստորագրուած է Կարապետ Մ. Կ.....: Մակամուռը անքննարկելի է. կըրծայ կարգադրուի ՏԱՐԱՏ կամ ՏԱՏՈՒՐ:

Ատանա, 12 Յուլիս 1919

Սիրելի ընկեր Տիրքան,

յ'Աղեքսանդրիա

Նախ եւ առաջ քո եւ Ձեր ազնուութի մայրիկին յատուկ որպիսութիւնը կը հարցնեմ: Քաջայայտ եմ որ հանգիստ էք, եւ Ձեր տաժանելի գործը կը շարունակէք. ի բոլոր սրտէ կը բաղձամ ձեր ազատումը այդ սպանդանոցէն, եւ խօսք կու տամ որ պիտի աշխատի ազատել քեզ այդ տեղէն:

Իմ խորին շնորհակալութիւններս այն ամէն ձանձրութեանց զորս պատճառեցի Ձեզ. սիրալիր եւ գուրգուրալից համբոյրներ բոլոր տղոց առանց խորութեան. եթէ թուելու ըլլամ երկար կ'ըլլայ. միմիայն այսպէս կը սկսիմ.— Կոմիտէի կազմին, Ենթակոմիտէին, Քննիչ Մարմին, Յառաջդիմասէրի մեր ընկերներուն, նաեւ մեր համակիրներուն եւ բոլոր բացը մը նացող հին եւ նոր ընկերներու՝ վերոյիշեալ տղեր կ'ըսես:

Իսկ գալով մեր մասին, բաւական լաւ ճամբորդութիւն մը ըրինք եւ աւելի լաւն պիտի ըլլար եթէ խեղճ կինս ներառվելով շտառապէր Յ օր. բարեբախտաբար հիմա լաւ է. իսկ գալով տղոց մասին՝ երկուքն ալ առաջին անգամ ծովային ճամբորդութիւն կ'ընէին. այնպէս որ ամէն քայլափոխին հարցումներ կ'ընէին ամէն մի նոր տեսած առարկաներու եւ կամ ծովային դիրքերու. շատ լաւ ճամբորդութիւն մը ըրինք:

Վեց-եօթը օր Մերսին մնալէ յետոյ եկանք եւ հաստատուեցանք Ատանա, եւ հիմա խանութ գտնելու ետեւէ եմ. թէ եւ դժուար է, քաղաքը լիք է եւ ամենաչնչին խանութներէ մինչեւ մեծ խանութներ բռնուած են եւ կը գործեն: Տան համար թէ եւ շատ նեղութիւն քաշեցի եւ սակայն հիմա 3 ամսուայ համար պարտէզով տուն մը գտած եմ. անկից վերջը ինչ պիտի ընեմ չեմ վիտեր: Ժողովրդի հոգեբանութիւնը շատ յուսահատական է, մեր քրիստոնեայ հակառակորդներու բռնած ընթացքին շնորհիւ, եւ սակայն բաւական յուսադրեցի. նաեւ վերջին լուրը զորս դուք ալ իմացաք, — ամերիկացի մէկու մը նշանակուելու Հայաստանի բարձր գումիսէր: Յուլիս 13ի կիրակի օրը միթիւնկ կայ. արարները պիտի ցանկան եղբի իբր թէ՛ այն կառավարութեան մանտաթերութիւն Կիլիկիոյ, ինչ որ իրենց եղբայրները իրենց երկրի մէջ չեն ուզեր եւ թէ այն մտայնութիւնը կայ անոնց մէջ՝ թէ մինչեւ վերջի անհատը պիտի իյնայ իրենցմէ եւ անկէ յետոյ կրնան տիրանալ իրենց հայրենիքին. այս է Պէյրութի, Դամասկոսի եւ Հալէպի արարներու տրամադրութիւն. զրգուանքով կ'արտայայտուին անոնց դէմ. նոյն իսկ Դամասկոսի մէջ կարգ մը ցոյցեր եղած են հակառակ շահերուն անոնց:

Յետ այսու ամէն նորութեան Ձեզ գիտակից կը պահեմ, ինչ որ ըլլայ:

Տիկինին, Արմենակին, Վարդգէսին եւ իմ կողմէ սիրալիր բարեւներ:

Քոյդ

ԿԱՐԱՊԵՏ Մ. Կ.

S. Ե. 15

ՆԱՄԱԿ ԵՒ ՀԱՐՑԱՐԱՆ

Նամակը գրուած է փոքր չափի երկքերթ գծաւոր թուղթի մը չորս երեսներու վրայ: Հարցաբանը՝ Առջի չափի առաջին թուղթի մը վրայ: Ձեռագիրը մաքուր է, բայց ստորագրութիւնը՝ զժուար ընթացքով: Կարելի է կարգալ՝ ՄԱՍԻԿԵԱՆ:

Գահիրէ, 23 Յուլիս 1919

Սիրելի ընկեր Տ. Եազուպեան

Աղեքսանդրիա

Ներկայի 19 թուակիրը ստացայ: Գրած 3 յօդուած-ուածներուդ մասին կարծիքս.—

Ա. յօդուածը չ'անցնիր, որովհետեւ ամէն բանէ առաջ ուրիշներու ձեռնմխութիւնը կը նշանակէ նպատակ մարմիններուն ներքին գործերուն մէջ. Բարեգործականը երբեք կարելի չէ պարտադրել այդ ձեւ բանի

մը եւ գործադրութիւնն իսկ անկարելի է մանաւանդ Ազգ. Միութեան ներկայ կազմին համար, ուր աշխատող չկայ բառին իսկական նշանակութեամբ:

Բ. յօդուածը արդէն խնդրոյ առարկայ է եւ մեր վերապահումին պատճառներէն մէկը կը կազմէ. խընդիր պիտի ըլլայ արդէն:

Գ. յօդուածը եւս խնդրոյ նիւթ է, բայց այդ մասին առարկութիւնը սա է, թէ վերակազմութիւնը եղած է համեմատական այդ ձեւը ամէնուն հաւանութեան ենթարկելէ վերջ, եւ այդ կէտն էր որ ամիսներով ձգձգեց վերակազմութեան գործը. հիմը այդ համեմատութիւնն է, խախտել այդ հիմը, կը նշանակէ եղածը աւելի: Մեր վերապահումներէն մէկն ալ այս մասին է եւ այս կէտին շուրջ մեծամասնութիւն կազմել յաջողելու համար հաւատք չունիմ:

Այս կէտերը պարզելէ վերջ ըսեմ, թէ ես անձնապէս երբեք հաւատք չունիմ Ազգ. Միութեան այս կազմով կեանք շարունակելուն մասին. շէնքը շատ խարխուլ է(1), չփլչելէ գատ միջոց չէ մնացած: Նոր խօսակցութեան մասխարայութիւնը, Երեւանի կառավարութեան օրինաւոր ակտին շուրջ սկսած զէվէկութիւնները, աթոռի բացայայտ խեղկատակութիւնը փտտեցուցին չէնքը. ոչ հեղինակութիւնը կը մնայ Ազգ. Միութեան, ոչ լրջութիւնը:

Վաղը պիտի հաւաքուինք այստեղ Ազգ. Միութեան ձախակողմի անդամներս Հանրապետութեան կառավարութեան ակտին շուրջ(2) Ազգ. Միութեան դիրքը որոշելու մասին խորհրդակցելու համար: Իմ հաւատքս այն է, թէ Ազգ. Միութեան մեծամասնութիւնը համաձայն է հանրապետական կառավարութեան ակտին, եւ սխալ կը գտնէ Պ. Փաշայի ընթացքը(3):

Այս խնդրոյն շուրջ վաղուանէ սկսեալ «Յուսարբ»-ը կը սկսի արտայայտուիլ, «Արեւ»ի տղայական խմբագրականն ալ պատասխանը պիտի ստանայ վաղուան թիւին մէջ, ուր պիտի տեսնուի նաեւ Պ. Խատիսեանի բացատրականը որ ըրաւ փարլամենտին առջեւ, եւ յաջորդական թիւերն ալ պիտի գրադին նոյն հարցով: «Յուսարբ»ին օրաթերթ ըլլալու հաւանականութիւնը կայ. ներկայ չըջանին համար մեծ օգտակարութիւն կ'ունենայ այդ, կ'աշխատիմ որ ըստ կարելոյն շուտ «Յուսարբ»ը դառնայ օրաթերթ:

Միթիւնի մասին դեռ կանուխ է, պէտք է հանրութիւնը հասունցնել այդ բանին համար, արտօնութեան խնդիրն ալ կայ տակաւին: Եթէ Ազգ. Միութեան մեծամասնութիւնը հաւանի Արարատի ակտին, այդ արդէն միթիւնկէն աւելի է:

Այսօր որոշուեցաւ որ «Յուսարբ» հարցարան մը տպէ եւ ցրուէ մտաւորականներուն, իրենց կարծիքները առնելու եւ ամէնն ալ թերթին մէջ հրատարակելու պայմանով, ապահովէ մտաւորականութեան ստուաբարձր մեծամասնութեան դրական պատասխանը, շատ գեղեցիկ ձեւ մէ: Միթիւնկէ աւելի բան մ'ալ այս է, եւ

արդիւնքը ձեռք ձգելէ վերջ «Յուսարբեր» կրնայ (այս- քան թիւ) մտաւորականներու անունով պատշաճ հե- ուղիքը քաշել:

Հարցարանին մօտաւոր իմաստը ներքակ կը զըտ- նէք:

Վաղը հարցարանը պիտի տպագրուի. մէկ-երկու հարիւր օրինակ ալ ձեռք կը դրկուի. այժմէն պատրաս- տեցէք պահարանները յարմար նկատուած անձերուն հասցէները գրելով, թուղթերը ստանալուդ անմիջա- պէս կը ցրուէք. հանրային կարծիքը շինելու համար զօրաւոր ձեւ մ'է այս: Այս խնդիրը յայտնած եմ ընկ. Սահակին, վաղը պիտի գրէ ձեռք: Արթուն գործելու օրեր են, պէտք է գանդաղիլ, դաւեր շատ կան:

Սիրալիք բարեկենդիւ
Քոյդ

Մեր լիակատարին մէջ ինձ յանձնարարուած յող- ուածաշարքը կը մնայ առ այժմ աւելի կենսական հարցերու մէջ դալուն առթիւ:

Ներքակ ընկալագիրը կը յանձնէք ընկեր Տէր Յա- կոբեանի բարեկենդիւս հետ:

- (1) Ստորագծուած՝ բնագրին մէջ:
- (2) Կ'ակնարկուի ամկանակած «Միացեալ եւ Անկախ Հայաս- տան»ի պաշտօնակամ յայտարարութեամբ, վարչապետ Խատիսեանի բերնով եւ Հայաստանի կառավարութեամբ ամուսնով, 1919 Մայիս 28ին:
- (3) Պօզոս Նուպար Փաշա:

ՀԱՐՑԱՐԱՆԸ

Նախ՝ բացատրութիւն կատարուած ակտի մասին

1. Ի՞նչ է ձեր մտածումը կառավարութեան այս ակտին իրաւական եւ գործնական արժէքին մա- սին:
2. Հայաստանի ընդհանրական շահերուն տեսակէ- տով օգտակար կը համարէ՞ք զայն:
3. Պէ՞տք էր որ Արարատի սահմաններուն մէջ ապ- բող արեւմտահայերը մասնակցէին Երեւանի խորհրդարանին եւ զինուորագրուէին անոր բա- նակին:
4. Ի՞նչ պէտք է ըլլայ արտասահմանի հայերուն դիրքը այս պատմական իրողութեան հանդէպ:

Թերեւս աւելնայ Ծրդ հարցում մը եւս, — պէ՞տք է որ հայ բանակը զրաւէ թրջահայաստանը (կամ ասոր մօտ բան մը):

S. Ե. 16

Հ. ԲԱԹԱԲԱՆԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Թուղթը մայր՝ ինչ որ S. Ե. 11 եւ 12: Սեւ մելամ: Մէկ երես:

Տիրէտապա, 13 Օգոստոս 1919

Սիրելի Տիրքան,

Ստացայ վերջին նամակդ: Եթէ Եթովպիան ճանչնայիր, իրաւունք պիտի տա- յիր ամէնէն յոռետեսին անգամ:

Այդ քու յիշած անձերդ բացի Մուրլեան Արմենա- կէն անտարբերութեան մէջ կը խորդան: Մանաւանդ Տաղաւարեան Ստեփան կոչուածը, որը շատ պայծառ պարպաներու մէջ չթողուց Մուրաթեան տունը եւ վերջերս ալ A. Besse տունը, որմէ տակաւին bon service չկրցաւ առնել:

Լեկուրդօսը ասորմէ աւելի ճարտասան փաստա- բան մը պիտի չունենայ: Կ'արձանագրեմ եւ կ'անցնիմ այս տխուր թիփին վրայէն, ուրիշ անգամ զբաղուելու անպատուութենէն ազատ ըլլալու համար:

23 հայ կայ այս սեւ քաղաքին մէջ եւ եթէ ըսեմ թէ բացի մեր ընկերներէն, ողնայարի սիւն ունեցողնե- րը շատուոր չեն՝ անհաւատալի չթուի զեզի:

Յուսահատութեան վայնասիւններ չեն ըսածներս, եթէ ճանչցած ես զիս. քանի որ սկսայ պիտի շարու- նակեմ. պիտի գրեմ զեզի, ուրիշ առթիւ:

Ազդ. Պատուիրակութեան եւ հանրապետութեան միջեւ ինչե՞ր են որ կը դառնան:

Ինձի ներկայացուր Աղեքսանդրիոյ մէջ հայեր որ բարձրագոյն կրթութիւն առած ըլլան եւ կարողանա՞ թղթակցիլ ատոնց հետ:

Բարեկենդիւ
ՀԱՅԿ ԲԱԹԱԲԱՆԵԱՆ

S. Ե. 17

ԱՆԴՐԱՆԻԿԻ ՆԱՄԱԿԸ Տ. ԵԱՂՈՒՊԵԱՆԻՆ

Գրուած սեւ մելամով, փոքր չափի նամակի երկու երկրորդ բուրգերու յարդակով 7 երեսներու վրայ: Սրբագրած եմ կա- բուր քիւով տառաթղթներն ու կ'տառաթղթեմ սխալները, ա- ռանց փոխելու լեզուն:

Ստորագրուած է ԱՆԴՐԱՆԻԿ (յստակ), որուն կը հետեւի ՊԵՅ կամ ՊԵՅԼ (ամորոշ): Արդեօ՞ք կը պատկանի ազգային հերոս գրչին: Դժբախտաբար չկրցամք ճշդիլ, քէ, արտասահման անց- ճելէն ետք, գորավարը շրջամ մը մնացած է Պոլիս: Արտայայտե- ւած մտքերը կը պատշաճին ամոր այդ օրերու կ'եղուածքին: Սքէ միշդ է մեր այս վարկածը, ամուսն հետեւող ամորոշ ՊԵՅԼ կըր- ցայ ըլլալ ՊԱՐՈՅԸ, որ եղած է Անդրամիկի յեղափոխական ժա- կանուաներէն մէկը:

Յիշեցնեմք՝ որ Անդրամիկ 1906-1907 քուսակներէն ժամօք էր Եգիպտոսի հինգ ուխտալիներու եւ խանապառ՝ ամանց ծրագրի- ներով:

Յամենայն դէպս նամակագիրը կրնայ ըլլալ նաեւ ուրիշ այլ Անդրամիկ:

1919, 5 Նոյ. Պոլիս

Սիրելի Տիրքան,

Օտեսա զնացի եւ եկայ այն յոյսով որ նամակ կ'ու- նենամ զեզի, բայց պարապ ելաւ յոյսս. ինչո՞ւ չես գրած. երեւի յայտնած էի երթալուս մասին անոր հա- մար չես գրեր. յամենայն դէպս լաւ կ'ըլլայ որ ինձ միշտ տեղեակ պահես տեղուոյդ մասին, մանաւանդ մեզ հետաքրքրող գործերը: Աղգային գործերէն զատ կան եւ անձնական գործեր. ինձ միշտ տեղեակ պահէ բուզլիի գներուն մասին. յետոյ դրամի այլ քուրսերու մասին: Եգիպտոս չպիտի կարողանամ գալ չուտով, կարգ մը պատճառներով, դուցէ 2-3 ամիսէն յետոյ: Ինձ կը հե- տաքրքրէ ձեր ներքին կեանքի մասին, ինչպէ՞ս է դրու- թիւնդ, մանրամասն իմացուր. երկրորդ խնդրանքս՝

Փանամայի արժեթուղթերս մինչեւ ցարդ պահած եմ, եւ թիւերը նայած չեմ. արդ նամակիս մէջ կու տամ թիւերը, ուշադրութեամբ նայէ հոգ եւ ինձ իմացուր. եթէ բան մը կ'ընէ. հետեւեալ թիւերը ունիմ. —

- 1.994.990
- 1.994.991
- » » » 992
- » » » 993

Տեղուոյդ մէջ հրատարակուող «Յուսարբեր» հայե- րէն թերթին մի քանի թիւերը ձեռքս անցան, կարդա- ցի, ուր երկու տեղ հանդիպեցայ զեզ (փոխան ծաղկե- պակի նուէրները):

Իսկ նոյն թերթին 84 թիւին մէջ «Բաժակը կը յոր- դի...» վերնագրով գրութիւն մը կարդացի Անտունի ստորագրութեամբ, որը վրաս շատ դէ՛ չազդեց. չեմ դիտեր որ այդ պարունը ո՞ւր տեսեր է եւ ո՞ր տեղից լսեր է որ կովկասը եւ կովկասահայն է եղեր որ կուրծք տուեր է եւ այժմ ալ կու տայ թշնամիին դէմ, իսկ ար- տասահմանի հայութիւնը ձեռքը ծալած նստած, ան- տարբեր է: Թող այդ պարունը եթէ փրփականտ ընել կ'ուզէ մաքուր հողի վրայ ընէ, ոչ թէ սուտ խեղա- թիւրումներով խառնակութիւն ձգէ ժողովուրդին մէջ: Այս պարագային երբ մենք իրար մօտենալու խիստ պէտքը ունինք ոչ թէ իրարմէ պաղելու, մանաւանդ կովկասցիներու մասին բոլորովին սուտ եւ սխալ է գրածները: Կովկասցիները եթէ անոր գրածին կէսին չափ կուրծք տային թշնամոյն դիմաց, մենք այսօր մեր ամբողջ երկրին տէրն եղած պիտի ըլլայինք: Չմոռ- նանք որ նոյն կովկասցիներէ բաղկացած ազգային ժո- ղովին մէջն էր, որ որոշեցին մեծամասնութեամբ՝ ձգել Տաճկահայաստանը եւ քաշուիլ կովկաս, եւ նոյն մարդիկն էին որ լեզուն աշխարհահռչակ բերդերը, ինչպէս էրզրումը, առանց զնդակ մը պարպելու թըշ- նամոյն յանձնեցին իր մէջի անբաւ մթերքով եւ 700 թնդանթներով. եւ գիտե՞ս թշնամոյն ուժը ինչքան էր,

— 3000 անօթի զինուոր, իսկ էրզրում՝ երբ անառիկ բերդերէն դատ 14,000 ալ զինուորով ձգեցին եւ փա- խան, խեղճ Անդրանիկը մինակ ձգելով. չեմ ուզեր մանրամասն գրել որը՝ հազարաւոր թերթեր կը լեցնէ: Մենք տեսանք թէ՛ կովկասը եւ թէ՛ կովկասահայր: Թող տեղերին կենան: Այն կտոր մը հողամասը որ այսօր զոյութիւն ունի, ան ալ մի կարծէք որ մենակ կովկա- սահայն է որ աշխատեր է, այլ շիւսուած պարսնից Ար- տասահմանի եւ տաճկահայութեան ջանքերովն է եւ աջակցութեամբն է որ յառաջ է եկեր, ուր մինչեւ օրս ալ անոնք կան եւ պիտի մնան. այդ դպիներն կովկաս- ցիներուն չէ, մերն ալ է: Կովկասցիին կը կուրիային ժամանակ երբ նեղը մնայ եւ փախչելու տեղ մը չունե- նայ, ինչպէս այժմ՝ որ չըջապատուած է, ելքի հնար չկայ, ուզած չուղած պիտի կուրի իր զոյութիւնը պա- հելու: Իրողութիւնը այս է. տեսածներս եւ տասնեակ հազարներու վկայութիւնը: Եթէ չէք հաւատար՝ ասոնք անցեալի մէջ եղածներն են. իսկ այժմ ի՞նչ ընել, — հարկաւ, այո, ամէն հայ իր կարողութեան չափով օչ- նելու է հայութեան ամէն հատուածներուն, այս պիտի ըլլայ մեր ամէնուս նպատակը. իմ կարծիքս այս է: Այդ պարունին գրածին [առթիւ] երկար եւ մանրամասն գրուածք մը ունիմ, որը ամբողջացուցած չեմ. պիտի զրկեմ նոյն թերթին եւ մեր հակառակորդ թերթին, որ հրատարակեն եւ ժողովուրդը տեղեակ ըլլայ իրողու- թեան եւ կարեւորութիւն չտայ ասոր անոր խելապա- տիկէն ելած լուրերուն: Լաւ է ուրիշ միջոցով հակա- ուակորդներուն հետ չափուիլ, ազնիւ հողի վրայ, քան թէ սուտ ու փուտ լուրերով ծուղակը իյնալ:

Այս մասին ուրիշ առթիւ եթէ ուզես կամաց կամաց մանրամասն կը գրեմ:

Ալ չունիմ գրելիք. կը մաղթեմ զեզ եւ մայրիկին երջանիկ օրեր, եւ հայ ազգին անհատներուն ալ խելք տայ՝ որ մեր ազգը հաշուեն: Այս է բաղձանքս:

Համբուրելով զեզ եւ բարեկենդիւ մայրիկին, կը վերջացնեմ սպասելով պատասխանիդ՝

ԱՆԴՐԱՆԻԿ . . .

S. Ե. 18

Հ. ԲԱԹԱԲԱՆԵԱՆԻ ԵՐԿՏՈՂԸ

Թուղթը՝ միշտ միւսմայր (S. Ե. 16): Սեւ մելամ:

H. PATAPAN
c/o Bank of Abyssinia
Adis - Ababa

Ա. Ապապա, 12 Դեկտեմբ. 1919

Սիրելի ընկեր
Տիրքան Եաղուպեան

Աղեքսանդրիա
Ընկե՛ր,
Բոլորիս ուղղուած նամակդ ստացայ: Ստացայ

նաեւ Հ. Յ. Դ. նամակի թուղթերը: Եթէ չեմ սխալիր 50 հատ էին:

Անհամբեր ընկերներէն նամակ կը սպասենք: Գալով նամակովդ շօշափած խնդիրներուն, թէ կառավարութեան հետ սերտորէն յարաբերուելու եւ թէ կաթի conserve եւն. պատրաստելու գործին, ընկերներուն յանձնեցի ատոնց պատասխանելու հոգը: Փուլ ալ ուզած էիր. պիտի զրկուի չեզի:

Բարեւներս ընդունէ ինչպէս նաեւ 1920ի առթիւ ընկերական մաղթանքներս:

ՀԱՅԿ ԲԱԹԱՐԱՆԵԱՆ

S. Ե. 19

ԳԱՐԵԳԻՆ ՏԻՒՐԿԵՐԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Գրուած սեւ մելամով, 21x27 չափի Յամակի թուղթի մը (KARÉKINE DURGHÉRIAN, Avocat վերտառութեան կրօն) երկու երեսներու վրայ:

KARÉKINE DURGHÉRIAN
Avocat
Rue Comanos Pacha 13
Heliopolis

Հելիոպոլիս, 5 I 1920

Սիրելի ընկ. Եաղուպ,

Ստացայ նամակդ: «Վերածնունդները պիտի ջանամ վաղն իսկ զրկել: Մէկ թիւ մը մէկու մը քով կը գտնուի, լուր զրկեցի որ այսօր իսկ բերէ: Մրազիրներու մասին քիչ մը համբերէ: Պէտք եմ Ամիրեանը տեսնել: Ամէն պարագայի խօսք կու տամ որ թուականով (տպագրական) համապատասխան երկու ծրագիրներ կրնամ ճարել:

Նամակները դեռ չզրկեցիք: Ետտ իրաւունք ունիք: Յանցանքը իմն չէ: Յաջորդ օրն իսկ կարգացի եւ յանձնեցի միւսներուն: Դեռ չտեսայ զիրենք: Գործին մէջ դառնութիւնն ալ իր բաժինը ունի անկեղծ ըլլալու համար: Սակայն թող վստահ ըլլայ Արշակը, դիւրաւ չպիտի հրաժարիմ: Մանաւանդ պիտի ապացուցանեմ որ խոյս տուող մը չեմ եւ ընդարձակօրէն պիտի համոզենք իրար թէ որո՞ւ դիրքն էր համապատասխան Արեւելեան Բիւրոյի հրահանգին, թէ Ազգ. Միութեան միջոցաւ պաշտօնապէս պէ՞տք էր արտայայտուիլ թէ պարզապէս հարկ էր անանուն կերպով ժողովրդական միջիններ սարքել: Ո՞րքան թեթեւ եւ կեղծ է եղած մեր ընկերական եւ բարեկամական կապը որ առաջին

պաղափարական տարբերութեան ոտքի տակ կ'առնուի ընկերով մը բարոյական արժէքը, ոմանց կողմէ կոպիտ կերպով եւ ոմանց կողմէ ալ լուռ մեղսակցութեամբ: Այս երկրին ընկերականութեան կտրիճ Եփրեմեաններ պէտք են որոնք խաղարան կը բանան ամենայն հանդարտութեամբ եւ նոյն կերպով ալ ընկերներ կը պատուեն իրենց ներկայութեամբ բացման հանդէսը: Տաւր տարի է հոս եմ եւ տեսայ որ միայն նախատողն է որ կը յարգուի, իսկ մենք մնացինք նոյն զաղափարապաշտ խմայլու:

Ո՞րքան խղճահարութիւն կը զգամ տեսնելով որ կուսակցութեան եւ Ազգին ամէնէն բախտորոշ շրջանին կը կաղան այսօրինակ պատճառներով մեր գործերը: Սակայն հոգիներ կան որոնք կարապներու կը նմանին եւ անկարող են ցեխին մէջ լողալու:

Մնամ ընկերական բարեւներով

Գ. ՏԻՒՐԿԵՐԵԱՆ

S. Ե. 20

Գ. ՏԻՒՐԿԵՐԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Գրուած սեւ մելամով, միւսնոյն en tête կրօն պաշտօն-թուղթի մը առաջին երեսին վրայ:

Le Caire, 18 Փետր. 1920

Սիրելի ընկ. Եաղուպ,

Նամակը առած եմ իր ատենին: Տիկին Չապէլի հետ տեսնուեցանք երկարօրէն: Կուսակցութեան դժած նոր քաղաքականութեան մասին հոս տարակարծիք ենք իրարու հետ:

Կը խնդրենք որ համաձայն Հայաստանի Բիւրոյի թելադրանքներուն ամէն աջակցութիւն չիմայէք տիկինը ճամբորդութեան համար: Ինչպէս արդէն Միւստին դրած ենք Տիկինը ունի Հայաստանի Բիւրոյի կողմանէ Կոմիտէին ուղղեալ նամակ մը, նոյնպէս բերած է Ք. Պատգամաւորական ժողովի կարեւոր որոշումները: Տիկինը այստեղէն կը մեկնի Ուրբաթ օր կէսօրուան թռեկով: Անշուշտ կայարանը Չեղմէ մէկը կ'ըլլայ: Ետքից զիջերուան համար Ընդհ. ժողով գումարի տուէք Տիկինը լսելու համար: Իսկ դուք անշուշտ նախապէս կը տեսնուիք:

Քոյդ անկեղծօրէն

Գ. ՏԻՒՐԿԵՐԵԱՆ

S. Ե. 21

ԳԱՐԵԳԻՆ ՏԻՒՐԿԵՐԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Միւսնոյն տիպի թուղթի վրայ, սեւ մելամով, մէկ երես:

Le Caire, 17 Մարտ 1920

Սիրելի Տիգրան,

Ստացայ նամակդ: Կը ցաւիմ որ ինձի համար շատ անյարմար է ուրբաթ օրուան ժողովը:

Տունը ծանր հիւանդ ունիմ: Այդ պատճառաւ իսկ ընտանեացու մէկ մասը Հէլուան փոխադրած եմ եւ հետեւաբար կրնամ երեւակայել միճակաւ: Արդէն ընկերներէն պիտի իմանաս անցուցած տաղնապալից օրերս:

Եթէ կրնաս յետաձգել, շատ ուրախ պիտի ըլլամ, իսկ ուրբաթ օրուան համար ինձի անկարելիութիւն կայ:

Ամէն պարագայի ընկերներուն կ'իմացնեմ նամակիդ պարունակութիւնը իսկոյն:

Ընկերական բարեւներով
ԳԱՐԵԳԻՆ

S. Ե. 22

ԳԱՐԵԳԻՆ ՏԻՒՐԿԵՐԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Միւսնոյն տիպի երկու թուղթի վրայ, սեւ մելամով, մէկ-կամ երես:

Հելիոպոլիս, 24 Դեկտ. 1920(1)

Սիրելի ընկ. Եաղուպ,

Կը յուսամ թէ նախորդ նամակս ստացած ես: Անշուշտ Եապանեանի խնդրը կարգադրեցիք: Ներկայիս կ'ուզեմ գրել Ոսկերիչեան Քհնյ. ի մասին: Այդ հարցին համար պրած էիք թէ Ռամկավարներու հացին իւր քրտած եմ: Սխալ է այդ ըմբռնումը: Կուսակցական խընդիր մը չէ ատիկա: Դաշնակցութեան անունը պէտք չէ քաշկուտել ա'յդքան յիմար խնդրի մը հետ: Իմ ըրածս անհատական sortie(2) մ'է բարեկամի միջնորդութեան որու մասին անկեղծ են զգացումներս: Տէր Հայկազուն ներկայիս ապրող եկեղեցականներուն մէջ իմ կարծիքով առաջին տեղերէն կը գրաւէ: Իր իմաստասիրական դարգացումը պատիւ կը բերէ հայ եկեղեցիին: Ծիշդ է թէ դաշնակցական չէ, սակայն կղերականներուն ոչ մին դաշնակցական է: Ինչպէս ըսի, եղածները պէտք է բողոքատել իրարու հետ ապա թէ ոչ պէտք է յատուկէն ձեռնադրել...: Դժբախտաբար մենէ որքան որ հետաքրքրուող կայ քահանայի գործերով, նոյն համեմատութեամբ չկան մեր մէջ ձեռնադրուիլ ուղղողները եւ կամ կոչում զգացողները: Արդուեանի քննադատութիւններուն մէջ ես ծանր բան մը չտեսայ. Տ. Հօր տըկարակազմ ըլլալը, եւ կամ մէկ երկու բնաւորութեան

զիծերը, ամէնուս համար ալ բնական, չեն արդարացրներ ա'յսքան սղմուկ, այն ալ կուսակցական ձեւի տակ՝ եթէ ոչ կուսակցական էութեամբ: Արդուեանի քննադատութիւնները վիճելի խնդիրներ կրնան սեպուիլ առաւել կամ նուազ չափով, սակայն ինչ որ նամակիս տուն տուաւ, այն զայրոյթ պատճառող երեւոյթն է, որով կըքով կուրացած մարդիկ, սկսան այդ քահանային մէջ հալածել ու սպաննել ըմտանքի հայրը(3), ջանալով անպատիւ եւ անբարոյ ներկայացնել: Հո'ս է որ բարեկամի մը լուրթիւնը վատութիւն պիտի համարուէր: Եթէ մէկու մը պատիւը այդ կարգի տողիմաններով(4) կարելի է վար դարնել, ես Ձեզի կը խոստանամ հարիւրաւոր տողիմաններ բերել նոյնքան անձերու համար: Աշխարհի մէջ չկայ օրինապիտէ մը որ մարդու մը պատիւը այդ կարգի տողիմաններով սեւցընէ եւ ամօթ պիտի ըլլար մեզ եթէ մէկ քանիներու կրքին եւ ուրիշներու ալ տղիտութեան կապենք եւ կաշկանդենք Դաշնակցութեան անունն ալ:

Ես այնպէս համոզուած եմ որ մեր մէկ քանի ընկերները mystifié(5) եղած են այս խնդրի մէջ, որուն բացատրութիւնը պէտք է փնտռել մերժուած պաշտօնեաներու, լուսարարներու, տնմնայ ազդիկներու, շխտի կնիկներու եւ մանաւանդ նախանձոտ պաշտօնակցի սաղրանքին քով:

Ռամկավարները անամօթաբար նախատեցին մեր ամենամաքուր գործիչները անդամ. մեր կողմէ բաւական մեծ վատութիւն մը պիտի ըլլար ասոնց ի փոխարէն քահանայ մը խաչել անբարոյականութեան դէնքերով եւ մանաւանդ հաւասար հողի վրայ դնել Տէր Հայկազուն մը եւ Մուշեղ մը:

Ես իմ կարգիս, Տէր Հայկազունի բարոյականի նկատմամբ որոշապէս անայլայլ մնացած եմ եւ այդ մասին պատրաստ եմ ձեռնոցը վերցնել ո'ր կողմէն ալ նետուի ատիկա: Ես այնպէս համոզուած եմ որ մեր ղեկավար ընկերները կամ լրջօրէն պէտք է ստանձնեն մեր մամուլի քոնթրոլը(6) եւ կամ պէտք չէ այլայլին երբ մենք բռնենք երբեմն հակասական ընթացք մը: Պէտք չէ՞ որ առտուն կանուխ ելլողը իր անձնական հաշիւը առաջ քշէ եւ կամ ցուցադրէ իր տղիտութիւնը:

Մարտիկ ազան — ի մեծ քրքիջ մեր մէկ քանի չոճուիներուն — դրած էր թէ Ռամկավարները ինձի պէս միամիտներու թիւն կը խնդան, լուր զրկեցի թէ կը նախընտրեմ որ մեր հակառակորդները թիւս խընդան, քան թէ կուսակցական շատ մը բարեկամներս:

Սիրալիր բարեւներով
Գ. ՏԻՒՐԿԵՐԵԱՆ

(1) Անորոշ. կրճայ մասն ըլլալ՝ 1921:
(2) Ֆրանսերէն գրուած, — էյոյթ:
(3) Ընդգծուած՝ բնագրին մէջ:
(4) Ֆրանսերէն բառ, — փաստաթուղթ:
(5) Գրուած ֆրանսերէն, — կախարհուած, դիւքուած:
(6) Ֆրանսերէն բառ, — հակակշիռ, հսկողութիւն:

S. Ե. 23

ԵԳԻՊՏՈՍԻ ՇՐՋ. ԺՈՂՈՎԻ ԴԻԻԱՆԻՆ ՊԱՇՏՕՆԱԳԻՐԸ

Գրուած Հ. Յ. Դաշնակցութեան պաշտօնաբարձրի վրայ (20,5x27 սմ.): Զինանշանին տակ (վերը՝ ձախի) ԵՊՏՈՍԻ ՇՐՋ. ԺՈՂՈՎ: Այս մեյլան: Մաքուր եւ ընթանանի ձեռագիր:

1920, Յուլիս 26

Յարգելի ընկեր

Տիգրան Եաղուպեան

Աստ

Հ. Յ. Դ. Եգ. Գրգ. Շրջ. Ժողովը իր երէկուան վերջին նիստի մէջ քուէներու բացարձակ առաւելութեամբ յառաջիկայ շրջանի համար կոմիտէի անդամ ընտրեց զՁեզ եւ ընկերներ՝

- Արեւեան Աւետիս,
- Խաչատուրեան Մինաս,
- Մալխասեան Սարգիս,
- Շալճեան Արշակ,
- Զրազեան Միհրան,
- Պալլուճեան Յակոբ:

Ա՛րգ, շնորհաւորելով այս ընտրութիւնը, եւ ապագայի համար լիակատար յաջողութիւն մաղթելով, կը փութանք ուրեմն հրաւիրել զՁեզ՝ Ձեր նորընտիր ընկերներու հետ միասին ընդօրոյթ պաշտօնի ձեռնարկելու:

Ընկերական բարեւանքով՝
Ի դիմաց Գրգ. Շրջ. Ժողովի
Քարտուղար Նախագահ
Հ. ՓէշրիՉԵԱՆ Հ. ՍԱՆՈՍԵԱՆ

S. Ե. 24

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅ ԿՈՄԻՏԵԻ ՊԱՇՏՕՆԱԳԻՐԸ

Գրուած Հ. Յ. Դաշնակցութեան պաշտօնաբարձրի վրայ, սեւ մելանով: Զինանշանին տակ, սպագրուած ԿՈՄԻՏԵ ԲԱՆԷՑ ԱՅՈՒՆ, ձեռագրով աւելցուած է ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅ ՔԱՂԱՔԱՅԻՆ:

1921 Յունիս 13

Ընկեր Տիգրան Եաղուպեան

Աստ

Յարգելի ընկեր,

Ներկայիս կը փութանք հաղորդել Ձեզ թէ Հ. Յ.

Դ. Գրոպականտի Յանձնախումբին անդամ ընտրուած ըլլալով, կը յուսանք թէ սիրով պիտի ընդունիք եւ պիտի տրամադրէք Ձեր մեզի մօտիկ ծանօթ կարողութիւնները այս յոյժ կարեւոր աշխատանքին:

Կանխաւ շնորհակալութիւն յայտնելով մնամք ընկերական ջերմ բարեւանքով

Հ. Յ. Դ. ԱՂԵՔՍ. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ Քարտուղար Կ. ՅԱԿՈՒԲԵԱՆ

S. Ե. 25

Հ. Յ. Դ. ԵԳԻՊՏՈՍԻ Ա. ԳԱԻԱՌԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԴԻԻԱՆԻՆ ՊԱՇՏՕՆԱԳԻՐԸ

Գրուած սեւ մելանով, նամակի 20,5x27 սմ. չափի գծաւոր պարզ բուրձի վրայ:

«Գաւառական ժողով»-ը ընթացիկ կերպով կիրարկուող ձեւ չէ եղած մեր կազմակերպական կառոյցին մէջ:

Աղեքս. 19-8-921

Յարգելի ընկեր

Տիգրան Եաղուպեան

Աստ

Հ. Յ. Դ. Եղիպտոսի Ա. Գաւառական Ժողովը իր 17 Օգոստոս 1921ի ԺԴ. րդ նիստին մէջ յառաջիկայ շրջանի համար Գաւառական կոմիտէի անդամ ընտրեց Ձեզ հետ ընկերներ,

- Ազնաւուրեան Լեւոն
- Գամպուրեան Յովսէփ
- Խանջեան Յրանկիւլ
- Նալբանդեան Յակոբ
- Փէշրիգեան Հրաչեայ
- Տէր Յակոբեան Յակոբ

Հաղորդելով զայս Ձեզ, կը հրաւիրենք փութով ձեռնարկել ձեր պաշտօնին եւ այժմէն յաջողութիւն ու կարողութիւն կը մաղթենք ապագայ Ձեր բոլոր ձեռնարկներուն:

Ընկերական բարեւանքով
Դիւան Հ. Յ. Դ.

Ա. ԳԱԻԱՌԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

Քարտուղար

Նախագահ

Յ. ՏԵՐ ՅԱԿՈՒԲԵԱՆ Կ. ՓԱՓԱՉԵԱՆ

S. Ե. 26

ԱՅԼ ՊԱՇՏՕՆԱԳԻՐ

Գրուած սեւ մելանով, նոյն չափի եւ տիպի բուրձի վրայ: «Թաղային ժողով», «Թաղային կոմիտէ» նոյնանուն եզակի անուններ եւ որքան «Գաւառական ժողով» ու կոմիտէ: Պէտք է ենթադրել՝ որ Ազգասանդրոյ շրջանի ընկերներու թիւը 1921ին աւելցած էր զգալապէս, որ՝ զանազան քաղաքներ ունէին իրենց առանձին կոմիտէներու միջոցով, բոլորը ենթակայ ըլլալով «Գաւառական կոմիտէ»-ին: Տարօրինակը այն է՝ որ, երկու տարի շարքով, 1923ի սկիզբը, կը վերագտնեմք Ազգասանդրոյ ենթակոմիտէի պաշտօնաբարձրը:

Աղեքս. 29-11-921

Յարգելի ընկեր

Տիգրան Եաղուպեան

Աստ

Հ. Յ. Դ. եան Բուրաստանի Թաղային Ժողովը՝ դռնարուած 24 Նոյեմբերին, միաձայնութեամբ Բուրաստանի Թաղային կոմիտէի անդամ ընտրեց զՁեզ եւ ընկերներ Հայկ Սանոսեան եւ Տրդատ Մալխասեան: Ենթահաւորելով Ձեզ, յաջողութիւն կը մաղթենք: Ընկերական բարեւանքով

Հ. Յ. Դ. եան

Բուրաստանի Թաղ. Ժողովի

Քարտուղար

Նախագահ

Ա. ԱՐԵՒԵԱՆ

Ա. ՏԵՐ ԱՐԱՋԱՄԵԱՆ

S. Ե. 27

ԱՄԵՐԻԿԱՅԷՆ՝ Ա. ՍԱՐԱՖԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ Տ. ԵԱՂՈՒՊԵԱՆԻՆ

Գրուած մանրակազոյն մելանով, նամակի փոքր չափի (13x16,5 սմ.) անգիծ երկօրոյս բուրձի մը չորս երեսներուն վրայ:

23 Յուլիս 922

Սիրելի Տ. Եաղուպեան

Ստացայ նամակը ժամանակին, բայց թիչ մը ուշացուցի. որովհետեւ ձեր ազգական պահանջատէրէն նամակին պատասխան կը սպասէի. եկուր տես որ 3-4 շաբաթ է դեռ ոեւէ լուր մը չառի եւ չեմ ալ յուսար որ բարի պիտի ըլլայ գրելու: Ըստ ձեր փափաքին՝ պատշաճ գրած էի. դժբախտաբար շատ հեռու է, եթէ ոչ անձամբ ալ կրնայի տեսնալ:

Սիրելի՛ ընկեր, կը գրես թէ ժամանակ մը պիտի նեղուիս, բայց նիւթական կ'ապահովես, եւլն. անոր

ժամանակը անցեալն է եղեր. այժմ անդործութիւն եւ հազիւ ապրուելու դրամ. թէեւ իմ դործս լաւ է. միշտ կը դործեմ, եւ ապրուեստս կը հանեմ, ա՛յդքան, աւելի ոչինչ. եւ դիտե՛ս այդ դրամ շահողները ովքեր են. Շատ երկար է այն ամէնը որ կարելի ըլլար նամակով նկարագրել. թէ լաւ եւ թէ վատ կողմեր ունի. եւ մարդուն համեմատ յանձնարարելի է Ամերիկան: Ես ֆիզիքապէս շատ ու շատ օգտուած եմ. մանաւանդ որ ֆիզիքական առողջ աշխատութիւն է դործս. նոյնպէս ընտանիքս եւ զաւակներս շատ ու շատ օգտուած ենք: Տանտէրնիս զանազան անգլիացի են. ծերունի մայր մը, մանչ եւ աղջիկ զաւակներով, շատ ազնիւ ընտանիք են. շատ լաւ են մեզի հետ. ահագին պարտէզով տուն է. հողը շատ էր, մեզի ալ տուին որ ցանենք. իրենք ինծի ցոյց տուին եւ այժմ ամէն ինչ բուսած է: Կը վայելենք կոր: Կը ցաւիմ որ մօտիկ բարեկամներ եւ վաղեմի ընկերներ՝ շատերը հեռու են, որ գէթ միասին վայելէինք: Ես թիչ մը կը խօսիմ. բայց ընտանիքս բաւական լաւ մաքուր կը խօսի. հապա աղջիկս. անպիտանը ականջը լեցուած է. ինծի հետ անգլիերէն կը խօսի շատ ատեն. շատ շուտ պիտի սկսի խօսիլ. արդէն զալիք տարի դպրոց պիտի ղրկենք. պարտաւորիչ է: Եղբայրս Բ. շրջանն ալ յաջող լինցուց. որով միայն այս տարի մնաց որ դպրոցը աւարտէ. բայց շատ դժուար է իր ճիւղը. որով դասերն ալ դժուար են. այսքան մեր մասին:

Շատ ուրախ եղայ տուած ընկերական տեղեկութիւններէդ: Դժբախտաբար ես շատ մը նորութիւններ չունիմ որ տամ Ամերիկայի մասին. արդէն իմ դիտցածներս դուն ալ գիտես, թերեւս աւելին: Այստեղի անպիտան ժամանակը շատ սուղ է, որ գէթ երկարօրէն յաճախ գրութիւններով պարապէի. շատ բարեկամներու անգամ զանց առած եմ գրելը՝ հակառակ կամքիս: Բայց իմ վաղեմի անկեղծ ընկերոջս համար դիւրեւայ անուշ քնանալէս է որ կը զոհեմ. այնքան ալ դժգոհ չեմ:

Սնարը եւ ՉԹԵԱՆԸ տեսած եմ. անոնք լոկ գաղափարական հողի վրայ էր որ ստիպուեցան կուսակցութեան շարքերէն դուրս մնալ. անոնք նախապէս սկսան ունենալ եռանդուն փրփականտ մը բոլշեւիկներու մասին եւ շատ մը ընկերներ իրենց համակիր դարձուցին, հակառակ կեզր. կոմիտէի յանձնարարութեան. որով մինչեւ Շրջանային Ժողովը ասոնք իրենց դիտցածներն պէս իրենց համակիր ընկերներով սկսան եռանդուն զործունէութիւն մը, յոյս ունենալով թէ իրենք կարող պիտի ըլլան յաղթանակը տանիլ: Ա՛խ այդ օրը տեսնայիր. մըջիւնի պէս, ասդին անդին, համակիր-համակիր կը խօսէին, կը վիճէին. վերջապէս Շրջանային Ժողովը իրենց վճիռը տուաւ եւ դուրս նետուեցան Դաշնակցութենէն: Դաշնակցութիւնը եթէ անհատի ետեւէ երթար թերեւս հիմա գոյութիւն անգամ չէր ունենար:

Որքան ալ որ մրտեն, ճառեն, խօսին, խածնեն, անուշուտ է դայն հիմէն վերցնելու: Նա ապառաժ մըն է. զօրաւոր ցնցումներով թիչ մը թերեւս աւելի վնասուի, բայց նորէն նա իր տեղը կը մնայ: Ժամանակը պիտի դայ, ամէն ինչ յայտնի կ'ըլլայ: Այո՛ մենք ալ ունեցած ենք մեր սխալը, բայց այդ հայ ժողովուրդին եւ հայ անհատ անձերուն է եղած աւելի. դէշ պայմաններու մէջ երախայութիւն պիտի ըլլար մեծ բան սպասել: Ի՞մ կարծիքով մենք անհատ դաշնակցականներս եթէ ըլլանք մեր գործերուն եւ խօսքերուն մէջ այնքան բարձր եւ անկեղծ, այնքան աւելի բարձր պահած կ'ըլլանք այդ կուսակցութիւնը: Կարաւանը արդէն ճամբան ձեռք առած՝ կը քալէ իր ուղիով. որքան որ կ'ուզեն թող ուտեն, ծամեն մեր միտը:

Ընկերներուն ամէնուն բարեւներս յիշէ:

Ընկերական սիրալիր համբոյրներով
Ա. Ա. ՍԱՐԱՅԵԱՆ

Տ. Ե. 28

ԱՂԵՔՍԱՆԻՐԻՈՅ ԵՆԹԱԿՈՄԻՏԵԻ ՆԱՄԱԿԸ Տ. ԵԱՂՈՒՊԵԱՆԻՆ

Գրուած սեւ մելամով, Հ. Յ. Դաշնակցութեան պաշտօնաթուղթի վրայ: Ստորագրութիւնը (ֆորտուղթի) անորոշ է. կրնայ ըլլալ՝ Տ. (ՅՐԱՆԿԻՒՆ) ԽԱՆՁԵԱՆ:

1923 թ. Յունուարի 16

Ընկ. Տ. Եաղուրեան

Աստ

Սիրելի ընկեր,

Ենթակոմիտէս որոշած ըլլալով, համաձայն Շրջ. Ժողովի որոշման, մասնակցիլ իր սեփական անունով քաղաքիս լուսաւորչական հայերու Թեմականի յառաջիկայ ընտրութիւններուն, կազմած է, այդ նպատակով, ընտրական յանձնախումբ մը ձեռն էլ ընկերներ Մ. Նորատունկեանէ, Կ. Աստուածատուրեանէ, Լ. Էքսէրճեանէ եւ Մարմինս ներկայացնող ընկերովմէ մը բաղկացած:

Կը խնդրենք որ ձեր առաջին հանդիպումը ա՛յս շաբթու ընթացքին իսկ ունենաք իրարու հետ, խորհրդակցելու համար գործելակերպի եւ այլ յարակից խնդիրներու շուրջ:

Ընկերական բարեւներով
Հ. Յ. Դ. Աղեքս. Ենթակոմիտէ
Քարտուղար՝
Տ. ԽԱՆՁԵԱՆ(?)

Տ. Ե. 29

ՎԱՀԱՆ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ Տ. ԵԱՂՈՒՊԵԱՆԻՆ

Գրուած «Յուսաբեր»ի արտօնաթուղթի վրայ (21,5x28 սմ), սեւ մելամով:

8 Սեպտ. 1923

Յարգելի՛ ընկ. Եաղուր,

Նախ՝ ջերմ բարեւներս Ձեզ: Մի խնդիր ունիմ, Ձեզ, ընկեր Եաղուր, որի համար էլ այս երկտողը գրում եմ: Գիտեմ, որ հնարաւորութեան պարագային, առանց իմ խնդրանքի էլ, ինքներդ պիտի կատարէք, բայց ես, այնուամենայնիւ, որոշել եմ խնդրել:

Պիտի փափաքէի, որ Շրջանային Ժողովին ամպայման ներկայ դտնուէիք: Ձեր ներկայութիւնը մեր աշխատանքների յաջողութեան տեսակէտից ես անհրաժեշտ եմ համարում: Համոզուած եմ, որ Աղեքսանդրիոյ մեր ընկերները հաճոյքով Ձեզ իրենց ներկայացուցիչը պիտի կարգեն, դրա համար անհրաժեշտ է միայն Ձեր համաձայնութիւնը, որի համար էլ գրում եմ այս երկտողը:

Աշխատեցէք, նորից եմ խնդրում, Ժողովին ամպայման դալ:

Ձերմ բարեւներով՝
Վ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Տ. Ե. 30

ԵԳԻՊՏՈՍԻ ՇՐՋ. ԺՈՂՈՎԻ ԴԻԻԱՆԻՆ ՊԱՇՏՏՈՆԱԳԻՐԸ

Գրուած սեւ մելամով, Հ. Յ. Դաշնակցութեան պաշտօնաթուղթի վրայ: Ձիմանջանին տակ՝ ԿՕՄԻՏԷ բառը ջնջուած է եւ փոխարինուած՝ ԳԻԻԱՆ ՇՐՋ. ԺՈՂՈՎԻ:

1923 Սեպտ. 16

Յարգելի՛ ընկեր,

Եղիպտոսի ԺԲ. Շրջ. Ժողովը իր Ա. նիստին մէջ (15 Սեպտ.) որոշեց հրաւիրել ձեզ խորհրդակցական ձայնով մասնակցիլ Շրջ. Ժողովի նիստերուն, համաձայն ներքին կանոնադրի 54 եւ 56րդ յօդուածներու տրամադրութեան:

Ընկերական բարեւներով
Դիւան Շրջ. Ժողովի
ԳՈՒՐԳԷՆ ՄԻՒԹԱՐԵԱՆ ՍՏ. ԵՍԱՅԵԱՆ

Ձ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅԱԻԵԼՈՒԱԾ

ԴԱՐՁԵԱԼ ԿԻԼԻԿԻԱ, ՄԻՆԱՍ ՎԵՐԱԾԻՆ, ԵՒ ՀԱՃԸՆԻ ՈՒԹԱՄՍԵԱՅ ԳՈՅԱՄԱՐՏԸ

Նախորդ բաժինները պատրաստուած եւ տպագրութեան յանձնուած էին արդէն, երբ մեր ձեռքը անցան արիւսային եւ պատմական նշանակութիւն ունեցող կարգ մը փաստաթուղթեր, որոնք կը վերաբերին «Նիւքթու առաջին այս հատորին համար նկատի առնուած աշխարհագրական շրջանին՝ Եգիպտոս — Կիլիկիա — Իզմիր — Պալիս գծին: Անբաժնեշտ կը նկատեմք սալ անոնցմէ կարեւորագոյնները, առաջին հատորի ամբողջացումով գէթ առժամայէս փակելու համար տուեալ շրջանը եւ անցնելու՝ Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան մէջ այլապէս մեծ կարեւորութիւն ներկայացուցած յեղափոխական ուրիշ շրջաններու:

Առաջինը, եւ հնագոյնը, ատենագրութիւնն է Լեոնավայրի (Կիլիկիա) չորս ենթաշրջաններու ներկայացուցիչներուն 1906 Յունուարին գումարած մէկ ժողովին: Մասնակցած են Հովիտի (Այնթապ), Դաշտի (Ատանա), Արծուաբերդի (Ջէյթուն) եւ հորշի պատգամաւորները: Խորշը, ամենայն հաւանականութեամբ, Հայոց Մոցի վրայ նայող կեդրոններէն մէկուն (Իսկենտէրուն, Չոք Մարգուան, Այաս, եւն.) կուսակցական ժածկանունն է, թէեւ Մարթին Մուրատեանի թղթաթրարի 1900-1902 տարիներու նամակներուն մէջ Իսկենտէրունի համար աւելի գործածական է Կարաւան անունը: Խորշը կրնայ ըլլալ նաեւ Մերսինը:

Ապա կու տանք որպէսզայ Սիմոն Վրացեանի թուղթերուն մէջ նոր գտնուած եւ Միմաս վերածինի վերաբերեալ կարգ մը այլ փաստաթուղթեր, որոնք կապ

ունին ի մասնաւորի՝ 1920ի վերջին ամիսներուն, իբրեւ Հայաստանի Անկախութեան Փոխառութեան Կեդրոն. Յանձնախումբի լիազօր ներկայացուցիչ, Վերածինի Բիւրանիոյ շրջանին մէջ ունեցած գործունէութեան հետ:

Վերջին փաստաթուղթը պատմական այլապէս մեծ շահեկանութիւն կը ներկայացնէ: Ան կը պատկանի նորոգ հանգուցեալ մեր վաստակաւոր ընկերներէն՝ Հանրացի Ասատուր Չալեանի գրչին, եւ կու տայ, օրագրի ձեւին տակ, տեղեկութիւններ եւ տպաւորութիւններ Հանրոյ ուրբանեայ հերոսական կռիւներուն, Կիլիկիոյ այլ շրջաններէն Հանրին օգնութեան հասնելու ընդհանրապէս անյաջող փորձերուն, եւ ուրբանեայ այդ գոյամարտին ողբերգական ելքը պայմանաւորող պայմաններէն միջազգային իրադարձութիւններուն, ի մասնաւորի՝ «ասպետական» Ֆրանսայի ոչ-ասպետական դիրքաւորման մասին: Դառն է որպէսզայ ընկ. Չալեանի գրիչը յաճախ, ու աններող՝ ինչպէս բարեկամ մանչցուած օտար ուժերու, նաեւ, երբեմն, հայ կուսակցութիւններու կեցուածքին նկատմամբ: Կու տանք սակայն ամբողջութեամբ, հաւատարիմ մեր սկզբունքին, առանց յապաւումի, իբրեւ վկայութիւնը կեանքի եւ մահուան իր գերագոյն ճիգերուն մէջ փաստօրէն առանձին ձգուած ժողովուրդի մը մէկ գաւկի հոգեվիճակին, ինչպէս նաեւ իբրեւ հում նիւթ եւ ատաղձ՝ ապագայ պատմագրին համար:

1.— ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՀՈՎՏԻ, ԴԱՇՏԻ, ԽՈՐՇԻ ԵՒ ԱՐԾՈՒԱԲԵՐԳԻ ԵՐՁԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

Գրուած է մանկակազմ միւսում, 13,5x21 սմ. չափի մամա- կի գծաւոր քերթերէ կարուած 20 էջոց փոքր տետրակի մը բո- յոր երեսներում վրայ: Էջերը բուագրուած են 1էն 20: Ձեռագիրը ծայրէ ի ծայր միեւնոյնն է, հակառակ քարտազարմերու փոփո- յութեամ: Կրնայ արտագրուած պատճէմ մը ըլլալ: բայց վերջին էջը կը կրէ պատգամաւորներու ստորագրութիւնները:

Լեզուն, յաճախ տկար ու քերութիւններով յի, պահած ենք անփոփոխ: Եղած են միայն ուղղագրական եւ կէտադրական չնչին սրբագրութիւններ:

Ժողովին վայրը նշուած չէ: Մեզի անծանօթ են ման պատ- գամաւորները, որոնց բուն անունը կամ մականունը յիշատակուած չէ, հասկնալի պատճառներով: Կ'ենթադրենք միայն՝ որ Դաշտի (Ատամայի) պատգամաւոր Աշմարը ուրիշ մէկը չէ, քիչ ոչ Լեւ- նաւայրի Պատասխանատու Մարմին երբեմնի անդամ՝ մեզի ծանօթ Աշոտ Մարթիթը (Մուրատեան), որ ուրեմն 1905էն ետք անցած է Կիլիկիա՝ գործելու համար երկրին մէջ: Յիշեցնենք որ Հ. Յ. Դ. 4րդ Ընդ. Ժողովէն ետք, 1907 Դեկտեմբերին, «Դաշնակցական ընկերներու ուղղակի» բաղաձայն ստորագրող «Դաշտի վարիչ ըն- կերներ»էն մէկն էր ման Աշոտ Մարթիթը (տեսնել էջ 119):

ՆԻՍՏ 1.— 1906 Յունուար 6/19

Ժողովս բացուեցաւ ատենապետութեամբ Յակոբի: Քարտուղարի դերը կը կատարէր Մայիլը: Ժողովը կը բաղկանար Հովտի(1) երկու, Դաշտի(2) երկու, Խոր- չի(3) մէկ ու Արծուաբերդի(4) մէկ, ընդամէնը վեց ձայներով: Արծուաբերդի գործիչ ընկերը իր ձայնը տուած էր Դաշտի ընկերներէն Մայիլի: Խորչի ընկերը ճիշդ ժամանակին հասած չըլլալով, բացակայ էր:

Ժողովին առաջին գործը եղաւ մշակել օրակարգ մը, որ կը բաղկանայ հետեւեալ խնդիրներէն.

- 1) Երջանական Կազմակերպութեան հարցը եւ գոր- ծիչներու խնդիրը:
- 2) Տեղային կազմակերպութեանց պաշտօնական հանգամանք կրելու իրաւունքը:
- 3) Դրսէն եկող ընկերներուն իրաւասութեան դերը տեղային կազմակերպութեան մէջ:
- 4) Երկրի մարմիններուն դիրքը արտասահմանի օ- ժանդակ մարմիններու առջեւ:
- 5) Ընդհանուր ժողովին ներկայացուելիք տեղեկա- գիր մը եւ ներկայացուցիչ մը ղրկելու հարցը:
- 6) Բացի կամաւոր նուիրատուութիւններէն, ուրիշ դրամական միջոցներ ձեռք բերել:
- 7) Կեդրոնական մարմնի մը ընտրութիւնը տեղային շրջաններէն, տեղային եւ արտաքին գործերը վարելու համար:

(1) Հովտ, — Այնքապի շրջանի կուսակցական անունը:
 (2) Դաշտ, — Ատամայի շրջան:
 (3) Խորչ, — ամենայն հաւանականութեամբ՝ Իսկիմուրաճի Մացի վրայ նայող խաղաղութիւն մէկը. կրնայ ըլլալ ման Մերթիթը:
 (4) Արծուաբերդ, — Ձէշքում:

- 8) Ընդհանուր գործունէութեան ծրարքի մը, եւ ճշդել տեղային մարմիններու դերը յառաջիկայ ընդհանուր գործունէութեան հանդէպ:
- 9) Ներքին տեղային ծրարքի մը:
- 10) Հաշուետուութիւն:

Ժողովս փակուեցաւ ընկերներու համաձայնու- թեամբ:

ՆԻՍՏ 2.— 1906 Յունուար 6/19

Ժողովս բացուեցաւ ատենապետութեամբ Յակոբի, ներկայութեամբ բոլոր ընկերներու: Քարտուղարի դե- րը կը վարէր Մայիլը: Այս նիստին մէջ ներկայ էր նաեւ Խորչի ընկերը:

ՕՐԱԿԱՐԳ.—

Խնդիր 1.— Ժողովս լսելով ընկերներուն մէջբե- րած այն պատճառները, որոնց հետեւանքով շրջակայ կարեւոր նկատուած վայրերը բոլորովին թոյլ եւ ետ մնացած են կազմակերպութեան տեսակէտով, որ գոր- ծին յարաբերական տեսակէտով աչքի առնուած վայ- րերէն ոմանք բոլորովին երեսի վրայ թողուած են, նաեւ ի նկատի առնելով այդ վայրերուն մեր ընդհա- նուր գործին մատուցանելիք եւ նպատաւորող պայ- մաններու անմիջական օգուտները, եւ մասնաւորապէս նկատի առնելով որ մինչեւ այսօր այդ վայրերը կադ- մակերպելու եւ դէպի նպատակը մղելու համար տրա- մադրելի ուժերը պակասած չեն, այլ միմիայն դրամա- կան միջոցները, ուստի միաձայնութեամբ որոշուեցաւ յետ այսու տեղային կազմակերպութեան ձեռք բերած դրամին որոշ մասը (1/3ը) յատկացնել շրջանական կազմակերպութեանց մէջ որոշ դեր խաղացող գործիչ- ներու: Այդ շրջաններն են՝ Արծուաբերդ եւ շրջակայքը, Սահմանաբերդ(5), Հեղահեղատ(6) եւ շրջակայքը, Կա- րաւան(7) եւ շրջակայքը: Այս վայրերուն կազմակեր- պութեանց համար պահանջուեցաւ յատկացնել տարե- կան երկու հարիւր լիւրայի դումար մը:

Կազմակերպութեան այլեւայլ միջոցներով ձեռք բերած գումարին մնացորդը պէտք է յատկացուի եւ ծախսուի բուն նպատակի իրագործման համար (զէն- քի եւ ռազմամթերքի, եւն.):

Ժողովս, այս որոշման անպայման գործադրութիւ- նը խստիւ կը պահանջէ շրջանի մարմիններէն:

Խնդիր 2.— Մինչեւ ցարդ մենք ունեցած էինք ոչ պաշտօնական կնիք եւ ոչ պաշտօնական հանգամանք:

(5) Սահմանաբերդ, — Մարաշի շրջան:
 (6) Հաւանութիւն պիտի ըլլայ՝ Հեղահեղատ, մեզի անծանօթ շրջանի մը կուսակցական անունը:
 (7) Կարաւան, — Իսկիմուրաճի շրջան:

որով կարելիութիւն ունենայինք վստահութիւն ներ- չնչել անցելոյն, ինչպէս նաեւ ներկայիս ունէ անձի՝ իրրեւ յեղափոխական պաշտօնական մարմին, խնդրե- լու նուիրատուութիւն եւ բարոյական օժանդակութիւն. այս կարեւոր խնդիրը աչքի առաջ ունենալով ժողովս միաձայնութեամբ որոշեց որ յետ այսու գոնէ գըլ- խաւոր մարմինները եւ կարեւոր նկատուած վայրերը ունենան իրենց պաշտօնական կնիքը եւ հանդամանքը, որով կարելիութիւն ունենայ յեղափոխական տեսակէ- տով թէ ուրիշներուն եւ թէ աւելի սերտ կապերով իր հետ կապել իր շուրջը համախմբուած խումբերը եւ մարմինները:

(Աշմարի(8) տուած ծանօթութեան համաձայն որ այդ կարգի կնիքները նախապէս կը մնային Տելիայի(9), մեր ներկայացուցիչ Ա.ին յանձնարարուեցաւ որ իր Տելիայ հասնելուն այդ բաները տեղւոյն մարմնէն պա- հանջելով ղրկէ, հակառակ պարտադրանքի պահանջել Ա- րեւմտ. Բիւրոյէն):

Խնդիր 3.— Ի նկատի ունենալով անցեալին դուր- սէն եկող(ներու) առաւել ձայն ունենալուն, եւ երկրի միջավայրերու մէջ իրենց գոյութիւնը առանց գործին փաստելու պահանջելու ոմանց ունեցած անյարմարու- թիւններուն գործի յառաջացման հանդէպ պատճառած ակներեւ անտեղութիւնները, ժողովս որոշեց միաձայ- նութեամբ հետեւեալ երեք կէտերը.

Ա) Դուրսէն եկող ունէ ընկեր տեղային մարմնի ընկերներուն հաւասար ձայնի իրաւունքով միմիայն կրնայ մասնակցիլ տեղային գործերուն:

Բ) Մինչեւ որ տեղային մարմինները անհրաժեշտ պէտքը չզգան դուրսի ընկերոջ մը դալատեան, արտա- սահմանի օժանդակ մարմինները այդպիսիներ ղրկելու իրաւունքը չունին (բացի Ընդհանուր ժողովէն ընտրե- ւած Պատ. Մարմնէն):

Գ) Դուրսէն եկող գործիչ ընկերներէն իրրեւ յե- ղափոխական կը պահանջուի օժտուած ըլլալ հետեւեալ յատկութիւններով.

- ա) Գլխաւոր պայման՝ Թուրքերէն գիտնալ, որով կարելի ըլլայ տեղային պայմաններու հետ հա- համակերպիլ:
 - բ) Գիտնալ պայթուցիկ նիւթերու գործածութիւն եւ պատրաստութիւն:
 - գ) Ձէնքի գործածութիւն:
 - դ) Կազմակերպելու ընդունակութիւն:
- Ժողովս համաձայնութեամբ փակեց իր նիստը:

(8) Ամենայն հաւանականութեամբ՝ մեզի ծանօթ Աշոտ Մար- րիթը (Մուրատեան), որ ուրեմն 1905էն ետք անցած էր Կիլիկիա (Ատամայի շրջան) եւ կը գործէր այնտեղ:
 (9) Աղեւաճաղի (Եգիպտոս), որ կեդրոնն էր Կիլիկիոյ Պա- տասխանատու Մարմինը:

ՆԻՍՏ 3.— 1906 Յունուար 7/20

Ժողովս բացուեցաւ ատենապետութեամբ Հիլմիի, քարտուղարութեամբ Աշմարի, եւ բոլոր ընկերներու ներկայութեամբ:

Խնդիր 4.— Ի նկատի ունենալով Հայ Յեղ. Դաշ- նակցութեան ընդհանուր ծրարքի ըստ ապակեդրոնաց- ման սահմանած դրութիւնը, տեղային մարմիններու լիակատար իրաւունքը իւր տեղային գործերը վարե- լու եւ ղեկավարելու տեսակէտին մէջ, ժողովս միա- ձայնութեամբ որոշեց որ տեղային մարմինները ան- կախ զգան ինքզինքնին, երկրի գործին վերաբերմամբ արտասահմանի օժանդակ մարմիններու այս կամ այն անպայման հրահանգներուն առջեւ, բացի՝ օգտուելի նրանց ընկերական թելադրութիւններէն գործի տեսա- կէտով:

Շրջանիս ընտրեալ Պատասխանատու Մարմինը երկրէն դուրս հաստատուելու իր դերին մէջ վաւե- րական չնկատելով, դուրսէն եղած իր թելադրութիւն- ները անզօր կը մնան երկրի մարմիններու կողմէն գոր- ծի վերաբերմամբ:

Մարմինը երկիր մտնելու ու գործերուն հետ մօ- տէն ծանօթանալու եւ մօտէն շփման մէջ մտնելու հա- մար, կը պահանջենք որ հաստատուին ամենահեռուն՝ Դաշտին մէջ:

Մինչեւ որ Պատասխանատու Մարմինը երկիր հաս- տատուի, շրջանիս գործերը վարելու համար տեղային մարմիններէն ընտրեալ Ղեկավարող Մարմինը պար- տաւոր է յարաբերութեան մտնել Նոր Աշխարհի(10), Տելիայի(9) եւ Արեւմտ. Բիւրոյի հետ, զանոնք գի- տակից պահել երկրի գործերուն հետ, եւ ի պահանջել հարկին, խնդրել անոնց օժանդակութիւնը: Պատ. Մարմինը երկիր հաստատուելէն վերջ, գոյութիւն ու- նեցող Ղեկավար Մարմինը, հաւասար ձայնով, Պատ. Մարմնոյ սահմանուած իրաւունքներով:

Խնդիր 5.— Յառաջիկայ տեղի ունենալիք Ընդ. Ժողովին մասնակցելու եւ մանրամասն տեղեկագիր մը ներկայացնելու պէտքը եւ օգտակարութիւնը, ինչպէս նաեւ ներկայացուցիչ ընկերոջ մը ներկայութիւնը ան- հրաժեշտ դատելով, տեղեկագրի պատրաստութեան մշակումը, ժողովս յանձնեց ընկերներէն՝ Ակ., Աշ., եւ Հիլմիին, եւ իրրեւ ներկայացուցիչ իր կողմէն ղրկելու համար ժողովս միաձայնութեամբ որոշեց ղրկել Յա- կոբը:

Ժողովս փակուեցաւ համաձայնութեամբ ընկերնե- րու:

(10) Հիւս. Ամբիկայի կազմակերպութիւնը:

ՆԻՍ 4.— 1906 Յունուար 7/20

Ժողովս բացուեցաւ ատենապետութեամբ Հիւլիի, ատենադպրոցի զեր վարեց Աշմարի: Բոլոր ընկերները ներկայ էին:

Խնդիր 6.— Խումբերուն եւ համակրողներուն կամաւոր նուիրատուութիւններէն զատ, դրամական միջոցներ ձեռք բերելու համար բռնի միջոցը իրրեւ սկզբունք ընդունելով (տեւոր, բռնի հանգանակութիւն, առեւանգում եւ հրոսակային խումբեր), ժողովս որոշեց առ այժմ գործադրութիւնը յետաձգել մինչեւ որ մեր շրջաններուն կազմակերպական ոյժերը որոշ չափով ընդլայնին եւ զօրանան: Մինչեւ Լայն Վայր (մենք զմեզ դրամական պէտքի առաջ զգացինք) մէն մի շրջան պարտաւոր է ըստ կարելոյն կարճ ժամանակի մէջ ստեղծել ընկերները եւ պատրաստել զանոնք, թէ յառաջիկային վերոյիշեալ միջոց նպատակները իրագործելու եւ թէ տարբեր զանազան մեթոտներով ի ձեռք բերելու դումարները՝ գործի անհրաժեշտ պէտքերուն գործածուելու համար:

Խնդիր 7.— Ժողովս անդամներէն մէկը առաջարկեց շրջանի կազմակերպութեան գոյութիւն ունեցող մարմիններէն մէկը նշանակել եւ վաւերացնել առժամեայ կամ տեւական իրրեւ Կեդրոնական Մարմին, որը իրաւունք ունենայ վարելու թէ ներքին եւ թէ արտաքին բոլոր գործերը:

Այս առաջարկը ժողովականներու կողմէն առարկուեցաւ, ըսելով թէ մի տեղի ունէ մարմին սահմանափակուելով իր տեղային գործունէութեան մէջ, կարող չէ լիակատար իրազեկ ըլլալ գործերուն եւ պէտքերուն, ուստի ժողովս միաձայնութեամբ որոշեց որ Ղեկավար Մարմինը ընտրուի գոյութիւն ունեցող այլեւայլ վարիչ մարմիններու կողմէն մի մի ներկայացուցիչներէ, որոնք կազմելով վերոյիշեալ Ղեկավար Մարմինը, վարեն ներքին եւ արտաքին բոլոր գործերը: (Այս որոշումը չի կաշկանդեր երբեք յարաբերելու իրաւունքը տեղային մարմինները իրարու հետ):

Ժողովս փակուեցաւ համաձայնութեամբ բոլոր ընկերներուն:

ՆԻՍ 5.— 1906 Յունուար 8/21

Ժողովս բացուեցաւ ատենապետութեամբ Հիւլիի եւ քարտուղարութեամբ Աշմարի, ներկայութեամբ բոլոր ընկերներու:

Խնդիր 8.— Ժողովս միաձայնութեամբ ընդունեց եւ որոշեց ունենալ մեր ընդհ. գործունէութիւնը շեշտող եւ պարզող ծրագիր մը, սահմանուած դերերու բաժանումով շրջանի մարմիններու վրայ, որպէսզի շրջանի մէն մի մարմին չսահմանափակուելով իր տեղային գործերու առաջ, յառաջ բերէ իր դերը ապագայ բուն գործի առաջ:

Այդպիսի ծրագիր մը մշակելու եւ ժողովիս ներկայացնելու իրաւունքը տրուեցաւ համաձայնութեամբ՝ ընկերներէն Աշմարի, Հիւլիի եւ Սմբատի:

Խնդիր 9.— Դաշտին մէջ գոյութիւն ունեցող ներքին խմբական ծրագիրը ժողովս քննութեան առնելով, պէտք եղած քիչ փոփոխութեամբ ընդհ. համաձայնութեամբ ընդունուեցաւ եւ վաւերացուեցաւ բոլոր շրջաններուն համար:

Ժողովս փակուեցաւ համաձայնութեամբ բոլոր ընկերներու:

ՆԻՍ 6.— 1906 Յունուար 8/21

Ժողովս բացուեցաւ ատենապետութեամբ Հիւլիի եւ ատենադպրութեամբ Աշմարի: Բոլոր ընկերները ներկայ էին:

Խնդիր 10.— Դաշտի կազմակերպութիւնը իր տրամադրութեան տակ գտնուած հաշիւները, Հովիտի հաշիւները, Հովիտ զրկած եւ ներկայացուցած ըլլալով եւ հաշիւները ամբողջապէս Հովիտի մէջ կեդրոնացած լինելով, Հովիտի ընկերները, հաշիւները իրենց հետ միասին բերած շրջանուն պատճառաւ ժողովս առիթ չունեցաւ ընդհ. հաշիւները քննելու: Ուստի ժողովս որոշեց նամակ գրել Հովիտ, որպէսզի այնտեղի մարմինը իր տրամադրութեան տակ գտնուած բոլոր հաշիւները անմիջապէս զրկէ Տելուայ(9), որը մեր տեղեկագրի հետ միացուցած՝ մեր ներկայացուցիչը ներկայացնէ ընդհ. ժողովին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԻՏՏՃԷ ԵՒ

ԳՈՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐ

ԴԱՇՏ.— Խումբերէ գոյացած պատրաստի դրամը՝ 15 մէճիտ: Առ այժմ ամսական եկամուտ 4 մէճիտ: Կանոնաւոր վճարող անդամք՝ 12 հոգի: Համակրողներու որոշ թիւ մը կայ՝ 12 ընկեր, որ կը յուսանք ի մօտոյ կանոնաւոր վճարող խումբերու վերածել:

ՀՈՎԻՏ.— Խումբերէն գոյացած պատրաստի դրամը՝ 30 մէճիտ: Առ այժմ ամսական եկամուտ՝ 8 մէճիտ: Կանոնաւոր վճարող անդամք՝ 30 հոգի: Համակրողներու որոշ թիւ մը կայ 15 հոգի, որ կը յուսանք ի մօտոյ կանոնաւոր վճարող խումբերու վերածել:

Կայ նաեւ խումբերու կողմանէ գնուած գէնքեր, որոնց քանակը կը մտնէ հաշուեկշիւին մէջ:

ԽՈՐՇ.— Պատրաստի դրամ՝ 4 մէճիտ: Առ այժմ ամսական եկամուտ 1,5 մէճիտ: Կանոնաւոր վճարող անդամք երեք հոգի:

Ժողովս ի նկատի առնելով Խորշի ընկերներու

թուլութիւնը եւ տեղային կարեւորութիւնը ներկայ եւ յառաջիկայ գործունէութեան տեսակէտով, պահանջեց Խորշի ներկայացուցիչ ընկերներէն միջոցներ ձեռք առնել, ընդլայնելու եւ տարածելու համար շրջանակը ի մօտ ժամանակի:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Թէեւ նախապէս Խոր Վիրապի շրջանն ալ համաձայնած էր շրջանական ժողովիս դումարման, եւ մասնակցելու համար, բայց իր նշանակուած պատգամաւորի անակնկալ ձերբակալութեան պատճառաւ ցաւ ի սիրտ կը յայտնենք որ չկրցաւ մասնակցիլ:

Ժողովս իր այս շրջանական ժողովի կազմով գործերու յառաջացման ու դարբացման շօշափելի օգուտները ակներեւ ունենալով որոշեց յանձնարարել տեղային մարմիններու եւ յառաջիկային կազմուելիք Ղեկավար Մարմինի՝ որ վեց ամիս յետոյ անհրաժեշտ է դումարել երկրորդ շրջանական ժողովը:

ՆԻՍ 7.— 1906 Յունուար 10/23

Ժողովս բացուեցաւ ատենապետութեամբ Մայիլի եւ ատենադպրութեամբ Հիւլիի: Բացի Խորշի ընկերներէն ամէնն ալ ներկայ էին: Խորշի ընկերը իր ձայնի քուէն տուած էր Ակորին:

Խնդիր 8.— Այն մասնաժողովը որ Տրդ խնդիրը մշակելու (ներքին ծրագիր) եւ ժողովիս ներկայացնելու իրաւունքը յանձն առած էր, այսօր պարզեց իր տեղեկագիրը, որ հետեւեալն է.—

«Մենք Հ. Յ. Դ. Մարմիններս անհատապէս եւ թէ մեր կազմակերպութիւնը իր հաւաքական կազմով մասնաւորապէս, իր անցեալի փորձերէն համոզուած ըլլալով թէ մեր նպատակին ձգտող, ներկային թէ ապագային մեր մղելիք բուն կռիւը պէտք է ու անհրաժեշտ է ունենալ կեդրոնացման որոշ վայրերու մէջ, որով կարելիութիւն ունենանք մեր սկսած կռուին գոնէ ամիսներու մէջ տեւողութեան եւ կիսա-ապստամբութեան լիակատար երեւոյթը տալ, ու այդպէսով աղիւլ եւ զրազեցնել մեզ տիրապետող ու կաշկանդող թ. կառավարութեանը եւ Զ. բանակին վրայ, այլ նաեւ ստիպել եւ աղղել Եւրոպական դիւանագիտութեան վրայ, որոպէս միջամտելու համար մեր դատի արդար հրատուներին, Լեռնավայրը իր դիրքով այդ յարմարութիւնը ներկայացնող ու նպաստաւորող վայրերէն մին լինելով, եւ որ մեր կազմակերպութիւնը տարիներէ ի վեր այս վայրը այդ տեսակէտով իրեն իրրեւ գլխաւոր գործունէութեան վայր ընդունած էր, ներկայ շրջանական ժո-

ղովս եւս ճշդելով ու հաստատելով այդ որոշումը, կ'ընդունի ու կը փարի միացած ուժերով յառաջիկայ իր բուն գործունէութիւնը ամենասուղ գնով եւ միջոցներով իրականացնել իր ընդունած գլխաւոր նպատակը, մշակելով հետեւեալ ներքին գործունէութեան ծրագիրը շրջաններու կատարելիք դերերու բաժանումով»:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾՐԱԳԻՐ ԵՒ

ԳԼԽԱՒՈՐ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԵԱՆ ՎԱՅՐԵՐ

- 1) :
- 2) :
- 3) :

1.— Մէն մի վայրի մարմնի գործունէութիւնը չսահմանափակուելով լոկ իր շրջանի գործունէութեան մէջ, իր ձեռք բերած թէ կամաւոր, թէ բռնի դրամէն իր տեղային նախապատրաստական պէտքերը հոգային վերջ, մնացորդ դումարի մեծամաս քանակը պարտաւոր է յատկացնել բուն կեդրոնացման վայրերու պէտքերուն:

2.— Մէն մի մարմին իր տեղային հայ ազգաբնակչութիւնը ապագայի կռիւներու եւ կամ ընդհարումներու առաջ որոշ չափով ինքնապաշտպանութեան եւ կամ պաշտպանողական միջոցները աչքէ չհեռացնելով, պարտաւոր է իր հետ կապուած օժանդակ յեղ. խումբերէն մարդել ու պատրաստել կռուող թուղցիկ խումբեր, մասնակցելու համար ապագայ կեդրոնական վայրերու կռուին ուղղակի եւ կամ անկէ դուրս ասպատակելու, եւն.:

3.— Մէն մի մարմնէ խստապէս կը պահանջուի իր տրամադրելի դրամական միջոցները հետզհետէ յատկացնել գէնքեր եւ ռազմամթերք ձեռք բերելու, եւ ստեղծել թաքստոցներ եւ ճանապարհ զանոնք պահելու եւ ի պահանջել հարկին կեդրոնավայրերը փոխադրելու համար:

4.— Երբ կեդրոնացման վայրերն պատրաստուելէ յետոյ, կռուի ասպարէզ գալու նշանը կը յայտարարեն, դուրսի վայրերու մարմինները եւս իրենց տեղւոյն մէջ նախապատրաստուած եւ այդ նպատակին տրամադրուած ուժերով պարտաւոր են կռուի ասպարէզ գալ (ցոյց, խմբական կռիւ, եւն.): Որպէսզի Ա) Կեդրոնացման վայրերը իրենց կռիւներով մինակ չմնան եւ լոկ տեղային սահմանափակ երեւոյթը չկրեն: Բ) Կառավարութիւնը գէթ մի քանի օրեր շուարի ու յոնկարծակիի դալով չկարենայ անմիջապէս Զ.ի բանակը իր մեծաքանակ կազմերով կեդրոնացնել կեդրոնական վայրերու վրայ:

5.— Ապագայ ընդհանուր կռուի հանդէպ մէն մի մարմին իր կատարելիք դերը ճշդելու եւ գիտակցելու վերաբերմամբ պէտք է ուսումնասիրական եւ պատ-

բաստական միջոցներ ձեռք առնել իր բաժին դերը լիովին իրազործելու համար:

6.— Մէջ մի մարմին իր քաղաքի մէջ կատարելիք դերէն դուրս, պէտք է մշակել զանազան ծրագրերնէր լեռնային եւ կամ ազատ ճանապարհներու վրայ իրագործելու համար, կանցնելու եւ կամ յապաղեցնելու դէպի կեդրոնացման վայրերու վրայ տանող եւ դնացող Ձ.ին շղթան:

7.— Երջաններու կազմութեան դեր Հովիտի եւ զանազան:

8.— Դաշտի շրջաններու կազմութեան դեր եւ զանազան:

ՆԻՍՏ 8.— 1906 Յունուար 11/24

Ներկայութեամբ բոլոր ընկերներու: Ընթերցում ժողովիս ատենագրութեան եւ ընդհ. ժողովին ներկայացուելիք տեղեկագրի վաւերացումն:

Հովտի պատգամաւորներ ԱԿՈՐ ՀԻՄԻ Դաշտի պատգամաւորներ ՍՄԲԱՏ ԱՇՄԱՐ Խորշի պատգամաւոր ՁԵՄՄՈՒՐ Արծուարերդի պատգ. ՄԱՅԻԼ

2.— ՄԻՆԱՍ ՎԵՐԱԾԻՆ

«Միմաս վերածինի բուրբերք» խորագրով, մեր ողբացեալ ընկերոջ քաղաքային մէջ գտնուող նախնական ու փաստաբուրբերքը հրատարակած ենք արդէն այս հատարին մէջ (տեսնել էջ 120-137): Ինչպէս այս բաժնի ներածականին մէջ բնութեամբ, հետագայ փաստաբուրբերքը, գտնուած ընկ. Միմաս վրացեանի բուրբերքում մէջ, յաւելեալ լայն կը սփռեն ընդհանրապէս Կիլիկիոյ մեր Մարմիններու 1919-1920 շրջանի, եւ ի մասնաւորի ընկ. Միմաս վերածինի գործունէութեան շուրջ, իրեն նորութիւն՝ գաղափար մը տալով նաեւ Պոլսոյ եւ Բիւրսանոյ (Իզմիրէն Պանարմա) շրջանին մէջ Հայաստանի Հանրապետութեան Անկախութեան Փոխառութեան մարմիններու աշխատանքներուն շուրջ:

Մ. վերածինի քաղաքային այս նոր փաստաբուրբերքը կու տանք հետեւեալ դասաւորումով.— Ա) Կիլիկիա — Բ) Երեւան 1919, Հ. Յ. Դ. Գրգ. Ընդհ. ժողով — Գ) Հայաստանի Հանրապետութեան Անկախութեան Փոխառութիւն:

Ա.— Կիլիկիա

1.— ՕՐԱԿԱՐԳ ԼԵՌՆԱՎԱՅՐԻ 1919Ի ԵՐԶԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

Տպագրուած է 18x41 սմ. չափի օրաթերթի (գեղարար) բուրբերքի վրայ, մէկ երես: Բուրբերքի վարի մասի աջ կողմը ծալուելի մտած ու փնտցած ըլլալով, փոքր մաս մը (ճամբի մը տողերու

վերջին 2/5 մասը) վերակազմած ենք մենք եւ առած փակագծերու մէջ: Անորոշ կը մնան միայն Մերսիսի եւ Տարսուսի ձայներու քիւլը, եւ շրջաններու աջակողմեան սիւնակի առաջին ամուլը (Մերսիսի վեր), որ կը սկսի Ս տառով (կրնայ ըլլալ նաեւ Մ կամ Ա):

1919ի Յունիս-Յունիս ամիսներուն գումարուած Լեռնավայրի այս շրջանային ժողովն է որ գրադուած է Հ. Յ. Դ. Գրգ. Ընդհ. ժողովի օրակարգերու բնութեամբ եւ Կիլիկիոյ պատգամաւորներու (Մ. վերածին եւ Տ. Մամուր) ընտրութեամբ:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԼԵՌՆԱՎԱՅՐԻ ԵՐԶԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ (ԱՄՓՈՒՄ)

- Ա. Զեկուցումներ. 1.— Լեռնավայրի Երջանին դործունէութիւնը 1919ի սկիզբէն մինչեւ Երջ. ժողով: 2.— Կեդր. Կոմիտէի ղեկուցումներ: 3.— Երջաններու ղեկուցումներ: 4.— Առաջարկներ:

- Բ. Կազմակերպական. 1.— Կանոնադրի կազմութիւն: 2.— Վերակազմութիւն եւ Կազմակերպութեան աշխատանքներ: 3.— Արհեստակցական, Գործակցական եւ Բանուորական միութիւններ:

- Գ. Յարաբերական խնդիրներ. 1.— Յարաբերութիւն Դրացի Ազգերու հետ: — (Յոյներ, Արաբներ, Գղղլաշներ եւ այլն.) 2.— Յարաբերութիւններ միւս կուսակցութիւններու հետ: 3.— Յարաբերութիւն Առաջնորդարանի եւ Ազգ. Մարմիններու հետ: 4.— Յարաբերութիւն Ֆրանսական վարչութեան, Թուրք պետութեան եւ միւս իշխանութեանց հետ:

- Դ. Պրոպականտի խնդիր. 1.— Դրաւոր Պրոպականտ («Կիլիկիա», «Ազատամարտ» եւ գրքոյկներ): 2.— Բերանացի Պրոպականտ (Գործունէութեան ուղեգրի):

- Ե. Ընդհ. Կազմակերպական խնդիրներ. 1.— Հ. Յ. Դ. Գրգ. Ընդհ. ժողովի օրակարգը: 2.— Հ. Յ. Դ. Կիլիկիոյ Երջանի կուսակցական պատմութեան կազմութիւն: 3.— Ընդհ. ժողովի մասնակցութեան խնդիրը, եւ պատգամաւորի ընտրութիւն:

- Զ. Հաշուական. 1.— Հաշիւներու ընտրութիւն: 2.— Փակում եւ նոր պիւտճէ: 3.— Դատական խնդիրներ:

Է. Ընտրութիւն մարմիններու.

- 1.— Ընտրութիւն Կ. Կոմիտէի: 2.— Ընտրութիւն Գործիչներու:

Ծանօթ.— Երջանային ժողովը, նկատի առնելով բացառիկ պայմանները, այս անգամ կը գումարուի ընկերներու լայն մասնակցութեամբ, առանց կաշկանդուելու նախընթացներով՝ ու կանոնադրական սահմանաւորումներով: Աշխատանքները կը սկսին 1919 Յունիս 25ին, մէջ:

Պէտք է մինչեւ Յունիս 5 ուղարկել Կ. Կոմիտէին Երջանի Մարմիններու գործունէութեան, տեղական կազմի վիճակին մանրամասն զեկուցագրերը, ինչպէս եւ իւրաքանչիւր Մարմնի Դրամական Հաշիւները:

Կը հրաւիրենք բոլոր Մարմիններն ու ընկերները, վերակազմութեան աշխատանքին հետ՝ այժմէն իսկ ուշադրութեան առնել ընդհանուր եւ Երջանային ժողովներու օրակարգերը եւ տեղական ընդհանուր ժողովներու մէջ, իւրաքանչիւր հարց զատ զատ վիճարանութեան նիւթ դարձնել յետոյ, քուէարկուած բանաձեւերը դրաւոր յանձնել իրենց պատգամաւորներուն: Պէտք է որոշուած օրը ներկայ դառնալ:

Հ. Յ. Դ. ԿԻԼԻԿԻՈՅ Կ. ԿՈՄԻՏԷ 25 Մայիս

Կր յանձնարարենք ձեզ Կ. Պոլսոյ Պատգամաւոր Մարմնի հրա)հանգները, մասնաւորապէս Գ. եւ Դ. յօդուած(ները, որոնք կը վերաբերին Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան եւ մեռնող ընկերներու կենսագրականներուն):

Երջ. ժողովին պիտի մասնակցին Կիլ(իկիոյ բոլոր շրջանները, ընտրողական ձայներու հետեւեալ իրաւունքով.

Ատանա	3	ձայն		
Տէօրթ Եօլ	3	»	Ս. ?	?
Հալէպ	3	»	Մերսին	?
Սիս	3	»	Տարսուս	?
Մարաշ	2	»	Հաճըն	1
Այնթապ	2	»	Ուրֆա	1

2.— ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՓՈՒՍՏՈՒՈՒԹԻՒՆ՝ ԱՏԱՆԱՅԻ ՀԱՅ ԱԶԳ. ՄԻՌԹԵԱՆ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՌԹԻՒՆ — ԱՏԱՆԱ տպագրեալ վերտառութեամբ ստացագիր մը (11,3x11,7 սմ. չափի), թիւ 15, 15 Յունիս 1920 թուակիր, 45,000 զր2.ի.—

Պարոն Կ. Կ. Կ.էն ստացանք զր2. քառասուն ու հինգ հարար դահ. օսմ. Թղթադրամ փոխառութեան ձեւին տակ:

Գանձապետ Աւեճապետ Կ. Բ.(?) ԱՇԸԳԵԱՆ ԴՈԿՏ. Ե.(?) ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ

Կ. Կ. Կ. կը նշանակէ աճշուշտ Կիլիկիոյ կեդրոնական կոմիտէ: Ստացագրին կցուած երկտող գրութիւն մը, Մ. վերածինի ձեռագրով, կը թշ.— «Ատանան պաշարուած էր: Ատանայի Հայ Ազգ. Միութիւնը դրամական նեղ կացութեան մէջ ըլլալով՝ 45-000 դահ. փոխառութիւնը բրած է Լեռնավայրի կեդր. կոմիտէն: Ատար ընկալագիրը, — թիւ 15: Այդ ատենները Հ. Յ. Դ. Ամերիկայի կեդր. կոմիտէն կարեւոր գումար մը փոխադրած էր Կիլիկիա»:

3.— ԱՅԼ ԲՈՒՂԹԵՐ

Մ. վերածինի Կիլիկեան շրջանի գործունէութեան՝ քաղաքաւորութիւն մէջ մնացած են նաեւ տպագրեալ երկու յայտարարութիւններ, 24x31,5 սմ. չափի, մէկը վարդագոյն (Կիրակի, 1 Փետրուար — աճշուշտ 1920 — Ատանա), միւսը գորշ-սպիտակ (Կիրակի, 15 Փետրուար, Մերսիս) թուրքի վրայ, հետեւեալ բովանդակութեամբ.— «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԿԻՆՏԵՐՈՒ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ, — Անդրանիկ, Սեպուհ, Արամ, Բոստամ, Վարդան, Իշխան եւ հայ հերոսներ, — ՎԱՐՉԱՊԵՏ ԽԱՏԻՍԵԱՆ, ՁՕՐ. ԱՐԱՐԱՆԵԱՆ. — Հայ բանակին յաղթանակը Ձանգեալի մէջ, — հայկական գունդերը եւ կամաւորական խումբեր, — Էյմիթին, Երեւան, Եւն., Եւն.: Հայաստանի զինուորական, քաղաքական եւ տրեստական կացութեան մասին պիտի բանաստեղծուի եւ պատկերներու մասին բացատրութիւններ պիտի տայ Հայաստանէն նոր վերադարձած Ընկ. ՄԻՆԱՍ ՎԵՐԱԾԻՆ»:

Բ.— ԵՐԵՒԱՆ 1919, Հ. Յ. Դ. ԳՐԳ. ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

Հետեւեալ թուրքերը կը վերաբերին Մ. վերածինի Երեւան գտնուած շրջանին՝ իրեն Կիլիկիոյ պատգամաւոր (Տիգրան Մամուրի հետ) Հ. Յ. Դաշնակցութեան Գրգ. Ընդհ. ժողովին: Վերածինի պետք է Երեւան մնացած ըլլայ 1919 Սեպտեմբեր, Հոկտեմբեր եւ Նոյեմբեր ամիսներուն: Դեկտեմբեր 22ին, ամ Պոլսոյ է արդէն, ինչպէս կը վկայէ Պոլսոյ Կ. կոմիտէի կողմէ շտաբի Հայաստանէ վերադարձող պատգամաւոր ընկերներու» տրուած նշանակութիւնը հրաւեր մը («Հակաստամարտ»ի սրահին մէջ), որ կը կրէ ընկեր վերածինի ձեռագիր մակագրութիւնը:

1.— ՄՈՒՏՏԻ ՏՈՄՍ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ IXԳԻ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ, տրուած պատգամաւոր ընկեր Մ. վերածինին (ամուլը՝ ձեռագիր), 27 Սեպտեմբեր 1919 թուակիր, Երեւան, Արեւիկեան Բիւրօ տպագրեալ ստորագրութեամբ: Ձեռագրով քուսագրուած է՝ № 31: Ձափն է 11,7x9,2 սմ.: Գոյնը՝ կարմիր-նարնգագոյն:

2.— ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԻ մուտքի երեք տոմսակներ, «Հայաստանի Խորհրդի Աւագ Քարտուղար» տպագրեալ ստորագրութեամբ եւ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՐԼԱՄԵՆՏ» կնիքով:

3.— Մատիտով ձեռագիր փոքր տոմս մը Ընդհ. ժողովի նախագահութեան՝ իշխան Յովսէփ Արզուրեանի ստորագրութեամբ.— «Ընկեր վերածին, Իզմիրի զեկուցումից յետոյ պիտի առաջարկեն լսել Կիլիկիոյ զեկուցումը, այնուհետեւ անցնել հարցերի եւ բնագործութեան: ԻՇԽԱՆ»:

4.— Մատիտով ձեռագիր փոքր տոմս մը, Մ. վերածինին ուղարկուած ընկ. վառան Գափագեանի կողմէ (Կոմս), 1 Հոկտեմբեր 1919 թուակիր, հետեւեալ պարունակութեամբ.— «Յարեա՞տ ! — Երբեք մայր հանդիպիս Հարբոսի հետ կ'սկսէ զինուորական էմօնիտիւնը եւ 1-2 ամսով յետ ինչորեք Օհանջանեանի կողմէ անոր յանձնուած էքսպէրտ» պատեմէ վերցնելու համար: Բարի եղբի բերելու ինձ մօտ, եւ կ'ընդօրինակեն եւ կը վերադարձան: ՎԱՆՀԱՆ»: Յիշեցնենք որ Յարեա՞տ Մ. վերածինի մէկ այլ ծածկանունն էր:

5.— Կապուտ միւսնով գրուած փոքր երկտող մը (11,8x14 սմ. չափի քաղաքի մը վրայ), Հ. Կարմեանի կողմէ ուղարկուած

Ե. Նաթալիի եւ Մ. Վերածինի.— Երկրորդ Եւրոպայի Եւ Վերածինի, — Այսօր մինչեւ ժամը 12ը խնդրեմ անցնիլ Պարլամենտի գրասենեակ՝ ինձ մօտ, խօսելու հինգշաբթի երեկոյեան ըլլալիք հրապարակային դասախօսութեան շուրջը: ՀՐ. ԿԱՐԻՆԵԱՆ: 24 Հոկտ.:

6.— Նամակի 13x21 չափի բուլբուլ վրայ (տպագրուած «ԱԶԱՏՈՒԹԵԱՆ» (ՈՅՄ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆԻ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ, Երևան) վերատպութեամբ) գրուած 16 Նոյեմբեր 1919 թուակիր (թիւ 160) «Վկայական» մը, որ կը հաստատէ թէ «Վանի «Ազատութեան» լոյս» գրադարանի վարչութիւնը լիազօրած է Պրն. Մի. Թաս Վերածինը կիլիկիայի մէջ ձեռնարկելու գրասենեակ եւ գիրքերու հանգանակութեան՝ ի մօտոյ Երկիր փոխադրելիք «Ազատութեան» լոյս» գրադարանի օգտին: Նախագահ վարչութեան (անստորագիր): Անդամ Գարուշապ Ե. Գարուշապ:

7.— Հ. Յ. Գ. Վրաստանի կենտ. կոմիտէ՝ կնիքը կրող ձեռագիր տուս մը, հետեւեալ պարունակութեամբ.— Երկիր Վերածին, Հ. Յ. Գ. Վրաստանի Կ. կոմիտէն խնդրում է Ձեզ այսօր գիշերուայ 11 ժամին շնորհ թերթի ընկերական ժամանակի «Ունիոն» նաշարանում:

8.— Ձեռագիր (մատուցող) մօթեր (ամենայն հաւանականութեամբ Մ. Վերածինի կողմէ գրի առնուած Ընդհ. ժողովի իսկ ընթացքին, հետեւեալ բովանդակութեամբ.—

Վերջին գործոց նախարարի գեկուցումը 18 / X / 919

Table with 2 columns: Category and Amount. Items include Գաւառներու Հայերը՝ 775.000, Զիւրտեր 39.000, Թաթարներ 237.000, Եզդիներ 31.000, Կաղաքները՝ Հայեր 127.000, Թաթար 12.000, Կաղաքներ՝ 8.000.

Հայաստանի սահմաններէն դուրս (Կովկաս) ապրող Հայեր՝ 400.000:

Մեր ջաղագրականութիւնը պիտի տարուի յօգուտ աշխատաւոր ժողովրդի, քանի որ Հայութեան ստուարագոյն մեծամասնութիւնը կը կազմեն գիւղացիները եւ բանուորները: Միւսներն ալ չենք լքեր ի Հարկէ:

9.— Հ. Յ. Գ. Թրք. Ընդհ. ժողովին վերաբերելու Մ. Վերածինի բուլբուլում մէջ կը գտնուի 1919ին ապրող հայութեան թուի վիճակագրական հաշուարկում մը, որ առ նուազ մեծապէս հետաքրքրական է, եթէ ոչ գիտակեանքէն շահեկան: Ընթ. Հարպութի ժամանակ առաջի վիճակագրական բուլբուլ, — կը նորագրէ Մ. Վերածին կցուած բարբիլի մը վրայ, — Ռուբէն, Ազո(?) եւ Եւ Նշանակուած էինք անգամ մարզահամարի յամանախօսութիւնը:

Վիճակագրութիւնը ձեռագրով բազմագրուած է 21x31 սմ. չափի երկու բուլբուլ վրայ, մէկական երես: Կու տանք նախարարութեամբ:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹՐԹԱՀԱՅԵՐՈՒ ԹԻՒԷ ԵՆԻԿԱՑԻՍ

Table with 2 columns: Description and Amount. Items include Այժմ Կովկաս գտնուող 1895ի Թրքահայ դաղթականութեան թիւը 120.000, Այժմ Կովկաս գտնուող 1914-15ի Թրքահայ դաղթականութեան թիւը 300.000, Պոլսոյ Հայ բնակչութիւնը (նորեկ գաւառացիները միասին Հաշուելով) 150.000, Իզմիր, Գոնիա, Գաստէմունի, Թրակիա եւ Պոլսոյ մօտակայ գաւառներու Հայութեան թիւը (Հայ բոշաները միասին) 200.000, Սուրիոյ, Միջագետքի եւ Պարսկաստանի մէջ մնացած տարազիրները (արարներու, շիւրտերու եւ թուրքերու մօտ գտնուած որբերն ու կիները միասին Հաշուելով) 150.000, Կիլիկիոյ այժմու Հայ բնակչութեան թիւը 120.000, Հայկական վիլայէթներու Հայ բնակչութեան թիւը (Տրապիզոնի բնակչութիւնը եւ թուրքերու ու շիւրտերու մօտ գտնուած որբ ու կիները միասին Հաշուելով) 150.000.

ՌՈՒՍԱՀԱՅԵՐՈՒ ԹԻՒԷ ԵՆԻԿԱՑԻՍ

Table with 2 columns: Description and Amount. Items include Կովկասի Հայ բնակչութեան թիւը (Վրաստանի եւ Ասորակէտանի Հայերը միասին Հաշուելով) 1.825.000, Հիւսիսային Կովկաս, Խրիմ, Պեսարապիա եւ Ռուսաստանի մնացած մասերու Հայ Հայ բնակչութեան թիւը 200.000, Պարսկի Հայ բնակչութեան թիւը 20.000, Արտասան եւ Օլթիի Հայ բնակչութեան թիւը 88.000, Կարս եւ Կազզմանի Հայ բնակչութեան թիւը 140.000, Total 2.193.000.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ ԳՏՆՈՒՈՂ ՀԱՅԵՐՈՒ ԹԻՒԷ

Table with 2 columns: Description and Amount. Items include Պարսկաստանի, Հնդկաստանի, Ճապոնի Հայ բնակչութեան թիւը 150.000, Ամերիկայի Հայութեան թիւը 120.000, Եւրոպայի Հայութեան թիւը 20.000, Պալէստինայի Թերակղզիի Հայութեան թիւը 60.000, Եգիպտոս, Սուտան, Հապեշխասան գտնուող Հայերու թիւը 50.000, Total 400.000.

ԱՄՓՈՓՈՒՄ

Table with 2 columns: Description and Amount. Items include Թրքահայերու թիւը 1.190.000, Ռուսահայերու թիւը 2.193.000, Արտասահման գտնուող Հայերու թիւը 400.000, Total 3.783.000, Վերջին պատերազմի միջոցին ջարդուած ու կորսուած 1.000.000, Total 4.783.000.

10.— Հետաքրքրական են նաեւ 10.5x19,5 սմ. չափի երկու բարբիլներու վրայ մեկանով նորագրուած հետեւեալ տեղեկութիւնները. «Բնակչութեան պարեմաւորումը» խորագրով, որոնք կը բուրն ըլլալ Ընդհ. ժողովին տրուած գեկուցումն մը մասերը, կամ այդ առթիւ պատրաստուած ընդարձակ ուսումնասիրութեան մը պատահիկներ: Բովանդակութեանն դաստիարակ, կը վերաբերին Միացեալ Հայաստանի հետագայ պարեմաւորման գործի կազմակերպման կարելիութիւններուն: Ամենայն հաւանականութեամբ, թիւերը կը համապատասխանեն ի նախագումն տրուած որոշ հարցադրումներու կամ գրուածներու:—

25 1.ա.— Թրքահայաստանի մասին որոշ կարելի չէ ոչինչ ասել: Ենթադրուում է որ եղած ցամաք բաւարարած է եւս ներկայիս բնակչութեան, ինչպէս նաեւ գնալիք 3-400.000 ժողովուրդին (միայն արմտիք ճիւղի ունենալով), եթէ տեղական ժողովուրդը չպահի, կամ որոշ մարդկանց ձեռք չկուտակուի:

1, բ.— Հագուտի վերաբերմամբ այսօր կարելի է ասել որ Հայաստանի ժողովուրդը իր գոյստեղծման մեծաւ մասամբ տնայնագործութեամբ կը պատրաստէ, եւ դա կախուած է բուրգից: Ոչխարների թիւը նուազած է: Այդ երկիրը միշտ էլ եղել է զբոսաւորաբար ոչխար արտադրող: Միայն վանի վիլայէթը տարեկան կ'արտադրէ 100-110.000 ոչխար:

1, գ.— Կարելի է նախ Վանի, Պիլիսի, Երզրումի, Տրապիզոնի, Սվազի, Խարբերդի եւ Տիարպէթի արտադրած բերքերու ներքին ցուցակը (նման ցուցակ բուլբուլում մէջ գոյութիւն չունի Հ.Յ.):

25 2.— Նայած ի գործ դրուելիք միջոցներին: Եթէ կիլիկիան երկաթուղով, Սեւ Մուրու նաւահանգիստներով ու Բաքում-Երեւան-Շախթախտ երկաթուղով օգտագործուին առատօրէն՝ ոչ մէկ ժամանակ մօտ 2 միլիոն, իսկ մէկ տարեկան 4 միլիոն:

Վանի վիլայէթը կարելի է պարեմաւորել Բաքում-Թիֆլիս-Շախթախտ-Մակու-Պայագիտ երկաթուղով միջոցաւ, երրորդական ապրանքներով եւ Ասորպատկանից պարսկական բերքերով: Ցամաքային նաւագործակալ այդ պարեմաւորումը, եթէ մթերքները Բաքում ինքն, կարելի է վան հասցնել 10 օրից, իսկ Պարսկաստանից՝ 5-7 օրից:

25 3.— Նայած թէ ինչքան բնակչութիւն կայ: Պէտք է դիտել՝ Վասպուրականի լեռները հարուստ են գանազան սննդատու բայերով եւ երկրի ժողովուրդը գարնան մեծաւ մասամբ կ'ապրի այդ բայերով ու տառիս ձեւով:

25 4.— Չեմ կարող եմ բան ասել: Կիլիկիան նաւահանգիստների մասին գրուած կայ (կը հետեւի առաւել անընթաց) նի սնունդ մը): Այդտեղ կան երկու յանելուածներ, որոնց մէջ ցոյց են տրուած Ալեքսանդրէի եւ Միսիսի նաւահանգիստների ներքինութիւնները եւ արտադրութիւնները, թէ ըստ երկրների եւ թէ ըստ ապրանք տեսակի:

25 5.— Բացի պետական կազմակերպութիւնից կարելի է յիշել՝ I.— Հայրենակցական միութիւններ, որ ներկայիս բաւական արածուած սիւսում է եղել գաղթական հայութեան մէջ, II.— Կողմնակիցներ. Երանց դերը անցալի մէջ շատ է եղել, բացի վանից ուր Երանց բաւական ուժեղ կազմակերպութիւն ունեն: Բայց Երանց դերը յառաջիկային շատ մեծ է լինելու:

Գ.— ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ՓՈՒՍԱՌՈՒԹԻՒՆ

Կիլիկիան վերջնական կերպով ձգել է սոք, եւ նախ քան իր Ամերիկա անցնելը(1), 1920ի վերջին քանի մը ամիսներու ընթացքին Մ. Վերածին գրադարան է Հայաստանի Հանրապետութեան Անկախութեան Փոխառութեան գործով, Նշանակուած ըլլալով Պոլսոյ Հ. Յ. Ա. Փոխառութեան կեդրոնական Յանձնաժողովի ներկայացուցիչ՝ Բիւրանի շրջանին համար:

Ստորեւ՝ այդ գործունէութեան վերաբերելու կարգ մը նամակներ եւ փաստաթուղթեր: Կու տանք, ամէնէն առաջ, լուսանկար պատկեր Փոխառութեան արձանագրութեան պաշտօնաթուղթին:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆԿԱՌՈՒԹԵԱՆ

ՓՈՒՍԱՌՈՒԹԻՒՆ

6%, 1920

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԹՈՒՂԹ

1920

Աստ

Կը խնդրեմ որ հաճիք, Յայտագրին պայմաններուն համաձայն՝ իմ հաշուս արձանագրել՝ Հայկական Անկախութեան Փոխառութեան

(.....) Տոլար

(*) հասուցուած:

Յարգութիւն

Անուն

Հասցէ

(*) Նշանակել տարագրութիւն, Բաւարաց, կէտը, երեք Բաւարաց բառերն են՝ որ կը համապատասխանէ վերոյնին:

Յուլիոս Թ. Արզուման

(1) Թղթաբարբի մէջ կը գտնուի նաեւ Հայաստանի Հանրապետութեան Պոլսոյ գիւտակերպութեան ներկայացուցիչ Յ. Բախթանի եւ գաղութային գործերու վարիչ Մ. Կողմնակիցի կողմէ ստորագրուած անցալի մը, որ Մ. Վերածինի արձանագրութիւն կու տայ նախարարելու զգուշ Ամերիկայի Միացեալ Նահանգներ: Անցալի կը կրէ 29 Յունուար 1921 թուականը:

1.— Հ. Հ. ԱՆԿԱՆ. ՓՈԽԱՌՈՒԹԵԱՆ ԿԵԴՐ. ՅԱՆՁՆԱՌՈՒՄԲԻ ՆԱՄԱԿԸ Մ. ՎԵՐԱԾԻՆԻՆ

Գրուած 20,7x27 սմ. չափի պաշտօնաթուղթի վրայ, «ԱՆԿԱՆ-ՈՒԹԵԱՆ ՓՈԽԱՌՈՒԹԵԱՆ ՀԱՅԿ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ, ԿԵԿՐ. ՅԱՆՁՆԱՌՈՒՄԲԻ Կ. ՊՈԼՍՈՅ, ԱՍՏԱՐՔԵԱՆ ԽԱՆ, ՍՏԱՄԳՈՅ՝ ՍՊԱԳՐԵԱՅ ՎԵՐԱՊԱՏՈՒԹԵԱՄԲ: ԿԵԿՐ. ՅԱՆՁՆԱՌՈՒՄԲԻ ԱՌՈՒՄՈՎ ՍՏՈՐԱԳՐԱԾ Է ՎԱՐԻՅԸ՝ ԱՐԱՄ ԻՃԻՏԻՆԱՆ:

Կ. Պոլիս, 27 Հոկտեմբեր 1920

Ազնուամեծար Տիար Վերածին

Աստ

Ազնուամեծար Տիար,

Պիտի խնդրէի Ձեր Ազնուութենէն որ բարի ըլլար անկամ մը եւս դալու Օսմ. Առեւտր. Դրամատունը, վաղը կէսօրէ յետոյ կարգադրելու համար Ձեր ճամբորդութեան մանրամասնութիւնները:

Կանխայայտ շնորհակալութեամբ Ի դիմաց Հ. Հ. Անկախ. Փոխառ. Կեդր. Յանձ. վարիչ՝ ԱՐԱՄ ԻՆՃԻՏԻՆԱՆ

2.— Հ. Հ. Ա. Փ. ԿԵԴՐ. ՅԱՆՁՆԱՌՈՒՄԲԻ ՆԱՄԱԿԸ Մ. ՎԵՐԱԾԻՆԻՆ

Գրուած միեւնոյն տիպի պաշտօնաթուղթի վրայ, երկու երես:

Կ. Պոլիս, 6 Նոյ. 1920

Ազնուամեծար Տիար Վերածին

Աստ

Ազնուամեծար Տիար

Հայկ. Հանրապետութեան Անկախութեան Փոխառութեան Կեդր. Յանձնատնոցի պաշտօն յանձնած ըլլալով ձեզի շնորհիւ Բիւթանիոյ Հայաբնակ վայրերը կազմելու համար տեղական Յանձնատնոցներ, որոնք պիտի աշխատին յիւրացնել եւ ընդհանրացնել ժողովրդեան մէջ, այս փոխառութեան արձանագրութիւնը. ստորեւ պատիւ ունիմ մանրամասնելու ձեր վերոյիշեալ պաշտօնին կիրառութեան վերաբերեալ պարագաները:

Ձեր այցելած իւրաքանչիւր Հայաբնակ վայրի մէջ տեղային Ազգ. Իշխանութիւններու պատասխանատուութեան եւ հսկողութեան ներքեւ ու միեւնոյն Իշխանու-

թիւններու օժանդակութեամբ կը կազմէ յատուկ «Փոխառութեան Յանձնատնոցով մը»:

Յանձնատնոցով կազմութեան ատեն հարկ է ուշադրութիւն ընծայել որ ամէն յարանուանութիւն, քաղաքական կազմակերպութիւն կամ տեղային հաստատեալ մարմիններ իրենց մասնակցութիւնը ունենան որպէսզի անհամաձայնութիւններ չծագին:

Յանձնատնոցով հրաւերով ժողովուրդը կը հրաւիրուի հաւաքոյթի մը, ուր բանախօսութեամբ մը կը բացատրէ այս փոխառութեան կարեւորութիւնը:

Յետոյ Յանձնատնոցով կը ձեռնարկէ բուն արձանագրութեան գործողութիւններուն, իւրաքանչիւր անձի իր արձանագրուած դումարին համար ստորագրել տալով մասնաւոր արձանագրութեան տպագրեալ թուղթը: Այս թուղթին վրայ պէտք է որոշ կերպով գրուած ըլլան ստորագրողին անունը, մականունը, հասցէն, թիւը (արձանագրութեան), արձանագրուած դումարը տողաբով (իւրաքանչիւր օսմանեան մէկ ոսկինոց թղթադրամը մէկ տողարի հաշուով, ինչ որ արձանագրողին համար 20% աւելի սկզբնական շահ մը կ'ապահովէ):

Յանձնատնոցովները, արձանագրութեան թուղթերը թիւի կամ այրուբէնի կարգով կը ցուցակագրեն (գոյգ օրինակով) եւ մէկ օրինակը իրենց քով պահելով միւսը ապահովագրեալ նամակով ուղղակի Կեդր. Յանձնատնոցի կ'ուղարկեն: Այս ցանկերը պէտք է պարունակեն, անուններու դիմացի էջին վրայ չորս սիւնակներ, որպէսզի ամէն անգամ որ արձանագրողին կողմանէ վճարում մը ըլլայ այդ սիւնակներուն մէջ նշանակուի, վճարման թուականով միասին:

Յանձնատնոցովները իրենց կատարած գանձումներուն փոխարէն կու տան տպագրեալ առժամեայ ստացադիր մը եւ յետոյ, մասնաւոր ցանկով մը, հաւաքուած դումարները, եւ առժամեայ ստացադիրներու երկրորդ բունը կ'ուղարկեն Օսմ. Առեւտր. Դրամատուն (նախապէս համաձայնելէ վերջ դրամատան Տնօրէնութեան հետ դրամի առաքման եղանակի մասին) եւ փոխարէն կը ստանան դրամատան կողմանէ իւրաքանչիւր վճարողի անուան զրկուելիք ստացադիրները, զորս կը փոխանակեն, իրենց կողմէ նախապէս տրուած առժամեայ ստացադիրներու հետ. այնպէս որ արձանագրողներու ձեռքը ի վերջոյ կը մնայ Օսմ. Առեւտր. Դրամատան կողմէ տրուած ստացադիրը, մինչեւ որ վերջնական պարտաթուղթերը տպագրուելով, բաժնուին արձանագրողներու, եւ առնուելով դրամատան ստացադիրները:

Մաղթելով որ ձեր պաշտօնը արդիւնաւոր ըլլայ,

Մնամ Ի դիմաց Հ. Հ. Անկախութեան Փոխառութեան Կեդր. Յանձնատնոցի Կեդր. Յանձնատնոցի վարիչ՝ ԱՐԱՄ ԻՆՃԻՏԻՆԱՆ

3.— Հ. Հ. Ա. Փ. ԿԵԴՐ. ՅԱՆՁՆԱՌՈՒՄԲԻ ՇՐՋԱՆԵՐԱԿԱՆԸ

Նոյն չափի եւ որակի թուղթ, բայց վերտառութիւնը՝ Փրանսիերէնով. — COMITE CENTRAL POUR L'EMISSION A CONSTANTINOPLE DE L'EMPRUNT ARMENIEN DE L'INDEPENDANCE, Astartjian Han, Stamboul:

Constantinople, le 6 Նոյեմբեր 1920

Բիւթանիոյ Հայաբնակ վայրերու Ազգային Իշխանութիւններուն

Հայ Հանրապետութեան Անկախութեան Փոխառութեան Կեդրոնական Յանձնատնոցի, պատիւ ունի ներկայիս յայտարարելու թէ պաշտօն տուած ըլլալով Կ. Պոլսոյ մէջ հաստատուած Տիար Վերածինի, շնորհիւ Բիւթանիոյ բոլոր Հայաբնակ վայրերը, տեղային Ազգային մարմիններու օժանդակութեամբ եւ անոնց պատասխանատուութեան ներքեւ կազմելու համար «Փոխառութեան Յանձնատնոցներ», կը խնդրէ Բիւթանիոյ յիշեալ Ազգ. մարմիններէն, որ անկերպապէս կերպով աշակցին մեր պատուիրակ Տիար Վերածինի, զիւրացնեն անոր պաշտօնին կիրառութիւնը, որպէսզի առաջադրուած նպատակը՝ որ է օժանդակել Հայ Հանրապետութեան սմբարանման եւ վերաշինութեան, լաւագոյն յաջողութեամբ պատկուի:

Կեդր. Յանձնատնոցի քաջայոյս է թէ ամէն հայ, ուր որ ալ ըլլայ, սրտի եւ խղճի պարտականութիւն մը պիտի նկատէ իրեն, կարելի ամենալայն չափով սատարել այս փոխառութեան յաջողութեանը, կը ըստ պատահութեամբ անոր արդիւնաւոր վախճանին, իր համարատուութիւնը ընելու համար Հայ Հանրապետութեան:

Ի դիմաց Հայ Հանրապետութեան Անկախ. Փոխառութեան վարիչ՝ ԱՐԱՄ ԻՆՃԻՏԻՆԱՆ

4.— ՊՈԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐԿԻՆ ՆԱՄԱԿԸ ԲԻՒԹԱՆԻՈՅ ՇՐՋԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒՆ

ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆ ՀԱՅՈՑ, ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ տպագրեալ վերտառութեամբ պաշտօնաթուղթի վրայ, ձեռագիր, սեւ մելուքով, մէկ երես (չափ՝ 21,5x27,5 սմ.):

Համար 5656 Կ. Պոլիս, 27 Նոյեմբ. 1920

Գերաշնորհ Սրբազան Առաջնորդին Պանսրմա - Պալլըքեսէրի եւ Գեր. Առաջն. Փոխանորդին Պրուսայի

Հայկական Անկախութեան Փոխառութեան Կեդր. Յանձնատնոցի կողմէ լիազօր կարգուած է Գրամատոյց Տիար Մ. Վերածին, որ ամբողջ Պալլըքեսէր -

Պանսրմայի եւ Պրուսայի գաւառները պիտի շրջի նոյն փոխառութեան գործին համար Յանձնատնոցներ կազմելու, հաւաքոյթներ սարքելու եւ հարկ դատուած միջոցները կիրարկելու: Հետեւաբար կը յանձնարարենք որ նկատի ունենալով խնդրին մեծ կարեւորութիւնն ու ազգային անհրաժեշտութիւնը, հաճիք Ձեր բոլոր նիւթական ու բարոյական միջոցները տրամադրել նորին սիրելութեան, եւ յամենայնի աշակցիլ իրեն, որպէս զի կարողանայ անիկա իրեն յանձնուած այս կարեւոր աշխատութիւնը ի գլուխ հանել արդիւնաւորապէս ու վերադառնալ կատարեալ յաջողութեամբ, որ համապատասխանէ նոյն գաւառներու մեր սիրելի Հայութեան ազգային վառ զգացմանց:

Մնամք ողջունել սիրոյ Աղօթակից Պատրիարք Հայոց ԶԱԽԷՆ ԱՐՔԵՊ.

5.— Հ. Հ. Ա. Փ. ԿԵԴՐ. ՅԱՆՁՆԱՌՈՒՄԲԻ ՆԱՄԱԿԸ Մ. ՎԵՐԱԾԻՆԻՆ

Թիւ 1 եւ 2 նամակներու պաշտօնաթուղթի վրայ, մէկ երես:

Կ. Պոլիս, 1 Դեկտեմբեր 1920

Յարգելի Տիար Մ. Վերածին

Պանսրմա

Յարգելի Տիար,

Հ. Հ. Անկախութեան Փոխառութեան Բիւթանիոյ Հայաբնակ քաղաքներու մէջ կազմակերպութեանը մասին Ձեզի տրուած հրահանգներուն իբրեւ շարունակութիւն կը խնդրուի որ հետեւեալ կէտերը եւս աչքի առջեւ ունենաք.

1.— Այն ամէն վայրի մէջ որ Փոխառութեան Յանձնատնոցով մը կը կազմէ, Յանձնատնոցի անդամներուն անունները անմիջապէս հաճեցէ հաղորդել մեզի, աւելցնելով միանգամայն անոնց իւրաքանչիւրին մասին տեղեկութիւններ, իրենց հրապարակի վրայ վախճած համարակն, նիւթական կարողութեան եւ առեւտրական պարկեշտութեան վրայ:

2.— Արձանագրութեան թուղթերու վրայ փակցուած մէկ զրուչնոց եւ տրուած առժամեայ ստացադիրն, ինչպէս նաեւ այս վերջնոյն փոխարէն Օսմ. Առեւտր. Դրամատան կողմանէ տրուելիք ստացադիրն վրայ փակցնելու անհրաժեշտ եղած քանակական փարանոց զրոյմաթուղթերուն փոխարէնը, ընդամէնը երկու զրուչ իւրաքանչիւր արձանագրողէ պէտք է զանձեն յանձնատնոցները, եւ Դրամատուն զրկուած գումարներով միասին զրկեն:

Յաջողութիւն մաղթելով Ձեզ մնամ Ի դիմաց Հ. Հ. Ա. Փ. Կ. Յ. վարիչ՝ ԱՐԱՄ ԻՆՃԻՏԻՆԱՆ

6.— Հ. Յ. Դ. ՊԱՆՏՐՄԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱՄԱԿԸ Մ. ՎԵՐԱԾԻՆԻՆ

Գրուած մանիշակագոյն մելանով, Յամակի 20x26 սմ. չափի գծաւոր պարզ բուրձի վրայ, մէկ երես:

Հ. Յ. Դ.
Պանտրմայի Կոմիտէ
Թիւ 14
7 Դեկտ. 920

Մեծապատիւ Տիար
Պր. Վերածին
Լիւդուր ներկայացուցիչ
Հ. Ա. Փոխառութեան
Կեդր. Յանձնարարութի

Տեղւոյ Հ. Ա. Փոխառութեան Յանձնարարութի Հ. Յ. Դ. Դաշնակցութեան ներկայացուցիչներէն Պր. Թաղուոր Տ. Փափագեան հրատարած ըլլալով սոյն յանձնարարութի անդամակցութենէն, Կոմիտէն յիշեալ տեղ նշանակած է Պր. Յարութիւն Կ. Արղումանեանը, որով կը խնդրենք իբր այդ հրատարակէ գինքը սոյն յանձնարարութի անդամակցութեան:

Ընդունեցէք մեր յարգանաց հաւաստիքը:
Կոմիտէի կողմէ
ՆԻԿՈՂՈՍ ՊԱՆՏՐՄԱՅԻ (ԵԱՆ)

7.— ՅԱՆՎ ՊԱՆՏՐՄԱՅԻ ԵՒ ԷՏԻՆՆԻԿԻ Հ. Հ. Ա. Փ. ՅԱՆՁՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՆՆԱՄՆԵՐՈՒ

Երկու տարեք բուրձերու վրայ, կցուած թիւ 6 նամակին: Երաբանիւր անուան զիստաց Մ. Վերածին կատարած է մատիտով նախագրութիւններ ենթակային գրազմումքին մասին, զորս գանց կ'ընենք:

- ա) Պանտրմայի Յանձնարարութի
- Տեարք
 - Պետրոս Տուտի Փափագեան
 - Տօքթ. Համարձու Քաղաքեան
 - Տիգրան Պալապանեան
 - Կարապետ Ուզունեան
 - Գրիգոր Աբգարեան
 - Յարութիւն Հաճի Պողոսեան
 - Հաղարոս Յովնանեան
 - Կարապետ Տէր Յովհաննէսեան
 - Պողոս Գոստիկեան
 - Գրիգոր Գաղանձեան
 - Յարութիւն Սազրզեան
 - Յարութիւն Անտէլէրեան
 - Նասիպ Երիւնեան
 - Լեւոն Նէվրուզեան
 - Արարհամ Յկ. Արամեան
 - Հրանդ Հոտարիկեան

- Վաղարշ Ուրբաթեան
- Մ. Ոսկիան Արապաճեան
- Թաղուոր Կէլիպօլեան
- Յովհաննէս Թէրլէմէզեան
- Թաղուոր Մինարէճեան
- Թովմաս Յակոբեան
- Յարութիւն Արղումանեան

- բ) Էտիմիկի Յանձնարարութի
- Ա. Ատենայեան Տօքթ. Յարութիւն Պաղարկեանեան
- Բ. Ատենայեան > Յկր. Փանոսեան
- Բ. Ատենայեան Նաղարէթ Սելճիկեան
- Ա. Ատենայեան Սամուէլ Վրէժունի
- Ա. Ատենայեան Գառնիկ Քէօսէեան
- Գանձապետ Լեւոն Քէօլէեան
- Գանձապետ Խաչատուր Քէօլէեան
- Գրիգոր Սրապեան
- Կարապետ Փիլիպոսեան
- Թաղուոր Բակլաճեան
- Հրանտ Քէօսէեան
- Գարեգին Փիլիպոսեան

3.— ՀԱՃՆՈՅ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս բունցաւ ներածական բաժնին մէջ, այս ընդհանուր յանձնարարութի երբորք եւ վերջին մասը կը կազմէ նորոգ համագոյնեայ ընկ. Աստուր Զայեանի շահեկան օրագրութիւնը (8 Մարտ — 31 Հոկտեմբեր 1920), որ կը վերաբերի Համնոյ 1920ի ուրբա-սեայ գոյամարտին:

Ենած Համնոյ 1892ին, մեր ողբացեալ ընկերը 1920 թուականին սպայ էր (տեղակալ) Կիլիկիոյ Փրանսական գրաւման բանակին մէջ եւ կը գտնուէր Ատանա: Ինչպէս օրագրութիւնը ցոյց կու տայ սակայն, ան Ատանա կը գտնուէր մարմնով միայն, մինչ իր միտքն ու հոգին Համնոյ էին, իրենց կեանքն ու պատիւը հերոսաբար պաշտպանող իր հայրենակիցներուն հետ: Եւ այնտեղ, դաշտային կիլիկիոյ մայրաքաղաքին մէջ ու շրջակայքը, ընկ. Զայեան մտնակից էր այն բոլոր ճիգերուն ու ճանապարհներուն, որոնք ի գործ կը դրուէին, զօրախտաբար յաճախ ոչ դրակամ արդիւնքով, օգնակամ ուժ, ռազմաւթերք, պարէն կամ որեւէ տեսակի օժանդակութիւն հասցնելու համար պաշարուած Համնոյն: Ան միտմանակ իր գործն մասնակցութիւնը կը բերէր Հ. Յ. Դաշնակցութեան կազմակերպական եւ մարտական ճիգերուն: Շահեկան է Համնոյ գոյամարտին մտնէն, բայց դուրսէն հետեւողի մը այս օրագրութիւնը, — անձի մը մանուկն՝ որ, իբրեւ յաւատեղեակ ֆրանսական շրջանակներու տրամադրութիւններուն եւ կեցուածքին, կու գայ ուրիշներէ ետք անգամ մը եւս վկայել՝ թէ Կիլիկիոյ մէջ ինչե՛ր կրնար ընել հայ ազգի մեծ դաշնակիցը, եւ ի՞նչ ըրաւ...:

«Ատանայէն դիտուած» օրագրութիւնը տարտել էր հոգի, ընկ. Ա. Զայեան վերջին մասի մը մէջ կը ճակարակէ Համնոյ կռիւնքը, իր տեղեկութիւնները քաղելով անշուշտ վերապրողներէն բերձէն, կռիւններուն անմիջական կերպով յայտնող շրջանին:

Երկու բաժնիներն ալ կու տանք ամբողջութեամբ եւ անձեռն իրաւաւորութեամբ, յորդելով մեր ընկերոջ յաճախ բոլորովն անձեռնակ մտքերն ու գնահատումները: Աստուր Զայեանի այս գրութիւնը հարուստ հուժ միւր կը հայրաբայքէ 1920 թուականի կիլիկիոյ, եւ ի մասնաւորի Համնոյ ու յարակից շրջաններու, մեր ժողովուրդի ազգային, քաղաքական, յարաբերական եւ մարտ-

կան գործունէութիւնը միջազգային շահերու եւ քաղաքական շահեկան իր ամբողջական պարունակին մէջ կշռելու եւ ուսումնասիրելու կոչուած ապագայ պատմաբանին համար:

Կիլիկիայէն ետք, մեր ողբացեալ ընկերը իր ազգային եւ կուսակցական օգտաշատ գործունէութիւնը շարունակած է Լիբանանի մէջ, հաստատուելով Պէյրութ: Եզած է հիմնադրուելու մէջը Համնոյ Գոյամարտ Միութեան եւ Լիբանանի դաշնակցական անդամակցութիւնը՝ Փիլիկի: Բազմաթիւ անգամներ անդամակցած է Հ. Յ. Դ. Լիբանանի կեդր. կոմիտէին, Գաւառական ժողովին եւ ազգային այլ մարմիններու: Մեռաւ Պէյրութ, 6 Ապրիլ 1922ին:

Իր օրագրի լայն յուսանցներուն մէջ, ընկ. Ա. Զայեան կու տայ յաճախ մանրամասնութիւններ, կ'ընէ յաւելումներ, կը պարզէ անձեռնակ տպաւորութիւններ եւ դատումներ (օրագրի գրուած է սեւ մելանով, յուսանցի յաւելումները՝ կապոյտ): Այդ բաժնիները կու տանք իւրաքանչիւր օրուան օրագրի բաժնէն ետք, աւելի մեր տառերով:

Ամբողջութիւնը կը կազմէ 15.50x20.50 սմ. չափի փոքր տետրակ մը, 71 էջ գրութեամբ:

Հ. Յ.

ՀԱՃՆՈՒ ՈՒԹԱՄՍԵԱՅ ԳՈՅԱՄԱՐՏԸ

ԱՏԱՆԱՅԷՆ ԴԻՏՈՒԱԾ Մարտ 8 — 15 Հոկտ. 920

8 Մարտ.— Համնոյ Ինքնապաշտպանութեան Կոմիտէի անունով պ. պ. Միհրան Գոյեան, Յակոբ Զայեան եւ Սարգիս Ճէպէճեան ստորագրութեամբ հեռագրով մը կ'իմացուէր Համնոյ հիւսիսային-արեւմտեան ճակատէն Ռուսու գիւղին եւ Համնոյ լեռներու մէջ, Զարտախ եւ կէօֆ-Թէփէ ըստուած տեղերը թշնամիի հետքեր երեւցած ըլլալը: Նախանշանն էր այս Համնոյ պաշարուածին:

9 Մարտ.— Հեռագրով կ'իմացուէր կռիւն շարունակուածը, ճիւղներու մէջ, Համնոյն 2-2½ ժամ հեռաւորութեան վրայ. կը յայտնուէր Պետրոս Թէրզեանի (սպայ), Յ. Րէճէպեանի եւ Ա. Սարհատեանի Մաղարա գիւղերուն մէջ իրենց մարտիկներով անյայտացուածը:

Ատանան մասնաւորապէս եւ Համնոյնը ընդհանրապէս իրար անցած էին. Համնոյ Հայրենակցական Միութիւնը թէ՛ Փրանս. կառավարութեան եւ թէ՛ Ազգ. Միութեան ձեռքով զիմուումները անպակաս կ'ընէր, Համնոյ գաղթեցնելու Միւս եւ կամ զին. ոչ զրկուելու համար: Արդիւնք ըլլալով հեռագրուեցաւ որ զիմուումն քաջարար, իրենց մասին կը խորհուի:

10 Մարտ.— Համնոյ Հայր. Միութ. նախաձեռնութեամբ եւ Պետրոս եպս. Սարահանի նախադաշնութեամբ Մ. Դ. Հ. կուսակ. ակումբը հաւաքոյթի մը մէջ խօսեցան եւ ժողովուրդի մտքերը պարզեցին Համնոյ մէջ եղած զին. պատրաստութեան եւ անոնց օգնութեան հասնելու մասին: Կամաւորագրուելու տրամադրութիւնը ընդհ. առմամբ լաւ էր: Այդ օրն իսկ առա-

ջին դժբախտութիւնը ծայր տուաւ դժգոհատ Համնոյ անկումը բնորոշող եւ կամ գործի անյաւոյնութեան իրբեւ նախանշան.— Մ. Դ. Հ. ակումբի տախտակամածը հո՞ թաղութեան շրջանակով սիւնը կոտրեցաւ եւ փլու. Պետրոս եպս. Սարահանի ոտքը ցաւեցաւ եւ ուրիշ մէկ քանիներու մարմնոյն վրայ թեթեւ վէրքեր յառաջ եկան: Կամաւորագրուելու արձանագրութիւնները սկսան. այդ օրը 3-400 հոգի արձանագրուեցան: Այս հաւաքոյթի արդիւնքին Փրանս. իշխանութիւնը եւ Ազգ. Միութիւնը հաղորդակից պահուեցան: Կառավարութիւնը զին. պիտոյք տալ խոստացած էր Ազգ. Միութեան:

11 Մարտ.— Համնոյ հեռագրուեցաւ երէկուան հաւաքոյթին եւ Փրանս. իշխանութեան բարի? տրամադրութիւնները համնոյնը օգնութեան փութալու մասին: Համնոյ մէջ պատրաստութիւններ կը տեսնուէին, սակայն անոնցմէ մեծ մասը — խոհուն դասակարգը —, տեղակալ Զայեանի ստորագրութեամբ հեռագրած էր, որ իրենք կ'ուզեն առանց կոուի, քանի որ թշնամիի դեռ 2 ժամ հեռաւորութեան վրայ էր Համնոյն, դաղթել զէպի Սիւ խմբոյին. հրահանգ կ'ուզուէր Փրանս. իշխանութեան: Ազգ. եւ Հայր. Միութիւններն ալ տեղեկ էին ստոր: Պ. Շմաւոն Փոստոյեան եւ ես (Ասատուր Զայեան) մասնակի խնդրով ներկայացանք Ազգ. Պատ. ներկ. Տիար Տամատեանի, յայտնելու համար Համնոյ զին. տեսակէտով շատ տկար եւ հետաւարար կոուելու անկարող վիճակը: Պատրաստ գէնքերու թիւն ալ ըսինք, որոնց թիւը 500ը չէր անցնէր: Նոյնպէս թելադրեցինք որ, Համնոյնը խնդրանքին առաջ երթալու համար համազգային ընդհ. ժողով մը գումարէ այդ օրն իսկ: Ժողովի որոշումով, իրենց համնոյնը հեռագրուեցաւ շիֆրէյով, որ անմիջապէս ճամբայ ելլեն Միւս. անհատներ եւս իրենց ընտանեկան պարագաներուն հեռագրեցին ժամ առաջ ձգելով ամէն ինչ ճամբայ ելլել: Կառավարութեան եւս զիմում եղաւ, որպէսզի զօրախումբ մը Միւսն մինչեւ Յէքէ ճամբուն պաշտպանութեան յատկացնէ, քանի որ անոնք կը խոստանային մինչեւ Յէքէ իրենց ոյժերով հասնիլ: Կառավարութիւնը ոչինչ չպատասխանեց:

12 Մարտ.— Կառավարութիւնը անպաշտօն կերպով կողմնակից էր Համնոյ պարպուելուն: Մենք Սիւ ալ հեռագրեցինք, որպէսզի պատասպարան եւ ուսուցիչ պատրաստեն իրենց տունն ու տեղը լքող Համնոյններուն:

Համնոյ եւ Ատանայի հեռագրական գիծը բաց էր Յէքէի ճամբով: Յէքէի մէջ տիրահռչակ ձեզմիւր այդ ատեն Փրանսացիներու կողմն էր դեռ: Օրուան մէջ 2-3 հեռագիր կը ստացուէր եւ կը արուէր: Մինչեւ իսկ չէինք հաւատար մեր հեռագրով տուած լուրերուն եւ այդ կերպով մեր խղճին դէմ էր որ կը գործէինք:

13 Մարտ.— Գ. Շ. Փոստոյանին հետ պ. Տամատեանի դացինք, որ իմանանք թէ Ֆրանս. իշխանութիւնը Սիսէն մինչեւ Ֆէքէի դիժը զինուոր զրկած էր թէ ոչ: Գ. Տամատեանի դէմքը փայլուն էր, (յեղափոխական մարդ էր, ոչ քաղաքագէտ, միշտ ալ դէմ էր Հաճընը դաղթել տալու, ան կ'ուզէր, որ Հաճըն՝ դաշտային Կիլիկիոյ դուռը և լեռնային Կիլիկիոյ պատնէշը, կոռէր, մեռնէր, և կամ յաղթական՝ ամբողջ Կիլիկիոյ անկախութիւնը կերտէր: Նամակ մը կարդաց. պաշտօնական էր. պ. Պրեմոն Ֆրանս. իշխանութեան Կիլիկիոյ քաղաքային բաժնի ընդհ. կառավարիչը, կը գրէր որ, «ամօթ է, որ քաջ Հաճընը առանց կոռուի լքէ իր հայրենիքը, ինչպէս կ'ուզէր որ արդարանայ այս ժողովուրդը Կիլիկիոյ ապատարուածի պահանջքին մէջ. պէտք է անպայման հոն մնայ և ճակատ ճակատի կոռուի թշնամիին դէմ, ու մենք, Ֆրանս. իշխանութիւնը, Ձեր կողմանէ հաւաքուած կամաւորական խումբէն իւրաքանչիւր երկու օրը երկու հարիւրական հոգի, անոնց օգնութեան պիտի զրկենք զինելով ամէն կարգի գէնքերով և պարէնով. ուրեմն գործի լծուեցէք և մինչեւ երկու օր առաջին խումբը, 200 հոգի ճամբայ հանեցէք Միսիսի դժով, ուրտեղ ևս Ֆրանս. իշխանութիւնը պէտք եղած դիւրութիւնը պիտի տայ»:

Ես (Ա. Զ.) և պ. Փոստոյանի դունատուեցանք. մենք զիտէինք Հաճընի մէջ եղած պաշարը, անոնք չէին կրնար առառուելն երեք ամիսէն աւելի դիմադրել: Այդ վայրկեանին հայրենիքին մոխրակոյտը երեւակայութիւնս պատեց: Երէկ մեր ընտանեկան պարագաներուն և ինքնապաշտպանութեան կոմիտէին հեռագրուած էր «լքել Հաճընը և խմբովին ճամբայ կլլել դէպի Միս»:

Մեր ամբողջ հակառակփաստերը, թէ Հաճընը չի կրնար կոռուիլ, չունի պէտք եղածը, և արդէն անոնք ճամբայ ելած կ'ըլլան մեր երէկուան հեռագրով ևս., բոլորովին պարապ անցան: «Այո, պիտի կոռուին և մեռնին հակառակ պարագային, ազգին շահը այդ կը պահանջէ» եղաւ պ. Տամատեանի վերջին խօսքը:

Նորէն համազգային ժողով գումարել պէտք էր: Իրիկուան ժամը 9ին Ազգ. Միութեան շէնքին մէջ ժողովը գումարուած էր: Վերջին որոշում. «Հեռագրել որ զիմադրեն և կոռուին քաջարար»: Ընդարձակ հեռագիր մը խմբադրուած էր. ինծի վիճակուած էր Հաճնոյ լեզուի փոխել և Ֆրանսերէն տառերով հեռագրել ինքնապաշտ. Կոմիտէին: Իմաստը այս էր. «Այս ձիւնին բուքին պաղթելու ատեն իրեն յատուկ որոշ գոհերը կրնայ ունենալ: Դուք հայու վայել և հաճընցիներու քաջութեամբ կոռուեցէք. իւրաքանչիւր երկու օրը երկու հարիւրական հոգի պիտի զրկուի Ձեզի օգնութեան. օղանաւ մըն ալ պիտի դայ Ս. Սարգիսի բաց դաշար. դուք ներմակ խոշոր խաչ մը շինեցէք, որ իր բերած պիտոյքները և նամակները ձգէ»: Ստորագրուած էր պ. Տամատեանէ, յարանուանութեանց պեւերէն, Ազգ.

Միութեան և Հայր. Միութեան Վարչութեան դիւաններէն: Ժամը զիշերուան 12½ին հեռագրուեցաւ. հեռագիրը Հաճըն հասած էր. պ. Կարապետ Էլիսանեան ստացած ըլլալը իմացուց. ու հինգ վայրկեան չանցած՝ երբ կրկին կը հարցուէր, անպատասխանի մնաց. Ֆէքէն հեռագրաթելը կտրած էր. վերջին հեռագիրը և վերջին խօսքը Հաճընի հետ ուղղակի միայն «այո» մըն էր: Յարաբերութիւնը խղուած էր:

14 Մարտ.— Ուրիշ ելք չկար. սրտցաւ հաճընցիին և Հայր. Միութեան կը մնար կամաւորական շարժումը զօրացնել: Եկեղեցւոյ զանգակը անընդհատ կը պարուէր: Կամաւորներու թիւը 200էն աւելի էր:

15 Մարտ.— Յրանս. իշխանութիւնը առաջին հերթին 500 հրացան (մի հարուած), պէտքի չափ փամփուշտ և պարէն տուաւ (հաց, շուքիա, պուլըր, իւղ, միս ևս.): Իրիկուան դէմ քէմբը մեծ վրանի մը մէջ անցուց 200 հոգին, հազուստ և կապուստ ստացաւ: (Իմ տրամադրութեանս տակ Հ. Բ. Ը. Մ. ի կողմէ զրկուած կը մնար, Հաճըն զրկուելու և կարօտեաններուն բաժնուելու համար:)

16 Մարտ.— Առտուան թրէնով Ա. խումբը (200 հոգի) Միսիս մեկնեցաւ, ես ալ գացի կէսօրին մօտ: 20-25 հոգիէ բաղկացեալ ձիւտորներու(*) խումբը հրամանատար Չանկալեանի և Արմաղանեանի առաջնորդութեամբ Միսիս հասան: Չինուորին կորովը տեղն էր: Պատրաստութիւն կը տեսնուէր, երկրորդ օրը ճամբայ հանելու:

18 Մարտ.— Ա. խումբը (200 հոգինոց) այսօր Միսիսէն մեկնեցաւ, Միս երթալու և անկէ Հաճըն անցնելու համար: Ատանա Բ. խումբը պատրաստուած էր. հաճընցիութիւնը իր Հայր. Միութիւնով ամենամեծ շարժումը ստեղծած էր. համազգային շարժում մըն էր, որ տեղի կ'ունենար:

19 Մարտ.— Բ. խումբը պ. Պօղոս Թուրքարզիսեանի առաջնորդութեամբ Միսիս եկաւ, երկու օր մարզուեցաւ: Գ. Պօղոս Քէյրիշեանը միասին էր, փոխ տեղակալի աստիճանով:

21 Մարտ.— Բ. խումբը մեկնեցաւ: Գ. Պօղոս Քէյրիշեան՝ կարծես նախազգացում մ'ունեցաւ. «Ես պիտի մեռնիմ. երկու տողով կտակս գրեմ և մեռնելէս վերջ՝ Պոլիս սիրուհիս Տօթթ. Նազդաշեանի աղջկան զրկէ» ըսաւ, գրեց, գոցեց պահարանի մէջ ու մեկնեցաւ: Այս

(*) Ձիերը և 2 կառք Հայր. Միութիւնը իր գրասնով գնած էր:

խումբին մէջ հաճընցիութիւնը քիչ էր: Ես Միսիս եմ, առաքման, մատակարարական և գէնքի բաշխման գործը ստանձնած եմ:

22 Մարտ.— Գ. խումբը Միսիս եկած էր. պ. Կարապետ Կէօկտէրէլեանի հրամանատարութեամբ և պ. Յակոբ Պաշիկեանի (սպայ) հսկողութիւնով: Որբախոյ պ. Հերեանն ալ իբրեւ պարզ զինուոր, 50 տարեկան, եկած էր: Այս խումբին պակասը շատ էր: Լրացնելու համար քանի մը օր սպասել պէտք էր: Ձինուորները մարզանք կ'ընէին: Հրամանատար պ. Կ. Կէօկտէրէլեան Միսիսի մէջ իր երկայն մօրուքը կը ցուցադրէր, թուրքերու դայրոյթը զրգոելու աստիճան: Թուրքերը Միսիսէն միշտ յարաբերութեան մէջ էին ֆեմալակառնելու հետ, որոնք այնքան ալ հեռու չէին Միսիսէն: Տեղացի թուրքերը ընդհ. առմամբ լաւ վերաբերում ցոյց կու տային առ անի:

23 Մարտ.— Բ. խումբը Միս հասած էր, առաջինն ալ հոն էր. Ֆրանս. իշխանութիւնը չէր ուզած Հաճընի օգնութեան փութալ. ժէնէրալ Կուրոյի մասնաւոր հրահանգով, Հաճընի օղնական ոյժ զրկել արգիւտուած էր. ըստ Ֆրանսացիներու Հաճընը պէտք էր մինակը ձուլուէր և մեռնէր ի հեճուկս թուրքերու: Տեղն է ըսել որ Սիսի մէջ, իրենց որոշ վերապահումներով Միսի հայութիւնն ալ այնքան լաւ տրամադրուած չէ եղած Հաճընի օղնութեան փութալու համար, Միսի մէջ հաւաքուած ոյժերը ձեռքէ հանելու տեսակէտէն: Միսն ալ պաշարումի վտանգին տակ էր:

Հաճըն 1919ի ամառը խումբ մը դացած էր, Յովսէփ Մեծատուրեանի խմբապետութեամբ. այս խումբը և կարգ մը ուրիշ հաճընցիներ Հաճընի ապագայ փորձանքներու և դժբախտութեան նախադուռը պատրաստեցին: Միսի կառավարիչ հարիւրապետ Մ. Թէոյարտայի հրամանով՝ վարչակազմէն այս խումբի մէկ մասին Սիս կանչուելը յարմար տեսնուած էր: Միսի մէջ ալ իր դերով ծանօթ պ. Յովսէփի խումբի գործունէութիւնը, զինքը չէր կրնար Միսի մէջ պարփակել. պէտք էր դուրս դալ, իր մորթը ազատելու համար: Միսի Ազգ. Միութիւնն ալ Ֆրանսական իշխանութեան հայերու և մասնաւորաբար Հաճընի հանդէպ բռնած աննպաստ դիրքին համար որոշեց էր Ատանայի Ազգ. Միութիւնը տեղեակ պահել: Կորոշուի Յովսէփը զրկել: Հաճընցի Տումանեան պ. Յովհաննէսի և պ. Պօղոս Քէյրիշեանին հետ ճամբայ կ'ըլլէ Յովսէփ, թումուլը կը պաշարուի և ճարահատ բերդը կը բարձրանայ խմբով: Հող, պ. Պօղոս Քէյրիշեան իր միամտութեամբ կը յանձնուի մօտակայ զիւղը քեմալիստ սպայի մը, ուր իր կարգին քիչ յետոյ կը սպանուի, իսկ միւս երեքը, Յովսէփ, իր զինուորը, Կրպտ. Արքեան և պ. Տումանեան զիշերանց կը յաջողին Միսիս հասնել մերկ վիճակի մէջ: Հրամանատար Կ. Կէօկ-

տէրէլեանի անխոհեմութեամբ, այս տղաքը, բացի Յովսէփէն, ձիւտանէն եղած թէյէֆոնի մը վրայ մասնաւոր պաշտօնով քարթիթէն Շըվետարի, որ Միսիս եկած էր, յանձնուեցան և Ատանայի բանտը առաջնորդուեցան:

27 Մարտ.— Գ. խումբը ճամբայ ելաւ դէպի Միս. Թումուլը պաշարուեցաւ և հրամանատարի անճարակութիւնով 6 հոգիի զոհ և կորուստ տեղի ունեցաւ. խումբը զիշերանց նահանջեց, պ. Հերեանի քաջարար կուր մղելուն և խոհեմութեան շնորհիւ:

Խումբը բարոյալքուած էր: Գ. Կէօկտէրէլեան իբրեւ անկարող ետ կանչուեցաւ: Խումբի մնացած բնկորները զօրացնելու համար Ատանայի մէջ Հայր. Միութիւնը կարելի աշխատանքը տարած էր:

30 Մարտ.— Ձիւտորներու լաւ խումբ մը 40 հոգիէ բաղկացած, պ. Մկրտիչ Երբեմեանի և սպայ պ. Վահան Փորթուգալեանի առաջնորդութեամբ Միսիս հասաւ:

1 Ապրիլ.— Միսէն պ. Չանկալեանի հետ դացող ձիւտորներու խումբէն 8-10 հոգի Միսիս հասան: Ծամբան որեւէ արգելքի չէին հանդիպած բացի փոքր մէկ երկու հոգինոց թուրք չէթէներու խումբի հետ ունեցած ընդհարումներէն: Ասոնց արտօնուեցաւ Ատանա երթալ և երկու օրէն վերադառնալ: Խումբը կը մարզուէր. Ֆրանս. իշխանութիւնը այս անգամ աւելի վճռական կ'երեւար խումբը օր առաջ Միսիսէն ճամբայ հանելու համար:

7 Ապրիլ.— Միսիսցի մասնաւոր վարձկան թուրքերու միջոցով թուրք չէթէներու մասին տեղեկութիւններ ստացուած էր: Դ. խումբը զօրացուած էր. Ատանա դացող, Միսէն վերադարձած ձիւտորներու խումբն ալ եկած էր, ամէնքն ալ կոռուի մարդ: Չաթցի և Հաճընցի լաւ տղաք:

Այս խումբը իրեն սովորութիւն ըրած էր 6-7 օրէ ի վեր զիշերները մարզանք ընել: Խումբը ոչ մէկ բանէ տեղեկութիւն չունէր: Գ. Մկրտիչ Երբեմեան, պ. Վ. Փորթուգալեան և Ես (Ա. Զ.) որոշեց չիք այդ օրը խումբը զիշերանց ճամբայ հանել մարզանքի երթալու անուան տակ. անոր համար որ նախ թուրքերը չիմանան, ինչպէս եղած էր մեծամօրուհ հրամանատարի օրով, յետոյ խումբին մէջ, եթէ երբեք անսիրտներ կան, չփախին: Միայն 10 ժամուան կերակուր տուի երկու կառքի մէջ: Մնացած պարէնը և ռազմամթերքը յաջորդ օրը պիտի զրկուէր:

Խումբը ճամբայ ելաւ: Գիշերուան ժամը 7½ էր:

8 Ապրիլ.— Առտու կանուխ 10 կառք Ատանայէն հասաւ, պարէնը և ռազմամթերքը բնացուած էր. ժամը

Յին կը սպասէի, Թումուլուէն դալիք հրամանին, կառքը ճամբու դնելու համար:

Ճիւղուն գետին վրայէն թանձր մուխ մը պատած էր. սա նշան էր մեր տղոց յաջողութեան. բայց սուրհանդակը կ'ուշանար: Միսիսի թուրք միւտիր, Ալի պէյ անուն արպանացի մը, լաւ էր մեզի հետ. ան ալ կուհեր էր, առտուանց քաղաքը մարդ չկայ. կամաւորներու շարժումը չերեւիր: Կանչեց զիս. «Այս գիշեր հայերը դիւղացի մը սպաննած են. տէրը եկած է կը բողոքէ»: Ես՝ «մերինները մարդասպան չեն, հաւանաբար այդ խեղճ շօպանը իրենք թուրքերը սպաննեցին հայերու անունը արատաւորելու համար Փրանսացիներուն քով» պատասխանը տուի:

Պատրաստ ձի մը հեծայ եւ հետս զինուոր մը առնելով Թումուլուի ճամբան բռնեցի, սուրհանդակը քաղաք չմտեցնելու նպատակով: Մուխը հետզհետէ կը շատնար. սա նշան էր, թէ մերինները բերդը գրաւած են եւ մտակայ Արմաղաւ գիւղը կ'այրեն: Միսիսէն ժամ մը հեռացայ. երկու ձիաւոր հեւ ի հեւ կը վազեն դէպի ինձ, դաշտը ոչ ոք չկար, ամայի էր: Սուրհանդակն էր: Պոտիկ ընդհարումէ մը վերջ բերդը դրաւուած եւ Յ դիւղեր այրուած էին. սուրհանդակը կու պարէնը եւ ռազմամթերքին աւելցած մասը տանելու:

Ես Միսիս մտայ, կառքը ճամբայ կը հանէի, յանկարծ օթոյով Փրանս. սպայ մը, դարբիթէն Տրոմարը եկաւ. արդիւնց կառքին մեկնումը եւ ինձի ալ խոտիւ հրահանգեց, որ լուր դրկեմ եւ խումբը ետ կանչեմ: Պ. Վահան Փորթուպախանին ինքը Փրանսերէն եւ ինձի ալ հայերէն երկտող մը գրել տուաւ, խումբին անպայման վերադարձը յայտնող: Սուրհանդակը դնաց: Ճիւղանի թուրքերը բողոքը էին սպաննուած չոպանին, այրուած դիւղերուն եւ բերդի դրաւման դէմ, հայերը ցոյց տալով իրեն աւերիչ եւ քանդող բարբարոս ասոնք այն թուրքերն էին, որ Թումուլուէն փախեր էին դէպի ձիւհան այդ օրը, ասոնք այն թուրքերն էին որ պ. Պոզոս Քէյիշեանը սպաննեցին եւ գացին ձիւհան բողոքելու, որ հայ չէթէներ պաշարեր եւ բերդը եւ խաղող բնակչութիւնը կը կողոպտեն եւ կը կոտորեն: Փրանսացիներու շփացած դաւակը:

Գիշեր եղաւ ժամը 10, խումբը չեկաւ. պ. Տամատեան Փրանսերէնով կը հեռադիւր. «Պ. Պրեմոնի կողմանէ եղած պահանջներ վրայ մարդ դրկէ եւ խումբը կանչել տուր»: Գարբիթէն Տրոմար քովս եկաւ, իմ հեռագիրը ստանալս հարցուց. իրեն ալ պ. Պրեմոնի հեռագրուած էր ինձի հեռադրուած ըլլալը: Տրոմար այնպէս կը կարծէր որ ես սուրհանդակը չէի դրկած խումբը կանչել տալու: Կը սպառնար զիս պատերազմական ատեան կանչել տալ, եթէ խումբը մինչեւ առտու չվերադառնար:

Պարէնը եւ կառքերը դրաւուած էին, վախնալով թէ մի գուցէ ես զազանի կերպով դրկեմ խումբին, որոնք

պաշարը իրենց հետ ունենալով այլեւս չվերադառնան բնաւ:

Լէյզնէն չորս տղայ, լաւ եւ քաջ հայեր՝ պ. պ. Պան, Մ. Շահպաղ, Ժաղ եւ Վէքիլեան ինձի սկզբի օրէն իրրեւ օգնական տրուած էին: Մթերանոցը 6-700 դէնք եւ փամփուշտ կայ. կանխադրացում մը ունեցայ, որ առտու կանուխ Տրոմարը կրնայ դրաւել: Գիշերանց այս չորս տղոցմով, 500էն աւելի դէնք վերցուցինք եւ հողի փոսերու մէջ թաղել տուի, որ յետոյ միջկուցական զին. Մարմին փոխանցեցին:

9 Ապրիլ. — Արշալոյսին, դուռը ծեծուեցաւ, արթնցայ. պ. Վահան Փորթուպախանն էր. յոգնած եւ ընկճուած երեւոյթ մը ունէր. անմիջապէս հանդատացուցի: Թումբը ցիրուցան կու դար: Մեռել եւ վիրաւոր ալ կար: Պ. Երրեմեան վիրաւորուած էր ձախ ուսէն, ծանր վիրաւոր էր պ. Եղիան, չաթցի Անդրանիկի զինուորներէն յաղթանդամ մէկն էր: Միսիս վերադարձող ձիաւոր խումբին կը պատկանէր: Երկու տղայ ազատելու համար, թուրքերու վրայ խոյացած ատենը թշնամի զնդակէ մը վիրաւորուած էր. Ատանա փոխադրել տրւինք եւ հրահանգուցին մէջ մեռաւ:

Տրոմար ամբողջ խումբը զինաթափեց, պիտոյքները գրաւեց:

Թումբէն 40-45 հողի պակաս էր, պ. Լեւոն Փորթուպախանի ընկերակցութեամբ: Բերդէն չէին կրցած իջնել դիւղերանց: Թէլէֆոնով անմիջապէս տեղեկութիւն տուի Ատանա Աղլ. Միութեան, յայտնելով անոնց Թումուլուի մէջ պաշարուած ըլլալը, անօթի ծարաւ, «օգնութեան հասէք» լսելով. ամէն զինուոր 10 ժամուան ուտելիք ունէր. 30 ժամէն աւելի է եղած: Օղանաւ մը անցաւ, Միսիսէն դնաց Թումուլուի կողմը եւ վերադարձաւ: Պ. Տամատեան կը հեռագրէր, թէ «օղանաւը ոչ ոք չէ տեսած, բացի բերդի շուրջը եղած թուրքերէ»: Մենք այլեւս մեռած կը կարծէինք այդ խումբը:

10 Ապրիլ. — Չատիկի շարաթ օրն էր. Ատանայէն ուղուեցայ. չպացի խումբէն տեղեկութիւն մը առած չըլլալու համար:

11 Ապրիլ. — Չատիկի կիրակի առաւօտ, խումբը մեծ մաքառումներէ վերջ եկաւ Միսիս հասաւ, որուն համար օղանաւը ոչինչ յայտնեց:

Տրոմար այս բեկորներուն գէնքն ալ գրաւեց: Թումբը 6 հողի կորուստ ունեցած էր:

Ահա այս կերպ վերջացաւ Միսիսի կամաւորական շարժումը անունը կրող Հաճընի օգնութեան փութալով գործը, Փրանսական իշխանութեան բարեացակամութեամբ !!! Իսկ անդին, Հաճընի մէջ, անոր դրօշակին տակ մեռնելու պատրաստ ժողովուրդ մը կը պատրաստուէր յուսալու, ըստ իրենց խոստմանը, իւրաքանչիւր երկու օրը երկու հարիւրական հողինոց խումբի մէ

օդնութեան: Խեղճ Հաճըն, ահա քեզի պաշտպան հանդիսանալու կոչուած ասպետականները, չու գերեզմանդ փորեցին, այն օրը՝ որ քեզի օգնելու խոստումով, չու դադարեց արդեւեք եղան:

14 Ապրիլ. — Երեք օր եւս դարբիթէն Տրոմարի հետ պահեստի եւ զինուորներուն գէնքի եւ այլ պիտոյից հաշիւը կարգադրելէ յետոյ Ատանա վերադարձայ:

Հոն Հաճընցիութիւնը յուսահատած, իր շուարումի շրջանը կ'ապրէր. Պետրոս եպս. Սարաճեան իր հրահանգութեամբ պատճառով, սպաղայ փախուստները նկատի ունենալով եւ խորհելով թէ Կիպրոս ազատ երկիր մը ըլլալով կրնայ հոնկէ Հաճընցիին վիշտը եւ կորուստի ենթարկուած ըլլալը շատ շուտ կերպով օտարներուն իմացնել, քանի որ իրենք, Փրանսացիք ուղեւորով Միսիս ճամբայ չտուին կամաւորներուն դէպի Հաճըն մեկնումին եւ այս կողմէն ալ շփացած թուրքերուն դիմումներուն տեղի տալով քանդեցին հազար ու մէկ զօհոթութիւններով մէջտեղ բերուած կամաւորական շարժման մեծ գործը, — Պետրոս եպս. այս նպատակով Կիպրոս մեկնած էր:

Փրանսացիք (դրական խոստում մը միայն) Մարտ 20ին օգնուած մը դրկել էին Հաճըն, որը Ս. Սարգիսի դաշտին վրայ եղած ճերմակ խաչին վրայ երկու սնտուկ փամփուշտ եւ ժողովուրդը խրախուսող յայտարարութիւններ ձգած էր:

Պետրոս եպս. Կիպրոս մեկնումէն առաջ Պատրիարքարան եւ այլ տեղեր իրրեւ առաջնորդ Հաճընի եւ օգնութիւն հայցելու համար եկող պատուիրակութեան նախապահ՝ զիմումներ կատարեց, սակայն եւ ոչ մէկ տեղէ դրական օգնութիւն չէր եղած: Պետրոս եպս. Կիպրոսէն եւ պ. Ահարոն Գրգեաշարեան Իյմիրէն մասնաւոր թողուցիկներով Հաճընի անմիջականօրէն օգնութեան կարօտ ըլլալը մինչեւ եւրոպական պետութեանց ուշադրութիւնը թէեւ դրաւել տուած էին, սակայն անոնցմէ եւ ոչ մէկը չուղեց միջամտել. հաւանաբար իրենց շահը պիտի մտանդուէր միջամտելու պարպային, ինչպէս կ'ըմբռնէին ասպետականները, վախնալով օգնութեան փութալէ, որ մի գուցէ Փրանցիին Պուլոնի սիրելի թուրքերուն բարկութիւնը գրգռուէր, պատճառ դառնալով սպաղայ համաձայնութեան խանդարուելուն: Պետութիւնները Հաճընի քայքայումէն, ջարդուելէն չէին ազդուեր: Անոնք մէկ բան միայն նկատի ունէին. — Թուրքիոյ մէջ իրենց սպաղայ անտեսական շահերը չվտանգուին:

Հաճընցիութիւնը Հաճընի մէջ իր ողորմներուն մէջ մինակը թողուած էր: Ու անոնք երբ դիտնային թէ դուրսը, Ատանա դեռ կենդանի է, Հաճընի Հայր. Միութիւնը իր կարելին կ'ընէ ճար մը, միջոց մը դառնելու համար, գոնէ միայն յարաբերութիւն մշակելու մասին, գոնէ կը քաջալերուէին. սակայն անկարելի էր, անոնք

այդ ալ չէին գիտեր, անոնք միայն մէկ բան ունէին իրենց դէմը, — քեմալականներու յարձակումները:

Հաճընցիները Հաճընի մէջ, Ատանայի Հայր. Միութիւնը Ատանայի մէջ երբ այսպէս իրարմէ լուր ունենալու մտատանջութիւնով կը շարժարուէին, Միսը դադարաւոր մը ունեցած էր. — (դրամական վարձատրութիւնով մը) դրկել մէկը, որ կարենայ մտնել Հաճըն եւ հարկ եղածը պատմէ անոնց, կամաւորներու մեծ մասին մինչեւ Միս հասնելը, Հաճընցիներու եւ ազգովին հայութեան իրենց համար շահապրոտուիլը հասկցնելով տեղեկ պահէ զիրենք ասպետականներուն անբարեացակամութեան այս ամէնուն հանդէպ:

Մայիս 19ին, 1920, Հաճընցի պ. Ասատուր Սաչեանը (200 օսմ. հնչուն ոսկի վարձքով) կը մեկնի Հաճըն եւ պաշարման շղթան կտրելով կը հասնի Հաճըն Ս. Սարգիսի կողմէն, սակայն այդ կողմէն անկարելի ըլլալուն մուտքը քաղաք, դիւղերանց կ'անցնի Ս. Յակոբայ կողմը, զօրանոցի մօտէն, առանց նշարուելու թշնամի պահակներէն, Պուրուիսի կամուրջէն կը մտնէ ներս, ամսու 22ին: Միսէն տարած նամակները կը յանձնէ. կը տեսնուի զին. հրամանատար պ. Սարգիս ձէպէճեանի հետ. կը խօսի այն ամէն բաներու մասին, որոնց արդեւեք կը հանդիսանան ասպետականները իրենց օգնութեան փութալու գործին մէջ եւ երկու օր վերջ կը մեկնի նորէն Միս, աննելով անոնց բաղձանքը յայտնող նամակներ:

Պ. Ասատուր Սաչեանը Մայիս 30ին Միս կը հասնի. Միսի մէջ իրարանցում մը, ընդհանուր շարժում մը կայ. երկու օր առաջ հրահանգուած էր տեղացի հայութեան, որ երկու օրէն Միսէն Ատանա մեկնելու պատրաստուին լքելով քաղաքը թուրքերուն: Սաչեան Աստուրը, սխեցիկներու հետ Ատանայ հասաւ Յունիս 1ին եւ Ատանայի Հաճընցիութիւնը եւ ամբողջ հայութիւնը տեղեկ եղաւ Հաճընի անցքերուն:

Միսի պարպումով Հաճըն միակ քաղաքը եղաւ Կիլիկիոյ մէջ, որ մինակը ձգուած էր իր բախտին, կորուստի ճամբուն մէջ կը տուայտէր: Միսի պարպումով Հաճընը փրկելու յոյսերը բոլորովին մարեցան. այլեւս անկարելի էր օգնութեան փութալ, Միսը իրրեւ յենակէտ ծառայեցնելով: Այլեւս Հաճընի նահանջի յոյսն ալ մարած էր, գոնէ ի հարկին կրնային քիչ զոհ տալով 2-3 օրէն Միս հասնիլ: Ամէն պարագայի տակ Հաճընը այդ օրն էր որ իր դերեզմանը ողջ-ողջ կը դիտէր:

Պարէն չունէր: Ըստ Հաճընցիներու տեղական սովորութեան, ձմեռուան համար ամբարուած պարէնը Մայիս ամսու վերջերը բոլորովին սպառած պիտի ըլլային: Կառուող ոյժերը հետզհետէ կ'անհետանային թշնամի զնդակներով եւ անօթութիւնով: Թշնամին մօտեցած էր քաղաքին դուռը. խոյանքներով թշնամիին զարնել եւ հեռացնել թարմ ուժի պէտք ունէր: Այսպէս ամէն ինչ, Հաճընի փրկութեան յոյս չէր ներշնչեր: Հաճընցիին կը մնար այլեւս ընել դերմարդկային այն


ճիշդերը, որոնք զինքը կրնային օր մը աւելի ապրեցնել եւ ապա մեռնիլ:

Եկած նամակները սրտակեղծ տեղեկութիւններ կու տային: Երկու սուրբի, երկու կրակի մէջ մնացած էր հաճընցին, — քուրքը եւ սովը. թուրքին պակասը սովը կը լրացնէր: Յոգնած հաճընցին ներքնապէս կը կրծուէր, կը մաշէր: Ելք՝ միայն կուռիլ եւ մեռնիլ:

Անոնք անմիջական օգնութենէն աւելի, կ'ուզէին իմանալ թէ Սիւս եւ կամ Ատանա հայ մնացած է թէ ոչ: Անոնք Մարտ 14էն ի վեր արտաքին աշխարհէն յարաբերութենէ խզուած էին:

ՀԱՃՐՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՃԱԿԱՏԸ
29 ՄԱՅԻՍ 1920ԻՆ

Քարտէսը պատրաստած է գայմազամ
Պրն. Կարապետ Չալեան(1)



- 1.— Մայր եկեղեցի
- 2.— Բերդ

(1) Յար եւ մամ Գարսեւ մը կը գտնուի մասն Միմաս վե-րածին բարձրում մէջ, առանց պարտաւոր անուամ յիշա-տակութեամ:

- 3.— Դպրոց (քարաշէն)
- 4.— Կառավարչատուն
- 5.— Սր. Սարգիսի որբանոց
- 6.— Խաղախորդարան
- 7.— Գրտէտի(?) ջուր
- 8.— Գորուչեաններու թաղ
- 9.— Կէլէկ թաղ
- 10.— Մոխրակոյտ (այրուած 1915ին)
- 11.— Գանլը Փազար
- 12.— Եաղլեանենց տուները
- 13.— Զէչպէկ
- 14.— Սր. Յակոբայ վանք
- 15.— Զօրանոց
- 16.— Թուրսարդիսեանենց տունը
- 17.— Զաթախի ջուր
- 18.— Ատանայի ճամբայ
- 19.— Քէրկեվէնի կամուրջ
- 20.— Ժանտարմըրիի շէնք
- 21.— Խամուրճի Կէտիկի (Սինլիքար) շրջան.
- Թշնամի պաշարման օղակը
- o o o Թշնամի ինքնազօրծ զէնքեր (զնդացիր)
- xx Մեր դիրքերը:

Հաճընի գայմազամ պ. Կարապետ Չալեան ներկայ քարտէսով շիֆրէ(2) նամակ մը գրած է, որը կու տամ ստորեւ.

ՇԻՖՐԷՆ ՆԱՄԱԿԻՆ ՊԱՏՃԷՆԸ

Ա.

«Ունիմ 15 օրուայ պարէն եւ 10 օրուայ փամփուշտ. եթէ 10 օր ալ ուշանաք՝ փճացումը անխուսափելի է: Այսքան յապաղում դաւաճանութիւն է: Վաղը պատմութիւնը ճիւղակներ պիտի անուանէ ձեզի: Եթէ խելք ունիք, աչք եւ խիղճ կայ, քարտէսը ձեզ ամէն բան պիտի պատմէ. աւա՛ղ շատ ուշ է: Կեցցէ՛ հերոս Հաճընը. մա՛հ խօսքի հերոսներուն: Տակաւին կը խաղա՞ն փարթիի սրիկաները»:

29/5/20
Հաճըն

ԶԱԼԵԱՆ
(ստորագրութիւն)

«Յ. Գ.— Հապճեպով, տկար ուժով գալն ալ չ'տակ չէ»:

(2) Ծածկագիր (փրանսերէն):

Բ. ՆԱՄԱԿ ՄԸ

Արամ Զաւուչէն գրուած՝ Սիւսի կամաւորներու հրամանատարութեան, որ Ատանայէն զրկուած էին Հաճըն մեկնելու համար:

Սիրելի պ. Զանկալեան,

Կը յուսամ ողջ տողջ ձեր զինուորներով Սիւս հասաք. ինչքան երախտապարտ պիտի ըլլայինք, երբ նոյն ճամբայով Հաճըն գայիք եւ միացած կուռէինք թուրքին դէմ:

Սիրելիս, շտապեցէք, ժամանակը կ'անցնի պարտականութեան, վերջը 6-7 հազար հայութեան դիակը միայն պիտի դաժնէք: Ատանայի մէջ ունեցած խումբովս պատրաստ եմ ձեզի հետ միասին զործելու. վրիժառու հայը ասկէ աւելի յարմար ժամանակի չի սպասեր:

Հաճընի Կէլէկ թաղի հրամանատար
ԱՐԱՄ ԶԱԼԵԱՆ

28/5/20, Հաճըն

Յ. Գ.— Պ.Պ. Պօղոս Թուրսարդիսեանի, Սարգիս Արմազանեանի, Ենոյք Տարտաղանեանի եւ բոլոր հայ կամաւոր զինուորներուն յաջողութիւն կը մաղթեմ. կամ կը միանանք եւ կամ ոչ, մեր վրէժը թող լուծեն: Սպասելու ժամանակ չէ, Հաճընը ձեռքէ պիտի երթայ. օգնութիւն:

ՆՈՅՆ

Գ. ՆԱՄԱԿ

Հաճըն, 28 Մայիս 920

Տիար հրամանատար ընդհ. կամաւորաց,

Ահա 3 երկար ամիսներ մենք կամաւորներս հաճընցիներու հետ միացած, բարբարոս թուրքին միթրայէօղին կրակին դէմ կուրծքերնիս եւ ճակատնիս բացած կը կուռնէք: Թշնամին քանիցս անգամ իր բոլոր ուժերով փորձեց Հաճըն մտնել, բայց փառք Աստուծոյ, մեծ կորուստով նահանջեցին: Հիմա քաղաքին շատ մօտեցած են. վանքը, զօրանոցը, Թուրսարդիսեանենց տունը, Ս. Սարգիսի որբանոցը, Գրտէտի շէնքերը, Եաղլեանենց ու Ռաքայէլեանենց տունները (Զաթախի կողմէն) թուրքերու կողմէ գրաւուած են մեծ կորուստներով: Մեր կորուստը շատ քիչ է: Վատ է այն հայը, կամաւորը, որ կոճակէ կը վիրաւորուի: Հաճըն ամէն կերպով ուժաթափ եղած՝ Ձեր օգնութեան կը սպասէ: Դեռ ուշ չէ, սիրելի ընկերներ, օգնութիւն. վրէժ, վրէժ, կատարենք մեր պարտականութիւնը: Քիչ մը ուշացումով անօգուտ է ամէն ինչ. ու այն ատեն ապագայ սերունդը ձեզի անէծքով պիտի մոռնայ:

Մեր խումբն ու հաճընցիները կատարեցին իրենց պարտականութիւնը. պահեցին Հաճընը մինչեւ այսօր ամէն զինով: Ասկէ վերջ եթէ երբեք ան մեռնի, մե՛ղք ձեզի: Ամենամեծ պատասխանատուութիւնը ձեր վզին պիտի հակի: Ետպեցէ՛ք, Հաճընը վրիզը ծռած ձեզի կը սպասէ: Անմիջապէս, օղանաւով օգնութիւն: Վաղեցէ՛ք, ընկերներ, Ձեր հայրենակիցները, գերեզմանի խորերէն ձեզի ձեռք կ'երկարեն, եկէ՛ք, կեա՛նք տուէք:

Հաճընի կամաւորաց խմբապետ
(Չ. Թ.) ԶԱԼԵԱՆ ԹՈՐՈՍԵԱՆ

Նամակները շատ էին, անհատական եւ պաշտօնական. ես միայն երեքը վերցուցի, մէկը գայմազամին՝ իշխանութեան մարդուն, երկրորդը՝ հաճընցի կուռուղ ոյժին, երրորդը՝ կուռուղի կուռուղի, երրորդը՝ հոն զտնուող եւ կուռի մէջ մեծ բաժին ունեցող առաջնորդներուն, կամաւորներու խմբապետին: Երեքն ալ մէկ բան ունին իրենց մէջ. Հաճընը օգնութեան կարօտ է, փրկութեան փութապէ՛ք:

1 Յուլիս.— Սեպտեմբերը ամբողջ վերադարձած էին Ատանա. Սիւս պարպուած եւ յանձնուած էր թուրքերուն Ֆրանս. իշխանութեան ձեռքով:

Հաճընի Հայր. Միութիւնը Հաճընի համար յետ այսու հայրու միջոցով փրկութեան հասնելու յոյսը բոլորովին կտրած էր: Ժողով մը կուժարեցին եւ որոշեցին որ. 1.— Ազգ. Միութեան միջոցով Ֆրանս. իշխանութեան դիմում կատարուի, Հաճընը եւս Ատանա փոխադրել տալու համար, 2.— Օղանաւով մը Հաճըն իմաց տրուի Սիւսի պարպումը, որ նահանջի մը պարպային Սիւս մտնելու ջանքով չկատարուի: 3.— Ամերիկացիներու միջոցով Ատանայի մօտիկը բանակած քեմալիստներու պատուիրակութեան հետ համաձայնիլ, հաճընցիներու դէմ կուռուղ թուրք ոյժերու հետ հաշտեցնելու համար:

2 Յուլիս.— Ֆրանս. իշխանութիւնը Մէրսինի մէջ Ֆրանսո-քեմալիստ զինադադար մը կնքած եւ բանակցութիւնով զբաղած ըլլալուն համար, պ. Պրէմոն իրեն եղած դիմումին, Հաճընը փոխադրելու եւ օղանաւ մը զրկելու մասին, որոշ պատասխան մը չէր տրուած: Ձինադադարը հայրու աննպաստ էր. ժողովուրդը շատ յուզուած էր: Համազգային ընդհ. ժողովով որոշեցին դիմել Ֆրանս. իշխանութեան եւ զինադադարին քրիստոնեայ տարրերուն աննպաստ ըլլալը ուշադրութեան յանձնել: Ժէնէրալը (Տիւֆիէօ) քաղաքին երեւելիները ընդհանուր խորհրդակցութեան հրաւիրելով պարզեց զինադադարի կարեւորութիւնը եւ Ֆրանս. իշխանութեան Կիլիկիայէն մեկնելու մասին եղած լուրին բոլորովին սուտ ըլլալը:

3-4 Յուլիս. — Ամանոսի անկախութեան հռչակման լուր մը կը տարածուէր: Օր մը վերջ հերքուեցաւ:

5 Յուլիս. — Կառավարութիւնը խոստացաւ ռազմա-մթերք տալ եւ օդանաւ մը զրկել Հաճըն:

6 Յուլիս. — Միսիսն եկող Գաղթականաց Յանձնախումբի անդամ ընտրուած էի: Ժէնէրալին կրկին գրաւոր դիմում եղաւ, զօրք եւ օդանաւ զրկելու պարծը շուտով կարգադրելու համար:

Միսիսն այսօր եւս եկան հայեր. Աստուր Հաջեանը տեսայ եւ Հաճընէն լուր առի. Հաճընէն նոր եկած էր: Ժէնէրալին զօրք եւ ռազմամթերք ուղղուեցաւ: Օդանաւ զրկել: Գինեմուլ հայ մը ուրիշ հայ մը սպաննեց: Ինճիրլիքի վրայ յարձակում եղաւ: 2 Քուրք սպաննուեցաւ:

11 Յուլիս. — Տօքթ. Տատ ամերիկացիներու կողմէ, հաճընցիներու համար Իլհամի պէյին հետ քեմալա-կաններու հետ բանակցութեան սկսաւ: Քեմալականնե-րու պետը, նամակ գրած էր Հաճընի թուրք հրամա-նատարին, կացութեան տեղեկանալու եւ անոնց այս մասին պաշտօնաբար շօշափելու համար, թէ թուրք զին-ուորը համաձայն է հաճընցիներու հետ համերաշխե-լու առաջարկուած պայմաններով: Պատասխանը մին-չեւ 5 օր պիտի ստացուէր:

Հաճընցիներու, Փրանս. իշխանութեան Հաճըն զըր-կելիք զօրքի, ռազմամթերքի եւ մինչեւ անգամ պարզ լրատու օդանաւ մը զրկելու մասին հաւատք չունէինք. ընդհանուր փափաք մը կար, որ պէտք է ամէն պնով թուրքերու հետ համաձայնութեան գործը յաջողցնել. փրկութեան միակ ճամբան այս է: Գ. Տամատեանի մօտ եղած մեր խնդրանքին վրայ, պ. Տամատեանի մասնաւոր հրահրով պ. պ. Չամուրեան, Պօլատեան, Իզմիրլեան, Գրանեան, Գ. Թուրաթիսեան, պատուելի Քաչատուրեան — Փոստոյեան (Հաճընի պատուիրակու-թեան անդամներ) եւ (Չալեան) ես, կանչուեցանք. Հաճըն մասին խորհրդակցեցանք եւ որոշուեցաւ՝ նկա-տելով որ ամէն տեղէ Հաճընի օգնութեան երթա-լու մեր դիմումները ապարդիւն կը մնան — մինչեւ անգամ Փրանս. հանր. նախադահին — հետեւեալ ա-ռաջարկներով պատուաւոր եւ փրկարար հաշտութիւն մը կնքել թուրքերուն հետ: 1.— Հաճըն մէջ թուրք իշխանութիւն մը հիմնել. 2.— Փրանսականին տեղ թուրք դրօշը պարզել. 3.— Հայերը գէնքերնին չյանձ-նեն. 4.— Ժանտարմըրիին կէսը հայ եւ կէսը թուրք ընել. 5.— Պարենաւորումը թուրքերը ապահովին. 6.— Թուրք չեթէն եւ զինուորը քաղաք չմտնեն. 7.— Ընդ-հանուր ներում հայերուն:

Ահա այս հիմունքի վրայ էր որ Տօքթ. Տատ սկսած էր բանակցել թուրքերու հետ: Այս բանին ոյժ կու տար Ատանայի վալիին ձեւալ պէյ եւ պարսկական հիւպատոս Ասատ խան:

9-10 Յուլ. — Գ. Չանկալեանը տեսայ. Ինճիրլիքի յարձակումը կը շարունակուի: Աստուր Սաչեանը Գ. Պէյմունին տարինք. Քէնէ-րալ Տի. Փէյլէն Գէյրուքէն եկաւ: Թուրք զինադադարը 15 օր եւս յետաձգուեցաւ: Ժէնէրալը խոստացաւ օգնել Հաճընին. օդանա-վիտի զրկէ: Սեպտեմբր թուրք տունները գրաւեցին, ասոր վրայ Փը-րանսացիք թուրքերէն ժանտարմ գրեցին: Գոյմազամ Չալեանէն չեթէն նամակ եւ Չանիէլ Թորոսեանէն Հաճընէն 29 Մայիս նա-մակներ առի: Ազգ. Միութիւնը հայերը կարգապահութեան կը հրահրէր: Ինճիրլիքէն թուրք զիններ բերին. Տօքթ. Տատ կը-համի պէյին հետ քեմալականներու բանադնաց գնաց: Հաճըն օ-դանաւ զրկելու համար Գ. Փրթուպալեանը տեսայ:

14 Յուլիս. — Կառավարութեան տուած տեղեկութեան վրայ, Հաճըն երթալիք օդանաւով զրկելու համար 10 հ. միսուր, 10 թիլօ քլորաթ տը փոթաս եւ 2000 զար-սիւլ պատրաստեցի եւ կառավարութեան յանձնեցինք:

15 Յուլիս. — Օդանաւը մեկնեցաւ կ'ըսէին: Փրանս. իշխանութիւնը մեղի կ'օքօրէր. թոյլ էր խնդրանքնե-րուն հանդէպ:

16 Յուլիս. — Օդանաւը չէր մեկնած: Հայրենակցական Միութիւնը իր ժողովին մէջ որոշեց ժէնէրալի թոյլա-տուութեամբ անթել հեռադրով զիմել Փրանս. հան-րապետութեան նախադահ Միլլանի, երեսփոխանական ժողովի նախադահ Տէչանէլի, ժէնէրալ Կուրոյի եւ Ազգ. Պատուիրակութեան, Հաճընի փրկութեան հա-մար: Հեռադրուեցաւ:

18 Յուլիս. — Ատանայարնակ հաճընցիներու ցանկը պատրաստուեցաւ: Տօքթ. Տատ քեմալականներէն պա-տասխան ստացած էր. համաձայն էին: Հաճընը այս ձեռնարկին տեղեակ պահելու համար Տօքթ. Տատին նամակ մը տրուեցաւ, որ քեմալականներու միջոցով Հաճըն հասցուի: Նամակին մէջ կը յիշուէր նոյնպէս որ հայերու կողմանէ Տատը, պարսկական հիւպատոս Ասատ պէյը ուրիշ երկու թուրք պատուիրակի հետ հող պիտի դան եւ այդ հիման վրայ պիտի բանակցին: Պայմանները եւս յիշուած էր, զոր վերը յիշեցինք:

Ազամ Սօղանզեանի 1413 80/100 թրք. ոսկին եւ 50 երկր-ուկին եղէ: Քէլիքեանի տուի ընկալադրով: Չինազադը մինչեւ 10 Յուլ. երկարաձգուեցաւ: Ժէնէրալ Կուրոյին հեռադրե-ցինք Հաճընի համար:

19.— Հայեր Գուրո Քէլիքէն թրքական 2 գրօշակ գրաւեցին: Մէկը սանճազ չէնքէն էր: Դաշնակցութեան ղէնքերը դրեցի:

20.— 500 հողինց զօրախումբ մը կազմուեցաւ: Տօքթ. Տա-տին միջոցով քեմալականները Հաճըն նամակ գրեցին հատուելու: Տօքթ. Տատ Հաճըն պիտի երթար: Հ. Յ. Դաշնակցութեան ժող-վին մէջ Հաճընի յարգանք յայտնուեցաւ:

25 Յուլիս. — Տօքթ. Տատ Շեմսէտտին պէյի (քեմալա-կաններու պետը) քով գնաց Գուրո-Քէլիքէ, Հաճըն մեկնումի պատրաստութիւններու մասին խորհրդակ-ցելու համար:

26 Յուլիս. — Վալի ձեմալ պէյ իբրեւ թունդ քեմա-լիստ Փրանս. իշխանութեան կողմանէ քուլուեցաւ Ատա-նայէն, պարսկական հիւպատոսին հետ, որով Հաճըն երթալու եւ համաձայնելու խնդրին շարունակումը ընդհատեցաւ, եւ յոյս չկար այլեւս. որովհետեւ այդ պործը Տօքթ. Տատին հետ Ասատ պէյն էր որ կը տա-նէր: Շեմսէտտին պէյին վերջին պատասխանը. «Հա-ճընի մասին խօսիլ իմ իրաւասութենէս վեր է» խօսքը կղած է: Պէտք էր ուղղակի Հաճընի հայութիւնը Հաճ-նոյ շուրջի թուրք հրամանատարին հետ հասկացողու-թեան պար:

Ատանայի հաճընցիութիւնը ստուարացած էր Միսի հաճընցիութիւնով. զրկուած կամաւորները վերադար-ձած էին երկու ամիս Սոսյ մէջ անօդուտ սպասելէ վերջ: Հաճընցի՝ երիտասարդներու մի քանիններու նա-խաձեռնութեամբ ընդհ. հաճընցիական ժողովի մը մէջ որոշուեցաւ, Ազգ. Միութեան միջոցով զիմել Փրանս. իշխանութեան, որ զիւրութիւններ տայ երկրորդ կա-մաւորական շարժումի մը ստեղծումին, Հաճըն օչնու-թեան փութալու նպատակով:

Արձանագրութիւնները սկսան. 18-50 տարեկան հաճընցիները պարտադրուած պիտի ըլլային կամաւոր-ական շարքերուն մէջ մտնելու:

5 հոյիլէ յանձնախումբ մը կազմուեցաւ, այս պոր-ծին հսկելու, գրամ հաւաքելու եւ կազմակերպելու համար: Մարտիրոս Ոսկեան, Եղիշէ Քէլիքեան, Հաճի աղա Ճրոեան, Կարապետ Գրղեաշարեան եւ Ա. Չալեան յանձնախումբի անդամ ընտրուեցան:

Տօքթ. Տատ չգնաց. որոշուեցաւ դիմումները շարունակել: Ազգ. Միութեան միջոցով դիմում պիտի ըլլայ Փրանս. կառավա-րութեան:

27 Յուլ. — Ատանայարնակ բոլոր հաճընցիութեան կոչ եղաւ. շողով եղաւ եւ որոշուեցաւ անպայման Հաճընին օչնութեան եր-թալ: Գ. Տամատեանին Հաճընի քարտէսը տարի:

28.— Հաճընցիք զինուորագործիլ սկսան:

29.— Շէյի Մուրատի յարձակումը սկսաւ. հայեր 100 հողի-նց խումբ մը զրկեցին: Հաճընի զինուորագործութիւնը կը շարու-նակուի: Փրանս. քաղաքականութիւնը թուրքերուն հանդէպ նպաս-տուոր կ'երեւէր:

30.— Կացութիւնը շատ ծանր կ'երեւէր. թուրքերը քաղաքին շուրջ կողմերէն ընդհ. յարձակում կը գործէին:

1 Յուլ. — Չէնք բերելու գացի ձեռն: Իրիկունք թուրքերը 3 հաւ թղանթի բուր ինտեցին Ատանայի վրայ: ձեռնանէն եկայ. հաճընցիները 5 հողինց յանձնախումբ ընտրեցին, մէկն ալ ես, դիմում ընելու բոլոր միութիւններուն եւ գրամ հանդանակելու համար:

3 Յուլիս. — Չինուորագործութիւնը կը շարունակուէր. Գ. Տամատեան կ'ապահովեցնէր կառավարութեանէն ըլ-լալիք աջակցութեան մասին: Ատանայի հայ ինքնա-

պաշտպանութեան զինուորական հրամանատար պ. Շիշմանեան իր բարոյական աջակցութիւնը խոստա-ցաւ, նոյնպէս ստեղծելու 200 հրացանով օչնել ուղե-ցին: Կուսակցութիւններուն ամէնուն ալ խոստումները լաւ էին Հաճընի օչնութեան փութալու կազմակերպա-կան պործին մէջ: Այնպէս որ Յանձնախումբը ամէն կերպով վստահութիւն ստացած էր բոլոր հայութեանէն այդ պործի օր առաջ յաջողութիւնը ապահովելու հա-մար:

Հաճըն գտնուող ամերիկացի միսիոնարներուն Պոլիս հասնելը լսեցինք:

Բարեկործականը գրամ պիտի տայ: Յէլլահները 11 հայ տղայ փախցուցին: Հայեր ալ Ֆէլլահ փախցուցին: Փրանսացիք կողպուտար արգելեցին:

6 Յուլիս. — Հաճընի Հայր. Միութիւնը իր ունեցած 1400 ո. թրք. թղթադրամը տրամադրեց Յանձնախում-բին անմիջական պէտքերուն համար:

(Հաճընի ամերիկացիները թուրքերու յանձնուելէ վերջ, Կեսարիոյ ճամբով Պոլիս հասած էին:)

Գ. Տամատեան կ'ապահովէր Փրանսացիներու ընկէք օչնու-թիւնը: Գ. Շիշմանեան մեր գործին շարունակելու յանձնարարեց. սեպտեմբ 200 ղէնք տալ խոստացան եւ շտուին: 5000ոնց բանակ ու-նենալու է:

14 Յուլիս. — Բ.Ը. Միութիւնը 1000 երկրպ. խոստացաւ Հաճընի օչնութեան պործին. իսկ Տօքթ. Տատը 2428 ոսկի թղթադրամ: Ամէն կողմէ նուիրատուութիւն կար. հաճընցիները իրենց հայրենակիցներէն մեծ-մեծ գու-մարներ կը վերցնէին: Ամէն կողմ խանդավառութիւն կար. ամէնքն ալ սրտացաւ էին Հաճընի հանդէպ:

17 Յուլիս. — Հաճընի Շար զիւղը Յուլիս 2ին թուրքե-րու կողմանէ գրաւուած, կիները եւ տղաքը գերեզմար-ուած, իսկ այլ մարդոցմէն 70 հողի ղէպի Հաճըն ճամ-նել եւ 10ր՝ Ատանայի ուղղութեամբ եկած ատենին կը սպաննուին Իմամ Օղլուի մօտերը եւ միայն մէկ հողի՝ պ. Յոյսէփ Օղլուեան կրցած էր ազատիլ եւ Ատանա հասնել:

19.— Հ. Յ. Դ. գործերով զբաղուեցայ. 70 տղայ Ապտալու գացին. թուրքերը մինչեւ 27 Յուլ. պէտք է ստորագրեն հաշտու-թիւն: Կուլ կար. թուրք հին թաղը այրեցաւ. պ. Տամատեանի հետ հրդէհին եւ պ. Շիշմանեանին գացինք: Հայ լեզնեական մը մեռած էր: 2 հայ տղայ զոչնութիւնով կ'ախեցին:

25 Յուլիս. — Համապայման ժողովի որոշումով, թուր-սորդիսեան եւ պ. Աշոտ Գասարճեան զին. կազմակեր-պիչ նշանակուեցան, որ աշխատուի մինչեւ 5-10 օր ան-պայման օչնութեան պործը փութացնել եւ խումբը ճամբայ ելլէ. ընդհ. հրամանատար նշանակուեցաւ պ. Սարգիս Արզումանեանը: Առաջին անգամ դարաքէօյ-ցիները իրենք զիրենք տրամադրեցին իբրեւ զինուոր Հաճըն երթալու համար. մարդիկ օրերով կաթովիկ ե-կեղեցոյ բակը եւ ապա Տէլի Մէհմետին խանը կը

սպասեն, շատ անգամ անօթի եւ մերկ, միայն եւ միայն այս մեծ դործի յաջողութեան համար: Այս սողոց՝ աշխատութիւնը, մանաւանդ կողոպուտի եւ արան քալանի այս շրջանին, թուրքերուն Ատանայէն դուրս քեմալականներու մօտ փախուստի պատճառով, որոշ կերպով ամէն զրկանք, նիւթապէս մանաւանդ, աչք առած տոկացին. այս դործին ամենէն շատ անձնազոհութիւն ցոյց տուողները եղան այս սողաք:

- 9. Աշոտ Գասարեան կազմակերպիչ եղաւ:
 - 9. Տամատեան Հաճընի զինուորներէն 55 հոգի զէնքով առաւ. շատ գէշ ազդուեցանք: Յետոյ 28ը ետ առի դժուարութեամբ:
 - 9. Արմաղանեանին հետ տեսնուեցայ Հաճընի գործին համար:
 - 9. Տամատեան այսօր նորէն 30 հոգի առաւ մեր զինուորներէն. լաւ չէր ըրածը:
- Հրացանագուծութիւն շատ եղաւ. եէնիճէ, Ձէյթալազ եւ Քէհեազըւո գրաւեցին Փրանսացիք. Փրանսացիք զրուեր են Դամասկոս եւ Հալէպ:

26 Յուլիս.— Սեպտեմբերը զրականօրէն ոչ մէկ կերպով օգնել չուզեցին այս դործին, իրենց խոստումը դրժեցին. ինչ բառով պէտք է որակել ասոնց այս անսարքերութիւնը Հաճընի հանդէպ:

29 Յուլիս.— Հաճընէն լրարեր եկաւ, պ. Միհրան Տազէսեան եւ Գարրիէլ անուշով երկու քաջեր. 10 օր առաջ, Յուլիս 19ին Հաճընէն դուրս էին եկեր: Ասիկա չորրորդ փոստան է որ Հաճընէն դուրս կ'ելլէ, բայց աւաղ միւս երեքը թշնամիին կը նշմարուին եւ կը ըսպանուին: Հաճընցիները ուրախ էին: Մանաւանդ անոր համար, որ Յնս. 24ին մեծ յաղթութիւն մը տարեր է Հաճընը, բոլոր ճակատներուն վրայ. բուն մը անօթի քաջեր Արամ Կայծակի առաջնորդութեամբ եւ պ. Սարգիս ձէպէճեանի հրահանգով, կը բարձրանան լեռներու կատարներն ի վեր, անօթի ծարաւ, կ'ուզեն իրենց օրհասական կեանքը ապրիլ, մա՛հ կամ ազատութիւն: Անօթի առիւծները յուսահատ այլեւս արտաքին աշխարհէն դալիք օգնութեան, իրենք որոշեր են իրենց միջոցով լուծել իրենց ճակատագրին տագնապը: Ու կը խոյանան ամէնքն ալ, ընդհանրապէս 10-18 տարեկան որբանոցի եւ դպրոցի ուսանողներ, գոնէ մէկ մարմաջով՝ քիչ մը ուսելիք ձեռք ձգել: Բաժնուած խումբ-խումբ. իրենց յանկերգով, «Հուրրա՛, հուրրա՛» յով, եւ ահա թշնամին է որ այդ անգէն հերոսներու առջեւ, գերեզմաններու կմախք դարձած բայց սրտով քաջ կորիւններու առջեւ տեղի կու տայ, կը փախի ձգելով պարէն, ռազմամթերք (եւ որ աւելին՝ Ձելպէկի լանջին վրայ զետեղուած 71/2նոց թնդանօթ մը իր ուսմբերով). մեր փոքրիկ հերոսները կուշտ են հիմա. իրենց իշխանութեան տակն է Ս. Սարգիսի որբանոցը, որ թուրքերուն սպայակոյտի պաշտօնատեղին ըլլալ կը կարծուէր: Հոն էր հեռաձայնը, պաշտօնական հաղորդագրութիւններ մինչեւ Ս. Քեմալէն, որոնց ընթերցումէն որոշ կերպով կը հասկցուէր թէ Հաճընցիները գերմարդկա-

յին ճիշդերով հրաշալիօրէն տարած էին կոխը, մինչեւ անգամ իրենց Քեմալ փաշան զայրացնելու աստիճան, որը կը հրամայէր ամէն զնով, թէկուզ ամբողջ բանակին բնաջնջումով պէտք է զրուել Հաճընը եւ անխնայ ջարդել, տեղը դարի եւ մոխիր ցանելու համար:

Գրտէտի ամերիկացիներու շէնքին մէջ եւ Կէլէկի կողին եղած ծառերուն տակ ամբարուած էր պարէնը, իսկ Ձելպէկը, թնդանօթի վայրը, միայն թնդանօթաձիղներու բաւելու չափ պարէն եւ շատկէկ ուսմբ կար: Հաճընցին բաւականին պարէն ունեցաւ. կշտացած էր այլեւս, թնդանօթը բերում էր քաղաք եւ պ. թորոս Չալեանի (չաւուշ), Համբարձում Քէչիշեանի, Սեղրակ Ուզունեանի եւ ուրիշ մէկ քանի հաճընցիներու հսկողութեան տակ սկսուած էր թշնամիները շատ հեռուները փախցնելու չափ սարսափ տարածել: Թշնամին հեռացած էր մինչեւ 3-4 ժամ հեռաւորութեան մը վերայ:

Հաճընցին խաղաղ եւ հանդիստ էր. թշնամիի տեղատարափ գնդակներու հասողութեանէն հեռու կը մնային. լազըմներու դժոխային կեանքը վերջ դրած էր: Ծարունակ չորս ամիս, արգելանքի տակ մնալու ընդերկրային աշխատութիւնները բաց օդի մէջ, ազատ երկնքի տակ կը կատարուէին: Թշնամիին հետ շփուիլը զիրենք վարժեցուցած էր, խաղաղ կեանքը չէին սիրեր, պէտքը կը զգային արտաքին աշխարհի տեղեկութիւններուն: Արդեօք հայ մնացած է Կիլիկիոյ մէջ, կ'ուզէին դիտնալ: Եւ ահա այս պատճառով երկու սուրհանդակները ճամբու էին դրած, որոնք ճամբան թերեւս կոխներ ունեցեր էին թուրքերու հետ, սակայն վերջապէս հասան Ատանա: Միհրան Տազէսեանին մէկ ձեռքը վիրաւորուած էր:

Ազգ. իշխանութիւնը Հաճընի արշաւախումբին օյնելու ժամ էր: Բարեկործանէն դրածը առինք. սկսանք աշխատիլ, ազգ. մարմինները պատասխանատու բռնելու եթէ չօգնեն. Հաճընէն եկող երկու տղաք 9. Կիլիկի տարինք եւ տեղեկութիւններ տուինք Հաճընի մասին:

30 Յուլիս.— Կուսակցականները մանաւանդ (Ս.Գ.Հ.) ժլատ էին իրենց խոստումը գործադրելու մէջ. միշտ ալ պոռոտախօսութիւնով կ'ուզէին կուսակցական նեղմիտ հաշիւներով առաջնորդուիլ: Ահա այս կերպով կազմակերպումի գործը զանգաղ կ'ընթանար:

1 Օգոստ.— Հաճընցիական խոսն ժողովի մէջ որոշուեցաւ Տէլի Մեմլէտիմ խանը պատրաստ զինուորները դուրս, դաշտը կեդրոնացնել եւ մօտ օրերս, գիշեր մը յանկարծ ճամբու դնել զէպի Հաճըն:

2 Օգոստ.— Գործի դիւրութեանը համար, կուսակցականներէ մէյմէկ ներկայացուցչի ներկայութեան ժողով մը ունեցանք. ամէն մէկ կուսակցութիւն խոստացաւ իրմէն պահանջուած նիւթական եւ զինուորական պարտականութիւնը եւ աջակցութիւնը չզլանալ:

2. Յ. Գ. անուշով պ. Վերածին Կիլիկեան Միջազգային ինքնավարութիւն հռչակեց Իւրէյէլի Գափըլիի դիւղին մէջ:

Ազգ. Միութենէն 10 պարկ ալիւր առի: Հաճընի խումբը մեկնելու համար ամէն ինչ պատրաստուեցաւ:

3 Օգոստ.— Վերակազմեալ Հնչ.ներն ալ հռչակեցին: Հաճըն մեկնող կամաւորներուն անհրաժեշտ բաները պատրաստ էին, պ. Արմաղանեանի կը սպասուէր մեկնելու համար:

9. Վերածինի կոշը հաղորդուեցաւ Փրանս. կառավարութեան: Վերակազմեալ եւ Ռամկավարներն ալ ինքնավարութիւն հռչակեցին դաւախ մէջ:

4 Օգոստ.— Հաճընի առաջին 130 հոգինոց խումբը Ինձիրիք մեկնեցաւ եւ անկէ Ալարճա փոխադրուեցաւ: Միջ-քրիստոնէական ինքնավարութիւն հռչակուեցաւ Ատանայի մէջ. քաղաքը դրօշադարձուած էր Ազգ. իշխանութեան կողմանէ:

5 Օգոստ.— Կառավարչատունը զրաւելու փորձը անյաջող անցաւ: Կառավարութեան հետ Ազգ. իշխանութեան յարաբերութիւնները խզուեցան:

Հաճընի խումբը Ինձիրիքէն Ալարճա փոխադրուեցաւ. աւիւր յարմար էր հոն հաւաքուիլը: Գիշերը թնդանօթներով թուրքերը մեծ յարձակում ըրին. ետ մղուեցան:

10-11 Օգոստ.— 9. Արմաղանեան վերջապէս հաճեցաւ խումբին հրամանատարութիւնը ստանձնել. ձիււորներու հետ Ալարճա վայցինք. լաւ էին սողաքը. կը սպասէին մեկնումի ժամին:

9. Տամատեան եւ Ազգ. Միութիւն խզուեցան Փրանս. կառավարութեան հետ: 27 հոգի եւս զրկուեցաւ Ալարճա:

Թուրքերը մերժեցին հաշտութիւնը. յոյները զէնք տուին Հանրին:

12 Օգոստ.— Ատանայի մէջ կատարուած այս աշխատութիւններուն Հաճընը տեղեակ պահել պէտք էր: Յանձնախումբս 3 տղայ դատաւ, որոնք ամէն գնով Հաճըն երթալու պատրաստ էին: Վարդան Տազէսեան, ձաֆէր (հաճընցի են) եւ սվազցի տղայ մը: Յանձնախումբս պ. Մարտիրոս Ոսկեանի, պր.պր. Գրգեաշարեանի եւ Ա. Չալեանի ստորագրութեամբ նամակ մը դրած էր, մօտաւորապէս Տօքթ. Տատի Շեմսէտտին պէյի ներկայացուցած պայմաններու նման, այնպէս որ անպայման չէին յուսադրեր Հաճընցին զրկուելիք ոյթին համար. կրնայ պատահիլ որ օյնութեան չկարեանք փութալ, ինչպէս եղած էր առաջին՝ Միսիսի կամաւորական շարժումի առեւ: Եւ կամ զէյթուեցիներու Ձէյթունի մէջ ըրած կարգադրութեան հիման վրայ, համաձայնիլ թուրքերու հետ եւ այս կերպով կարենալ իրենց մորթը փրկել: Գրուած նամակը գիրք կը ձգէր իրենց ճակատագրի իրենց ձեռքով տնօրինելու գործին մէջ, յոյսով չէր օրօրեր: Հաճընի Հայր. Միութեան վարչութիւնը յարմար չի տեսներ

այս նամակը, գտնելով դայն այդ դիրքի մարդոց համար յուսահատական. կ'ուզէ որ զիրենք յուսադրէ զրկուելիք օյնութիւններով, զինուորներով եւ չիրականանալի խոստումներով, որոնք կրնային հաճընցիին վերջիվերջոյ զերեզմանը փորել: 9. Տամատեանի թեւադրութեամբ կը զրեն որ «1500ի մօտ կամաւորներ պատրաստ են անմիջապէս մեկնելու, դուք ամէն գնով մինչեւ անոնց ժամանումը աշխատեցէք կուռիլ եւ բարձրը պահել ձեր անունը»: Այս նամակը իր ամբողջութեանը մէջ զրկուելիք ոյթին իրական եւ շատ շուտ ըլլալը կը յայտնէր: Ասիկա բոլորովին սխալ էր. Յանձնախումբի անդամները ամէնքն ալ քիչ թէ շատ հասկցած էին պատրաստ ուժով երթալու անկարելի ըլլալը, եւ հետեւաբար յուսադրելը անոնց համար կատարեալ ոճիր էր: Յանձնախումբը իր ձայնը լսելի ընել չկարենալով, հրաժարեցաւ և անդամները սկսան իրրեւ ոչ-պատասխանատու անհատ հաճընցիներ աշխատիլ:

Դաւախ ոյթերուն զինաթափուիլը հրամայուած էր. Հաճընի խումբը շուտով ճամբել որոշուեցաւ. պ. Արմաղանեան ընդունեց հրամանատարութիւնը. Լեւոն Քչրգեանի միջոցով զէնքերը անցուցի կամուրջէն Ալարճա. հեծեալ խումբը Ալարճա գնաց. 32 հոգի էին:

Հրաժարեցայ Հաճընի գործերէն. ետ առնել տուին: Ալարճա պոցի զինուորներուն քով, կուսակցութիւններու տալիք ոյթը տնկուաւ:

Ատանա ետ եկայ. խանը մնալ հակել պէտք էր: Գիշերը 3 տղաքը Հաճըն մեկնեցան:

13 Օգոստ.— Այդ 3 հոգինոց փոստան, հակառակ մեր պնդումին, որ նամակը փոխեն, Հայր. Միութ. վարչութիւնը գիշերանց զէպի Հաճըն ճամբու դրած էր: Անհատ հաճընցիներ ալ դրած էին զրկուելիք ոյթին շատ եւ կարեւոր ըլլալուն մասին: Սուտ էին այս մարդիկն ալ եւ վարչութիւնն ալ. գործի բոլորովին պարսպուցութիւնը, Փրանս. իշխանութեան քաղաքական նըպատակը, ի նպաստ թուրքերու Հաճընը կորսնցնելու մասին, եւ կուսակցականներու հակամարտութիւնները իրարու հանդէպ եւ հետեւապէս անբարեացակամ վերաբերմունքը Հաճընի փրկութեան գործին, չէին զգացած եւ կը հասկնային, թէ անպայման պիտի յաջողին օյնութեան փութալ Հաճընին: Անճարակ մարդիկ. միայն մէկ բան ունէին. — զրկումի կատարեալ պայմաններու մէջ մինչեւ այդ կուրծք տուող հաճընցիին (Հաճնոյ մէջ) ազատելու պարտադրանք լաւ երեւնալու, հասկնցնելու համար որ այդ ստորագրութեան տէրերն են, որ իրենց համար գերմարդկային ճիշդերով իրենց փրկութեան մեծ գործին մաս եւ բաժին ունին. ահա անոնց մղձաւանջը, որ մի գուցէ վերջը պախարակուին, ամօթով մնան: Հիմա է որ պիտի զղջան. ոճրագործներ:

14 Օգոստ.— Փրանս. իշխանութիւնը Հաճընի Ալարճայի պատրաստ ոյթը Միսիսի, Ինձիրիքի եւ Ալարճ-

ճայի կողմերը պործել տալու հրաման տուաւ: Լաւ չէր. ցրուելու փորձ մըն է որ ընել կ'ուզէր:

9. Շիշմանանէն 2 դիւր. արազահարուածները առի: 92 միւսորներու խումբը Ագարճա գետը:

16 Օգոստ.— Օգնութեան պործը շատ դանդաղ կ'ընթանար: Եղած դիմումներու վրայ Ազգ. իշխանութիւններուն մօտ, որովհետեւ Հաճընի Հայր. Միութիւնը չէր կրնար տանիլ միտակցել այդ շարժումի մեծ պործին ծանրութիւնը, համազգային բնոյթ տալ որոշուեցաւ գործին: Ազգը «Կիլիկիոյ Ինքնապաշտպանութեան» յատկացուած 45 հազար թրք. թղթադրամ ոսկիի չափ գումարէն մնացած մասն եւ պահեստի ալիւրներն եւ այլ նիւթերն ալ (միթրայէօզ, թնդանօթ եւն.) յատկացուց Հաճընի պործին:

Հաճընի օգնութեան պործը ազգային բնոյթ առաւ: Հաճըն կրթութիւնը ոչ թէ Ինքնակրթութիւնն էր, Ագարճա մնալու հրաման տուին Փրանսացիք: Ամէն օր նոր խումբեր կը ղրկուէին Ագարճա. Հաճընի օգնութեան յանձնարարութիւնը հրաժարեցուցաւ:

«Փաս» հանել տուի Մերսին կրթալու: Ռամկավարները 25 հոգի տուին. Հնչակեանները կարգ մը նկատումներով չօգնելու նամակ գրած էին: 100 հրացան առի պ. Շիշմանանէն. կամուրջն ազատ անցքի հրաման չտուին:

19 Օգոստ.— 9. Մարտիրոս Ոսկեան 1000 լիրա թրքական թղթ-ները առնելով ձիւնան գետը, անկէ նաճարլըն Տէօրթ-Յօլ անցնելու եւ կամաւորական խումբ մը պատրաստելու մտօք: 9. Տամատեան իր ամբողջ էութիւնով Հաճընի պործին տարուած էր. այդ պործին յաջողութիւնը իրեն պիտի հաւաստիացնէր ամբողջ լեռնային Կիլիկիոյ ազատագրումը: Մեծ յոյս ունէր. ընկճուիլ չէր ուզեր: Օգոստ. 4ի աթթին ջուրը ինչպիսիք, իրեն ապագայ փառասիրութիւնը, վարչապետ եւն. ըլլալու մասին, յոյս ունէր այս կերպով տեսնել: Անիկա ընդհանրապէս լաւ քաղաքագէտ մը չէր: Երանի թէ, իր ամէն բան ըլլալ ուզելու, երեւնալու փորձը դժբախտ Հաճընի վրայ փորձել ջրանար. միշտ ալ կը խարուէր Փրանսացիներու խոստումներէն:

Հաճընի պ. Մարտիրոս Ոսկեան ձիւնան գետը ազգամթերք դնելու պ. Տամատեան զիս Մերսին ղրկել չուզեց. խումբին հետ Հաճըն պէտք է մեկնէի:

9. Տամատեան կ'ուզէ որ խումբը շուտով մեկնէի, զրուէ Հաճըն. անցի Զէյթուն եւ ապա Մարաշ: Ես կը վախճամ պ. Տամատեան կաթուած կ'իջնեմ, եթէ խումբը չկարենայ մեկնել: Ատանացիք եւ սեպիք այսօր ալ զինուոր չտուին: Ինքնավարութիւն հռչակուած 9օյիւր Գափուրի գայեթի պ. վերածինի քով ինքնաշարժով ընկ. Տիգրանին հետ: Տեսածք տղաքը. շատ խանդավառ էին:

20 Օգոստ.— Պումբի պատրաստութիւնները այսօր կը լինեն, վաղը միւս օրը նորէն կը սպասին: Յոյս չկայ որ մարդ կարենայ երթալ Հաճըն: Հաճըն մարդու պէտք

չունի. այլ ուղղամթերքի եւ պարէնի, մարդու առաւելութիւնը պարէնի տեսակէտով աւելի պէշ է:

9. Շիշմանանէն 30 դիւրուր ղրկեց մեզի. Փրանսացիք թուրքերը պարտէզներէն հեռացուցին. 300 թուրք գերիներ բերին. վերադարձայ վերածինին քովէն. եթէ պատրաստուին իշ. օր պիտի միանայ հաճընիներուն:

22 Օգոստ.— Կառավարութեան ղեկնցիկը որ ինքը իր միջոցներով օգնութեան փութայ. բայց աւա՛ղ, միտք կը խնային մեր միւսամտօրէն ըրած առաջարկին:

Մեր Միութիւնը կը խարէ պ. Տամատեանը գործը յաջող ցոյց տալով. ինչո՞ւ արդեօք: Թամատեան եւ Դարբինեան սուղ պուրջուր տուած են: Կը շահագործեն:

22 Օգոստ.— Հաճընի Ագարճայն օգնութեան գայեթ եւ անօրուտ է. 9գոթիկան պ. Տիգրան Հաճընի խումբին համար գնումներ ըրած է. կը վախճամ չի յաջողիր. պատասխանատու պ. Տամատեանն է. երազային ծրագիրներով մարդ մըն է. ինչք Պոլստեանն ալ կամայ սկստայ սնոր մտիկ կ'ընէ. թշնամին վրտահ է իր յաջողութեան եւ լաւ տեղակ է մեր ծրագիրներուն. ամէնէն կարճ եւ օգտակար ճամբան, միջոցներ գտնել եւ ուղղամթերք ղրկելն է Հաճըն. Հաճըն մարդէ աւելի ղինամթերք պէտք ունի: 9. Տամատեան Փոստայանի հետ որոշեցինք Արմազանեանը միտքն առնել, կուսակցութիւններու կրթալ եւ Ազգ. Միութեան միջոցով կառավարութեանն արժանի մը ղրկուիլ ինչպիսի մեր միջոցները ընաւ չին ներքի օգնութեան հասնելու. կուսակցականները ունէ կերպով օգտակար չեն կրնար ըլլալ. խոստացածին ալ չեն տար. Հնչակեանները 100ի սեղ 18 հոգի, իսկ Ռամկավարներն ալ միայն 8 հոգի:

24-26 Օգոստ.— Կուսակցականները ոչ մէկ օգնութիւն ընել կ'ուզեն: Հարիւրաւոր զինուորի տեղ Հնչակեանները ամբողջը 22, Ռամկավարները 38, Դաշնակցութիւնը 30 եւ վերակազմակալները ոչինչ տուած են:

Չամատեան Ենօք եւ ուրիշներ սկսան ամսականով աշխատիլ. այս նուիրական գործը շահու աղբիւր ըրին:

Վերածինի խումբը կոտի մէջ է. մեռեալ ունեցաւ. թուրքերը՝ 40 մեռեալ:

24 Օգոստ.— Տամատեան հետ Ապտողու գայեթը, Հ. Յ. Դ. զինուորները համոզելով Ագարճա բերինք: Ատանայի մէջ խոսք ժողովի մը որոշումով 900 հոգի պատրաստել միշտ 3 օր եւ անմիջապէս ճամբու դնել ղիպի Հաճըն:

25 Օգոստ.— Վերածինին հետ Ատանա իջանք: Տրանս-Պուրջ գաշնապիր ստորագրուած է 10-11 Օգոստ.: Հնչակեաններու ներկայացուցիչ պ. Վահան Ժամկոչեանը Հաճընի Հայր. Միութիւնը պատասխանատու կը նկատէ գործին անյաջողութեան. մեր զինուորները հիմա ետ կը կանչու եթէ ուզեմ. Հնչակեանները 20 հոգի եւս ղրկած էին, որոնք 1/2 ժամէն վերադառնալու համար զուրկան եւ այլեւս չեկան ընաւ. շատ սուտ խօսեցան եւ կը խօսի միշտ. չեն ուզեր երթալ:

26 Օգոստ.— Վերածինին հետ Ագարճա գայեթը, եւ իրիկուր պ. Արմազանեանին հետ Ատանա եկանք: Հաճընի գործերով պատասխանատու ղեկավարութիւնը կու տան չեմ աւանդ: Քաջ թալուած եւ անյաջող աշխատանք է: Հ. Յ. Դ. ակումբի պահուի ներք ցրուցի:

27 Օգոստ.— Փարիզէն պ. Ահարոնեանը հեռագրով Սեբրի գաշնապիրը ստորագրած ըլլալը կ'իմացնէր: Այս ուրախառիթ պարալան օպտայործելու նպատակով եկեղեցիին մէջ պահարանական աղօթքի ատեն զինուորները շատցնելու համար քարոզներ տալ: Սակայն անօրուտ էր: Թուրքերը Հաճընի վրայ երթալիք Ագարճայի ոյժը Հաճըն ղրկելու համար Հաճընէն հեռանալով ճամբաները կը սպասէին, որով Հաճընցին հանգիստ ձգուած էր Հաճընի մէջ. թուրքերը կը խօսէին ստիկա: Վերածինը վերադարձաւ վերջնականօրէն:

Յաջողելու համար մտաւորականներու մասնակցութեան փորձ ըրին. Տամատեան, Մնացականեան եւ 15 հոգի կամաւոր արձաւարուեցան:

28-29 Օգոստ.— Հրամանատար Արմազանեան իր հետ ունենալով Վարդան Իսկենտէրեան անունով օգնական մը, քամին առաջարկներով պործը վիժեցնելու չափ ղժուարութիւններ յառաջ կը քէշ. Հաճընի Հայր. Միութիւնը այս ամէնքին ալ ամէն զինով պահպանում տալ կ'աշխատի Հաճընի սիրոյն համար. բայց մարդը երթալու միտք չունի. ղիտամը այնպիսի ղժուարութիւններ ստեղծել կ'ուզէ որ ղինքը հրաժարեցնեն: Ե՛, երթալու համար ղոհողութիւն պէտք է, եւ այդ է որ կը պակսի պ. հրամանատարին քով:

Հ. Յ. Դ. Ագարճայի զինուորները ետ եկած էին. ետ ղըրկուեցան ղէնքերը առնելով եւ մեկի կը սպասեն:

Հ. Յ. Դ. հաշիւները մաքրեցի. յոյս չկայ Հաճըն կրթալու. Արմազանեանը պիտի չերթայ: Իրիկուրը ընկ. Արամ Մնտիկեանն քաշեցի: Հաճընցիները յուսահատ էին. կը խորհէին լեզնուին 100-150 հոգի առնել եւ ղրկել. եթէ ըլլայ շատ լաւ է. անոնք չեթէյի մեռով կրնան երթալ:

30 Օգոստ.— Որոշ հասկցուեցաւ որ Արմազանեանը չերթալու համար երկպառակութիւններ ստեղծել կը ջանայ իր կուսակցութեան թեղաղութեամբ (Ս. Դ. Հնչակեան): Խառն Յանձնախումբ մը ստեղծուած էր: Ատնք որոշեցին հայ լեզնուին 3-400 հոգի վարձել եւ Հաճըն ղրկել. աւելի յարմար պիտի ըլլայ. կուսակցութիւնները սնանկացած են: Հնչակեանները իրենց աւերի թոյններով ամբողջ կամաւորները թունաւորել սկըսան: Իրենք տուած մարդիկին կ'ուզեն քաշել:

Գործին լաւ կերպով փարած ըլլալու համար 60 ոսկի ամսական տալ ուզեցին, չառի. ղրամի պէտք չունէի: Մէկ բան կը ստիպէր ղիս աշխատելու. Հայրենիքիս սէ՛րը:

Լեզնուականներու եւ Տօթթ. Կիւլպինկեանի հետ խօսուեցաւ եւ ընդունուեցան իրենց պայմանները. պ. Շիշմանեան արագաձորուածը չտուաւ. ամէն մարդ ճիշդ մը ունի գործին յաջողուելուն համար, որ ինքն ալ չերթայ:

Թերեւս Փրանսացիք արդիւն յետոյ լեզնուականներուն մեկնումն ալ:

9. Պոլստեան խոստացաւ առեւտրական գործ տալ ինձի:

2 Սեպտ.— 9. Արմազանեանը հրաժարեցաւ: Վա՛ւտ մարդ:

3 Սեպտ.— Ագարճա գետի զինուորները յորդորելու, ճամբան ձիւն ինկայ. ձեռքերս վերաւորուեցան. անվընաս էր:

Փրանսացի հայասէր սպայի մը՝ Տը Ֆալուայի առաջարկով Աճիւտան Գէորդը, մշեցի (Գէորդ Չաւուշ) յայտնի հերոս լեզնուականը իբրեւ խումբին հրամանատար կանչուիլը որոշուեցաւ:

9. Վահրիճը Հնչակեաններու կողմանէ Ագարճա ղրկուած էր, ներքնապէս կ'աշխատէր քանդելու: Իգմիրէն խումբ մը հնչակեան զինուորներ եկած էին. Հայրենակցական Միութիւնը, այս 50ի մօտ տղաքը ճաշի կանչեց Վալէմսիին մէջ: «Մոյլը ինկողը փրփուրին կը կառչի»: Յայտնի ստանացի Սուրէնին խումբը եւ այս տղաքը նաղարէթ Չաւուշին խումբին հետ Ագարճա մեկնեցան: Ատնք ամէնքն ալ ղրամ կը ստանային Յանձնախումբին: Դրամով զինուոր վարձելու ղրութիւնը լաւ չէր, յաջող արդիւնք չտուաւ. զինուորը կը չիսացնէր եւ պարտականութեանն աւելի ղրամին կը կապուէր սրտով եւ մտքով:

Հ. Յ. Դ. ղէնքերը Ագարճայն բերուեցան: Գոմանտան Հանլը Հաճըն ղրկուելու համար մեր տուած նիւթերը ետ տուաւ:

7 Սեպտ.— Դրամի կապուած զինուորը ղոհացնել շատ ղժուար էր. ղէյթուցիներու Մալիի խումբը կանխաւ ստացած 10ական ոսկին իբրեւ կանխավճար քիչ սեպտեմբրով քաշուեցաւ: Քայքայումը սկսած էր. ուշացումը բարոյալքեց զինուորը. ղրամն ալ չկրցաւ զինուորին հաւատքը ամուր պահել երթալու մասին:

9. Շիշմանեան, Ազգ. Միութեան անդամները Ագարճա գետին, Աճիւտան Գէորդը զինուորներուն ներկայացնելու համար:

8 Սեպտ.— Գէորդ Չաւուշ իբրեւ ընդհ. հրամանատար Ագարճա մեկնեցաւ. Հնչակեանները բաժնուելու փորձ ըրին:

9. Շիշմանեան ղէնք տուաւ խումբին: Հ. Յ. Դ. ետ ղէնք տուաւ խումբին:

11 Սեպտ.— Հաճընէն եկող փոստա մը բունուելով ըստպանուեք էին: Հաճըն անօթութեանն կը տառապի եղեր. թշնամիին պաշարումը շատ թեթեւ է եղեր Հաճընի շուրջը: 9. Պրեմոնին Ատանայէն մեկնելու ղրոյցը ելաւ: Ժէնէրալ Կուրոյի հրամանը շատ խիստ էր. ամէն կերպով պէտք է Հաճըն օյնութիւն փութացնելու գործը վիժեցնել, թուրքերը չցուցնելու համար: Սիսի արշաւախումբը պ. Պրեմոնին հրամանով սկսած էր, սակայն յետոյ ժէնէրալ Կուրոյի հրամանով վիժեցաւ: Այս ալ այդ բանին պիտի յանգի: 9. Կարապետ Գ. ը պաղտնօրէն իմացած էր:

Խումբին ղրամ բաժնուեցաւ. պ. Պրեմոն օգնել կ'ուզէ եղեր. ժէնէրալ Կուրոն չի մեր օգնելու:

9. Մ. Ոսկեան 5 ընկերներով նաճարլի մօտերը սպանուած են:

Ֆրանսացիք հայերը Տէօրթ Եօլ, Իսկէնտէրուս եւ Ամերիկա զրկել կ'ուզէին: Ազարճա զէնք շատ զրկուեցաւ: Պօղոս Թուրքաբազիսեան խոստացած 100 եգիպտ. ոսկին շտուաւ. փախաւ Մերսին:

12 Սեպտ.— 9. Մարտիրոս Ոսկեան Նաճարլըէն Տէօրթ Եօլի ճամբան հինգ ընկերներով սպաննուած էր: Երկտասարդ բանաստեղծ հաճընցին Հաճընի համար զոհուեցաւ. հաճընցին յանձին Ոսկեանի, մեծ եւ կարեւոր ոյժ մը կորսնցուց: Ոսկեանի սպաննումովը, Հաճընը պիտի կորսնցնէր իրմէ շատ բաներ, իր յաղթանակի եւ ոչնչացումի պարագային: Անիկա հաճընցի պուշտն էր. Հաճընի ցնծութեան եւ տիրութեան սուգի երգերը պիտի երգէր ամբողջ աշխարհին, իր բանաստեղծի զգայուն թելերով:

14 Սեպտ.— Կազմակերպութիւնը այս վիճակին մէջ էր. պարագաները յուսատու չէին: 9. Պօղոս Թուրքաբազիսեան կազմակերպումի սկիզբի օրերուն 100 եգիպտ. ոսկի նուիրելու եւ իր կողմէն ալ 10 զինուոր պատրաստ ունենալու խոստումը ըրած էր, սակայն մինչեւ հիմա զրական եւ ոչ մի օգտակարութիւն ցոյց չտալէ վատ իր ամբողջ խոստումը զրոյթով, իր փափաքին վրայ կ'անցնէր, Մերսին կ'երթայ: Ատանացիները եւ սեպիներն ալ մինչեւ հիմա ոչ մէկ օգնութիւն չըրին, ո'չ զրամական եւ ոչ ալ զինուորական տեսակէտէ:

9. Պրեմոնը Ֆրանսա կանչուեցաւ. զնաց այսօր: Ֆրանս. իշխանութեան մէջ միակ մարդն էր, որ անպաշտօն կերպով կ'ուզէր միշտ օգնել եւ օգտակար ըլլալ հայերուն: Հայասէր էր: Եւ այս պատճառով ալ հեռացուցին հաւանարար:

Ֆրանսացիք հայ վաղթականներուն հրաման տուին որ զէմբէն հեռանան եւ երթան Տէօրթ-Եօլ, Իսկէնտէրուն եւ այլուր: Ժողովուրդը երթալ չէր ուզեր:

Ազգ. իշխանութիւնը եւ ժողովուրդը Ատանայէն դաղթել չէին ուզեր:

16 Սեպտ.— Արշաւախումբի կազմակերպութեան գործը շահադրձումի աղբիւր դարձաւ: Զինուորները ցրուելով վերջ տալ պէտք էր. չեն ըներ եւ պարագայ տեղը զրամ կը վատնուի ասոր-անոր:

Ազարճա Հնչակեանները Գէորդ Չաւուշին վրայ զէնք պարպեցին: Ֆրանսացիք հայերու հանդէպ լաւ չէին: Պօղոս կայ որ Ատանան պիտի պարպեն Ֆրանսացիք:

9. Մ. Ոսկեանի յիշատակին «Հայ Զայն» մէջ յօդուած մը գրեցի:

Ֆրանսացիներուն քաշուելուն մասին կը խօսուէր: Շիշմանեան եւ Վ. Ժամկոչեան Ազարճա զացին, Հնչակեանները համոզելու որ մնան:

18 Սեպտ.— Հնչակեանները Ազարճա զատուեցան խումբ

բէն. հաճընցիներու զէնքերը եւ պիտոյքները միասին առնելով հեռացած են:

19 Սեպտ.— Ազգ. Միութիւնը այս խնդրին համար բացառիկ ժողովի մէջ պ. Ժամկոչեանին (հնչակեան ներկայացուցիչ) սուտը հաստատելով պ. Շիշմանեանի վրկայութեամբ, եղած դործերուն ամբողջ պատասխանատուութիւնը ձուլուեցաւ Հնչակեաններու վրայ:

Ֆրանսացիք կ'ուզէին որ հայերը կամ քաշուէին իրենց հետ եւ կամ կուռէին թուրքերուն դէմ: 9. Շիշմանեան Ժամկոչեանին սուտը հանց եւ Ժամկոչեան լռեց: Հնչակեանները զինթափ ընելու որոշում տրուած է:

20 Սեպտ.— Հաճընէն լուր եկաւ թուրքի մը միջոցով, որ հայերը թէեւ կորուստ ունեցան կուռի մը ընթացքին, սակայն յաղթող հանդիսանալով մեծաքանակ պարէն եւ ռազմամթերք դրակեցին:

Դէպքերը զէնք երթալ սկսան: Կանխազգացումով մը, որ մի դուցէ Ֆրանսացիները խումբը ցրուեն եւ դրակեն ամէն ինչ, յանձնախումբը որոշեց ամսուն 22էն երկու օր վերջ խումբը դադարի կերպով դիչերանց ճամբայ հանել Գէորդ Չաւուշի առաջնորդութեամբ. վերջին պատրաստութիւնները տեսնուեցան:

Կառավարութիւնը պ. Շիշմանեանին հրաման տրուած է որ իր կամաւորները ցրուէ եւ պատրաստ ըլլայ ինքն ալ մէկ-երկու օրէն Կիլիկիայէն հեռանալու: Քէմփի ժողովուրդը դաղթել չուզելուն համար, կառավարութիւնը զէմփը շղթայի տակ առաւ եւ սկսաւ դաղթել տալ:

9. Շիշմանեանը գործէն հանցին Ֆրանսացիք: Զինուորները ցրուելու հրաման տրուած է:

21 Սեպտ.— Կառավարութիւնը Ազգ. Միութիւնն այլեւ չէր ճանչնար. Օղոստ. 5էն ի վեր յարաբերութիւնը խղուած էր, սակայն Պրեմոնին մեկնումէն ի վեր բոլորովին կ'անտեսուէր նոյնիսկ կարեւոր հրահանգներ հաղորդելու համար: Այսօր կրօնական պետերը կանչեր էր ժէնէրալը. միայն հայ կաթողիկոսները պետերը գացած էր: Ազգային Միութիւնը իրրեւ վերջէն ստեղծուած քաղաքական մարմին չէր ճանչցուեր այլեւ. թրքական հին օրէնքներով ճանչցուած կրօնական պետերու հետ յարաբերութիւն մշակել սկսած էր Ֆրանս. իշխանութիւնը:

Յանձնախումբը իրիկուան դէմ Ազարճա զնաց, վաղը խումբին մեկնումին դործերը կարգի դնելու:

Կառավարութիւնը յարանուանութեանց պետերը կանչեր էր չլացին. դերապայծառը գացած է միայն:

Զինուորական յանձնախումբը Ազարճա զնաց գործերը կարգի դնելու:

22 Սեպտ.— Յանձնախումբը երբ մեկնումի դործով կը դրաղէր, առտու կանուխ երկու ջրոն զինուորով Ֆրանսացիք Ազարճան պաշարեցին. միասին թանկ եւ թնդանօթ ալ ունէին: Զինաթափումի հրաման տուին:

զինուորները առանց այլեւայլի յանձնուեցան: Ֆրանսացիք զինաթափ ըրին տղաքը, Գատրի պէյին ազարակը տարին եւ անկէ ալ Գարաթաշէն քիչցին դէպի Իգմիր:

Ամբողջ ծրարիւրը ջուրը ինկաւ. մեկնումի պարագան մատնուած էր: Ազգ. Միութիւնն ալ պատրուակով մը կանչեցին եւ աքսորեցին Կիլիկիայէն դուրս:

Ֆրանսացիք Ազարճան պաշարեցին թնդանօթով եւ թանքով եւ զինաթափ ըրին զինուորները, Գատրի պէյին ազարակը զրկեցին: Մատնուած էինք. ժողովականները կրցեր էին Ատանա հասնիլ: Արմաղանեան փախած էր: Ազգ. Միութեան անդամները աքսորուեցան. Շիշմանեան եւ աքսորուեցաւ. Տօթթ. Մնացականեանն հետ զինուորներէն մաս մը 30 ձիերով քաղաք եկած էին, Ազարճայի զէնքերը պահուած տեղէն բերին:

Ազգ. Միութիւնը վերակազմել ուզեցին:

23 Սեպտ.— Առաջնորդ Գէորդ վրդ. Արսլանեանը մատնած էր: Թուրք տունները պարպելու հրաման տրուած էր. թուրքերը պիտի գային. թրքական քաղաքականութիւնը բռնեք էին Ֆրանսացիք:

Առաջնորդը սպանաց, եթէ արտուրի կ'ուզեն թող կազմեն ընկով: 7 հոգի եւս աքսորուեցաւ. Ֆրանսական քաղաքականութիւնը թուրքերուն ի նպաստ է:

28 Սեպտ.— Թուրք վարչութիւն հաստատուեցաւ: Բարեկործականի գոյքերը պ. Հմայեակ Ուղուրլեանի յանձնեցին:

30 Սեպտ.— Գոնիայէն Միլլի ատանա մը կ'իմացնէր, որ Սեպտ. 4-5ին հաճընցիք դուրս խոյացեր եւ 14 կորուստ եւ մէկ զերի տալով քաղաք քաշուեր են կրկին: «Ճէրտա» թրքական թերթն ալ կը գրէր, թէ հաճընցիները ազատ են. պաշարումը թոյլ է ամիսէ մը ի վեր: Հաճընցիին այնքան աշխատանքը, օգնութեան փութալու դործին, հիացում կ'ազդէր: Անխտիր մեծ թէ փոքր, ամէնքն ալ իրենց աշխատութեան բաժին բերած էին, բայց աւաղ բոլորն ալ ապարդիւն անցան: Մինչեւ 70-80 տարեկաններն ալ գործի մղուած էին:

1 Հոկտ.— Պուրտեան Գեղամ - Արշամ զացին:

Հաճընի օգնութեան Զին. Մարմնի Զինուորներու Ընտրութեան Յանձնախումբը նկատի ունենալով կարգ մը հաճընցիներու Ֆիզիքական տկարութիւնը, եւ անոնցմէ ալ օգտուելու պարագան, ընդհանուր ժողովի մէջ թեր ու զէմ կարծիքներէ վերջ, Յանձնախումբին տեսակէտը, տասի դէմ 20ով ընդունուեցաւ, ըստ որում, այն ամէն հաճընցի զինուոր, որ նիւթապէս կարող է եւ կրնայ վճարել 100 լ. թրք. թղթադրամ, զերծ է զինուորական ծառայութենէ: Ներկայ որոշմանաբերին գործադրութիւնը կը թողունք Զինուորական Մարմնին: 14/8/1920, Ատանա:

Չաքար ձէրէճեան, Նազար Տումանեան, Սիմոն

Գալըպճեան, Մարտիրոս Կէրթմէնեան, Կարապետ Մըտաճումեան, Մանուկ Զարիկեան, Մինաս Թաթուլեան: (Ստորագրութիւններ)

((Զինուորական Յանձնախումբի մէկ որոշում Յայտարարութիւնը):

3 Հոկտ.— Առաջնորդը նամակով մը Հաճընի արշաւախումբին լքեալ գոյքերը կը պահանջէր՝ սպանալով: Հաճընցին անոր տէր եւ տիրական ըլլալով հանդերձ, սրտի ցաւէն լքած էր ամէն ինչ. իսկ Ազգ. Միութիւնը եւ պ. Տամատեան այդ գոյքերը, մօտաւորապէս 10-15 հազար ոսկի թղթադրամի արժէքով, յանձնած էին ատանացի Շահմէր Ալըղեանի եւ Ստեփան Թեյլախեանի, որոնք ծախսեցին այդ ամէնը եւ պարտքերը վճարելէ դատ մնացածին մէկ մասը, 500ական ոսկիի արժէքով, իրենք իւրացնելէ վերջ մի քիչ մասը յանձնած էին աղղին սնտուկը:

16 Հոկտ.— Հասան պէյ Հաճընի կողմերէն եկած էր. լուր կար որ հաճընցիները թնդանօթ եւ պարէն գրաւեր են Օղոստ. 7ին:

19 Հոկտ.— Հաճընէն 3 հոգի եկան, Միսաք Կէօզիւքիւչիւքեան, մատէն Ղրմեան Արթին եւ Գրիգոր Սաչեան: Կը խօսին հաճընցիներու հանգստութեան եւ ուտելիքէ նեղուելու մասին: Հաճընցի մէկ մուկ, կատու, շուն, էջ, ձի եւ այլ կենդանիներ չէ մնացած, ամէնքն ալ կերուած են ժողովուրդէն:

21 Հոկտ.— Հաճընի օգնութեան փութալու համար Ֆրանս. իշխանութեան դիմում եղաւ: Զինուոր չեն կրնար զրկել, բայց ուրիշ կերպով պիտի աշխատին դոհացում տալ: Ինչ կերպով արդեօք կ'ուզեն ընդմիշտ վերցնել այդ հարցը՝ Հաճընի բնաջնջումով: Ծըրմարտութիւնն ալ աս է: Դաւաճանեմ'ը. քանդեցին մեր աշխատութեան արդիւնքը, ցրուելով կամաւորական շարժումները:

22 Հոկտ.— Ֆրանսացիք պաշտօնապէս լուր էին գրկեր, «Կիլիկիա» թերթն ալ տպած էր, որ վաղը Հաճըն օղանաւ պիտի երթայ:

23 Հոկտ.— Հաճընէն ձէրէճեան Թորոս եղբայրը, երկու ընկերներով եկան, առաւօտուն, մերկ, բոկոտն եւ անօթի: Կը պատմէին Հաճընի Հոկտ. 15ին ինկած ըլլալը: Իրենք 1000ի չափ հոգեով քաղաքէն դուրս են եկած. միւսներուն ինչ ըլլալը յայտնի չէ: Պանութիւնը դոցուեցան, Հայկ. Եւաղոյնը կէս եւ սեւ շղարշով պարզուած էր: Հաճընցիներն ու յուզուած ժողովուրդը առաջնորդարան վազեցին, առաջնորդը ծեծեցին, եկեղեցւոյ բանալիները առին, կառավարութեան պիտի յանձնէին ի նշան ցոյցի:

Սուլըր ամէն տեղ, ամէն սիրտ պատեց. Ատանան խոր քունի մէջ թաղուած էր, օր ցերեկով, ամէն ոք, խօսիլ անպատճառ չէր ուզեր, լեզուն կապուած էր. արիւնը ցածքած, կենդանութիւն չէր նշմարուեր: Ուր էր այն ետուղեւոր, խանդի օրերը, որ շարունակ 8 ամիս, մերթ ընդ մերթ ստացուած յաղթական լուրերով կը ցնծար Հաճընցիին, հայուն սիրտը: Աւաղ փառացս անցաւորի. ամէն ինչ մէկ բանի համար էր եղած, Հաճընի ոչնչացումին համար:

24 Հոկտ.— Ատանայի հայ թերթերը, «Կիլիկիա», «Տաւրոս» և «Հայ Ձայն» միայն մէկ էջով լոյս ընծայուեցաւ, ի նշան սլոյց եւ սա քանի մը տողերու բովանդակութեամբ միայն:

«Կիլիկիա».— Հաճըն ոչ եւս է... Երէկ 23 Հոկտ.ին բոթարեր սուրհանդակներ ութը ամիսներէ ի վեր պատնէշի վրայ կեցող հերոսական Հաճընի հերոսական անկումը պոստեցին: Թշնամի բաղձաթիւ ուժեր մեծ թնդանօթներով կը յարձակին դիւցազներու բոյնին վրայ եւ ոտմերթու տարափին տակ պատնէշները խորտակելէ յետոյ, ներս կը խուժեն ու անխնայ կը կոտորեն բնակչութիւնը, նոյնիսկ ծերերը, կիներն ու մանուկները:

Նախատի՛նք, տկարներու պաշտպանութեան անուանով շահուած յաղթանակին:

Նախատի՛նք, քրիստոնեայ աշխարհին:

«Կիլիկիա»

25 Հոկտ.— Այսօր 11 հոգի եկան. մէկը կին էր. ամէնքն ալ կը պատմէին կսկծալի վախճանը: Գայմազամ Չալեանը, Թէրզեան, Էլիխանեան եւ ուրիշներ զերի տարուեր են: Կիրակի առաւօտ 17 Հոկտ.ին, գոնաքին մէջ եղողները ամբողջ զերիները վանք տարեր եւ անկէ ալ խումբ-խումբ հանելով քաղաքին հիւսիսային ձորերուն մէջ սպաններ են: 1000էն աւելի հողիներ, կոռուղ ոյժ, կիներ եւ մանուկներ դուրս կրցեր են ելլել, սակայն շատերը սպանուեր են: Արամին, Չանիէլ եւ Մեսրոպ Շիրամեանին, եւ ուրիշ խումբեր զուրսը Սաղըր Սէֆիի մօտ կռիւ կը մղեն եղեր: Արզէն քաղաքին մէջ 3-4000 հոգի ջարդուեր են: Եղբորս ալ զուրս ելլելու մասին կը խօսուէր: Մերինները մինչեւ վերջը ողջ են եղեր: Ճամբան բեկորներուն օգնութիւն հասցուելու համար 3-400 հոգինոց ոյժ մը գէպի Միս զրկուելու ձեռնարկուեցաւ:

26 Հոկտ.— Այս գիշեր, Արամ Մշեան եւ Մանուկ Շերթարմեան եկան ձիւհանէն. 3-400 հոգինոց խումբի մը կը պատկանէին, որոնք Թլանի(*) մէջ ապաստանած կռիւ կը մղէին. պաշարուած ըլլալով օգնութիւն հարցելու եկած էին. օգնուաւ մը զրկուեցաւ եղած դիմու-

(*) Թլանի (Սոյն Կաթողիկոսարանի ցրաղացը):

մին վրայ, օգնուաւ ոչ ոք չէր նշմարած Թլանի մօտերը, բաց դաշտի մէջ խուժանին բազմութիւնը շատ է եղեր:

Ամբողջ շարաթ մը, սուլի նշան. զպրոցները եւ եկեղեցիները պոստուելու որոշուած էր: Կառավարութիւնը հայերէ զրկուելիք ոյժը մերժեց գէպի Միս, ինքը զրկել խոստանալով:

27 Հոկտ.— 12 հոգի եւս եկան. Արամի խումբէն լուր չելաւ Թլանին: Օգնութեան Յանձնախումբ մը կազմուեցաւ: Գիշերը ու շատն Արամին 350 հոգինոց Թլանի խումբը ձիւհան հասած էր:

28-29 Հոկտ.— ձիւհանէն 16 վերաւոր եկաւ. մնացածներուն Տէօրթ զրկուելը կը խօսուէր: Գ. Շմաւոնը Հ. Յ. Դ. կուսակցութեան 150 ոսկին տարաւ Հաճընցիներուն բաժնելու համար ձիւհան: Թլանի մէջ մեր տղաքը օգնուաւ տեսեր էին, զրօշակ ալ պարզեր էին իրենց հետքը ցոյց տալու համար: Իսկ Ֆրանսացիք սուտ խօսեցան եւ շնջարեցինք ըսած էին: Ժէնէրալը ձիւհան դացած էր տղաքը տեսնելու:

30 Հոկտ.— Մարդ չեկաւ. կ'երեւի Թշնամին շղթան խոսացուցեր է ճամբան: Փաս հանել տուի ձիւհանի համար:

31 Հոկտ.— ձիւհան մեկնեցայ, 500 ոսկի եւ 4 սնտուկ հալուստ տարի հետս. 500 ոսկի աղբ. սնտուկէն, իսկ լաթը իմ քովս եղած Հ.Բ.Ը.Մ.ի Հաճընի պահեստի լաթն էր: Տղաք շատ նիւհար էին, խնամքի կարօտ: Անօթութիւնը եւ 15 օրուան շարշարանքները մինչեւ ձիւհան հասնելին, զիրենք մաշեցուցեր է: Ասոնց մէկ մասը Տէօրթ-Եօլ եւ մեծ մասն ալ Ատանա զրկուեցաւ:



Այս քանի մը օրերու մէջ հատուկտոր եկածը, ամբողջը, մօտաւորապէս 400 հոգի եղած էր: 8000էն աւելի ժողովուրդէ մը միայն 400 հոգի. ահա՛ ութամսեայ պոյամարտին արդիւնքը:

Օգնութեան Յանձնախումբը պէտք եղած խնամքը կը տանէր:

Մինչեւ հոս, հաճընցիներուն Ատանայի աշխատութիւնները միայն նկատի առնուած էր: Քիչ մը Հաճընի մէջ երթանք եւ տեսնենք, թէ ինչ էր որ հոն կը կատարուէր:

1919ի Մայիս ամսու սկիզբն էր, որ 15 հազար հաճընցիութեան կը վերադառնար Տէր-Չօրէն եւ այլ անպատաններէն 7-8000 հոգի միայն: Թուրք նախճիրը իր ծրագրին մէջ յաջողած էր: Կիսած էր հաճընցիին թիւն իսկ, որը տարազրուութեան 4 տարուայ ժամանա-

կամիջոցին, ամէն կերպ աշխատութեանց դիմանալու չափ արդէն չարքաչ կեանքի մը շատ վարժ էր իր ծննդավայրին մէջ:

Հաճընի տուներուն 3/4ը 915ի Սեպտ. ամսու 15ին կառավարութիւնը դիտումնաւոր կերպով, ինչպէս ուրիշ քաղաքներու հայնոցները, Հաճընի լքեալ գոյքերուն, թողոնին հաշիւը փակելու եւ ապաղային, վերադարձի մը պարապային, քաղաքին մէջ չհաստատուելու նպատակով այրած էր. քաղաքին չէն մասը մոխիր եղած էր, կը մնար Եաշի Թաղին շատ քիչ մասը, Գալալիի, Չամուրընբու, Գօրուշեցի, Կէլէկիմ մէկ մասը, Ս. Յակոբայ կամուրջին եւ Գամիլը Բագարի Թաղերուն հին ու մին կիսուեր տուները:

Հաճընցիին Չինդաղարէն վերջ վերադարձին միայն այս թաղերուն մէջ հաստատուած էր, 3-4 ընտանիք հաղու մէկ սենեակի մէջ պարփակուելու ձեւով:

Ճրանս. իշխանութեան եւ քեմալական սահմանադրուելու Հաճընն էր, իր դիւզերով: Ճրանսացիք առանց Ֆրանսական զինուորական ոյժ զրկելու, տեղացիներէ կազմուած ժանտարմըրիի ոյժով սկսան կառավարել. Կիլիկիոյ մէջ առաջին քաղաքն էր որ պետական հայ կազմ ունէր:

Հաճընցիին, արդէն արհեստաւոր, անմիջապէս խաղաղ աշխատանքի մղուեցաւ: Սկսած էր լաւ շրջան մը բոլորիլ: Աղքատ չկար. ամէն ոք դիւզերը ելած էին, իրենց հին պահանջները պոնձելու եւ աշխատելու համար: Գիւղերը ամբողջութեամբ թուրք էին, միայն Շար-Տէրէ եւ Ռուսուլը դիւզերը հայ էին:

Ձմեռը հասած էր. ամէն ոք մինչեւ Մայիս ամսու վերջը իր պարէնը պատրաստած էր ըստ տեղական սովորութեան: Ուրախ զուարթ իր զպրոցական դործին նուիրուած էր:

Ազգ. Միութիւն մը կազմուած էր զուտ Հնչակեաններէ: Հնչակեանները հաճընցիին թէեւ մեծ մասը կը կողմէին, սակայն որակի տեսակէտով Դաշնակցութիւնը աւելի ոյժ կը ներկայացնէր: Ազգ. Միութիւնը իր ոչ-դիտակից կազմով՝ Դաշնակցութեան հետ չէր կրցած համաձայնիլ, իսկ փորձառու եւ չէզոքներն ալ իրրեւազա բոլորովին հեռու պահած էին ազգային դործերու միջամուխ ընելէ: Ահա այս ձեւով կազմուած Ազգ. Միութիւնը ամէն ինչ էր Հաճընոյ մէջ: Ան իր անխոհեմութեամբ շատ անգամ թէ՛ թուրքերու զայրոյթը կը զրգոէր հանճընցիներու հանդէպ եւ թէ Ֆրանսական իշխանութեան համարումը կը պակասեցնէր հաճընցիին:

Ահա այս զլխաւոր պատճառները, ստիպեցին թուրքերուն թշնամանքը հրաւիրել հաճընցիին հանդէպ եւ 3-4 ամիս վերջը հաւանական դալիք փորձանքը, Հաճընի վրայ, կանխեցին եւ պատրաստեցին 8000 հոգիի սպանդը, Հաճընի մոխրակոյտը եւ ութամսեայ պոյամարտի անփառունակ վախճանը:

Հաճընցիին ձեռնուան սկիզբը զգացեր էր թուրքերուն իրենց հանդէպ սնուցած կասկածանքը: Ազիզիյէ

գաւառակիին եւ դիւզերուն մէջ քեմալական-չեթէյական խիստ դաղտնի կազմակերպութիւնը Հաճընի համար էր. երբեմն ձերբակալուած թուրք լրտեսներէ ամէն ինչ խմացուած էր: Հաճընոյ զլխուն կը պատրաստուէր այդ ամէնը: Թուրքերը չէին մարսած հաճընցիներու ոմանց կողմանէ եղած անիրաւութիւնները: Թուրքը միշտ ալ մուկ է կատուին հանդէպ եւ կատու՝ մուկին: Երբ քեմալական շարժումը զօրացաւ Հաճընի սահմանը սկսած էր որոշ կերպով ընդվզումներ ընել տուրքերը չտալու, տեղ-տեղ հայ ժանտարմըրիին ծեծելու փորձերով:

Հաճընն ալ անպորժ չէր: Բախտի բերումով, բնիկ կեսարացի, Անդրանիկի բանակէն, Կովկասի մէջ, վաշտապետի ստորձանով քաջ հայ մը, պ. Սարգիս ձէպէճեան Հաճըն կը պտնուէր: Լաւ զինուորական էր: Ինքնապաշտպանութեան կոմիտէ մը կազմուած էր. պ. Սարգիս ձէպէճեանի նախադահուութեան տակ եւ Միհրան Մանիսաճեան, Յակոբ Չալեան, Տիգրան ձէպտեան (դաշնակցականներ), Մեսրոպ Շիրամեան, Միհրան Գայեան, Ռուրէն Երկաթադորճեան, Հաճի Տրդատեան, Գրիգոր Սրղվընեան (հնչակեաններ), Կարապետ Օղլուպեան եւ Պետրոս Թէրզեանի (չէզոք) անդամակցութեամբ:

Պ. Սարգիս ձէպէճեանի շնորհիւ, ամբողջ ժողովուրդը խումբ-խումբ եւ վաշտ-վաշտ զինուորական կրթութիւն եւ մարզանք կը կատարէր, երբ հաճընցի տեղակալ Կարապետ Չալեան պաշտօնով Հաճըն հասաւ: Քանի մը օր ստալ Չալեանի հասնելէն, 80-100ի չափ Մաղարա դիւզաքաղաքին երեւելիներէն թուրքեր իրրեւ պատանդ Հաճըն կանչուած եւ բանտարկուած էին հայերու կողմանէ, սպաղայ յարձակումի մը եւ կամ դիւզերու մէջ ցրուած հայերու դալիք վտանգի մը առաջն առնելու յոյսով: Տեղակալ Չալեան եկածին պէս, թուրքերը սիրաշահելու մարմալէն տարուած, այս բանտարկեալ թուրք երեւելիները ազատ կը թողու, հակառակ ժողովուրդի դիմումին եւ այս կերպով հայութեան համակրանքը կը կորսնցնէ, որը պատճառ կը դառնայ, որ իր երբեմնի խոհեմ թելադրութիւնները անլսելի կը մնան ժողովուրդէն, միաս պատճառելով Հաճընին:

Ներքնապէս ժողովուրդը կազմակերպուած էր, արտաքնապէս ալ, օգնութեան դռներ պատրաստելու յոյսով Պետրոս եպսկ. Սարաճեանէ, վերապատուելի Յարութիւն Ռաշատուրեանէ եւ Շմաւոն Փոստոյեանէ պատուիրակութիւն մը ճամբայ հանեց գէպի Միս եւ Ատանա, որոնք Միս երթալու ատեն առաջին չեթէյական յարձակման ենթարկուելով, բաւական մաքառելի վերջ, Յովակիմեան Յարութիւն Չալուշին քաջութիւնով կրցան տղատիլ եւ հասան Միս ու անկէ ալ Ատանա ու հոն պէտք եղած աշխատութիւնը տարին, ինչպէս կը տեսնուի Ատանայի հաճընցիներու աշխատութեան բաժնին մէջ:

Յարձակումի առաջին նշանը տրուած էր Շար գիւ-

դէն. Սարահեան եպիսկոպոսի պատուիրակութիւնը Փետր. 22ին մեկնեցաւ Սիւ. Ծարը 23ին պաշարման տակ ինկաւ:

Մէկ-երկու հարիւր հողի Հաճընի հիւսիսային կողմէն դուրս ելած էին հետազոտութեան, Ռուսլուի մօտերը. այս խումբը թշնամիէն կը պաշարուի. լուր հասաւ Հաճըն. Սարգիս ձէպէճեան 200 հողով մեկնեցաւ օգնութեան. Կէօֆ Թէփէ ձէպէճեանի ճարտար դարձուածքովը, խումբերը տեղ-տեղ դիրքերու մէջ մտան. Արամ Կայծակը, Մկրը, ձէպէճեանէն իրենց խումբերով 3 մեթր ձիւնի մէջէն խոյացան թշնամիին վրան, եւ թշնամին մաքառուձէ վերջ փախուստի մատնեցին դէպի Ռուսլու եւ հոն կեդրոնացան:

Առաջին յաղթանակն էր խրոխտ հաճընցիին. քաղաքը ցնծութեան մէջ էր. առաջին այս կոխը տեղի ունեցաւ Մարտ 10/920ին:

16 Մարտ.— Առաջին սաւանակը երեւցաւ Հաճըն եւ Մանոսխանէի մօտերը նամակ եւ թերթ նետեց. նամակը այսպէս էր. «1200 քաջեր ճամբայ կը հանուին, օրական 200 հողի Սիւ զրկուելով. ամուր կեցէք ձեր դիրքերուն մէջ»:

23 Մարտ.— Կիրակի օր սաւանակ մը եկաւ Ս. Սարգիսի դաշտը սնտուկ մը փամփուշտ նետեց. մեկնումէն 4 ժամ վերջ, Չալղանի յարձակումը սկսած էր: Հաճընցիին ոյժերը, Իճօլուի, Կէօյնիկի, Չալղանի եւ Տօնուզ Մէքիսիի դիրքը բաժնուած էր: Քաղաքին մէջ պահեստի 100 քաջերով պ. ձէպէճեան Չալղան վազեց:

29 Մարտ.— Չալղանի յարձակումին յաջորդեց Ս. Յակոբայ բարձունքի, Կէօյնիկի եւ Տօնուզ Մէքիի յարձակումները: Քաղաքը մարդ չէր մնացած, 10 տարեկանէն մինչեւ 80 տարեկան մանչ, աղջիկ կին եւ տղաք փութացեր էին ճակատ: Կիները չուլէ վրան կը շինէին, կերակուր կը պատրաստէին կռուողներուն եւ կ'օգնէին ստորերկրեայ աշխատանքին, փոքրիկները սուրհանդակի դեր կը կատարէին: ձէպէճեան ամէն կողմ էր, կը վազէր, կը քաջալերէր եւ ահա կոխը կը վերջանար ի նպաստ հայերուն:

Այս կոխը տեւեց մինչեւ ուրբաթ օր, անընդհատ բոլոր ճակատին վրայ:

Հաճընցիները թուրքերու կողմանէ եղած ընդհատ յարձակումներու դիմադրելէ եւ բնութեան, ձիւնին ու բուքին դէմ կռուելէ յոգնած, կ'որոշեն ամփոփուել քաղաք եւ ինքնապաշտպանութեան կռուի մէջ մտնել: Ամիս մը տեւած էր դուրսի կոխը:

Յունիս 8ին, խումբ մը քաջեր, մեծ մասամբ դպրոցական աշակերտներ, Ս. Յակոբայ վանքին կողմէ կը խոյանան զօրանոցին վրայ եւ կրակի կու տան զայն: Թուրքերը զօրանոցին կրակ ու մուխը տեսնելուն պէս կը կարծեն որ հաճընցիներու 3 ամիսէ ի վեր սպասած

փրկութեան բանակը պաշարած է զիրենք՝ սկսան փախիլ: Լաւ խոյանքով մը, Ս. Սարգիսի բլուրն ալ գրաւելով մեր տղաք, փամփուշտի եւ ումարի մեծ պաշարով մը վերադարձան:

Այս կարեւոր յաղթութիւնը սիրտ տուած էր հաճընցիին: Կ'ուզէին յարձակիլ Գրտէթի վրայ եւ հոն ամերիկացիներու մօտ գտնուած 290 որբերը ազատել: Ու յանկարծակիան խոյանքով մը թուրքերը փախան եւ որբերը Հաճըն փոխադրուեցան:

Այս յաղթութիւններէն յետոյ հաճընցիին պարէնի եւ ռազմամթերքի տալիսապը մեղմացաւ, ալիւրի, ցորենի եւ ոչխարի գրաւումով: Միլիճիները Ս. Սարգիսը իրենց կեդրոնը ըրած էին. հոն թուրքերուն մէջ կարեւոր դրութիւններ կային, որոնք ամէնքն ալ աւելի պակաս, կ'ուզէին բնաջնջել Հաճընը. սակայն, անկարող ըլլանուն, իրենց հրամանատարներէն նախատական նամակներ ստացած էին(**):

9-24 Յունիս.— Թուրքերը հակցան որ այս ամբողջ յարձակումը նորէն հաճընցիներն էին որ կը կատարէին, իրենց օրհասական ոգորումը կը ցուցադրէին. դուրսէն ուէ ոյժ չէր եկած: Սիսի հրամանատար Ալի Սախի հրամանատարութեամբ յարձակումը խտացուցին, թնդանթի, միթրայէօզի եւ վէպէի պայթիւնները Հաճընը ամբողջ մուխի մէջ կը թնդացնէին:

Պ. ձէպէճեան վիրաւորուած էր. իրեն փոխանորդը Արամ Կայծակ ստանձնած էր իր դործը: Կոխը Տազը թաղին եւ Կէլէկի վրայ երկուստէք սաստիկ էր: Որբանոցի տղաքը կրակներու տակէն չպայթած ռումբերը կը հաւաքէին եւ հայերուն փամփուշտի եւ վէպէի պակասը կը լրացնէին եւ այդ կերպով յարձակումը իր լաւ արդիւնքը կու տար: Քաղցէ հիւժած կիները դետնուղիներէն ջուր կը հասցնէին:

Այս ալ վերջացաւ մերիներուն յաղթանակով. առտուանց թուրք դիակները կը ցուցնէին որ կորուստին շատ է եղած:

Թուրքերը յուսահատ եղած յարձակումներու ապարդիւն մնալէն, դադար առած էին: Հաճընցիին ազատ շունչ կ'առնէր:

Ատանայի մէջ Յունիս 11ին Տօքթ. Տատի միջոցով քեմալականներու մօտ Հաճընի համաձայնելու աշխատութիւն կը տարուէր: Թուրքերը այս բանը նկատի ունենալով մտադրած էին, ատկէ առաջ Հաճընի վրայ մեծ յարձակումով մը փճացնել եւ կատարուած իրողութեան մը առաջ դնել:

Յունիս 19ին սկսաւ այդ յարձակումը եւ չյաջողեցան: Երկրորդ հրահանգի մը վրայ, Օգոստ. 4-5ին Հաճընի վրայ ուժգին յարձակումի մը կը պատրաստուէին:

(**) Այս ամէնը գրաւուած թուրքերու պարուստ կուրծնէն կը յայտնուէր:

4 Օգոստ.— Հաճընը իր կարելին ըրած էր, թուրքերու եւ բնութեան դէմ ապրելու համար: Պարէնը սպառած էր, կեանքը քարչ տալու փուլէն դուրս եկած էր. կիները եւ չափահաս աղջիկները օրերով ծոմ պահելով կ'ուզէին իրենցմէ խնայուած կտոր մը չոր հացը, կանաչ խոտը, տերեւներէ եփուած լափան տանիլ իրենց ամուսիններուն, որպէսզի կուշտ եւ անօթի կըռուին թուրքին դէմ եւ օր մը, ժամ մը աւելի ապրին: Սպառած էին անասուններն ալ: Այս անգամ ամէնքն ալ անխտիր ծոմ պէտք է պահէին եւ օրին մէկն ալ անօթի անսուազ ստորերկրեայ խորշերուն մէջ ինքզինքնին մեռած գտնէին. այս աւելի դէժ էր, թշնամին զիրենք մեռած պէտք էր գտնէր. աւելի լաւը՝ թշնամիին վրայ խոյանալով մեռնիլն էր. երկու պարագային ալ մահը անխուսափելի է:

5 Օգոստ.— Պ. Արամ Կայծակ, 200 հողի պատրաստ մարտիկներէն դատելով, քաղաքին հարաւի մասէն գիշերանց կը բարձրանայ լեռ եւ Ս. Յակոբայ վանքին լեռան կատարէն՝ առանց նշմարուելու, արշալոյսին կը խոյանայ Չէպէկի սարալանջին զետեղուած թնդանթին վրայ. կը զրաւեն թնդանթը. նոյն պարագային ուրիշ խումբ մը, պ. Արշակ Սահակեանի եւ այլ խումբապետներու առաջնորդութեամբ խոյանքներ կը կատարէ Ս. Սարգիսի, Գրտէթի եւ այլ դիրքերու վրայ միաժամանակ: Բոլոր ճակատին վրայ ուրախութեան եւ ցնծութեան հուրբաներով յառաջխաղացում կը կատարուի. յաղթութիւնը կատարեալ է: Աւար եւ աւեր թշնամի խրամներու մէջ:

Ձեռք անցուած պաշտօնական թուրքերու պարուստութիւնը.— Տողան պէյ կը գրէ. «Ամսոյս չորսի մեծ յարձակումին վերջնական յաջողութեան պիտի մասնակցի 600 ռումբերով թնդանթն ալ: Իւրաքանչիւր զիւղի մուխթար իր զիւղի զինուորներուն պիտի միանայ. որեւէ զիւղի մը բնակչութիւնը յարձակման վարանումի պարագային, զիւղը քարուքանդ պիտի ըլլայ եւ բնակիչները մահուամբ պիտի պատժուին»: Մէկ ուրիշ հրամանագիր մը՝ Մ. Քեմալի հրամանագիրը. «Մօտ օրերս Ամերիկեան Հաշտարար Յանձնախումբ մը (Տօքթ. Տատը իր ընկերներով) պիտի դայ Հաճըն հաշտութեան համար. անոր ժամանումէն առաջ աշխատեցէք վերջնականօրէն լուծել Հաճընի խնդիրը, մոխիւրի վերածելով զայն», եւ կ'ըսէ. «Ձեր տրամադրութեան տակ եղող ամերիկեան միախոնարներու կեանքին հոգ տարէք. այս պարագան մեր արտաքին քաղաքականութեան համար անհրաժեշտ է: Հաշտութեան կնքումէն առաջ վերջ տուէք Հաճընի անուին եւ անոր վեցամեայ համբաւին»:

Ահա այս էր Հաճընի համար ծրագրուածը: Սակայն հաճընցիին թշնամիի մանր մուր շարժումէն կտանած էր մեծ յարձակումի մը նախօրեակին մէջ ըլլալը

եւ կանխած էր ինքը եւ այդ կերպով թշնամիին բոլոր յոյսերը ի դերեւ ելած էին:

6 Օգոստ.— Թնդանթը մեծ դժուարութեամբ յաղթանակներէն քաղաք բերուեցաւ: Ժողովուրդը աննկարագրելի խանդավառութեամբ լեցուած էր:

Ժողովուրդը 8 օրուայ պաշար հայթայթած էր եւ կարող էր արտերը ելլել, խոտ հնձել եւ թթենիի եւ որթատունկի տերեւով քանի մը օրուայ պարէնը աւելցնել: Թնդանթը կատարեալ յաջողութեամբ երկու ռումբ արձակեց, մէկը Ս. Յակոբայ սարալանջին եւ միւսը Կիւրլէշէն գիւղին վրայ: Թշնամին հեռացերէր թնդանթի հասողութեան շատ աւելի հեռու: Ստորերկրեայ աշխատութիւնները վերջ գտած էին: Օր ու արեւ կը տեսնար 6 ամիսէ ի վեր դժոխքը ապրող հաճընցիին:

**

Ժողովուրդին հուրբանութիւնը փոխուած էր: Յաղթանակէ յաղթանակ վազէն գինովցած, կ'ուզէին խոյանքները շարունակել աւելի հեռու գիւղերը, պարէն ունենալու մարմաջով: Հաշտարար Յանձնախումբին ժամանման սպասելու յոյսով, աննպատակաբար մար սեպուեցաւ դուրս խոյանալը, անտեղի զոհողութիւններու տեղի չտալու համար:

Այդ օրերուն տեղակալ Չալեան առաջարկ բերաւ նահանջել դէպի Սիւ՝ թնդանթի հսկողութեան տակ. սակայն Յանձնախումբին ժամանումը եւ այդ օրերը Ատանայէն զրկուած 3 հողինոց սուրհանդակին բերած օգնութեան հասնելու բարի լուրերուն վրայ, զաղթի մասին եղած առաջարկը մերժուեցաւ:

Սեպտ. 8ին դուրսը, քաղաքէն 4-5 ժամ հեռաւորութեան վրայ սուրհանդակներ զրկուեցան, ազատաբար բանակին ժամանման եւ կամ Սիւր գրաւուած ըլլալու լուրը բերելու համար: Սուրհանդակները, իրենց քննութեան արդիւնք ըլլալով, թուրքերու մօտ տիրող տրամադրութիւնները մեր կարծածին բոլորովին հակառակը գտած էին:

Օր մը ձիււոր թուրք մը բռնուած էր մեր հետազօտիչներէն. վրայէն տոմսակ մը ելաւ, Ռուսլուի կառավարչին՝ Ուլու Գլչայէն, — «Մ. Քեմալի հրամանով, երեք մեծ հրասանդ (հալա թօփու) կու դայ, 15-5, 10-5, 10-5նոց: Իսկոյն 1000 հողով ճամբաներու շինութեան ձեռնարկեցէք», ստոր. Տողան»:

**

Օգոստոսէն յետոյ Սեպտեմբեր ամիսն ալ կ'անցնէր եւ հաճընցիին ճակատագիրը ոչ մէկ բարելաւում չէր կրեր: Սովը իր աւերները կը շարունակէր գործել մեծ համեմատութեամբ: Ժողովուրդին բարոյական

ոյժը կրկին ընկրկումի ենթարկուեցաւ: Յուսահատութիւնը կրկնակի էր անոր համար, որ օգնութեան չէր գար, եւ անոր համար որ ժողովուրդը մաշած եւ կքած էր սոյի ճիրանին տակ:

20 Սեպտ.— Ամէն յուսահատութիւն իրեն համար յուսատու յղացումները կ'ունենայ: Գուրս խոյանք մը, եւ ահա ամէնքն ալ գօտեպնդուած թուրք սպաննելու յաղթականի ուղիով եւ պարենաւորուելու յուսով, թուրքացածները կրկին ուժովցած պատրաստ են շարժելու պահանջի համաձայն: Երկու կարծիք կար. մէկ մասը Կիւրլէշէնի, իսկ միւսը Ռուսլուի վրայ խոյանալ կ'ուզէին: Յուսալքողները Կիւրլէշէն կ'ուզէին երթալ, ի հարկին այս դժով ալ Ատանա հասնելու յոյսով: Վերաւոր վազը, պ. Ճէպէճեան նշմարած էր այս կէտը: Իր փոխանորդին հրամայեց խոյանքը Ռուսլուի, քաղաքին հիւսիսային ամենամօտ դիւղին, թուրք բանակատեղիին վրայ կատարել, ուր պարէն շատ ըլլալու հաւանականութիւնը աւելի շատ էր:

22 Սեպտ.— Արամ Կայծակ 400 հողի պատրաստեց: 15 մասի բաժնուած էր այս 400 հողին՝ 15 խմբապետներու առաջնորդութեամբ, որոնք Ս. Աստուածածնայ եկեղեցիին մէջ Ս. Հաղորդութեան մասնակցելէ վերջ, ուղղուեցան 15 դժով: Հաճրնէն մինչեւ Ռուսլու եւ Ռուսլուի շուրջը, կարեւոր 15 դիրքերու մէջ կը սպասէին հայ քաջեր: Ռուսլուի յարձակումը եւ մուտքը Արամ Կայծակի վիճակուած էր 90 դիւղերով: Արամ Կայծակ արշալոյսին Ռուսլուն պաշարեց, հետագօտիչ 9 հողինոց խումբ մը մօտեցաւ դիւղին: Ուրիչ խումբ մը եւս Կիւրլէշէնի վրայ պատրաստ կը սպասէր Ռուսլուէն տրուելիք ազդանշանին:

Ռուսլուի մէջ ամբարուած խոտին կրակ տուին մեր տղաքը եւ խոյացան ձիւսոր 200 չէրքէզներու վերայ, որոնք խրամներու մէջ կը գետեղուէին մեր տղոց դէմ կուռելու համար: Խոտին բռնկումով ամբողջ դիւղը լուսաւորուած էր. յարձակումը հուրբաներով սկըսաւ. ուսմբերու, հրացաններու պայթումէն եւ հուրբաններու անընդհատ յանկերպէն շերքէզները եւ թուրքերը «Ալլա՛հ, Ալլա՛հ» պոռալով փախուստի կը դիմէին: Տողանն ալ փախած էր:

Իրիկուան դէմ 25 կառք ցորեն, 500 այծ, ոչխար եւ 60 ձի փոխադրուեցաւ Հաճրն. Կիւրլէշէնի եւս 1000 դոմէշ բերուելու ատեն՝ Օպրուխի ձորին մէջ թշնամի մեծ ուժէ մը վերադարձուած էր:

Ռուսլուի կուռէն շերքէզ բժիշկ մը դերի բերուած էր. այս շերքէզը պ. Ճէպէճեանին վերջը կը խնամէր. նամակ գրեց Ախ Բունար, որ ինքը ողջ է եւ պէտք է հաճրնցիներու եւ թուրքերու թշնամութեանց վերջ տալ եւ 1000 շինիլ ցորեն ղրկել: Նախապէս գրաւուած սաւարը հաղիւ (7-8000 հողիի համար) 15-20 օրուան պաշար էր: Նամակը սուրհանդակ մը 7 ժամուան տեղ մը

տարաւ եւ կերպով մը յանձնեց հասցէին, սակայն պատասխան ընաւ չեկաւ, հակառակ 20 օր անցած ըլլալուն:

Սովահար ժողովուրդը նորէն յարձակում կ'ուզէր: Քանի մը անպամներ դէպի հարաւ Կիւրլէշէնի վրայ ըլլալիք յարձակումները՝ անձրեւի պատճառով յետաձրուեցան:

Թշնամին մեր այս սպասողական դրութենէն օգտուելով, նոր ոյժերով զօրացած, դրաւեց Ս. Սարգիսի բարձունքը եւ իշխեց քաղաքին վրայ, նոյնիսկ փողոցներու մէջ երթեւեկութիւնը արդիւլելու աստիճան:

Ռուսլուէն բերուած պարէնը սպառած էր. սովահար ժողովուրդը խաշած խոտ ուտելէն դալկացած եւ հիւժած էր: Կտրիճ կուռողները աշնան տերեւներու պէս թոռմած եւ տփուունած էին: Կենդանի անասունի հետք չէր մնացած քաղաքին մէջ: Սովը յառաջ կը տանէր բնաջնջումի դիւնային ծրագիրը:

Թշնամին նոր ոյժերով զօրացած, յարձակումի պատրաստուելու նշաններ ցոյց կու տար:

Հաճրնցին նախատեսելով սպառնացող վտանգը, Հաճրնի վրայ բարձրացող սարերուն վրայ հետախոյզներ հանուեցան, թշնամի ոյժերը քննելու համար:

Օրին մէկը, 14 Հոկտ. իրիկուան վերադարձան հետախոյզները. ամէնուն ալ պատմածը մէկ բան կը պարզէր. թշնամին ստուարաթիւ եւ թնդանթով, միթրայսոզով դիւնուած մեծ ոյժերով պաշարած էր:

Վայրկեանը ճշմարտամային էր: Պէտք էր ի մի հաւաքել մեր գերազոյն կորովը, դիմադրաւելու համար վտանգը:

Անմիջապէս խումբեր կազմուեցան. 100 հողինոց խումբ մը Արամ Կայծակի եւ 100 հողինոց խումբ մըն ալ Արշակ Սահակեանի առաջնորդութեամբ յառաջացան՝ թնդանթին ետեւը անցնելու եւ երկու դժով պաշարելու համար:

Խումբերը յառաջացան երկու ուղղութեամբ. թշնամին խոստացած էր շղթան. հաղիւ 15 վայրկեան դէպի թշնամին մօտեցած էին, թուրք պահակները խիստ կրակով մը արդելք եղան յառաջխաղացումին. նահանջեց խումբը:

Ամէն ոք գետնայարկ խրամները մտան. պէտք էր ինքնապաշտպանութեան կուռը մղել: Լուսաբացին, 15 Հոկտեմբերի Ուրբաթ օրը, իր հետ բերաւ Հաճրնի սեւ Ուրբաթը, արհաւիրքի ժամեր կ'անցընէր ժողովուրդը: Մինչեւ իրիկուն երեք կէտերէ, երեք թնդանթները դոռացին. տունները եւ խրամները հիմնայատակ կործանեցին: Երէկ յաղթանակէ յաղթանակ սուրացող քաջերը, այսօր հիւժած ու սպառած էին քաղցէ. մահու սարսուռ մը պատած էր իրենց ամբողջ էութիւնը:

Ժողովուրդը խուճապի մատնուած կ'աղօթէ ու կ'անիծէ իր սեւ բախտը, որ այսպէս լքած էր զինքը: Ս. Աստուածածնայ եկեղեցիին վրայ ինկաւ ուսմբ մը, որ քանդեց ամբարցեալ դիրքերը եւ իր փլատակներուն

տակ թաղեց ժանտարմըրի սպայ պ. Յովհաննէս Ժամկոչեանը եւ Բարեղործականի հիւանդանոցի ղեղապարծ պ. Հմայեակ Փափազեանը:

Մինչեւ իրիկուն 200 ուսմբ արձակուած էր: Մահը սովորական դարձած էր. լաւագոյն կտրիճներուն պատնէշի վրայ եւ խրամի մէջ ինկած ըլլալու դոյժերը կը հասնէին իրարու ետեւէ:

Իրիկուն է. ճնշող խաւարը պատեց. ժողովուրդը իրարանցումի մատնուած խելակորոյս կը վազէ ամէն կողմ, ուսմբէն խուսափելու յոյսով: Ապահով տեղ չկայ. թշնամին արդէն մեր կրունկներուն վրան է, դիրքերը պարպուած են... մարդ չկայ. Գանլը Բագարի քաջերն ալ իրենց վերջին փամփուշտը արձակած էին:

Կրակը պատած էր ամէն կողմ. թշնամին քաղաքին


մէջն էր. մահը սկսած էր իր մանուաղը շարժել: Թնդանթին պակասը՝ կրակը եւ միթրայէօզը կը լրացնէին. դժոխք եւ վերջին դատաստան: Փախուստ փախուստի. կրակ եւ հուր:

Բոցերու լոյսին տակ անէացող հերոսական քաղաքի աւերակ փողոցներէն խումբ-խումբ քաջեր, ճրգած ամէն ինչ, կը խոյանան դէպի դուրս, դէպի սարերը: Մարտնչելու յոյսը եւ աւիւնը կորած է...:

Հերոս Հաճրնը չկայ այլեւս. դիակ դիակի վրայ. իսկ զոհերէն ողջ մնացածները, փախչելու եւ ինքզինքնին սպաննելու անկարողները, իրրեւ գերի՝ հիմա Ս. Յակոբայ վանքին մէջ փոխանակ ազօթքի մրմունջի, ժամ առաջ կը սպասեն գեհնու ճարձատիւնին:

Յաղթուած է Հաճրն. չկայ այլեւս: Փա՛ռք յաղթուած Հաճրնին:

Ա. ԶԱԼԵՆՑ



ԿԱՐԳ ՄԸ ՃՇԴՈՒՄՆԵՐ

Ա. հատորի արտատիպի՝ օգտակար կը նկատենք ընթերցողի ուշադրութեան յանձնել հետեւեալ կարգ մը կէտերն ու ճշգումները:

1) Հ. Յ. Դաշնակցութեան Ոսկեհանգի (Իզմիր) գործունէութեան եւ գործիչներուն մասին հետաքրքրական մանրամասնութիւններ կը գտնենք ՀԱՅՐԵՆԻՔ ամսագրի մէջ լոյս տեսած յուշագրական բնոյթի երկու շահեկան յօդուածաշարքերու մէջ, — Յ. Թօֆանեանի Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԻԶՄԻՐԻ ՄԷՋ (ԺԴ. տարի՝ թիւ 9, 10 եւ 11) եւ Յովհաննէս Պոլաճեանի Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԻԶՄԻՐԻ ՇՐՋԱՆԻՆ ՄԷՋ (ԼԴ. տարի՝ թիւ 11, 12, ԼԵ. տարի՝ թիւ 1, ԼԶ. տարի՝ թիւ 1էն 12 եւ ԼԵ. տարի՝ թիւ 1, 2 եւ 3) գրութիւնները: 1904-905ի դաւադրական պատրաստութիւններուն եւ անոնց ձախողութեան հետեւանալով թուրք ստիկանութեան հետապնդումներուն, ձերբակալութեանց եւ յեղափոխականներու կրած տանցանքներուն մասին մանրամասն վկայութիւններ կու տայ ի մասնաւորի՝ Յովհ. Պոլաճեան:

2) Վերայիշեալ երկու յօդուածաշարքերէն մեկնելով, մէկոյի ձգելով անշուշտ դէպքերէն տարիներ ետք գրի առնուած յուշերու մէջ գտնուող կարգ մը անխուսափելի հակասութիւնները (*), մեզ հետաքրքրող շրջաններուն եւ դէմքերուն մասին կրնանք ընել հետեւեալ հետաքրքրական ճշգումները:—

ա) Ըստ Յ. Պոլաճեանի, Աշոտ Մարքիւնը (Մարքիւն Մուրատեան) Իզմիր գտնուած է 1895-1898 թուականներուն: Արդ, Մարքիւնի թղթածրարին գէթ 1896 թուականի նամակները ուղղուած են իրեն՝ Ազեխան-դարի կամ Կիպրոս: Կրնա՞յ ըլլալ անշուշտ որ Մարքիւն այդ թուականէն առաջ գտնուած ըլլայ Իզմիր: Տրուած ըլլալով նաեւ որ թղթածրարին մէջ 1897 թուականէն Մարքիւնին ուղղուած ոչ մէկ նամակ կը մնայ՝ որմէ կարելի ըլլայ հետեւցնել անոր այդ թուականին ո՛ր ըլլալը, հաւանական է ուրեմն որ ան Իզմիր գտնուած ըլլայ նաեւ 1897ին, նոյնիսկ մինչեւ 1898ի կէտերը: այդ կը հաստատէ նաեւ Կ98-2 գրութիւնը (էջ 22), ԴՐՕՇԱԿԻ հմբագրութենէն ուղղուած Մարքիւնին, Ազեխան-

(* Օրինակ, ըստ Յ. Պոլաճեանի, 1895ին Սիսակը Իզմիր էր արդէն, մինչ, ըստ Յ. Թօֆանեանի, ան Ամերիկայէն Իզմիր գործիչ է եկած 1896ին միայն: Ըստ Յ. Թօֆանեանի, Հ. Յ. Դ. Յրդ Ընդհ. Ժողովին (Սօֆիա, 1904) Ոսկեհանգի պտտագմաւորը եղած է Կարապետ Ալվազեան): մինչ Յ. Պոլաճեանի Համաձայն՝ Հանգիկապէրը զԸր-կեցիքը ընկ. Վարդուի՛ն՝ մեր ձայնն ալ աւելով անոր Ընդհ. Ժողովին մէջ (ԼԵ. տարի, թիւ 1, էջ 89):

դրիա, ուր կ'ըսուի՝ «Ստացուած է նաեւ Իզմիրէն մեզ ուղղած 24 Յուլիսի գրութիւնը»:

Հետաքրքրական է նշել՝ որ Յ. Թօֆանեան, որ կը թուէ Իզմիր գործած բազմաթիւ հեղինակաւոր դէմքեր, չի յիշեր Աշոտ Մարքիւնը:

բ) Կ02-5 նամակի (էջ 78-79) հեղինակը՝ Կօշկա-կար Վարպետ Օհաննէս՝ ուրիշ մէկը չէ եթէ ոչ յօդուածագիր Յովհաննէս Պոլաճեանը ի՛նքը (Իզմիրի «Որոտում» խումբի խմբապետ եւ «Վարպետ» անունով ծանօթ):

Ուշագրաւ է թէեւ՝ որ, իր այդ նամակով Մարքիւնի Իզմիրէն հեռանալուն մէջ «արդիւնաւոր հետեւանք» չգտնող, անոր «նակատէն համբուրող» եւ բուն կերպով Սիսակը պաշտպանող Յ. Պոլաճեանը իր յուշերուն մէջ (ԼԵ. տարի՝ թիւ 1, էջ 89-90) կը գրէ:— «Դժժբախտաբար, շուտով գտաւ իր (Էտկարի) փառասիրական տենչերուն յագուրդ: տուող գործակից մը: 1904 Մարտ ամսոյն մէջ էր որ դարձեալ Իզմիր եկաւ Աշոտ Մարքիւնը: Այս երկուսին հետապնդած ուղղութիւնը գայթակցեցուցիչ էր: Հետեւանքը այն եղաւ, որ, փոխանակ ընկերներու համակրութիւն շահելու, ընդհակառակն, անոնց գայրոյթը հրաւիրեցին իրենց վրայ»:

գ) Սիսակը՝ որ, Կ02-3 գրութեան ծանօթագրութեան մէջ մեր հանած եզրակացութեան համաձայն, ուրիշ մէկը չի կրնար ըլլալ եթէ ոչ Իզմիրի գործիչ էգ-վարդը կամ էգուարդը, իր բուն անունով՝ կը կոչուի Սմբատ Պոլաճեան: Ան, Մարքիւնին նման, հարբերոցի է եւ եկած՝ Ամերիկայէն: Միեւնոյն ծանօթագրութեամբ անոր ինքնութեան շուրջ կատարուած հարցադրումները այս ձեւով կը լուսարանուին եւ կը վերնան:

Ըստ Յ. Պոլաճեանի, Իզմիրի Հ. Յ. Դ. անդրանիկ Մարմինը (1895) կազմուած էր Սիսակէն, Մարքիւնէն, եւ երկու տեղացիներէ՝ Իզմիրցի Թազուր Կարմիրեան եւ սրենքի Սարգիս (ԼԴ. տարի, թիւ 11, էջ 36):

դ) Սիսակի ինքնութիւնը (իբրեւ Սմբատ Պոլաճեան) կը հաստատուի նաեւ Յ. Թօֆանեանի գրութեամբ (ԺԴ. տարի, թիւ 9, էջ 139), այն տարբերութեամբ՝ որ, ըստ այս վերջինին, Սիսակ Ամերիկայէն Իզմիր է եկած 1898ին միայն: Ամիջապէս յիշեմք՝ որ էգվարդ 1896 Մարտ 21 թուակիր նամակ ունի Մարքիւնին ուղղուած, գրուած Պոլսէն (տեսնել Կ96-5, էջ 12, ապա նաեւ Կ96-13 եւ 14, էջ 17-19): Ի դէպ, Կ96-14 նամակը Մարքիւնին ուղղած են էգուարդ և Ս. Ալվազեան. վերջինը իր բաժինը կը սկսի հետեւեալ նախադասութեամբ, — «Նամակդ ստանալուս չկրցայ պատասխանել, որով հետեւ կ'ուզեի որ Սմբատն ալ գրելով քեզ մի քիչ հանդարտեցնենք»: Կը պարզուի ուրեմն, այստեղ Ս. Ալվազեան տուած է պարզապէս էգվարդի (կամ Սիսակի) բուն անունը:

Սիսակ կը ձերբակալուի 1902ին: Հաւանօրէն 1904ին, իբրեւ ամերիկահայտակ, ան կը վայելէ միջամտութիւնը Ամերիկեան Հիւպատոսարանին եւ կ'ախ-

տորուի արտասահման (Յ. Պոլաճեան, ԼԴ. տարի, թիւ 12, էջ 100-101): Ըստ Յ. Թօֆանեանի, ան, ծայտեալ վիճակով, շուտով վերստին կը դառնայ Իզմիր, մասնակցելու համար 1904-905ի դաւադրական ծրագիրներու իրագործման (ԺԴ. տարի, թիւ 9, էջ 145-146): Հետագային, ան գոհ կ'երթայ Մեծ Եղեռնին (նոյն): Պոլաճեան ուղղակի կերպով չի խօսիր Սիսակի վերադարձին մասին, բայց անոր յուշագրութեան շարունակութեան մէջ եւս զանազան առիթներով կը հանդիպինք Սիսակի անունին:

ե) 1903ին Իզմիրէն Մարքիւնին գրող Գեղամը (տեսնել Կ03-2, Կ03-3, Կ03-7 եւ Կ03-19) ուրիշ մէկը չէ, եթէ ոչ հետագային Տիգրան Եղապեանի թղթածրարին մէջ երեւոյց Բաքարանեանը՝ Ա. աշխարհամարտէն ետք Երուսաղիմ հաստատուած: Անոր մասին Յ. Թօֆանեան կը խօսի՝ իբրեւ «Ոսկեհանգի Հ. Յ. Դաշնակցութեան պրոպագանտի գործին մէջ գլխաւոր դերակատարը», դեռ 1897-98ին (ԺԴ. տարի, թիւ 9, էջ 139): Ըստ Յ. Պոլաճեանի, ան Իզմիրցի Եղապեան Պալապանեանի օժանդակած է երկու լրտեսներու՝ Պոլաճի Մատուրի եւ հայրըսրգ Կարապետի ահաբեկման գործին մէջ (1903 Մայիս 13/26), ատոր հետեւանալով ալ ձերբակալուած, նախ մահապնդու ստացած, ապա՝ Պոլսոյ վնասեղ ատենակին կողմէ՝ 101 տարուան բանտարկութեան դատապարտուած: Պէտք է ենթադրել որ, Հրաչին եւ ուրիշներու հետ, ան եւս ազատ արձակուած է Սահմանադրութեան հռչակումէն ետք, 1908ին:

զ) Իզմիրէն Ազեխանդրիոյ ընկերներուն գրող Զարեհը (տեսնել Կ98-3) կապ ունի՞ արդեօք լրտես Մաքսուտի ահաբեկիչներէն Զարեհ Անդրեասեանի հետ, Արամ կեղծանունով, որ հետագային մասնակցած է Երուսղի մահափորձի աշխատանքներուն, — դժուար է ճշդել. (այս մահափորձին, ինչպէս նաեւ լրտես Գարեգինի, Պալեօզեանի եւ Իզմիրի ահաբեկչական այլ գործողութեանց մասին տեսնել վերայիշեալ երկու յօդուածաշարքերը): Ինչպէս ծանօթ է, 1902 Սեպտեմբերին Պետրոս Ազիզօֆի կողմէ (Խորէն Սարգիսեան) Պալեօզեանի յաջող ահաբեկումէն ետք՝ յաջորդաբար ձերբակալուեցաւ ինքը՝ Ազիզօֆը (որ կախաղան բարձրացաւ 1905ին) եւ Հրաչը (Թիրեաֆեան): Անոնցմէ առաջ՝ բանտարկուած էր արդէն Վարդ-Մանուշակը (Յակոբ Արահամեան):

է) Կը պարզուի՞ որ Ոսկեհանգի կարգ մը նամակներուն մէջ յիշատակուած «Հուր-Երկաթ» ֆաղաքը Մանիսան է (Մաղնիսա), Իզմիրի նահանգին կարելու կեդրոններէն մէկը:

3) Հրաչի կամ Սեպուհի (Հայկ Թիրեաֆեան) կեանքին եւ գործունէութեան մասին շատ շահեկան մանրամասնութիւններ կը գտնենք նաեւ Մ. հաչատուրեանի յօդուածաշարքին մէջ (ՀԱՅԿ ԹԻՐԵԱՎԵԱՆ, տեսնել ՀԱՅՐԵՆԻՔ ամսագիր, ԼԴ. տարի - 1956 - թիւ 5, 6, 7 եւ 8): Յստակ կը դառնայ, ի մասնաւորի, որ Ֆար-

հատը Հրաչի յեղափոխական բազմաթիւ կեղծանուններէն մէկն է (տեսնել Կ02-11, Կ02-12 եւ Կ03-10 եւ Կ03-12):

4) Ընկ. Սարգիս Սարունի (ներկայիս՝ Լոս Անճելէս, Քալիֆորնիա, Ա.Մ.Ն.), տեղեակ ըլլալով Նիւ-Թեթու Ա. հատորի պրակներու բովանդակութեան, որկած է մեզի գրաւոր կարգ մը յանելումներ եւ ճշգումներ: Պիտի ուզեինք որ իր օրինակը վարակիչ ըլլար երէց սերունդի մեր այլ ընկերներուն համար եւս, որոնց տալիք մանրամասնութիւնները, լուսարանութիւններն ու ճշգումները կրնան մեծապէս դիւրացնել ապագայ պատմագիրին շողկապումի եւ համադրումի աշխատանքը:

Ընկ. Ս. Սարունիի լրացումներէն գանց ընելով կարելու բաժին մը՝ Հ. Յ. Դաշնակցութեան Պալապանեանը գործունէութեան վերաբերող (յոյս ունինք հետագային առանձին հատոր մը յատկացնելու շա՛տ կարելու այդ շրջանին), կու տանք հետեւեալ կարգ մը ճշգումները՝ որոնք աղերս ունին Ա. հատորով ընդգրկուած աշխարհագրական շրջաններուն՝ Կիլիկիոյ եւ Պոլսոյ յեղափոխական գործունէութեան եւ գործիչներուն հետ:

«ա) ՄԻՆԱՍ ՎԵՐԱԾԻՆ.— Իր կենսագրական տեղեկութիւններուն վրայ պէտք է աւելցնել, որ բացի «Հայերը Նիկոմիդիոյ գաւառին մէջ» գրքով լոյս տեսած իր արժէքաւոր գործէն, Մ. Վերածին ազգագրական ուսումնասիրութիւն մը ունի Բիթանիոյ շրջանի «Հայ Հոտոմ»ներու մասին, կարգ մը յունապալան գիւղերու բնակչութեան հայկական ծագումը հաստատող: Նաեւ, Վերածին, յօդուածաշարքով մը, ԱՍՊԱՐԷՋԻ խմբագիր եղած շրջանին, ուսումնասիրութիւն մը գրած է իր ճնշողալոյս Պարտիզակի բնակչութեան շուրջ, յիշելով անունները այն ընտանիքներուն, որոնք օտար ծագում ունին:

բ) ՏՕԲԹ. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ, Կիլիկիոյ Կ. Կոմիտէի անդամ, որուն անունը Նիւ-Թեթու էջ 263ին վրայ Հարցականօրէն գրուած է ԴՈՎՏ. Շ.(?), ընկեր Ա. Մնացականեանն է (բժիշկ), որ Հետագային բնակութիւն հաստատած է Պարսկաստան:

գ) Իսկ քանիցս յիշատակուած ՀԱՅԿը (էջ 130, 131, եւն.), ամենայն հաւանականութեամբ, բնիկ պարսկահայ, բժշկական իր ուսումը աւարտած Զուլեյքերիոյ մէջ, բժիշկ Հայկ Գրիգորեանն է, որ Կիլիկիոյ մէջ, Տօքթ. Մնացականեանի հետ (նոյնպէս պարսկահայ) գործելէ յետոյ վերադարձաւ Պոլիս: Տօքթ. Հայկ Գրիգորեան Պոլսոյ Պատասխանատու Մարմին կողմէ յատուկ առաքելութիւնով զրկուեցաւ Հայաստան (հաւանաբար 1921ին), Հայաստանի վրայով Պարսկաստան իր ճնողքին այցի երթալու պատրուակով: Տօքթ. Գրիգորեան յաջողեցաւ երթալ Պարսկաստան, բայց դժբախտաբար իր առաքելութեան մասին չկրցաւ զեկուցել, որովհետեւ չկրցաւ վերադառնալ Պոլիս, քանի որ

վերադարձի ճամբուն վրայ մեռաւ Թիֆլիսի մէջ՝ բը-
ծաւոր Ժանտատենդէ վարակուելով:

դ) Հնչակեան գործիչ ՎԱՀԱՆ ԺԱՄԿՈՉԵԱՆԸ
(տեսնել էջ 125, ապա նաեւ 280 եւ 282) բնիկ Օվաճըզ
գիւղէն է, Պարտիզակի շրջան: 1915ին լեռ բարձրա-
ցած է քանի մը յանդուզն տղաներով եւ ասպատակած
մինչեւ 1918ի սկիզբները: Կապ պահած է Պոլսոյ ընդ-
յատակեայ մարմինն հետ եւ ձմեռները յաճախ Պոլիս
եկած եւ պատասխարուած սկիւտարաբնակ ընկ. Սուրէ-
նի մօտ (բնիկ վանեցի, Թրքական սպայից վարժարա-
նէն շրջանաւարտ էր եւ փախստական վիճակի մէջ
կ'ապրէր Սկիւտար): Սուրէնը ունէր Թրքական զինուո-
րական կայաններու անունով բազմաթիւ կեղծ կնիք-
ներ, որոնցմէ կ'օգտուէին Բիւթանիոյ շրջանին մէջ
1915-18 տարիներուն ասպատակող հայ տղաքը, գլխա-
ւորաբար օվաճըզցիներ: Կիլիկիոյ մէջ 1919-1921 տա-
րիներուն գործող այս հնչակեան զեկավար Վահան
Ժամկոչեանն ալ օգտուած է այս կնիքներէն եւ մեր
տղոց զինական օժանդակութիւններէն:

Բայց երբ, 1918ի սկիզբները, Վահան Ժամկոչեան
էսկիչէհիբի մէջ կը ձերբակալուէր, ան հարցաքննու-
թեան Ժամանակ կը մատնէ Պոլսոյ մէջ այդ շրջանին
(Շաւարշ Միսաքեանի ձերբակալուելէն ետք) գործող
ընկ. Մկրտիչի (Առնաւուտ գիւղ), ինչպէս նաեւ իրեն
այնքան օչտակար եղած ընկ. Սուրէնի (Սկիւտար)

հասցէները: Ընկ. Մկրտիչ եւ իր կինը կը ձերբակալ-
ուին, իսկ ընկ. Սուրէն կ'ազատի շնորհիւ իր տան պա-
տին մէջ պատրաստուած Թաքտոցին: Բիւթանիոյ
լեռները ասպատակող՝ նոյնպէս օվաճըզցի Տօնիկը պա-
տահմամբ Սուրէնին տունը կ'ըլլայ խուզարկութեան
ընթացքին, բայց, արտակարգ յանդիմութիւնով, Տօ-
նիկ, տասնոց ասորճանակը ձեռքը՝ կը նետուի դռնէն
դուրս եւ կը յաջողի ազատուիլ ձերբակալութեան ե-
կողներու հետապնդումէն: Տօնիկի ճակատակիրը զրժ-
բախտաբար դառն եղաւ աւելի ուշ. 1922ին, երբ Քե-
մալականները հասան Իզմիրի շրջանը, ան իր խումբին
հետ սպաննուեցաւ դաւադրաբար, յունական տարա-
զով ծոյտուած քեմալական դումարտակի մը կողմէ:

Ընկ. Սարունիի կողմէ տրուած այս հետաքրքրա-
կան տեղեկութիւններով՝ կը փակեմք յաւելումներու և
նշումներու այս գլուխը, եւ Նիւթեր Հ. Յ. ԴԱՇ-
ՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ շարքի առաջին
այս հատորը:

Անգամ մը եւս կոչ կ'ընեմք մեր այն ընկերներուն
ու բարեկամներուն, որոնք ի վիճակի են իրենց նշում-
ներով ու յաւելեալ տեղեկութիւններով հարստացնելու
տուեալ շրջաններու մեր յեղափոխական անցեալի գի-
տութիւնը, անպայման, եւ անյապազ, գրելու այդ մա-
սին ԱԶԳԱԿ Շաքաթօրեակի հմրագրութեան:

Հ. Յ.



ՅՈՒՑԱԿ
Ա. ՀԱՏՈՐԻՆ ՄԷՋ ՅԻՇԱՏԱԿՈՒԱԾ
ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱՐԵՒՈՐ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ

- ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱՄՔԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆ.- 7բ, 46ա, 63բ, 64ա, 65ա, 65բ, 66ա, 72ա, 82բ.
- Հ. Յ. Դ. ԽՈՐՀՈՒՐԴ.- 139ա, 182բ, 231ա.
- ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՕ.- 30ա, 31ա, 82ա, 83ա, 136բ, 233ա, 263բ.
- ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ (կամ «ԵՐՕՇԱԿ» ԽՐԱՎՈՐՈՒԹԻՒՆ).- 7բ, 8ա, 8բ, 11բ, 20բ, 21ա, 21բ, 22բ, 23ա, 25բ, 26բ, 30ա, 34ա, 34բ, 36ա, 36բ, 38ա, 38բ, 39ա, 39բ, 40ա, 42ա, 46բ, 48բ, 49ա, 53բ, 54ա, 56բ, 57ա, 63բ, 64ա, 69ա, 69բ, 77ա, 78բ, 79բ, 82ա, 82բ, 87բ, 89ա, 90ա, 115բ, 116ա, 116բ, 139ա, 163բ, 172բ, 182բ, 186բ, 187բ, 188բ, 190բ, 191ա, 200ա, 213ա, 223ա, 234ա, 234բ, 235ա, 236ա, 236բ, 259ա, 259բ.
- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՕ.- 136բ, 139ա, 191բ, 252բ.
- Հ. Յ. Դ. ԲԻՒՐՕ.- 122ա, 123ա, 136բ.
- ԿԻԼԻԿԻՈՅ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Կ. Կ. կամ ԼԵՌՆԱՎԱՅՐԻ ՊԱՏ. ՄԱՐՄ.ՄԻՆ.- 6բ, 7բ, 30ա, 37ա, 42ա, 46ա, 48բ, 51բ, 65բ, 75ա, 78ա, 79բ, 82բ, 87բ, 98բ, 101ա, 103բ, 116բ, 126ա, 138բ, 259ա, 259բ.
- Կ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Կ. Կ. կամ ՎԻՇԱՊԻ ՊԱՏ. ՄԱՐՄ.ՄԻՆ.- 138բ, 139ա, 139բ, 172բ, 174բ, 175բ, 176ա, 176բ, 177ա, 177բ, 181բ, 182ա, 197բ, 198բ, 202բ, 203ա, 204ա, 205ա, 205բ, 206ա, 206բ, 207բ, 207բ, 209ա, 209բ, 210բ, 212բ, 213ա, 215ա, 215բ, 218բ, 220բ, 236բ, 263ա-ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԿԵՒՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ.- 139ա, 182բ, 184ա, 184բ.
- ՅՈՒՑԱԿԱՆ կամ ՅՈՒՑԱ-ՏԵՌՈՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ.- 75ա, 113բ, 114ա, 115ա, 116ա, 139ա, 173ա, 234ա.
- ԱՐԵՐԻԿԱՅԻ Կ. ԿՈՄԻՏԷ.- 35բ, 44ա, 46ա, 46բ, 47ա, 48բ, 52բ, 63բ, 79բ, 82բ, 104ա, 137ա, 263բ.
- ԵՂԻՊՏՈՍԻ ԿՈՄԻՏԷ.- 238բ, 240ա, 240բ, 241ա, 241բ, 244բ, 245բ, 246բ, 247ա.
- ԼԻԲԱՆՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ.- 269ա.
- ԿԻԼԻԿԻՈՅ Կ. ԿՈՄԻՏԷ.- 120ա, 121ա, 122ա, 123ա, 124ա, 129ա, 129բ, 131բ, 133ա, 135բ, 137բ, 213բ, 263ա, 263բ.
- ՊՈԼՍՈՅ Կ. ԿՈՄԻՏԷ.- 148ա, 148բ, 152ա, 152բ, 153ա, 153բ, 154ա, 155ա, 155բ, 156բ, 157ա, 158ա, 162ա, 162բ, 166բ, 164ա, 164բ, 165ա, 166ա, 167ա, 167բ, 168ա, 169ա, 170ա, 170բ, 171բ, 172բ, 173ա, 180բ, 181բ, 184ա, 185ա, 185բ, 186ա, 188բ, 191բ, 192ա, 192բ, 193ա, 193բ, 194ա, 195ա, 195բ, 263բ.
- ՍԵՒ ԲԼՈՒՐԻ (ՍԵՐԱՍՏԻԱ) Կ. ԿՈՄԻՏԷ.- 221բ.
- ՎՐԱՍՏԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ.- 264ա.
- ՎՐԷՃԻ (ԱՏՐՊԱՏԱԿԱՆ) Կ. ԿՈՄԻՏԷ.- 98բ, 99ա.

ՅՈՒՑԱԿ Ա. ՀԱՏՈՐԻ
ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐՈՒ

- Արամեան Արախամ 6կ.- 268ա.
- Արգաթեան Գրիգոր.- 268ա.
- Արախամեան Յակոբ (Վարդ-Մանուշակ).- 57բ, 60ա, 60բ, 74բ: 78ա, 84բ, 94ա, 95ա.
- Աղամեան (Յակոբ).- 15ա, 17ա, 85բ.
- Ազատեան Հրանդ.- 246բ.
- Ազիզօֆ.- 94ա.
- Ազիբեան Գրիգոր եւ Միսաք.- 121բ.
- Ազնաւորեան Լեւոն.- 254բ.
- Ազնաւորեան Յակոբ.- 240ա, 241ա.
- Արմաճայեան Սարգիս.- 204ա.
- Ալմազ Մանուկ.- 142բ.
- Ալպոյանեան Արշակ.- 197բ.
- Ալեւուցի (Մալուխեան Խաչատուր).- 81բ, 139ա, 202բ.
- Անարոնեան Աւետիս.- 197բ, 226բ, 227ա, 281ա.
- Անարոնեան Սերոբ Մ.- 74ա.
- Անարոնեան Վարդգէս.- 133բ.
- Անվէտ Բիգա.- 190ա.
- Աղասէր.- 6բ, 46ա, 49բ, 51բ, 52ա, 68բ, 70ա, 72ա, 80բ, 81բ, 88ա, 89ա, 102ա, 102բ, 112բ.
- Աղբալեան Նիկոլ (Հանգոյց).- 198ա, 223բ, 231ա, 234ա.
- Անոթեան.- 63ա.
- Ամատունի Կ.- 122բ.
- Ամիրեան.- 252ա.
- Ալվազեան Կարապետ (Վ. Էտիպար).- 20ա, 20բ, 107բ, 108ա, 110ա, 110բ, 111ա, 113ա, 113բ, 114ա, 114բ.
- Ալվազեան Ս.- 8ա, 9ա, 10ա, 10բ, 11ա, 12ա, 13ա, 14ա, 16ա, 18ա, 19ա, 25ա, 48ա, 53ա, 67ա.
- Անդրանիկ Զօրավար (Օգանեան).- 233բ, 234ա, 235ա, 239ա, 240բ, 241ա, 250բ?, 251բ?, 263բ, 272բ, 285բ.
- Անդրեասեան Արտաշէս (Սուրէն).- 163բ.
- Անուշիկեան Յակոբ Ազա.- 124ա.
- Անտիլեանեան Յարութիւն.- 268ա.
- Ալբրեան Կ. Բ.- 262ա.
- Ալբրեան Դանիէր.- 283բ.
- Ալբրեան (Ալբրեան) Պատրիարք.- 143ա, 143բ, 145ա, 145բ, 146ա, 146բ, 147ա, 147բ.
- Աշեգեան (Ալբրեան) Զիվան Էփէնտի.- 217բ, 218ա, 221ա.
- Աշոտ Լեւոն.- 6բ, 103բ, 104բ.
- Աշուկեան Մեթիլթոս Ե.- 211բ.
- Ասատ Խան.- 276ա, 277ա.
- Ասատուրեան Գալուստ.- 162բ.
- Ասատուրեան Մելիք.- 93ա.
- Ասրլակեան Յակոբ.- 217ա.
- Աստուածատուրեան Կ.- 256ա.
- Ատոմ.- 119բ.
- Արամ Զաւուշ.- 275ա.
- Արամեան Վահան.- 127ա.
- Արապեանեան Ոսկեան.- 268բ.
- Արաքառեան (Զօրավար).- 263բ.
- Արեւեան Աւետիս.- 254ա, 255ա.
- Արզուեան.- 90ա, 253ա.
- Արզումանեան Յարութիւն.- 268ա, 268բ.
- Արզումանեան Սարգիս.- 277բ.
- Արջեան Կարապետ.- 271ա.
- Արզուրեան (Իշխան Յովսէփ).- 268բ.

ՅԱՆՕՔ.- Էջ-թիւերուն կից ա եւ բ տառերը ցոյց կու տան տառը եւ կերպով սխալները:

Արմազանեան Սարգիս.- 270բ, 275ա, 278ա; 279ա, 280բ, 281ա, 283ա.
 Արմէն Լ. Գ.- 16ա.
 Արշակեան Արամ Պէյ.- 240ա.
 Արշակեան Գեորգ վարդապետ.- 283ա.
 Արտաշէս (լրտես).- 148ա, 148բ, 149ա.
 Արտաւազ.- 100բ, 110բ, 111ա.
 Արփիարեան Արփիար.- 21ա, 67բ.
 Աւետիս Զաւուշ.- 130բ.
 Աւետիսեան.- 210բ.
 Աւո եւ Մարո (Նազարբէգեան).- 10բ, 11բ.
 Բարազեան Պետրոս.- 198ա, 199բ, 214բ.
 Բարաբանեան Հայկ.- 247ա, 247բ, 248ա, 250բ, 251բ, 252ա.
 Բակլանեան Թադևոս.- 268բ.
 Բապունեան Մարտիրոս.- 162բ, 163ա, 163բ.
 Բալայեան Տօֆ.- 114ա.
 Բարսեղեան Սարգիս (Վանայ Սարգիս, Շամիլ).- 139ա.
 Բիրատ Սմբատ.- 24բ, 25ա, 30բ.
 Գարրիլեան Հ. Ն.- 246ա.
 Գազանեան Գրիգոր.- 268ա.
 Գազանեան Մկրտիչ.- 210ա.
 Գալբանեան Սիմոն.- 283բ.
 Գալստեան Թադևոս եւ Մանուկ.- 103ա.
 Գալփայեան Արսէն էփենտի.- 204բ, 205բ, 207բ, 208բ, 222ա.
 Գալփայեան Մարգար.- 70բ.
 Գալփայեան Յ. (Վահրամ).- 26բ, 27ա, 31ա, 33ա, 36ա, 37ա, 39ա, 40ա, 43ա, 43բ, 46ա, 58բ, 59ա, 65ա, 70բ, 71բ, 79ա, 79բ, 80ա, 82ա, 82բ, 83ա, 83բ, 85բ, 86ա, 87բ, 88ա, 88բ, 89ա, 89բ, 93բ, 94բ, 95ա, 96ա, 98բ, 100ա, 102ա, 102բ, 104բ, 105ա, 109ա, 111ա, 112բ, 113բ, 202բ.
 Գամալեան Յովսէփ.- 254բ.
 Գայեան Միհրան.- 269ա, 285բ.
 Գասապեան Վարդան Յ.- 228բ, 231ա, 231բ, 232ա.
 Գասարեան Աշոտ.- 277բ, 278ա.
 Գարակէօզեան Յակոբ (Զաւեն).- 133ա, 159ա, 172բ.
 Գարայեան.- 238ա.
 Գարապէտի Գ. (Զօրավար).- 134բ.
 Գարեգին Խաժակ (Բարս).- 7ա, 23ա, 47բ, 138բ, 139ա, 143ա.
 Գարինեան Տուրան.- 11ա, 19բ, 21ա.
 Գարո Արմէն.- 6ա, 7բ, 13բ, 21բ, 46բ, 50ա, 50բ, 51բ, 133բ, 135ա, 135բ, 138բ, 139ա, 163բ, 240բ.
 Գեղամ.- 86բ, 87ա, 89բ, 101ա.
 Գեղանեան Յարութիւն (Փափալ).- 138ա.
 Գեղարգ Անիւտան (Զաւուշ).- 281բ, 282ա, 282բ.
 Գեղարգեան Կարապետ.- 98բ.
 Գեղբղբէ Հանք Ղազար Խոնա.- 207բ, 208ա.
 Գլենեան.- 25ա, 26բ.
 Գնունի Խաչիկ.- 163բ.
 Գոգոյեանց Իսկենտեր եւ Արշակ Խան.- 48ա.
 Գուլումեան Միսաֆ (Ասանաթ, Կարին).- 6բ, 22բ, 28ա, 28բ, 30ա, 30բ, 31բ, 33ա, 34բ, 39բ, 40ա, 42ա, 43բ, 46ա, 49բ, 50բ, 51բ, 52ա, 53ա, 55բ, 56ա, 58ա, 58բ, 61ա, 61բ, 63ա, 64բ, 65բ, 67ա, 67բ, 69բ, 71բ, 72ա, 80ա, 80բ, 81բ, 82ա, 88ա, 112բ.
 Գրանեան.- 276ա.
 Գրգեաշարեան Աւարոն.- 273ա.
 Գրգեաշարեան Կարապետ.- 277ա, 279ա.

Գրիգորեան Տօֆ.- 124ա.
 Գոստմիկեան Պօղոս.- 268ա.
 Գաւթեան էփենտի.- 221ա, 222ա.
 Գեղեանեան.- 100բ, 106ա.
 Գեղեան Արտաշէս (Եղիստացի).- 138ա.
 Դրօ (Զօրավար).- 239ա, 240բ.
 Եղազեան Տիգրան.- 197ա, 200բ, 202ա, 208բ, 227ա, 228բ եւ իր բարածրարը՝ էջ 229-256.
 Ելանեան Գրիգոր.- 202ա, 223բ, 224բ.
 Եղիսէեան.- 213ա, 214ա, 215ա.
 Եուսուփեան Յովհ. (Մելիք).- 7բ, 31ա, 138ա, 138բ, 139բ, 145ա, 146բ, 158ա.
 Եսայեան (Տիկիմ).- 123ա.
 Եսայեան Ստեփան (Արմենակ, Արուսի, Վրոյր).- իր բարածրարը՝ էջ 197-228, նաեւ՝ 229ա, 229բ, 230ա, 230բ, 231ա, 231բ, 232ա, 232բ, 233ա, 233բ, 246ա, 246բ, 256բ.
 Եսայեան Օշին.- 110ա, 110բ.
 Երանոսեան Արամ.- 213ա.
 Երեցեան.- 128բ.
 Երկաթագործեան Ռուբէն.- 285բ.
 Եփրեմեան Մկրտիչ (Յոյակ).- 26բ, 27ա, 197ա, 227ա, 228ա, 229բ, 230ա, 230բ, 232բ, 233բ, 234ա, 235բ, 240բ, 271բ, 272բ.
 Զարգարեան Ռուբէն (Աւան).- 6բ, 130ա, 203բ, 204բ, 222բ, 223ա, 226ա, 228ա, 233բ, 234ա, 234բ, 235ա.
 Զարիկեան Մանուկ.- 283բ.
 Զաւարեան Սիմոն (Անտոն).- 6բ, 81բ, 82ա, 113բ, 120ա, 139ա, 186ա, 186բ, 197ա, 215բ, 229բ, 230ա, 231ա, 233ա.
 Զաւեն Պատրիարք.- 267բ.
 Զաւրիւն (Բժիշկ).- 225ա.
 Զարեհ.- 23բ, 24բ.
 Զեմնուր.- 262ա.
 Զէքի.- 36ա, 42բ.
 Էդուարդ, Էտվարդ (Միսակ).- 12ա, 12բ, 17ա, 17բ, 18ա, 18բ, 24ա, 24բ, 27ա, 31բ, 32բ, 33բ, 44ա, 46ա, 53ա, 54բ, 56բ, 58բ, 60ա, 61ա, 62բ, 63բ, 64ա, 64բ, 66ա, 72ա, 74ա, 74բ, 75ա, 77ա, 78բ, 79ա, 84բ, 116բ.
 Էլմասեան Միմաս (Արսլան).- 84ա, 101բ.
 Էնվեր Պէյ.- 200ա.
 Էնփիլեան.- 89ա.
 Էպիփոսեան Մատթէոս.- 265բ.
 Էվիսանեան Կարապետ.- 270բ, 284ա.
 Էլմէլեան Ղազարոս.- 94բ.
 Էլսէրեան Լ.- 256ա.
 Թադևոսեան Համբարձում (Տօֆ).- 268ա.
 Թադոսեան Վաղարշակ.- 105ա, 105բ.
 Թաթուրեան Միմաս.- 283բ.
 Թախթանեան Յ.- 265բ.
 Թահմիզեան Տիգրան.- 103բ.
 Թարգիբաշեան.- 144բ.
 Թափառիկ.- 113բ.
 Թեւոյեան Ստեփան.- 283բ.
 Թերզեան Լեւոն.- 279բ.

Թերզեան Յովսէփ.- 108ա.
 Թերզեան Պետրոս.- 285բ, 269ա.
 Թերլեմէզեան Յովհաննէս.- 268բ.
 Թէֆեան Վահան.- 226բ.
 Թէֆիթաղի Լեւոն.- 159բ.
 Թէոյարտոս Մ. (Հարիրապետ).- 271ա.
 Թիւրիւնեան.- 238ա.
 Թիւրիւնիկ (Վիրապոյժ, մատնիչ).- 153բ, 154ա, 154բ.
 Թիրեաֆեան Հրաչ (Սեպուհ, Ֆարիատ).- 6բ, 22բ, 24բ, 27բ, 28ա, 28բ, 29ա, 30ա, 31ա, 31բ, 33ա, 33բ, 34ա, 34բ, 35ա, 35բ, 36բ, 37բ, 39բ, 40ա, 40բ, 41ա, 44բ, 45ա, 46ա, 64բ, 65ա, 70բ, 73բ, 74բ, 77ա, 78ա, 79բ, 81բ, 82բ, 83բ, 84բ, 91ա, 91բ, 94ա, 95ա, 104բ, 112ա, 112բ, 113բ, 138բ.
 Թիրեաֆեան Տօֆ.- 67բ, 70ա.
 Թովմաս.- 119բ.
 Թորոսեան Զանիլ.- 275բ, 276բ.
 Թուղանեան Երուանդ եւ Վառաշապուհ.- 168բ.
 Թումանեան Յովհաննէս.- 133բ.
 Թուրամեան.- 88բ.
 Թուրաթրիսեան Պօղոս.- 270բ, 275ա, 276ա, 282ա.
 Թովայեան.- 87բ, 89ա, 100բ.
 Թօփեան Եղիշէ.- 222բ.
 Թօփունեան Գարեգին.- 162բ.
 Ժամկոչեան.- 125ա.
 Ժամկոչեան Վահան.- 280բ, 282ա, 282բ.
 Ժօրիս.- 113բ, 173ա, 174ա.
 Իզմիրլեան.- 276ա.
 Իզմիրլեան Պատրիարք.- 18ա, 36բ, 151ա.
 Իլիամի Պէյ.-
 Իմամատէ Էսմէր էփենտի.- 207բ.
 Իննիսեան Արամ.- 266ա, 266բ, 267ա, 267բ.
 Իպրահիմ (Շէյխ).- 203բ, 219բ, 220ա.
 Իսկենտերեան Վարդան.- 281ա.
 Իփէկեան Գասպար.- 198ա.
 Լազեան Գարրիլ.- 197ա.
 Լալայեանց Աւետիք.- 197բ, 240ա, 241ա.
 Լեհիմ.- 134բ.
 Լեւոնեան Արմենակ Մ. (Աշոտ Երկաթ).- 7ա, 46ա, 47բ, 48բ, 49ա, 53ա, 54ա, 56բ, 57ա, 57բ, 62բ, 63բ, 64բ, 66ա, 66բ, 73բ, 74ա, 75ա, 75բ, 76բ, 77ա, 83ա.
 Լուսինեան Նազարէր.- 93ա, 93բ.
 Լօրիկեան Տօֆ.- 121ա.
 Լօրիս-Մելիքեան Տօֆ.- 226բ.
 Խանգալեան Խաչիկ.- 93ա.
 Խաննեան Գրիգոր.- 114բ.
 Խանթեան Ֆրանգիլ.- 254բ, 256ա.
 Խաչատուրեան Միմաս.- 198ա, 240ա, 252բ, 254ա.
 Խաչատուրեան Յարութիւն (Վերապատուիլի).- 285բ.
 Խաչատրեան Սմբատ (Բոքիս).- 22ա, 33բ, 36ա, 36բ, 38բ, 39ա, 41բ, 42ա, 51ա, 51բ, 72ա.
 Խաչիկեան Յակոբ.- 271ա.
 Խատիսեան Ալեքանդր.- 268բ.
 Խաւաֆեան Պաղտատար.- 84ա.

Խեչօ (Դաշնակցական).- 240բ.
 Խշոռեան.- 44ա, 46բ.
 Խորենեան.- 90ա.
 Խուրմուրեան.- 111բ.
 Խուլփի Փաշա.- 219բ, 220ա.
 Խրիմեան Հայրիկ.- 134բ.
 Կամառակեան.- 119բ.
 Կայծակ Արամ.- 278ա, 286ա, 286բ, 287ա, 288բ.
 Կարապետեան Աւետիս եւ Մարտիրոս էփ.- 195ա, 196ա, 196բ.
 Կարապետ Զաւուշ.- 124բ.
 Կարինեան Հր.- 263բ, 264ա.
 Կելիպոյեան Թադևոս.- 268բ.
 Կերթմէնեան Մարտիրոս.- 283բ.
 Կէօզիֆիլիքեան Միսաֆ.- 283բ.
 Կէօզիֆեան (Կելիկեան).- 46բ, 47ա.
 Կէօկսէրէլեան Կարապետ.- 271ա.
 Կիլիկեան (Բժիշկ).- 6բ.
 Կիլիկեան.- 32բ, 56ա, 90ա.
 Կիլիկեան Տօֆ.- 281ա.
 Կիւմուրեան Պ. Բ.- 220բ, 221բ.
 Կոստանեան Սարգիս.- 29ա.
 Կորիւն.- 31ա, 41ա, 41բ, 42ա.
 Կուրօ (Զօրավար).- 276բ, 281բ.
 Հազարեան Ռսկան.- 30բ, 34ա.
 Հալբանեան.- 127ա, 127բ, 128ա, 129ա, 129բ.
 Հանի Պօղոսեան Յարութիւն.- 268ա.
 Համազասպ (Սրուանձոտեան).- 225ա, 225բ, 238ա, 239ա, 240բ, 241ա.
 Համբարձում (մատնիչ).- 162բ.
 Հայկ.- 130ա, 131ա, 133ա.
 Հայկեան Յ. Խ.- 122ա.
 Հայկունի Կ.- 13բ.
 Հայրապետ էփենտի (Մէնթէշէցի).- 221ա.
 Հանեսեան.- 107բ.
 Հանքեան Արտաւազ.- 117ա, 117բ, 225բ, 226ա, 240ա.
 Հանլեր (Հրամանատար).- 281բ.
 Հաջեան Աստուր.- 276ա.
 Հասան Փաշա.- 100բ.
 Հասկիլ.- 135բ.
 Հարրոս.- 263բ.
 Հեղինեան.- 121ա.
 Հերեան.- 123ա, 271ա.
 Հիւմի.- 259բ, 260ա, 260բ, 261ա, 262ա.
 Հմայեակ.- 85բ, 86ա, 100ա, 100բ, 105բ, 106ա.
 Հուլբեր.- 135բ.
 Հոստիկեան Հրանդ.- 268ա.
 Հրաչեայ.- 11բ.
 Ղազարեան Վ.- 87ա, 105ա, 116ա, 116բ.
 Ղազարեան Տիգրան էփենտի.- 212ա.
 Ղարիպեան Տեր Սարգիս.- 85բ.
 Ղարման Արթիւր.- 283բ.

ձեռնալ Պէյ, ձեռնալ Պէյ (Ատանայի կուսակալ) - 276ա, 277ա.
ձեռնալ - 135բ, 226բ.
ձեռնալ - 286ա.
ձեռնալ Սարգիս - 200ա, 278ա, 285բ, 286ա, 286բ, 288ա.
ձեռնալ Յակոբ - 206բ.
ձեռնալ - 147բ.
ձեռնալ Միհրան - 285բ.
ձեռնալ Ջաֆար - 283ա.
ձեռնալ Քոչար - 283բ.
ձեռնալ Հանի Ալա - 277ա.

Մարտի 0. և 4 - 43ա.
Մայիսի Սարգիս - 254ա.
Մայիսի Ստեփան - 198ա.
Մայիսի Տրատ - 255ա.
Մայիսի Կարապետ - 44ա.
Մայիսի - 85բ.
Մայիս - 119բ, 258ա, 258բ, 261ա, 262ա.
Մանիկյան (Գարեգին) - 91ա, 93բ, 94բ, 95ա, 227բ.
Մանիկյան Միհրան - 285բ.
Մանուկյան Արամ - 263բ.
Մասլաթեան - 32ա, 32բ, 66բ.
Մատթեոս - 238ա.
Մատթեոս Կարապետ - 93ա.
Մարգար (Ոստիկանագետ) - 160բ, 161ա.
Մարգարեան Գ. - 126բ, 128բ.
Մարգարեան Կ. - 13բ.
Մարտիրոսյան Կարապետ - 173ա.
Մահմեդյան - 166բ, 167բ.
Մահմուտ Սիմոն Պէյ - 143բ, 144ա, 144բ, 146բ, 147ա.
Միսանիկյան Ալեքանդր - 134ա.
Միրան (Միլլերան) - 276բ.
Միսանյան Սարգիս - 138ա.
Միլլանդատի Բիֆար - 223ա.
Միսանյան Քալուր - 268բ.
Միսանյան Արտաշէս - 163բ.
Միսանյան Միհայել - 100ա, 100բ, 111ա, 111բ.
Միսանյան Շաւարշ - 122բ, 123բ.
Միրզայան Յովսէփ (Արթակ) - 37ա.
Միրզայան Գրիստոփոր - 7ա, 68ա, 71բ, 75ա, 114ա, 115ա, 115բ, 116ա, 139ա, 173ա.
Մլխ - 60բ.
Միքայելյան Գուրգէն - 256բ.
Մկր - 280ա.
Մնացականյան (Տօբ. Արամ?) - 129բ.
Մնացականյան (Տօբ. Շ.) - 262ա, 283ա.
Մնտիկյան - 71ա.
Մնտիկյան Արամ - 281ա.
Մշեան Արամ - 284ա.
Մոմենյան Քարալ - 92ա.
Մուշեղ Եղիսեան - 224ա.
Մուրատ Սեբաստացի - 235ա.
Մուրատ (Հնչակեան) - 8ա, 9ա, 9բ, 10ա, 16ա, 46ա, 48ա, 53ա, 60բ, 63ա.
Մուրատյան Մարքիմ (Աշոտ, Աշոտ-Մարքիմ, Աշոտ, Գալսեօր - 8ա, 6բ, իր քարտեզը՝ էջ 8-119, հետև՝ 258ա, 259ա, 259բ, 260ա, 260բ, 262ա.
Մտածումյան Կարապետ - 283բ.
Մոզեսյան Լեւոն - 122ա, 123բ.
Մոսիկյան Միրզայան - 215ա.

Յակոբ, Ակոբ - 258բ, 259բ, 261ա, 262ա.
Յակոբ, Յակոբ, Յակոբոս - 143ա, 144բ, 145ա, 145բ, 146ա, 146բ, 147ա, 147բ.
Յակոբյան Թովմաս - 268բ.
Յակոբյան Կ. - 254բ.
Յակոբյան Տօբ. - 20բ.
Յարութիւն Ալա (Վանեցի) - 142բ.
Յարութիւն Պատրիարք (Երուսաղէմ) - 144ա.
Յովհաննէս (Վանեցի, լրտես) - 160բ.
Յովհաննէս, Օմեհիկ (մատիկ) - 162բ, 163ա.
Յովհաննէս (Ջրհանկիր) - 142բ.
Յովհաննէս Վաղարշ - 268ա.
Յովսէփ (Չմշկածագցի) - 162ա.
Յովսէփյան Յարութիւն Չաւուշ - 285բ.
Յօլան - 95ա, 96բ, 99ա, 100ա, 101ա, 101բ, 102ա, 103ա, 108բ, 109ա.

Նագաշեան Աւ. - 51բ.
Նագաշեան Տօբ. - 270բ.
Նագարէք Չաւուշ - 281ա.
Նագարէկեան (Հնչ.) - 8բ, 21ա, 51ա.
Նագարէք (Հանի) - 16բ.
Նագարէքեան - 23բ, 24ա.
Նագըմ Փաշա, 147ա, 151բ, 154բ, 160բ, 161ա.
Նաբալի Շահան - 264ա.
Նալբանդեան Յակոբ - 254բ.
Նալբան - 19ա, 19բ, 21ա.
Նալբանդեան Տիգրան - 113բ, 173ա.
Նանիկեան - 82ա, 100բ, 106ա.
Նաւասարդեան Վահան - 203ա, 213ա, 227ա, 229ա, 229բ, 230ա, 230բ, 231ա, 232ա, 232բ, 234բ, 235ա, 235բ, 256բ.
Ներսէսեան Գրիգոր - 6ա, 19բ.
Նեվրուզեան Լեւոն - 268ա.
Նեքուզ (Տօբ. Յ.) - 114բ, 225բ, 240ա.
Նիսի Պէյ - 200ա.
Նշանեան Սուրէն Տօբ. - 200բ, 201ա, 204բ, 205ա, 215բ, 217բ, 218ա.
Նորատունկեան Մ. - 238ա, 238բ, 256ա.
Նորիկեան Մ. - 9բ, 10ա.
Նուպար Փաշա Պօղոս - 224ա, 227ա, 241բ, 243բ, 244ա, 249բ, 250ա.

Շալանյան Արշակ - 254ա.
Շահէնի Վ. - 59բ.
Շահէն Ֆարսա - 21ա, 21բ, 24բ, 25ա, 37ա, 38ա, 40բ, 41ա.
Շահինեան Միհրան - 112ա.
Շահունեան - 119բ.
Շահպազ Բարսեղ - 237ա, 237բ.
Շահպազ Եղիս - 159ա, 161ա.
Շահպազ Մ. - 272բ.
Շահպազ Վարդան - 235ա.
Շահրիկեան Յ. - 120ա, 139ա, 224ա.
Շամկեան - 85բ.
Շամք Լեւոն - 198ա.
Շապուհեան - 253ա.
Շաւարշ - 24բ, 27ա, 28բ, 31ա, 31բ, 32ա, 39բ, 40ա, 41բ, 42բ, 45ա, 60բ, 61ա, 63ա.
Շեմսուտէն Պէյ - 276բ, 277ա, 279ա.
Շեմսի Փաշա - 200ա.
Շըվետար (Հարիւրագետ) - 271բ.

Շիշմանեան - 126բ, 128բ, 277բ, 280ա, 280բ, 281ա, 281բ, 282ա, 282բ, 283ա.
Շիրինեան Նասիպ - 268ա.
Շիրվան - 48ա.
Շիրսեան Մեարտ և Ջանիկ - 284ա, 285բ.
Շիրսեան Մանուկ - 284ա.

Ոսկեան Մարտիրոս - 277ա, 279ա, 280ա, 281բ, 282ա.
Ոսկերիչեան Տէր Հայկազուն - 253ա, 253բ.
Ուզունեան Կարապետ - 268ա.
Ուզունեան Սեդրակ - 278բ.
Ուրբաքեան Վաղարշ - 268բ.

Չալեան Ասատուր - 257բ և իր օրագրութիւնը՝ էջ 268-290.
Չալեան Կարապետ (Տեղակալ, Գայմազամ) - 260բ, 274բ, 278բ, 284ա, 285բ, 287բ.
Չամալեան Ենոզի - 280բ.
Չամուրեան - 276ա.
Չալանեան Յակոբ - 260ա, 265բ.
Չանկալեան - 124ա, 270բ, 271բ, 275ա, 276բ.
Չարափնեան Թովմաս - 44ա, 46բ.
Չաքրի, Չաքրի - 126ա, 126բ.
Չերչեան Յակոբ - 174ա.
Չիքեան - 255բ.
Չիքեան - 84ա.
Չիլիկեան Կարապետ - 210ա.
Չմշկածագցի Կարապետ - 150բ.
Չրագեան Միհրան - 254ա.
Չրահեան - 225բ.
Չօլանեան Արշակ - 52ա, 55բ, 65ա, 68ա.

Պալիկեան Յարութիւն Տօբ. - 268բ.
Պալպանեան Նիկողոս - 268ա.
Պալպանեան Տիգրան - 268ա.
Պալքանեան Յակոբ - 254ա.
Պալքանեան Սեդրակ (Վահրիմ) - 197ա, 198ա, 206բ, 227ա, 229բ, 230ա, 234ա, 234բ, 235ա.
Պալլեօգեան Մատթեոս - 79բ, 91բ, 94ա.
Պաղտայեան Ներսէս Մ. - 98բ.
Պարեգտար Յակոբ - 92ա.
Պարթեւեան Սուրէն - 225բ, 226ա.
Պետար Վիկտոր - 237ա.
Պետրոսեան Մ. - 123ա.
Պետրոսեան Ս. - 15բ, 48ա, 60բ, 63ա.
Պետր (Պուլկարացի) - 6բ, 46ա.
Պոսիկեան Ե. - 124ա, 124բ.
Պոսիկեան Տիգրան - 280բ.
Պոսիկեան Արմենակ - 122ա.
Պոսիկեան Մամբրէ (Յախիկի վարդապետ, մատիկ) - 155ա, 155բ, 156ա, 156բ, 157ա.
Պօրէկեան Լեւոն - 93ա.
Պրեմեան - 61բ, 62բ.
Պալտեան, Պալտեան - 276ա, 280բ.
Պալտեան Միհրան - 234ա, 234բ.
Պալտեան Սիրակ - 100բ.
Պանոսի - 28ա, 28բ, 29բ, 30բ, 31ա, 31բ, 33ա, 33բ, 36բ.
Պալտեան Երուսաղէմ - 123բ, 124ա.
Պանն, Պրեմեան - 125ա, 127ա, 127բ, 128բ, 270ա, 272ա, 275բ,

276բ, 281բ, 282ա.
Պրոսպապա Ադրէ - 174ա.
Պօղոսի Մկրտիչ Էփ - 204բ.
Ջալալ - 11բ.
Ջեմակիլ - 24բ, 25ա, 37բ.
Ռահվեր - 6բ, 80ա, 95ա, 96ա, 96բ, 97բ, 99բ, 100ա, 101ա, 102ա, 102բ, 103բ, 108ա.
Ռաստմ - 268բ.
Ռատոսթրոցի Գեորգ - 162ա.
Ռուշի - 119բ.
Ռուսիկեան Մարտ - 84ա, 100բ, 108ա.

Սազրեան Յարութիւն - 268ա.
Սահակեան Արշակ - 287ա, 288բ.
Սահակեան Կարապետ - 201ա.
Սանոսեան Հայկ - 254ա, 255ա.
Սաչեան Ասատուր - 273բ, 276բ.
Սաչեան Գրիգոր - 283բ.
Սապահէտիմ (Իշխան) - 190ա, 223ա.
Սառանեան - 214բ.
Սասունի - 131ա.
Սարահեան Պետրոս Եղիսեան - 260ա, 260բ, 273ա, 285բ.
Սարափեան Ա. Ա. - 255ա, 256ա.
Սարգիսեան Նշան - 108բ.
Սարգսեան Լեւոն - 56բ, 60ա.
Սարգեան Մարտիրոս - 247ա, 247բ.
Սարհեան Յովհաննէս - 63ա, 67ա.
Սարհատ - 6բ, 113բ, 114ա, 115ա, 116ա.
Սարհատեան Ա. - 260ա.
Սեյիկեան Նագարէք - 268բ.
Սեմեֆեթիմ (մատիկ) - 162բ.
Սեպուհ (Ջորավար) - 240բ, 268բ.
Սելեան Մ. - 11բ, 12ա, 12բ, 55ա.
Սերէնիկեան Վարդգէս (Ջորավար, Գիսակ) - 138ա.
Սերտարեան Խաչիկ - 100ա.
Սեֆերեան Շահէն (Միս) - 84ա.
Սեղվեան Գրիգոր - 285բ.
Սիսեան Անտոն և Լեւոն - 20բ.
Սիվրիսարեան - 87բ, 89ա.
Սիմի Բարգէն - 7բ, 138բ, 139բ, 166բ.
Սմարտ - 88ա, 88բ, 94ա, 260բ, 262ա.
Սմար - 255բ.
Սուլտանեան Մկրտիչ - 14բ, 15ա.
Սուրէն - 25ա, 26բ, 27ա, 27բ, 28ա, 28բ, 43ա.
Սրապեան Գրիգոր - 268բ.
Սօլանդեան Ալամ - 276բ.

Վազգէն - 213ա, 213բ.
Վահան - 22բ, 26ա, 28ա, 31բ, 32ա, 33բ, 34ա, 35ա, 38ա, 38բ, 39բ, 44բ, 51ա, 53բ, 55ա.
Վահանեան Կարապետ - 68ա.
Վահրամ - 126ա.
Վանարեան - 130բ.
Վարաճեան Պ. - 104ա.
Վարաճեան Միհայել - 6բ, 7բ, 79բ, 82բ, 101ա, 104բ, 113բ, 163բ, 173ա, 237ա.
Վարդան (Խանասարի) - 6բ, 113բ, 116բ, 240բ.
Վարդ-Պատրիկ (Վարդ) - 7ա, 22ա, 47բ, 53ա, 57ա, 85բ, 114բ.
Վարդան Դանիկ - 235ա.

Վերածին Մինաս (Ֆարիստ) -- իր բարածրարը՝ էջ 120-137, ապա՝ էջ 262-268, նաև՝ 257ա, 257բ, 279ա, 280ա, 280բ:
 Վեփիկան -- 272ա:
 Վասման Արշակ (Վահագ, Գերասիկան Օճնիկ) -- 7բ, 43բ, 53բ, 54ա, 54բ, 56բ, 57ա, 57բ, 58ա, 58բ, 59ա, 59բ, 60ա, 60բ, 61ա, 61բ, 63բ, 64ա, 64բ, 65ա, 65բ, 70ա, 72ա, 73բ, 74ա, 74բ, 77ա, 82ա, 82բ, 83բ, 86բ, 95ա, 100բ, 103ա, 138ա, 138բ, 139բ, 159ա:
 Վրացիան Սիմոն -- 257ա, 262ա:
 Վրեժունի Սամուել -- 268բ:
 Տազեսան Միհրան -- 278ա, 278բ:
 Տազեսան Վարդան -- 279ա:
 Տազրնան Մելիք -- 215ա:
 Տարեան Վահագն -- 197ա, 234ա:
 Տամատան -- 42բ, 128ա, 129ա, 209բ, 270ա, 272բ, 276ա, 277ա, 277բ, 278ա, 279ա, 279բ, 280ա, 280բ, 281ա, 283բ:
 Տամվանան, Տամվանյան -- 221բ, 222ա:
 Տատ Տոբ -- 276ա, 276բ, 277ա, 277բ, 279ա, 286բ, 287ա:
 Տարտաղանան Ննով -- 275ա:
 Տեմիրնան Կ. Տոբ -- 211բ:
 Տեչանել -- 276բ:
 Տեր Արթուրանան Ա. -- 255ա:
 Տեր Կարապետան Գեղամ (Մշոյ Գեղամ) -- 139ա:
 Տեր Մանուկեան Մարկոս -- 44ա, 47ա, 48բ:
 Տեր Մարգարեան Աբգար Տոբ -- 104ա:
 Տեր Մարտիրոս -- 80ա:
 Տեր Մարտիրոսան Միխայել (Մար-Շիմոն, Մար) -- 6ա, 6բ, 7բ, 14ա, 16բ, 19ա, 21բ, 22ա, 25ա, 31ա, 33ա, 33բ, 65ա, 65բ, 114ա:
 Տեր Մինասան Գրիգոր -- 114բ:
 Տեր Մինասան Ռուբեն -- 40ա, 77ա, 264ա:
 Տեր Յակոբան Յակոբ -- 254բ:
 Տեր Յովհաննէսեան Կարապետ -- 268ա:
 Տեր Յովհաննէսեան Մարտիրոս -- 84ա:
 Տեր Պողոսան -- 144բ:
 Տեր Ստեփանան -- 226բ:
 Տրգասան Հանի -- 285բ:
 Տեովլէթեան Կալիկ Տոբ -- 205բ, 206ա, 210բ, 211բ, 212ա, 212բ, 214ա, 214բ, 215բ, 216ա, 216բ, 217ա:
 Տիգրան -- 85բ, 86ա, 87ա, 88բ, 89բ, 90բ, 91ա, 92ա, 94ա, 95ա:
 Տիգրան Հանի (Ոստիկանապետ) -- 151բ, 152ա, 152բ, 153ա:
 Տիւրկերեան Գարեգին -- 248ա, 248բ, 252ա, 252բ, 253ա, 253բ:
 Տիւփրե -- 125ա:
 Տիւփրե, Տիւփե (Զորավար) -- 275բ, 276բ:
 Տուսման Յովհաննէս -- 271ա:
 Տուսման Կարա -- 283ա:
 Տ. Փափագան Քաղար -- 268ա:
 Տուտի Փափագան Պետրոս -- 268ա:
 Տրոմար (Հարիւրապետ) -- 272ա, 272բ, 273ա:
 Տոնապետան Արմենակ -- 14բ:

Տօնիկան Ս. -- 211բ:
 Տօբարեան -- 85բ, 88ա, 90բ, 95ա:
 Բեպեան Յ. -- 268ա:
 Բիֆաթ Պէյ -- 206բ, 207ա:
 Փահլավանան -- 147բ:
 Փանոսեան Յակոբ -- 208բ:
 Փաշայեան Կարապետ Տոբ -- 197ա, 230ա:
 Փատոյեան Շամուն -- 129բ:
 Փափագան Կ. -- 254բ:
 Փափագան Յակոբ -- 41բ:
 Փափագան Վահան (Կոմս) -- 263բ:
 Փէրիբեան Հրաչ -- 254ա, 254բ:
 Փիլաւեան -- 110բ, 111բ:
 Փիլիպոսեան Գարեգին եւ Կարապետ -- 268բ:
 Փիլիպոսեան Յակոբ -- 234բ:
 Փոստոյեան Կալատոս -- 276ա:
 Փոստոյեան Շամուն -- 209բ, 270ա, 280բ, 284բ, 285բ:
 Փոքրուֆայեան Վահան -- 271բ, 272ա, 272բ, 276բ:
 Գարտաշեան Յ. -- 264ա:
 Գարտաշեան Վահան -- 227ա:
 Գեմալ Մուսթաֆա -- 124բ, 125ա, 287ա, 287բ:
 Գէլիշեան Պողոս -- 270բ, 271ա, 272ա:
 Գեմտիրեան Վասիլապոս -- 75ա, 173ա:
 Գեռի -- 230ա, 240բ:
 Գէլիէնան Ս. Ե. -- 211բ:
 Գէհեայեան Արշակ (Սվանեան Պողոս) -- 197ա, 199բ, 200բ, 202ա, 202բ, 208ա, 208բ, 227ա, 228ա, 229բ, 230ա, 231ա, 233ա, 233բ, 234ա, 234բ, 236բ:
 Գէհեայեան Կարապետ -- 202բ:
 Գէլիշեան Գ. -- 103ա:
 Գէլիշեան Համբարձում -- 278բ:
 Գէլիքեան Նղիշէ Էփէնտի -- 276բ, 277ա:
 Գեոլեան Գրիգոր -- 211բ:
 Գեոլեան Կալատոս եւ Լեւոն -- 268բ:
 Գեոլեան Հրանդ -- 268բ:
 Գեոլեան Միլեան -- 172բ:
 Գիւրգեան Վ. Ս. -- 222ա, 222բ:
 Օհանեան Աշոտ -- 30բ:
 Օհաննէսեան Արամ -- 14բ, 15ա, 16բ:
 Օհանյանեան Համօ (Բժիշկ) -- 197բ, 233բ:
 Օղլագեան Յովսէփ -- 277բ:
 Օղլագեան Կարապետ -- 285բ:
 Յեմերեան Սարգիս -- 122ա:
 Յրաբնիկ -- Պոլոս -- 273ա:
 Յրեկեան -- 217ա:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

էջ եւ սթիպակ

ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
 — Հ. Յ. Դ. ԲԻՒՐՕ 5

Ա. — ԱՐԽԻԱՍԵՆ ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԼԵՈՒ-
 ՆԱՎԱՑՐԻ (ԿԻԼԻԿԻԱ), ԿՂԶԻԻ (ԿԻՊՐՈՍ), ԵԳԻՊՏՈՍ-
 ՍԻ ԵՒ ՈՍԿԵՀԱՆՔԻ (ԻՋՄԻՐ) ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԵԱՆՑ
 ՎԵՐԱԲԵՐՆԱԼ — 1896-1905 6

Կ96-1 Ս. Այվագեանի նամակը Մարթինին եւ Միսաֆին 8ա
 Կ96-2 Ս. Այվագեանի նամակը Ազեմանգրիոյ ընկերներուն 9ա
 Կ96-3 Ս. Այվագեանի նամակը 10ա
 Կ96-4 Ս. Այվագեանի նամակը Կիպրոսի ընկերներուն 11ա
 Կ96-5 Էտվարդի նամակը Մարթինին 12ա
 Կ96-6 Ս. Այվագեանի նամակը Մարթինին 13ա
 Կ96-7 Կ. Մարգարեանի նամակը Մարթինին 13բ
 Կ96-8 Արմէն Գարոյի նամակը Մարթինին 13բ
 Կ96-9 Արամ Օհաննէսեանի նամակը 14բ
 Կ96-10 Ամերիկայէն՝ Ս. Պետրոսեանի նամակը Մարթինին 15բ
 Կ96-11 Մար-Շիմոնի նամակը Մարթինին 16բ
 Կ96-12 Արամ Օհաննէսեանի նամակը Կիպրոսի ընկերներուն 16բ
 Կ96-13 Էդուարդի նամակը Մարթինին 17բ
 Կ96-14 Էդուարդի եւ Այվագեանի նամակը Մարթինին 18ա
 Կ96-15 Արմէն Գարոյի նամակը Մարթինին 19ա
 Կ96-16 Կ. Այվագեանի նամակը Մարթինին 20ա
 Կ96-17 «Իրօշակ»ի իմբրագրութեան նամակը Կիպրոսի կամ Ազեմանգրիոյ Մարթինին 20բ
 Կ96-18 Շահէն Ֆարիստի նամակը (հաւանօրէն Մարթինին) 21ա
 Կ97-1 Արմէն Գարոյի նամակը Մարթինին 21բ
 Կ98-1 Ազեմանգրիայէն՝ Սեպուհի (Հրաչ Թիրեաֆեան) նամակը Մարթինին 22բ
 Կ98-2 «Իրօշակ»ի իմբրագրութեան (Արեւմտեան Բիւրօ) նամակը Մարթինին 22բ
 Կ98-3 Իզմիրէն՝ Զարեհի նամակը Ազեմանգրիոյ ընկերներուն 23բ
 Կ98-4 Ս. ի նամակը Մարթինին 24բ
 Կ98-5 Արեւմտեան Բիւրոյի նամակը Մարթինին 25բ
 Կ98-6 Ս. ի (Սեպուհի) նամակը Մարթինին 26բ
 Կ98-7 Սուրէնի նամակը Մարթինին 27ա
 Կ98-8 Սեպուհի (Հրաչ Թիրեաֆեան) նամակը Մարթինին 27բ
 Կ98-9 Ս. ի (Սեպուհի. Հրաչ) նամակը Մարթինին 28բ
 Կ99-1 Ս. ի (Սեպուհի, Հրաչ Թիրեաֆեան) նամակը Մարթինին 29ա
 Կ99-2 Ս. ի (Հրաչ) նամակը Մարթինին 30ա
 Կ99-3 Ս. ի նամակը Մարթինին՝ Գահիրէ 31ա
 Կ99-4 Էդվարդի նամակը Մարթինին 31բ
 Կ99-5 Միսաֆի նամակը Մարթինին 33ա
 Կ99-6 Ս. ի (Հրաչ) նամակը Մարթինին 33ա
 Կ99-7 Արեւմտեան Բիւրոյի նամակը Մարթինին 34ա
 Կ99-8 Ս. ի (Հրաչ) նամակը Մարթինին 34բ
 Կ99-9 Վահանի նամակը Մարթինին 35ա
 Կ99-10 Ս. ի նամակը 35բ
 Կ99-11 Ս. ի նամակը 36բ
 Կ99-12 Ս. ի (Հրաչ) նամակը 37բ
 Կ99-13 Միսաֆի (Գուլամեան) նամակը 39բ
 Կ99-14 Ս. ի (Հրաչ) նամակը 40ա
 Կ99-15 Ս. ի (Հրաչ) նամակը 41ա
 Կ99-16 Յ. Գալփայեանի նամակը 43ա
 Կ99-17 Միսաֆի (Կարին, Առանձար) նամակը Մարթինին 43բ
 Կ99-18 Ամերիկայի Կ. Կ. ի նամակը 44ա

Կ99-19 Էդվարդի նամակը Մարթինին 44ա
 Կ99-20 Ա. Ս. Լեւոնեանի նամակը 46ա
 Կ99-21 Ամերիկայի Կ. Կ. ի նամակը 46բ
 Կ99-22 Վարդոյի նամակը Մարթինին 47բ
 Կ99-23 Ա. Ս. Լեւոնեանի նամակը 47բ
 Կ99-24 Ս. Պետրոսեանի նամակը Մարթինին 48ա
 Կ99-25 Աշոտ-Երկաթի (Ա. Ս. Լեւոնեան) նամակը 48բ
 Կ99-26 Աշոտ-Երկաթի (Ա. Ս. Լեւոնեան) նամակը 49ա
 Կ99-27 Միսաֆի (Կարին, Առանձար) նամակը Մարթինին 49բ
 Կ99-28 Արմէն Գարոյի նամակը 50ա
 Կ99-29 Միսաֆի (Կարին, Առանձար) նամակը Մարթինին 50բ
 Կ99-30 Ազատերի նամակը Մարթինին 51բ
 Կ99-31 Կարինի (Միսաֆ Գուլամեան) նամակը Մարթինին 52ա
 Կ99-32 Ամերիկայի Կ. Կ. ի նամակը 52բ
 Կ99-33 Էդվարդի նամակը 53ա
 Կ99-34 Արեւմտեան Բիւրոյի նամակը 53բ
 Կ99-1 Աշոտ-Երկաթի նամակը 54ա
 Կ99-2 Էդվարդի նամակը 54բ
 Կ99-3 Առանձարի (Կարին) նամակը 55բ
 Կ99-4 Ա. Վասմանի (Վահագ) նամակը 56բ
 Կ99-5 Աշոտ-Երկաթի նամակը 57ա
 Կ99-6 Աշոտ-Երկաթի նամակը 57բ
 Կ99-7 Ա. Վասմանի նամակը 58ա
 Կ99-8 Առանձարի (Կարին) նամակը 58բ
 Կ99-9 Ա. Վասմանի նամակը 59բ
 Կ99-10 Էդվարդի նամակը 60ա
 Կ99-11 Միսաֆի (Առանձար, Կարին) նամակը 61բ
 Կ99-12 Միսաֆի (Առանձար, Կարին) նամակը 61բ
 Կ99-13 Էդվարդի նամակը 62բ
 Կ99-14 Ա. Վասմանի նամակը 63բ
 Կ99-15 Ա. Վասմանի նամակը 64բ
 Կ99-16 Միսաֆի (Առանձար, Կարին) նամակը 64բ
 Կ99-17 Կամալ տեղեկագրի 65բ
 Կ99-18 Էդվարդի նամակը 66ա
 Կ99-19 Կարինի (Առանձար) նամակը 67բ
 Կ99-20 Ա. Ա. Վասմանի նամակը 68բ
 Կ99-21 Կարինի (Առանձար) նամակը 69բ
 Կ99-1 Յ. Գալփայեանի նամակը 70բ
 Կ99-2 Կարինի (Առանձար) նամակը 71բ
 Կ99-1 Էդուարդի նամակը 72ա
 Կ99-2 Աշոտ-Երկաթի նամակը 74ա
 Կ99-3 Էդվարդի նամակը Աշոտ-Երկաթին 75ա
 Կ99-4 Էդվարդի նամակը՝ Մարթինին 77ա
 Կ99-5 Իզմիրէն՝ նամակը Մարթինին 78ա
 Կ99-6 Յ. Գալփայեանի (Վահագ) նամակը 79ա
 Կ99-7 Վահրամի (Յ. Ա. Գալփայեան) նամակը 79բ
 Կ99-8 Կարինի (Առանձար) նամակը 80բ
 Կ99-9 Կարինի նամակը Մարթինին 81բ
 Կ99-10 Ա. Վասմանի նամակը 82ա
 Կ99-11 Ա. Վասմանի նամակը 82բ
 Կ99-12 Ա. Վասմանի նամակը 83բ
 Կ99-13 Ամերիկայէն նամակը Մարթինին 85ա
 Կ99-14 Արմէնէն՝ Տիգրանի նամակը Մարթինին 85բ
 Կ99-1 Ամերիկայէն՝ Հայեանի նամակը Մարթինին 86ա
 Կ99-2 Իզմիրէն՝ Գեղամի նամակը Մարթինին 86բ
 Կ99-3 Գեղամի նամակը Մարթինին եւ Տիգրանին 87ա
 Կ99-4 Վահրամի (Յ. Գալփայեան) նամակը 87բ
 Կ99-5 Արմէնէն՝ Սմբատի նամակը Մարթինին 88ա
 Կ99-6 Վահրամի նամակը Մարթինին 88բ
 Կ99-7 Գեղամի նամակը 89բ
 Կ99-8 Վահրամի նամակը 89բ
 Կ99-9 Տիգրանի նամակը 90բ

ԿՅ-10	Տիգրանի նամակը	91ր	Մ.Վ.15 (հաշուակամ)	128ա
ԿՅ-11	Տիգրանի նամակը	92ա	Մ.Վ.16 Գ. Մարգարեանի նամակը	128բ
ԿՅ-12	Մմբատի նամակը	94ա	Մ.Վ.17 Գրիգորի երկտողը	128բ
ԿՅ-13	Տիգրանի նամակը Մարքիթին	94ա	Մ.Վ.18 Հալբլանի երկտողը	129ա
ԿՅ-14	Յ.ի նամակը	95ա	Մ.Վ.19 Կիլիկիոյ Կ. Կոմիտէի նամակը	129ա
ԿՅ-15	Յօլանի նամակը	96բ	Մ.Վ.20 Վերածինի նամակը Մերսինի գին. կառավարիչին	129բ
ԿՅ-16	Վրէժի (Ատրպատական) Կ. Կ.ի նամակը Կիլիկիոյ Կ. Կ.ին	98բ	Մ.Վ.21 Հայկի նամակը Վերածինին	130ա
ԿՅ-17	Պէրսիքէն՝ Յ.ի (Յօլան) նամակը Մարքիթին	99ա	Մ.Վ.22 Հայկի նամակը Վերածինին	131ա
ԿՅ-18	Ամբրիկայէն՝ Հմայեակի նամակը	100ա	Մ.Վ.23 Ստացագիր	133ա
ԿՅ-19	Իգմիթի ընկերներու նամակը Լեռնավայրի Պատ. Կ. Կ.ին	101ա	Մ.Վ.24 Կիլիկիոյ Կ. Կոմիտէի նամակը	133ա
ԿՅ-20	Պէրսիքէն՝ Ռահվերի և Յօլանի նամակը Մարքիթին	101ա	Մ.Վ.25 Արմէն Գարոյի նամակը Մ. Վերածինին	133բ
ԿՅ-21	Ռահվերի նամակը Մարքիթին	102ա	Մ.Վ.26 Արմէն Գարոյի նամակը	135ա
ԿՅ-22	Ռահվերի նամակը Մարքիթին	102բ	Յաւելուած Մ. Վերածինի թղթածրարին	
ԿՅ-23	Ա. Վառմանի նամակը	106ա	ՇՐՋԱՐԵՐԱԿԱՆ ԹԻՒՆ 5	Կիլիկիոն Կ. Կ. 135բ
ԿՅ-24	Ռահվերի նամակը Կիլիկիոյ Պատ. Մարմին	108բ		
ԿՅ-25	Մարտչէն՝ Վ. Ղազարեանի նամակը	105ա	Գ.— ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐ ՊՈԼՍՈՅ ՇՐՋԱՆԻ ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ—	
ԿՅ-26	Վ. Թաղոսեանի նամակը	105ա	ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆԻՔԵՆԵՆ — 1890-1914	138
ԿՅ-27	Հմայեակի նամակը	105բ	Գ-1 «Հնչակ»ի բուռնիկ թերթ՝ Գում-Գարուի ցոյցին առ-	
ԿՅ-28	Ս. Պ.ի նամակը Մարքիթին	106բ	քիւ	140ա
ԿՅ-29	Կարապետ Այվազեանի նամակը	107բ	Գ-2 Մահափորձ Ալբրեան Պատրիարքի դէմ	143ա
ԿՅ-30	Յօլանի նամակը՝ Ռահվերին	108բ	Գ-3 Գարեգին Խաճակի յօդուածը Ալբրեանի դէպքին առի-	
ԿՅ-31	Միխայիլ Միսաֆեանի նամակը	109ա	քով	143ա
ԿՅ-32	Կարապետ Այվազեանի նամակը	110ա	Գ-4 Յ. Եւսուփեանի նամակը «Դրօշակ»ին	145ա
ԿՅ-33	Արտուազգի նամակը Մարքիթին	110բ	Գ-5 Մաքսուտ Սիմոն Պէյի տեղորոշ	146բ
ԿՅ-34	Միխայիլ Միսաֆեանի նամակը	111ա	Գ-6 Եւսուփեանի նամակը «Դրօշակ»ին	146բ
ԿՅ-35	Արամի նամակը	111բ	Գ-7 Լրտես Արտաշէսի տեղեկութիւնը	148ա
ԿՅ-36	Ամբրիկայէն՝ Գալիքի նամակը	112ա	Գ-8 Ապրիլի 3ի ցոյցը Բերայի գերեզմանոցին մէջ	149ա
ԿՅ-37	Իգմիթէն՝ Վ. Էսկարի նամակը	113ա	Գ-9 Մայիս 11ի ժողովրդական ցոյցը	150բ
ԿՅ-1	Ազիսանդրիայէն՝ Թափառիկի նամակը	113բ	Գ-10 Ոստիկանապետ Հանի Տիգրանի տեղեկութիւնը	151բ
ԿՅ-2	Յուսէպի Մարմինի նամակը	113բ	Գ-11 Պոլսոյ Կ. Կ.ի ազգը	153բ
ԿՅ-3	Էսկարի (Կ. Այվազեան) նամակը	114ա	Գ-12 Վերաբայձ Թիւրքիստանի տեղեկութիւնը	153բ
ԿՅ-4	Էսկարի նամակը Մարքիթին	114բ	Գ-13 Պոլսոյ Կ. Կոմիտէի բաց նամակը «Հնչակ»ի խմբագ-	
ԿՅ-5	Գրիստափորի նամակը Մարքիթին	115ա	րուքեան	155ա
ԿՅ-6	Գրիստափորի նամակը Մարքիթին	115բ	Գ-14 Մատիչ Մարքիթի տեղեկութիւնը	155ա
ԿՅ-7	Վ. Ղազարեանի նամակը	116ա	Գ-15 Թառուիկ թերթը Հ. Յ. Գ. Պոլսի Կեդրոնական Կոմի-	
ԿՅ-8	Արեւմտեան Բիւրոյի նամակը	116բ	տէին, Թիւ 1, 2	157ա
ԿՅ-9	Արտուազգի Հանքեանի նամակը	117ա	Գ-16 Անտիպիլիանի կառու	159ա
Յաւելուած Մարքիթի թղթածրարին			Գ-17 Անտիպիլիանի գործողութիւններ	160բ
ՌՈՂՂԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ	117բ		Գ-18 Պոլսէն նամակ՝ «Դրօշակ»ին	161ա
			Գ-19 Պոլսի Կ. Կ.ի բուռնիկ թերթը (թիւ 9) երկու տարե-	
			կիցներու կախազան բարձրագոյն առիւ-	
			ճով կախազաններ	162բ
			Գ-20 Մատիչ Յովհաննէսի տեղորոշ և տեղեկիչ Մարտի-	
			րոս Բազումեանի մտքը	162բ
			Գ-21 «Պաճ Երօտան» և Ստամբուլ	163բ
			Գ-22 Պոլսոյ Կեդր. Կոմիտէի շրջաբերականները	165ա
			Գ-23 Պոլսոյ Կեդր. Կոմիտէի բուռնիկ թերթը (թիւ 11)	168ա
			Գ-24 Պոլսոյ Կ. Կ.ի ազգարարները՝ Երազական պետու-	
			քեանց ղեկավարներուն	167բ
			Գ-25 «Դրօշակ»ի ազգը	168բ
			Գ-26 Անտիպիլիանի նոր գործողութիւններ Պոլսոյ մէջ	169ա
			Գ-27 Պոլսոյ Կեդր. Կոմիտէի նոր յայտարարագիրը	170բ
			Գ-28 Զաւէնի (Յակոբ Գարակէօզեան) երեսնական մտքը	172բ
			Գ-29 Անտիպիլիան	172բ
			Գ-30 Անտիպիլիան	173ա
			Գ-31 Պոլսոյ և Իգմիթի խմբակի ծրագրերը	173ա
			Գ-32 Անտիպիլիան	174ա
			Գ-33 Հ.Յ.Գ. Պոլսոյ Պատ. Մարմինի յայտարարութիւնը՝	
			Օսմանեան Մահմադարութեան առիւ-	174բ

Գ-35	Հ.Յ.Գ. Պոլսոյ Պատ. Մարմին 30 Յուլիս 1908ի շրջա-	174բ	Ս.Ե.28 Բժ. Խ. Տէօվլէթեանի նամակը	216ա
Գ-36	Հ.Յ.Գ. Պոլսոյ Պատասխանատու Մարմին յայտարար-	176ա	Ս.Ե.29 Բժ. Խ. Տէօվլէթեանի նամակը	216բ
Գ-37	Հ.Յ.Գ. Պոլսոյ Պատ. Մարմին շրջաբերականները	176բ	Ս.Ե.30 Բժ. Խ. Տէօվլէթեանի նամակը	217ա
Գ-38	Պատասխանատու Մարմին նախագոյնաբար	177բ	Ս.Ե.31 Պողոսեանէն՝ Սուրէն Յ. Նշանեանի նամակը Կե-	
Գ-39	Հ. Յ. Դաշնակցութեան պաշտօնական պահանջները՝	178ա	սարիոյ Կոմիտէին	217բ
Գ-40	Միջկուսակցական որոշումներ	180բ	Ս.Ե.32 Ստ. Եսայեանի նամակը Պոլսոյ Պատասխանատու	
Գ-41	Միջկուսակցական համերաշխութեան ժողովի որոշում-	181ա	Մարմին	218բ
Գ-42	Հրապարակային դասախօսութեանց յայտագիր	181բ	Ս.Ե.33 Պ. Կիւմուշեանի նամակը Ստ. Եսայեանին	220բ
Գ-43	Ինքնագաղտնաբերական կեդր. Մարմին շրջաբերականը	182բ	Ս.Ե.34 Սե. Բլուրի (Սեբաստիոյ) Կ. Կոմիտէի նամակը Կե-	
Գ-44	Պոլսոյ Կեդր. Կոմիտէի շրջաբերականը (1913, Յու-	184ա	սարիոյ Կոմիտէին	221բ
Գ-45	Պոլսոյ Կեդր. Կոմիտէի շրջաբերականը (1913, Սեպ-	185բ	Ս.Ե.35 Վ. Ս. Քիւրթեանի նամակը Ստ. Եսայեանին	222ա
Գ-46	«Օգնենք Սասունին» Յանձնախումբի բառացիկը	186ա	Ս.Ե.36 Գալիքէն՝ Ստ. Եսայեանի նամակը Ռուբէն Զար-	
Գ-47	Միջկուսակցական համերաշխութիւն	186բ	դարեանին	222բ
Գ-48	Պոլսոյ Կեդր. Կոմիտէի շրջաբերականը (1914, Մարտ 26)	188բ	Ս.Ե.37 Մերսինէն՝ Գ. Կ. Ելանեանի նամակը Ստ. Եսա-	
Գ-49	Վիշապի (Պոլսոյ շրջանի) Զ. Շրջանային ժողովը	191բ	եանին	223բ
Յաւելուած		195բ	Ս.Ե.38 Գ. Կ. Ելանեանի նամակը	224բ
			Ս.Ե.39 Համագաղտնի նամակը Ստ. Եսայեանին	225ա
			Ս.Ե.40 Տրապիզոնէն՝ Արտուազգի Հանքեանի նամակը Ստ.	
			Եսայեանին	225բ
			Ս.Ե.41 Փարիզէն՝ նամակ Ստ. Եսայեանին	226ա
			Յաւելուած Ստ. Եսայեանի թղթածրարին	227ա
			Բ.— ՏԻԳՐԱՆ ԵՄՈՒՊԵԱՆԻ ԹՈՒՂԹԵՐԸ ԵՒ ԱՐԽԻՒԱՅԻՆ	
			ԱՅԼ ԹՈՒՂԹԵՐ — 1907-1921	229
			Տ.Ե.1 Բարսեղ Շահպաղի բացիկը	237ա
			Տ.Ե.2 Բարսեղ Շահպաղի նամակը Տիգրան Երզնկեանին	237բ
			Տ.Ե.3 Մ. Նորատուհնեանի նամակը Տիգրան Երզնկեանին	238ա
			Տ.Ե.4 Հ.Յ.Գ. Երզնկայի Կոմիտէի կոչը	238բ
			Տ.Ե.5 Հ.Յ.Գ. Երզնկայի Կոմիտէի բացատրական-կոչը	240բ
			Տ.Ե.6 Հ.Յ.Գ. Երզնկայի Կոմիտէի բաց նամակը՝ ուղղուած	
			Պողոս Նուպար Փաշային	241բ
			Տ.Ե.7 Հ.Յ.Գ. Երզնկայի Կոմիտէի կոչը Երզնկայի Կե-	
			դրութեան	244բ
			Տ.Ե.8 Ազիսանդրիոյ ընկերական ընդհ. ժողովի դիւանին	
			գիրք՝ Տ. Երզնկեանին	246ա
			Տ.Ե.9 Ստեփան Եսայեանի նամակը	246ա
			Տ.Ե.10 Հ.Յ.Գ. Երզնկայի Կոմիտէի նամակը Տ. Երզնկե-	
			անին	246բ
			Տ.Ե.11 Հայկ Բաքարեանի նամակը Տիգրան Երզնկեանին	247ա
			Տ.Ե.12 Հայկ Բաքարեանի նամակը	247բ
			Տ.Ե.13 Գարեգինի նամակը Տ. Երզնկեանին	248ա
			Տ.Ե.14 Ատանայէն նամակ Տ. Երզնկեանին	248բ
			Տ.Ե.15 Նամակ և հարցարան	249ա
			Տ.Ե.16 Հ. Բաքարեանեանի նամակը	250բ
			Տ.Ե.17 Ազիսանդրիոյ նամակը Տ. Երզնկեանին	250բ
			Տ.Ե.18 Հ. Բաքարեանեանի երկտողը	251բ
			Տ.Ե.19 Գարեգին Տիւրկերեանի նամակը	252ա
			Տ.Ե.20 Գ. Տիւրկերեանի նամակը	252բ
			Տ.Ե.21 Գ. Տիւրկերեանի նամակը	253ա
			Տ.Ե.22 Գ. Տիւրկերեանի նամակը	253ա
			Տ.Ե.23 Երզնկայի Շրջ. ժողովի դիւանին պաշտօնագիրը	254ա
			Տ.Ե.24 Ազիսանդրիոյ Կոմիտէի պաշտօնագիրը	254ա
			Տ.Ե.25 Հ.Յ.Գ. Երզնկայի Ա. Գաւառական ժողովի դիւ-	
			անի պաշտօնագիրը	254բ
			Տ.Ե.26 Այլ պաշտօնագիր	255ա
			Տ.Ե.27 Ամբրիկայէն՝ Ա. Սարափեանի նամակը Տ. Երզնկե-	
			անին	255ա
			Տ.Ե.28 Ազիսանդրիոյ Երզնկայի Կոմիտէի նամակը Տ. Երզնկե-	
			անին	256ա
			Տ.Ե.29 Վահան Նաւասարդեանի նամակը Տ. Երզնկեանին	256բ
			Տ.Ե.30 Երզնկայի Շրջ. ժողովի դիւանին պաշտօնագիրը	256բ

2.— ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅԱԻԵԼՈՒԱԾ	257	3.— Հանձնյ ինքնապաշտպանութիւնը	266բ
1.— Ատեճազրութիւն Հովտի, Գաշտի, Խորշի եւ Արծուա- բերդի Շրջանական ժողովի (1906)	258ա	ՀԱՃԸՆԻ ՈՒՔԱՄՍԵԱՅ ԳՈՅԱՄԱՐՏԸ	Ա. Զալեան 269ա
2.— Միճաս վերածին		ԿԱՐԳ ՄԸ ՃՇԴՈՒՄՆԵՐ	290
Ա) Կիլիկիա	262ա	ՅՈՒՑԱԿ Ա. ՀԱՏՈՐԻՆ ՄԷՋ ՅԻՇԱՏԱԿՈՒԱԾ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ	
Բ) Երևան 1919, Հ.Յ.Դ. Գրգ Ընդհ. ժողով	263բ	ԿԱՐԵՒՈՐ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ	293
Գ) Հայաստանի Հանրապետութեան Անկախու- թեան Փոխառութիւն	265բ	ՅՈՒՑԱԿ Ա. ՀԱՏՈՐԻ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐՈՒ	293
		ԲՈՎԱՆԴԱԿՈՒՔԻՆ	299

Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ր Ն Հ. Յ. Դ Ա Հ Ն Ա Կ Ց Ո Ւ Թ Ե Ա Ն

Ն Ի Ի Թ Ե Ր Հ. Յ. Դ. Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ե Ա Ն Հ Ա Մ Ա Ր

Ա. Հ Ա Տ Ո Ր

Հրատարակութեան պատրաստեց եւ խմբագրեց ՀՐԱՉ ՏԱՄՆԱԳԵՏԵԱՆ

Կերպարանագիր

LIBRAIRIE HAMASKAINE
10, Rue Hussein Beyhoum
Beyrouth — Liban

Հ Ա Մ Ա Ջ Գ Ա Ց Ի Ն Ի
Վ Ա Հ Է Ս Է Թ Ե Ա Ն Տ Գ Ա Ր Ա Ն

Պատուէր 612
Պրակ 19
Աւարտում 15-2-1964



Հ Ա Մ Ա Ջ Գ Ա Ց Ի Ն Ի Վ Ա Հ Է Ս Է Թ Ե Ա Ն Տ Գ Ա Ր Ա Ն

Imprimé au Liban

Imprimerie HAMASKAINE